ՆԻՒԹԵՐ

Հ. Յ. ԴԱՆԵԱՅՑԻԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ

Դ. ՀԱՏՈՐ

ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԹՂԹԱԾՐԱՐՆԵՐԷՆ

Ա.

ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ շարքի երրորդ հատորի ներածականին մէջ, Չորրորդ Ընդհանուր ժողովէն մնացած արխիւային նիւթերու առատութիւնը նշելով, կ'առաջադրէինք երկու հատորներ յատկացնել Դաշնակցութեան պատմութեան մէջ անկիւնադարձ կազմող այդ ժողովին:

Երրորդ հատորով հրատարակութեան կու տայինք Չորրորդ Ընդհանուր ժողովի ատենագրութիւնները՝ լրիւ, ինչի Յանձնաժողովի որոշումներու արձանագրութիւնը, Որոշումներու գրքոյկի բովանդակութիւնը, Հ. Յ. Դ. Ծրագիրը՝ իր արեւելահայ եւ արեւմտահայ բնագիրներով, Երրորդ Ընդհանուր ժողովին կողմէ մշակուած Կազմակերպական Կանոնները եւ Չորրորդ Ընդհանուր ժողովի վերամշակած Կանոնագիրը:

Թղթածրարներուն մէջ կը մնային տակաւին շրջաններու տեղեկագիրներ, Շրջանային եւ այլ ժողովներու արձանագրութիւններ, ժողովներու, մարմիններու թէ պատգամաւորներու կողմէ Ընդհանուր ժողովին կամ անոր դիւանին ներկայացուած առաջարկներ ու բանաձեւեր, Ընդհանուր ժողովին կամ Բիւրոներուն ուղղուած նամակներ, հաշուական տախտակներ, դատական հարցերու վերաբերեալ փաստաթուղթեր եւայլն:

Նեղկայ հատորի պատրաստութեան ձեռնարկելէ ետք միայն նկատեցինք, որ անկարելի պիտի ըլլար միակ հատորով մը տալ այդ բոլորը, կամ առ նուազն ամբողջութիւնը կազմակերպական շրջաններու վերաբերեալ թղթածրարներու պարունակութեան:

Թէեւ իրենց վաւերաթուղթերու քանակով շատ անհաւասար, մերթ ծաւալուն, մերթ վտիտ, բայց, բոլոր պարագաներուն, շրջաններու թղթածրարները, յաջորդական տարիներու իրենց տեղեկագիրներով եւ զանազան ժողովներու արձանագրութիւններով, հարուստ նիւթ կը պարունակեն Հ. Յ. Դաշնակցութեան մամիններու 1904–1906 թուականներու գործունէութեան, շրջաններու ներքին կառոյցներուն եւ ղեկավարման դրութեան, ինչպէս նաեւ ժամանակաշրջանի խմբական թէ անհատական մտայնութեանց ու կեցուածքներուն մասին, մէկ շրջանէն միւսը այնքան տարբեր ու երբեմն հակադիր՝ հայութիւնն ու յատկապէս Դաշնակցութիւնը յուզող կարգ մը հիմնական հարցերու վերաբերմամբ (վերազնահատում Հ. Յ. Դաշնակցութեան ռազմավարութեան ու մարտավարութեան, Տաճկահայ դատ, Կովկասահայ խնդիր եւ Նախագիծ, ընկերվարական տեսական, բաժանման հարց եւն.): Ամփոփման մտահոգութեամբ որեւէ զտում դժուար պիտի ըլլար, թերեւս անարդար, հաւանօրէն ենթակայական:

Ուստի, աւելի ճիշդ նկատեցինք տալ շրջաններու թղթածրարներու պարունակութեան ամբողջութիւնը, ամենէն կարեւոր տեղեկագիրներէն մինչեւ ենթակոմիտէական կամ խմբական ժողովներու մէջ բանաձեւուած տեսակէտները, պարագայաբար զանց ընելով միայն հաշուական կարգ մը մասնակի տախտակներ եւ գոյքերու ցուցակներ՝ որոնց տպագրութիւնը հատորը պիտի խեղդէր բոլորովին անշահեկան մանրամասնութիւններով: Ուստի նաեւ, նիւթերու առատութեան պատճառով, ներկայ հատորը անբաւական եղաւ՝ տալու համար վաւերաթուղթերու այդ ամբողջութիւնը: Կազմակերպական բազմաթիւ շրջաններու վերաբերեալ գրութիւնները (Ոսկանապատ, Մրգաստան, Քար, Զրաբերդ, Ծովափ, Նաւահանգիստ, Բարձրաբերդ, Ոսկեհանք եւն.)(*), ինչպէս նաեւ դատական թուղթերը (Ցուցական Մարմնի եւ Վարդոյի խնդրին վերաբերեալ) պիտի տրուին ՆԻՒԹԵՐՈՒ յաջորդ՝ հինգերորդ հատորով:

Այս ձեւով սահմանափակուած՝ ներկայ հատորը կը պարունակէ յաջորդական հետեւեալ բաժինները.

Ա.– ԼԻԱԶՕՐԱԳԻՐՆԵՐ, ՑԱՐԱԿԻՑ ՆԱՄԱԿՆԵՐ ԵՒ ԴԻՒԱՆԱԿԱՆ ԹՈՒՂԹԵՐ: Վերջինները, ընդհանրապէս, պատգամաւորներու կողմէ Ընդհանուր ժողովի դիւանին անհատապէս թէ խմբովին ներկայացուած առաջարկներ կամ բանաձեւերու նախագիծներ են: Նա-

մակները ուղղուած են Ընդհանուր ժողովին կամ Բիւրոներուն, երբեմն նաեւ դիւանին կողմէ՝ ուրիշներու: Նամակներէն երկուքը կը պատկանին Գէորգ Զաւուշի գրչին եւ կը կարծենք, որ «*Դրօշակ*»ներուն մէջ օրին լոյս տեսած իր «Ինքնակենսագրութենէն» ետք, Սասնոյ առասպելական հերոսին կողմէ գրուած առաջին նամակներն են, որ հրատարակութեան կ'արժանանան: Թերեւս նաեւ՝ իրմէ մնացած միա՛կ երկու գրութիւնները:

Բ.— ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ ԵՒ ՄԱՐՄԻՆՆԵՐ բաժինը կը գրաւէ հատորի մեծագոյն մասը: Ընդհանուր ժողովի նիստերուն ընթացքին տեղեկագրի ընթերցման կամ զեկուցման կարգին հետեւելով (տե՛ս ՆԻՒԹԵՐ, Գ. հատոր, էջ 349–352), յաջորդաբար տրուած են այն բոլոր գրութիւնները, որ կը գտնուին համապատասխան թղթածրարներուն մէջ, — Լեռնապար, Դուրան–Բարձրաւանդակ, Արեւմտեան Բիւրօ եւ արտասահմանեան քարոզչութեան վերաբերեալ Լորիս Մելիքեանի տեղեկագիր (1904–1906 տարիներու Հայ Դատի աշխատանքները), Պալքանեան շրջան, Ամերիկա, Ցուցական Մարմնի տեղեկագիրը՝ Սուլթանի ահաբեկման գործին մասին, Վասպուրական, Վրէժ (Ատրրպատական), Ռուսաստանի եւ Եւրոպայի Ուսանողական Միութիւններ, Ապառաժ (Ղարաբաղ), Այգեստան (Գանձակ), Ժլատ (Հիւսիսային Կովկաս) եւ Նալբանդ (Նոր Նախիջեւան)

Այս բաժնի ներածականին մէջ նշած ենք արդէն աչքի զարնող այն տարբերութիւնը, որ գոյութիւն ունի շրջաններուն միջեւ՝ պահպանուած ու մեզի հասած գրութեանց առատութեան տեսակէտէն: Մինչ Պալքանի եւ Վրէժի շրջաններէն՝ պահուած են ենթակոմիտէական եւ խմբապետական ժողովներու արձանագրութիւններն անգամ, ո՛չ մէկ թուղթ մնացած է, օրինակ, Արեւելեան Բիւրոյէն կամ Մեծ Քաղաքի նման (Թիֆլիսի Կեդր. Կոմիտէութիւն) կարեւոր շրջանէ մը: Բան մը՝ որ ո՛չ հաւասարապէս ամբողջական կը դառնէ այսօրուան մեր ծանօթութիւնը Դաշնակցութեան կազմակերպական շրջաններու եւ մարմիններու 1904–1906 եռամեակի գործունէութեան մասին: Կ'արձանագրենք ցաւալի այս իրողութիւնը, դժբախտաբար առանց զայն դարմանել կարենալու:

Տուած ենք նաեւ տպագրական լուսապատճէնը կարեւոր կարգ մը դէմքերու ձեռագիրներուն (Գեղամ Տէր Կարապետեան, Գէորգ Զաւուշ, Անդրանիկ, Ռոստոմ Զօրեան, Սիմոն Զաւարեան, Ռուբէն Տէր Մինասեան, Խաչատուր Մալումեան, Մարտիրոս Մարգարեան, Քոհստանդին Միքայէլեան, Արամ Մանուկեան եւ Մարզպետ):

⁂

Հաւատարիմ մեր սկզբունքին՝ անփոփոխ պահած ենք բնագիրներու ոչ միշտ գրական ու յանախ անհարթ լեզուն, կատարելով միայն ուղղագրական որոշ նոյնացում եւ, պարագայաբար, շարադասական մանր սրբագրութիւններ: Լեզուական այդպիսի ուղղումներ զանց առած ենք նոյնիսկ, իբրեւ կանոն, այն պարագաներուն՝ երբ նախադասութեանց անտրամաբանական կառոյցը խնդրական կը դարձնէ անոնց մեկնաբանութիւնը կամ ճշդումը, այս կամ այն ուղղութեամբ: Կարճ՝ վաւերաթուղթերու հրատարակութեան հարազատութիւնը եղած է եւ կը մնայ մեր էական առաջադրանքը:

Ի՛նչ խօսք, որ հարազատութեան միեւնոյն սկզբունքով եւ լեզուական հարցերէն ալ առաջ, նախանձախնդիր եղած ենք յատկապէս՝ տալու բնագրին անյապաւ ամբողջութիւնը եւ անպայմա՛ն նշելու զեղչուած մասերն ու անոնց բովանդակութիւնը՝ երբ, օրինակ, անոնք փաստօրէն բառացի կրկնութիւնը կը կազմեն նախորդող գրութեան մը մէկ բաժնին: Վաւերականութեան անտեղիտալի այդ առաջադրանքով՝ անախորժութեան հաւասար զգացումով մը տպագրութեան յանձնած ենք ներքին հակամարտութեանց դրսեւորումներ, ծանօթ դէմքերու եւ դէպքերու նկատմամբ անհատական ո՛չ միշտ դրական արտայայտութիւններ եւ այլ կուսակցութեանց կամ անոնց գործիչներու հասցէին՝ կծու, երբեմն նոյնիսկ անարգական ածականներ:

Բարեբախտաբար սակայն, այդ բոլորը շատ քիչ տեղ կը գրաւեն այն պատկառելի ամբողջութեան մէջ, որ Հ. Ց. Դաշնակցութեան Երրորդ եւ Չորրորդ Ընդհանուր ժողովներուն միջեւ ինկած եռամեայ ժամանակաշրջանի հարազատ ու առինքնող պատկերն է՝ Եղիտզի ռումբով, փետայական հերոսապատումի շարունակութեամբ, հայ–թաթարական կռիւներով, համառուսական յեղափոխական շարժման մասնակցութեամբ ու կազմակերպական ժրաջան աշխատանքով շքեղօրէն հարուստ:

Պատմաբանին կը մնայ մանրուքները թափել եւ ըստ արժանւոյն գնահատել Դաշնակցութեան պատմութեան դիւցազնական այդ շրջանը, որ 1904–1906 տարիներու Հայոց պատմութիւնն իսկ է:

ՀՐԱՉ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ

(*) *Յաջորդաբար՝ Բագու, Երեւան, Ալեքսանդրապոլ, Կարս, Տրապիզոն, Պաթում, Կարին, Իզմիր։*

ԼԻԱԶՕՐԱԳԻՐՆԵՐ, ՅԱՐԱԿԻՑ ՆԱՄԱԿՆԵՐ ԵՒ ԴԻՒԱՆԱԿԱՆ ԹՈՒՂԹԵՐ

Հ. Ց. Դ. 4րդ Ընդհանուր ժողովի արխիւներուն մէջ կը գտնենք «Դիւանական թուղթեր» մակագրուած քանի մը թղթածրարներ, որոնք կը պարունակեն.

ա) Պատգամաւորներու լիազօրագիրները եւ անոնց ընկերացող կարգ մը նամակներ.

բ) Զանազան նիստերու ներկայութեան ցուցակներ.

գ) Քուէարկուած բանաձեւ–որոշումներու ամբողջական հաւաքածոյ մը.

դ) Դիւանին կամ Դիւանի անդամներուն ուղղուած նամակներ, երկտողներ, հեռագիրներ եւն.՝ ընդհանրապէս ծրընուէն, «Դրօշակ»ի խմբագրութենէն, յանախ նաեւ Մարի (Միքայէլ Տէր Մարտիրոսեան) եւ Վահրամի (Ցարութիւն Գալֆայեան) անհատական ստորագրութեամբ.

ե) Թղթիկներու վրայ՝ պատգամաւորներու խմբական թէ անհատական առաջարկներ Դիւանին, բանաձեւի նախագիծներ եւն.

զ) Թուղթերու վրայ թէ տետրակներու մէջ՝ ժողովի ընթացքին պատգամաւորներու կողմէ առնուած նոթեր, ոմանց խօսքին մասնակի արձանագրութիւնը եւն.

է) Կանոնագրային կէտերու մշակման փորձեր, ժողովական կանոնագրութեան նախագիծ եւն.

ը) Ծրագրային նախագիծներու կարգ մը սեւագրութիւններ, ծրագրի յատակագիծ եւ ներածականի փորձեր.

թ) Մարտական դաստիարակութեան եւ զինուորական կանոնագրութեան վերաբերեալ մշակումներ, ընդհանրապէս ոչ–ամբողջական.

ժ) Հաշուական թուղթեր.

ժա) Այլ թուղթեր (Աւստրիոյ Ընկերվարական կուսակցութեան, ռուս թէ թուրք յեղափոխականներուն ուղղուած խօսքեր կամ անոնց խմբագրական փորձերը եւն.):

Աւելորդ պիտի ըլլար դիւանական այս թուղթերէն կարեւոր մէկ մասին վերարտադրութիւնը այս-տեղ, քանի անոնք, անշնչան բացառութիւններով՝ լրիւ եւ անփոփոխ, կը գտնուին արդէն 4րդ Ընդհանուր ժողովի ատենագրութիւններուն կամ Որոշումներու զբրֆոյկին մէջ(1) (քուէարկուած բանաձեւեր, ընկերընկերու կարգ մը առաջարկներ, առօրեայ ներկայութեան արձանագրութիւններ, խօսք Աւստրիոյ ընկերվարականներուն եւն.), իսկ Կազմակերպական Կանոնները ու Հ. Ց. Դ. Ծրագիրը, իրենց մշակուած ու վերջնական ձեւին մէջ, տրուած են առանձին(2): Կրկնութենէ խուսափելու համար զանց կ'առնենք այդ բոլորը, ինչպէս նաեւ կարգ մը զուտ անհատական նոթերն ու սեւագրութիւնները՝ որոնք շահեկան ոչինչ կ'աւելցնեն 4րդ Ընդհանուր ժողովին մեր ծանօթացման վրայ, այս բաժնին մէջ տեղ տալով դիւանական մնացեալ նիւթերուն, որոնք են.

ա) Լիազօրագիրները եւ յարակից գրութիւնները.

բ) «Դրօշակ»ի խմբագրութենէն եկած կարգ մը նամակներ (ընդհանրապէս Մարի եւ Վահրամի ստորագրութեամբ).

գ) Անհատական թէ խմբական գրաւոր կարգ մը առաջարկներ.

դ) Ընդհանուր ժողովի ներքին կանոնագրութիւնը.

ե) Զինուորական կանոնագրութենէն եւ մարտական դաստիարակութեան նախագիծէն մեզի հասած մասերը.

զ) Ցանձնախումբերու անուանացանկեր.

է) Ծրագրի յայտագիր–յատակագիծ մը եւ ներածական մը (որ վերջնական *թէքստ*ին չեն համապատասխաներ).

ը) Խմբագրուած խօսք (կամ խօսքի նախագիծ)՝ ռուս եւ թուրք յեղափոխականներուն ուղղելի:

Հ. Տ.

(1) ՆԻՒԹԵՐ Հ. Ց. Դ. ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, Գ. հատ., էջ 11 — 291 եւ 298 —313:

(2) Նոյն, էջ 315 — 340:

1.— ԼԻԱԶՕՐԱԳԻՐ ԱՐԱՄԻ

Գրուած կարմիր մելանով, ճամակի միջակ չափի երկերեք թուղթի մը ա. էջին վրայ, եւ կնքուած Վասպուրականի Կ. Կոմիտէի կնիքով:

1 Հոկտ. 1906

ՎԿԱՅԱԿԱՆ

Սոյն վկայականը ներկայացնող Արամը Շամիրի(1) *Կ. Կոմիտէի կողմից ընդունուած է պատգամաւոր, Հ. Յեղ. Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովին ներկայանալու համար:*

Նախապէս դրուած բոլոր հարցերի վերաբերմամբ, փոխադարձ համաձայնութեամբ, նրան տրուած է իրաւունք՝ դրական կամ բացասական դիրք բռնելու:

Իսկ չնախատեսուած հարցերում՝ նա պիտի վարուի մեր (տեղեկագրի մէջ տրուած) ընդգծած ուղղութեան սահմաններում: Բացի դրանից նրան եւ մեր չբրջանի մնացած ընկերներին իրաւունք է տրւում Ընդհանուր Ժողովի կողմից յատկացուած բիւրջէի դասաւորութիւնը կատարել:

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿ. ՇԱՄԻՐԻ Կ. ԿՈՄԻՏԷ

(1) Շամիր, Շամիրամ կամ պարզապէս՝ Շամ, Վասպուրականի կեդրոնական Կոմիտէութեան կուսակցական ծածկանունն էր:

2.— ՎԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ՍԱԼՄԱՆԻ ՆԱՄԱԿԸ՝ ԱՐԱՄԻՆ

Վասպուրականի շրջանը Դ. Ընդհ. Ժողովին համար ընտրած էր երկու պատգամաւոր՝ Արամն ու Սալմանը (Համազասպ Բաղէշցեան): Վերջինը, հիւանդացած ըլլալով, չկրցաւ հասնիլ Վիեննա: Այս գրութեամբ իր ձայնը կը փոխանցէ Արամին կամ Իշխանին:

Գրուած է սեւ մելանով, փոքր չափի երկերեք թուղթի մը վրայ, 2 էջ եւ 2 տող:

Arlo, 29 Մարտ 1907

Սրելի Արամ !

Ստացայ Մարտի 21 նամակդ, բայց բաւականին ուշ. սրանից մի քանի օր առաջ էլի մի նամակ գրել եմ Մալումեանի հասցէով, անձնականիս վերաբերեալ: Ձեզ գրում թէ մեր տեղեկագիրն ու Բայոնական Ժողովի որոշումները կարդացե՞լ էք թէ ոչ եւ ի՞նչ տպաւորութիւն է թողել: Ինչ վերաբերում է իմ ձայնիս, պարզ է, որ ես չեմ կարող տալ այնպիսի մէկին, որի հետ հիմնական սկզբունքներում չփում չեմ ունեցել, այլ այնպիսի մէկին, որի հետ երկար խօսել, վիճել, եւ համաձայնութեան ենք եկել: Ըստ այդմ ես չեմ կարող օրինակ իմ ձայնը տալ Ամերիկայի ռուէ պատգամաւորի. կը մնաք դու եւ Իշխանը. երկուքիդ մէկը ներկայացրէք իմ ձայնը:

Ինչ վերաբերում է իմ կարծիքներին, դժբախտաբար ես դեռ պառկած եմ, ուստի հնարաւորութիւն չունեմ որեւէ բան գրելու. ոչ գլուխս է տեղը, ոչ ձեռքերս, ոչ ուժս. իմ կարծիքներն այն են, ինչ որ արտայայտուած են տեղեկագրի եւ Բայոնական Ժողովի որոշումների մէջ. տակտիկի մասին այնքան կ'ասեմ միայն, որ եթէ ուզում են ժողովուրդը կոտորել տալ, թող նախկին տակտիկը ընդունեն:

Ժընեւից ոչինչ չեմ ստանում:

Դրամ պատրաստիր որ ուղարկես ինձ:

Անչափ ուժասպառ եմ. չգիտեմ ե՛րբ պէտք է ոտքի կանգնեմ:

Համբոյրներով՝ ՍԱԼՄԱՆ

Համբոյրներս ծոյլ եւ ո՛չ ինձ չափ հիւանդ Իշխանին եւ բոլոր ընկերներին:

ՆՈՑՆ

3.— ԴՈՒՐԱՆ-ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿԻ Կ. ԿՈՄԻՏԷԻ ԼԻԱԶՕՐԱԳԻՐ-ՆԱՄԱԿԸ

Գրուած կարմիր մելանով, ճամակի միջակ չափի երկերեք թուղթի մը վրայ, 3 էջ. ա. եւ գ. էջերը կնքուած են Բարձրաւանդակի Կ. Կոմիտէի կնիքով (տե՛ս ՆԻՒԹԵՐ, բ. հտր., էջ 174):

1906 թ. 25 Հոկ.
Դուրան (Շղթայ)

Հայոց Յ. Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովին Բարձրաւանդակի եւ Դուրանի Կ. Կոմիտէի կողմից մատուցւում է.

Բարձրաւանդակի եւ Դուրանի Կ. Կոմիտէն ի նըկատի ունենալով յեղափոխականութեան գործունէութեան նպատակայարմար կերպով եւ տեղ[ական] պայմանները միշտ հաշուի դնելով՝ յարատեւութեան օգուտը՝ մեր այս կեդրոնում, որ երկար տարիներէ յետէ ամենէն աւելի նուիրուած ու զոհուած ասպարէզն եղած է հայ յեղափոխութեան եւ որ կը մնայ միշտ տրամադրելի ու պատրաստ դետին մը՝ յեղափոխական ձգտումների իրագործման. միաժամանակ՝ աչքի առջեւ ունենալով նաեւ թէ՛ Բարձր[աւանդակ]ի եւ թէ Դուրանի հայ ժողովրդեան արդի աննկարագրելի ճգնաժամը, որ իր գոյութեան կը սպառնայ բոլորովին, ու այդ ճգնաժամը իր ծանրագոյն կէտին հասել է հետզհետէ յեղափոխական ծանօթ շարժումների ու կռուոդ-պայքարող գործունէութեան երեսէ. արդ՝ պահպանելու համար, որքան հնարաւոր է, հայ ժողովուրդի եւ հետեւաբար յեղափոխութեան գործունէութեան գոյութիւնը այս վիճակումը՝ կ'որոշէ իւր ներկայացուցիչով մասնակցելով Ընդհանուր Ժողովիդ, առաջադրել իրա համար կենսական եւ անհրաժեշտ դարձած պահանջները ու պէտքերը:

Բարձրաւանդակի եւ Դուրանի Կ. Կոմիտէն կը ներկայանայ Ընդհանուր Ժողովիդ յարգելի համախմբման իր ամենասիրելի ու քաջարի ընկերին՝ Պ. Սարհատի միջոցաւ:

Արդէն Պ. Սարհատը կամ ռազմիկ հերոս Գէորգ Զաւուշը իր հռչակով, քաջութեամբ ու ճարպիկ գործունէութեամբ, որով սարսափ է ազդել ոչ միայն տեղային իսլամ ցեղերի, այլ նոյնիսկ Թուրք կառավարութեան վրայ, ծանօթ պիտի ըլլայ ամենքից: Նա 1890 թուականներից սկսած, հենց պատանեկութեան հասակից յօժարակամ զինուորագրուել է հայ անձնուէրների խմբին, ու այնուհետեւ անդադար գործել ու կռուել է. օրից օր՝ նա գրաւել է վերջապէս իր կարեւոր դիրքը՝ իբր ամենէն լաւ ռազմավարիկ, որ յաջողուել է բազմաթիւ դէպքերի ընդհարումների մէջ, միշտ անվտանգ դուրս գալով. 1904ին իբր օժանդակ ու ազդեցիկ ղեկավար կռուող խմբի մասնակցել է Բարձրաւանդակի Բ. ապստամբութեան ու Պարոյրի(1) *հեռանալուց յետոյ նոյն տարին ընտրուել ու կոչուել՝ Բարձր[աւանդակ]ի եւ Դուրանի յեղ[ափոխական] ներկայացուցչութեան, զոր վարել է մինչեւ հիմա նոյն կորովով ու թափով:*

Նա լիազօրութիւն ունի յանուն մեր Կ. Կոմիտէի, բաւարարութիւն ստանալ յարգելի Ընդհանուր Ժողովէդ հետեւեալ մեր պահանջների մասին.

Ա.— Ցանուն Բարձր[աւանդակ]ի եւ Դուրանի կարօտեալների՝ Օսմ. ոսկի 6000
Բ.— Յեղափոխ[ական] գործող զինուորների պէտքերի համար՝ » » 1500
Գ.— Ռազմական գնումների համար մեր չրջանի մէջ՝ » » 1500
Գ.— Նախապատրաստական ձեռնարկների համար՝(2) *» » 1600*
Դ.— Փոխադրութիւնների եւ սուրհանդակի համար՝ » » 700
Ե.— Բանտարկեալների համար՝ » » 500
Զ.— Պատահականութիւնների, այլ եւ այլ ծախսերի համար՝ » » 300

Համագումար՝ մինչեւ 1907-8 տարեշրջանի համար՝ » » 12,100

Է.— Պատրաստ ռազմական ուժեր 1907 տարեշրջանի համար՝ 100 հատ նոր, 50 հատ հին հրացան եւ 80,000 հին ու նոր փամփուշտ:

Ը.— Ինտելիգենտ ուժեր ուղարկել՝ Պուլանդրի, Խնուսի, Ախլաթի, Դուրանի եւ Բարձրաւանդակի համար որպէս ղեկավարներ:

Թ.— Անպայման ընդունել Բարձրաւանդակը ու Դուրանը որպէս յեղափոխութեան ամենայարմար եւ ամենանուիրուած վայր, աչքի առջեւ ունենալով փորձերը եւ անհամեմատելի զոհողութիւնները:

Ժ.— Զինուորական հասարակ ուժերի սահմանափակում, գործունէութեան տակտիկան նպատակայարմար ընելու համար:

Նպաստի մատուցումը Բարձր[աւանդակ]ի եւ Դուրանի քայքայուած եւ փճացած դրութեան մէջ գտնուող ժողովրդին այնքան կենսական է, որ ուղղակի չափում է յեղափոխութեան գործունէութիւնը, եւ որի յաջողութիւնը կախուած է ժողովուրդը հնարաւոր կերպով խնամելուն եւ իրենց օճախներում պահելուն մէջ, քանի որ ահագին համեմատութեամբ գաղթում ու ցրւում են թէ ծանօթ տարրերից(3) *եւ թէ տիրող սովից: Խնդրում ենք մեր յարգելի ներկայացուցչի միջոցաւ բաւարարութիւն տալ մեր պահանջներին, որոնց մասին մենք մանրամասնութիւնները կը մատուցանենք ընդարձակ տեղեկագրով:*

Բարձրաւանդակ-Դուրանի Կ. Կոմիտէի բոլոր անդամները՝

ՎԿԱՅ ՌՈՒԲԷՆ ՏԱՏՐԱԿ(4)

(1) Անդրանիկի:

(2) Ցիշուած կէտերում մէջ Գ.ը կրկնուած է. բնագիրը կը պահեմ անփոփոխ:

(3) Թերեւս կարելի է կարդալ *տուրքերից*. անորոշ է:

(4) Ռուբէնը (Տէր Մինասեան) ծանօթ է. Տատրակը Գեղամ Տէր Կարապետեանն է (Մշոյ Գեղամ). Վկան՝ ամենայն հաւանականութեամբ՝ Վարդան Վարդապետը: Կը պակսի ստորագրութիւնը Սարհատի (Գէորգ Զաւուշ) եւ հաւանօրէն Դուրան-Բարձրաւանդակի Պատասխանատու Մարմնի հինգերորդ մէկ անդամին (?):

4.— ԳԵՂԱՄ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԿՈՄՍԻՆ

Գեղամ Տէր Կարապետեանի (Տատրակ) այս երկու ճամակները (թիւ 4 եւ 5) գրուած են գազանի մելանով, 22 Նոյեմբեր 1908 թուակիր անձնական-ընտանեկան ճամակի մը («Գէորի կին Նուպրէյի» անունով) ազատ երկու էջերուն վրայ (միջակ չափի ճա-

մսկի երկքերթ թուղթ)։ Մելանը բացուած է շատ յաջող կերպով եւ նամակները ցարդ կը մնան լրիւ ընթեռնելի։

Ցարդելի Կոմս,

Քանի՞ հարիւր է նամակ չենք ստացել։

Գրել էինք Ձեզ թէ ընկերական խորհրդակցութեամբ ես [եւ] Ռուբէն համաձայնութեան եկանք Պ. Սարհատի հետ, որ ինքնին յօժարութիւն յայտնեց մեր կողմից պատգամաւոր դալ Ընդհանուր Ժողովին։

Իմ դալու մասին էլ պնդումներ եղան, բայց որովհետեւ նախապէս դուք չէիք հաւանած որ բացակայեմ, Սարհատը եւ Ռուբէնն էլ նոյն մտքի վրայ էին, հետեւաբար իմ դալս առ այժմ հնարաւոր չեղաւ, մանաւանդ երբ ընկերները պնդում էին դալ ու դառնալ։ Սարհատը արդէն 15 օր է որ Բիւրական մեկնել է։ Գուցէ մէկ երկու օրից այնտեղէն կը մեկնի արտասահման Ձեզ մօտ լինելու։ Աստուծոյ շնորհիւ՝ նա անմնաս կը հասնի։ Խնդրում ենք իրա ժամանումը անմիջապէս հաղորդել մեզ եւ երբ Ձեզ մօտ հասնի, ողջունել զինքը մեր կողմից։ Ասացէք որ անպատճառ նամակ գրէ։ Մենք վստահ ենք որ դուք պէտք եղած թափով ոյժ կը տաք նորա պահանջներին, յօդուտ այս տառապած շրջանակին։

Մենք Բիւրական հասցրինք նրան մեր ընդարձակ տեղեկագրերն էլ (երկու ընդարձակ տետրեր՝ կացութեան մասին՝ իմ, իսկ երրորդը — Թուադրով են — պահանջների եւն. մասին՝ Պ. Ռուբէնի)։ Խնդրում ենք նաեւ ոյժ տալ տեղեկագրով յայտնուած մեր ցանկութիւններին։ Տակտիկայի մասին քիչ մը խիզախ է երեւում Պ. Ռուբէնը, բայց ես կրկնում եմ, որ շատ լուրջ ուշադրութեան առարկայ պէտք է անել տակտիկան։ Պայմանները շատ դառն են, մեր կորուստները՝ անչափելի։ Կենսական է շա՛տ զգուշաւոր տակտիկա, որ գոնէ ժողովուրդը մի քիչ շունչ առնէ։ Պ. Ռուբէնը Բարձրաւանդակ ելաւ 2 օրից ի վեր։ Ես շատ համաձայն չէի, որ շուտով հոն երեւար։ Բայց սաստիկ զգուշութիւն ենք յանձնարարել։ տայ Աստուած որ ձայն ձուն չելնէ։ Ձեր ուղած հաշիւներն էլ Սարհատից կը ստանաք։ Էլի գրում ենք։

Համբոյրներով՝
ՏԱՏՐԱԿ

5.— ԳԵՂԱՄ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՄՈՒՐԱՏԻՆ

Կարելի է ճաւ կարդալ «Սիրելի Մուրատեան», Մուրատեանը ըլլալով աճա մը կամ մարմնի մը կուսակցական ծածկանունը։ Բայց ճամակի բովանդակութիւնը, յատկապէս Սեպուհին, կայծակ Առաքելին եւ կոտոյի Հաճիին յիշատակումը (բոլորն ալ մասնակցած են Սասնոյ 1904ի ապստամբութեան եւ լաւ ծանօթ են Մուրատին), գրեթէ ապահով կը դարձնեն՝ որ Տատրակ իր ճամակը ուղղած է, կոմսի խողովակով, Սեբաստացի ռազմիկին։

Սիրելի Մուրատին,

Վերջին անգամ Պ. Սարհատին Ձեր ուղղած նամակը դժբախտաբար ուշ հասաւ։ Արդէն նա մեկնել էր դէպ Ձեզ դալու, ու հնարաւորութիւն չեղաւ նրան հասցրնել։ Ձեր հասցէն (Կարսի վրայ ?) շատ որոշ չէր։ Այս նամակը պիտի ստանաք Կոմսից։ Սարհատ ինքնին յօժարակամ դալ ձեր մօտ. համաձայն մեր ընկերական ցանկութեան նա Ընդհանուր Ժողովին պիտի ներկայանայ՝ իբր պատգամաւոր մեր կողմից։ Խնդրում ենք իրա անմնաս ժամանումը շուտ հաղորդէք մեզ։ Մենք աւելորդ ենք համարում յանձնարարել Ձեզ Ձեր սիրելի ընկերը։ Գիտենք թէ որքան սրտագին փարում ունիք դէպի նա։ Նա ինչպէս կարծեմ մէկ երկու օրից մեկնում է Բիւրակնէն եւ Աստուծմով՝ նամակս հասնելէ առաջ Ձեզ մօտ կը լինի։

Եթէ հնարաւորութիւն լինէր, ես էլ ցանկանում էի դալ։ Բարձրաբերդի վրայէն դալու մի խորհուրդ ունէինք, բայց չեմ հաւատում որ յաջողի։ Այսպէս ասացէք Պ. Սարհատին։ Ձեր նամակի հետ խնդրում ենք որ ինքն ալ դրէ։ Պ. Ռուբէն բարեւում է Ձեզ. նա Բարձրաւանդակ անցաւ. երբ վերադառնայ, գրում ենք։ Ձեզմէ ամենից էլ խնդրում ենք ոյժ [տայ] Պ. Սարհատին իր պահանջների մէջ յօդուտ այն շրջանին որ Ձեզ էլ ասպնջականել է։ Համբոյրներ Պ. Սեպուհին, Առաքելին, Հաճիին եւ Ձեր մօտ եղած ընկերներին։ Ճանաչում էք Նուիրեցի Գրիգոր Միրզապէկեանցը. նա բանտն է։ Նրա ռուսահպատակ ըլլալուն համար հաւատարմութիւնը է պահանջւում։ Շուտով զբրկեցէք եւ ուղղակի իրա հասցէին՝ Մուշի բանտը։ Խնդրում ենք չմոռնալ, շատ կարեւոր է։ Մի որոշ հասցէ տուէք խնդրեմ։

Համբոյրներով՝
ՏԱՏՐԱԿ

6.— ԳԷՈՐԳ ՁԱՒՈՒՇԻ ՆԱՄԱԿԸ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ ԵՒ ՄՈՒՐԱՏԻՆ

Գրուած կարմիր մելանով, ճամակի միջակ չափի երկերեք թուղթի մը վրայ, մէկուկէս էջ։

Այս երկու ճամակները Հայ Յեղափոխութեան առասպելատիպ մարտիկէն մնացած հազուագիւտ գրութիւններէն ըլլալով, կու տամք երկուքին ալ տպագրական պատճէնը։

Սիրելի Պարոյր(1) *եւ Մուրատ,*

Ես որոշուեցայ որ պիտի դայի արտասահման ու ներկայանայի [Ընդհ]անուր Ժողովին, սակայն բաղ-



դը չօղնեց որ դայի եւ ներկայանայի այն ազնիւ ժողովին, եւ տեսնուէի ձեր սիրելութեան ու շատ մը ընկեր[ներ]ի, այն պատճառաւ որ ձիւնի բուքի արգելքներ չթողին որ դայի եւ հասնէի: Ինչպէս օր մը օրէրէն քիւրտ վալատի մը հետ մեկնուեցայ որ դայի. հասանք մինչեւ Կուլէի Գորազան(2). հոն սկսեց սաստիկ ձիւն, եւ բուքի բռնուելով ետ վերադարձանք: Բայց խեղդուելէն հաղիւ հաղ ազատուեցանք: Մենք 7 ձիաւորով, ճարահատ մնալով վերադարձանք կրկին Դուրանում(3), շատ մը ...երով(?):

Ընկերներ, ժողովին համար՝ երբ որ ես բաղդ չունեցայ դալ եւ ներկայանալ այն ազնիւ ժողովին, բայց ձայնս տուի ձեզի որ ներկայանաք ժողովին եւ մեր կողմանէն խօսիք եւ ծանուցումներ տաք Երկրի մասին, ինչպէս ալ որ դրած եմ Արեւելեան Բիւրոյին, որ դուք պէտք է ներկայանաք ժողովին եւ խօսիք մեր ու Երկրի մասին, թէ Երկիր ինչ է պահանջում. բայց չուրանաք (?) ձեր Աստուած եւ ազգ Երկիրը ինչպէս ուրացել էք մինչեւ ցարդ. թէ ինչպէս Բարձրաւանդակ(4) ու Տարօն, որ ամենէն աշխատող ու գործ տեսնող եւ շատ մը զոհեր տուող [չրջանն է], նրա տրամադրութեան ներքոյ ոչ մի դրամ չկայ, իսկ Շամի(5) տրամադրութեան ներքոյ կայ 80000 ոսկի, նաեւ կայ 100000ից աւել ծայրեր. իսկ մերը՝ ոչինչ. ո՞ւմ երեսէն, ձեզի պէս ընկերների երեսէն որ թողեցիք զմեզ եւ զերկիր Աստծու կրակի մէջ ու դնացիք(6), ոչ դերամ ոչ էլ ռազմամթերք դրկեցիք, զմեզ եւ զձեր ժողովուրդը թողեցիք ձեզ անիծող: Ինչ որ է, այն անցաւ. բայց այսուհետեւ կ'աշխատէք որ դուք ալ եւ մենք մարդ լինենք, Երկրով միասին:

Եղբայրք ճան, ինդրեմ լաւ աշխատէք որ օգուտ մը հասցնէք այստեղի ժողովրդեան եւ գործին, որ ազատուէք նրանց մեղքէն:

Համբոյրներով՝
ՍԱՐՀԱՏ

---

(1) Անդրանիկի կուսակցական ծածկանունը.
(2) Կրնայ ըլլալ նաեւ Կալէ Գորազան կամ Կալէ Գորագին.
(3) Տարօնի շրջանը.
(4) Սասուն.
(5) Վասպուրականի.
(6) Կ'ակնարկէ Անդրանիկի, Մուրատի եւ միւս հայդուկապետներու արտասահման մեկնումին, Սասնոյ ապստամբութենէն ետք:





7.— ԳԷՈՐԳ ԶԱՒՈՒԵԻ ՆԱՄԱԿԸ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Գրուած կարմիր մելանով, միջակ չափի նամակի երկթերթ թուղթի վրայ, 1 էջ եւ 5 տող:

25 Նոյեմբեր 1906
Բիւրական

Արեւելեան Բիւրոյին,

Նոյեմբեր ամսոյ 4ին ընկեր մը ալ հետս եկայ Բիւրական եւ պիտի գայի արտասահման, հասնէի [Ընդ]հանուր Ժողովին, բայց ձիւնի բուքի պատճառաւ արդիլուեցայ 15 օր Բիւրական. եւ օր մը ալ քուրդ վալտուի հետը միասին մեկնուեցանք որ պիտի գայինք. եւ հասանք մինչեւ Կուլէի Գարագան(?). այստեղ սկսեց ձիւն գալ, սաստիկ քամի եւ բուք. ճար չգտնելով ետ վերադարձանք. բայց խեղդուելէն հազիւ հաղ ազատուանք. անկէ զկնի աշխատեցայ Բաձրաբերդի(1) գծով գալ ծպտեալ, սակայն ոչ ոք յանձն չառաւ դիս տանելու. եւ ինչպէս ալ Բիւրակնի(2) ընկերներ գրած են, ճարահատ մնալով ետ վերադարձայ դէպի Դուբանում, շատ ցաւալով, որ բաղդ չունեցայ գալ եւ ներկայանալ ձեր ազնիւ Ժողովին: Սակայն խընդրում եմ որ զմեզ այստեղ մոռահան չանէք. արդէն գրած ենք զրոլոր Երկրի անց ու դարձը եւ Երկիր ինչ պահանջելը. նաեւ շատ մը զաւառների տեղեկագրները որ ստանում էք, կարդալով պիտի հասկանաք զմանրամասնութիւնը:

Գալով Ժողովի առթիւ երբ ես չկարողացայ գալ, ես այստեղէն տալիս եմ ձայնս Գարոյրին եւ Մուրատին, որ նրանք լաւ ծանօթ են Երկրի դիրք եւ դրութեան. եւ արդէն մենք պարզած ենք զամէն մի հարցը Երկրի գործունէութեան մասին:

Իմ վկայական էլ զրկեցի. եւ իմ որոշուած անձերը որ որոշած եմ եւ ձայնս նրանց տուած եմ. լի յուսով եմ՝ պիտի ընդունէք, եւ զմեզ ալ պիտի ճանչնաք իբրեւ ընկեր, եւ ապստամբավայր՝ տեղը:

Համբոյրներով՝
ՍԱՐՀԱՏ

(1) Կարնոյ.

(2) Նամակի ձեռագրով, այս տեղանունը կարելի է կարդալ Բերակ, Բիրոկ եւն.: Պէտք է ըլլայ Բիւրակն (Պինկէօլ), ինչպէս կը հետեւցուի ի մասնաւորի Ֆատրակի (Մշոյ Գեղամի) նամակէն:

8.— ԼԻԱԶՕՐԱԳԻՐ ՌՈՍՏՈՄԻ

Գրուած սեւ մելանով, նամակի փոքր չափի երկթերթ թուղթի վրայ, ա. երես: Ստորագրութիւն չկայ: Կնքուած է Արեւելեան Բիւրոյի կնիքով:

Փետրուար 1907

Սրանով վկայում ենք, որ ընկեր Ռոստոմ, ներկայացնող այս վկայականի, Արեւելեան Բիւրոյի ներկայացուցիչն է Դ.րդ Ընդհանուր Ժողովում:

9.— ԼԻԱԶՕՐԱԳԻՐ ԱԿՆՈՒՆԻ

Ֆրանսերէն լիազօրագրի տպագրուած թուղթի վրայ (միջակ չափ): Ձեռագրով (սեւ մելան) աւելցուած են միայն անունը (Խ. Մալումեան), «le Bureau de Genève au Congrès du parti» բաժինը եւ թուականը: Ստորագրութիւն կամ կնիք չկայ:

Geneve, le 20 février 1907

Conseil des Représentants
de la
Fédération Révolutionnaire Arménienne

CERTIFICAT
(Valable pour 1 an)

Le porteur du présent Kh. Maloumian est autorisé à représenter (la Rédaction du «Droschak») le Bureau de Genève au Congrès du parti.

10.— ԼԻԱԶՕՐԱԳԻՐ ՍԱՖՈՅԻ (ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՐԳԱՐԵԱՆ)

Երկար չափի ճամակի մէջտեղէն ծալուած թուղթի մը ա. երեսին վրայ, սեւ մելանով:

16 Դեկտեմբեր 1906

Հ. Յ. Դաշնակցութեան Դ.րդ Ընդհանուր Ժողովին՝ Ցուցական Պատասխանատու Մարմնի ընկերներից ընտրուեց ընկեր Սաֆոն իբրեւ ներկայացուցիչ՝ համար ու հաշիւ տալու Յ. Մ.ի ամբողջ գործերի եւ Ընդհանուր Ժողովի զբաղմունքը կազմող բոլոր հարցերի համար:

ՔՐԻՍ ԹՈՐԳՈՄ

11.— Ա. ԼԻԱԶՕՐԱԳԻՐ ԹՈՎՄԱՍ ՃԵԼԱԼԵԱՆԻ ԵՒ ՎԱՀԱԳՆ ՏԱԹԵՒԵԱՆԻ

Մեքենագրուած Ամերիկայի Կ. Կոմիտէի պաշտօնաթուղթի վրայ. համար՝ 331: Կը կրէ Ամերիկայի Կ. Կոմիտէի կնիքը:

ՈՐՈՒ ՈՐ ԱՆԿ Է

Ընկերներ Հայկ-Արմէն(1) եւ Վահագն Տաթեւեան, Ամերիկայի 1905 տարուայ Պատգամաւորական Ժողովին կողմէ պատգամաւոր ընտրուած են մասնակցելու Հ. Յ. Դաշնակցութեան Զորրորդ Ընդհանուր Ժողովին, ներկայացնելու համար Ամերիկայի կոմիտէներուն բաղձանքներն ու որոշումները:

Անոնք կանուխ կը մեկնին Ընդհանուր Ժողովը փութացնելու համար հարկ եղած ջանքերն ընելու եւ կանխաւ տեղեկանալու դաշնակցական մարմիններու գործունէութեան, ձեռնհասօրէն կատարել կարենալու համար իրենց ստանձնած պատասխանատու պաշտօնը:

Այս կրկնակ նպատակներով, անոնք պիտի այցելեն Արեւմտեան եւ Արեւելեան Բիւրոները եւ այդ ճամբուն վրայ, բոլոր կեդր. Կոմիտէները:

Կը սիրենք յուսալ թէ բոլոր դաշնակցական մարմինները պէտք եղած աջակցութիւնը պիտի նուիրեն անոնց առաքելութեան գործը դիւրացնելու համար:

Հ. Յ. Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

---

(1) Թովմաս Ճելալեանն է:

12.— Բ. ԼԻԱԶՕՐԱԳԻՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ

Ամերիկայի Կ. Կոմիտէի պաշտօնաթուղթի վրայ, ձեռագիր, սեւ մելան: Կնիք Ամերիկայի Կ. Կոմիտէի (ստորագրութիւն չկայ):

№ 71 Պոսթըն, 18 Յունուար 1907

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան
Դ.րդ Ընդհանուր Ժողովին,

Սիրելի ընկերներ,

Հ. Յ. Դ. Ամերիկայի կոմիտէներու 1906ի Պատգամաւորական Ժողովը վաւերացուց նախորդ պատգամաւոր ընկերներ Թովմաս Ճելալեան եւ Վահագ Տաթեւեան որ 1905ի Պատգամաւորական Ժողովի կողմէ ընտրուած էին ներկայացնելու համար Ամերիկայի կոմիտէները Դ.րդ Ընդհանուր Ժողովին:

Ընկերական բարեւներով

13.— ԼԻԱԶՕՐԱԳԻՐ ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆԻ ԵՒ ՍԱՐԳԻՍ ՄԻՆԱՍԵԱՆԻ

Գրուած սեւ մելանով, Պալքանեան Կ. Կոմիտէի պաշտօնաթուղթի վրայ: Կնիքուած է նոյն Կ. Կոմիտէի կնիքով:

№ 22 16 Յունուար 1907

Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովին,

Յարգելի ընկերնե՛ր,

Շրջանիս արտակարգ ժողովը գումարուելով Դեկտեմբեր 3էն մինչեւ Դեկտեմբեր 21, մշակեց բոլոր այն հարցերը՝ որ արտայայտութիւնն են Պալքանի Հ. Յ. Դաշնակցութեան հայեացքներուն ու բաղձանքներուն:

Ժողովը նկատի ունենալով թէ Պալքանը իր ցեղով, եւ մանաւանդ կազմակերպական վերջին կարգ մը կարեւոր ձեռնարկներովը կարող է երկու ձայն ունենալ Ընդհանուր Ժողովի մէջ, իր ԺԴ. նիստով իբրեւ պատգամաւոր ընտրեց ընկերներ Հ. Զարդարեան եւ Սարգիս Մինասեան՝ ներկայացնելու համար Պալքանի կամքը Ընդհանուր Ժողովի մէջ: Բայց կանխատեսած բլլալու համար ամէն պատահականութիւն, Շրջ. Ժողովը որոշած է որ երբ Ընդհանուր Ժողովը բանաւոր առարկութիւններով չուզէ ճանչնալ Պալքանի երկու ձայն ունենալու իրաւունքը, այս պարագային Պալքանի ձայնը պիտի ներկայացնէ ընկեր Զարդարեան, միաժամանակ Շրջանական Ժողովի կողմէ պահանջելով որ ընկեր Սարգիս Մինասեան անպայմանօրէն հրաւիրուի Ընդհանուր Ժողովին:

Հետեւաբար ընկեր Զարդարեանի եւ Սարգիս Մինասեանի ամէն իրաւասութիւն տրուած է Ընդհանուր Ժողովի մէջ պաշտպանելու Շրջանական Ժողովի կողմէ մշակուած հարցերը եւ դեռ այն խնդիրներն ալ, որ կրնան նախատեսուած չբլլալ Ժողովին կողմէ:

Ընկերական ջերմ բարեւներով

Հ. Յ. Դ. ՊԱԼՔԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

14.— ԼԻԱԶՕՐԱԳԻՐ ԲԺ. ՋԱՒՐԵԱՆԻ

Սեւ մելանով, ճամակի փոքր չափի երկերեր թուղթի ա. երեսին վրայ: Ցակովբը Բժ. Ց. Զաւրեանն է: Կը կրէ Մրգաստանի (Երեւանի) Կ. Կոմիտէի կարմիր կնիքը:

Հ. Յ. Դ.
Մրգաստանի
Կենտր. Կոմիտէ

Վկայականս ներկայացնող ընկեր Յակովբը Մրգաստանի ներկայացուցիչն է:

Կենտր. Կոմիտէի կողմից՝

ՏԱՇԵՐԵԱՆ

15.— ԱՅԳԵՍՏԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԻ ՆԱՄԱԿԸ

Գրուած սեւ մելանով, ճամակի երկերեր փոքր թուղթի վրայ, 1 էջ եւ 3 տող: Կը հաստատէ Ալ. Մաշուրեանի լիազօրութիւնը՝ իբրեւ պատգամաւոր Այգեստանի (Գանձակ) շրջանի:

9 Դեկտեմբեր 1906

Ընկեր Ալեքսանդր Մաշուրեանին

Հ. Յ. Դաշնակցութեան Այգեստանի Շրջանային Ժողովը իր վերջի նիստում, որը տեղի ունեցաւ Այգեստանում սոյն 1906 թ. Դեկտեմբերի 6ին, ձայների մեծամասնութեամբ ընտրեց Ձեզ պատգամաւոր Այգեստանի շրջանից Հ. Յ. Դաշնակցութեան գումարուելիք Ընդհանուր Ժողովին մասնակցելու համար: Ընդսմին ուղարկւում են Ձեզ Շրջանային Ժողովի արձանագրութիւնները հանդերձ մեծամասնութեան ու փոքրամասնութեան բանաձեւներով ու տեղական պատասխանատու մարմնի (Այգեստանի Կ. Կոմիտէի) տեղեկագրով: Ընկերները յուսով են, որ Ընդհանուր Ժողովի պարապմունքները վերջանալուց յետոյ, կովկաս վերադառնալու դէպքում, կը մտնէք Այգեստան՝ անձամբ դեկուցանելու ընկերներին Ընդհանուր Ժողովի պարապմունքների մասին, բերելով Ձեզ հետ նրա բոլոր արձանագրութիւնները:

Ի դիմաց Այգեստանի Շրջանային Ժողովի ու տեղական Կ. Կոմիտէի՝
ընկեր ՀՐԱՆՏ-ԻԻԶԲԱՇԻ

Յ. Գ.— Մեր մարմնի դրամական մանրամասը հաշիւը չուտով կը ստանաք Արեւելեան Բիւրոյի միջոցով:

ՆՈՅՆ

16.— ԼԻԱԶՕՐԱԳԻՐ ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ

Գրուած սեւ մելանով, «Հ. Յ. Դ. II Կ. Կոմիտէ» վերտառութեամբ փոքր չափի պաշտօնաթուղթի վրայ, ա. երես: Կը կրէ Զրաբերդի (Կարսի) Կ. Կոմիտէի, (թիւ II Կ. Կոմիտէ) կնիքը:

Ղարիբ՝ Ա. Ահարոնեանի ծանօթ ծածկանունն է:

ՎԿԱԾԱԳԻՐ

28 Նոյեմբեր 1906

Զրաբերդի Շրջանային Ժողովը՝ գումարուած տարուս Նոյեմբերի 28ին իր երրորդ նիստում գաղտնի քուէարկութեամբ միաձայն ընտրեց ընկեր Ղարիբին պատգամաւոր, ներկայ լինելու իր շրջանի կողմից Հ. Յ. Դ. IV Ընդհանուր Ժողովին, որին եւ ուղարկւում է մանդատը եւ շրջանի հաշիւն ու տեղեկագիրը:

Նախագահ Շրջանային Ժողովի՝
Ա. ԱՐԱՄԵԱՆ
Քարտուղար՝ Լ. ԳԱՍՊ[ԱՐԵԱՆ]

17.— ԼԻԱԶՕՐԱԳԻՐ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Գրուած սեւ մելանով, փոքր չափի երկթերթ թուղթի մը ա. երեսին վրայ: Կնքուած է Արեւելեան Բիւրոյի կնիքով (Ապառաժը — Ղարաբաղ — ըստ երեւոյթին այդ ժամանակաշրջանին չունէր առանձին կնիք):

Ապառաժի Կ. Կոմիտէի Շրջանային Ժողովը իր Դեկտեմբերի 20ի նիստում ընտրեց Ընդհանուր Ժողովի համար պատգամաւոր ընկեր Բարսեղեանին:

Շրջանային Ժողովի պատգամաւորներ.—
Վարանդայի կողմից՝ ՎԱՐԴԱՆԵԱՆ, ՎԱՀԱՆ
Դիզակի կողմից ՄԻՍԱԿ
Քաղաքի կողմից՝ ՄԵԼԻՔ ՄՈՒՐԱՏ
Վարանդայի կողմից՝ ԽԵՋՕ, ՏՐԴԱՏ, ՇԱՒԱՐՇ ՏՈՐԳԵՂ
Սիւնիքի կողմից՝ ՈՒԽՏԱՒՈՐ

18.— ԼԻԱԶՕՐԱԳԻՐ ՑՈՒՇԻԿԻ

Գրուած սեւ մելանով, «Հ. Յ. Դաշնակցութեան Ժլատի Կ. Կոմիտէ» վերտառութեամբ փոքր չափի պաշտօնաթուղթի վրայ, ա. երես: Կնիք Ժլատի (X) Կ. Կոմիտէի՝ կարմիր մելանով (Հիւս. Կովկաս):

Պատգամաւոր Ցուշիկը Տիկ. Ժենիա Մելիք-Քալանթարեանն է:

ՎԿԱԾԱԿԱՆ

№ 466 2 Նոյեմբեր 1906

Հ. Յ. Դ. Ժլատի (X) Կ. Կոմիտէն, հիմնուելով Ժլատի Հոկտեմբեր 24–25 Շրջանային Ժողովի որոշման վրայ, տալիս է սոյն վկայականը ընկեր Յուշիկին՝ մասնակցելու Հ. Յ. Դ. առաջիկայ Կովկասեան Ռայոնական եւ Հ. Յ. Դ. Ընդհանուր պատգամաւորական Ժողովներին, որպէս ներկայացուցիչ Ժլատի շրջանի:

Հ. Յ. Դ. ԺԼԱՏԻ (X) Կ. ԿՈՄԻՏԷ

19.— ԼԻԱԶՕՐԱԳԻՐ ՍԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆԻ

Գրուած սեւ մելանով, նամակի փոքր չափի երկթերթ թուղթի մը վրայ, 2 էջ: Սիգ ծածկանունն է Սիմոն Գրուզինեանի (Վրացեան): Կնքուած է Հ. Յ. Դ. Նալբանդ (XII) Կ. Կոմիտէի կնիքով, կարմիր մելանով (Նալբանդը Նոր Նախիջեւանի շրջանն էր):

2 Փետրուար 1907

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան «Նալբանդ» VII Կ. Կոմիտէի հրաւէրով գումարուած Շրջանային Ժողովը, կազմուած «Ազովեան» ենթակոմիտէի եւ տեղական խմբերի ներկայացուցիչներից՝ թուով 12 հոգի, 1907 թ. Փետրուարի 27ի նիստում 11 ձայնով, 1ի ձեռնպահութեամբ, ընտրեց պատգամաւոր ընկ. Սիգին Ընդհանուր Ժողովին մասնակցելու համար:

Ի նկատի ունենալով, որ Ընդհանուր Ժողովում կարող է ռուսահայկական եւ տաճկահայկական դատերի բաժանման խնդիրը բարձրանալ՝ պատգամաւորին տալիս է հետեւեալ ռեզոլիւցիան.— «բաժանման եւ ոչ բաժանման հարցում «Նալբանդ»ի պատգամաւորը ձեռնպահ պիտի մնայ քուէարկութիւնից, իսկ կոմպրոմիսների մէջ ազատ է»:

Տալով լիակատար ազատութիւն իւր պատգամաւորին միւս հարցերում՝ Ժողովը հրահանգում է նրան արծարծել Ընդհանուր Ժողովում զաղութային հարցը, որի լուծման համար առաջարկում էր, որ Կովկասեան Գործունէութեան Նախագիծի մէջ յիշուած ֆեդերատիւ սկզբունքը ոչ միայն Անդրկովկասի համար պահանջուի, այլ ամբողջ Ռուսաստանի:

Սրանով առաջարկում ենք Ընդհանուր Ժողովի ընկերներին ընդունել ընկ. Սիգին իբրեւ պատգամաւոր:

«Ազովեան» շրջանից՝ ԱՐՏԱՋԵԱՆ ԹԱՔՈՒԼ, ԱՐԱՄԱՅԻՍ, ՋԵՓԻՒՌ, ՍԻԳ, ՄՈՒՇԵՂ, ԿՈՂ(?)

20.— ԼԻԱԶՕՐԱԳԻՐ ՍՏ. ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

Գրուած սեւ մելանով, Վրէժի Կ. Կոմիտէի (Ատրպատական) միջակ չափի երկթերթ պաշտօնաթուղթի վրայ, ա. երես: Կը կրէ նոյն Կ. Կոմիտէի կնիքը (կարմիր մելան):

Ստեփան Ստեփանեանը ծանօթ է նաեւ Բալա Ջան, Վրէժունի, Ծերունի եւն. անուններով:

ՎԿԱԾԱԳԻՐ

1 Դեկտեմբեր 1906
Վրէժ

Համաձայն Վրէժստանի 1906 թ. Փետրուարին գումարուած II Շրջանային Ժողովի ընտրութեան, Ս. Ստեփանեանը ներկայանում է Հ. Յ. Դաշնակցութեան պատգամաւորական չորրորդ Ընդհանուր Ժողովին իբր պատգամաւոր մեր շրջանից:

Իրեն տրուած մանդատի համաձայն վճռական քայլեր անել կարող է, իսկ չնախատեսուած եւ կարեւոր խնդիրներում՝ խորհրդակցելով Կ. Կոմիտէիս հետ:

Հ. Յ. Դ. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ
Կ. ԿՈՄԻՏԷ

21.— ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԻ ՀԱՍՏԱՏԱԳԻՐ-ՆԱՄԱԿԸ

Գրուած սեւ մելանով, Հ. Յ. Դ. Վրէժի Կ. Կոմիտէի միջակ չափի միաթերթ պաշտօնաթուղթի վրայ, ա. երես: Կնիք Ատրպատականի Կ. Կոմիտէի:

8 Փետրուար 1907

Հ. Յ. Դաշնակցութեան
IV Պատգամաւորական Ժողովին

Ընկերներ,

Սոյն պաշտօնական գրութեամբ գալիս ենք վաւերացնելու Վրէժստանի պատգամաւոր Ս. Ստեփանեանի մօտ գտնուած շրջանի վերաբերեալ բոլոր արձանագրութիւնները, որոնցից ծագած բոլոր վիճաբանութիւններին մեր կողմից լիազօր իրաւունքով կարող է մասնակցել իբր մանդատէր: Իսկ չնախատեսուած հարցերում եւ խնդիրներում, լաւ ծանօթանալով բոլոր ընկերների կարծիքների եւ տրամադրութեանց հետ, կարող է վճռական ձայն տալ, իբր լիազօր ներկայացուցիչ Վրէժստանի:

Ընկերական բարեւներով՝
Հ. Յ. Դ. ԱՏՐ. Կ. ԿՈՄԻՏԷ

22.— ԼԻԱԶՕՐԱԳԻՐ ԱՐՇԱԿ ՋԱՄԱԼԵԱՆԻ

Գրուած սեւ մելանով, միջակ չափի թուղթի մը վրայ, մէկ երես:

Արշակ Իսահակեանը Ջամալեանն է, իսկ ստորագրողներէն Դերենիկ Դեմիրջեանը՝ յետագայ ծանօթ գրողը:

23 Յունուար 1907, Ժընեւ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան
Արեւմտեան Բիւրոյին

Համաձայն ձեր առաջարկութեան՝ Ժընեւի «Զանք» դաշնակցական ուսանողական խումբը կազմակերպելով այն պատգամաւորի ընտրութիւնը, որ համաձայն Դաշնակցութեան կանոնադրութեան՝ Եւրոպայի դաշնակցական ուսանողները կարող են ուղարկել առաջիկայ Ընդհանուր Ժողով, պարտք է համարում յայտնել ձեզ, որ ընդհանուր քուէարկութիւնից յետոյ՝ ընտրութեան մասնակցող Եւրոպայի զանազան քաղաքների դաշնակցական ուսանողութիւնը, ձայների մեծամասնութեամբ, ընտրեց Բերլինի ուսանող ընկեր Արշակ Իսահակեանին, որ եւ ներկայացնում ենք ձեզ:

Ի դիմաց խմբի՝
ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՋԵԱՆ
Ռ. ՏԷՐ ՂԵՒՈՆԴԵԱՆ

23.— ԼԻԱԶՕՐԱԳԻՐ ԱՒԵՏԻՔ ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆԻ

Գրուած սեւ մելանով, «Հ. Յ. Դ. Մոսկուայի Կոմիտէ» վերտառութեամբ փոքր չափի պաշտօնաթուղթի վրայ:
Արտուրը Աւետիք Շահխաթունեանն է:

20 Յունուար 1907

Այս վկայականը տրուած է Մոսկուայի Կոմիտէի կողմից ընկեր Արտուրին, իբրեւ կուսակցութեան Ընդհանուր Ժողովի պատգամաւորին, ընտրուած Ռուսաստանի Դաշնակցական Ուսանողութեան կողմից:

Ի դիմաց Հ. Յ. Դ. Մոսկուայի Կոմիտէի՝
ԿԱԼԻՕՍՏՐՕ (Ը. Յ.)

24.— ԻԶՄԻՐԻ ԿՈՄԻՏԷԻ ՆԱՄԱԿ-ԼԻԱԶՕՐԱԳԻՐԸ

Սեւ մելանով, միջակ չափի նամակի երկթերթ թուղթի մը վրայ, ա. երես: Կնիք Զմիւռնիոյ Կոմիտէի:

Դ. Ընդհանուր Ժողովը մերժած էր Իզմիրի Ցուցական Մարմնի անդամ Անդրանիկի մասնակցութիւնը՝ իբրեւ Իզմիրի պատգամաւոր (տե՛ս ՆԻՒԹԵՐ, Գ. հտր., էջ 13): Իզմիրի (Ոսկեհատի) ձայնը ի վերջոյ տրուեցաւ Ալանին (Ռուբէն Զարդարեան), ըստ

երեւոյթին շրջանի նոր մէկ առաջարկին ընդառաջելով (տե՛ս ՆԻՒԹԵՐ, Գ. հատ., էջ 101)։

17/30 Յունուար 1907, Զմիւռնիա

Յարգելի ընկերներ,

Ներկայ գումարուելիք պատգամաւորական Ընդհանուր Ժողովին՝ մեր կողմէ պատգամաւոր ներկայանալու պաշտօնը յարմար դատած ենք մեր նախկին ընկեր Անդրանիկին յանձնել, որովհետեւ նա քաջածանօթ է մեր տեղական բոլոր պայմաններուն եւ մեր յարմարութիւններուն։

Այս առթիւ ընկեր Անդրանիկին հարկ եղած յանձնարարականով՝ մեր բոլոր խնդիրքներն ու պահանջները տեղեկագրած ենք նրան։

Ներկայ մեր զրուցեամբ կը փութանք խնդրել Զեզմէ՝ որպէսզի մեր հաշուոյն հարկ եղած ճանապարհածախսը փութով ընկեր Անդրանիկին ուղարկելով իմացնէք նրան Ժողովի վայրն ու հասցէն։

Ընկերական բարեւներով՝
ՆԱՀԱՊԵՏ ԽԻԶԱՆ

25.— ԼԻԱԶՕՐԱԳԻՐ ԱՐՍԷՆԻ

Գրուած մանիշակագոյն մելանով, նամակի փոքր չափի երկթերք թուղթի մը ա. երեսին վրայ։

Ընդհանուր Ժողովը, ճանչցած չբլլալով Ծովափի (Տրապիզոն) մասնակցութեան իրաւասութիւնը, Արսէնին տուած էր խորհրդակցական ձայն միայն (տե՛ս ՆԻՒԹԵՐ, Գ. հատ., էջ 9, պատգամաւորներու ստորագրութիւններ)։

20 Մարտ 1907, Ծովափ

Ընկերներ,

Ծովափի կողմէն պատգամաւոր ընտրուած է Ծովափի Կոմիտէի նախկին ընկերներէն՝ Արսէն։ Այս տեսակ պաշտօնաթուղթ մ'ալ հաշուեցոյցով միասին արդէն բաւական առաջ ղրկուած էր, տեղեկագրէն յետոյ, բայց կ'երեւի չէ ստացուած, միայն թէ ընկերներէն երկուքի բացակայութեան պատճառաւ, մնացեալ երկուքի ստորագրութեամբ միայն գրուած է ասիկա։

Տեղեկացանք թէ Ծովափի Կոմիտէն պատգամաւոր ղրկելու իրաւունքին մէջ չէ նկատուած. եթէ այդպէս էր ինչո՞ւ Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոները մեզմէ պատգամաւոր պահանջեցին. եւ ինչո՞ւ Արեւելեան Բիւրոն մեր պատգամաւորին Մեծ քաղաքէն մեկնած ժամանակ այդ դիտողութիւնը չըրաւ, չարգիլեց զինքը, որպէսզի մենք ալ այդքան ծախքերու ենթակայ չըլլայինք. այս բանը մեզի ենթադրել կու տայ թէ գործի մէջ պահանջուած կանոնաւորութիւնը չկայ։

Միայն բարեւներով եւ ջերմ համբոյրներով

Մնամ միշտ յարգանօք, Ձերդ
ՔԱՋԲԵՐՈՒՆԻ

26.— ՔԱՋԲԵՐՈՒՆԻԻ ՆԱՄԱԿԸ

Դ. Ընդհանուր Ժողովի Դիւանի թուղթերուն մէջ տեղ գտած այս նամակին որո՛ւ ուղղուած ըլլալը կը մնայ անորոշ. — Ընդհանուր Ժողովի՞ն, որուն ատենագրութեանց մէջ յիշատակուած չէ պարագան, թէ՞ շրջանի մը Շրջանային Ժողովին։ Որոշ չէ նաեւ թէ ո՞վ է «Տոքթոր»ը, որուն Քաջբերունի կը փոխանցէ իր ձայնը։

Գրուած սեւ մելանով, նամակի փոքր չափի երկթերք թուղթի մը ա. երեսին վրայ։

13 Մարտ 1907, Պէյրութ

Ազնիւ բարեկամ,

Ձեր հարսանեաց հրաւիրագիրը ստացած եմ ժամանակին, շնորհակալութիւն։ Անշուշտ փափաքելի էր ինձ այդ նուիրական հանդէսին անձամբ ներկայ գտնուիլ անձամբ սեղմել ձեր ձեռքը. բայց դժբախտաբար այդ առթիւ իմ բոլոր ջանքերս ապարդիւն մնացին եւ չպիտի կարենամ այդ վայելքը ունենալ։

Ուստի հաճեցէք ընդունիլ իմ սիրելի Տոքթորիս փոխանորդութիւնը, որը ներկայ պիտի գտնուի ձեր հարսանեաց հանդէսին, ու պիտի փոխանորդէ ինձ։

Սիրալիր բարեւներով եւ ջերմ համբոյրներով

Մնամ միշտ յարգանօք, Ձերդ
ՔԱՋԲԵՐՈՒՆԻ

27.— ՍԱՐՀԱՏԻ ՆԱՄԱԿԸ

Գրուած նամակի միջակ չափի թուղթի մը վրայ։

Ընդհանուր Ժողովը 29 Մարտի իր 57րդ նիստին մերժած էր Սարհատի մասնակցութիւնը՝ իբրեւ Լեռնավայրի պատգամաւոր (տե՛ս ՆԻՒԹԵՐ, Գ. հատ., էջ 142)։

12 Ապրիլ 1907

Հ. Յ. Դ. Ընդհանուր Ժողովի Դիւանին

Կը խնդրեմ Դիւանէդ, որ բարեհաճիք ինձ իմացընել 1ին թէ ի՞նչ եղաւ իմ խնդրոյ մասին կազմուած յանձնախումբի գործունէութիւնը, եւ ե՞րբ պիտի վերջանայ. նոյնպէս չմոռնալ յանձնախումբի կողմէ իմ մասին տրուելիք զեկուցման օրը, իմ ներկայութեան անհրաժեշտութիւնը։

2րդ թէ ի՞նչ հիմնական պատճառներով Ընդհանուր Ժողովը իմ պատգամաւորութիւնս մերժած է, խնդրեմ այդ մասին եղած արձանագրութեան պատճէնը ինձ ուղարկել, որը ընդունուած ամենատարրական օրէնքն է։

Հաշուած երկու ամիսէ ի վեր իմ անձնական գործէս ունեցած կորուստս, հոս այս խնդրին համար, Դաշնակցութեան դրամը ի զուր տեղը կը շռայլեմ. խնդրեմ այս անհաճոյ վիճակէն շտապեցէք ինձ փրկել։

ՍԱՐՀԱՏ

28.— ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Նամակի փոքր չափի թուղթի վրայ, մէկ երես։ Թուական չի կրեր։ Գրուած է հաւանաբար Կովկասէն։

Ռոստոմ, Խաչատուր(1),
Տղերք,

Ինձ թւում է՝ վատ չէր լինի, եթէ Quillardին(2) *որոշ ժամանակով կանչէիք Ժողովին ներկայ լինելու համար։ Նա, անշուշտ, սպասում է այդ. բացի այդ՝ նրա ներկայութիւնը* հաշտարար *ազդեցութիւն կ'ունենայ։*

Այստեղ դրութիւնը միշտ աւելի եւ աւելի խճճւում է։

Ամէն օր հայեր են ընկնում վրացի խուլիգանների ձեռքից։

Երէկ փախցրել են քեռուս փոքրիկ տղային (պատանդ)։

ՄԻՔԱՅԷԼ

(1) Խաչատուր Մալումեան (Ակնունի)։
(2) Pierre Quillard, «Pro Armenia» թերթի խմբագրապետը, ծանօթ հայասէր եւ Հ. Յ. Դաշնակցութեան բարեկամ։

Կարծում եմ, որ Ժողովը յարմար կը գտնի լսել մի ընկերոջ կարծիք, որ կովկասեան կեանքից երկար ժամանակ է հեռացած եւ որը միայն տարուած է եղել տաճկահայ դատով։

Բարեւներ բոլորին՝
ՄԱՐ

«Դրօշակ»ի հրատարակութեան նոր կարգադրութիւն չեկաւ։

30.— ՎԱՀՐԱՄԻ ՆԱՄԱԿԸ

Գրուած սեւ մելանով, նամակի փոքր չափի երկթերք թուղթի մը վրայ, 2 երես։ Վահրամը (Յարութիւն Գալփայեան) եգիպտոսի հին գործիչներէն է։ Ան 1907ին կը գտնուէր Ժընեւ եւ կը վարէր Արեւմտեան Բիւրոյի («Դրօշակ»ի խմբագրութիւն) քարտուղարութիւնը։

30 Յունուար 1907, Ժընեւ

Սիրելիք,

Կը յուսանք, որ Խաչատուրը եւ Տիկին Ճուշիկը արդէն հասած լինին։

Քիարէն(1) *այսօր ստացանք ներփակեալ նոթը, Հայկական Հարցի Եւրոպայում եւ Ֆրանսիայում ներկայ վիճակի մասին։ Իր նամակի հիման վրայ այսօր փոխադրեցինք* 1500 *ֆրանք։ Ի դէպ նկատի ունենալով իր տիկնոջը հիւանդութիւնը եւ այն պարագան որ անցեալ տարի այս ժամանակէն առաջ իր հոնորարի համար որոշ դումար մը փոխադրած էինք, յարմար չէ՞ք դատեր, որ առանց ուշացնելու մաս մը գումար փոխադրենք. դրեցէք այս մասին։*

Վահարին(2) *Գարիզ հասած ըլլալու լուրը դեռ չենք ստացեր։*

Խաչատուրի անունով Hôtel Germania *հասցէին «Դրօշակ» եւ նամակներ ուղարկեր ենք, կը յուսանք որ կը ստանաք։*

Ներփակ նամակը Գարսկաստանի պատգամաւոր ընկեր Ստեփանեանին է. կը յանձնէք։

Բարեւներով՝
ՎԱՀՐԱՄ

(1) Pierre Quillard, տե՛ս թիւ 28 նամակի ծանօթագրութիւնը։
(2) Արշակ Վռամեան։

29.— ՄԱՐԻ ԵՐԿՏՈՂԸ

Գրուած փոքր թուղթի մը վրայ, ժընեւէն։ Թուական չի կրեր։ Ուղղուած է Խաչատուր Մալումեանին (Ակնունի)։ Մարը (Մար-Շիմօն, Միխայէլ Տէր Մարտիրոսեան) Հ. Յ. Դաշնակցութեան հին գործիչներէն է։ 1907ին, Դ. Ընդհանուր Ժողովի օրերուն, ան եւս, ինչպէս Յ. Գալփայեանը (Վահրամ), կը գտնուէր ժընեւ եւ մաս կը կազմէր «Դրօշակ»ի խմբագրութեան։

Խաչատուր,

Խնդրում եմ, դրածս առաջարկը կարդաս Ընդհանուր Ժողովին։

Յարգանքով՝ Վահրամ

31.— ՆԱՄԱԿ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԷՆ

Վահրամի ձեռագրով, նամակի փոքր չափի երկթերք թուղթի մը վրայ, 3 էջ։

3 Փետրուար 1907, Ժընեւ

Սիրելիք,

Ընկերներու հասցէին եկած մի քանի նամակներ ուղարկեր ենք Օրտուխանի հասցէով, կը յուսանք որ ստացեր էք:

Ներփակեալ կ'ուղարկենք Ժողովի համար եկած նամակներ եւ նամակ մը Աթէնքի փաստաբան Cofiniotisէն: *Զլխեն այս վերջինին ի՛նչ պատասխանել, մանաւանդ որ Աթէնքի թղթերը եւ հաշիւները ձեր մօտ կը գտնուին: Գիտենք, որ վաճառականէն որմէ զէնքերը գնած եւ անոր մօտ* դէպօ *դրած են, փողեր քաշեր են, ինչպէս Յովսէփեանը այն ատեն գրած էր, բայց քանակը կրնաք Աթէնքի* դօսիէի *մէջ գտնել: Գրեցէք մեզ ուրեմն ի՛նչ քայլ առնել, քանի որ* 7000 *ֆրանքէն աւելի արժէք ունեցող զէնքերի փոխարէն* 3500 *ֆրանքի պարտք են ցոյց տալիս: Կը սպասենք ձեր պատասխանին:*

Վահաբը երէկ այստեղ հասաւ: Ինք կը սպասէ Ժողովի կանոնաւոր բացումէ վերջ Ժողովի պաշտօնական հրաւէրին. վաղը կամ միւս օր կը մեկնի Միւնիխ՝ քրոջը մօտ, որու հասցէն է հետեւեալը՝

Melle E. Derdzakian
Konrad Strasse 5IV
Münich

Ինք նոյնպէս կը ցանկանայ, որ իրեն համար ըլլալիք հրաւէրը լինի օրինաւոր եւ Ժողովին կողմէ:

Ստեփաննեանի հեռագիրը ստացել ենք, որով Թղթեր ու նամակներն է ուզում. առանց հեռագրի էլ եղած նամակները, ինչպէս տեսնում էք, ուղարկում ենք իսկոյն եւեթ: Իսկ Թղթեր ասելով ինչ է ուզում, մեզ հասկանալի չէ:

Աթէնքից, Տրապիզոնի շրջանի ներկայացուցչից դեռ նամակ չստացանք. երբ ստանանք, իսկոյն կը հեռագրենք, որ ճանապարհուի Ձեզ մօտ:

Խաչատուրի նամակը ստացանք այսօր:

Բարեւներով՝
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԴՐՕՇԱԿ»Ի

32.— ՆԱՄԱԿ ՄԱՐԷՆ

Գրուած սեւ մելանով, «Դրօշակ»ի խմբագրութեան նորմալ չափի պաշտօնաթուղթի վրայ, 1 էջ:

4 Փետրուար 1907, Ժընեւ

Ընկերներ,

Եւրոպական ուսանողութեան պատգամաւոր Ա. Իսահակեանից նամակ ստացանք, որով խնդրում է Ժողովը բացուելուց մի քանի օր առաջ իրեն իմաց տանք, որ նա դայ այստեղ՝ ուսանողութեան մասին տեղեկագիր կազմելու եւ Ժողովի առթիւ մի քանի խնդիրների հետ ծանօթանալու համար: Նկատի ունենալով՝ որ Ժողովը բացուելու է անմիջապէս եւ նրա ցանկութիւնը իրագործելու ոչ մի ժամանակ չէ մնում, իրեն զրեցինք, որ Ձեր հրաւէրն ստանալուն պէս մեկնի Ժողովատեղին եւ անհրաժեշտ տեղեկութիւններն Ձեզանից Ժողովի:

Ալեքսանդրիայի ենթակոմիտէից նամակ ստացանք, որով մեզ խորհուրդ են տալիս՝ Սողոմոն Գէորգեանին վճարել մնացած գումարը — 400 ֆր. (այդ խնդիրը ծանօթ է Խաչատուրին) եւ դրանով խնդիրը ընդմիշտ փակել:

Մենք էլ կարծում ենք, որ այդ խնդիրը վերջացնելու է առանց երկար ձգձգելու: Գրեցէք Ձեր կարծիքը:

Ընկերական բարեւներով՝
ՄԱՐ

Աթէնքի փաստաբան Cofiniotisին *դրեցինք, որ մի քանի օր սպասէ: Այդ մասին չէք մոռանար հաղորդել ձեր կարծիքները: Երէկ փոստ ձգեցինք Խաչատուրի հասցէով ապահովագրուած նամակ մը* Hôtel Germania:

ՎԱՀՐԱՄ

33.— ԵՐԿՏՈՂ ՎԱՀՐԱՄԷՆ

Փոքր չափի նամակի թուղթի վրայ:

5 Փետրուար 1907, Ժընեւ

Սիրելիք,

Այսօր ստացանք Թոստոմի հեռագիրը: Վահաբը այսօր մեկնեցաւ Միւնիխ մօրը եւ քրոջը մօտ, ուրկից շուտով կը մեկնի Վիեննա. իսկ Մանուկէն մինչեւ օրս նամակ կամ որեւէ լուր չենք ստացեր. այսօր հեռագրեցինք որ ուղղակի Վիեննա մեկնի: Կը յուսանք, որ շատ չանցած կը լինի նա եւս ձեզ մօտ:

Ներփակ նամակը եւ հաշիւները այսօր ստացուած են. կը փոխադրենք ձեզ:

Բարեւներով՝
ՎԱՀՐԱՄ

34.— ՆԱՄԱԿ ՄԱՐԷՆ

Փոքր չափի նամակի թուղթի վրայ, 1 երես: Ուղղուած է Վիեննա՝ Ակնունիին:

5 Փետրուար 1907, Ժընեւ

Խաչատուր,

Լնդելլիից եկած է էթմէքճեանը, որ պաշտօնեայ էր մաքսատանը, եւ գնում է Ամերիկա: Նա բերել է մի տոկումենտ՝ բելգիացիների դէպի հայերն ունեցած վերաբերմունքի իրր փաստ: Ի՞նչ ես կարծում — տը-պարել պէ՞տք է Թերթում. եթէ պէտք է, շուտ պատասխանիր եւ ետ ուղարկիր, որ Թարգմանենք ու տը-պարենք «Դրօշակ»ում:

Զմոռանաս վերցրածդ ձեռագիրը՝ «Ղափանի դէպքերը» շուտով մեզ հասցնել:

Բարեւներով՝
ՄԱՐ

35.— ՆԱՄԱԿ ՎԱՀՐԱՄԷՆ

Նամակի փոքր չափի երկթերթ թուղթի վրայ, մէկուկէս էջ:

7 Փետրուար 1907

Սիրելիք,

Խաչատուրին նամակը ստացանք: Ներփակ կը գտնէք Քիարին մի հարցարանը. այս հարցերուն պատասխանը կ'ուղարկէք մեզ. գլխաւորաբար գրէք Դաշնակցութեան հիմնադրութեան թուականի եւ մեր կազմակերպութեան գործունէութեան մասին Կովկասում:

Այսօր ստացանք Իզմիրէն երկու տղայոց ստորագրութեամբ եւ կոմիտէի կնիքով կնքուած գրութիւն մը, որով այնտեղի նախորդ Յուց. Օժ. Մարմնի անդամ Անդրանիկը իրենց ներկայացուցիչը կ'ընտրեն: Ստորագրողներու խկութիւնը մեզ ծանօթ չէ. նոյնպէս չգիտենք թէ կոմիտէի կնիքն իրօք նե՞րսն է թէ արտասահման:

Թերթի համար այստեղի գտնուող նիւթերը սպառած են. Երկրէն եւ Կովկասէն ձեռքի տակ ոչ մի թղթակցութիւն. ուրեմն աշխատեցէք անկից նիւթեր ուղարկել, որպէսզի թերթը իր ժամանակին լոյս տեսնէ: Խաչ[ատուր]ը իր մօտ գտնուած կովկասեան թղթակցութիւնը անյապաղ ուղարկէ:

Բարեւներով՝
ՎԱՀՐԱՄ

36.— ՆԱՄԱԿ ՎԱՀՐԱՄԷՆ

Նամակի փոքր չափի երկթերթ թուղթի վրայ, 2 երես:

8 Փետրուար 1907, Ժընեւ

Սիրելիք,

Կը հաստատենք Խաչի(1) *հասցէով մեր երէկուան նամակը. ստացանք այսօր ձեր նամակը:*

1.— Ատրպատականի բոլոր թերթերը Խաչատուրը տարած է. հաշուական տախտակները պէտք է փընտռել հաշիւներու դոսիէին մէջ:

2.— Մեծաղիր պատկերներ վաղուց ուղարկուած են. կը յուսանք որ ցարդ ստացեր էք:

3.— Մարտ. Յարութիւնեանին(2) *փոխադրեցինք* 100 *ֆրանք. Քիարին* 1000 *ֆր.: Ս. Գէորգեանին կը փոխադրուի այսօր՝ հաշիւները քննելէ յետոյ:*

4.— Ներփակեալ կը գտնէք Շամի(3) *ընկերներու մի նամակը՝ ուղղուած նոյն շրջանի ընկերներուն:*

Ասացէք Շամի պատգամաւորներին, որ իրենց տեղական մուտքի հաշիւները հրատարակուած են «Դրօշակ»ի 1906*ի №№* 11 *եւ* 12*ում:*

5.— Տէր Վարդանեանի փոքր նամակը ուղարկուած է փոստի միջոցով Խաչի(1) *հասցէին: Ստանալուն մեզ կը փոխադրէ, որպէսզի իրեն յանձնենք:*

Ձերմ բարեւներ բոլորիդ՝ Մարի, Անտոնի եւ իմ կողմէն:

ՎԱՀՐԱՄ

(1) Խաչատուրի (Մալումեան, Ակնունի):
(2) Սափօ:
(3) Վասպուրական:

37.— ՆԱՄԱԿ ՄԱՐԷՆ

Նամակի փոքր չափի երկթերթ թուղթի վրայ, 3 էջ: Ուղղուած է Խաչ. Մալումեանին (Ակնունի):

11 Փետրուար 1907, Ժընեւ

Սիրելի Խաչատուր,

Մենք ուզում ենք, որ «Դրօշակ»ի երկրորդ համարը մինչեւ ամսիս 25*ը տպագրուի վերջանայ, որպէսզի նրանից յետոյ ձեռնարկենք որեւէ բրոշիւր հրատարակելու: Դու մի ձեռագիր վերցրիր հետդ նայելու. եթէ յարմար ես գտնում շուտով ետ ուղարկիր, որ չարել տանք. եթէ այդ յարմար չես գտնում, մեզ գրի, թէ որն է յարմար եղած ձեռագիրներից, բրոշիւր կազմելու համար:*

«Դրօշակ»ի այս համարի համար շատ քիչ նիւթեր

ունինք. ուզում ենք օգտուել «Ժամանակ»ից՝ Թղթակցութիւններ քաղելու, այդ էլ չկայ «Ժամանակ»ում: Առաջ գոնէ շատ էին լինում այնտեղ տեղեկութիւններ Տաճկահայաստանից: Բայց եւ այնպէս այդ մասը կը լրացնենք: Արդէն մի 7 երես ունինք չարուած եւ ձեռքի տակ: Դրա մէջ մտնում են ե՛ւ Ղափանի ղէպքերը եւ կենսագրականը, ե՛ւ բանտերից ստացուած նամակներից քաղուած 4 կտոր, Վանից մի նամակ, «Միջազգային Սոցիալիստական Բիւրոյի» շրջաբերականը, որ առաջուց թարգմանած էի եւ մնում էր:

Դրա վրայ պիտի աւելացնենք Սիմանթոյի մի ոտանաւոր եւ մտածում ենք մտցնել պատկերներ, ինչ որ կը բռնի երեւի 2 երես կամ թերեւս 5 սիւնակ: Եթէ այս բանին համաձայն ես, շուտ գրի, որ պակաս էլ լրացնենք. թերեւս եւ նիւթեր ստանանք մօտ օրերս: Բայց քանի որ ժողով կայ, ամէն տեղ էլ սպասողական դրութիւն է, թղթակցութիւն ուղարկող չեմ կարծում լինի:

Իմ գրուածքը քեզ եմ ուղարկում, որ աչքի անցընես. եթէ համաձայն ես, շուտ ետ դարձրու եւ մի հատ էլ առաջնորդող գրի, որով թերթը պատրաստ կը լինի: Իսկ եթէ չհամաձայնես, այդ դէպքում մեզ նիւթ տուր: Մեր նպատակն է, որ թերթը չուշանայ եւ գրաշարն էլ պարապ չմնայ:

Ներփակ ուղարկում ենք Բալքան. Կ. Կոմիտէի նամակը, որով Զինւ[որական] վարժարանի համար 2000 ֆ. են ուզում: Այս խնդիրը երեւի շատ ջուր կը վերցնի, հարկաւոր է մի կարգադրութիւն անել:

Բանկում եղած պատրաստի դրամը արդէն վերջանում է. մնացել է 900 ֆ.: Եթէ պէտք է դրամ քաշել, ստիպուած ենք անձեռնմխելի դրամից վերցնել:

Ուղարկում ենք եւ մի շրջաբերական, որ ուղղուած է Ընդհանուր Ժողովին:

Նաեւ մի նամակ Պարսկաստանի ներկայացուցչին:

Մեր հարցերին շուտ պատասխանիր:

Բարեւներով՝
ՄԱՐ

Տէր Վարդանեանի դրամը իրեն յանձնեցի:

38.— ՆԱՄԱԿ ՄԱՐԷՆ

Փոքր չափի նամակի թուղթի վրայ, 2 էջ, սեւ մելանով:

12 Փետրուար 1907, Ժընեւ

Տղերք,

Այսօր ստացանք ներփակ նամակը Ղազարեանից եւ խնդրեցինք Նաւահանգիստ՝ հայերի տեսակցում եղած միակ հայցով — Յարութիւն Դաւթեանին (յանձնել Արշակին) — որ այնտեղի տղերքը դիմաւորեն նաւին եւ ստանան ապրանքը:

Նամակը ղրեցինք հին թանաքով:

Բայց քանի որ երեք օր անցել է նաւի մեկնելուց, կասկածեցինք թէ մի գուցէ մեր նամակը ուշանայ, ինչպէս եւ Ղազարեանն է ասում իր նամակում, յարմար դատեցինք եւ գրել Զեղ. եթէ այդ հայցէն ապահով է եւ թանաքը իրենց յայտնի, ուրեմն խնդիրը փակուած է. հակառակ դէպքում Ձեր գիտեցած մի նոր հայցով նամակ ղրեցէք եւ խնդիրը հասկացրէք. իսկ եթէ կարծում էք, թէ նամակը ժամանակին չի հասնի, մնում է միակ միջոցը՝ հեռագրով հասկացնել:

Խնդրի դժուարութիւնը նրա մէջն է, որ այդ տանողը նոր մարդ է այնտեղի համար, հետեւաբար մերոնք պիտի նրան քննեն:

Բարեւներով՝
ՄԱՐ

Յ. Գ.— Ղազարեանի նամակի մէջ յիշուած երիտասարդը, որ 70 ֆ. է վերցրել, Խաչատուրի յանձնարարութեամբ, այժմ այստեղ է:

Նաւահանգստի հայցէն ամբողջութեամբ գրում եմ, դուցէ Զեզ պէտք դայ:

Յարութիւն Դաւթեանին
Սոխատ. տոմ — Մարինաքի պրոսպեկտ(1)
Յանձնել Արշակին:
Ղազարեանի նամակը յետ դարձրէք մեզ:

---

(1) Գրուած է ռուսերէն:

39.— ՆԱՄԱԿ ՎԱՀՐԱՄԷՆ

Նամակի փոքր չափի թուղթի վրայ, մօտ մէկուկէս էջ:

13 Փետրուար 1907, Ժընեւ

Սիրելիք,

Այս րոպէիս ռուսերէն հեռագիր մը ստացանք Պօղոսեան ստորագրութեամբ եւ Գերմանիա հիւրանոցէն. շատ տարօրինակ... Անմիջապէս հեռագրեցինք իրեն, որ նոյն օթէլում գտնէ Մալումեանին եւ Խաչատրին նոյնպէս հեռագրեցինք, որ Պօղոսեանին փնտռէ: Կը յուսանք, որ հեռագրով իրարու ներկայացումի եւ ծանօթացումի այս արարողութիւնը իր նպատակին հասած լինի...

Խաչատրին նամակը ստացանք. իր ուղածները այսօր կ'ուղարկուին:

Ծովափի պատգամաւորը կը յուսանք մինչեւ այժմ հասած լինի Աթէնքէն: Վաղուց հեռագրած ենք իրեն:

Ցուսալի է որ սպասուած երեք հոգու հասնելուն օրինական թիւը լրացած կը լինի եւ ժողովը պաշտօնապէս կը բացուի:

Ներփակեալ նամակը Վրէժի պատգամաւորին կը յանձնէք:

Մեր երէկուան նամակը անշուշտ կը ստանաք:

Բարեւներով՝
ՎԱՀՐԱՄ

40.— ՆԱՄԱԿ ՎԱՀՐԱՄԷՆ

Գրուած սեւ մելանով, «Դրօշակ»ի խմբագրութեան պաշտօնաթուղթի վրայ, 1 երես:

16 Փետրուար 1907, Ժընեւ

Ընկերներ,

Խաչատրի վերջին 14 Փետրուար թիւ նամակը եւ քարտը ստացանք:

Ներփակեալ կ'ուղարկենք 2 չէք Credit Lyonnaisէն՝ Վիեննայի Anglo–Autrichienne բանկի վրայ 1000ական ֆրանքի (կուրսն 954,20), դումար՝ 2000 ֆր.: Չէքերը Խաչատրի հրամանին են:

Այսօր փոխադրած ենք Պալք. Կ. Կոմիտէին 2000 ֆրանք Ասատուր Պետիկեանի հրամանին՝ ինչպէս յանձնարարած էք:

Ուղարկեր ենք այսօր 30 օրինակ «Կազմակերպական կանոններ»:

Ընկերական բարեւներով՝
ՎԱՀՐԱՄ

41.— ՆԱՄԱԿ ՎԱՀՐԱՄԷՆ

Նոյն (տե՛ս թիւ 40 նամակ):

19 Փետրուար 1907, Ժընեւ

Սիրելիք,

Ներփակ կը գտնէք չէք մը Credit Lyonnaisէն № 533 Վիեննայի Anglo–Autrichienne բանկի վրայ 988,05 կուրսնի (200 դոլարի արժէքը), որ Ամերիկայի Կ. Կոմիտէն փոխադրած է մեզ, հասցնելու Ամերիկայի պատգ. ընկերներ Թ. Ճելալեանի եւ Վ. Տաթեւեանի. կը խնդրեմ գանձելով յանձնեցէք իրենց:

«Դրօշակ»ի հարցի մասին Մարը քանիցս գրած է. դեռ ոչ մի յօդուած չուղարկեցիք: Եթէ մինչեւ ժողովի վերջանալը մեր հրատարակութիւնները պիտի դադրին, յայտնեցէք մեզ՝ որպէսզի ներկայի անորոշ դրութիւնն գուրս գանք:

Ներփակ կը գտնէք ժողովին ուղղուած տեղեկագիր մը՝ Դերսիմի վերաբերեալ, որ ստացեր ենք Ամերիկայի Կ. Կոմիտէէն: Նամակներ՝ ընկերներ Վռամեանին, Ստեփանեանցին. բարի եղէք իրենց յանձնելու:

Բարեւներով՝
ՎԱՀՐԱՄ

42.— ՆԱՄԱԿ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԷՆ

Սեւ մելանով, պաշտօնաթուղթի վրայ, 1 էջ:

28 Փետրուար 1907, Ժընեւ

Հ. Յ. Դ. Ընդհանուր Ժողովի Դիւանին

Յարգելի ընկերներ,

Համաձայն Ձեր Փետրուար 25ի նամակի, անմիջապէս գրած ենք Գահիրէի ենթակոմիտէին, որ յայտնեն Ոսկեհանքի Մարմնին (նորա անդամ Անդրանիկի հայցէով), որ անմիջապէս ներկայացուցիչ ուղարկեն Ժողովին հաշիւ եւ համար տալու իրենց գործունէութեան մասին: Տուած ենք հայցէն՝ յանձնարարելով, որ ամէն կերպով դաղտնի պահեն Ժողովին դումարման վայրը:

Հակառակ մեր ջանքերուն անկարելի եղաւ Յուցականի վերաբերեալ պահանջուած թուղթերը դտնել: Կը խնդրենք որ ուշադրութեամբ քննեցէք այնտեղ Յուցականի դօսիէն:

Ընկերական բարեւներով՝
«ԴՐՕՇԱԿ»ի խմբագրութիւն

Յ. Գ.— Փոստին յանձնած ենք, այս պահուս «Շարժում»ի խմբագիր Վարդոյէն ստացած բողոքագիր մը՝ ուղղուած Ընդհանուր Ժողովին, նոյնպէս «Շարժում»ը:

ՆՈՅՆ

43.— ՆԱՄԱԿ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԷՆ

Սեւ մելանով, պաշտօնաթուղթի վրայ, 1 էջ:

14 Մարտ 1907, Ժընեւ

Սիրելիք,

Խաչատրի նամակի հիման վրայ ներփակեալ 2 չէքով կ'ուղարկենք (2000) երկու հազար ֆրանք: Չէքե-

ը առնուած են Credit Lyonnais*էն №№ 739 եւ 740 Վիեննայի* Anglo–Autrichienne *բանկի վրայ՝ Խաչատրի հրամանին:*

Այսօր ապահովագրուած ղրկեր ենք Comptoir d'Escompte *բանկի չէքերու տրցակ մը: Կը խնդրենք որ Խաչատուրը մի քանիսը ստորագրելով մեզ վերադարձնէ:*

Ընկերական բարեւներով՝
«ԴՐՕՇԱԿ»ի խմբագրութիւն

Յ. Գ.— Մեր հրատարակութիւններէն 20ական օրինակ այսօր ուղարկուած է փոստով:

ՆՈՑՆ

44.— ՆԱՄԱԿ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԷՆ

Նոյն (տե՛ս նամակ 42 եւ 43):
Կցուած է Յ. Շահրիկեանի նամակը:

12 Մարտ 1907, Ժընեւ

Սիրելիք,

Ներփակ կը ղրկենք ընկեր Շահրիկեանի մի նամակը, որով ցանկութիւն կը յայտնէ իր հայեացքներու եւ Ընդհանուր Ժողովին ըրած առաջարկներու հրատարակութիւնը, փափաք յայտնելով միանգամայն, որ վաղօրօք ստացուի Ընդհանուր Ժողովի կարծիքը հրատարակութիւնը անպատշաճ չհամարուող մասերի վերաբերմամբ: Կը խնդրենք նկատի առնել մեր ընկերոջ ցանկութիւնը:

Ներփակեալ երկու նամակները բարի եղէք յանձնել իր պատկանելիներուն:

Ընկերական բարեւներով՝
«ԴՐՕՇԱԿ»Ի խմբագրութիւն

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Նիքրա Շահրիկեանի կուսակցական ծածկանունն է:
Ակնարկուած գրութիւնը («ՀՆԳԱՏԱԿ ԵՒ ԾՐԱԳԻՐ») լոյս տեսած է ԱԶԴԱԿ շաբաթօրեակ–ԴՐՕՇԱԿի մէջ, Զ. տարի (1975), թիւ 13, 14 եւ 15:

27 Փետրուար 1907, Ռոկանապատ

Արեւել. Բ.ի ընկերներին !

Ռոկանապատի պատգամաւորի հետ ուղարկել եմ Ընդհանուր Ժողովին ներկայացնելու համար իմ հայեացքներն ու առաջարկները երկու ընդարձակ գրութիւններով, որոնք, սակայն, ժամանակի սղութեան պատճառով մաքուրը չեն արտագրուած, եւ ընկեր պատգամաւորը վերցրել է պարտաւորութիւն իմ կողմից կարդալու:

Այդ գրութիւնների բովանդակութիւնը՝ թէկուզ մասամբ, Ընդհանուր Ժողովի հաւանութեան արժանանան թէ ո՛չ, ինձ համար ցանկալի էր յարմար առթիւ սրբագրութեամբ եւ վերախմբագրութեամբ առանձնապէս հրատարակութեան տալ: Բայց, ենթադրում եմ, որ, զանազան նկատումներով, ցանկալի չի լինի զանազան մասերի հրատարակութիւնը:

Զափազանց կը պարտաւորցնէիք ինձ, եթէ բարի լինէիք վաղօրօք ստանալ Ընդհանուր Ժողովի կարծիքը հրատարակութիւնը անպատշաճ չհամարուող մասերի վերաբերմամբ:

Բացի այդ, կը խնդրէի՝ որ այդ գրութիւնների պատճէնները ինձ վերադարձուէին Ընդհանուր Ժողովից յետոյ, քանի որ դրանք սեւագրութիւն միայն լինելով ինձ մօտ չունիմ պատճէն: Իսկ եթէ արտագրութիւնը դժուար կամ ծախքի կարօտ կը լինի, այդ ծախքը յօժարութեամբ իմ հաշուին կ'ընդունէի:

Խնդրում եմ, այս ամէնի մասին առաջարկել ում որ հարկն է եւ ինձ տեղեկացնելու նեղութիւնը յանձն առնել:

Յարգանքներով
ՆԻՒԹԻԱ

45.— ԱՌԱՋԱՐԿ ԱՆԴՐԱՆԻԿԷՆ

Մեծ չափի թուղթի մը վրայ, սեւ մելանով, 1 երես:
Բաւական դժուար ընթեռնելի գիր: Կուտանք նաեւ տպագրական պատճէնը (տե՛ս յաջորդ էջ):

Թշնամիս ինձնից բարձր բռնելով ու մարդու տեղ դնելով չեմ կարող լաւատես լինել: Նկատելով որ կառավարութիւնը ամէն բան դիտէ եւ պիտ դիտնայ ու դիտցածը պիտ բազմապատկէ ու մեզ յանկարծակիի պիտ բերէ, նրա վրայ համոզուելով,

Եւ միեւնոյն ժամանակ նորեկ կուսակալը մի խօսելով Բաղէշի կուսակալին [հետ] եւ լսելով նրա մասնաւոր հրամանքներին ու դրդումներին, պիտ սկսի ընել հետեւեալը.

Խուզարկութիւններ, ձերբակալումներ եւ զէնքերի գրաւումներ. նկատի ունենալով որ այս բոպէիս եւ ոչ մի կողուղ ու ռազմական ուժ չունինք ներսը, առաջարկում եմ.

ա.— Կազմել Գատ. Մարմին մը երկրի մէջ թէ՛ ինտելիգենտ եւ թէ ռազմական. զէնքերի ապահովման եւ զէնքերի փճացման հողերի տակ՝ պատասխանատու է այդ մարմինը խիստ կերպով:

բ.— Գատաստանատու Մարմին մը, թէ՛ ռազմական



եւ թէ ինտելիկենտ, երկրէն դուրս, որոնք պատուոյ խօսք կու տան երկրի պահանջներուն բաւարարութիւն տալու։

գ.— Միեւնոյն ժամանակ առանց ժամանակ ու ամիսներ կորսնցնելու պատրաստութիւն տեսնէ դուրսը թէ՛ զինական, թէ՛ զինուորական, ամէն մի պակասը լրիւ պատրաստէ։ Ի պահանջել հարկին, ամենաչատը 10 օրէն պատրաստ լինի գործին ձեռնարկ[ելու] անմիջապէս։ Դրամական հարցի համար վերջը կը խօսանք։

ԱՆԴՐԱՆԻԿ

46.— ԴԻՒԱՆԻ ԹՈՒՂԹԵՐՈՒՆ ՄԷՋ ԳՏՆՈՒՈՂ-ԳՐԱՒՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԵՒ ԲԱՆԱՁԵՒԵՐ

Մեծ ու փոքր թուղթերու վրայ, ստորագրուած կամ անստորագիր։

Զանց կ'առնենք այն բանաձեւերը որոնք, համապատասխան ցանցախմբէն անցնելէ ետք, գրեթէ նոյնութեամբ կամ փոքր փոփոխութիւններով տեղ գտած են Ընդհանուր Ժողովի ստենագրութիւններուն մէջ (ՆԻՒԹԵՐ, Գ. հատոր), իբրեւ վերջնական որոշում։

1.— Ի նկատի ունենալով որ երկրի եւրոպական հիւպատոսների հայ թարգմանները օգտուելով իրանց դիրքից, շատ անդամ չհաւատարիմ են մեր դատը յօգուտ իրանց շահի։

Ի նկատի ունենալով որ նրանք շատ անդամ չհաղորդում են յօգուտ իրանց գրպանի, արտասահմանից ուղարկուած սովեալների նպաստը։

Նկատելով որ նրանք միշտ կաշառքներով կամ իրանց դիրքը ամուր պահելու համար մեր գործերի վերաբերմամբ հիւպատոսներին տալիս են ամենաանճիշտ տեղեկութիւններ, եւ դրանով մեծապէս վնասում են մեր եւրոպական պրոպագանդի գործին։

Ընդհանուր Ժողովը յանձնարարում է երկրի մարմիններին, ձեռք առնել նրանց դէմ ամենախիստ միջոցներ, կանգ չառնելով նոյնիսկ տեռորի առաջ։

1. ԱՐԱՄ	8. ՀԱՑ-ԳՈՒՍԱՆ
2. ԳԱԳԻԿ	9. ՑՈՒՇԻԿ
3. ՀԱՄՕ	10. ՍԱՌՕ
4. ԻՇԽԱՆ	11. ԱՍԼԱՆ
5. Ս. ԳՐՈՒԶԻՆԵԱՆ	12. ՎՐԷԺՈՒՆԻ
6. ՄԱՇՈՒՐԵԱՆ	13. Ե. ԹՈՓՋԵԱՆ
7. ՁՈՓՈՒՐԵԱՆ	14. ՍԵՊՈՒՀ

«Թարգման եւ հիւպատոսներ».—

ՄՈՒՐԱՏ, Ս. ՄԻՆԱՍԵԱՆ, ՌՈՍՏՈՄ, ՍՄԲ. Օ-ՀԱՆԵԱՆ (ՁԱՒԱՐԵԱՆ), ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆ ?

2.— Առաջարկ Դիւանին.

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ռայոնական Ժողովների կոմպետենցիայի սահմանը Ընդհանուր Ժողովում չի որոշուել, ներքեւ ստորագրող պատգամաւորները առաջարկում են Դիւանին՝ կազմակերպական Կանոնների վերաքննութիւնը օրակարգից չհանել նախքան այս հարցի մասին խօսելը։

1. ԱՐՇԱԿ	7. ՍԱՌՕ
2. ԱՐՏՈՒՐ	8. ՀԱՑ-ԳՈՒՍԱՆ
3. ԳՐՈՒԶԻՆԵԱՆ	9. ՎԱՀԱԳՆ
4. ՌՈՍՏՈՄ	10. ԱՐԱՄ
5. ՄԱՇՈՒՐԵԱՆ	11. Ե. ԹՈՓՋԵԱՆ
6. ԲԱՐՍԵՂԵԱՆ	12. ՁՈՓՈՒՐԵԱՆ

3.— Առաջարկ Դիւանին.

Ցուցական գործունէութեան ամբողջ պատկերը ժողովի առաջ պարզելու համար մասնաժողովս ցանկալի է համարում Ռուբինայի ներկայութիւնը այստեղ՝ որոշ կէտերի վերաբերմամբ բացատրութիւն տալու նպատակով, ուստի խնդրում ենք Դիւանից ժողովի հաւանութիւնն առնելով անմիջապէս հրաւիրել Ռուբինային Վիեննա։

Մասնաժողովի անդամներ

1. Ե. ԹՈՓՋԵԱՆ	3. ՁԱՒՐԵԱՆ
2. ԱՐԱՄ	4. Ա. ՎՌԱՄԵԱՆ

4.— Արեւելեան Բիւրոն կազմուած է 9 անդամից, որից 5ը ընտրւում է Ընդհանուր Ժողովից, 2ը Երկրից եւ 2ը Կովկ. Ռայոնական Ժողովից։

Գործերը յաջող վարելու տեսակէտից՝ Բիւրոն կարող է իւր մէջ աշխատանքի բաժանումն կատարել ըստ Ռայոնի կամ սեկցիաներով, — որ ձեւը աւելի համապատասխան կը գտնի կեանքի իրական պահանջների դիմաց։

Բիւրոն իւր գործունէութեան համար պատասխանատու է ամբողջ կազմով Ընդհանուր Ժողովի առաջ։

(անստորագիր)

5.— Ընդհանուր Ժողովին,

Ցուցականի յանձնաժողովը գտնում է, որ բազմակողմանի պարզաբանութիւնների համար, կարեւոր է Ցուցական Մարմնի անդամներից՝ Թորգոմի ներկայութիւնը։

Ուստի առաջարկում է Ժողովին՝ հրաւիրել նրան էլ։

Անդամներ

ԱՐԱՄ, Ե. ԹՈՓՋԵԱՆ, Ց. ՁԱՒՐԵԱՆ

6.— Համերաշխ գործակցութեան դաղափարը ընդհանուր Թշնամու դէմ՝ աշխատել տարածել Թուրք մասսաների մէջ նրանց ինտելիկենտ ուժերի միջոցով, որոնց հարկաւոր է նախապէս պատրաստել այդ ուղղութեամբ։ Նոյն ոգով պրոպագանդ մղել Թուրք մասսայի մէջ պարտաւոր են եւ դաշնակցական գործիչները այնտեղ՝ ուր այդ հնարաւոր կամ նպատակայարմար կը նկատուի։

ՁՈՓՈՒՐԵԱՆ

7.— Առաջարկ

Ի նկատի ունենալով այս հանգամանքը, որ բաժանման խնդրի առթիւ ընդունուած բանաձեւի մէջ չատերի համար անկատելի կերպով ներս է սպրդել մի արտայայտութիւն՝ «նախապատուութիւնը տրւում է Տաճկահայոց Դատին», որի առթիւ Ժողովը չի արտայայտուել, բայց որը մեր առաջիկայ գործունէութեան ժամանակ զգալի բարդութիւնների եւ թիւրիմացութիւնների տեղիք կարող է տալ, ներքեւ ստորագրող պատգամաւորները առաջարկում են բանաձեւի այդ մասը Ժողովի քննութեանը առաջարկել։

ԱՐՇԱԿ	ԲԱՐՍԵՂԵԱՆ
ՄԱՇՈՒՐԵԱՆ	ՇԱՀԽԱԹՈՒՆԻ
ՍԻԳ	ՁՈՓՈՒՐԵԱՆ

8.— Սկզբունքով հակառակ լինելով մասնաւոր սեփականութեան դէմ գործադրուող բռնի միջոցներին, ընդունելով նաեւ, որ բռնի հանդանակութիւնը անբարոյականացնող եւ բացասական ազդեցութիւն է առաջացնում թէ՛ կուսակցութեան շարքերում եւ թէ ընդհանրապէս՝ հասարակութեան լայն խաւերում, Ընդհանուր Ժողովը խստիւ արգելում է այդպիսի հանդանակութիւնը։

ՀԱՄՕ, ԹՈՓՋԵԱՆ

9.— (1) Տեղի ունեցած վիճաբանութիւններից պարզուեց որ սոցիալիստական կուսակցութեան մէջ կան անձնաւորութիւններ, որոնք ունեն բուրժուական աշխարհահայեցողութիւն։

Ի նկատի ունենալով, որ այդպիսի մի երեւոյթ չի կարելի թոյլ տալ, կուսակցութիւնը բոլոր միջոցները պէտք է ձեռք [առնէ] այդպիսի տարրերից ազատուելու համար։

ՑԱԿ. ՁԱՒՐԵԱՆ

(1) Գրուած է առնաբէգ եւ տոգրնդմէջ թարգմանուած հայերէնի։

10.— Ընկեր նախագահ !

Ինդրեմ այս առաջարկ-բանաձեւս ներկայումս քուէարկել.— դրութիւնը այնտեղ լուրջ է եւ օր օրի վրայ մեծ չափեր է ընդունում Պարսկաստանի շարժումները։

«Ի նկատի ունենալով որ վերջերս Պարսկաստանում տեղի են ունենում հալածանքներ առհասարակ դէպի քրիստոնեաները, — որ կարող է վտանգուել եւ հա՛յ ազգարնակութեան կեանքի ու գոյքի ապահովութիւնը,

Նկատելով որ ռուս կառավարութիւնը Թուրքմէնչայի դաշնագրով յանձնառու է եղել Պարսկաստանի քրիստոնեաների պաշտպանութեան գործին,

Առաջարկել Պետերբուրգի Դումայի մեր պատգամաւորներին՝ Դաշնակցութեան անունից բանակցութեան մէջ մտնելու Ռուսաց Արտաքին Գործոց Նախարարի հետ, յիշեցնելու Թուրքմէնչայի դաշնագրութիւնը եւ պահանջելու հայ ազգարնակչութեան ապահովութիւնը»։

ՎՐԷԺՈՒՆԻ

11.— Ազգային ֆոնտ

Հիմնել մի ազգային ֆոնտ, որի նպատակը պիտի լինի ծառայեցնել հայ ժողովուրդի ազատագրական գործին։ Այս ֆոնտին կը մասնակցի ամբողջ հայ ժողովուրդը եւ այն անձնաւորութիւնները՝ որոնք կը համակրին այս գործին։ Ֆոնտին անդամ կը լինին այն մարդիկ, որոնք ամենաքիչը հինգ ֆրանք կը վճարեն։ Սկսած օրից անձեռնմխելի կը մնայ հաւաքուած գումարը, մինչեւ երկու տարի։ Երկու տարի ժամանակ որոշելուս պատճառը այն է, որ հազիւ կարող ենք լրացնել այդքան ժամանակամիջոցի մէջ մեր հանդանակութեան գործը։ Ֆոնտը կը դրուի Եւրոպայի ամենաապահով բանկերից մէկը։ Ֆոնտի տէրը տնօրէնը կը լինի Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը։ Թողնում եմ բարեփոխութիւնը՝ յարգելի ժողովականներին։ Աւելի մանրամասնութիւն, եթէ հարկ լինի, բերանացի կը բացատրեմ։

ՍԵՊՈՒՀ

12.— Ինքնապաշտպանութեան մասին

1.— Կազմակերպել Թիւրքիոյ բոլոր հայաբնակ վայրերը, ինքնապաշտպանութեան համար, եթէ հնարաւոր է օրինական ընկերներու միջոցով, օգտուելով, ի միջի այլոց, արտասահմանի կեդր. Կոմիտէներու տրամադրելի ուժերէն։

2.— Կազմակերպութիւնը կու տայ այդ կազմակերպիչներուն ճամբու ծախք, ապրուստի միջոց՝ ըստ հնարաւորութեան։

3.— *Կազմակերպիչները պատրաստուած ըլլալու են իբրեւ գործիչ եւ իբրեւ մարդիկ։*

4.— *Ինքնապաշտպանութիւնը պիտի կատարուի տեղացիներու զոհողութեամբ եւ տեղական շուկայի ստեղծումով։*

5.— *Դաշնակցութիւնը տրամադրելի կ'ընէ իւրաքանչիւր շրջանի համար ռազմական գումար մը, որ շրջարերութեան կը դրուի ձեռնհաս մարմնի պատշաճ համարած պահուն։*

6.— *Համակիրացիները կրնան գումարներ տրամադրելի ընել Դաշն. միջոցով, զինել տալու համար իրենց բնակաւայրը կամ գիւղը։*

7.— *Գնուած զէնքերը խմբական-կազմակերպական կամ համայնական սեփականութիւն կը դառնան, նայելով տեղական կազմակերպութեան զարգացման աստիճանին։*

8.— *Ինքնապաշտպանութիւն կազմակերպելու իրաւասութիւնը ամփոփել մէկ մարմնի մէջ (կամ նոր ստեղծելով այդպիսի Պատասխանատու Մարմին մը կամ տալով այդ իրաւասութիւնը գոյ եղող մարմնի մը)։*

9.— *Դաշնակցութիւնը պարտաւոր է ձեռնհաս զինուորականներ ղրկել իբրեւ ղեկավար, ո՛չ միայն քոնքրոլ կատարելու համար բոլոր մարդիկներու վրայ, քննելու համար զէնքերու քանակն ու որակը, այլեւ պաշտպանութեան յատակագիծ պատրաստելու՝ իւրաքանչիւր դաւառի համար։*

(անստորագիր)

13.— *Ընդհանուր Ժողովը յանձնարարում է իր այն ընկերներին, որոնք մտնելու են ինքնապաշտպանութեան մարմինների մէջ, ամէն ջանք թափել հիմնական հողի վրայ դնելու համար ինքնապաշտ[պանութեան] գործը։*

Եթէ Ժողովրդական ինքնապաշտպանութեան պատրաստութեան գործը անբաւարար նկատուի, Դաշնակցութիւնը պարտաւորւում է անմիջապէս իր ձեռքն առնել ինքնապաշտպանութեան գործը։

(անստորագիր)

14.— *Արշաւախումբերը պիտի կազմուած լինեն ներսի շարժումների հետ եւ կատարուեն Երկրի պատշաճ մարմնի հրահանգների համաձայն։*

Եթէ որեւէ պատճառով Երկրի մարմինը զրկւում է հրահանգներ ուղարկելու հնարաւորութիւնից, որոշումը թողնւում է արտակարգ հրաւիրուած Հ. Յ. Դ. Խորհրդին, որին կը մասնակցին ձեռնհաս անձնաւորութիւններ։

Այժմեանից անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել՝ մարդելու մեր մարտական խմբերը, միլիցիայի սկզբունքով (կազմուած), Կովկասում եւ Վրէժստանում, վարժեցնելով նրանց արշաւանքների բոլոր դժուարութիւններին հետ։

(անստորագիր)

15.— *Եթէ պատժական պատկան մարմինը չի ընտրւում Ընդհանուր Ժողովից, անմիջապէս մենք յետ ենք վերցնում մեր ձայները՝ նրան մերժելով [իրաւո՞ւնքը] որեւէ պատիժ տալու։*

Ե. ԹՈՓՋԵԱՆ ԱՐԱՄ ՄԱՇՈՒՐԵԱՆ

16.— *Պէտք է փութացնել* Սարհատի *քննութիւնը*(1)։ *Քանի որ հին յանձնախումբը հրաժարած է, պէտք է նորը ընտրել։ Կարեւոր գումարներ վատնած են, այսօր տակաւին պարտքեր կան թողնուած. այդ բոլորը կարելի է կարգադրել, միայն օգտուելով Սարհատի ներկայութենէն։*

Ա. ՎՌԱՄԵԱՆ

(1) Կը վերաբերի Աբէնֆի Սարհատին։

17.— *Բացի դաշնակցական խաւերի անկումից փողի շատութեան պատճառով, որի մասին այստեղ չեշտեցին, բռնի հանգանակութիւնը ահաբեկել է ժողովրդական լայն խաւերը. այդ է պատճառը որ նոյնիսկ դէպի Դաշնակցութիւնը ամենաբարեացակամ վերաբերմունք ունեցող ինտելիգենտ չէզոք շրջանակներին չէինք կարողանում հաւատացնել, որ այս կամ այն վարմունքը քաղաքային որեւէ մարմնի՝ Դաշնակցութեան գործը չէ... Ահաբեկումը այնքան լայն է, որ դժուար է ասել թէ այսքան լայնածաւալ համակրանքը իրօք ժողովրդական համակրա՞նք է թէ առերեւոյթ միայն։*

Մենք պէտք է այստեղ վերջնականապէս մերժենք բռնի հանգանակութիւնը — ահաբեկութեամբ դրամ հաւաքելու կեղտոտ զէնքը —։ Ո՛չ մի «բայց», ոչ մի «բարձրագոյն մարմին», ոչ մի «արտակարգ դէպք» եւ ոչ մի «իսկ եթէ» չպէտք է խախտի մեր այդ օրէնքը։ Գոնէ այսուհետեւ հետեւողական լինենք մեր որոշումներին։ Իսկ կառավարական էկսպրոպրիացիան յեղափոխութեան ժամանակ անպայման պէտք է ձեռնարկենք՝ կառավարութիւնը ուժասպառելու համար։

(անստորագիր)

18.— ա) *Առանց զինուորի, առանց մարտիկների մենք գոյութիւն ունենալ չենք [կարող], որպէս մի յեղ. կուսակցութիւն՝ որոշ ուղղութեամբ գործող։*

բ) *Դաշնակցական մարտիկ ուժերը նախ եւ առաջ պէտք է դաշնակցական լինեն. նախ եւ առաջ՝ զինուած պէտք է լինեն կուսակցական զէնքերով։ Դրա մէջ ոչ ոք չէ հակասում։*

գ) *Բայց մի այլ հանգամանք կայ, որ այդ գործի մէջ, այդ խմբերի կազմակերպողները ուզում են մըցընել կենտրոնացում, ուզում են՝ այդ խմբերը ամէն տեղ կախում ունենան մի Ընդհանուր Պատասխանատու Կենտրոնական Մարմնից։*

դ) *Կենտրոնացման ենթարկել ե՞րբ պէտք է լինի։ — Պատերազմական դրութեան ժամանակ միայն պէտք է կեդրոնացուեն։*

ե) *Չպէտք է երբեք մոռանալ որ կենտրոնացման ենթարկուած [դրութեամբ], իրենց առանձին ինտերեսները եւ դրաղմունքները չարունակ զարգացնելով, նրանք կամաց-կամաց գաղափարներով տարուբերուելու են, նրանք այս կամ այն հարցի մասին անջատուելու են իրենց նպատակից։*

Գերիշխանութիւնը... (անաւարտ, անստորագիր)։

19.— *Ռուսաստանի ներկայ յեղ. շրջանում Դաշնակցութեան մղելիք քաղաքական կռիւը առաջ տանելու համար, Ընդհ. Ժողովը օգտակար է համարում հիմնել Կովկասի Պատ. Մարտական Մարմին։ Մարտական Մարմնի ֆունկցիաների, իրաւասութեան սահմանները եւ անդամների ընտրութիւնը որոշում է Կովկասի Ռայոնական Ժողովը։*

ՍԻՄՈՆ [ԶԱՒԱՐԵԱ՞Ն]

20.— *Արեւելեան Բիւրոն՝ Ընդհ. Ժողովին, Երկրի Պատասխանատու Մարմիններուն եւ Կովկասեան Ռայոնական Ժողովի կողմէն ընտրուելով, կը կազմէ ընդհ. միութեան եւ գործունէութեան կապը, չեշտելով այն սկզբունքը թէ Դաշնակցութիւնը «մի եւ անբաժան է»։*

Գործունէութիւն ընդլայնելովը Բիւրոն ինք իր մէջ, աշխատութեան բաժանմունքի սկզբունքով, կը ստեղծէ section*ներ ընդհ. գործունէութեան, այսինքն Երկրի եւ Կովկասի գործունէութեան բնաւորութեան համապատասխանող։*

Այդ section*ները համախորհուրդ են եւ միասին պատասխանատու՝ կուսակցութեան բոլոր գործերուն համար. իսկ իրաւասու եւ անկախ են, առանց իրար խանգարելու եւ վտանգելու, երկու երկիրներու հայեացքներու եւ համապատասխան մարմիններու հետ համաձայն, ընդհանուր գործի ոեւէ կարեւոր ձեռնարկի եւ որոշումի համար։*

Ս. ՄԻՆԱՍԵԱՆ

21.— *Խորհուրդի կազմը բաղկացած պէտք է լինի հետեւեալ ներկայացուցիչներից, — Երկրի Պատասխանատու Կոմիտէների ներկայացուցիչները, Արեւմտեան Բիւրոյի 1 եւ Արեւելեան Բիւրոյի 2 ներկայացուցիչ (ըստ սեկցիաների) եւ Կովկասեան Կեդրոնական Կոմիտէների 2 ներկայացուցիչներ։ (Կովկասեան Ռայոն. Ժողովը պէտք է որոշէ, թէ իր շրջանի ո՛ր 2 Կենտր. Կոմիտէներին է յանձնարարում Խորհրդում ներկայացուցիչներ ունենալու իրաւունքը)։*

Պատասխանատու Կոմիտէ չեղած շրջանում ներկայացուցիչ կարող է ուղարկել Կենտրոնական Կոմիտէն։

(անստորագիր)

22.— *Ներքեւ ստորագրող պատգամաւորները, տեսնելով որ մեր ընդունած օրակարգը մեր գրաղմունքները դժուարացնում եւ անպտուղ են դարձնում՝ առաջարկում են թողնել տակտիկական քննութիւնը եւ անմիջապէս անցնել կուսակցութեան հիմնական հարցերի քննութեանը։*

ԱՐՇԱԿ ԻՇԽԱՆ ԱՐՏՈՒՐ ՋԱՒԱՐԵԱՆ ՄԱՇՈՒՐԵԱՆ
ՍԱՖՕ ՍԵՊՈՒՀ ՄՈՒՐԱՏ Ս. ՄԻՆԱՍԵԱՆ ՏԱՃԱՏ

23.— *Աչքի առաջ ունենալով, որ ներքեւում առաջ բերուած տողերը*

Վառնայում հրատարակուող «Շարժում» լրագիրը խօսելով Կովկասում Դաշնակցութեան շարքերում սկսուած պառակտման մասին, որտեղ որպէս թէ դրժգոհ ֆրակցիան նպատակ է դրել կազմակերպութիւնը ազատել բիւրոկրատների ձեռքից եւ տալ նրան ներկայ պահանջներին յարմար ուղղութիւն, իր կողմից հաղորդում է.

Ստոյգ աղբիւրներից տեղեկանում ենք որ Անդրանիկը ուր որ դաշնակցականների է պատահում, անկեղծօրէն դատափետում է կազմակերպութեան թերութիւնները եւ մատնանշում նրա ձեռնտուութեան բացակայութիւնը Երկրի յեղափոխական գործերին։ Անդրանիկի կարծիքն եւ համոզումն է գործի դեկը խլել բիւրոյականներից, սիրողներից եւ կենտրոնացնել յեղափոխական զինուորականութեան ձեռքում, այսինքն Երկրում գործողների։ Յաջողութիւն ենք ցանկանում Անդրանիկին եւ զինուորական խորհրդին իրենց ծրագիրների մէջ։

Անդրանիկի մասին կարող են մտքերի չփոթում առաջ բերել որոշ դաշնակցականների շարքերում, ուստի խնդրում ենք Դիւանից՝ հոգալ, որպէսզի ընկեր Անդրանիկը հերքում գրէ այդ մասին եւ բացատրութիւն տայ իր յիշեալ կարծիքի վերաբերմամբ այստեղ՝ Ժողովում։

ԲԱՐՍԵՂԵԱՆ ԻՇԽԱՆ ՄԻՔԱՅԷԼ ԱՐԱՄ ԱՐՇԱԿ
ՄՀԵՐ ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՆ ՁՈՓՈՒՐԵԱՆ ՑՈՒՇԻԿ
ՍԱՖՕ ՍԵՊՈՒՀ ՄՈՒՐԱՏ ՍԻԳ ՀԱՅ-ԳՈՒՍԱՆ

47·— ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Կազմակերպական կանոնները մշակման վերաբերեալ դիւանական բուղթէ մը կը իմացուինք Ընդհանուր Ժողովի ներքին կանոնագրութեան հետ կապուող հետեւեալ յօդուածները, որոնք մաս չեն կազմած Դ. Ընդհանուր Ժողովէն ետք հրատարակուած կանոնագրին (տե՛ս ՆԻՒԹԵՐ, Գ. հատոր, էջ 337–346):

20·— Ընդհանուր Ժողովը վաւերական համարուելուց յետոյ՝ ընտրւում են 3 նախագահ եւ վեց քարտուղար:

21·— Ժողովը շարունակւում է 25 օր եւ ունենում է օրական 2 նիստ. առաւօտ ժամը 11ից մինչեւ 3 եւ երեկոյեան 5ից մինչեւ ժամը 9:

22·— Կոմիսիաները (յանձնախումբերը) ընտրւում են նայած կարիքին, վճռելիք հարցերը նախնական քննութեան առնելու համար:

23·— Բոլոր առաջարկուելիք ռեզոլիւցիաների (որոշումներու) փոփոխումները ներկայացուում են Ժողովի նախագահութեան գրաւոր կերպով:

24·— Բոլոր հարցերը վճռւում են բաց ձայնատրութեամբ:

25·— Ընդհանուր Ժողով հրաւիրող 2 Բիւրոներից նշանակուած զեկուցողները, մի որեւէ հարցի մասին որ դրուած է օրակարգի մէջ՝ ունին մի ժամ զեկուցման եւ 20 րոպէ ասածները եզրափակելու համար, միայն առանց իրաւունք ունենալու վիճաբանութիւնների մէջ մտնելու: Ամէն անգամ այդ տեսակ հարցեր վճռելուց առաջ, Ընդհանուր Ժողովը կարիքի համաձայն կարող է նշանակել եւ 2րդ զեկուցող նոյն հարցի մասին, որին իրաւունք է տրւում խօսիլ ա. զեկուցողի չափ:

26·— Ընդհանուր Ժողովում վճռուելիք ամէն մի հարցի մասին՝ որոնց համար նախագահը բացել է ճառախօսների ցուցակ՝ իւրաքանչիւր պատգամաւոր իրաւունք ունի 3 անգամ խօսելու. առաջին անգամ 20 րոպէ, 2րդ անգամ 10 րոպէ եւ 3րդ անգամ 5 րոպէ:

27·— Անձնական նկատողութիւններ ու փաստացի փոփոխութիւններ թոյլ են տրւում միայն գրուած հարցի մասին վիճաբանութիւնը վերջանալուց յետոյ:

28·— Ժողովի ընթացքում երբ պատգամաւորներից մէկը հարց է բարձրացնում օրակարգի մասին, շատ ժամանակ կորսնցնելուց խուսափելու համար, ձայն է տրւում երկ–երկու հոգու՝ հակառակ եւ համաձայն առաջարկին եւ ամէն մէկը կարող է խօսել 2 րոպէից ոչ աւելի:

29·— Նախընթաց օրուայ արձանագրութիւնը կարդացւում է հետեւեալ օրուայ նիստի սկզբում եւ հաստատւում է: Երկու վերջին ժողովների արձանագրութիւնները հաստատելու համար հաւաքւում է առանձին ժողով:

48·— ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Դիւանի թուղթերուն մէջ կը գտնենք նաեւ զինուորական–մարտական բնոյթի երկու գրութիւններ, որոնք թուական կամ որեւէ մակագրութիւն չեն կրեր: Կուտանք յաջորդաբար:

Առաջինը (Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ ԶԻՆՈՒՈՐ) նամակի փոքր չափի թուղթի վրայ գրուած է, տասնուկէս էջ:

Երկրորդը (ՄԱՐՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ) տես էջ 33:

Ո՞Վ կարող է լինել զինուոր

1·— Այն բոլոր մարդիկ, որոնք ընդունած են իրանց անձը զոհաբերել հայրենիքի ազատութեան համար, կոչւում են զինուոր:

2·— Զինուոր կարող են լինել այն մարդիկ, որոնք ունին մաքուր դպացմունք, ընկերական բնաւորութիւն եւ անպայման ենթարկուելու տրամադրութիւն:

3·— 20ից մինչեւ 50 տարեկան զինուոր կարող է ընդունուիլ առողջակազմ մարդկանցից:

4·— Զինուոր կարող են լինել այն մարդիկ, որոնցից տնտեսապէս կախում չունեն իրանց ընտանիքները:

5·— Զինուորի հետ բերած թէ՛ ռազմական եւ թէ դրամական սեփականութիւններ պատկանում են կազմակերպութեան եւ հեռանալուց՝ զրկւում է նրանցից:

6·— Զինուորը անմիջական կազմակերպութեան տրամադրութեան տակ մտնելուց սկսած ապրում է կազմակերպութեան ծախսով, իսկ նրա ընտանիքը ո՛չ մի նպաստ չի ստանում:

Զինուորի պարտականութիւնները

1·— Ամէն մի դաշնակցական զինուոր պարտաւոր է հաւատարմութեամբ ծառայել Դաշնակցութեան Դրօշին եւ Հայրենիքի ազատագրման գործին:

2·— Զինուորը անտրտունջ և անձնուիրաբար պարտաւոր է կատարել, թէ՛ խաղաղ եւ թէ պատերազմական ժամանակ, իւր մեծաւորի բոլոր հրամանները:

ԾԱՆՕԹ.— Նոյնիսկ եթէ անհատականապէս զգում է որ հրամանները սխալ են, կատարելու է, պատասխանատուութիւնը թողնելով հրամայողի վրայ:

3·— Ամէն մի զինուոր համբերութեամբ կրելու է զինուորական կեանքում պատահող բոլոր զրկողութիւնները եւ դժուարութիւնը:

4·— Զինուորները իբրեւ նոյն դաղափարի ծառայող մարդիկ պարտաւոր են ընկերաբար վարուել իրարի հետ եւ ամէն մի պարագաներում թէ՛ խօսքով եւ թէ գործով օգնեն միմեանց, հեռու պահելով ընկերներին վատ օրինակներից. վտանգի րոպէում ընկերին ազատելու համար կեանքը չխնայել:

5·— Ամէն մի զինուոր պարտաւոր է իմանալ՝ որ իր սխալ քայլերով անպատուութիւն պիտի բերէ ոչ թէ միայն իրեն այլ իր տասնեակին, տասնապետին, խմբին եւ խմբապետին:

6·— Ամէն մի զինուոր պարտաւոր է շատ խնայողութեամբ եւ սրբութեամբ վարուել կազմակերպական բոլոր իրերի հետ:

7·— Զինուորի համար զէնքը լինելով ամենակարեւոր իրը, պարտաւոր է վերաբերուել նրա հետ քնքուշաբար եւ պահել մաքուր, առանց տասնապետի հրամանին կամ պիտութեան չփոխել մասերը:

8·— Ամէն մի զինուոր մինչեւ մահուան վերջին րոպէն՝ պարտաւոր է պահպանել իր զէնքը եւ չյանձնել թշնամուն:

ԾԱՆՕԹ.— Միայն վերջին յուսահատական բոպէին, երբ ինքը՝ զինուորը յոյս չունի ապրելու եւ ընկերները անկարող կը լինեն ընկած զէնքը վերցնել, ընկած զինուորի վերջին սրբազան պարտականութիւնն է իր զէնքը ոչնչացնել, թշնամուն ձեռքը չտալու համար:

9·— Ամէն մի զինուոր խմբի շարժուելու ժամանակ պարտաւոր է չբաժնուել իր խմբից առանց տասնապետի գիտութեան:

10·— Բոլոր զինուորներին խստիւ արգիլւում է ճանապարհին ծխել եւ խօսել առանց տասնապետի թոյլտուութեան:

11·— Հանգստութեան ժամանակ առանց խմբապետի թոյլտուութեան ո՛չ ոք իրաւունք չունի ջուր խմելու եւ կամ ուրիշ տեղ բացակայելու:

12·— Հանգստութեան ժամանակ գիւղերում եւ դիրքերում զինուորները իրաւունք չունեն իրանց տեղեր փոխելու՝ առանց տասնապետի կամ խմբապետի հրահանգին:

13·— Ամէն մի զինուոր պարտաւոր է որոշ ժամերին պահպանութիւն ընել:

14·— Ամէն մի պահապան զինուոր պարտաւոր է չքնել եւ ուշիմութեամբ հսկել զէնքերի, ընկերների եւ թշնամու ճանապարհներին:

15·— Վտանգի րոպէներում պահապան զինուորը պարտաւոր է անմիջապէս իմաց տալ խմբապետին, առանց խմբի ընկերներին իմացնելու:

16·— Այն զինուորները՝ որոնք որոշեալ ժամին անկարող են պահպանութիւն անել, պարտաւոր են նախքան քնել, որի առթիւ յայտնել խմբապետին:

17·— Ամէն մի զինուոր պարտաւոր է իրան պահել գիւղի մէջ համեստ, վայելուչ եւ իր անձնական օրինակներով բարձրացնել Յեղափոխական պատիւը:

18·— Զինուորը բաւականանալու է այն համեստ հիւրասիրութեամբ, որ կարող է ընել գիւղական ընտանիքը:

19·— Զինուորը իրաւունք չունի ինքնագլուխ գիւղում ժողովրդից դրամական եւայլն պահանջներ առնելու:

20·— Զինուորը իրաւունք չունի խառնուելու գիւղում գիւղական գործերին եւ կուսակցական խնդիրներին:

21·— Զինուորները իրաւունք չունին առանց տասնապետի հրամանին յարաբերութիւն ունենալ գիւղացիների հետ եւ պահպանել նամակագրութիւն, իրեղէններ գնել:

22·— Ամէն մի զինուոր պարտաւոր է վերին աստիճանի գաղտնապահ լինել Յեղ. բոլոր խնդիրների վերաբերմամբ:

23·— Բարեկամներին, ընկերներին եւ ազգականներին նամակ գրելը պէտք է լինի խմբապետի գիտութեամբ եւ նրա կարդալուց յետոյ ուղարկել՝ վերջինիս թոյլտուութեամբ:

24·— Զինուորին խստիւ արգիլւում է խմբապետից ստացած միայն իր միջոցով կատարուելիք յանձնարարութիւնների, նուէրների եւ ձեռնարկների մասին խօսել ո՛չ միայն ընկերներին, նոյնիսկ տասնապետին:

25·— Գիւղերում զինուորներին արգիլւում է իւր անմիջական կարիքների համար առանց խմբապետի թոյլտուութեան՝ յարաբերութիւն ունենալ գեղի բնակիչների հետ:

26·— Զինուորը պարտաւոր է իր սեփական դրամը պահել խմբապետի քով եւ կարեւոր պարագայում նրանից առնել:

27·— Ամէն մի զինուոր նախքան զէնքի տակ մտնելը պարտաւոր է երդուել հաւատարմութեամբ ծառայելու Դաշնակցութեան Դրօշին, Յեղ. գաղափարին, Հայրենիքի ազատագրման գործին, իր խմբապետին եւ տասնապետին:

28·— Ամէն մի տասնեակ ունենալու է իր դրօշակիր զինուորը:

29·— Դրօշակիր լինելով առհասարակ յեղափոխութեան, մասնաւորապէս կուսակցութեան եւ կամ թէ յեղափոխական պատուի նիւթական արտայայտութիւն, պահպանելու է ամենայն քաջութեամբ եւ անձնուիրութեամբ, յիշելով որ դրօշակի դերի տանելը կամ ոչնչումը խմբի բարոյական պարտութիւնն է:

30·— Դրօշակիրը՝ լինելու է խմբի ամենաարիաոիրտ զինուորը:

31·— Որովհետեւ առանց տասնապետի եւ օգնականի տասնեակը կը փճանայ եւ կը զրկուի գեկավար ուժից, ուստի ամէն մի զինուոր պարտական է կեանքի գնով պահպանել իւր տասնապետին եւ օգնականին:

Զինուորների իրաւունքները

1·— Զինուորը՝ իւր անմիջական կարիքների եւ հիւանդութեան մասին յայտնելու է խմբապետին իր տասնապետի միջոցով:

2.— Զինուորը իւր բողոքների եւ ընկերական վիրաւորանքների ու թիւրիմացութիւնների մասին պիտի ներկայացնի տասնապետի միջոցով խմբապետին:

Տասնապետը եւ նրա իրաւունքները

1.— Տասնապետը նշանակուելու է կոմիտէի կողմից, տասնեակի մէջ ամենափորձուած, ճեռնահաս եւ խելացի զինուորին:

2.— Տասնապետը պատասխանատու լինելու է կոմիտէի առաջ իւր տասնեակի վերաբերմամբ. պարտաւոր է աշխատութեամբ հսկել իւր տասնեակի բարոյականի եւ կարգ ու կանոնի վրայ:

3.— Տասնապետը պարտաւոր է իւր տասնեակի բոլոր զինուորների վրայ հաւասար աչք նայելու:

4.— Կոմիտէի կամ խմբապետի կողմից տասնապետին յայտնուած դաղտնիքների մասին, որ անձնականապէս իրեն է վերաբերում, խստիւ արգիլւում է այդ մասին խօսել զինուորների հետ:

5.— Տասնապետը, կոմիտէի կամ խմբապետի կողմից իւր տասնեակին տրուած հրահանգները պարտաւոր է նոյնութեամբ հաղորդել իւր զինուորներին:

6.— Տասնապետը որպէս ազգ եղբայր պարտաւոր է իւր տասնեակի մէջ պատահած թիւրիմացութիւնները եւ խռովութիւնները շուտով վերջացնել որ լայն բնաւորութիւն չստանայ:

7.— Տասնապետը լինելով պատասխանատու իւր տասնեակի մէջ գտնուած զէնքերի եւ առհասարակ կազմ. դոյքերի համար, պարտաւոր է հսկել որ զինուորները զգուշութեամբ եւ խնայողութեամբ վարուին նրանց հետ:

8.— Տասնապետը առանց խմբապետի իրաւունք չունի ժողովրդի մէջ իրեն յանձնուած հրահանգներից դուրս պահանջներ անել կամ գործողութիւններ կատարել:

9.— Տասնապետը պիտի հսկէ որ զինուորները աւելորդ պահանջներ չանեն ժողովրդից:

10.— Առանց խմբապետի թոյլատուութեան տասնապետը թոյլ չպիտի տայ որ իր զինուորները վարժութեան կամ ուրիշ դէպքերի առթիւ փամփուշտ վառեն:

11.— Տասնապետը հսկելու է որ իր զինուորների շալակից իրեր չթափին եւ զինուորները շալակնին չթողնեն: Ցողնածութեան պարագային փոխելու է, իսկ եթէ իւր տասնեակը անկարող է կրել, ցուցնելու է անմիջապէս խմբապետին:

12.— Տասնապետը պարտաւոր է հրահանգել զինուորներին, որ առանց իւր ներկայութեան իրաւունք չունին հրացանի նուրբ մասեր քակել:

13.— Իւր տասնեակի հերթապահութեան ժամանակ, տասնապետը պարտաւոր է հսկել իւր զինուորների հերթապահութեան վրայ:

14.— Պահապանութիւնների ժամանակ պատահած անկարգութիւնների պատասխանատուն տասնապետն է:

15.— Վտանգի ժամանակ տասնապետը պարտաւոր է, իւր զինուորներով, պատրաստութեան մէջ մնալ սպասելով խմբապետի հրահանգին. առանց խմբապետի գիտութեան հրացան չեն բանալ, իսկ եղած վտանգների մասին խիստ յայտնելու են խմբապետին:

16.— Խմբապետի տասնապետին յանձնած գիրքը իւր զինուորներով պարտաւոր է պահպանել մինչեւ նոր կարգադրութիւն եւ կարեւոր պարագաներում հսկելու եւ հրահանգներ է տալու իւր զինուորներին:

ԾԱՆՕԹ.— Երբ մի որեւէ տասնեակի դիրքին վտանգ է ըսպառնում եւ տասնապետը անկարող է իրա ուժերով պահպանել դիրքը, իսկոյն խմբապետից օգնութեան է կանչելու պայմանական նշաններով:

17.— Տասնապետը հսկելու է որ զինուորները միշտ խնայողութեամբ վառեն փամփուշտները:

18.— Առանց խմբապետի գիտութեան, տասնապետը իրաւունք չունի իւր դիրք փոխելու:

19.— Ամէն մի տասնապետ պարտաւոր է իւր շրջանի թշնամու թողած զէնքերը եւ ռազմամթերքը հաւաքել իւր դիրքը:

20.— Ընկած կամ վիրաւոր ընկերների զէնքերը եւ իրերը վերցնել:

21.— Թեթեւ վիրաւորածների վէրքերը կապել եւ ապահով տեղ պահել:

22.— Կռուից յետոյ տասնապետը պարտաւոր է իւր տասնեակի վառուած փամփուշտների, փճացած զէնքերի եւ թշնամու եղած ռազմամթերքի եւայլն իրերի ցուցակը ներկայացնել իւր ստորագրութեամբ խմբապետին:

ԾԱՆՕԹ.— Թշնամուց առած զէնքերը, ռազմամթերքը եւ այլ իրերը եթէ մնան առանց ցուցակագրելու ու խմբապետին յանձնելու, պատասխանատուն տասնապետն է:

23.— Կռուից յետոյ տասնապետը պարտաւոր է իւր տասնեակի ամբողջութեամբ միանալ խմբի հետ:

24.— Տասնապետի օգնականը ընտրւում է խմբապետի եւ տասնեակի համաձայնութեամբ:

25.— Տասնապետի ներկայութեան ժամանակ, օգնականը սովորական զինուորի դեր է կատարելու:

26.— Տասնապետի հեռանալու, վիրաւորուելու եւ ընկնելու դէպքում օգնականը ստանձնելու է տասնապետի դերը եւ վարելու է նոյն իրաւունքները:

49.— ՄԱՐՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

14 մեծ էջերու վրայ կը գտնեմ հետեւեալ գրութիւնը, որ ապահովաբար մաս կազմած է աւելի ընդարձակ ամբողջութեան մը. միւս մասերը կը պակսին: Ոչ մէկ թուական, ոչ մէկ թացատրական մակագրութիւն:

114.— Ցրիւ կազմը պէտք է սովորեցնել միմիայն դաշտում եւ յատկապէս բլրոտ կամ լեռնոտ տեղերում:

115.— Որպէսզի սովորեցնողը կարողանայ հետեւել սովորողի ամէն մի շարժմանը, հարկաւոր է քիչ թուով նոր սովորողների հետ պարապել:

116.— Որպէսզի սովորողը հենց առաջին օրերից սովորի իւր գնդակները դատարկ տարածութեան մէջ չթողնել այլ երեւացող թշնամու վերայ, եւ որպէսզի նա վարժուի նշանի բարձրութիւնը որոշել, պէտք է ցրիւ կազմ սովորեցնել անպատճառ տեսանելի թշնամու հետ եւ անգնդակ փամփուշտներով:

117.— Թշնամու փոխարէն նշանակել հին ծառայող զինուորներից, որոնց թիւը նոր սովորողներից շատ պէտք է լինի, որպէսզի կարելի լինի առանց ժամանակ կորսնցնելու թշնամուն այս կամ այն կողմն ուղարկել, սովորեցնողի կարգադրութեան կամ ուսման ընթացքին համեմատ:

118.— Այս վարժութիւնները զօրախաղի բնաւորութիւն չպէտք է ունենան, ուստի հակառակ կողմն էլ (թշնամի) պէտք է միեւնոյն սովորեցնող սպան ղեկավարէ:

119.— Հեռուից, թշնամու փոխարէն նշանակուած մարդկանց պէտք է կառավարել պայմանական նշաններով:

Դիրք բռնելը պաշտպանութեան ժամանակ եւ կրակ շղթայից

120.— Սովորեցնելու համար նշանակուած տեղը դալուց յետոյ, սովորեցնողը հարկաւոր ցուցմունքները տալիս է թշնամին ներկայացնող կողմի հրամանատարին: Ապա բացատրում է նոր զինուորներին ցրիւ կազմի (շղթայի) նշանակութիւնը. ապա ուշադրութիւնն է դարձնում առջեւում ձգուող տարածութեան եւ թշնամու դիրքի վերայ, ընտրում է շղթայի համար տեղ, հրամայում է դիրք բռնել այնտեղ եւ շեշտում է ա) որ լաւ գծելու ասպարէզ ունենալու համար կարելի է տեղը փոխել բայց այնպէս, որ իր հարեւանին չխանգարի. բ) որ ուղիղ խփելու համար անհրաժեշտ է նախ որոշել մինչեւ թշնամին եղած տարածութիւնը եւ դրա համաձայն նշանը ուղղել, որի համար պէտք է հնար եղած դէպքում առաջուց չափել տարածութիւնը մինչեւ առջեւում գտնուող աչքի ընկնող առարկաներ, եւ գ) որ յաջող հրացանաձգութեան համար օգտակար է հրացանի համար մի յենարան ունենալ, իսկ եթէ չլինի — չինել:

121.— Դորանից յետոյ սովորեցնողը նայում է բոլորի դիրքերը եւ հրամայում պակասութիւնները լրացնել:

122.— Բոլորի դիրքերը նայելուց յետոյ սովորեցնողը հաւաքում է բոլորին, ցոյց է տալիս ապա թշնամուն հակառակ կողմից եւ հրամայում է նոյն տեղը դիրք բռնել նոր ուղղութեամբ:

123.— Դորանից յետոյ սովորեցնողը ընտրում է էլի մի քանի դիրքեր շղթայի համար եւ նոցանից ամէն մէկի վերայ նոյնն անելով ինչ որ առաջինի վերայ, այսինքն ստիպում է դիրք բռնել պաշտպանուելու համար երկու կամ երեք ուղղութեամբ:

124.— Նոր զինուորներին պաշտպանելու համար բոլոր պայմաններին ծանօթացնելուց յետոյ, սովորեցնողը բացատրում է, որ հրացանաձգութեան շղթայից կարելի է սկսել հատ հատ եւ համազարկով, նայած հողատակին եւ հեռաւորութեանը: Հատ հատ կրակ լինում է դանդաղ եւ արագ. երբ սովորական նշանով (մինչեւ 500 քայլ դէպի հետեւակները եւ մինչեւ 600 քայլ դէպի հեծելազունդը), կարելի է խփել ամէն տեսակի նպատակի(?), իսկ նրանից բարձր, մինչեւ 1400 քայլը հատ հատ կրակը կարող է ներգործութիւն ունենալ միմիայն մի խումբ մարդկանց վերայ. 1400ից աւելի(?) հեռաւորութեան վերայ հատ հատ կարելի է գործածել միայն մեծամեծների խմբի եւ ուրիշ կարեւոր նպատակների համար, նոյնպէս եւ այն ժամանակ երբ համազարկ տալու համար կոմանդը լսելի չի կարող լինել:

Սովորական նշանի չրջանում արագ կրակը կարող է արագացնել արա՛գ կոմանդով: Արագ կրակ բազմկով կրակ կարելի է բացել բոլոր հեռաւորութիւնների վերայ, առանձնապէս մեծ նպատակների վերայ եւ երբ հարկաւոր է թշնամուն մնասել հարուածների մեծ թուով եւ երբ կոմանդը լսելի է բոլորի համար: Այս բոլորը բացատրելուց յետոյ սովորեցնողը նշան է տալիս թշնամուն յարձակում գործել:

125.— Թշնամու յարձակման ժամանակ մարդկանց ուշադրութիւնն է հրաւիրւում մինչեւ թշնամին եղած հեռաւորութեան փոփոխութեան վերայ, որու համեմատ ուղղում է նշանը եւ երբեմն երբեմն նպաստաւոր նպատակների վերայ համազարկ են տալիս կամ հատ հատ կրակ են բացում: «Դանդաղ» կրակի ժամանակ ամէն մի հրացանաձիգ արձակում է հրացանն այն ժամանակ երբ հերթն իրեն է հասնում եւ երբ մի յարմար առիթ է ներկայանում: Դանդաղ կրակը կարելի է արագացնել «արա՛գ» կոմանդով: Արագ կրակ բացելու ժամանակ բոլոր մարդիկ արձակում են այնպիսի արագութեամբ, որը հարկաւոր է հրացանը լեցնե-

լու, նշանն ուղղելու եւ նշան առնելու համար։

126.— *Երբ Թշնամին մտնում է հրացանի կրակի իսկական ներկայութեան շրջանը (1400–1000 քայլ) այն ժամանակ սովորեցնողը նրան նշան է տալիս կանգնելու եւ հրամայում է բացել հատ հատ կրակ, նայելով, որ հրացանը լեցնելը, նշանի վերցնելը, նշան ուղղելը կանոնաւոր կերպով կատարուին, եւ մարդկանց ուշադրութիւնը դարձնելով այն բանի վերայ, որ ամէն մի նպատակի վերայ չարժէ արձակել, որի համար էլ եթէ յայտնւում են Թշնամու խիտ շարքեր՝ կրակը տեղափոխում են նրանց վերայ եւ ոչ թէ շղթայի։ Յետոյ սովորեցնողը նպատակներին եւ նոցա հեռաւորութեան նայած՝ դիմում է զանազան տեսակի կրակների։*

127.— *Դորանից յետոյ, Թշնամու յարձակման շրջանակութեան ժամանակ, սովորեցնողը աշխատում է նորա շարժումներին այնպիսի ձեւեր տալ, որ կարողանայ բացատրել մարդկանց, թէ հարկաւոր է օգտուել հանդամանքից Թշնամուն գնդակահարելու համար երբ նա բաց է եւ, եթէ հնարաւոր է, թեք կրակով եւ որ դորա համար էլ հարկաւոր է ընտրել աւելի նպաստաւոր նպատակներ։ Նպատակների կարեւորութեան տեսակէտից էլ, սովորեցնողը հրամայում է մի դէպքում կրակը արագացնել, միւս դէպքում դանդաղեցնել եւ երբեմն նոյնիսկ բոլորովին դադարեցնել։ Այդ բոլորը բացատրելու համար, հակառակ կողմը երբեմն իւր մի մաս կամ ամբողջ իւր գիծը թեւով է ցոյց տալիս պաշտպանողին, երբեմն խմբւում է, երբեմն վազելով անցնում է բաց տարածութիւններ, երբեմն պատնէշների յետեւն է թաղնւում, այնպէս որ միայն գլուխներն են երեւում. մի խօսքով, հակառակ կողմը սովորեցնողի ղեկավարութեամբ այնպէս է գործում, որ աւելի շատ առիթներ տայ սովորողներին ցոյց տալու այն թէ ինչպէս պէտք է վարուել զանազան պայմաններում։ Հենց այստեղ էլ սովորեցնողը մարդկանց ցոյց է տալիս շարժուող նպատակներին խփել։*

128.— *Հատ հատ կրակ բացելու ամբողջ ընթացքում պէտք է ուշադրութիւն դարձնել, որ սովորողները նշանները ուղղեն ինչպէս պահանջւում է, չբշտապեն եւ նշան բռնեն որքան կարելի է հանգիստ։*

129.— *Եթէ Թշնամին մօտենում է մինչեւ 500 քայլը (հեծելազունդը մինչեւ 600 քայլը), սովորեցնողը բացատրում է մարդկանց, որ սկսած 500ից դէպի ցածր սովորական նշանով կարելի է խփել ամէն տեսակի նշանի, որովհետեւ գնդակը մարդու հասակից աւելի չի բարձրանում։*

130.— *Երբ որ Թշնամին մօտենում է 400–200 քայլ սովորեցնողը նշան է տալիս, որ յետ նահանջեն, իսկ սովորողներին բացատրում է, որ հիմա հարկաւոր է նահանջող Թշնամուն հարուածել եւ բացւում է համապատասխան կրակ։*

Շարժում եւ շղթայի կրակ
յարձակուելու ժամանակ

131.— *Յարձակումը սովորեցնելու համար, սովորեցնողը նոր զինուորներին ցոյց է տալիս թէ որտեղ է Թշնամին, բացատրում է նոցա, որ նորան այդտեղից դուրս քշելու համար, պէտք է մօտենալ նրան եւ սուիններով զործել, եւ որքան շուտ այդ լինի, այնքան լաւ, զորա համար Թշնամուն մօտենալով մինչեւ 1400–1000 քայլը պէտք է առանց կանգ առնելու քայլելով գնալ, կրակ բացելով միայն առանձնապէս աչքի ընկնող նպատակների վերայ, որի համար առաջուց կանգ են առնում յարմար դիրքերի վերայ։*

132.— *Դորանից յետոյ սովորեցնողը բացում է զոյգերը եւ քայլելով առաջ է տանում։ Գնալու ժամանակ պէտք է ցոյց տուած ուղղութեամբ գնալ եւ հրացաններն ուսին ունենալ։*

133.— *Թշնամուն մօտաւորապէս 2000 քայլ մօտենալով, սովորեցնողը շղթայ է կազմում. յետագայ գործողութիւնների ժամանակ երբեմն երբեմն կանգ են առնում, որոշում են հեռաւորութիւնը, ուղղում են նշանները եւ երբեմն էլ համաղարկ են տալիս, որի համար սովորեցնողը առաջուց հրամայում է հակառակ կողմին բարձրանալ եւ երեւալ։*

134.— *Թշնամուն մինչեւ 1400–1000 քայլ մօտենալով սովորեցնողը բացատրում է, որ դորանից յետոյ բաց տեղերը՝ Թշնամու ուժեղ կրակի տակ՝ պէտք է անցնել վազելով, իսկ որտեղ շղթան գնդակների չի ենթարկւում — քայլելով։*

135.— *Դորա հետ միասին, սովորեցնողը բացատրում է, որ մարդկային վնասը քիչացնելու համար որեւէ բաց տեղ վազելով անցնելու ժամանակ պէտք է կանգնել ու շատ արագ վազել մինչեւ նշանակուած տեղը։*

136.— *Ապա սովորեցնողը տանում է մարդկանց մի յարմար պատնէշի մօտ, կանգնեցնում է նրանց եւ բացատրում, որ կանգնելուց յետոյ իւրաքանչիւր ոք ամենից առաջ պէտք է մի յարմար տեղ գտնի հրացանաձգութեան համար, որը որքան կարելի է ծածկուած պէտք է լինի թշնամու գնդակներից։ Յետոյ ցոյց տալով առջեւում եղած տեղը՝ սովորեցնողը տալիս է կոմանդ, — փա–կե՛լ, կանգնեցէ՛ք, վազելով յառա՛ջ։ Այս կոմանդով պէտք է փակել հրացանները, վեր կենալ եւ վազել դէպի ցոյց տուած տեղը առանց սեղմրւելու եւ հրացանները ոտքերի մօտ բռնած։*

137.— *Վազելուց յետոյ սովորեցնողը բացատրում է, որ եթէ նոր բռնած տեղից թշնամին չի երեւում, պէտք է տեղափոխուել մի ուրիշ տեղ, որ ունենայ գրաւելու լաւ ասպարէզ։*

138.— *Երբ որ մարդիկ բոլորն էլ դիրք են մտնում եւ հանգստանում են՝ սովորեցնողը հրամայում է հատ*

հատ կրակ բաց անել եւ ուշադրութիւն է դարձնում՝ նշանը ուղղեն, կանոնների համաձայն լեցնեն հրացանը, կանոնաւոր նշանի բռնեն։ Ապա սովորեցնողը երբեմն երբեմն հրամայում է փոխել ուղղութիւնը, արագացնել կամ դանդաղեցնել հրացանաձգութիւնը եւ երբեմն նոյնիսկ դադարեցնել։ Այս բոլորը կախուած պէտք է լինի հակառակ կողմի շարժումներից, որը համաձայն սովորեցնողի տուած նշանների, կամ ծածկւում է, կամ յայտնւում զանազան տեղեր։

139.— *Յետոյայ յարձակումի ժամանակ, սովորեցնողը մարդկանց դէպի այնպիսի պատնէշներ է ուղղում, որոնք նախկին, այսինքն դէպի թշնամին բռնած ուղղութեանը թեք են դալիս։ Երբ այդ պատնէշների յետեւը դիրք են մտնում, հակառակ կողմին պայմանական նշան է տրւում, որ այնպէս դասաւորուի, որ կարողանան յարձակուողների երկարութեան վերայ իջնել։ Սրանով յարձակուողների ուշադրութիւնը դարձրւում է այն բանի վերայ, որ նրանք իրենց թեւը թշնամու կրակի տակ դցեցին հետեւապէս եւ այդպիսի պատնէշներից չպէտք է օգտուել։*

140.— *Եթէ վազելու ժամանակ պատահում են այնպիսի տարածութիւններ, որոնք ծածկուած են թշնամու կրակից, սովորեցնողը հրամայում է քայլելով գընալ եւ բացատրում է դորա պատճառը։*

141.— *Սովորողների դիտողութիւնը եւ ուշադրութիւնը զարգացնելու համար, պէտք է յարձակման ամբողջ ժամանակ նոցա ուշադրութիւնը դարձնել այն բանի վերայ, թէ ի՛նչ է անում թշնամին։*

142.— *Երբ որ յարձակուողը մօտենում է ամենավերջին դիրքին, որտեղից կարելի է հրացան արձակել եւ որից յետոյ նախատեսնում է դրոհ տալ, սովորեցնողը հրամայում է կրակ բաց անել կապուկներով, բացատրելով, որ այս հեռաւորութիւնից վերջնականապէս պէտք է կրակով նախապատրաստել սուիններով դրոհը։*

Շարժում եւ կրակ շղթայից՝
նահանջելու ժամանակ

143.— *Նախ քան նահանջել սկսելը, սովորեցնողը բացատրում է, որ շղթան պէտք է նահանջէ սովորական քայլերով եւ կարելի է դնալու ժամանակ երբեմն կանգ առնել յարմար դիրքերում եւ կրակ բաց անել համազարկով կամ հատ հատ։*

144.— *Այնուհետեւ նահանջի նշան տալով, սովորեցնողը ցոյց է տալիս այն կարգը, որով գնալու կամ կանգնած ժամանակ կրակ են բաց անում։*

Ցրիւ կազմ
Ընդհանուր ցուցմունքներ

202.— *Ցրիւ կազմում (շղթայում) մարդիկ կանգ-*

նում են մի շարքով. մարդկանց մէջ եղած հեռաւորութեան չափը կախուած է այն տարածութիւնից, որը պէտք է բռնէ շղթան, եւ շղթայի մէջ եղած մարդկանց թուից։

203.— *Զօրախմբերը եւ մասերը շղթային տուած ուղղութիւնը չփոխելով կարող են, պատնէշներին նայած, մի քիչ առաջ կամ յետ դնալ, բայց եւ այնպէս չպէտք է հարեւան զօրախմբերի հետ ունեցած կապը կտրեն։*

Գլխաւոր ուշադրութիւնը պէտք է այն բանի վերայ դարձնել, որ մի զօրախումբը չխանգարի միւսին դցել, եւ նոյնպէս, որ մի զօրախմբի մասերը դտնուին զօրախմբի հրամանատարի ձեռքին տակ։

Հարիւրեակի մասերից շղթայ կազմելը

204.— *Հարիւրեակը կամ նորա մի մասը, որը նշանակուած է շղթայ կազմելու, կարող է ցրուել (շղթայ կազմել) կամ միաժամանակ առաջ դնալով եւ կամ տեղն ու տեղը ճակատի դծով։*

205.— *Առաջին անգամ շղթայ կազմելու ժամանակ պէտք է զօրախմբերի մէջ հնար եղածին չափ միջոց թողնել։*

206.— *Մի զօրախմբից շղթայ կազմելու համար հարիւրապետը կոմանդ է տալիս.* այսինչ զօրախումբը ի շղթա՛յ, դէպի այսինչ առարկա՛ն։

Այս կոմանդով, եթէ հարիւրեակը կանգնած է ճիգ կազմով եւ կամ զօրախմբային զօրասիւնով իսկ նշանակուած զօրախումբը գտնւում է գլխում, նորա հրամանատարը դուրս գալով իւր զօրախմբի մէջտեղը տալիս է կոմանդ. 1) Ուսի՛ն. 2) Քայլելով յառաջ մա՛րշ. *եւ երբ զօրախումբը բաժանուի հարիւրեակից՝* 3) դէպի աջ (դէպի ձախ, մէջտեղից) ի շղթայ. մա՛րշ. 4) դէպի այսինչ առարկան, այսինչ մասի համեմատութեամբ։

Երրորդ կոմանդով մարդիկ դառնում են կիսադարձ ուր հարկն է, հեռանում են քայլաչափ կամ ինչքան ցոյց կը տրուի կոմանդով եւ ընթանալիս կազմում են մի շարք։

Չորրորդ կոմանդով շղթան գնում է ցոյց տրուած ուղղութեամբ մինչեւ որ հանի նշանակուած տեղը կամ տրուի կոմանդ կանգնեցէ՛ք։

Եթէ ի շղթայ է ուղարկւում զօրախմբային զօրասիւնի յետեւի զօրախմբերից որեւէ մէկը, զօրախմբի հրամանատարը դուրս է բերում նորան զօրասիւնից եւ շղթայի ցրւում՝ համաձայն վերոդրեալի։

207.— *Երբ միաժամանակ հարկաւոր լինի երկու զօրախումբ ցրուել, հարիւրապետը տալիս է կոմանդ.*

Այսինչ զօրախմբերը ի շղթայ. *կամ* այսինչ զօրախմբի համեմատութեամբ, այսինչ զօրախմբերը ի շղթայ *եւ երկու դէպքում էլ աւելացնում է՝* դէպի

այսինչ առարկան, այսինչ զօրախմբի համեմատութեամբ:

Առաջին դէպքում աւելի աջ դտնուող զօրախմբի հրամանատարը տալիս է կոմանդ. դէպի աջ ի շղթայ՝ մա՛րշ. *իսկ ձախ դտնուող զօրախմբի հրամանատար՝* դէպի ձախ ի շղթայ՝ մա՛րշ:

Երկրորդ դէպքում այն զօրախմբի հրամանատարը, որի համեմատ նշանակուած է ցրուել, տալիս է կոմանդ՝ մէջից (տեղից) ի շղթայ — մա՛րշ. *իսկ միւս զօրախմբի հրամանատարը* — դէպի աջ (դէպի ձախ) ի շղթայ — մա՛րշ:

208.— *Եթէ հարկաւոր է միաժամանակ երկուսից աւելի զօրախումբ ցրուել, հարիւրապետը տալիս է կոմանդ.*

1) Այսինչ զօրախմբի համեմատութեամբ, այսինչ զօրախմբերը (հարիւրեակը) ի շղթա՛յ:

2) Դէպի այսինչ առարկան, այսինչ զօրախմբի համեմատութեամբ:

Այս կոմանդներով, այն զօրախումբը, որի համեմատութեամբ նշանակուած է ցրուել, ցրւում է մէջից, իսկ միւսները նորանից դէպի աջ կամ դէպի ձախ, նայած նոցա դասաւորութեանը:

209.— *Եթէ հարկաւոր է մի զօրախումբ ցրուել ճակատի գծով, հարիւրապետը տալիս է կոմանդ՝* այսինչ զօրախումբը գծով ի շղթայ: *Իսկ զօրախմբի հրամանատարը տալիս է կոմանդ,* մէջից (դէպի աջ–ձախ) գծով ի շղթա՛յ: *Այս կոմանդով կատարւում է յօդ. Այս կոմանդով բոլոր մարդիկ, բացի այն զոյգից որի համեմատութեամբ պէտք է ցրուել, դառնում են ուր հարկն է, բացւում են եւ կազմում են մի շարք:*

210.— *Եթէ հարկաւոր է ճակատի գծով երկու կամ երեք զօրախումբ ցրուել, հարիւրապետը տալիս է կոմանդ.*

Այս զօրախմբի համեմատ, այսինչ զօրախմբերը գծով ի շղթայ: *Այս կոմանդով կատարւում է յօդ.* 207 *եւ* 208 *ցոյց տրուածը, այն տարբերութեամբ, որ զօրախմբերը բացւում են առանց առաջ գնալու եւ իրենց տեղերը բռնելով կանգնում են, իսկ հարիւրեակի մնացած մասը բաժնւում է համապատասխան տեղ հարիւրապետի ցուցմունքով:*

211.— *Հարիւրեակը ընթանալիս շղթայ կազմելու ժամանակ, այն մասը, որ նշանակուած է պահեստի համար՝ կանգ է առնում, իսկ ցրուելը տեղի է ունենում ընթանալիս:*

Հարիւրեակի յետ դառնալու ժամանակ շղթայի նշանակուածները յետ են դառնում եւ ցրուում են ինչպէս կը հրամայուի:

Շղթայի ուժեղացնելը

212.— *Շղթան կարելի է ուժեղացնել նրան խտացնելով կամ երկարացնելով, համաձայն հարիւրապետի հրամանի.*

Այսինչ զօրախումբը ի շղթայ միջոցներով կամ՝ այսինչ զօրախումբը ի շղթայ դէպի աջ (ձախ) թեւը:

Շղթայի ուժեղացման համար նշանակուած զօրախումբը եթէ կրակ դեռ չէ բացած, դնում է փակ շարքերով եւ մօտենալով շղթային ցրւում է ինչպէս հրամայուած է:

Իսկ եթէ շղթայի խտացումը կամ երկարացումը կատարւում է թշնամու կրակի տակ եւ բաց դաշտում, այն ժամանակ զօրախումբը, բաժանուելով պահեստից, ցրւում է, դնում է դէպի շղթան ստեղծած քայլերով. շղթային մինչեւ 100 *քայլ մօտենալով սկսում է վազել:*

Շղթայի դեկավարելը

213.— *Շղթան կառավարում են կոմանդներով եւ հրամաններով. բացի դորանից բոլոր սպաները եւ ենթասպաները, որոնք զօրախմբի հրամանատար են, գործ են ածում սուլիչներ կրակը դադարեցնելու համար:*

214.— *Շղթան կառավարելու հեշտութեան համար, ձեռք են առնում հետեւեալ միջոցները.*

ա) *Եթէ մի քանի զօրախմբեր են կազմում շղթան, այն ժամանակ ամբողջ շղթան բաժանւում է մասերի զօրախմբերի թուի համաձայն:*

բ) *Երբ որ անխուսափելիօրէն զանազան զօրախմբերի մարդիկ խառնւում են իրար, զօրախմբի հրամանատարները իրենց հրամանատարութեան տակ են առնում այն մարդկանց, որոնք մտել են իրենց զօրախմբային մասերը, եւ եթէ հարկաւոր է, հրամանատարութիւնը յանձնում են շղթան ուժեղացնելու համար եկած զօրախմբի հրամանատարների աւագին:*

Կռուի ընդհարումների ժամանակ կամ ուրիշ յարմար պայմաններում պէտք է մի զօրախմբի մարդիկ տեղափոխուեն մի տեղ (նոյն տեղը):

գ) *Եթէ շղթայում դտնւում են երկու կամ աւելի զօրախմբեր, այն ժամանակ շղթան կառավարում է հարիւրապետը անձամբ:*

Պաշտօնեաների պարտականութիւնը շղթայում

215.— Շղթայի պետը *հսկում է շղթայի ուղղութեան վերայ դնալու ժամանակ, որի համար նշանակում է ուղղութիւն տուող մասը եւ ղեկավարում է շարժումը: Շղթան դիրք մտնելուց յետոյ նա ցոյց է տալիս հրացանաձգութեան նպատակը եւ որոշում է կրակի տեսակները: Շղթայի պետը միեւնոյն ժամանակ ուշք է դարձնում փամփուշտների գործածելու վերայ եւ ժամանակին իմաց է տալիս պահեստին՝ փամփուշտների պակասը լրացնելու համար:*

Շղթայի պետի տեղը պէտք է լինի շղթայի յետեւում այնպիսի տեղ, որտեղից աւելի յարմար է կառավարել:

216.— Զօրախմբի հրամանատարը *հսկում է իւր զօրախմբի գործողութիւնների եւ կրակի վերայ. նա է նշանակում զօրախմբերին ուղղութիւն տուող բաժանմունք, շղթայի պետի ցուցմունքով որոշում է հրացանաձգութեան նպատակները եւ կրակի տեսակը, որոշում է նշանի բարձրութիւնը, կոմանդներ է տալիս կրակ բացելու համար, հատ հատ կրակի արագութիւնը փոխում է կամ բոլորովին դադարեցնում է կրակը եթէ նպատակը թաղնուել է եւ զեկուցանում է շղթայի պետին՝ փամփուշտները լրացնելու անհրաժեշտութեան մասին: Միեւնոյն ժամանակ եթէ մի քանի զօրախմբեր գործում են միասին, ապա զօրախմբի հրամանատարը պէտք է կապ պահպանէ հարեւան զօրախմբերի հետ:*

Յարձակուելու ժամանակ Զ. Հ. պէտք է լինի զօրախմբի առաջ, իսկ դիրքում եղած ժամանակ այնտեղ, որտեղից յարմար է կառավարել եւ հետեւել թշնամու գործողութիւններին:

Շղթայում այն ենթասպաները, որոնք հրամանատարութիւն չեն անում, դտնւում են իրենց զօրախմբերի յետեւը:

217.— *Բաժանմունքների հրամանատարները, ինչպէս դիրքում, նոյնպէս եւ դնալիս պէտք է գտնուեն իրենց բաժանմունքների յետեւում եւ կատարեալ ճշդութեամբ կատարեն Զ. Հ.ի կոմանդները եւ հրամանները, որ մարդիկ յարմար տեղ ընտրեն իրենց համար, նշանն ուղղեն. հսկում է փամփուշտների ելքի վերայ, նոյնպէս, որ մարդիկ առանց նշանի բռնելու չդցեն եւ ոչ մի դէպքում չթողնեն կազմը:*

Հրացանաձգութեան շղթայում

218.— *Շղթայում կրակը կարող է լինել* հատ հատ *եւ* համազարկով: *Հատ հատ դանդաղ կրակ բացելու համար շղթայի պետը տալիս է կոմանդը.*

1) Դէպի շղթան (*օրինակ*).

2) Դանդաղ.

Զ. Հ.ները տալիս են կոմանդ.

1) Դէպի շղթան.

2) 1400 (*օրինակ*).

3) Դանդաղ, մէկ մէկ այսինչ թեւից (երկու թեւերից) — սկսեցէ՛ք: *Եթէ շղթայի պետը արագ կամ կապուկներով կրակ է ասել, այն ժամանակ զօրախմբերի հրամանատարները* 3*րդ կոմանդի տեղ ասում են՝* արագ (կապուկներ) — սկսեցէ՛ք:

Համազարկով կրակ բացելու համար շղթայի պետը տալիս է կոմանդ.

1) Դէպի մարտկո՛ցը (*օրինակ*).

2) Զօրախմբերով կրակ.

Զօրախմբերի հրամանատարները տալիս են կոմանդ.

1) Դէպի մարտկոցը.

2) 2000 (*օրինակ*).

3) Զօրախմբով կրա՛կ.

4) Նշան — կրա՛կ:

219.— Յարձակուելու ժամանակ *հրացանաձգութեան համար շղթան կանգնեցնում է, ընթանալիս հրացան ձգել արգելւում է:*

Նահանջելու ժամանակ *շղթան կարող է զցել ինչպէս յարմար դիրքերում կանգնելով, նոյնպէս եւ առանձին առանձին մարդիկ կանգնելով. վերջին դէպքում հրացանաձիգը դառնում է թշնամու կողմը եւ արձակելով միանում է շղթային:*

220.— *Եթէ շղթան հատ հատ է կրակում, իսկ հարկաւոր է համազարկ բացել կամ նպատակը փոխել, այն ժամանակ նախ սուլում են կրակը դադարեցնելու համար եւ ապա տալիս են կոմանդները հրացանաձգութեան համար:*

Շղթայի շարժումը

221.— *Շղթայի շարժողութեան ժամանակ, մարդիկ պէտք է ուղղութիւն եւ իրար մէջ կապ պահպանեն:*

222.— *Շղթան կարող է յարձակում գործել* քայլելով *կամ* վազելով: *Թշնամուն մինչեւ* 1400–1000 *քայլ մօտենալը շղթան պէտք է առաջ շարժուի քայլելով եւ բոլորը միասին. իսկ այդ հեռաւորութիւնից յետոյ բաց եւ թշնամուց դնդակահարուող տեղերը շղթան պէտք է յարձակում գործի* վազելով *ամբողջ շղթայով կամ մաս–մաս: Վերջին դէպքում տեղը մնացող մասը կրակ է բացում վազողներին ծածկելու համար: Երբեմն շատ խիստ կերպով դնդակահարուող տարածութիւններ ձեռնտու է անցնել մէկ մէկ:*

223.— *Քայլելով յարձակուելու ժամանակ հրացանը պէտք է պահել* ուսին, *իսկ վազելու ժամանակ ոտքին:*

224.— *Միաժամանակ ամբողջ շղթան առաջ տանելու համար շղթայի պետը տալիս է կոմանդ.*

1) Շղթայ յառա՛ջ.

2) Դէպի այսինչ առարկան, այսինչ զօրախմբի համեմատ (*եթէ հարկաւոր է՝* վազելով):

Երկրորդ կոմանդով Զ. Հ. սուլելով տալիս է կոմանդ.

1) Փա–կե՛լ.

եւ վազելով դէպի իր զօրախմբի մէջտեղը առջեւից.

2) Դէպի այսինչ առարկան.

3) Կանգնեցէ՛ք (*եթէ հարկաւոր է*).

4) Զօրախումբ, յառա՛ջ (*վազելով*)։

225.— *Շղթան մաս-մաս վազելով առաջ տանելու համար շղթայի պետը ցոյց է տալիս թէ որ զօրախմբերը պէտք է սկսին վազել եւ ո՛ր տեղը պէտք է գրաւեն. ապա տալիս է կոմանդ.*

Մաս-մաս վազել, 1ին եւ 2րդ զօրասիւները (*օրինակ*) սկսում են։ *Այդ կոմանդով 1ին եւ 2րդ Զ. Հ. սուլելով տալիս են կոմանդ.* փակե՛լ. *եւ գնալով մէջտեղը* — կանգնեցէ՛ք, *վազելով։ Հասնելով ցոյց տուած տեղը, նրանք կանգնեցնում են իրենց զօրախմբերը տալով կոմանդ* — կանգնեցէ՛ք։ *Տեղը մնացած զօրախմբերը* արա՛գ *կոմանդով յաճախակի կրակելով ծածկում են յարձակող մասին թշնամուց իսկ երբ վազողները բռնում են իրենց տեղերը եւ կրակ են բաց անում, նրանք սկսում են վազել։ Արդէն տեղ հասածները իրենց հերթին պաշտպանում են յետ մնացածներին* արագ *կրակով։*

Վազել պէտք է մօտաւորապէս 100 *քայլ — նայած տեղին։*

226. *Շղթան կանգնեցնելու համար շղթայի պետը տալիս է կոմանդ* — շղթայ, կանգնի՛ր։

Զ. Հ.ները այս կոմանդը կրկնում են, որից յետոյ զօրախումբը կանգնում է։ Վազելով յարձակումի ժամանակ եթէ շղթայի պետը տալիս է շղթայ կանգնիր *կոմանդը, այն մասերը, որոնք դեռ եւս չեն կատարել վերջին գործողութիւնը, գնում են մինչեւ առջեւում կանգնողների գիծը եւ շարժումը դադարում է։*

Շղթայի կանգնելուց յետոյ մարդիկ առանց կոմանդի կամ հրամանի սպասելու յարմար դիրք են ընտրում հրացանաձգութեան համար։

227.— *Շղթայի նահանջումը միշտ տեղի պէտք է ունենայ մաս մաս կամ ամբողջ շղթայով, բայց միշտ քայլելով։*

Շղթան մաս մաս նահանջելու համար շղթայի պետը տալիս է կոմանդ.

1) Շղթան դէպի յետ — այսինչ զօրախմբերը (կամ զօրախումբը) սկսում են.

2) Դէպի այսինչ առարկան (*կամ ցոյց է տալիս դիրքը*)։

Այդ զօրախմբերի հրամանատարները սուլելով, տալիս են համապատասխան կոմանդներ եւ տանում են նոր դիրքը, իսկ տեղը մնացածները նահանջողներին պաշտպանում են յաճախակի կրակով։ Ամբողջ շղթան միաժամանակ նահանջելու համար շղթայի պետը տալիս է կոմանդ.

1) Շղթան դէպի յե՛տ.

2) Դէպի այսինչ առարկան, այսինչ զօրախմբի համեմատ։ *Այս կոմանդներով զօրախմբերի հրամանատարները դադարեցնում են հրացանաձգութիւնը, տանում են իրենց զօրախմբերը ցոյց տրուած ուղղութեամբ։*

Շղթայի ուղղութիւն փոխելը

228.— *Շղթայի ուղղութիւն փոխելը ոչ մեծ անկիւնով, ինչպէս տեղը այնպէս եւ ընթանալիս, կատարւում է շղթայի պետի կոմանդով.*

Այսինչ զօրախմբի համեմատ դէպի ա՛ջ (դէպի ձա՛խ), դէպի այսինչ առարկան։ *Այս կոմանդը կրկնում են զօրախմբերի հրամանատարները եւ եթէ այդ տեղի է ունենում ընթանալիս, շղթան գնում է նոր ուղղութեամբ եւ զօրախմբերը առաջնորդող մասի հետ կապ են պահպանում։*

Եթէ այդ կատարւում է տեղը, այն ժամանակ շղթայի պետը առաջուց մի զօրախումբ կամ բաժանմունք կանգնեցնում է նոր ուղղութեամբ, իսկ միւս զօրախմբերը ամենակարճ ճանապարհով դուրս են գալիս դէպի նոր գիծը՝ իրենց հրամանատարների կոմանդներով։

Շղթայի խմբելը

229.— *Ամբողջ շղթան կամ նորա մի մասը զօրախմբերում կազմելու համար շղթայի պետը իրանց հրամանատարներին տալիս է կոմանդ.*

Զօրախումբ կազմեցէք (այսինչ զօրախմբեր զօրախումբ կազմեցէք)։ *Այս կոմանդով նշանակած զօրախմբերի հրամանատարները դադարեցնում են հրացանաձգութիւնը եւ վազելով դէպի առաջ իրենց զօրախմբերի մէջտեղը տալիս են կոմանդ.*— Ինձ մո՛տ։ *Միեւնոյն ժամանակ ինքը երեսը դարձնում է դէպի պահանջուելիք կողմը։*

Այդ կոմանդով զօրախմբերը վազելով խմբւում եւ երկու շարք են կազմում։

Առանձին գործող հարիւրեակի ռազմական կարգը

230.— *Հարիւրեակի ռազմական կարգը բաղկանում է շղթայից եւ խիտ մասից որ կոչւում է պահեստ։*

Ռազմական կարգում խաղաղ ժամանակի կազմով հարիւրեակը կարող է 100 *քայլ երկարութեամբ ճակատ ունենալ իսկ պատերազմական կազմով՝ հարիւրեակը մինչեւ* 200 *քայլ։*

231.— *Առանձին գործող հարիւրեակը միշտ պէտք է ունենայ իւր պահեստը, որի ոյժը կախուած է հանգամանքներից։*

232.— *Պահեստը գտնւում է շղթայի կենտրոնի կամ որեւէ թեւի յետեւը, այնպիսի հեռաւորութեան վերայ, որ կարողանայ ժամանակին օգնութեան հասնել շղթային, բայց կռուի սկզբում նա* 200 *քայլից հեռու չպէտք է լինի եւ այնպիսի կազմ պէտք է ունենայ, որ որքան կարելի է քիչ մնասուի թշնամու կրակից։*

50.— ՑՈՒՑԱԿ ԴԻՒԱՆԻ ԵՒ ՑԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐՈՒ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ

Դ. Ընդհանուր Ժողովի դիւանական թուղթերուն մէջ կը գտնենք նաեւ հետեւեալ ցուցակները

25 Փետրուար 1907

Դ Ի Ւ Ա Ն

Ատենապետներ
Հերթով, իւրաքանչիւր օր մէկը

1.— *Ահարոնեան*
2.— *Զաւարեան*
3.— *Մալումեան*
4.— *Վոսմեան*
5.— *Օհանջանեան*
6.— *Թոփչեան*

Քարտուղարներ
ա) Պատգամաւորներից

1.— *Իսահակեան*
2.— *Թաղէոսեան*
3.— *Տաճատ Վ. Մելքոնեան*
4.— *Տէր Մկրտչեան*

բ) Հրաւիրուածներից

1.— *Ցարութիւնեան*
2.— *Վալադեան*
3.— *Մարդպետ*

ՑԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐ

Ցուցականի յանձնախումբ

1.— *Թոփչեան*
2.— *Վոսմեան*
3.— *Վարդան*
4.— *Արամ*
5.— *Բժ. Զաւրեան*

Դատական երկրորդ յանձնախումբ

1.— *Տաճատ*
2.— *Վահագն*
3.— *Շահխաթունեան*

Տ.տ.ի – յանձնախումբ (վիճակագրական)

1.— *Բարսեղեան*
2.— *Սաքօ*
3.— *Մուրատ*

Եւրոպական պրոպականտի յանձնախումբ

1.— *Արշակ*
2.— *Զարդարեան*

ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

I.— Հաշուական

1.— *Անդրանիկ — Սասունի կողմէ*
2.— *Իշխան — Վասպուրականի*
3.— *Տէր-Մկրտչեան* } *Կովկասէն*
4.— *Թաղէոսեան* }
5.— *Մինասեան — Պալքանի կողմէ*
6.— *Ճէլալեան — Ամերիկայէն*
7.— *Ստեփանեան — Աւորպատականէն*

II.— Դատական (պալքանեան)

1.— *Անդրանիկ*
2.— *Զուխուրեան*
3.— *Ստեփանեան*
4.— *Սեպուհ*
5.— *Բժ. Զաւրեան*

III.— Սասունի մասնախումբ

1.— *Բարսեղեան*
2.— *Մինասեան*

IV.— Վասպուրականի մասնախումբ

1.— *Թոփչեան*
2.— *Վահագն*

Զինման խնդրի յանձնաժողով

1.— *Վարդան*
2.— *Սաքօ*
3.— *Բոստոմ*
4.— *Վոսմեան* } *զեկուցանողներ*
Արամ }

Տեղորական խմբեր
(ներքին կանոնագիրք կազմելու)

1.— *Վոսմեան*
2.— *Մալումեան*
3.— *Մինասեան*

51.— ԾՐԱԳՐԱՑԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՒ ՆԵՐԱԾԱԿԱՆ

Դիւանի թուղթերուն մէջ կը գտնենք նաեւ ծրագրային պահանջներու բանաձեւումը՝ իր ներածականով: Զանց կ'ընենք պահանջները որոնք, շարադրական փոքր փոփոխութիւններով, տրուած են Ծրագրին մէջ (տե՛ս ՆԻՒԹԵՐ, Գ. հատ., էջ 324-35), բայց կու տանք այդ կարճ ներածականը, որ համապատասխան չէ հրատարակուած Ծրագրի վերջնական ձեւին (հաւանօրէն կը կազմէ պատգամաւորի մը առաջարկը):

Հ. Յ. Դաշնակցութիւնը, իբրեւ յեղափոխական ու սոցիալիստական կուսակցութիւն, նպատակ ունի կազմակերպելու հայ աշխատաւոր ժողովուրդը, քաղաքականապէս ու տնտեսապէս, ապահովելով՝ նրա քաղաքացիական եւ աշխատաւորական իրաւունքները, եւ ձեւոք ձգելով, հարեւան աշխատաւոր ժողովուրդների հետ միասին կառավարութեան ղեկը, ոչնչացնել այժմեան կառավարա-կապիտալիստական կարգերը, եւ փոխարինել նրանց լայն ռամկավարութեամբ եւ արդիւնաբերութեան միջոցների համայնացումով: (Սոցիալիզացնել արդիւնաբերութեան միջոցները, այսինքն՝ կապիտալիստական կարգերը վերածել կոլեկտիվային կարգերի):

Ունենալով իբրեւ գործունէութեան վայր Կովկասը եւ Թիւրքայ Հայաստանը, ուր գոյութիւն չունի ժողովրդական ներկայացուցչութիւն, Դաշնակցութիւնը իր նպատակով, ծրագրով եւ տակտիկայով (գործադրած միջոցներով), հետապնդելով հանդերձ այն անմիջական բեֆորմների գործադրութիւնը, որոնք պահանջում են աշխատաւորների առօրեայ շահերը, չի հանդիսանում իբրեւ բեֆորմների կուսակցութիւն, այլ յեղափոխական կուսակցութիւն:

52.— ԾՐԱԳՐԻ ՑԱՏԱԿԱԳԻԾ

Դիւանական թուղթերուն մէջ գտնուած այս էջը կը պատկանի հաւանօրէն Բժ. Համօ Օհանջանեանի գրչին: Ծրագրի խմբագրութեան բաւական մանրամասն յայտագիր մըն է:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՄԻԱԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻԾԸ

I Նպատակ.
II Միջոցներ նպատակին հասնելու համար.
ա) Տակտիկայի տեսական մասը
բ) Տակտիկայի գործնական մասը

I 1) *Ծրագրի տեսական հիմնաւորումը*
2) *Քաղաքական նպատակ*
3) *Տնտեսական նպատակ*(*)
4) *Մինիմում եւ մաքսիմում պահանջներ*

II 1) *Կուսակցական կազմակերպչական սիստեմ (կանոնագրութիւն).*
2) *Ժողովրդի ո՞ր խաւերի միջոցով պիտի հասնել մեր նպատակին.*
3) *Այդ խաւերի կազմակերպումը՝*
ա) *Տնտեսական կռուի համար*
բ) *Քաղաքական կռուի համար*
գ) *Ապատամբութեան համար*
դ) *Ահաբեկումն*
ե) *Ժողովրդի զինումն*
4) *Յարաբերութիւններ եւ կապ ուրիշ յեղափոխական կուսակցութիւնների հետ:*

III 1) *Մեր ծրագրի իրագործումը Տաճկաստանում, Կովկասում, Բուլղարիայում, Ամերիկայում եւ այն բոլոր ուրիշ վայրերում, ուր կան հայ մասսաներ.*
2) *Գործակցութիւն այն յեղափոխական կուսակցութիւնների հետ, որոնք մօտ են մեզ իրանց ծրագրով, մտնելով նրանց հետ ֆեդերատիւ կապակցութեան մէջ:*

(*) Դաշնակցութիւնը, կազմելով իրանից հայկական փրակցիա միջազգային սոցիալիստական կուսակցութեան, ամենայն տեղ իբրեւ աւտոնոմ փրակցիա մտնում է տեղական սոցիալիստական կուսակցութեան մէջ եւ գործում է նրա հետ միասին:

53.— ՌՈՒՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ

Կու տանք ստորեւ Դ. Ընդհանուր ժողովին որոշումով «Ռուսական Յեղ. Մարմիններին» ուղղուած այն խօսքը, որուն պատճէնը կը գտնենք Դիւանի թուղթերուն մէջ, հաւանօրէն Ակնունիի ձեռագրով գրուած:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը, լեցուած անհուն յարգանքով հանդէպ այն հերոսական պայքարի, որ ռուսական յեղափոխութիւնը մղում է յանուն Ռուսաստանի բոլոր ժողովուրդների քաղաքական եւ տնտեսական ազատութեան, ուղարկում է ձեզ եւ ձեր միջոցով բոլոր մարտական ընկերներին՝ իր ընկերական ջերմ ողջոյնները, վճռական յայտարարութեամբ, որ Դաշնակցութիւնը չարունակելու է անյողդողդ կերպով՝ ձեր շարքերի կից եւ անկախօրէն, իր կոիւը թէ՛ Կովկասում եւ թէ Թուրքիայում, ուր 17 տարուց ի վեր նա կուրծք է տուել սուլթանական անարդ ռեժիմի դէմ: Կեցցէ՛ յեղափոխական կուսակցութիւնների անկեղծ դաշնակցութիւնը. կեցցէ՛ յեղափոխութիւնն ու սոցիալիզմը:

54.— ԽՕՍՔ ԹՈՒՐՔ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Կարմիր մելանով գրուած անստորագիր այս խօսքը խնդակցութիւն կը յայտնէ թուրք յեղափոխական կուսակցութիւններուն՝ իրենց միացման առթիւ: Ընդհանուր ժողովի ատենագրութեանց մէջ նման որոշում կամ բանաձեւ չենք գտներ: Կրնայ անհատի մը առաջարկը ըլլալ:

Օսմանեան հայրենիքի այն կեդրոնավայրից՝ որ պատմական է դառել իր երեսնամեայ բռնապետական դէպքերով եւ քսանամեայ յեղափոխական ազատագրական կռիւներով, կու դանք մեր խորին ուրախութիւնը յայտնել ձեր այն իմաստուն որոշման՝ որով միեւնոյն հայրենիքում ապրող, քաղաքական եւ տընտեսական միեւնոյն շահերով կապուող դարերով հաբեւան ազգութիւնների ազատագրական կռիւը վարող քսաբաքական 2 զօրեղ կուսակցութիւններ՝ Իթթիհատ եւ Իթթիֆաղ(?) կուսակցութիւնները կը համբարձին իրենց յեղափոխական գործունէութիւնների, իրենց կռուի տակտիկի եւ պրոպականտայի մէջ:

Մուշ-Սասունի Թուրք, քիւրտ եւ հայ ազգաբնակութիւնների՝ մէկդմէկու խորապէս թշնամացած, վիրաւորած, կործանած ժողովուրդների ցանկալի համերաշխութեանը, կենսական քաղաքական ու տնտեսական ազատագրութեանը առաջնորդող այդ որոշումը թող յարատեւ ու յաղթական լինի:



Նմոյշ մը Վոսմեան ձեռագրէն (էջ 28)

Արեւելեան Բիւրոյի 1906 թ. շրջաբերականի սեւագրութենէն մասեր (տեսնել ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, գ. հատ., էջ 1–2)։ Նաեւ ներածական բաժինը (էջ 42), որ կը պատկանի Ռոստոմի գրչին։ Ապա՝ օրակարգի մանրամասնութիւններ, Սիմոն Զաւարեանի ձեռագրով (էջ 43)։





Բ.— ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ ԵՒ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Հ. Յ. Դ. 4րդ Ընդհանուր Ժողովի ատենագրութիւններուն մէջ ամփոփ կերպով տրուած են մարմիններու տեղեկագիրներու բովանդակութիւնը կամ պատգամաւորներու բերանացի զեկուցումները իրենց շրջանին մասին: Թղթածրարներուն մէջ կը գտնենք գրաւոր տեղեկագիրներուն մէկ մասը միայն, բայց նաեւ՝ զանազան շրջաններէն եկած առաջարկներ, հարցեր, Շրջանային ժողովներու արձանագրութիւններ, որոշում-բանաձեւեր, նամակներ եւ ընդհանուր թէ մասնակի այլ նիւթեր: Բոլորն ալ կը վերաբերին անշուշտ 3րդ եւ 4րդ Ընդհանուր Ժողովներուն միջեւ ինկած եռամեակին եւ լուսարձակի տակ կ'առնեն Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան կարեւոր, եւ առնուազն Կովկասի մեր կազմակերպութեան համար անկիւնադարձային այդ ժամանակաշրջանը:

Հրատարակութեան կու տանք այդ բոլոր փաստաթուղթերը — տեղեկագիրներ եւ յարակից նիւթեր — առնելով շրջան առ շրջան՝ 4րդ Ընդհանուր Ժողովի ատենագրութիւններէն ի յայտ եկող զեկուցման կարգի յաջորդականութեամբ (տեսնել ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, Գ. հատոր, ցուցակ նիստերու եւ նիւթերու, էջ 349–352):

Նիւթերու առատութիւնը դժբախտաբար միշտ համապատասխան չէ շրջանի կամ մարմնի գործունէութեան կարեւորութեան: Ընդհանուր Ժողովին սահմանուած ոչ մէկ տեղեկագրութիւն կամ զեկուցական նոթ կը գտնենք արխիւին մէջ, օրինակ, Արեւելեան Բիւրոյէն, Շամի (Վասպուրական) Կեդր. Կոմիտէէն, Լեռնավայրի (Կիլիկիա) Պատասխանատու Մարմնէն, Մեծ Քաղաքի (Թիֆլիս) եւ Վիշապի (Պոլիս) Կեդրոնական Կոմիտէներէն: Առատ նիւթ կը պարունակէ Վրէժի (Ատրպատականի Կ. Կոմիտէ) արխիւը (մինչեւ իսկ կոմիտէական եւ խմբական ժողովներու արձանագրութիւններ ու բանաձեւեր), մինչ համեմատաբար վտիտ են, օրինակ, Ջրաբերդի (Կարս) եւ Մրգաստանի (Երեւան) թղթածրարները եւ առյաւէտ կորսուած կը թուի ըլլալ Բարձրաւանդակի Պատասխանատու Մարմնի (Դուրան Բարձրաւանդակի Կ. Կոմիտէ) ծածկագիր տեղեկագրի առաջին տետրակը:

Ընդհանուր Ժողովին իրենց պատգամաւորներով մասնակցող մարմիններու շարքի աւարտէն ետք, կու տանք նաեւ այլ շրջաններու վերաբերեալ տեղեկագրային նիւթեր՝ որոնք կը գտնուին Բիւրոներու կամ Ընդհանուր Ժողովի թղթածրարներուն մէջ (Էրզրում, Տերսիմ, Եգիպտոս, Այնթապ, եւն.): Իսկ Հայ Դատի հետապնդման մասին Լորիսի ընդարձակ տեղեկագիրը տեղ կը գտնէ Արեւմտեան Բիւրոյին յատկացուած բաժնին մէջ, քանի ա՛յդ մարմինն էր պատասխանատուն արտասահմանեան քարոզչութեան գործին:

Այս բաժնէն դուրս կը մնան ուղղակի Ընդհանուր Ժողովին ուղղուած անհատական նամակները, ինչպէս նաեւ Ժողովի մանրամասն քննութեան առարկայ դարձած դատական գործերը (յատկապէս Ցուցական Մարմնի եւ Վարդոյի դատական թղթածրարները), զորս պիտի ներկայացնենք առանձին:

Տեղեկագիրներու լեզուն, յանախ ժողովրդական եւ քերականօրէն անճիշդ, պահած ենք փաստօրէն անփոփոխ՝ յանուն հարազատութեան, կատարելով ուղղագրական կամ, պարագայաբար, կիտադրական սրբագրութիւններ միայն [ի հարկին ուղղանկիւն փակագծերու մէջ տալով պակսող կամ պակսիլ թուող բառեր], ըստուածը աւելի յստակ ու հասկնալի դարձնելու առաջադրանքով:

Հ. Ց.

I.— ԼԵՌՆԱՊԱՐԻ ՇՐՋԱՆ

Լեռնապարը, Շատախէն մինչեւ Բաղէշի մերձակայքը երկարող՝ Վանայ լճի հարաւային այդ շրջանը (Մոկք, Ռշտունիք եւն.), քանի մը տարիէ ի վեր բաժնուած էր Վասպուրականի (Շամի) Կ. Կոմիտէէն եւ կը կազմէր առանձին շրջան: 4րդ Ընդհանուր Ժողովին, Լեռնապարի ներկայացուցիչն էր շրջանի գլխաւոր ղեկավարը՝ Իշխան:

Լեռնավայրի վերաբերեալ թուղթերուն մէջ կը գտնենք 19 միջակ չափի էջերէ բաղկացած տեղեկագիր մը եւ վիճակագրական տախտակ մը, զորս կու տանք յաջորդաբար:

1.— ԼԵՌՆԱՊԱՐԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ՇՐՋԱՆԱԿԸ

Ըստ բովանդակութեան, այս տեղեկագիրը պատրաստուած կը թուի ըլլալ 1905ին, ի նախատեսութիւն նոյն տարուան վերջը կամ 1906ի սկիզբը կայանալիք 4րդ Ընդհանուր Ժողովին (որ, պայմաններու բերումով, ուշացաւ եւ գումարուեցաւ 1907 տարուան առաջին կէսին):

Տեսնել այս մասին ՆԻՒԹԵՐու Գ. հատորին սկիզբը տրուած շրջաբերականները, էջ 2ա–5, յատկապէս երկու Բիւրոներու 20 Օգ. 1905 թուակիր շրջաբերականը:

Անցեալ 1904 թուականի Դեկտեմբերին, Դաշնակցութեան Խորհրդին ներկայացուած է նոյն շրջանակի համառօտ կազմակերպական տեղեկագրեր, մի քանի գաւառների բնական–քաղաքական վիճակագրին հետ: Այժմ նոյն տեղեկագրի համառօտ ներկան պարտ ենք համարում ներկայացնել Ընդհանուր Ժողովին: Անցեալ թուականի գործունէութիւնն ընդարձակելը եւ լայն ծաւալ տալը կարող էք նկատել պարզ կերպով. եւ մանաւանդ չեչտելու արժանի է որ այդ թուականի տեղեկագրին մէջ սպրդած են որոշ վրիպումներ, որոնք առաջ էին եկած դրութիւնը լաւ չուսումնասիրելու պատճառով: Թէպէտ եւ անհրաժեշտ էր իրա ժամանակին դաշնակցական հեռաւոր մարմիններին ընդարձակ տեղեկութիւններ հաղորդել, պարզ կացուցանելու նրանց համար Երկիրը եւ մօտէն ծանօթացնելու այն քաղաքական գործունէութեան իրական պատկերին հետ, որի շուրջը դառնում է բոլոր մեր յեղափոխական մարմինների գործունէութիւնը, բայց դժբախտաբար այդ անհնար եղաւ, այն պարզ պատճառով, որ ժամանակը եւ հանգամանքները այլ կերպ տնօրինեցին: Այժմ եւս ստիպուած ենք նորէն համառօտակի կերպով շեչտել, սոսկ կազմակերպականի շուրջը, Թողնելով աւելի ընդարձակ բնական, քաղաքական ու յեղափոխական տեղեկագիրը ապագայ Ընդհանուր Ժողովին, այն էլ չպիտի մոռացութեան տալ որ մենք համոզուած լինելով որ նախկին Ընդհանուր Ժողովը այս թուին գումարուելիք Ժողովը կայանալիք էր համարում 1906 թ., միանգամայն աչքաթող էինք արած նրա նախապատրաստական իրերը, երբե՛ք նոյնիսկ չմտածելով որ այդպիսի մի անակնկալ կարող էր տեղի ունենալ:

Նախ քան տեղեկագրին անցնելը մենք ստիպուած ենք կանգ առնել մի չարք երեւոյթների վերայ, որ տեղի ունեցան այս թուականի մեր յեղափոխական կեանքում: Մի կողմը թողած Կովկասը, որ որոշ չափով ազդեց Երկրի յեղափոխական գործի վերայ թէ՛ դրական եւ թէ ոչդական տեսակէտից, մենք իրապէս միանգամայն զրկուանք այդ մեծ յոյսերից, որով կարող էինք որոշ պատկեր տալ Երկրի յեղափոխական գործին մեր սպասած դրսի օգնութեամբ:

Ի հարկէ ոչինչ չենք կարող ասել կամ տրտնջալ այն իրողութեան դէմ, որը ծնունդ տուին այդ լայնածաւալ եւ միանգամայն կրստաբեր քաղաքական կրռուին, որ առաջացած է բոլորովին անկախ պատճառներով, ու քաղաքական զանազան երեւոյթներից. այդ շարքը մենք համարում ենք միանգամայն բնական ու անխուսափելի. նոյնիսկ անհրաժեշտ. այդ իսկ պատճառով մենք մեր տուժումին նայում ենք հաշտ աչքով: Բայց այդ իսկ թուականին Երկրի–Տաճկահայաստանի, Դաշտի շուրջը տեղի ունեցան մի քանի երեւոյթներ, որոնք որոշ օգուտ չտալուց զատ, վնասակար կերպարանք առան եւ նոյնիսկ մի նոր ցաւ էին սպառնում տաճկահայ ժողովրդին, մի վնասակար հարուած Երկրի յեղափոխական գործին, մեզ միանգամայն զայրոյթով լցնելով: Ցաւալի է որ տասնուհինգ տարուայ գործունէութեան ընթացքում չկարողացանք ընդորոշել Տաճկահայ Դատի սահմանները ու չկարողացանք հասկանալ երեւոյթը իւր արտադրած յաջորդականութեամբ: Բայց ամենամեծ ցաւն այն է, որ չկարողացանք երեւոյթները կապել իրար հետ որոշ օղակներում, միեւնոյն գոյն տալով նրանց՝ այդ երե-

ւոյթներին։ Ըստ մեզ, այն ինչ որ տեղի է ունենում Տաճկահայ Դատի շուրջը, պէտք է որոշ չափով տեղեակ եւ կապակից լինեն բոլոր նոյն վայրի մէջ ղտնուող մարմինները. հակառակ պարագային որքան նոյնիսկ օգտակար լինի մի վայրում կատարուած երեւոյթը, նոյն չափով պիտի հարուածի նոյն դատի, նոյն գործի միւս էլէմէնտները։ Այդպէս է մեզ թելադրում Տաճկաստանի յոռի քաղաքականութիւնը։ Վիշապի «Արջ խրծեցնելուց» յետոյ մենք միանգամայն մի գերազոյն հրաշքի շնորհիւ մեզ ազատուած ենք զգում մի մեծ տուժումից. բայց ո՞վ գիտէ վաղը նոյնանման մի երեւոյթ կարող է տակն ու վրայ անել ամէն բան։ Այդ իսկ պատճառով մեզ եւս անհնարանալի է մեր գոյութիւնը երկրի մէջ, երբ այդ երկիրը տուժում է առանց մեր գիտութեան եւ յուզւում միայն մեզ համար վնասներով ծանրաբեռնուած. և ո՞վ գիտէ, մի գեղեցիկ օր, երբ այդ տեսակ մի ցոյցի շնորհիւ կը քայքայուի ամբողջ յեղափոխական գործը, այն ժամանակ ամէն կողմից կը բարձրանան մեղադրիչ աղաղակները դէպի երկրի մարմինները։

Այդ պատճառով մենք պահանջում ենք ընդհանուր կապ երկրի բոլոր յեղափոխական մարմինների. այդ ներքին կապը ապագային կարող է միացնել բոլոր Տաճկահայ Դատի շուրջ կատարուող եւ տեղի ունեցող երեւոյթները եւ ա՛յդ միայն կարող է օգտակար լինել. հակառակ պարագային այստեղ այնտեղ երեւացող մասնակի երեւոյթները միայն պիտի ջլատեն յեղափոխական ոյժը եւ գործի թափը պիտի քայքայուի։ Դրա համար ըստ մեզ կարեւոր է երկրի մէջ ունենալ մի ընդհանուր Գատասխանատու Մարմին, որի ձեռքը կ'անցնի այդ միացման եւ համերաշխ գործունէութեան կերպարանք տալու գերը, եւ միայն նրա գործը կ'ամփոփուի այդ բանի մէջ։ Գատասխանատու Մարմնին կը վերապահուի նոր վայրեր ընտրել, նոյնպէս նոր գործունէութեան ասպարէզ-ցանցեր կազմելու համար։ Դրա համար միանգամայն կարեւոր եւ օգտակար էր մինչեւ գալիք Ընդհանուր Ժողովը տեղի չունենայ ոչ մի վայրում որեւէ շարժում կամ ցոյց, մինչեւ այդ ժողովին կարող լինէին մի յայտարարի վերածել երկրի ընդհանուր գործունէութեան ընթացքը։

Արդէն մօտալուտ է կովկասեան յախուռն գործունէութեան վերջաբանը եւ դարձեալ ամէն գործունէութիւն պիտի կեդրոնանայ Տաճկահայ Դատի շուրջը. այդ իսկ պատճառով կարեւոր է, ի նկատի ունենալով անցեալի արիւնոտ փորձառութիւնները, որոշ կերպով բարեփոխութեան ենթարկել ընդհանուր գործունէութեան տակտիկան. մի տակտիկայ ստեղծել համապատասխան երկրի տիրող հանգամանքների կացութեան ու հոգեբանութեան, որով հնարաւոր լինի զոնէ այսուհետեւ թափած աշխոյժն ու արիւնը չանցնի առանց որեւէ օգտի, այլ կարողանայ որեւէ դեր խաղալ, որեւէ օգուտ հասցնել մեր գատին։ Այդ բարեփոխեալ տակտիկան պիտի մտցնել բոլոր գործունէութեան վայրում, որով աւելի կը հեշտանան ներքին կապը եւ համերաշխ գործունէութիւնը եւ յեղափոխական գործը կը փրկուի զանազան համայնական ու աշխարհային կերպարանքից։

Տարակոյս չունենք որ ներկայ Ընդհանուր Ժողովը բացառապէս պիտի լուրջ ուշադրութեան առնէ այդ խնդիրները եւ հաստատուած յեղափոխական գործի յուշատետրից հանելով ազգայնոյ ու տեղական աւելի շատ ցուցական քան թէ իրական սխալ ընթացքը ու ներմուծէ լուրջ, խելացի մի նոր գործունէութեան տակտիկայ։ Մեզ թւում է որ արդէն վերջանալու մօտ լինելով Կովկասեան Հարցը, բոլոր ուշադրութիւնները կեդրոնացնելով Երկրի մէջ, ուժեղ գործունէութեան հիմքը պիտի դնէիք այս կողմեր — Տաճկահայաստանում։ Այդ դէպքում լաւ կը լինէր նախ քան այդպիսի հիմնադրութիւնը գտնէ փոքր ժամանակով Երկրի մէջ դրսից կամ ներսից կազմուէր այդ մեր յիշած ընդհանուր Գատասխանատու Մարմինը եւ զբաղուէր կարեւոր վայրերի քննութեամբ, ու հնարաւոր եղածի չափ բացատրելով ամէն մի վայրի ներքին հոգեբանութիւնը, ըստ այնմ սկսէր գործել։ Ամենալիաւորն է որքան կարելի է չչտապել, եւ ըստ ամենայնի որքան կարելի է ուժեղ պատրաստութեամբ երեւան գալ. չմոռանանք որ այս անգամ կա՛մ մենք պիտի ոչնչանանք՝ ժողովուրդը ու թիւրք կառավարութիւնը հանգստանան, կամ ժողովուրդը պիտի ոչնչանայ՝ մենք նրանից ազատուենք։ Ըստ ամենայնի այս անգամուանից յետոյ մեծապէս քայքայուած տեսնենք գործի օրգանիզմը ժողովրդական յեղափոխական տեսակէտից. այդ հանգամանքը մշտական պարզապէս ի նկատի առնելու էք եւ ըստ այնմ դասաւորելու մեր գատի ապագան։ Այս անգամ մեզ աւելի խոշոր եւ գուցէ կոստաբեր հարուած է սպառնում, այնպէս որ այս անգամին ասպարէզում դրուած պիտի համարել Հայ Դատի լինել թէ չլինելու ծանր եւ պատասխանատու խնդիրը։ Ինչպէս վերեւն էլ յիշեցինք, Ընդհանուր Ժողովը որոշման ժամանակից առաջ դրուած լինելու պատճառով, մենք կարող չեղանք ժողովին մատակարարել Երկրի վերաբերմամբ այն՝ ինչ մեր նպատակը եւ ցանկութիւնն էր։

Կազմակերպական դրութեան մասին գրած անցեալ 1904 թ. կայանալիք Դաշնակցութեան Խորհրդին բաւականաչափ մանրամասն դծելով մեր շրջանի գործունէութեան ուրուագիծը, այս անգամ պարտք ենք համարում թուցիկ ակնարկ մը նետելու դրա շուրջը, որով աւելի պարզ կը լինի։ Կենտրոնական Կոմիտէի կազմը բաղկացած է երեք անդամներից, որոնց մէկը դեռ եւս նոր եւ համարեա մեր շրջանին ու նիստ ու կացին անծանօթ։

1.— Իշխան — միջնակարգ դպրոցի կրթութեամբ,

եղած Քարում(1) որպէս պրոպագանդիստ. Խան, Արաղ Մենակի երկրակից. 1903 թիւ Սեպտեմբերին Վասպուրականում. նոյն թուից նա սկիզբը դնելով յեղափոխակ գործին Լեռնապարում՝ մնացել է հոն։

2.— Վարդան — չնչին կրթութեամբ։ Արհեստաւոր. հասկանում է գէնքից. եղած Վիշապից մինչեւ հոս, 1904 թուականի Հոկտեմբերին եկած Լեռնապար. անկարող պրոպագանդի եւ կազմակերպութեան անընդունակ։

3.— Ռուբէն — Լազարեան ճեմարանից. եկած է թուէս 4 ամիս առաջ եւ մինչեւ հիմա ոչ մի գործի չէ ձեռնարկած։

4.— Մաշտոց — կիսաինտելիկենդ, Պարսկաստանից։ Եղել է միշտ յեղափոխական միջավայրի շրջանակներում. Մենաւոր՝ Ազբօր հետ առաջ է տարած փոխադրութեան գործը. 1904 թ. Վարդանի հետ եկած Լեռնապար եւ մանր մունր կազմակերպութիւններ է տրած. ընդունակ կազմակերպական եւ պրոպագանդի գործերում. ունի մի կարեւոր(?) հիւանդութիւն, որը դժբախտաբար անկարելի է բուժել։

5.— Եղիշէ — տաճկահայ, Կառկառ գաւառից. հին գինուոր է. 1896ից եղած է Գուրգէնի, Սերովբի եւ Վերջերս Վարդէսի տրամադրութեան տակ. կատարած է մի շարք փոխադրութիւններ ու սուրհանդակային գործեր. հրահանգներով կարող է որոշ գործեր կատարել։ Տարիքը 33ի է հասնում. տասնապետ «Հրդեհ» տասնեակին. կորիճ գինուոր է, գրել կարդալ չգիտէ։

6.— Տիգրան — Ոզմեցի. 20–24 տարեկան, զուրկ՝ կրթութիւնից. կորիճ, օրինապահ եւ համեստ գինուոր. 1903 թուից գինուոր է. Լեռնապարում եղած է քանի մը կռիւներում՝ Նարեկի, Աղթամարայ եւ Վանայ դէպքերում. աչքի է ընկնում իւր համեստ ու հնազանդ, վերին աստիճանի խելացի բնաւորութեամբ։

7.— Թորոմ — Մոկացի, արշաւանքի գինուորներից. տարիքը 28ի է հասնում. կորիճ գինուոր է, եղած է Խանասորի, Նարեկի եւ Վանայ կռիւներում. կարդալ-գրել գիտէ. անկարող որեւէ բարոյական գործի։

8.— Սալդատ — 25 տարեկան, օրինապահ ու համեստ գինուոր է. ներկայացնում է բարոյական եւ մաքուր մի դէմք։ Սարուստանցի, զէնքով փախած գինուորութիւնից, 1903 թուից գինուոր է Լեռնապարի շրջանում։

9.— Յակոբ — տաճկաստանցի. զաղթական ամերիկացի. հոս եկած է Վարդանի խմբին հետ, 1904 թ. գրել կարդալ գիտէ, անընդունակ որեւէ կազմակերպական գործի, օրինապահ եւ համեստ երիտասարդ, ըստ ամերիկացու՝ շատ տրամադիր է վիճաբանելու. դրանով միշտ առիթ կը տայ անհամաձայնութեան ընկերների մէջ։ Մաքուր եւ անկեղծ երիտասարդ։

10.— Ակրատ — Սարուստանցի. ենթասպայ Քարի շրջանում. Քարում փամփուշտի գործին մասնակցած. կարդալ գրել գիտէ. գործադրում է սոսկ զինավարժութեան համար, ժողովրդեան եւ թէ գինուորներին։

11.— Վարժապետ — կիսագրագէտ, Կաւաշցի. աներնդունակ որեւէ գործի. հիւանդոտ եւ մտքի հիւանդ. փախստական եղած Նարեկի խնդրով։

12.— Վարդան — Շատախցի. Նազկանց զիւղից. զինուոր է 1903 թուից. օրինապահ, խելօք եւ կորիճ զինուոր է. գրել կարդալ չգիտէ. տարիքը 28–30 է։

13.— Ապրօ — Գուրակցի. եղած Բարձրի(2) բոլոր կռիւներում. գրել կարդալ չգիտէ. կորիճ եւ օրինապահ զինուոր է. տարիքը մօտաւորապէս 30 է։

14.— Ղարիպ — Շատախցի. 20–21 տարեկան. գրել կարդալ չգիտէ, համեստ եւ օրինապահ. մէկ տարուայ զինուոր է, եղած է Նարեկի կռւում։

15.— Մխօ — Կաւաշցի. 29–30 տարեկան. գրել կարդալ չգիտէ. մաքուր տղայ է։

16.— Լաթօ — Ոզմեցի. 22–23 տարեկան. գրել կարդալ չգիտէ. ամուսնացած է։

17.— Ասպօ — Կաւաշցի. 19–20 տարեկան. փախստական եղած Նարեկի դէպքի առթիւ. կորիճ զինուոր է. գրել կարդալ չգիտէ։

18.— Մելօ — Դաշտից. եղած կամաւոր Բարձրում. 21–22 տարեկան, գրել կարդալ չգիտէ։

19.— Աւօ — Կառկառցի. 23–24 տարեկան. համեստ տղայ է. գրել կարդալ չգիտէ։

20.— Գէորգ — Կառկառցի. 25–26 տարեկան. 2 տարուայ զինուոր. գրել կարդալ չգիտէ։

21.— Ղազար — Կարճկանցի. 25–26 տարեկան. մի տարուայ զինուոր է. կարդալ գիտէ։

22.— Սամուէլ — Սպարկերտցի. 23–24 տարեկան. կորիճ, մի տարուայ զինուոր. անդրագէտ։

23.— Թաչուն — Մոկացի. 20–21 տարեկան. 2 տարուայ զինուոր. գրագէտ։

Զինուորների համար կազմուած է ներքին կանոնագիր, որով զեկավարւում են իրանք։ Այդ կանոնագիրը կազմուած է 1904 թուականին, Շամի ընկերների հետ միասին։

ենթակոմիտէներ — Ամէն մի գաւառ իւր ներքին կազմակերպական գործերը կառավարելու եւ կազմակերպականի վերան հսկելու համար կազմուած են ենթակոմիտէներ, որոնք կառավարում են յատուկ իրանց համար կազմուած ենթակոմիտէական կանոնագրով. ենթակոմիտէի ընտրութիւնը կատարում է Կ. Կոմիտէն, շրջանի խելահաս ու կառավարելու ընդունակ անհատներից, զանազան գիւղերից։ Լեռնապարի շրջանում գոյութիւն ունի 7 ենթակոմիտէութիւն։

1) Ազատ Դաշտ (12. 9. 7. 9. 33)(3) բաղկացած երեք տեղական թարմ ոյժերից, եւ երկու խորհրդա-

կան անդամներից, որոնք գաւառի հասուն եւ գործող անձինք են:

1.— Վրոյր — *ուսուցիչ. իւր կրթութիւնը ստացած Ս. Հեղինէի դպրանոցում. բնիկ Աղատ Դաշտից. այժմ ուսուցիչ նոյն գաւառի Կարմիր գիւղում (6·9·2·4·12). տարիքը 25ի է հասնում. ամուրի, ընդունակ կազմակերպական գործերում եւ գաւառի մէջ ունի հեղինակութիւն: ենթակոմիտէի քարտուղար է, շրջիկ:*

2.— Սուրէն — *արշաւանքին յինամալտ. նրանից յետոյ Փոխիկի 98 թուականի խմբին հետ մտած Երկիր. դրել կարդալ բաւականաչափ գիտէ, ունեւոր է, ունի մեծ գիրք հասարակութեան մէջ: Շնորհիւ իւր վերին աստիճանի խորամանկ բնաւորութեան, կարողանում է չահել ժողովրդի համակրութիւնը եւ կարողանում է իւր գիրքը նպաստաւոր կայացնել գործին. 29–31 տարեկան. ամուսնացած է:*

3.— Արծուիկ — *դարձեալ գաւառի ունեւորներից է եւ մեծ գիրք ու հեղինակութիւն ունի հասարակութեան մէջ. նաւտիար է եւ իւր տրամադրութեան են ենթարկւում բոլոր շրջանի նաւերը: Գրել կարդալ գիտէ. 35 տարեկան, ամուսնացած է. տնտեսականը ապահով եւ կարող է:*

4.— Արտոյտ — (20·9·6·11·21·14–15·9·2·20·9·3·4·4·13) *խորհրդական անդամ. ուսում առած Արմաշ դպրեվանքում. ունի կարողութիւն եւ պրոպագանդի գործերում եւ գործադրում է որպէս ենթակոմիտէի շրջիկ–պրոպագանդիստ:*

5.— Ֆարհատ — *գաւառի ամենաականաւորն է եւ միայն դեր է խաղում դատական խնդիրների մէջ եւ յաջողում է, շնորհիւ իւր հեղինակութեան. սկիզբները վաշխառու. այժմ շնորհիւ իւր պաշտօնին, թողած է:*

Ենթակոմիտէն ունենում է երկու շաբաթը մի անդամ ժողով. ունի իւր ներքին արձանագրութեան տոմարը ու արձանագրում են բոլոր ժողովների որոշումները եւ գործադիր մարմիններին գրած նամակները ու ստացածների համառօտ բովանդակութիւնները: Այս ենթակոմիտէն ունի իւր գանձարան, ուր կեդրոնանում է բոլոր կամաւոր նուէրները, տուգանքներ եւ խմբերի ամսականները. գուտ ենթակոմիտէական զէնքի համար ունի մի կլորիկ գումար. մինչեւ գարուն կը հասնի 150–200 լիրա. որով կ'առնէ զէնք ու ռազմամթերք իւր անմիջական տրամադրութեան տակ առնելու համար:

Խմբեր — *շրջանի մէջ անմիջական նրա տրամադրութեան տակ գտնւում են* Զաբուդոնի, Բիւզանդի, Կարմրի, Դեղին, Հեղեղատ, Զայնահեղ, Տարոս, Սամուսարի, Լեռնամար *ու* Լեռնափոր *գիւղերի խմբերը*(*):

Խմբերը գիւղական համայնական են, որտեղ մասնակցում են ամբողջ գիւղացիք. այդ խմբերը հասարակ նուիրատու խմբեր են, իսկ դրանց կից կայ տասներկու կամաւորների խմբեր, որոնք կազմուած են 21–30 տարեկան երիտասարդներից եւ միշտ տրամադրելի՝ յեղափոխական գործին:

Շրջանի բոլոր կամաւորները զինավարժ են եւ նրանց տրամադրութեան տակն է գտնւում գիւղական զէնքերը: Սրանց թիւը հասնում է 200ի: Զինավարժութեան մասնաւոր կերպով ծանօթ են գիւղական բոլոր խմբի անդամները: Տարեկան զէնքի դրամ խմբերից հաւաքւում է 300–400 լիրա, մէջ չհաշուելով կամաւորների տուրքերը, որոնք յատկացւում են ռազմամթերքի: Շրջանի բոլոր նաւերը, թուով 18, ենթարկւում են ենթակոմիտէի անմիջական տրամադրութեան եւ գործադրում են հերթով, յեղափոխական նպատակների համար: Այս ենթակոմիտէն մի տարի է որ ամբողջապէս վերացրել է քիւրտ աղաների տարեկան նուէրների սովորութիւնը. այիդ, նոյն եւ զուբարայ (ձրի՛ աշխատել) տալ. գիւղերում սկզբներում գոյութիւն ունեցող քիւրդ նոքադարները վերացուած եւ ներքին բոլոր դատերը չեն թոյլատրւում կառավարչական տներին անցնելու: Կամաւոր խմբերը գաւառած են գիւղական խմբերից եւ ունին իրանց զինուորական տասնապետները, որը ղեկավարում է նրանց համար յատուկ կազմուած կանոնագրի համաձայն եւ իւր յարաբերութիւնը տասնապետի միջոցով պահպանւում է ենթակոմիտէի հետ: Ամէն անդամ նրանց խմբերից մէկը ընկերակցում է իրա տասնապետով, շրջանում պրտրտող յեղափոխական խմբակների հետ, մօտից ծանօթանալու զինուորական կանոնների եւ կեանքին եւ աւելի լաւ վարժուելու զէնքի գործածութեան: Նրանք են կատարում եւ սուրհանդակութիւն գիւղից գիւղ կամ մի գաւառից միւսը. կառավարւում են զուտ զինուորական օրէնքներով: Խումբը ունենում է իւր գանձապահը եւ տասնապետի օգնականը:

2.— Լեռնադաշտի ենթակոմիտէն — *այս ենթակոմիտէն իւր տրամադրութեան տակ 17 գիւղական խմբակներ ունի, որոնք են.—* Բերսաւ, Լեռնտակի, Սարայ, Բերդակ, Դատարանի, Դաշտի(?), Կայլակ(?), Փշոտ, Պուրակ, Առնձնակ, Կոզի, Դայլակ, Գետափ, Գետաբերան, Մայրեր: *Ենթակոմիտէն ընտրուած է գաւառի ամենախելացի եւ լուրջ մարդկանցից, [որոնք] որոշ չափով ցոյց են տուած յեղափոխական գործի մէջ եռանդ եւ յեղափոխական ոգի:*

Կազմը բաղկանում է 3 հոգուց.

1.— Գարթեւ — *Բերդակ գիւղացի. ունի որոշ չափով կրթութիւն, որ առած է Աղթամարայ մէջ. տարիքը հասնում է 33ի շուրջ եւ գործունեայ է. ընդունակ ղեկավարելու եւ նրա վերայ է ծանրանում շրջանի բոլոր ներքին գործերը: Նա միեւնոյն ժամանակ ենթակոմիտէի շրջիկ քարտուղէն է եւ թղթակցութիւն պահողը:*

2.— Վաղարշ — *Գաւառի ամենանշանաւոր անձն է բարոյական մեծ հեղինակութիւն ունի գաւառի թէ՛ հայ եւ թէ մասամբ քիւրդ ժողովրդեան վերայ. նա աւելի օգնում է ենթակոմիտէին իւր խորհուրդներով եւ ազդեցութեամբ:*

3.— Նիկոլ — *երիտասարդ, 30 տարեկան. ունի մասնաւոր կրթութիւն. ունի իւր կառավարելու եւ տրամադրութեանը յանձնուած տեղեր, որտեղի յեղափոխական գործերի վերայ հսկում է ու կանոնաւորում: Իր տրամադրութեան տակ ունի միայն 5 կամաւորների խմբեր, որոնց դժբախտաբար անկարող ենք եղած զինավարժութեան եւ զէնքի հետ ծանօթացնելու:*

Շրջանը ունի չնչին թուով ռազմական ոյժ, այդ էլ հետեւանք այն երեւոյթին, որ մենք անկարող ենք եղած նրանց հասցնել իրա ժամանակին դրամի դիմաց զէնք. բայց նկատելի է արտաքոյ կարգի չարժում դէպի զինուորումը եւ դրա փաստ կարող է ծառայել այն որ չնայած նրան ծայրայեղ տնտեսապէս քայքայուած դրութեան, անօթութեան, չեն զլանալ տարեկան որոշ եւ համեմատաբար մեծ գումար յատկացնել զէնքի դրամի: Շրջանում համարեա կազմակերպուած են բոլոր հայ գիւղերը. չնչին բացառութեամբ միայն հայքրդախառն գիւղերը, որտեղ հնարաւոր չէ մտնել, եւ մտնել կը նշանակէ լուրջ կերպով վտանգել գիւղացու տնտեսական շահերը անդամ, որովհետեւ մեծամասնութիւնը քիւրդ է, բայց չնորհիւ այն պարագային որ յեղափոխութիւնը ընդունել է լայն ծաւալ եւ դարձել է համարեա հանրական, նրանք չեն զլացել իրանց օժանդակութիւնը, չնայելով չեն վարժեցուած կազմակերպութեան:

3.— Զորագեղ ենթակոմիտէ — *այս շրջանը վերին աստիճանի յեղափոխական գոյն ունի, չնորհիւ այն միջոցներին, որոնցով միշտ կարողացել է տալ նորան շատ ժամանակ նրանց մէջը լինելով եւ միշտ սերտ յարաբերութիւն ունենալով նրանց հետ: Շրջանը թէպէտ ունի ենթակոմիտէական կազմ, բայց որովհետեւ յեղափոխական գործիչները եւ խմբերը միշտ համարեա գտնւում են այնտեղ, նրանց բոլոր գործերը վարում են իրանք խմբերը կամ գործողները: 21 գիւղերը բոլորը ե՛ւ կազմակերպուած ե՛ւ առանձնապէս ամէն մի տեղ ունի իրա խմբական կամաւորները, որոնք մասնաւոր կերպով ծանօթ են զէնքի գործածութեան: Տնտեսական խորին քայքայման պատճառով նրանք շատ քիչ հնարաւորութիւն են ունենում զէնքի դրամ հայթայթել, բայց իրա հերթին որոշ չափով դարձեալ առաջ է գնում զէնքի գնման գործը, թէպէտ ոչ այնքան ուժեղ կերպով, ինչպէս ուրիշ վայրերը: Գիւղերը բաժանուած են առանձին գիւղախմբերի, որոնց վերան հսկում են ենթակոմիտէի անդամները անջատ անջատ: Գաւառական ենթակոմիտէի մէջ նշանաւոր է միայն Վաչիկ անուն երիտասարդը, որը իւր վերայ է վերցրել համարեա այստեղի յեղափոխական գործերի ամբողջ ծանրութիւնը: Այս գաւառը՝ տեղս յեղափոխութեան հիմքը դնելուց մինչեւ հիմա ծանր զոհողութիւններ չատ կրելով հանդերձ մեծամեծ ծառայութիւն է մատուցել յեղափոխական գործին թէ՛ նիւթական եւ թէ բարոյական աջակցութեամբ:*

4.— Գազաթ ենթակոմիտէ — *Այս շրջանակը, որ բաղկացած է 60 հատ հայկական գիւղերից, որից կանոնաւոր կազմակերպուած են 35–37 գիւղեր, մնացածները իրանց փոքրութեան պատճառով միացած են կազմակերպուած մեծ գիւղերի հետ. կան եւ որոնք կտրուած լինելով հայկական բնակչութիւնից մնացած են առանց կազմակերպութեան եւ անհնար են եղած վտանգի կազմակերպել: Այս շրջանը չնորհիւ այն պարագային որը մշտապէս համարեա լի հաւատքով կապուած է եղած իրանց քիւրդ աղաների հետ եւ ընկած բարոյական վիճակի պատճառով անհնար եղած է ուրիշ տեղերի կազմակերպական բարձրութեան հասնել, եւ ամէն բան համարեա յաջողութիւն է գտել մասնաւոր ոյժերի եւ զանազան խնդիրների մէջ եւ տեղը եկած ժամանակ զիջումներով: Այս շրջանը ունի բաւականաչափ զէնքի ոյժ եւ մեծ թուով հին ձեւի հրացաններ, որոնք վերջին տարիներում ձեռք են բերուած քրդերից թանգ գներով, այն նպատակով որ զէնքից զրկեն նրանց: Այս ենթակոմիտէութեան մէջ յեղափոխականութիւնը լայն մտքով արմատ չէ ձգած: Այստեղ հազիւ հնար է եղած միայն երիտասարդութիւնը պատրաստել եւ համարեա ներկայիս յեղափոխական գործը միայն նրանց մէջ է ամփոփուած ընդհանրապէս: Ենթակոմիտէն բաղկացած է 3 անդամներից, որոնք հին զինուոր եւ գործիչներ են անցեալներից մընացած: Կամաւոր այստեղ համարեա չկան եւ եղածները շատ չնչին՝ 50–60 հոգի:*

5.— Լեռնակիլնի ենթակոմիտէ — *Այս շրջանը բաղկացած է կազմակերպական 8 գիւղերից, որոնք տարածուած են միեւնոյն բլրակի շուրջը իրարուց շատ չնչին հեռաւորութեամբ. գիւղերը բոլորն էլ կազմակերպուած են և ունին միայն իրանց գիւղական խմբերը. մշտական յեղափոխական խմբերի հետ չփման պատճառով յեղափոխական դաղափարը բաւական ժողովրդականացած է, մանաւանդ չնորհիւ այն պարագային, որ միշտ ենթակայ են անլուր հալածանքների եւ հարստահարութեան՝ քրդութեամբ շրջապատուած լինելով Բոդանի եւ Խիզանի կողմից եւ լինելով կեղեքիչ Բիթլիսի վիլայէթ[ի մաս]:*

(*) Վոսքոր, Բերդակ, Ջորբ, Ծովափ, Ծաղկաստանի, Բարձրաբերդի, Ջրհորի:

6.— Անտառ — այս շրջանը բաղկացած է 15 կտոր գիւղերից, որոնք բոլորն էլ կազմակերպուած են: Դպրոցական գործը այստեղ մշտապէս զարգացած լինելով՝ յեղափոխական գործը բաւական զարգացած է: Ենթակոմիտէն բաղկացած է 3 անդամներից, որոնք գաւառական ուսուցիչներ են: Շրջանում ծայրայեղ աղքատութիւն է տիրում եւ միայն յեղափոխութիւնն է որ կարողացել է պահպանել եւ պահպանում է: Դեռևս չկազմակերպուած կամաւորների խմբեր զէնք ձեռք են բերում:

7.— Անառիկ — շրջանը բաղկացած է 45 գիւղերից, որոնց մեծամասնութիւնը կազմակերպուած է: Այս շրջանը բոլորից հարուստն է մեր շրջանի մէջ. դրա համար բաւական կանոնաւոր կարող ենք լինում գինել: Ժողովուրդը ընդհանրապէս լաւ է տրամադրուած դէպի գործը, միայն կենդրոնում՝ որտեղ շրջապատուած են զօրքերով, անհնար է լինում կանոնաւոր կազմակերպութիւն ունենալ: Ենթակոմիտէն բաղկացած է 3 թոյլ եւ համարեա անկարող անդամներից: Այստեղ կայ միայն 30 հատ նուիրատու խմբակները, իսկ կամաւորներ չատ չնչին՝ 5–6 խումբ: Սրա հարեւանութեամբ եւ Լճակ շրջանը՝ բաղկացած չորս գիւղերից, որը ենթարկւում է նրանց եւ ղեկավարւում նրանցից. այս գիւղերը կազմակերպուած են, թէ՛ դրամական եւ թէ կամաւորների խմբեր ունեն:

Յեղափոխութեան բարոյական ազդեցութիւնը.— յեղափոխութեան մուտքից յետոյ ժողովրդեան կեանքի մէջ մուտք են գործել որոշ դրական հակումներ եւ գործեր: Ժողովուրդը, այդ շրջանում, համարեա մշտական կապուած է եղած այլանդակ սովորութիւնների հետ, չնորհիւ նրան, որ երբեք կանոնաւոր յեղափոխական գործ չի ներմուծուել նրա մէջ եւ, ժամանակի ընթացքում, ոչ միայն կրճատուել են այդ յոռի և այլանդակ սովորութիւնները, այլ ընդհակառակը, աւելի զարգացել են եւ խոր արմատներ են ձգել նրա մէջ: Մեռած բարոյականութեամբ, ինկած զգացմունքով եւ անասնական ու մեքենայական անտարբերութեամբ էր ընթանում նրա կեանքը եւ դէպի պատահարն ու տիրող երեւոյթները նա դիտում էր սովորական աչքով: Պատուի զգացման, արժանապատիւ գիտակցութեան մասին խօսք անգամ չէր կարող լինել. ամէն ինչ կապուած էր միայն ապրելու հանելուկին, եւ ամէն բան աչքաթող արուած՝ սոսկ ապրելու խնդիրն էր տիրապետում, թէկուզ դա կապուած լինէր մի չարք անպատիւ եւ անամօթ երեւոյթների հետ. ապրելու խնդիրը դրուած էր ասպարէզ և բոլոր միւս բարոյական սկզբունքները ոչնչանում էին նրա առաջ: Կամաց կամաց վերանում էր ընտանեկան բարքային մաքրութիւնը, ամէն բան դառնում էր ստրկային եւ նոյնիսկ ստոր ճորտային այլանդակ հասկացողութեան եւ ստրկային փիլիսոփայութեան: Տիրող ռեժիմի հետ հաշտ, նրա բոլոր կապրիչների եւ նոյնպէս քրդական բարբարոս քմահաճոյքներին հլու, դիմում էին դէպի բարոյական կորստեան, այլասերման: Իսկական անասնական կենցաղ եւ լուռ հանդիսատես դէպի ամէնը:

Ահա այսպիսի պարագաներում մուտ գործեց յեղափոխութիւնը՝ նիւթականի հետ եւ բարոյապէս կողոպտուած ժողովրդեան մէջ. որքան էլ անգոյն եւ ինկած լինէր հասարակական կեանքը, որքան բթացած լինէին նրա բնազդները, [նա] ունէր միշտ դէպի վեր բարձր դիմող հակումներ, և բացի դրանից՝ մշտական բռնութիւնները և դաժան լկանքների մէջ յոգնած ժողովուրդը սպասում էր մի բարեկամական ձեռքի եւ մի իւր ցաւերով յուզուող սրտի. ահա ինչի պիտի վերապրել այս շրջանի տարօրինակ յաղողութիւնը յեղափոխական գործի:

Բարոյապէս վաղուց մեռած ժողովուրդը ստրկային բնազդների մօտ կարծես անկարող արտայայտելու իւր ներքին զգացումները ու ձգտումները, սպասում էր մի բանի, մի խօսքի, համապատասխան իւր ներքինի եւ նոյնիսկ արտաքին ֆիզիքական աշխարհի. ստրակային յոգնածութիւնը արտաքոյ կարգի յուսահատութիւնը համարեա հասած ինքնամոռաց մեքենայութեան, համարեա դադրած նիւթական գոյութիւնից, ընկճուած ու մեռած. ահա այդ դառն ներքին եւ արտաքին աշխարհն է, որ կարողացաւ վերածնութեան գործը այդպէս արտաքոյ կարգի արագութեամբ կապել նրան եւ մի նոր յոյս վերածնեց: Մեռած զգացում, նոր կեանքի ձայնը կարողացաւ զարթեցնել ինքնամոռաց իրական դրութիւնից: Մինչեւ այդ իւր ներքին պատիւն ու զգացումները աճուրդի հանուած՝ հայ բնակչութեան բոլորովին մոռացուած ազգայնական զգացումները, իրար հարստահարող ժողովուրդը կարելի եղաւ որոշ չափով մաքրել ու որոշ գոյն տալ նրանց: Բացի դրսի ճնշումներից և լկանքներից նա ճընշւում եւ լկւում էր իւր ներքին կեանքից. խոշոր բռնութիւնները ստեղծում են և՛ մանր բռնապետներ. առհասարակ բռնադատուած մարդը ինքն էլ տրամադրւում է բռնադատել. եւ այսպէս արտաքին բռնապետական երեւոյթները մուտք են գործել և՛ նրա ներքին կեանքում, հայ ունեւորը նոյնքան ախորժակով է կողոպտում հայ չքաւորին, ինչպէս կառավարութիւնը կամ քիւրդ աղան: Կարողը միշտ տէր է: Բայց յեղափոխութեան մուտքը սահմաններ դնեց այդ բոլորի համար, մոցրեց բողոքի իրականութիւնը, ծագեցրեց նրա մէջ որոշ զգացմունք դէպի հայը հային ու ընդհակառակը՝ այլոց: Ինքնագիտակցութիւնը որոշ չափով մուտք գործեց. առաջ եկաւ կորսուած մեռած պատուի խնդիրը եւ հնար եղածին չափ կարելի եղաւ բարձրացնել նրա ինկած բարոյական աշխարհը: Հայրենասիրութեան զգացումները մուտք գործեցին եւ գործնականապէս սկսուեց ժողովրդի մէջ բնական կռիւ՝ դէպի այն ամէն ինչ [որ] այլանդակ էր կամ լաւ չէր: Քիւրդ կամ Թիւրք զաֆիա կորցրին իրանց ներքին իրաւունք հայի ընտանեկան կեանքի մէջ եւ մի որոշ գիծ դնուեց սրանց եւ իրանց ռայա–ճորտերի մէջ: Դէպի կրթութիւն եւ լուսաւորութիւն, նոյնպէս և [դէպի] ազատութիւն ծնունդ առած զգացումները [մոռցնել տուին] հակումները դէպի վատ անճոռնին:

Նիւթական ազդեցութիւն.— Յեղափոխականութեան մուտքը որոշ չափով ազդել է և՛ նրա նիւթական կեանքին վերայ: Հարկերից, ամէն կողմից շրջապատուած ժողովուրդը կառավարական ապօրինի (օրինաւոր հաշուած) հարկերից դուրս նոյն քանակով համարեա կաշառք եւ նուէրներ էր տալիս պաշտօնեաներին՝ որքան ուզիլ հարկ: Բացի դրանից կրկնապատիկ քանակով նա պարտաւորւում էր վճարել քիւրդ աղային կա՛մ բռնի տուրք կամ թէ հնից մնացած սովորութեան նուէր իրա հերթին, որովհետեւ այդ հարկերը կամ տուրքերը ապահովում էին նրանց՝ զանազան ոտնձգութիւններից և հարստահարութիւններից: Այդ կողմնակի հարկերը լրացնում էր իրա հերթին թալանը եւ բռնի առեւանգումները: Դրանք յեղափոխութեան մուտքից յետոյ բոլորը որոշ չափով զիջել [են] եւ համարեա վերջանալու չափ կրճատուած. յեղափոխականի սարսափը վերջ տուեց թալանին ու կողոպուտներին, իսկ ժողովրդական ինքնագիտակցութեան հետեւանքը եղաւ միացեալ ոյժերով կռուել այդ աղայական անողոք պարտքերի դէմ: Նոյնպէս կրճատուեցան զանազան նուէրները եւ վերականգնուեց որոշ չափով արտաքին ապահովութիւնը: Յեղափոխութեան սարսափի ազդեցութեան տակ մեղմացան քրդական զանազան միտումներով արած սպառնալիքները եւ այդ միտումների իրագործման համար կատարուող սպանութիւնները:

Բոլոր դիւղացիք, որոնք վաղուց սովորութիւն ունէին զանազան անտեղի եւ ապօրինի տուրքեր ու նուէրներ անել աղային, իրա թայֆայական շահերի համար, յեղափոխութեան ազդեցութեան տակ դադրեցրին ձրի ծառայութիւնները, որոնք նախնական սովորութեամբ պարտական էին կատարելու իրանց հարեւան քիւրդ աղաներին եւ բէկերին, զուբարան դադրեց եւ ամառը աշխատանքի ժամանակ այդ ծանր զրկանքները կրելու էլ ոչ մի առիթ չունեցաւ հայ գիւղացին: Այդ–դին–բայրամին տրուելիքը, որ մշտական անխախտ սովորութիւն էր՝ վերջացաւ: Էլ աղաները չստացան իրանց այդ ահագին եկամուտները, այլ մնաց ժողովուրդի գրպանը:

Սովորութիւն կար այս շրջաններում՝ սկիզբները քիւրդ բէկերը եւ աղաները բռնութեամբ եւ չափազանց վարձով իրանց մարդկանց նշանակում էին որպէս պահապան հայ գիւղերում, որոնք եւ ժամանակի ընթացքում տիրապետում էին բռնի կամ սալաֆով գիւղական արտերը, ինչպէս նաեւ հովութեան միջոցով կատարւում էր այդ, բայց յեղափոխութեան մուտքից յետոյ վերջացան այդ ամէնը: Որովհետեւ, ժողովրդի մէջ ծագած լինելով որոշ չափով ինքնագիտակցութիւն, միացեալ ոյժերով սկսեցին կռուել այս շարիքի դէմ եւ յաջողեցան:

Ինչպէս նաեւ նիւթապէս եւ բարոյապէս շահեցան՝ գիւղական զանազան մանր ու չափաւոր դատերի վերաբերմամբ կառավարութեան կաշառակերութեան չդնալ եւ չենթարկուել: Դատավարութիւնը մի տեսակ կաշառատուութեան մրցում է Տաճկաստանում եւ արդարութիւն միայն վաստակում է նա՝ ո՛վ աւելի չափով է դրամական քարափուլ լցնում պաշտօնեաներին: Բացի դրանից դոյութիւն ունէր մի այլ դատարան՝ քիւրդ բէկերի եւ աղաների, որոնք ծանր տուգանքներով ծանրաբեռնում էին նրանց՝ որոնք չէին կարողանում առատ կաշառք չնորհել նրանց: Յեղափոխական մանր մարմինները յանձն առնելով այդ խնդիրները ըստ ամենայնի արդարութեամբ որոշել, միայն արդարութիւնը երեւան հանեցին, ճնշուած մասային հետ սերտ յարաբերութեան մէջ մտան եւ յեղափոխական գործը աւելի արմատը խորացրեց ժողովրդեան մէջ: Բայց նոյն չափով եւ նրանից զուցէ աւելի դերագոյն չափով հայ ռէսների եւ վաչխառուների արարքները սահմանափակուեցան, չնորհիւ թէ՛ ձեռք առած պատժական եւ թէ նոյնիսկ բարոյական միջոցների: Ահա այդպիսի միջոցներով նպաստաւոր է եղած ժողովրդական յեղափոխութիւն ստեղծել: Մընացեալը՝ բարդաւաճման խնդիրը, կը թողնեն ապագային:

Ժողովրդական վերաբերմունքը: Մի բան, որի վերաբերմամբ կարող ենք վստահ եւ խղճի հանգստութեամբ չեշտել, դա այն վերաբերմունքն է, որ այս շրջանի ժողովուրդը տածում է դէպի յեղափոխութիւնը. դրա մասին մենք որոշ չափով չեշտեցինք սկզբում: Մի չարք տնտեսական եւ քաղաքական արտադրած չարիքները՝ տիրող ռեժիմի եւ շրջապատող կեանքի, միանգամայն կապեցին նրան յեղափոխական գործին. եւ մինչեւ ներկայիս ցոյց տուած վերաբերմունքը եւ տեղի ունեցող երեւոյթները եկել են հաստատելու, որ նա ո՛չ խաբուած է յեղափոխութեան փարթամ խոստումներով եւ էլ աւելի՝ ոչ մի նիւթական ակնկալութիւն է տածում դէպ նրան: Մեր մըշտական աշխատանքը եղել է ցոյց տալ նրանց, որ յեղափոխութիւնն է մի առանձին յոյս. չի՛ կարելի ամէն բան յոյս դնել նրա վերայ, որ այդ ինքը՝ ժողովուրդն է [որ] պիտի իւր գործով ու վերաբերմունքով յեղափոխուի, գործ ստեղծի. սկզբներում ամբոխը կարծում էր որ այդ անուան տակ գործող կազմակեր-

պուԹիւնը պիտի զէնք ու բոլոր յեղափոխական պարագայքը հողայ իրա համար, բայց հնար եղաւ այդ բոլոր ակնկալիքները ընջել եւ դրան փաստ կարող է ծառայել այն զոհողուԹիւնները, որ նա անում է յեղափոխական գործին համար։ Ամբողջ երկու տարի չբրջանում եղած 30–40 զինուորների ուտեստը հայԹայԹում է նա եւ շատ չնչին բացառուԹեամբ յեղափոխականները ծախսեր են յանձն առնում։ Եւ այն պարագային միայն, որ այդ բանից զուրկ է գիւղացին։ Ժողովուրդը իւր ունեցած հացից այնքան է բաժին հանում մեզ եւ հանել է, որ մենք առանց մի գրօշ ծախսելու ապրել ենք եւ կ'ապրենք։ Նոյնպէս եւ մսեղէն՝ որքան նրա ոյժերը ներում են։ Մի այլ փաստ, որ նա այս ծայրայեղ տնտեսական տագնապի մէջ ամենայն զոհողուԹիւն յանձն է առնում զէնքի համար։ Ճիշդ է մենք կրճատեցինք նրա ելքերի որոշ քանակը, բայց յայտնի պիտի լինի եւ այն՝ ԹէՀ նա որքան է տուժում միայն յեղափոխական խմբերի փոխադրուԹեան եւ տեղերից եկած սուրհանդակներին միջոցներ հայԹայԹելով։ մէկը գոցում է համարեա միւսին։ իսկ զէնքի դրամը նա տալիս է իւր ընտանիքի բերանից կտրելով և իւր կանանց եւ աղջիկների զարդերը կրճատելով։ Այժրմ նա համոզուած է, որ ոչ մի յոյս չի կարելի դնել այն բանին, որ յեղափոխուԹիւնը նրա բոլոր միջոցները պիտի տայ։ այլ միայն նա պիտի լինի իրան ղեկավարող եւ գործին զօր տուողը։ Հենց այդ է պատճառը, որ չնայած ԹշուառուԹեան և սիստեմատիկ սովին, նա միշտ էլ իւր ռազմականի հայԹայԹման մէջ է։ Ձեզ համար շատ դժուար է ի հարկէ մտնել այդ դրուԹեան մէջ, ինչպիսին տեղիս ժողովրդինն է, եւ երեւակայել այն ԹշուառուԹեան չափ ու սահմանը, որով տառապում է տեղիս ժողովուրդը։ Այդ մենք լաւ ըմբռնելով այսքանը միայն կարող ենք ասել, որ այս Թշուառ հանգամանքների մէջ այսքանը մեզ համար մի անլուծելի առեղծուած է եւ մնում է անբացատրելի։ Ամէն կողմից Թալան, հարկ, կողոպուտ եւ դարձեալ ապրում է դեռ, աւելի մեծաքանակ գումարներ զէնքի յատկացնում։ Եւ իրաւ վերին աստիճանի զարմանալի։ աշնան հաց չկայ, գարնան չկայ, բայց նա ապրում է զոհացում տալով ե՛ւ այն ծանր հսկայական պահանջներին, որ ամէն կողմից տեղում է նրա վրայ։ Այդ բոլորից յետոյ դարձեալ չտեսնուած զոհողուԹիւն իւր ֆիդայի աղբերց համար, ազգին համար։

Ահա այս բանն է մի առանձին վստահուԹիւն ներշընչում մեզ։ եւ ամէն կողմից ճախորդ ու հիասԹափ պարագաներում նա՛ է դարձեալ մի գերադոյն ոյժով լցնում մեզ՝ մինչեւ անձնազոհուԹեան աստիճանը։ Գուցէ եԹէ այն մխիԹարանք ու աջակցուԹիւն ինչ ստանում ենք տեղիցս, նրա կիսու չափը անգամ դրսից ստանայինք, այն ժամանակ ինչե՞ր ասէք չէր կարելի դարձնել։ Բայց, դառն է խոստովանել, նրա մի հարիւրերորդն անգամ չենք ստանում։ ահա՛ մեր գործի ամենավիրաւոր, ամենաԹշուառ կողմը։ Այն հաւատքը, ինչ գտնւում է ժողովրդի մէջ, չունինք մենք ինքնե՛րս, ո՛ւր մնաց դրսի տեսականով, դափ ու զուռնայով եւ մաղր հայրենասիրական ցոյցերով ոգեւորուող, հրճուող ընկերները։ Սա մի դժբախտ ճշմարտուԹիւն է։ Մենք ոչինչ չէինք ուզեր դրսից, եԹէ մեր պահանջներին՝ որոնց բաւարարուԹիւն է տալիս այս կիսամեռ, կիսակենդան ժողովուրդը, նոյն չափով բաւարարուԹիւն տաք եւ դուք։ կարելի է որոշ վստահուԹեամբ եւ անհուն հաւատքով գործ սկսել։ բայց վա՛յ մեզ։ Մեզ համար մի բան հասկանալի չէ, ԹէՀ ինչո՞ւ դրսի ընկերները մեր ամենատարրական ընկերական պահանջներին բաւարարուԹիւն չեն տալիս, որը եւ առաջացնում է մեծ խորխորատ դրսի եւ ներսի մէջ։ մի բան, կամ մի պահանջ, որ չէ խլում նրանից մի զոհողուԹիւն։ այլեւս ի՞նչ սրտով կարող ենք մենք աւելի լայն պահանջներ դնել, երբ ամենահասարակ եւ ամենաչնչին պահանջն անդամ մնում է անկատար։ Լաւ չէ՞ր լինի, որ դրսի ընկերները որոշ չափով հաւատք ստեղծէին Երկրի ընկերների եւ նրանք փոխադարձաբար։ այլապէս էլ ի՛նչ կազմակերպուԹիւն, երբ ամէն բան կղզիացած է։ ամէն բան մարմինների եւ դեռ էլ աւելին՝ անհատների մէջ։ Մենք ոչ միայն չենք կապուած դրսի հետ, այլեւ Տաճկահայ Դատի շուրջը աշխատող եւ նրա հետ անմիջապէս կապ ունեցող մարմինների հետ։ դրան փաստ կարող է ծառայել ե՛ւ Վիշապը(4)։ այն բոպէին երբ կարող էր մեր գործի մէջ Տաճկահայաստանում մի կատաստրոֆ տեղի ունենալ, դրսից եւ ամէն կողմից լսւում էր յուզուած աղաղակներ «առանց շարժումների, կրճատեցէք զինուորների Թիւը», եւ յետոյ այն տեսակ մի ցոյց, որ ամէն տեղ կարող էր աւերակ սփռել գործի տեսակէտից։ Սա ո՛չ Թւում է քաղաքագիտական եւ ոչ նոյնիսկ տրամաբանական։ Եւ եԹէ յանկարծ մի անակնկալ վիժեցնէր գործը, մեզ պատասխանատուուԹեան կարծեմ պիտի կոչէին, ամէն կողմից սրտցաւ բարբաջանքներ լսուէր։ Է՛հ մեզ Թւում է որ այսպիսով ոչ մի բանի անկարելի պիտի լինի հասնել, այսպիսի անկախ աշխարհային տնաքանդուԹեամբ։

Լաւ չէ՞ր լինի մի որոշ փոփոխուԹիւն անել անցեալի արիւնոտ փորձերից խրատուած։ Ախր մի քիչ պէտք էր հեռատես լինել։ ՍուլԹանը սպանելով հայի չարիքը չի վերջանայ, ո՛չ։ Հայրենիքից հեռու, շատ հեռու մի անկախ վայրում բոմբ գոռացնելով Տաճկահայը կը շահէ՞։

(1) Ալեքսանդրապոլի շրջան։

(2) Բարձրաւանդակի (Սասուն)։

(3) Կրնայ ըլլալ «Կաւաշ»։ ծածկագիրը մեզի ծանօթ չէ։

(4) Գոլոսոյ Հ. Յ. Դ. կազմակերպուԹիւնը, յատկապէս՝ ցուցական մարմինը եւ անոր գործը (Եբլտրզի ռումբը)։

2.— ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԻ — ԼԵՌՆԱՊԱՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ՏԵՂԵԿԱՑՈՅՑ

	Ենթակոմիտէական շրջաններ՝	Քանի՞ գիւղ հայկական	Քանի՞ գիւղ քրտական	Հայ ազգաբնակութիւն	Կազմակերպուած դաշնակցականներ քանի՞ խումբ	Կազմակերպուած դաշնակցականներ քանի՞ անդամ	Դրամական մուտք (գրուշ)
1.	Ադատ դաշտ (Ռշտունիք, Կաւաշ)	20	12	9.000	42	1.092	60.095
2.	Լեռնադաշտ (Կարճկան	48	12	8.740	35	1.101	45.801
3.	Կառկառի	18	6	4.260	26	547	4.360
4.	Գապաթ (Խիզան)	42	20	2.740	20	390	—
5.	Շատախ (Շիդան)	45	20	10.900	54	1.560	189.960
6.	Մոկս	—	—	8.670	46	1.275	45.780
7.	Սպարկերտ	—	—	2.800	22	312	18.020
		173 (2 շրջանի գիւղերի Թիւը յայտնի չէ)	70	47.110	245	6.277	364.016 կամ մօտ 36.400 ռուբլի (*)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.—

(*) Դրամական մուտքի ամենամեծ մասը գոյացած է հանգանակութեամբ. իսկ անդամավճարների մասին որոշ թուական տեղեկութիւններ չկան։

Դրամի ամենամեծ մասը գործադրուած է ինքնապաշտպանութեան համար (զէնքի եւայլն)։

Բ.— ԴՈՒՐԱՆ – ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿ (ՏԱՐՕՆ – ՍԱՍՈՒՆ)

Չորրորդ Ընդհանուր ժողովի թղթածրարներուն մէջ կը գտնենք Դուրան–Բարձրաւանդակի Կեդրոնական Կոմիտէի կամ Պատասխանատու Մարմնի տեղեկագրին երկրորդ մասը միայն, գրուած կարմիր մելանով, մեծ մասամբ ծածկագիր (chiffré), նամակի նորմալ չափի երկերեք թուղթերէ կազմուած տետրակի մը 93 էջերուն վրայ: Ստորագրուած՝ Ռուբէն, Տատրակ (Գեղամ Տէր Կարապետեան) եւ կնքուած բարձրաւանդակի Կ. Կ.ի կնիքով: Կու տանք լրիւ՝ իր հաշուական բաժնով միասին. նաեւ տպագրական պատճէնը տեղեկագրի մէկ էջին, իբրեւ նմոյշ (էջ 58): Ծածկագիրը բացուած է սեւ մելանով, ըստ երեւոյթին՝ անապարանօք (անուշադրութեան կարգ մը սխալներ կան), Ընդհանուր Ժողովի օրերուն: Բանալին «Մայր Արաքսի ափերով»ն է (1=մ, 2=ա, 3=յ, 4=ր, 5=ք եւ այսպէս՝ շարունակաբար): Լեզուն պահած ենք անփոփոխ:

Ապա կու տանք 1906 թ. Սեպտ. 1ի Դուրանի Շրջանային Ժողովի որոշումները, առաջինին մէջ կարուած աւելի փոքր տետրակի մը 12 էջերը գրաւող (կարմիր մելան, ոչ ծածկագիր):

Կը հետեւի վիճակագրական տախտակ մը (Տարօն–Սասունի շրջանի հայութեան տեղաբաշխման պատկերը՝ 1894 եւ 1906 թուականներուն):

Դուրան–Բարձրաւանդակի վերաբերեալ այլ վաւերաթուղթեր չունենալով (Գէորգ Զաւուշի եւ Մշոյ Գեղամի նամակները տուած ըլլալով դիւանական թուղթերու կարգին), բաժինը կը փակենք Ռուբէնի կողմէ Արեւելեան Բիւրոյին ուղղուած մէկ նամակով (2 Սեպտ. 1906 թուակիր), առնուած 4րդ Ընդհանուր Ժողովի թղթածրարներուն մէջ գտնուող Արեւելեան Բիւրոյի թուղթերէն:

Հ. Տ.

1.— ՏԵՂԵԿԱԳԻՐ ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿ-ԴՈՒՐԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ՝ ՀԱՑ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

1 Նոյեմբեր 1906, Դուրան

Տնտեսական նեղ վիճակը որպէս գլխաւոր շարժառիթ զաղթականութեան եւ ժողովրդի յեղափոխական տրամադրութեան բարձրանալուն(*)

Վերեւ յիշածներից կարելի է եզրակացնել թէ հայ տարրը տնտեսական ինչ նեղ պայմաններում է ապրում: Բնական է որ այդ դժոխային պայմանները ապրելու, իւր գոյութիւնը պահպանելու ամենատարրական միջոցներից զուրկ լինելը պէտք էր ժողովուրդի մէջ առանց նոյնիսկ արտաքին դրդման զարգացնէր մի թունոտ ատելութիւն դէպի իւր տզրուկ հարեւանները, որոնք իր արիւն քրտինքով ապրում են հանգիստ ու խաղաղ: Ժողովուրդի ատելութիւնը բուռն է.

(*) Տե՛ս № 1 մասը.— «Հարկեր եւ տնտեսական վիճակը եւ տաճկական, քրտական բռնութիւնները»:

դա ունի իւր հրամայող տնտեսական նեղ վիճակը՝ սովը, որը արտայայտւում է կամ դաղթականութեամբ դէպի օտար եւ աւելի անդորր նահանգներ եւ կամ յեղափոխութեան յարելով մի ելք գտնելու իւր վիճակին:

Դուրան–Բարձրաւանդակի ժողովուրդը յեղափոխական է, եւ յեղափոխական է որովհետեւ սոված է: Շատ սխալ կը լինէր որ միմիայն յեղափոխութեան հիմնաքարը հաշուէինք զանազան դաղափարական ձգտումներ. դա այստեղի զոնէ սոված ժողովրդեան համար մի անմիտ ցնորք կը լինէր եւ դժուար թէ կարելի լինէր մի սոված, հարստահարուած «ֆլահ» դասակարգից [բան] սպասել թագաւորութեան, ազգային զանազան ձգտումների մասին եւայլն. նրա ձգտումը ղլխաւորապէս ուղղուած է ձեռք բերել տնտեսական ազատութիւն, եւ չգիտենք, դժբախտաբար թէ բարեբախտաբար, [որ] այստեղի յեղափոխական կազմակերպութեան հիմնաքարը դասակարգային տնտեսական ազատութեան մի ձգտում է՝ դունաւորուած ազգային ազատութեան փայլուն ներկերով: Այդ պատճառով կարծում ենք, որ այստեղի կազմակերպութիւնը շատ հաստատուն է եւ նրա արմատը ողջ կը մնայ եւ անհնար է արմատախիլ անել, քանի դոյութիւն ունեն այս հարստահարութիւնները, քանի այսպիսի տնտեսական նեղ վիճակի մէջ է ժողովուրդը.— [թէ] կազմակերպութիւնը արհեստական քարոզչութեամբ ժողովուրդին խելացնոր է արած, դա սխալ է, — կազմակերպութիւն առաջ է բերում տաճիկ բռնակալ կառավարութիւնը, իսկ յեղափոխական կազմ. մի միայն արագացնում է սուլթանական կազմակերպութիւնը (?) եւ տալիս նրան ձեւ ու կերպարանք: Առաջին կազմակերպող ուժը սովն ու սուլթանական ռեժիմն են, իսկ երկրորդականները՝ ժողովուրդի թոյնից ծընուած յեղափոխականները: Այդ կէտը պէտք է պարզ լինի. լոկ ազգային անջատման կռիւ չէ, լոկ յեղափոխականների գլխից ծնուած զանազան աւանտիւրիստների ցնորական դործ [չէ], այլ մի ժողովրդական յուսահատ շարժում՝ բխուած սոսկալի բռնութիւնից: Ճիշդ է եւ այն, որ ժողովրդական այդ շարժման զարկ են տալիս կրօնական արհամարհանքը, հայի արհամարհուելը, ազգային կրօնական վիտակցութիւնը, անկախութեան ձգտում, զանազան ցնորքներ եւայլն, բայց այդ բոլորը չաղախւում են տնտեսական բացառիկ նեղ դրութեան հետ եւ կորսւում նրա մէջ: Սխալ չէր լինի ասել, որ հայը, մանաւանդ գիւղացի հայը մի դասակարգ է, բանուորական դասակարգի պէս, որի աշխատանքը լափում են կառավարութիւնը եւ պաշտօնեաները, բէգերն ու աղաները, թիւրք ու քիւրդ ժողովուրդը, միմիայն այն տարբերութեամբ, որ հայ դասակարգի ցաւերը աւելի մեծ են, վէրքերը աւելի խոր: Այդ ֆլահ դասակարգը ունենալով առանձին կրօն, առանձին իրաւունքներ, դրանք եւս միաժամանակ իր արիւնոտ քրտինքի հետ շահագործում, բռնաբարում են: Հայը նախկին հելոտն է. արդէն այստեղի օտար տարրը ըմբռնելով այդ՝ տալիս է ֆլահ (հելոտ) անունը. եւ այդ դժբախտ քսաներորդ դարու հելոտը զգում է իւր դրութիւնը, իր սուրբ իրաւունքների բռնաբարուելը եւ կազմակերպւում է ինքնաբերաբար, յօժարակամ. մի դիտակցական բայց անհաւասար կռիւ է թոյլի եւ ուժեղի, եւ չնայելով հայը երկար ու ձիգ տարիների ընթացքում իւր արիւնոտ կռիւները անհետեւանք են մնացել՝ սրբագործելով իւր իրաւունքների պաշտպանութիւնը կախազաններով, նահատակներով, տնտեսական քայքայումով եւայլն, բայց այդ բոլորը միմիայն կազդուրել, վերակազմել են նրա ռազմական հոգին, նրա գիտակցութիւնը: Ցուսահատութիւն չկայ, անյաջողութիւնները զրդռել, կազմակերպել են թշուառներին: Ակամայ մարդ յիշում է Եղիշէի խօսքերը «եւ պՒՏք օրհասական hզօրագոյնս կռուեն»: Անցեալ օրերը Սպաղանք 12 տուն է մնացել. կառավարութիւնը ստիպում էր հին տուրքեր վճարել. ժողովուրդը բան չունի տալու. ստիպուած է լինում դուրս քշել հարկահաւաքներին մի քանի պլուխ ջարդելով: Այժմս 12 տունը հաշուում է ասէ (ապստամբ):

Գեալիէ Գուզանցիք ահա չորրորդ անդամն է փայտերով յարձակւում են զօրանոցի վրայ եւ դփում 170 զօրքին. զօրքերը վախենում են, կառավարութիւնը զգուշանում լուրջ բարդութիւններից: Ալիանցիք կռիւ ունին բաղկացոց հետ, մարդիկ են զոդանում...:

Դաշտում այտները եւ Թասիլդարները առանց մեր հրահանգին կորցում են եւայլն եւայլն: Շատ երկար կը լինէր այս ցաւոտ ժողովուրդի անկունութեան հերոսական փաստեր բերելը. նա տեսնում է իւր ըմբոստութեան դառն հետեւանքները բայց չարունակում է ու չարունակում, որովհետեւ անհնար է չչարունակելը: Ժողովուրդը զգում է իւր թոյլ լինելը, որոնում է մինին օգնական եւ յանձին յեղափոխ[ութեան] գըտնում այն հաւատարիմ նեցուկը, որին լիովին կարող է վստահանալ. դրանով կարելի է բացատրել այս դըժոխային պայմաններում մեր դոյութեան պահպանուիլը:

Այժմս տեսնենք թէ ժողովուրդը ինչ հայեացք ունի յեղափոխ. կազմակերպութեան վրայ եւ ինչ սպասելիքներ.

Ժողովրդեան աչքում յեղափ[ոխութիւնը] մի պըրիզմայ է որի մէջ կենտրոնանում են իւր ամբողջ ձգտումներն ու եռանդը. յեղափ. արդարութեան (ազելաթի) պաշտպան է, որ իրենց արդար իրաւունքի համար իւր ամէն ինչը, իւր անձը զոհ է բերում յանձինս յեղափոխականների: Տեսնում է նա մի հսկայական ուժ, որ վաղ թէ ուշ պէտք է ձեռք բերէ ժողովուրդի իրաւունքները: 94ի, 904ի անյաջող փորձերը յեղափ[ոխութեան] վարկը չեն զցել, չեն հիասթափեցրել, նա գըտնում է այդ շատ բնական եւ բացատրում, արդարացընում զանազան պատճառաբանութիւններով (թէ ձմեռ էր, մեղքը Ֆլանինն էր, Ֆստանինն էր եւայլն): Ժողովուրդը չափից դուրս հաւատում է յեղափ[ոխութեան]. դրանից է որ կարծես դիտմամբ կուրացնում է իւր աչքերը եւ երեւոյթը միշտ նպաստաւոր բացատրում իրան հաւատի առարկայ յեղափ. կազմակերպութեան: Ճիշդ այն երեւոյթն է, ինչպէս մի կռապաշտ իւր կուռքին է վերագրում ամէն մի լաւ կամ վատ երեւոյթ: Դրանից է որ յեղափոխականները կարողանում են գոյութիւն պահպանել այնպիսի մի շրջանում, որտեղ մօտ 120 գիւղեր կան 1) Սաղ տունում 2) Իշխնձորում 3) Տալորիկում 4) Գեալէ Գուզանում 5) Շէնրկ Սեմալում 6) Տափրկում (այդ բոլորը Սասունում) 7) Առվարինջում 8) Առախում 9) Առաքելոց Վանքում 10) Նորնենում 11) Խաղեղում 12) Սր. Յովհաննու Վանքում 13) Սբ. Կարապետում 14) Կուրաւում 15) Սուլուխում 16) Մուշաղէնում 17) Կառնենում 18) Առինջվանքում 19) Ջրիկում 20) Մուշում եւայլն: Բացի դրանից իւրաքան-

չիւր գիւղում կան 2-6 քիւրդ նորիդիրներ։ 120 գիւղից 60ի մէջ կան բնակիչ քիւրդեր, Թուրքեր, մի կողմն եմ Թողնում կոստինները, զաֆիթիաները, որոնք վիտում են չարունակ։ Ընայելով այդքան ձեռք առնուած միջոցներին, չարունակ Մուշից հասնում է 100-200 զօրք, երբեմն 800, բաժանւում չորս մասի եւ միաժամանակ չորս տեղով խուզարկում։ Խուզարկել կը նշանակէ ժողովուրդի հոգին հանել,— Թալան, սպանութիւն, մարդկանց կոտել, չարչարանք տալ, բանտարկել եւ Մշոյ բանտը լցնել անմեղներով. դա ամէն մի խուզարկութեան պարտաւորեցուցիչ օրէնքն է։ Կատարեալ Զինգիզ խանի արշաւանք։ Բայց մենք ազատ ենք մնում. գողը տնից է, եղն երդիկից կը հանեն։ Ժողովուրդը տուժում է յեղափ. պատճառով. ամէն մի խուզարկութիւն նրա վրայ կը նայի առնուազն 500 ոսկի, Թողած չարչարանքը, մարդկային զոհերը եւայլն։ Բայց նա պաշտպանում է այն դաժան Եհովային իւր ծոցում որի անունն է յեղափոխական (ջան ֆիդայ) եւ որը պէտք է հանէ իրեն Եգիպտոսի անապատներից...

Այդ ժողովուրդը հերոս է. 43 օրուայ մէջ 24 անգամ խուզարկութեան ելան եւ միմիայն մի զինուորի յիմարութիւններից ձերբակալուեց մինը՝ Մոսոն. կաթոլիկ չէ, Իսրայէլի ժողովուրդ է, որին Եհովան պիտի հանէ Եգիպտոսի անապատներից։

Ժողովուրդը պաշտպանում է յեղափ., բայի նրանից որ սպասում է երջանիկ ապագայ, այլեւ որ նրա ձեռն է կենտրոնացած իւր ընտանեկան ցաւերի, հոգեկան պահանջների, ուրախութիւնների միջոցները, նրանից է սպասում ներկայ իւր դրութեան բարելաւումը եւայլն եւայլն. դրա համար նա Թողած ցերեկուայ պաշտօնական կառավարութիւնը դիմում է իւր ցաւերի, ընտանեկան վիշտերի, իրաւացի եւ անիրաւացի պահանջների համար՝ գիշերուայ Թագաւորութեանը (յեղափոխ.)։ Կառավարութիւն չկայ, նրա գոյութիւնը զգացւում է Թասիլդարների ճնշման, խուզարկու զօրքերի բռնութեան մէջ, ուրիշ ոչինչ. ասենք դա մի աշխայ էլ կ'անէր։ Յեղափ. ոչ մի կերպ չի կարող խուսափել այդպիսի գործերից, — «Վերը Աստուած, վարը դուք էք, ալ ո՞ւր կը մնայ մեր հայութիւն՝ Թէ տաճիկին դիմենք»։ Նա դրա համար տուժում է, բայց պարտականութիւն է հաշւում չարունակել իւր ընթացքը։ Մենք ի նկատի առնելով մի շարք վնասներ, ուզեցինք սահմանափակել մեր վարչական գործերին խառնուիլը, հետեւանք չունեցաւ. ժողովուրդը բողոքեց «վերը Աստուած, վարը դուք. էլ նո՞ր պէտք է ճանչնանք կառավարութիւն... սեւ օձը կատաղում է, Թոյն է հաւաքում, Թոյն... Աստուած վերջը բարին անէ»։

Ժողովուրդի պահանջն է, որ մենք իւր «գլուխը լինենք, իսկ իրենք ոտքը», իրեն ղեկավարենք եւ առաջնորդենք [դէպի] երջանիկ ապագան։ Նա պահանջ է զգում կռուելու, եւ կռի՛ւ, սոսկալի՛ կռիւ, Արամազդի եւ Ահրիմանի՛ կռիւ։ Վերջը չգիտենք ուր պիտի դընայ, բայց ստիպողական եւ անխուսափելի մրցում, մաքառում է բիսած ժողովուրդի գիտակցութիւնից եւ կառավարական ուժիմից։ Երանի Թէ հայերը գիտակցող չլինէին...։

Այժմս տեսնենք Թէ յեղափոխութիւնը ինչպէ՛ս է բաւարարութիւն տալիս նրանց պահանջներին եւ ի՛նչ ձեւի կաղապարի մէջ ձուլում նրանց յեղափ. տրամադրութիւնը.

Յեղափ. կազմակերպութիւնը Սասնոյ եւ Տարօնայ համար մի նոր երեւոյթ չէ, դա ունի իւր արիւնոտ հին անցեալը։ Գուցէ յեղափոխութիւնը մարմին է առել, կազմակերպուել առաջին անգամ այս աշխարհում։ 88 Թուականներից դեռ առաջ սերմանուել են յեղափոխական սերմերը, 94ին հասաւ տրամադրութիւնը իւր գագաթնակէտին։ Նրանից յետոյ գործը Թոյլ կամ ուժեղ կերպով չարունակուեց մինչեւ 904 Թիւը, որի դերը ձեզ յայտնի պէտք է լինի։ Շատ երկար կը լինէր բացատրել մինչեւ մեր օրերը եղած կազմակերպական պատմութիւնը, Թէեւ ներկայ դրութիւնը պարզ լինելու համար անհրաժեշտ էր բացատրելը, բայց ժամանակի սղութեան պատճառով համառօտ կը ներկայացնենք ներկայ կազմակերպական ձեւը, «պատճառների պատճառը» Թողնելով հանգիստ պատմաբաններին։

Ի նկատի առնելով որ ժողովուրդի մեծ մասը ճնշուած են եւ համարեա ամբողջը տրամադիր են յեղափ[ոխութեան] յարելու, կազմակերպութիւնը չի սահմանափակւում որոշ անհատների մէջ, այլ ամբողջ հասարակութիւնը, գիւղական դասակարգը մտնում է կազմակերպութեան մէջ եւ ամբողջ համայնքը ճանաչւում է յեղափոխ. եւ մասնակցում է յեղափ. ամէն մի պահանջներին, ենթարկւում նրա բոլոր հրահանգներին։ Գիւղը, իւր տղամարդով, կնիկ ու ճծով յեղափոխական կազմակերպութեան մէջ է մտնում եւ այդ յեղափ. զանգուածը կառավարւում է գիւղի Գործադիր Մարմնով։

Գործադիր Մարմնի պարտաւորութիւնները եւ անդամները.— տես Շրջանային Ժողովի ա. եւ բ. երեսները եւ Կանոնագրի №№ 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 61 յօդուածները։

Իւրաքանչիւր գիւղի մէջ կան եւ կամաւորների խմբեր. դրանք են ֆիզիքական և բարոյական ուժը, համայնքի եւ կազմակերպութեան Թեւն ու Թիկունքը։ Առանց բացառութեան իւրաքանչիւր գիւղում կայ մի այդպիսի սիւն։ Խմբի պարտաւորութիւնները, ընտրութիւնը, տես Կանոնագրի №№ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40 եւ 41 յօդուածները։

Ամբողջ Դուրանը բաժանւում է 6 շրջանների ա) Ովասիսի բ) Կոուածաղիկ, գ) Սոխակեան, դ) Սահակեան ե) Վահագնեան եւ զ) Հովիտի շրջանների։

Բարձրաւանդակը որոշ բաժանումի չէ ենթարկուած եւ ի նկատի առնելով նրանց բնաւորութիւնը միեւնոյն ձեւով չենք վարւում։

Բիւրակնը մի շրջան է, իսկ Ապահունիքը [բաժանուած է] վերի եւ վարի շրջանների։

Իւրաքանչիւր շրջանի խմբապետական ժողովը ընտրում է իրեն համար կոմիտէ։ Բացառութիւն է կազմում Բարձրաւանդակը, որ կառավարւում է իւր աւանդական օրէնքներով՝ իշխաններով։ Կոմիտէների ընտրութիւնը, նրանց դիրքը եւ դերը՝ տես Կանոնագրի №№ 82ից մինչեւ 125 յօդուածը եւ Կանոնագրի վերջին ծանօթութիւնը. 2) Շրջանային Ժողովի մէջ ընդունուած որոշումները, 3) Ցայտարարութիւնը։

Կոմիտէն միեւնոյն ժամանակ զինուորական հրամանատար է իւր շրջանի, ուստի նրանց հմայքը եւ ազդեցութիւնը աւելի մեծ է քան որեւէ տեղ։ Ինտելիգենտ ուժեր քիչ լինելու պատճառով եւ եղածներն էլ չկարողանալով այն բազմաթիւ վտանգները աչք առնել մնում են երեսի վրայ ատչեաանների եռանդոտ մարդիկ, որոնց սանձը անհրաժեշտ է միշտ պինդ բռնել։

Այն ծանրակշիռ հարցերը որոնք ընդհանուր շրջաններին են վերաբերում, որոնց Կեդր. Կոմիտէն իւր պատասխանատուութեան տակ չի ուզում իրագործել, այլ հարցնել նոյնպէս շրջանների կոմիտէների կարծիքն եւս, այդպիսի դէպքերում հրաւիրուելու են շրջանային ժողովներ։ Դնում են հարցեր եւ որոշումներ կայացնում Կեդր. Կոմիտէի հետ միասին։ Պէտք է նկատել, որ կոմիտէները Թէեւ գործունեայ, բայց չունենալով լայն աշխարհահայեացք, չեն կարողանում այդպիսի դէպքերում ինքնուրոյն կերպով հարցեր եւ որոշումներ տալ, բայց նորից հաւատում ենք լաւ հետեւանքներ ունենալուն, քանի որ Կեդր. Կոմիտէի դիկտատուրան սահմանափակում է եւ կամաց կամաց կարելի կը լինի մտցնել ինքնուրոյնութիւն՝ տեղական մարմինների մէջ։

Կեդր. Կոմիտէն բարձր «կայսերական» մի խորհուրդ է, որից կախուած է ամէն ինչ. նրա դիրքը աւելի բարձր է քան որեւէ տեղինը, քանի որ միեւնոյն ժամանակ ներկայացնում է զինուորական շտաբ եւ իւր ապաքշիմներով կառավարութեան հետ կարողացել է ձեռք բերել շատ մեծ հմայք եւ ազդեցութիւն։ Նրա իրաւասութեան մասին խօսելն աւելորդ է։

Ուրեմն Ժողովուրդը ունի մի վարչական մարմին, որի ձեռքով կառավարւում է։ Գործադիր մարմինը, իշխանները, խմբապետները, կոմիտէները, շրջանային ժողովները, այն շղթայի օղակներն [են]՝ որ կապում են Կ. Կ.ի հետ, իրանց գլխու, որ ղեկավարում է ամէնքին եւ որը իրենց քարշ տալով պիտի հանէ երջանիկ մի վայր։

Լեգալ հաստատութիւններ

Կ. Կոմիտէն իւր խորհրդակցութիւնների մէջ 906ի Ցուլիսից եւ Կորոտի(1) կոմիտէի կարծիքները հարցընելուց յետոյ եկաւ այն եզրակացութեան, որ անհրաժեշտ է լեգալ հաստատութիւններ ձեռք բերել, քանի որ դրանք կողմնակի կերպով նպաստում են յեղափոխական գործի յաջողութեան։ Պէտք է նկատել, որ Տաճկաստանի աւելի լայն սահմանադրական իրաւունքները՝ առաջնորդարան, քաղաքական եւ կրօնական ժողովներ, նպաստամատոյց (ողորմարաշխ, Թաղական խառն եւայլն) հիմնարկութիւններ, փոխանակ մի օգուտ տալու ժողովուրդին եւ յեղափոխութեան, հնայելով ընտրողական սկզբունքին, դանդաղ հակայեղափոխական ու պահպանողական անհատներ այնպէս են դասաւորում պայմանները, որ դրանք իրենց էութեամբ մի չարիք են դառնում Թէ՛ յեղափոխութեան եւ Թէ ժողովուրդին։

Բացատրել այդ մարմինների իրաւունքները առանձին առանձին աւելորդ է. սահմանադրական օրէնքների մէջ նրանց իրաւասութիւնները ընդգծուած են։ Բաւականանանք միայն նրանով, Թէ ինչպէս պիտի ձեռք բերել այդ մարմինները։ Առաջնորդին ձեռք գցելու համար կ'աշխատենք քաղաքական կրօնական ժողովների մէջ դնել մեր մարդկանց։ Այդ լիովին դեռ չէ յաջողուել մեզ, որովհետեւ մինչեւ այժմս Կորոտում կազմակերպութիւնը դեռ այնքան լայն ծաւալ չէ ստացել. բայց այդ ուղղութեամբ գործը առաջ է գնում եւ մասամբ յաջողուել է։ Վերջերս, քանի որ նկատւում էր զեղծումներ եւ նպաստների անկանոն բաշխում, Կ. Կ. առաջարկեց, որ անպայման կերպով հինգ հոգի գաւառացիներից ընտրուեն, որպէս խորհրդակից քաղաքական ժողովի եւ նպաստի եւ դրամական հարցերում հաւասար ձայն ունենան. այդ նրա համար է, որ Կորոտի մարմինները մեր ձեռաց տակից հեռուն լինելով եւ մեր կամքը միշտ չկարողանալով Թելադրել, ընտրել ենք տալու այնպիսի մարդիկ որոնք մեր բերանը դառնան առաջնորդարանում, քաղաքական եւ ողորմարաշխ ժողովներում։ Վերջերս հարց ենք դրել, որ խառն ժողովում ընտրուեն բացի քաղաքացիներից Ե՛ւ գիւղացիներ, իրենց Թուի համեմատութեամբ եւ եԹէ դա մեզ յաջողուեց, ամբողջ վարչական կազմերը կարող ենք բարեփոխել եւ մեր ցանկութեան համաձայն դարձնել։ Բայց քանի որ գործը շատ փափուկ է եւ լեգալ հողի վրայ մնալու համար շատ կարեւոր, ուստի հարկաւոր է ժամանակ եւ դանդաղ գործունէութիւն։

Ուսումնարանները կանոնաւորելու համար անկարող ենք, քանի որ ժողովուրդը տնտեսապէս բոլորովին քայքայուած է, իսկ մենք դրա համար առանձին բիւրջէ չունենք։

Վանքերը նոյնպէս չենք կարող մեր ձեռքը գցել,

20



որովհետեւ բոլորը վանք-զօրանոց են դարձել, Առաքելոց Վանքի կռուից յետոյ։

Հակայեղափոխականները, նրանց շահերը եւ նրանց դերը.

Կայ մի դասակարգ եւս քաղաքում, որ հակառակ է յեղափոխութեան. այդ դասակարգը հայ հարուստներն ու հայ վաճառականներն են, որոնց շահերին համապատասխան է աղքատ չինականի անկումը, երկրի քար ու քանդ լինելը։ Աղքատ դառակարգը ճարահատուած սալաֆ է անում հայ հարուստից հրէշային պայմաններով։ Օրինակ՝ ցանքին առնում է 20 ոսկի։ Ամբան տալիս է իւր պարտքի մի երրորդը (⅓) կանխիկ. իսկ կալոցին նա վերցնում է 120 քիլա ցորեն սալաֆ, հաշուելով քիլան 40 դահեկան, երբեմն էլ 20 դահեկանից. այդ պարտքի տեղ գրաւ է դրւում գիւղացու միւրքը. բնական է, որ ցանկալի կը լինի նրանց, որ միշտ այդպիսի դրութիւնը շարունակուի, որ չինականը ըտիպուած լինի միշտ դիմել իրենց եւ իւր արիւն քրտինքի արդասիքը, օրական պարէնը լեցնի իրենց անյատակ գրպանը. ուստի այդ երկու դասակարգերի մէջ ծագել է մի խուլ ատելութիւն, ատելութիւն՝ աղքատների ու հարուստների՝ ընդհանրապէս տնտեսական եւ մասնաւորապէս յեղափոխական հողի վրայ։ Մուշ՝ դաշտի համար մի դժոխային անուն է։ Մուշ քաղաքը ժողովուրդի համար մի ատելի առարկայ է, աւելի ատելի, քան վայրենի քիւրդն է, որ հարկաւոր է նրա կարծիքով ոչնչացնել, կոտորել, չթողնել նոյնիսկ քարը քարի վրայ կանգուն։ Ահա այդ աստիճանի ատում է հարստահարուած չինականը՝ փոքրիկ, բայց հաստատուն մշեցուն։ Բայց եւ այնպէս չինական դասակարգի բոլոր վարչական իրաւունքները բոլորովին ընկել է այդպիսի վաշխառուների ձեռքը. վերջերս միայն հարստահարուածների մէջ կայ մի ձգտում, ունենալ իւր ներկայացուցիչները քաղաքական, կրօնական, խառն եւ ողորմաբաշխ ժողովներում, եւ հազիւ յաջողեցրել է իւր մէկ ներկայացուցիչը դնել կրօնական ժողովի մէջ։ Քանի որ յեղափոխութեան շահերին չէ համապատասխանում հիմնարկութիւնների մէջ անհաւատարիմ պաշտօնեաներ ունենալը, այժմս Կ. Կոմիտէն այն ուղղութիւնն է բռնել, որ հրահանգներով ուզում է տապալել այդ դասակարգը, իսկ Կորոտի կոմիտէի վրայ պարտականութիւն է դրուած մեր համակիրները ուժեղացնել, աշխատել փոխել այդպիսիները լաւ մարդկանցով, կամ մեր համակիրներով։ Այդ վերջին միջոցը աւելի գերադասում ենք գործի դանդաղ, բայց կանոնաւոր զարգացման համար եւ կայ բաւական յաջողութիւն։ Այժմս պահպանողականների առաջ ընթանալը դոնէ կանգնել է եւ կարելի է կարծել, որ շուտով կը սկսուի այդպիսիների անկումը։

ՏԱԿՏԻԿԱ

Տեսնենք թէ ի՛նչ վիճակի մէջ է եղել կազմակերպութիւնը։ Ինչո՞ւ վիժեց 904ի գործը, ինչո՞ւ փնացան մեր ռազմական ուժերը. ի՞նչ դրութեան մէջ է այժմս կազմակերպութիւնը. գործունէութեան նպատակը, մեր Օգոստոսի (1906ի) որոշումները, երկրի ընդհանուր գործունէութիւնը, յարաբերութեան ձեւը. արտասահման եւ յարաբերութեան ձեւը. ինտելիգենտ եւ զինուորական ուժեր։

Գործունէութեան ձեւը եւ մեր նպատակը պարզ լինելու համար, անհրաժեշտ է նախ մի փոքր ակնարկ ղցել անցեալ փորձերի եւ մեր առած դասերի վրայ։

904ից առաջ, Բարձրաւանդակը ներկայացնում էր մի կիսանկախ վայր, որտեղ հեշտութեամբ կարող էր մտնել կազմակերպութիւնը, իւր գոյութիւնը պահպանել եւ հեշտութեամբ բարձրացնել ապստամբութեան ամուր պարիսպ։ Կազմակերպական գործի զարգացման համար չկար առանձին մեծ դժուարութիւն։ Զօրքը հեռու, ժողովուրդի տնտեսական վիճակը, տրամադրութիւնը՝ լաւ. պակասում էին գործիչներ, որ դրսից հոգացուում էր։

Մեր նիւթից դուրս է թէ արդեօք մինչեւ 904ը կարելի՞ էր աւելի ուժեղանալ։ Խնդիրը շատ բարդ է, եւ թէեւ լուսաբանութիւնը անհրաժեշտ, բայց Թողնում ենք, միայն այս կը նկատէինք, որ առհասարակ այն դրութիւնն էր ստեղծուել, որ երկրի մէջ եղել է ուժեղ կազմակերպութիւն, առանց իսկապէս իր դիրքին համապատասխան ուժ ունենալու ռազմականի, նիւթականի եւ մտաւորականի կողմից։ Միեւնոյն ժամանակ արտասահմանի անտարբերութիւնը փարատուեց միմիայն այն ժամանակ, երբ գործը արդէն վիժելու վրան էր։ Մասամբ այդ աննորմալ եւ անհաւասար զարգացմանը կարելի էր վերագրել գործը վիժելը եւ անյաջող ելքը։

Միեւնոյն ժամանակ, չնայելով ներքին ուժեղ կազմակերպութեանը [եւ] ժողովուրդի հոգեկան դրութեան բարձրանալուն, հէնց երկրի ներսը ուշ է մտածուել ձեռք բերել ժողովրդական ռազմական ուժ. միմիայն պատրաստութիւն է դրուել 903ին Դուրանում, երբ արդէն զօրքերը հաւաքւում էին Սասուն։ Ներսի ընկերների ջղային գործունէութեանը, դրսի ընկերների հարայ հրոցին, եւ ժողովուրդի բարձր տրամադրութեան կարելի էր վերագրել Սասնոյ վիժման արագացումը եւ մեր ներքին ուժերի փճանալը, որ զահավիժուեց մեր Սասնոյ եւ Դուրանի դէպքերին։

Մենք այդ մեր կարծիքը առաջ բերինք նրա համար, որ պարզ լինի ձեզ մեր բռնելիք ուղղութիւնը եւ մեր պահանջները ապագայի համար։ Մենք հին փորձերից եզրակացնում ենք.—

ա) *որ ներքին կազմակերպական գործը պէտք է համապատասխան լինի իւր յեղափոխական ու ինքնապաշտպանողական, ռազմական ու նիւթական ուժերին.*

բ) *որ զինուորական ինտելիգենտ ուժերը պէտք է համեմատական լինեն ռազմական-նիւթական ոյժերին.*

գ) *որ ներքին ինքնապաշտպանութիւնը պէտք է սովորեցնել պարբերաբար.*

դ) *արտասահմանեան ուժերը պէտք է անընդհատ ներս մտցնել խիստ գաղտնի եւ շատացնել տրամադրութեան (ժողովուրդի) համապատասխան.*

ե) *որ կենտրոնացման վայրը աւելի քիչ ուշադրութեան առարկայ պէտք է լինի թէ յեղափոխակ[անների] եւ թէ կառավարութեան կողմից, մինչեւ ռազմական ուժի պատկառելի քանակութեան հասնիլը:*

Անհրաժեշտ է մեր ձգտումները պարզելու համար մի ծանօթութիւն եւս, թէ ինչ վիճակի մէջ է կազմակերպութիւնը 904ից մինչեւ մեր օրերը: Նախորդ էջերում ասացինք, քանի որ այս տնտեսական ճգնաժամի մէջ է ժողովուրդը, քանի այս սուլթանական ռեժիմը շարունակուի, յեղափ[ոխութիւնը] անհնար է արմատախիլ անել այս աշխարհից: Եւ իսկապէս, 904ի անյայտ դէպքերից յետոյ, ռէակցիան սպասածի չափ ուժեղ չեղաւ. ճիշդ է ժողովուրդը քիչ վհատուեց, բայց առաջին սոսկալի տպաւորութիւնից սթափուելուց յետոյ նոյն ընթացքով շարունակուեց յեղափոխական գործը: 904ից յետոյ կազմակերպութեան գիտակցութիւնը (?) մնաց միեւնոյնը, իսկ կազմակերպական ընդդիմադիր ուժը(2)՝ ռազմամթերքը, նիւթական միջոցները հասան զերոյի: Իսկ կառավարական ճնշումները առհասարակ կենտրոնանում են այն վայրերի վրայ, որոնք կազմակերպուած են. դրան ապացոյց են այն բազմաթիւ խուզարկութիւնները, չաւրաղարների (?) արշաւանքը, մասնակի կոտորածը, բանտերը, հարկերի խստութիւնները եւայլն եւայլն: Ուրեմն մի գործ տեսնելու համար ունենք ոչինչ. կայ գեղեցիկ կազմակերպութիւն եւ դրան կից ժողովուրդի քայքայում եւ ոչնչացում:

Մենք կարծում ենք, որ ճիշդ է որ յեղափոխութիւնը պէտք է իւր ապագայ սպասելիքները հիմնէ ժողովուրդի արեան, նրա ոսկորների վրայ, բայց նա միեւնոյն ժամանակ պարտաւոր է լուրջ կերպով մտածել պատրաստութեան վրայ, որ վերջը նպատակին ծառայէ այդ հազար ու հազար նահատակների վրէժ արիւնը: Եթէ կազմակերպութեան կից չմտածենք լուրջ պատրաստութեան մասին, այդ կը լինի մեր կողմից մի սոսկալի դաւադրութիւն, մի սոսկալի ոճրագործութիւն: Մեր այժմեան այստեղի գործունէութիւնը անպատակ է, քանի չի մտածւում ուժի մասին. մենք որրու կերպարանքով ոճրագործներ ենք, ուստի առաջարկում ենք ձեզ. 1) յեղափոխութ[իւնը] ուզենանք չուզենանք պէտք է շարունակուի, ուստի կազմակերպութիւնը պէտք է մնայ, բայց կորուստից խուսափելու համար պարտաւոր էք կշռոքի միւս նժարի վրայ լեցնել առատ ոսկի, ծայր, հրացան. եթէ ոչ, պիտի զլորուի 150·000ից բաղկացած մի ժողովուրդ դէպի գահավէժ անդունդը: Զեռքից դնաց ժողովուրդը, եւ դեռ շատ կը փճանայ եթէ անտարբեր մնաք:

Աւելորդ չենք համարում առաջ բերել Սարհատի(3) եւ Ռուբէնի որոշումները, մի նպատակ տալու համար գործունէութեան, որն մի քանի ամիս է ձգտում ենք իրագործել:

Պատմէն.— «Ի նկատի առնելով Դուրանի աշխարհագրական դիրքը, մեր բուն նպատակը չի կարող լինել Դուրան ընդունել որպէս ապստամբավայր: Մեր նպատակը այդ վայրում պէտք է լինի ժողովրդին ինքնապաշտպանութեան պատրաստելը. այդ տեղից հաւաքել նիւթական, ռազմական եւ առայժմս գոնէ պատրաստարուել այդ շրջանում, քանի որ կառավարութեան ուշադրութիւնը կենտրոնացած լինելով Բարձրաւանդակի վրայ, յանախակի յեղափոխ. ներկայութիւնը կարող է քանդել այդ գաւառը, մանաւանդ որ դրսի օժանդակութիւնը շատ չնչին լինելով անհնար է գոյութիւն քարշ տալ աղքատ լեռնային գաւառներում: Մեր վերջնական նպատակը պէտք է լինի նորից ձեռք բերել Բարձրաւանդակը, բայց ի նկատի ունենալով այժմեան մեր ունեցած ոչինչ ուժը ձեռք բերելու համար, մենք մեր գոյութիւնը պաշտպանելով դրսի գաւառներում պէտք է կառավարութեան ուշադրութիւնը ցրենք Բարձրաւանդակից: Այնտեղի գործունէութիւնը պէտք է սահմանափակուի ժողովուրդին պահել երկրի մէջ, նը-պատներով օգնել եւ գրաւել նրանց եւ մտցնել ուժեղ ներքին կազմակերպութիւն առանց մշտական ներկայութեան, ինչպէս առաջ:*

Որպէսզի կարելի լինի մեր նպատակին հասնել անհրաժեշտ է ունենալ մի յարմար լեռնային գաւառ, որտեղ հնարաւոր լինէր հաւաքել ռազմական ուժ: Այդ չի կարող լինել Դուրանը, ոչ էլ Բարձրաւանդակը, այլ(4) . . . . . .

. . . . . .

. . . . . .

Ի նկատի ունենալով, որ կառավարութիւնը Սարհատի հետ է կապում յեղափ., որոշուեց որ նա չմտնի ոչ.....(5) եւ ոչ էլ Բարձրաւանդակ, իսկ Բարձրի եւ.....(5) գործերը պէտք է նախաձեռնէ Ռուբէնը շատ զգոյշ ճանապարհներով:

Մի նպատակի հասնելու համար, անհրաժեշտ է խոյս տալ ընդհարումներից եւ այնպիսի շարժումներից, որ կարող են վիժման պատճառ դառնալ»:

Վերեւ բերած մեր որոշման մի հատուածից կարող էք եզրակացնել, որ մի ձգտում ունենք նպատակ տալու այստեղի գործունէութեան, բայց եթէ դրսից ռազմական եւ դրամական օժանդակութիւն չլինի, խոստովանում ենք, որ մեր որոշումները պիտի մի ցնորք մնան, իսկ այստեղի մեր գոյութիւնը կորստաբեր:

Բացի Դուրան-Բարձրաւանդակից՝ մտնում են Կ. Կ.ի իրաւասութեան ներքոյ եւ Բիւրակնը եւ Ապահունիքը: Այդ շրջանները թէեւ մեր ներկայ ուժերով անկարող ենք ղեկավարել, բայց անհրաժեշտ է այդ գաւառների կազմակերպութիւնը՝ ուժ կենտրոնացնելու տեսակէտից մի վայրում:

բ) Եթէ այդ շրջանները մարդ չունենանք, բոլորովին կղզեցած կը մնանք մենք Սարուստանից(6): Եթէ ընդունուեց որ Դուրան-Բարձրաւանդակ անհրաժեշտ է գործունէութիւնը, անհրաժեշտ է եւ այդ գաւառների վրայ լուրջ ուշադրութիւն դարձնել՝ գոնէ փոխադրական սուրհանդակային տեսակէտից, իսկ մեր ուժերի անբաւարար լինելու պատճառով գործը կազում է եւ պահանջը զգացւում երկու ղեկավար ընկերների այդ շրջաններում:

Մի ընդհանուր կապ հաստատելու եւ կենտրոնացման վայրը ուժեղացնելու համար, պէտք է որ լեռնային գաւառները՝ Բարձրաւանդակ, Դուրան, Բիւրակն, Ապահունիք կազմեն մի կենտրոնական Կոմիտէ, որի ծանրութեան կենտրոնը առայժմս պէտք է լինի Դուրանը:

Կենտրոնական Կոմիտէն, որպէսզի մի բան անէ, նախ պէտք է մտածէ ժողովուրդի ինքնապաշտպանութեան վրայ, նրա զինման, ռազմական ուժ ունել տալով նրան երկրի ներսը. պէտք է զէնքի չուկայ ստեղծել եւ կազմակերպական ու ժողովրդական ուժը շատացնել: Դրա համար անհրաժեշտ է մի գումար որ հընարաւոր լինի կամաց կամաց, առանց աղմուկի ուժ կենտրոնացնել. այդ միջոցը ամենայարմարն է, առանց տարաձայնութեան մեծ ուժ հաւաքելու, որովհետեւ չէ կապուած վտանգների եւ աղմուկների հետ:

Բայց ամենագլխաւոր յոյսը Կ. Կ.ի համար արտասահմանեան զէնքի փոխադրութիւնն է: Այդ հարցը շատ կարեւոր է Երկրի ընդհանուր գործի, տակտիկի, կառավարական խստութիւնների վերաբերմամբ: Փորձերը ցոյց են տալիս, որ հին ձեւի խմբական փոխադրութիւնները մեծ մասամբ անյաջող են եղել և յաջող եղածներն էլ պատճառ են եղել գործի վիժման արագացման (Թորգոմի խումբը): Ուստի մենք չպէտք է խրախուսունք միանգամից մեծ ուժեր մտցնելու տեսչով, այլ բաւականանք անընդհատ, թող լինի քիչ քիչ հաւաքումով: Եթէ ուժ եղաւ պէտք է գործերը այնպէս դասաւորել, որ երկիրը դրսի ուժը ծրծէ: Այդ ուղղութեամբ մեզ վերջերս յաջողուել է պարբերական փոխադրութիւն անել Զրաբերդ-Բիւրակնի գծով: Բայց այդ դեռ իւր կատարելագործման չէ հասած: Որպէսզի այդպիսի ուժ ներս քաշելու ձեւի օգուտները չօշափելի լինեն, անհրաժեշտ է Զրաբերդում կենտրոնացնել մեզ յատկացուած ուժերը, նշանակել մի ընկեր յատկապէս այդ գործով զբաղուող, որը բաց անէ գծեր Բասէնի եւ լեռնային գծերով, երկու կամ երեք տեղով. պէտք է նշանակել մի ընկեր Բասէն-Խնուս որպէս ապրանք ընդունող եւ գծերին հսկող. պէտք է ունենալ այժմեան եղածի պէս 4-5 հոգուց բաղկացած խմբեր, չորս կամ հինգ խումբ, որոնցից մինը լինի Զրաբերդ, միւսը Բիւրակն, իսկ Բիւրակնից այստեղ մենք կը փոխադրենք նոյն ձեւով: Այդ փոխադրական գործի արագացման համար պէտք է մի ընկեր էլ Ապահունիքում՝ այնտեղի գծերը Ալաշկերտով բաց անելու համար: Ցանկալի էր որ այդ ընկերները չտարուէին ուրիշ գործերով: Փոխադրութեան արագութեան նպաստում է եւ սուրհանդակների առատ վարձատրութիւնը, թէեւ այդ վճառակոնութիւն է եւ անպատուաբեր յեղափոխութեան: Բայց վարձատրելուց չպէտք է խուսափել:

Ինտելիգենտ ուժեր

Ինտելիգենտ ուժերը Դուրան Բարձրաւանդակի համար մի սղեղանի (?) են, մի միջոց են, որով աւելի խոհեմ ճանապարհներով կարելի կը լինի առաջ տանել այստեղի փոքրիկ գործը: Բայց օգուտներից զատ որոշելու է եւ վնասները. իրողութիւնը պարզելու համար, կառավարութիւնը լաւ է ըմբռնում ինտելիգենտ եւ զինուորական ուժերի կարեւորութիւնը եւ ինտելիգենտի եռեւից եղած հալածանքը աւելի խիստ է, քան զինուորականինը: Ուրեմն այդպիսի ուժերի շատ լինելը, առաջ են բերում աւելի շատ հալածանք եւ բռնութիւն ժողովուրդեան վրայ: Մեր կարծիքն է որ չարիքը փոքրացնելու համար անհրաժեշտ է ներս ուղարկել շատ ընկերներ ռազմական ուժի համեմատութեամբ, քանի որ ինչքան ռազմական ուժը շատ եղաւ այնքան կ'ուժեղանայ կազմակերպութիւնը եւ այնքան էլ անհրաժեշտ կը լինեն այդպիսի կազմակերպող ուժեր: Առհասարակ գործունէութիւնը միշտ նորմալ վիճակի մէջ պահելու համար անհրաժեշտ է ռազմական ուժը ընդունել մի միութիւն, ջերմաչափ, եւ թէ' ինտելիգենտ թէ' զինուորական ուժերը բաց այնմ ներս ղրկել: Մեր ունեցած ուժերի համար, նաեւ դրան համեմատութեամբ կազմակերպական գործը կանոնաւորելու համար, պէտք են ղեկավար ընկերներ, երկուքը Բիւրակնի եւ Ապահունիքի, երկուքը Դուրանի, երկուքը Սասնոյ Զորի համար: Դրանք բոլորը պէտք է լինեն առողջակազմ, որովհետեւ մի օր հանգիստ չկայ: Շատ անգամ պէտք է բաց մնայ անձրեւի եւ ձիւնի տակ, զիշերները անքուն, ցերեկները կիսաքուն: Եթէ մի քիչ առողջակազմ չլինի, աւելի ծանրութիւն կը լինի՝ քան օգտաւէտ: Մենք կ'առաջարկենք բացի մեր պահանջած ընկերներից, իւրաքանչիւր 30·000 ծայրին եւ դրա համեմատութեամբ հրացաններին՝ ուղարկել մի ընկեր եւս: Այդ նրա համար ենք պահանջում որ ժողովրդական կազմակերպութիւնը, նրա տրամադրութեան բարձրանալը հաւասար լինի պատրաստութեան, որ մէկ կամ միւս կողմը թերի չմնայ:

Եզրակացնենք մեր ասածները.— Բարձրաւանդակ-

Դուրանի համար անհրաժեշտ է համեմատական գործունէութիւն ժողովրդականի եւ ռազմականի. պէտք է խոհեմ, լուռ, հաստատուն գործ՝ քանդելու համար էլի աւելի՛ ամբացած յեղափոխ[ութեան] առաջի պատնէշները. հարկաւոր են մտաւոր ղեկավարներ, մեծ զրամական եւ ռազմական ուժ, որոնց մասին կը խօսուի ներքեւը:

Ինքնապաշտպանութիւն

Ժողովուրդը զգում է իւր անապահով դրութիւնը եւ յօժարակամ պատրաստում ղիմադրելու: Իրաքանչիւր գիւղում կան կամաւորների խումբեր, նրանց տըրամադրութեան տակ են գտնւում համայնքի անհատական եւ կազմակերպական զէնքերը եւ նա, կանոնադրի որոշ օրէնքների համաձայն, կարող է գործադրել այդ զինուած խմբերը (ինքնապաշտպանողական խմբեր գիւղի, միեւնոյն ժամանակ եւ թուցիկներ եւ կամաւորներ՝ պահանջի դէպքում): Նրանք շատ ուժեղ էին 903–904ին, երբ նրանց տրամադրութեան տակ կար մեծաքանակ ռազմամթերք եւ զէնք եւ բաւարարութիւն էր տալիս նրանց բոլոր պահանջներին. բայց 904ին երբ Սասուն ընկաւ, սկսուեց նրանց հզօրութեան անկումը: Այլ բէյը իւր արբանեակներով ընկաւ դաշտ, սկսեց ժողովուրդին կոտրելով, չարչարելով, սպանելով զէնք պահանջել եւ յաջողուեց նրան 1800 կրակ բացող զէնք ժողովել իրենց փամփուշտներով: Ժողովուրդը վհատուած էր, Սասունը փչրուած, իսկ յեղափոխականները հեռացած՝ Շամում էին: Այլ բէյի համար հողը պատրաստ էր եւ յաջողուեց: Այդ ուժի հաւաքումը բոլորովին կոտրեց ժողովուրդի եւ խմբերի մէջքը: Սկսուեց մի հիասթափում դէպի ռազմական ուժը, սկսեցին զազտնի կամ աշկարայ ծախել, փճացնել մնացորդները, որի առաջն առնուեց յեղափոխակ[անների] վերադարձով: Բայց նորից չարունակուել է այդ կորստաբեր գործը մինչեւ 904ի վերջը: 905ին դանդաղացել է ծախելը, իսկ այժմս կանգնել. ոչ ծախւում է եւ ոչ էլ նորը առնւում: Նորի գնման մասին չենք մտածում, աշխատում ենք այժմս անկման առաջն առնել, բացի դրանից, ժողովուրդը տնտեսապէս ընկած լինելով, չենք կարող այս նեղ պարագային, երբ սպառնում է թունդ ռէակցիա, այդպիսի ստիպում անել: Մնացել է բաւական դեռ ուժ, որի հաշիւները վերջերս ձեռնարկել ենք կազմել, բայց չունենալով մեր ձեռքում հին հաշիւներ, ճշդութեան վրայ պէտք է կասկածել, որովհետեւ ամբողջ երեք փոթորկալից տարիներ անցնելուց յետոյ ձեռնարկել ենք մի այդպիսի գործի, առանց ունենալու մեր ձեռքը 903ի կամ 904ի ռազմական եւ մտից հաշիւները: Մենք հարց ու փորձի վրայ հիմնուած կազմում ենք այժմս եղածների, ծախածների, կորստուածների հաշիւը, բայց թէ ինչքա՛ն ճշմարտութեան կը մօտենանք՝ Աստուած գիտէ:

Տես հաշիւը ռազմամթերքի՝ №№ 1, 2, 3...:

Կազմակերպական ուժը

Կազմակերպական ուժի ճիշդ հաշիւը անհնար է որոշել, որովհետեւ, ինչպէս ցանկից կը տեսնէք, մեր զէնքերից մի մասը ընկել է ժողովուրդի ձեռքը եւ ընդհակառակը: 903–904ի կրիտիկական վայրկեաններում անհնար է եղել մի հաշիւ թողնել, իսկ այժմս դժուար է ճիշդ հաշուեցուցակ տալը: Երկու ամսուայ հետախուզութիւնից յետոյ հաղիւ 65 զէնքի կանոնաւոր հաշիւ կարողացել ենք առնել: Կան եւ ուրիշները, որոնք գըտնւում են անյայտութեան մէջ, որոնց հասնելու համար դեռ հարկաւոր է ժամանակ: Դրանց մէջ են մտնում այն զէնքերը, որ ինչ ինչ պատճառներով փոխադրուել են մի շրջանից միւսը եւ տէրերը սպանուելու կամ չըպտնուելու պատճառով հաշուում են կազմակերպական:

Բոլոր մեր ռազմական ուժի հաշիւը առայժմս աւելորդ ենք համարում առաջ բերել, բայց այնչափ կ'ասենք, որ մանաւա՛նդ մեր ունեցած ծայրերը շատ չընչին են (8000–9000): Կար ժամանակ երբ այդ ուժը պատկառելի էր, բայց այժմս հանգամանքները այնքան են փոխուած, որ այդ գումարը չի կարող բաւարարութիւն տալ նոյնիսկ անակնկալ պատահարներին: Դժբախտաբար այժմս ռազմական մեծ ելք պէտք է միշտ աչքի առաջ ունենալ, քանի որ դէպքերը անխուսափելի են երբեմն: Իսկ եթէ մենք գոնէ մի չարաթուայ ուժ պատրաստ չունենանք եւ եթէ ակամայ մի դէպք պատահի, քանի մենք այս ուժով ենք՝ կառավարութիւնը երկու ժամուան մէջ մեր ուժը կը վերջացընէ կոտրելով, եւ մենք ստիպուած կը լինենք զինաթափ մնալ, որ ինչպէս նախորդներում ասացինք՝ կորստաբեր է այդ դրութիւնը երկրի համար: Ուստի շատ լուրջ ուշադրութիւն պէտք է դարձնել ռազմական բիւդջէի վրայ, որ ապահովէ գոնէ մեր զինուած գոյութիւնը:

Ռազմական պահանջ
Կարիքներ

Գանք թէ որքա՛ն ուժ անհրաժեշտ է 1) յեղափոխութեան գոյութիւնը ապահովելու, 2) ինքնապաշտպանութեան եւ 3) ձեռնարկների [համար]:

1) Որովհետեւ Դուրան Բարձրաւանդակում դէպքերը միշտ սպասելի են եւ զինուած խմբերը անհրաժեշտութիւն են ներկայացնում, ուստի այդ սպառնական վիճակը պէտք է ապահովել պատրաստի մի ռազմական ուժով: Այդ ելքը ապահովելու համար առնըւազն 25 հազար (17 հազար մոսին եւ 8 հազար բերթանի) ծայր ունենալ: Այդ գումարը պէտք է մեռած հաշուել եւ չմտածել ոչ ինքնապաշտպանութեան, ոչ էլ ձեռնարկների մասին, այլ լոկ խմբի կայունութեան:

2) Կազմակերպութիւնը որպէսզի իւր ձեռնարկները հիմնէ ժողովրդի ուժերի վրայ, անհրաժեշտ է որ նա այժմուանից մտածէ նրա ինքնապաշտպանութեան զօրեղանալուն: Դրա համար բացի ժողովուրդի միջոցներով ձեռք բերուած ուժից, պէտք է կազմակերպ[ութիւնը] առնուազն 400 հրացանի պատրաստութիւն տեսնի: Եթէ իւրաքանչիւր հրացանին կցենք 200 գիւլի եւ ծայր, 400×200=30·000 ծայր պէտք է՝ ապահովելու մօտաւորապէս 4 հարիւր եղած հրացանները:

3) Ձեռնարկը վերեւը ցոյց տուինք անհրաժեշտ եւ այստեղի համար, որովհետեւ առանց դրան մեր գոյութիւնը եւ կազմակերպութիւնը բոլորովին աննպատակ եւ նոյնիսկ վնասակար է Դուրան Բարձրաւանդակի համար: Ձեռնարկի համար այժմեանից մի որոշ բիւդջէ որոշել շատ դժուար է, քանի որ կապուած է շատ բարդ արդելքների հետ, որոնց չի կարելի նախատեսել: Եթէ այս պայմանները չփոխուեն, կ'առաջարկենք 6–8 հարիւր կանոնաւոր զէնք, 3 հարիւր հազար ծայրեր. բայց վերեւն էլ ասացի, որ այդ գումարի մասին չի կարելի երաշխաւորել: Մենք առաջնորդում ենք այդ հարցի վերաբերմամբ այն սկզբունքով, թէ չպէտք է մեր ձեռնարկի մասին որոշ ժամանակամիջոց նշանակել, որովհետեւ երկար ժամանակամիջոցում կարող է եւ ոչինչ չհաւաքուել ուժ եւ ընդհակառակը: Իսկ որոշ իդէալական բարձր գումար նշանակելն էլ հիմնաւոր չէ, որովհետեւ կառավարական հակադարձ ուժը չի կարելի նախատեսել, ուստի մենք բաւականանում ենք այս առաջարկութեամբ:

Քանի որ ձեռնարկ Բարձրում, կամ սահմանակից Սասուն գաւառում, անհրաժեշտութիւն է ներկայացընում, մենք այժմուանից պէտք է աշխատենք այնքան ուժ հաւաքել, որ բաւարար լինի ժամանակի պահանջին եւ ձեռնարկի յաջողութեան համար: Ուստի առաջիկայ 907ի համար կարիք ենք զգում պահանջելու.—

ա) Ինքնապաշտպան[ութեան] համար 20 հազար հին ծայր, բ) մեր գոյութեան կայունութեան՝ 30 հազար հին եւ նոր ծայր, գ) ապագայ ձեռնարկի համար 30 հազար նոր ծայր, ուրեմն՝ 80 հազար հին եւ նոր ծայր երաշխաւորում ենք 907ին ստանալ եւ պահել երեք պէտքերի համար: Բացի դրանից հարիւր նոր ձեւի հրացան եւ դրանց փոխադրման եւ պահպանման՝ 700–1000 ոսկի:

Վերոյիշեալ գումարներից զատ անհրաժեշտ է եւ երկրի ներսը չուկայ ստեղծելու համար, առնուազն 1500–2000 ոսկի էլ ռազմական գնումների համար: Իսկ թողնում ենք մանր մունր պէտքերը:

Վերոյիշեալ գումարները անհրաժեշտ են Դուրան-Բարձրաւանդակի ամենանուազ ռազմական պահանջներին բաւարարութիւն տալու համար, առանց մտածելու առաջիկայ 907 եւ 908ին ամենափոքր ձեռնարկի մասին. եթէ պարբերաբար միշտ որոշուի եւ ուղարկուի վերոյիշեալ գումարները եւ ապահով պահպանման վրայ մտածուի, առ առաւել 4–5 տարուայ մէջ ապահոված կարելի կը լինի հաշուել մեզ եւ նպատակէտ ձեռնարկները:

Դրամական հաշիւ

Ժողովուրդի տնտեսականը քայքայուած լինելու եւ ներքին կազմակերպող ուժերի նուազ լինելու պատճառաւ, անհնար է եղել 1904ից մինչեւ այժմս եղած ժողովրդական եկամուտները որոշ սիստեմի ենթարկել, նշանակել եկամտային տուրք, ամսավճար, սիստեմաթիկ հանգանակութիւն եւայլն: Դա նոյնիսկ անհնար էր, որովհետեւ ժողովրդի ղեկավար ուժերը կա՛մ սպանուած կամ բանտարկուած էին: Եղել են մինչեւ 1906 Օգոստոս ամիսը կոմիտէական հանգանակութիւններ: Կոմիտէական այդ հանգանակութիւնների նպատակն է եղել ծածկել փախստականների, զինուորների եւ բանտարկեալների վրայ եղած ծախքը, որովհետեւ կոմիտէների հաշիւները ընկերների քիչ լինելու պատճառով քիչ են ենթարկուել կոնտրոլի, դրա համար էլ նրանց տուած հաշիւներին լիովին չի կարելի վստահանալ, մանաւանդ որ նրանց հաշիւները ժողովուրդի տուած տեղեկութիւններով [կազմուած են]: Կոմիտէների հաշուով հանգանակուել է՝

Ովասիոից	20·000 — 25·000 դահ.
Կոուածազիկից	5·000 — 8·000
Սոխակեանից	5·000 — 8·000
Սահակեանից	4·000 — 6·000
Վահագնեանից	1·000 — 2·000
Հովիտից	500 — 1·000
	35·500 — 50·000

Ուրեմն՝ միմիայն Դուրանից հանգանակուել է 35·000 — 50·000 դահեկան, իրենց ներկայացրած մուտքով եւ ելքով, որից Կ. Կ.ի ձեռքը (Գ. Սարհատին) հասել է,

1904ին	ոչինչ	
1905ին	7392 դահ.	տես հաշուեկշիռները
1906ին	8304 դահ.	

Դրա մէջն են մտնում Ե'ւ Ապահովիչից ստացուած դրամները:

Ուրեմն այդ ահագին գումարը հանգանակել են կոմիտէները եւ ծախսել զինուորների վրայ: Բացի կոմիտէներից հանգանակել են Ե'ւ զինուորները, որոնց հաշիւը ղժբախտաբար չենք կարող տալ, մօտաւորապէս 15,000 – 20,000 դահեկան է:

Ուրեմն ժողովրդականը՝ 50,000 – 65,000· պէտք է գիտնալ որ ժողովուրդը, բացի այդ դրամներից, պա-

հել, կերակրել է զինուորներին, փախստականներին, բանտարկեալներին եւայլն եւ այդքան գումար տուել է բացառիկ ծախքերի համար, ինչպէս իրենք ասում են «ծախքի համար»: Եթէ մենք զեղծումներն էլ աւելացնենք ծախքի գրամի եւ այդ բոլորի ապրուստի վրայ, կը տեսնենք, որ Դուրանի ժողովուրդը մի այնպիսի ծանր զոհողութիւն է արել, որ գուցէ նրա քաջքայման շարժառիթներից մէկն է եղել: Այդ բանը նկատելով, մենք ընդհանուր խորհրդակցութեամբ վճռեցինք արգիլել հանգանակութիւնը բոլորի կողմից, ինչպէս կը տեղեկանաք մեր տուած յայտարարութիւնից եւ կանոնագրից, վերապահելով այդ իրաւունքը միայն մեզ: Որպէսզի կարողանանք մի որոշ սիստեմի վերածել մեր ժողովրդական մուտքերը, նախ վճռեցինք 1) մեր ծախքերը չափաւորել, 2) աւելորդ մարդկանց դուրս քշել, որոնք ծանրանում են ժողովրդեան վզին, 3) ժողովրդից մեր սպասելիքը որոշել եւ անմիջական մեր հրահանգով եւ մեր պատասխանատուութեամբ հանգանակել:

Մենք այդ ուղղութեամբ էլ դուրս քշեցինք, մեր Օգոստոսի խորհրդակցութիւնից յետոյ, Սարհատի եւ Ռուբէնի մօտից 45 զինուոր եւ փախստական, 10 տըզրուկների էլ զրկեցինք ժողովուրդից եւ մեզնից օգտուելու իրաւունքից եւ թողել ենք այժմ 27 զինուոր, որոնք պիտի պահուին մեր եւ ժողովուրդի հաշուին: Որովհետեւ մենք արտասահմանեան օժանդակութեան վրայ շատ վստահ չենք եւ բացի դրանից միանգամից ժողովրդեան եկամուտից ձեռք քաշելը վատ կ'ազդէր նրա զոհողութեան տրամադրութեան վրայ, չնայելով նրա տնտեսական ամենասոսկալի նեղ վիճակին, որոշեցինք իւրաքանչիւր շրջանի վրայ որոշ տուրք՝ իրենց կարողութեան համաձայն.

1) Վահագնեան շրջան՝ 4 քիլա ցորեն, 4 լիդր եղ, 2 ոչխար, 500 դահեկան 10 դիւղից: Այդ գումարով պէտք է Հոկտեմբերից մինչեւ 1907 Ապրիլը պահեն 3 զինուոր եւ անցորդ խմբերին:

2) Հովիտ՝ 500 դահ., 2 քիլա ցորեն, 2 լիդր եղ, (10 դիւղ), պահեն 2 զինուոր XIց (Հոկտեմբերից) մինչեւ IV (Ապրիլ):

3) Սոխակեան՝ 2600 դահ., 6 զինուոր XIց–IV (20 դիւղ):

4) Սահակեան՝ 1000 դահ., 4 քիլա ցորեն, 3 զինուոր XIց–IV (8 դիւղ):

5) Կռուածաղիկ՝ 3800 դահ., 3 զինուոր XIց–IV (20 դիւղ):

6) Ովասիս՝ 4000 դահ., 5 փախստականի եւ կէս զինուորի ծախս՝ XIց–IV (20 դիւղ):

Գումար՝ 12400 դահ., 10 քիլա ցորեն, 6 լիդր եղ, 2 ոչխար:

Այդ գումարի աւելորդը պէտք է մենք ստանանք, իսկ եթէ պակասեց՝ լրացնենք Կ. Կ.ի գանձանակից:

Այդ գումարների համար տրուած է [վկայական ?] Կ. Կ.ի կողմից, որով կարող են գանձել. առանց այդ վկայականի չեն կարող ստանալ. իսկ զինուոր, փախստական եւայլն մարդիկ իրաւունք չունեն մի փարայի նոյնիսկ պահանջ անելու: Հակառակ պարագային որպէս խաչագող պէտք է պատժուեն:

Մենք ժողովրդական մուտք ունեցել ենք ուրեմն մինչեւ այժմս մօտ 65·000 դահեկան. եթէ ապրուստի ծախքն էլ վրան դայ՝ մօտ 150,000 դահ., իսկ այժմս ժողովրդեան ընկած վիճակը ի նկատի առնելով եւ բազմաթիւ տրտունջներ, վեց ամսուայ մուտք պէտք է լինի 12,400 դահ., 10 քիլա ցորեն, 6 լիդր եղ, 2 ոչխար, որ պիտի նուազեցնել միւս կիսամեակին:

Կաղմակերպական էլ եւ մտից հաշուեկշիռը պ. Սարհատ եւ պ. Տատրակ առանձին առանձին են պահել մինչեւ այժմս եւ հնարաւորութիւն ու ժամանակ չլինելով միացնել, ուղարկում ենք առանձին առանձին, — հաշուեկշիռ Սարհատի, հաշուեկշիռ Տատրակի:

Հաշուեկշիռ
Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Դուրանի Կեդրոնական Կոմիտէի, 1904 թիւ
(Սարհատի հաշիւ)

Մուտք	ոսկի	արծաթ	դրուշ
1904 — Քաղաքներից Մարտոյի ձեռքով	19		
1904 — Քաղաքներից Մարտոյի ձեռքով	19	9	
» — Տատրակից	33		
» — Կոմսից Նպաստ բաժնելու համար	30		
» — Տատրակից	50		
» — »	140		
	352	9	
			38196

Ելք	ոսկի	արծաթ	դրուշ
1904 — Զինուորական ապրուստ, շորի, թղթակցութեան			3959
» — Փախստականներին, զինուորներին, աղքատներին նպաստ			3508
» — Բանտի ծախք			625
» — Սուրհանդակի			442
» — Նպաստ դուռտուցից			20069
			28·603
			28·603
Մնացորդ			9593
			38·196

1905 թիւ
(Սարհատի հաշիւ)

Մուտք	ոսկի	արծաթ	դրուշ
1904թ հաշուից մնացած			9573
1905 14/ 1, Տատրակից՝ Քաղաքների ձեռքով	20		
» 20/ 1, » » »	10		
» 4/ 2, » » »	10		
» 7/ 3, » » »	10		
» 7/ 3, » » »	10		
» 7/ 3, » Կորինի »	10		
» 27/ 3, » » »	10		
» 7/ 4, » Սարոյի »	10		
» 24/ 6, Շամի ընկերներից	36		
» 28/ 6, Մուսից	100		
» 28/ 7, Տատրակից՝ Տիգրանի ձեռքով	10		
» 5/ 5, » Սարոյի »	30		
» 21/ 8, » » »	10		
» 29/ 8, » Գրիգորի համար	10		
» 3/10, » Շեկոյի ձեռքով	10		
» 14/10, » Քրմավայրին	10		
» 15/11, » Վկայի ձեռքով	8		
» 22/10, » » »	15		
Ներքին կազմակերպական մուտք			
Գիւղօրէից հանգանակած	72	2	
Գիւղերից առնուած	80		
	471	2	9573
			60481

Ելք	ոսկի	արծաթ	դրուշ
1905 — Զինուորների ապրուստ, շորի, թղթակցութեան			24066
» — Նպաստ սպանուածների ընտանեաց, փախստականներին			10363
» — Կարօտեալներին, բանտ ընկերներին	10		5948
» — Սուրհանդակի, ուղղութիւնքի			2000
» — Ղարսի վնասուածներին	50		
» — Քրմավայրին նպաստ	30		
	90		42377
			52097
Մնացորդ			8384
			60481

Հաշուեկշիռը՝ 1906 Յուլիսին
(Սարհատի հաշիւ)

Մուտք	ոսկի	արծաթ	դրուշ
1905, մնացած դրամը			8384
1906, 10/1 — Տատրակից	5		
» 1/5 — »	10		
» 7/5 — »	10		
» 16/5 — »	10		
» 11/6 — »	22		
» 27/6 — Զրաբերդից սուրհանդակ Մուսային տրուած ծախքի մնացորդը	10		
» 5/7 — Տատրակից	20		
» 15/7 — »	20		
Ժողովուրդից հանգանակած	44	42	2600
	151	42	10984
գումարն է դուրուշով՝			28132
Ելք			25109
մնացորդ			3023

Ելք	ոսկի	արծաթ	դրուշ
1906 — Զինուորական ապրուստ, շորերի, թղթակցութեան			8802
» — Նպաստ Դաշտի եւ գաւառի փախստականներին, սպանուած զինուորների ընտանիքներին եւ կարօտեալց			11378
» — Բանտի ընկերներուն			1152
» — Սուրհանդակներու			382
» — Կորուստ			3400
			25109

Գատնէն Տատրակի հաշուի
(1904)

Մուտք	ոսկի	դրուշ
1904 — Արեւմտեան Բիւրոն Ֆիլիպպէի վրայից դրկել է յանուն կարօտեալների Լ. Օ.	41	67
» — Զրաբերդից՝ յանուն Սարհատի եւ զինուորական պիտոյքի	25	
» — Արեւելեան Բիւրոյից՝ Սարհատի եւ զինուորների պէտքերի	33	
» — Արեւելեան Բիւրոն, Քարից՝ ձեռ... Գոնէի յանուն կարօտեալց	220	
» — Արեւմտ. Բիւրոն, յանուն կարօտեալների, Ֆիլիպպէի վրայէն	33	31
Գումարն է	352	98

Ելք	ոսկի	դրուշ
1904 — Բարձրաւանդակի մօտ 3000 կարօտեալներին՝ անձգլուխ մէկ ու կէս դհկն., ընկալագրով	41	67
» — Բարձրի բանտարկեալներին	10	
» — Բանտարկեալների ձեռք... զին. Գրիգորին	5	
» — Բարձրի 7500 կարօտելոց՝ անձգլուխ 2 դհկն., ձեռամբ Սարհատի բաշխեալ, ընկալագրով	140	
» — Հրայրի որբերին՝ 4, Բէնճուտ բանտարկեալ Մաշադիին՝ 2	6	
» — Բարձրի Դուրանի կարօտեալներին, բանտում վախճանեալների ընտանեաց եւայլն	9	
	211	67
» — Ցանուն Սարհատի եւ զին. պէտքերի, ընկալագրով	33	
» — » » » » »	25	
» — » » » » »	20	
» — » » » » »	20	
ցուցակով	7	
ընկալագրով	10	
» — Ցանուն Ցեսուի՝ յօդուտ որբերի եւ աղքատաց	13	
	339	67
պատրաստ դրամ	13	31

Պատճէն Տատրակի հաշուի (1905)

Մուտք	ոսկի	դրուշ
1905 — Արեւել. Բիւր. Քարի կռնկի միջոցաւ յանուն Սարհատի եւ զինուորական պէտքերի Լ. Օ.	110	
» — Արեւելեան Բիւրոն Քարի վրայից՝ յանուն Սար.ի եւ զինուորական պէտքերի	110	
» — Տ. Զաւ.՝ ձեռամբ Մռաւի յանձնել էր յանուն Սարհատի՝ 50 ոսկի, յանուն Ղաբսի՝ 50, յանուն Ցեսուի՝ 35	135	
» — Տ. Զաւ. Բարձրաւանդակի վրայէն յանուն կարօտ[եալների]՝	150	
» — Պատրաստ դրամ 1904ի հաշուից	13	31
դումարն է	610	31

Ելք	ոսկի	դրուշ
1905 — Ցանուն Սարհ.ի եւ զին. պէտքերի տրուեց ընկալագրով	20	
» — » » » » »	20	
» — » » » » 20+10 եւ ցուցակով	30	
» — » » » » »	40	
ցուցակով	7	26
ընկալագրով	10	
ցուցակով	16	39
	143	65
» — Բաշխեալ Դուրանի կարօտեալներին ձեռ. Կորոտի եւ Ցեսուի, ընկալագրով	10	
» — Բանտարկեալներին՝ ձեռ. զին. Գրիգորի	3	31
» — Ղարսի կարօտեալներին Սարհ.ի ձեռ., ընկալագրով	50	
» — Բարձրի 7500 կարօտելոց անձգլուխ մէկ մէկ դհկ., ընկ.	70	
» — Դուրանի մի քանի կարօտելոց ընտանեաց ձեռ. Ցեսուի	1	68
» — Ցանուն Սարհ.ի եւ զին. պէտքերի, ցուցակով	7	32
» — » » » »	5	8
	290	90
» — Ցեսուի յանձնարարութեամբ՝ Սարհ.ին, ընկալագրով	40	
» — Ա. Վ.ին՝ հողերի	5	
» — Ցեսուի յանձնուեց (Մռաւից)	35	
» — Ցեսուի՝ յօդուտ որբերի 48+5=	53	
» — Սարհատի՝ ձեռքով Տաճատի	30	
փոխանցում	453	96

Ելք (շար.)	ոսկի	դրուշ
փոխանցումն	453	90
1905 — Ցանուն Սարհ.ի (Մռաւից եւ Տ. Զաւ.ից) ընկալագրով	50	
» — Ցանուն Սարհ.ի ընկալագրով՝ 20, ցուցակով՝ 5, զս. ցուցակով՝ 15,82	40	82
» — Ցանուն Սարհ.ի ընկալագրով՝ 15 զս. ընկալագրերով՝ 13	28	
» — Ցանուն Սարհատի ընկալագրով՝ 10 ցուցակով՝ 9,15	19	15
	591	85
պատրաստ դրամ է նոր հաշիւ՝	18	54
	610	31

Պատճէն Տատրակի հաշուի (1906)

Մուտք	ոսկի	դրուշ
1906 — Պատրաստի դրամ 1905ի հաշուից	18	54
» — Արեւելեան Բիւրոն Սարհատի անունով ուղարկել է Քարի Կռունկի միջոցաւ՝ 2000 բուրլի կամ Լ. Օ.	230	54
» — Արեւելեան Բիւրոն յանուն բանտարկեալների 500 բուրլի կամ Լ. Օ.	57	
» — Արեւելեան Բիւրոն յանուն կարօտելոց 2500 բուրլի կամ Լ. Օ.	287	54
ընդհանուր դումարն է	593	54

Ելք	ոսկի	դրուշ
1906 — Ցանուն Սարհատի եւ զինուորական պէտքերի, ընկալագրով	5	
» — » » » » »	10	
» — » » » » »	10	
» — » » » » » ցուցակով	18	64
» — » » » » » ընկալագրով	142	
» — » » » » » ցուցակներով	24	1
դումարն է	209	65
» — Բարձրի եւ Դուրանի զանազան կարօտեալների		26
» — Ցանուն Ցեսուի յօդուտ որբերի, ընկալագրով	10	
» — Ցանուն կարօտելոց եւ որբերի, ընկալագրով		98
» — Կարօտելոց եւ բանտարկելոց տրուել է	1	13
» — » » » » »	1	65
» — Բանտարկեալների յանձնուած Սարհատի միջոցաւ	57	
» — Սարհատի եւ զինուորների պէտքերին, ցուցակով	10	
դումարն է	290	50
» — Պատրաստի յաջորդ հաշուին	303	4
ընդհանուր դումարն է	593	54

Դրամական պահանջներ

Վերը ցոյց տուինք, թէ յեղափոխական տեսակէտից անհրաժեշտ է գոնէ Բարձրաւանդակի ժողովուրդը պահել երկրի մէջ, մեր նպատակների ու ձեռնարկների իրագործման համար: Դրա համար անհրաժեշտ գտանք տարեկան 6000ից մինչեւ 7000 ոսկի իբր նպաստ: Զինուորական պէտքերի համար՝ 1500ից 2000 տարեկան ոսկի, նախապատրաստական ձեռնարկների՝ 1500–2000, բանտ՝ 500–800, այլ եւ այլք՝ 300–500, ռազմականի գնման՝ 1500–2000, սուրհանդակի՝ 700–1000:

Գումարը՝	6000– 7000
	1500– 2000
	1500– 2000
	500– 800
	300– 500
	1500– 2000
	700– 1000
	12000–15300

Այդ գումարից մեր ներքին մուտքը զինուորական պարտքերի համար հազիւ լինի 100 ոսկի, իսկ մնացածը սպասւում է դրսից, որ հնարաւոր լինի ժողովուրդին չկեղեքել, յեղափոխութեան գոյութիւնը պաշտպանել եւ մի գոյն ու ձեւ տալ այստեղի կազմակերպութեանը, ապա թէ ոչ, մենք ոչ թէ յեղափոխականներ կը լինենք, այլ մի մի աննպատակ աշխիաներ:

Որպէսզի Դուրանի ժողովուրդն չփճանայ, հողերը ձեռքից չդնայ, չգաղթի, մենք օգնելու ճարը գտնում ենք միմիայն մի զիւղական բանկ հիմնելու մէջ, գիւղացուն սալաֆից, ֆայիզից, մրիբայութիւնից, մարունայութիւնից, չիֆթըլիկութիւնից ազատելու համար: Այդ նպատակով աւելորդ չենք համարում խնդրել, որ լեռալ հողի վրայ կազմակերպութիւնը աշխատէր մի բանկ հիմնել Դուրանում, իսկ եթէ ազատ ճանապարհով չյաջողուեց, դնել կազմակերպութեան տրամադրութեան տակ 30,000 բուբլի, միմիայն պարտք տալու եւ առնելու: Ի հարկէ այդ դէպքում անհրաժեշտ են եւ մասնաւորապէս դրանով զբաղուող ինտելիգենտ բարեխիղճ ուժեր: Ցանկալի էր որ այդ նիւթի վրայ եւս լուրջ ուշադրութիւն դարձնէք: Գիւղական բանկը մի փրկիչ է կեղեքուած հայ տարրին՝ դաղան հարուստների եւ աղաների ճիրաններից ազատելու համար:

Եղած ներքին զինուորական եւայլն ուժերը

Այժմս Դուրան–Բարձրաւանդակում գտնւում են 27 զինուոր: Մեր այժմեան գործունէութիւնը նկատի առնելով, այդ քանակութիւնը դեռ շատ է մեր պէտքերին, բայց հազիւ կարողացանք կարճ ժամանակամիջոցում հարիւրաւորների թիւը հասցնել 27ի: Արտասահմանի եւ երկրի Կ. Կ.ները, ի նկատի ունենալով որ զինուորական ուժեր մեզ պէտք չեն, այլեւս չպէտք է ուղարկեն զինուորական ուժեր:

Վերջերս Արեւել. Բիւրոյի յանձնարարութեամբ եկան երկու ընկերներ եւս (օժանդակ). մինը Դուրանում է, միւսը՝ Բիւրակնում:

Կ. Կ.ի անդամներն են Տատրակ, Սարհատ եւ Ռուբէն, իսկ Վկան՝ խորհրդատու:

Մեզ առայժմս անհրաժեշտ է մի ընկեր Դուրանում, ցանկալի էր որ լինէր Կոմսը կամ Շամի Սարգիսը։ Երկրի ընդհանուր, միատեսակ գործ ստեղծելու համար լաւ կը լինէր որ ուղարկուէլիք ընկերները լինէին փորձուած երկրի ընկերներից

Մի կամ երկու ընկեր Սալնոյ Զորում, մի կամ երկուսը Բիւրակն–Ապահունիքում։

Նորից չեշտում ենք առողջ կազմ ունենալու վըրայ։ դրութիւնը շատ ծանր է եւ հարկաւոր են ճարպիկ եւ երկաթէ մարդիկ։

Քիւրդ–տաճկական յարաբերութիւն

Մշոյ աշխարհում, շատ քիչ բացառութեամբ, ազգաբնակութեան մեծ մասը կազմում են հայ, քիւրդ եւ Թիւրք ազգեր։ Քիւրդ ու Թուրք տարրը կազմելով ազգաբնակութեան փոքրամասնութիւնը, մեծ մասի իշխող եւ ղեկավար տարրն են կազմում։ Քիւրդ եւ Թուրք նշանակում է մի տզրուկ, որ իւր գոյութիւնը ապահովում է հայի աշխատանքով ու արիւնով։ Այնպէս որ հայի ու քիւրդ ու Թուրքի տնտեսական շահերը իրար հակառակ են։ Ուստի դժուար Թէ կարելի լինի հայկական կազմակերպ. կից եւ ներդաշնակ մի դաշնակցութիւն կազմել Դուրանում. ի հարկէ խօսքը մեծամասնութեան է վերաբերում։ Քիւրդերի եւ Թուրքերի մէջ կայ մի փոքր դասակարգ, «ռայա» դասը, որը համարեա նոյն չափով դժուարութիւնների է բախում, ցեղական, դաքիլսահաբական կապակցութեան պատճառով։ Քիւրդը իրեն հաշուում է մի ցեղի, մի աշիրէթի մասնիկը. նա շարժուելու է այնպէս ինչպէս իւր ցեղը, իսկ ցեղը պէտք է շարժուի այնպէս, ինչպէս հրամայեց ցեղապետը։ Այնպէս որ այդ դասի մէջ տըգիտութեան, ընտանեկան աւանդութիւնների պատճառով անհատական դատողութիւնը, ինքնուրոյն շարժումը պակասում է ցածր դասակարգի մէջ։ Թէեւ իրենք զգում են մեր պահանջների իրաւացի լինելը եւ իրենց անտանելի դրութիւնը։ Այդ դասակարգի այդ յատկութեան պատճառով դեռ շատ եւ երկար ժամանակ է հարկաւոր՝ փշրելու նախ նրա սնոտի հայեացքները, ցոյց տալ ճշմարտութիւնը, եւ այն զոհաբերութիւններին վարժեցնել, որը պահանջում է յեղափոխութիւնը։ Այդ դասակարգի դրաւումը Թէեւ ցանկալի է, բայց անհնար է առայժմս ցածրից վերեւ քարոզչութիւնը, նրանց տգիտութեան եւ աւանդութիւններով կաշկանդուած լինելուն պատճառով։ Կայ մի դասակարգ եւս՝ բարձր դասակարգը, որը չնայելով տնտեսական հրամայողական պայմանների բացակայութեան, զանազան հանգամանքներից դրդուած յարում է հայ յեղափոխութեանը։ Դրանցից ոմանք Թուրք կալուածատէրերն են, որոնք օգտուում են հայկական գիւղերից եւ վախենալով՝ յարում դէպի յեղափոխութիւնը։ Այդպիսի բարեկամներ ունենք Դուրանի շատ գիւղերում, որոնք հայ խղճուկ գիւղացիների խարխուլ խրճիթների մէջ կանգնեցրած ունեն իրենց գեղեցիկ քէօշկերը։ Երկրորդ տեսակի բարեկամները քիւրդ հալածուած գիւղապետներն են, որոնց տնտեսականը Թէեւ լաւ է, բայց հնուց սովոր լինելով ազատութեան, այժմըս կառավարութիւնից ճնշուում են։ Դրանք կիսանկախ բէգերն ու ցեղապետերն են, որոնք առատ ոսկիների մէջ նոյնիսկ նեղն են զգում՝ կառավարական ցանցերի մէջ։ Այդ դրամի մարդիկ մեզ աւելի դիւրամատչելի են եւ կարելի է յուսալ։

Երրորդ՝ կայ մի փոքրիկ դաս եւս՝ կրթուածներ։ Դրանք տաճիկ եւ քիւրդ զինուորականներն են եւ դրանցից շատ քիչերն են համակրում մեզ եւ օգնում շատ դէպքերում։ ԵԹէ մի ուժեղ տաճիկ ձեռք ընկնի, հնարաւոր կը լինի այդ դասակարգի միջոցաւ մի հիմնաւոր գործ ձեռնարկել։

Հայ–տաճիկ–քիւրդ համերաշխութեան համար չի խնայւում ոչ մի միջոց եւ կարելի է ասել, որ անուանական մեծ քանակութեամբ բարեկամներ ճարուել են, բայց մի բան կայ, որ այդ հայ ժողովուրդի արիւնով եւ կազմակերպութեան դրամական միջոցներով կարելի՞ է ապահովել քրդի կամ տաճկի հետ մեր միութիւնը։ Նրանք մեզ հետ միանալով հասկանում են մեր Թոյլ լինելը եւ այդ զգալով սառչում. իսկ որպէսզի նրանց կապը պահպանենք, ստիպուած պէտք է լիննք դրամով եւ զէնք նուիրելով նրանց աչքը կուրացնել, երբ մեզ համար մահացու հարուած է մեր ռազմական ամենաանչնչան ուժից անգամ զրկուելը։ Հենց այդ պատճառով այժմս այդպիսի նուէրներ տալը դադարեցրել ենք, որից երեւի շուտով կը սկսուի մի վնասակար հակառակ ընթացք։ Երկու կողմն էլ վնաս է։

Մենք այժմս այն կարծիքին ենք, որ անհրաժեշտ է խորութիւն դնել համակրութիւն ցոյց տուողների մէջ, չընտրել այնպիսիները, որոնք շահադիտական նպատակով մտնում են կազմակերպութեան մէջ, չընտրել նրանց, որոնք չունենալով յեղափոխական հասունութիւն՝ ինչ ինչ պատճառներով մտնում են կազմակերպութեան մէջ. ընտրել միմիայն նրանց, որոնք բնաւորութեամբ յեղափոխական են եւ նրանց յեղափոխական լինելու լուրջ շարժառիթներ կան, եւ բացառութիւն կազմել այն օտարների վերաբերմամբ, որոնց նոյնիսկ առերես բարեկամութիւնը անհրաժեշտ է մեր գոյութիւնը պահպանելու եւ սուրհանդակային գործի համար։

Մեր այժմեան բարեկամներից աչքի է ընկնում Խութայ քիւրդ ցեղապետ Ղասում բէգը, որ շատ ծառայութիւններ է անում, բայց Թէ վերջը ինչով պէտք է վերջանայ, չենք կարող երաշխաւորել։ Կան ուրիշ

շատ բէգեր եւ աղաներ, հասարակ քրդեր ու մի քանի տաճկական սպաներ (զաբուԹներ)։

Այժմ գանք այն կէտին, Թէ մենք ի՞նչ կարծիքի ենք Կովկասեան Խնդրի *վերաբերմամբ։*

Մենք տեսնում ենք, որ Կովկասեան Խնդիրն եւս չինծու եւ արհեստական մի երեւոյթ չէ, այլ ունի իւր լուրջ շարժառիթները, ուստի կարծում ենք, որ Կովկասեան գործը, ԵԹէ նոյնիսկ մեզ եւ Սարուստանի զանազան մարմիններին ցանկալի էլ չլինի, անհնար է կանգնեցնել։ Մեր կարծիքով այդպիսի շարժումը ունի իւր ստիպողական պահանջը, ուրեմն եւ հարկաւոր է. բայց միեւնոյն ժամանակ ցոյց տուինք անցողակի կերպով, որ այստեղ եւս յեղափոխութիւնը անհրաժեշտ է, որ ունի իւր լուրջ պատճառները, որ զանազան խելացնոր մարդկանց ագիտացիա չէ, այլ մի բնական երեւոյթ, որ առաջ է եկել տաճկական ծանր եւ անտանելի ռեժիմից։ Բացի դրանից այստեղինը մի նոր երեւոյթ չէ, այլ ունի իւր անցեալը՝ ներկուած հարիւր հազարաւորների արիւնով, սրբապղծուած հազար ու հազար նահատակների կեանքերով։ Մի դաւաճանութիւն կը լինէր Թէ՝ մեր եւ Թէ ձեր կողմից չճանաչել երկուսի (Կովկասի եւ Տաճկաստանի) էլ գործունէութիւնը։ Իսկ ԵԹէ ճանաչուեց, պարտաւոր է ուժեղը Թոյլին օգնել։ Այստեղ կայ Հայկական Հարց, իսկ ԵԹէ հայկականը դուր չի գալիս, հաշուեցէք մի հիլոտ(?) դասակարգի հարց, որին պարտաւոր են օգնել, ԵԹէ ոչ հայը, այլ զոնէ իսկական մարդը, որը Թէկուզ ազգային դաղափարն էլ ընդունելու չլինի։

Վերջացնելով մեր խօսքը, մնում է մեզ ցանկալ Ձեզ, որ արիւնոտ ժողովուրդի բախտը տնօրինելու մեծ ու պատասխանատու գործի հետ կը խաղաք, յաջողութիւն, որ կարողանաք մարդկային առողջ դատողութեան ամբողջ Թափով՝ ծրագրել ու հարԹել դէպի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան իդէալը առաջնորդող ուղին։

Բարձրաւանդակ–Դուրանի
Կեդրոնական Կոմիտէ
ՌՈՒԲԷՆ ՏԱՏՐԱԿ
(Կնիք Բարձրաւանդակի Կ. Կոմիտէի)

14 Նոյեմ. 1906 թ., Շղթայ.

---

(1) Մշոյ կուսակցական ծածկանունը։
(2) Ընուած է, կ'ենթադրենք, պակսող եւ ատով իսկ ճիգեմը ցլատող միջոցներուն մասին։
(3) Գէորգ Զաւուշի։
(4) Բնագրին մէջ՝ երբէ տող կէտ։
(5) Բնագրին մէջ՝ կիտաւոր։
(6) Կովկասէն, Ռուսաստանէն։

2.— ԴՈՒՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՑԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. Ի՞նչպէս կառավարել Համայնքը.

Ի նկատի ունենալով, որ շատ տեղեր ինչ ինչ պատճառներով չեն գործադրուում Կանոնագրի շատ կէտերը, եւ կամ այժմեան պայմանները տարբեր լինելով առաջուանից, հին Կանոնագրի մի քանի կէտերը անհամապատասխան են այժմեան պայմաններին, որոշուեց քննել Կանոնագիրը եւ աւելացնել մի քանի ծանօթութիւններ եւ կառավարել խմբերը, գիւղերը եւ շրջանները ըստ այդ Կանոնագրի յօդուածների յաւելուածներին՝ 9, 65, 84, 85, 103, 104, 107, 108, 117 եւ աւելցրած ընդհանուր ծանօթութիւններին։

Իւրաքանչիւր գիւղի մէջ լինելու է մէկ կամ աւելի կամաւորների խումբ, որ կառավարուելու է Կանոնագրի յօդուածների համաձայն։

Գիւղը պէտք է կառավարուի Գործ[ադիր] Մարմնով. բայց որովհետեւ շատ գիւղեր այդ մարմինը քայքայուած է, ուստի գիւղական, կառավարական ու յեղ[ափոխական] գործերը կառավարելու համար՝ պէտք է նորից վերակազմել այդ մարմինը, կանոնաւոր ընթացք տալու համար վերեւ յիշուած երեք գործերին։

Գործ. Մարմինը պէտք է կազմուի հետեւեալ անդամներից՝ խմբապետից, օգնականից, իսկ ԵԹէ գիւղում երկու խումբ կայ, փոխանակ օգնականին՝ միւս խմբապետից եւ ռէսից, որը անպայման կերպով կամ պէտք է ընտրուի Կ. Կոմիտէի կողմից եւ կամ ընտրուած է խմբից եւ հաստատուած շրջանի կոմիտէից։ Հակառակ պարագային ռէսը չի կարող ճանաչուել որպէս ընկեր եւ Գործ. Մարմնի անդամ։

ԾԱՆՕԹ.— Ռէսների փոխուելը եւ նրանց տեղ մեր ընկերներից դրուելը որոշուեց նրա համար, որովհետեւ նրանց ինքնագլուխ կերպով գիւղը կառավարելուց եւ տուրքեր հաւաքելուց առաջ են գալիս շատ զեղծումներ եւ ընդհարումներ խմբերի հետ, եւ բացի դրանից, պայմանները այնպէս դասաւորուած լինելով, որ առանց ռէսի կիսութեան՝ մի զինուորական խմբի գիւղը իջած ժամանակ, կարող էր ի զուր տեղ վտանգներ առաջ գալ, եւ բացի դրանից առանց ռէսի օգնութեան տեղական խմբերը անկարող են գիւղը կառավարել, յեղ. եւ կառավ. տուրքերը արդար եւ կանոնաւոր դանձել, եւ վերջապէս զեղծումները աւելի չափաւորելու համար, որոշուեց գիւղի ամենավստահելի անհատներից մինը ընտրել մեր կամ խմբի կողմից, որ պիտի վաւերացուի կոմիտէի կողմից եւս, որ պէտք է ճանաչուի որպէս Գործ. Մարմնի անդամ եւ ռէս, եւ առանց խորհրդակցելու խմբապետի եւ ընկերոջը հետ ոչ մի գործ չպիտի կատարէ, լինի կառավարական, գիւղական եւ Թէ յեղափոխական։

Շրջանի կոմիտէի գանձապահի պարտականութիւնները որոշուած են Կանոնադրի մէջ։

2· Ի՞նչպէս կանոնաւորել ստացուած տեղական եկամուտները եւ առաջն առնել զեղծումների եւ աւելորդ ծախսերի

Ի նկատի ունենալով, որ կոմիտէների, զինուորների, Գործ· Մարմինների կողմից եղած հանգանակութիւնները, նուէրներ հաւաքելը եւն· տեղիք է տալիս զանազան բամբասանքների՝ ժողովուրդների կողմից, եւ կարող են առաջ գալ զեղծումներ եւ անիրաւացի պահանջներ, եւ բացի դրանից անհնար կը լինի որոշ հաշուի տակ առնել ժողովուրդից ստացուելիք եկամուտները, ուստի որոշուեց արգիլել կոմիտէներին, Գործ· Մարմինների, զինուորների, խմբապետների, փախստականների եւն· անհատների կողմից հանգանակութիւն անել առանց Կ· Կոմիտէի որոշման եւ նրանից տրուած վկայականին, վաւերացրած պաշտօնական կնիքով։ Հակառակ պարագային, պատասխանատուութեան կը կանչուեն հանգանակողները եւ նուէրներ ստացողները, որպէս ինքնագլուխ, կազմակերպական օրէնքներ չճանաչող եւ խաչագողեր։

Բացառութիւն են կազմում այնպիսի անակնկալ դէպքերի մասին եղած հանգանակութիւնները, որոնք պահանջում են անմիջական օգնութիւն, օրինակ՝ յանկարծ մի ամբաստանեալի բռնուելը, որ կարող էր մի քանի ոսկով ազատուել, եւայլն։ Եւ բանտարկեալների ու մնասուածների համար եղած մասնաւոր հանգանակութիւնները, որ կարող է անել Գործ· Մարմինը կոմիտէի հաւանութեամբ ու աջակցութեամբ· եւ տուզանքները, կամաւոր նուէրները, խմբերից ստացած ամսավճարները, որոնք պէտք է զանձուեն՝ խմբական 2/3 մասը եւ 1/3 մասը կոմիտէական գանձարաններում։

Բոլոր ստացած եկամուտների մասին կոմիտէն թէ Գործ· Մարմինը, խմբապետը թէ զինուորները եւ կամ ուրիշները պէտք է հաշիւ ներկայացնեն Կ· Կոմիտէին եւ ստանան եկամուտի համաձայն իւրաքանչիւր տեղի կամ խմբի համար կնքուած անդորրագիր եւ յանձնեն նուէր բերողին, հակառակ դէպքում այդ դրամի կամ նուէրի կրկնապատիկը կը պահանջուի գանձողից եւ պատժի կ'ենթարկուի չներկայացնելու պատճառների համաձայն։

Հանգանակութիւնը պէտք է կատարուի հետեւեալ ձեւով։— Կ· Կոմիտէն խորհրդակցելով տեղական կոմիտէի հետ, կ'որոշէ հանգանակուելիք դրամի կամ նիւթերի դումարը, իւրաքանչիւր գիւղի կարողութեան համաձայն, կը տրուի շրջանի կոմիտէին ցուցակ եւ պաշտօնական վկայական, որով իրաւունք կ'ունենայ հանգանակել տրուած ցուցակի համաձայն։ Հաւաքելուց յետոյ, պէտք է տայ իւր ստորագրութիւնը գիւղի Գործ· Մարմնին եւ գանձուած դրամը կամ նուէրները ներկայացնէ մանրամասն հաշուով Կ· Կոմիտէին։ Ստանայ Կ· Կոմիտէից անդորրագիր իւրաքանչիւր գիւղի համար եւ անդորրագիրը յանձնելով տեղւոյն Գործ· Մարմնին իր ստացականը ետ առնէ Գործ· Մարմնից։ Այդպէս պէտք է վարուեն նոյնպէս այն բոլոր անհատները եւ մարմինները, որ Կ· Կոմիտէի կողմից հանգանակութիւն են կատարում։

Կոմիտէն իւր ծախքերը պէտք է ծածկէ Կ· Կոմիտէի կողմից տրուած դրամից եւ պէտք է լրացնէ իւրաքանչիւր շրջանի հանգանակուած նուէրների եւ դրամի գումարից։

Կոմիտէն պէտք է ունենայ մի ելեւմտից մատեան, որտեղ մանրամասն պէտք է արձանագրուեն հանգանակուած դրամի, Կ· Կոմիտէի կողմից ստացած դրամի, տուքանքների, ամսավճարների եւն· ստացած մուտքը։ Նոյնպէս եւ իւր ըրած ծախքերը, Կ· Կոմիտէին յանձնուած դրամները եւն·։ Եւ պէտք է իւրաքանչիւր ամսագլուխ, հաշիւները ներկայացնէ ու փակէ Կ· Կոմիտէի հետ միասին։

3· Զէնքի եւ զինապահեստների մասին

Ի նկատի ունենալով, որ ժողովրդական եւ այլ կազմակերպական զէնքերը, որ գտնւում են ժողովուրդի կամ խմբի մի անհատի կամ խմբի տրամադրութեան տակ, ինքնագլուխ փոխելուց մի ուրիշի հետ կամ կոմիտէի հրամանով տեղափոխելուց առաջ են գալիս մի շարք վնասներ ու հաշիւների խառնուիլ, սրանից յետոյ արգիլւում է առանց Կ· Կոմիտէի որոշման փոփոխել զէնքերը եւ մէկից առնելով միւսին տալ։ Գիւղի զինապահը պարտաւոր է գիւղի մէջ գտնուած բոլոր զէնքերի կանոնաւոր պահպանման հսկել եւ հետեւել զէնքերի մասին եղած կանոնները իրագործելու, ինչպէս յիշուած է Կանոնադրում։ Հակառակ պարագային, զինապահը նոյնպէս պատասխանատու է զէնքերի եւ փամփուշտների փոխուելու, փճացնելու, ծախելու, կառավարութեան կամ ուրիշին յանձնելու եւ ինքնագլուխ գործածման դէպքերում։

Պէտք է կոմիտէն մանրամասն հաշիւ ներկայացնէ իւր շրջանում 903թից սկսուած եղած զէնքերի, կառավարութեան յանձնուածների, կորսուածների, ծախսուածների, փճացածների, լեռը գնացածների, իւր շրջանը ուրիշ շրջանից կամ կազմակերպութիւնից մտածների եւ ելածների [մասին] ու մնացած զէնքերը՝ իրենց վրայի համարներով ու փամփուշտներով ու պակասութիւններով։

Դատավարութիւն

Ի նկատի ունենալով, որ դատավարութիւնը մեզնից շատ ժամանակ է խլում եւ չենք կարող բոլոր դատերին բաւարարութիւն տալ, ուժեր քիչ լինելու պատճառով, եւ շատ անգամ վնասներ են առաջ գալիս հին դատերի քննութիւնից, միեւնոյն ժամանակ անհնար լինելով դատավարութեանը չխառնուել, որոշուեց սահմանափակել այդ ընդարձակ գործը հետեւեալ ձեւով՝ ինչպէս ցոյց տրուած է Կանոնադրի յաւելուածի մէջ։

Ի՞նչպէս առնել գաղթականութեան առաջը

Քանի որ գաղթականութիւնը լայն ծաւալ է ստացել, որոշուեց այդ հոսանքի առջեւն առնել, համոզելով, բռնի ուժով, եթէ հնարաւոր է ե՛ւ կառավարութեան, Առաջնորդարանի ու յեղափոխական ընկերներին դիմելով։

Կառավարութեան դիմելուց այն օգուտները կը սպասուի, որ գուցէ հնարաւոր լինի մուսադա ստանալ տուրքերի գանձման համար, ինչպէս եղել է մի քանի անգամ· հակառակ պարագային մենք ոչինչ կորցրած չենք լինի, քանի որ դրանով ապացուցած կը լինենք, թէ՛ կառավարութեան եւ թէ ուրիշների առջեւ, ժողովուրդի անտանելի վիճակը, եւ եթէ ոչինչով ալ չօգտուենք, գոնէ կառավ· ճնշումների անտարբեր(?) լինելու փաստերի թիւը մէկով եւս կը չատացնենք։

Եթէ դրսից օժանդակութիւն եղաւ, յարմար դատուեց Դուրանում կարօտեալների թիւը շատ լինելու պատճառով, ոչ թէ առաջուայ պէս ցրել ժողովուրդին, որ ոչ մի օգուտ չէր տալիս, այլ աշխատել այդ դրամով, քանի որ քայքայման դլխաւոր պատճառը սալափն է, առաջն առնել՝ փոխ տալով առանց % կամ չնչին տոկոսով պարտատէրերին, որից զանձուելու պայմանաւ։

Բոլորն ալ կարծում են, որ անհնար պիտի լինի գաղթականութեան առաջն առնել, եթէ կառավարութիւնը խիստ միջոցների չձեռնարկէ դրա դէմ։

Փախստականների մասին

Ի նկատի առնելով, որ փախստականները բեռ են աղքատ ժողովրդեան վզին եւ պատճառ են դառնում յաճախակի դէպքերի, որոշուեց հեռացնել [նրանց]՝ որոնք Ցեղ[ափոխու]թեան պատճառով են եղել փախըստական [եւ] հաստատ է որ ծանր կերպով պատժի կ'ենթարկուեն կառավարութեան կողմից· իսկ անհատական գործերի, գողութեան եւ զէնքի յանձնելու, այսպիսի բաների պատճառով փախստական եղողները չպէտք է ծանրանան ժողովրդեան վզին եւ Ցեղ[ափոխութիւնը] չպէտք է խրախուսէ այդպիսիներին իրենից միջոցներ տալով։

Մնացած Ցեղ[ափոխու]թեան պատճառով եղած փախստականներին պէտք է այն չափով օգնէ ժողովուրդը եւ կոմիտէն, որ պահպանէ իւր գոյութիւնը եւ վտանգ չպատահի։

Այն փախստականները, որոնք յարմարութիւն ունեն իրենց դիւղում ապրելու եւ պարապելու ընտանեկան գործերով, չպէտք է ծանրանան ժողովրդի վրայ։

Նրանք, որոնք կարող են իրենց շրջանից դուրս մի ուրիշ շրջանում ապրել իրենց աշխատանքով, չպէտք է ծանրանան ժողովրդեան վրայ։

Փախստականները չպէտք է իրենց կողմերը հանգանակութեան ձեռնարկեն, այլ պէտք է իրենց գոյութիւնը պահպանեն կոմիտէի ցոյց տուած ճանապարհով։

Զինուորները եւ նրանց յարաբերութիւնը ժողովրդեան ու կոմիտէների հետ

Կոմիտէն պէտք է զինուորներին աջակցութիւն ցոյց տայ իրենց տրուած յանձնարարութիւնների համաձայն։ Կոմիտէն չպէտք է ինքնագլուխ շահագործէ զինուորներին՝ հանգանակութեան, դատավարութեան եւ այդպիսի պարագաներում։

Զինուորները, ժողովուրդի մէջ, բացի իրենց տրուած պահանջներից, ոչինչի խառնուելու իրաւունք չունեն։

Կոմիտէն, միւս մարմինները եւ ժողովուրդը պարտաւոր են զինուորներին պահել, հակառակ պարագային նրանք պատասխանատու են վտանգի եւ չպահելու դէպքերում։

Զինուորների ու կոմիտէների կամ միւսների մէջ եղած անկանոնութիւնների մասին, կոմիտէն պէտք է դիմէ Կ· Կոմիտէին։

Կանանց խումբերը

Ի նկատի առնելով սուրհանդակութեան եւ ուրիշ պարագաներում կանանց խմբերի տուած օգուտները, չպէտք է խմբերը եւ կոմիտէները արգիլեն կանանց խմբեր կազմակերպելուն, երբ ինքնաբերաբար ցանկութիւն են յայտնում կազմակերպել։ Բայց պէտք է կազմակերպուեն այն պայմանաւ, որ ոչ մի յարաբերութիւն ու կախում չունենան տղամարդկանց խմբերից· նրանց թէ՛ ներքին եւ թէ միւս գործերը պէտք է գործադրուեն իրենց խմբապետուհւոյ, շրջանի կոմիտէի եւ Կ· Կոմիտէի ձեռքով, իսկ զինուորների, փախստականների, խմբապետների, Գործ· Մարմինների եւ ուրիշների հետ յարաբերութիւն ունենալ, թէկուզ գործի համար լինի, բացարձակ կերպով արգիլւում է։

Ցիշատակարան

Կոմիտէները պէտք է ունենան յիշատակարան, որտեղ պէտք է արձանագրուեն շրջանում պատահած դէպքերը, կառավարական, քրդական եւ հայ վաշխառուների բռնութիւնները, Ցեղ[ափոխութեան] ուրախալի եւ ցաւալի երեւոյթները, մի խօսքով ամէն մի ուշադրութեան արժանի դէպք։

1 Սեպտ· 1906 թ· ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿ-ԴՈՒՐԱՆԻ Կ· ԿՈՄԻՏԷ

3.— ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿԻ ԿԵՆՏՐ. ԿՈՄ. ՇՐՋԱՆԻ

	1894 թ.			1906 թ.			Ֆիւրդեր
գիւղերի քանակ	տուն	բնակիչ	գիւղ	տուն	բնակիչ	տուն	գաւառների անուններ
100	6452	45525	100	4500	29386	1117	*Մուշի դաշտ*
25	1951	12846	25	1143	8162	351	*Գուլանբեգի գաւառակ*
7	418	3386	7	369	3007	2 գիւղ	*Սասուն՝ Անտոքի շրջան*
							հող գրաւ.
9	333	2879	9	290	2618	19	*Շատախ*
14	175	1203	14	175	1013	——	*Տալուորիկ*
	1904 թ.						
13	368	2725	13	368	2725	——	*Խիան*
9	266	1915	9	266	1915	——	*Խուլի*
21	328	2309	21	328	2309	——	*Փսանայ գաւառ*
20	181	1248	20	181	1248	——	*Արեւելեան գաւառ*
5	70	493	5	70	493	——	*Հվէղան*
8	179	1266	8	179	12666	——	*Փեչար*
15	159	——	15	159	——	117	*Կուց գետի գաւառ՝ Սասնոյ*
15	494	——	37	494	——	——	*Մոտկան եւ Խարզան*
8	391	——	8	269	——	192	*Վարդօ գաւառակ*
5	73	——	5	73	——	108	*Մառաշգուլ*
19	177	——	—	—	——	177	*Խութայ*
15	130	——	15	130	——	——	*Բռնաչէնի գաւառակ*
33(*)	611	——	33(*)	611	——	——	*Մանազկերտի գաւառ*
238	4353	——	219	3962	——	613	

Ուրեմն՝

Մուշի դաշտը ունի 100 *գիւղ*, 4500 *տուն*, 29386 *բնակիչ հայեր եւ* 1117 *տուն քրդեր.*

Գուլանբեգը ունի 25 *գիւղ*, 1143 *տուն*, 8162 *բնակիչ հայեր եւ* 351 *տուն քրդեր.*

Սասնոյ շրջանը ունի 219 *գիւղ*, 3962(**) *տուն*, 31696 *բնակիչ հայեր եւ* 613 *տուն քրդեր.*

Մուշ քաղաքը ունի 1230 *տուն*, 7646 *բնակիչ հայեր եւ* 2162 *տուն Թուրք-քիւրդ.*

1 *քաղաք* + 344 *գիւղ*, — 10835 *տուն*, 76890 *բն. հայեր եւ* 4243 *տուն քրդեր եւ Թուրքեր:*

(*) *Միայն* 8–9 *հայ գիւղեր ունին հողային սեփակ[անութիւն].*
(**) *Ամէն մի տուն հաշուած է* 8 *անձից բաղկացած:*

4.— ՌՈՒԲԷՆԻ ՆԱՄԱԿԸ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՑԻՆ

Գրուած կարմիր մելանով, նորմալ չափի ճամպի գծաւոր երկերեր թուղթի մը 4 էջերուն վրայ: Մատիտով մակագրուած է՝ «1906, մտցնել Հայաստան-Թուրքիա» (հաւանօրէն համապատասխան թղթածրարի մը ակնարկելով): Կու տանք ճաւ մէկ էջին տպագրական պատճէնը (*էլէյ*):

2 *Սեպտ.* 1906, *Դուրան*

Սիրելիք !

Հասան տեղս ձեր յանձնարարականով Ցունանը եւ իւր ընկերը: Ցաւում ենք, որ բացի ձեր յանձնարարականից չկար նրանց հետ մի երկտող, Թէ՛ գործի եւ Թէ առհասարակ աշխարհի անց ու դարձի վերաբերմամբ: Ինչ եւ է, գուցէ երկրացիներին վիճակուած է կտրուած լինել ամէն բանից, նոյնիսկ գործունէութեան մասին տեղեկութիւն ունենալուց, որի համար դրել են իրենց կեանքը: Քանի որ առիթը ներկայացաւ պարզելու է ձեզ մի հարց: Ինչպէս որ Շամի(1) *Ռայոնական ժողովի կարծիքն էր, մենք եւս խորհրդակցելով զտանք, որ մեր գործունէութիւնը պէտք է զարգացընենք մեր կարողութեան եւ դրամականի համեմատութեամբ. կարծում ենք, որ մեր այդ սկզբունքը դուք իրաւացի էք գտնում, բայց քանի որ ձեզնից բարոյական ու նիւթական եղած օժանդակութիւնը շատ քիչ է, եւ մենք այնքան Թոյլ ենք որ հազիւ քարշ տանք Դուրան-Բարձրաւ[անդակի] գործը, սխալ ու վնասակար էր ուղարկել երկու հասարակ ոյժեր, որոնք իրենց ղեկավարուելու կարիք ունեն, ինչպէս դուք եւս նկատել էիք: Ճիշդ է, որ մեզ հարկաւոր են մարդիկ, բայց ոչ Թէ այդպիսիները, այլ ղեկավար ոյժեր, եւ դեռ նրանց զալն էլ դրական հետեւանք կ'ունենար միմիայն այն ժամանակ, եթէ որոշուէր որոշ դրամագլուխ՝ նոր շրջան ու նոր գործ ստեղծելու համար: Մենք այդպիսիների գալը բացարձակօրէն վնասակար ենք դատում, քանի որ նրանցից աւելի լաւ գինուորներ ունենք այստեղ, որոնք Թէ՛ խելքի, Թէ՛ կռուելու ու փորձառութեան կողմից շատ առաջ են, բայց մենք ի նկատի ունենալով որ այդ շրջանը հեշտութեամբ չենք կարող ղեկավարել հեռաւորութեան պատճառով, չենք համարձակուել նոյնիսկ* 15–20 *դ. գինուոր ուղարկել, վախենալով ինքնագլխութիւններ առաջ գալուց. այժմս չուարել ենք, Թէ ի՞նչպէս մի այդպիսի պատասխանատու շրջան, ինչպիսին է Ապ. եւ Բիւր.*(2), *Թողնել մի մի խամ մարդկանց վրայ: Նրանց պիտի փորձենք, եթէ յարմար եղան կը պահենք, եթէ ոչ կ'ուղարկենք ձեզ: Տաճկաստ[ան] գորտի կոկոց հանելուց աւելի լաւ է լռելը եւ գործ չչինելը:*

Ցոյս կայ, որ գծերը պէտք է բացուեն. երկրորդ անգամն է, որ յաջող հասնում են. մենք արդէն դրել ենք Զրաբերդ(3) *գծերի կանոնաւորման մասին. խնդրում ենք, դուք եւս պատուիրէք, որ լուրջ ուշադրութիւն դարձնեն փոխադրութեան վրայ. Բասէնի գիծը կարելի է բաց անել, եթէ մարդ լինի. այդ պատճառով մի մարդ նշանակելու է Զրաբերդում, որ յատկապէս դրանով զբաղուի. մենք յարմար դատանք Մուրատին. խնդրում ենք նրան հանէք այդ աննպատակ կռիւներից եւ դնէք Զրաբերդի մեր գործերի վրայ, առանց նրան էլ համշահարիների դէմ եղած գործը առաջ կ'երթայ, իսկ նրա մի պարսիկից սպանուելը ցաւ է Երկրի համար: Խնդրում ենք նորից, որ Մուրատին դնէք Զրաբերդ, նոր գծերը բաց անէք, եւ պատուիրէք որ սուրհանդակներին առանց սպասեցնելու յետ ուղարկեն, երկու օրից աւելի չմնան այդ կողմը: Մեզ համար կենսական նշանակութիւն ունեն լաւ հրացաններ, տասնոց եւ Գարաբելլում ատրճանակներ, նոր ծայր եւ հինի իսկական գիլզի, խմոր, մելինիտ, կապսիլ, եւ երկու երեք դինամօ մաշինա ու սուիսոյ էլէմենտներ. ուրիշ դատարկ բաներ չուղարկէք. սրանք ամենաանհրաժեշտն են:*

Թերթերի մեծ կարիք կայ. խնդրում ենք Զրաբերդի եւ Բարձրաբերդի(4) *վրայով ուղարկէք ամէնից մի քանի օրինակ, բայց այնքան, որ ռազմամթերքի փոխադրութեանը չվնասէ:*

Մենք շատ նեղ դրութեան մէջ ենք գտնուում դրամական անձկութեան պատճառով. ամէն կողմից թափուել են մեր վրայ բարձրաւանդակից ու Դաշտից վընասուածները ու օգնութիւն են ուզում, բայց մեր ձեռ չկայ ոչինչ. շատ անգամ մեր վերջին փարաները տալիս ենք նրանց եւ այդ պատճառով ծանրանում աղքատ ժողովրդեան վրայ. Թէեւ Կոմսը գրել էր, որ ուղարկուել է 2000 *ր., բայց մենք այդ մասին Թէ՛ Կորոտից*(5) *եւ Թէ մի ուրիշ տեղից չունենք տեղեկութիւն: Վերջին Դաշն. Խորհրդի որոշման մէջ կար եւ* 30·000 *յատկացուած Բարձ[աւանդակ]–Դուր[անին] եւ գործադրման նոյնիսկ ձեւն էր որոշուած, բայց այստեղ ոչ դրամ կ'երեւայ եւ ոչ էլ այդ մասին ձեր կամ մի ուրիշի կողմից խօսք: Խնդրում ենք նպաստի մասին լուրջ ուշադրութիւն դարձնել, ամբողջ ժողովուրդը մեզնից օգնութիւն է ակնկալում. մինչեւ այժմս՝ Սարհատ*(6), *խաբելով, իւր բերնից կտրելով Թէ բոնի ուժով, Բարձրաւանդակի գաղթականութեան առաջն առել էր, ասելով Թէ չուտով դրամ կը բերեն ձեզ. իմ գալուց յետոյ ժողովուրդը ոչինչ օգնութիւն չտեսնելով բոլորովին յուսախաբուած ու լքման վիճակի մէջ ընկաւ. այսուհետեւ անկարող ենք խաբել ու ժողովուրդի քանդման առաջն առնել, եթէ դրամ չհասնի մեր ձեռքը: Կոմսը գրած էր, որ Տատրակին*(7) *եւ Վկային*(8) *է ուղարկուած դրամները եւ նպաստի մասին մանրամասն գրուած է: Մենք ձեր բոնած այդ ուղղութիւնը շատ վնասակար ենք դատում հետեւեալ պատճառներով: Ժողովուրդի ու գործի ամբողջ ղեկը դժբախտաբար անցել է փախստական ընկերների ձեռքը, ժողովուրդը ճանաչում է մե՛ղ եւ մեզնից է սպասում ամէն մի բան, եւ բացի դրանից յեղափոխութեան վարկը եւ յաջողութիւնը մեզ հետ է կապում. այդ պատճառով, որպէսզի մեր ուռքի տակի հողը ամրանայ, ինչպէս եւ գտան Շամի ընկերները, դրամը պէտք է բաժանենք մենք. բացի մեր գործունէութեան յաջողութիւնից, չկան ազատ մարդկանցից այնպիսի անձնաւորութիւններ, որոնք ձեռնհաս լինեն դրամների կանոնաւոր բաշխման եւ իրագործման Խորհրդի առաջարկած ծրագիրների: Դժբախտաբար ձեր ընտրած մարդիկ, ինչպիսին են Տատ[րակը] եւ Վկան (Ցեսու) յեղափոխական տեսակէտից լոկ հանդիսատես են գործունէութեան եւ նրանց գործունէութեան սահմանը չի անցնում յարաբերութիւն, այն էլ անհատական, պահպանելուց այն կողմը: Վերջապէս նրանք չուզենալով փախստական լինել, եւ կառավարութեան ուշադրութիւնը նրանց վրայ կենտրոնացած լինելով, ինչպէս եւ իրենք են խոստովանում, անկարող են այդպիսի գործնական խնդիրների մէջ մտնել: Մենք բացարձակ դընում ենք, որ այդ դրամները եւ նամակները որ ուղղուում են ոչ Թէ գործի ղեկավարներին այլ ուրիշին, վիրաւորանք է մեզ համար, եւ մենք դրամի կորստեան եւ բաշխման անկանոնութեան մէջ ոչ մի կերպ պատասխանատու չենք: Իսկ եթէ ռէակցիան ուժեղացաւ՝*



մեղքը կ'ընկնի ձեր վրին։ Եթէ ցանկանում էք՝ 30·000ի եւ 2000ի մասին զրէք, իսկ եթէ ոչ՝ կամքը ձերն է. եթէ մենք էլ կարողացանք մի քիչ օգնել ժողովուրդին մի բան կ'անենք, իսկ եթէ ոչ կը թողնենք ամէն ինչ, ինչ որ ուզում է լինի։ Ախ դրամ, դրամ, դրամ. դրամի համար խեղդւում ենք, դրամի համար կամաց կամաց մեր ընկերները ոչնչանում, սպանւում են, իսկ ժողովուրդը՝ քաղցում, Սասունը ոչնչանում...։

Խորհրդի որոշման համաձայն դրամ էր յատկացուած Գուրակի(9), Մոտկանի եւ ուրիշ տեղերի համար. խնդրում ենք շուտով մարդ ուղարկել Գուրակ, թէ չէ մեր եւ Շամի յարաբերութիւնը բոլորովին կըտրրուած կը մնայ։ Զնայելով մենք որոշեցինք Շամի հետ խորհրդակցելով գործերը ղեկավարել, եւ այնպէս անել, որ Դուրան–Շամ–Լեռնապար մի մարմին լինի, բայց ահա մի ամիս է, որ ոչ մենք եւ ոչ էլ նրանք հնարաւորութիւն ունեն մի դատարկ նամակ նոյնիսկ փոխանակելու։ Զնայելով Երկրիս ընկերների նպատակը այդ է, բայց ինչպէս երեւում է չպիտի կարողանանք իրագործել, եթէ Գուրակ մարդ չլինի. այդ մասին Շամում խօսել ենք, նորից գրուեց, բայց կարծում եմ, որ նրանք էլ անկարող պէտք է լինեն՝ առանց ձեր կողմից մի ուժեղ մարդ ուղարկուելու։ Մարդ ուղարկելիս ի նկատի պէտք է ունենաք Գուրակում եղած դժուարութիւնները եւ ըստ այնմ մարդ ուղարկէք. հաւատացած պէտք է լինէք, որ եթէ մի քիչ չփորձուած ու անտակտ մարդ լինի, եթէ կառավարութեանն էլ չյաջողուի գնդակով վերջացնել, Գուրակի այս ռէակցիայի շրջանում ժողովուրդը սաղ–սաղ կը խմէ։ Յատուկ մատնիչների խմբեր կան՝ յեղափոխական կազմակերպութեան ձեւով։ Առաջուայ Գուրակը չըկայ։

Այստեղի ժողովուրդի տրամադրութիւնը սպասածից աւելի բարձր է. կազմակերպական գործը նախանձելի վիճակի կը հասնի, եթէ Երկրի մէջ փորձուած, կորիճ ու թեթեւ քայլող մի ընկեր գայ. ինչպէս եւ Շամի Թայոնական ժողովը որոշեց, մենք եւս շատ յարմար գըտանք Կոմսին. խնդրում ենք մեր այդ որոշումը յայտնէք եւ ուղարկէք Կոմսին, մենք նրան կը գտնենք յարմար։ Ի նկատի ունենալու էք, որ այստեղի գործը անհամեմատաբար աւելի ծանր է քան Շամինը կամ մի ուրիշ տեղինը, դժուարութիւնները աննկարագրելի են, ամէն օր սպասում ենք ընդհարման, մի գիշեր չենք կարող մնալ մի տեղ. ահա 25 օրուայ մէջ 5 խուզարթիւն եղաւ. ցերեկը զօրք, գիշերը՝ ջանբեզարներ, դաւաղիրների առանձին խմբեր. այդ բոլորը պահանջում են այնպիսի մի մարդ, որ կարողանայ այդ բոլորի մէջ իւր հաւասարակշռութիւնը պահպանել ու գործ տեսնել. գործը ընդարձակ է ու ծանր, հարկաւոր է ղեկավար ուժ, որ իւր փորձառութիւնը չափել ու ձեւել է Երկրի վրայ. այստեղի ժողովրդի մէջ անփորձը կարծում ենք վնասակար պէտք է լինի եւ ի զուր տեղը շուտով դնայ նահատակների շարքը աւելացնելու։ Առողջութիւնը եւ լաւ քայլելը ամենաանհրաժեշտ պայմաններից մէկն է, որովհետեւ մենք միշտ «անիծեալի» պէս փախչում ենք եւ մեծ մասը անց կացնում բացօդեայ ու յաճախ անօթի։ Գրածներս դառն իրողութիւն են։ Եթէ Կոմսը չգայ առաջարկէք Շամի (Լեռ.) ընկերներից Սարգսին(10), նա էլ յարմար է։

Ուղարկում ենք երեք տարուայ՝ 904, 905, 906 մինչեւ Յուլիսի հաշուեկշիռները. թէեւ ուշ է, բայց կարծում եմ՝ ի նկատի ունենալով Սարհատի մինակ լինելը, ու այն հալածանքները որ եղել են նրա յետեւից, շատ խստապահանջ չէք լինի։ Մանաւանդ որ մի քանի կուլուների մէջ հաշիւների մի [մասը ?] խլուած է թշնամուց։ Դժոխային այս պայմաններում այդքանով էլ շնորհակալ լինելու է։ Կը կազմենք տեղեկագիր Ընդհ. Ժ[ողով]ի համար։ Միւս նամակին՝ մեր անելիքների մասին։ Առայժմս այսքան՝ որ մեր ընդհ. ձգտումը պիտի լինի եղած ուժերը հաւաքել, որ ցըրուել են ինչ ինչ պատճառներով, եւ պահպանել եղած գործը եւ ոչ թէ ընդարձակելը։ Միւս նամակին՝ մեր կայացրած որոշումները։

Համբոյրներով
Ի դ[իմաց] Դ. Բ. Կ. Կ.Ի՝ ՌՈՒԲԷՆ

Ուղարկում ենք Ղարսայ (Դուրանի գիւղերից) կուում սպանուած Ռաֆաթ պէյի Թուրը. ցանկալի էր որ վրան գրէիք «Գերի Ղարսայ կուոյ» եւ դնէիք մեր Թանգարանը, յիշատակ։

ՌՈՒԲԷՆ

---

(1) Վասպուրականի։
(2) Հաւանօրէն Ապահունիֆ եւ Բիւրակն, այսինքն՝ Մշոյ Դաշտէն դէպի հիւսիս եւ հիւսիս–արեւելք ինկած շրջանները։
(3) Կարս։
(4) Կարին։
(5) Մուշ քաղաքի կուսակցական տեղաւորութիւնը։
(6) Գէորգ Զաւուշ։
(7) Գեղամ Տէր Կարապետեան։
(8) Ամենայն հաւանականութեամբ՝ Վարդան Վարդապետը։
(9) Սալնոյ Զորի (Բաղէշ եւ Ախլաթ) շրջան։
(10) Վանայ Սարգիսը (Բարսեղեան, Շամիլ)։

III.— ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Թղթածրարներուն մէջ կը գտնենք «Տեղեկագիր — կէտեր Արեւմտեան Բիւրօ — «Դրօշակ»ի խմբագրութեան (1904–1906)» խորագրեալ նորմալ չափի (27×22 սմ.) նամակի զոյգ թերթերէ (անգիծ) կազմուած տետրակ մը ուր, Ակնունիի ձեռագրով, արձանագրուած են զեկուցման կէտերը եւ անոնց վերաբերեալ հակիրճ նոթեր (կու տանք ա. էջի *քլիշէն*): Պարունակութիւնը, անշան տարբերութիւններով, կը համապատասխանէ 4րդ Ընդհանուր Ժողովի ատենագրութեանց մէջ տեղ գտած արձանագրութեան (տեսնել ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, Գ. հատոր, էջ 33–36). ուստի վերստին տալը կրկնութիւն պիտի ըլլար:

Կու տանք սակայն, առաջին հերթին, Արեւմտեան Բիւրոյի 1904–1906 տարիներու (3րդ եւ 4րդ Ընդհանուր Ժողովներուն միջեւ ինկող ժամանակաշրջան) *ընդհանուր հաշուեկշիռը*:

Ապա «*Արեւմտեան Բիւրոյի շրջանի մարմիններին*» ուղղուած «համառօտ-տեղեկագիր»-շրջաբերական մը, 1905 Հոկտեմբերէն, որմէ 4րդ Ընդհանուր Ժողովի թղթածրարներուն մէջ կը գտնենք տարբեր ձեռագրով այլ միեւնոյն բովանդակութեամբ երկու օրինակներ: Այդ տեղեկագիր-շրջաբերականին կցուած են կարգ մը քաղուածքներ՝ 1905 թուականի Դաշնակցութեան խորհուրդի որոշումներէն:

Արեւմտեան Բիւրոյին ուղղուած կարգ մը նամակներն ու դիմումները, 1906ի վերջերը կամ 1907ի առաջին ամիսներուն գրուած, անցած են Ընդհանուր Ժողովի դիւանին կամ լրիւ կազմին ուղղուած գրութեանց ծրարներուն մէջ եւ կը տրուին համապատասխան կարգով: Այս բաժնին մէջ կ'անդրադառնանք 1904 եւ 1906 տարիներէն երկու գրութեանց միայն:

Եւրոպական միջավայրի մէջ Հայ Դատի քարոզչութիւնը կազմելով Արեւմտեան Բիւրոյի հիմնական պարտականութիւններէն մէկը, այս բաժնին մէջ տեղ կու տանք նաեւ Լորիսի (բժիշկ Յ. Լորիս-Մելիքեան) մանրամասն տեղեկագրին եւ անոր ընկերացող գրութեանց: Անձնական տարակարծութեանց եւ դժգոհութիւններու բաժինը մէկդի դրած՝ Լորիսի տեղեկագիրը մանրամասնօրէն կը պարզէ 1904–1906 տարիներուն թափուած արտաքին քարոզչական ճիգերը եւ անոնց հետ կապուած սպասումներն ու յոյսերը:



Էջ մը՝ Ակնունիի (Խաչատուր Մալումեան) ձեռագրէն:

1.— ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ 1904–906 Թ.

1904–1906 ԵՐԵՔ ՏԱՐԻՆԱՅ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇԻՒԵԿՇԻՌ

Հ. Յ. Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ—„ԳՐՕՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԵԱՆ

Դ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ ՄԻՆՉԵՒՆ Դ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ

Սկսած 1904 Մայիս 1-էն մինչև 31 Դեկտեմբեր 1906

ՍԱՀՄԱՆ — ԵԼՔ

1904 մայիս 1-էն մինչև 15 յուլիս մուտքի առաւելութիւնը ելքի վրայ	14316 45		Յուցական մարմին	119614 05
Նոր գանձապահին յանձնուած 15 յուլիսին	250 —	14566 45	Լեռնավայրի մարմին	26164 05
„Գրամ" կոմիտէն	159971 —		„Գրամ"-Ընդհանուր և տար. պարագաների	27374 25
„Փոխ" կոմիտէն	30000 —		Զէյթի—Ուրմիայի Բիւրոն	76905 —
Ընդհանուր Բիւրոյն	184091 15		Վաստակաւորների մարմին	23087 20
Ամփոփագրի և կոմիտէն անձնական	79260 20		Մուշ-Սասունի	35005 45
Ուղարկելի և կոմիտէն	23677 —		Վիշապի տեղերները	1000 —
Յուցական մարմնէն ետ տարուած	2200 —		Բանտարկեալներուն	2923 75
Պարգևական և կոմիտէն	1500 —		Թղթակցութիւններուն	3700 —
Եգիպտահայ կոմիտէն	1200 —		Ամփոփագրին (ստացած վիճակագրերի համար)	50 65
Լեռնավայրի մարմնէն	625 —		Փոխառութիւն մարմիններու և նպաստ տարբեր հարկերու	7432 —
Ուսանողներ մարմնէն և անդամներէն	11195 90		„Պատանիներ" ետ տարուածներուն	1000 —
„Գրամ"-ի բաժն գրքերէ և պատկերներէ	632 60		Զինուորական վարժարանին	2000 —
„Գրամ"-Ուրմիայի համար	2276 50		Գործիքներու տարուած և նանապարհածախս	6421 40
Կամաւոր Հ. Յ. Դաշնակցութեան	500 —		Նպաստ	2256 50
Գիրքերու տարեկան բաժանորդներէն	550 —		Գործադրութիւններ	3854 10
Գիրքերի հանձնարարներէն	2372 50		Գրքի փոխադրութեան ծախքեր	223 15
Հնչակ-Ամերիկայի Ազգ. Ֆոնդէն	559 15		Բիւրոյ խմբագրութեան տեղաշարժեր	16993 80
Պարտքերուն ետ տարուած փոխառութիւն	1663 55		Գրադարան	8161 —
Գրքերու մնացք (ծախքերու հաշիւն)	3622 70		Հնչակներու բերքերուն	1911 15
Փոխառուած վիճակագրէն	95 —		„Պատանի" տարեգրքի	2329 95
Ամերիկայի Ազգ. Ֆոնդէն	1095 20		Ընդարձակ ծախքեր (ծանրոցներու դրամ)	13311 10
Ամերիկայի Ազգ. Ֆոնդէն Խ. Ա. Ազգ.	1000 —		Տարբերութիւն հաշիւներու	195720
Պատուոյ մնացք	50 —	513827 45	Ընդհանուր ծախքեր, թերթ. տեսք և կոմիտէ	23712 95
			Ուղարկելի և թղթեր	3373 80
			Դրամանիշի պարտքեր և դրամագլուխ	1218 15
			Գրասենեակի պարտքեր	1941 90
			Տարեկան և մեքենայ	8003 35
			Ընդհանուր հաշիւներ	2636 25
			Խմբագրատան ծախքեր՝ էջադրիչներ, տարբեր տարբեր ծախքեր	199 —
			Ընդհանուր ծախքեր	7902 45
			Դրամի կորուստ (դրամագլուխ դեղջը)	4926 70
			Մաքուր ծախքեր	446 —
				538 75 435241 15
			Գումարը դրամ 31 դեկտ. 1906 թուականին	78586 75
		523393 90		523393 90

* Այս գումարէն 78,586 ռուբլի եւ 75 քոպէկ, ստացած ենք Խարբերդի Ա. Ա.-էն, անհաշիւ է։

Անոնց հաշիւները ամփոփուած է 1904, 1905, 1906 թուականներու հաշիւնեռու։ Այդ թուականներու հաշիւները տպագրած ենք գրքոյկներ

2.— ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ՇՐՋԱՆԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ

(Ներկայաց. Արեւմտ. Բիւրոյի կողմից)
(1905)

Ընկերներ,

1905ը կը մնայ ամենածանր թուականներից մինը հայ յեղափոխական կազմակերպութեան եւ ամբողջ հայութեան համար։ Մեր մի շարք կարեւոր ձեռնարկները, որ յաջողել էինք կազմակերպել չտեսնուած նիւթական զոհողութիւններով, չարաչար վիժեցին, եւ վերստին կազմակերպելու համար — եթէ միայն առաջիկայ Ընդհանուր Ժողովը կրկնէ նախորդի որոշումները — հարկաւոր կը լինեն դարձեալ տարիներ եւ թերեւս աւելի մեծ զոհողութիւններ։ — Այս է տխուր իրողութիւնը, որ մենք պէտք է խոստովանենք, առանց ենթարկուելու վհատութեան ու յոռետեսութեան։

Հ. Յ. Դաշնակցութեան ուշադրութիւնը կենտրոնացած էր, գլխաւորապէս, Վիշապ-Ոսկեհանքի (Յուցական Մարմնի)(1) եւ Կովկասի շրջանում։

Վիշապ – Ոսկեհանք

Ընդհանուր Ժողովից ընտրուած Յուցական Մարմինը մէկ էական նպատակ էր դրել — իրագործել այն մեծ ծրագիրը, որը երկար տարիներից ի վեր հայ եւ օտար յեղափոխական կազմակերպութեանց երազանքի առարկան էր...

Այդ ծրագրին կցուած էր Ոսկեհանքի ծրագիրը, որը պիտի լինէր ե՛ւ առաջինին մի տեսակ լրացուցիչ, ե՛ւ նպատակ պիտի ունենար — ալեկոծելով մեծ, վաճառաշահ ու կոսմոպոլիտ քաղաքի անդորրութիւնը, նոյնիսկ եւրոպական շահերին հարուածելով — պետութիւնների վճռական միջամտութիւն հրաւիրել այն դէպքում, երբ Վիշապի ձեռնարկը անգոր լինէր այդպիսի միջամտութիւն հրաւիրելու եւ միայն տեղի տար կոտորածների։

Ընդհանուր Ժողովը սկզբից արդէն դրել էր Յուցականի տրամադրութեան տակ պատկառելի գումար։

Յուցական Մարմինը եռանդով ու պատշաճ ձեռնհասութեամբ սկսեց իր աշխատանքը. Վիշապում նա տեղն ու տեղը ուսումնասիրեց ծրագրի իրագործման դժուարին պայմանները եւ կազմեց մանրամասն նախագիծ, որի համեմատ Դաշնակցութեան ուժերը միաժամանակ մի քանի ճանապարհներով պիտի անէին վերջին վճռական քայլը, գրեթէ կատարեալ վստահութեամբ՝ որ չպիտի վրիպէին։

Ճակատագիրը այլ կերպ անօրինեց — եւ մենք փոխանակ աւետելու հայութեան ու ամբողջ աշխարհին Դաշնակցութեան անզուգական ու պատմական յաղթանակը — անպատմելի կսկիծն ունեցանք ազգարարելու տխուր վիժումը։

Այդ սոսկալի ձախորդութեան առաջին չարագուշակ նշանները երեւացին դեռ անցեալ Մարտ ամսին, երբ Յուցականի անկուպական վարիչը եւ Հ. Յ. Դաշնակցութեան հոգեւոր պարագլուխը՝ Քրիստափոր Միքայէլեան ընկաւ Բուլղարիայում, ոումբի մի պատահարից, համարեա ձեռնարկի նախընթաց օրը... Նրա հետ միասին ընկաւ Վոսմը, որ պիտի լինէր հրամայական ծրագրի տաղանդաւոր իրագործողներից մին։

Հարուածը մեծ էր ամբողջ կազմակերպութեան եւ մասնաւորապէս Յուցականի համար։ Վիշապի խնդիրը բարդացաւ. յաջողութիւնը այլեւս չէինք ընդունում նախկին վստահութեամբ։ Այնուամենայնիւ ողջ մնացած անդամները որոշեցին շարունակել գործը։

Նոյն միջոցներում գումարուած Դաշնակցութեան Խորհուրդը սանկցիա տուեց այդ որոշման եւ ընկերները դիմեցին իրենց ձեռնարկին։

Այլ եւ այլ պատճառներով, որոնց քննութիւնը պատկանում է Դաշնակցութեան գերագոյն ատեանին, նշանակուած մի քանի ճանապարհներից մէկի վրայ միայն կանգ առաւ Վիշապի մարմինը, վստահ՝ որ այդ միջոցը միայնակ բաւական է՝ ցանկալի արդիւնքը ապահովելու համար։

Ձեռնարկը չկատարուեց ցանկալի ծաւալով եւ չհասաւ իր նպատակին, — դրա պատճառները կը մերկանան եւ կը քննուին Ընդհանուր Ժողովում։

Աւելորդ է երկար կանգ առնել նաեւ Ոսկեհանքի անյաջողութիւնների վրայ, որ պէտք է վերագրել Վիշապի դէպքին յաջորդող կառավարական խստութիւններին ու խուզարկութիւններին։ Համարեա բոլոր պայթ[ուցիկ] նիւթերը բռնուած են այնտեղ եւ բազմաթիւ անմասն հայեր տակաւին պահւում են բանտերում։ Գործող ընկերները բոլորն էլ ճողոպրել են։

Ինչպէս գիտենք, այդ ազէտի հետեւանքներից մին եղաւ մեր դժբախտ Պետրոսի կախաղան հանուիլը։

Վիշապում ընկերներից ոչ ոք չէ վտանգուած, եթէ չհաշուենք մէկ օտարականին։

Գործը կատարելապէս վիժած է Յուցականի գործունէութեան երկու վայրերումն էլ։

Մեծ Հայաստան

Մեծ Հայաստանում աչքի ընկնող մի բան չկայ արձանագրելու Դաշնակցութեան գործունէութեան առնակէտից։ Սասունի վերջին անցքերից եւ Անդրանիկի մեկնելուց ի վեր մեծ կռիւներ կամ կոտորածներ

տեղի չեն ունեցել, եթէ չհաշուենք Խարսի դէպքը։

Սասունի յայտնի ռազմիկներից մինը, Գէորգ Զաուշ, գտնում է Տարօնում եւ շարունակում է թէ՛ կազմակերպել եւ թէ նպաստներ բաժանել աղէտի զոհերին։

Ինչպէս դիտէք, մեր կազմակերպութեան կողմից, Ֆրանսական կառավարութեան միջոցով փոխադրուած ու բաշխուած է Տարօնի հայերին 35·000 ֆր. գումար։

Ցիշատակութեան արժանի է, անշուշտ, մեր ընկեր բժշկապետ Զաւրեանի միսսիան, որ մի քանի տասնեակ հազար ռուբլի հետն առնելով, Պետերբուրգում ստացած կարեւոր յանձնարարականներով եւ Կ. Պոլսի ռուսաց դեսպանի հովանաւորութեամբ կարողացաւ մտնել Թիւրքահայաստան եւ երկու ամիս շարունակ բժշկել ու նպաստներ բաժանել հայ կարօտեալներին։ Մեր ընկերների երեւալը այդպիսի անակնկալ միսսիայով սկսել էր փոքր ինչ կաղդուրել տանջուած, յուսակտուր ազգաբնակութիւնը։ Դժբախտաբար թիւրք կառավարութիւնը սկսեց խէթ աչքով նայել մեր խմբի գործունէութեան վրայ եւ չուտով հեռացրեց նրան. ռուսաց հովանաւորութիւնն էլ չօգնեց։ Միսսիան այցելել էր Էրզրում, Մուշ, Բիթլիս։

Վասպուրական

Ընդհանուր Ժողովի հրահանգած կենտրոնացման գործը չօչափելի քայլեր չարեց այդ վայրում եւ զարմանալի չէ։ Դաշնակցութեան Խորհուրդը, որի որոշումները կցւում են ներկայ տեղեկագրին, վճռեց ուժ տալ Վասպուրականում գործունէութեան եւ, Երկրի մէջ գտնուող ընկերներին նորերը աւելացնելով, կազմեց Վասպուրականի Կենտրոնական Կոմիտէ։ Այդ մարմինը, Անդրանիկի ղեկավարութեամբ, պիտի ձեռնարկէ գործի փոխադրութեան։

Վասպուրականում գործի կաղալու գլխաւոր պատճառներից մինն է՝ Անդրկովկասի վիճակը, որ անդրադառնում է այսօր մեր գործունէութեան բոլոր ճիւղաւորութիւնների վրայ, որ զբաղեցնում է նաեւ Պարսկաստանի ուժերը, միշտ աւելի եւ աւելի տարածելով հայ-մահմեդական ընդհարումների համաճարակ-սոսկումը։

Լեռնավայր

Դարձեալ ոչ մի կարեւոր, աչքի ընկնող գործ։ Ընդհանուր պատճառներից զատ՝ կայ զուտ կազմակերպական պատճառ։ Մինչեւ օրս մենք չունինք in corpore Լեռնավայրի Պատասխ. Մարմին։ Պ. Կ. Աղասէր եւ Կարիճ հրաժարուած լինելով՝ մեր երկու ընկերները՝ Անտոն և Վարդան(2) որոշ ժամանակ միասին ընթացք տուին տեղում գտնուող ուժերին ու նախապատրաստական գործունէութեանը։ Նրանք նախ եւ առաջ զբաղուեցին զտման գործով, — հեռացրին ասպարէզից աւելորդ ու վնասակար անհատներին։ Ապա այցելեցին մի շարք հայաբնակ վայրեր — Ծոց, Կարաւան, Հովիտ, Խոր Վիրապ(3) (հեռուն չկարողացան գնալ)։ Անտոնի դիրքը — իբրեւ մի տեսակ ռուսական չինովնիկի — թոյլ չի տալիս նրան չփուել հայ ազգաբնակութեան լայն խաւերի հետ. նա կարողացել է, այնուամենայնիւ, մերձենալ մտաւորական տարրին, դրաւել է (գլխաւորապէս) մի խումբ թարմ ինտելիգենտ եւ արդէն ուսումնաւարտ ուժեր, որոնք հաստատուած են Լեռնավայրի այլեւայլ տեղերում։

Վարդանը մեծամեծ դժուարութիւններով կարողացաւ անել իր պտոյտը. նա նոյնպէս անկարող եղաւ, իբրեւ ոչ-թիւրքահայ, չփման եւ յարաբերութեան մէջ մտնել հայ ապստամբութեան հետ։ Ի վերջոյ Վարդանը մեկնեց Լեռնավայրի շրջանից, գալով այն եզրակացութեան՝ որ ղեկավարող մարմնի անդամները անպայման տեղացի պիտի լինին, այլապէս մարմինը դատապարտուած կը լինի անգործութեան։

Վարդանը անցել էր արտասահման՝ Լեռնավայրի համար ձեռնհաս թիւրքահայ ուժեր գտնելու համար եւ ուրիշ կազմակերպական յանձնարարութիւններով. բայց կովկասեան օրաւուր ծանրացող տագնապը կանչեց նրան եւ նա մի ամիս սրանից առաջ ղեկավարում էր Շուշու նշանաւոր կռիւը։

Լեռնավայրի Պատասխանատու Մարմինը մնում է, այդպիսով, նորից կազմակերպել, եւ այդ նոյնպէս կը թողնուի Ընդհանուր Ժողովին, որը պիտի գումարուի առաջիկայ տարեմուտին։

Կովկաս

Ցտեսնուած, տագնապալի, յուսահատական այս շրջանում՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը, կարելի է ասել առանց չափազանցութեան, միակ նեցուկն էր թուրք խուժանից ահաբեկուած հայ ազգաբնակութեան համար։ Ադէտները, ամբողջ Անդրկովկասում, աներեւակայելի ծաւալ պիտի առնէին փետրուարեան չարաշուք օրերից ի վեր, եթէ Դաշնակցութեան զինուած խմբերը հրապարակ չգային իրենց սովորական անձնուրացութեամբ եւ հին, փորձուած զինուորների ղեկավարութեամբ։ Զգիտենք, թէ ինչ կը լինէր անդէն ժողովրդի վիճակը՝ տասնեակ հազարաւոր ոտից ցգլուխ զինուած արիւնարբու խուժանների դիմաց, որոնց ազատ ասպարէզ էր տուել ռուս կառավարութիւնը։ Ցամենայն դէպս, պատկերը շատ աւելի ողբերգական կը լինէր, քան Տաճկահայաստանի աղէտների միջոցին, ուր դէթ եւրոպական միջամտութեան յոյսը կար։

Բաղում, Փետրուարի 6-9ին, թուրքական առաջին յարձակման ժամանակ, մեր փոքրաթիւ խմբերը (ստուարանալու միջոց չէր տուել ոստիկանութիւնը) Դումանի ղեկավարութեամբ յաջողեցին փրկել քաղաքը մի մեծ անպատուութիւնից, — հայոց մասսային ջարդից ու աւերածից։

Զնայած որ մերոնք յանկարծակիի էին եկած եւ կարողացան միջամտել միայն երրորդ օրը, այն էլ փոքր ուժերով, — այնուամենայնիւ մեծ ջարդ տուին թուրքերին եւ թելադրեցին հաշտութիւնը։ Իշխան Նակաշիձէ, այդ առաջին ջարդի կազմակերպողը, տեսնելով ենթարկուեց մերոնց ձեռքով մի այնպիսի յաջողութեամբ, որ հիացրեց ամբողջ երկիրը։ Ամբողջ հայկական Բաղուն, հայ հասարակութեան բոլոր խաւերը երախտագիտութեան խօսքեր էին ուղղում Դաշնակցութեան եւ Դումանին։ Մեր կազմակերպութեան հմայքը բարձրացաւ նոյնիսկ օտար հասարակութիւնների աչքում։ Նա ճանաչուեց որպէս հայկական ինքնապաշտպանութեան զօրավիդ։ Նա մենակ էր փետրուարեան ադէտի դաշտում, — նա մենակ մնաց եւ բոլոր յետագայ անցքերի միջոցին։

Երեւանի կատաղի ընդհարման ժամանակ Դաշնակցութեան խաղացած դերը ոչ ոքի համար գաղտնիք չէ։ Հայոց յարձակումը այնքան ազդու էր, ռումբերի սարսափը այնքան ուժեղ, որ մեր թշնամիները — թուրքերն ու կառավարութիւնը — իսկոյն վերջ դրին ընդհարման։

Նոյնպիսի ուժե՛ղ դիմադրութեան չնորհիւ էր, մի երկու շաբաթ սրանից առաջ, որ նոյն Երեւանում ծագած ընդհարումը մի քանի ժամից դադար առաւ։

Երեւանի գաւառում մի շարք թրքական գիւղերակն ընդ ականի սիստեմով՝ սարսափելի ջարդ ու աւերում կրեցին մերոնց յարձակումներով։

Միմիայն Նախիջեւանի շրջանում, ուր թշնամին շատ ստուար ու ուժեղ է, հայութիւնը սակաւաթիւ եւ մեր կազմակերպութիւնը՝ թոյլ — խիստ զգալի հարուածներ ունեցանք։

Ամէն տեղ մեր մարտական խումբերը մի մի կորիզներ էին, որոնց շուրջը համախմբւում էր, տագնապի րոպէներին, հայ երիտասարդութիւնը։

Դաշնակցութիւնը վարեց Շուշիի եւ գաւառի կռիւները։ Դաշնակցութիւնը վերջին ամիսների ընթացքում պաշտպանում էր հայ ազգաբնակութիւնը նաեւ ընդարձակ Զանգեզուրում, ուր, ի միջի այլոց, գործում է Սասունի Մուրատը (Անդրանիկի ընկերներից) իր խմբով։ Մեր խմբերը այսօր մեծ ջարդ ու աւերած են անում թրքական գիւղերում եւ Ղարաբաղի մէջ, — իբրեւ պատասխան, ի հարկէ, թուրքերի նախայարձակման։

Ականաւոր զինուորներից այսօր գործում են՝ Դումանը — Երեւանեան շրջանում, Վարդանը — Ղարաբաղում, Մուրատը — Զանգեզուրում։ Այդ շարքին աւելացել է վերջերս (Ղարաբաղի շրջանում) Համազասպը, որ արդէն ժողովրդական հերոսի հռչակ է հանել։

Դաշնակցութիւնը, վերջապէս, իբրեւ պաշտպանող ու կռուող տարր՝ դարձեալ միայնակ հրապարակի վրայ էր նաեւ Բաղուի վերջին մեծ ընդհարումի ժամանակ։

Բոլոր միւս կուսակցութիւնները, դժբախտաբար, փոխանակ ինքնապաշտպանութեան հրատապ խնդրով զբաղուելու, մեծ մասամբ միայն ձգտում են վնասել Դաշնակցութեան վարկին ու առաջադիմութեանը։

Մեր կազմակերպութիւնը իր վրայ է առել նաեւ ժողովուրդը զինելու գործը, որ, ինչպէս դիտէք, շաղկապուած է մեծամեծ խոչընդոտների ու զոհողութիւնների հետ։ Հայ ժողովուրդի դրութիւնը զինաւորութեան տեսակէտից ընդհանրապէս ողբալի է։ Ազգաբնակութիւնը կամաց-կամաց սովորում է զինուիլ ինքնաբերաբար։ Մեծ յոյս կայ, որ հայ տարրի պաշտպանողական ու յարձակողական տակտիկի դիմաց, խաւար ուժերը չուտով վերջնապէս կը դադրեցնեն իրենց աւերիչ գործունէութիւնը եւ երկիրը կը մտնէ վերստին խաղաղ ու նորմալ զարգացման շրջանը։ Դրա նշանները երեւում են արդէն։ Կառավարութիւնը, թերեւս ակամայ, տեղ-տեղ սկսում է պատժել թուրքերին։

Մեր կազմակերպութիւնը ներկայումս անսովոր ծաւալ է ընդունել թէ՛ քաղաքներում եւ թէ գաւառներում։ Նրա մարտական ընթացքի շնորհիւ էր, որ վերաղարձրին մեր գաղթականներն ու եկեղեցական կալուածները... Նրա մասնակցութիւնը անխուսափելիօրէն անհրաժեշտ է դարձել մեր ազգային-հասարակական գործունէութեան բոլոր ճիւղերում։ Նա հիւսուել է հայ ազգաբնակութեան լայն խաւերի հետ եւ ոչ մի հալածանք չէ կարող այլեւս արմատախիլ անել նրան։

Խաղաղ ձեռնարկներ

1) Զաւրեանի ձեռնարկի հետ՝ պէտք է յիշատակել ե՛ւ կաթողիկոսական յայտնի միսսիայի գործը, որ նոյնպէս գլուխ եկաւ Դաշնակցութեան թելադրութեամբ ու նրա միջոցներով։ Նպատակն էր՝ կաթողիկոսի անունից դիմումներ անել Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններին։ Միսսիան՝ Պարիզի մեր ներկայացուցչի հետ սկսեց իր դիմումները, բայց յաջողութիւն չունեցաւ։ Նա սիրալիր ընդունելութիւն գտաւ միայն ֆրանսիական ու ամերիկեան հանրապետութիւնների նախագահներից։

2) *Վերջերս, Արեւմտեան Բիւրոյի նախաձեռնութեամբ գումարուեց Պարիզում ականաւոր հայասէր եւրոպացիների ու ամերիկացիների մի խորհրդաժողով, որին մասնակից էր ե՛ւ նախկին մինիստր Բերտրը։ Այդ ժողովը որոշեց դիմում անել նախագահ Ռուզվելտին, որ սա իր կողմից հոգայ հայկական խնդիրը յարուցանելու Լա-Հէյի առաջիկայ համաժողովում։*

3) *Դաշնակցութեան նախաձեռնութեամբ* Pro Armenia*ի խմբագիր Պիէռ Քիյար ներկայացաւ Լիւցեռնի Խաղաղութեան Միջազգային Համաժողովին եւ պաշտպանեց Թիւրքահայ ու կովկասահայ դատը, որոնց առթիւ ընդունուեցին միաձայն որոշումներ։*

4) *Դաշնակցութեան Խորհուրդը որոշած լինելով ձեռնարկել Լոնտոնում անգլերէն* Pro Armenia*ի հրատարակութեան՝ Արեւմտեան Բիւրոն ուղարկեց ընկերներից մէկին Լոնտոն, տեղն ու տեղը ուսումնասիրելու հրատարակութեան պայմանները եւ թերեւս մինչեւ 1½ ամիս թերթը սկսի լոյս տեսնել։*

5) *Արեւմտեան Բիւրոն թղթակցի պաշտօնով կովկաս ղրկեց պարիզեան ժուրնալիստ Գաբ. Բերտրանին, որը պիտի ճանապարհորդէ կազմակերպութեան հաշուով, պիտի ուսումնասիրէ աղէտի վայրերը, եւրոպական մամուլին նիւթ մատակարարելու համար։ Պ. Բերտրանին մեզ յանձնարարել էր մեր բարեկամ Ժօէսը։ Նա արդէն տպագրում է իր հեռագիրներն ու թղթակցութիւնները պարիզեան տարածուած «Le Journal» թերթին մէջ, եւ հետագայում պիտի լոյս ընծայէ Կովկասեան Հայաստանի մասին մի ամփոփ հատոր, ուր անաչառօրէն պարզուած կը լինեն Եւրոպայի առջեւ ներկայ հսկայական աղէտի պատճառները։*

6) *Արեւմտեան Բիւրոն ուղարկել է, ուսումնասիրութեան եւ օգնութեան նպատակով, Կովկասի աղէտավայրերը 8 հոգի ուսանող եւ ուսանողուհի՝ եւրոպական այլեւայլ համալսարաններից։*

7) *Դաշնակցութեան Խորհուրդից հրահանգուած՝ Բիւրոն որոշեց ուժ տալ դաշնակցական մամուլին եւ ներկայ Հոկտեմբերից՝ «Դրօշակ»ը պիտի հրատարակուի ամիսը 2 անգամ։ Դա [համա]պատասխան է կազմակերպութեան արագ ծաւալման եւ միշտ աւելի եւ աւելի աճող պահանջներին։*

Բիւրոն ներկայ տարուայ ընթացքում հրատարակեց ե՛ւ մի շարք գրքեր ու բրոշիւրներ՝ հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն եւ թիւրքերէն լեզուներով։ Բացի գրականութեան ու պրոպագանդի գործից՝ Բիւրոն ներկայումս կատարում է, բաւական խոշոր չափով, նաեւ արտասահմանից զէնք գնելու եւ առաքելու գործը։

Մասնաւորապէս Վասպուրականի համար ձեռնարկուած է զէնքի գնման, որին յատկացրած է 120,000 ֆրանքի չափ գումար։ Դրա մի մասը — մօտ 25,000 — ընկնելու է Ամերիկայի կազմակերպութեան վրայ։

(Կնիք Արեւմտեան Բիւրոյի)

---

(1) Վիշապը Կ. Պոլիսն է՝ յատկապէս Սուլթանի ահաբեկման ձեռնարկի կապակցութեամբ. Ոսկեհանքը՝ Իզմիրը։

(2) Սիմոն Զաւարեան եւ Խանասորի Վարդանը, որոնք 3րդ Ընդհանուր Ժողովին ընտրուած էին անդամ Լեռնավայրի (Կիլիկիա) Պատասխանատու Մարմնին։

(3) Կիլիկեան կուսակցական տեղանուններ, հաւանօրէն՝ Պէյրութ (Ծոց), Ալեքսանտրէթ (Կարաւան), Այնթապ (Հովիտ) եւ Ատանա (Խոր Վիրապ)։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ 1905 Թ. ԽՈՐՀՐԴԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ

(շարունակութիւն Արեւմտ. Բիւրոյի տեղեկագրի)

Տակտիկ-կենտրոնացման հարց

ա) *Ի նկատի առնելով որ, եւրոպական ազդու միջամտութիւն առաջ բերելու եւ Հայկական Հարցը լուծելու համար անհրաժեշտ է երկարատեւ, ուժեղ դիմադրութիւն, իսկ այդպիսի դիմադրութիւնը հնարաւոր է միմիայն լուրջ պատրաստութիւնից յետոյ,*

Խորհուրդը որոշեց՝

Խոյս տալով ամենատեսակ կանխաժամ ու վտանգող որեւէ ընդհարումից, զգուշաւոր, լիակատար եւ իրական պատրաստութեամբ հայ կռուող ազգաբնակութեան մի զգալի մասը զէնքով դիմադրելու կարողութեան մէջ դնելուց յետոյ՝ ընդհանուր շարժում առաջ բերել Վասպուրականում եւ Լեռնավայրում, ամէն կերպ աշխատելով յիշեալ երկու վայրերի շարժումները համաձայնեցնել իրար հետ։

բ) *Թիւրքիոյ եւ ուրիշ որեւէ պետութեան միջեւ լինելիք պատերազմի դէպքում, փութացնել շարժումը Լեռնավայրում ու Վասպուրականում՝ Հայկական Հարցը առաջ մղելու համար, նախապէս համաձայնութիւն կայացնելով երկու Բիւրոներու եւ նոյն վայրերի Պատասխանատու Մարմինների հետ։*

գ) *Նկատելով,*

1) *որ Սեբաստիոյ նահանգը, աշխարհագրական եւ տեղագրական տեսակէտով, անտառների ու լեռների առատութեամբ առանձին յարմարութիւններ է ներկայացնում ռազմական ձեռնարկների համար,*

2) *որ այդ նահանգը հայկական վեց նահանգներից մէկն է եւ ամէնից աւելի մօտ է գտնւում Եւրոպային, հետեւապէս այնտեղի անցքերը աւելի դիւրութեամբ կը դառնան քաղաքական աշխարհի սեփականութիւն,*

3) *որ ծովափնեայ դիրքը եւ ծովային յարաբերութիւնների դիւրութիւնը աւելի հնարաւոր են դարձնում ընդհանրապէս կապ պահպանելը եւ մասնաւորապէս անհրաժեշտ մարդկանց եւ մթերքների ներմուծումը,*

4) *որ այդ նահանգում կան զուտ հայաբնակ վայրեր, որոնք անցեալում անմասն չեն մնացել յեղափոխական պրոպագանդի գործում եւ, ազատ մնալով յայտնի հարստահարութիւններից ու կոտորածներից, այժմ էլ յուսատու տրամադրութիւն ունին,*

5) *որ այնտեղ հայաբնակ վայրերի շուրջը չկան այն բարբարոս քրտական ցեղերը, որոնք այնքան վտանգաւոր են հանդիսանում յեղափոխական գործին, հայ երկրի միւս վայրերում,*

6) *որ վերջապէս ապագայ որեւէ շարժման ժամանակ որեւէ կէտում՝ ցանկալի է, որ հայաբնակ ուրիշ վայրեր եւս արձագանգ տան, թշնամու ուժերը ջլատելու եւ աւելի մեծ տպաւորութիւն թողնելու համար քաղաքական աշխարհում,*

Խորհուրդը որոշում է՝

Սեբաստիոյ նահանգը ընդունելով իբրեւ ապագայ շարժման վայր, առանձին ուշադրութիւն դարձնել նրա վրայ եւ ուղարկել մէկ կամ մի քանի ձեռնհաս ընկերներ, յեղափոխական տեսակէտից ուսումնասիրելու, ինչպէս եւ անհրաժեշտ կազմակերպութիւններ առաջ բերելու՝ յարմարաւոր կէտերում։

դ) *Մակեդոնացւոց հետ միացած ձեռնարկներ։—*

Նկատելով, որ մակեդոնական հարցը արդէն զարկ է ստացել չնորհիւ Մակեդոնիայի շարժման, մինչդեռ մեր հարցը աւելի պակաս հմայք ունի այսօր, եւ նկատելով որ միացած — ընդհանուր ձեռնարկները կարող են նսեմացնել մեր սեփական դատը, — Խորհուրդը որոշեց մերժել այդպիսի ձեռնարկները։

5) *Արտակարգ Ընդհ. Ժողով հրաւիրելու հարց*(1)

Ի նկատի ունենալով Կովկասի դէպքերի արտակարգ բնաւորութիւնը, Խորհուրդի մշակած նախագծի վաւերացման կարեւորութիւնը եւ Տաճկահայաստանի վերաբերեալ հաւանական փոփոխութիւնը, Խորհուրդը որոշեց՝ արտակարգ Ընդհանուր Ժողով հրաւիրել 1905 Թուականի վերջերում։

Կովկասահայ խնդիր(2)

6) *Նկատելով՝*

1) *որ վերջին Ընդհանուր Ժողովից յետոյ Ռուսաստանի եւ մասնաւորապէս Կովկասի յեղափոխական շարժումները ստացել են անսպասելի լայն ծաւալ,*

2) *որ ռուսական բռնապետութիւնը արտաքին թշնամու եւ յեղափոխական ու ընդդիմադիր տարրերի հարուածների տակ զգալապէս թուլացել է,*

3) *որ համայն Ռուսաստանի քաղաքական փոփոխութիւնների սկզբում՝ Կովկասը պէտք է բարձրացնէ իր ձայնը,*

4) *որ ներկայ պատմական բոպէի ստիպողականութիւնը թոյլ չէ տալիս սպասել նոր Ընդհանուր Ժողովին՝ Կովկասեան գործունէութեան ծրագիրը մշակելու եւ հաստատելու համար,*

5) *որ բացի այդ, Կովկասեան գործունէութեան որոշակի ծրագիրը անհրաժեշտ է կռուի ներկայ պայմաններում՝ համաձայնութեան դալու համար միւս գործող կուսակցութիւնների հետ,*

Խորհուրդը որոշեց՝ Կովկասեան շարժման հարցում ինքնապաշտպանութեան *չրջանից անցնել բուն* յեղափոխական *գործունէութեան, մշակել ծրագիր համաձայն Կովկասեան Ռայոնական Ժողովում արտայայտուած տրամադրութեան եւ ուղարկել դաշնակցական Կովկասեան մարմիններին՝ ժամանակաւորապէս ղեկավարուելու այդ ծրագրով, թողնելով նրա վերջնական հաստատութիւնը առաջիկայ Ընդհանուր Ժողովին։*

Վարդոյի հարց

Խորհուրդը լսելով Բալկանեան Կ. Կոմիտէի [որոշումը ?] Պ. Վարդոյի վերաբերմամբ՝ նոյն Կոմիտէի կազմած տեղեկագրի հետ,

Որոշեց՝

Գտնելով Բալկանեան Կենտրոնական Կոմիտէի եզրակացութիւնը կատարեալապէս արդարացի, յայտնել Պ. Վարդոյին, որ նա ոչ մի իրաւունք չունի իր մօտ պահել Դաշնակցութեան պատկանող դումարը եւ պահանջել նրանից անմիջապէս Արեւմտեան Բիւրոյին հասցնել այդ դումարը։

(Կնիք Արեւմտեան Բիւրոյի)

---

(1) Թիւերը՝ 5 (Արտակարգ Ընդհ. Ժողով) եւ 6 (Կովկասեան խնդիր)՝ ձգած են փոփոխ. աւելի հաւանական է — ընդհանուր կարգէն դատելով — որ ըլլան ե. եւ զ.

(2) Այս բաժինը նոյնութեամբ տրուած է «Նախագիծ Կովկասեան գործունէութեան» գրքոյկին իբրեւ նախաբան (տե՛ս ՆԻՒԹԵՐ, Բ. հատոր, էջ 231)։ Խորհուրդի որոշումները, ընդհանրապէս, երբեմն խմբագրական փոքր տարբերութիւններով ու յաւելեալ մանրամասնութիւններով, կը գտնենք ՆԻՒԹԵՐՈՒ Բ. հատորին մէջ, էջ 227–230։

3) ՆԱՄԱԿՆԵՐ

Ինչպէս ըսած ենք ներկայ բաժնի ընդհանուր ներածականին մէջ, Արեւմտեան Բիւրոյին ուղղուած (կամ Ժընեւ մնացած ընկերներուն կողմէ Ընդհանուր Ժողովի դիւանին զրկուած) կարգ մը գրութիւններ տեղ գտած են արդէն *դիւանական Թուղթերուն* մէջ (բաժին I)· ուրիշներ՝ փոխանցուած են Ընդհանուր Ժողովին ուղղուած անհատական նամակներու, դիմումներու եւ առաջարկներու թղթածրարին եւ պիտի տրուին իրենց կարգին: Արեւմտեան Բիւրոյին հասցէագրուած զանազան նամակներ կը գտնենք նաեւ Եգիպտոսի եւ այլ շրջաններու թղթածրարներուն մէջ:

«Արեւմտեան Բիւրո» թղթածրարին մէջ կը մնան երկու նամակներ: Անոնցմէ երկրորդը (մէկ փոքր էջ) 28 Յունուար 1906 թուակիր, Խաչատուր Մալումեանի (Ակնունի) ուղղուած դիմում մըն է, Գրիւֆէլէն՝ Աբրահամ Տէր Զաքարեանէ, որ տրամադրութիւն կը յայտնէ «նուիրուելու յեղափոխական գործին» եւ «գործելու Տանկահայաստանում կամ Պոլսում»: Առաջինը, համեմատաբար աւելի շահեկան՝ իբրեւ ժամանակաշրջանի պահպանողական մտածողութեան արտայայտութիւն, կու տանք ստորեւ: 1904 Յունիսին գրուած եւ 28 փոքր էջեր հաշուող այդ նամակը անստորագիր է ու հաւանօրէն անաւարտ· գրուած է երկու յստակօրէն տարբեր ձեռագիրներով, ինչ որ ենթադրել կու տայ որ նամակի մը յետագայ արտագրութիւնը կրնայ ըլլալ: Թէ որո՛ւ է ուղղուած՝ մեզի կը մնայ անծանօթ, բայց բովանդակութիւնը կրնայ ենթադրել տալ որ քահանայ մըն է գրողը:

30 Յունիս 1904 թ·, Փարիզ

Ազնի՛ւ բարեկամ,

Այսօր ուղիղ 9 ամիս է, որ ես ճանապարհորդութեան մէջ եմ: Ես եղայ 2 ամիս Կ· Պոլսում, 2 ամսից աւելի Երուսաղէմում, եւ մի ամսականի, գուցէ եւ աւելի՝ մնացի Ալէքսանդրիայում ու Գահիրէում, անցայ Իտալիա, եղայ Բերլին, Ժընեւ, Մարսէյլ եւ այժմ Փարիզ: Ամենայն տեղ միջոց ունեցայ տեսնուելու մեր հոգեւորական թէ աշխարհիկ, գրական թէ պետական հին ու նոր գործիչների հետ: Ուրախ եմ յայտնելու, որ նոյնիսկ օտար պետութեանց մէջ կայ սիրտ՝ հայ ազգութեան համար բաբախող: Բայց սիրտը բաւական չէ: Նախ այսօր մեր ազգային գործերի ընդհանուր ղեկավարութիւնը անցած է աւելի յափշտակուող, աւելի ոգեւորուող դասակարգի ձեռքը: Փորձառուները, հմուտները հեռացուած են ասպարէզից: Երիտասարդ գործիչները, բաժանուած միմեանց անհաշտ բանակների, ընթանում են միմեանց ներհակ եւ առաջնորդւում են օտարների ցուցմունքներով: Մեր կացութիւնը աւելի լուրջ է, քան մենք կարծում ենք:

Զարմանալի համերաշխութեամբ՝ թէ՛ մեր ասպարէզից քաշուած–մեկուսացած գործիչները, թէ՛ ասպարէզի մէջ եղող փորձառու եւ հմուտ ազգայինները եւ թէ օտար պետութեանց մէջ բարձր պաշտօն վարողները պնդում են, որ մեր ներկայ ընթացքը տանում է մեզ [դէպի] անդառնալի կորուստ, որ մեզ անհրաժեշտ է փութալ՝ ունենալ մի կենտրոնական մարմին եւ սընտուկ, մի լուրջ կազմակերպութիւն, որ իր ձեռքն առնի գործերի ղեկավարութիւնը· ապա [թէ ոչ] ուշ կը լինի: Եթէ մի ակնարկ ձգենք մեր ոչ հեռու անցեալի վերայ, մենք կը տեսնենք մեր ազգի սոսկալի նուազումն ու տկարանալն այնտեղ՝ ուր մեր ապագայի յոյսերն էին: Տաճկահայը թուլացել է եւ դատարկւում է: Զէյթունը դառը փորձից ու ծանր կորուստներից խրատուած՝ իր դռները փակել է դրսեցիների առաջ եւ դարձել է անհաւատ դէպի դրացիները: Սասունը ընկուեց: Թուրքը նորանոր հրահանգներ, քաջալերութիւններ է ստանում երկրորդ եւ ահեղ կոտորած առաջ բերելու, եւ այս անգամ կոտորածից փախչելու համար ամէն դուռներ զոցուած են հայի առաջ: Ամենայն մի զինաշարժում երկրի մէջ, ամենայն մի փոխադրուող զէնքերի ու մարդկանց (?) թուի չափազանցուած բարձրագոչ բեկլամ՝ յեղափոխական կէտերի մէջ, ամենայն մի միտինգի մէջ արձակուած սլաք մեծ մարդասպանի դէմ, աւելացնում են ընդհանուր կոտորածի երկիւղը: Այսպէս էր պնդում մի հայ բարձրաստիճան եւ դիպլոմատ անձ: Թուրքը պիտի մեռնի: Նա գոյութեան իրաւունք էլ չունի, որովհետեւ ազգ չէ: Նա ոչ Թուրք է, ոչ տաճիկ է, ոչ օսմանցի է· բոլոր անուններն էլ սուտ են: Նա հայրենիք չունի, հող, ծննդավայր չունի: Նա միայն խլամ է: Տիրել է փոքր Ասիային, որովհետեւ Փոքր Ասիան եղել է տկարացած եւ պիտի տեւի այնքան, մինչեւ որ բո՛ւն երկրային հասնի· այս է բնական ճանապարհը մէկի անկման, միւսի վերակենդանութեան: Երկրի հարազատ զաւակը, քաղաքակրթութեան ձգտող ազգը, բարոյական անհամեմատ բարձր եւ առաւելութիւններ ունեցող ցեղը՝ հայն է: Նա պիտի վերակազմուի եւ զօրանայ զիտութեան քաղաքակրթութեամբ, մինչեւ տիրանայ(?): Ղազարոսի յարութիւն առնելը շատ աւելի դիւրին է եւ հաւատալի, քան թէ կուրացածների եւ մոլեռանդների լոյս ճանաչելը, որքան եւ այդ լոյսը ծակի նըրանց աչքը: Հայը իրաւունք չունի չհասկանալու այս ամենատարրական ճշմարտութիւնը, որ իր ազգային գոյութիւնը Թուրքի իշխանութեան ներքոյ ապահովութի՛ւն ունի· այո՛, չարքաշ, զրկուած, նեղուած մի գոյութիւն, բայց գոյութիւն՝ որ իր մէջ ունի վերակենդանութեան բացարձակ առողջ սաղմերը: Հայը պէտք է ճանաչի իրեն տիրողի հոգեբանութիւնը· եւ մեր հայրերը շատ լաւ են ճանաչել այդ եւ լաւ էլ ընթացք էին բռնել· գտել էին ուղիղ ճամբան, բայց օտար չարամտութիւնը եկաւ բոյն դրեց մեր երեւակայութեան եւ տղայամտութեան մէջ եւ մեզ հանեց մեր պատմական ուղիղ ճանապարհից· այսօր մեր ձեռքով քանդում ենք այն, որի գոյութիւնը մեզ համար անհրաժեշտ է· քանդում ենք եւ կարող ենք քանդել եւ կը քանդենք, այլ բնա՛ւ, բնա՛ւ հնարաւոր չէ որ մենք

կարողանանք փոխարէնը չինել մեր ցանկացածը, որովհետեւ ոչ մի եւ ոչ մի ատաղձ, քար, կիր, շաղախ կամ փայտ ունինք պատրաստած այդ նոր շինելիքի համար: Բայց կը պայ մեր քանդումի բացած ճանապարհով այդ նոր շինողը եւ իր շինելիքը կը բարձրացրնէ, մեր ազգային գոյութիւնը յաւիտեան Թաղելով այդ իր շէնքի տակ: Սա կը լինի մեր արդար հատուցումը: Մեր անհեռատեսութեան, մեր պատմական կոչումն ու ընթացքը չճանաչելու հետեւանքը:

Եւրոպական դիպլոմատիայի մէջ Թուրքի անկման ընթացքն այդպէս որոշուած ու ճանաչուած է: Թուրքիան բնա՞ւ չի բաժանուելու տիրութիւնների մէջ· սա կարելի բան չէ: Բայց Թուրքիան կարող է յարուցուող յուզումները, խռովութիւնները խաղաղեցնելու պատրուակով առնուիլ, նուաճուիլ հզօր դրացու կողմից: Սա շատ հաւանական է եւ, Եւրոպայի համար, շարունակ մտահոգութեան խնդիր: Սա կը լինի Թուրքիայի անկման փութացնելու անբնական(?) պատճառը: Ենթադրել թէ Եւրոպան գործողութիւնը կատարուելուց յետոյ միջոցների կը դիմի՝ հեռացնելու նորեկին, դրա համար պէտք է ընդունել համաշխարհային կամ ընդհանուր եւրոպական պատերազմ հրատարակելու եւ կամ միապետութիւնների կողմից նոյն պատրուակներով դրաւած հողերի հաշիւը մէջտեղ հանելու հնարաւորութիւնը: Ցաւում եմ շատ, որ ստիպուած եմ իմ նամակի սուղ էջերին մէջ համառօտակի դրելու այս, ինչ որ երկար տեսակցութեան ու խօսակցութեան կարեւորագոյն նիւթ է:

Ամէն կողմից լսածներս, տեսածներս, ստացածս խնդիրները, յորդորները, մեր կացութեան պարագաները խստիւ պահանջում են անյետաձգելի կերպով ձեռնարկել·

Ա·– Եւրոպայի մէջ մի զօրեղ կազմակերպութիւն առաջ բերել, դլուխ ունենալով պաշտօնական մի հովիւ, — առաջնորդ, պատրիարք, — որ լինի ու ներկայացնի հայ ազգը ի պաշտօնէ, որ բաց ճանապարհ ունենայ բարձրագոյն պաշտօնեաներին տեսնելու, խօսելու անմիջապէս: Այս Եւրոպայի, Ամերիկայի եւ Եգիպտոսի հայ պատրիարքը կ՚ունենայ Խորհուրդ՝ բաղկացած բանիբուն անձերից, եւ նրանց այս իրաւացու հսկողութեան ներքոյ՝ ազգային սնտուկը, ուր կը կենտրոնանան կտակաւանդաց նուիրած նպաստներն ու նուէրները, եւ ուսկից կը հոգացուին ազգի ընդհանուր պէտքերը: Այս մարմինը պէտք է ունենայ գործունէութեան հիմնական ծրագիր՝ բուն երկրի մէջ, հայ ազգաբնակութիւնը զօրացնելու կուլտուրական ճանապարհով: Պէտք է այս կազմակերպութիւնը ունենայ յեղափոխական(?) գոյն ու ընթացք: Եւրոպայի ուսանողութիւնը համախմբի գրական աշխատանքով՝ գործնական միջոցներով (այսինքն ժողովներ, դասախօսութիւններ, հրատարակութիւններ եւայլն) ազգային հոգի, սէր, ձգտում առաջ բերելու: Մի լուրջ, անկողմնակալ եւ արդարադատ մամուլ ունենալ, հայութիւնը դրական միջոցով ծանօթացնելու Եւրոպային: Մայր երկրի մէջ դպրոցներ, որբանոցներ, արհեստանոցներ, վանքեր պահել, զարգացնել ընտանեկան կենաց մաքրութիւնն ու բարոյականութիւնը· քարոզներ, յորդորներ առատօրէն բաշխել եւայլն: Եւ այս ամէնը՝ երկրի տիրող օրինաց պահանջների ու թոյլտուութեանց սահմաններում: Ընդունուած կտակները սրբութեամբ կատարել: Այսպիսի մի առաջադրանքի(?) յարւում էր Իզմիրլեան, որ սպասուած սրտոտութիւնը չունեցաւ: Այժմ խօսւում է մի այլ անձի համար, որից աւելի արժանաւորը չունինք այսօր:

Բ·– Մեր յեղափոխական կուսակցութիւնները — դլխաւորաբար (դրօշակեան) դաշնակցական, հին հնչակեան, նոր հնչակեան (որ Ամերիկայում ու Կիլիկիայում բաւական զօրեղ են) միմեանցից խռովելով միմեանց կրծում եւ զործը քայքայում են: Իրանց ոչ պաշտօնական լրագիրները նուիրած են միմեանց ցեխոտելով: Այնպէս որ, եթէ կուսակցութիւնները մի կողմը դնէք եւ դատէք այդ թերթերի հրապարակային վկայութեամբ, կը դաք այն եզրակացութեան, որ ամէնքն էլ զող են, աւազակ են, դաւաճան են, մատնիչ են: Երանի միայն բաւականանային խօսքով· բուն երկրում ու բո՛ւն բոլէին զործում են միմեանց ներհակ: Պէտք է բոլոր դրամ վճարողները կամ ազդեցիկները պահանջ դնեն մի միջնորդ դատարան կազմելու, ամէն խմբի կողմից ընտրուած մի մի կամ երկու երկու ներկայացուցիչներից բաղկացած: Այս դատարանի պաշտօնը պիտի լինի բոլոր կուսակցութեանց մէջ տեղի ունեցած զժտութիւնները, բողոքները, զեղծումները քննելու եւ վճիռ արձակելու, եւ բոլոր կուսակցութիւնների ներքին ընթացքից ծրագիրն իմանալով՝ իւրաքանչիւրին իր ճիւղին, իր բաժնին համաձայն ցուցմունքներ անելու, որ կեանքի մէջ ոչ միայն իրար չխանգարեն, այլեւ նպաստեն: Դրանց միութիւնը չուզեցինք, գոնէ զործնական սրածութիւնները միմեանց դէմ դադարեցնեն: Սա անհրաժեշտ ենք գտնում նոյնիսկ ամէն պարագայի համար: Երեւակայեցէք, շատ շատերը ասպարէզ չեն գալիս, որովհետեւ յարելով մէկ կուսակցութեան՝ հակառակորդի սուրը (?) պիտի իւր դէմ տեսնի: Մի՛ հաւատաք, ինչ որ մինը միւսի համար տարածում է՝ թէ անհաշտ են, տկարացել են, զործունէութեան նշաններ չեն ցոյց տալիս եւն·: Մի ժամանակ հնչակեանները զործում էին, — ցոյցեր, պայթումներ ու հետեւանքը անյայտ ու սուղ եղաւ, ժողովուրդը պաղեց, իրենք էլ յուսախաբուած էին իրարմով: Դաշնակցականները զօրեղացան: Այսօր Սասունի անյայտութեամբ դաշնակցականները պիտի

կորցնեն իրանց ժողովրդականութիւնը. պիտի տկարանան, միւսները զօրանան։

Գ.— *Հայրապետական աթոռի խնդիրը, ամէնքի վկայութեամբ (որոնց հետ որ խօսել եմ), շատ լաւ լուծում է ստացել, այսինքն առանց կապելու որեւիցէ նոր խնդրի եւ պարագայի հետ՝ վերացնել Ամենայն Հայոց եւ Սսի կաթողիկոսների միջեւ եղած տարաձայնութիւնները։ Անմիտ եւ ամօթաբեր է, որ մի եկեղեցի ունենայ երկու միմեանցից անկախ Աթոռ։ Ուստի քանի որ այսօր Սսի կաթողիկոս է էջմիածնում ձեռնադրուած մի եպիսկոպոս, քանի որ վերջինիս թէ՛ ընտրութեան եւ թէ օծմանը ներկայ է եղել Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից պատուիրակ, քանի որ Սսի կաթողիկոսն իր անդրանիկ պատարագի մէջ յիշատակել է Ամենայն Հայոց Հայրապետին, ուստի պէտք է ու ժամանակ է, որ Ամենայն Հայոց Հայրապետը չբջաբերական կոնդակով հրատարակի երկու աթոռների միջեւ թիւրիմացութիւնների բարձումը (Սսի վիճակը ընդհանրականի հետ միացած) եւ ճանաչէ Սսին՝ աթոռակից էջմիածնին (ինչպէս հին ժամանակ մի քանի դար ունեցել ենք)։ Այս պայմաններով, քանի որ Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռի վերայ բազմած կը լինի ազգից ընտրուած հայրապետը, Սսի կաթողիկոսը նոյնիսկ իր վիճակում միւռոն օրհնելու կամ եպիսկոպոս ձեռնադրելու համար պիտի ստանայ ընդհանրական հայրապետի հրամանը, իսկ հայրապետական Աթոռի թափուր մնացած ժամանակում՝ ամբողջ Հայկական Եկեղեցու ղեկավարութիւնը անցնում է Սսի կաթողիկոսին՝ մինչեւ նորի ընտրութիւնն ու դահակալութիւնը։ Այս կարգադրութեան հետ պիտի սահմանուի, որ ամէն տեղ՝ պատարագներում, ընդհանրական կաթողիկոսի անունը յիշատակելուց յետոյ, յիշատակուի եւ Սսինը, իբրեւ աթոռակից։ Այս կացութիւնը պէտք է որ այսօրուայ հայրապետը ինքն անի, իր կենդանութեամբ, եւ որոշմունքը գործադրել տայ, որ յետոյ կառավարութիւնը եւս ճանաչի։ Այլապէս կառավարութիւնը կարող է չընդունել, երբ այդ խնդիրը պարզուած եւ յարդուած չլինի հայրապետի ձեռքով։ Կ. Պոլսի խառն ժողովականները մինչեւ իսկ պընդում էին, որ այդ հարցը երկու կաթողիկոսների միջեւ է եւ իրանք էլ պիտի վերջացնեն, այնպէս որ ազգային ժողովի անդամ կարիք չկայ, այլ մի հայրապետական կոնդակ բաւ է։ Սրա մասին եւս աշխատելու էք որ պարտ ու պատշաճը շտապեն կարգադրելու, առանց այլեւայլ ենթադրութիւնների ու սպասելիքների առաջ կանգ առնելու։ Ես ժամանակին գրել էի, բայց թէ ինչու ցայսօր ձգւում է՝ չգիտեմ։*

Դ.— *Արդէն եւ մի ժամանակ է որ Փարիզ(?) Ամերիկայի առաջնորդը գալու է եւ Սպահան(?), որոնք միանալով Եւրոպայի խեղճուկրակ եղած ժողովի հետ, դիմումներ անեն Սանոյ խնդրի նկատմամբ Ֆրանսիային։ Նախ այս օրերում փակւում է (հենց այսօր փակուեց) նիստը մինչեւ աշուն, ուրեմն ուշացած են, երկրորդ՝ եթէ դիմումը լինելու է Ամենայն Հայոց Հայրապետի կողմից, ապա պիտի ինքն էլ դիմի ռուս ցարին (?)։*

Այն ժամանակ ի զուր էր հեռաւոր ծայրից առաջնորդներին տեղերից շարժելը...։ Այս խնդիրը իմ ծըրագրից դուրս է, ուստի եւ փակագծերի մէջ առնելը վերջացնում եմ, դառնալով ամերիկեան լեհացոց եւ հարէչական խնդիրներին։

Անշուշտ լսած կը լինէիք որ Ամերիկայի լեհացիք դիմումն արին մեր վեհափառին, ցանկութիւն յայտնելով մեր Եկեղեցւոյ հովանոյն ներքոյ մտնել։ Բանակցութիւնները վերջացած էին. մնացել էր, որ լեհացի ընտրեալները գային էջմիածին եւ եպիսկոպոս ձեռնադրուէին ու վերադառնային։ Վենետիկ եղած ժամանակ լսեցի հայր Մինաս Նատիրեանից, որ դրանք եկած են եղել Հռոմ եւ որ ինքն անձամբ տեսակցութիւն է ունեցել դրանց հետ եւ որ այդ բանակցութիւնը լոկ թիւրիմացութեանց արդիւնք է եղել...։ Իսկ օրերումս այստեղ գտնուող՝ Ամերիկայի առաջնորդական փոխանորդ Մաշտոց վարդապետից իմացայ (եւ սա հաստատն է)՝ մեր վեհափառն է եղել որ պաշտօնապէս գրել է, թէ առայժմ իր կացութիւնը փափուկ է, չի կարող լեհացոց խնդիրը կատարել, ռուսաց կառավարութիւնը կարող է վատ նայել...։

Հարէչական եկեղեցին ալ այսօր կարելի է առնել մեր եկեղեցու հովանոյն ներքոյ։ Մենելիք շատ լաւ յարաբերութեան մէջ է այստեղի հայերի հետ։ Մենելիքի լիազօր ներկայացուցիչը բերեց առաջնակարգ չքաւոր Երուսաղէմի մեր պատրիարքին։ Նրանք վէճեր ունին Երուսաղէմի զպտիների հետ. այս խնդրում մեր օգնութեան կարօտութիւն ունին։ Այս վէճի առիթով զպտիների ու հարէչների միջեւ վերջնական պառակտում ծագեց, այնպէս որ Մենելիքի լիազօրը, որ եղած էր Եգիպտոս զպտիների կաթողիկոսարանում, դուրս է գալիս այստեղից եւ այլուր փոխադրւում։ Յոյները շատ են մօտ մօտ անում, բայց հարէչք վախենում են Յոյն Եկեղեցու յետեւը կանգնած աշխարհականներից (աշխարհականներից ?). Ժամն է շատ յարմար այստեղ՝ Մենելիքի մայրաքաղաքում մի լաւ հովիւ ներկայացուցիչ ունենալու. լոյս աշխարհ է, առատին գործ կայ։ Իմ կարծիքով «կառավարութեան վատ նայելը» պատճառ չէ. նա վաղուց է որ վատ է նայում. պէտք է զօրանալ եւ ուժեղանալ, այն ժամանակ կը սկսին լաւ նայիլ, որովհետեւ կաթողիկոսի բարոյական ազդեցութիւնը նրանց միշտ պէտք կը լինի։ Մեր կաթողիկոսը շատ աւելի կարեւորութիւն էր ներկայացնում, քանի որ Տաճկաստանում հայերը հարուստ մեծամասնութիւն էին կազմում. հենց որ վերջին պատերազմը եւ քաղաքականութիւնն այդ մեծամասնութիւնը տապալեց, մեր կաթողիկոսի դիրքն էլ ընկաւ։ Մեր ազգայիններից մէկը իր վրայ է առնում մի պատգամաւորութիւն՝ մեր կաթողիկոսի կողմից օրհնութեան կոնդակով, օրհնութեան եւ շնորհակալութեան՝ Մենելիքի լաւ վերաբերմանց համար առ հայերը. սա մի պատրուակ կը լինի հին խնդիրը շարժելու։ Քաշուելու, վախենալու քաղաքականութիւնը պէտք է թողնել...։

Ուղիղ 9 ամիս ճանապարհորդական հազար ու մի նեղութիւններ ու վշտեր տանելուց յետոյ, իմ սրտի ցաւը բուժելու համար այսօրուան համբաւի հասած բժիշկների դուռները բախելուց յետոյ, գալիս եմ Փարիզ, որ սկսիմ բուն բժշկութիւնը՝ տեղւոյս բժիշկների հետ։ Ինձ այստեղ պատահում է երկու մեծ խոչընդոտ։ Մինը՝ որ բժիշկներից կարողներն այստեղ չեն, խորհուրդներ չեն կարող տալ, գնացել են ամարանոց։ Երկրորդն, ամենից անտանելին, նիւթական կացութիւնս եւ մանաւանդ նոր պահանջը։ Շնորհակալ եմ իմ բարեկամներից, օգնել են ինձ ամէն կողմից։ Ես մինչեւ այսօր իմ Տփխիսի բարեկամներից, որ այնքան պնդելով պնդում էին բժշկութեանս համար անպատճառ արտասահման անցնել, ստացել եմ 400. մնացածը ամբողջովին ծանրացած է եղել իմ խեղճ ու կրակ եկեղեցու ծխի վրայ։ Սրանք 9 ամիս վճարել են իմ ոռճիկն՝ իմ ընտանեաց, սրանք հոգացել են ճանապարհածախսիս ծանրութիւնը մինչեւ Երուսաղէմ գընալս։ Սրանք իմ փոխարէն մի այլ քահանայ են հրաւիրել եւ նրան վճարում։ Այս ծախսերն իրօք շատ վեր են իմ ծխականների կարողութիւնից։ Եգիպտոս աւելի եւս ստիպեց Իտալիա անցնելու. վճարեց ինքն եւս 10 ոսկի. երբ մտայ Մարսէյլ, մնացած էի առանց փարայի(?)։ Սէլեանեանից փոխարինաբար իմ ստորագրով վերցրի 300 ֆրանք ու մտայ Փարիզ։ Այստեղ ստանում եմ նամակ կնոջից, ծնողներից, էջմիածնից. երբեմն էլ միաձայն ու ստիպողապէս պատուիրում են շուտով պաշտօն գտնել. քաղցած մնալու ծանրութիւնը, սոսկումը արդէն զգում են...։ Տէր Աստուած, պաշտօն գտնել չէ որ դժուար է. Գահիրէ, Ալեքսանդրիա, Սուէզովա, Մարսէյլ պաշտօններ կան եւ ինձ առաջարկում են. բայց ցաւն այն է, որ այժմ գնալ պաշտօնի՝ ասել է ջուրն ածել բոլոր ձեռք բերածներս եւ գնալ անիծեալ հացի խնդրի յետեւից։ Օրմանեան, Իզմիրլեան (չթուեմ անթիւ աշխարհականներ) յորդորել են հասնել՝ ամէն տեղ կենդանի լեզուով խօսել մեր ցաւերի եւ անելիքների մասին. այստեղ Փարիզ պընդում են «կացէք ու աշխատեցէք»։ Այլապէս եթէ բանը մնայ մեզ մարմին դարձնելու՝ անհնարին է, մէկը պիտի լինի մեր ականջից բռնող ժողովի տանող, մեզ ստիպող, մեզ հարկադրող։ Ինձ շատերը անհրաժեշտ են գտնում եւ Ամերիկա, Լոնտոն եւ Բալկան (թերակղզի) անցնելու, ամէն տեղ կարեւոր կենտրոնների եւ անձերի հետ տեսնուելու, խօսելու եւ ընդհանուր համաձայնութեամբ երկու մեծ խնդիրներին՝ կենտրոնական կազմով ազգային սնտուկ(?) եւ յեղափոխական կուսակցութիւնների միջեւ համերաշխութեան կամ միջնորդ դատաստան հիմնելու աշխատելու։ Այո՛, ես տեսայ ինչ ահագին նշանակութիւն ունի անձամբ տեսնուել եւ խօսելը։ Եղբայր սիրելի, մենք իրարից բաժանուած չենք միայն, այլեւ կտրուած ենք, միմեանց չենք ճանաչում։ Մենք գործում ենք անծրագիր եւ շատ անդամ միմեանց գործածը աւերում։ Եթէ յարմարութիւն լինէր Փարիզում մնալու պաշտօնով, այո՛, այն ժամանակ կարելի կը լինէր այստեղ ես աշխատել, բայց այդ կարելի չէ. այստեղ կայ մի շատ համակրելի քահանայ. եթէ Մանթաշեան ապահովի իր եկեղեցին մշտական եկամուտով եւ երկրորդ եւս քահանայ կարողի, որը անհրաժեշտ է, այն ժամանակ, եթէ յաջողուի ինձ կարողանալ երկրորդ քահանայ, կարող կը լինեմ ջանքերս շարունակել։ Բայց մինչեւ այդ, խոկալէս ես եւս գտնում եմ, որ Ամերիկա եւ Լոնտոն անհրաժեշտ է անցնիլ։ Այստեղի հարուստները հին եկողներից (?) են, սաստիկ պահպանողական՝ մանաւանդ դրամները խորը պահելու նկատմամբ։ Սրանց վերայ բնաւ չէ կարելի դրամական յոյս դնել. որ օրը որ նկատեցին, որ ես դրամի պէտք ունիմ, այն օրուանից ես կ'ընկնեմ իրենց աչքում։

Վերջացնում եմ նամակս, թողնելով ձեզ դատաստանը։ Ինձ համար մեր կացութիւնը ի Կովկաս, ի Պոլիս, յԵրուսաղէմ, յԵգիպտոս եւ յԵւրոպա տեսնելուց յետոյ, այսօր թողնել ամէն բան գնալ հացի խնդրի յետեւից՝ հաւասար է ազգասպանութեան մասնակցելուն։ Սակայն ի՞նչ կարող եմ անել։ Գեթսեմանիի մէջ աղօթողի յաւիտենական դարձուածքը այսօր իմ առաջ ես պակած է — «Հոգիս յօժար է՝ մարմինս տըկար»։ Եթէ մարմնոյս տկարութիւնը բուժելու միջոցներ հայթայթուին, հոգիս մեծ յօժարութեամբ կը տոկայ ամէն նեղութեան։ Սպասում եմ մեծ անհամբերութեամբ ձեր նամակին ու խորհուրդին։ Եթէ կարեւոր կը դտնէք յարուցուած խնդիրը եւ յարմար ու պէտք՝ իմ ծառայութիւնները, ես պատրաստ եմ. իսկ եթէ ո՛չ, գնամ օր առաջ ընտանիքիս ու զաւակներիս համար մտածեմ, մինն հանդիսանալով մեր շատ շատերից։ Հա՛, այստեղ ինձ մերոնցից մէկը հաղորդեց, որ ազգային սնտուկի մասին մտածել, ծրագրել եւ դրեթէ մի բան կազմել են Բազում (անշուշտ արտասահմանում ունենալու) եւ թէ այդ մարդկանցից երկու հոգի եկել անցել են Պոլիս, պատրիարքին տեսնելու։ Օրերումս նամակ ունէի Օրմանեանից. շատ բաներ կային, բայց այդ մասին ոչինչ։ Հետաքրքրական է շատ. այնպէս լինի որ միմեանցից անկախ բաներ դուրս

չգան· սրա մասին եւս կը սպասեմ ձեր դիտողութիւն-ներին: Հնարաւորութիւն չունեմ շատերին գրելու, այս էլ առանձին դիւրութիւն ներկայացաւ, որից ուզեցի օգտուել: Ուստի ձեզ է մնում լրջօրէն մտածելու, հաղորդելու որոնց դուք կարեւոր կը համարէք ե՛ւ հոգալու ե՛ւ հետեւանքի մասին, կարելւոյն չափ չուտ ինձ ծանուցանելու: Վեհետիկում, ո՛վ զարմանք, յաջուցեցին մեր Եկեղեցու հետ միանալու խնդիրը եւ ինձ խնդրում էին լինել բանաղնաց:

Ա՜խ, կ'ուզէի մի անգամ դոնէ տեսնել ու խօսել ձեզ այս ամէնը, ինչ որ կարելի չէ գրչի առնել: Եթէ անտուկի խնդիրը յաջողուի, պատրիարքի կողմէն գործին գլուխ կարելի է դնել շատ յուսատու եւ հեղինակաւոր մի անձ, որի անունը չեմ կարող տալ, բայց ամէնքին ծանօթ է երեւի: Սրտագին բարեւներս բոլոր իմ ազնիւ բարեկամներին, որոնք զէպի սրտիս ցաւի բուժման խնդիրն այնքան կարեկից վերաբերմունք ունեցան: Թող ներեն, եթէ տակաւին ծանրութիւն կրելու պայմանները չեն վերջացած: Իմ կրած կսկիծները շատ աւելի են, սրա վրայ աւելացան եւ ընտանիքիս հոգսերը, որ ցայսօր արժանավայել կերպով միայնակ հոգում է Բաթումը եւ որ դուցէ այլեւս չկարողանան շարունակել··· Այս կարող էք դուք իմանալ, ես հնարութիւն չունեմ, այլ միայն հաւատ՝ բարեկամներիս վերայ:

Վեհափառին զրաղեցնում է այն խնդիրը, թէ ինչպէ՛ս եպիսկոպոս ձեռնադրի, երբ եպիսկոպոսացուն դիւրութիւն չունի էջմիածին դնալու (այսպէս են եւ տաճկահայ վարդապետները): Երբ Սիսը միացած կը կը լինի՝ ընդհանրական հայրապետի հրամանով կարող է ձեռնադրութիւնը Սսում լինել: Խնդիրը հրամայողն է, որ լինի ու մնայ մէկը· այս միութեան դաղափարն է մեր կորուստը եւ մեր կապը: Կ. Պոլիս եղած եպիսկոպոսներից ասողներ կային, որ մեր Եկեղեցին իրաւունք է տալիս 3 եպիսկոպոս ժողովուելու եւ մի եպիսկոպոս ձեռնադրելու: Սաստիկ բողոքեցի այս կէտի դէմ, որ բնաւ պէտք չէ իսկ յարուցանել, քանի որ այդ մեզ կը տանի դէպի միմեանցից բաժանում, իսկ մեզ ամէնից շատ միացնող ու կապող պարագաներն են ցանկալի: Եւ համոզուեցին մեր սրբազանները:

4·— ԲԺԻՇԿ Յ· ԼՈՐԻՍ ՄԵԼԻՔԵԱՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Բժիշկ Յովհաննէս Լորիս-Մելիքեան (ծանօթ նաեւ Լոռու Մելիքեան մականունով) Հ· Յ· Դաշնակցութեան ամենահին գործիչներէն մէկն էր, մասնակցած 1890ի հիմնադիր ժողովներուն եւ անդամակցած Հ· Յ· Դ· անդրանիկ կենտրոնին (տեսնել իր մասին՝ «ՅՈՒՇԱՊԱՏՈՒՄ Հ· Յ· ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ», էջ 121–122): 1894–98 տարիներուն, Փարիզ հաստատուելով, ան Զարիֆեան ծածկանունով գործակցած էր «Դիօշակ»ի խմբագրութեան հետ: Ապրիլի հուշ, Բժ· Լորիս-Մելիքեան գործօն դեր ունեցած էր Հ· Յ· Դաշնակցութեան Եւրոպական քարոզչութեան աշխատանքներուն մէջ, հանդիսանալով «Pro Armenia»ի հիմնադիրներէն մէկը եւ գործակցելով Քիյարի, Ժորէսի, Գլեմանսոյի եւ այլ հայասէրներու հետ:

Հ· Յ· Դաշնակցութեան 3րդ Ընդհանուր ժողովը Լորիս-Մելիքեանը ընտրած էր անդամ Արեւմտեան Բիւրոյին, շարունակելով այդ մարմնին վստահիլ «Դրօշակ»ի խմբագրութեան եւ արտասահմանեան քարոզչութեան («Եւրոպական պրոպագանդ») գործը: Լորիս, որ համաձայն չէր ժողովի կարգ մը որոշումներուն կամ պատճառներ ունեցած էր վիրաւորուելու կարգ մը ընկերներու արտայայտութիւններէն, հրաժարած էր Բիւրոյի անդամակցութենէն՝ Ընդհանուր ժողովի փակումէն առաջ: Իր հրաժարականը մերժուած էր, սակայն Լորիս, մնալով անդրդուելի այլ կարգապահ, Եւրոպական քարոզչութեան գործին համար ինքզինք դրած էր Արեւմտեան Բիւրոյի տրամադրութեան տակ՝ առանց յանձն առնելու իբրեւ անդամ մասնակցիլ Բիւրոյի աշխատանքներուն (տեսնել Ատենագրութիւն 3րդ Ընդհանուր ժողովի, «ՆԻՒԹԵՐ Հ· Յ· Դ· ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ», Բ· հատոր, էջ 134–135):

4րդ Ընդհանուր ժողովի արխիւային նիւթերուն մէջ, Լորիսի թղթածրարը, իր ծաւալով ու բովանդակութեամբ, կը գրաւէ կարեւոր տեղ: Ուստի զայն հրատարակութեան կու տանք լրիւ, իր յաջորդական հետեւեալ բաժիններով·—

ա) Զեկուցում Լորիսի տեղեկագրին, որ ուրիշ բան չէ եթէ ոչ յանձնախումբի մը կողմէ կատարուած ամփոփում մը՝ կարդացուելու համար Ընդհանուր ժողովին առջեւ·

բ) Լորիսի հրաժարական-նամակը՝ ուղղուած 4րդ Ընդհանուր ժողովին· արեւելահայերէնով է, ինչ որ ենթադրել կու տայ որ իր գրածն է կամ թելադրածը: Դանօք է որ իր այդ հրաժարականէն ետք Բժ· Լորիս-Մելիքեան, դառնացած, դադրեցաւ հայ ազգային կեանքին մէջ գործօն դեր ունենալէ:

գ) Լորիսի տեղեկագիրը՝ «Եւրոպական պրոպագանդի» մասին, ձեռագիր (73 էջ) բայց արեւմտահայերէն· ուրեմն, ամենայն հաւանականութեամբ, ռուսերէնէ կամ փրանսերէնէ թարգմանուած (իր նամակին մէջ, Լորիս կը յայտնէ այդ թարգմանութեան գործը Փարիզ «ընկերոջ» մը վստահած ըլլալը, առանց նշելու թէ բնագիրը ո՞ր լեզուով էր):

դ) Տեղեկագրի շարունակութիւնը7 *«Յարաբերութիւն Բիւրոյին հետ»*, 31 էջ (նոյն):

ե) Վկայականներ վերնագրուած վերջին բաժին մը, բաղկացած 116 ձեռագիր էջերէ, որ փոխանակուած նամակներու շարք մըն է, մերթ արեւելահայերէնով գրուած (հաւանօրէն՝ բնագիր), մերթ արեւմտահայերէնով (ըստ երեւոյթին՝ թարգմանուած): Կ'ենթադրենք որ *վկայականներ* խորագիրը *փաստաթուղթեր* պէտք է հասկնալ:

Լեզուն ամէնուրեք ջանացած ենք պահել անփոփոխ, ուղղելով հայերէնի շատ խոցելի անհարթութիւնները միայն եւ սրբագրելով, անշուշտ, ուղղագրական պարագայական սխալները:

Ա) ԶԵԿՈՒՑՈՒՄ ԼՈՐԻՍԻ ՏԵՂԵԿԱԳՐԻՆ

Տեղեկագիրը բաժնուած է երեք որոշ մասերու·

ա·— Համարատուութիւն եւրոպական պրոպագանդի·

բ·— Յարաբերութիւն Բիւրոյի հետ:

գ·— Կաթողիկոսին ուղղուած նամակին պատճէնը:

Բայց այս տեղեկատուութեանց սկիզբը կայ Լորիսի մէկ նամակը՝ ուղղուած Ընդհանուր Ժողովին, որը անհրաժեշտ է կարդալ ժողովին առջեւ:

ա· Համարատուութիւն եւրոպական պրոպագանդի·

1·— 1904ի Ընդհանուր Ժողովին մէջ Բիւրոյի եւ պրոպագանդի անդամներու ընտրութեան հարցը եւ այս մասին ժողովի բռնած ընթացքը — այն է՝ «ճնշումով կատարել Բիւրոյի անդամներու ընտրութիւնը, հակառակ ժողովի փափաքներուն» (էջ 1–2):

2·— Լոնտոնի մէջ 1904 Մարտ 29ին տեղի ունեցած [ձեռնարկին ?], ի նպաստ Մակեդոն· հարցին, կը միացնէ նաեւ Հայկականն ալ, ինչպէս նաեւ կը խօսի ճէյմս Պրայսին՝ Գիսակի(1) *մահուան դատապարտութեան մասին:*

3·— Ջանքեր՝ ստեղծելու համար ի նպաստ մեզի զօրեղ հոսանք մը, Պալքան· կոմիտէի յառաջ բերածին չափ· բաղդատութիւն Պալքանեան կոմիտէի եւ Անգլո-Հայկական ընկերութեան (յանձին Պըքսթընի եւ Սթիվենսընի), առաջինը կարող եւ ազդեցիկ, երկրորդը՝ առանց կորովի եւ սնափառ: Նպատակ՝ ժուրնալիստներու կոմիտէի մը կազմութեան, որ զբաղի Հայկական Հարցով· սակայն չ'իրագործուիր «վարչական եւ նիւթական արգելքներու պատճառով»(3): *Ջանքեր՝ նուազեցնելու Պալքանեան կոմիտէի ազդեցութիւնը: Ժորժ Հոլիսի խորհրդակցութեամբ՝ յարմար կը նկատուի ստեղծել* Pro Armeniaի *պաշտօնասենեակ մը, քարտուղարով մը միասին, որ պիտի խաղար կեդրոնացնող դեր մը: Լորիսի ջանքերուն եւ դիմումներուն վրայ՝ ճէյմս Պրայս եւ Սթիվենսըն Երեսփ· Ժողովին մէջ Սասունի ջարդերուն առթիւ իրենց զգացումները կը յայտնեն:*

4·— Կազմակերպում Յուլիս 20ի միթինկին, այն ծրագրով որ մասնակցին Ֆրանսացի եւ իտալացի հայասէր բարձր անձնաւորութիւններ ալ: Տեղի կ'ունենայ միթինկը՝ Ֆրանսացի, իտալացի եւ անդլիացի անձնաւորութեանց մասնակցութեամբ: Եւ այս ցոյցերը «մեծ ներգործութիւն կ'ունենան Սասունի Ջարդերուն վրայ եւ կ'արգիլեն որ անոնք ընդհանուր Ջարդերու վերածուին»: Իսկ եթէ այս հայասիրական շարժումները դրական օգուտ չտուին, նկատի ունենալու է ռուս-ճափոնական պատերազմը:

5·— Իտալիոյ մէջ, շնորհիւ Կոչչիարտո(?) *հայասէր անձնաւորութեան, Մայիսէն մինչեւ Յուլիս, երեք ամսուայ մէջ՝ կը կազմակերպուին Փալերմօ, Փավիա, Միլան, Սիէն, Մեսինա, Ֆլորէնցա, Ռէճճիօ եւ Քալապրա քաղաքներուն մէջ միթինկներ, որոնցմէ ամէնէն նշանաւորն է Հռոմի միթինկը, ուր բազմաթիւ երեւելի անձնաւորութիւններ կը խօսին ի նպաստ մեր դատին: Իտալական խորհրդարանին մէջ երկու երեսփոխաններ հարցապնդումներ կ'ուղղեն Սասունի Ջարդերուն համար:*

6·— Ֆրանսայի մէջ 904 Ապրիլի սկիզբը La ligue des droits de l'hommeը, *որ ունի 60·000 անդամ, ի նպաստ մեր դատին՝ կը պահանջէ դաշնագրերու դրծագրութիւնը: Սէնի ընդհանուր խորհուրդը, «որ կը պարունակէ նահանգին ամբողջ քաղաքականութիւնը և որուն որոշումները կը ներգործեն միւս երկու խորհրդարանական ժողովներուն քուէներուն վրայ», Յուլիս 8ին ցանկութիւն կը յայտնէ որ «հանրապետութեան կառավարութիւնը՝ հաւատարիմ հարստահարուածներու պաշտպան իր աւանդութեանց՝ Հայաստանի դէպքերուն [առթիւ] հարկ եղած չուտափոյթ միջոցները ձեռք առնէ»: Օրակարգը միաձայնութեամբ կը քուէարկուի: Փրէսանսէ հարց կը դնէ արտաքին գործոց նախարարին եւ «Հրաշալիօրէն» կը գծէ Սասունի կացութիւնը· ժողովը միաձայնութեամբ կը պատրաստուի պարսաւանքի քուէ առաջարկել, բայց Փրէսանսէ, «վախնալով որ նախարարական տագնապ յառաջ կու դայ», հարցը՝* հարցապնդումի *չի փոխեր, հակառակ եղած թախանձանքներուն:*

7·— Լոնտոնի միթինկէն ետք՝ Լորիս նպատակ կ'ունենայ զրքոյկով մը տեղեկագրութիւններ հրատարակել, ցրուել 10·000 *օրինակ,* office*ի մը բացումը ընել, բայց Քրիստափորի կողմէ Փարիզ կը կանչուի Լորիս եւ կը հաղորդուի իրեն կաթողիկոսի կողմէ տրուած որոշումը, — դիմում տէրութեանց: (Բիւրոն այս գրքին համար կը մերժէ տալ* 3·000 *ֆրանք):*

8·— Երեք դիտողութիւններ այս դիմումի մասին, որոնց գլխաւորն այն է թէ անյարմար ժամանակ ընտրուած է՝ Սասունի Ջարդերու մարելէն ետք, նոյն միջոցին աւելի առաջնակարգ հարցերու գոյութիւնը եւ այն պահը՝ ուր վեհապետները կը ձգեն վարչական գործերը: Կաթողիկոսին նամակը գրուած է Մայիսի վերջին օրերուն, մինչ Լորիսին յանձնուած է չատ ուշ· եթէ Յունիսին իր ձեռքը հասնէր, աւելի արդիւնաւոր հետեւանք պիտի ունենար:

9·— Զերազը մերժած է ընկերանալ պատգամաւորութեան, որովհետեւ նիւթական միջոց տրուած չէ· նոյն միջոցէն զուրկ են եղեր նաեւ Լորիսն ու կղերականներն ալ: Բանավէճեր եպիսկոպոսներուն եւ Լորիսի միջեւ· եպիսկոպոսներուն անյարմարութիւնները, եւ մեծագոյն սխալը՝ որ պատգամաւորները ընտրուած են բացառապէս ռուսահայերէ, ինչ որ տեղի տուած է էտուարտ Թպաւորին կողմէ պատուիրակութիւնը մերժելու, ռուսական դեսպանին դիմումին վրայ:

10·— Պատմութիւն Pro Armeniaի *հիմնարկութեան եւ Քիյարի մօտ յարաբերութեանց, որ այնքան ալ կարեւոր չէ, թէեւ ինք ցոյց տալ կ'ուզէ որ Բիւրոն աշխատած է միշտ պզտիկցնել իր նշանակութիւնը Քիյարի քով: Գանդատ, որ Ահարոնեան իր հետ չէ խոր-*

հրդակցած, Փարիզ իր ըրած դիմումներուն առթիւ՝ Կովկասի դէպքերուն համար։

11.— Խորհուրդը 10.000 ֆրանք կը տրամադրէ անդլերէն Pro Armeniaի հրատարակութեան համար։ Ալֆրէտ Սթէտ կը ձգձդէ հրատարակումը՝ առարկելով իր զբաղումները, քաղաքական անպատեհութիւնները եւն. եւն., որով Նոյեմբերի վերջը կը հրատարակուի միայն։

12.— Ռէյնոլտսի ներկայութիւնը Փարիզ, որմէ օգտուելով՝ Լորիս կը կազմակերպէ ճաշկերոյթ, հրաւիրելով ի միջի այլոց նաեւ Պէրթըլոն։— Դիմում նախագահ Ռուզվելթի։

13.— Նոյեմբեր 30ին ժողով մը կը կազմակերպէ Փարիզ, ուր կը խօսին Փրէսանսէ, Քամիլլ Բելլբան, Վիքթոր Պերար եւն.։ Մեծ յաջողութիւն կ'ունենայ ժողովը։

14.— Կարդալ եզրակացութիւնը ընդհանուր պրոպականտին՝ էջ 70։

բ.— Յարաբերութիւն Բիւրոյի հետ

1.— Լորիսի հետ Բիւրոն վարուած է իբրեւ Pro Armeniaի մէկ «գործակալին» հետ եւ ո՛չ «եւրոպական պրոպականտի ներկայացուցչի»։

2.— Լուրերը կը հաղորդուին եղեր ուղղակի եւրոպական թերթերուն, յաճախ նոյնիսկ տեղեկութիւն անգամ չտալով Լորիսին։ «Այդ հեռագիրները եւս աւելի իրենց ֆրազաբանութիւնով եւ զգայականութիւնով տպաւորութիւն կը ձգէին հոստեղի մեր բարեկամներուն, ինչպէս՝ Փրէսանսէի, Քիյարի եւ ուրիշներու վրայ»։

3.— Անհրաժեշտ խնդիրներու մասին լոկ Քիյարի հետ կը թղթակցէր Բիւրոն, «ինչ որ ցաւալի թիւրիմացութիւններ յառաջ կը բերէր»։

4.— Բիւրոն ոչ միայն Ֆրանսայի, այլեւ Անգլիոյ մէջ ալ աշխատած է անտեսել Լորիսի պաշտօնը, որով յառաջ եկած են «ցաւալի թիւրիմացութիւններ»։ օրինակ, Բիւրոն բանակցութեան մտած է «Շիրազի անունով կասկածելի մարդու մը հետ» եւ «Իտալիոյ մէջ մարդու մը հետ, որուն մէկ առաջարկը մերժած է եղեր Լորիս, զայն լաւ մը քննելէ յետոյ»։

5.— Բիւրոյի այս ընթացքէն «մնաս կը կրէր դատը» (էջ 77)։

6.— Ծանր բառերով Բիւրոյի անդամները կ'ամբաստանէ, իբրեւ վրիժառու իր դէմ, իրենց ընտրական անյաջողութեան դրդապատճառով (էջ 78–79)։

7.— Բիւրոյի հետ եղած այս դէշութեան եւ դրամ չտրուելուն պատճառաւ է որ անգ. Pro Armeniaի հրատարակութեան համար դիմումներ կ'ընէ Լորիս հայ վաճառականներու եւ Ամերիկայի մեր մէկ քանի ընկերներու, ապարդիւն կերպով։

8.— 3000 ֆրանք խնդրած է Բիւրոյէն Pro Armeniaի 100րդ թիւին առթիւ սարքուելիք սեղանի մը, ուր պիտի հրաւիրուին եղեր մեր բոլոր բարեկամները, եւ Բիւրոն մերժած է։

9.— Կաթողիկոսին ուղղուած Լորիսի նամակը ստիպած է Ռոստոմին հեռագրելու՝ որ չյանձնուի կաթողիկոսին։

10.— Լորիս Խորհուրդին մասնակցելու կու դայ եւ կը ստիպուի Սաֆոյին եւ Անդրանիկին հետ 2 շաբաթ սպասել՝ մինչեւ որ Մալումեան Ուսանող. Ընդհ. Ժողովը աւարտէ եւ Ռոստոմ՝ ռուս կուսակցութեանց ժողովը. ասոր համար Խորհուրդը կը ստիպուին ընել երկու երեք օրուայ մէջ՝ խառն ի խուռն։

11.— Գանգատ դրամներու անկանոն առաքման դէմ՝ որ յայտնուած է նաեւ Փարիզի մէջ Մալումեանի (էջ 100)։

12.— Բիւրոյի նամակներուն տակ Լորիսի կողմէ հաւաքական ստորագրութիւն պահանջելու պատճառները։

Բոլոր այս անհամաձայնութիւնները այնքան կը սաստկանան որ հարկ կ'ըլլայ Քիյարի ու Փրէսանսէի միջամտութեանց։

---

(1) Վարդգէսի (Սէրէնկիւլեան), որ ձերբակալուած էր Վանի մէջ։

Բ) ԲԺ. ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ 4ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովին

Սիրելի ընկերներ !

Խնդրում եմ Ժողովից՝ համարել զիս հրաժարած Հ. Յ. Դ. կազմակերպութենէն։ Հեռանալով ձեր շրջանից, ուր եղել եմ երիտասարդ հասակիցս, չեմ փնտռում իմ հանդիստը, այլ ուզում եմ ձեռք բերել գործելու ազատութիւն, համոզուած լինելով, որ այդ եղանակով կը լինեմ աւելի օգտակար հայ Ժողովուրդի սրբազան դատին, քան մնալով մեր կազմակերպութեան մէջ, ուր իմ բոլոր ջանքերը եւ ձեռնարկները պատահել են շարունակ արգելքների եւ դժուարութիւնների։

Նամակիս ընկերացող տեղեկագիրը ձեզ լիովին կը ծանօթացնէ իմ հրաժարականի պատճառներին։ Բացի այն պատճառներից, որոնք պարզել եմ տեղեկագրի մէջ, կան ուրիշ պատճառներ՝ աւելի խոր, որոնք բաժանում են ինձ ընկերներից. սոսա են զաղափարներու եւ գործունէութեան եղանակի զանազանութիւնը։

Երբ 1904ի Ընդհանուր Ժողովին պարզել եմ իմ զաղափարները մեր քաղաքական գործունէութեան մասին, ինձ դէմ ունեցայ Ժողովի մեծամասնութիւնը. դրանից յետոյ չէի կարող կազմակերպութեան մէջ մընալ առանց հակասելու իմ համոզմունքներին։ Բայց դէպքերի ծանրակշռութիւնը եւ ուժերի միացման օգտակարութիւնը ինձ վճռել տուին չհեռանալ կազմակերպութիւնից։ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը զուրկ է դեկավարող միատեսակ սկզբունքներից. մենք տեսնում ենք կողք կողքի անիշխանականներ, սոցիալիստներ եւ նեղ ազգասէրներ. նրանց առաջարկած ծրագիրները մնում են իբրեւ հայեցողութիւններ, առանց յարմարուելու ժողովուրդի պայմաններին, ինչպէս վերացական զաղափարներ, որոնք յարմար հող չեն կարողանում գտնել գործնական կեանքում։

Այս խառն դրութեան առաջը առնելու համար, ես առաջարկեցի նախորդ Ընդհանուր Ժողովին ընդունել ռամկավարական լայն ծրագիր. սրանով իմ նպատակն էր ստեղծել համաձայն գործունէութեան մի ընդհանուր հող, բայց ռամկավարական միտքը այնքա՛ն անորոշ էր ու անհասկանալի ժողովականներին՝ այն էլ այն մոմենտում երբ նա ստացած ունէր մեծ ծառայութիւն, որ ինձ առաջարկուեց դրա մասին ներկայացնել մի ուսումնասիրութիւն։ Բացի սրանից Ընդհանուր Ժողովում կազմակերպական հարցերի մասին իմ կարծիքները զանազանուել էին Ժողովականների մեծամասնութեան կարծիքներից։ Ապակեդրոնացումը, որ պաշտօնապէս պէտք է լինի հիմքը մեր կազմակերպութեան, մի բան որ ինձ համար անհասկանալի է նմանօրինակ կազմակերպութիւնների համար, դարձել է շնորհիւ մի քանի անձնաւորութիւնների ջանքերին մի կամայական եւ աւանդական օլիգարխիա, որ ցայտացնում է բոլորի վրայ մի քանիսի աղանդամոլութիւնը եւ հայեցքների միակողմանիութիւնը։ Այս օլիգարխիան յառաջ է բերում ամէնների եւ անհատների անջատումներ եւ մի հակասող ուժ, որը թուլացընում է ընդհանուր ուժը։ Այս օլիգարխիան է պատճառը այն դրութեան, որ նոր, դեկավարող ուժերի բաւականաչափ հոսանք չի նկատուում, որը անհրաժեշտ է կուսակցութեանը՝ բարձր պահելու համար բրեստիժը. միեւնոյն պատճառին պէտք է վերագրել բազմաթիւ գործնական անյաջողութիւններ, մանաւանդ այն ձեռնարկների, որոնք որոշուել էին վերջին Ընդհանուր Ժողովին։

Կարող էք առարկել, որ պէտք է պարտաւորութիւն համարէի մնալ կազմակերպութեան [մէջ]՝ բարենորոգումների համար։ Պէտք է ասեմ, որ շարունակ աշխատել եմ այդ ճանապարհով, բայց իմ ջանքերը պատահել են արգելքների. այնպէս որ ստիպուած եմ հեռանալ, մաղթելով ուրիշներին յաղթական լինել այն ասպարէզում, ուր ինքս պարտուել եմ։ Գուցէ կարելի լինէր իմ անյաջողութիւնս բացատրել այն արմատական զանազանութիւններով, որոնք կայանում են իմ եւ իմ ընկերների հոգեբանութեան եւ աշխարհահայեացքների տարբերութեան մէջ, որը եւ խորապէս մեզ բաժանում էր։ Ուրեմն ինձ մնում է, հեռանալով Դաշնակցութիւնից, որուն առաջին քայլերին հանդիսատես եմ եղել եւ որուն նուիրել եմ երիտասարդական եռանդս, յուսալ որ մի օր կը մտնեն կազմակերպութեան մէջ՝ արմատական անհրաժեշտ ուժերը։

Ինչ որ ինձ վերաբերում է, չեմ զաղարիր իմ ուժերս դնել մեր Ժողովուրդի ազատագրութեան գործի տրամադրութեան տակ։

Այդ ցուցումները նամակների հետ եւ վկայականները պատրաստ էին Յունուարին (1906 թ.), այն նամակի հետ որը ուղարկած էի Ընդհանուր Ժողովին՝ իմ հրաժարման մասին։

Ինձանից անկախ պատճառներով, այս թղթերը թողեցի Փարիզ, ընկերի մօտ, թարգմանելու եւ արտագրելու համար, որը ուղարկեց ինձ վերջին ժամանակս։ Աչքի առաջ ունենալով որ Ընդհանուր Ժողովը պիտի կայանար 1906 թ. սկզբին ու չկայացաւ, այդ ահագին ուշացումը, ինչպէս էլ լինի, շատ ծանր է ինձ համար։ Յոյսով եմ կը հասնի յառաջիկայ Ընդհանուր Ժողովին։ Ուղարկում եմ նոյնպէս պատճէնը իմ վերջին հրաժարական նամակին։

Գ) ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԳՐՈՊԱԳԱՆԴԻ

1904ի Ընդհանուր Ժողովէն յետոյ եւրոպական պրոպագանդի մասին եւ այս հարցին մէջ Բիւրոյի դերի մասին խօսելէ առաջ, հարկաւոր է քանի մը խօսքով յիշեցնել Ընդհանուր Ժողովին մէջ վիճաբանութիւններու արդիւնքը եւ այս մասին առնուած որոշումները։

Հենց սկիզբէն, Ընդհանուր Ժողովը Բիւրոյի նկատմամբ լաւ տրամադրուած չէր եւ կ'ուզէր քանի մը բարեփոխութիւններ կատարել։ Վերջին տարիներու ասնոր գործունէութենէն դժգոհ էր։ Ընդհանուրի փափաքին համաձայն այս հաստատութեան անկանոն վիճակին վերջ մը տալու համար, կանոնագիրը պատրաստող յանձնախումբը միաձայն կ'որոշէր որ Բիւրոն պէտք է երեք անդամէ կազմուած ըլլար, որոնց իւրաքանչիւրը պէտք էր զբաղէր գործունէութեան մը մէկ մասնաւոր ճիւղովը, առանց իրար անդամալուծելու եւ առանց իրար հակասելու՝ ընդհանուր ծրագրի գործադրութեան մէջ։

Երբ Բիւրոյի անդամներու ընտրութիւններու հարցը եկաւ, բարդութիւններ ծագեցան, որ կը սպառնային Ընդհանուր Ժողովի գոյութեան։ Ոչ ոքի զաղտնի

չէր որ խումբ մը կար, որ կը ցանկար վերընտրել տալ Բիւրոյի երեք հին անդամները՝ որոնց համար իսկապէս առաջ եկած էր ժողովին դժգոհութիւնը:

Մենք առաջին ընտրուողներէն էինք, եւ միաձայնութեամբ, այս մասին ժողովի գաղտնի խորհրդակցութենէն յետոյ եւ յայտնի հաւանութիւնովը: Բայց այս ընտրութիւնը դժուարութիւն ստեղծեց, որովհետեւ այդ ընտրութիւնով՝ երկու տրամադրելի պաշտօնները այլեւս չէին մնար. եւ այդ վերոյիշեալ երեքէն դուրս թեկնածուներ, մանաւանդ Թրքահայեր, հետամուտ էին ընտրութեան ձայն առնելու: Այս դրութեան վերջ դնելու համար, մենք հրաժարական տուինք յայտարարութիւնով մը, որ չընդունուեցաւ, եւ նորէն վերջին անդամ միեւնոյն միաձայնութիւնը ունեցանք: Միայն երկար խորհրդակցութենէ յետոյ եւ դրութեան սուր վիճակը նկատի ունենալով, որոշուեցաւ երկու պրոպագանդիստ ընտրել, որոնց մէկը Ֆրանսայի, Անգլիոյ եւ Իտալիոյ համար, մնայուն պաշտօնով եւ Բիւրոյի իսկական անդամ մնալով, եւ ուրիշ մը՝ մէկ տարուան համար, Եւրոպայի մնացած մասին պրոպագանդի պաշտօնով: Նաեւ պէտք է ընտրուէին Բիւրոյի երեք անդամները, որովհետեւ իւրաքանչիւր կեդրոնական կոմիտէի երկու ներկայացուցիչները չէր կարելի դեռ նշանակել:

Թեկնածուներու ցանկը պատրաստելէ յետոյ, երեք անդամ քուէարկեցին պրն. Յովհաննիսեանի(1) համար, առանց հարկաւոր ձայները ստանալու, որով հարկ եղաւ ձգել այդ թեկնածութիւնը: Յետոյ Ռոստոմի ընտրութեան ձեռնարկեցին՝ որ ստացաւ մեծամասնութիւն, եւ պրն. Մալումեան՝ բաւականին մեծամասնութիւն մը: Իսկ պրն. Ահարոնեան առաջին անդամ չստացաւ մեծամասնութիւն, իսկ երկրորդին ստացաւ, չնորհիւ այն աշակցութեան՝ զոր տուին դրժուարութիւններ չստեղծելու համար, որովհետեւ առանց այս ընտրութեան Բիւրոն չէր կազմուեր: Որովհետեւ այս երեք անդամները ընտրուեցան չնորհիւ եղած ճնշումներու՝ յանուն համերաշխութեան, բայց որոնք բնաւ չէին համապատասխաներ ժողովի փափաքներուն, հարկ համարեցինք, տեսնելով այս մասնաւոր ընտրութիւնները, մասնակցիլ Բիւրոյի աշխատանքներուն միմիայն պրոպագանդի պատասխանատուութիւնով, թէեւ մեզի յայտարարուեցաւ որ, մենք ուրախութիւնով պիտի ընդունուէինք, եթէ ժողովին մէջ յայտարարութեան ձեւի տակ յայտնած մեր որոշումէն հրաժարէինք:

Եւրոպական պրոպագանդի վիճաբանութիւնը կ'ամփոփուէր Փրօ Արմենիայի հրատարակութեան եւ այն յատուկ միջոցներուն շուրջ [որոնք ձեռք առնուած էին], հանրային կարծիքը խնդրին լուծման մասնակից ընելու համար: Անգլ. եւ գերմ. Pro Armeniaի հրատարակութեան առաջարկը մէկդի ձգուեցաւ մեր կարծիքին համաձայն, որովհետեւ Գերմանիոյ մէջ հանրային կարծիքը ոչ մէկ դեր չի խաղար, եւ թէ մեր տակտիկը պէտք է յենու Ֆրանսօ-անգլօ-իտալական քաղաքականութեան վրայ: Անգլիոյ համար՝ որովհետեւ հոն բաւական ընթերցողներ չկային եւ եղածներն ալ կրնային բաւականանալ [Ֆրանսերէն] Pro Armeniaով, ինչպէս ժողովէն առաջ կը հաւաստէին մեզի մեր անգլիացի բարեկամները: Գալով Եւրոպական շարժումին, հակառակ ստիպողական պահանջներուն՝ որ ճշդէինք ծրագիրը եւ այս ուղղութեամբ նոր բան մը տայինք, մենք կը պատասխանէինք թէ որոշ եւ ճշգրիտ ոչինչ կարելի էր ըսել եւ թէ ամէն ինչ կախում ունէր քաղաքական դէպքերէն: Մեզի կը մնար արթուն մնալ եւ պարագաներէն օգտուիլ դիտնալ:

Հետեւաբար օգտակար կը կարծէին երեք անդամ աւելի ծախսել երկու նոր թերթ ստեղծելու համար (ըստ մեզի ո՛չ-ստիպողական): Նաեւ 30·000 ֆրանքի պիւտճէն քուէարկուեցաւ, անոր մէջ ըլլալով 300 ֆրանք ամսականը՝ որ ես պէտք էի ընդունիլ գոնէ իբր փոխատուութիւն: Մենք ընդունեցինք ասիկա անոր համար, որ 1903ի վերջը մեր անձնական հասոյթը դադրեցաւ: Մինչեւ այդ թուականը, ինչպէս միշտ մեր աշխատութեան առաջին ժամանակներէն ի վեր, մեր 593 ֆրանք ամսականէն խոշոր մաս մը կը ծախսուէր ընդհանուր գործին: Այս անդամ ալ, ժողովի ատենները, բաց մը ունէինք, Տ'Էստորնէլ տը Քոնստանի տղուն հետ Լոնտոն ճամբորդելուս պատճառով, ճամբորդութիւն՝ որ մենք հաշուին մէջ չանցուցինք, թէեւ օգտուեցանք մեր Լոնտոն գտնուելէն՝ համաձայնելու մեր անգլիացի բարեկամներուն հետ Սարա Պերնարի թատրոնի ցոյցին համար: Մեր այս արտակարգ ծախքին աւելցաւ երեք ամսով Սոֆիա երթալու ծախքը, որովհետեւ ժողովի դանձապետին ինձի յանձնած 500 ֆրանքը գործածուած էր Փարիզէն ժրնեւ եւ Սոֆիա երրորդ կարգով ճամբորդութեան եւ Սոֆիայէն Փարիզ [վերադարձին համար], ուրկէ մեկնեցայ Լոնտոն, ժողովի հրամանով, Սասունի գործերուն համար, որ նոր կը սկսէր, շարժում առաջ բերելու: Յոյս ունէինք որ այս բացը շուտով պիտի լեցուէր Փարիզ պաշտօն մը ստանձնելով. պաշտօն մը՝ որ բնաւ չկաշկանդէր ընդհանուր գործը:

***

Երբ մենք ժողովին մէջ ամուլ եւ անվերջ վէճերու մէջ մտած էինք՝ որոնք ամիսներ կը տեւէին, դէպքերը կը դահավիժէին Սասունի մէջ եւ ծանր լուրեր կը հասնէին մեզի: Ժողովը կ'որոշէր մեզ խկոյն ղրկել Եւրոպա՝ [հանրային կարծիքը] յուզելու եւ ներկայ ըլլալու Լոնտոնի միթինկին՝ որ միմիայն ի նպաստ մակեդոնացիներուն կը կազմակերպուէր եւ որ տեղի պիտի ունենար Մարտ 29ին: Փարիզէն անցայ, ուր մեր

բարեկամները, Քիյար եւ Պերար, յանձն առին Լոնտոն գնալ, պայմանով որ մակեդոնական եւ հայկական հարցը միասին նիւթ ընեն եւ ո՛չ միայն առաջինը: Միթինկի առաջին օրը Լոնտոն հասնելով, դնացի խնդրեցի ատենախօսներէն որ մեր հարցի մասին ալ խօսին, եւ Պրքսթրնի հետ ապարդիւն ժամադրութենէս յետոյ, ճէյմս Պրայսի անպայման հաւանութիւնը առի: Խօսեցայ նաեւ Վանի մահուան դատապարտուած մեր ընկերոջ մասին եւ խնդրեցի որ ներում ստանան: Պրայս խնդրեց ինձմէ որ ժողովէն յետոյ թուղթ մը ներկայացնեմ իրեն: Այդ միթինկին մէջ ատենախօսները կարելի չափով խօսեցան հայերու մասին եւ Հայաստանը օրակարգի մէջ դրին: Ահա ինչ որ կարելի էր ստանալ այդքան քիչ ժամանակի մէջ:

Յաջորդ օրը դծեցի իմ ծրագիրս. նախ պատշաճ էր կազմակերպել ուրիշ ցոյց մը՝ այս անդամ մասնաւորապէս նուիրուած մեր հարցին: Ցիչատակագիր մը ներկայացնել անգլիացի մեր երեւելի բարեկամներուն՝ անոնց ուշադրութիւնը հրաւիրելով մեր դատին, ինչպէս ալ ըլլի. յետոյ, ստեղծել նոր հոսանք մը՝ մեզի նպաստ, նոյնքան զօրեղ ինչպէս Պալքանեան կոմիտէի առաջ բերած հոսանքը եւ նոյնքան հայասէր՝ ինչպէս Անկլօ-հայկական Ընկերութիւնը: Պրն. Պրքսթրն, Պալքանեան կոմիտէի նախագահը, կորովի մարդ, հարուստ, տարամերժ եւ անձկամիտ, մակեդոնական հարցին միայն նուիրուած էր: Կուլ տուած էր Անգլիոյ հանրային կարծիքին լաւագոյն տարրերը, երբեմն օգտուելով մեր հին համակրութիւններէն: Ս. Սթիվենսըն, Անկլօ-հայկական Ընկերութեան նախագահը, հայասէր եւ հելլենասէր (Պայրըն ընկերութենէն), հարուստ, սնափառ, առանց կորովի, միայն ինքը կը ներկայացնէր, եւ իր քարտուղարը Աթքին՝ որուն խորհուրդներուն կուրօրէն կը հետեւէր:

Հարկաւոր էր երկու հոսանքներուն մէջ առանց թշնամիներ ստեղծելու, կերպ մը գտնել որ բոլորը ի նպաստ մեզի դառնային: Մտածեցի անդ. մամուլի մասին որ մեծ ազդեցութիւն ունի հանրային կարծիքին վրայ: Գացի դտայ «Տէյլի Նիւզ»ի խմբագիրը, Կարթնրը, որ ինձի խոստացաւ իր պաշտօնական աջակցութիւնը (թէեւ Պալքանեան կոմիտէին մասնակից է). անկէ խոստում ստացայ թղթակից մը ղրկել Սասուն եթէ թիւրքօ-պուլկար պատերազմ ծագի: Մեր ցոյցին համար պրն. Աթքինի միջոցով խմացուցի պրն. Սթիվենսընին, որ վերջապէս յանձն առաւ կազմակերպել մեծ միթինկ մը՝ Ֆրանսօ-անկլօ-իտալական, վստահելով Ֆրանսացի եւ իտալացի բարեկամներու մասնակցութեանը վրայ:

Միաժամանակ կ'ուզէի օգտուիլ այս ցոյցէն որպէսզի անդ. մամուլը խառնուի եւ ընդունի մեր օտար բարեկամները եւ այսպէս ստեղծէ ժուրնալիստներու կոմիտէ մը: Անյաղթելի դժուարութիւններու բախեցանք անդ. մամուլի Ֆրանսականէն տարբեր կազմակերպութեանը համար. այն է՝ որ անդ. մամուլը կեդրոնական ժողով չունի, ինչպէս Փարիզ: Ուրեմն, իւրաքանչիւր լրագիր ինքնագլուխ ըլլալով, որոշեցի որ «Թայմզ»ը եւ «Տէյլի Նիւզ»ը մեզմով զբաղին. սակայն վարչական եւ նիւթական արգելքներ այնպէս ըրին որ մեր ջանքերը անյաջող մնացին:

Պէտք էր այլ կերպ գործել. ստեղծել լրագրողներու կոմիտէ մը՝ որ կազմակերպէ այս ընդունելութիւնը, եւ գործը անոնց յանձնել: Կոմիտէն մնայուն պիտի ըլլար եւ պիտի տար ճշմարիտ թռիչք մը մեր պրոպագանդին, պիտի նուազեցնէր Պալքանեան կոմիտէի դերը: Ճանչցայ մեր հին բարեկամ Percy W. Bunthingի (Contemporary Reviewէն) չնորհիւ, որ ինձի տասնեակ մը յանձնարարութիւններ տուաւ գլխաւոր լրագրողներուն: Այցելութիւններս սպասուած արդիւնքը չունեցան հետապնդուած նպատակին ուղղութեամբ, սակայն եւ այնպէս ծառայեցին մեր հարցի մասին ուշադրութիւն արծարծելու եւ մանաւանդ համոզեցին անդ. մամուլը՝ որ մեր գործունէութիւնը մակեդոնականին հետ միասին պէտք է տանիլ: Ամէն կողմ Պալքանեան կոմիտէի անունը կու տային ինձի, եւ կը հաւատային թէ ատիկա գործին բաւական էր եւ թէ ուրիշ ոչինչ ընելու էր անոր քով: Այդ ատեն քովս ունէի լաւ խորհրդական մը, Ժորժ Հոլիս, որ այցելութիւններուս ընթացքին ինձի կ'ընկերանար եւ տեղեկութիւններ կը քաղէր: Ամէն անդամ խորհրդակցելով եւ կարծիքներ փոխանակելով, հասանք սա եզրակացութեան թէ պէտք էր ստեղծել ցոյց մը, որի շուրջը համախմբուէին օգտակար տարրերը: Այն ատեն երկար խորհրդակցութենէ յետոյ որոշեցինք ստեղծել Փրօ Արմենիայի պաշտօնասենեակ մը, քարտուղարով մը՝ որ պիտի խաղար կեդրոնացնող դեր մը: Պէտք էր գտնել քարտուղարը:

Mr. Braclford, Պալքան. կոմիտէի գործօն անդամներէն մէկը եւ որ մեզի շատ համակիր էր, համակարծիք էր, ինչպէս նաեւ Mr. Massingham, մեր հին բարեկամը, որ միշտ խորհուրդներ կու տար մեզի: Ֆրանսացի իմ բարեկամներս՝ որ Փարիզ ժամանակաւոր դարձիս տեսայ, միթինկի մասին խօսելու համակարծիք էին:

Նախընտրելի թեկնածուն էր պրն. Malloch՝ Պալքան կոմիտէի նախկին քարտուղարը եւ ազդական Braclfordի: Այս ընտրութիւնը մեզի հաճելի էր, որովհետեւ թոյլ կու տար մեզի լաւ յարաբերութիւններ պահպանել Պալքան կոմիտէի հետ եւ օգտուիլ անոնց գործունէութենէն եւ ձեռք բերած արդիւնքէն: Շնորհիւ անոր 2000 հասցէ առինք Պալքան կոմիտէէն եւ 2000 հասցէ՝ «Friends of Armenia»էն, ինչ որ 4000 հասցէ կ'ընէր մեր դատին համակիր: Բայց այս քարտուղարը, որմէ առինք ինչ որ կրնայինք առնել, մեզի յար-

մար չէր շատ մը պատճառներով։ Նախ, որոշուած ծախքի թիւը կ'անցնէր, թիւ մը՝ որ չէի կրնար վերահսկել իմ բացակայութեանս պատճառով, չդտնելով հայ մը՝ որուն վստահէի fnՓpnոը։ Նաեւ կը նկատէի որ մեծ հեղինակութիւն ունեցող մէկը չէ եւ շատ անձնուէր չէր երեւար աչքիս մեր դատին, որովհետեւ ըլլալով միշտ Գալքան կոմիտէի անդամ, երկուքին ալ կը մասնակցէր։ Այս պատճառներով նախընտրութիւնս տուի պրն. Մասսինկամին, որ, մեր բազմաթիւ տեսակցութիւններուն եւ թղթակցութիւններուն նայելով, ինծի հարկաւոր մարդը կը թուէր. իր հին անձնուիրութիւնը մեր դատին, իր անկախութիւնը Գալքան կոմիտէէն, իր անտարբերութիւնը մակեդոնական հարցին համար, անոր. մամուլին մէջ իր մեծ հեղինակութիւնը եւ իր ազդեցութիւնը կ'ըսէին ինծի թէ պէտք էր նկատի ունենալ զինք իբրեւ officeին տնօրէնը, շուրջը ունենալով լրագրողներու կոմիտէին անդամները։ Բայց ան միշտ կը մերժէր եւ իմ փորձերս զուր կը մնային։ Վերջապէս մէկ օր իմ բուռն թախանձանքներուս վրայ խոստացաւ Լոնտոն հրատարակուելիք Pro Armenia թերթին տնօրէնութիւնը ստանձնել։ Կը զգայի որ վտանգաւոր կ'ըլլար եւ իր օգնութիւնը մեզմէ կը հեռացնէր, եթէ բացարձակ մերժէր. ուստի չնորհակալութիւն յայտնելով ա'լ չպնդեցի։

Իմ խորհրդածութիւնները այն գաղափարին կու գային, թէ անգլերէն Փրօ Արմենիան [յարմար պիտի ըլլար] մեզի նպաստաւոր կեդրոն մը հիմնադրելու համար։ Ճէյմս Գրայսի հաւանութիւնը՝ Մարտի միթինկի առեն, Փ. Ա.ի պէտքին մասին, որ չուտով զգալի պիտի ըլլար, շատ մը հացէներու ստացումը՝ որ ֆրանսական Pro Armeniaն իսկ չունէր, այս բոլորը կը դրդէին զիս փորձել այս գործը։

Միւս կողմէ, 19 Մայիսի երեսփոխանական ժողովին մէջ, Ճէյմս Գրայս եւ Սթիվենսըն, իրենց զգացումները կը յայտնէին Սասունի ջարդերուն մասին։ Այսպէս էր վիճակը Յուլիս 29ի միթինկին նախընթաց օրը։

Այս միթինկը աւելի պատկառելի եւ նշանակալից ընելու համար, եւ որպէսզի Իտալիոյ, Ֆրանսայի եւ Անգլիոյ շարժման արդիւնքը համարուի, ուզեցինք որ միաժամանակ այս երեք երկիրներուն մէջ ալ կազմակերպուի։

Գործնապէս անկարելի ըլլալով այդ բոլորին Իտալիա դտնուիլ, օգտուեցանք այն յարաբերութիւններէն՝ որ ստեղծած էինք 1902ի իտալական մեր շարժումէն, ուր մենք ձգեցինք կազմակերպուած կեդրոններ եւ գործունեայ անհատներ։ Այս վերջիններուն մէջ պրն. Գոչչիարտօ յայտնի էր իր անձնուիրութիւնով, կորովով եւ տեղէ տեղ երթալու կարելիութիւնով։ Քիյարի եւ Փրեսանսէի հաւանութիւնով՝ երկար նամակով մը անոր յանձնեցինք այդ պաշտօնը, որուն խոյն յանձն առաւ նուիրուիլ, եւ հենց Մայիս ամսէն Իտալիա ամէն կողմ ման եկաւ ցոյցը կազմակերպելու համար։ Իր երեք ամսուան պաշտօնին միջոցին, պրն. Գոչչիարտօ գրեթէ ամէն օր մեզի տեղեկութիւններ կու տար իր գործունէութեան եւ իր պրոպագանդին մասին, եւ մենք հետզհետէ կը պատասխանէինք նիւթական հարկաւոր աջակցութիւնով եւ օգտակար ցուցմունքներով։

Այսպէս կազմակերպուեցան միթինկներ՝ Փալերմօ, Փավիա, Միլան. փոխանակ ժողովի՝ մեր կոմիտէն բողոքագիր մը կը դրկէր արտաքին գործոց նախարարին։ ...Սիէն, Մեսինա, Ֆլորենցա, Ռեճճիօ, Քալապրայի մէջ ուրիշ միթինկներ տեղի ունեցան։ Եւ կարեւորը Հռովմինը եղաւ, ուր զանազան կուսակցութիւններէ քաղաքական բազմաթիւ երեւելի անձնաւորութիւններ խօսեցան՝ մեր բարեկամ, գիտնական Ճիւզէփ Սերճիի նախագահութեամբ։ Այս ցոյցերը իրենց քաղաքներուն [մէջ] մեծ արձագանգ գտան եւ մեծ յուզում առաջ բերին թէ՛ փողոցի եւ թէ տեղական մամուլին մէջ։

Միւնոյն ատեն, իտալական խորհրդարանին մէջ մեր բարեկամ Frascassi, Del Balzo el Sacchi երեսփոխանները հարցապնդեցին Սասունի ջարդերուն մասին։

⁂

Ֆրանսայի մէջ գործը աւելի հեշտ էր չնորհիւ հանրային կարծիքի ամենանպաստաւոր տրամադրութիւններուն։ Մեր աջակցութիւնը ուրեմն չունեցաւ միւնոյն վճռական նշանակութիւնը՝ ինչպէս այլուր, որովհետեւ ամէն կողմէ հայասէրները մեզի կ'աջակցէին։

Նաեւ «La ligue des droits de l'homme»ը, Ֆրանսայի է'ն հզօր կազմակերպութիւններէն մէկը, որովհետեւ մօտ 60·000 անդամ ունի, Ապրիլի սկիզբը ձայն կու տար ի նպաստ մեր դատին եւ կը պահանջէր դաշնագրերու դործադրութիւնը։

Միաժամանակ Սէնի ընդհանուր խորհուրդը, որ կը պարունակէ նահանգին ամբողջ քաղաքապետութիւնը, եւ որուն որոշումները կը ներդործեն միւս երկու խորհրդարանական ժողովներուն քուէներուն վրայ, Յուլիս 8ին պրն. Քոլլիի՝ Փարիզի քաղաքապետութեան փոխ նախագահին առաջարկին վրայ, ցանկութիւն կը յայտնէր «հանրապետութեան կառավարութեանը, որ, հաւատարիմ հարստահարուածներու պաշտպան իր աւանդութիւններուն, Հայաստանի դէպքերուն [առթիւ] հարկ եղած չուտափոյթ միջոցները ձեռք առնէ»։

Օրակարգը, որ փակեց ժողովին նիստը, միաձայնութեամբ քուէարկուեցաւ։ Գործունէութեան առաջին ցանկութիւնն էր՝ ի նպաստ հայոց, որ քուէարկուած էր խորհրդարանական ժողովի մը կողմէ։

Վերջապէս պրն. Փրեսանսէ, պերճախօս լեզուով երեսփոխանը, ժողովին մէջ հարց դրաւ արտաքին գործոց նախարարին եւ հրաշալիօրէն դծեց Սասունի կացութիւնը։ Մենք ներկայ էինք այդ նիստին եւ հաստատեցինք թէ ի՛նչպէս խորհուրդը, միաձայն, առանց կուսակցական խորութեան, ճառը լսելէ յետոյ, պատրաստուեցաւ պարսաւանքի բանաձեւ մը քուէարկել. ամէն կողմէ ատենախօսին կը դիմէին, որ իր խօսքը հարցապնդումի փոխէ, որով միայն կարելի է օրակարգի քուէ ստանալ։ Բայց պրն. Փրեսանսէ, վախնալով որ նախարարական տաղնապ առաջ կու դայ եւ չուզելով հանրայետական կառավարութեան հակառակորդներուն հարցին վրայ իւղ քսել, բաւականացաւ հարցումով՝ առանց ընդլայնելու։

Բայց մեր գլխաւոր գործը, մեր Ֆրանսա անցնելու ատեն, Լոնտոն կրկնակի ճամբորդութեան միջոցին, այն պիտի ըլլար՝ որ որքան կարելի էր շատ Ֆրանսացի եւ իտալացի ներկայ ընել միթինկին, որովհետեւ անգլիացիներու հրաւէրներուն համար մենք Սթիվենսընի վրայ վստահած էինք։ Այս նպատակով մեր իտալացի եւ ֆրանսացի բարեկամներուն հետ թղթակցութեամբ (մանաւանդ այս վերջիններուն հետ) նոր խօսակցութեան մտանք։ Լոնտոնի հեռաւորութիւնը կարեւոր պատճառ մ'եղաւ, որ իտալացիք ձեռնպահ մնան. մանաւանդ որ մեզի անկարելի էր ճամբու ծախքը վճարել, որ մեծ գումարի կրնար հասնիլ։

Իսկ Ֆրանսացիներէն շատ երեսփոխաններ եւ ծերակուտականներ ոչ միայն իրենց հաւանութիւնը կու տային, այլեւ ներկայ ըլլալու փափաք կը յայտնէին։ «Փրօ Արմենիա»ն հրատարակեց անոնց անունները, որոնց մէջ պրն. պրն. Գիէնվրնիւ Մարթէն, արդի նախարարը, եւ պրն. Քայօ, նախկին ելեմտական նախարարը։ Սակայն Քոմպի նախարարութեան շատ տագնապային կացութիւնը՝ որուն ինքը նեցուկն էր եւ Սթիվենսընի կողմէն Ահմէտ Բիզայի եւ Քազազիսի հրաւիրումը, այնպէս ըրին որ խոստումին չպահեցին։ Փրեսանսէն ժողովին ծանուցած էր այս երկու պարոններու ներկայութիւնը, ինչ որ չուտով վարանումներ առաջ բերաւ, մանաւանդ որ փոփոխմտութիւններն ալ իրենց ազդեցութիւնը ունէին։ Շարժառիթով մենք համակրութեան եւ հաւանութեան բազմաթիւ նամակներ ստացանք Ֆրանսայի եւ իտալացի նշանաւոր մարդոց կողմէ։ Ֆրանսան զրկած էր վեց կամ եօթը պատգամաւոր՝ որոնցմէ Փրեսանսէ եւ ծերակուտական Տելիէչ։ Իտալիան՝ ունէր պրն. Մածծինի, շատերու կողմէն եկած։

Լոնտոնի միթինկը ահագին յաջողութիւն ունեցաւ։ Ներկայ էին Անգլիոյ պահպանողականներէն եւ ազատականներէն, եւ քաղաքական տեսակէտով՝ ֆրանքօ-անգլօ-իտալական ճշմարիտ եւ օգտաւէտ ցոյց մը էր։ Կը մնայ յիշել փոքրիկ միջադէպ մը, որ հանեց Ահմէտ Բիզան. ան սեղանին վրայ ճառ արտասանելու ելաւ, բայց իրեն եղած հակառակ ընդունելութեան համար, ձդեց իր ծրագիրը եւ աներեւութացաւ, եւ այսպէս՝ ցոյց տուաւ պրն. Սթիվենսընին իր անճարակութիւնը եւ փափկանկատութեան պակասը։

Բոլոր այս ցոյցերը որոնք գարնան իրարու յաջորդեցին այս երեք երկիրներուն մէջ՝ հակառակ մեր ունեցած նեղ միջոցներուն եւ օգնութեան պակասութեանը՝ որը միշտ ճանչցայ, մեծ ազդեցութիւն ունեցան Սասունի դէպքերուն վրայ։ Մեծ սխալ կ'ըլլար կարծել թէ առանց այս ցոյցերուն Սասունի ջարդերը աւելի մեծ ջարդերու նախերգանքը չպիտի ըլլային, ինչպէս տասը տարի առաջ։ Հանրային կարծիքը, արթընցած այս երկիրներուն մէջ, անչուշտ ճնշում բանեցուց իրենց կառավարութիւններուն վրայ եւ դիւանագիտութիւնը ամէն բան բրաւ՝ կոտորածը կեցնելու եւ տեղական բնաւորութիւն տալու։

Պէտք է խոստովանիլ, թէ մեր հեռագիրներուն տարածած լուրերը իսկապէս չափազանցուած էին եւ ականատես վկաներուն տեղեկութիւնները (ինչպէս Անդրանիկը) աւելի համաձայն էին տէրութիւններու ներկայացուցիչներու տեղեկութիւններուն հետ, քան թէ մեր աղմկող հեռագիրներուն։ Անշուշտ չէ կարելի ուրանալ դիւանագիտական գործունէութեան արդիւնքը, բայց եթէ աւելի դրական արդիւնք չստացուեցաւ, եթէ խոստացուած բարենորոգումները ձեռք չառին, պէտք է աչքի առաջ ունենալ այդ խռով ժամանակ Եւրոպայի վիճակը, ուր ռուսօ-ճափոնական կռուի յաւիտենական վախը կը տիրէր։ Բոլոր կառավարութիւնները, մանաւանդ Ֆրանսականը, սխալ կը համարէին Ռուսիան գրաղեցնել նորանոր փորձերով։

Միթինկէն յետոյ մենք Լոնտոն մնացինք, գրքոյկով հրատարակելու տեղեկագրութիւնը, որ կրկնակ նպատակ ունէր. նախ՝ պրոպագանդի համար եւ ապա՝ այս 10·000 օրինակի հրատարակութիւնով Լոնտոնի մեր officeին բացումը ընելու։

Այս պատճառով ուզեցինք նաեւ բացումի սեղան մը կազմակերպել՝ ուր մեր անգլիացի երեք բարեկամները հրաւիրուած էին։ Բայց այս բանակցութիւններու միջոցին Քրիստափորէն նամակ մը ընդունեցինք որ մեզ Փարիզ կը կանչէր, եւ ձգելով այս ծրագիրը, Ֆրանսա վերադարձանք 9 Յուլիսին, ուր մեր բարեկամը՝ Իսաք մեզի կու տար կաթողիկոսին նամակը՝ որով զիս պատգամաւոր կ'անուանէր իր պատուիրակութեան։

Այս անուանումը մեզի համար անակնկալ մը եղաւ երեք տեսակէտով։ Մինչեւ այդ ատեն ոչ ոք ինծի խօսած էր այդ մասին եւ Ընդհանուր Ժողովին մէջ հարց եղած չէր։ Ճիշդ է թէ Մարտիրոսը կ'առաջարկէր եր-

կու եկեղեցիներուն մէջ համաձայնութիւն(2) որ ժողովը մերժեց. միւս կողմէ՝ Սոֆիայէն մեկնած օրս Սիմոնը ինծի կ'առաջարկէր երկու եկեղեցիներուն մէջ բարեկամական թղթակցութիւն մը առաջ բերել, ինչ որ փորձեցի Լոնտոնի մէջ՝ առանց մեծ խանդավառութեան հանդիպելու, որով այլեւս երկար չըրի (այս մասին, սակայն կը խօսիմ իմ յիշատակագրիս մէջ)։ Բայց երբեք պատգամաւորութեան մասին խօսք չէր եղած։

Այս մասին Քրիստափորին հարցնելով, ինծի պատասխանեց թէ այդ Սիմոնին գործն էր, ինք միայն անորոշ բաներ մը գիտէր։ Զարմացայ որ առաջուց չիմացուցին եւ խորհուրդ չհարցուցին, որպէսզի հողը պատրաստուէր։ Զարմացայ նմանապէս այդ երկու եպիսկոպոսներու նշանակումէն, որոնք անկէտ օտար լեզուներու, առանց կրթութեան, իմ վրայ ցաւագին տպաւորութիւն կ'ընէին։ Զարմանալի էր նոյնպէս որ այդ պատգամաւորութիւնը այնքան ուշ մնացած էր, որովհետեւ այդ ժամանակ Սասունի դէպքերը կը մարէին [արդէն] եւ աւելի առաջնակարգ քաղաքական խնդիրներ Եւրոպայի ուշադրութիւնը կը դրաւէին. եւ պիտի սկսէր Յուլիսի վերջը՝ երբ բոլոր վեհապետները կը պատրաստուէին կառավարչական գործերը ձգել եւ առանձնանալ։

Բացի այդ, աւելի ապշած էի մանաւանդ, որ կաթողիկոսի նամակը կարող էր ինծի հանիլ Յունիսին, ինչ որ նախընտրելի պիտի ըլլար եւ կարելի, որովհետեւ Մայիսի վերջի թուականը կը կրէր։ Աւելցնեմ որ այդ պարագան կարող էր յաջողութեան ուրիշ կերպարանք տալ։

Առանց այս ուշացումին պատճառը փնտռելու, կը յիշեմ միայն ինչ որ աւելի լաւ ըմբռնել կու տայ այն շուարումը եւ դժուարութիւնները՝ որոնց մէջէն պատգամաւորութիւնը պիտի շարժէր։ Ինչ ալ ըլլար, պէտք էր հպատակիլ այս պայմաններուն եւ քաղել վատ դրութենէ մը՝ կարելի օգուտները։ Ինչ որ անտարակուսելի էր, այն է՝ անգամ մը որ պատգամաւորութիւնը նշանակուած էր, պէտք էր մենք ալ մասնակցէինք։ Եւրոպայի մէջ իմ ծանօթութիւններս, ինչպէս նաեւ պաշտօնական յարաբերութիւններս, ինծի կ'ընձեռէին անվիճելի եւ բաւականին ձեռնհասութիւն։ Ուստի ես ընդունեցի, ամէն վտանգ եւ կորուստ աչք առնելով, ոչ իբր կազմակերպութեան պաշտօն մը, այլ իբր ազգային պաշտօն մը, ինչ որ չէր արգիլեր կազմակերպութեան ներկայացուցիչ ըլլալ միշտ, պաշտպանելով անոր շահերը ամէն առթիւ։

Բիւրոյէն ինծի հասած խորհուրդները, ինչպէս ցուցմունքները Սիմոնի՝ որ, կ'երեւի, կաթողիկոսին հետ մասնաւոր խօսակցութիւն ունեցած էր, կարելի չափով պահեցինք։ Անոր մասնանշած մարդոց հետ խորհրդակցութիւնը կարելի չեղաւ իրագործել, բացի Զերազէն, որովհետեւ Օհաննէս Խանը, Գերլինի դեսպանատան կցորդ, բացի իր անձեռնհասութենէն, այդ պահուն Գոլիս գացած էր ամուսնութեան մը համար։ Մելքոն Խանը, Հռոմի դեսպան, մեր առած տեղեկութիւններուն, ինչպէս նաեւ արքեպիսկոպոսներու տեղեկութիւններուն համաձայն, սկեպտիկ էր մեր դիմումի փորձի մասին, եւ նկատելով իր Հռոմ կենալը՝ անոր հետ տեսակցութիւնը վերապահեցինք Հռոմ երթալուս։ Իսկ Զերազը հրաւիրեցինք փոքրիկ խորհուրդի մը եւ դիմեցինք անոր թարգմանութեան եւ այցելութեան մը համար, ուր ցոյց տուաւ իր անպէտքութիւնը։ Իսկ պատգամաւորութեան չմասնակցելուն պատճառներէն մէկն ալ միջոցներու պակասն էր։ Նըմանապէս այս պակասութեան պատճառովն էր որ չկրցինք հետեւիս ուրիշ մարդ առնել, որովհետեւ ոչ եպիսկոպոսներուն եւ ոչ իմ ծախքս չէր ապահովուած։

Անտարակուսելի էր որ մեր մասնակցութիւնը շատ մը ինտրիկներու եւ նախանձի փոթորիկ պիտի յարուցանէր, սակայն մեր փափաքն էր այդ պզտիկութիւններուն դիմաց խղճմտօրէն կատարել մեր պարտականութիւնը։

Աւա՜ղ. ամէն կողմէ մեծ յոյսեր դրած էին այս ձեռնարկի կարեւորութեան վրայ, որ կարծես գլխաւոր դեր մը պիտի խաղար, եւ իմ վրայ մեծ-մեծ պարտականութիւններ կը դնէին։ Գրեթէ բոլոր հայ խաւերուն մէջ սխալ ըմբռնում կար, թէ այս պատգամաւորութիւնը եւրոպական մեծ շարժում պիտի պատճառէր, թէ բոլոր պետութիւնները պիտի խոնարհուէին այդ պատգամաւորութեան առջեւ, եւ թէ Հայաստանը ընդմիշտ պիտի ազատուէր իր տառապանքներէն եւ ցաւերէն։ Համաշխարհային մամուլը, այդ երեւակայութիւններուն նայելով, պիտի քայլ առ քայլ հետեւէր մեզի։ Դժբախտաբար այս պատրանքներէն հեռու էի ես եւ այդ անսահման յոյսերուն բաժնեկից չէի։ Իմ տեսութիւններս շատ աւելի համեստ էին եւ աւելի համաձայն իրականութեան։ Գրեթէ ստոյգ գիտէի որ այս պատգամաւորութիւնը ոչինչ պիտի փոխէր հայկական դրութեան մէջ. թէ կառավարութիւնները ոչինչ պիտի ընէին անոր «ճնշման» տակ, եւ ես անոր մէջ կը տեսնէի միմիայն պրոպագանդի նոր զէնք մը, որ կարելի էր գործածել պաշտօնական աշխարհի մէջ, հանրային կարծիքին համար աշխատելէ յետոյ։ Ես կը տեսնէի այս պատգամաւորութեան մէջ միայն այն՝ որ վեհապետները կը ճանչնան հայ ազգին պետը, եւ այս ծանօթութիւնը ապագային դուռները բաց կը ձգէր։ Սակայն այս նպատակը, այնքան համեստ, ինծի խոչընդոտներով լեցուն կը թուէր։ Գիտէի թէ թուրք, ռուս եւ գերմանական դիւանագիտութիւնը ձեռքէն եկածնին պիտի ընէին, արգիլելու համար հայոց կաթողիկոսին այդ քայլը, ինչ որ իրենց հիմնական քաղաքականութեան հակառակ է։

Գիտի չերկարիմ պատգամաւորութեան վրայ, որուն պատմութիւնը կաթողիկոսին գրած նամակիս մէջ նկարագրած եմ։ Կազմակերպութեան հարցերով միայն պիտի հետաքրքրուիմ եւ միւսները պիտի նշանակեմ մտքի կարգով։

Կ'ըսեն թէ առաջին գործողութիւնն է որ թանկ է։ Ուստի մենք կարելին ըրինք Ֆրանսայի մէջ, ուրկէ պիտի սկսէինք՝ յաջողելու համար։ Մէկ կողմէ գիտնալով որ մենք կրնայինք ռուս և թուրք դեսպաններու կողմէ արգելքի հանդիպիլ, միւս կողմէն՝ որ Տելքասէն ձեռքէն եկածը պիտի ընէր մեր դիմումը տկարացընելու և նշանագուրկ ընելու, ուրիշ, չնորհիւ քաղաքական մեծամեծներու տրամադրութեան, չէր կրնար պրծիլ, մենք որոշեցինք չրջանակի մը մէջ առնել ան, ուրիշ չկարենար դուրս գալ, հակառակ իւր ճարպիկութեան, եւ որպէսզի ժամանակ չտանք դեսպաններու ճնշման տակ իյնալու, զգուշացայ նախարարի ունկընդրութենէն առաջ մեր պատգամաւորութեան մասին լրագիրներուն մէջ խօսելէ։ Մեր բարեկամները Փարիզէն մեկնած էին, արձակուրդի ժամանակ ըլլալով։ Նախագահը եւ Տելքասէն չատոնց է կը պատրաստուէին մեկնելու, եւ հակակղերական պայքարն ալ սկսած ըլլալով՝ եկեղեցականներու նկատմամբ շատ ժխտական էին այն ատեն։ Տելքասէ, ինչպէս կը նախատեսէի, բոլոր ճարպիկութիւնը գործ դրաւ մեր դիմումը ի դերեւ հանելու համար՝ ժամադրութիւններու մէջ անելանելի խառնաշփոթութիւն ձգելով՝ որը քաղաքական մարդիկ եթէ չպահանջէին այս առթիւ, իւր փափաքն էր առանձին ունկնդրութիւնով մը վերջացնել։ Սակայն ի զո՛ւր. Յուլիս 28ին մեզ ընդունեց պաշտօնապէս։

Ունկնդրութեան ճառին մէջ, Վիքթոր Գերարի ներկայութեան, մեր դատին իր անձնուիրութիւնը երդուելէ յետոյ, յայտնեց որ կ'ուզէր Գերլինի դաշնադրութեան ամենաքիչը (նուազագոյնը ?) գործադրել, չորս տէրութեանց համաձայնութիւնովը։ Վերջին անցած դէպքերը այս խորհրդաւոր խօսքերուն իմաստը լուսաբանեցին մեզի։ Որո՞նք էին այն չորս տէրութիւնները որոնց վերջինին հետ այս մասին բանակցութեան մէջ էր։ Այդ բոպէին յայտնի էր որ Ֆրանսան, Անգլիան եւ Իտալիան աչքի առաջ ունէր, եւ կը բանակցէր Ռուսիոյ հետ՝ Գերմանիան չէզոքացնելու եւ Թրքաստանի հարցին մէջ [անոր ճիգերը] ի դերեւ հանելու համար։ Այս քաղաքականութիւնն էր որ շարունակեց Մարոքի գործերուն մէջ։

Նախագահին հետ տեսակցիլը անյաղթահարելի դժուարութիւններ ունէր, որովհետեւ երկրորդ օրը կը մեկնէր, եւ Տելքասէն շատ նպաստաւոր չէր տեսակցութեան։ Մեր բոլոր բարեկամները, որոնք կը ցանկային որ յաջողէինք, մեզի կը պատասխանէին թէ (ինչպէս Լավիս, Տեսթուրնէլ եւն) անկարելի կը թուէր։

Հարկ եղան բացառիկ պարագաներ եւ Վ. Գերարի աջակցութիւնը, որ այդ տեսակցութիւնը տեղի ունենար Մոնթէլիմար գնալէ քանի մը ժամ առաջ։ Ֆրանսայի մէջ մեր պատգամաւորութիւնը լիուլի յաջողութիւն ունեցաւ, հակառակ յիշուած աննպաստ պայմաններուն եւ մենք դիմեցինք Անգլիա, ուր հողը պատրաստուած էր, մեր բարեկամներու ղրկած հեռագրերով։

Լեսթաունին հետ տեսակցութիւնը, չնորհիւ ամերիկեան դեսպանին եւ Ճէյմս Գրայսի, մեծ դժուարութիւններ չներկայացուց։ Քանի մը բարեկամներ ճաշի հաւաքեցի՝ խորհուրդ առնելու, դիւրացնելու համար մեր տեսակցութիւնը Քենթըրպըրիի արքեպիսկոպոսին հետ. կարելին ըրինք մամուլին մէջ շարժում առաջ բերելու համար. խմբագրութիւնները այցելելով, լրագրապետները ընդունելով եւ տեղեկատու գործակալներու հաղորդելով գլխաւոր բաները։ Սակայն մեր Անգլիա երկար բնակութեան միջոցին ուրիշ դժուարութիւններ ծագեցան։ Նախ, մեզի տրուած յոյսէն յետոյ, թագաւորին ունկնդրութեան մերժումը՝ որը մենք կաթողիկոսին ղրկած մեր նամակին մէջ բացատրեցինք, քանի ան կը փափաքէր որ անպատճառ ընդունուէինք։ Միւս դժուարութիւնները ներքին էին, ինչպէս եպիսկոպոսներուն հետ մեր անհամաձայնութիւնները, որոնք Ֆրանսայի մէջ երեւան չեկան որովհետեւ կարճ մնացինք հոն եւ յաջող անցաւ։ Սակայն Անգլիոյ մէջ, այս անվերջ սպասումներէն յետոյ, վերաս թափեցին իրենց դժգոհութիւնը եւ ինքնագլուխ յաւակնութիւններ յայտնաբերեցին՝ մինչեւ հետս գէշ վարուելու աստիճան։ Սարաճեանը՝ քմահաճ և կամայական, պատգամաւորութեան պետը կարծելով ինքզինք եւ Լոնտոնի հայերուն ազդեցութեան տակ ծռելով, անտանելի եւ ամօթաբեր կռիւներ կ'ընէր հետս. Այվատեան Սրբ., որ իբր թէ իմ պաշտպանս էր եւ կ'ուզէր միջնորդի դեր կատարել, աւելի կը ձանձրանար լեզուներու իր բացարձակ տգիտութեան պատճառով եւ կը զուարճանար իմ եւ անոր մէջ էնտրիկներ չինելով ու քակելով։ Այս բանին պէտք է վերագրել պրն. Յակոբեանի մերժեցումը այս եպիսկոպոսին, եւ առանց ինծի իմացնելու անոր մասնակցումը Լենսթաունի հետ մեր տեսակցութեան։ Մասնակցութիւն մը՝ որ արգիլեց ինծի, անդլերէն խօսելուն համար, հետեւիլ խօսակցութեան եւ ուղղութիւն տալ եւ հարկաւոր զգաստարերը յայտնել Լենսթաունին, որուն ընդունելութիւնը համակրելիօրէն բարեացակամ էր։

Դէն կը ձգեմ Լոնտոնի մէջ մեր անցուցած միօրինակ կեանքը, ուրկէ ուզեցի օգուտ հանել դատին՝ հակառակ անգլիական արձակուրդներուն, եւ անգլիացի եւ Ֆրանսացի մեր բարեկամներուն խոր-

հուրդը առնելէ յետոյ, որոնք ամէնքն ալ կը պնդէին Թագաւորին հետ տեսակցութեան կարեւորութեան վրայ, որովհետեւ ան միայնակ կրնար բանալ միւս վեհապետներուն դռները, որոշեցինք մեկնիլ Ամերիկա, ժամանակ չհեղլու համար. եւ մեկնելէ առաջ, խմացուցինք Արեւմտեան Բիւրոյին, առանց որեւէ պատասխան ստանալու:

Արքեպիսկոպոսներուն ամենամեծ մտահոգութիւնը նիւթական մտահոգութիւնն էր: Ամէն օր իրենց փարաները կը համրէին, ամէն օր կը դանդատէին դրամ չվճարելէն եւ այն իրողութենէն՝ որ կաթողիկոսը այս պարմաններուն մէջ զիրենք զրկած էր. բայց մեծ յոյս ունէին Մանչեսթրի հայերուն վրայ՝ որոնց մօտ զացին երկուքը դրամ հաւաքելու համար, որովհետեւ Փարիզ հաղիւ յաջողած էին. իսկ պատգամաւորութիւնը հոգերնին ալ չէր: Սարաճեան տէրութիւններու դիմումը մուրացկանութիւն կը նկատէր, ինչ որ յայտարարեց հայկական ժողովի մը մէջ, եւ իր վրայ ծանրացած գերէն կը մտածէր ազատիլ կարելի փութով: Այվատեան եպիսկոպոսը անհաւատալիօրէն սկեպտիկ էր, ոչ մէկ կարեւորութիւն կու տար այս պատգամաւորութեան, եւ մեծ-մեծ կ'ըսէր՝ որ յեղափոխութիւնը միայն կրնար փրկել հայերը. սաստիկ կը նեղուէր եւ միմիայն կողմնակի բաները կը նայէր.— ճամբորդութիւն, զբօսանք, որով իմ գործս տարապայման կը դժուարանար: Կարելին ընելով մեր մէջ համերաշխութիւնը պահելու համար՝ բոլոր մարդոց աչքին, անոնցմէ մէկը ոգեւորեցի, ըսելով որ մեր իրաւունքն է մեզ պաշտպանել եւ ոչ թէ ողորմութիւն մըն է որ կ'աղերսենք: Միւսը ոգեւորեցի ըսելով որ՝ դատին յաջողութեանը համար, եւրոպական գործունէութեան ընկերանալու է յեղափոխական ճիգը: Փարիզէն մեկնելէն առաջ, Քրիստափորին հետ խօսած էինք որ ճամբորդութեան ծախքին համար՝ պրոպագանդի սնտուկէն պէտք էի առնել, բայց երբ եպիսկոպոսները ինծի առաջարկեցին որ ծախքերը միասին ընենք, ընդունեցի, շատ չծանրանալու համար կազմակերպութեան վրայ:

Տեսնելով Լոնտոնի մէջ որ դրամները այնքան շուտ չէին հասներ, եւ որոնք չէին հաշուեր արդէն, ինծի զգացուցին թէ ես սկսած էի բեռ ըլլալ իրենց պիտճէին, եւ երրորդի մը առջեւ ըսած ըլլալով որ բոլոր իմ պէտքերս իրենք կը հոգան, ես գործին եւ իմ արժանապատուութեանս համար՝ իմ հաշուոյս ծախսուած բոլոր գումարները վճարեցի: Ամէն ջանք կ'ընէի որ համերաշխ պահեմ եւ իմ արժանապատուութեանս նեղածին չափ ամէն ինչ կ'ընէի, բարոյական մեծ տառապանքներու գնով, որպէսզի մեր պատգամաւորութեան մէջ պառակտում առաջ չգար: Նոյնիսկ այս նպատակով երկուքին ալ մէյ մէկ նուէր ըրի: Ահա այս էր մեր վիճակը Ամերիկա մեկնելէ առաջ:

Իմ ընկերներս ամէն կերպ զուգորդութիւններ կ'ընէին գտնելու համար Ամերիկայի մէջ այն դրամը, որ ըստ իրենց՝ չունէին. ես կը մտածէի թէ Ամերիկայէն եւ իր նախապահէն ինչպէ՛ս պիտի ընդունուէինք: Ճամբայ ելլելէ առաջ խօսած էի Ռէյնոլտսի հետ՝ որ յանձրն առած էր Ռուզվելթի կողմէն հողը պատրաստել:

Մեր դուշակութիւնները սխալ չելան: Նիւ Եորք հասնելուս՝ Ռէյնոլտս մեղի կ'իմացնէր որ գործերը լաւ կ'ընթանային եւ անօրինակ անձնուիրութիւնով մը մեղի հետ Վաշինկթոն ընկերացաւ մեզ ներկայացնելու համար: Հակառակ որ ընտրութիւններու առաջին օրերն էին, կարելի չափով նախագահը իր բացայայտ ապահովութիւնը տուաւ՝ թէ պիտի չահագրգռուի մեր հարցով: Արքեպիսկոպոսները որ միմիայն իրենց պէտք եղած դրամին մասին կը խորհէին, եւ չրջապատուած ըլլալով այդ հարցին մէջ իրենց օգնելու կարող մարդիկներով, վախնալով միւս կողմէ որ իմ անձս կրնայ վնասել իրենց՝ այդ գործին մէջ, սկսան ինծի դէմ կարդ մը խծբծանքներ, վէճեր, էնտրիկներ, ցոյց տալու համար թէ իրենք անկախ են ինձմէ: Ձեմ պատմեր հազար ու մէկ նեղութիւնները որ ունեցայ իրենց հետ՝ բոլոր մանրամասնութիւններով. միայն պիտի ըսեմ, որ կենցաղավարութեան պահանջածը կատարեցի դէպի զանոնք եւ Ռուզվելթի հետ տեսակցութենէն յետոյ ձղեցի որ իրենց փողի մասին մտածեն եւ ես գացի Պոստոն՝ Խաղաղութեան համաժողովին, ուր տեսայ շատ մը եւրոպացի բարեկամներ, ինչ որ ինծի մեծ միխթարութիւն եղաւ՝ իմ ընկերներուս հետ ունեցած անպիտան կեանքիս մէջ: Ուրիշ միխթարութիւն մըն ալ՝ Նիւ Եորք, Պոստոն, Փրովիտենս եւ Ֆիլատելֆիա հայ ընկերներէս դտած ընդունելութիւնս էր, ուր, ի մեծ զարմացումն ինծի եւ իմ շուրջի մարդոցս, հայերէն բանախօսութիւններ ըրի իմ պատգամաւորութեանս եւ Եւրոպայի մէջ պրոպագանդի մասին:

Խաղաղութեան համաժողովին, բացի մեր դատին նպաստաւոր օրակարգէն եւ տաք ճառերէն, բաներ անցան որոնք առաջին անգամն է կը պատահէին. Հայաստանի ներկայացուցիչին հետ, իբր ինքնավար երկրի մը ներկայացուցիչին հետ վարուեցան: Ընտրուած ըլլալով Հայաստանի ներկայացուցիչ՝ բարի գալուստ մաղթեցինք յանուն Հայաստանի, ինչպէս միւս ազգերու պատգամաւորները, եւ ասոր համար մեզ համաժողովին փոխ նախագահ ընտրեցին, յանձնախումբի անդամ եւ տեղեկաբեր՝ Հայկական Հարցին:

Խաղաղութեան համաժողովէն յետոյ աճապարեցինք Եւրոպա դառնալ՝ Անգլիոյ Թագաւորին հետ տեսակցութիւն մը ունենալու համար, սակայն ամէն տեսակ նեղութիւններ ունեցանք մինչեւ համոզեցինք եպիսկոպոսները, որոնք անպայմանօրէն կ'ուզէին մընալ՝ փող հաւաքելու համար: Մեկնելէ առաջ ի պահու Ռէյնոլտսի սեղան մը տուինք՝ որ նախապէս եպիսկոպոսները ուզեցին իրենց վրայ առնել, բայց ետ

կեցան երբ ծախքը տեսան եւ այդ պատճառով մեր մէջ մեծ վէճ ծագեցաւ: Նաւը դացած ատեննիս, կառքին մէջ, Սարաճեան եպիսկոպոսը ձեռքը բարձրացուց վրաս: Կը յիշեմ այս միջադէպը որովհետեւ յետոյ դէպքերը կնճռոտեց: Չէի ուզեր որ աննշմար անցնի ասիկա. խզեցի յարաբերութիւններս եւ պահանջեցի որ ներում խնդրէ:

Այս պայմաններուն մէջ վերադարձայ Լոնտոն, մէկուն հետ դժտուած, միւսին վրայ ապահով չըլլալով: Այս դրութիւնը բարդացաւ անգլո-ռուսական միջադէպով եւ անգլերէն Pro Armeniaի հրատարակութեան համար որոշում մը տալու կարիքով: Միակ ըլլալով եւ զգալով պատասխանատուութիւններու կարեւորութիւնը, ծրնեւէն ընկեր մը ուզեցի՝ անմիջական խորհրդակցութեան մը համար, բայց մտիկ չրրին: Դիպուած մը զիս հաշտեցուց արքեպիսկոպոսին հետ: Մեր բարեկամները մեզի խրատ տուին՝ խորհուրդ հարցնել մեր Ֆրանսացի բարեկամներէն: Ցեստաձգեցի Pro Armeniaն, որովհետեւ Բիւրոն Ընդհանուր Ժողովին բացորոշ վճիռը մէջ կը բերէր՝ որուն դէմ ոչ ոք կրնար գործել:

Կաթողիկոսին զրկած նամակիս մէջ՝ երկարօրէն կը խօսինք մեր դիմումներուն վրայ Անգլիոյ Թագաւորին մօտենալու համար. այն յոյսի մասին, որ, երբ Փարիզ էինք, ունեցանք Քենթըրպըրիի արքեպիսկոպոսին գծով եւ վերջապէս վերջնական անյաջողութեան մասին: Միակ բանը որ կ'ուզեմ ցոյց տալ, այս անյաջողութեան գլխաւոր պատճառն է ան, պատճառ՝ որ յետոյ իմացայ առանց անոր ճշմարիտ վաւերականութիւնը ապահովելու, բայց որ մեզի հաւանական կ'երեւի եւ կը բացատրէ անգլիական կառավարութեան տատամսումը եւ Թագաւորին կողմէ մեզ ընդունելու ցոյց տուած յօժարակամութեան պակասը: Կը թուի թէ ռուսական դեսպանը, Պէքենտորֆ, ստիպողական դիմումներ է ըրեր Լորտ Լենսթաունին, իմացնելով որ պատգամաւորութիւնը բաղկացած էր ռուսահպատակներէ՝ ինչ որ իրենց կառավարութեան արտօնութեամբ չէր: Եւ եթէ Անգլիոյ Թագաւորը շնորհէր այդ ունկընդրութիւնը, ռուս կառավարութիւնը անբարեացակամ պիտի նկատէր [այդ կեցուածքը]:

Դեսպանին այս տեսութիւնը բոլորովին մասնաւոր կարեւորութիւն ունէր անգլո-ռուսական միջադէպի պահուն: Մեր Ֆրանսացի եւ անգլիացի բարեկամներու հետ խորհրդակցութիւնը մեզ աւելի կը քաջալերէր, որ գոնէ Իտալիա երթայինք: Սակայն Բիւրոն անփոփոխօրէն կը պատասխանէր.— «Առժամապէս դադրեցուցէք»: Իմ համոզումս էր գոնէ Իտալիա երթալ, ապասումէ մը յետոյ՝ եթէ հարկ էր: Ցոյս ունէի որ կը յաջողէինք այս երկրին մէջ՝ շնորհիւ մեր բարեկամներուն: Իսկ Գերմանիոյ եւ Աւստրիոյ համար, նամակը նախարարներուն պիտի յանձնէինք, եթէ ունկընդրութիւնը մերժուէր: Մեր կարծիքով պէտք էր մինչեւ վերջը տանիլ պատգամաւորութիւնը եւ կէս ճամբան չձգել, հակառակ ներկայացող անթիւ դժուարութիւններուն, հակառակ Եւրոպայի եւ Ամերիկայի հայ միջավայրերու էնտրիկներուն՝ ուր ամէն տեսակ նախանձներ կային այս պատգամաւորութեան նկատմամբ: Այս մտքով էր որ կը փութայի այս նամակը զրկել կաթողիկոսին, տեսնելով որ դէպքերը եւեւէ ետեւ կը խուժեն, եւ որ՝ կաթողիկոսը կ'որոշէր ետ կանչել պատգամաւորութիւնը, ամէն կողմէ իրեն եկած չարակամ ճնշումներու ազդեցութեան տակ: Միւս կողմէ եպիսկոպոսները իրենք ալ օր առաջ կ'ուզէին իրենց տեղերը վերադառնալ. եւ այս դէպքերն ալ աւելի հաստատեցին այդ վախերը:

Դէշ խմբագրուած հեռագրի մը թիւրիմացութեան վրայ, որը ստացած էր Բիւրոն, եւ որուն չգիտէր ի՛նչ պատասխանել, կաթողիկոսը կը հեռագրէր եպիսկոպոսներուն՝ իրենց թեմերը վերադառնալ, այս վերջիններուն [կողմէ] իրեն զրկուած հեռագրի մը ի պատասխան՝ որով կը խնդրէին որ իրենց պաշտօնը առնելի իրենցմէ, քանի որ Լոնտոն միայնակ մնացած էին:

Փարիզ վերադարձիս երկու կարիք կար առջեւս: Ցոյցով մը Ֆրանսայի մէջ արթուն պահել հարցը — եւ որովհետեւ նշանակալից առիթ մը չէր ներկայանար՝ մտածեցի օգտուիլ Pro Armeniaի հարիւրերորդ թիւէն, խնջոյք մը կազմակերպելու համար: Ցոյցի ծրագիրները, ինչպէս նաեւ միւսները, կ'որոշէինք Փրէսանսէի, Ֆիյարի եւ ուրիշ ձեռնհաս բարեկամներու հետ խորհրդակցելէ ետք, եւ յետոյ պրն. Մասինկամ ինծի կը գրէր, որ անգլերէն Pro Armeniaի հրատարակութեան ժամանակը հասած էր, եւ ուզելով այս մասին սպասել Դաշնակցութեան Խորհուրդի որոշումին, յարմար դատեցինք հրատարակել առայժմ գրքոյկի մը, համաձայն Ընդհանուր Ժողովի որոշումներուն. բայց այս ձեռնարկութեան համար չունենալով հարկաւոր գումարը, դիմեցի Բիւրոյին որ մերժեց ինծի՝ պահանջուած 3000 ֆրանքը. եւ ուրիշ փորձեր երկրի կեղը. Կոմիտէի մօտ (K) նոյնպէս չյաջողուեցան: Այս պայմաններուն մէջ, սպասելով Խորհուրդին, միմիայն կը զբաղէինք ընթացիկ գործերու առաջումներով եւ կը բաւականանայինք ֆրանսական Pro Armeniaի հրատարակութեամբ: Սակայն նախքան խօսիլը հարկ է որ այդ թերթի ծագման մասին յիշել քանի մը բաներ, որոնք վերջին տեղեկագրին մէջ յիշուած չէին: Թիֆլիզ կը գտնուէինք երբ մեծ կոտորածները սկսան, թէեւ այս կոտորածներու ընդարձակութիւնը (տարողութիւնը ?), գրաքննութեան պատճառով, չկրցին իմանալ: Մենք մեծ պատասխանատուութիւն կը զգայինք այդ դէպքերէն, որ շատ դէշ կ'ազդէին մեր վրայ. մանաւանդ որ միշտ փոքրամասնութեան մէջ էինք, չհաւանելով աւանդական տակտիկին՝ որուն

կը հետեւէր մեծամասնութիւնը եւ որ կը կայանար հրացան եւ խմբեր ղրկելուն մէջ։ Այս պայմաններուն մէջ կը խորհէինք.— կա՛մ պէտք էր երթալ կոտորածի վայրերը եւ ժողովրդի ճակատագրին մասնակցիլ, ինչ որ Քրիստափորի խորհրդով մէկդի ձգուեցաւ, կա՛մ արտասահման երթալ եւ պրոպագանդ սկսիլ, ինչ որ չէինք կրնար իրագործել՝ ղրամական պակասութեան պատճառով։ Այս պատճառներով ձեռնպահ մնացինք մենք որեւէ գործողութենէ՝ ըսելով որ Թիֆլիզի մէջ մենք բարոյապէս մեռած էինք մեր դատին համար, այսինքն թէ այդ պարագաներուն մէջ Թիֆլիսէն բրխած մեր դատին համար որեւէ գործողութիւն յաջողութիւն չէր ունենար։ 1899ի վերջը, կարգ մը դժուարութիւններէ յետոյ, Փարիզ դնացինք, եւ Ժընեւէն անցնելով Քրիստափորի հետ համաձայնեցանք որ պրոպագանդի գործին հետ պիտի կապուէի։ Ճիշդ է թէ նախապէս ընկերներ եկած էին Փարիզ, եւ ստացած էին համակրանքի նամակներ՝ որոնք հրատարակուեցան «Դրօշակ»ի մէջ։ Փարիզ հանդիպեցայ Օհաննէսեանին(3), որը կը կարծէի թէ ինծի օգնական մը պիտի ըլլար արտասահմանի բոլոր ձեռնարկներուն մէջ. եւ իսկոյն սկսայ փնտռել իմ հին ֆրանսացի բարեկամներս իրը առաջին անհրաժեշտ քայլ մը։ Պրն. Ժաղլարն էր որ ցոյց տուաւ ինծի մեզի բարեկամ եղող ուժերը։ Պրն. Քիյար, որ Տրէյֆիւսի գործին մէջ այնքան գործունեայ երեւցած էր եւ «Օրոր»ի մէջ իւր հայանպաստ յօդուածներով անձնուէր հայասէրի դիրք մը ստեղծած էր, նշանակուած մարդն էր մեր գործին [համար], եւ պրն. Ժաղլարի նամակով գացինք զինքը գըտանք։ Շուտով համաձայնեցանք հարցին վրայ, թէեւ երկու բան կ'արգիլէր մեր փոխադարձ վստահութիւնը։ Առաջին, հնչակեաններուն հետ սերտ յարաբերութիւնը, Զոպանեանի հետ իր բարեկամութիւնը. միւս կողմէ, հնչակեաններու կողմէ տարածուած այն գաղափարը՝ թէ ռուսահայերը ռուս կառավարութեան գործիչներն են։ Բայց իմ հին կապերս ֆրանսացի յառաջադէմ կուսակցութիւններուն հետ, որը Քիյար քիչքիչ իմացաւ, մեր ծանօթութիւնը ընդլայնելով՝ փարատեցին այս կասկածները։ Առաջին գործը որ կ'առաջարկէինք ընել՝ ամբողջովին հրատարակել դատավարութիւնը՝ որ կը պատրաստուէր, Սուլթանի ամբաստանութեան վրայ, Քիյարի եւ Մալոթոյի դէմ։ Բայց երբ այդ դատավարութիւնը հարկ չտեսնուեցաւ, թերթ մը հրատարակելու գաղափարը ծագեցաւ։ Ֆրանսացի բոլոր մեր բարեկամները կը պնդէին որ թերթին այլամերժ անուն մը չտրուի, ինչ որ աւելի յաջողութիւն կը գտնէր եւ Քիյար կ'առաջարկէր «La Correspondance Orientale»։ Բայց Քրիստափոր, որուն հետ մշտակի թղթակցութեան մէջ էի այս մասին, կը պնդէր որ զուտ հայկական բնաւորութիւն եւ անուն կրէ։ Այդ կարծիքը հաղորդեցի Քիյարին։ Օրին մէկը Քիյար ինծի կ'իմացնէր՝ որ որոշած էր Pro Armenia կոչել։

Կանգ չպիտի առնեմ այս հրատարակութեան մասին եղած բոլոր բանակցութիւններուն, Քրիստափորին հետ մեր տարակարծութիւններուն վրայ. համարը երեւցաւ 1900 Նոյեմբերին։ Քրիստափոր կը պնդէր որ ես եւ Օհաննէսեան հսկէինք հայկական մասին վրայ, բայց լիուլի վստահութիւն ունենալով եւրոպացիի իր կրթութեան եւ պարկեշտութեան վրայ, թէեւ իմացուցինք Քիյարին, փափուկ կերպով, այս ցանկութիւնը, անոր կ'ըսէինք թէ ասիկա մեզի աւելորդ կը թուէր եւ թէ մենք ամբողջովին կը վստահէինք իրեն։ Քիյար, հրատարակելով Pro Armeniaն, հիանալի ոճով մը եւ անշահախնդիր անձնուիրութիւնով մը, ամէն թիւի համար կը պատրաստէր իր «quinzaine»ը(4) եւ տեղեկութիւնները կը դասաւորէր, որովհետեւ Pro Armeniaն տեղեկութիւններու թերթ մըն էր։ Գործին բոլոր մնացածը մեր վրայ կը ծանրանար։ Ոչ միայն վարչութիւնը, այլեւ լուրեր պատրաստելը, յօդուածներ փնտռելը, թերթը ժամանակին լոյս ընծայելը, անոր բարոյական յաջողութիւնը, նիւթական զոյութիւնը, եւ այս մասին Քրիստափորին անընդհատ նամակներ կը դրէինք։ Բոլոր այս հոգսերը, որ նպատակ ունէին ոչ միայն բարոյական յաջողութիւնը այլեւ նիւթականը, մեզ բոլորովին կը կլանէին, այնպէս որ այլեւս պարզ վարչութիւն մը չէր, այլ բացարձակ gestion մը։ Գալով թերթի խմբագրութեան, Քիյար յաճախ ինծի կ'իմացնէր իր գրելիքի մասին, եւ ստէպ կը տարհամոզէինք որ այս ինչ այն ինչ բանը չգրէ, բայց ամէնը կ'անցնէր ընկերաբար, առանց ես ու դունի կամ ներկայացուցչի խնդիր հանելու։ Այս հինգ տարիներու միջոցին իրարու դէմ բան մը չըսինք։ Եւ երբ Ժընեւէն մեզի յանդիմանութիւններ կու դային բանի մը (?) չհրատարակուելուն համար, եւ երբ փոքրիկ տարակարծութիւններ կը ծագէին Ժընեւի եւ Քիյարի միջեւ, մեզի կ'ինար բանակցութեան եւ հաշտեցումի գործը. բայց իրապէս մենք կը խորհէինք, որ եթէ Քիյար Եւրոպայի հանրային կարծիքին ներկայացուցիչն է, մենք հայերուն եւ կազմակերպութեան [ներկայացուցիչներն էինք], գործելով միշտ մութին մէջ՝ ինչ որ Ընդհանուր Ժողովը հանդիսաւորապէս վաւերացուց։ Ցայտնի է թէ երբ Pro Armeniaն կանոնաւոր սկսաւ քալել՝ նուազ թերթիք զրաղում ունեցանք եւ յարեցանք պրոպագանդի եւ մեծ ցոյցերու՝ որ նկարագրեցինք արդէն։ Սակայն 1902ին մօտերը երկու հոսանքներ առաջ եկան, որ հետզհետէ երկուստեք սկսան զօրանալ։

Մէկ կողմէն Քիյարն էր որ կ'ուզէր իր [հասկցած] կերպով տնօրինել ինչ որ կը վերաբերէր Հայկական Հարցին, միւս կողմէ Բիւրոյի անդամները կը ջանային իմ իրաւունքներս ոչնչացնել։ Ինծի հարկ էր դիմադրել այս երկու ձգտումներուն, յանկարծակի բան մը չպատահելու համար։ Այսպէս Միքայէլ Օհաննէսեան՝ մէկէն Ժընեւ կանչուելով, իբր Բիւրոյի անդամ (ինչ որ յետոյ իմացայ), Սիմոնին հոս (Փարիզ) ղրրկած նամակի մը մէջ՝ որ պատահմամբ աչքիս հանդիպեցաւ, կը կրէր թէ մենք բան չէինք գիտեր, թէ ոչ մէկ կարեւորութիւն ունէինք եւ թէ պարզ գործերը վարող մըն էինք։ Այս գաղափարը ոչ մէկ տեղ բացէ ի բաց բռնուած չրլլալով, յատակացաւ անոր ինծի դէմ բռնած ընթացքէն։ Քիյարին համար մենք միշտ կը պահէինք բացարձակ վստահութիւն մը, հիացումի մը աստիճան՝ իր անձնուիրութեան համար, որը միշտ կը կրկնէի Ժընեւ, ուր կը սկսէր անվստահութիւն առաջ գալ դէպի անձ մը՝ որ կը թուէր թէ հայու մը պէս չէր հասկնար մեր շահերը։ Ամէն բան ըրինք զանոնք մօտեցնելու համար, կազմակերպելով բարեկամական ժամադրութիւններ եւ զանոնք ուղղակի յարաբերութեան մէջ դնելով, եւ ամէն բան ընելով՝ անոր հաճելի ըլլալու և անոր յայտնելու, զանազան ձեւերով, մեր երախտագիտութիւնը։

Սակայն իմ ջանքերս յաջողութեամբ պսակուեցան. փոխանակ «քու Քիյար»ին, ինչպէս կ'ըսէին մեզի, եղաւ «մեր Քիյար»ը։ Քիյարի մէջ կը տեսնէի ամէն հակակշռ ազատագրուելու աստիճանական ձգտում մը։ Հրատարակութեան ատեն տպարանին մէջ իմ ներկայութիւնս կը նեղէր եւ ջղերուն կը դպչէր. կարծես կ'ուզէր նուազեցնել մեր ձեռնարկներուն տրպաւորութիւնը, այն աստիճան, որ վերջին օրերու իր բացատրութեան համեմատ, կ'ուզէր միահեծան տէր ըլլալ. Կը ձգէի որ ընէ, գործին համար ոչ մէկ վտանգ տեսնելով եւ կարելի սահմանով կը քաշուէի։ Սակայն եւ այնպէս, հակառակ մեր բոպէական վէճերուն, անկեղծ ընկերականութիւն, վստահութիւն եւ յարգանք մը կը շարունակուէր մեր մէջ։ Ահա այս էր մեր յարաբերութիւններու վիճակը, երբ Ընդհանուր Ժողովէն յետոյ վերակազմեցի վարչութիւնը աւելի լայն հիմերու վրայ, եւ տեսնելով որ վարչութիւնը գոհացուցիչ վիճակի մէջ չէր, ոչ à la Librairie d'Editions nouvelles, ոչ ալ Mouvement socialisteի մէջ (?), եւ պէտք չտեսնելով փողոցին վրայ խանութ մը ունենալ, գետնայարկ սենեակ մը վարձեցի եւ հոն տեղաւորեցի վարչութիւնը։ Ճիշդ է որ ատեն ատեն Քիյարը փափաք կը յայտնէր խմբագրութեան եւ վարչութեան համար appartement մը վարձել ուր ինք պիտի գար աշխատելու, բայց ասիկա ահագին ծանձրոյթ կը պահանջէր տեղաւորութեան համար, որուն համար, ըստ իմ հաշուոյն, կազմակերպութիւնը չէր կրնար ծախսը հոգալ։ Մինչդեռ մեր փոքր appartementին մէջ, մեծ մասով մեր կահկարասիներով կահաւորելով, ծախքի դուռ չբացինք, եւ եթէ ծախք ըրինք վարչութեան համար էր միայն, ուր մենք հրաւիրեցինք մեր բարեկամը՝ պրն. Խսաք, եւ թեքնիք աշխատութիւններու համար՝ տիկին մը։ Շատ հոգ չէինք ըներ, որովհետեւ վարչութիւնը մինակ կը քալէր, իսկ խմբագրութեան մէջ՝ Քիյարին գլխացաւութիւն չտալով եւ իրեն ձգելով յօդուածներուն ընտրութիւնը, զինքը ազատ թողուցինք։ Օրինակ, ստոյգ է որ կաթողիկոսին պատգամաւորութեան կարեւորութեան վրայ ծանրանալը՝ կարդ մը Ֆրանսացի դրաղէտներու յօդուածներուն հրատարակութեամբ, որոշ օգտակարութիւն մը կ'ունենար եւ կրնար բարձրացնել Pro Armeniaի չահեկանութիւնը։ Բայց Քիյար հոգ չէր ըներ այս ամէնուն [մասին]։ Ասոր համար էր որ Խորհուրդին մօտակայ քանի մը ամիսներուն՝ թերթին մեր մասնակցութիւնը անկարեւոր եղաւ...։

Քիյարի բացարձակ անկախութեան ձգտումին եւ Հայկական Հարցին մասին ինքնիշխան ըլլալու փափաքին (ըստ իրեն՝ իր անվիճելի ձեռնհասութեան պատճառով) եւ Ժընեւի ընկերներու յաւակնութիւններուն (որով զիս կ'ուզէին անչնչան դարձնել) դիմաց, ինծի կը մնար մեծ խոհեմութիւն ցոյց տալ՝ դատին ծառայելու եւ դէպքերը չպահավիժեցնելու համար։

...Եւ մենք մեկնեցանք Դաշնակցութեան Խորհուրդին, ուր Կովկասի կոտորածներու հարցը արծարծուեցաւ։

Խորհուրդէն առաջ ուզեցինք այդ մասին ցոյց մը կազմակերպել, սակայն Ֆրանսացի մեր բարեկամներուն հետ խորհրդակցելէ յետոյ, հարկ եղաւ յետաձգել՝ Կովկասէն ստոյգ տեղեկութիւններու պակասութեան պատճառով, պակաս մը՝ որ մեզի չատ դժուարութիւն կու տար։ Մեր Ֆրանսացի բարեկամները էական պայման կը դնէին՝ ժողովը ընել կամ յօդուածներու համար անպատճառ ունենալ [անհրաժեշտ] տեղեկութիւնները։ Խորհուրդին մէջ՝ ուշանալուն պատճառը բացատրուեցաւ։ Կ'երեւի թէ Բաղուն ուղած է մասնաւոր պատուիրակ մը ղրկել՝ պրն. Ահարոնեանը, անոր հայթայթելով բոլոր տեղեկութիւնները։ Պրն. Ահարոնեան, այս պաշտօնով, կը փութար Փարիզ մեկնիլ։ Ինձմէ առաջ Ժընեւը ձգեց ժամանակ չկորսընցնելու համար եւ իսկոյն յարաբերութեան մէջ մտաւ Քիյարին հետ, որ իր կարգին զայն յարաբերութեան մէջ դրաւ ռուս եւ յարակից ժողովուրդներու բարեկամներու ընկերութեան հետ՝ որուն ինք քարտուղարն էր. ընկերութիւնը խոստացաւ հարկաւոր աջակցութիւնը։ Այս պարագաներուն մէջ մեզի կը մնար միայն՝ ձգել որ գործէ եւ անոր տալ մեր աջակցութիւնը, որքան մեզմէ կը խնդրուէր։ Դժբախտաբար սակայն, այս ընկերութիւնը լուկ հայերով չէր զբաղեր, այլ Ռուսաստանի բոլոր ժողովուրդներով, եւ նախ ռուսներով. եւ անոնց կազմակերպած ժողովին մէջ, Հայկական Հարցը համառուսական ընդհանուր հարցերուն մէջ ցիրուցան կ'ըլլար։ Հարկ չենք դատեր [քնն-

նպատել ?] Ահարոնեանի այս գործելու կերպը, որ էր՝ գործի սկսիլ առանց մեզի հետ համաձայնելու եւ պէտք չկայ դատել ստացուած արդիւնքը:

Խորհուրդէն յետոյ, ուր անդլերէն Pro Armeniaի հրատարակութիւնը որոշուեցաւ, Ֆրանսական Pro Armeniaին համար 20·000 եւ անդլիականին համար 10·000 Ֆրանք նպաստ յատկացնելով, մենք Լոնտոն գնացինք այս գործը կարգադրելու համար: Բայց Մասսինկամը այդ ատեն խոյս տուաւ իրեն պատահած դժբախտութեան եւ շատ մը զբաղումներու պատճառով: Մենք անոր առաջարկեցինք որ տնօրէն ըլլայ Թերթին եւ խմբագիր մը առնէ: Ընտրեցինք Ալֆրէտ Սթէտը, Review of Reviewի խմբագրին՝ Սթէտի որդին, որ ընդունեց: Ուստի միասին որոշեցինք անդլերէն Pro Armeniaն հրատարակել Օգոստոսին:

Արդարեւ այս հրատարակութիւնը շատ դիւրին չեղաւ, որովհետեւ շուտով նոր դժուարութիւններ կը ծագէին եւ Ալֆրէտ Սթէտ՝ որուն հետ կը թղթակցէինք եւ կը փութացնէինք որ շտապեցնէ, միշտ յետ կը ձգէր հրատարակութիւնը, պատրուակ բռնելով մեռած եղանակը կամ քաղաքական անպատեհութիւնը կամ վերջապէս իր անձնական զբաղումները: Այսպէս երբ անոր կ'իմացնէինք որ այս յապաղումին պատճառով՝ մեր ընկերներուն մօտ մեծ պատասխանատուութեան տակ կ'իյնայինք, մեզի կը պատասխանէր թէ բոլոր պատասխանատուութիւնը իր վրայ կ'առնէ: Լոնտոնէն մեր բացակայութիւնը կ'արդիւէր մեզի՝ ապրուստ ճարելու համար բանեցնել վրան, որով ստիպուած էինք համակերպիլ եւ, օրէ օր ձգձգուելով, Փրօ Արմենիան լոյս տեսաւ Նոյեմբերի վերջը:

Ամառը Pro Armeniaին համար Լոնտոն գնալիս, ուզեցինք համաժողով մը եւս կազմել, եւ այս մասին Սթիվենսընի հետ տեսակցութիւն մը ունեցայ՝ որ կազմակերպելու իբր պայման կը դնէր Ռուսիոյ եւ Ճապոնի միջեւ խաղաղութիւնը կամ զինադադարը, կարծիք յայտնելով՝ որ այս համաժողովին Ռուսիոյ մասին դէջ պիտի խօսուէր, ինչ որ անկարելի էր եթէ կռուի մէջ որեւէ լուծում չմիջամտէր: Ժողովի ամենանպաստաւոր ժամանակը կու տար Յուլիսի վերջը: Մեր բարեկամ Ֆրանսացիներուն հետ խորհրդակցելով, Փրեսանսէն յարմար դատեց յետաձգել Օգոստոս ամսին՝ երբ բոլոր այս հարցերը պարզուած պիտի ըլլային: Այս ժամանակ քաղաքական աշխարհը ռուսճապոնական հարցով շատ զբաղած էր ուրիշ հարցով հետաքրքրուելու համար, եւ մեր դատին չահերը երկրորդ կամ երրորդ կարգը դասուեցան: Սակայն միշտ արթուն եւ ուշադիր կը մնայինք նպաստաւոր պարագայէ մը օգտուելու համար:

Սեպտեմբեր ամսուն Ռէյնոլտսի ժամանումը, որ ինձի միշտ կը հաւաստէր Ռուզվելթի լաւ տրամադրութիւնները, ինձի զգաստացաւ կու տար այդ կողմէն փոքր մը ընելու: Ռուզվելթ այդ պահուն կլանուած էր ռուս-ճապոնական պատերազմին միջնորդութիւնով, և ինքը այն մարդն էր որուն կարծիքը կշիռ կրնար ունենալ: Ուստի Ռէյնոլտսի Փարիզէն անցնիլը չուզեցինք որ անօգուտ մնայ: Երեսունի չափ ճաշի հրաւէրի հեռագրեր ղրկեցինք, ուր մեր հարցին վրայ որոշումներ պէտք էր կայանար: Պերթըլոն հաւաներ էր դալ, ինչ որ յաջողութիւն մըն էր:

Ճաշի միջոցին որոշուեցաւ Ռուզվելթին նամակ մը ղրկել, ստորագրուած եւրոպացի հայասէրներէ, եւ որ Պերթըլոն յանձն առաւ խմբագրել, Ստորագրողները հաւաքելու համար շատ դժուարութիւններ կային, որովհետեւ Փարիզ մնալով, հարկ էր ամէն երկրի պարտաւորութիւններուն ճկիլ. վերջապէս Դեկտեմբերին նամակը կը ղրկէինք նախագահին, չորս հարիւր ակաւոր մարդոց կողմէ ստորագրուած: Այն պահուն երբ այս նամակը կը գրենք, լուր չունին դեռ յանձնուած ըլլալուն մասին:

Հոկտեմբերին ուզեցինք կազմակերպել ժողով մը՝ մեր դատին համար, ուր մեր Ֆրանսացի բարեկամները պէտք էր խօսէին: Սակայն ռուսական յեղափոխութիւնը որ կը սկսէր դոռալ այդ պահուն, նորէն խեղդեց մեր հարցը, որ յետաձգուեցաւ: Հակառակ ատոր ժողովը տեղի ունեցաւ Նոյեմբեր 30ին, Փրեսանսէի նախագահութեամբ, ժօռէսը բացակայ ըլլալուն, որ խոստացած ըլլալով նախագահել, վերջին ժամուն կը հրաժարէր: Համաժողովը ամենամեծ յաջողութիւնը ունեցաւ որ կարելի էր սպասել, եւ Փրեսանսէ, Քամիլլ Փելլբան՝ նախկին նախարարը, Վիքթոր Պերար կարդով խօսեցան հարցին վրայ, ժողովի բուռն ծափահարութիւններով:

Այս գործերով մենք կը վերջացնենք Եւրոպայի մէջ մեր պրոպագանդի տեղեկատուութիւնը, վերջին երկու տարիներու միջոցին, եւ բնականօրէն բիրտ հարցը կը դրուի, թէ «արդիւնքը ի՞նչ եղաւ»:

Նախ կարելի է ըսել թէ բացասական արդիւնքներ կան. որովհետեւ հայ ժողովուրդի վիճակը չլաւացաւ, նոյնիսկ ծանրացաւ Կովկասի կացութեամբ: Բայց մենք մինակ եւրոպական պրոպագանդին վրայ դրած չէինք յոյսերնիս, հարցը լուծելու համար: Յայտնի է որ, այս նոր պարագաներուն մէջ որ բոլորովին կլանեցին քաղաքական ուշադրութիւնը, պատերազմը եւ ռուսական յեղափոխութիւնը, կարող էինք այդ բոպէին աւելի կամ նուազ դրական արդիւնք ձեռք բերել. սակայն դարերու մէջէն մեզ հալածող դժբախտութիւնը նորանոր խոչընդոտներ ստեղծեց դարձեալ. դէպքեր՝ որոնք այսօր աննպաստ են, բայց կրնան վաղը արդասաւոր ըլլալ, առ նուազն կասեցուցին դէպի լուծում յառաջխաղացումը:

Սակայն կարելի է ըսել, հաստատ կերպով, որ

հինգ տարիէ ի վեր հետապնդուած նպատակին՝ Ֆրանսերէն «Փրօ Արմենիա»յի հիմնարկութեան՝ փաստօրէն հասած ենք: Երեք ազատական եւ ռամկավար երկիրներու համակրութիւնը շահած ենք, ոչ թէ հանրային կարծիքի տեսակէտէն միայն, այլեւ կառավարութիւններու: Ֆրանսայի մէջ մեր ականաւոր բարեկամներէն զատ, մենք ունինք հին եւ նոր նախարարներ, ինչպէս Քամիլլ Փելլբան, Բայօ, Լէօն Պուրժուա, Պիէնվընիւ Մարթէն, Էթիէն, Տիւպիէթ եւայլն, որոնք շատ անդամներ արտայայտած են իրենց ոչ միայն պղատոնական այլեւ իրական համակրութիւնները, ընդունելով, ինչպէս Պիէնվընիւ Մարթէն, Լոնտոն երթալ՝ գործին համար:

Անգլիոյ մէջ մեր բարեկամները, որոնք ամէն փորձութիւններէ անցան, ազատական կառավարութիւնը կը կազմեն.— Ճէյմս Պրայս, Լորտ Ապրրտին, Կլատսթոն եւայլն:

Իտալիոյ մէջ Մարքիզ Սանճիւլիանօ, Հռոմ մեզ տեսնելու եկաւ իր համակրութիւնները արտայայտելու մեր դատին: De Marinis, Barziloï եւ ուրիշներ ներկայ նախարարութեան մէջ են. եւ չենք խօսիր դեռ ուրիշ բարեկամներու մասին, որոնք այնքան ազդեցիկ են այս երեք կառավարութիւններուն մօտ:

Հետեւաբար մենք կը յուսանք որ, եթէ նպաստաւոր պարագաները գան, մօտ կամ հեռու ապագայի մը մէջ, մենք չենք հանդիպիր այն անտարբերութեան կամ անգործութեան՝ որոնք յայտնուեցան մեծ կոտորածներուն ատեն եւ որոնց պատճառով յաղթական եղան Թշնամի կառավարութեան քաղաքական էնթրիկները եւ յետադիմական դաւերը: Ճամբան բացուած է, կը մնայ յարմար բոպէին սպասել:

---

(1) Միքայէլ Վարանդեան:

(2) Մարտիրոս Մարգարեանը Սափոն է. տեսնել իր «Կրօնական դաշնակցութիւն» ճառը Յրդ Ընդհանուր Ժողովին մէջ, — ՆԻՒԹԵՐ, Բ. հտր., էջ 171–173:

(3) Հաւանօրէն՝ Միհ. Յովհաննիսեանը (Վարանդեան):

(4) Տասնրհինգօրեայ տեղեկատուութիւն:

Դ) ՏԵՂԵԿԱԳԻՐ ՄԵՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ՝ ԲԻՒՐՈՅԻՆ ՀԵՏ

Եթէ յետաղարձ նայուածք մը ձգենք Ընդհանուր Ժողովէն ի վեր Արեւմտեան Բիւրոյի հետ մեր յարաբերութիւններուն վրայ, շատ որոշ կը տեսնուի որ մեր դէմ իրենց տակտիկը եղած է տակտիկ մը՝ որ սիստեմատիք ծրագրի մը կը հետեւի, մեզ անտեսելով, ամէն պարագաներու մէջ եւ ամէն առթիւ մեզ զանց ընելով եւ մեզի հետ վարուելով Pro Armeniaի իբր վարչական պարզ գործակալի մը հետ:

Դժբախտաբար մենք այս կարծիքին հասանք երկար փորձերէ յետոյ: Այս ընթացքը երեւան կու գար կանոնաւոր կերպով, այլեւայլ եղանակներով. նախ՝ գործերու մասին ոչ մէկ լուր չէր տրուեր մեզի եւ «Դրօշակ»ի ստորագրութիւնով կը հեռագրուէր ուղղակի Թերթերուն: Այն աստիճան կ'ուզէին մոռնալ մեզ, որ նոյնիսկ Թերթերուն ղրկուած հեռագրերը մեզի չատ քիչ անգամ կը հասնէին, իսկ վերջերը բնաւ չէին գար: Ինչ որ անհրաժեշտ էր՝ կը կատարուէր պրն. Քիյարի միջոցով՝ որուն հետ ուղղակի յարաբերութիւն մշակել սկսած էին: Այս վարմունքը Քիյարին հետ ցաւալի թիւրիմացութիւններու տեղի կու տար. երբ կը մեղադրէի զինք որ տեղեկութիւններէ կը զրկէ զիս, սա միակ պատասխանը կը ստանայի, թէ «ժամանակ չունինք»: Հակառակ մեր բազմաթիւ դիտողութիւններուն գործին մնասակար այդ վարմունքին դէմ, թէեւ անոնց կ'ըսէինք որ մենք աւելի միջոցներ ունինք լուրերը տարածելու՝ քան իրենք, Բիւրոն մեզ մտիկ չէր ըներ: Այս հեռագիրները եւս աւելի, իրենց Ֆրազարանութիւնով եւ զրայականութիւնով, անախորժ տպաւորութիւն կը ձգէին հոստեղի մեր բարեկամներուն վրայ, ինչպէս Փրեսանսէ, Քիյար եւ ուրիշներ: Եւրոպական պաշտօնական աշխարհին ղրկուած ամէն նամակ կամ հաղորդագրութիւն, կը խմբագրուէր եւ կը ղրկուէր՝ առանց կանխաւ մեզի հետ խորհրդակցելու, իբր պատասխանատու ներկայացուցչի: Այսպէս ցաւալի թիւրիմացութիւններ առաջ կու գային: Վերջապէս կ'աշխատէին մեզ անպէտ դարձնել ոչ միայն Ֆրանսայի մէջ, այլ նաեւ Անգլիոյ մէջ ուր, ինձի կանխաւ չիմացուցած, յարաբերութիւն կը հաստատէին Շիրազի անուն կասկածելի մարդու մը հետ, եւ Իտալիոյ մէջ՝ մարդու մը հետ, որուն մէկ առաջարկը մերժած էինք, զայն լաւ մը քննելէ յետոյ: Իմ անձս այսպէս ամէն բանէ կտրելը այն աստիճան փոքրոգութեան հասած էր, որ երբ վարչութենէն խնդիրք մը ունենայի, կը դիմէի Քիյարին՝ որ զայն անոր յանձնէ կամ կ'երթայի հին հասցէին: Հակառակ այս խոչընդոտներուն, ուրկէ մնաս կը կրէր մեր դատը, որոշեցի ուշադրութիւն չընել հոն՝ ուր կարելիութիւն ունէի մեր գործունէութեան դէմ բռնուած այդ վարմունքին ստեղծած վտանգը հեռացնելու: Իմ ներողամտութիւնս այն աստիճանի կը հասնէր, որ մեր հանդիպումներուն ես կը վարուէի իբր ընկեր՝ առանց որեւէ ակնարկ մը ընելու մեզ բաժանող պատճառներուն:

Ահա այս զգացումներն են որ առաջնորդեցին զիս, երբ Ընդհանուր Ժողովի հրամանէն յետոյ, Լոնտոն մեկնեցայ, ձգելով չխմբագրուած ատենագրութիւնները եւ շատ մը գործնական հարցեր՝ որոնք պէտք է յստակացնէին մեր անորոշ մնացած յարաբերութիւնները: Կը նախատեսէի որ Բիւրոյի անդամներուն ընտ-

բուքեանց բարոյական անյաջողութիւնը պէտք էր իմ վրայ ծանրանար, եւ թէ բոլոր չյաջողածներուն կատաղութիւնը պիտի յայտնի ըլլար իմ դէմ. սակայն տղայական լաւատեսութիւնով մը, համոզուած էի որ այդ բան զգուած չէին ըլլար, չյարգելով Ընդհանուր Ժողովին որոշումները, համարձակելով ոտնակոխ ընել զանոնք եւ ուզածնուն պէս վարուիլ՝ իրենց ընտրական անյաջողութեան վրէժխնդրութեան զոհացում տալու: Երբ Սոֆիայէն մեկնեցայ, խղճմտօրէն կատարեցի թէ՛ իմ պարտականութիւնս դէպի գործը եւ թէ դէպի ընկերներս: Անոնց ճշդապահօրէն կը գրէի ինչ որ կ'ընէի, բայց ոչ մէկ պատասխան չէր գար, ոչ միայն ինծի հարկաւոր եւ ստիպողական տեղեկութիւններ տալու, այլ նոյնիսկ նամակներս ստացած ըլլալու որեւէ լուր մը:

Մայիսի վերջը պաշտօնական նամակով մը մէջտեղ դրի այդ վարմունքը: Այդ նամակին մէջ յիշուած են բոլոր յատկանշական իրողութիւնները: Պատասխան չստացայ: Հակառակ ասոր, ստիպուած էի յարաբերութիւն պահել դրամի ուղարկումին համար: Առաջին տարին այս գործը դիւրացաւ, երբ Քիյար ինծի յանձնեց իր քով պահ տրուած մօտ 30·000 ֆրանքը: Տեսնելով այս թշնամական եւ անբարեացակամ տրամադրութիւնները, այդ դումարը պահեցի պիւտճէի սահմանին մէջ, ինչ որ անոնց մէջ փոթորիկ հանեց եւ որը յայտնի եղաւ գրգռիչ նամակով մը, որուն վայել պատասխանը տրուեցաւ: Քրիստափորին Յուլիս ամսուն Փարիզ հասնելէն յետոյ, այս հարցը բարեկամաբար կարգադրուեցաւ, չաբաթներ մոռնալով որ այս ցաւալի միջադէպերը ունեցանք: Եպիսկոպոսներու եւ մեր պատգամաւորութեան ժամանումը վերսկսիլ տուին թղթակցութիւնը եւ անոնցմէ ստացանք թղթեր եւ հրահանգներ՝ այս մասին: Փարիզի մէջ մեր յաջողութենէն յետոյ, որ ամէն մարդ կ'ընդունի, մեզի իմացուեցաւ թէ պատգամաւորութիւնը դէպ կը կատարէր իր պարտականութիւնը եւ թէ պէտք էր մեր իւրաքանչիւր քայլը արձանագրել տալ մամուլին մէջ եւ մեծ աղմուկ հանել անոր շուրջ: Երբ մենք կը գտնէինք որ մենք մեր պարտականութեան լաւագոյնը կատարած էինք դժուարին պարագաներու մէջ, երբ հազիւ կը խօսուէր Կրետէի Եորկիոս իշխանին ճամբորդութեան եւ ուրիշ վեհապետներու վրայ, որոնք աւելի աղմուկ պէտք էին հանել, այս դատաստանը մեզի յանկարծակիի բերաւ: Առաւօտէն մինչեւ իրիկուն մինակ ըլլալով այն բոլոր նեղութեան եւ ձանձրոյթին մէջ որը կը պատճառէր այս պատգամաւորութիւնը, որքան կարելի է՝ շատ օգուտ քաղելու համար անկէ, ընկերներէ եկած այս թերթեւամիտ դատողութիւնը մեզ կ'ըմբոստացնէր եւ չպահեցինք զայս Ռոստոմէն որ մեզի կը գրէր եւ, ինչպէս կ'երեւէր իր ընթացքէն, զինք շրջապատողներու ազդեցութեան տակ էր: Գալով Բիւրոյին մեր գործունէութիւնը հաղորդելու հարցին, ինքզինքս ազատ համարեցի՝ իմ պաշտօնական նամակէն յետոյ, որուն համար պահանջուած զոհացումը չստացայ: Բացի այդ, պատգամաւորութեան հարցը ուղղակի իրենց չէր վերաբերէր, որովհետեւ կազմակերպութենէն դուրս էր, եւ յետոյ այնքան զբաղում ունէի, որ մինակութեանս մէջ, կարելիութիւն չկար անոնց հետ լիուլի թղթակցութիւն պահելու: Սակայն, մեր պատգամաւորութեան խոշոր կէտերը, ճառերը հաղորդուեցան, եւ ժամանակին իմացուցինք իրենց մեր Ամերիկա մեկնիլը. բայց ոչ մէկ պատասխան չեկաւ մեր եւեւէն, ոչ Լոնտոն, ոչ Լիվրփուլ կամ նաւին մէջ: Ամերիկայէն վերադարձնուս միայն վերսկսաւ թղթակցութիւնը եւ ահա թէ ինչ պարագաներու մէջ:

Այսպէս Ամերիկայէն Լոնտոն, եպիսկոպոսները Մանչեսթրը ձգելով որ դրամ գտնեն, ես ինքզինքս դժուարութիւններու առջեւ գտայ, որը մինակ լուծելու պատասխանատուութիւնը չուզեցի վրաս առնել: Ռուսօ-անգլիական միջադէպը յետաձգել կու տար մեզի թաղաւորին ունկնդրութիւնը եւ պէտք էր վճռել կա՛մ սպասել կամ յետաձգել պատգամաւորութիւնը: Միւս կողմէ Սարաճեան եպիսկոպոսին հետ դժուած ըլլալով եւ չխօսելով՝ մեր դրութիւնը անտանելի կը դառնար: Պէտք էր նմանապէս անդլերէն Pro Armeniaի համար որոշման մը յանդիլ, եւ որոշ պատասխան մը տալ պրն. Մասսինկամի: Այս պարագաներուն մէջ դիմեցի Բիւրոյին, որ Լոնտոն ինծի մէկը դրկեն, որպէսզի միասին խորհրդակցինք: Մեզի հարցուցին թէ ի՞նչ էին այդ հարցերը: Մենք նամակով մը բացատրեցինք Pro Armeniaի մասին՝ թէ Ընդհանուր Ժողովի կողմէն բացարձակ արգելք մը չկար այդ թերթը հրատարակելու: Սակայն ծախքերու եւ անոր գոյութեան անհրաժեշտ չըլլալուն պատճառով, որոշուած էր բաւականանալ միակ հրատարակութիւնով մը, եւ մենք Ընդհանուր Ժողովին բացատրած էինք որ այդ պէտքը կրնար երեւան գալ եւ այն ատեն մենք պիտի վճռէինք՝ ինչպէս մեր խիղճը մեզի կը հրամայէր: Հեռագիր մը մեզի խրատ կու տար խորհուրդ հարցնել Ֆրանսացի բարեկամներուն՝ պատգամաւորութեան մասին, եւ մեզի կ'իմացնէր որ Մալումեան Փարիզ պիտի դար մեզ տեսնելու: Ստիպուած ըլլալով Լոնտոն մնալու, մերժեցինք Փարիզ գնալ, եւ մենք ինքներս լուծեցինք հարցը հետեւեալ կերպով: Արքեպիսկոպոսին հետ հաշտուելով եւ անգլիացի մեր բարեկամներուն հետ խորհրդակցելէ յետոյ, առժամապէս յետաձգեցինք պատգամաւորութիւնը, իսկ Pro Armeniaին համար ըսինք պրն. Մասսինկամին՝ թէ նկատի ունենալով դրամի չգոյութիւնը եւ Դաշնակցութեան Խորհուրդին մօտալուտ դումարումը, ինչպէս նաեւ քաղաքական պարագաները, լաւ կ'ըլլար հրատարակութիւնը յետաձգել: Միեւնոյն ժամանակ Բիւրոյին գրեցինք որ, առանց Ընդհանուր Ժողովի որոշումներուն հակասել ուզելու, հարկ էր հետեւիլ մտքին եւ ո՛չ ձեւին: Մանաւանդ որ տեղեկագրի քաղուածը ենթադրել կու տար որ անոր խմբագրումը չեշտուած էր, եւ լաւ չյիշելով ոչ որոշումի արտայայտութիւնները ոչ ալ պատճէնը տեղեկագրին, մեզի դժուար էր վերստուգել: Տեսնելով Բիւրոյի կողմէն մեր ձեռնարկին դէմ վճռական հակառակութիւն՝ դրամ հայթայթելու գծով, խորհեցանք գործը ալուխ հանել անձնապէս: Ասոր համար դիմում ընինք Լոնտոնի հայ վաճառականներուն, բայց մեր ազգու ջանքերը յաջողութիւն չունեցան: Որոշ թիւ մը բաժանորդներ ունենալու համար, որ ապահովէր թերթին գոյութիւնը, դրեցինք Ամերիկայի մեր ընկեր Փափազեանին, որ հաղորդէ Կ. Կոմիտէին եւ բաժանորդագրութիւններ հաւաքէ, մանաւանդ որ ամերիկացիներուն համար անգլերէն Pro Armeniaն ֆրանսական Pro Armeniaին տեղը կրնար բռնել: Գրեցինք նաեւ ուրիշ շատ մը անձերու այս մասին, անոնցմէ խնդրելով՝ դրամ կամ բաժանորդներ գտնել:

Առժամապէս Փարիզ վերադառնալով, օգտուեցանք քանի մը ազատ օրերէն, եպիսկոպոսին հետ ժընեւ երթալու համար: Ամէնքս իրար գալով, մոռնալով մեր բոլոր փոխադարձ դժտութիւնները, մենք բացատրութիւն տուինք ի զոհացումն ամէնքին եւ սիրալիր բաժնուեցանք: Անգլերէն Փրօ Արմենիային համար, ապահովեցի որ դիտաւորութիւն չունէի Ընդհանուր Ժողովի որոշումներուն դէմ գնալ, եթէ տառացի կերպով կ'ըմբռնուին անոնք, եւ թէ մենք պիտի ջանայինք իրագործել բաժանորդագրութիւններով: Պրն. Մալումեան, իր կարգին, մեզի կը յայտարարէր թէ ինք կը պատրաստէր գերմաներէն Փրօ Արմենիան: Իսկ մեր պատգամաւորութեան մասին, Բիւրոն կը կարծէր թէ Ընդհանուր Ժողովին մէջ որոշուած էր. ես հակառակը հաստատեցի եւ ցոյց տուի որ Ընդհանուր Ժողովը այս պատգամաւորութեան հետ գործ չունէր: Գալով ճանապարհորդութեանս ծախքին, որոշուեցաւ որ ամենաքիչ եւ մօտաւոր դումարը, 2000 ֆրանք իմ արտակարգ ծախքերուս համար, հաշիւներուն մէջ պիտի արձանագրուէր, որը ընդունեցի իբր փոխառութիւն:

Լոնտոնէն Փարիզ մեր վերջնական վերադարձին, ժընեւէն նամակ մը կը ստանանք, մեղադրելով մեզ որ Ամերիկա դիմած ենք բաժանորդներ ունենալու համար: Լուրը առած էին Վռամեանէն, որ իմ անձնական նամակս անոնց ղրկած էր: Մեզի զայրոյթ պատճառեց այդ վարմունքը, որ մասնաւոր նամակ մը կը գործածէր եւ կը գանդատէր բոլորովին անձնական դիմումէ մը՝ որ ընդհանուր շահ ունէր. մենք խնդրեցինք Բիւրոյէն մեր դիւրազգացութեան թարգմանը ըլլալ՝ ինչ որ չըրաւ: Միւս կողմէ, ժընեւէն կը ստանանք նամակ մը որ մեզի կ'ըսէ թէ մեր Ամերիկա ճամբորդութիւնը անօգուտ էր: Անոնց ցոյց տուի իրենց կարծիքին սխալը եւ անոնց կ'իմացնէի որ, ամէն պարագայի մէջ, իրենք, մեր Ամերիկա մեկնած ատեն, պէտք էին լսել մեզ եւ ձայն չհանեցին. եւ սակայն իրենց դատողութեան ..... (1) կ'ուզէի իրենցմէ, խընդիրք մը որ առանց դրաւոր պատասխանի մնաց, թէեւ յաճախ կրկնուեցաւ: Ուրեմն մնացի այդ քննադատութեան վրայ, առանց արդարացումի:

1905 Յունուարին պրն. Մասսինկամ ինծի կը գրէր որ Pro Armeniaի հրատարակութեան ժամը հնչած էր: Այդ անել վիճակէն դուրս գալու համար, որոշեցի Խորհուրդէն առաջ [լոյս ընծայել] քանի մը գրքոյկներ՝ որ թերթին հետ կապ ունենային: Ֆրանսայի մէջ հարցը արթուն պահելու համար, որոշեցի Pro Armeniaի հարիւրերորդ թիւին առթիւ սեղան մը տալ, ուր բոլոր բարեկամները պիտի հրաւիրուէին: Ասոր համար 3000 ֆրանք խնդրեցի, ծախքի համար. անոնք մերժեցին: Պատգամաւորութեան մասին, հակառակ իմ կրկնակի խնդիրքներուս եւ ապացոյցներուս որ պէտք է շարունակել, մեզի շարունակ կը պատասխանէին սա լակոնական խօսքը. «Առժամապէս դադրեցուցէք պատգամաւորութիւնը»: Այդ թուականին անոնց գրած պաշտօնական մէկ նամակիս մէջ անոնց կ'ապացուցանէի որ իրաւունք չունէին այդ դումարը ինծի մերժելու եւ ..... (2) անոնց կը գիտցնէի որ այդ պաշտօնական թղթակցութիւնը որ բոներ կեցեր են, յօգուտ իրենց չէր, որովհետեւ հոն ցոյց կու տային գնահատումի թերեւութիւն մը: Պատգամաւորութեան մասին՝ անոնց ցոյց կու տային (բերանացի) որ ի նպաստ են, իսկ նամակին մէջ խորհուրդ կու տային ժամանակաւոր դադարում: Հակառակ մեր բարեկամներու կարծիքին, որոնց հետ խորհրդակցութիւն ունեցան, անոնք իրենց կարծիքին վրայ կը շարունակէին մնալ կամ մտիկ չէին ըներ: Միեւնոյն նամակին մէջ ցոյց կու տայի անոնց թէ ո՛ր աստիճան իրենց դատողութիւնը մեզ կը վիրաւորէր, իբր թէ մենք շատ փող կը ծախսէինք, եւ անոնց կ'ըսէի՝ թէ ի՛նչ աստիճանի կը հասնէր իրենց ճղճիմութիւնը: Իրենց երեսին կու տայի որ ինծի կ'ըսէին այդ բանը՝ գիտնալով որ նեղն եմ, եւ կը վերջացնէի, մաղթելով որ իրենք իրենց դիրքին բարձրութեանը վրայ ըլլան: Բիւրոյի բացարձակ մերժման առջեւ այդ փողը ղրկելու համար, դիմեցի Քրիստափորին՝ որ ինծի փոխ տայ այդ դումարը իր կոմիտէի(3) պիւտճէին վրայէն. եւ այդ կոմիտէն յանձնարարեց տալ այդ դումարը, սակայն Բիւրոն ուրիշ կերպ դատեց: Փոխանակ մեզի ղրկելու, Քրիստափորին ղրկեց, իմացնելով անոր որ իր կոմիտէն իրաւունք չունէր դրամ փոխ տալու ինծի: Եւ ես ստիպուեցայ հեռագրել Քրիստափորին՝ «առանց փողի գնում չ'ըլլար»...: Անոր՝ այս իմ վերջին խօսքս եղաւ, ժընեւի ընկերներուն պատճառով:

Այս պայմաններուն մէջ, Լոնտոնի մէջ որեւէ հրա-

տարակութիւն մէկդի թողուցի եւ նախագահութեան համար Լաւիսի մերժումէն օգտուելով, խնջոյքը ջընջեցի պատուաւոր կերպով։

Եպիսկոպոսներու եւ ընկերներու ստիպման վրայ՝ որոնք խորհուրդ կու տային ինծի կաթողիկոսին ընդհանուր տեղեկագիր մը ղրկել, մանաւանդ որ կասկած կար թէ եպիսկոպոսները առանց իմ գիտութեանս միտումնաւոր տեղեկագիր ղրկած ըլլան, որոշեցի որոշ եւ ամբողջական տեղեկագիր մը ղրկել՝ որուն համար չտապեցինք, տեսնելով որ պատգամաւորութիւնը պիտի ընդհատուէր եւ եպիսկոպոսները կանխելու համար։ Գրեթէ ժամանակ չունեցանք Ժընեւի մեր ընկերներուն խորհուրդ հարցնելու այս մասին։ Այդ միայն մեր կամքէն կախուած բան մըն էր, որովհետեւ պատգամաւորութիւնը կազմակերպութենէն դուրս էր եւ մեզի կը մնար խորհուրդ հարցնել կամ ոչ։ Ամապարանքով անոնցմէ կաթողիկոսին հասցէն ուզեցի, եւ չստանալով՝ տեղեկագիրը ուղարկեցի երեք ծրարով, առանց վայրկեան մը ենթադրելու որ կարող էին զիս մեղադրել տեղեկագիրը իրենց կարդացած չըլլալուս համար, պատգամաւորի իմ բացարձակ իրաւունքներս ի գործ դնելով։

Դաշնակցութեան Խորհուրդին շարունակ յետաձգումը եւ Pro Armeniaի համար փողի կարիքը պարտաւորեցին զիս Ժընեւ գնալ՝ խնդիրը լուծելու համար։ Մեր բացատրութիւնները այս թիւրիմացութիւններու մասին՝ մեզ ներողամիտ ըրին եւ մենք զոհացանք մեզի տրուած խառնաշփոթ բացատրութիւններու մասին՝ մեզ ներողամիտ ըրին եւ մենք զոհացանք մեզի տրուած խառնաշփոթ բացատրութիւններով։

Օգուտ քաղեցին անոնք մեր մէկ նամակին խօսքէն, ուր մենք անոնց կ՚ըսէինք՝ կարդացած ըլլալ «զգաղեցուցէք», փոխանակ «առժամապէս զգաղեցուցէք»ի, ինչ որ հիմը եղաւ իրենց բոլոր պատճառաբանութիւններուն եւ եզրակացութիւններուն։ Մեր շաբաթ մը բնակութեան միջոցին, անոնց յիշեցուցի ամէն օր թէ շատ ուրախ պիտի ըլլամ իրենց կարդալով կաթողիկոսին ղրկած նամակս, անոնց կարծիքը իմանալու համար։ Օրէ օր յետաձգելով՝ մեկնելուս նախընթաց օրը միայն այդ ընթերցումը տեղի ունեցաւ եւ բողոք առաջ բերաւ։ Այսպէս, Ռոստոմը մեզ կը մեղադրէր որ յեղափոխական գաղափարով չէինք տոգորեր գրուածը. իսկ Մալումեանը՝ թէ անկատար ոճով գրած էինք։ Մենք անոնց պատասխանեցինք շատ քաղցրօրէն, խեղճ ու կրակ վիճաբանութիւններ չըստեղծելու համար, թէ մենք ազատ էինք գրելու ինչպէս կը մտածէինք, թէ այդ՝ իրը պատգամաւոր՝ մեր պարտականութիւնն էր. եւ թէ պէտք չէր յեղափոխական խօսքեր խառնել կաթողիկոսի գործերուն։ Մենք յաջորդ օրը կէսօրին մեկնեցանք առանց իրենց յայտնի ընելու այն զգացումները, որ իրենց ըսածները պատճառած էին։

Սակայն մեր զայրոյթը եւ մեր զարմացումը ամէն սահման անցան, երբ Ժընեւէն վերադառնալէս շաբաթ մը յետոյ իմացանք, թէ Ռոստոմ առանց մեզի հարցնելու հեռագիր մը ղրկած էր եւ որ այդ հեռագիրը կը պատուիրէր նամակը կաթողիկոսին չյանձնել։ Բարեբախտաբար ընդունագիրը (avis de réceptoin) մեզի կ՚իմացնէր այդ դրաքնութեան անօգտութիւնը եւ ուշամնացութիւնը։ Առանց մենք մեզի դատաստան ընելու, կրնանք ըսել թէ Ահարոնեան, որուն հանդիպեցանք Ժընեւ Խորհուրդին մէջ, մեզի յայտարարեց որ այդ տեղեկագիրը շատ լաւ գրուած էր, եւ Առաքելեան մեզ կը հաւաստէր այս ամառ՝ որ «Մշակ»ի բոլոր խմբագիրներն ալ հաւնած էին։ Նոյն կարծիքէն էր եւ Սաֆօ։ Ցոյց տուած պիտի ըլլամ բոլոր հակասութիւնները, երբ ըսեմ թէ անգամ մը Մալումեան մեզի յայտարարեց որ այդ հեռագրին առաքումը անհրաժեշտ չէր. եւ քանի՛ քանի անգամ ինծի ըսած էր թէ հեռագիրը քաշուած էր իր բացակայութեան։ Քանիցս յայտարարեցինք որ ամէն ինչ կրնայինք ներել, սակայն այս բանը՝ որ բռնաբարում մըն էր բոլոր յարաբերութիւններուն եւ սովորութիւններուն, ընդունելի չէր։

Քրիստափորի մահուան լուրին վրայ, իմ գալուստս ծանուցանելով, Ժընեւ հասայ, ուր ընկերներուն մեծ մասը չկրցի տեսնել։ Անոնք Սոֆիա մեկնած էին առանց կանխաւ ինծի իմացնելու եւ ստիպուեցայ շաբաթ մը սպասել մինչեւ անոնց վերադարձը։ Սոֆիայէն վերադարձին, փոխանակ Դաշնակցութեան Խորհուրդով զբաղելու, Մալումեան ուսանողական ընդհանուր ժողովով կլանուած էր, որուն համար կը մեկնէր Գենն, իսկ Ռոստոմ ռուսական կուսակցութեան ժողովով զբաղած էր։ Սաֆոյին եւ Անդրանիկին հետ պարտաւորուեցանք սպասել մէկ-երկու շաբաթ եւս, մինչեւ որ վերջանար անոնց աշխատանքը։ Այն ատեն ստիպուած եղանք Խորհուրդին ամենակարեւոր գործերը երկու երեք օրուան մէջ աճապարանքով լմնցնել, գիշերներն ալ լուսցնելով։ Ամէն ինչ շտապով եւ խառն ի խուռն կատարուեցաւ։ Անկարելի էր մեզի համար մանրամասն հաշիւ տալ եւ պարզել պրոպագանդի եւ մեր անձին վերաբերեալ հարցերը։ Բայց երկու բան պարզ կերպով որոշուեցաւ։ Առաջինը՝ մեր կարճ տեղեկագրէն յետոյ, անգլերէն Pro Armeniaի հրատարակութիւնը որոշուեցաւ, նշանակելով 30·000 ֆրանք՝ որուն 10·000ը անգլերէն Pro Armeniaին համար էր, եւ երկրորդը՝ թէ [Արեւմտեան] Բիւրոն պիտի կազմըւէր, ինչպէս ցոյց տրուած էր ընդհ. կանոնագրութեան մէջ, երեք անձէ, — Մալումեան՝ խմբագիր, Ռոստոմ՝ Թղթակցող եւ մենք՝ պրոպագանդի գործիչ, հաւաքաբար գործելով։ Այս ձեւով՝ մենք մեզ Փարիզ կեցող Բիւրոյի անդամ կը նկատէինք։ Գալով երկրորդ պրոպագանդիստին՝ որ մէկ տարուան համար կարգըւած էր Ընդհանուր Ժողովէն, անոր մասին ոչ մէկ վի-

ճաբանութիւն չեղաւ։ Մեր մեկնելէն առաջ, խորհրդակցութիւն մը ըրինք միասին, գործունէութեան ծրագիր մը մշակելու համար, ինչպէս կը պահանջէր «in corpore» բացատրութիւնը։

Մէկ կամ երկու ամիս չանցած՝ Բիւրոն դժուարութիւններ կը հանէր դրամներու առաքման համար, ըսելով մեզի թէ ամսական 1000 ֆրանք պիտի ղրկուի, ինչ որ ոչ Խորհուրդին ոչ ալ Բիւրոյի անդամներուն մէջ հարց եղած էր մեր մեկնելէն առաջ. հակառակ իմ նամակներուս, որ կը ստորագրէի իբր պրոպագանդի համար ներկայացուցիչ եւ Բիւրոյի անդամ, եւ կը ղրկէի գանձապետին կամ ուրիշներու, ոչ մէկ պատասխան չէի ստանար եւ հարկ կ՚ըլլար Փարիզ գտնուող ընկերներու ազդու միջամտութիւնը՝ դրամ ըստանալու եւ Pro Armeniaի ծախքերուն հասնելու համար։ Ամառը զանազան ընկերներ չորս անգամ Փարիզ եւ Գելֆիքա եկան տեղեկութիւններու համար, զորս Քրիստափորին հետ մենք ժողված էինք տարի մը առաջ, կամ յանձնարարութիւններու համար՝ որ մենք շատ աւելի հեշտօրէն կարող էինք կատարել քան իրենք՝ առանց ճանապարհածախս ընելու։ Սակայն որոշ յայտնի էր, որ կ՚ուզէին մեզ հեռացնել։ Հակառակ ատոր ես անոնց օգտակար եղայ որքան ատեն որ մընացին։ Այսպէս Ֆր. տը Փրեսանսէին անդադար դիմում ըրի Մալումեանի դրքին յառաջաբանի մը համար, դիտնալով իսկ անոր չարակամ տրամադրութիւնները դէպի ինձ։ Եւ երբ անգամ մը Անդրանիկին հետ գացի, իբր Թարգման, գնումներու համար, իր ապսպրանքին հաշիւը երկու միլիոնի կը հասնէր, ինչ որ Ժընեւի ընկերներուն առիթ տուաւ մեզ մեղադրելու՝ որ Թոյլ տուած էինք այդքան արտառոց ապսպրանք մը ընել։ Անկէ ետք բացարձակապէս ձեռնպահ մնացինք այս գործերուն խառնուելէ, որ նոր մեղադրականներ չստանանք։ Միշտ կծծիութիւն կ՚ընէին դրամ ղրկելու, որուն համար մենք զանգատեցանք Մալումեանին դառն եւ նոյնիսկ բուռն լեզուով, երբ Փարիզ եկաւ, որովհետեւ մեզի համար անկասկած էր որ անիկա դեր մը կը խաղար այդ խառնակչութեան մէջ։ Ժընեւէն այն տպաւորութիւնը բերինք թէ ա՛ն կը վարէր ամէն ինչ, կը ներշնչէր նամակները եւ հրաման կու տար ամէն ծախքի համար։ Նոյնիսկ հոս, Քիյարի ներկայութեան, զիս սաստիկ մեղադրեց որ իրմէ 1000ի տեղ 2000 առած եմ, ինչպէս ինք կ՚ըսէր։ Բոլոր մեր մեղադրանքները, իրաւունքներու եւ իշխանութեան յափշտակման մասին, միշտ լռութիւնով կ՚անցնէին, եւ հարցէն միշտ խոյս կը տուէր, բայց բնաւ որեւէ նամակ չստացանք որ ըսէր՝ թէ իրենց իրաւունքն էր եւ թէ՝ ես իրենց ստորադասը, գործակալն էի։ Մէկ անգամ միայն Մալումեանին հետ քով քովի՝ ինծի Թոյլ տուի բուռն արտայայտութիւններ եւ բնաւ երբեք որեւէ Թշնամանք չարտասանուեցաւ։

Այսպէս էր վիճակը երբ Սեպտեմբերին, դրամական բացայայտ պահանջէ մը յետոյ, ստացայ 1000 ֆրանք (Սեպտ. 27ին), հետն ալ ամբողջ տարուան մէջ ղրկուած բոլոր դումարին մէկ նոթը, վրան աւելցուած 1904ին վերջին վճարները, — դումար մը՝ որ 1905ին կը պակսէր ինծի վերոյիշեալ պատճառներով, եւ որ Ժընեւի մէջ մէջտեղ դրի բացէ ի բաց, յոյս յայտնելով որ շուտով կը լեցուի։

Նամակը ստանալու պահուս ստացայ նաեւ ինչ որ պէտք էր՝ որ բոլորովին չէին գիտեր Ժընեւ։ Իրենց վերջին վճարին յիշեցումը կը նկատէի ինծի դժուարութիւն պատճառելու ցանկութիւն մը։ Անոնց պատասխանեցի որ անհանդիստ ըլլալու պէտք չունէին, եւ ի զարմանս երկրորդ նամակ մը կը ստանայի, որ դարձեալ կը յիշեցնէր որ պէտք էի անպատճառ այդ դումարը արկղը վերադարձնել։ Այս պնդումը մեզ վիրաւորեց, բայց ոչինչ չպատասխանեցինք, որովհետեւ Կովկասի ծանր դէպքերու միջոցին, չէինք ուզեր անձնական հարցեր յարուցանել։ Հոկտեմբերին անգլերէն Pro Armeniaի համար Ժընեւէն հեռագիր մը կը ստանայինք, մեզի իմացնելով որ դրամ գտած չըլլալով՝ կարելի էր չհրատարակել։ Որուն պատասխանեցի թէ անկարելի էր, եւ թէ առանց մեզի կայացած այդ որոշումը մեզի անհասկնալի կը թուէր։ Կազմակերպութեան պատուոյ խոստումը կար մէջտեղը, կարելի չէր ընկրկիլ, եւ Mr. Alf. Steadին իմացուցի այն դրութիւնը՝ որ Բիւրոն ստեղծած էր։

Ցաւալի է որ այս վարմունքը իմ մէջ ընջեց անոնց մասին ամէն նկատում, եւ տեսնելով որ Բիւրոյէն ըստորագրուած նամակները յաճախ մէկ մարդու գործ էին եւ մէկ քանի ընկերներու հաւանութեան չենթարկուած, որոնք ձեռնպահ կը մնային՝ ինչպէս կաթողիկոսի նամակին խնդրով, առաջին առիթով փոքրիկ նամակով մը խնդրեցի որ բոլոր նամակները խմբագրութեան կողմէ ստորագրուած ըլլան։ Այս խնդիրքը այնքան արդար էր, որ բոլոր քաղաքական եւ ելեւմտական հաստատութիւններուն մէջ, ամէն հաւաքական նամակ հաւաքական ստորագրութիւն մը կը կրէր. մանաւանդ որ արտասահմանի մէջ դաւաճանութեան վախը աւելորդ էր։ Սակայն պարզապէս ժխտական պատասխան մը ունեցանք, ուր բացայայտ մերժում չըլլար։ Նշանակալից է որ այս միեւնոյն պատասխանին մէջ, առաջին անգամ ըլլալով՝ մեր յարաբերութիւններու առաջին օրէն, իմ կարծիքս կը հարցնէին Conférenceի մը մասին, խորհուրդ մը՝ որ ինձմէ կը հարցընէին հաւաքումէ մը յետոյ, որուն մասին ծանօթութիւն չունէի։

Ատոր վրայ մենք նամակով մը պատասխանեցինք, որուն լեզուն կարելի է խիստ թուի, եւ որ առաջ բերաւ մեր խզումը եւ Ահարոնեանի ժամանումը, որ զբնաց գանգատիլ Քիյարին, եւ որ իր կարգին գնաց

պատմել Փրեսանսէին։ Այդ ատենն էր որ իմացայ Ա-հարոնեանի գաղտնի առաքելութիւնը։ Իսկոյն գացի Փրեսանսէին մօտ եւ քանի մը խօսքով պատմեցի գործին էութիւնը։ Իր հաւանութիւնը յայտնելով այն բանին որ ես կը յարգեմ իմ արժանապատուութիւնս, ինծի առաջարկեց որ երկուստեք նամակները ետ առնուին մինչեւ Ընդհանուր Ժողով, ինչ որ ընդունեցի։ Ֆիյար ինծի խոստովանեցաւ՝ թէ Ահարոնեանն ալ ընդունած էր, բայց յետոյ նամակով մը իմացայ որ Ֆիյարը եւ Փրեսանսէն յանձն առած էին միջնորդ ըլլալ։

Ատոր վրայ Փրեսանսէին հարցում ըրի եւ ան ինծի պատասխանեց՝ թէ իրենց նամակին հիմքը նամակներու փոխադարձ ետ առնուիլն է։ Բայց որովհետեւ Ահարոնեանի այս դիմումէն յետոյ մեր յարաբերութիւնները թղթակցութիւններով միայն կը կատարուէին, այս տեղեկագրին չարունակութիւնը պիտի գրուի նամակներով, որոնք հաւատարմօրէն կ'արտայայտեն հակառակութեան վիճակը։

Այս լրիւ տեղեկագիրը դնելով [ձեր տրամադրութեան տակ], չեմ ուզեր ամբաստանագրի բնոյթ տալ անոր, ոչ ալ լսելի ընել ինքնապաշտպանութիւն մը. կ'ուզեմ միմիայն հաստատել այս հակառակութեան յառաջաբանը, ցոյց տալով որ իմ գործիս ընթացքին միակ հոգս եղած է իմ գործս կատարել արժանապատուութեամբ եւ հասնիլ իմ բոլոր պարտականութիւններուս։

Եթէ գործին չահերուն համար ուխտ մը ունիմ ընելիք, եւ այդ՝ անձնական ոխի զգացումէ հեռու, այն է որ մարդ չի գործեր բնաւ անոնց հետ որոնք այնքան հակառակութիւններ եւ այնքան փոքրոգութիւններ գրգռեցին։

---

(1) Բնագրին մէջ բառ մը կամ բառեր կը պակսին։
(2) Նոյն։
(3) Կ'ակնարկուի Ցուցական Մարմնին։

Ե.— ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ(1)

1.— «Դրօշակ»ի խմբագրութեան

Մայիս 1904 թ., Փարիզ

Զնայելով Ընդհանուր Ժողովում յայտնուած բազմաթիւ դժգոհութիւններին, Արեւմտեան Բիւրոն չարունակում է իր գործունէութիւնը նախկին կերպով, չկատարելով իր վրայ վերցրած պարտականութիւնները։ Նա չի պահպանում, գործիչների հետ, գործի վերաբերմամբ անհրաժեշտ յարաբերութիւնները, եւ կարծես թէ չի ուզում պահպանել ներքին եւ դրսի գործիչներին միացնող կապը եւ դերը, որի համար իսկապէս զոյութիւն ունեն այդ գործիչները։ Ամենալաւ օրինակը կարող եմ լինել ես. Ընդհանուր Ժողովը յանձնել է ինձ, իբրեւ Բիւրոյի մշտական անդամի, միայն Արեւմտեան Եւրոպայի պրոպագանդի միսիան։ Ոգեւորուած Ընդհանուր Ժողովի որոշումներով, Սոֆիայից հեռանալով Լոնտոն, ես անդադար ուղարկում էի Բիւրոյին բոլոր իմ հաւաքած տեղեկութիւնները, իմ խղճիս համեմատ գործ դնելով իմ բոլոր եռանդը՝ գործը առաջ մղելու համար. բայց ցաւօք սրտի, ես շուտով նկատեցի ոչ թէ սառնութիւն, այլ կարծես մի տեսակ թշնամական վերաբերմունք Բիւրոյի կողմից. ոչ թէ օգնութիւն, այլ վնասաբեր յարաբերութիւն՝ դէպի բուն գործը. ինձ խոստացուած խնդիրները փոխանակ երկու օրուայ ընթացքում, կատարում են երկու ամիսից յետոյ. օրինակ՝ Սասունի քարտէսը։ Բիւրոն իմ նամակներիս այնպէս վիրաւորական ձեւով էր պատասխանում, որ ես երբեմն ստիպուած էի լինում կրծու կերպիւ պատասխանել։ Մի քանի անգամ առաջարկեցի «Դրօշակ»ի խմբագրութեան հետ անմիջապէս նամակագրութեան մէջ մտնել, բայց ի զուր. ես կա՛մ ոչինչ չէի ստանում, կամ ստանում էի մի քանի անորոշ խօսքեր։ Այդպիսի եղանակով չի կարելի գործը չարունակել։ Այս ցաւալի հանգամանքներում պէտք է դէնը դնել որեւիցէ բարեկամական յարաբերութիւն եւ աշխատել միայն գործնական տեսակէտից։

Մինչեւ օրս ես չեմ ստացել Բիւրոյից Ընդհանուր Ժողովի արձանագրութիւնը, չեմ ստացել գումարների բաշխումը, չեմ ստանում «Դրօշակ»ը եւ հրատարակութիւնները անմիջապէս (անմիջական կերպով ?) Բիւրոյից, չեմ ստանում ոչ մի տեղեկութիւն Երկրից, որոնք անհրաժեշտ են ինձ համար այս տաղնապի ժամանակ։ Եթէ երբեւիցէ տեղեկութիւններ ստացւում են այստեղ, դրանք ուղղուած են լինում կա՛մ Ֆիյարին կամ Թէրզեանին. այսպիսի եղանակով լուրեր ուղարկելը առաջ է բերում մեծ անյարմարութիւններ եւ միանգամայն անկանոնութիւն. առաջինը՝ Թէրզեանը Դաշնակցութեան անդամ չէ, նա հասարակ մի թարգմանիչ է. երկրորդը՝ նա մի Ֆիյարի հետ գործ ունի եւ ուղարկած տեղեկութիւնները պատրաստում է միայն ամիսը երկու անգամ, երրորդը՝ Թերզեանը չի գիտեր թէ ո՛ր տեղեկութիւններն են անհրաժեշտ Ֆիյարին, չորրորդը՝ եթէ Ֆիյարը Փարիզ չէ լինում, նա պարտաւոր է ուղարկել Արմօ եւ այդպիսով ժամանակ է կորցնում։ Բացի դրանից, ես պարտաւոր եմ վերոյիշեալ տեղեկութիւնները անմիջապէս տարածել թէ՛ Անգլիայում եւ թէ Իտալիայում, որտեղ ես մտադիր էի շուտով ստեղծել «Փրօ-Արմենիա»յի կենտրոն, ստացուած տեղեկութիւնները տարածելու համար։ Կարծես թէ այս բոլորը բաւական չէ, Բիւրոն առանց ինձ հարցնելու լուրջ որոշումներ է կայացնում, այն տեղերի վերաբերմամբ՝ ուր ես գտնւում եմ, — օրինակ՝ գաղղիացի(?) նախարարին հեռագիրը, չուղարկելով ինձ հեռագրի գոնէ պատճէնը, եւ այսպիսով Ֆիյարը ստիպուած է լինում երկու անգամ դիմել Բիւրոյին՝ յիշեալ հեռագիրը ստանալու համար։

Ես չէի ցանկանալ կրկնել ձեր վարմունքը Բուրանովիչի հետ նամակագրութեան մասին եւ ձեր բռնած սխալ դիրքի մասին, բայց ես կը ցանկանայի յիշեցնել մի պարմանալի փաստ, — «Դրօշակ»ը հեռագրում է Բուրանովիչին, որ ես Փարիզ կը լինեմ Մայիսի 16ին, նախօրօք չզգուշացնելով եւ չհարցնելով ինձանից. ուրիշ օրինակ՝ Թաւրիզի վրայով հեռագրում էք տեղս, այդ հեռագիրը ես խսկոյն տանում եմ Փրեսանսէի մօտ, նա ասում է, աղայական ձեւով, «մի օր սպասեցէ՛ք այս հեռագիրը հրատարակելու», բայց զարմանալի բան՝ նոյն հեռագիրը լոյս է տեսնում երեք լրագիրներում. երեւակայո՞ւմ էք ինչ դրութեան մէջ էք դնում ինձ Փրեսանսէի առաջ, եւ ինչո՞ւ ի զուր տեղից փողեր էք մսխում։

Կարող էք երեւակայել թէ ի՛նչ անախորժութիւններ կարող են ծագել այդպիսի վարմունքից։ Ի՞նչպէս հասկանալ այս տեսակ վարմունքը։

Խոր ցաւով չեչտելով վերոյիշեալ անախորժ դրութիւնները եւ անկանոնութիւնները, վերջացնում եմ նամակս, խնդրելով անկեղծօրէն, յանուն մեր սուրբ գործին, աշխատել համերաշխութեամբ՝ պարզ եւ անկեղծ, ձեռք-ձեռքի տուած, յոյս դնելով, որ ապագայում այսպիսի անախարժութիւններ էլ չեն լինելու։ Խնդրում եմ նամակս ստանալուց խսկոյն ուղարկէք ինձ.

1) Ընդհանուր Ժողովի արձանագրութիւնը.

2) Բաշխումը եւ բոլոր տեղեկութիւնները՝ Երկրից, անմիջապէս եւ ուղղակի ինձ։

Լ. Մ.

2.— Լորիսին

27 Սեպտեմբեր 1905, Ժընեւ

Ընկե՛ր,

..... Դարձեալ մի անգամ խնդրում ենք անցեալ տարուայ վերջի հաշուին զանձարանում պատրաստ նկատուած գումարը անցընել այս տարուայ բիւտճէին, որով կարելի լինի հաշիւներու կանոնաւորութիւնը...(1)։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

(1) Պատասխան ուղարկեցի, որովհետեւ առաջին անդամ առեցի, որ գումարը ապահովուած է։

3.— Լորիսին՝ Փարիզ

19 Հոկտեմբեր 1905, Ժընեւ

Ընկե՛ր,

..... Մենք կարծում ենք, որ շատ լաւ կը լինէր, եթէ դուք անցնէք Լոնտոն. իսկ ինչ վերաբերում է Փարիզին, մեզանից մէկը կարող է գալ այդտեղ, նոյնը կազմակերպելու։ Այս կէտի վրայ հրաւիրում ենք Ձեր յատուկ ուշադրութիւնը։

Ձեր երկտողի վերջում դրել էք հետեւեալ խօսքերը.

«Ես կը պատասխանեմ Բիւրոյի եւ Խմբագրութեան նամակներին, միայն երբ որ ստորագրուած են բոլոր անդամների անուններով»(1)։

Մենք ստիպուած ենք անպատասխան թողնել այդ անտեղի եւ անհիմն տողերը։

Ընկերական բարեւներով՝
Հ. Յ. Դ. ԱՐԵՒՄՏ. ԲԻՒՐՕ

(1) Նախագահ Ռուզվելթին ուղարկուած ուղերձի ծրարին վրայ գրուած են այդ տողերը։

4.— Արեւմտեան Բիւրոյին

21 Հոկտեմբեր 1905

Ձեր Փարիզ գալը եւ մեր Լոնտոն գնալը անտեղի եւ անհիմն է։

Փարիզի ժողովը արդէն կարգադրուած է։

Արեւմտեան Բիւրո ! Ասացէք ովքե՞ր էք դուք, որ ծածկւում էք այդ անունով եւ պատասխանատուութիւն վերցնում մեզ ուղղած նամակներով։ Երբ մի հիմնարկութեան անունով ամէն մէկը չարագործում է նրա իրաւունքները, առանց գիտենալու ովքե՞ր են պատասխանատու, անկարելի է կանոնաւոր նամակագրութիւն ունենալ։ Ասացէք, թէ մենք ընկերնե՞ր ենք ձեզի համար։ Մեր կողմից մենք պարտ ենք համարում ձեզ յայտնել, որ մենք չենք վերցնում ո՛չ մի պատասխանատուութիւն ձեր որոշումների եւ գործունէութեան մէջ եւ ոչ մի ձեր զոյութեան բոպէում(2)։

«ՓՐՕ ԱՐՄԵՆԻԱ»ՅԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

5.— Բժ. Լորիսին

Ընկե՛ր,

Ձեր Հոկտեմբեր 21ի նամակը, «Փրօ Արմենիա»յի խմբագրութեան ստորագրութեամբ, ստացանք։ Մեր հասցէին ուղղած վիրաւորանքները որքան անհիմն, նոյնքան վրդովեցուցիչ են։

Քանի անգամ, թէ՛ Բիւրոն եւ թէ ընկերները անհատապէս, ներողամտաբար կրել են ձեր անտեղի եւ անարդար վիրաւորանքները, ի սէր գործին։ Տարաբախտաբար ձեր վերջին դրութիւնը եկաւ շատ լցնելու(2)։ Ուստի Արեւմտեան Բիւրոն սրանով յայտնում է ձեզ, որ եթէ դուք յետ չվերցնէք այդ վերին աստիճանի վիրաւորական գրութիւնը՝ ներողութեան հետ, Բիւրոն ստիպուած կը լինի խղել ձեզ հետ իր բոլոր յարաբերութիւնները, նոր եւ աւելորդ վիրաւորանքների չենթարկուելու համար։ Մենք կը սպասենք ձեր պատասխանին մի շաբաթ։

Հ. Յ. Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

6.— Արեւմտեան Բիւրոյին

Ստացանք ձեր գրգռիչ նամակը, որ վերադարձնում ենք առանց պատասխանելու ձեր անարդար եւ վրդովեցուցիչ ամբաստանութիւններին։ Յայտնում ենք որ ձեր նամակում արտայայտուած սին սպառնալիքները միանգամայն դուրս են ձեր իրաւասութեան շրջանից։

Ոչինչ յետ չվերցնելով մեր նախորդ նամակից, կրկնում ենք որ մեզ համար անհրաժեշտ է իմանալ թէ ովքե՛ր են Բիւրոյի անդամները։

Լ. Մ.

7.— Շաբաթ ժամը 4½ին, 10 Նոյեմբերի

Սիրելի բարեկամ !

Մտադիր էի ձեզ տեսնել այս առաւօտ տիկ. Տօրեանի մօտ. ձեզի պիտի յանձնէի այդ ձեզ ղրկած թղթերս, այսինքն՝ Փրեսանսէին [ուղղուած ?] նամակս ժընեւ ղրկուած, pneumatique մը՝ որը ղրկեցի Ահարոնեանին ի պատասխան այն նամակի, որուն պատճէնը կը գտնէք ներփակ ..... հասցէն(2). Pro Armeniaի համարներու կապոցները որոնք եկած են ցոյց տրուած պատճառներով։

..... հարցի մասին երէկ երեկոյ Ահարոնեանին ..... ինչ որ նամակիս մէջ ըսուած էր։ Եթէ ժընեւ չէ մեկնած պիտի տեսնեմ զինքը ճաշէն առաջ. կը փափաքէր գոնէ գիտնալ թէ ե՛րբ լոյս պիտի տեսնէ առաջին թիւը։ Ըսի թէ, ըստ իս, 15 [օրէն ?]։ Այս առաւօտ կ'ուզէի ձեզի հարցնել թէ ի՞նչ պէտք է պատասխանել այս մասին, մանաւանդ որ երէկ երեկոյ նմանապէս ժընեւէն հեռագիր մը ստացայ հետեւեալ բովանդակութեամբ.— «Մեր այսօրուայ ժողովին մէջ նորէն քննեցինք Լոնտոնի հրատարակութեան հարցը։ Նիւթապէս ստանձնել բացարձակապէս անկարելի է»։

Ձեզի կ'ուղարկեմ այս հեռագիրը ուրիշ թղթերու հետ միասին, լուսանկարի մը կամ նամակատուփի մը հաւատարմութիւնով(2)։ Բոլոր գործերը ցաւ կը պատճառեն ինծի. այնքան հոգի կը հանեն, որ չեմ կրնար ըսել. եւ զիս պիտի վհատեցնէին եթէ կարող ըլլայի վհատումի(3)։

8.— Հինգշաբթի առաւօտ

Ժընեւէն նամակ մը ստացայ, որուն մէջ նորէն կը պնդէին որ Լոնտոն Pro Armeniaն դադրեցուի։ Դուք գիտէք այդ որոշումին պատճառները, ուստի չեմ անդրադառնար։ Մրագրուած թերթը ջնջել չէ նպատակը. այլ միայն առժամապէս դադրեցնել հրատարակութիւնը, մինչեւ որ կարելի ըլլայ հարկաւոր դրամը հայթայթել։ Ապա թէ ոչ ձեռնարկը ցաւալի անյաջողութիւն կ'ունենայ եւ կազմակերպութեան վարկին վնաս կը բերէ։

ԱՀԱՐՈՆԵԱՆ

9.— Ուրբաթ 10 Նոյեմբերի

Սիրելի բարեկամ !

Ձեր նամակը երեկոյեան շատ ուշ ձեռքս հասաւ կարենալ եղածին պատասխանելու համար։ Կ'ուզէիք գալ զիս տեսնելու՝ ժամը երկուքին։ Ուշացնելու ոչ մի միջոց չեմ տեսներ՝ Pro Armeniaի հրատարակութեան համար։ Նաեւ հաստատ կը կարծեմ թէ այդ ուշացումը շատ ցաւալի կ'ըլլայ. մեր անգլիացի բարեկամներուն այս տպաւորութիւնը պիտի տայ՝ թէ զաղափարներու եւ տակտիկի մէջեւ կապակցութիւն չըկայ(4)։

10.— Հինգշաբթի երեկոյ

Սիրելի բարեկամ !

Ցոյս ունէի, որ ազատ կ'ըլլամ ման գալու, բայց ուրբ օր շարունակ սենեակը փակուեր մնացեր էի եւ Վոլէ փողոցէն հինգ հարիւր մեթր չկրցայ հեռանալ։ Կ'ուզէի ձեզի խնայել այս ճամբորդութիւնը։ Կրնայիք վազը՝ շաբաթ ինծի գալ, կամ կիրակի։ Ժընեւէն կ'ուզեն տարեկան հաշիւները, Իսաքին ծախքը։ Շատ մը համար ետ կը ղրկեն. կապոցները բոլորովին վեր ի վրոյ եղած են...։ Եթէ կշտացաս, ուրիշ կը տառապիմ, վերջանայ, երկուշաբթի երեկոյ կամ երեքշաբթի պիտի մեկնիմ տաս-տասներկու օր հանգստանալու համար։ Բոլորովին կոտրտուած եմ։ Ի՞նչ եղաւ Փրեսանսէի ճառը։ Մեկնելէ առաջ համար մը կ'ուզեմ պատրաստել։

Ձերդ սիրալիր՝ ՔԻՇԱՐ

Պատասխան Ֆրանսիացի բարեկամներից՝ Արեւմտեան Բիւրոյին(5)

10 Նոյեմբեր, Փարիզ

Պարոններ եւ սիրելի՛ բարեկամներ,

Շատ ցաւալի անհամաձայնութիւն մը ծագած է Բիւրոյի եւ Դաշնակցութեան Փարիզի ներկայացուցիչ՝ մեր բարեկամ Յ. Լ. Մ.ի միջեւ։

Կը յուսանք թէ, Ընդհանուր Ժողովէն առաջ իսկ, որ իշխանութիւն ունի ձեր ներքին գործերը վճռելու, համաձայնութիւնը շուտով պիտի վերահաստատուի նուիրական դատի մը բոլոր ծառայողներուն միջեւ, որոնց նկատմամբ, զանոնք գործի վրայ տեսնելով, մենք հաւասար համակրութիւն եւ հաւասար յարգանք ունինք։

Ձեր խնդիրքի վրայ եւ ժամանակաւորապէս, եւ գործի շահուն համար՝ որ մեծապէս պիտի վնասուէր եթէ ձեր անհամաձայնութիւնը հրապարակուէր, մենք պատրաստ ենք կիսապաշտօն[ական] միջնորդի դերը ընդունիլ ձեզ մօտ՝ Pro Armeniaի հրատարակութիւնը եւ Ֆրանսայի մէջ պրոպագանդը ապահովելու համար։

FRANCIS DE PRESSENSÉ, PIERRE QUILLARD

11.— Հ. Յ. Դ. Արեւմտեան Բիւրոյին

19 Դեկտեմբեր 1905, Փարիզ

Բիւրոյէն նամակ մը ընդունելով Դեկտեմբեր 27ին(6), որ իմ արժանապատուութեանս կը դպէր, հարկ համարեցի իմ նամակագրութիւնս [շարունակել ?] ամենաքիչ էջերով եւ ձեզմէ խնդրել, առաջին առիթով, որ ստորագրել տաք ձեր նամակները անդամներէն, կամ ինծի յայտնէք թէ որո՛նք պատասխանատուութիւնը կը ստանձնեն ձեր նամակագրութեան՝ ինծի հետ։

Շատ լաւ գիտէի, թէ պրն. Մալումեան Արեւմտեան Բիւրոյի եւ պրն. Ահարոնեան Արեւ[ելեան ?] Բիւրոյի պաշտօնական միակ անդամներն էին, որոնց կը ղրկէի իմ նամակները։ Բայց բոլորովին չէի գիտեր խորհրդակից անդամներու անունները։ Իմ նամակիս վրայ զայրացած՝ դուք ինծի ultimatum մը ղրկած էիք, որ ձեր իրաւունքի սահմանը կ'անցնէր. ասոր համար էր, որ ձեզի ետ ղրկեցի առանց պատասխանի։

Ահա այն իրողութիւնները որոնք մեր յարաբերութեան խզումը առաջ բերին. դուք կամայական եւ ապօրինի կերպով վարուեցաք, խզելով պաշտօնական յարաբերութիւնը կազմակերպութեան մը պատասխանատու ներկայացուցչին հետ եւ վտանգելով Եւրոպայի մէջ մեր գործը։ Փոխանակ մեր անհամաձայնութիւնները մեր կազմակերպութեան ընդունած միջոցներով կարգադրելու, դուք այդ բարոյական սկզբունքներուն դէմ գնացիք, դիմելով Ֆրանսացի մեր բարեկամներուն՝ որ բնաւ պէտք չէ դիտնան մեր, գժբախտաբար, շատ տխուր կեանքը։ Այսպէս վարուելով դուք ուզեցիք զիս դէշ երեւցնել բարեկամներուս առջեւ եւ [խախտեցիք] այն բարոյական համերաշխութիւնը որ մեզ կը միացնէ եւ որ միայն կ'ապահովէ Եւրոպայի մէջ մեր գործի յաջողութիւնը։

Պրն. Ահարոնեան Փարիզ կու գայ եւ, առանց զիս տեսնելու եւ առանց ինծի իմացնելու [իր] նպատակը, Պրն. Քիյարին կը թարգմանէ իմ նամակներս՝ իր ուզած կերպով բացատրելով. իմ դէմ եղած իր ամբաստանագրին մէջ կը յայտարարէ, որ եթէ չկատակիմ ձեր որոշումներուն, դրամ չպիտի՛ ղրկէք։ Եւ հետեւաբար՝ Pro Armeniaի դադարումը, ապօրինի սպառնալիքներ, եւ [այս բոլորը՝] հակառակ Ընդհանուր Ժողովի որոշումներուն։ Պրն. Քիյար անմիջապէս կը պատմէ պրն. Ֆ. որ Փրեսանսէի...։ Այս հաղորդումէն յետոյ է որ պրն. Քիյար, տակն ու վրայ եղած այդ բանէն, եկաւ չպատով ինծի իմացնելու պրն. Ահարոնեանի դաղտնի պաշտօնը։

Ամիսէն աւելի անցեր է այս միջադէպէն ի վեր, եւ ես կը սպասէի որ դուք ըստ արժանւոյն հպատակէիք դոնէ մեր Ֆրանսացի բարեկամներու որոշումներուն, որոնք յանձն առած են կիսապաշտօն[ական] միջնորդներ ըլլալ ձեր եւ իմ միջեւ (ինչպէս կ'ըսէ պրն. Քիյարը), տեսակ մը՝ «նամակատուփ». եւ դուք վերջ պիտի դնէիք այս տխուր կացութեան։

Ցարդ ձեզմէ բնաւ լուր մը չստացայ, ո՛չ ուղղակի, ո՛չ անուղղակի. եւ չորս ամիսէ [ի վեր] որեւէ դրամ չէ հասած ինծի։ Ճիշդ է որ Քիյարէն իմացայ որ անոր փող եւ նամակ ղրկեր էք, եւ ես ստիպուած եմ անոր ղրկել վճարելու՝ ստիպողական նոթերը։ Այս պայմաններուն մէջ ինծի համար կեղծ եւ անտանելի դրութիւն մը ստեղծուած է, որը ստիպուած եմ որքան կարելի է շուտ դադրեցնել։

Զգիտեմ ի՞նչպէս արդէն այս միջադէպին շուրջ լուրեր կը շրջին եւ ինձմէ արդէն բացատրութիւններ կ'ուզեն։

Ինքզինքս բոլորովին անդամալուծուած զգալով իմ գործիս մէջ եւ անկարող զգալով ամբողջ կազմակերպութեան կողմէ ինձ յանձնուած պաշտօնը կատարելու, անպատճառ պէտք է վերստանամ իմ իշխանութիւնս եւ առանձնաշնորհումներս, կամ հրաժարականս տալ՝ իմացնելով մեր կազմակերպութեան բոլոր կոմիտէներուն եւ Եւրոպայի բոլոր մեր բարեկամներուն, հարկ եղած բացատրութիւններով միասին։

Ինծի կը վերապահեմ նմանապէս բացատրութիւն տալ յառաջիկայ Ընդհանուր Ժողովին։ Ինչ ալ ըլլան հետեւանքները այս միջադէպին, պիտի մնայ զայն ա-

ոաջ բերած ըլլալու պատասխանատուութիւնը՝ այն պահուն, երբ գործը մեզմէ ուրիշ բան կը պահանջէր:

Հ. Յ. Դ. պատասխանատու ներկայացուցիչ Pro Armeniaի վարչութեան, խմբագրութեան եւ Եւրոպայի պրոպագանդին համար՝

Յ. Լ. Մ.

12.— Զորեֆշաբթի

Այս երեկոյ համարը պիտի տպուի՝ այնպէս ինչպէս որ է:

Ձեր նամակը կը զրկեմ Ժընեւ այս սուրհանդակով (թղթատարո՞վ), այն յոյսով, որ այս ցաւալի կռիւը վերջ պիտի դնէ:

Ձերդ՝ Փ. ՔԻՇԱՐ

13.— Նամակ Լորիսից Քիյարին

Այս օրերս զբաղուած լինելով, ստիպուած եմ զբրել եւ ըսել ձեզի որ ինծի [համար] անկարելի է կատարել ձեր խնդիրքները Pro Armeniaի մասին, մինչեւ չստանամ կարելի եղած որոշ պատասխանը այն ձեւով՝ ինչպէս ես ձեր միջնորդութիւնով եւ հաւանութիւնով զրկեցի Ժընեւ(2):

Այս պատասխանիս հետ կ'ուզէի նաեւ լուսաբանուիլ հետեւեալ հարցերու մասին, պրն. տը Փրեսանսէի աջակցութիւնով՝ որ ձեզի հետ յանձն առած է միջնորդութիւնը:

1) *Ինչո՞ւ հաւանութիւն տուիք որ պրն. Ահարոնեան իմ մասին զանդատ ընէ նախապէս ինծի չիմացուցած, եւ յետոյ ինձմէ հասկնալու անկէ աւելի մանրամասն բացատրութիւններ(2):*

2) *Ինչո՞ւ համար հաւանութիւն տուիք միջնորդի պաշտօն ստանձնելու, ինձ հետ միասին մասնակից մարդոց մէկուն հետ խորհրդակցելէ առաջ:*

3) *Ինչո՞ւ Ժընեւէն դրամ կը ստանայիք ու կը պահէիք՝ առանց ինծի յանձնելու, — ինչ որ համաձայն չէր ձեր «նամակատուփ»ի գաղափարին:*

4) *Ինչո՞ւ ինծի չզրկեցիք ծախքերու հաշիւները եւ Pro Armeniaի գումարին մնացորդը, քանի որ ե'ս եմ դեռ ներկայացուցիչը: Պէտք է անկեղծ ու բարեկամական պատասխան մը ստանամ որքան կարելի է շուտ, որպէսզի վերջնական եւ ստիպողական որոշում կայացնեմ, որովհետեւ այս աննորմալ դրութիւնը երկար չէ կարող տեւել, այն նամակէն յետոյ որ Ժընեւ զրկեցի:*

Pro Armeniaի *հաշիւները պատրաստ են, պիտի հաղորդուին:*

Pro Armeniaի *վարչութիւնը արդէն փոխադրուած է տպարան: Ձերազի մասին լուր չունիմ. իր թերթը դեռ ձեռքս չէ հասած. ստացա՞ք դուք: Ինչո՞ւ համար այս թիւին մէջ անգլերէն* Pro Armeniaի *ծանուցում չկայ ըրած: Ի՞նչ եղաւ Ամֆիթէաթրովի յօդուածը կնոջ վրայ:*

Լաւագոյն մաղթանքներս կ'ուղարկեմ ձեզի նոր տարիի առթիւ, ինչպէս նաեւ Ձեր ընտանիքին:

Ցուսալով որ ձեր անհանգստութիւնը շուտ կ'անցնի եւ ծանր չէ:

Ձերդ սիրալիր՝ Յ. Լ. Մ.

14.— Շաբաթ 29 Դեկտեմբեր 1905

Սիրելի բարեկամ !

Դժբախտաբար հիւանդութիւնս շատցաւ. ինչո՞ւ ձեր մտքէն չէր անցներ: Մինչեւ ամսի 20 շարունակ ստիպուած էի սենեակը մնալ եւ զրեթէ անկողնից չելլել:

Երեքշաբթի կէսօրէն ետքը միայն քանի մը ժամ դուրս կրցի ելլել: Այս թէ ոչ, ինչպէս կ'ըսէի իմ վերջին նամակիս մէջ, պիտի գնայի ձեզ տեսնելու եւ խօսելու բոլոր բաներու մասին, ինչպէս որ մեր վերջին տեսակցութեան ատեն (Ձերազի գործին համար), համաձայնած էինք շաբաթ ընել: Դուք ինծի իմացուցած էիք, որ այդ օրը հոն պիտի գայիք. յետոյ թերեւս մտքերնիդ փոխեցիք եւ գրեցիք այն նամակը՝ որ Ժընեւ զրկեցի, յանձնելու պայմանով եւ անոր աւելցնելով քանի մը խօսքեր՝ հաշտութիւն մաղթելով:

Ձեր վերջին երկու հարցին մասին քանի անգամ ձեզի ըսի արդէն եւ նորէն կ'ըսեմ որ որեւէ ժամանակ չեմ ցանկացած մասնակցիլ ներքին կռուի մը, որ սակայն ինծի խորապէս ցաւ կ'ազդէր: Դուք իսկ վկայ եղաք այն յուզումին որ զգացի, եւ որը հաղորդեր էի մեր բարեկամ Փրեսանսէին: Մենք պէտք չունինք դատաւորի ոչ ալ իրաւարարի դեր խաղալու, այն բոլոր պատճառներով, որոնց մէջ զգացական պատճառներն ալ քիչ չեն: Մեր ուրեմն միջնորդի մը դերը կըրնար ըլլալ միայն, պայմանով որ մեզի [առիթ] տըրուէր մէկէն միւսը փոխադրելու լուրեր, ինչպէս դուք կ'ըսէիք անցեալ շաբթու:

Գալով Ժընեւի նամակին, ես ձեզի հաղորդած էի հազար ֆրանք առաքման մասին, որոնք գործածուեցան ներկայ հաշիւները վճարելու: Ատկէ զատ միայն անկարեւոր խօսքեր էին (Քրիստափորի լուսանկարը, Ժօրեսի դատին մասին Պոլսէն թերթի մը առաքումը): Ըսած էին ինծի թէ այդ 1000 ֆրանքը «անձնապէս» ինծի յատկացուած էր, այսինքն զրկողներուն մտքով իմ յետնեալ վարձքս կը ներկայացնէր: Ես պատասխանեցի թէ ես օգտակար կը դատէի նախ վճարել տպարանի եւ ուրիշ հաշիւները, եւ թէ թերեւս ուրիշ դրամի ալ պէտք պիտի ըլլար՝ վճարելու համար, զորօրինակ, միթինկին ծախքը: Անկէ յետոյ ստացայ ներկայ նամակը, որը ձեզի կը հաղորդեմ: Այդ էր պատճառը

ժամադրութեան որ ձեզմէ խնդրած էի. յետոյ բաց նամակ մըն ալ ստացայ, որուն մէջ ինծի կը հարցընէին, առանց մանրամասնութեան, թէ ի՞նչ գումար հարկաւոր էր Pro Armeniaին՝ տարին վերջացնելու համար:

Անոր համար է նմանապէս որ ձեզ կ'ուզէի տեսնել, — գիտնալու թէ արդէն վճարուած գումարներէն զատ՝ դեռ ի՞նչ պարտք կը մնար:

Ստուգիւ այսպէս կը կատարէի միջնորդի դերը, որը ընդունեցի հրապարակային խզումի առաջքը առնելու համար, որը ցաւալի պիտի ըլլար:

Ոչ մէկ տեղ յիշատակութիւն չկար այս կռուի(7) մասին, ո՛չ Ժընեւի նամակին մէջ, ոչ ալ իմիններուս, բացի այն նամակէն որուն մէջ ձեր նամակը կը փոխանցէի հաշտութեան խրատներով՝ որ ձեզի ըսի վերեւ: Այս պայմաններուն մէջ իմ «նամակատուփ»ի դերը ուրեմն զերոյի կ'իջնար, որովհետեւ երկուստեք հաղորդելիք բան չէի ստանար:

Ձեր վայրկեան մը իսկ իմ մէջ անվստահութիւն տեսնելը դէպի ձեզ, եւ այդ անարդարացի զգացումը արտայայտելու համար ընտրած ձեւը այնքա՛ն քիչ բարեկամական եւ յարձակողական էին, որ ինծի սաստիկ ցաւ եւ վիշտ պատճառեցին:

Ես կարծեմ բարեկամութեան, յարգանքի եւ վստահութեան բաւական ապացոյց տուած եմ ձեզի, որպէսզի դուք վտարէք ձեզմէ իսկոյն այդ անարդար եւ յորի մտածումը: Իսկ ես կ'ուզեմ մոռնալ որ այդ մըտածումը ունեցած էք:

Դուք գիտէք թէ ես երբեք չեմ սիրած վարչական գործերով զբաղիլ: Կը խորհէի թէ այս թիւրիմացութիւններու շրջանին հաճելի եղայ ձեզի՝ վճարելով ինծի եկած այլեւայլ հաշիւները: Ուրախ եմ որ իմ այդ հոգէն ազատուեցայ, մանաւանդ որ պիտի բացակայիմ: Այս պահարանին մէջ պիտի գտնէք 1003 ֆրանք 50՝ անտուկին մէջ մնացած գումարը, վճարուած գումարը հանելէ յետոյ, որուն ոչ բարդ մանրամասնութիւնը ձեզի կը զրկեմ: Ձեզմէ պիտի խնդրեմ միայն բարեհաճիլ յանձնել Թարգմանիչին 30 ֆր.՝ Դեկտեմբեր ամսուան հաշուին:

Անգլ. Pro Armeniaի *ծանուցումը չգրի, որովհետեւ մոռցած էիք համարը ինծի ձգել. ուստի չէի կըրնար տալ ո՛չ հասցէն, ոչ բովանդակութիւնը:*

«Femme»*ի յօդուածը իմ արկղիս մէջ է երկու ամիսէ ի վեր: Հիւանդացայ եւ գրեթէ տանը փակուեցայ, եւ Տօֆին փողոցը ոտք չեմ դրեր:*

Materէն *կ'իմանամ որ Փրեսանսէն հիւանդ է ուր օրէ ի վեր. վաղը* Materը *պիտի տեսնեմ նորէն. չենք կրնար հրատարակել առանց ճառին, եւ* Materը *կամ դուք միայն կրնաք ձեռք բերել զայն: Ինչ որ նորէն պիտի ուշանայ:*

Գրեթէ հաստատ [է որ] կը մեկնիմ երեքշաբթի իրիկուն եւ ամսուն 15էն առաջ չեմ վերադառնար: Շատ կը փափաքէի մեկնելէս առաջ ձեզ տեսնել: Ցոյսով եմ որ վաղը կէսօրէն յետոյ դուրս կ'ելլեմ: Բայց դուք դիս կրնաք գտնել առաւօտեան կամ ժամը վեցէն ետք:

Երկուշաբթի, եթէ բարելաւումը շարունակուի, ցերեկին գրեթէ հոն չեմ ըլլար: Բայց եթէ երեքշաբթի առտու ձեզի հաճելի է, ինծի ըսէք միայն: Ամէն պարապայի մէջ ձեզմէ լուրի մը կը սպասեմ կամ աւելի լաւը՝ pneumatique *մը, որովհետեւ փոստը կիրակի եւ տօն օրերը շատ դէշ կը գործէ:*

Մնողջս եւ ես ձեզի կ'ուղարկենք մեր ջերմ մաղթանքները, շնորհակալ ըլլալով ձեր մաղթանքներուն համար:

Ձերդ սիրալիր՝ Փ. ՔԻՇԱՐ

Յ. Գ.— Եթէ այս նամակը յանձնելի կ'ընեմ(8) մէջի չէքին համար է. նաեւ՝ որովհետեւ մենք Ձերազի հաղորդագրութիւնը յանձնելի ընել կու տայինք:

Կը տեսնեմ որ մոռցայ հաշուել Նոյեմբեր ամսու Թարգմանիչին համար 30 ֆրանքը, որ ես ուղղակի յանձներ եմ իրեն: Ուրեմն 973,50 ֆր.ի չէք մըն է միայն որ կը զրկեմ ձեզի:

15.—

Սիրելի բարեկամ !

Այս երեկոյ կ'իմանամ ձեր մեկնումը հալալ հանդիստութեան մը համար: Ձեր տկարութիւնը եւ ուրիշ շատ մը պարագաներ թոյլ չտուին ինծի՝ խօսիլ ձեզի հետ, վերջին երկար նամակին համար:

Ձեր նամակէն կը հասկնամ ձեր համերաշխութիւնը ինծի հետ, որ արդիւնք է երկար աշխատութեան՝ որ միասին շարունակեցինք հինգ տարի անընդհատ միեւնոյն հոգերով, միեւնոյն գոհացումով, վստահութիւնով, բարեկամութիւնով եւ յարգանքով: Անակնկալ միջադէպը ձեզ զարմացուց եւ մղեց թերեւս սկիզբը ձեր ցանկացածէն աւելի հեռուն երթալ, մեր գործին շահերը փրկելու մտածումով. սակայն ժամանակին կանգ առիք զառիվարին վրայ եւ բաւականացաք միջնորդ ըլլալով միայն:

Տը Փրեսանսէի եւ ձեր կողմէն այս որոշումը կ'ընդունիմ ի նշան ձեր նկատմամբ վստահութեան եւ յարգանքի. բայց ես կը նախատեսէի որ ձեզ անհանդիստ կ'ընեմ, ինչ որ մեծապէս անհաճոյ էր ինծի: Իսկապէս ցաւեցայ որ դուք մասնակից եղաք այս ..... եւ քանի՛ անգամներ յայտնեցի զայս պրն. տը Փրեսանսէին:

Բայց ի՞նչ ընել սկսուած գործը: Կ'ուզէի միայն կարելի չափով ձեզ դուրս բերել այս անել դիրքէն, ուր այնքան ազնուօրէն յանձն առիք մտնել, եւ ա՛յս մտահոգութիւնն է որ մղեց զիս գրել այս նամակը ձեր միջոցով Բիւրոյին:

Ես կը տեսնեմ որ Ժընեւի պարոնները չարաչար կը գործածեն ձեր բարեացակամութիւնը, առանձնորդուած, ինչպէս իրենք են, ճղճիմ զգացմունքներէ որ պատիւ չի բերեր իրենց եւ արդիւնք է մտաւոր եւ բարոյական կրթութեան յայտնի պակասի: Ինծի այնպէս կը թուի թէ օրինապէս կազմուած Բիւրօ չկայ, որովհետեւ միայն պրն. Մալումեանը եւ «Դրօշակ»ին իր աշխատակիցը՝ Յովհաննէսեան(9) կ'ընեն ամէն բան, ստորագրելով եւ կառավարելով ամէն ինչ եւ հրամայելով բոլոր բացառիկ եւ կամայական օրէնքները:

Իրենց իրաւունքով ձեզ վախցնելէ յետոյ թէ Pro Armenia*ն կը դադրեցնեն, եթէ ես չհպատակէի, ձեզի կ'իմացնէին ուղղակի երեւակայական որոշումներ, որոնց համար իմ որոշումս (համաձայնութի՞ւնս) դոնէ անհրաժեշտ էր(2): Այդ նամակը, «Խմբագրութիւն Դրօշակի» ստորագրուած, փոխանակ ձեր միջոցով ինծի ղրկելու, ուղղակի ձեզի ղրկեր են: Եթէ կ'ուզեն ամէն միջոցներով զիս վերցնել մէջտեղէն, իրենք թող զգուշանան որ չվերնան: Իշխանութեան յափշտակութիւն մըն է, որ վերին աստիճան չարաչար կը գործածեն, որովհետեւ իրենց ձեռքը կը պահեն դրամը, ձեր փափկանկատութեան եւ Դատին ձեր անձնուիրութեան ապաւինելով:*

Պէտք է վերջ տալ այդ ծիծաղելի կատակերգութեան: Կ'ուզեմ ձեզ փրկել ձեր միջնորդի դերէն, խընդրելով ձեզմէ, որ իմաց տաք անոնց, կարելի եղածին չափ շուտ, թէ դուք կը դադրիք ժամանակաւոր միջնորդ ըլլալէ, որ արդէն երկու ամիսէ [ի վեր] կը տեւէ: Ամէն պարագայի տակ, գիտցէ՛ք որ յօժար չեմ ընդունելու՝ ձեզի համար նեղիչ եւ ինծի համար անտանելի այդ պայմանը. միայն եթէ, ըստ ձեզի, գործին օգուտը չպահանջէ շարունակումը(10):

16·—

20 Դեկտեմբեր, Ժընեւ(11)

Սիրելի ընկեր !

Մալումեանի հիւանդութիւնը ուշացուց մեր խորհրդակցութիւնը: Կու գանք պատասխանել այն հարցումին, որը դրեր էք Pro Armenia*ի դրամական հաշուի մասին:*

Որոշեցինք 12·000 *ֆրանք սահմանել* Pro Armenia*ի ծախսերուն, մեր բարեկամ Քիյարի վարձքէն զատ:*

Տարուան սկիզբէն ի վեր մինչեւ այսօր մեր սընտուկը յանձնուած է ոչ 12 *այլ* 14·000 *ֆր.*, *Քիյարի վարձքէն զատ: Նախորդ տարիէն Թահինեանի քով սընտուկին մէջ կը մնար* 2000 *ֆր.*, *ընդամէնը՝* 16·000 *ֆրանք:*

Գալով ապագային, մենք պիտի ջանանք համոզել յառաջիկայ մեր Ընդհանուր Ժողովը՝ Թերթի հրատարակութիւնը շարունակելու համար: Ընկերներ պիտի զտնուին, որոնք դրամական պատճառներով կամ քաղաքական նկատումներով (ապագայ ռուս կառավարութեան հաւաքական վերակշիռ ազդեցութիւնը Թըրքահայկական Հարցի լուծման համար, կամ Փեթերսպուրգի մէջ հայկական օրգան մը հիմնելու նպատակայարմարութիւնը եւայլն) Ֆրանսայի մէջ Pro Armenia*ի կարիքին դէմ խօսին:*

Որպէսզի մեր տեսակէտը յաղթէ, անհրաժեշտ է որ Pro Armenia*ի հրատարակութեան ծախքը նուազեցընենք: Մենք կը խորհինք որ արդի վիճակին մէջ կազմակերպութիւնը* 8–10·000 *ֆրանք միայն կրնայ տալ:*

Ներփակ կը դնէք 16·000 *ֆրանքի չէք մը ձեր անունին, որ ձեզի համար է անձնապէս*(12)*: Ցարդ ձեզի յանձնուած է* 2000 *ֆրանք, որուն* 1000*ը տարւոյն ընկիրը փոխադրուած է եւ* 1000*՝ ձեզի յանձնած է Վարանդեանը, Փարիզ, Ցուլիսին:*

Վերջացնելով, յատկապէս կը խնդրենք մեզի ղրկել 1905 *Ցունուար* 1*էն մինչեւ Դեկտեմբեր* 31 *բոլոր հաշիւները, մեր տեսարկներուն մէջ արձանագրելու համար: Ներեցէք որ ձեզի այսքան նեղութիւն կը պատճառենք:*

Հիա՞նդ էք միշտ:

Եղբայր. բարեւներ՝
ԽՄԲ. ԴՐՕՇԱԿԻ

17·—

12 Ցունուար, Ժընեւ(13)

Սիրելի ընկեր !

Ներեցէք որ ձեզի այսքան ձանձրոյթ կը պատճառենք: Թահինեանին(14) *ձեր միջոցով մեզի ղրկած բացատրութեան նամակը մեր դիրքը չի կրնար փոխել բընաւ: Մենք ձեզի չենք բացատրեր չարժառիթները, որովհետեւ բոլոր մեր ջանքերը՝ վերահաստատելու համար մեր նախկին յարաբերութիւնները, ի դերեւ ելան, ինչպէս գիտէք, պրն. Թահինեանի պատճառաւ, որ չուզեց ետ առնել իր Ճշնամական խօսքերը: Արդ, համաձայն մեր ընկեր Սիսեանի տեղեկագրին եւ ձեր փափքին, մենք ընդունեցինք, երախտագիտութեամբ, միջնորդի ծառայութիւնը՝ որ դուք եւ մեր բարեկամ Փրեսանսէն առաջարկեցիք:*

Թահինեանի նամակը կը վերադարձնենք եւ կը խնդրենք ձեզմէ՝ կարդալ: Թիւրիմացութիւններու հիւսկէն մըն է: Զգիտենք ի՛նչ իրաւունքով, եւ ի՛նչ պատճառով ստորագրուած է՝ «Հ. Յ. Դ. պատասխանատու ներկայացուցիչ Pro Armenia*ի վարչութեան, խմբագրութեան եւ եւրոպական պրոպագանդի համար»:*

Սիսեան այդ մասին ձեր ուշադրութիւնը կը հրաւիրէ, որ մեր ընկերը իրաւունք չունի իրեն վերագրել առանձնաշնորհումներ եւ իրաւունքներ, որոնք կազմակերպութեան ոչ մէկ ներկայացուցչական մարմնի կողմէ չեն տրուած իրեն:

Դուք, սիրելի ընկեր(15)*, ստանձնած էք թերթի խմբագրութեան պատասխանատուութիւնը եւ պէտք է շարունակէք անոր հրատարակութիւնը, անկախ մեր ընկերներէն՝ որն ալ որ Փարիզ ըլլայ իբր պրոպագանդիստ կամ կառավարիչ:*

Կուսակցութեան Ընդհանուր Ժողովը երկու պրոպագանդիստ ընտրեց, որ Եւրոպայի մէջ շրջին եւ ազդեն մամուլի եւ հանրային կարծիքին վրայ. երկու պրոպագանդիստ՝ մինը Վարանդեան եւ միւսը Թահինեան: Անոնք «Ժընեւ բնակած միջոցին կը նկատուին իբր Բիւրոյի անդամներ» (կանոնագիր): Հետեւաբար այն մասնաւոր առանձնաշնորհումները, որ Թահինեանը կը սիրէ իրեն վերագրել, ինչպէս նաեւ այն անգլիւ վերաբերմունքը՝ որ ան կ'արտայայտէ Ժընեւի քանի մը ընկերներու նկատմամբ, խոշոր թիւրիմացութիւններ են միայն: Ժամանակը չէ — համաձայն ենք ձեզի հետ — զբաղելու այդպիսի «հարցերով», որոնք որեւէ լրջութիւն չունին:

Կը խնդրենք որ շարունակէք խմբագրել Pro Armenia*ն անկախօրէն, առանց նկատի առնելու ներքին անհամաձայնութիւնները՝ որոնք որեւէ կարեւորութիւն չունին:*

Ցաւալի է — եւ բոլոր ընկերները ցաւով կը հաստատեն — որ Զերազ-Մելիքոֆի գործը Pro Armenia*ի սիւնակներուն մէջ փոխադրուած է, ինչ որ անշուշտ ոչինչ կ'աւելցնէ թերթի հմայքին, ոչ ալ ընթերցողի օգտին: Այս ողբալի միջադէպը արտասահմանի բոլոր թերթերուն մէջ առարկայ է դարձեր ամէն տեսակ մեկնութիւններու:*

Եղբայրական բարեւներով՝
ԽՄԲ. ԴՐՕՇԱԿԻ

Յ. Գ.— Հ. Յ. Դ. կուսակցութեան Ընդհանուր Ժողովը արդէն հրաւիրուած է: Երկու ամիսէն տեղի կ'ունենայ Կովկաս:

18·— Քիյարի պատասխանը
«Դրօշակ»ի խմբագրութեան

Սիրելի՛ ընկերներ,

Փարիզէն բացակայութեանս պատճառով այսօր միայն ձեռքս հասաւ ձեր Ցունուարի նամակը:

Ձեր փափաքին համաձայն, Թահինեանին կը դրէ՛ն իր Դեկտեմբեր 18*ի նամակը: Գիտէի անոր պարունակութիւնը եւ առանց բնաւ երբեք մասնակցելու ձեր ներքին տարակարծութիւններուն, ընդունած էի անոր առաջումը, հոն տեսնելով միջոց մը՝ առաջ բերելու համար ձեր եւ մեր բարեկամին միջեւ խօսակցութիւն մը՝ որ, իմ մտածումով, համաձայնութեան մը պարտէր յանգիլ:*

Իրաւունք չունիմ վիճաբանութեան խորը մտնելու բայց, եթէ իսկապէս խնդիրը թիւրիմացութեան վրայ է, եթէ երկպառակութիւնները անկարեւոր են, ինչո՞ւ չուտով վերջ մը չդնել գործի օգտին համար:

Ահա ինչ որ մեր բարեկամը տը Փրեսանսէ եւ ես մաղթեր ենք. եւ մենք միջնորդի դերը ընդունեցինք միայն դուրս գալու համար անել դրութենէ մը, եւ մեր նամակներուն մէջ պարզուած յոյսով.— այն է՝ թէ Ընդհանուր Ժողովէն առաջ բոլոր անհամաձայնութիւնները մաքրուելու են:

Ասոնք են մեր Նոյեմբեր 1*ի նամակին խօսքերը, եւ մեր զգացումը անփոփոխ կը մնայ:*

Ինքնայայտ է որ մենք պիտի շարունակենք Pro Armenia*ի հրատարակութիւնը, որ տուժելու չէ ներքին այդ ցաւալի վէճերէն, որոնք կը սպառեն դժբախտաբար շատ ժամանակ եւ շատ կորով: Ես ինքս խոստովանաբար ցաւած եմ. վերջին ամիսներուն՝ այս իմ ամենէն կսկծիչ հոգս եղաւ:*

Եղբայրական բարեւներով՝
Փ. ՔԻՑԱՐ

Յ. Գ.— Անկարելի էր չհրատարակել այդ դժբախտ զործին տեղեկագիրը, այն միջադէպէն յետոյ որ նշանակել է իրեն(2)*.* L'Armenie *կտորը վիրաւորական էր Ֆրանսացի եւ ամերիկացի մեր բարեկամներուն համար: Այս, ինչպէս նաեւ անձնական Ճշնամանքն էր, որ վճռել տուաւ Լորիսին այդպէս վարուիլ: Պրն. Զերազը այս առթիւ ցոյց տուաւ տարօրինակ անդիտակցութիւն մը, մինչդեռ իրեն համար հեշտ էր ետ առնել իր ըսածները, ինչպէս վկաները ընդունած էին կանխաւ ընել:*

ՆՈՑՆ

19·— Երեքշաբթի առաւօտ, 19 Դեկտեմբեր

Սիրելի բարեկամ !

Այս նամակը թերեւս ձեզի հասնի ժամը 10¾*ին. ձեր նամակը ինձ յանձնեցին ժամը* 9*ին մօտերը: Ցատկապէս շնորհակալ եմ որ ինծի հաղորդեր էիք Ժընեւի ղրկած նամակները եւ կը յուսամ թէ ձեր անհամաձայնութիւնները պիտի չհրապարակուին, ինչպէս երկիւղ կը յայտնէիք ձեր վերջի տողերուն մէջ:*

Եթէ ճառը ընդօրինակեր էք, բարի եղէք շուտափոյթ տանիլ կամ ղրկել տպարան: Այսքան ուշացումը ցաւալի է:

Իմացուցէք ինծի երկտողով մը թէ ի՛նչ եղաւ ճառը: Իսկ Զերա՞զը:

Զերդ՝ Փ. ՔԻՑԱՐ

20·— 11 Յունուար

Սիրելի բարեկամ !

Ինչպէս կը տեսնէք ներկայ նամակներէն (նամակ մը Ժընեւէն Յունուար 2ին եւ այդ նամակին ղրկած պատասխանս), մեր միջնորդի դերը չվերջացաւ։

Մանաւանդ դատի շահուն համար, բուռն կերպով կը ցանկայի որ բոլոր այս անհամաձայնութիւնները վերջ գտնէին անյապաղ, եւ այս իմ ջերմ յոյսս էր։ Գալով անձնական հաճոյութեան պատճառներուն, դուք գիտէք, որ շատ կարեւորութիւն չեմ տար· ինչ ձեւով ալ ըլլայ եւ առանց որեւէ փnոթnոfnի այլեւայլութեան, հարկաւոր է որ Ֆրանսերէն Pro Armeniaն լոյս տեսնէ։

Յաւելուածին եւ ժամանակաւոր օրինակով մը ծառայութեան բարդանալը կարեւորութիւն չունի(2)· եւ աշխատանքի այս թեթեւ յաւելումը ինծի համար ծանր չի պար, երբ շուտով սկսիմ իմ կանոնաւոր կեանքս, ընդ երկար ընդհատումէ մը յետոյ։ Տարիէ մը յետոյ՝ հոգերով եւ հանրային աղէտներով եւ բուռն յուզումներով ծանրացած, ուր ամենէն մեծ մտատանջութիւնները ունեցայ անձերու առողջութեան համար, որոնք ինծի թանկագին էին եւ որուն համար հարկ եղաւ բաւական զօրեղ մտաւոր աշխատանք նուիրել, քանի մը օրուայ այս հանգիստը ինծի անհրաժեշտ էր, որպէսզի ամբողջովին կարող ըլլայի փարելու գործին։

Ձերդ սիրալիր՝ Փ. ՔԻՑԱՐ

21·— Զորեֆշաբի առաւօտ

16 Յունուար 1906

Սիրելի բարեկամ !

Իմ պատասխանը պիտի ըլլայ կարճ եւ որոշ։ Այդ պատասխանը կար արդէն Նոյեմբերի մեր այլ մէկ նամակին մէջ, որով մենք միջնորդի դեր ընդունեցինք, այսինքն, մեր գաղափարով, Ընդհանուր Ժողովէն առաջ իրերու վիճակին մէջ ոչինչ պիտի փոխուէր։

Որեւէ պատճառ չկայ այդ Թուականէն առաջ ձեր պաշտօնէն հրաժարելու· իսկ «Փրօ Արմենիա»յին համար՝ մենք պիտի շարունակենք։ Միայն, երբ Փարիզ վերադառնամ, [կը խնդրեմ] յայտնել ինծի թէ ի՛նչ կը մնայ անտուկին մէջ, որպէսզի հարկաւոր դրամը ուղեմ։ Երկուշաբթի ես Փարիզ կ՚ըլլամ եւ, կը յուսամ, քիչ մը ընդարձակ կը խօսինք ամէն բանի մասին։ Ցուսով եմ նաեւ որ Փրեսանսէն մինչ այդ արդէն կ՚առողջանայ։

Մի գրէք այլեւս ինծի· երբ իմ նամակս ստանաք, ես Մարսէյլ կ՚ըլլամ։

Այս երեկոյ կոնֆերանս կայ ..... Ռուսաստանի մասին, ինչպէս նաեւ բաժին մը ալ Հայկական Հարցի մասին։

Ձերդ սիրալիր՝ Փ. ՔԻՑԱՐ

22·— 20 Յունուար, Փարիզ

Սիրելի ընկեր ! (16)

Ստացայ ձեր նամակը եւ Ֆրանսական Pro Armeniaի համար 1000 Ֆր· չէքը։ Գալով Թահինեանի նամակին, Յունուար 2ի ձեր նամակէն մաս մը եւ անոր կցուած ծանօթագրութիւն մը ինծի այնպէս կարծել տուին, թէ դուք կը յանձնարարէիք ինծի՝ որ նամակը անոր վերադարձնեմ։ Արդարեւ դուք ինծի կ՚ըսէիք «Ձեզի կը յանձնենք Թ·ի նամակը եւ կը խնդրենք կարդալ», եւ որքան կը յիշեմ՝ նամակը կը կրէր «խնդրենք վերադարձնել» ծանօթութիւնը։ Ես հասկցայ ինչպէս արդէն ըսի, թէ նամակը պէտք էի վերադարձնել ղրկողին, որը իսկոյն ըրի։

Որեւէ լուր չունիմ Կ. Պ.էն եւ չգիտեմ իսկ թէ Փարի՞զ է։

Եղբայրական բարեւներով՝ Փ. ՔԻՑԱՐ

23·— 24 Յունուար

Սիրելի բարեկամ !

Միեւնոյն թղթատարով ժընեւ կ՚ուղարկեմ նամակը որուն պատճէնը կը գտնէք սոյն պահարանին մէջ։ Որովհետեւ հարկ է սկսիլ յաջորդ համարը, ձեզմէ պիտի խնդրէի, որ Իսաքի միջոցով ինծի ղրկէիք Ռուզվելթի նամակին բնագիրն եւ ստորագրողներու ամբողջ ցանկը։

Այս երեկոյ բժիշկին հետ նիստեր կը վերսկսիմ· յուսամ կարճ պիտի տեւէ եւ առանց պատահարի։

Ձերդ սիրալիր՝ ՔԻՑԱՐ

Յ. Գ.— Շատ մը համարներ ետ կու գան հասցէներու անբաւարարութեան կամ անճշդութեան պատճառով։

24·— Զորեֆշաբի, 24 Յունուար 1906

Սիրելի ընկերներ(16),

Փարիզ դառնալուս պէս գացի տեսայ Թահինեանը, որ բերանացի նոյնը հաստատեց, ինչ որ արդէն ինծի գրած էր երբ ձեր կողմէ իր վերջին նամակը վերադարձուցած էի, այսինքն, եթէ Ֆ· տը Փրեսանսէ եւ ես հակառակ կարծիքի չըլլայինք, պիտի ձգէ իր պաշտօնը՝ որ ստանձնած է Սոֆիայի համագումարին կողմէ(17)։

Ձեր Նոյեմբեր 2ի նամակին պարունակութեան համաձայն, եւ մեր կարծիքով՝ միշտ փափաքելի է, որ Ընդհանուր Ժողովէն առաջ համաձայնութիւն մը կայանայ։ Ամէն պարագայի մէջ մենք կը կարծենք թէ գործին շահուն համար հարկաւոր է որ իրերը մնան նոյն վիճակին մէջ, մինչեւ որ Ընդհանուր Ժողովը իրեն դատելիք հարցը ի՛նքը վճռէ։ Ուստի ես յայտարարեր էի Թահինեանին, որ պէտք է իր պաշտօնին վրայ մնայ։

Գալով իմ միջնորդի դերիս, պէտք է ըսեմ որ անցեալ տարուան հաշիւները կայացած են եւ իսկոյն պիտի ղրկուին ձեզի։ Թահինեան 2000 Ֆր· կը հաշուէ Pro Armeniaի համար ծախքը Ընդհանուր Ժողովէն առաջ՝ երկու ամսուան համար։

2000 Ֆր· կը հաշուէ նմանապէս անգլերէն Pro Armeniaի [համար] անհրաժեշտ ծախքը։

Ռուս թերթերէն քաղուած թղթակցութիւնները կարելի չեղաւ հրատարակել վերջին թիւին մէջ։ Յաջորդ համարին մէջ պիտի հրատարակուին։

Թուրքիայէն լուր չունի՞ք։ Շատոնց է որ այդ կողմէն լուր չկայ։

Դեռ տասներկու օրի չափ բժիշկին խնամքին տակ պիտի ըլլամ։ Բայց Փարիզ վերադառնալս հանգստացուց զիս եւ շուտով կը վերսկսիմ իմ նորմալ կեանքս։

Եղբայրական բարեւներով՝ Փ. ՔԻՑԱՐ

25·— 23 Յունուար, Ժընեւ

Սիրելի ընկեր(18)

Ձեր նամակին համաձայն ձեզի պիտի ղրկենք ամսէ ամիս 1000 Ֆր· Ֆրանսերէն Pro Armeniaի համար, մինչեւ Ընդհանուր Ժողովը։

Իսկ անգլերէն Pro Armeniaին համար՝ 10·000 Ֆր· որոշուած էր, որուն 2000ը արդէն ղրկած է 1905 Հոկտեմբեր 29ին։

Մենք որեւէ տեղեկութիւն չունինք անգլերէն հրատարակութեան մասին· ցարդ առաջին թիւը ստացած չենք։

Եղբայրական բարեւներով՝ ԽՄԲ. «ԴՐՕՇԱԿ»Ի

Յ. Գ.— Կը խնդրենք, որ մեզի վերադարձնէք Թահինեանի վերջին նամակը։ Ձեզի ղրկած էինք միմիայն անոր համար, որ կարդաք։

Եթէ մեր բարեկամ Պերթրանը տեսնէք, ըսէք որ հրատարակէ Կովկասի դէպքերու մասին հատորը։ Դրութիւնը խիստ տաղնապալից է։

26·— 28 Յունուար 1906

Սիրելի՛ բարեկամ(19),

Ժընեւէն ստացայ ներփակ նամակը, որուն կը կցեմ պատճէնը իմ պատասխանիս, ինչպէս նաեւ միեւնոյն պահարանով եկած 1000 Ֆրանք չէքը՝ Ֆրանսերէն Pro Armeniaի համար։

Պոնիտալ իմ մօտ եկաւ վերջերս դրամ ուզելու համար։ Ըսի իրեն թէ քիչ ատենէն կը ստանայ։

Կը ցաւիմ որ երէկ առաւօտ զիս չեն արթնցուցած երբ Իսաքը ficheերը բերած էր· անշուշտ անկէ ձեր մասին լուրեր կ՚ունենայի։

Լոնկէն Անգլիոյ մէջ conférenceի մը մասին գրած էր· ստոյգ չգիտեմ թէ պիտի կարենա՞մ երթալ։

Ձեր սիրալիր՝ ՔԻՑԱՐ

27·— 31 Յունուար 1906

Սիրելի՛ բարեկամ(19),

Ժընեւի ձեր ընկերներուն պատասխանը անգլերէն Pro Armeniaի մասին անդամ մը ալ ցոյց կու տայ ատոնց անանկեղծութիւնը դէպի ինձ։

Կրնաք հաստատել պրն· Իսաքէն որ համարը ղրկըւած է ամէն ատեն (ատենի՞ն), ինչպէս ամէն մարդու։

Այս պարագաներուն մէջ չեմ կրնար իմ պաշտօնս կատարել եւ ես պէտք է հեռանամ այն գործէն, որը մենք միասին ստեղծեցինք հինգ տարի առաջ։ Միակ զիջումը որ կրնամ ընել ձեր խնդրանքին, այն է՝ որ չեմ հրապարակեր, գործին շահուն համար, իմ հեռանալս՝ մինչեւ Ընդհանուր Ժողովը· եւ մինչեւ այդ օրը ձեզի կը յանձնեմ ամէն ինչ, ձեր բանաձեւին համաձայն (որ կը գործածէիք վերջերս), իբրեւ «միակ տէր» [Pro Armeniaի]։

1905ի 430 Ֆր· մնացորդը եւ ձեր ինծի ղրկած 1000 Ֆրանքը Իսաքին քով են· ան ձեզի հաշիւ պիտի տայ։ Իսկ 1905ի հաշիւը պրն· Իսաքին յանձնեցի, ինչպէս խօսած էինք, ձեզի ստորագրել տալու համար։

Լ. Մ.

ԳԱՂՏՆԱՊԱՀԱԿԱՆ ՆՈՒԱ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԴԷՊԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ(20)

I

Հայ ազգին արդի կացութիւնը

Հայ ազգը, ինչպէս յայտնի է, երեք խումբի բաժնուած է, երեք առանձին իշխանութեանց տակ, — Թուրքիա, Ռուսիա, Պարսկաստան։

1) Թուրքիա — *Աւելորդ է շատ ծանրանալ Թրքահայերու արդի կացութեան վրայ։ 1874էն 1877ի(21) ահաւոր կոտորածներու յիշատակները դեռ Թարմ են յիշողութիւններու մէջ։ Ահա՛ այդ կոտորածներու հետեւանքները, որոնք նախատեսելի էին։ Անսեալի Թշուառութիւն մըն է որ կը տիրէ Թուրքիոյ բոլոր հայաբնակ կեդրոններուն մէջ։ Այդ Թշուառութիւններուն կը խառնուին նաեւ սաստկացող դերութեան վիճակի մը նուաստութիւնը եւ նորանոր բռնութիւններու մըշտական սպառնալիքը։ Մեծ կոտորածներու շարքը կըրնայ վերսկսիլ բոպէէ բոպէ, այնքան ատեն որ Թրքական մոլեռանդութիւնը արԹուն կեցած է։ Քանի մը ամիս առաջ Խարբերդի միւսլիմանները որոշած էին քաղաքին բոլոր հայերը ջարդել։ Վերջին բոպէին, Թուրք իշխանութիւնները, որոնք մինչեւ այդ ատեն քաջալերած էին, արգիլեցին, դիւանագիտական բարդութիւններու երկիւղէն։*

Մուշի դաշտին մէջ Ցոնան գիւղը քանդեցին եւ բնակիչները ջարդեցին։ Դժբախտաբար Սասունը նորէն կոտորածի Թատր դառնալու է, որը այլեւս անխուսափելի է, որովհետեւ ոչ ոք չէ մնացեր որ լսած չըլլայ Սուլթան Համիտի այն խօսքը՝ Թէ զանի անձամբ (Սասո՞ւնը) պատասխանատու կը բռնէ(22)։

2) Ռուսաստան — *Ռուս իշխանութիւնները կովկասահայերու համար կ'ըլլան նոյն հալածիչները՝ ինչպէս Սուլթանը Թրքահայերու համար։ Հայ եկեղեցական կալուածներու գրաւումը նախաշաւիղն է միայն ոչ նուազ կարեւոր միջոցներու, որուն նպատակն է քիչ քիչ անհետացնել հայ ազգութիւնը, եւ բռնի պարտադրել ռուսական միութիւն մը՝ ըստ երեք հիմնական սկզբունքներու, — ցարութիւն, օրԹոդոքսութիւն եւ համիալամութիւն(22)։ Բաւական չպիտի սեպեն խմբովին Սիպերիա աքսորել, եւ ժողովուրդի բողոքը խեղդելու [համար] կը Ջանան ազգը գլխէն հարուածել։ Ռուսական խաղերը կը ձգտին կաթողիկոսութեան Ընդումին՝ որ Հայ Եկեղեցւոյ գերագոյն պետն է։*

Վերջերս ռուս ԹերԹերը կը տեղեկացնեն Թէ Պետերբուրգի կառավարութիւնը կ'ուզէ դեռ աւելի առաջ քալել եւ ռուս Սինոդի միջոցով կ'աշխատի անհետացնել Հայ Եկեղեցին իսկ։ Կը Ջանայ այս նպատակին հասնիլ Ռուսաստանի բաժան եկեղեցիներու միութիւն մը [ստեղծելու] կեղծաւոր պատրուակով։

Այս միջոցները եւ այս ծրագիրները հայկական զղացումին մահացու վէրք տուին։ Ազգերու բոլոր խաւերուն մէջ մեծ ազդեցութիւն յառաջացուցին բողոքները...։ Ռուս կառավարութիւնը կը պատրաստուի խոր անդունդ մը փորել իր եւ հայ ժողովուրդին միջեւ, որ անոր այնքան ծառայութիւն մատուցած է Կովկասը նուաճելու ատեն եւ անկէ ի վեր՝ իր անձնուիրութիւններով։ Հայերը սրտանց յարած են իրենց եկեղեցուն՝ զոր Թուրք և պարսկական հալածանքներէն ազատելու համար կամովին հպատակած են Կատարինէ Բ.ի, [ապա] Նիքոլայ Ա.ի՝ մասնաւոր դաշնագրով մը (պոլժենիա)։ Հայերը Թոյլ չեն տար, որ կողոպտեն զիրենք այն բաներէն՝ որ այնքան Թանկագին են [իրենց համար]. անոնք պատրաստ են կատաղօրէն դիմադրելու։

3) Պարսկաստան — *Պարսկաստանի մէջ, բազմաթիւ հայեր կան, հոծ եւ զօրաւոր, այնքան զորաւոր՝ որ շահը սովոր է դէպի զանոնք համարում ունենալու(2)։ Վերջերս տեսնելով որ Ռուսիա իր ծանր Թաթերը կը դնէր Կովկասի իր հպատակներուն վրայ, Պարսկաստանը իր հայերուն երաշխաւորութիւններ տուաւ։*

Սակայն Պարսկաստանը բոլորովին ռուսական այլամերժ եւ յաղթական ազդեցութեան տակ է, եւ հայերը ատկէ կը նեղուին։ Կը նեղուին մանաւանդ ցարիզմի Կովկասի մէջ առաջ բերած խռովութիւններէն ի վեր, որ կը սպառնան նոյնիսկ էջմիածնի կաթողիկոսութեան գոյութեան, ցիրուցան ժողովրդին պետը եւ հայրը։ Ռուսաստանի դէմ Թշնամական զղացումները օրէ օր կը մեծնան հայերուն եւ պարսիկներուն մէջ։

II

Անգլիոյ բռնած ընթացքը հայերուն նկատմամբ

1) Թուրքիա — *Կամայ ակամայ՝ Անգլիան ձգեց հայերը Սուլթան Համիտի մարդասպան կատաղութեան։ Անգլիան ի վերջոյ պիտի հասկնայ Թէ ի՛նչ կորսընցուց Արեւելքի մէջ իր հին դիրքէն։ Մէկդի Թողլով բարոյական հմայքի նուազումը, դժուար չէ դիտել Թէ, նիւթապէս, Անգլիան Արեւելքի մէջ մեծ հարուած կերած է. ինչ ալ ըլլայ անգլիական արտաքին վաճառականութեան ծաւալը, Թուրքիոյ ճամբաները քիչ քիչ պիտի կտրուին շուտով, ահագին արգելքներով։ Փորձը ցոյց կու տայ արդարեւ, Թէ [Անգլիա] Արեւելքի մէջ ոչինչ կատարած է։ Զուտ կրօնական կամ ազգային համայնքներու գծով, օրինակ, Ֆրանսայի կողմէ կաթոլիկներու պաշտպանութիւնը այն հիմը եղաւ, որուն վրայ հաստատուած է Ֆրանսական վաճառականութիւնը։*

Անգլիական վաճառականութիւնը չի կրնար ձեռք քաշել հայերէն, ինչպէս Ֆրանսայի վաճառականութիւնը՝ կաթոլիկներէն։ Անգլիական վաճառականութիւնը, հոն ուր բացէ ի բաց վնաս չի կրեր, դատապարտուած է սակայն տեղի տալու։ Ապագան այս տեսակէտով այն պետութեան է, որ բաւական խելացի պիտի ըլլայ՝ ձեռք ձգելու հայ յաճախորդութիւնը։

2) Ռուսիա — *Կովկասցիներու դրութիւնը պէտք էր Անգլիոյ ուշադրութիւնը գրաւէր այնքան՝ որքան Ֆինլանտայի եւ ռուս հրեաներու դրութիւնը։ Բայց, ցաւը, Անգլիա բոլորովին հեռու մնացած է այնքան շահեկան հարցէ մը (որ կը յուզէ հայ ազգի հոգին), որ էջմիածնի մեծ պատրիարքութեան հարցն է։*

3) Պարսկաստան — *1897 թ. Մայիսին, պարսիկները Թուրքերուն պէս հայերուն զէմ ոտքի ելլելով, վերջիններէն մաս մը Թաւրիզի անգլ. հիւպատոսէն ապաստան եւ պաշտպանութիւն խնդրեց։ Հիւպատոսը պարզապէս ետ ճամբեց եւ հայերը, հակառակ իրենց խորշանքին, դարձան զէպի ռուսական հիւպատոսը, որը իսկոյն միջամտեց անոնց համար։*

1899 Հոկտեմբեր 26ին, ինը հայեր, Վանէն եկած, որոնք Սալմաստ կը փախչէին, Սուլթանի խնդրանքին վրայ յարձակման ենթարկուեցան եւ պաշարուեցան պարսիկ զօրքերէ։ Թաւրիզի անգլիական հիւպատոսը, Mr. Wood, իմանալով այս բանը, Սալմաստ գնաց, ուրկէ հեռաղրեց անգլիական կառավարութեան՝ հրաման խնդրելով անկէ միջամտելու ի նպաստ այդ հայերուն։ Որեւէ պատասխան չստանալով, քանի մը օր յետոյ մեկնեցաւ Սալմաստէն։ Հայերը իրենց ազգայիները կոտորածի մը չենթարկելու համար, կամովին անձնատուր եղան պարսիկ զօրքերուն, որոնք բոլորն ալ սպաններ էին։

III

Ինչ որ Անգլիան կրնայ ընել

Ժամանակը մասնաւորապէս նպաստաւոր է Անգլիոյ համար. եթէ ուզէր՝ կրնար ձեռք ձգել Արեւելքի մէջ կարեւոր դիրք մը։

Պէտք է աւելցնել Թէ ժամանակը սուղ է։ Հայերը, կրգռուած, կրնան դերազոյն ճիգը ընել՝ որուն կը մղէ զիրենք յուսահատութիւնը։ Այն ատեն խառնակութիւնը պիտի մեծնայ Արեւելքի մէջ եւ Թերեւս շատ ուշ պիտի ըլլայ վերեւ ուրուագծուած խաղաղասիրական գործը կատար ածելու համար։

Թուրքիա — *Հակառակ 1895ի անագորոյն յուսախարութեան եւ լքումին, «հայերու պաշտպան» Անգլիոյ աւանդութիւնը, ինչպէս որ հռչակած է Կլատստոնը, միշտ կենդանի է հայ հոգիներուն մէջ։ Այնքան կենդանի՝ որ Անգլիան դեռ կացութեան տէրը կ'ըլլայ եթէ ուզէ եւ եթէ կարենայ տէր կանգնիլ ժողովուրդի մը եւ զայն խաղաղեցնել։ Այնքան ուժասպառ, այնքան կոտորածներէ յետոյ, Թրքահայերը քիչ քիչ կը վերականգնին եւ սիրտ կ'առնեն։ Ամէն կողմէ հայերը, հասկրնալով ինքնապաշտպանութեան կարիքը, զէնք կը խնդրեն, որոշած ըլլալով այսուհետեւ սուղ ծախել իրենց կեանքը եւ իրենց պատիւը։ Դժբախտաբար ահռելի Թշուառութիւնը Թոյլ չի տար որ կարելի ըլլայ ամէնուրեք ճարել ազատարար հրացանը եւ փամփուշտը։ Այսպիսի խղճալի կացութեան մը մէջ, Եւրոպա՛ն է նորէն որ կը դառնան՝ վերջին յոյսի մը բոլոր Թափով։ Եւրոպան, ի նպաստ Հայաստանին, ամենէն առաջ Անգլիան է։ Յետոյ Ֆրանսան եւ Իտալիան։ Եթէ այս երեք պետութիւնները կամենային ազդու կերպով միջամտել Պոլիս եւ պարտադրել բարենորոգումներու գործադրութիւնը՝ որոնք գոյութիւն ունին դաշնագրերով (Պերլինի եւ Կիպրոսի դաշնագրութիւնները եւ, 1895ի յիշատակագիրը), անոնք պիտի գտնէին հայ ազգը բոլորովին պատրաստ՝ աշխատակցելու իր վերականգնումի գործին։ Անգլիան առանց նեղութեան պիտի գտնէ իր հայ յաճախորդները, որոնք այսօր կտրուած են իրմէ Թուրքերու ներկայութեամբ եւ ներքին վաճառականութեան կործանումով։ Ռուսաստանի առջեւ, Արարատի սահմանին վրայ, այդ ձեւով հզօր պատուար մը պիտի կազմուի։*

2) Ռուսիա — *Յայտնի է Թէ Անգլիան չէ կարող ունենալ որեւէ ուղղակի ներգործութիւն կովկասեան իրերու ընթացքին վրայ, եւ Թէ հայերը չեն կրնար մտածել իսկ այդ կողմէն որեւէ օգնութեան մը մասին։ Սակայն անգլիական կողմնորոշման մէջ տարբ մը որ կարող է տալ ռուսահայերուն բարոյական անհրաժեշտ սիւկցութիւնը՝ կը կայանայ հայ եւ անգլիական եկեղեցիներու նմանութեան եւ վարդապետական ազդակցութեան մէջ։ Այն ժամանակ երբ Անգլիան կ'ուզէր հայերը ծառայեցնել Արեւելքի մէջ իր վաճառականութեան ծաւալման համար, խօսուած է այս մասին։ Կարելի չէ՞ այսօր նորէն կապել երկու եկեղեցիները զործքով եւ ձեւով։ Քաղաքավարի խօսքերու եւ բարեկամական նամակներու փոխանակութիւնը կաթողիկոսին եւ Անկլիքան Եկեղեցւոյ բարձր հոգեւորականութեան միջեւ՝ բաւական պիտի ըլլայ փրկելու էջմիածնի Պատրիարքութիւնը կորուստէն։*

3) Պարսկաստան — *Սակայն Պարսկաստանի մէջ է մասնաւորապէս որ Անգլիան կարող է, հայերու միջոցով, մեծ գործ կատարել։ Պարսկահայերը կ'ուզեն միայն կրել պաշտպան ազդեցութիւնը այն պետութեան, որ աւանդական հակառակորդն է Ռուսաստանին։*

Արդ, հայերը իրենց ամենազօր վաճառականու-

թիւնով բռնած ըլլալով Պարսկաստանի քաղաքները, կրնան առաջնակարգ գործօն տարր մը ըլլալ։

Պէտք է աւելցնել որ հայերը այժմ շատ ուժեղ կազմակերպուած են արտասահմանի մէջ։ Երկրագնդի վերայ ցիրուցան իրենց համախմբումներուն միջեւ, ոչ միայն բացարձակ համաձայնութիւն կայ, այլ գործունէութեան ամենալաւ ղրութիւն մը։ Այս կազմակերպութիւնը բացարձակ տէր է ազգին, եւ հաղորդակցութեան մէջ՝ անոր հետ, Թուրքիոյ, Ռուսիոյ եւ Պարսկաստանի մէջ։ Ուրեմն անոր համար հեշտ պիտի ըլլայ հոսանք մը առաջ բերել այս ու այն կողմէ եւ մասնաւորապէս ի նպաստ անգլիական ազդեցութեան մը։

(1) Ըսուած է *վկայութիւններ* կամ *փաստաթուղթեր* իմաստով։
(2) Նախադասութիւնը պահած եմ անփոխ։
(3) Ստորագրութիւնը կը պակսի։ Կրնայ Քիյարէն կամ Թէրգեանէն ըլլալ, ուղղուած Լորիսին։
(4) Ստորագրութիւնը կը պակսի։ Ըստ բովանդակութեան՝ Լորիսն է, որ կը պատասխանէ Ահարոնեանի երկտողին։
(5) Համարակալուած չէ եւ տարեթիւ չունի։
(6) Արդեօ՞ք *Սկզբ.* 27 (տե՛ս փաստաթուղթ թիւ 2)։ Նամակի թուականը 19 ····· 1905 է։ ամսուան անունը՝ անորոշ, բայց կը թուի ըլլալ *Դեկտ.*։
(7) Կ'ակնարկուի Արեւմտ. Բիւրօ–Լորիս թանավէնին։
(8) Հաւանօրէն *ապահովագրեալ* ըսել կ'ուզէ։
(9) Միքայէլ Վարանդեան։
(10) Թուական եւ ստորագրութիւն չկայ։ բայց յայտնապէս՝ Լորիս Մելիքեանի մէկ նամակն է՝ Փիէր Քիյարին ուղղուած։
(11) Տարեթիւ չկայ։ հաւանօրէն՝ 1905։ Ըստ երեւոյթին ուղղուած է Քիյարին։
(12) Գումարը կրնայ 1·600 ըլլալ, վերջին 0–ին վրայ գծիկ մը քաշուած ըլլալով։
(13) Տարեթիւ չկայ։ հաւանօրէն՝ 1906։
(14) Բովանդակութենէն դատելով, Թահինեանը ուրիշ մէկը չէ՝ եթէ ոչ Լորիս Մելիքեանը։
(15) Այս նամակը եւս կը թուի ուղղուած ըլլալ Pro Armeniah պատասխանատու–խմբագիր Փիէր Քիյարին։
(16) Կը թուի ուղղուած ըլլալ ծրնեւ՝ Արեւմտ. Բիւրոյին («Դիրքակ»ի խմբագրութիւն)։
(17) Կ'ակնարկուի Հ. Ց. Դ. 3րդ Ընդհանուր ժողովին (Սոֆիա, 1904)։
(18) Ուղղուած կը թուի ըլլալ Փիէր Քիյարին։
(19) Ուղղուած, ամենայն հաւանականութեամբ, Լորիս Մելիքեանին (Թահինեան)։
(20) Փաստաթուղթերուն մաս կազմող այս գրութիւնը թուական եւ ստորագրութիւն չունի։ Կրնայ Լորիսի խորհրդապահական մէկ տեղեկագիրը ըլլալ՝ ուղղուած Արեւմտեան Բիւրոյին։ Թերեւս նաեւ՝ ուղղակի Մեծն Բրիտանիոյ արտաքին նախարարութենէն ձեռք բերուած փաստաթուղթի մը թարգմանութիւնը։
(21) Արդեօ՞ք 1894էն 96 կամ 97ի ջարդերուն (Համիտեան) կ'ակնարկուի։ Թարգմանութեան ժամանակ, թուականները կը թարգմանուին սխալ արտագրուած ըլլալ։
(22) Մեր ընդհանուր սկզբունքին հաւատարիմ, լեզուական կամ ոճային որեւէ փոփոխութիւն ըրած չենք հոն՝ ուր նախադասութեանց իմաստը յստակօրէն հասկնալի չէ (եւ միշ չե՛ն նման բաժիններ)։

ԼՈՐԻՍԻ ՆԱՄԱԿԸ՝ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ(1)

Վեհափառ Հայրիկ !

Շնորհակալութիւնս կը յայտնեմ այն վստահութեան ու համակրանքին համար, զոր ցոյց տուիք դէպի ինձ՝ ընտրելով զիս անդամ մեծ պետութիւններուն ներկայանալու համար Ձեր կազմած Պատգամաւորութեան։

Ներկայովս պիտի ջանամ քանի մը ընդհանուր ծանօթութիւններ տալ Եւրոպայի մեր դատին հանդէպ բռնած ներկայ քաղաքական դիրքի մասին։

Մեր հարցը Եւրոպայի առաջ դրուեցաւ Պերլինի դաշնադրով. անիկա մեծ թռիչք տուաւ հայերու մէջ՝ ինքնուրոյն Հայաստանի դաղափարին։

Այդ դաղափարը երազ մըն էր, չհամապատասխանելով Եւրոպայի խոստումներուն։ Բայց ատով հանդերձ հայ ազգը շարունակեց օրօրուիլ անով, սպասելով որ Եւրոպան, ինքնաբեր միջամտութեամբ մը, իրականացնէր իր փրկութիւնը։ Ու այդպէս, չօգտուեցաւ իրեն ներկայացող քաղաքական նպաստաւոր պայմաններէն, չգծելով ընդհանուր ու գործնական ծրագիր մը՝ որուն կարողանար հետեւիլ ամբողջ ազգը։

Մեր մտաւորական դասակարգը, որ կոչուած էր էապէս այդ դերը ստանձնելու, աւելի զբաղեցաւ տեղական կրթական ու հրատարակչական գործերով, երեսի վրայ թողլով մշակել քաղաքական ընդհանուր գործունէութեան ծրագիր։ Այդ մտաւորականներուն միացաւ ե՛ւ մեր կղերականներուն մեծ մասը։

Կային նաեւ յեղափոխական կազմակերպութիւններ, որ Երկրին ազատութիւնը կը փնտռէին ապըստամբութեան մէջ։ Ասոնցմէ ոմանք ունէին ծայրայեղ ձգտումներ։

Այս բոլորին անմասն ժողովուրդը մնաց սակայն ինչպէս որ էր, ճնշուած ու հարստահարուած։ Եւ երբ կոտորածները տեղի ունեցան՝ ան, անպատրաստ, ջարդուեցաւ առանց դիմադրութեան, ցոյց չտալով նոյնիսկ ինքնապաշտպանութիւն։

Սուլթանը սարսափով դիտել սկսաւ ազգային մըտաւորական շարժումը՝ թէեւ սահմանափակ ու թոյլ. վասնզի կը վախնար թէ մի գուցէ ատով Եւրոպան ստիպէր զինքը իրագործել 61րդ յօդուածը։ Այս վերջինը, նախ խոստումներով ու յետոյ խժդժութիւններով, ջանաց այս շարժումը կասեցնել, բայց տեսնելով որ իր նպատակին չէր հասներ, հրամայեց մեծ կոտորածները։

Գալով եւրոպական պետութիւններուն՝ անոնց ստորագրած դաշնադրին մէջ 61րդ յօդուածը չունէր երբեք մարդասիրական նկարագիր, այլ նկատի ունէր լոկ անոնց նիւթական շահերու պահպանումը։

Ռուսաստանը, առաւելապէս շահագրգռուած, Տաճկահայաստանի մէջ բարենորոգումներ ներմուծելու պատրուակով՝ հայկական նահանգներուն տիրելու երազը կը դգուէր։ Ռուսաստանի այս աշխարհակալն ծրագիրը նոր չէ. Եւրոպան անդամ մը անոր արդիլեց գայն իրականացնել, բայց հակառակ ասոր՝ Ռուսաստանը, փարած այս տիրապետական ծրագրին, չ'ուզեր լքել զայն։ Միւս կողմէ այս պետութիւնը, աչքի առաջ ունենալով Գուլկարիան որ չենթարկուեցաւ սլաւացումի ընդհանուր քաղաքականութեան՝ հակառակ իր բոլոր ջանքերուն, միանգամայն տեսնելով Թուրքիոյ ու մասնաւորապէս Կովկասի մէջ ազգայնական ու անջատական զգացումներու ծաւալումը, հակառակեցաւ բարենորոգումներու ծրագրին գործադրութեանը։

Վախնալով Անգլիայէն, որ թոյլ չէր կարող տալ իրեն՝ իրականացնել իր աշխարհակալական դիտումները, ան դաշնակցեցաւ Սուլթանին [հետ], քաջալերեց գայն իր բնաջնջումի ծրագրին մէջ ու արտաքին գործոց նախարար Լոպանոֆի բերնով յայտնեց պետութեան իղձը — «Հայաստանը՝ առանց հայի»։

Գերմանիան, վաճառականական շահերով կապուած Տաճկաստանի, կ'աշխատէր հաշտ ու բարեկամ քաղաքականութեամբ զիջումներ ձեռք ձգել ու առաւելութիւններ ապահովել։ Այս նիւթական շահերուն պատճառաւ Գերմանիան բացարձակ անտարբերութիւն ցոյց կու տար դէպի մեր դատը, ան կը քաջալերէր Սուլթանը՝ իր բնաջնջումի ծրագրին մէջ։ Այս երկրին արտաքին քաղաքականութիւնը կայսրէն կախուած ըլլալով, հասարակական կարծիքը որեւէ ազդեցութիւն չունի կառավարութեան վրայ։

Աւստրիան, զբաղած ըլլալով Մակեդոնիոյ մէջ իր ունեցած շահերով, չի կրնար դեր խաղալ մեր հարցի լուծման մէջ։

Այս ընդհանուր ու համառօտ ակնարկէն պարզ կերպով կ'երեւայ որ վերոյիշեալ երեք երկիրները, Ռուսիա, Գերմանիա եւ Աւստրիա, զանազան պատճառներով, չեն սահմանուած հայկական հարցի լուծումը փութացնելու։

⁂

Անգլիան երկար ատենէ ի վեր կը ջանար ապահովել իր շահերը Տաճկահայաստանի մէջ եւ Հայկական Հարցի լուծման մէջ կը տեսնէր անոնց իրականացումը։ Այս երկրի քաղաքական նպաստաւոր տրամադրութիւններուն կը միանար լուսաւոր հասարակական կարծիքի մը ուժը, որ առհասարակ մեծ ազդեցութիւն ունի կառավարութեան ընդհանուր քաղաքականութեան վրայ։

Այս երկրի կրօնքը կանգնած [ըլլալով] մարդասիրական լայն հիմունքներու վրայ, անոր ներկայացուցիչները համակրանքով կապուեցան մեր դատին։

Անգլիոյ պետական մարդիկը, 1896 թուականին, ստիպեցին կառավարութիւնը նախաձեռնարկ ըլլալու Տաճկահայաստանը բարենորոգելու գործին մէջ, բայց անոնց ջանքերը ապարդիւն մնացին այն պատճառաւ, որ Եւրոպան չուզեց աջակցիլ Անգլիոյ միջամտութեան։ Այն ժամանակ Ֆրանսայի հասարակական կարծիքը լուսաւորուած (լուսաբանուած ?) չէր մեծ կոտորածներու մասին, չնորհիւ իր արտաքին գործոց նախարար պրն. Հանոթոյի, որ մեղսակից եղաւ Լոպանովի քաղաքականութեան։

Մեր հասարակական գործիչները ու յեղափոխականները մեծ մասամբ ուշադրութիւն չդարձուցին մեծ պետութիւններու հասարակական կարծիքը պատրաստելու գործին, որ կրնար այն ժամանակ արմատական օգտակարութիւն մը ունենալ մեր հարցի լուծման մէջ։ Պերլինի դաշնադրէն 20 տարի ետքը տակաւին չգտնուեցան մեր ազգին մէջ մարդիկ, որոնք զգային Եւրոպայի հասարակական կարծիքը պատրաստելու եւ անոր իր պարտականութիւնները յիշեցնելու նպատակաւ եռանդ, ու շարունակական պրոպագանդի մը անհրաժեշտութիւնը։ Փոխանակ մեր ուժերը սեղմելու, միացընելու, փոխարէն Եւրոպան լուսաւորելու մեր հարցի մասին, մենք զմեզ ջլատեցինք ներքին կռիւներով ու մեր ուժերը մսխեցինք ցուցական գործողութիւններով, որոնք մեծ մասամբ ոչ միայն չէին կրնար տալ դրական արդիւնք, այլ Եւրոպայի կողմէն նկատուելով իբրեւ անիշխանական գործողութիւններ՝ կը սառեցնէին դէպի մեզ անոր համակիր ու ազդեցիկ տարրերը։

Մեծ կոտորածները Եւրոպան ցնցեցին ժամանակի մը համար, բայց յետոյ ամէն բան մոռացման դատապարտուեցաւ, չնորհիւ անոր հասարակական կարծիքի անպատրաստութեան ու տգիտութեան՝ դէպի մեր հարցը։ Սխալ պիտի ըլլար ըսել թէ եւրոպական զանազան երկիրներու մէջ չկային մեր հարցին համակիր ու ազդեցիկ անձնաւորութիւններ, բայց անոնք առանձնացած ու ցիրուցան ըլլալով՝ չէին յաջողեր ստեղծել բնական [կերպով] մեզի համակրող հոսանք մը, որմէ կարենար օգտուիլ մեր դատը։

Այս համակիր ու բարեկամ օտար ուժերը կարելի է բաժնել երկու դասակարգի, — առաջինը առաջնորդուելով կրօնական սկզբունքներէ ու շատ անդամ աչքի առաջ ունենալով դաւանափոխական նկատումներ, բարեգործական հաստատութիւններ կը հիմնէին. երկրորդ դասակարգը ունէր քաղաքական գործունէութիւն, որ կը ներշնչուէր այն մարդասիրական ու խա-

ղաղասիրական լայն սկզբունքներէն, որոնք հիմը սկըսած են կազմել նոր բարոյական քաղաքականութեան մը։ Այս երկրորդ դասակարգը Ֆրանսայի մէջ է մանաւանդ որ ունեցաւ իր ամենէն հզօր ու բազմաթիւ ներկայացուցիչները։

Մէկ կողմէն Եւրոպայի նիւթական շահերը, որոնք չէին հաշտուեր մեր հարցի լուծման հետ, միւս կողմէն Թոյլ ու ցիրուցան օտար բարեկամները անկարող են Եւրոպայի քաղաքական շրջանակներուն վրայ որեւէ վճռական ազդեցութիւն գործելու։ Մեր հարցը դատապարտուած մնաց անուշադրութեան։ Պէտք է Եւրոպայի մէջ ստեղծել նպաստաւոր ու զօրաւոր հոսանք մը ղէպի մեր դատը, որ ներգործելով կառավարութիւններուն վրայ, հաշտեցնէ անոր ընդհանուր քաղաքական շահերը մերիններուն հետ։ Այս հոսանքը կարելի է յառաջացնել մանաւանդ Ֆրանսայի մէջ, չնորհիւ այս երկրի պատմական աւանդութիւններուն։ Տրէյֆիւսի հարցը, որ այնքան խորապէս ցնցեց Ֆրանսան, որ այնքան ընդարձակեց ժողովուրդի գիտակցութեան հորիզոնները, օգտակար հանդիսացաւ մեր դատին այն տեսակէտով՝ որ այդ հարցի պաշտպանները դարձան նաեւ մեր դատի պաշտպաններն ու բարեկամները։

***

Եւրոպայի հասարակական կարծիքը պատրաստելու համար, ինչպէս ըսինք, պէտք է Ֆրանսայէն սկըսիլ երեք պատճառներով.— 1) Այս երկրին մէջ կատարուած ամէն մէկ շարժում, ամէն մէկ գործ արձագանգ կը գտնէ ուրիշ երկիրներու մէջ։ 2) Ֆրանսան ըլլալով Ռուսիոյ դաշնակից, այս վերջին պետութիւնը չպիտի տեսնէր այդ շարժումին մէջ որեւէ շահադիտական նկատում։ 3) Այս երկրի մարդասէր քաղաքականութեան շնորհիւ, կարելի պիտի ըլլար ձեռք բերել ուրիշ քաղաքակիրթ երկիրներու լաւագոյն տարրերու համակրանքը։

Այս պահանջին իրրեւ հետեւանք եղաւ, 1900 թուականին, Pro Armeniaի հրատարակութիւնը։ Այս թերթը շուտով ստացաւ այն նշանակութիւնը, որուն սահմանուած էր, ստանալով կարեւոր տեղ մը եւրոպական մամուլին մէջ, տալով օտար մամուլին մեր դատի պահանջները ու երկրի լուրերը։ Գրիւքսելի հայասէրներու համաժողովը, Շաթօտոյի և Սառա Գեռնարի թատրոններուն մեծ միթինկները դրին Հայկական Հարցը իր որոշ նշանակութեան վրայ։ Վերջին չորս տարիներուն ընթացքին, Ֆրանսայի հասարակական կարծիքը բոլորովին համակիր դարձաւ Հայկական Հարցին եւ հետեւաբար նաեւ՝ իր կառավարութիւնը։ Ֆրանսա սակայն պէտք ունէր ուրիշ պետութիւններու օժանդակութեանը, մանաւանդ որ այս երկիրը կապուած ըլլալով Ռուսիոյ, չէր կարող նախաձեռնարկ ըլլալ։ Քաղաքական այդ հանգամանքներուն մէջ, Ֆրանսային կրնային լաւապէս աջակցիլ երկու պետութիւններ՝ Անգլիա եւ Իտալիա։ Մեր անգլիացի վաղեմի բարեկամները կ՚ըսէին, թէ լաւագոյնն էր գործել ցամաքին վրայ, աւելցնելով որ այդ պարագային չէր կարող կասկածներ բարձրանալ անգլիական «էնթրիկ»ի մասին։ Այս պարագային աւելի քան երբեք անհրաժեշտ էր ուշադրութիւն դարձնել Իտալիոյ վրայ, ուր մեր հարցի մասին հասարակական կարծիք չկար։ Միլանոյի, Հռոմի եւ ուրիշ քաղաքներու մէջ մեծ միթինկներ կազմակերպելով երկու ամսուան կարճ ժամանակամիջոցին մէջ, Իտալիոյ հասարակական կարծիքը նպաստաւոր դարձուցինք դէպի մեր դատը··· Այս յաջողութիւնը կը պարտինք այդ երկրին պատմական աւանդութիւններուն։

Իտալիայէն յետոյ Անգլիոյ մէջ պէտք էր յառաջանիլ պրոպագանդի գործը, ուր հետզհետէ ծաւալ կը ստանար լայն ու մարդասիրական քաղաքականութիւն մը եւ ուր կը ստեղծուէին նոր պայմաններ, չնորհիւ այս երկրին, Ֆրանսայի ու Իտալիոյ միջեւ գոյացած բարոյական ու քաղաքական մերձեցումին։ Միւս կողմէն՝ մեր դատը կը համապատասխանէր Անգլիոյ քաղաքական շահերուն, թէեւ հասարակական կարծիքը հոն զբաղուած ըլլալով, նախ Թուրք-յունական ու Թրանսվալի պատերազմներով եւ յետոյ մակեդոնական հարցով, մոռցած էր առժամապէս Հայկական Հարցը։

Մեր պրոպագանդի վերջին մէկ երկու տարիներուն մէջ, եթէ ստիպուած եղանք առհասարակ մեր հարցը կապել մակեդոնականին հետ, այն պատճառաւ էր որ ան աւելի այժմէութիւն ունէր չնորհիւ իր նոր ապստամբութեան։ Ու մենք այդ հնարամտութեամբ այնքան օգտուեցանք այս առիթէն, որքան թերեւս չպիտի կարողանայինք օգտուիլ արիւնահեղ ապստամբութենէ մը։

Անգլիոյ մէջ ոչ թէ միայն մեր հարցը մոռցուած էր, այլեւ Գեքսթրն, հիմնելով Balkan Committeeն՝ *չնորհիւ իր եռանդուն գործունէութեան, յաջողած էր գրաւել մեր վաղեմի բարեկամները դէպի մակեդոնական հարցը։*

Այնպէս որ Ֆրանսայէն ու Իտալիայէն յետոյ, ուր մեր պրոպագանդին մէջ Հայկական Հարցը միացուցած էինք մակեդոնականին, Անգլիոյ մէջ խիստ դժուարութեամբ յաջողցուցինք այդ ուղղութիւնը։ Մակեդոնական այս տարամերժ հոսանքէն զատ, գործը աւելի կը դժուարանար Լոնտոնի մէջ կատարուած հնչակեան եղբայրասպան ոճիրներով, ու եղաւ ժամանակ մը ուր անգլիական մամուլը կը զգուշանար հայ բառը գործածելէ։ Վերջերս իմացայ որ Լոնտոնի բարձր շրջանակներուն մէջ կասկածանքով կը նային դէպի տեղական հայերը։ Յուլիս ամսուն Լոնտոնի մէջ կազմակերպուած հայկական միթինկը մասամբ մեղմեց այս աննպաստ վերաբերմունքը։

Ձերդ սրբութեան Յուլիսի սկիզբը ինծի ղրկած կոնդակով, պատգամաւորի ծանր ու պատասխանատու գործը կը վստահէիք ինձ։ Եւ այս պատասխանատուութեան ծանրութիւնը աւելի զգալի կը դառնար երբ պատգամաւորութեան ընթացքին կը տեսնէի որ անոր դժուարութիւնները ամբողջապէս իմ վրայ կ՚իյնային։ Ասկէ զատ ստիպուած էի պատուիրակներուն միջեւ հաստատել համերաշխութիւն ու մանաւանդ մեր գործունէութեան համար անհրաժեշտ կէտ մը՝ սիստեմաթիք հետեւողական քաղաքականութիւն։ Միւս կողմէն սրբազանները չէին գիտեր եւրոպական լեզուներ ու պատգամաւորութեան փափուկ ու պատասխանատու պաշտօնին համար անհրաժեշտ քաղաքական զարգացումը եւ պատրաստութիւնը չունէին։ Հակառակ այս բոլորին, յանձն առի պատգամաւորի պաշտօնը որովհետեւ անկարող էի չանսալ ձեր հրամանին՝ միշտ ուշնենալով այն նախազգացումը, որ այսպէս թէ այնպէս, չնորհիւ Եւրոպայի քաղաքական գործունէութեանս ու ձեռք բերած օտար բարեկամներուս օժանդակութեանը, կարող պիտի ըլլայի գործը գլուխ բերել լաւագոյն կերպով մը։

Ձեր Սրբութեան ցանկութեան համաձայն կազմեցինք փոքրիկ խորհրդակցական ժողով մը 19 Յուլիսին, ուր ներկայ էին Տ. Վռամշապուհ Քիւպարեան ու Տ. Մելեան քահանաները, պրն. Թամամշեֆ եւ պրն. Ձերազ։ Սարաճեան սրբազանին Ձեր Սրբութեան ուղղած կոնդակին մէջ, որով այս վերջինին կու տայիք բոլոր իրաւունքները՝ յիշած ըլլալով իմ անունը, այդ հանգամանքը թիւրիմացութիւններու, կասկածանքի եւ նոյնիսկ չարախօսութիւններու առիթ տուաւ։

Pro Armeniaի հայ թարգմանչին նախագահ Լուպէի ուղղուած նամակը թարգմանել տալէ յետոյ, յանձնեցի զայն պրն. Քիյարի՝ որպէսզի լեզուի մաքրութեան եւ ոճի տեսակէտով ուղղէ զայն։ Աւելի ապահով ըլլալու համար բնագրին հաւատարիմ թարգմանութեան մասին՝ պրն. Մ. Ձերազի ալ ներկայացուցի զայն։ Այսպէս, պատրաստուած թարգմանութիւնը շաբաթ օր ղրկուեցաւ Միացեալ Նահանգներու դեսպանին՝ զայն պրն. Տելքասէի ներկայացնելու համար։

Առաջին դիմումը խիստ խոհեմութեամբ պէտք էր ընել։ Մտածելով սկսիլ մեր գործունէութիւնը Ֆրանսայէն, անհրաժեշտ էր հեռացնել ամէն օտար թելադրութիւն՝ որուն կրնար ենթարկուիլ պրն. Տելքասէ, ռուս եւ Թուրք դեսպաններու կողմէն։ Այդ զգուշաւորութեամբ, ոչ մէկ հրատարակութիւն Թոյլ չտուի Ֆրանսական մամուլին մէջ Պատգամաւորութեան մասին, ու մեր Ֆրանսացի բարեկամներուն Պատգամաւորութիւնը ներկայացնելէ ու ծանօթացնելէ յետոյ մտածեցի պրն. Տելքասէին ու Լուպէին ներկայանալ պարլամենտական կուսակցութիւններու պետերուն միջոցով։ Ամբան պատճառով անոնց Փարիզէն բացակայութիւնը, ստիպեց ինծի գոհանալ այն յանձնարարականներով, զոր անոնք գրեցին պրն. Տելքասէին։ Բայց յաջողեցայ պրն. Տելքասէի մտերիմ բարեկամ պրն. Վիքթոր Գեռարի միջոցով ներկայանալ պաշտօնապէս այս վերջինին՝ հակառակ այն յայտնուած կարծիքին, որով պրն. Տելքասէ կ՚ուզէր այդ տեսակցութեան ոչ-պաշտօնական դոյն տալ։ Այս տեսակցութեան ընթացքին նախարարը խօսեցաւ քաղաքական ճաւ մը, որու բովանդակութիւնը Ձեր Սրբութեան յայտնի պէտք է լինի սրբազան հայրերուն նամակներէն, ուր ան յայտնեց թէ կը փափաքէր մեզ գոհացնել՝ 61րդ յօդուածի համաձայն, երեք մեծ պետութիւններու հետ միացած՝ որոնց անունները չտուաւ։

Տելքասէ խոստացաւ նոյն օրն իսկ խօսիլ պրն. Լուպէի հետ, նախարարական ժողովէն յետոյ, պատգամաւորութեան այցելութեան մասին։ Յաջորդ օրը պրն. Լուպէն պէտք էր մեկնէր Փարիզէն. պէտք էր անմիջական կարգադրութիւն՝ այցելութիւնը յաջողցնելու համար, եւ այդ պահուն պրն. Վիքտոր Գեռարի անձնուէր աջակցութիւնը մեզ փրկեց հաւանական անյաջողութենէ մը։ Իր միջոցով առաջնորդուելով պրն. նախագահին զինուորական Թիկնապահին մօտ՝ այս վերջինը խնդիրքիս [խնդրանքիս] վրայ խոստացաւ խօսիլ պրն. Լուպէի։ Լուպէի, որ ընդունի պատգամաւորութիւնը իր շրջագայութեան ժամանակ։

Պրն. Լուպէի ընդունելութիւնը շատ սիրալիր էր. վերջերս իր Լավիս բարեկամէն իմացայ որ նա շատ գոհ մնացած է պատգամաւորութեան այցելութենէն։

Այս փայլուն յաջողութիւնը, ինչպէս ըսինք, կը պարտինք մեր Ֆրանսայի բարեկամներու ջանքերուն, ընդ շարս որոնց պէտք է յիշել պրն. պրն. Վիքտոր Գեռար, Փրեսանսէ, Քիյար, Տընի-Գոշէն, Տեսթուանէլ, տը Գոնստան։

Այս վերջինն էր որ ներկայացուց Պատգամաւորութիւնը Միացեալ Նահանգներու դեսպանին, որու միջոցով միայն կարելի պիտի ըլլար յաջողցնել պաշտօնական այցելութիւնները՝ պրն. Տելքասէի եւ պրն. Նախագահին մօտ։

Օգոստոսի սկիզբը մեկնեցանք Անգլիա, ուր տեսանք անմիջապէս ճէյմս Գրայսը, որմէ ժամադրութիւն խնդրած էի Փարիզէն։ Միացեալ Նահանգաց դեսպանին միջոցաւ խոստացաւ մեզ ընդունիլ։ Պէտք էր շուտ թարգմանել նամակը. ատոր համար մեր «Փրօ Արմենիա»յի անգլիացի քարտուղար պրն. Մալոքի դիմեցի. Թաքիի որդւոյն օժանդակութեամբ թարգմանեց զայն. յետոյ պրն. Յակոբեանց կարդաց զայն բնագրին հաւատարմութեան տեսակէտով՝ պէտք եղած փոքրիկ սրբագրութիւնները կատարելով։ Քոնթ Լանսթաունէն ընդունուեցանք Օգոստոս ամսու 9ին. այս ընդունելութիւնը աւելի բարեկամական նկարագիր ստացաւ քան քաղաքական։ Խոստացաւ յաջողցնել մեր ընդունելու-

Թիւնը Էդուարտ VIէն, որ մէկ օրով Լոնտոն պիտի հասնէր Օգոստոս 9ին։ Քանի մը օր յետոյ Լանսթաունի քարտուղարը նամակով մը ցաւօք կ'իմացնէր, թէ Թագաւորը իր շուտափոյթ մեկնման պատճառաւ չէր կրնար Պատուիրակութիւնը ընդունիլ։ Ըստ Ճէյմս Պրայսի, այս պատասխանը պէտք չէր բացասական նըկատել։ Այս ժամանակաշրջանին արքեպիսկոպոսները առաջնորդեցին մեր անգլիացի բարեկամներուն մօտ, որոնց տուները իրենց այցետոմսերը Թողուցին։ Ճաշկերոյթի հրաւիրեցի անոնցմէ մի քանիսը, ինչպէս Bunting, Massingham et Braildswort, որոնք մեզի խորհուրդ տուին՝ տեսնել Քենթըրպըրիի Արքեպիսկոպոսը։ Այս վերջինին ներկայանալու համար խորհուրդ տուին մեզի՝ դիմել պրն. Բրսըլի, որ Կլատսթոնի նախարարը եղած է եւ որ մտերիմ բարեկամն է Արքեպիսկոպոսին։ Բրսըլ հաւանեցաւ մեզ ներկայացնել Արքեպիսկոպոսին, որ սկիզբները տրամադրուած չէր ընդունիլ զմեզ. այն նամակին մէջ, որ Արքեպիսկոպոսը Պընթիկի գրած էր եւ զոր այս վերջինը ինծի ղրկեց, նա իր դժգոհութիւնը կը յայտնէր մեր մի քանի արքեպիսկոպոսներու մասին, որոնց հետ խնդրոյ մը առթիւ գործ ունեցած է։ Բոլորովին մեր յոյսը կտրած էինք Արքեպիսկոպոսի ընդունելութեան մասին, երբ ստացանք իրմէն նամակ մը, որու համաձայն ներկայացանք իրեն։ Ընդունելութիւնը անցաւ շատ սիրալիր եւ գոհացուցիչ կերպով։ Թագաւորի մեկնումէն յետոյ կը մնար մեզի պարաստել հասարակական կարծիքը Անգլիոյ մէջ։ Հոս կարելի էր առանց վտանգելու Պատուիրակութեան մասին գրել տալ տեղական Թերթերու մէջ, որովհետեւ մեր արքեպիսկոպոսներու ներկայութիւնը վարանելու [առիթ] չէր հոս հասարակութեան համար, ինչ որ կրնար ըլլալ Ֆրանսայի մէջ, ուր այնքան բորբոքում կար «միաբանութեանց» շուրջը, առհասարակ ամէն շրջաններու մէջ եւ ուր հասարակական կարծիքը պատրաստուած էր արդէն։ Կարելի էր ուրեմն հրապարակել Պատգամաւորութեան մասին, որովհետեւ այլեւս անոր գոյութիւնը ծանօթ էր Եւրոպայի մէջ։ Ու մանաւանդ այս մտածումով այլեւս չվարանեցանք աղմուկ յառաջ բերել «Տէյլի Նիուզ», «Տէյլի Քրոնիկլ», «Սթանտարտ» եւ այլ նշանաւոր Թերթերու մէջ, պատասխանելով անոնց Թղթակիցներուն՝ որոնք ներկայացան մեզ հարցաքննելու։

Այսպէս, կարելի եղաւ 6 ամսուայ մէջ անգլիական հասարակական կարծիքը պատրաստել ի նպաստ մեր դատին, օգտուելով Պատուիրակութեան պաշտօնական ներկայութենէն այս երկրին մէջ։

Էտուարտ Թագաւորին Լոնտոն վերադարձը կը մօտենար. պէտք էր մեծ ճիգ մը Թափել յաջողցնելու համար ունկնդրութիւնը։

Լէյտի Ֆրեսերիք Քեւընտիշ, որ նախագահուհին է Society of Friends of Armeniaի եւ մտերիմ Թագաւորին, խոստացաւ յաջողցնել ընդունելութիւնը։ Ճէյմս Պրայս շատ յուսատու գտաւ Լէյտի Ֆրեսերիք Քեւընտիշի միջնորդութիւնը։ Միեւնոյն ատեն Այվտեան արքեպիսկոպոս գրեց Հնդկաստանի փոխարքայ Լորդ Գըրսընի, Սարաճեան արքեպիսկոպոս գրեց Միացեալ Նահանգաց դեսպանին, իսկ ես գրեցի Լանսթաունի քարտուղարին։ Գըրսընն յայտնելով իր համակրանքը դէպի հայերը, խորհուրդ կու տար դիմել արտաքին գործոց նախարարութեան։ Միացեալ Նահանգաց դեսպանը նամակով մը կը յայտնէր, թէ ըրած էր ինչ որ կարելի էր ընել։

Նախարարի քարտուղարը կը յայտնէր, որ Լորտ Լանսթաունը մեր խնդիրքը պիտի ներկայացնէր Թագաւորին՝ անոր դարձին։

Թագաւորը ձեռագիր նամակով մը Լէյտի Քեւընտիշի կը յայտնէ թէ Պատուիրակութեան մասին կ'ուզէ խորհրդակցիլ առաջին մինիստրին հետ։ Թագաւորը Մարիէնպատէն Լոնտոն դարձին, երկու օր մնալէ ետք, Սկովտիա մեկնեցաւ։ Այդ պահուն պատասխան չստանալով, Լանսթաունի քարտուղարին դացի անմիջապէս, որու հետ ունեցայ հետեւեալ խօսակցութիւնը.

— Թագաւորը Պատգամաւորութիւնը չի կրնար ընդունիլ, իր բացակայութեան պատճառաւ, — ըսաւ։

— Բայց մենք կրնանք Սկովտիա իրեն ներկայանալ։

— Նա ոչ ոք կ'ընդունի այնտեղ։ Դուք կ'ուզէք Թագաւորը Սուլթանին հետ դժտեցնել։

— Ես, առաջինը, չեմ ցանկար որ այդ անախորժութիւնը յառաջ դայ։

— Դուք սակայն ինչ որ ալ ըսէք, այդ այցելութիւնը քաղաքական է։ Անգլիական Սահմանադրութեան հիման վրայ, Թագաւորը իրաւունք չունի այդ տեսակ այցելութիւններ ընդունելու։ Ձեզի համար բաւական ըլլալու էր պրն. Լանսթաունի ընդունելութիւնը։

— Մենք շատ երախտապարտ ենք այդ բանին համար, ու կը ցանկանայինք Թագաւորին յայտնել մեր երախտագիտութիւնը՝ նախարարին կողմէ մեր ստացած լաւ ընդունելութեան համար։ Այդ ընդունելութիւնը, նոյնիսկ երկվայրկեանի մը համար, անհրաժեշտ է մեզի համար, որովհետեւ հակառակ պարագային մեզ անհնար կը դառնայ շարունակել Պատուիրակութիւնը, այն պարզ պատճառով՝ որ Էտուարտ Թագաւորի մերժումէն ետքը միւս վեհապետներն ալ պիտի մերժեն մեզ ընդունիլ։

— Ես գիտեմ որ Թագաւորը չի փափաքիր ձեզ ընդունիլ։

— ԵԹԷ Ամերիկա երթանք, մեր վերադարձին մեզ կ'ընդունի՞։

— Թէ ի՞նչ կ'ըլլայ երեք ամիս յետոյ, ես ոչինչ կրնամ ըսել։

Այսպէս վերջացաւ խօսակցութիւնը իմ եւ Լանսթաունի քարտուղարին միջեւ։

***

Նկատելով որ Պատգամաւորութիւնը, ամառուայ արձակուրդներու պատճառաւ, չէր կարող իր պաշտօնը լրիւ կատարել, նկատելով որ Հոկտեմբերի սկիզբները Խաղաղութեան համաժողովի հաւանականութիւն կար եւ նախագահ Ռուզվելթի հետ տեսնուելու կարելիութիւն՝ Սեպտեմբերի վերջը, ինչպէս ըսաւ Միացեալ Նահանգաց Փարիզի դեսպան պրն. Լինիօ, նկատելով այն քաղաքական խորհուրդները՝ որ տուին Քլեմանսօ, Ժօռէս եւ Փրեսանսէ Ամերիկա դնալու համար, որոշեցինք Թողուլ Եւրոպան 17 Սեպտեմբերին։

Մեկնելէ առաջ յանձնարարական նամակներ առի մեր Ֆրանսացի եւ անգլիացի համակիրներէն։ Ամերիկայի մէջ ամենէն աւելի ծառայութիւն մատոյց մեզի՝ պրն. Ճէյմս Բէյնոլտս, Ռուզվելթի բարեկամ, որուն հետ ծանօթացած էի Փարիզ եւ որուն յայտնած էի մեր Ամերիկա դնալու մտադրութեան մասին։ Այնպէս որ մեր Ամերիկա հասնելուն իսկ յայտնեց մեզի, թէ Ռուզվելթ պատրաստ է մեզ ընդունելու։ Պրն. Բէյնոլտս Նիւ Եորքէն Վաշինգթոն եկաւ, ուր քանի մը օր ետքը մեզ ներկայացուց Նախագահին։ Այս ընդունելութեան մասին արքեպիսկոպոսները գրած են արդէն Ձեր Սրբութեան։ Կ'ուզեմ սակայն ըսել թէ մասնաւոր խօսակցութեան մը միջոցին Ռուզվելթ յայտնած է պրն. Բէյնոլտսի՝ իր ջերմ համակրանքը դէպի հայերը եւ ըսած է միանգամայն, թէ պիտի զբաղի անոնց հարցով։ Աւելցուցած է, որ եթէ ամէն բան իրմէ կախուած ըլլար, Հայկական Հարցը անմիջապէս կը լուծէր։

Bostonի միջազգային Խաղաղութեան համաժողովին մէջ, ուր ներկայ էին մեր դատի Ֆրանսացի, անգլիացի, պելճիքացի եւ գերմանացի անձնուէր բարեկամներ, անոնց շնորհիւ յաջողեցանք մեր խնդիրը դընել հարցերու առաջին շարքում։ Միեւնոյն ժամանակ, օգտուելով նոյն բարեկամներու ներկայութենէն, Ամերիկայի զանազան քաղաքներուն մէջ մեր դատին ի նպաստ պրոպագանդ ըրինք։ Ի պատիւ Բէյնոլտսի ճաշկերոյթ մը տարքեցի, ուր ներկայ էին Համաժողովի զանազան երկիրներու ներկայացուցիչները։ Պէտք էր այս յարգանքի ու երախտագիտութեան հարկը մատուցանել պրն. Ճէյմս Բէյնոլտսին, որ Ամերիկա ներկայ եղած ատենիս, հակառակ իր զբաղումներուն, առաջինն հիմնաւոր ու լայն հողի վրայ դրաւ մեր հարցը, կազմելով Նիւ Եորք, Վաշինկթոն, Պոսթըն, Շիքակօ եւն. զանազան ամերիկացի ներկայացուցիչներէ բաղկացած հայասէր կոմիտէներ։ Ջանացի, որքան կը ներէին ուժերս, Ամերիկայի մէջ մեր դատի պաշտպանութեան գործը ուժեղացնել ու վերջերս իմացայ ամերիկացի խմբագիր բարեկամէ մը, թէ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը կ'ուզէ դիմել Անգլիոյ՝ խնդրելու համար անոր ուշադրութիւնը Հայկական Դատին [եւ] միջամտելու համար։ Այս լուրը կարելի է համարել սկզբնաւորութիւնը այն անպաշտօն դիմումին, որ պրն. Ռուզվելթ պիտի ընէր բոլոր մեծ պետութեանց, Հայկական Հարցի լուծման համար։ Այս լուրը կը հաստատէ այն խօսակցութիւնը, զոր ունեցանք Ամերիկայի մէջ՝ նախկին ամերիկեան դեսպան պրն. Սթաուսի(?) հետ։ Մեր առաջարկին վրայ է որ Ռուզվելթ դնելու էր Հայկական Հարցը Լա-Հէյի իր հրաւիրած Համաժողովի օրակարգին մէջ եւ կամ պաշտօնապէս յիշեցնելու էր մեծ պետութիւններուն՝ Պերլինի դաշնագիրը։ Պրն. Սթաուս, զանազան քաղաքական պատճառներով, այդ երկու առաջարկները անիրագործելի գտնելով, յանդգնեցաւ երրորդ աւելի յարմար դիմումի մը (այնինչ որ վերը յիշեցինք), այսինքն՝ անպաշտօն դիմումի մը։ Պրն. Ռուզվելթը երբեք յարմար առիթը չի փախցներ Հայկական Հարցը յիշեցրնելու, իր այդ խոստումէն յետոյ։ Վերջերս, Պարլամենտի բացման առիթով իր ղրկած ուղերձին մէջ, չէր մոռցած որոշ ակնարկներ ընել մեր դատին վերաբերմամբ։ Նոյնպէս սիրալիր կերպով պատասխանեց մեր այն հեռագրին՝ որով կը շնորհաւորէինք իր վերընտրութիւնը։

Ամերիկայէն վերադարձանք Անգլիա։ Թողլով արքեպիսկոպոսները Մանչեսթըր, ես մեկնեցայ Լոնտոն՝ Թագաւորին ներկայանալու համար միջոցներ ձեռք առնելու։ Դժբախտաբար վրայ հասած ըլլալով ռուս-անգլիական միջադէպը, մեր ընդունելութեան պայմանները աւելի աննպաստ դարձած էին։

Որեւէ քայլ առնելէ առաջ Լէյտի Քեւընտիշի դիմեցի, որ ինծի հաղորդեց թէ հիմա յոյս չկայ որ Պատգամաւորութիւնը ընդունուի։ Միւս կողմէն, ինծի բացատրեց թէ Թագաւորին սրտին մօտիկ էր մեր ընդունելութիւնը, թէ Լանսթաուն արդելք չէր հանդիսանար այդ բանին, բայց Պալֆուր՝ առաջին մինիստրը՝ կը հակառակէր, առարկելով որ ընդունելութիւնը կարող էր հայերը յուսադրել անգլիական միջամտութեան մը մասին, ինչպէս այդ բանը երբեմն պատահած է, մինչ իրականութեան մէջ ոչինչ չէր կատարուած այդ ճամբով։ Գտնուելով անել դրութեան մը առաջ, դիմեցի մեր դատի հին բարեկամ, Պոլսոյ Ֆրանսական նախկին դեսպան, այժմ Լոնտոնի դեսպան՝ պրն. Գանպոնի, որ «Հիւլի» միջադէպին իր միջամտութեամբը օրուան քաղաքական մարդը դարձած էր։ Այս դիմումին մէջ քաջալերուեցայ իմ Ֆրանսացիի քաղաքական իրաւունքէս։ Նա եւս հաստատեց դրութեան փափկութիւնը ու անկարելիութիւնը այդ կարգի այցելութեան մը իրա-

կանացման, բայց յոյս տուաւ ապագային համար։ Այդ փաստերուն վրայ հիմնուելով է որ գրեցինք Ձեր Սրբութեան, թէ կարելի է ժամանակաւոր կերպով Պատգամաւորութիւնը դադրեցնել։ Այդ միջոցին էր որ ստացանք Ձեր Սրբութեան կոնդակը՝ Քենթբրպըրիի Արքեպիսկոպոսին ուղղուած, զոր յանձնեցինք իրեն ու ապա մեկնեցանք Լոնտոնէն։

Աւելորդ չեմ նկատեր յիշեցնել, թէ Լէյտի Քեւրնտիշ, օգուտ քաղելով արքեպիսկոպոսներու ներկայութենէն, իր տան մէջ կազմեց միթինկ մը, ուր ներկայ էին ընտրուած դասակարգի մը ներկայացուցիչները եւ ուր, իր հրաւէրին վրայ, ընդհանուր տեսութիւն մը ըրի մեր հարցին վրայ, որուն մէկ օրինակը ուղարկեցի Ձեր Սրբութեան՝ «Արարատ»ի խմբագրին անունով։

Փարիզ ստացայ Քենթբրպըրիի Արքեպիսկոպոսէն նամակ մը, որուն օրինակը ուղարկած էի Ձերդ Սրբութեան, ժամանակին։ Այս նամակը ցոյց տուի մեզի համակիր «Թայմզ»ի Թղթակցին։ Անոր կարծիքով, այդ նամակը ընդունելութեան մեծ յոյս կը ներշնչէր ու պէտք էր շուտով մեկնիլ Լոնտոն, պատրաստելով իր ձեռքով սոյն նամակի պատասխանը։ Լոնտոն հասնելուս՝ Քենթբրպըրիի Արքեպիսկոպոսը հաղորդեց ինծի, թէ եպիսկոպոս Ռոչեսթրրի հետ դրած էր նամակ՝ պրն. Լանսթաունին, եւ ամէն [բան] անկէ կախում ունէր։ Քենթբրպըրիի Արքեպիսկոպոսին քարտուղարը, իր կարգին, մեծ յոյսեր ներշնչեց։

Միւս օրը ներկայացայ նախարարի քարտուղարին, որու հետ երկար խօսակցութիւն ունեցայ։ Ինծի հեռաւեալ հարցը տուաւ, թէ ինչո՞ւ պատուիրակ եպիսկոպոսները փոխանակ Տաճկաստանէն ըլլալու, եկած էին Ամերիկայի ու Պարսկաստանի վիճակներէն։

— Պատուիրակները կը ներկայացնեն կաթողիկոսը, — պատասխանեցի, — ու նորին վեհափառութիւնը կ'ընտրէ ներկայացուցիչ՝ ով որ յարմար կը դատէ։

— Ինչո՞ւ չներկայացաք Ցարին։

— Կաթողիկոսը կա՛մ անձնապէս երթալու էր անոր, կամ դրաւոր դիմելու էր, ըսի։ Այս վերջին ձեւով ցարին դիմած էր արդէն նորին սրբութիւնը ու Քոնթ Լամստորֆի շատ սիրալիր պատասխանը ստացած էր մեր Սսի կաթողիկոսը։ Հետեւաբար սպասելի էր որ Անգլիոյ թագաւորը եւս, իբրեւ ստորագրող Կիպրոսի եւ Գերլինի դաշնագրերուն, ընդունէր մեզ։

Այս առթիւ պատմեցի պրն. Ռուզվելթի ընդունելութեան մանրամասնութիւնները, ցոյց տալով այն նամակը, որ ստացած էինք Ամերիկայէն, ուր կը խօսուէր նախագահի մտադրութիւններուն մասին՝ ի նպաստ Հայկական Հարցին։ Ու ցոյց տալու համար, որ մենք որեւէ յետին միտք չունէինք մեր այցելութեան որոշ գոյն տալու, այլ միայն շնորհակալութեան մը արտայայտութիւնը պիտի ըլլար ան, առաջարկեցի որ նոյնիսկ ի՛նքը կրնար խմբագրել իր ուզած եղանակով, թղթաւորին կարդացուելիք մեր ուղերձը, — ինչ որ մերժեց։

— Ի՞նչ է ձեր դերը, — հարցուց յետոյ, — Պատգամաւորութեան մէջ։

— Կաթողիկոսի հրամանով, — պատասխանեցի, — անդամ նշանակուած եմ այդ Պատգամաւորութեան։

— Ուրեմն կը փափաքիք տեսնել Լանսթաունը։

— Այո՛, եթէ հարկ կայ որեւէ մութ կէտ իրեն լուսաբանելու։

— Եթէ նոյնիսկ նախարարը ուզէ, այդ չի նշանակեր թէ ունկնդրութիւնը կրնայ յաջողիլ։

— Քոնթ Լանսթաունի հաւանութիւնը, — պատասխանեցի, — յաջողութեան երեք չորրորդ մասը կարելի է համարել. մնացեալը կախում ունի միայն թագաւորէն, որուն շատ բարի ըլլալը գիտենք, եւ մեր խնդրին մէջ բարութի՛ւնն է կարեւոր։

Մեր խօսակցութիւնը վերջացաւ այն խոստումին վրայ, թէ ինծի պիտի զրէր։

Այս տեսակցութենէն մէկ օր ետքը, եպիսկոպոս Ռոչեսթրր նամակով մը կը յայտնէր ինծի՝ ունկընդրութեան մերժումը, բացատրելով թէ, քանի որ թագաւորը չէր կրցած ընդունիլ Պատուիրակութիւնը ամբան, Քոնթ Լանսթաուն անյարմար կը գտնէր նոյն խնդրի համար կրկին դիմել, եւ կառավարութիւնը անօգուտ կը գտնէր այդ կարգի ընդունելութիւն մը։ Այս վճռական պատասխանէն յետոյ նոր փորձ մը ըրի, նամակ մը գրելով Լանսթաունի քարտուղարին, ուր կը պնդէի վերստին թէ քաղաքական նկարագիր չպիտի ունենար մեր այցելութիւնը, թէ Պատուիրակութիւնը կ'ուզէր շնորհակալութիւն յայտնել Անգլիոյ՝ մեր դատին նկատմամբ անցեալին մէջ ցոյց տուած համակրութեան համար։

Ստացայ պատասխան մը որով քարտուղարը ինծի կը յայտնէր, թէ Քոնթ Լանսթաուն կը մնայ նոյն կարծիքին վրայ։ Այս վճռական մերժումներուն առջեւ՝ խորհրդակցեցայ ճէյմս Պրայսի եւ Սթիվենսընի հետ, որոնք առաջարկեցին բաւականանալ կոնդակը Լանսթաունին եւ թագաւորին ուղարկելով։ Ինչ որ ըրինք, գրելով նամակ մը՝ մեր երեքի ստորագրութիւններով։ ճէյմս Պրայս մեզի խորհուրդ տուաւ շարունակել Պատգամաւորութիւնը գոնէ Իտալիա, համարելով Պալֆուրը իրրեւ պատճառ անյաջողութեան։ Փարիզ վերադառնալուս, բարեկամ մը, որ մօտ յարաբերութիւն ունի անգլեւֆրանս. պաշտօնական բարձր շրջանակներուն հետ, ինծի հաղորդեց թէ անգլիական կառավարութիւնը պիտի հետեւի նոր քաղաքականութեան մը, որ պիտի ըլլայ զգոյշ եւ խոհեմ, ձեռք առնելով Հայոց Հարցը Ասիոյ մէջ եւ թողլով մակեդոնական խնդրի կարգադրութիւնը Թուրքոյ եւ Աւստրիոյ։ Ու վախնալով որ Ֆրանսան կրնայ իր այդ ձեռնարկին մէջ գինք

մատնել, տեղի տալով ռուսանպաստ քաղաքականութեան մը, կը փափաքի նոյնիսկ հրաժարիլ անոր աջակցութենէն ու զայն եւս մղել մակեդոնական հարցին մէջ։ Անգլիան վախցած է որ մի գուցէ իր այդ ծրագրած քաղաքականութիւնը վտանգուի ընդունելով Պատգամաւորութիւնը։ Պրն. Բանոն չուզեց միջամտել այցելութիւնը յաջողցնելու գործին, որովհետեւ ծանօթ էր այդ քաղաքականութեան։

Ակնկալ կ'երեւի թէ որքա՛ն անհրաժեշտ է վառ ու արթուն պահել Անգլիոյ հասարակական կարծիքը դէպի մեր դատը, ինչ որ աւելի պիտի զօրացնէ իր կառավարութեան քաղաքականութիւնը։

Գալով Պատգամաւորութեան շարունակութեան հարցին, խորհուրդ հարցուցի մեր դատի բարեկամներուն։ Պրն. Լաւիս, փրոֆեսէօր, ձեռնհաս քաղաքական գործերու մէջ, յորդորեց շարունակել զայն՝ Հայկական Հարցը միշտ յիշեցնելու համար Եւրոպային, այն ժամանակ երբ ան ամբողջովին կլանուած է ռուս-ճափոնական պատերազմով։

Պրն. Ժօռէս կը խրատէ շարունակել մէկ քանի ամիս վերջ՝ առանց տեղի տալու, յուսալով որ մինչեւ այն ատեն որոշ կերպարանք կը ստանայ Անգլիոյ քաղաքականութիւնը։

Արտաքին գործոց նախարար պրն. Տելքասէ եւս, անուղղակի եւ անպաշտօն ճանապարհով մը, կը թելադրէ Իտալիա այցելել։

Ուրեմն կարելի է եզրակացնել թէ, քանի այդքան կնճռոտ պայմաններու մէջ Պատուիրակութիւնը, հակառակ իր անպատրաստ ըլլալուն, յարաբերաբար մեծ յաջողութիւն գտաւ, Ձեր Սրբութիւնը պէտք է ունենայ Եւրոպայի մէջ մնայուն ներկայացուցչութիւն մը, որ մօտէն հսկէ քաղաքական շարժումներուն վրայ եւ օգտուի ներկայացած ամէն յարմար առիթէ։ Ու այդ առիթները աւելի քան երբեք կարող են ներկայանալ այս խառն ժամանակներուն մէջ, որ կանխատեսել կուտան քաղաքական մեծ փոփոխութիւններ։

Պատգամաւորութեան դադարումը, նախ պիտի դրկէր մեր դատը այն առաւելութիւններէն ու օգուտներէն, որոնք ապագան ցոյց կու տան մեզի, յետոյ պիտի ոչնչացնէր այն արդիւնքը որ ձեռք բերուեցաւ, ի մեծ ուրախութիւն մեր ներքին ու արտաքին թշնամիներուն։

Այս տեղեկագիրը Ձեզի հաղորդել պարտք համարելով, կը փութամ մատուցանել իմ որդիական անձնուէր [զգացումները] Ձեր Սրբութեան, համբուրելով Ձեր Ս. Աջը։

Յ. ԼՈՐԻՍ ՄԵԼԻՔԵԱՆ

Յ. Գ.— Այս տեղեկագիրը դրկելու պահուս ստացայ Յովսէփ եպիսկոպոսէն՝ Ձեր կաթողիկոսական ծրագրին պատճէնը։ Մեկներ էք Ձեր վիճակները։

(1) Թուականը արտագրուած չէ։

IV.— ՊԱԼՔԱՆԵԱՆ ՇՐՋԱՆ

Պոլսոյ դրացի, բայց աւելի ազատ՝ իբրեւ միջավայր, Երկրին համեմատաբար մօտիկ՝ բայց Եւրոպայի մաս կազմող, Սեւ Ծովով կապուած Տրապիզոնի ու Կովկասի եւ Միջերկրականով՝ Իզմիրի, Կիպրոսի եւ Աղեքսանդրիոյ հետ, Պալքանները — յատկապէս Պուլկարիան, ուր կը գտնուէր շրջանի Կեդրոնական Կոմիտէն — Հ. Յ. Դաշնակցութեան համար հիմնէն ի վեր հանդիսացած են կապի եւ անցման էական գիծ եւ յեղափոխական–կազմակերպչական աշխատանքի կարեւոր հենց: Խաժակէն, Պետրոս Սերէմճեանէն եւ զանազան այլ գործիչներէ ետք, 1899–1902 տարիներուն, շրջանը վայելած է տիրական ու ներշնչող ներկայութիւնը Ռոստոմի, իսկ Հ. Յ. Դ. 3րդ Ընդհանուր Ժողովէն ետք՝ ան կազմած է ընդյատակեայ հիմնական աշխատավայրը Քրիստափորի եւ անոր գլխաւորած Ցուցական Մարմնին: Հայ Յեղափոխութեան պատմութեան մէջ նշանակալից բազմաթիւ գլուխներ ու դրուագներ (հայ–մակեդոնական գործակցութիւն, Սերէմճեանի ձերբակալութիւն եւ կախաղան, Սոֆիայի Ընդհանուր Ժողով, Վիտօշի ողբերգութիւն, Հ. Յ. Դ. Զինուորական վարժարան եւն.) իբրեւ թատերաբեմ ունեցած են Պալքանը կամ կապուած են այդ շրջանի դաշնակցական գործունէութեան:

Բաւական ճոխ է Պալքանեան շրջանի Կեդրոնական Կոմիտէութեան թղթածրարը՝ Հ. Յ. Դաշնակցութեան 4րդ Ընդհանուր Ժողովի արխիւներուն մէջ: Պարունակութիւնը հրատարակութեան կու տանք լրիւ, հետեւեալ շարքով.—

1.— Պալքանեան Կ. Կ.ի 1904–1906 տարիներու տեղեկագիրը՝ ուղղուած 4րդ Ընդհանուր Ժողովին:

2.— Միեւնոյն թղթածրարին մէջ պահուած այլ տեղեկագիր մը, ուղղուած Արեւմտեան Բիւրոյին, 1907 Յունուար–Օգոստոս եօթնամսեայ ժամանակաշրջանին մասին:

3.— Պալքանեան Կ. Կոմիտէութեան 1905 Յունուարի Շրջանային Ժողովի ատենագրութիւնը:

4.— Նոյն շրջանի 1906 Մարտ–Ապրիլի Շրջանային Ժողովի ատենագրութիւնը:

5.— «Հարցեր Հ. Յ. Դ. Պալք. շրջանէն 4րդ Ընդհանուր Ժողովին», ստորագրուած եւ կնքուած Կ. Կոմիտէին կողմէ՝ 1905 Դեկտեմբեր 22ին (յիշեցնենք որ, Դաշնակցութեան խորհուրդի որոշումով, 4րդ Ընդհանուր Ժողովը պիտի գումարուէր 1905ի վերջը կամ 1906ի սկիզբը):

6.— Նոյնպիսի «հարցեր» Ընդհանուր Ժողովին՝ 1906 Դեկտեմբերին գումարուած Արտակարգ Շրջանային Ժողովի մը կողմէ, որուն ատենագրութիւնը թղթածրարին մէջ չէ դժբախտաբար: Ստորագրուած եւ կնքուած Պալքանեան Կ. Կոմիտէին կողմէ:

7.— «Ընդհանուր Ժողովի ներկայացնելի հարցեր Ֆիլիպէի կոմիտէէն», մակագրուած՝ «Ստացուած 11 Յունուար 906»:

8.— Արեւմտեան Բիւրոյին ուղղուած 13 Յուլիս 1906 թուակիր բողոքագիր–բացատրագիր մը, Վառնայի խումբերուն առնչութեամբ:

9.— Պալքանեան Կեդրոնական Կոմիտէի 28 Ապրիլ 1907 թուակիր ճա-

մակը 4րդ Ընդհանուր Ժողովի Դիւանին, Հ. Յ. Դ. Զինուորական վարժարանին մասին:

4րդ Ընդհանուր Ժողովի թղթածրարներուն մէջ առանձին եւ բաւական ծաւալուն տեղ կը գրաւէ տակաւին Վարդոյի (Վարդ Պատրիկեան) խնդիրը, որուն վերաբերեալ վաւերաթուղթերը պիտի տանք հետագային, 4րդ Ընդհանուր Ժողովին կողմէ քննուած *դատական հարցերուն* մէջ:

1.— ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ. Յ. Դ. ՊԱԼՔԱՆԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

1904 Յունուարէն մինչեւ 1907 Յունուար

Նամակի ճոխ չափի 11 զոյգ թերթերէ կազմուած տետրակ· տեղեկագիրը կը գրաւէ 17 թերթ, գրուած՝ մէկական երես, մանիշակագոյն մելանով:

Ստորագրութիւնը, «Հ. Յ. Դ. Պալքանեան Կեդր. Կոմիտէ». կնքուած է նոյն Կեդրոնական Կոմիտէի կնիքով:

Ընդհանուր վիճակ.— *Վերջին երեք–չորս տարուայ տեւողութեան միջոցին ամէն հայ գաղութներու մէջ առհասարակ Հայ Յեղափոխութեան գաղափարին եւ անոր հետ բնականաբար ու զուգընթացաբար Հ. Յ. Դաշնակցութեան արագ ծաւալումին ու փրոփականտին մէջ անմասն չմնաց նաեւ Պալքանեան Շրջանը:*

Նախորդ Ընդհանուր Ժողովի ատենները կազմակերպութիւնը Պալքանեան Շրջանին մէջ գրեթէ թոյլ վիճակ մը կը ներկայացնէր· տեղ–տեղ կազմակերպութիւն գոյութիւն չունէր, ուրիշ տեղեր անհատ–համակիրներ ու ընկերներ միայն կային, քանի մը քաղաքներու մէջ գոյութիւն ունէին խումբեր, մարմիններ՝ անոնք ալ ոչ այնքան ներդաշնակ ու այժմեան ստուգութեամբ:

Տարիներու դասերէն ետքը, որոնց եկան աւելնալ Սասունի ցնցող կռիւները, յետոյ Սուլթանի մահափորձը եւ ուրիշ յարակից դէպքեր, ժողովուրդը աւելի ինքնագիտակցութեան մղուեցաւ եւ աւելի արագ թափով դիմեց դէպի գործը, դէպի գաղափարը:

Երեք–չորս տարի առաջ ընկերներու թիւը 5–600ը չէր անցներ· այսօր արդէն եռապատկուած է: 1905ին ցրուած մանրամասն եւ սիստեմաթիք վիճակացոյցը, ինչպէս նաեւ ամիս մը առաջ գումարուած Շրջանական Ժողովի(1) *սեղանին վրայ դրուած տեղեկագիրը այդ բանը ապացուցին յստակ կերպով: Առանց անդրադառնալու ամէն ընկերական կեանքի մէջ առհասարակ սովորական եղող պզտիկ եւ ժամանակաւոր անհամաձայնութիւններուն ու թիւրիմացութիւններուն վրայ, կրնանք ըսել որ ընկերական յարաբերութիւնները ընդհանրապէս լաւ են բոլոր քաղաքներուն մէջ: Միայն Վառնայի մէջ ծագած անհամաձայնութիւններն էին, որ յամառաբար յարատեւեցին երկու տարի եւ տեղի տուին խմբական բաժանումներու, հակառակ ձեռք առնուած միջոցներուն եւ բարոյական ու նիւթական զոհողութիւններուն, մինչեւ որ Շրջանական Ժողովը հարկադրուեցաւ տարուան մը համար քանի մը ընկերներ դուրս ձղել կազմակերպութենէն: Այսօր արդէն իրերու վիճակը հոն բաւական հանդարտած է եւ բաժնուողներու մեծագոյն մասը՝ միացած:*

Կազմակերպութեան այս նպաստաւոր պայմաններուն մէջ, պարզ էր որ աստիճանական բարեշրջութեան ենթարկուէր նաեւ հասարակութեան վերաբերումը՝ դէպի կազմակերպութիւնը: Այսպէս, Պալքանեան Շրջանի մէջ Դաշնակցութիւնը ըլլալով անբաղդատելիօրէն [աւելի] տարածուած, ուժեղ եւ կազմակերպուած՝ միւս կուսակցութիւններէն, հասարակութեան վստահութիւնը միշտ անոր կողմը կը հակի: Զէզոք, անտարբեր կամ պահպանողական, նիւթական օժանդակութեան մը պարագային կը նախընտրեն անպայման Դաշնակցութիւնը:

Կազմակերպութեան ծաւալումին եւ վարկի բարձրացման նուազ չեն նպաստած նաեւ այն կարգ մը ձեռնարկներն ու հաստատութիւնները՝ որոնք գոյութիւն ունին Պուլկարիայի քանի մը քաղաքներուն մէջ, ուր թարմ երիտասարդութիւն մը կայ· եւ այդ հաստատութիւնները, ամէնքն ալ, արդիւնք են անհատական–ընկերական ճիգերու: Այդ ազդակներն են — երգեցիկ–թատերասէրներ, ընթերցարաններ, մարմնամարզական, Կարմիր–Խաչի, զինավարժական եւ ուրիշ համանման խումբեր: Այս խումբերը, իրենց առաջադրած աշխատութիւններով, մէկ կողմէ ընկերներու ինքնազարգացման եւ ինքնապատրաստութեան գործին է որ կը սատարեն, միւս կողմէ ժողովուրդին մէջ վառ կը պահեն հայրենիքի գաղափարը ու զայն կը հետաքրքրեն հայ ցաւով: Այդ խումբերը կամ ընկերութիւնները՝ կազմուած ու առհասարակ մեր ընկերներէն, իրենց ունեցած գոյքերը հայթայթած են անհատական միջոցներով՝ կազմակերպութեան մնալու որոշումով սակայն: Համապատասխան միջոցներ ստեղծած են նաեւ Ռումանիոյ մեր ընկերները՝ առհասարակ հայաստանցիներ: Անոնք ալ տեղ–տեղ սրճարաններ հաստատած են իրենց նիւթական նպաստներով՝ նոյնպէս անոնց գոյքերն ալ կազմակերպութեան սեփականութիւնը ըլլալու որոշումով: Այս սրճարանները, այսպէս ըսենք, զարիպներու օճախներն են· հոն կը հաւաքուին, հոն իրար կը գտնեն, հոն կը կարդան, հոն

իրարու ցաւ կը բանան եւ հոն կը ձգեն նաեւ իրենց սուրճի գլխամը՝ արդիւնքը յեղափոխութեան յատկացընելու համար, որոնք տարեկան 4–5000 ֆր·ի բացառիկ հասոյթ մը կը ստեղծեն մեր շրջանի կազմակերպութեան անտուկին։

Բնական էր, որ համեմատական չափով ուժեղնար նաեւ կազմակերպութեան նիւթական մասը։ Եւ իրօք, կազմակերպութեան այս երեք տարուայ հասոյթները՝ բաղդատելով անկէ առջի տարիներուն հետ, քառապատկուած են։ Ներկայ տեղեկագրին մէջ կցուած հաշուական ըլանկները — իւրաքանչիւր տարիին առանձին — այդ բանը կ'ապացուցանեն։ Հոս այսքան մը միայն ըսել կարեւոր է, որ Գալքանեան Շրջանը ունեցած է հետեւեալ մուտքի ընդհանուր գումարները — 1904էն 1905 (Վարդոյի օրով) տարուան մը ընթացքին մէջ՝ 17·944,72 ֆր·, 1905–1906 տարուան մը ընթացքին մէջ՝ 31·895, իսկ վերջին վեց ամսուան ընթացքին մէջ՝ 23·993 ֆր·։

Բացի պարտադիր կամ հաստատ ամսավճարներէն, որ ամէն ընկեր պարտաւորուած է վճարել օրէնքի տրամադրութեան համաձայն, կազմակերպութիւնը կ'ունենայ նաեւ բացառիկ հասոյթներ, որոնք կը դոյանան հանդէսներէ, ներկայացումներէ, վիճակախաղերէ, հանգանակութիւններէ եւն։։ Հանգանակութիւնները վերջին մէկ–երկու տարուան մէջ տեսակ մը տարեկան սովորութեան կարգ անցնիլ սկսան եւ տարուէ տարի աստիճանաբար աճելու վրայ են։ Հանգանակութիւններուն կը մասնակցին հասարակութեան ամէն խաւերն ալ, հարուստ թէ էսնաֆ, ինչպէս տեղ-տեղ նաեւ ընկերները, որոնց համար ալ պարտադիր ըրաւ վերջին Արտակարգ Շրջանական Ժողովը։ Ի հարկէ, հանգամանքները, հանգանակողներու անձը, հեղինակութիւնը եւն. իրենց որոշ կշիռը կ'ունենան այս պարագաներուն մէջ։ Հարուստները գրեթէ մեծ մասամբ կը մասնակցին հանգանակութիւններուն, բայց ո՛չ այն համեմատութեամբ՝ ինչպէս որ ցանկալի է։ Գուլկարիոյ մէջ, աչքի զարնող հարուստի մը, օրինակի համար, տուածը տարին 300 ֆրանքէն անդին չ'անցնիր։ Ուժի գործածութիւնը, սպառնալիքը՝ որուն երբեմն դիմուած է, իր նպաստաւոր թէ աննպաստ արդիւնքը միանգամայն ունեցած է, նիւթական եւ բարոյական տեսակէտներով։ Տեղն է ըսելու որ, այս տարուան հրամայողական պէտքերէն հարկադրուած, սովորականէն բաւական բարձր գումարներ պահանջուեցան եւ այդ պատճառ եղաւ, որ հարուստներու մեծամասնութիւնը ընդդիմանայ վճարելու եւ հանգանակութիւնները, չատ մը տեղեր, սկսուածին պէս ձգուին, սպասելով նոր տնօրինութեան մը կամ նպաստաւոր պարագաներու։

Նիւթական տեսակէտով՝ Ռումանիոյ մարմինները, չատ կարճ ժամանակի մը մէջ, բաղդատմամբ անցեալ տարիներու՝ քառապատիկ արդիւնք տալ սկսան, չնայած որ թէ՛ ընկերներու թիւով եւ թէ որակով ու զարգացումով անհամեմատ քիչ են պուլկարահայէն, եւ չունին իրենց ծոցը՝ զիրենք յուզող, փոթորկող երիտասարդութիւն մը ալ։

Կազմակերպութիւն եւ փրոփականտ։— *Բայց պէտք է խոստովանիլ, որ Գալքանեան Շրջանը իր ներկայ վիճակին հասած է գրեթէ ինքնիրմէն, առանց արտաքին ճիգերու եւ աշխատութիւններու։ Եւ ատոր համար ալ կազմակերպութեան անդամակցիլը, կամ յեղափոխական գործին օժանդակելը, կարծես միայն արհեստաւոր կամ էսնաֆ դասակարգին ճակատագիրն է դարձեր։ Կարող ձեռքեր պակսած են սկիզբէն մինչեւ վերջ եւ հետեւաբար լուրջ ջանքեր չեն եղած կազմակերպութիւնը ներքնապէս աւելի ուժովցնելու եւ անոր մէջ առնելու՝ հասարակութեան ամէն դասակարգէն ալ անհատներ, դայն ժողովրդականացնելու համար։ Միւս կողմէ, նոյն այդ պատճառով ընկերներու յեղափոխական դաստիարակութեան, մտաւորական զարգացման եւ ինքնագիտակցութեան անկարելի եղած է հոգ տանիլ եւ զարձնել զանոնք առհասարակ կազմակերպութեան եւ իրենց կոչումին աւելի գիտակից անդամներ։*

Գործիչի մը անհրաժեշտութիւնը, *որ տարիներէ ի վեր եւ ամէն Շրջանական Ժողովի կողմէ շեշտուած է, մնացած է միշտ անիրագործելի եւ անլսելի։ Տարուան մէջ հազիւ անգամ մը պատահած է, որ հանգանակութիւններու կամ ընկերական այս ու այն խնդիրը կարգադրելու համար ընկեր մը ղրկուի։ Քաղաքներ կան, որ այդքանէն ալ զրկուած մնացած են։ Եթէ այս պահանջին գոհացում տրուէր, այսօր, ապահովաբար, Գալքանեան Շրջանը իր ներկայ ուժին կրկինը պիտի ներկայացնէր եւ ա՛լ աւելի ամուր հիմերու վրայ։*

Ըլլա՛յ ընկերներու, ըլլա՛յ հասարակութեան մէջ, իբրեւ փրոփականտի միջոց, ունինք առայժմ միայն «Ռազմիկ»ը, որ հազիւ 15–16 ամսուան կեանք մը ունի. եւ սակայն անիկա իր ընդհանուր հանգամանքովը հեռու է գործիչի մը դերը կատարելէ. այնպէս որ, գործիչի մը պակասը կը մնայ իրապէս զգալի պակաս մը։ Ուստի մենք ալ մեր ձայնը կը միացնենք Շրջանական Ժողովի կողմէ դրուած հարցին եւ կը խնդրենք Ընդհանուր Ժողովէն՝ նկատի ունենալ։

Գալով «Ռազմիկ»ին, անոր հրատարակութիւնը որոշուած ըլլալով 1905ի Շրջանական Ժողովէն յայտնուած ընդհանուր բաղձանքներուն համեմատ, նոյն տարուան Կեդր. Կոմիտէն իրականացուց՝ շրջաբերութեան հանելով բաժնետոմսեր եւ օգտուելով ընկեր Զարդարեանի ներկայութենէն։ Տարիուկէսուայ ընթացքին մէջ «Ռազմիկ»ի կատարած բարոյական դերը ամէն կողմէ դնահատուեցաւ եւ իր ուղղութեամբ ու մտաւորական գործունէութեամբ չատ ջերմ ընդունելութեան մը հանդիպեցաւ ամէն տեղ, ինչպէս կը վկայեն դեռ մինչեւ այսօր խմբագրութեան մէջ ստացուած գոհունակութեան բազմաթիւ նամակներ։ Այս առաջին շրջանին մէջ, իբրեւ նոր ձեռնարկ՝ ենթարկուած ըլլալով բացառիկ ծախքերու, կազմակերպութենէն 2500 ֆր·ի փոխատուութիւն մը եղաւ։ Ցառաջիկայ տարուան պիւտճէն հաշուուած է, որ պիտի գոցէ արդէն իր ծախքերը եւ դուցէ նաեւ վճարուի իր ունեցած պարտքերէն պզտիկ մաս մըն ալ։

Ընկեր Ռոստոմի կողմէ վեց տարի առաջ Ֆիլիպէի մէջ հիմնուած մասնաւոր վարժարանը տեղւոյն մէջ ուղղակի ունեցած է իր օգտակարութիւնները։ Վարժարանը ծառայած է իրրեւ խումբերու հաւաքատեղի եւ փրոփականտի միջոց։ Հաստատութիւնը սկիզբէն մինչեւ հիմա կը կառավարուէր անհատական ջանքերով ստեղծուած նիւթական միջոցներով եւ անհատական տնտեսութեամբ՝ պրն. Գիրոնեանի։ Այդ միջոցները հեղհեղէ թուլցան եւ սպառեցան։ Ֆիլիպէի ընկերները, զգալով հաստատութեան կարեւորութիւնը և ականատես [ըլլալով] անոր տնտեսական վիճակին, վերջնթեր Շրջանական Ժողովին հարց դրին՝ շրջանի ընկերներու ուշադրութիւնը հրաւիրել եւ անոնց նիւթական աջակցութեան պէտքը շեշտել։ Շրջանական Ժողովը յանձնարարած էր ընկերներուն՝ բացառիկ միջոցներ ստեղծել եւ օժանդակել, բայց ցարդ որեւէ դրական արդիւնք առաջ չեկաւ. մինչդեռ վարժարանը այդ յոյսերուն կոթնելով վերաբացուեցաւ եւ այսօր նիւթական աննախանձելի կացութեան մը մէջ է, նոյնիսկ տարեշրջանը չկարենալ բոլորելու վտանգին ենթարկուած, եթէ հեռուէն կամ մօտէն խոստացուած այդ աջակցութիւնները չիրականանան։

1904էն ասդին, Գալքանեան Շրջանը ունեցած է երեք Շրջանական Ժողովներ — 1905 Յունուարին, որ տեւած է 18–20 օր, 1906 Ապրիլին՝ նոյնքան տեւողութեամբ եւ վերջին արտակարգ Շրջանական Ժողովը՝ 1906 Դեկտեմբերին, որ նոյնպէս տեւած է 22 օր։ Երեք Շրջանական Ժողովներու կողմէ ալ ընտրուած են օրինաւոր Կեդր. Կոմիտէներ՝ որոնք իրենց կարողութեան սահմանին մէջ ջանացած են ու կը ջանան սերտ յարաբերական կապ պահել ընկերներու հետ, հոգ տանիլ շրջանի կազմակերպութեան վրայ։ Կեդր. Կոմիտէները, Արեւմտեան Բիւրոյի անհոգութեան պատճառով, մասնաւորապէս այս վերջին տարին, անգիտակ մնացած են Երկրի յեղափոխական կեանքին եւ կազմակերպութեան ներքին վիճակին մասին, եւ այդ բանը բնականաբար անդրադարձած է շրջանի մարմիններուն։ Տարուան մը ընթացքին մէջ, օրինակի համար, Արեւմտեան Բիւրոն ոչ մէկ կանոնաւոր շրջաբերական չէ ուղարկած Կեդր. Կոմիտէին, հակառակ որ այդ բանը պարտադիր էր կազմակերպական կանոններով. այս զանցառութիւնը պատճառ եղած է, որ Կեդր. Կոմիտէն ալ իր կարգին նոյն վերաբերումը հարկադրուի ունենալ իր մարմիններուն հանդէպ։ Վերջին Արտակարգ Շրջանական Ժողովը, նկատի առնելով այս աչքառու զանցառութիւնը, իր դժգոհութիւնը կը յայտնէր Արեւմտեան Բիւրոյին։

Վերջին երկու Շրջանական Ժողովներուն մէջ գրծուեցաւ ներքին կանոնադիր մը — որմէ մէկ–երկու օրինակ կը ներփակենք — արդիւնք՝ կեանքի պահանջներուն ու դէպքերուն, որուն չգոյութեան պատճառով՝ անցեալի մէջ թիւրիմացութիւններ, անկարգապահական դէպքեր ու զեղծումներ երեւան կու գային։

Զեղծումներ։— *Եթէ մէկ կողմէ գործիչի եւ ուրիշ յարակից պակասներ արգելք կը դառնային շրջանի կազմին արագ եւ բաղձալի համեմատութեամբ աճումին, միւս կողմէ մէկ–երկու կարեւոր դէպքեր եկան նոյնիսկ հակահարուած տալու։*

Բացի այս կամ այն մարմնին մէջ պատահած նիւթական չատ չնչին զեղումներէն, որոնք ամէն կեանքի մէջ սովորաբար կրնան պատահիլ, երեք տարուան ընթացքին մէջ երկու խոշոր զեղծումներ պատահած են Գալքանեան Շրջանին մէջ.

ա· Քոնսթանցայի մէջ 1500 ֆր·ի զեղծում մը՝ նախկին ընկերոջ մը, Գրիգոր Խաչատուրեանի կողմէ,

բ· Վարդոյի 6000 ֆր·ի զեղծումը, որուն եկաւ աւելնալ Կովկասէն անզգուշութեամբ ղրկուած 6000 ֆր·ի գումարն ալ։

Գրիգոր Խաչատուրեան, օգտուելով օրէնքներու բացակայութենէն եւ իր պաշտօնակից ընկերներու վստահութենէն ու միամտութենէն, կազմակերպութեան դրամներէն 1500 ֆր· կը ծախսէ իր անհատական պէտքերուն։ Ամիսներ վերջը, Կեդր. Կոմիտէի նամակներուն վրայ, ընկերները կը սթափին եւ հաշիւ կը պահանջեն, ուրկէ կը պարզուի իրողութիւնը ու կը ներկայացուի 1906 Ապրիլի Շրջանական Ժողովին։ Տեղւոյն ընկերները կը մտածեն կանխաւ պարտամուրհակ մը ստորագրել տալ։ Շրջանական Ժողովը կ'որոշէ խիստ կերպով պահանջել սոյն գումարը, հակառակ պարագային մահուան պատիժ սահմանելով։ Բայց Գրիգոր Խաչատուրեան արդէն 5–6 ամսուայ ընթացքին մէջ 1000 ֆր·ը կը փութայ վճարել, մնացած 500ն ալ վճարելու խոստումով։ Այնպէս որ, այդ խնդիրը արդէն կէս մը կարգադրուած կարելի է նկատել, քանի որ յոյս ունինք՝ որ կարելի պիտի ըլլայ մնացած գումարն ալ քիչ ժամանակուան մէջ գանձել։

Վարդոյի խնդիրը իր իսկութեամբը ու ծագումովը արդէն յայտնի է, մանաւանդ որ այդ խնդրոյն վերաբերեալ բոլոր տոքիւմաններն(2) ալ արդէն ղրկած ենք Ժողովիդ քննութեան։

Վարդոն մերժած է կազմակերպութեան դրամը տալ Շրջանական Ժողովի կողմէ նշանակուած ընկերոջ, յանձնելով անոր պատասխան մը՝ որ իր դատավճիռն իսկ է։ Կեդր. Կոմիտէի եւ Վարդոյի բանակցութիւններէն ետքը, Կեդր. Կոմիտէն զայն կազմակերպական կանոններու 127րդ յօդուածի տրամադրութեան համաձայն Պալքանեան Շրջանի ընկերական շարքերէն դուրս կ՚ընէ եւ այս բանը կ՚իմացնէ ընկերներուն, միաժամանակ խնդիրը իսկոյն տեղեկացնելով Արեւմտեան Բիւրոյին, որպէսզի այս վերջինը Խորհուրդի քննութեան ենթարկէ, որ այդ ատեն կը շարունակէր իր նիստերը։ Բիւրոն՝ կազմական կանոններու 129րդ եւ յարակից յօդուածները ցոյց կու տայ եւ կը յանձնարարէ նոր Շրջանական Ժողով գումարել, մեղադրեալը կանչել՝ անոր բացատրութիւնները լսելու համար եւ անկէ ետք այդ խնդիրը կամ Ժողովին որոշումը ենթարկել Խորհուրդի քննութեան կամ վաւերացման։ Որովհետեւ պատգամաւորները զեռ նոր ցրուած, մէկ–երկուքը նոյնիսկ տեղ հասած չէին ու կազմն ալ Վարդոյի Կեդր. Կոմիտէի օրով տեղի ունեցած անհոգութիւններէն եւ դիտումնաւոր կարգադրութիւններէն թուլցած, անկարելի կ՚ըլլայ կրկին անգամ անմիջապէս Շրջանական Ժողով գումարել, հետեւաբար խնդիրը կը մնայ յաջորդ ժողովին, որուն որոշումները արդէն առանձին գրկած ենք։ Ինչպէս յայտնի է, Բիւրոյի կողմէ «Դրօշակ»ով եղած յայտարարութիւնն ալ անհետեւանք մնաց. մենք գոնէ չենք ալ գիտեր թէ՝ Բիւրոն ի՞նչ մտադրութեամբ իր յայտարարութեան մէջ եւ հրապարակով պայմանաժամ տալաւ Վարդոյին, երբ այդ պայմանաժամէն ասդին կարծենք տարին ալ անցաւ։

Ցանձնելով Վարդոյի խնդիրը եւ այդ առթիւ կայացած որոշումներն ու գոյութիւն ունեցող բոլոր տոքիւմանները ժողովիդ ուշադրութեան, կը պահանջենք խիստ եւ կտրուկ որոշում։

Մակեդոնացիներու հետ յարաբերութիւն։— *Ա՛յնքան կարեւոր պէտք մը, օգտակար կազմակերպութեան եւ յեղափոխութեան շահերու տեսակէտէն, անհրաժեշտ՝ Պալքանեան Շրջանի մեր կազմին համար, մնացած է գրեթէ թոյլ ու անմշակ վիճակի մը մէջ՝ յարմար ընկերոջ մը չգոյութեան պատճառով։ Ընկեր Թոստոմի այս շրջանը գտնուած ատեն այդ յարաբերութիւնները լաւ եւ սերտ ընթացք մը ունէին։ Անկէ ետք ընդհատուեցան եւ պէտքի մը ատեն միայն յարաբերուեցանք։ Վերջին հինգ–վեց ամսուան ընթացքին մէջ, ընկեր Անդրանիկի ներկայութիւնը եւ այդ առթիւ ըստեղծուած ձեռնարկները վերստեղծեցին նոր եւ սերտ յարաբերութիւն։ Բայց այդ յարաբերութիւնները տեւական եւ լաւ հողի մը վրայ դնել կարեւոր է, քանի որ անկէ ետքը եւ ամէն պարագայի մէջ գործ պիտի ունենանք մակեդոնացիներուն հետ։ Արդէն այդ գործին համար ընկերոջ մը ներկայութիւնը կարեւոր է, եւ այդ ընկերը կ՚ըլլայ նաեւ Շրջանի գործիչը։*

Զինուորական վարժարան։— *Մեր կազմակերպութեան պատմութեանը մէջ գուցէ միակ դրական եւ նպատակայարմար գործն է, որը յղանալու եւ գործադրութեան մէջ դնելու նախաձեռնութիւնը վիճակուեցաւ Պալքանեան շրջանին։*

Դաղափարը յղացուեցաւ 1906 Ապրիլի Շրջանական Ժողովին մէջ, բայց ներկայէն խիստ շատ սահմանափակ ծրագրով եւ պիւտճէով։ Բոլորովին անակնկալ, բայց շատ բեղմնաւոր զուգադիպութեամբ մը, անցեալ տարուայ կիսուն ընկեր Անդրանիկ այցելեց մեր շրջանը. այս առթիւ տեսակցութիւններ ունեցաւ պուլկար պետական կարեւոր անձնաւորութեանց, զինուորական նախարարին եւ մակեդոնացի ընկերներուն հետ, որոնց աբդիւնքը եւ ապագայ կենսական ծրագրերու պահանջները եկան ընդլայնելու եւ լրացնելու միանգամայն Զինուորական վարժարանի մեր ունեցած առաջադրութիւնը։ Այսպէս դիւրութիւններ ձեռք բերուեցան ու հիմնուեցաւ Զինուորական վարժարանը Պուլկ. Զինուորական Նախարարութեան տնօրինութեամբ, ուր 50 ընկերներ կը կրթուին արդէն սպայից վարժարանի յատուկ ծրագրով։ Աշակերտները մինչեւ Յունիս պիտի աւարտեն իրենց դասընթացքը։

Ասոնցմէ զատ արտօնութիւն ձեռք բերուեցաւ 20 ընկերներ ձրիօրէն կրթելու համար Պուլկար Սպաներու պետական կանոնաւոր վարժարանին մէջ։

Մեր կողմէ հիմնուած վարժարանին խոշոր ծախքը Պալքանեան Շրջանը ինքնիրեն չէր կրնար հոգալ բնականաբար, իր համեմատաբար սահմանափակ պիւտճէով։ Որովհետեւ Ամերիկայի Կեդր. Կոմիտէն ալ դեռ անցեալ տարուընէ խոստացած էր նմանօրինակ ձեռնարկներու համար բերել իր օժանդակութիւնը, հարկ եղածը տեղեկագրուեցաւ հոն, պիւտճէին մէկ մասն ալ Արեւելեան Բիւրոյի կողմէ հոգացուելու յոյսով։ Ամերիկան սիրայօժար ընդունեց Պալքանեան Կեդր. Կոմիտէի առաջարկը, իսկոյն պաշտօն տալով իր պատգամաւոր ընկերներուն՝ որ գործակցին ու առանձին խորհրդակցութիւններ ունենան։ Ուստի մէկ կողմէ բանակցութիւնները սկսան առաջ տարուիլ այս հարցին հետ ուղղակի–անուղղակի կերպով առընչութիւն ունեցող մարմիններուն ու անձնաւորութեանց հետ, միւս կողմէ ձեռնարկուեցաւ նախապատրաստութեանց։ Ձեռնարկին բարդ եւ ծանր պարագաներուն վրայ մանրամասնել աւելորդ է։

Ամերիկայի Պատգամաւոր ընկերներէն եւ Պալքանեան Կեդր. Կոմիտէէն ու ընկեր Անդրանիկէ կազմուած խառն ժողովով մը որոշուեցաւ վարժարանին ընդհ. վարչութիւնը պահել Կեդր. Կոմիտէի ձեռքը,

իսկ նախապատրաստութեանց եւ նիւթական տնտեսութիւնն ալ մասնաւոր յանձնախումբի մը ձեռքը, որ կազմուած էր ընկեր Անդրանիկէ, Ճելալեանէ եւ Աւաճեանէ։ Այս վերջինը այդ նպատակով ղրկուեցաւ Կովկաս, յանձնարարուելով անոր նաեւ Ընդհանուր Ժողովի փութացման աշխատիլ, որ կ՚ուշանար գայթակղելի յամառութեամբ մը։

Ընդհանուր պիւտճէ նախատեսուեցաւ թէեւ 50·000 ֆրանք, բայց այդքան գումար մը մինչեւ ներկայ թուականը արդէն ծախսուած է եւ մինչեւ ձեռնարկին աւարտումն ու աշակերտները իրենց որոշուած տեղերը ճամբուելը՝ նոյնքան կամ գուցէ քիչ մը պակաս գումարի մըն ալ պէտքը կը զգացուի։ Մինչեւ հիմա՝ ծախսուած գումարներուն միայն 2000 ֆրանքը Արեւմտեան Բիւրոն տուած է, մնացածը Պալքանը եւ Ամերիկան հոգացած են։ Դրամական անմիջական եւ ստիպողական պէտքը մեզ կը հարկադրէ հարց բարձրացնել Ընդհանուր Ժողովին առջեւ, որպէսզի Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոները որոշ պարտաւորութեան մը տակ դրուին՝ մնացած ծախքերը իրենց վրայ առնելու համար, քանի որ չենք գիտեր ի՞նչ անծանօթ պատճառներէ առաջնորդուած՝ Արեւելեան Բիւրոն այս կարգի կենսական ձեռնարկի մը չուզեց միացնել իր նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը, որուն համար նոյնպէս Պալքանի Արտակարգ Շրջանական Ժողովը կը յայտնէ իր դժգոհութիւնը, որուն կը կցենք մերն ալ։

Դառնալով վարժարանի ներքին կազմին, Զինուորական–Ուսումնական Մարմինը կազմուեցաւ Պ. Պ. Բաշիտ, Քափթէն Պօղոյեանէ, որոնց առաջինին՝ Բաշիտի ամսականը, 200 ֆրանք, նոյնպէս վարժարանի պիւտճէէն պիտի հոգացուի։

Որպէսզի ձեռնարկէն օգտուին Դաշնակցութեան բոլոր շրջանները, դիմում եղած է Կովկաս, Եգիպտոս, Ամերիկա եւ Պալքանի մարմիններուն, յարմար ընկերներ ուղարկելու։ Ցարդ արդէն Ամերիկան ղրկած է 9–10 ընկեր, Եգիպտոս՝ 1, Պալքանեան Շրջանը՝ 9–10, մնացածներն ալ Կովկասը։ Աշակերտներու թիւը արդէն լրացած է եւ դասախօսութիւնները սկսած են 2 ամիսէ ի վեր՝ երկու դասընթացքի բաժնուած։ Վարժարանը այս պահուս ներքին փոփոխութեան եւ կատարելագործութիւններու պէտքը ունի, որոնց մասին ալ հարկ եղած հոդածութիւնը ի գործ պիտի դրուի։

Մինչեւ այսօր Սպայից վարժարանը մտնելու համար երեք ընկերներ միայն եկած են Կովկասէն, որոնք հոն կ՚ուսանին։ Եթէ մեր Կովկասի ձեռնհաս մարմինները բաղձացուած կարեւորութիւնը տային նաեւ այս ձեռնարկին, եթէ ոչ 20, գոնէ 10–15 ընկեր ալ կարելի պիտի ըլլար պատրաստել Սպայից վարժարանին մէջ։

Կովկասի ընկերներուն յանձնարարութիւնով, 7–8 ընկերներ ալ Ֆիլիպէի արհեստանոցի մը մէջ ռումբ ձուլելու կը վարժուին հերթով, որոնցմէ 2 ընկերներ այս օրերս արդէն մեկնեցան Կովկաս՝ անկէ անցնելու համար Պարսկաստան. մնացածներն ալ քանի մը ամսուայ ընթացքին մէջ ի վիճակի կ՚ըլլան մեկնելու։ Այս ձեռնարկն ալ ամսական առնուազն 3–400 ֆրանքի կը նստի մեր կազմակերպութեան սնտուկին, որ արդէն առանց անոր ալ անկարող է Զինուորական վարժարանի պէտքերուն հասնիլ։

Այս հաստատութիւններուն՝ այս կամ այն ձեւին տակ տեւական հանգամանք մը տալու իրաւունքը ու այդ առթիւ հարկ եղած տնօրինութիւնները ընել կ՚իյնայ Ընդհանուր Ժողովիդ։

Աւելորդ չենք սեպեր ծանօթացնել աշակերտներու ընդունելութեան պայմանները՝ որոնք մեր նպատակին եւ Ժողովիդ որոշումներուն հետ անմիջական կապ ունին եւ գուցէ այդ տեսակէտին մէջ կը կազմեն գլխաւորը։

Զինուորական վարժարանի հաստատութեան ձեռնարկելով, պարզ է, որ մեր եւ մեզի հետ գործակցող մարմիններուն և ընկերներուն նպատակն է եղած պատրաստուած ուժեր հայցնել՝ Տաճկահայաստանի յեղափոխութեան համար։ Եւ պարզ էր նոյնքան, որ հոն մտնող աշակերտներէն առնուէին որոշ խոստումներ՝ այդ նպատակով։ Ուստի պատրաստուեցաւ բանաձեւ մը, որով աշակերտները որոշ պարտաւորութեան տակ կ՚իյնային։ Առաջին անգամ Կովկասէն Պուլկարիա հասնող ընկերներուն մէկ մասը չուզեցին ստորագրել այդ թուղթը։ Ասոր վրայ բանաձեւը փոխուեցաւ եւ խմբագրուեցաւ այնպէս մը՝ որուն համաձայն ստորագրողները կը խոստանային Ընդհանուր Ժողովի կողմէ եղած տնօրինութիւններուն եւ ընտրուած Զինուորական Խորհուրդի կարգադրութիւններուն հպատակիլ։ Այնքան բանաւոր այս առաջարկն անգամ ստորագրուիլ մերժուեցաւ նոյն ընկերներէն, մինչդեռ վերջը տեսանք, որ Կովկասի մեր ընկերները աւելի որոշ եւ խիստ պայմաններ ստորագրել տուած էին յաջորդաբար ղրկուած ընկերներուն։

Այսպէս ուրեմն՝ պատրաստուող 50 աշակերտները պիտի գտնուին Ժողովիդ տրամադրութեան տակ եւ պիտի հպատակին գծուած օրէնքներուն։ Այս կարեւոր պարագան կը յանձնենք Ժողովիդ ուշադրութեան։

Վարժարանի շրջանը աւարտելէն ետքը, երբ հաստատութիւնը փակել հարկ ըլլայ, շարք մը առարկաներու հետ, որոնց վաճառումէն գուցէ գոյանայ 3–4000 ֆրանքի գումար մը, պատրաստ պիտի ունենանք 50 մանլիխեր (?) կանոնաւոր հրացան։

Փոխադրութեան հարց։— *Այս վերջին տարուան մէջ, Պալքանեան Շրջանի Կեդր. Կոմիտէն զբաղած է նաեւ փոխադրութեան հարցով, որովհետեւ կովկաս-*

եան դէպքերը այս տարի աւելի հարկեցուցիչ կը դարձընէին զայն։ Այդ նպատակով ընկերներ ղրկուեցան մէկ–երկու անդամ՝ Վանա, Պուրկազ, Կալաց, Օտեսա՝ միջոցներ ուսումնասիրելու համար։ Դժբախտաբար գործ դրուած ջանքերը արդիւնաւոր չեղան կարգ մը պատճառներով՝ որոնցմէ մէկը, կառավարական խստութիւններու հետ, Կովկասի գլխաւոր նաւահանգիստներուն, ինչպէս նաեւ Կալացի մէջ՝ յատուկ այս նպատակին համար մարմնի մը պակասութիւնն էր։

Պատրաստի ռազմամթերք։— *Զինուորական վարժարանի պատրաստի հրացաններէն եւ ուրիշ ռազմական առարկաներէն զատ, անցեալ տարուան մէջ ընկեր Անդրանիկի ձեռքով՝ գնուած է 560 քլ. 60·000 հատ դատարկ փամփուշտ՝ 870 ֆրանք արժողութեամբ, 4 հատ փամփուշտի մեքենաներ, իրենց ամբողջ կազմըւածքով, 1000–1200 ֆրանք արժողութեամբ։ Ասոնցմէ զատ մեր շրջանին մէջ պահուած են Պոլսոյ մահափորձի առենէն մնացած բաւականաչափ պայթուցիկ նիւթեր, Արեւմտեան Բիւրոյի կողմէ գնուած 300 քիլօ մելինիթ՝ որ պահուած է Սոֆիայի մէջ, ինչպէս նաեւ Արեւելեան Բիւրոյի համար եւ Արեւմտեանի յանձնարարութեամբ գնուած 8000 ֆրանքի էլեկտրական բարդեր եւայլն, որոնց մէկ մասը Սոֆիա կը մնայ, մէկ մասն ալ Ռուսճուք։*

Ցարաբերութիւն Երկրի հետ։— *Պալքանեան Շրջանը, սկիզբէն մինչեւ հիմա, իբրեւ Երկրի զանազան կէտերուն դրացի վայր, այս ու այն առիթներով ունեցած է իր յարաբերութիւնները։ Պոլսոյ վերջին մահափորձին առեն՝ ունեցաւ նշանակելի դեր մը։ Իսկ այս վերջին տարուան մէջ, Կեդր. Կոմիտէն ուղղակի եւ պաշտօնական հողի վրայ յարաբերութեան մտած է Պոլսոյ եւ Ոսկեհանքի տեղական կոմիտէներուն հետ եւ անոնց նիւթական կամ բարոյական պէտքերուն բաւարարութիւն տուած՝ իր կարողութեան սահմաններուն մէջ։ Վիշապի եւ Ոսկեհանքի տեղեկագրերը, որոնք մեղի ղրկուած են, կը ներկայացնենք ժողովիդ*(3)։

Ոսկեհանքը, ինչպէս կը տեղեկանանք իրենց նամակներէն, իր կողմէ պատգամաւոր ընտրած է ընկեր Անդրանիկը(4)*, որ դուցէ ցարդ մեկնած ըլլալու է Եգիպտոսէն։*

Ցարաբերութիւն հաստատած ենք նաեւ Սամսոնի, Կելիկիոյ եւ Գէյրութի հետ։ Ջանքեր կ'ըլլան մասնաւորապէս Սամսոնի մէջ հաստատուն կազմակերպութիւն մը յառաջացնելու, ապագայ յայտնի եւ հոյակապ ծրագրի մը գործադրութեան համար, որուն մասին արդէն ընկեր Անդրանիկ եւ Զարդարեան բերանացի եւ մանրամասն կը խօսին։

Այս միջոցին, Կելիկիոյ մեր յարաբերուած ընկերներն ալ իրենց տեղեկագիրը պատրաստելու վրայ են, զոր ստանալնուս արդէն կը ղրկենք։

Ջանացած ենք կարելի եղածին չափ «Դրօշակ» եւ «Ռազմիկ» ներմուծել Երկրի այդ կէտերուն մէջ։ Պահանջ կ'ըլլայ նաեւ Դաշնակցութեան հրատարակութիւններն ալ ունենալու, որոնցմէ պիտի ղրկենք բաւականաչափ քանակութեամբ՝ յառաջիկային։

Պարբերաբար, Պոլսոյ եւ Իզմիրի բանտարկեալներուն նպաստներ ղրկած ենք, որոնց քանակութիւնը պիտի տեսնուի մեր հաշուեկշիռէն։

Կէտ մը՝ որուն վրայ կը հրաւիրենք ժողովիդ ուշադրութիւնը, այդ ալ յիշեալ վայրերուն մեր ընելիք տարեկան վճարումներու քանակութեան եւ պարագաներու ճշդումն է, պատասխանատուութիւններն ու պարտականութիւնները փոխադարձ եւ որոշապէս ըմբռնելու համար։

Երկիր ղրկուած ուժեր։— *Անցեալ մէկ–երկու տարուան մէջ, մեր շրջանէն մեկնած են Երկիր երթալու համար՝ 7–8 ընկերներ, սորվելով հոս հարկ եղած մասնագիտութիւնները։ Այդ ընկերներէն ոմանք այժմ Կովկաս կը գտնուին, ոմանք անցած են Պարսկաստան կամ Երկիր, որոնց ամէնն ալ իրենց յայտնի տեղերը գրաւած են գործի ասպարէզին մէջ։*

Այսօր Պալքանեան Շրջանէն կարելի է հաւաքել, եթէ հարկ ըլլայ, 80–100ի չափ քիչ թէ շատ կռուելու ընդունակ եւ զոհուելու պատրաստ երիտասարդութիւն մը։ Իսկ առանձնապէս Երկիր անցնելու համար՝ հարց դրուած է Արտակարգ Պատգ. Ժողովին հետեւեալ ընկերներուն համար, որպէսզի ներկայացնենք ժողովիդ ուշադրութեան։—

Ռուսճուքէն՝ Մանուկ Գուլազոզեան (ուսուցիչ), Օր. Զապէլ Պալճեան (ուսուցչուհի). Շումլայէն՝ Նիկոլ Գալէնուէրեան (ուսուցիչ). Ֆիլիպէն՝ Բ. Զօրեան՝ Մեծ Հայքի համար (Կեդր. Կոմիտէի ընկեր), Սեդրակ Թոխաճեան, Օր. Գերճուհի Պարտիզեան եւ Թագուհի Արապեան (ուսուցչուհի)(5)։

Պարագայ մը, որուն վրայէն չենք ուզեր լուռ անցնիլ։

Պալքանեան Շրջանէն ղրկուած ուժերը, բոլորն ալ, Հայաստան անցնելու նպատակով ճամբայ ելած են եւ այդ նպատակով ալ կազմակերպութիւնը անոնց վրայ ծախքեր ըրած է, մինչդեռ անոնցմէ մաս մը մինչեւ հիմա Կովկասի մէջ վար կը դրուին ենթականերուն կամքին հակառակ։ Ուստի կը պահանջենք որ, թէ՛ մեր շրջանին ղրկուած նախկին ուժերու եւ թէ վերոյիշեալներու մասին — եթէ ընդունուի անոնց Երկիր մտնելու առաջարկը — որոշ կարգադրութիւն մը ըլլայ իրենց նպատակակէտին հասնելու համար։ Այս զանցառութիւնները նոյնիսկ պէտքը կը զգացնեն, որ պահանջին չափով որոշ թիւ մը սահմանուի, Կեդր.

Կոմիտէն ալ ըստ այնմ վարուելու եւ ըստ այնմ պատասխանելու համար եղած դիմումներուն։

Կազմակերպութեան արդի ներքին վիճակին մասին։— *Շրջանական ժողովի այդ առթիւ տուած որոշումները, որոնք մեր ալ կարծիքներն են, արդէն կուգան հաստատելու մեր շրջանի հայեացքները, որ ո՛րեւէ ճիւղաւորում չունի եւ ընդհանուրինն է։ Պահանջելով անոնց ամէն մէկ կէտերուն լուրջ նկատառութիւնը, աւելորդ կը սեպենք մեր կողմէ որեւէ մանրամասնութիւն։ Ընկեր պատգամաւորներու ուշադրութիւնը կ'ուզենք կեդրոնացած տեսնել գլխաւորապէս այն կէտին վրայ, որ հրապարակ ելած հարցերն ու սկզբունքները իրենց էութեամբ ա՛յնքան փափուկ են եւ կազմակերպութեան ուղղութեան, ոգիին ու նպատակին վրայ ծանրօրէն ներգործելու տեսակէտէն ա՛յնքան մտահոգիչ, որ կարեւոր է կարծիքները համերաշխեցնել եւ որոշումները տալ ձայնի բացարձակ միաձայնութեամբ, եթէ չենք ուզեր որ կազմակերպութեան ապագան վտանգենք եւ Հայ Յեղափոխութեան համար դժբախտ դրութիւն մը ստեղծենք։ Յետոյ, կը պահանջենք, որ սկզբունքային հարցերու շուրջ տրուած որոշումները հրապարակուին «Դրօշակ»ի մէջ, իւրաքանչիւր մարմին կամ անհատ ընկեր իր դիրքը կարենալ ճշդելու համար։*

Ընկերական բարեւներով՝
Հ. Յ. Դ. ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ
(Կնիք)

---

(1) Կը գործածուէր երբեմն, գործածուած է նաեւ այստեղ՝ «*Շրջանային ժողով*»*ի* իմաստով. այլ առիթներով՝ փոխարինած է նաեւ *Բայոնական* բառը (բանի մը Կ. Կոմիտէներու ներկայացուցիչներու հաւաքական ժողով)։

(2) Փաստաթուղթեր։

(3) Իզմիրի (Ոսկեհանք) տեղեկագիրը կը տրուի առանձին. դժբախտաբար, սակայն, վիշապէն (Պոլիս) ոչինչ կը գտնենք 4րդ Ընդհանուր Ժողովի թղթածրարներուն մէջ (բացի, անշուշտ, Ցուցակեան Մարմնի ճոխ թղթածրարէն)։

(4) Իզմիրի Անդրանիկը չշփոթել Սասնոյ հայդուկապետին հետ, որուն մասին բազմիցս խօսուած է նաեւ ներկայ տեղեկագրին մէջ։

(5) Կրնայ ըլլալ նաեւ Պապեան կամ Սրապեան։

2.— ԿԻՍԱՄԵԱՑ ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ. Յ. Դ. ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻ 1907 Յունուարէն–Օգոստոս

Նամակի մեծ չափի 13 զոյգ թերթերէ կարուած տետրակ. տեղեկագիրը կը գրաւէ 23 թերթ, գրուած՝ մէկական երես. սեւ խրմոքատիպ։

Ստորագրութիւն՝ «Հ. Յ. Դ. Պալքանեան Կեդրոնական Կոմիտէ» եւ Կնիք։

Թղթածրարին մէջ գտնուած օրինակի ա. էջին վրայ սեւ մելանով մակագրուած է «Հ. Յ. Դ. Արեւմտ. Պիւրոյին», եւ կարմիր մատիտով՝ «Մտ. 27 Սեպտ. 1907»։ Բովանդակութենէն կը հետեւցուի, որ տեղեկագիր–շրջաբերականը ուղղուած է Պալքանեան Կեդր. Կոմիտէութեան բոլոր խումբերուն։

Ընկերնե՛ր,

Կազմակերպական գործերու բաւական բարդ եւ արտակարգ պարագաներով շրջապատուած շրջանի մը սիլիքն էր որ Կեդր. Կոմիտէս պարտականութեան դըլուխ կը կանչուէր։

Մէկ կողմէ Զինուորական վարժարանը, հազիւ իր սկզբնաւորութեանը մէջ, դեռ ուղղակի ենթարկուած չէր Կեդր. Կոմիտէիս քննիչին, քանի որ մինչեւ այն առեն նախապէս ընտրուած Գործադիր Յանձնախումբին ուղղակի տնօրինութեան եւ հսկողութեան տակ էր, միւս կողմէ Ընդհանուր Ժողովի բացումը հարկադրական կը դարձնէր պատրաստել շրջանի երեք տարուան տեղեկագիրը՝ որոնց մասին, դժբախտաբար, նախորդ Կեդր. Կոմիտէի կողմէ ոչ մէկ նախապատրաստութիւն տեսնուած էր։

Այս ծանրագրաւ օրերուն՝ աւելորդ մտահոգութիւն մըն ալ Ֆիլիպէի կարդ մը ընկերներու շրջանակին մէջ արհեստականօրէն արծարծուած անհարկի խնդիրները կը կազմէին, արդիւնք՝ վերջին Շրջանական Ժողովին մէջ պարզուած իրողութեանց, որոնք մուք թէ յայտնի ճամբաներով ծառայեցին միմիայն մաս մը ընկերներու բարոյական տրամադրութիւնը թուլցնելու եւ կազմակերպութեան հմայքին դպչելու։

Ահա՛ այս բացառիկ բոպէներուն էր նաեւ, որ ընկեր Զարդարեան կը մեկնէր Վիեննա՝ մասնակցելու Ընդհանուր Ժողովին, ընկեր Մարտիկ Զինուորական վարժարանի վայրը՝ անձամբ յանձանձելու կարգ մը բարոյական եւ նիւթական անյետաձգելի գործեր, իսկ ընկեր Ալաճաճեան կը ներկայացնէր իր հրաժարականը՝ որը պատճառաբանող հանգամանքներուն վրայ չենք ուզեր հոս ծանրանալ այժմ։

Հետեւաբար՝ ամբողջ շրջանի գործերուն կեդրոնական ծանրութիւնը ինկած էր երկու ընկերներու վրայ, որոնք ստիպուած էին օրուան ընթացիկ բազմաթիւ գործերուն ընթացք տալ եւ միւս կողմէն ծանրակշիռ հարցերու մասին ալ տեւականապէս բացակայ եղող երկու ընկերներուն խորհրդակցութեանը դիմել, ինչ որ, բնականաբար, նոր ծանրութիւն մը եւ աւելորդ աշխատանք կը բարդէր՝ արդէն առանց անոր ալ կեդր. Կոմիտէի չափազանց խճողուած պարապմունքներուն վրայ։

Կեդր. Կոմիտէիս կազմը ամբողջացնելու համար՝ առաջին օրէն իսկ շրջանին ներկայացուցինք, ներքին կանոնագրի տրամադրութեան համաձայն, երկու ընտրելիներու անուններ, սպասելով անհամբեր քուէներու հաւաքական արդիւնքին։ Ցաւ է ըսել, որ մեր շրջա-

նի մարմիններէն մեծագոյն մասը, յաճախ ա՛յնքան բծախնդիր իրենց իրաւունքներուն նկատմամբ, անհասկնալի դանդաղութեամբ մը ամիսներով յետաձգեցին իրենց քուէի առաքումը, որով կրկին ու կրկին մեր թախանձանքներէն ետք, հաղիւ կարելի եղաւ Ցունիսի 1ին կազմին որոշեալ թիւը լրացնել:

Ինչպէս յայտնի է, Արտակարգ Շրջանական Ժողովը, նկատի ունենալով այս տարեշրջանի մանաւորապէս բացառիկ զբաղմանց եւ Կեդր. Կոմիտէի վրայ իր կողմէ դրուած խստապահանջ պարտաւորութեանց բնութիւնը, որոշած էր Կեդր. Կոմիտէի կազմին մէջ ունենալ վճարովի քարտուղար մը: Այդ պաշտօնը նոյն ինքն Շրջանական Ժողովի թախանձագին ստիպումովը յանձն առաւ ընկեր Մարտիկ: Սակայն իրերու բռնադատութեամբն իսկ, ընկեր Մարտիկ գրեթէ իր բոլոր ժամանակը յատկացուց Զինուորական վարժարանի գրաղմանց եւ նշանակուած քարտուղարութիւնը իրապէս գոյութիւն չունեցաւ: Զնայելով սակայն որ ադատ քարտուղարի մը պէտքը անյետաձգելի պահանջ էր, Կեդր. Կոմիտէն, նկատի առնելով Ֆիլիպէի այլեւայլ ընկերական շարքերու կողմէ հոս-հոն խծծանքի եւ անհամեստ քննադատութեան վերաւորիչ հանդամանքը՝ ընկեր Մարտիկի անհատական արժանապատուութեան մասին, նոյն ընկերոջ իսկ թախանձանքով՝ բռնադատուեցաւ ադատ թողուլ զայն իրեն համար անձնական գրաղում մը գտնելու, եւ Զինուորական վարժարանի անհրաժեշտութեանց համար ընկեր Զօրեանը դրկել վարժարանի վայրը, կեդրոնի գրաղումները կըրկին ծանրացնելով մէկ-երկու ընկերներու ուսին վրայ: Արդէն շրջաբերականով իր ատենին ծանուցած ենք, թէ Մայիս 15էն սկսեալ ընկեր Մարտիկ դադրելով որեւէ նիւթական վարձատրութիւն ստանալէ կազմակերպութենէն՝ ունեցած էր իր առանձին գրաղումը, որը իր էութեամբը կու գար, ակամայ, բոլորովին չէզոքացնել ընկեր Մարտիկի գործունէութեան օգտակարութեան չափը, այնպէս որ վերջին օրերուն՝ ընկեր Մարտիկ արդէն կը պարտաւորուէր հեռանալ նոյնիսկ քաղաքէն:

Այժմ Կեդր. Կոմիտէն գործերը կը վարէ չորս ընկերներու թուական կազմով: Մենք, նկատի ունենալով անցեալի փորձը, տեղական ուժերու սակաւութիւնը, շրջանի կարդ մը մարմիններու կողմէ արտայայտուած իրաւացի դիտողութիւնները՝ հեռուէն հեռու ներկայացուած թեկնածուի մը համար ձայն տալու իրենց դժուարութեան առթիւ, վարանեցանք նոր թեկնածուներ առաջարկելու մեր պակաս մնացած ընկերոջ տեղը՝ շրջանի կիսուն: Ի հարկէ, ասով հանդերձ, գոհութեամբ պիտի լսենք շրջանի մեր մարմիններուն այս մասին յայտնած կարծիքները՝ ըստ այնմ վարուելու համար:

Հակառակ բոլոր այն աննպաստ հանդամանքներուն զորս դիմաւորեցինք գործի մեր առաջին օրէն եւ որոնց ակնարկեցինք վերեւ ընդհանուր գծերով, այս նախընթաց վեցամսեայի մէջ Կեդր. Կոմիտէն ամէն ջանք չխնայեց՝ զոհացում տալու շրջանի մարմիններու կողմէ օրը օրին ներկայացուած նիւթական եւ բարոյական պահանջներուն, աշխատեցաւ կանոնաւորապէս վարել արտաքին թէ ներքին թղթակցութիւններն ու յարաբերութիւնները, երեք ընկերներու — Ս. Աբրահամեան, Մուրատ եւ Սեպուհ — պարտականութիւն յանձնեց այցելելու շրջանի այլեւայլ վայրերը՝ Պուլկարիա եւ Ռումանիա, ուշադրութեամբ հետեւեցաւ շրջանի բարոյական վիճակին, ունեցաւ ամէն մէկ-երկու շաբաթն անդամ մը անխախտ պաշտօնական նիստերէ դատ՝ նաեւ գրեթէ իւրաքանչիւր շաբթուայ ընթացքին մէջ ալ մէկ քանի խորհրդակցական հաւաքումներ, ամէն կարելի աշխատութիւն չխնայեց շրջանը պահելու համար իր կուսակցական բարձրութեան վրայ եւ կարդապահութեան մէջ:

Իսկ ինչ կը վերաբերի այս շրջանի նիւթական հասոյթին, ուրախ ենք հաստատելու՝ որ՝ վեցամսեայ կազմակերպական մեր ընդհանուր հասոյթը, ինչպէս պիտի տեսնուի մեր յետագայ ամփոփ հաշուեկշիռէն, եղած է բաւական զոհացուցիչ, — ինչ որ գրաւական մըն է, թէ մեր մարմիններու հոգատարութեամբն ու տեւական փութաջանութեամբը, յառաջիկայ ամիսները պիտի ըլլան աւելի բեղմնաւոր եւ յառաջիկայ Շրջանական Ժողովին պիտի փակենք համեմատաբար արդիւնալից տարի մը:

907 Ցունուարէն մինչեւ Օգոստոս 1, 7 ամսուան միջոց մը կ՚ընդգրկէ. այդ 7 ամսուան մէջ Կեդրոնական Կոմիտէն ունեցած է՝

Մուտք

Նախորդ շրջանէն անտուկը պատրաստ	5·220,—
Նախորդ շրջանի հաշուոյն դանձելի դումար	1·577,20
Շրջանի մարմիններէն ստացուած	22·382,75
Նախորդ շրջանի փոխատուութենէն	
Ամերիկայի Կեդր. Կոմիտէէն	1·000,—
Եգիպտոսի մարմնէն՝ դանդաղներու համար	525,75
Ամերիկայի Կեդր. Կոմիտէէն	
Զինուորական վարժարանի համար	16·749,90
Արեւմտեան Բիւրոյէն	
Զինուորական վարժարանի համար	16·000,—
Զին. վարժարանի ծախուած դոյքերէն	2·108,—
Նախորդ շրջանի փոխատուութենէն	
դանձուած	80,—
Զանդաններու հաշուին եկած դումարներ	1·799,30
դումար՝	67·442,90

Ելք

Զին. վարժարանին եւ արհեստանոցին	47·022,25
Բանտարկեալներու ուղարկուած	627,50
Արեւմտեան Բիւրոյի հաշուին տրուած	3·213,90
Ամերիկայի Կեդր. Կոմիտէի հաշուոյն տրուած	1·286,65
Եգիպտոսի մարմնոյ հաշուին	675,—
Զանդաններու հաշուին տրուած	2·621,30
Պայթուցիկ նիւթերու եւ գործիքներու	446,95
Գնուած դոյքեր	426,—
Ֆիլիպէի կոմիտէի երեք բաժն. արժէք Ռգ.ի	60,—
Զանդան հանդամանքի դուրս	
չնախատեսուած եւ արտակարգ ծախքեր	640,—
Տեղ. ծախք — քարտուղարի, դիւանական,	
դրաւոր թէ բերանացի փրոփականտի	3·088,20
Գուլկար. Ազդ. պանքան պատրաստ	5·000,—
Կեդր. Կոմիտէի արկղը պատրաստ	757,95
Գանձելի դումար	
նախորդ շրջանի հաշուոյն	1·577,20
դումար՝	67·442,90

Տեղական ծախքերու վերաբերմամբ առաջնորդուած ենք Ընդհանուր Ժողովի կողմէ այս մասին մշակուած կանոններու տրամադրութեանց և ցուցմունքներու սահմանով: Եւ արդէն, ծախքերու քանակն ալ համեմատելով հասոյթի դումարին՝ Ընդհանուր Ժողովի դիւանին կողմէ ցոյց տրուած սակին հաղիւ $^3/_4$ին կը հաւասարի:

Զինուորական վարժարան.— Այս հաստատութեան նիւթական եւ բարոյական գործառնութեանց առանձին ընդարձակ տեղեկագիրը թէեւ պիտի ներկայացուի մեր բարձրագոյն մարմիններուն, ինչպէս նաեւ յառաջիկայ Շրջանական Ժողովին, բայց աւելորդ չենք նկատեր հոս եւս տալ ընդհանուր ծանօթութիւն մը՝ անոր արդիւնքին եւ փակման պարագաներուն վրայ:

Բնականաբար վարժարանը իբրեւ նախափորձ մը՝ մեր ամբողջ կազմակերպական պատմութեանը ընթացքին մէջ, պիտի ունենար ամէն առաջին ձեռնարկի համար անրաժան եւ անխուսափելի եղող թերութիւններն ու երեւոյթները. այսպէս, օրինակի համար, նախագծուած պիտակէն վարժարանի ընթացքի կիսուն իսկ անբաւական յայտնուեցաւ, Բաշխիչը չարաչար գործածեց իրեն յանձնուած վստահութիւնն ու զեղծանեցաւ, կամքէ անկախ պատճառներով՝ վարժարանը մէկ վայրէն ուրիշ վայր մը տեղափոխուելու հարկադրուեցաւ. փակման պահուն քանի մը օրուան մէջ չէնքը ամբողջովին պարպելու մեր ստիպողական հարկադրութիւնը, աշակերտ-ընկերներու այլազան խառնուրդն ու աւելի շատ՝ հապճեպ ընտրութիւնները եւ այս իսկ պատճառով ծնունդ առած ու վարժարանին մէջ պարբերաբար կրկնուող ներքին անհաճոյ երեւոյթները եւայլն: Սակայն եւ այնպէս՝ վարժարանի արդիւնքը գոհացուցիչ եղաւ: Աշակերտ-ընկերները զինուորական վարժութեանց, նշանառութեանց եւ տեսական ու գործնական դասերու մէջ ա՛յնքան յաջողութիւն ցոյց տրուած են, որ նոյնիսկ արժանացած են բարձրաստիճան զինուորականներու հիացման: Աշակերտներու կարողութիւնը երեք աստիճան կը ներկայացնէ — մաս մը խմբապետներ են՝ կարող խումբեր վարելու, մաս մը՝ խմբապետի օգնականներ, մաս մըն ալ վարժ ու վստահելի զինուորներ: Ընդհանուր Ժողովի կողմէ նշանակուած երկու ընկերներու, ուսուցիչ պ. Քս. Ք. Պ. Պ. ի և Կեդր. Կոմիտէին խորհրդակցութեամբ՝ որոշուեցաւ Ցունիս 15-Ցուլիս 1ին ցրուել աշակերտները իրենց վայրերը — բացառութեամբ մէկ քանիներու, մինչեւ որ կազմակերպութիւնը յառաջիկային զիրենք հրաւիրէ որոշ պարտականութեանց դլուխ:

Ցայտնի է մեր շրջանի շատ մը մարմիններուն, թէ աշակերտներու ցրուումը ի՛նչքան դժուար պայմաններու տակ կատարուեցաւ, քանի որ մօտաւորապէս 40-50 ընկերներու փոխադրութեան եւ անցագրի հարցերը ինքնին բաւականէն շատ աւելի մտահոգիչ հարցեր էին: Սակայն Կեդր. Կոմիտէն կանխապէս հարկ եղած բոլոր միջոցներուն դիմեց եւ նախազգուշութիւններ ձեռք առաւ այս ամէնը կանոնաւորութեամբ իրենց վախճանին հասցնելու: Այս առթիւ պարտք կը սեպենք մեր գոհունակութիւնը յայտնել Վառնայի, ինչպէս նաեւ Ֆիլիպէի կոմիտէներուն՝ որոնք մեծապէս օժանդակեցին այս գործին մէջ:

Հարկ է աւելցնել թէ՝ եթէ երբեք վերջին պահուն պատահեցան կարդ մը ձերբակալութիւններ եւ կառավարական հետապնդումներ՝ ասոնք մեր կամքէն անկախ պատճառներու արդիւնք էին, որոնց մէջ անշուշտ կարեւոր տեղ մը կը բռնէր նաեւ Ֆիլիպէի մասնաւոր վարժարանին մէջ բռնուած ռումբերու խնդիրը: Այս պահուս արդէն աշակերտ ընկերներու մեծագոյն մասը ցրուած են իրենց վայրերը, իսկ մնացածներն ալ տեղաւորուած՝ Պուլկարիոյ եւ Ռումանիոյ մէջ:

Շրջանի ընդհանուր վիճակը

Հիմնուելով մեր թղթակցութեանց, ինչպէս նաեւ ընկերներ Սաղոյի եւ Սեպուհի տեղեկագրութեանց ու նամակներուն վրայ՝ շրջանի ընդհանուր վիճակը այս կիսամեայի մէջ կարող ենք ներկայացնել հետեւեալ կերպով.—

Ֆիլիպէ.— Իր ատենին ընտրուած է նոր մարմինը՝ որ համերաշխաբար տարած է իր պարտականութիւնը: Թէեւ տարեշրջանին սկիզբը — շրջաբերակա-

նիս առաջին մասին մէջ ակնարկուած պատճառներով — տեղական ընկերներէն մէկ մասին մէջ առաջ եկան անհասկացողութիւններ եւ անոնց հետեւանքով մըտքերու վրդովում եւ տրամադրութեանց թուլութիւններ, բայց հետզհետէ յարաբերութեանց ձգտումը տեղի տուաւ եւ այժմ մտքերը խաղաղ տրամադրութեան մէջ են։ Անշուշտ կացութիւնը աւելի բարւոք վիճակ մը պիտի ունենար համեմատաբար՝ եթէ մինչեւ հիմա տեղական կոմիտէն յաջողած ըլլար գտնել հաւաքատեղի մը եւ ունենար ընկերական ընդհանուր հաւաքոյթներ, լսարաններ եւն.։

Սոֆիա։— *Կատարուած է մարմնի նոր ընտրութիւն՝ ընկեր Սագոյի ներկայութեամբ, սակայն ցաւ է ըսել, որ կազմակերպական ընդհանուր գործերը ծանրացած են մէկ-երկու ընկերոջ վրայ, — բան մը՝ որ կը կազմալուծէ թէ՛ ենթակոմիտէի բարոյական կորովը եւ թէ բոլոր խումբերու։ Այս է պատճառը, որ տեղի չեն ունեցած ո՛չ խմբական կանոնաւոր ժողովներ, ո՛չ ընկերական ընդհանուր հաւաքոյթներ, եւ նոյնիսկ գոյութիւն ունեցող ընթերցարան մը՝ անխընամ վիճակի մէջ՝ կազմալուծման դատապարտուեցաւ։ Այս դրութիւնը անդրադարձած է նաեւ կազմակերպական նիւթական հասոյթին վրայ ալ։*

Ռուսճուք։— *Կատարուած է մարմնի նոր ընտրութիւն։ Ընդհանուր ժողովի փակումէն անմիջապէս ետքը՝ կարգ մը անձեր ջանացին մասնաւոր դիտումներով եւ զուտ եսական նկատումներով մուք փրոփականտա մը մղել ընկերական շարքերուն մէջ՝ ընդդէմ կազմակերպութեան եւ անոր շահերուն՝ յաջողելով նոյնիսկ մասամբ վրդովել ընկերներու մտքերը, բայց Կեդր. Կոմիտէն անմիջապէս կրցաւ հարկ եղած բոլոր միջոցները ձեռք առնել՝ լուսաբանելու համար իրողութիւնները եւ պարզելով ընկերներուն՝ ճշմարտութիւնը։ Գոհ ենք ըսելու՝ որ շարքերը կրցան անմիջապէս անդրադառնալ ողջախոհութեան եւ իրենց գատողութեան ու կազմակերպական գործերուն տուին խոհական ընթացք մը։ Համախորհուրդ՝ տեղւոյն խմբապետական ժողովը, կոմիտէն եւ ընկերները հեռացուցին տեղական կազմակերպական շարքերէն 3–4 նախկին ընկերներ, որոնք իրենց բռնած անտեղի դիրքով տեղական շարքերը կը փորձէին խլրտել։ Նախորդ տարեշրջանէն ուակախ մնացած հանգանակութիւնը կատարուեցաւ, թէեւ նիւթապէս ոչ այնքան բաղձալի արդիւնքով մը։*

Վառնա։— *Նախորդ տարուայ դժգոհ խումբերը եւ դատապարտուածները, տարուան սկիզբը չուզելով ենթարկուիլ Շրջանական Ժողովի որոշումներուն, փորձեցին մշանջենաւորել նախորդ տարուայ դրութիւնը, բայց Կեդր. Կոմիտէն եւ տեղւոյն մարմինը հարկ եղած կանխական միջոցները ձեռք առին՝ երկար ատենէ ի վեր բաղձացուած կարգապահա-կազմակերպական վիճակը փութացնելով. այնպէս որ դատապարտուած խումբերը շատոնց արդէն մտած կազմակերպութեան շարքերուն մէջ, անհամերաշխութեան բոլոր պատճառները հարթուած, Վառնան կը ներկայացնէ այս պահուս շրջանի համեմատաբար գործօն եւ կենդանի մարմիններէն մէկը։ Նկատողութեան անհրաժեշտ պարագայ մըն է սակայն, որ Վառնան, երկու տարիէ ի վեր, ունեցած չէ ընդհանուր հանդանակութեան մէջ իր մասնակցութիւնը։ Վառնան ցարդ մեզի չէ իմացուցած թէ ի՛նչ յարաբերական վերաբերութիւն կը պահէ Շումլայի հետ, քանի որ ըստ Շրջանական Ժողովի որոշման՝ Շումլան ենթարկուած է Վառնայի կոմիտէի իրաւասութեան եւ Կեդր. Կոմիտէս մէկէ աւելի անգամ յիշեցուցած է այս կէտը։*

Պուրկազ։— *Զնայած ինտելիգենտ ուժերու սակաւութեան, ընկերները եղած են միշտ տաք՝ դէպի գործը եւ յօժարակամ։ Այս կիսամեայի մէջ ցոյց տուած են որոշ ոգեւորութիւն, ունենալով առանձին կազմակերպական ընթերցարան-սրճարան մը։ Ընկերներու նախաձեռնութեամբ կազմուած է «Թուցիկ խումբ» մը, հսկելու համար ընկերներու բարոյական կենցաղին վրայ։ Ունեցած են իրենց կանոնաւոր ժողովներն ու հաւաքոյթները։ Հոս ալ դիտելի է, որ երկու-երեք տարիէ ի վեր ընդհանուր հանգանակութիւն տեղի չունենար։*

Սլիվէն։— *Նոր մարմինը ընտրուած է, բայց դժբախտաբար այս շրջանի մասին ընկեր Արարատեանի տուած տեղեկութիւնները մխիթարական ըլլալէ հեռու են շատ մը տեսակէտներով, որոնց մանրամասնութեանը հոս տեղը չէ։ Այս մասին արդէն Կեդր. Կոմիտէս հարկ եղած ուշադրութիւնը հրաւիրած է տեղւոյն մարմինին, որը կը յուսանք յառաջիկայ վեցամսեայի պիտի ունենայ աւելի շրջահայեաց եւ գոհացուցիչ հսկողութիւն։ Բնականաբար, Սլիվէնի ներկայ տիրող դրութեամբ, նոյն շրջանի մաս կազմող կայարաններու (կայաններո՞ւ) հայաստանցի խումբերն ալ մտահոգիչ կերպով մեր հոգածութեան առարկայ կը դառնան։ Սլիվէնի մէջ եւս, ոչ միայն մէկ քանի տարիէ ի վեր հանգանակութիւն չէ կատարուած, այլ մինչեւ անդամ զուտ կազմակերպական հասոյթէն եւս մաս մը գումար յատկացուած է տեղւոյն ընթերցատան, ծախսելէ ետք իրենց տեղական ծախսերու %5 իրաւունքը, ինչ որ հակառակ է Դաշնակցութեան թէ՛ ընդհանուր եւ թէ մեր շրջանի կանոնագրին։*

Պուրգէշ։— *Ցաւ է ըսել, թէ ներկայ տարեշրջանի սկիզբէն իսկ՝ Պուրգէշի ընկերական շրջանակին մէջ մուք հասանքներ եւ պատակաիչ տարբեր սողոսկեցան, որոնք, օգտուելով այս ու այն առիթներէն, չահագործեցին ընկերներու մէջ պատահած անձնական խնդիրներն ու թիւրիմացութիւնները, չահագործեցին մեր նախորդ Շրջանական Ժողովի եւ Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովի որոշումներն ու կարգադրութիւնները, յաջողելով պղտորել այսպէս մէկ քանի անտեղեակ բայց միամիտ ու բարի ընկերներու դիւրահաւատութիւնը։ Կեդր. Կոմիտէս իր ժամանակին փութաց դրկել հոն ընկեր Արարատեանը, որպէսզի, հիմնովին ծանօթանալով ծագած խնդիրներուն, խորհրդակցաբար Կեդր. Կոմիտէին՝ տնօրինէ հարկ եղածը։ Ընկեր Արարատեան, հազիւ մէկ-քանի օրուայ մէջ արդէն, ընդհանուր առմամբ ծանօթացած դրութեան՝ երբ յաջողելու վրայ էր վերջնապէս կարգադրութեան մը հասնելու, իրական յանցաւորները ճշդելու, յանկարծ խորհրդաւոր եւ մինչեւ հիմա անբացատրելի մնացած հանդամանքով մը ձերբակալուեցաւ ոստիկանութեան կողմէ ու քանի մը օր բանտարկուած մնալէ ետք՝ աքսորուեցաւ երկրէն դուրս։ Այս իրողութիւնը կու գար վեր հանելու սա պարզան թէ՝ Պուրգէշի մէջ կը ծանրանար բարոյական չափազանց ճնշիչ ու տխուր մթնոլորտ մը։ Անկէ ետք, իրերու կացութիւնը բնականաբար չարունակեց նոյնը մնալ, քանի որ Կեդր. Կոմիտէս անկարելիութեան մը առջեւ կը դտնուէր կըրկին ձեռնհաս ընկեր դրկելու հոն. որովհետեւ քիչ ատեն ետք ոստիկանութիւնը վարուեցաւ ընկեր Ռոստոմի հետ եւս այնպէս՝ ինչպէս վարուած էր ընկեր Արարատեանի հետ։*

Ուստի, մեզի կը մնար դիմել հարկեցուցիչ եւ միակ արմատական միջոցին, — գրել Պուրգէշի մարմնին եւ հաղորդել անոր միջոցով խռովարար ընկերներուն, որպէսզի կա՛մ ենթարկուին տեղական մարմնին բարոյական հսկողութեանը՝ յարգելով կազմակերպական օրինապահութիւնը եւ իրենց ըսելիքները վերապահելով յառաջիկայ Շրջանական Ժողովին, կամ՝ եթէ պիտի չարունակեն մնալ անկարգապահ եւ խռովարար իրենց դիրքին մէջ՝ միանգամ ընդմիշտ չէզոքանան եւ վտարուած համարուին մեր շարքերէն, մինչեւ յառաջիկայ Շրջանական Ժողովի տնօրինութիւնը։ Նոյն օրինազանցները անասաստ մնալով մեր օրինապահութեան հրաւէրին՝ ընկերական շարքերէն վտարուած համարուեցան։ Այս վտարուածները կը բաղկանան երեք խմբապետներէ եւ իրենց հետեւող մէկ քանի անձերէ։ Եթէ ընկերական այս տխուր կացութիւնը ստեղծուած չէլլար՝ ամէն յոյս ու ակնկալութիւն ունէինք որ, Պուրգէշը ներկայ շրջանին մէջ բեղմնաւոր ու դնահատելի գործունէութիւն մը պիտի ունենար. գէթ այնպէս յուսալ կու տային մեզի կարգ մը իրողութիւններ. այսպէս, օրինակի համար՝ Արտակարգ Շրջանական Ժողովէն անմիջապէս ետքն էր որ՝ Պուրգէշի մէջ կանանց ռուսարաթիւ խումբ մը կազմուեցաւ, ինչպէս նաեւ շրջականներն ալ կը կազմուէին նոր խումբեր։ Զենք դադրիր սակայն տակաւին ակնկալելէ, որ Պուրգէշը վերագտնելով հետզհետէ իր անդորրութիւնը, պիտի չարունակէ անյոգդոգդ կամքով արդարացնել այն յոյսերը՝ որ սկիզբէն կը ներշնչէր մեզի եւ որոնք գլուխ բերելու համար շատ բան չի պակսիր իրեն։

Քոնսթանցա։— *Նկատի ունենալով Ռումանիոյ մեր շրջանին անհրաժեշտութիւնները, պաշտօն յանձնած էինք ընկեր Սեպուհին՝ որ անձնապէս այցելէ Քոնսթանցա, Պրայլա, Կալաց եւ Սուլինա, ծանօթանալու ընկերական վիճակին, անձամբ բաւականութիւն տալու անոնց եւ հարկ եղածներն ալ տեղեկացնելու մեզի։ Դժբախտաբար ընկեր Սեպուհ, հակառակ իր կամքին, կարելիութիւն չունեցաւ այցելելու Քոնսթանցա։ Պէտք է ըսել որ, առհասարակ վերոյիշեալ այս շրջանները, ինչպէս նաեւ Քոնսթանցա, սկիզբէն ի վեր թոյլ կերպով թղթակցութիւն պահած են իրարու յաջորդող մեր բոլոր Կեդր. Կոմիտէներուն հետ։ Ցարաբերութեանց այս զրալի պակասը վերադրելու չէ անշուշտ ամբողջովին այդ շրջանի ընկերներու կազմակերպական թուլութեանը, բայց եւ այնպէս՝ փաստը այն է որ թղթակցութեանց այս սակաւութիւնը թէ՛ մէկ կողմէ մեզ անտեղեակ կը պահէ այդ շրջաններու օրուան կացութեան եւ թէ միւս կողմէն տեղական ընկերներու տրամադրութեան վառ մնալուն կը վնասէ։ Այսպէս է որ, օրինակի համար, վերջերս միայն կ'իմանանք Քոնսթանցայի մարմինէն՝ թէ տեղական խնդիրներ ունեցած են եղեր եւ իրենք իրենց մէջ կարգադրած, բայց առանց մեր կողմէն գիտնալու թէ՝ ի՞նչ խնդիրներ են ատոնք, ի՞նչ շարժառիթներէ ծագում առած եւ ի՞նչ լուծման յանգած. նոյն եղանակով է, որ կ'իմանանք նոյնպէս, թէ վերջին օրերս խուզարկութիւններ պատահած են ընկերներէն ոմանց տուները, առանց նոր մանրամասնութիւններ եւ լուսաբանութիւններ տալու։*

Այս վերջին պարագային վրայ մանաւանդ՝ մեր բոլոր մարմիններու ուշադրութիւնը կը հրաւիրենք, որպէսզի նմանօրինակ դէպքերու պարագային՝ փութան օրը օրին եւ ամբողջովին տեղեակ պահել Կեդր. Կոմիտէս։

Պրայլա։— *Այս շրջանը համեմատաբար գոհացուցիչ վիճակ մը ստացաւ ընկեր Սեպուհի այցելութենէն ետքը, որուն ներկայութեամբ ընտրուեցաւ տեղւոյն նոր մարմինը։ Տեղական գործերը, օրինակ սրճարան-ընթերցարանի մատակարարութիւն եւն., կանոնաւոր հսկողութեան տակ են։ Ընկեր Սեպուհի կարգադրութեամբ եւ տեղական ընկերներու համաձայնութեամբ չէզոքացուած է ընկեր մը՝ մինչեւ յառաջիկայ Շրջանական Ժողովը, ինչ որ մենք եւս հաստատած ենք։*

Կալաց.— *Հոս ալ այցելեց ընկեր Սեպուհ եւ տարակոյս չունինք, թէ իր այցելութիւնը ապարդիւն չեղաւ։ Ընկերները կը շարունակեն իրենց ուժերուն ներած չափով վարել տեղական գործերը, որոնց համար անշուշտ մտաւոր[ական] ընկերոջ մը ներկայութիւնը աւելի՛ օգտակար պիտի ըլլայ։ այս պատճառով կարգադրած ենք որ մօտ օրէն հոն տեղափոխուի յարմար ընկեր մը, որ իր սեփական գործովը զբաղելով հանդերձ, ջանայ գործօն կերպով մասնակցիլ տեղական կազմակերպութեան։ Սրճարանը ըստ առաջնոյն կը շարունակէ արդիւնաւորապէս տնտեսուիլ՝ յօգուտ կազմակերպութեան։*

Սուլինա.— *Ընկեր Սեպուհի տպաւորութիւնը այն եղած է, որ այս շրջանի կազմակերպութիւնը աննախանձելի վիճակ մը կը ներկայացնէ։ Ընկերներու մէջ անտեղի անհասկացողութիւններ եւ անհատական-կուսակցութիւններ(?) բոյն դրած են ժամանակներէ ի վեր, որոնք կը մնասեն ընդհանուր գործին։ Ուստի ընկեր Սեպուհ կ'առաջարկէր Սուլինայի կազմը լուծել եւ կրկին վերակազմել եւ կամ յատուկ ընկեր մը ղրկելով հոն՝ մէկ-երկու ամսուայ ընթացքին մէջ կացութիւնը հաստատ կռուանի մը վրայ դնել ու այնպէս հեռանալ։ Ուրախ ենք սակայն հաղորդելու, որ վերջին օրերս մեր ստացած մէկ նամակը կու գայ հաղորդելու, թէ այդ քաղաքի մեր ընկերները, պրն. Սեպուհի մեկնումէն ետք, անդրադառնալով իրենց ոչ-մխիթարական կացութեան, ընդհանուր ժողովի մը մէջ ուխտած են ամէն ինչ մոռնալ եւ, հաւատարիմ Դաշնակցութեան ծրագրին ու ոգւոյն, միացեալ ուժերով գործին փարիլ։ Տեղական խումբերը այս առաջադրութիւնով ալ արդէն մարմինը ընտրելու նախապատրաստութեան մէջ են։*

Ռումանիոյ *թէ՛ այս եւ թէ շրջակայ ուրիշ քաղաքներու մէջ գործիչի մը ներկայութիւնը թէեւ անհրաժեշտ է, բայց այժմ, ինչպէս ըսինք վերը, ի վիճակի չենք անմիջապէս ընկեր մը ղրկելու այդ կողմերը. սակայն պիտի աշխատինք յառաջիկային մէջ։ Միայն առայժմ կը բաւականանանք յորդորելով՝ ընկերները՝ որ իրենք իսկ իրենց սեփական ուժերով եւ սեփական պարտաճանաչութեամբ աշխատին բարելաւել եւ զարկ տալ իրենց կազմակերպական-ընկերային վիճակին։*

Ընդհանուր թելադրութիւններ շրջանի մասին

Ընկերնե՛ր, յեղափոխական կազմակերպութեան մը առաջին պարտաւորութիւնն է զինք շրջապատող պայմաններէն եւ միջավայրէն բարոյապէս բարձր կանգնիլ եւ այդ բարձրութենէն իսկ ներգործել հասարակութեան վրայ։

Պէտք չէ մոռնալ, թէ Դաշնակցութեան ճշմարիտ յաջողութիւններէն մէկը՝ ահա՛ այս ձգտումը եղած է սկիզբէն ի վեր։ Ուստի, աւելի՛ քան անհրաժեշտ է միշտ աչքի առջեւ ունենալ այս նպատակը եւ ամէն տեղ ու ամէն պարագայի տակ կեանքի մէջ զայն իրականացնելու հետամտիլ։

Յաճախ առիթը ունեցած ենք նկատելու, թէ այս ու այն շրջաններու մէջ աւելորդ վէճերու, վնասաբեր հակառակութեանց ու աղմուկներու կորիզը կազմած են բամբասանքներ, ընկերական յարգանքի փոխադարձ պակաս ու խծբծանքներ։ Թէ ո՛րքան այս կարգի մեղադրելի թերութիւնները վնասակար ու նկատելի եղած են շատ մը պատեհութիւններով՝ բաւական է յիշել որ նոյնիսկ մեր Շրջանական Ժողովները ուշադրութեան առած եւ անոնց մասին արգելիչ օրէնքներ սահմանած են։

Բաւական չէ անուանապէս մասնակցութիւն ունենալ կազմակերպութեան եւ կեանքի մէջ որեւէ գրական ու օրինակելի կերպով չարտայայտել զայն։ Ինչպէս ամէն կուսակցութեան, նոյնպէս եւ Դաշնակցութեան հետեւող ոեւէ ընկեր պարտաւոր է գործնականապէս ցոյց տալ եւ իր առօրեայ կեանքովն ու գործովը իրականացնել Դաշնակցութեան սկզբունքներն ու ձգտումները։

Ասոր համար ալ, անհրաժեշտ է որ ընկերները լուսաբանուին մեր ծրագրային հարցերու նկատմամբ եւ կատարեալ գիտակցութիւն ունենան։

Ուստի մարմիններուն, խմբապետներուն եւ առհասարակ բոլոր գիտակից ընկերներուն պարտականութիւնն է, այժմ աւելի՛ քան երբեք, հոգ տանիլ խմբական եւ ընկերական ժողովներու գումարման, ինչպէս նաեւ զանոնք հետաքրքիր եւ չինիչ դարձնելու անհրաժեշտութեան։

Ընթերցասիրութիւնը պէտք է տարածել բոլոր ուժով եւ ամէն միջոցներով, պարտաւորիչ դարձնելով որ ամէն ընկեր կարդայ յատկապէս Դաշնակցութեան ժրընեւի եւ Թիֆլիսի հրատարակութիւնները։ Գիտենք թէ մեր ընկերներէն շատերը զուցէ զուրկ են նախնական կրթութենէ եւ հետեւաբար ընթերցանութեան կարողութենէ. ուստի մեր մարմիններուն գլխաւոր եւ առաջին պարտականութիւններէն մէկը պիտի ըլլայ՝ կազմակերպել գիշերային կամ կիրակնօրեայ դասախօսութիւններ, լսարաններ, վիճաբանական ժողովներ եւայլն։

Ընթերցանութեան եւ ինքնազարգացման այս պակասին հետեւանքով է որ մեր շրջանի կազմակերպութեան մէջ առաւելապէս նշմարելի են որոշ թերութիւններ, — օրինակ՝ գիտակցութեան պակաս, կուսակցութեան սկզբունքներուն նկատմամբ տհասութիւն՝ ըմբռնողութեանց մէջ եւ, ըսենք նաեւ, կազմակերպութեան ընդհանուր զարգացումէն յետամնացութիւն։

Խմբապետներուն, ընթերցարաններուն եւ ընկերական ժողովներուն տալու է իրենց իսկական նպատակն ու արդիւնաւորութիւնը։ Մեր շարքերը ո՛չ թէ ըլլալու են զղացումով տարուած եւ զղացումով առաջնորդուած յեղափոխականներ, այլ իրենց կուսակցութեան նպատակին եւ սկզբունքներուն խորապէս ծանօթ եւ գիտակից հետեւողներ։ Ասոնց վրայ է որ կազմակերպութիւնը կարող պիտի ըլլայ միայն իր թէ՛ այսօրուան եւ թէ վաղուան յոյսերը դնել։

Կանոնական խնդիրներ.— *Ցայտնի է արդէն բոլոր ընկերներուն, թէ վերջին Ընդհանուր Ժողովին կողմէ գծուած կանոնագիրը, իր մէկ քանի գլխաւոր կէտերով, կը հարկադրէ մեզ փոփոխութեան ենթարկել կամ համաձայնեցնել անոր հետ՝ Պալքանեան Շրջանի ներքին կանոնագիրը։ Ուստի մարմիններու ուշադրութիւնը կը հրաւիրենք.*

ա.— *Կազմակերպական կանոններու 23րդ յօդուածին վրայ, որ անդամակցութեան պայմանները ցարդ մեր շրջանին մէջ ըմբռնուածէն եւ ընդունուածէն տարբեր եղանակով կ'ընդգծէ։ Նոր օրէնքին համաձայն, կազմակերպութեան իսկական անդամ պիտի նկատուին գործօն անդամները, որոնք ամբողջովին կ'ընդունին կուսակցութեան ծրագիրն ու թաքթիքը, կ'ենթարկուին կանոնագրին եւ «կը մասնակցին Դաշնակցութեան որեւէ կազմին եւ կը վճարեն իրենց հասոյթին % 2ը»։ Պարզ բացատրութեամբ, այն ընկերը որ ամսական 50 ֆր. եկամուտ ունի՝ 1 ֆր. ամսավճար պիտի ունենայ, 75 ֆր. առնողը՝ 1,50 ֆր., 100 ֆր. առնողը՝ 2 ֆր. եւայլն։ Գործօն անդամները միայն ձայնի իրաւունք պիտի ունենան։ Հետեւաբար առաջին առիթով իսկ խմբերը կազմակերպելու է այդ ուղղութեամբ։ Մարմինները առաջնորդուելու չեն խմբեր կամ անդամներ շատ ունենալու մտահոգութեամբ, այլ պէտք է որ որակը նկատի առնուի միշտ՝ քանակէն առաջ։ Օժանդակ անդամները, այսինքն անոնք՝ որոնք ժողովներու ներկայ չեն ըլլար, կամաւոր վճարումներ կ'ընեն, գործօն մասնակցութիւն չեն ստանձներ եւ յեղափոխական-կազմակերպական խնդիրներու ծանօթ չեն ու չեն հետաքրքրուիր, կարելի է կազմակերպել առանձին եւ կամ իւրաքանչիւր խումբի մէջ զետեղելով 3-4 ընկեր՝ առանց ձայնի իրաւունքի։ Այն խումբերը, որոնք իրենց թուական եւ օրինական հանգամանքովը չեն համապատասխաներ օրէնքին՝ հարկ է կազմալուծել եւ տեղաւորել անոնց անդամները ուրիշ խումբերու մէջ։ Այսպէս ոչ միայն օրինական տրամադրութիւնները յարգուած կ'ըլլան՝ այլեւ կազմակերպական շարքերը սեղմուած, խտացուած եւ ներդաշնակուած կ'ըլլան։*

Ենթակոմիտէի օրինական թիւը 35էն 50ի բարձրացած է, իսկ կոմիտէինը՝ 200ի։

Անդամակցութեան այս օրէնքի հիման վրայ ալ մօտ օրէն պիտի պատրաստենք եւ ցրուենք մարմիններուն՝ վիճակացոյցները, ինչպէս որ պարտականութիւն դրուած է կեդր. Կոմիտէներու վրայ Ընդհանուր Ժողովէն եւ մեր վրայ՝ Պալքանեան Շրջանական Ժողովէն, անոր կողմէ գծուած կանոնագրով։ Հետեւաբար, աւելորդ է կրկնելը, մինչեւ վիճակացոյցներուն առաքումը՝ խումբերը նոր օրէնքներու համաձայն վերակազմուած պէտք է ըլլան, որպէսզի մարմինները գիւրութիւն ունենան վիճակացոյցները լրացնելով մեզի վերադարձնելու շուտով։

Ամսավճարներու գանձումները պէտք է կանոնաւորութեամբ տեղի ունենան, ինչ որ չէ եղած ցարդ։ Աւելորդ չենք սեպեր մեր շրջանի ներքին կանոնագրութեան յօդուածներուն եւ կազմակերպական կանոններու 126, 132, 133 յօդուածներուն վրայ հրաւիրել մարմիններու, խումբերու եւ առհասարակ բոլոր ընկերներու ուշադրութիւնը՝ պահանջելով միաժամանակ անոնց ճշգրիտ գործադրութիւնը։

Կ'արժէ այս առթիւ յիշեցնել որ եռամսեաները իրենց ատենին ուղարկուին կեդր. Կոմիտէին՝ մանրամասն հաշուեկշիռով։

Մարտական խումբեր.— *Ինչպէս ասկէ առաջ առիթ ունեցած ենք թելադրելու, որ մեր բոլոր շրջաններուն մէջ, համաձայն վերջին Շրջանական Ժողովի մշակած կանոններուն, կազմակերպուին մարտական խումբեր, նոյնը կը կրկնենք այս անգամ։ Ծանօթ է արդէն, թէ մեր շրջանը յատկապէս այս նպատակին համար նիւթական եւ բարոյական ահագին զոհողութիւն յանձն առաւ՝ հաստատելով Զինուորական վարժարանը։ Այժմ պէտք է բոլոր ընկերները օգտուին այն մարզիչ ընկերներէն՝ որոնք բաշխած ենք կարեւոր շրջաններու մէջ, որպէսզի գործնական վարժութիւններով ու հրահանգներով տան անհրաժեշտ մարտական դաստիարակութիւնը։*

Վարժութեանց համար տրամադրելի ունինք կանոնաւոր հրացաններ՝ որոնցմէ պիտի ուղարկենք փափաքող մարմիններուն՝ պայմանով որ պատասխանատու ըլլան անոնց համար եւ խնամքով պահեն։

Նախապատրաստութիւն Շրջանական Ժողովի.— *Անհրաժեշտ նկատելով, որ ասկէ ետք մեր Շրջանական Ժողովներուն մէջ ծեծուելիք բոլոր հարցերը նախապէս ենթարկուին բոլոր Շրջաններու բոլո՛ր ընկերներու հաւաքական քննութեանը, ուսումնասիրութեանն ու վիճաբանութեանը, անհրաժեշտ դատելով որ մեր յառաջիկայ Շրջանական Ժողովները ըլլան աւելի՛ կանոնաւոր եւ աւելի՛ արդիւնաւոր, խորհեցանք նախա-*

պէս ձեռք առնել հետեւեալ նախապատրաստութիւնները.—

ա.— Իւրաքանչիւր շրջան (կոմիտէ կամ ենթակոմիտէ՝ իր խումբերու բոլոր ընկերներովը) պէտք է հետզհետէ հաւաքէ յառաջիկայ Շրջանական Ժողովին դրուելիք իր հարցերը եւ ղրկէ մեզի մինչեւ յառաջիկայ Յունուար 1 (մէկ).

ԾԱՆՕԹ.— Այս հարցերը կրնայ դնել կոմիտէն կամ ենթակոմիտէն, ինք իր կողմէն, խմբապետական ժողովը՝ ինք իր կողմէն, խումբերը՝ իրենց կողմէն, անհատ ընկերը՝ իր կողմէն եւ ընկերական ընդհանուր ժողովները՝ իրենք հաւաքաբար:

բ.— Այդ հարցերը կեդր. Կոմիտէն դասաւորութեան ենթարկելով՝ կը պատրաստէ Շրջանական Ժողովին ընդհանուր օրակարգը եւ նոյն օրակարգին օրինակները կը ցրուէ մինչեւ Փետրուարի սկիզբը անգամ մը՝ ալ բոլոր շրջաններուն, որպէսզի իւրաքանչիւր շրջան գիտնայ եւ երկու ամսուան ժամանակ ունենայ վիճաբանութեան ենթարկելու Շրջանական Ժողովին նիւթ կազմելիք ո՛չ միայն իր շրջանի սեփական հարցերը, այլ ամբողջ շրջանին հարցերը: Այսպէս՝ Շրջանական Ժողովի եկող ամէն պատգամաւոր արդէն ամբողջ շրջանի դրութեան նկատմամբ լուսաբանուած եւ իրեն հետ բերած պիտի ըլլայ նմանապէս ամբողջ շրջանի հարցերու նկատմամբ իր շրջանի հաւաքական ձայնը:

գ.— Նոյն եղանակով պէտք է տեղի ունենայ նաեւ յառաջիկայ Կեդր. Կոմիտէի ընտրութիւնը: Այսինքն՝ իւրաքանչիւր շրջան, թէ՛ իր տեղական ընկերներէն եւ թէ միւս շրջաններու մէջ իրեն ծանօթ եւ յարմար դատած ընկերներէն ցանկ մը պէտք է ղրկէ Կեդր. Կոմիտէին, դարձեալ մինչեւ Յունուար մէկ, որպէսզի այս վերջինն ալ հաւաքելով այդ ցանկերը՝ կրկին Փետրուարի սկիզբը ենթարկէ ամբողջ շրջանի նկատառութեան: Ասով՝ ընտրուելիք Կեդր. Կոմիտէի բոլոր անդամները կանխաւ քննութեան եւ կշռադատութեան կ'ենթարկուին ամբողջ շրջանին կողմէ, եւ պատգամաւորները թէ՛ իրենց սեփական հայեացքով միայն առաջնորդուած չեն ըլլար, թէ՛ շրջանները ժամանակ կ'ունենան առաջարկուած թեկնածուներուն մասին լիակատար ծանօթութիւններ առնելու եւ թէ ասպարէզ կը քաշուին շրջանի ուժերը:

ԾԱՆՕԹ.— Կեդր. Կոմիտէի համար թեկնածուներ նշանակելու ատեն պէտք է նկատի ունենալ շրջանի ներքին կանոնագրի տրամադրութիւնները, մասնաւորապէս՝ թեկնածուները բոլորն ալ միեւնոյն խաղաթիւն մէջ պէտք է ըլլան, կանխաւ անոնց համաձայնութիւնը պէտք է առնուի եւ 4–5 տարի Դաշնակցութեան մէջ եղած ըլլալու են՝ Պալքանի մէջ կամ այլուր:

Գոյքերու ընդհանուր էնվանթէր.— *Կազմակերպական թէ՛ ներքին եւ թէ ընդհանուր կանոնները, ինչպէս պիտէք, պարտաւորիչ ըլլան են՝ ունենալ ընդհանուր գոյքերու ցանկը: Այս իսկ նկատումով ալ արդէն առանձին տետրակներ ցրուած ենք մարմիններուն: Արդ, կը յանձնարարենք որ իւրաքանչիւր մարմին իր քովի գոյքերուն՝ արժէքներով միասին՝ ցանկը ընդօրինակելով մեզի ղրկէ, որպէսզի կեդր. Կոմիտէին տրամադրութեան տակ գտնուող գոյքերուն հետ ընդհանուր ցանկ մը պատրաստենք: Արդէն մենք դասաւորելու վրայ ենք Կեդր. Կոմիտէի արխիւը, Ընելով անկէ բոլոր անպէտք թուղթերը, որոնք տարիներէ ի վեր կուտակուած էին անխնամ վիճակի մէջ: Այդ թուղթերն ալ թուանշանի կարգով պիտի արձանագրենք ընդհանուր էնվանթէրին մէջ եւ վերջին անգամ Շրջանական Ժողովի ուշադրութեան յանձնելէ ետք պիտի ուղարկենք Արեւմտեան Բիւրոյին՝ ի պահ: Արդ, եթէ կան մարմիններու քով պահուելու արժանի տոքիւմաններ՝ գոյքերու ցանկերուն հետ թող հաճին նոյնպէս մեզի ուղարկել:*

Լրտեսներ.— *Ատենէ մը ի վեր, Ֆիլիպէի մէջ որջացած է լրտեսական խումբ մը. ինչպէս հասարակութիւնը կը խօսի եւ ինչպէս որ տեղւոյս պուլկարական մէկ թերթն ալ հրապարակեց՝ այդ խումբին պարագլուխներն են Թագւոր Փափագեան, Յակոբ Զէրչեան, Թելեկրաֆիստ Նուրի եւ տակաւին ուրիշ երկրորդական դերակատարներ: Հետեւեալը կը յանձնարարենք մեր մարմիններուն եւ բոլոր ընկերներուն՝ այդ մարդոց եւ անոնց հետ ուղղակի կամ անուղղակի առընչութիւն ունեցողներու նկատմամբ կատարեալ վերապահութիւն ցոյց տալ եւ զգուշանալ ամէն կերպով:*

Այս առթիւ աւելորդ չենք սեպեր անգամ մը ալ յիշեցնել կազմակերպական գաղտնապահութեան անհրաժեշտութիւնը, որովհետեւ այպանելի սովորութիւն մը է դարձած շարքերուն մէջ՝ ընկերական առաւել կամ նուազ կարեւորութիւն ունեցող խնդիրներու մասին հոս–հոն, պաշտօնական եւ անպաշտօն տեղեր խօսիլ անթաքթ կերպով. եւ արդէն այս հանգամանքը շատ անգամ մնասած է թէ՛ ներքին համերաշխական կապին եւ թէ կազմակերպական գործերուն: Ուստի մարմինները եւ խմբապետները պէտք է ըլլան չափազանց խիստ՝ համանման պարագաներու տակ:

Երկրի հետ յարաբերութիւն

Կեդր. Կոմիտէն Երկրի հետեւեալ վայրերուն՝ Ռ...ի, Վ...ի եւ Ս...ի հետ ուղղակի յարաբերութիւն պահած է, ջանալով բաւարարութիւն տալ, իր իրաւասութեան ներելի սահմաններուն մէջ՝ նոյն վայրերու մեր կազմակերպական այլեւայլ պահանջներուն: Գըլխաւորաբար տեւական օգնութիւն մը ըրած է այդ վայրերու մեր բանտարկեալ ընկերներուն: Նաեւ յարաբերական կապ հաստատելու ջանացած է Երկրի զործօն մէկ վայրին հետ:

Առնցմէ զատ շարունակաբար փոխադրած ենք յեղափոխական գրականութիւն եւ թերթ՝ Երկրի զանազան վայրերը: Այս նպատակով մօտաւորապէս 40 օրինակ «Ռազմիկ» կը փոխադրուի կանոնաւորաբար:

Մօտ ատենէն՝ արդէն մեր շրջանի լաւ ընկերներէն մէկը կը պատրաստուի ինքնաբերաբար Երկրի շրջանը, իր ծննդավայրը երթալ՝ լեկալ կերպով, ուր ապրելով իր սեփական աշխատութեամբ՝ պիտի զբաղի տեղական կազմակերպութեամբ: Ամէն յոյս ունինք թէ՝ յիշեալ ընկերը պիտի կրնայ արդիւնաւոր աշակցութիւն մը ընել կազմակերպական գործին:

Կազմակերպական հրատարակութիւններ

Մեր ընկերներու ուշադրութիւնը կը հրաւիրենք կազմակերպական օրկաններուն եւ հրատարակութիւններուն տարածման վրայ:

Առանձինն կանդ չենք առներ կազմակերպութեան կեդրոնական օրկան «Դրօշակ»ի վրայ, որովհետեւ գիտենք թէ ընկերները այս մասին աւելի քան հոգածու են:

Պէտք է նոյնքան նաեւ ջանադիր ըլլան մեր ընկերները հանրային բոլոր խաւերուն մէջ տարածելու՝ կազմակերպութեան բոլոր միւս հրատարակութիւնները եւս, — «Խարիսխ», «Հայրենիք», «Ռազմիկ», «Դրօշակ»ի եւ «Ցառաջ»ի բոլոր կրքոյկները: Բոլոր այս հրատարակութիւններուն նպատակն ըլլալով մեր կազմակերպութեան գաղափարներն ու սկզբունքները տարածել ժողովրդական խաւերու մէջ, մեր պարտականութիւնը կ'ըլլայ ուրեմն ամէն կերպով հոգածու ըլլալ անոնց տարածմանը. ասով թէ՛ աշխատած կ'ըլլանք ուղղակի կերպով կազմակերպական բարոյական դործին, եւ թէ նիւթական տեսակէտով նպաստած՝ մեր ձեռնարկներուն:

«Ռազմիկ»ը ըլլալով տեղական կազմակերպական կապ պահպանող յեղափոխական միակ աղդակը, մասնաւորապէս եւ պալքանեան հայութեան ու ընկերներու բարոյական ու մտաւոր զարգացման սահմանուած ձեռնարկ, բնականաբար, ա՛լ աւելի հարկեցուցիչ պարտաւորութեան տակ կը դնէ մեր ընկերները՝ ամէն կերպով անոր թափանցումը յաջողցնելու աշխատաւոր խաւերուն մէջ:

Այսպէս, ամէն ընկեր, ուղղակի ինքզինք պարտաւոր պէտք է զգայ կատարելու այս բարոյական յանձնառութիւնը:

Կազմակերպական ընդհանուր ակնարկ

Արդէն առիթ ունեցած ենք ասկէ առաջ թէ՛ հրապարակով եւ թէ կազմակերպական ճամբով հաղորդելու այն գոհացուցիչ արդիւնքը՝ որ տուաւ Ընդհանուր Ժողովը:

Այս պահուս մեր առած տեղեկութիւններուն համաձայն՝ թէ՛ Կովկասի եւ թէ Երկրի կազմակերպական գործերը տակաւ կը մտնեն արդիւնաւոր եւ խոստմնալից ուղիի մը մէջ:

Ընդհանուր Ժողովի կողմէ զծուած է կազմակերպական ընդհանուր ծրագիր եւ կանոնագիր, որոնցմէ արդէն բաշխած ենք մեր մարմիններուն, եւ որոնց տրամադրութեանց համաձայն պէտք է շարժին ու գործեն մարմիններն ու բոլո՛ր ընկերները:

Դաշնակցութիւնը, ընկերներ, այսօր վերանորոգուած եւ կաղդուրուած ուժերով կը բանայ գործունէութեան նոր թուական մը՝ պարտաւորեցնելով մեզ ամէնքս ալ, որ մեր կարողութեանց սահմանին մէջ նպաստենք կազմակերպական միահամուռ ջանքերուն:

Ընկերական բարեւներով՝
Հ. Յ. Դ. ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

(Կնիք)

Յ. Գ.— Կը յանձնարարենք մեր մարմիններուն՝ կարդալ ներկայ տեղեկագիրը բոլոր ընկերներու ներկայութեան, միաժամանակ ազատ ձգելով զիրենք՝ հարկ եղած վերապահումները ընելու, եթէ հարկ կը տեսնեն եւ եթէ այդ կը պահանջեն իրենց ընկերական պարագաները:

3.— ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ՇՐՋԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Կայացած 10–18 Յունուար 1905
Ռուսճուքի մէջ

Նամակի նորմալ չափի 23 էջ, գրուած՝ սեւ մելանով: Պաշտօնական ստորագրութիւն եւ կնիք չի կրեր: Ատենագրութեան աւարտին, կարմիր մելանով աւելցուած է՝ «ստորագրութիւններ»:

Պալքանեան Կեդր. Կոմիտէն 1905 տարուան Յունուարի 1–10ի ժամանակամիջոցին մէջ շրջանի Պատգամ. Ժողով դումարելու համար շրջաբերականներ ուղարկած էր հետեւեալ քաղաքները, որոնք վերջին Ընդհանուր Ժողովի որոշած նուազագոյն պահանջներուն համեմատ ենթակոմիտէ կամ կոմիտէ ձեւացնելու չափ կազմական ուժ ունին, — 1. Վառնա, 2. Ռուսճուք, 3. Սոֆիա, 4. Ֆիլիպէ, 5. Սլիվէն, 6. Պուրգաս, 7. Սուլինա, 8. Քոնսթանցա, 9. Պուքրէշ, 10. Գրայլա, 11. Կալաց:

Ժողովը բացուեցաւ նշանակուած ժամանակամիջոցի լրանալուն, այսինքն Յունուարի 10ին եւ տեւեց մինչեւ նոյն ամսու 18ը: Տեղի ունեցան տասը երկար նիստեր:

Ժողովի յապաղելուն, պատգամաւորներու սպասելուն եւ այդ պատճառաւ եղած աւելորդ ծախքերուն պատասխանատու կը համարուի Կ. Կ.ի դիւանը, որ տեսրակներն ու հաշիւները չէր բերած ժամանակին: Պայմանաժամի լրանալուն, Յունուարի 10ին միայն, եկաւ Վարդգն եւ հնարաւորութիւն տուաւ ժողովը բանալու: Պատգամաւորները երկուքի դէմ չորս ձայնով դիւանի այդ ընթացքին համար դժգոհութիւն կը յայտնեն:

Վարդգ դիւանի կողմանէ կ'առարկէ, թէ ինք եւ դիւանի անդամ Յակոբ Ադամեան ժամանակին յայտնած են՝ որ Յունուարի 7էն առաջ չեն կարող գալ:

Պիոնեան կը յայտնէ Կ. Կոմիտէի Ֆիլիպէ դտնուող ընկերներու կողմէն, որ իրենք դիւանի առաջարկած ժամանակի փոփոխութիւնը չեն ընդունած եւ դիւանն ալ նախկին որոշման համեմատ չրջաբերականները ցրուած է եւ անկէ յետոյ չէ յայտնած թէ ինքը ժամանակին չպիտի կարենայ ներկայանալ: Ֆիլիպէի Կ. Կոմիտէի անդամներէն մին առաջին օրէն իսկ ներկայ էր, բայց չէր կրնար ժողովը բանալ, քանի որ դիւանի արխիւը իր քովը չէր, ոչ ալ կրնար համարատու ըլլալ դիւանի գործունէութեան:

Վարդի Ռուսճուք հասնելէն յետոյ, Յունուար 10ին, ժողովը բացուեցաւ հետեւեալ պատգամաւորներու ներկայութեամբ.—

1. *Վառնայէն, Բողոք (Արթաքի Խաչիկեան)*
2. *Ռուսճուքէն, Մուրճ (Վարդազար Տաքէսեան)*
3. *Սոֆիայէն, Պարտիզակցի (Գէորգ Տէր Յակոբեան)*
4. *Ֆիլիպէէն, ժիրայր (Բարթող Զօրեան)*
5. *Սլիվէնէն, ձայն ունէր՝ Կարապետ Պիոնեան*
6. *Պուրկազէն, Հեթում–Գագիկ (Մուրատ Ադամեան)*
7. *Պուքրէշէն, Ձայն, Կարապետ Պօտիկեան (Պուրիկեա՞ն):*

Առանց ձայնի ներկայ էին ընկեր Գէորգ Աբրահամեանց եւ Կ. Կոմիտէի դիւանի երեք անդամները՝ Իսակ Արվախի (Վարդօ), Յակոբ Ադամեան (Վահէ) եւ Ղազար Ղազարեան (Մարզպետունի): Կեդր. Կոմիտէն ներկայացնող եւ անոր կողմէն համարատու էր Արվախի Վարդօ. դիւանի միւս ընկերները ներկայ էին՝ իրենց եւ Վարդոյի միջեւ ծագած անհամաձայնութեան խնդիրները Շրջանական Ժողովին քննելու համար:

Պրայլայէն պատգամաւորութեան ձայն տրուած էր Ռուսճուքի ներկայացուցիչին. բայց ժողովը, նկատի ունենալով իրեն հասած գրաւոր տեղեկութիւնները, որոնցմէ կը յայտնուէր թէ բոլոր խումբերը համաձայն չեն պատգամաւորի ընտրութեան համար, եւ նոյնիսկ զիրար ծեծելու ալ եկած են, անկողմնակալ մնալու նպատակաւ որոշեց չընդունիլ անոնց ձայնը եւ դոհանալ միայն հասած գրաւոր տեղեկութիւններով:

Քոնսթանցա եւ Կալաց պատգամաւոր չէին ուղարկած. առաջինը հեռագրով եւ երկրորդը նամակաւ (ճամբաները փակ ըլլալուն) մարդ ղրկելու հնարաւորութիւն չունենալին կը յայտնէին:

Դաշնակցութեան վերջին Ընդհանուր Ժողովին գրծած նուազագոյն պահանջներուն դոհացում տալու չափ կազմական ուժ չունենալով, պատգամաւոր ընտրելու իրաւունքէ զուրկ մնացին Սիլիստրէ, Շումէն, Թուլչա եւ ուրիշ քաղաքներ, ուր դաշնակցական խումբեր եւ համակիրներ կան:

Նիստերը տեղի ունեցան նախագահութեամբ ընկեր Գէորգ Աբրահամեանի. քարտուղարի պաշտօնը կատարեց Կ. Պիոնեան: Երկու նիստի բացակայ դտնուեցաւ Ռուսճուքի պատգամաւորը եւ մէկ նիստի ալ՝ հրաժարուող Կ. Կոմիտէն ներկայացնող Վարդան:

Առաջին նիստը բացուեցաւ յոտնկայս լսելով նախագահի խօսքերը, որոնք մեր խորին յարգանքը կ'արտայայտէին հանդէպ բոլոր այն ընկերներուն՝ որոնք ժողովուրդի ազատութեան սուրբ գործին համար կ'աշխատին, այդ գործին համար զոհուած, կամ բանտերու մէջ արգելափակուած են:

Օրակարգի մասին կարճ խորհրդակցութենէ մը յետոյ՝ Վարդգ, Կ. Կոմիտէն ներկայացնելով, տուաւ իր զեկուցումը, բացատրեց շրջանի կազմի ընդհանուր վիճակը եւ տեղեկացուց Կ. Կոմիտէի դիւանին ունեցած գործունէութիւնը, որ հետեւեալն է.—

Նախորդ Շրջանական Ժողովից անմիջապէս յետոյ, դիւանի անդամներից մին պարտաւոր էր բացակայ լինել Ընդհանուր Ժողովի պատճառով, այնպէս որ գործը մնացել էր դիւանի երկու անդամների վրայ, եւ ուժերի սակաւութեան պատճառաւ մի քիչ կաղացել՝ յարաբերութիւնները մարմինների հետ պահպանելու վերաբերմամբ: Բացակայ անդամի վերադարձից յետոյ՝ դիւանը սպասելով Ընդհանուր Ժողովի որոշումներին, որի մի մասը միայն Օգոստոսին եկաւ, դտնւում էր տարտամ վիճակի մէջ եւ չէր կարողանում որոշ հրահանգներ տալ, որպէսզի մարմինները աշխատին իրենց կազմը ստեղծել՝ Ընդհանուր Ժողովի կազմական որոշումների համեմատ: Մինչեւ Ընդհանուր Ժողովի որոշումների ստացուիլը, դիւանի անդամներից մին (Վարդգ) կրկին պարտաւորւում է ճամբորդել Ռումանիա, ըստ որոշման նախորդ Շրջանական Ժողովի, ուսումնասիրելու ռումանահայ դաղութի եւ մեր ընկերների կացութիւնը եւ դաշնակցական խմբերին ու մարմիններին կապելու Պալքանեան Կ.Կ.ի հետ:

Ճամբորդող անդամի վերադարձից յետոյ պարզւում է որ մնացող երկու անդամները դժգոհ են իրենց

ճամբորդող ընկերներից, որի պատճառով դիւանի մէջ պայթում է մի չատ անհաճոյ վէճ եւ ոչնչացնում համերաշխութեան եւ փոխադարձ յարգանքի ոգին, որի պատճառով դիւանի երեք անդամները պարտաւորւում են ժողով դումարել Ֆիլիպէում, կարգադրելու համար գործերը վարելու կերպը՝ մինչեւ Շրջանական Ժողով:

Այդ հաւաքումից յետոյ դիւանի երկու անդամները գործը վարում են մինչեւ այս ժողովի օրը:

Զնայելով բոլոր այս անյաջող պայմաններին եւ դիւանի անդամների մէջ վերջերս ծագած անհամաձայնութիւններին, Պալքանեան Կ. Կոմիտէն կարողանում է ոչ միայն բաւարարութիւն տալ նուազագոյն պահանջներին, այլեւ կրկնակին կատարել:

Զանազան մարմիններից եկած տեղեկութիւնները ձեզ ցոյց կը տան որ Պալքանեան Կ. Կոմիտէն անդամների թուով համապատասխանում է դրուած պահանջին, իսկ նիւթական արդիւնքը պահանջուածից կրկնակի է: Տուել ենք մի ինտելիդենտ ուժ երկրի համար(*). պահանջուած դինուորական ուժերը չենք տուած, որովհետեւ պահանջ չէ եղել: Բացի այդ բոլորից՝ դիւանը զբաղուած է եղել Յուցական մարմնի գործերով, որոնք բաւական ժամանակ խլել են դիւանի անդամներից:

Հակառակ այս բոլոր պայմաններին, Ռումանիան այսօր աւելի մօտիկից է ճանչցուած, խումբերն ու մարմինները կազմակերպուած են, եւ կցուած են մեր մարմինին ե՛ւ այն խումբերն ու մարմինները՝ որոնք նախորդ շրջանին Բիւրոյի հետ էին պահում իրենց յարաբերութիւնները:

Կեդր. Կոմիտէի ընդհանուր տեղեկագրութիւնը լսելէ եւ այդ մասին բաւական խօսելէ յետոյ, որոշուեցաւ հաշիւներու քննութիւնը յանձնել մասնախումբի մը, որու անդամ ընտրուեցան Ֆիլիպէէն՝ Ժիրայր, Սոֆիայէն՝ Պարտիզակցի եւ Պուքրէշէն՝ Ձայն: Մը-նացեալ պատգամաւորներէն փափաքողները կրնային ասոնց մասնակցիլ:

Շրջանական Ժողովը մէկուկէս օրուան երեք երկար նիստեր յատկացուց իւրաքանչիւր քաղաքի պատգամաւորին բերած գրաւոր ու բերանացի տեղեկութիւնները լսելու, հարցերը քննելու եւ պահանջները նկատի առնելու: Այդ տեղեկութեանց համառօտագրութիւնը հետեւեալն է.

Սուլինա.— *Տեղւոյն հայութիւնը ամբողջովին հայաստանցի մշակներէ բաղկացած է. բնիկ ռումանահայ գրեթէ չկայ: Կարգ մը սրճարաններ կան, որոնք հայերու հաւաքման կեդրոններն են. սրճարանապետներէն ոմանք մեզ համակիր են, ոմանք ալ ոչ, եւ այդ ձեւով՝ գրեթէ բաժնուած են դաշնակցականները տարբեր կուսակցութեանց պատկանողներէ: Դաշնակցականները նոյնիսկ ունին իրենց յատուկ Արարատ անունով սրճարան մը, որ ընկերներու բացառիկ օժանդակութեամբ բացուած է. 800 ֆրանքի գոյքը Դաշնակցութեան կը պատկանի եւ հասոյթն ալ կուսակցութեան յատկացուած է: Ունին նաեւ Կարմիր Խաչի օդտին դանձանակ մը: Ժողովուրդի մեծ մասը համակիր է Դաշնակցութեան, բայց պատմուած դէպքերու նայելով՝ պակաս չեն նաեւ հակայեղափոխական եւ նոյնիսկ մնասակար անձնաւորութիւններ:*

Սուլինան ունի 15 խումբ, որոնց երեքը զինուորական են. տեղական պայմանները ներած չափով՝ զինավարժութեամբ կը պարապին եւ երկիր գնալու պատրաստ են: Թէեւ հայ ընտանիքները սակաւաթիւ են, բայց կազմուած է նաեւ կանանց խումբ մը:

Սուլինա միջին հաշուով տարեկան 5000 ֆր. Յեղափոխութեան օժանդակութիւն կու տայ. խմբական կազմով՝ համեմատաբար չատ լաւ է, իր օդտակար ազդեցութիւնը ունեցած է մօտակայ Կալաց, Իբրայիլ եւ Թուլչա քաղաքներուն վրայ եւ հոն դտնուող հայաստանցիներն ալ կազմակերպած է: Սուլինայի կոմիտէն ամբողջ ռումանահայութեան, մանաւանդ տեղացիներու մէջ, կազմակերպութիւնը զօրացնելու բարի փափաքով, կ'ուզէ արտօնուիլ իր շրջանէն դուրս ելս գործելու եւ անտարբերները յեղափոխութեան օժանդակ դնելու համար: Դժբախտաբար Սուլինան զուրկ է ինտելիդենտ ուժերէ եւ չի կրնար տարբեր շրջանի պատկանող հասարակութեան վրայ ազդել բարոյապէս: Շրջուն գործիչի մը պահանջը կը դնեն, լաւ զգալով անոր ունենալիք օդտակարութիւնը այդ տեսակէտով:

Թուլչա.— *Ունի չորս խումբ, 30 անդամով: Տակաւին ենթակոմիտէ կազմելու ուժ չներկայացնելուն՝ կապուած է հարեւան Սուլինայի մարմինին: Ըստ իրենց փափաքին կրնան ենթակոմիտէ կազմել եւ ուղղակի Պալքանեան Կ. Կոմիտէին հետ կապուիլ, երբ Ընդհանուր Ժողովի որոշած նուազագոյն պահանջները լրացնեն: Գրաւոր մանրամասն տեղեկագրէն կ'երեւի որ քաղաքը ունի 300է աւելի հայ բնակչութիւն, 40 ալ մօտակայ գիւղերու մէջ: Մէկ մասը հին դաղթականութեան կը պատկանի, որու անդամներու մեծամասնութիւնը արհեստաւոր է, միւս մասը՝ նորեկներ են, գրեթէ բոլորն ալ հայաստանցի մշակներ: Դիրքի տէր եւ քաղաքական կարեւոր պաշտօններ ունեցող հայեր ալ կան: Դաշնակցականները գրեթէ ամբողջութեամբ նոր դաղթականներէն են: Խմբապետները, իրենց խումբերու անդամավճարներէն զատ, տարին մի քանի անդամ փոքրիկ ժողովարարութիւններ կ'ընեն եւ ժողո-*

(*) Գրիգոր Սայեանի մասին է խօսքը, որ նախորդ շրջանէն արդէն խօսուած էր եւ պատրաստուած էր՝ մեր շրջանէն դուրս ընկերներու ազդեցութեամբ: Կ. ՊԻՈՆԵԱՆ

վուրդի չէզոք մնացած մասն ալ այդ ձեւով կը վարժեցնեն յեղափոխութեան օժանդակելու եւ Դաշնակցութեան մօտենալու։ Թուլչայի ընկերները կ'ուզեն որ չրջանը գործիչ մը տարին գոնէ մէկ երկու անգամ այցելէ, նոյնպէս կը փափաքին որ «Դրօշակ»ի մէջ նուիրատուութիւնները շուտով հրատարակուին։

Պրայլա։— *Հայութեան մեծամասնութիւնը հայաստանցի մշակներէ եւ քիչ թիւով ալ խանութպաններէ կազմուած է։ 25–30 տնուոր տեղացի հայ գաղութ մը ալ կայ եւ բաւական ունեւոր ու ազդեցութեան տէր մարդիկ կը ներկայացնէ։ Դաշնակցական ընկերները, գրեթէ առանց բացառութեան, նոր գաղթականներ են եւ մեծ մասը մշակ դասակարգին կը պատկանի։ Ձեն կրնար ազդել տեղացիներուն վրայ, զանոնք եւս իրենց մէջ առնելու, յեղափոխութեան օժանդակող ընելու համար։ Կը խոստովանին թէ իրենց կարողութենէն վեր է այդ եւ չրջուն գործիչի մը պէտքը զգալի կ'ընեն, թէ՛ չէզոք մնացած հասարակութիւնը կազմակերպելու եւ թէ կազմակերպուածները ուղղութեան մէջ պահելու համար։*

Պրայլան ունի այժմ ԻՆՉ կանոնաւոր խումբ, բայց դժբախտաբար իրարու հետ համերաշխ չեն եւ չէին կրցած համաձայնութեամբ պատգամաւոր մը ընտրել։

Պուքրէշ։— *Տեղւոյն նոր գաղթականութիւնը 500 հոգիէ աւելի է։ Տեղացի հայերը ընդհանրապէս նիւթական լաւ վիճակ ունին, դիրքի եւ հարստութեան տէր մարդիկ շատ կան, բայց դժբախտաբար թէ՛ լեզուով եւ թէ զգացումով օտարացած են։ Եկեղեցական ու դպրոցական հարուստ կալուածներն անգամ լաւ չեն խնամուիր եւ հասոյթներն ալ օգտակար կերպով չեն գործադրուիր։ Նոր գաղթականութիւնը մեծամասնութեամբ արհեստաւորներէ բաղկացած է։ Ուրիշուն դաշնակցական ընկերներ կան, ինը խումբի բաժնուած. բաւական թիւով համակիրներ ալ կը գտնուին։ Հոս ալ Յեղափոխութեան օժանդակող տարրը նոր գաղթականութեան կը պատկանի, տեղացիները գրեթէ բոլորովին չէզոք են։ Կազմուած է նաեւ կանանց օժանդակ խումբ մը։ Ենթակոմիտէի հինգ անդամներն ալ արհեստաւորներ ու խանութպաններ են։ Կազմակերպելու եւ փրոփականտի համար չրջուն գործիչի մը պէտքը անհրաժեշտ կը համարուին։ Կը ստացուի 50 «Դրօշակ»։*

Կալաց։— *Քաղաքի հայութեան մեծամասնութիւնը հայաստանցի մշակներէ կազմուած է, թէեւ տեղացիներ եւս կան։ Վաթսունէ աւելի դաշնակցական ընկերներ կան եւ բոլորն ալ նոր գաղթականութեան կը պատկանին։ Իրենց դիրքով նորերը տեղացի հայութեան հետ չփում ունենալու եւ անոնց վրայ ազդելու անկարող են։ Կալացի ընկերները նամակով յայտնած էին, թէ համբաները ձիւնի պատճառաւ փակ են եւ պատգամաւոր չեն կրնար ուղարկել, բայց հաշուեկշիռ եւ տեղեկագիր ալ չէին ուղարկած։*

Քոնսթանցա։— *Պատգամաւոր չէ ուղարկած համբաներու փակ ըլլալուն պատճառաւ. հաշուեկշիռ եւ կրաւոր տեղեկագիր ալ չստացուեցաւ։*

Քոնսթանցա ռումանահայութեան լաւ կեդրոններէն մին է. կաղութի մեծամասնութիւնը թէեւ նորեկ հայերէ կազմուած է, բայց տեղացիներն ալ քիչ չեն, մանաւանդ որ նոր գաղթականութենէն բոլորովին անջատուած չեն։ Նաւահանգիստը աշխատող հայաստանցի մշակներէն զատ, նոր գաղթականութեան պատկանող խանութպաններ, գրագիրներ եւ ուսուցիչներ ալ կան, որոնք անուղղակի կապ են ընկերային իրարմէ տարբեր աստիճաններու վրայ գտնուող դասակարգերու՝ հայաստանցի մշակներուն եւ տեղացի հարուստ վաճառականներուն միջեւ։ Դպրոցով, բարեգործական ընկերութիւնով, տեղացի եւ նորեկ երիտասարդութիւնը չփման մէջ է։

Քոնսթանցա բաւական հայութիւն ունի, բայց մեր ընկերներու թիւը հազիւ 70–80 հոգիի կը հասնի։ Ենթակոմիտէն կազմուած է հինգ հոգիէ եւ կրնայ մեծ գործունէութիւն ունենալ յեղափոխութեան օժանդակելու եւ տեղացոց մէջ ազգային զգացումը զարգացնելու տեսակէտով, եթէ եռանդոտ եւ լուրջ աշխատութիւն ունենայ։ Դժբախտաբար ենթակոմիտէի գործունէութիւնը եւ տեղական խնդիրները մեզի ծանօթ չեն. հաշուեկշիռ ալ ստացուած չէ, ու ելեւմուտքը կը մնայ նոյնպէս անծանօթ։

Ռուսճուք։— *Պուլկարիոյ հայաշատ կեդրոններէն մին է. հայութեան մեծամասնութիւնը տեղացի, բայց եւ այնպէս բաւական թիւով ալ նորեկ գաղթականներ կան։ Ռուսճուքի մէջ շատ լաւ երիտասարդութիւն կայ, միայն թէ քիչ չափով յեղափոխութեան օժանդակող է։ Քաղաքին մէջ կան 80–85 դաշնակցական ընկերներ, վեց խումբերու բաժնուած, թիւ մը՝ զոր կարելի է շատ դիւրութեամբ կրկնապատկել, որովհետեւ Դաշնակցութեան համակիրները քիչ չեն։ Կոմիտէն համեմատաբար տարբերէ կազմուած եւ խումբերու հետ սերտօրէն կապուած չըլլալով՝ շատ մը պահանջներ չէ կըրցած գոհացնել. հանգանակութիւն ալ եղած չէ։ Ցաւ է նկատել, թէ ընկերներու մէջ վէճեր ու կռիւներ ալ անպակաս եղած են։ Կոմիտէն իր տեղեկագրով կը խոստովանի իր թուլութիւնը եւ յառաջիկայ չրջանին աւելի լաւ գործունէութեան համար կ'առաջարկէ հետեւեալները։— 1. Շրջանի համար չրջուն գործիչ մը ունենալ որ յեղափոխական փրոփականտ ընէ, կազմակերպէ եւ ընկերներու մէջ ծագած վէճերը կարգադրէ, 2. Ունենալ չրջանիս համար դաշնակցական օրկան մը, 3. Կեդր. Կոմիտէի հետ սերտ յարաբերութեան մէջ գտնուիլ։*

Սոմովիդ եւ Սվիշտով։— *Այս քաղաքներուն մէջ բաւական թիւով հայաստանցի մշակներ կան, որոնցմէ մէյմէկ խումբ կազմուած է եւ, համեմատաբար իրենց տնտեսական անձուկ վիճակին, յեղափոխութեան լաւ օժանդակութիւն կ'ընեն։ Կապուած են հարեւան մարմինին՝ Ռուսճուքի հետ։*

Սլիվէն։— *Փոքրաթիւ եւ գրեթէ բոլորովին թըրքախօս հայութիւն մը ունի. արհեստաւորներ ու խանութպաններ են։ Ենթակոմիտէն քաղաքին մէջ հազիւ մէկ երկու խումբ ունի, բայց կը կառավարէ երկաթուղիի կայարանները ցրուած՝ դաւառացի մշակներէ կազմուած խումբերը, որոնք թիւով առայժմ չորս հատ են, երկու հատ ալ նոր կազմուած են Ռատէ-Մահալէի մէջ։ Ամէն մէկ կայարանի աշխատաւորներու թիւը յարափոփոխ ըլլալով՝ խորհուած է խմբական կազմէն զատ դանձանակի դրութիւն մը հաստատել, որով Դաշնակցութեան նուէրներ կը հաւաքուին։ Նուիրատուութիւնները կը հաւաքուին նաեւ ենթակոմիտէի անդամներէն մէկուն, ընդհանրապէս Տէր Վաղինակ հօր կամ ընկեր Խաչիկ Թօսֆեանի չրջելով ըրած հանգանակութեամբ. բայց եւ այնպէս քաղաքը ու չրջակայ կայարանները այժմ 7 խումբեր կազմուած են. Սթարա-Զաթրայի մէջ ալ ունինք բազմաթիւ համակիրներ։ Սլիվէն մօտաւորապէս հազար լէվ տարեկան օժանդակութիւն ցոյց կու տայ Դաշնակցութեան։ Շրջուն գործիչի մը կարեւորութիւնը այստեղ եւս ըզգալի է, երբ մանաւանդ ենթակոմիտէի պայմանները այնպէս են՝ որ տարին գոնէ մէկ երկու անգամ չրջելով եւ շատ նամակագրութիւն պահելով է որ գործունէութիւն մը կ'ունենայ։*

Սոֆիա։— *Փոքրաթիւ հայութեամբ՝ համեմատաբար լաւ կազմակերպուած տեղերէն մին է. ունի 50–60 ընկերներէ բաղկացած հինգ խումբ եւ տարեկան 1500 լէվի չափ օժանդակութիւն ըրած է։*

Սոֆիայի հայութիւնը 300–350ի չափ է, գրեթէ առանց բացառութեան՝ եկուոր Պուլկարիոյ ուրիշ քաղաքներէ, եւ կամ Թուրքիայէն՝ նոր գաղթականութեամբ։

Սոֆիայի ընկերներն ալ կը փափաքին ունենալ չրջուն գործիչ մը եւ օրկան մը՝ յեղափոխական փրոփականտի համար։

Պուրկազ։— *Փոքրաթիւ հայութիւն մը ունի, մեծամասնութիւնը՝ նոր գաղթականներ։ Ուրը խումբերու բաժնուած 106 ընկերներ կան, մեծամասնութեամբ հայաստանցի աշխատաւոր դասակարգէն կազմուած։ Ընկերներու մէջ բաւական թիւով զինավարժութեամբ զբաղող եւ Երկիր մտնել փափաքողներ կան։*

Պուրկազ լաւ կազմակերպուած քաղաքներէն մին է. թէեւ շատ զարգացած կեդրոն մը չէ, բայց գլխաւորաբար հայաստանցի եւ գործի սիրով վառուած ընկերներ ունենալուն գոհացուցիչ գործունէութիւն ցոյց տուած է։ Այս տարի 2700 լէվի օժանդակութիւն ըրած է Դաշնակցութեան՝ ամսավճարներով եւ հանգանակութեամբ։

Պուրկազէն ալ չրջուն գործիչի եւ չրջանի համար օրկանի մը պահանջը կը գնեն, իբրեւ միջոց՝ ապագային կազմակերպութիւնը թէ՛ նիւթապէս եւ թէ բարոյապէս աւելի զօրացնելու համար։

Կը ստացուի 50 «Դրօշակ». 40 բաժանորդ՝ 100 լ. բաժնեգին։

Վառնա։— *Շրջանի ամենէն հայաշատ քաղաքն է։ Նոր եւ հին գաղթականները հոս ամէն տեղէ աւելի մօտիկ են իրարու։ Հակառակ Դաշնակցութեան բազմաթիւ համակիրներու, այս տարի միայն կազմուած են ինը խումբեր, ընդամէնը 75 ընկերներով եւ մօտ 5–600 ֆրանքի օժանդակութիւն ըրած են։ Վառնայի խումբերը խնդիրներ ունենալով Կեդր. Կոմիտէի հետ՝ դժգոհ մնացած են եւ չեն կրցած մեծ գործունէութիւն ցոյց տալ։ Հանգանակութիւն եղած չէ։ Ապագային կազմը աւելի զօրացնելու համար, իբր միջոց, չրջուն գործիչ մը եւ չրջանին համար օրկան մը ունենալու պէտքը կը զգացնեն եւ պահանջ կը դնեն։*

Վառնայի դաշնակցական երիտասարդութեան հաւաքման կեդրոնն է Բարկէն Սիւնի ընթերցարանը, որու դռները եւ հասոյթը կը պատկանին Դաշնակցութեան։ Առայժմ թոյլ կերպով կազմուած երգեցիկ խումբ մըն ալ կայ, որու անդամներու շատերը Դաշնակցութեան համակիրներ են։

Ֆիլիպէ։— *Հայաշատ կեդրոններէն մին է։ Տեղացիի եւ դրսեցիի երբեմն խիստ լարուած յարաբերութիւնները այժմ մեղմացած են։ 210էն աւելի դաշնակցական ընկերներ կան՝ տասնեւչորս խումբերու բաժնուած, որոնց երկուքը կանանց խմբեր են։ Կան բազմաթիւ համակիրներ։ Վաճառական դասակարգը, ամէն տարի հանգանակութեան մասնակցելով, իր օժանդակութիւնը կու տայ Յեղափոխութեան գործին։ Այս տարեշրջանին հանգանակութիւն ալ եղած է, ի նպաստ Դաշնակցութեան ներկայացում ալ տրուած է. միայն՝ յեղափոխական փրոփականտի համար լարաններ տեղի ունեցած չեն։*

Դաշնակցական ընկերներու մեծամասնութիւնը երիտասարդներէ եւ հայաստանցիներէ կազմուած է։ Խումբերը թէեւ նոր պահանջներու համեմատ վերակազմուած են, բայց կարելի է տակաւին նորեր ալ

կազմել։ Այլեւայլ պատճառներով կարելի չէ եղած խմբական կանոնագրութիւնը տալ եւ պահանջուած մարմինը կազմել։

Ֆիլիպէի մէջ ընդհանրապէս յեղափոխական ոգին վառ եւ Դաշնակցութեան ոգին բարձր է, ու համակիրները ամէն տեղէն աւելի բազմաթիւ են։

Բուն յեղափոխական օժանդակ խումբերէն զատ՝ կան երզեցիկ-թատերասիրաց երկսեռ խումբերը, որոնց 800 լէվ արժողութեամբ զոյգերը Դաշնակցութեան կը պատկանին։ Մարմնամարզիկ եւ զինավարժ երիտասարդաց խումբ մը եւս [կը գործէ]։

Ունինք հոս հայ մասնաւոր վարժարան մը, որ բոլոր խումբերու հաւաքման ու վարժութեանց կեդրոնավայրն է, եւ միւս կողմանէ՝ բազմաթիւ աշակերտներու ծնողները անուղղակի կերպով Դաշնակցութեան համակիր պահող եւ կապող միջոց։

Ֆիլիպէի խումբերը բանաւոր պատճառներով ուշ վերակազմուած եւ անդամավճարներն ալ ամբողջովին գանձուած չըլլալով, հանդերձ հանգանակութեամբ միասին 4000 լէվի տարեկան օժանդակութիւն եղած է Դաշնակցութեան։

Ֆիլիպէի ընկերներն եւս կը փափաքին ունենալ շրջուն գործիչ մը եւ Դաշնակցութեան շահերը պաշտպանող ու յեղափոխական փրոփականտ ընող օրկան մը։

Շումէն եւ Պալչըք։— *Համակիրներ կան, բայց կազմուած կանոնաւոր խումբեր չկան։ Նուիրատուութիւնները կ'ուղարկուին հարեւան Վառնայի մարմնին։*

Սիլիստրէ։— *Բաւական թիւով համակիրներ կան, բայց կազմակերպուած չեն. ենթակոմիտէ մը կազմելու չափ հող կայ։*

⁂

Շրջուն գործիչի հարց։— *Առանց բացառութեան, ամէն պատգամաւոր իր տեղւոյն ընկերներուն կողմէ շրջանիս մէջ շրջուն գործիչ մը ունենալու անհրաժեշտութիւնը յայտնեց։ Որոշուեցաւ որ նոր Կեդր. Կոմիտէի ամենէն առաջին գործը ըլլայ Բիւրոյին դիմել եւ յարմարագոյն ընկեր մը հրաւիրել, յայտնելով որ շրջանիս կազմակերպութիւնը 150–200 ֆրանք ամսական կրնայ յատկացնել եկող գործիչին, առանց անոր ճանապարհածախսը հաշուելու այդ գումարին մէջ։ Շրջանական Ժողովը նկատի ունեցաւ՝ պ. պ. Եզմալեանց, Յովհան Դաւթեան, Սիմէոն Յակոբեան։ Մինչեւ մշտական գործիչի գալը՝ ընկեր Գէորգ Աբրահամեան, եթէ իր գործը չյալոզի եւ մնայ շրջանիս մէջ, որոշուեցաւ որ վարէ շրջուն գործիչի պաշտօնը եւ իրեն տրուին հարկ եղած միջոցները։*

Օրկանի հարց։— *Ամէն պատգամաւորի գրած երկրորդ պահանջն էր՝ շրջանիս մէջ Դաշնակցութեան շահերը պաշտպանող եւ յեղափոխական փրոփականտ ընող պաշտօնական օրկան մը ունենալը։ Երկար խորհրդակցութիւններէ յետոյ որոշուեցաւ հետեւեալ միջոցներով հոգալ այդ ձեռնարկին համար անհրաժեշտ եղող ֆոնտը։ Վեր ի վերոյ 6250 լէվ ծախք հաշուուեցաւ, որուն 3000ը բաժանորդներէ կը յուսացուի գոյանալ, մնացեալ 3250ին համար ալ՝ 10 ֆրանքնոց նուիրատոմսեր պիտի հանուին ամէն քաղաքի դաշնակցական ընկերներուն եւ համակիրներուն ծախելու համար։ Որոշուած 500 տոմսակներու 125–200ը կ'արտօնուի կեդր. Կոմիտէին իր հաշուոյն գնել, եթէ անոնք ընկերներու մէջ չսպառին եւ անհրաժեշտ ըլլայ կազմակերպութեան դրամական օժանդակութիւնը։ Նոր կ. Կոմիտէի անմիջական գործերէն մին ալ թերթի հարցը պիտի ըլլայ եւ այդ մասին պէտք է խորհրդակցի Բիւրոյի հետ։*

Լուծուած խումբերու հարց։— *Լուծուած խումբերու անդամներէն անոնք՝ որ տեղական մարմինի վրատահութիւնը կը վայելեն, կ. Կոմիտէի հաւանութիւնը ստանալով կրնան ընդունուիլ տեղական խումբերու մէջ, բայց չեն կրնար հին անունով նախկին խումբերը վերակազմել։*

Դիւանի անդամներու գժտութեանց քննութիւն։— *Շրջանական Ժողովը իր վեցերորդ նիստին երեք ժամ լսեց ընթերցումը Ֆիլիպէի մէջ տեղի ունեցած ժողովներու տոքիմաններուն, որոնցմով պարզուեցան դիւանի անդամներէն՝ Ղազար Ղազարեանի եւ Յակոբ Ադամեանի Վարդոյի դէմ ունեցած դանդատները, եւ փոխադարձաբար՝ Վարդոյին միւսներուն դէմ ունեցածները։ Երկու կողմէն ալ տրուած դրաւոր բացատրութիւնները լսելէ յետոյ, Ժողովը իր հարկ դատած հարցումներն ալ ըրաւ եւ տեղեկացաւ բոլոր խնդիրներու մանրամասնութեանց։*

Եօթներորդ Ժողովին, ընկեր Վարդոյի կարծիքով եւ Պիոնեանի ու պատգամաւորներու հաւանութեամբ, որոշուեցաւ որ այս նիստին ներկայ չգտնուի նաեւ Կ. Պիոնեան՝ որպէս Կեդր. Կոմիտէի անդամ։

Առաջնորդուելով նախորդ նիստի մէջ տեղի ունեցած դրաւոր եւ բերանացի տեղեկութիւններէն եւ բողոքագիրներէն Պատգմ. Ժողովս հետեւեալ որոշումներուն յանգեցաւ։—

ա. Գանձապահութիւն։— *Պատգմ. Ժողովս, դրտնելով անտեղի եւ ո՛չ գոհացուցիչ Վարդոյի առարկութիւնները, անիրաւ կը գտնէ զայն՝ 1. Գանձը չյանձնելուն համար Վահէին (Յակոբ Ադամեան), հակառակ նոյնիսկ Ֆիլիպէի մէջ գումարուած Ժողովի որոշման. 2. Պաշտօնակից ընկերները կասկածելի ցոյց տուած ըլլալուն համար, անհիմն առարկութիւններով։*

Այս դէպքին մէջ, Պատգ. Ժողովս իրաւացի կը գտնէ Վահէն՝ որ պաշտպաներ է իր իրաւունքները, բողոքելով թէ՛ Բիւրոյին եւ թէ Ֆիլիպէ՝ Կեդր. Կոմիտէի պաշտօնակից ընկերներուն։

բ. Գաղտնապահութիւն։— *Այն ամբաստանութիւնները՝ զոր Մարզպետունի (Ղազար Ղազարեան), Վահէ եւ Վարդօ իրարու ըրած են անզգուշապահութեան համար, Պատգմ. Ժողովը կը համարէ ոչ կարեւոր եւ արդիւնք՝ լարուած յարաբերութիւններու։*

Պատգմ. Ժողովս առանձնապէս Վարդոն կը գտնէ անհոգ եւ զատապարտելի, որովհետեւ Կեդր. Կոմիտէի դիւանը բաց թողեր է անվստահելի Լեւոնի եւ ոչ դաշնակցական Արամ Զարբլի առջեւ, իրողութիւն մը՝ ուրկէ կրնային առաջ գալ անզգուշապահութիւն եւ չնախատեսուած հետեւանքներ։ Նոյնպէս իբրեւ անզգուշապահութիւն՝ դատապարտելի է նախորդ Պատգամաւորական Ժողովի ատենագրութիւնը անվստահելի Լեւոնի ընդօրինակել տրուիլը՝ Վարդոյի կողմէ, իր իսկ խոստովանութեամբ։

Գալով Վառնայի ընկերային ատեանին, որ տեղի ունեցած է անհամաձայնութիւններ քննելու համար, Պատգմ. Ժողովս մասնակցողները հաւասար չափով մեղադրելի կը գտնէ՝ այդ Ժողովին մասնակից ընելուն համար Լեւոն Սարգիսեանը։

գ. Կեդր. Կոմիտէի անկանոնութիւն։— *Յայտնելով բոլոր ընկերներուն եւ Արեւմտեան Բիւրոյին պաշտօնապէս, որ 1904–1905 թուի Կեդր. Կոմիտէն ունեցած էր միայն մէկ նիստ Ֆիլիպէի մէջ, որ տեւեր է 10 օր՝ դիւանի դժգոհութիւնը հարթելու համար, իսկ դիւանը ո՛չ մէկ նիստ, եւ նկատելով որ դիւանի գժտութեան պատճառը եղած է այս անկանոնութիւնը, Պատգմ. Ժողովս կը յայտնէ իր խորին զայրոյթը անպարտաճանաչութեան դէմ եւ կը յանձնէ ընկերներու լուրջ ուշադրութեան։*

Վարդը, լսելով այս որոշումները, կը յայտնէ թէ պիտի բողոքէ եւ [պահանջէ հարցի] վերաքննութիւնը՝ Ընդհանուր Ժողովին։

Հաշիւներու քննութեան արդիւնք։— *Հաշիւներու քննութեան համար ընտրուած յանձնախումբը հետեւեալը յայտնեց, իբրեւ դրաւոր արդիւնք իր առաջին մի քանի ժողովներով ըրած քննութեան։—*

Նախ ցուցնելով կ'իմացնենք որ Կեդր. Կոմիտէի հաշիւները ցրուած են երկու երեք տեղ, եւ [հաշուեկշիռը] հեռու է, իր այդ վիճակին մէջ, ներկայացնելէ Պալքանեան շրջանի ելեւմուտքը՝ յստակ եւ կանոնաւոր։

Այս պարագային, յանձնախումբս շրջանի իւրաքանչիւր մարմնի եւ դիւանի անդամներու հաշիւները ստիպուած եղաւ առանձին-առանձին քննել եւ իր տեղեկութիւնները բերել, խնդրելով Ժողովէդ՝ որ անմիջական եւ ստիպողական պարտականութիւն դնէ դիւանի անդամներուն վրայ, ամբողջ Կ. Կոմիտէի հաշիւները կանոնաւոր տետրակի մը մէջ ամփոփելու եւ ետքը ներկայացնելու Ժողովիդ վերջնական վաւերացումին։

Պահանջելով մեր այս նկատողութեան նոյնութեամբ արձանագրութիւնը, անցնինք մեր քննութեան արդիւնքին եւ պարզապէս մը տանք ելեւմուտքին վրայ։

1. Քննելով մարմիններու մեր ձեռքին տակ գտնուած հաշուեկշիռները՝ գտանք ճիշդ, որուն համար ամփոփ հաշուեկշիռ մը պատրաստեցինք։

2. Ֆիլիպէի Կեդր. Կոմիտէի անդամներուն եւ Յակոբ Ադամեանի հաշիւներուն մասին նկատողութիւն չունինք, բացի Յակոբ Ադամեանի ձեռքով Արամ-Զարբլի յանձնուած 125,60 գումարը ձեր ուշադրութեան յանձնելու պարագային, ինչպէս նաեւ ընկեր Յակոբի այն նկատողութիւնը՝ որով կ'իմացնէ Ժողովով զբաղած օրերուն ծախքերը Ժողովիդ ուշադրութեան, առանց պահանջելու Ժողովէն առաջ գտնուած օրերուն եւ երթեւեկութեան ծախքերը, որոնք իրեն անձնական գործին հետ կապուած են։

3. Ռուսճուքի հաշուեկշիռին մէջ նշանակուած 252 եւ 28 լէվ գումարները, որոնք Վարդոյին յանձնուեր են, չկան Վարդոյի տետրակին մէջ։

4. Սլիվէնի հաշուեկշիռը ցոյց կու տայ, որ 801 լէվ մուտք ունեցած է եւ ղրկուած Կ. Կոմիտէին, իսկ տետրակին մէջ 727 լէվ նշանակուած կայ, պակաս՝ 74։

5. Կ. Կոմիտէի հրահանգով Սոֆիայի ենթակոմիտէէն Պ. Թիֆէնկճիէվի յանձնուած 334,80 չէ ղրուած տետրակին մէջ։

6. Գրիգոր Սայեանի ձեռքով Պուքրէշէն ղրկուած 175 ֆրանքէն 85ը ստացուած եւ արձանագրուած է, պէտք է 90 ֆր. պատգամաւորի ծախք նշանակել Վարդոյի տետրակին մէջ, քանի որ Պուքրէշի մարմինը յանձնուած կը նշանակէ եւ հրատարակուած է «Դրօշակ»ի մէջ։

7. Պ. Վարդոն Շրջանական Ժողովի եւ Ընդհանուր Ժողովի համար ծախսած է 586 լէվ, բացի Ֆիլիպէի մէջ առած 350 լէվէն։ Կը փափաքինք հասկնալ թէ ընկեր Վարդօ, իբրեւ ուրիշ մարմնի պատգամաւոր, հարկ չէ՞ որ այն մարմինէն ստանար իր ծախքը կամ նոյն մարմնին հաշուոյն անցընէր այդ գումարը(1)։

8. Սուլինայի ենթակոմիտէին 1012,70 ֆր., Յակոբին՝ 8,20, իսկ Վարդոյի ղրկած 1235 եւ 1333ը՝ 80էն

10ական լէվ պակաս են։ Յակոբ եւ Վարդօ յայտնեցին թէ այլ տարբերութիւնները աճիւ են։

9. Կեդր. Կոմիտէն ոչ միայն ամփոփ եւ կանոնաւոր տետրակ մը պարտաւոր էր ունենալ, այլ նաեւ ունենալու էր իւրաքանչիւր մարմնի, Արեւմտեան Բիւրոյի եւ Յուսական մարմինին [համար]՝ առանձին հաշիւներ։

Կ. Կոմիտէի չկանոնաւորուած տետրակներէն հետեւեալ հաշուեկշիռը կրցինք պատրաստել որ կրնայ ամփոփ գաղափար մը տալ շրջանի զրամական գործերուն մասին։

Հաշուեքննիչ յանձնախումբին պահանջին համաձայն Կեդր. Կոմիտէի հաշիւները ամփոփուեցան մէկ տետրակի մէջ եւ կրկին յանձնուեցան քննութեան։

Վահէի պահանջը նկատողութեան առնելով, իրեն պատգամաւորի (?) ծախք որոշուեցաւ 40 լէվ։

Ռուսճուքի հաշուեկշիռին 252 եւ 28 լէվ դումարները նշանակուեցան Կեդր. Կոմիտէի հաշուետետրին մէջ։

Սլիվէնի հաշուեկշիռին եւ Կ. Կ.ի ստացած զրամներու տարբերութիւնը մարմինին քով կը մնայ. տակաւին Կ. Կոմիտէն չէ ստացած։

Սոֆիայի մարմնէն Թիւֆէնկճիէվի յանձնուած գումարն եւս նշանակուեցաւ Կ. Կոմիտէի հաշուեկշիռին մէջ։

Նոյնպէս Գուքրէչի մարմնոյն հաշիւներէն բաց մնացած 90 ֆրանքը։

Վարդոյի պատգամաւորութեան ծախքը պարտական են վճարել։

Հաշուեքննիչ յանձնախումբը, քննելով Կ. Կոմիտէի մէկ տետրակի մէջ ամփոփած հաշիւները, հաստատեց անոնց ճշդութիւնը, որու համեմատ՝ ընդհ. մուտք եղած է 8108,20 ոսկի ֆրանք եւ 11·847,32 լէվ։ Այդ դումարներէն ելքը հանած՝ պատրաստ զրամ կը մնայ Յակոբ Ադամեանի քով 635,50 ոսկի եւ 1416,25 արծաթ լէվ, իսկ Վարդոյի մօտ՝ 2139 ոսկի եւ 4673 արծաթ լէվ։

Լսելով հաշուեքննիչ յանձնախումբին յայտարարութիւնը, որ հաշիւներու ճշդութիւնը կը վկայէր, պատգամաւորները ստորագրեցին հաշուեմատեանը։

Ընկալագրի եւ նուիրատոմսի հարց։— *Որոշուեցաւ որ իւրաքանչիւր խումբի անդամներուն առանձին առանձին ընկալագիր չպիտի տրուի, այլ միայն խումբի անունով։ Իսկ այն անձերը, որոնք որեւէ խումբի չեն պատկանիր, նուիրատոմս պիտի ստանան։ Որոշուեցաւ նոյնպէս յանձնարարել Գալքանեան Շրջանի բոլոր մարմիններուն, որ իրենց քով գտնուած ընկալագիրներու կտրոնները եւ չգործածուածներուն հաշիւը ուղարկեն Կ. Կոմիտէին։*

Կեդր. Կոմիտէն իւրաքանչիւր մարմնէ ստացած զրամին փոխարէն պարտական է անյապաղ նամակ զրել եւ յայտնել ինչ գումար ստացած ըլլալը։

Հաշուեցուցակներու պատրաստութիւն եւ միօրինակութիւն։— *Որոշուեցաւ տպագրուած միօրինակ հաշուեցուցակներէն ուղարկել իւրաքանչիւր մարմինի. նամակագիրը ծանօթ ըլլայ Կ. Կոմիտէին եւ գրէ պաշտօնական թղթի վրայ։ Նամակագրին փոխուիլը պէտք է իմացնել Կեդր. Կոմիտէին։*

Դաշնակցութեան պատկանած գոյքերու մանրամասն ցուցակ։— *Որոշուեցաւ Գալքանեան Շրջանի մարմիններու քով գտնուող Հ. Յ. Դաշնակցութեան պատկանող գոյքերու մանրամասն ցուցակ պատրաստել մինչեւ յառաջիկայ Փետրուարի վերջը։ Այդ մասին Գալքանեան Կեդր. Կոմիտէն առանձին շրջաբերական պիտի ուղղէ մարմիններուն։*

«Դրօշակ»ի բաժնեգին եւ Դաշն. գրքերու եւ պատկերներու հաշիւ։— *Որոշուեցաւ յանձնարարել մարմիններուն, որ իրենց քով գտնուած եւ ասկէ վերջ ստանալիք դաշն. գրքերու եւ պատկերներու, ինչպէս նաեւ «Դրօշակ»ի բաժանորդագրութեան հաշիւները զատ բռնեն եւ առանձին հաշուեկշիռով ուղարկեն Կ. Կոմիտէին։*

Գալքանեան Կ. Կոմիտէն մասնաւոր ընկալագիր պիտի տպագրել տայ եւ ցրուէ մարմիններուն՝ «Դրօշակ»ի բաժնեգիններու փոխարէն տալու համար։

Դրամի փոխադրութեան հարց։— *Հաշիւներու միօրինակութեան եւ դրամի փոխադրութեան համար, որոշուեցաւ [հրահանգել] Գալքանեան Շրջանի մարմիններուն եւ անջատ խումբերուն՝ որ, ըստ Դաշնակցութեան կազմական կանոնագրին ամէն երեք ամիսը անդամ մը իրենց հաւաքական դրամները ուղարկեն Գալքանեան Կեդր. Կոմիտէին, միասին ղրկելով նաեւ եռամսեայ հաշուեցուցակները։*

«Դրօշակ»ի նուիրատուութեանց հրատարակում։— *Որոշուեցաւ որ Գալքանեան Կեդր. Կոմիտէն յանձնարարէ մարմիններուն եւ անջատ խումբերուն, որ դրամի եւ հաշուեցուցակներու ուղարկումը չյապաղեն եւ խնդրել որ «Դրօշակ»ի խմբագրութիւնն ալ իրեն ղրկուած նուիրատուութեանց հրատարակումը չուշացնէ։*

Կանանց խումբեր։— *Որոշուեցաւ յանձնարարել Գալքանեան Շրջանի մարմիններուն, որ ջանան կանանց օժանդակ խումբեր կազմել, եւ նկատի ունենալով այդ տեսակ խումբերու բարոյական ազդեցութիւնը՝ խստապահանջ չըլլալ ամսականի քանակի մասին։ Կանանց խումբերը մէկ ձայնով կը մասնակցին տեղական մարմինի ընտրութեան։*

Զինուորական եւ մարզական խումբեր։— *Որոշուեցաւ յանձնարարել Գալքանեան Շրջանի դաշնակցական մարմիններուն, որ առանձին խումբեր կազմեն, կամ խումբերու անդամներէն փափաքողներուն առանձին վարժութիւններ կատարել տան զինավարժութեան, տեղական պայմաններու յարմարելով։*

Կանոներ ենթակոմիտէի եւ կոմիտէի։— *Մարմինները աւելի գործօն եւ կանոնաւոր ընելու նպատակաւ, հետեւեալ որոշումները տրուեցան։—*

Ենթակոմիտէն կամ կոմիտէն պարտաւոր է առնուազն ամիսը մէկ անգամ ժողով ունենալ. ամէն նիստի արձանագրութիւն պէտք է պահուի եւ ամէն մարմնի վերաբերեալ գործունէութիւն խորհրդակցութեամբ որոշուելի յետոյ պէտք է կատարուի։

Ենթակոմիտէն կամ կոմիտէն պարտաւոր է տարին քանի մը անգամ ընկերական հաւաքոյթներ կազմակերպել, ընկերներու միջեւ կապ հաստատելու եւ յեղափոխական փրոփականտը յառաջ տանելու նպատակաւ։

Ենթակոմիտէի կամ կոմիտէի պաշտօնավարութիւնը կը տեւէ մէկ տարի. անդամները կրնան վերընտրուիլ։

Ոեւէ դաշնակցական ընկեր կամ մարմին իրաւունք չունի Դաշնակցութեան անունով տեղական, եկեղեցական եւ դպրոցական պայքար մղել եւ ոչ ալ խումբերը դործածել այդ նպատակաւ։

Խմբապետները կրնան հաւաքոյթներ ունենալ՝ իրենց ներքին կազմական գործերուն մասին խորհրդակցելու եւ ցանկութիւններն պատկան մարմնին հաղորդելու համար։

Խումբերը եւ խմբապետական ժողովները չեն կրնար առանց իրենց պատկանած մարմնի հաւանութեան որեւէ ձեռնարկ ընել։

Ենթակոմիտէ եւ կոմիտէ, իրենց շրջանէն դուրս որեւէ ձեռնարկի համար, պէտք է կանխաւ Կ. Կոմիտէի հաւանութիւնը առնեն։

Ցառաջիկայ Պատգամաւորական ժողով։— *Ցառաջիկայ Պատգմ. ժողովին մասնակցելու իրաւունք կ'ունենան այն քաղաքները, որոնք առնուազն ենթակոմիտէ մը գոյացնելու չափ կազմական ուժ ունին։*

Պատգամաւորը կ'ընտրուի կոմիտէի կամ ենթակոմիտէի անդամներուն եւ խումբերուն ներկայացուցիչներուն միջոցաւ։ Խումբերն ալ իրենց բաղձանքները կը յայտնեն դրաւոր։

Իւրաքանչիւր քաղաք պէտք է աչխատի պատգամաւոր ընտրել տեղական ընկերներէ. կարեւոր պատճառներով եթէ հնարաւորութիւն չունենան, կրնան ձայն տալ իրենց գործերուն եւ պայմաններուն ծանօթ մէկուն՝ դրաւոր տեղեկագիր եւ հաշուեկշիռ ուղարկելով։

Պատգամաւորի ծախքը ջնջելու է հոգալ ընկերներու մէջ առանձին հաւաքումով եւ կարելի եղածին չափ խուսափելու է բուն յեղափոխական ֆոնտին դրպչելէ։

Ցառաջիկայ Պատգմ. ժողովի գումարումը որոշուած ժամանակամիջոցէն առնուազն մէկուկէս ամիս առաջ պէտք է յայտարարել մարմիններուն։

«Շարժում»ի յօդուածներու մասին։— «Շարժում»ի վերջին «բաց նամակներ»ը Շրջ. ժողովը գտնելով անգործնական եւ անտեղի, իր նկատողութիւնները ըրաւ խմբագրին(2)։

Հայրապետ աղայի խնդիրը։— Դիւանի գանգատներուն մէջ յիշուած էր Հայրապետ աղայի խնդիր մը, որու մասին ապացոյց չունենալով՝ Շրջանական ժողովս անհիմն գտաւ։

Ընտրութիւն Կեդր. Կոմիտէի։— *Երկար խորհրդակցութենէ յետոյ նախ որոշուեցաւ Գալքանեան Կ. Կոմիտէն ամբողջովին մէկ քաղաքի մէջ ընտրել։ Ընտրութեան մասին ալ երկար խօսակցութենէ յետոյ, Ֆիլիպէի մէջ ընտրուեցան հետեւեալ ընկերները։— Երուանդ Ալամճեան, Բարթող Զօրեան, Տիգրան Տումանեան, Յակոբ Սվաճեան եւ Կարապետ Գիոնեան։* Վանոյի պատգամաւորը Գուքրէչ գնացած ըլլալով՝ իր ձայնը տուած էր Ֆիլիպէէն՝ Գիոնեանի, Բարթողի եւ Երուանդի, իսկ Սոֆիայէն՝ Թ. Յակոբեանի եւ Ղ. Մինասեանի։ *Սուլինայի պատգամաւորը, առարկելով թէ ինքը անձամբ ծանօթ ընկերներու միայն քուէ կրնայ տալ, հետեւաբար ինքը միայն Գիոնեանի եւ Բարթողի ձայն կու տայ, մնացեալ պատգամաւորները միաձայնութեամբ քուէ տուին Ֆիլիպէի վերոգրեալ ընկերներուն, որով իրենց ընտրութիւնը օրինաւոր համարուեցաւ։*

Ստորագրութիւններ

---

(1) Հ. Յ. Դ. Սոֆիայի (Յրդ) Ընդհանուր ժողովին, Վարդօ Ոսկեհանճի (Իզմիր) ներկայացուցիչն էր (տեսնել ՆԻՒԹԵՐ Հ. Յ. Դ. ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, Բ. հատոր, էջ 109)։

(2) «Շարժում»ը Գուլկարիոյ մէջ Վարդոյի (Վարդ Պատրիկեան) հրատարակած եւ խմբագրած թերթն էր։ 1904 Դեկտեմբերին, Վարդօ ստորագրած էր «Դաշնակցական ընկերներին» ուղղուած «բաց նամակներ», ուր ընդհանուր բնութագրութեան կ'ենթարկէր կուսակցական–յեղափոխական կարգ մը մարմիններու գործունէութիւնը, գործելու եղանակը եւ, ընդհանրապէս, Դաշնակցութեան կառուցային դրութիւնը։

4.— ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ Հ. Յ. Դ. ՊԱԼՔԱՆԵԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

1905 – 1906 տարեշրջան

Նամակի մեծ չափի 39 էջ, սեւ մելան: Վերջաւորութեան՝ ստորագրութիւն չկայ, բայց կնքուած է Պալքանեան Կ. Կոմիտէի կնիքով:

Առաջին էջի վերի ձախ անկիւնը, հաւանօրէն Արեւմտեան Բիւրոյի կողմէ մակագրուած, կը կարդանք՝ «Ստ. 1 Յունիս 1906»:

Հ. Յ. Դաշնակցութեան Պալքանեան Կեդր. Կոմիտէն 1905–1906 թուականի Շրջանական Ժողովի գումարման համար շրջաբերականներ ղրկած էր նախորդ ժողովի որոշման համաձայն ձայնի իրաւունք ունեցող տասնեւմէկ մարմիններու:

Ժողովի սկզբնաւորութեան համար նշանակուած օրը, 1906 Մարտ 26ին, արդէն ներկայ էին.

Պուլկարիոյ պատգամաւորներ,

1. *Ֆիլիպէն՝ Օր. Սաթենիկ Պարտիզեան (Սաթ)*
2. *Սոֆիայէն՝ Պ. Եսայի Յովհաննէսեան (Զարմայր)*
3. *Ռուսճուքէն՝ Պ. Յարութիւն Փափազեան (Վահան Քաջունի)*
4. *Վառնայէն՝ Պ. Աբրահամ Մաղիկեան (Զաւէն–Աբրօ)*
5. *Պուրկազէն ձայն ունէր Պ. Ռուբէն Զարդարեան (Ասլան):*

Ռումանիոյ պատգամաւորներ,

6. *Քոնսթանցայէն՝ Պ. Սեդրակ Նահապետեան (Զաւէն)*
7. *Սուլինայէն՝ Պ. Գէորգ Շահինեան (Ազատասէր)*
8. *Կալացէն՝ Պ. Մարտիրոս Ենկոյեան (Մարտօ)*
9. *Պրայլայէն՝ Պ. Խաչիկ Իկոյեան (Սուրէն)*
10. *Պուքրէշէն՝ Պ. Գրիգոր Սայեան (Գրքօ):*

Սլիվէնի մարմինը, պատգամաւոր ղրկելու դժուարութիւններն յայտնելով, կը բաւականանայ միայն տեղեկագրով մը:

Կեդր. Կոմիտէն հրաւիրած էր Ոսկեհանքի գործիչ ընկերներէն Պ. Անդրանիկ եւ Վիշապի գործիչ ընկերներէն՝ Թորգոմ, որոնք ժողովին հաւանութեամբ ընդունուեցան եւ ներկայ գտնուեցան բոլոր նիստերուն:

Կեդր. Կոմիտէի անդամները՝ Կ. Գիոնեան, Բ. Զօրեան, Ե. Ալաճաճեան եւ Յ. Սվաճեան՝ ներկայ էին առանց ձայնի:

Կեդր. Կոմիտէի կողմէ ընկեր Գիոնեան նշանակեալ օրը ժողովը բացաւ, ներկայութեամբ տասը պատգամաւորներու, երկու գործիչ ընկերներու, ընդամէնը 12 ձայն, եւ Կ. Կոմիտէի չորս անդամներուն, որոնք ձայն չունէին:

Նախագահ ընտրուեցաւ ընկեր Զարդարեան ու ժողովը սկսաւ իր աշխատութեանց:

Վիշապի ընկերներէն Պ. Սուրէն կամսար նամակով մը ղրկած էր ժողովին եւ կը փափաքէր որ ինքն ալ ներկայ գտնուի: Կարծիքներու փոխանակութենէ ետքը, այդ առաջարկը չընդունուեցաւ ձայներու մեծամասնութեամբ:

Պատգամաւորներու ստուգութիւն.— *Ժողովը քննեց բոլոր պատգամաւորներու վկայագիրները եւ հաստատեց անոնց ընտրութիւններու օրինաւորութիւնը:*

Ընկեր Զարդարեան ներկայացուց Փարիզէն Վարդոյի ղրկած գոց նամակը, Շրջանական Ժողովին յանձնելի: Նամակը կարդացուեցաւ եւ որոշուեցաւ Վարդոյի խնդրի քննութեան ժամանակ նկատի ունենալ:

ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐՈՒ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կեդր. Կոմիտէի կազմած օրակարգի համաձայն՝ որոշուեցաւ կարդալ Կեդր. Կոմիտէի եւ մարմիններու տեղեկագիրները եւ անոնցմէ կազմել ամբողջական օրակարգ մը:

Կեդր. Կոմիտէի ընդարձակ տեղեկագրէն կ'ամփոփենք հետեւեալները.—

1905 Յունուար ամսուն կայացած Շրջանական Ժողովէն ընտրուած Կեդր. Կոմիտէն, պարտականութեան դլուխ անցած օրէն, իր առջեւ ունէր շրջանին մէջ կազմակերպական ոչ մխիթարական վիճակ մը, որ առաջ եկած էր նախորդ Կեդր. Կոմիտէի դիւանի անդամներուն ներքին անհամաձայնութեանց պատճառով, շրջանի կազմին խնամք չտարուելէն, որու վրայ անմիջապէս աւելցաւ Վարդոյի զեղծման անախորժ խնդիրն ալ:

Այս պայմաններուն մէջ Կ. Կոմիտէն նախ ջանացած է թղթակցութեամբ սերտ կապ պահել մարմիններուն հետ, եւ մինչ անցած տարի հազիւ 60–70 նամակ եկած էր Կեդր. Կոմիտէի դիւանէն, այս տարի արդէն 700ը անցած էր: Բացի մասնակի խորհրդակցութեան [համար] յաճախակի հաւաքումներէն, Կեդր. Կոմիտէն ունեցած է արձանագրութեան առնուած 35 նիստեր: Նկատի ունենալով որ մնայուն շրջուն–դործիչի մը կալը ժամանակի հարց կը դառնայ, միւս կողմանէ կարգ մը քաղաքներու ընկերական ներքին կեանքը պէտքը կը զգացնէ այցելու ընկերներու, տարուան սկիզբները ընկեր Գիոնեան [զացած է] Ռումանիոյ քանի մը կարեւոր քաղաքները եւ յաջողած է բաւական արդիւնաւոր կարգադրութիւններ ընել: Անկէ ետքը այցելած է ընկեր Տիգրանեան եւ բանախօսութիւններ ըրած, իսկ վերջին ամիսներուն՝ ընկեր Զարդարեանի կողմէ եղած է արդիւնաւոր այցելութիւն մը Պուլկարիոյ մարմիններուն:

Կեդր. Կոմիտէն մասնաւորապէս Շրջանական ժողովի ուշադրութեան կը յանձնէ Սուլինայի, Քոնսթանցայի, Վառնայի, Սիլիստրէի վիճակը եւ հոն գոյութիւն ունեցող խնդիրները՝ Կ. Կոմիտէի դիւանին մէջ ստացուած բողոքագրերով կամ տեղեկագրերով միասին:

Կ. Կոմիտէն, ընկերներու մէջ կարգապահական ուղղութիւն մը ներմուծելու եւ կազմակերպական գործերը ամուր հողի վրայ դնելու տեսակէտէն, անհրաժեշտ կը դտնէ ներքին ընդհանուր ծրագրի մը մշակումը ու վաւերացումը, որուն համաձայն կը ներկայացնէ նախագիծ մը: Նաեւ պէտք կը զդացնէ վիճակագրութիւններու դրութիւնը պարբերական պարտականութեան մը վերածելու անհրաժեշտութիւնը:

Զնայած կարգ մը ծանօթ խոչընդոտներու, Կեդր. Կոմիտէի եւ շրջանի մարմիններու աշխատութիւնները եկած են բարեյաջող կերպով իրար լրացնելու, սպասուածէն շատ աւելի դրական արդիւնք մը տալով, ընդհանուր մուտք՝ մօտաւորապէս 38·000 լէվ, մինչդեռ նախորդ շրջանին 18–19·000ի միայն կը հասնէր:

Կեդր. Կոմիտէի տեղական ծախքերը, մարմիններուն ալ միասին առնելով, օրինական %ին 10էն քիչ եղած է: Վճարումներ եղած են Արեւելեան ու Արեւմտեան Բիւրոներու հաշուոյն, Ոսկեհանքի, Վիշապի եւայլն: Մնացեալ դումարը պահուած է գանձին մէջ՝ Ընդհանուր Ժողովի որոշելիք ձեռնարկներուն յատկացնելու համար:

Այս տարուան մէջ Երկիր մտնելու համար շրջանէս մեկնած են 9 ընկերներ, որոնցմէ հինգը՝ իրենց անձնական ծախքով: Այդ ընկերներէն մէկը միայն անցած է Պարսկաստան, միւսները Կովկաս կը մտնեն գործով, հոն տիրող խառնակ վիճակին պատճառաւ: Մեկնողներէն մէկ քանին սորված են ռումբի եւ պայթուցիկ նիւթերու պատրաստութիւն՝ Կեդր. Կոմիտէի հրահանգութեան տակ. անոնց մէջ կան նաեւ լաւ զինավարժ ուժեր:

Կեդր. Կոմիտէի աշքառու գործերէն մէկն ալ եղած է «Ռազմիկ»ի հրատարակութիւնը: Մարմիններուն ղրկուած բաժնետոմսերէն կարեւոր մաս մը ծախուած ըլլալով՝ գործի ձեռնարկուած է: Մաս մըն ալ դանձելի եւ չծախուած տոմսեր կան: Թերթը իր ուղղութեամբ ու պարունակութեամբ մեծ ընդունելութիւն դտած է եւ իր 5 ամսուան գոյութեան կարճ ժամանակին մէջ ունեցած է 800 հաստատ բաժանորդներ, ինչ որ Պուլկարիոյ ուրիշ հայ թերթերու ունեցածէն շատ աւելի է եւ օր աւուր աւելնալու յոյսեր կան: Կ. Կոմիտէն այս առաջին 5 ամսուան միջոցին աշխատած է չափէն աւելի խնայող ըլլալ թերթի ծախքերուն մէջ, իսկ պահանջուած աշխատանքը հազիւ կրցած է տանիլ ընկերներու գործակցութեամբ: Յառաջիկայ տարուան համար՝ թերթի յարատեւութեան, կանոնաւորութեան եւ ծաւալման տեսակէտէն կարեւոր կը նկատէ, ինչպէս որ արդէն խմբագիր ընկեր Զարդարեանն ալ կը պահանջէ, օրինակի մը ներկայութիւնը, անոր յանձնելու համար սրբագրութեան, հասցէի, հաշուական եւ ուրիշ այս կարգի աշխատութիւնները, որպէսզի խմբագիրը ազատ ժամանակ ունենայ թերթին պարունակութեան ու ճոխութեան հսկելու, ինչպէս նաեւ կարեւոր կը նկատէ խմբագրի ամսականին վրայ յաւելում մը ընել, քանի որ տրուած ամսականը անբաւարար է՝ համեմատելով գործ դրուած աշխատանքին եւ պէտքերուն: Թերթի պիւտճէն արդէն որոշ չափով գոհացում կրնայ տալ այս պահանջներուն: Կ. Կոմիտէն կ'առաջարկէ նաեւ թերթին «հրատարակչական» ճիւղ մը կցել:

Այս ամէնուն հետ Կեդր. Կոմիտէն Շրջանական ժողովի ուշադրութեան եւ անոր արդար դատաստանին կ'ենթարկէ Վարդոյի զեղծման անախորժ խնդիրը, որուն կ'ինայ ըստ օրինի, պատշաճ քննութիւնը կատարել եւ արժանի վճիռը տալ:

Կեդր. Կոմիտէի տեղեկագրէն յետոյ ժողովը զբաղեցաւ մարմիններու տեղեկագիրներով:

Պուլկազ.— *Ունի տասնեւմէկ խումբ՝ 104 անդամով: Այս խումբերէն մէկը միայն նիւթապէս օժանդակող խումբ է: Ընկերներու մեծամասնութիւնը հայաստանցի մշակներէ կազմուած է. դիւրութիւն չունի ուրիշ դասակարգի պատկանող ազգայիններու հետ յարաբերութիւններ պահելու, հետեւաբար անոնցմէ անջատ կ'ապրին: Գաղութին մեծամասնութիւնը համակիր է Դաշնակցութեան: Մարմինը գոյք չունի. ընկերները շատ շահող ու գործունեայ են: Պատգամաւորի ընտրութեան առթիւ ծագած անհամաձայնութիւններուն վերջ տալու համար ընկերոջ մը այցելութիւնը կը խնդրէն:*

Ռուսճուք.— *Կոմիտէն իր ամբողջ կազմով քանի մը ամիս միայն չարունակած է իր աշխատութիւնները, մէկ–երկու ընկերներու հեռանալուն պատճառաւ: Քաղաքին մէջ կան 9 խումբեր՝ 81 ընկերներով. դըպրոցական պատանիներէ կազմուած երկու օժանդակ խումբեր ալ կան: Շրջակայքը ունի, Սոմովից 3 խումբ՝ 23 ընկերներով, Սվիշտով 3 խումբ՝ 22 ընկերներով, Քորապիա մէկ խումբ՝ 17 ընկերներով: Ընդամէնը 18 խումբ կայ՝ 157 ընկերներով: Վերջերս կազմուած է նաեւ կանանց Կարմիր Խաչի «Մարօ» անուն խումբ մը՝ 44 անդամներով, որուն կ'անդամակցին տիկնանց նախկին «Սօսի» խումբի անդամուհիներն ալ: Կը յանձնարարեն կանանց խումբերու յատուկ կանոնագիր մշակել: Շրջուն գործիչի պէտքը զգացած են միշտ: Զէկոյց տարրերը բաւական գրաւած է մարմինը: Ընկեր Զար-*

դարեանի այցելութիւնը մեծ օգտակարութիւն ունեցած է: Հասարակութիւնը լաւ տրամադրուած է դէպի Դաշնակցութիւնը: Կը վավաքին ներքին կանոնադրութեան մէջ մտցուած տեսնել կարգապահական յօդուածներ: «Ռազմիկ»ը օգտակար կը դտնեն եւ կը բաղձան շարունակել նոյն ուղղութեամբ. թերթը մեծ համակրանք կը վայելէ հասարակութեան բոլոր խաւերէն: Այս տարի հանգանակութիւնը թէեւ աննպաստ ժամանակի մէջ կատարուած է, սակայն շնորհիւ Պ. Զարդարեանի եւ ընկերներու ջանքերուն՝ յաջող եղած է: Իբր գոյք ունին՝ հրացան մը: Խումբերու ընկերներէն կազմուած է 12–16 հոգինոց զինավարժական խումբ մը, որոնք ամիսը քանի մը անգամ զինավարժութեամբ կը պարապին:

Ֆիլիպէ.— Տարւոյն սկիզբը ունեցած է 13 խումբ. խումբերը կանոնաւորելով, այս տարուայ ընթացքին եղած են ընդամէնը 21 խումբեր, թէ՛ արական եւ թէ իգական: Գայաճըքի «Անձնուրաց», Թաթար Բազարճըքի «Ֆէտայի» եւ Պորիսովկրատի «Շմաւոնեան» խումբերով միասին՝ 24ի կը բարձրանայ խումբերու ամբողջ թիւը: Քանի մը խումբեր անկանոն եղած են իրեն վճարումներով եւ ժողովներով: Ընկերներու ընդհանուր թիւը 300ի կը հասնի: Կոմիտէն ընկերներու զարգացման համար վիճաբանական ժողովներ սարքած է: Զինավարժական դասեր աւանդելու աշխատութիւնը յանձնուած է «Վահագն» մարմնամարզական խումբին, որ ընկերներէ կազմուած է արդէն: Զանազան պատճառներով դասերը շատ կանոնաւոր ընթացք չեն ունեցած: Զինավարժութեամբ պարապող 4–5 օրիորդներ ալ կան: «Դրօշակ»ի բաժանորդները աւելցած են, որոնց թիւը կը հասնի 150ի: Հանգանակութեան գումարն է 2·223,70: Գաղութին մեծամասնութիւնը Դաշնակցութեան համակիր է: Քաղաքին երկսեռ թատերասէր, երգեցիկ ու մարմնամարզական խումբերը կազմուած ըլլալով դաշնակցական ընկերներէ, իրենց հանդէս–ներկայացումներով Կոմիտէին օգնած են թէ՛ նիւթապէս եւ թէ բարոյապէս: Այս շրջանին մէջ Կոմիտէն սարքած է քանի մը լսարաններ եւ հանդէս–ներկայացումներ: Հայ մասնաւոր վարժարանը շատ մեծ օգուտ ունեցած է Դաշնակցութեան փրոփականտին եւ ծաւալման. հոն խմբուած են բոլոր ընկերութիւնները՝ երգեցիկ, մարմնամարզական եւ դաշնակցական խումբերը: Տարւոյն մէջ քանի մը հայեր ծեծուած են լրտեսական յանցանքով: Պատգամաւորի ընտրութեան առթիւ անհամաձայնութիւններ ծագած են, բայց ընկերական առեանով մը վերջ տրուած է: Հանգանակութենէ, ներկայացումներէ եւ անդամավճարներէ մուտք եղած է 7418 լէվ. ունին 453 լէվ արժողութեամբ գոյք, եւ զանձելի դրամ՝ 620 լ. 35: Երգեցիկ–թատերասէրի գոյքը՝ ներքին կանոնագրի համաձայն, կը պատկանի Դաշնակցութեան, որու արժէքն է մօտաւորապէս 900 լէվ:

Սոֆիա.— Ունի 6 արական խումբ՝ 61 ընկերներով եւ 1 կանանց խումբ՝ 27–30 ընկերուհիներով: Կայ նաեւ ընթերցարան մը եւ երգեցիկ–թատերասէր խումբ մը: Ընկերներու մէջ զինավարժութեան պահանջը մեծ է եւ եթէ այս պահանջին բաւարարութիւն չտրուի, տեղական կազմակերպութիւնը պիտի տուժէ: Կան 20–25 հնչակեաններ, որոնց հետ ընդհարումներ զոյութիւն չունին: Գործիչի պէտքը զգալի է: Նիւթական հասոյթը եղած է 1968 լէվ 40 սանթ.:

Վառնա.— Մարմինը գործերը նախ վարած է խմբապետական ժողովով: Սկիզբէն գոյութիւն ունեցած են 10 արական խումբեր, իսկ այս տարուան ընթացքին մէջ աւելցած են մէկ արական, 2 տիկնանց (կարմիր Խաչի) եւ մէկ արական կարմիր Խաչի խումբեր: Արծիւ խումբը վերջերս լուծուած է: Բարկէն Սինի ընթերցարանը կը պատկանի Դաշնակցութեան եւ ունի 405 գրքեր եւ այլեւայլ գոյքեր: «Դրօշակ»ի 70 բաժանորդ կայ: Ընդհանուր մուտքը եղած է 4691 լէվ: Ասկէ զատ մարմինը Սասունի եւ Կովկասի արկածեալներուն օգտին հանգանակութիւններ ըրած է:

Սլիվէն.— Սլիվէնի մէջ կազմակերպութիւն եղած է 1895էն ի վեր: Առաջին տարիները յառաջադիմած է այնքան, որքան կը ներէր Սլիվէնի միջավայրը: 1903էն սկսած կանոնաւորուած եւ խումբեր կազմուած են: Ներկայիս Սլիվէն քաղաքին մէջ կան չորս խումբեր. կայարաններէն՝ Գարաբունար ունի մէկ խումբ, Սթրալճա՝ 2, Եմպոլ՝ 1, Քէրմէնլի՝ 1, Բատէ–Մահալէ՝ 2, Գարնապատ՝ 1, ընդամէնը 12 խումբ՝ 180–190 ընկերներով: Շրջակայ միւս քաղաքներու հայութիւնն ալ համակիր է Դաշնակցութեան: Կայարաններու խումբերը հայաստանցի աշխատաւորներէ կազմըւած ըլլալուն՝ զանձանակի դրութիւնը հաստատուած է, փոխանակ ամսավճարի: Ենթակոմիտէի շրջանին մէջ տարբեր կուսակցականներու թիւը խիստ փոքր է թէեւ, բայց կազմակերպուած չըլլալուն, մեր խումբերու դանձանակը կը ձգեն իրենց նուէրները: Քաղաքին երիտասարդութեան զարգացման համար ընթերցարանի մը գոյութիւնը անհրաժեշտ նկատուելով, ենթակոմիտէն, կազմակերպութեան դրամէն 150 լէվի չափ գումար մը ծախսելով, հիմնած է «Անդրանիկ» անունով ընթերցարան մը, ուր տեղի կ'ունենան ամէն տեսակ ընկերական հաւաքոյթներ: Ընթերցարանը ունի 200 լէվ արժողութեամբ գոյք եւ 80 կտոր գիրք՝ 100 լէվ արժողութեամբ. այդ ամբողջը կը պատկանի կազմակերպութեան: Վերջերս կազմուած է նաեւ կանանց խումբ մը, որուն նպատակն է նիւթապէս օժանդակել

Հ. Յ. Դաշնակցութեան եւ ունի 35է աւելի անդամուհիներ: Ենթակոմիտէի ընդհանուր մուտքը եղած է 1462,65 լէվ: Ենթակոմիտէն ջանացած է միշտ բարձր պահել Դաշնակցութեան պատիւն ու վարկը:

Շումէն.— Կազմը ենթակոմիտէի ուժ չունի: Հոս կազմակերպութիւնը միշտ թոյլ եւ անկանոն եղած է: Զանազան առիթներով եւ ազդեցութեամբ խումբեր կազմուած ու քայքայուած են: Վերջերս սկսած է կըրկին կազմակերպուիլ, այժմ ունի 4 խումբ, 25–30 ընկերներով: Նիւթական նպաստը մեծ բան մը եղած չէ: Իրենց տրամադրութեան տակ կը դտնուի «Գետօ Գուլկարացի» ընթերցարանը՝ իր գոյքով եւ ունեցած դրամով: Շրջանի գործիչի պէտքը հոս ալ մեծապէս զգալի է:

Սիլիստրէ.— Այս քաղաքին մէջ կազմակերպութիւն չկայ:

Պրայլա.— Ունին 12 խումբեր՝ 120 ընկերներով: Ընկերներու բացառիկ օժանդակութեամբ 1905 Սեպտեմբեր 11ին բացուած է սրճարան մը, որ Դաշնակցութեան կը պատկանի եւ ունի 500 ֆրանքի գոյք: Ենթակոմիտէն մուտք ունեցած է 2169,60 ֆրանք, որու 1237,60ը խումբերու անդամավճարներէն, 281ը նուէրներէ, 154ը պատկերներէ եւ 500 ալ սրճարանի հասոյթէն գոյացած է: Ընկերական կեանքը շատ լաւ է:

Կալաց.— Ենթակոմիտէն ունի 6 խումբ՝ 67 անդամներով: Ընկերական յարաբերութիւնները լաւ եղած են. ընդհանուր մուտք եղած է 1713 ֆրանք:

Պուրէշ.— Ունի 8 արական խումբեր եւ երկու կանանց խումբեր՝ 29 ընկերուհիներով. ընդամէնը՝ 150 ընկերներ: Նիւթական հասոյթ ունեցած են խումբերէն՝ 1000 ֆր.: Ունի ընթերցարան մը 200 կտոր գրքերով եւ 450 ֆր. արժողութեամբ գոյքով:

Քոնսթանցա.— Նախորդ Շրջանական Ժողովին մասնակցած չըլլալով, մարմինը երկու տարուան տեղեկագիրը միասին կը ներկայացնէ: 1904–1905 տարեշրջանին ունեցած են 7 խումբ, 74 ընկերներով, որոնց մեծամասնութիւնը հայաստանցի մշակներ են: Այդ տարեշրջանին գործերու սակաւութեան պատճառով անդամավճարներու գանձում չէ եղած. կատարուած է միայն, մարմնի աջակցութեամբ եւ քանի մը ազգայիններու նախաձեռնութեամբ, հանգանակութիւն մը, ուրկէ գոյացած է 2700 ֆր.: Նախաձեռնող անհատները այդ գումարը ուղած են ուղղակի Անդրանիկի ձեռքը հասցնել եւ այդ նպատակաւ Արեւմտեան Բիւրոյէն հասցէ ուղած, ստացած եւ Արեւելեան Բիւրոյի ուղարկած են դրամը: Այս բանէն դժգոհ մնացած է տեղական մարմինը, առաջուց Բիւրոյին հեռագրած ըլլալով որ հասցէ չտան հանգանակողներուն: Այդ միեւնոյն շրջանին դանձապահ Գրիգոր Կարապետեանի քով հաւաքուած 1493 ֆր. 50 կազմակերպութեան պատկանող գումարը զանազան առարկութիւններով կը ձգձգուի դրկել պատկան մարմնին: Ներկայ տարեշրջանին, երեք ընկերներու ստիպման տակ, յիշեալ դանձապահը կը խոստովանի որ ծախսած է այդ գումարը իր պէտքերուն: Մարմինը այդ պարոնէն պարտամուրհակ մը առած է, երեք անդամէն տարիէ մը վճարելի: Ներկայիս ունին 8 խումբ՝ 93 անդամներով: Հարուստ դասակարգը անտարբեր է դէպի յեղափոխութիւնը: Անցեալի թիւրիմացութեանց պատճառաւ այս տարի հանգանակութիւն սեղի չէ ունեցած: Անդամավճարները եղած են 836,75 ֆր.: Ընկերներու օժանդակութեամբ, սրճարան մը բացուած է 1905 Յունուարին, որ ունի 1300 ֆրանքի գոյք. արդէն գոյացած չահէն 500 ֆրանք վճարուած է պարտքին եւ տակաւին կը մնայ 800 ֆր.: Պարտքերը վճարելէն յետոյ սրճարանը պիտի ըլլայ կազմակերպութեան սեփականութիւնը:

Սուլինա.— Ունի 13 արական խումբեր եւ կանանց «Արաքս» խումբ մը: Երկու խումբեր եւս կան, որոնք ներքին անհամաձայնութեանց պատճառաւ չէզոքացած են: Այդ երկպառակման սկզբնապատճառ եղողը Սրապիոն Տարօնցին է: Վարդոյի զեղծման խնդիրը իր վնասակար ազդեցութիւնը ունեցած է տեղական կազմակերպութեան վրայ: Ունին Դաշնակցութեան սեփականութիւն եղող «Արարատ» սրճարանը՝ 1000 ֆրանքի գոյքով եւ տարեկան 1500–2000 ֆր. եկամուտով: Կը ստանան 15 հատ «Դրօշակ»: Կը փափաքին միջոց խորհիլ ընկերական համերաշխութիւնը վերականգնելու: Թուլչայի ընկերներն ալ թիւով չատուոր չըլլալով՝ Սուլինայի մարմնին միջոցաւ կամ ուղղակի կ'ուղարկեն իրենց նուիրատուութիւնները:

ՕՐԱԿԱՐԳԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Կեդր. Կոմիտէի եւ իւրաքանչիւր քաղաքի մարմիններու տեղեկագիրներու ընթերցումէն յետոյ, շրջանէն բերուած հարցերն ալ նկատի առնուելով, քննուելիք խնդիրներու ամբողջական օրակարգ մը պատրաստուեցաւ:

Հաշուեքննիչ Յանձնախումբ.— Օրակարգի միւս խնդիրներուն անցնելէ առաջ, ժողովը ընտրեց հետեւեալ ընկերները՝ պ.պ. Եսայի Յովհաննէսեան, Ս. Նահապետեան եւ Յ. Փափազեան, պարտականութիւն տալով անոնց որ մարմիններու եւ Կեդր. Կոմիտէի հա-

չիները մանրամասնօրէն քննելով իրենց տեղեկագիրը ներկայացնեն ժողովին։

Նշանակուած կարգով սկսաւ օրակարգի խնդիրներու քննութիւնը։

Վառնայի խնդիր։— *Սկիզբէն մինչեւ մէկ-երկու ամիս, Վառնայի կազմակերպական, ընկերական գործերը վարած է խմբապետական ժողովը, եւ ընկերներու փափաքով ընտրուած է տեղական մարմին մը եւ վաւերացուած է Կեդր. Կոմիտէին։*

Քիչ յետոյ սկսած են ընկերական անհամաձայնութիւններ ծայր տալ եւ տակաւ առ տակաւ լայն ծաւալ ստանալ, ու տեւած են մինչեւ ներկայ թուականը։ Ներքին այս անհամաձայնութիւններու մասին տեղական կոմիտէն բան մը գրած չէ Կեդր. Կոմիտէին։ Կեդր. Կոմիտէն այդ վիճակին ծանօթացած է Տիգրանեանի բերանացի տուած տեղեկութիւններէն եւ, վերջերս միայն, Սեպտեմբերի մէջ, ընկեր Արշակէն։

Կարդացուեցաւ ընկեր Արշակ Համբարձումեանի մէկ նամակը Սեպտեմբեր 2 թուակիր, որ Վառնայի անհամաձայնութիւններու պատճառները հետեւեալ խնդիրներուն մէջ կը դնէ։—

1. Ստացուած դրքերու հաշիւ չէ պահուած.

2. Գողթան երգեցիկ խումբի հաշիւները անկանոն եղած են.

3. Ոսկանապատի վիճակահանութեան 20 տոմսակներու արժէքին 83 ֆրանքը մնացած է Արթաքիի քով, իսկ միւս մասը՝ անյայտ։

Կեդր. Կոմիտէն Սեպտ. 9ին մանրամասնօրէն կը գրէ ուղղակի տեղական կոմիտէին՝ այդ խնդիրներու մասին, յայտնելով որ իր կողմէ լիազօրութիւն կու տայ ընկեր Արշակին, կոմիտէի անդամներուն հետ խորհրդակցաբար կարգադրելու խնդիրները։ Միաժամանակ ընկեր Արշակ Համբարձումեանին կը գրէ յանձնարարական մը։

Ընկեր Արշակ Համբարձումեան կը տեղեկագրէ թէ 20 տոմսակներու երկուքին տեղը միայն անյայտ է։ Հին կոմիտէի հաշիւները Մ. Երանոսեան չէ ուղած տալ, թէեւ ինք նախկին կոմիտէի անդամ եղած է, պատճառաբանելով թէ Գ. Կէզեանի պիտի դիմեն՝ տեղեկութիւններու համար։

Իսկ կոմիտէն պատասխանելով Կեդր. Կոմիտէի 9 Սեպտեմբերի նամակին, աւելորդ կը տեսնէ ոեւէ լիազօրի ներկայութիւնը եւ աջակցութիւնը տեղական խնդիրները քննելու համար եւ կը պահանջէ իրեն դարձընել այն նամակները, որոնք դրդապատճառ եղած են Արշակին տալու այդ իրաւունքը։

Կարդացուեցաւ նաեւ Գ. Կէզեանի մէկ նամակը, որով բացատրութիւններ կու տար հաշուական խնդիրներու մասին։ Նամակը գրուած է Վառնայի կոմիտէին՝ Կովկասի Կայծքար գիւղէն, 1906 Յունվ. 20ին։

Անկէ ետքը Վառնայի ընկերական կեանքը երթալով աւելի անհամաձայն ու խառնաշփոթ եղած է։ Կ. Կոմիտէն ժողովին ներկայացուց շարք մը բողոքագրեր, որոնք տիրող դրութիւնը երեւան կը բերեն։

Կարդացուեցան Եւարդի Կիմիշեանի 8 Մարտ թուակիր նամակը, Յակոբ Աղամեանի նամակը՝ Մարտ 17ին գրուած, «Սպաղար» խումբի նամակը՝ ստորագրուած 8 ընկերներէ, Լեւոն Թերզեանի կազմած «Սամուէլ Ֆայն» խումբի կողմէ գրուած նամակը՝ 19 Մարտ թուակիր, Արթաքի Խաչիկեանի նամակը՝ Մարտ 20ին գրուած, նոյն ընկերոջ մէկ նամակը՝ Մարտ 20ին գրուած նորակազմ «Մարտիկ» խումբի կողմէն, Տարօն խումբի անդամ Մանուկ Սահակեանի նամակը՝ Մարտ 16ին գրուած, «Հրայր» խումբի 9 անդամներուն մէկ նամակը, Յ. Թաշճեանի մէկ նամակը՝ 24 Մարտին գրուած, օրիորդաց «Արաքս» խումբի 17 անդամուհիներու նամակը՝ գրուած Մարտ 17ին, «Վրէժ», «Յառաջդիմական», «Սպաղար», «Հրայր», «Բողոք» եւ Երզ.-Թատերասէր խումբերու ընկերներէն խառն նամակ մը՝ ստորագրուած 30 ընկերներէ. Վառնայի մէջ կազմուած դատաստանական խորհուրդի նամակը՝ 6 ստորագրութեամբ եւ Մարտի մէջ գրուած։ Կարդացուեցաւ նաեւ ընկեր Զարդարեանի տեղեկագիրը Վառնայի մասին՝ ստորագրուած նաեւ Թորդոմէ։

Բոլոր բողոքագրերու ընթերցումէն հետեւեալ հարցերը դուրս եկան, որոնց մէջ կը մեղադրուին.

1. Ալեքսան Ասլանեան, դիշեր ժամանակ «Արաքս» խումբի անդամուհիներու հանդէպ իր ըրած լրտեսութեան համար, իսկ կոմիտէն՝ իբրեւ զայն անպատիժ ձգող եւ ուղղակի կամ անուղղակի քաջալերող։

2. Կոմիտէն, իբրեւ կամայականօրէն գործող, ընկերական անհամաձայնութիւններուն արծարծումին պատճառ եղող ու կողմնակալ։

3. Կոմիտէն՝ ընկերական դատաստանի կազմը որոշ նկատումներով չվաւերացնող, որ իր եւ ընկերներու համաձայնութեամբ օրինաւորապէս կազմուած էր եւ նպատակ ունէր վերջ տալու ծագած անհամաձայնութիւններուն։

4. Կոմիտէն, խումբերու զարգացման եւ զինուորական պահանջներուն գոհացում չտուող ու ընկերները անպիտակից պահող Դաշնակցութեան ուղղութեան եւ օրէնքներուն։

5. Կոմիտէի անդամ Մուրատ Երանոսեանը, իբր գլխաւոր քաջալերող եւ պահող այս դրութեան եւ իր միւս ընկերները մղող՝ այդ վնասակար ուղղութեան։

6. Մուրատ Երանոսեանը, խումբի ընկերուհիներէն մէկուն հանդէպ իր ունեցած սիրահարական զգացումներուն գոհացում տալու համար՝ կազմակերպութիւնը իբր միջոց ծառայեցնող եւ կազմակերպութեան բարոյականին աղարտ բերող դեր կատարող, մանաւանդ որ ակնարկուած ընկերուհին ալ անպիտակից է Մուրատի այդ զգացումներուն։

7. Կոմիտէի ընկերներու դիրքը երկդիմի՝ Ֆիլիպէի մասնաւոր վարժարանի համար տրուելիք ներկայացման մէջ եւ ո՛չ օրինաւոր Թուսճուքի մարմնին հետ։

8. Նոյն խնդրին առթիւ Մուրատ Երանոսեանի գրած նամակը «Արաքս» խումբին, ստորագրուած Երկանեանի հետ՝ ոչ անկեղծ։

9. Նոր կազմուած խումբերը վաւերացնելու պահանջ։

Բողոքագրերու ընթերցումէն ետքը՝ պ. Աբրահամ Ծաղիկեան իր տեղեկութիւններն ու ծանօթութիւնները տուաւ իւրաքանչիւր խնդիրի վրայ, եզրակացնելով որ, Վառնայի վէճերուն եւ անհամաձայնութեանց պատճառ եղած են Արթաքի Խաչիկեան եւ Պողոս Սրապեան իրենց անվայել եւ անկարգապահ ընթացքով։

Այս ամենէն ետքը ժողովը հետեւեալ եզրակացութեանց հասաւ։

ա. Լրտեսութեան գործին մէջ կոմիտէի ընթացքը դատապարտելի է եւ Ալեքսան Ասլանեան՝ յանցաւոր։

բ. Դատաստանական խորհրդի չվաւերացուելուն մէջ՝ ժողովը միաձայնութեամբ կամայական կը դնէ կոմիտէի ընթացքը։ Իսկ երզ.-Թատերասէր եւ ընթերցարանի խնդիրներուն մէջ՝ կոմիտէն դիտաւորեալ վարմունք ունեցած է։

գ. Սիրահարական խնդրոյն մէջ Մուրատ Երանոսեան դատապարտելի, իսկ Ֆիլիպէի մասնաւոր վարժարանի խնդրոյն մէջ՝ անոր վարմունքը ուղղամտութենէ հեռու եւ դիտաւորեալ գտաւ։ Արթաքի Խաչիկեանի յայտնած կասկածները Մուրատի կամայականութեանց մասին, ժողովը նկատի ունենալ յանձնարարեց։

դ. «Սպաղար» խումբէն անջատուող ընկերներու նորակազմ «Փոթորիկ» խումբի վարմունքը յանցաւոր կը դատուի։

ե. Ընթերցարանի հաշիւներուն մէջ՝ ժողովը նկատելով որ կոմիտէն պատասխանատու եւ հաշուետու չէ ընթերցարանի անցեալ գործունէութեան, որ սկիզբէն մինչեւ վերջը կառավարուած է մասնաւոր վարչութեան մը ձեռքով եւ այս վերջինը պարտաւոր էր հաշիւ ներկայացնելու անդամներուն, ուստի այս պարագային կոմիտէն պատասխանատու չէ։

զ. Գրիգոր Կէզեանի հաշիւներուն եւ անոր [անձին] դէմ յայտնուած բերանացի դժգոհութիւնները նկատողութենէ (արժէքէ) զուրկ դատեց բոլորովին, աչքի առջեւ ունենալով անոր ուղղամտութիւնն ու նամակը։

է. Ժողովը անուշադիր թողուց եւ լարուած դրութեան արդիւնք նկատեց կարգ մը անարժէք ամբաստանութիւններ եւ նամակներ, որոնք ամէնքն ալ տիրող դրութիւնը միայն երեւան կը բերէին։

Ժողովը միաձայնութեամբ հետեւեալ որոշումները տուաւ Վառնայի մասին։

ա. Կոմիտէի ընկերները տարի մը վերընտրելի չեն։ Շրջանական ժողովը խորհուրդ կու տայ, որ յառաջիկային այս կուսներուն մէջ մասնակցութիւն չունեցող ընկերներէ ընտրուի կոմիտէն։

բ. Մուրատ Երանոսեան տարի մը դուրս պիտի մնայ շրջանի կազմակերպութենէն։

գ. Արթաքի Խաչիկեան տարի մը պիտի զրկուի կոմիտէի անդամ եւ խմբապետ ընտրուելու իրաւունքէն։

դ. Ալեքսան Ասլանեան տարի մը պիտի արտաքսուած մնայ Դաշնակցութենէն։

ե. Խմբապետական իրաւունքէ պիտի զրկուին, տարի մը, Արշակ Նրանեան, Զարեհ Նրանեան, Օնիկ Աղամեան, Արմենուհի Կիմիշեան անուն ընկերները, իրենց ստորագրութիւնները հակասական տեղեկագրերու տակ դրած ըլլալնուն համար։

զ. «Փոթորիկ» եւ «Մարտիկ» խումբերը ձայն պիտի չունենան յառաջիկայ տարուան կոմիտէի ընտրութեան մէջ, իսկ «Սամուէլ-Ֆայնը» պիտի մասնակցի։

է. Ժողովը միաձայնութեամբ պարսաւանքի քուէ տուաւ Վառնայի այս խառնակութեանց բոլոր մասնակցողներուն։

ը. Վառնայի մասին ժողովին տուած վերոգրեալ որոշումներուն դէմ առարկողները կամ անոնց անսատողները պէտք է ի սպառ վտարուին կազմակերպութենէն՝ կոմիտէի եւ խմբապետական ժողովի թելադրութեամբ ու Կեդր. Կոմիտէի վերջնական հաստատումով։

թ. Ժողովը յառաջիկայ Կեդր. Կոմիտէին վրայ պարտականութիւն կը դնէ՝ Վառնայի յառաջիկայ ընտրութեանց հսկելու համար իր կողմէն ընկեր մը զրկելու։

Կեդր. Կոմիտէն ժողովի ուշադրութեան յանձնեց վերջին պահուն Վառնայի կոմիտէն ստացուած նամակ մը, որով Վառնայի կոմիտէն առանց փաստի կը յայտնէ, թէ մարմինին ուղղուած նամակներուն պարունակութիւնը կը տեղեկացուի Վառնայի մէջ, եւ Կ. Կոմիտէն պատասխանատու կը ճանչնայ Վառնայի բոլոր խառնակութիւններուն։

Կեդր. Կոմիտէն կը բողոքէ բոլորովին ձրի այս ամբաստանութեան դէմ։ Կ. Կոմիտէն տուաւ այդ առթիւ հարկ եղած բոլոր տեղեկութիւնները. բացատրութիւն պահանջուեցաւ Վառնայի կոմիտէի անդամ եւ պատգամաւոր ընկեր Արրոյէն։

Լսելէ յետոյ, ժողովը ենթադրական եւ լոկ կասկածներու վրայ հիմնուած այդ ամբաստանութիւնը բոլորովին անարդար կը նկատէ եւ կը դնէ Վառնայի կոմիտէին այդ վարմունքը՝ կատարուած ապօրինու-

թիւնները արդարացնելու նպատակաւ ստեղծուած զրպարտութիւն։

Ընկեր Աբրօ ժողովին ուշադրութեան յանձնեց այն պարագան, որ Պօղոս Սրապեանի կողմէ Ալեքսան Ասլանեանի վրայ տեղի ունեցած ծեծի դէպքը անուշադիր անցած է։ Ժողովը Պօղոսի վարմունքը դատաւ կարգապահութեան հակառակ։

Սուլինայի խնդիր։— Կարդացուեցան Սրապիոն Տարօնցիի նամակները՝ Արեւմտեան Բիւրոյին եւ Կ. Կոմիտէին ղրկուած, ինչպէս նաեւ Սրապիոն Տարօնցիի մասին չրջանէն եւ Սուլինայէն եկած բողոքագրերը։ Ժողովը լսեց նաեւ Կեդր. Կոմիտէի բացատրութիւնները ու Պ. Պիոնեանի տեղեկութիւնները, զորս քաղած էր 1905 Ապրիլի մէջ իր Ռումանիա ըրած այցելութեան օրերուն։ Կարդացուեցան նաեւ Սուլինայի տեղեկագիրը եւ Սրապիոնի համակիրներու մէկ տեղեկագիրը՝ անստորագիր։ Լսուեցան նաեւ Սուլինայի, Կալացի, Քոնսթանցայի պատգամաւորներու վկայութիւնները նոյն անձի նկատմամբ։

Ժողովը, ստուգելով Սրապիոն Տարօնցիի նիւթական ու բարոյական զեղծումները Սուլինայի, Պրայլայի, Կալացի եւ Ֆոքշանի մէջ, որոշեց միաձայնութեամբ 5 տարի չընդունիլ Սրապիոն Տարօնցին կազմակերպութեան շարքերուն մէջ։ Այդ ժամանակամիջոցէն ետքը կարելի է ընդունիլ այն պարագային միայն՝ երբ անպայման վստահութիւն ներշնչելէ զատ, իր պատգամաւորի ծախքերուն համար առած 411,50 ֆրանքէն զեղչելով բուն պատգամաւորական 280 ֆրանքի ծախքը, մնացած 131,50ը կը վճարէ։ Ժողովը պարտք կը դնէ յառաջիկայ Կեդր. Կոմիտէին վրայ, որ այս մտքով չրջաբերականներ ցրուէ բոլոր մարմիններուն, զգուշացնելով ընկերները Սրապիոնէն։ Ժողովը որոշեց յանձնարարել յառաջիկայ Կեդր. Կոմիտէին, որ Սուլինայի Նախկին կոմիտէի անդամ Մանուկ Յակոբեանի քով գտնուած բոլոր տոքիմանները պահանջէ։

Սուլինայի ընդհանուր դրութեան համար ստիպողական է, որ Կեդր. Կոմիտէի կողմէ ընկեր մը այցելէ առաջին առթիւ այդ քաղաքը։

Քոնսթանցայի հարց։— Կեդր. Կոմիտէն եւ Քոնսթանցայի մարմինը իրենց տեղեկագիրներուն մէջ կը պարզէին զեղծման խնդիրը։ Նախկին ընկեր Գրիգոր Խաչատուրեան հանդանակութիւններէ դոյացած 1493,50 ֆր. կազմակերպութեան դրամը իւրացուցած է։ Կաղրացուեցաւ Գրիգոր Խաչատուրեանի նամակը՝ ուղղուած Կեդր. Կոմիտէին, 8 Յուլիս 1905ին, ուր բացատրութիւններ կու տայ այս դրամական խնդրոյ մասին։ Քոնսթանցայի պատգամաւորը բացատրութիւններ տուաւ եւ հերքեց նամակի մէջ յիշուած բոլոր ապարդիւնութիւնները։ Ժողովը հիմնուեցաւ Գրիգոր Խաչատուրեանի տուած պատասխանին վրայ, ինչ որ օրինական փաստ էր, թէ յիշեալ անձաւորութիւնը իւրացուցած է կազմակերպութեան 1493,50 ֆր. դումարը։

Ժողովը կատարեալ համոզում գոյացուց Գրիգոր Խաչատուրեանի յանցանքի ծանրութեան վրայ, եւ որպէսզի կազմակերպական կանոններու զծած օրինական սահմանին մէջ արտօնութիւն տրուի յիշեալին ինքզինքը արդարացնելու, հարկ եղած որոշումը կայացնելու համար նախ հետեւեալ հեռագիրը ուղղեց Գրիգոր Խաչատուրեանի հասցէին։

Գր. Խաչատուրեան.

Օպորուլ Նօա 14 Քոնսթանցա

Շրջանական Ժողովը նկատելով ձեր դրամական զեղծումի ծանրութիւնը, կը հրաւիրէ ձեզ անձամբ ներկայանալու Ֆիլիպէ՝ Ժողովիս, մինչեւ երեքշաբթի Ապրիլ 4. հակառակ պարագային Ժողովը ազատ է իր վերջնական որոշումը տալու։ Ժողովը կը վերջանայ երեքշաբթի։

29 Մարտ 1905 — Ի դիմաց Ժողովին՝ ԹՈՐԳՈՄ, ԱՆԴՐԱՆԻԿ

Ապրիլ 1/14ին Քոնսթանցայէն՝ Գրիգոր Խաչատուրեանէ Ժողովը ստացաւ հետեւեալ հեռագրական պատասխանը։

Խմբագրութիւն «Ռազմիկ» լրագրի — Ֆիլիպէ

Թորգոմ, Անդրանիկ,

Անցագիր չեն տար (կամ չկայ. լաւ չի կարդացուիր). Ժամանակը ուշ է, մանաւանդ բաւական ծախք պէտք է. քիչ ժամանակէն դրամական հաշիւներս պիտի կարգադրեմ տեղական մարմնին հետ։

1/14 IV 1905 — ԳՐ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

Ժողովը այս խնդիրը քննած ըլլալով արդէն, հեռագրէն յետոյ հետեւեալ որոշումները եղրակացուց.

Նոր Կեդր. Կոմիտէն պաշտօնապէս պիտի դիմէ Գրիգոր Խաչատուրեանին եւ պահանջէ՝ իւրացուցած 1493,50 ֆր. դումարը երկու ամսուան ժամանակամիջոցին մէջ վերադարձնել կազմակերպութեան. հակառակ պարագային Կեդր. Կոմիտէն արտօնուած է յիշեալի անձին դէմ ամենախիստ միջոցներու դիմելու։

Դրամը այդ պայմանաժամին մէջ գանձելէ յետոյ, յիշեալ Գրիգոր Խաչատուրեանը կազմակերպութեան շարքերէն արտաքսուած ըլլալը Կեդր. Կոմիտէն «Դրօշակ»ի միջոցաւ յայտարարել տայ. իսկ չգանձուելու պարագային՝ Ժողովը կ'արտօնէ յիշեալը պատժել իբր ամենածանր յանցաւոր՝ կազմակերպական կանոններու համաձայն։

Սիլիստրէի խնդիր։— Սիլիստրէ կազմակերպուած չէ եւ մարմին չէ ունեցած։ Կեդր. Կոմիտէն պարզեց իր ունեցած թղթակցական յարաբերութիւնները Գր. Տիրացուեանի հետ։ Կարդացուեցան յիշեալ անձաւորութեան երկու նամակները, որոնց մէջ Վարդոյի համակիր եւ գաղափարակից ու «Ռազմիկ»ի հրատարակութեան հակառակ կ'երեւայ նամակագիրը, Դաշնակցութեան անունով հաւաքուած դրամներն ալ չ'ուզեր յանձնել Կեդր. Կոմիտէին, անվստահութիւն ցոյց տալով ամբողջ կազմակերպութեան նկատմամբ։ Կարդացուեցան նաեւ Կեդր. Կոմիտէի այդ առթիւ նոյն անձնաւորութեան ուղղած նամակները։ Գրիգոր Տիրացուեանի քով մնացած 270 լէվի դրամական հաշիւը Արեւմտեան Բիւրոն հրատարակած է արդէն թիւրիմացութեամբ, առանց Կեդր. Կոմիտէի տեղեկութեան։

Ժողովը պարտք դրաւ նոր Կեդր. Կոմիտէին վրայ, որ իր յարմար դատած եղանակով որոշէ Գ. Տիրացուեանի դիրքը տեղւոյն ընկերներուն հանդէպ, ծանօթանայ տեղական կազմակերպութեան վիճակին, դրամական խնդիրը կարգադրէ եւ ըստ այնմ հարկ եղած տնօրինումը ընէ։

Սոֆիայէն գանգատագիր մը։— Գէորգ Տէր Յակոբեան Սոֆիայէն Մարտ 25 թուակիր նամակով կը բողոքէ եւ կը գանգատի Շրջ. Ժողովին, թէ Սոֆիայի մարմինն կողմէ իր դէմ ամբաստանութիւններ կ'ըլլան, թէ խմբապետական ժողովները չեն լսած իր բողոքները, թէ Կեդր. Կոմիտէին դիմած է եւ անպատասխան մնացած է եւ այս վերջինը քաջալերած է Սոֆիայի մարմինը. կը բողոքէ նաեւ պատգամաւոր պ. Ե. Յովհաննէսեանի ապօրէն վարմունքին դէմ եւն.։

Կեդր. Կոմիտէն յայտնեց որ մէկ նամակ միայն ստացած է եւ անկարեւոր սեպելով պատասխանած չէ ո՛չ զրողին եւ ո՛չ ալ ենթակոմիտէին։ Ասկէ դուրս ոչինչ յայտնի չէ իրենց եւ հետեւաբար յայտնուած մտքերը բոլորովին անտեղի են։ Սոֆիայի պատգամաւոր ընկերը պարզեց Գէորգ Տէր Յակոբեանի դժգոհութեան բուն պատճառները եւ ենթակոմիտէին ձեռք առած օրինական միջոցները։

Շրջանական Ժողովը կը յանձնարարէ որ տեղւոյն մարմինը վերջին անդամ ընկերական ատեանի մը առջեւ քննէ այդ հարցը եւ իր ձեռք բերած արդիւնքը տեղեկագրէ Կ. Կոմիտէին։

Դաշնակցութեան համակիր ընկերութեանց յարաբերական դիրքը։— Դաշնակցութեան անուղղակի կերպով բարոյապէս եւ նիւթապէս օժանդակելու նպատակաւ դաշնակցական ընկերներու կողմէն եւ բացառիկ միջոցներով հիմնուած ընթերցատուները եւ սրճարան-ընթերցարանները կը կառավարուին ընկերներու ընտրած առանձին վարչութիւններով, որ կը գտնուին տեղական մարմիններու հսկողութեան տակ եւ համարատու են։ Առ առաւելն երեք ամիսը անդամ մը հաշիւ կը ներկայացնեն եւ զուտ հասոյթը կը յատկացնեն տեղական մարմնոյն։ Կազմակերպութիւնը երբեք պատասխանատու չէ վնասին եւ պարտքերուն։

Երգեցիկ-թատերասէր եւ նմանօրինակ ընկերութիւնները Ժողովս կ'ընդունի իբրեւ անջատ հաստատութիւններ եւ նոյն ընկերութիւններու պատկանող դաշնակցական ընկերներուն կը թողու իրենց յարմար դատած կերպով օգտակար հանդիսանալ Դաշնակցութեան։

Համակիր վաճառականներու խումբեր։— Նկատելով որ կարգ մը վաճառականներ զանազան քաղաքներու մէջ կը փափաքին օժանդակել Դաշնակցութեան, բայց իրենց յարաբերական դիրքը արգելք կ'ըլլայ մեր կազմակերպութեան օրէնքներուն համեմատ մասնակցելու դաշնակցական մարմիններուն, Ժողովը կ'արտօնէ որ Կեդր. Կոմիտէն չրջուն-գործիչին, իր եւ կամ տեղական մարմնին յարմար մէկ անդամին միջոցաւ յարաբերութիւն հաստատէ այդ կարգի անձնաւորութեանց հետ եւ զանոնք կազմակերպէ առանձին ձեւով մը, պայմանաւ որ որեւէ ձայն չներկայացնեն։

Գաղութի կրթական գործը եւ մեր դիրքը։— Ժողովս կը յանձնարարէ Պալքանեան Շրջանի դաշնակցական մարմիններուն՝ գաղութի կրթական գործով հետաքրքրուիլ, միանգամայն զգոյշ ըլլալով պայքար յառաջ բերելէ։ Դաշնակցական մարմին մը կամ ընկեր մը իրաւունք չունի Դաշնակցութեան անունով մղել եկեղեցական եւ դպրոցական պայքար, եւ ո՛չ ալ խումբերը գործածել այդ նպատակաւ։

Մակեդոնացիներու եւ կառավարական պաշտօնեաներու հետ յարաբերութիւն։— Այս հարցի մասին Ժողովը հետեւեալ եզրակացութեան եկաւ.— Ցանձնարարել որ մարմինները իրենց տեղւոյն մէջ գտնուող վստահելի եւ ազդեցիկ պուլկար քաղաքացիներու հետ անհատապէս լաւ յարաբերութիւններ պահեն, ի հարկին օգտուելու համար անոնց բարեկամական միջամտութենէն՝ կառավարութեան մօտ։

Ներքին ընդհանուր կանոնագրութիւն։— Շրջանական Ժողովը հինգ երկար նիստեր յատկացուց ներքին ընդհանուր կանոնագրութեան մը մշակման եւ վաւերացման համար։ Այդ կանոնագրութիւնը, առանձին տպագրուած, պիտի բաժնուի մարմիններուն, յանձնարարելով որ անոր տրամադրութիւնները ծանօթացնեն ընկերներուն եւ գործերը ըստ այնմ վարեն։

Միջանկեալ նամակներ.— *Կանոնագրութեան մը չակումի միջոցին ժողովին մէջ կարդացուեցաւ ընկեր Սուքէն Կամսարի մէկ նամակը, Ֆիլիպէէն 30 Մարտ թուականով գրուած, որով կ'առաջարկուի Վարդոյի խնդրի քննութեան ժամանակ հրաւիրել նաեւ Վահան Մազմանեանը, քանի որ, ըստ այդ պարոնին, պատասխանատու են այդ խնդրոյն մէջ նախկին Կ. Կոմիտէի անդամները առհասարակ եւ ընկեր Կ. Պիոնեան մասնաւորապէս: Ժողովը որոշեց Վարդոյի խնդրոյն քննութեան ժամանակ կանչել Վահան Մազմանեանը եւ լսել անոր բացատրութիւնները, որմէ ետքը պիտի մեկնի Մազմանեան ժողովէն:*

Կարդացուեցաւ նաեւ նախկին Կեդր. Կոմիտէի անդամ Յակոբ Աղամեանի մէկ նամակն ու հեռագիրը, որոնցմով կը խնդրէր իր ծախքով գալ Ֆիլիպէ, ժողովին, Վարդոյի խնդիրը քննուած ժամանակ հարկ եղած բացատրութիւնները տալու եւ պաշտպանելու ինքզինք իր անձին նկատմամբ տարածաւնուած զրոյցներու հանդէպ: Ժողովը որոշեց ընդունիլ ընկեր Աղամեանի առաջարկը:

«Ռազմիկ» թերթը.— *Նկատի ունենալով, որ «Ռազմիկ»ը Պալքանեան Շրջանին մէջ եւ անկէ դուրս ալ Հ. Յ. Դաշնակցութեան փրոփականտին նպաստող կազմակերպական թերթ է, Շրջանական ժողովը թերթին գոյութեան եւ յարատեւութեան օժանդակելու համար կ'արտօնէ Պալքանեան Կեդր. Կոմիտէին՝ ի պահանջել հարկին մինչեւ 1000 ֆր. փոխատուութիւն ընել: Շրջանական ժողովը ազատ կը ձգէ նաեւ խմբագրական մարմինը թերթի պիւտճէին ներած սահմանին մէջ հարկ եղած ծախքերը ընելու:*

Կեդր. Կոմիտէն է պատասխանատուն թերթի ուղղութեան, եւ հետեւաբար ժողովը ազատ կը ձգէ Կեդր. Կոմիտէն՝ իր յարմար դատած ձեւով կազմելու խմբագրական մարմինը, համաձայնելով խմբագրին հետ:

Հայ մասնաւոր վարժարան Ֆիլիպէի.— *Ընկեր Ռ. Զարդարեան խօսեցաւ Ֆիլիպէի «Հայ մասնաւոր վարժարան»ի հինգ տարուան մէջ ունեցած գործունէութեան մասին: Վարժարանը հիմնուած է Տէր եւ Տիկին Զօրեանցի կողմէ, Ֆիլիպէի մէջ Դաշնակցութիւնը ամուր հողի վրայ դնելու եւ դաստիարակութեան հիմնական ձեւը մտցնելու համար Պուլկարիոյ մէջ: Կրթական տեսակէտով վարժարանը մեծ օգուտ ունեցած է Ֆիլիպէի դպրութիւն, մնալով մի'չտ իր բարոյական բարձրութեան վրայ: Վարժարանը ծառայած է նաեւ դաշնակցական ընկերութիւններու եւ խումբերու՝ իբր ժողովատեղի եւ ռազմական զանազան պատրաստութիւններու վայր: Գաղութին ամէն դասակարգի տղաքները կը յաճախեն վարժարան. կան նաեւ Պուլկարիոյ եւ Ռումանիոյ զանազան քաղաքներէն աշակերտներ:*

Մինչեւ 1905 թուականը վարժարանի նիւթական պէտքերը, մօտ 7000 ֆր., կը հոգացուէին աշակերտներու թոշակներով, հիմնադիրներու անձնական զոհողութիւններով եւ Կովկասէն կրթասէր անձնաւորութեանց նուիրատուութիւններով: Վարժարանի ուսուցիչներն եւ ուսուցչուհիները, որոնք ընկերներ են, իրենց վրայ առած են թէ՛ բարոյական-կրթական աշխատանքը եւ թէ նիւթական հոգերու ծանրութիւնը: Իսկ ուսուցչուհիները սկիզբէն մինչեւ այսօր առանց նիւթական վարձատրութեան իրենց բոլոր աշխատանքը նուիրած են:

Սակայն 1905ին Կովկասի մէջ յառաջ եկած քաղաքական դէպքերը արդիլեցին այնտեղէն յուսացուած նիւթական օժանդակութիւնը եւ այսօր վարժարանը արդէն պարտքեր ունի, յառաջիկային համար ալ ներկայ պայմաններով շարունակելը անհնար կը դառնայ:

Ընկեր Զարդարեան կ'առաջարկէ դաշնակցական ընկերներէ հոգատար մասնախումբ մը կազմել, որ յառաջիկայ տարուան համար նիւթական վարչութիւնը իր ձեռքը առնելով՝ ապահովէ անոր դասընթացքը եւ նոյնիսկ շրջանէն անօգնական տղաքներ բերէ եւ դաստիարակէ:

Վարժարանի բացումն ու յարատեւութիւնը ապահովելու համար անհրաժեշտ նկատուեցաւ 9000 ֆր.ի պիւտճէ մը, ուրկէ զեղչելով թոշակներէ գոյացած հասոյթը, բաց կը մնայ 5000 ֆր.: Պատգամաւոր ընկերներու յայտնած կարծիքներէն եւ տուած խոստումներէն տեսնուեցաւ, որ այս 5000 ֆրանքի բացը կարելի է դոցել այլեւայլ քաղաքներէ գոյանալիք ընկերական նուազագոյն նպաստներով (ներկայացում, վիճակահանութիւն, հանդէս եւայլն):

Որոշուեցաւ տեղւոյն դաշնակցական ընկերներէն յարմար դատուած եղանակաւ մասնախումբ մը կազմել, որ պիտի ստանձնէ դպրոցին նիւթական մատակարարութեան հոգը, իր յարմար դատած միջոցներով: Շրջանական ժողովը ջերմապէս կը յանձնարարէ շրջանի բոլոր մարմիններուն եւ ընկերներուն՝ այս օգտաշատ հիմնարկութեան համար ընկերական ամէն աջակցութիւն չզլանալ:

Առաջարկ մը ժողովին.— *Վառնայի պատգամաւոր ընկեր Ապրոն նամակ մը յանձնեց ժողովին, որով կը յայտնէ թէ Վառնայի մասին տրուած որոշումները վնասակար պիտի ըլլան տեղւոյն կազմակերպութեան համար, հետեւաբար ինք ձեռնպահ կը մնայ այդ խնդրոյն մէջ եւ պատասխանատուութենէ զերծ կը սեպէ ինքզինքը: Կ'առաջարկէ, իբր յարմար միջոց, խնդիրը տեղւոյն վրայ քննութեան ենթարկել Շրջանական ժողովի թելադրութեամբ եւ կեդր. Կոմիտէի գործակցութեամբ:*

Ժողովը իր արդէն իսկ կայացուցած որոշումները չփոխելով՝ զանոնք կրկին հաստատեց:

Գործիչի հարց.— *Ժողովը, բոլոր մարմիններու կողմէ եկած պահանջին համաձայն, կ'ընդունի շրջանի գործիչի անհրաժեշտութիւնը եւ պարտք կը դնէ Կեդր. Կոմիտէին վրայ, որ ընդհանուր ժողովէն տեղական պէտքերու համար արտօնուած %ին 10էն չանցնելու կամ պակասը բացառիկ միջոցներով լրացնելու պայմանաւ, աշխատի շրջանի գործիչ մը ունենալու:*

Զինուորական եւ մարզական հարց.— *Շրջանական ժողովը որոշեց պարբերաբար Երկիր մտնելու համար ուժեր պատրաստել, կրթել փափաքողները զինուորական մարզանքով, տալ անոնց այս մասին տեսական եւ գործնական ծանօթութիւններ, ինչպէս նաեւ յեղափոխական գործունէութեան համար անհրաժեշտ գիտական, քիմիական ուսում: Այս նպատակին իրագործման համար հետեւեալ միջոցները խորհեցաւ ժողովը. Կեդրոնական Կոմիտէն փափաքող յարմարագոյն եւ վստահելի ընկերները մէկ տեղ հաւաքէ եւ մասնագէտներու միջոցաւ անոնց հարկ եղածը սորվեցնելէ ետքը, անոնց մէկ մասը ղրկէ Երկիր, իսկ միւս մասը ցրուէ Պալքանի մէջ, այս ձեռնարկէն անկախաբար՝ իւրաքանչիւր քաղաքի մէջ կազմուած զինավարժական խումբերու հարկ եղածը սորվեցնող, կրթիչներ ըլլալու նպատակաւ:*

Այս ծրագրի յաջողութեան համար բաւական կարեւոր դումարի մը պէտքը տեսնուեցաւ թէեւ, բայց ժողովը արտօնեց Կեդր. Կոմիտէն չխնայել դրամը, քանի որ մասնագէտներ պատրաստելու պէտքը չատ զգալի է եւ նպատակը կարեւոր, մանաւանդ որ Ամերիկայի Կեդր. Կոմիտէն ալ պատրաստակամութիւն ցոյց կու տայ ծախքին կարեւոր մէկ մասը իր վրայ առնել:

Վարդոյի խնդիր.— *Այս հարցի մէջ ըլլալով բուն գեղծման խնդիրը եւ պատասխանատուութենց ճշդումը, ժողովը յարմար դատեց բուն հարցերուն անցնելէ առաջ լսել նախ ընկերներ Յակոբ Աղամեան եւ Վահան Մազմանեան:*

Ընկեր Յակոբ Աղամեանի պահանջով կը կարդացուի Վառնայի խմբապետական ժողովին 1905 Մարտ 13 թուակիր նամակը, ուղղուած Կեդր. Կոմիտէին, որով Կեդր. Կոմիտէի ուշադրութեան կը յանձնեն նախկին Կեդր. Կոմիտէի թոյլ վարմունքը եւ յոյս կը յայտնեն որ [նոր] Կեդր. Կոմիտէն պիտի ճշդէ նախկին Կ. Կոմիտէի անդամներու պատասխանատուութենց չափը եւ հարկ եղածը պիտի տնօրինուի:

Յ. Աղամեան *յայտնեց թէ ինք եւ Մարզպետունի բողոքած են դիւանը իրենց ձեռքէն Վարդոյի կողմէն դրաւուելուն դէմ եւ ուրեմն «բողոքած չըլլալու» համար իրենց դէմ եղած ամբաստանութիւնները անտեղի են, քանի որ ա՛յդ իսկ էր իրենց բողոքի նիւթը: Ընկեր Յակոբ Աղամեան յայտնեց, թէ նախորդ Շրջանական ժողովը անտեսած է իրենց բողոքի գլխաւոր կէտերէն մէկը, այն է՝ թէ Վարդոն՝ առանց ընկերներու գիտութեան Սուլինայի մարմնոյն տուած է իր կնոջ հասցէն իբր Կ. Կոմիտէի հասցէ եւ այդ հասցէով 41 մարք ղրկուած է: Հետեւաբար անարդար կը գտնէ նախկին Շրջանական ժողովի որոշումը՝ դիւանի մասին: Յայտնեց ընդարձակօրէն թէ՝ հաղիւ կրնային այդքանն ալ ընել, երբ Վարդոն՝ 15 տարուան գործիչ՝ միշտ հեղինակութիւն մը ունեցած է, անուն մը շինած է, եւ մանաւանդ այն ատեն պաշտպանուած էր աւելի բարձր մարմիններէ:*

Վահան Մազմանեան կը խօսի.— *Մեր մէջ ամէն գործ օրինաւորութեամբ չի կատարուիր: Կեդր. Կոմիտէի բոլոր անդամները պիտի հսկեն ամբողջ շրջանի գործունէութեան: 1904ին Վառնայի Շրջանական ժողովը գումարուած է եւ այդ թուականէն սկսած է այդ գեղծումը: Այդ թուականէն առաջ Վարդոն եկած է Ֆիլիպէ, «Արամեան» խումբի խնդիրը կարգադրելու: Այդ միջոցին Կ. Պիոնեան Վարդոյի համար ըսած է, թէ Վարդոն վստահութեան արժանի չէ: Սակայն, 1904էն առաջ, Կ. Պիոնեան եւ ուրիշներ, որոնք Կեդր. Կոմիտէն կը կազմէին, երբ Վարդօ ժընեւ եղած ատեն հոն կարգադրելիք խնդրի մը համար ձայն տալ հարկ կ'ըլլայ՝ Վարդոյին ձայն չեն տար: Վարդօ գործած է Ֆիլիպէի մէջ ի նպաստ Կ. Կոմիտէին: Կ. Պիոնեան կ'երթայ 1904ի Շրջանական ժողովին՝ Վառնա: Վարդօ, իբրեւ Պուրկազի եւ Շումլայի պատգամաւոր, ներկայ կ'ըլլայ, ուր կ'ընտրուի Կ. Կոմիտէն՝ բաղկացած Վարդոյէ, Ղազար Ղազարեանէ, Յ. Աղամեանէ, Վառնա, եւ Կ. Պիոնեանէ ու Ալճաճեանէ՝ Ֆիլիպէ: Պիոնեան Վարդոյի վրայ զէշ կարծիք ունի, իսկ Ղազարեան ու Աղամեան մեծ համարում ու վստահութիւն ունին, ըստ Պիոնեանի խօսքերուն: Իբրեւ ապացոյց, կան նաեւ Մարզպետունիի (Ղազարեանի) խօսքերը, որ ա՞խ կը քաշէ եղեր Վարդոյի վրայ վստահութիւն ունենալուն եւ անձնուիրութեամբ ու միամտօրէն անոր գործին աշխատելուն համար: Ուրեմն Վարդօ պիտի օգտուէր Մարզպետունիի եւ Աղամեանի այդ լիակատար վստահութենէն: Կ. Պիոնեան, այս բոլորը գիտնալով հանդերձ, թոյլ կու տայ, որ Կ. Կոմիտէի գանձն ու դիւանը մնան Վառնա, բան մը՝ որուն դէմ որեւէ դիտողութիւն ըրած չէ: Ինք ամբողջ դրութեան գիտակից ըլլալով հանդերձ, ձգած է որ Կ. Կոմիտէն խաղալիք ըլլայ Վարդոյի ձեռքին մէջ: Ու Վարդօ կը սկսի չահագործել ընկերներու վստահութիւնը. սակայն ժա-*

մանակէ մը վերջ, երբ իրենց կը տեղեկագրուի, ինք կրկին չէ զգուշացուցած եւ Ֆիլիպէ զումարուած Կ. Կոմիտէի ժողովին մէջ Գիոնեան ըսած է թէ այդ զորձերը իրենց իրաւասութենէն վեր են։ Վարդօ զրամները Աղամեանին չի տար եւ Վարդոյի երկու ընկերներն ալ արդէն կը բաժնուին Վարդոյէն. բայց չնայած որ Գիոնեան այս անդամ կ'ունենայ երեք ընկեր, եւ աւելին՝ Մարզպետունին Սեպտեմբերին Ֆիլիպէ գալով մեծամասնութիւնը Ֆիլիպէ կը գտնուի, ոչ միայն ժողով չեն ունեցած, այլ իրարու հետ համաձայն անգամ չեն գտնուած։ Ֆիլիպէի մէջ Կ. Կոմիտէի ժողովին Վարդոն չներկայացուց հաշիւները։ Այդ ժամանակամիջոցին Վարդոն ստացած չէր նոյնիսկ 3000 ֆր., որովհետեւ Սուլինայի եւ ուրիշ տեղերու հաշիւները շատ աւելի ուշ եկած են։ Այն աստիճան թոյլ եւ անկարող կը գտնուին որ, հակառակ որ վստահութիւն չունին Վարդոյի վրայ, իրենց մէջ եղած սխալը չեն ուզած քննել ու շրջանի մարմինները քոնթրոլ չեն ըրած։ Զորս ընկեր համոզուած ըլլալով Վարդոյի գործումներուն, կրկին ազգու միջոց չեն փնտռած զայն չէզոքացնելու կամ դրութիւնը փրկելու։ Ֆիլիպէի մէջ իրենց զումարած ժողովէն ետք, Վարդօ կը շարունակէ նոյն ընթացքը ու իրենք ալ իրենց թոյլ ընթացքը կը շարունակեն առանց միջոցներ ձեռք առնելու։ Ուրեմն Կ. Գիոնեան աւելի պատասխանատու է, քանի որ միւսները Վարդոյի վրայ վստահութիւն ունէին, անփորձ ու խակ էին, իսկ ինքը հին էր եւ կասկածոտ։

Յ. Ադամեան.— Նախքան Վարդոյի Կ. Կոմիտէի անդամ ընտրուիլը, ի՞նչ կարծիք ունէր Վ. Մազմանեան՝ Վարդոյի վրայ։

Մազմանեան.— Վառնայի տիկնանց խումբերու դրամական հաշիւներու հրատարակութիւններէն՝ համոզուած էի թէ Վարդօ անկեղծ մարդ չէ։

Գիոնեան.— Մազմանեանը Վառնա ապրած է եւ գիտէ՝ թէ Վարդօ տիկնանց խումբի դրամները կերած է։

Մազմանեան.— Այդ հարցը հրապարակուած խընդիր է եւ Տիգրանեան ալ ըսած է թէ միայն աս չէ, դեռ ուրիշ դրամներ ալ կան, որոնց մէջ նաեւ տիկնանց խումբի դրամները։ Երբ յայտներ է թէ, ուրիշ գործումներ եթէ գիտէին, ինչո՞ւ չեն տեղեկացուցած ժամանակին, այսինքն Տիգրանեան ինչո՞ւ չէ տեղեկացուցած, այս վերջինը յայտնած է՝ թէ ձգած են որ տեղական մարմինները փորձառութեամբ համոզուին։

Գիոնեան.— Վառնա եղած ժամանակ մօտիկ բարեկամ եղած են Վարդոյի։

Մազմանեան.— Կը ճանչնա՞ր։

Գիոնեան.— Ե՞ս աւելի կը տեսնուէի, թէ ինք։

Մազմանեան.— Գիոնեան չէզոք եղած է, եւ ինք կուսակցական ըլլալով՝ աւելի շատ կը տեսնուէր Վարդոյի հետ։

Բ. Զօրեան.— Նախօրօք Վարդոյի գործած տիկնանց դրամական գործումը գիտնալէն ետք, Մազմանեան ըրա՞ծ է որեւէ պաշտօնական բողոք, որպէս զի օրինական սահմանի մէջ մտնէր կասկածը եւ այս գործումն ալ չպատահէր։

Մազմանեան, առանց խորին համոզում ունենալու, չէ ուզած եւ իրաւունք ալ չունէր բողոք ներկայացնելու. իսկ այժմ համոզուած է Գիոնեանի եւ միւս անդամներու պատասխանատուութեան վրայ ու ատոր համար կը ներկայացնէ։ Թոստոմ, Վառնայէն դարձին, իրեն յայտնած է թէ տիկնանց խումբի հաշիւները ինքը քննած եւ ճիշդ գտած է։

Թորգոմ.— Ի՞նչ բաներ ըսած է Գիոնեան Վարդոյի նկատմամբ։

Մազմանեան.— Գիոնեան ըսած է՝ «դուք դեռ այդքաներ գիտէք, տակաւին ինչե՞ր կան»։

Ադամեան.— Մազմանեան կը յայտնէ թէ Վարդոյի դէմ հաստատ փաստեր չունի, ու յետոյ կը հարցընէ թէ ի՞նչպէս ընտրեր են Վարդոն Կ. Կոմիտէի անդամ։

Մազմանեան.— Գիոնեան վստահութիւն չունէր Վարդոյի վրայ. ի՞նչպէս պաշտօնավարել ուզած է անոր հետ։

Գիոնեան.— Ադամեան թո՛ղ ըսէ թէ Ֆիլիպէի մէջ զումարուած ժողովին ի՞նչ ընթացք բռնած են Վարդոյի դէմ։ Ադամեան չըսա՞ւ որ եթէ ժողովը հոս չըլլար Վարդոն յաղթական պիտի ելլէր ու ճշմարտութիւնը ծածկուէր։

Մազմանեան.— Ադամեան ըսած է որ Գիոնեան եւ Ալաճաճեան թոյլ կը վերաբերուին։

Ադամեան.— Ես միայն այն ըսի, որ Գիոնեանի եւ Ալաճաճեանի թուլութենէն կամ կորովէն կախում ունի գործը։

Մազմանեան նախորդ՝ 1905ի Շրջանական Ժողովին մեկնած միջոցին, ըսած է Գիոնեանին, որ եթէ յառաջիկային Կ. Կոմիտէի անդամ ընտրուի Վարդոն, շատ մը խմբապետներ եւ ընկերներ պիտի հրաժարին, որոնց մէջ նաեւ ինք։ Գիոնեան պատասխանած է՝ «Դաշնակցութեան ալ շա՛տ հոգն էր»։

Ընկեր Մազմանեան եւ Յ. Ադամեան իրենց ըսելիքները յայտնելէ ետք, ըստ որոշման ժողովէն մեկնեցան։

Ժողովը նախ ուզեց քննել առանձնապէս Վարդոյի գործման խնդիրը եւ գոյացնել այդ մասին իր վճիռը եւ անկէ ետք անցնիլ պատասխանատուութեանց ճշդումին։

Գործման Խնդիր.— Կ. Կոմիտէն իր տեղեկագրով պարզեց թէ, նախորդ Շրջ. Ժողովի որոշման հակառակ, Վարդօ մերժած է Կ. Կոմիտէին յանձնել իր քով մնացած կազմակերպութեան 6000 ֆրանքը, տալով միայն մաս մը դումար, ինչպէս նաեւ, հակառակ եղած գիմումներուն, չէ յանձնած Կովկասէն եկած եւ կազմակերպութեան պատկանող 2000 բուպլին. հետեւաբար Կ. Կոմիտէն ժողովին տրամադրութեան տակ կը դնէ այս հարցին վերաբերեալ բոլոր փաստաթուղթերը, ինչպէս նաեւ այդ մասին շրջանի մարմիններէն եկած պահանջը, որպէսզի ժողովը այս խնդրին մասին տայ արդար որոշում։ Կ. Կոմիտէն յայտնեց նաեւ, որ կազմակերպական կանոններու 129րդ յօդուածի համաձայն, Վարդոն նախապէս հրաւիրած է ժողովին ներկայ ըլլալու եւ իր գործած գործման մասին բացատրութիւն տալու։

Վարդօ այս հրաւէրին պատասխանած է նամակով մը, ուղղուած Շրջանական Ժողովին, 1906 Մարտ 16 թուականաւ։

Ժողովս նկատի ունենալով թէ կազմական կանոնագրի 129րդ յօդուածի տրամադրութիւնը յարգուած է նախապէս եւ թէ Վարդօ, չուզելով օգտուիլ այդ արտօնութենէն, հակասական նամակով մը մերժած է ներկայանալ ժողովին, մէկ կողմէ յեղափոխական ոեւէ մարմնի նկատմամբ (բացի Ընդհանուր Ժողովէն) անվստահութիւն յայտնելով, միւս կողմէ իր անձնական զբաղումները առարկելով, եւ վերջապէս նկատի ունենալով, որ յանձնախումբի մը առաջարկով [Վարդօ] խնդրի քննութիւնը յեղափոխական ճամբէն դուրս ձգել կ'ուզէ, — ժողովս գտնելով այս առաջարկը ապօրինի եւ [Վարդոյի] առարկութիւնները անընդունելի, բացարձակապէս մերժեց յեղափոխական գործումի մը խնդիրը ձգել ո՛չ—պաշտօնական յանձնախումբի մը, այլ որոշեց քննութեան ձեռնարկել եւ տալ իր որոշումները՝ հիմնուելով իր ձեռքի տակ ունեցած վաւերաթուղթերուն եւ պաշտօնական տեղեկագրերուն վրայ։

Կարդացուեցան Կ. Գիոնեանի տեղեկագիրը՝ 1/14 Փետրուար 1905ին գրուած, Վարդոյի առաջին նամակը՝ Գիոնեանի յանձնուած Վառնայի մէջ, Յունուար 28ին Կ. Կ.ի գրած նամակը (№ 1)՝ ուղղուած Վարդոյին, 1905 Փետրուար 7ին գրուած Վարդոյի պատասխանը Կ. Կոմիտէին, Փետրուար 14 թուակիր Կ. Կոմիտէի նամակը Վարդոյին, 17 Մարտ թուակիր՝ Արեւմտեան Բիւրոյի նամակը, Վարդոյի խնդրին մասին, Կ. Կոմիտէին, 25 Ապրիլ թուակիր՝ Արեւմտեան Բիւրոյի նամակը, Խորհուրդին կողմէ, Վարդոյին, 14 Յունիսի Բիւրոյի մէկ նամակը Վարդոյին, Վարդոյի նամակին պատճէնը՝ ղրկուած Արեւմտեան Բիւրոյէն Կ. Կոմիտէին։ Նկատի առնուեցան նաեւ Վարդոյի հրապարակաւ տուած բոլոր բացատրութիւնները եւ Արեւմտեան Բիւրոյի յայտարարութիւնը՝ «Դրօշակ»ի մէջ։ Կարդացուեցան Կեդր. Կոմիտէի նամակները, ուղղուած Բիւրոյին եւ Դաշնակցութեան Խորհուրդին, 1905 Մարտ—Ապրիլին։

Նկատելով թէ Վարդօ պարզապէս խաբած է նախորդ Շրջանական Ժողովը, խոստանալով իր քով գտնուած դրամը յանձնել Շրջանական Ժողովի որոշած եւ Կ. Կոմիտէի անդամ Գիոնեանին եւ չէ յանձնած, իբրեւ փախուստի միջոց անհիմն, կազմական կանոններու հակառակ ու իրար հակասող պատճառաբանութիւններ մէջտեղ դնելով,

Նկատելով որ Վարդոն ոչ մէկ օրինական իրաւունք ունէր կազմակերպութեան դրամը իր քով պահելու եւ չյանձնելու Կ. Կոմիտէին,

Նկատելով որ Կ. Կոմիտէի եւ Արեւմտեան Բիւրոյի կրկնակի պահանջներէն եւ ազդարարութենէն ետքն ալ շարունակած է իր ապօրինի եւ հակակազմակերպական ընթացքը, միշտ չյանձնելով պահանջուած դրամը՝ իր պաշտօնական պատկանեալ մարմնին,

Նկատելով որ Արեւմտեան Բիւրոյի կողմէ պաշտօնական օրկանի մէջ եղած յայտարարութենէն ետքն ալ անսասան գտնուած եւ դրամը շարունակած է իւրացուցած պահել,

Նկատելով որ մերժեց Շրջանական Ժողովին ներկայանալ եւ վերջին անգամ դրամը յանձնել կամ ինքզինքը արդարացնել,

Նկատելով որ Դաշնակցութեան մէջ Վարդոյի այս անօրինակ ընթացքը բարոյապէս խիստ վատ ներգործութիւն մը ունեցած է, ո՛չ միայն շրջանին, այլ նաեւ Դաշնակցութեան բոլոր մարմիններուն վրայ,

Նկատելով որ Վարդոն իր գործումը պարտկելու համար դիմեց հրապարակային զրպարտութեանց, անուանարկելով ո՛չ միայն յայտնի գործիչ ընկերներ, այլ նաեւ Դաշնակցութեան առհասարակ բոլոր մարմինները,

Ուստի Ժողովը եկաւ այն հաստատ համոզման, թէ Վարդօ, անբարեխղճօրէն իւրացնելով՝ վատնած է իր անձնական պէտքերուն կազմակերպութեան վերաբերող եւ այդ անուան միայն յատկացուած 6000 ֆր.ը, ինչ որ դրդապատճառն իսկ է իր բարոյական բոլոր աղտոտութեանց. հետեւաբար Ժողովը կը ճանչնայ Վարդոյի այս արարքը իբր դողութիւն եւ զինքն ալ՝ գործարար, խարդախ ու անուանարկիչ։

Կարդալով նաեւ Կովկասէն գէնքի եւ ռազմական նիւթերու փոխադրութեան համար Արեւելեան Բիւրոյէն Վարդոյի հասցէին ղրկուած 2000 բուպլիի խնդրոյն վերաբերեալ բոլոր տոքիւմանները, Ժողովը հաստատ համոզում գոյացուց, որ Վարդոն կազմակերպութեան ա՛յդ դրամն ալ իւրացուցած է՝ ինքնարդարացման նոյն անհիմն եւ անիրաւ պատճառաբանութիւններով։

Ժողովը միաձայնութեամբ կ'որոշէ գիտակցաբար ու բացարձակօրէն գործարարութիւն ընող Իսակ Առվախի Վարդոյի նկատմամբ յեղափոխութեան եւ կազ-

մակերպական կանոններու տրամադրած ամենածանր պատիժը, անոր վաւերացումը յանձնարարելով Ընդհանուր Ժողովին կամ Դաշնակցութեան Խորհուրդին։

Ժողովը որոշեց Վարդոյի խնդրոյն վերաբերեալ բոլոր տոքիւմանները, իր տուած որոշումին հետ, զըրկել Ընդհանուր Ժողովին, միեւնոյն ատեն պատշաճ լուսաբանութիւնը ընել յանձնարարեց ձեռնհաս մարմիններուն, թէ ինչո՞ւ Արեւելեան Բիւրոն օրին իմացած չ'ըլլար չրջանիս Կ. Կոմիտէին կողմէ ատենին Արեւմտեան Բիւրոյին Վարդոյի զեղծման մասին տուած տեղեկութիւնները, քանի որ մեզի անծանօթ են պարագաները։

Պատասխանատուութեանց ճշդում։— Նախորդ Կ. Կոմիտէի դիւանի անդամներու միջեւ ծագած խնդիրներուն առթիւ հաւաքուած բոլոր գրութիւնները կը կարդացուին, ժողովի որոշմամբ՝ Ցակոբ Ադամեանի ներկայութեան։ Այս վերջինը կը բողոքէ, նախորդ Շրջանական Ժողովի տուած որոշումները Վարդոյի նկատմամբ թոյլ գտնելով, եւ կը յայտնէ թէ ժողովը անտեսած է մէջտեղ դրուած շատ մը փաստեր, որոնց գլխաւորը՝ առանց ընկերներու գիտութեան դրամի փոխադրութեան համար Վարդոյի կողմէն իր կնոջ հասցէն Սուլինայի կոմիտէին տրուիլը կը համարէ. կ'առարկէ թէ նախորդ Շրջանական Ժողովը զիրենք կը մեղադրէ ուշ բողոքած ըլլալուն համար եւ կը յայտնէ թէ իրենց դիրքը այդ միջոցին թոյլ չէր տար այլ կերպ վարուիլ, քանի որ Վարդո մեծ ազդեցութիւն ունէր եւ կարելի չէր առանց հիմնական փաստերու պաշտօնական բողոք ներկայացնել իր դէմ։ Վարդո իր այդ ազդեցութեան շնորհիւ կարողացած էր չէզոքացնել կամ հեռացնել Գուլկարիայէն ծանօթ գործիչներ՝ Հրաչեայ, Վահան Մանուէլեան եւ ուրիշներ։ 1903ի Կ. Կոմիտէն կազմալուծուած հռչակած էր եւ միշտ պաշտպանուած՝ Արեւմտեան Բիւրոյէն եւ բարձրագոյն մարմիններէն։ Ադամեան եւ Մարզպետունի, նկատելով Վարդոյի սանձարձակ վարմունքը, որոշած են հսկել իր գործունէութեան վրայ եւ, փաստեր հաւաքելով, օրինական բողոքներ ներկայացուցած՝ իրենց միւս ընկերներուն, Գիոնեանի եւ Ալաճաճեանի՝ Ֆիլիպէ, ինչպէս նաեւ Արեւմտեան Բիւրոյին։ 1905ին Ռուսճուքի մէջ հաւաքուած Շրջանական Ժողովը ցըրուելու թուականին, իրենք տակաւին դրամական զեղծումի կասկած չեն ունեցած Վարդոյի վրայ։ Հակառակ 1904ին Վառնայի մէջ գումարուած Շրջանական Ժողովի որոշման, — յանձնել դրամական գործառնութիւնները Ժողովէն ընտրուած գանձապահ Ցակոբ Ադամեանին, — Վարդոն իր հասցէին ստացած է զանազան քաղաքներէ գումարներ, ինչպէս նաեւ անձամբ գանձած է իր ճամբորդութեանց միջոցին։ Ցակոբ Ադամեան բողոքած է Ֆիլիպէի իր ընկերներուն՝ Վարդոյի այս վարմունքին դէմ։ Բողոքէն յետոյ Ֆիլիպէի մէջ կայացած Կ. Կոմիտէի Ժողովին տրուած որոշումն ալ չէ գործադրած Վարդո, այն է՝ Վառնա դառնալուն յանձնել հաշիւները եւ դումարները գանձապահին։

Գիոնեան պատասխանեց իր դէմ եղած ամբաստանութեանց (թէ՝ ինք կը ճանչնայ եղեր Վարդոն՝ իբրեւ զեղծարար եւ անվստահելի. յանձն առած է անոր հետ պաշտօնավարել եւ այդ պաշտօնավարութեան միջոցին ալ ոչ մէկ ճիգ չէ ըրած հսկելու Վարդոյի արարքներուն վրայ եւ կասեցնելու անոր զեղծումները)։ Գիոնեան ընդարձակօրէն պատմեց եւ պարզեց թէ ի՛նչպէս ծանօթացած է Վարդոյի հետ եւ ի՛նչ չափով կը ճանչնայ եղեր զինք մինչեւ 1904ին Վառնայի մէջ գումարուած Շրջանական Ժողովը։ Գիոնեան, շատ մօտիկ յարաբերութիւններ չունենալով, հեռուէն լաւ պաղափար կազմած չէ Վարդոյի բնաւորութեան ու խառնուածքի մասին, եւ հարկ եղած պարագային կըրցածը ըրած է՝ անոր վնասակար ազդեցութիւնը կասեցնելու համար։ Սակայն երբեք չէ կասկածած, փաստ մը չէ ունեցած թէ Վարդոն կրնայ զեղծարար մը ըլլալ։ 1904ի Շրջանական Ժողովէն առաջ, Վարդո, Արեւմտեան Բիւրոյէն ստացած յանձնարարականներով ու վկայագրով, պտտած է Գուլկարիոյ զանազան քաղաքները եւ ատենին Կ. Կոմիտէին դէմ փրոփականտ ըրած է. եւ որպէսզի Շրջանական Ժողովի ընտրութիւններուն մէջ իրեն նպաստաւոր հող ունենայ, աշխատած եւ յաջողած է յետաձգել այն ատենի համար անհրաժեշտ պահանջ դարձած Շրջանական Ժողովի գումարումը։ Ատկէ առաջ Ժընեւ գացած եւ Կ. Կոմիտէն ու շրջանի գործերը ուզած կերպով ներկայացնելով՝ այլեւայլ դաշնակցական գործեր վարելու պաշտօն ստացած եւ, հակառակ ատենին Կ. Կոմիտէի Բիւրոյին ըրած դիտողութիւններուն, այդ մարմնին անդամ նշանակուած է, այն օրէնքի հիման վրայ՝ թէ Բիւրոն իրաւունք ունի շրջանի մը այս կամ այն մարմինը գօրացնելու նպատակաւ իր կողմէն ընկեր մը տալու։ Այդ իմաստով գրուած նամակ ունի Բիւրոն. որով, հակառակ ատենին Կ. Կոմիտէին եւ Գիոնեանի դիտողութեանց, Վարդոյի մուտքը Գալքանեան Շրջանի կազմին մէջ պաշտօնական գոյն կը ստանայ, սակայն ատենին Կ. Կոմիտէին հետ գրեթէ գործակցութիւն չ'ունենար, բացի Ֆիլիպէի մէջ ըրած մէկ ժողովէն։ Վարդո սակայն աշխատած է Շրջանական Ժողովէն առաջ իրեն հող պատրաստել եւ այդ եղած է գլխաւորաբար Գիոնեանի Կովկաս եղած միջոցին։ Վարդո 1903ի վերջերը, իբրեւ Բիւրոյէն եկած մարդ, յանձնարարած է Ռուսճուքի կոմիտէին յանձնել անպաշտօն Ա. Շահպազեանի 250 ֆրանք՝ կազմակերպութեան դրամէն, մինչդեռ անկէ քիչ առաջ, Բիւրոյի անունով խօսելով Ռուսճուքի մարմինին, Կ. Կոմիտէն անվաւեր ճանչցուցած է, Շրջանական Ժողովի գումարման համար անոր ըրած հրաւէրը անընդունելի գըտած, ու նոյնիսկ Գալաֆաթի տեղորին համար հարկ եղած դրամը վճարելու արգելք եղած է։ Շրջանական Ժողովին (1904, Վառնա) այս բոլոր փաստերը մէջտեղ դրած է Գիոնեան, որպէսզի Պատգամաւորները տեղեակ ըլլան գործերու ճշմարիտ դրութեան։ Ընտրութեան ժամանակ, Վահէի (Ցակոբ Ադամեան) և Մարզպետունիի (Ղազար Ղազարեան) մասին հարկ եղած դիտողութիւնները ըրած է եւ յաջողած է Վարդոյի առաջարկները — կազմակերպական դրամով փոխադրել «Շարժում»ը Ֆիլիպէ, տարեկան որոշ դումար յատկացնել «Շարժում»ը կազմակերպական թերթ դարձնելու համար, զինքը չրջուն գործիչ ընտրել տարեկան 3–4000 ֆրանքով եւայլն — վիժեցնել։ Այս ցուցմունքներէն յետոյ՝ Շրջանական Ժողովէն Վարդոյի ընտրութեան ինք պատասխանատու չէր, քանի որ ընտրողի ձայն իսկ չունէր։

Պաշտօնավարութեան միջոցին Վառնայի դիւանը իրենց՝ Ֆիլիպէի ընկերներուն՝ գրեթէ բնաւ տեղեկութիւն տուած չէ գործունէութեան եւ դրութեան մասին, հակառակ քանիցս եղած դիմումներուն եւ պահանջներուն։ Սեպտեմբերի մէջ Մարզպետունի Ֆիլիպէ փոխադրուելէ վերջը, Գիոնեանի պահանջմամբ, դրաւոր եւ պաշտօնական ձեւի վերածուած են մինչեւ այն ժամանակ Ֆիլիպէի ընկերներուն անծանօթ մնացած՝ Վարդոյի դէմ եղած գանգատներն ու բողոքները։ Նոյնը ըրած է նաեւ, քիչ մը աւելի ուշ, Ցակոբ Ադամեան։ Խնդիրը իրենց պաշտօնապէս պարզուելէն յետոյ, ամէն ջանք թափած են, առանց չրջանը յուզելու եւ երկպառակութեանց տեղի տալու, թաքստով անհամաձայնութիւնները քննելու եւ վերջացնելու գործը՝ մինչեւ Շրջանական Ժողովի գումարումը (1905 Յունուար, Ռուսճուք), որուն յանձնած են իրենց ձեռքը ամբարուած բոլոր արձանագրութիւնները, տեղեկագրերը, բողոքագրերը եւայլն։ Ուրիշ կերպ կարգադրութիւն ընել անկարելի էր՝ Շրջանական Ժողովին արդէն երկու ամիս մնացած ըլլալով։ Կ. Կոմիտէն Ֆիլիպէ փոխադրելու պատասխանատուութիւնը ստանձնող չկար եւ Վարդը, հակառակ ըլլալով, սպառնալիքներ կ'ընէր. օգուտ մը չունենալէ զատ՝ խնդիրը խճողելու պիտի ծառայէր։ Վարդը իր մօտ գտնուած դումարները ժողովէն առաջ եւ իր ճամբորդութեանց միջոցին հաւաքած էր. զանգատող կողմերը համաձայնութեան մը յանգած չըլլալով՝ մնացեալ երկու ամսեան գործերը վարելու համար միայն տուած են համապատասխան որոշումները։ Դժբախտաբար Շրջանական Ժողովը չէ հաստատած Վարդոյի դրամական զեղծումը եւ իր որոշումները թոյլ եղած են Վարդոյի նկատմամբ, իսկ Կ. Կոմիտէի Ֆիլիպէի երկու անդամներու պատասխանատուութեան եւ վարմունքին մասին՝ քննութիւն իսկ չէ կատարուած։

Ժողովը մանրամասնօրէն քննելով Վարդոյի մասին եղած զանգատներու եւ նիւթական զեղծումի բոլոր պարագաները, լսելով Վահան Մազմանեանի բերանացի ամբաստանութիւնները եւ բացատրութիւնները, նախկին Կ. Կոմիտէի անդամներէն՝ Կ. Գիոնեանի եւ Ցակոբ Ադամեանի բերանացի բացատրութիւնները, նկատի ունենալով միեւնոյն ժամանակ նախորդ՝ 1905ի (Ռուսճուքի) Շրջանական Ժողովի այդ մասին հանած եզրակացութիւնները,

Բացի մէկէ՝ միաձայնութեամբ որոշեց նախկին Կ. Կոմիտէի անդամներէն Կ. Գիոնեան, Ե. Ալաճաճեան, Ց. Ադամեան եւ Ղ. Ղազարեան զերծ նկատել որեւէ պատասխանատուութենէ՝ Վարդոյի զեղծման խնդրին մէջ եւ ատենին Կ. Կոմիտէի դիւանին մէջ ծագած անհամաձայնութիւններուն դէմ։

Կազմակերպական ընդհանուր հարցեր։— Հ. Ց. Դաշնակցութեան 1904–1905ին Երկրէն դուրս եւ Երկրին մէջ ունեցած գործունէութեան տեղեկագիրը կարդացուեցաւ եւ խորհրդածութիւններ եղան։ Կարդացուեցան Արեւմտեան Բիւրոյի տեղեկագիրը, Ամերիկայի վերջին Պատգամաւորական Ժողովի կարգ մը որոշումները եւ Կովկասեան գործունէութեան Նախագիծը։

Ժողովը ստացաւ ընկեր Սուրէն Կամսարի նամակը, 5/18 Ապրիլ 1906 թուակիր՝ Ֆիլիպէէն, որով կը յայտնէ թէ իմացած է որ Ժողովը սկսած է զբաղիլ Երկրի հարցերով եւ կը փափաքի մասնակցիլ Ժողովի վերջին նիստերուն։ Ժողովը որոշեց ընդունիլ զայն իբրեւ խորհրդական, մինչեւ Ընդհանուր Ժողովի երթալիք պատգամաւորի եւ Կ. Կոմիտէի անդամներու ընտրութիւնները։

Արբո կ'առաջարկէ արձանագրել ընկեր Բարթողի բացակայութիւնը՝ վերջի երկու նիստերուն։

Խորհրդածութիւն եւ դիտողութիւններ Արեւմտեան Բիւրոյի 1905 Հոկտեմբեր 1 թ. տեղեկագրին եւ Կովկասեան գործունէութեան նախագծի մասին։— Ժողովը որոշեց յանձնել Գալքանեան Շրջանի պատգամաւորին՝ հետեւեալ կարծիքներն ու դիտողութիւնները, որպէսզի զանոնք ներկայացնէ Ընդհանուր Ժողովի ուշադրութեան։

1. Կովկասի հայ–թաթարական կռիւները ուսումնասիրելու եւ տեղեկութիւններ տալու համար Արեւմտեան Բիւրոն Կովկաս ղրկած է ութը ուսանողներ եւ ուսանողուհիներ. ինչո՞ւ մինչեւ հիմա նոյն տեսակ ուսումնասիրողներ չեն ուղարկուած նաեւ Թրքահայաստան։

2. Երկրի մէջ կազմակերպութիւն չեղած վայրերը

ամէն միջոցներով ու զոհողութեամբ աշխատելու է կազմակերպութիւն ստեղծել։

3. *Երկրի մէջ գոյութիւն ունեցող կազմակերպութեանց տալ, առանց անդամներու թիւի ու ցեղի նկատողութեան, Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրաւունք։*

4. *1905ի Խորհուրդին կողմէ Սեբաստիոյ մասին տրուած որոշումը հիմնուած է աշխարհագրական սըխալ ծանօթութիւններու վրայ. չրջանը ռազմական տեսակէտէ ոչ մէկ յարմարութիւն չի ներկայացներ յեղափոխական գործունէութեան համար։*

5. *Որպէսզի Յեղափոխութիւնը ժողովրդական ըլլայ եւ կատարուած յեղափոխական որեւէ ձեռնարկէ յետոյ Երկրի կազմակերպական գոյութիւնը մնայ եւ իր իսկ տեղական ուժերով կրկին ապրի ու զարգանայ, կ'առաջարկուի որ Դաշնակցութիւնը, իբր էական գործ, ամենամեծ ուժը թափէ Յեղափոխութիւնը ժողովրդականացնելու եւ ժողովուրդը ինքնապաշտպանութեան պատրաստէ, որուն համար հարկ է պիտոնէ յատկացնել։*

6. *Հ. Յ. Դաշնակցութեան 1905ի Խորհուրդի կազմած կովկասեան գործունէութեան նախագիծին դէմ Ամերիկայի Պատգամաւորական ժողովի յայտնած պատճառաբանութիւններուն վրայ՝ Պալքանեան Շրջանական Ժողովը կ'աւելցնէ նաեւ հետեւեալը։—*

ա) *Խորհուրդը կը սխալի՝ կարծելով թէ Կովկասի հայ-թաթարական կռիւներու պատճառները տնտեսական-դասակարգային են։ Կովկասի մէջ Դաշնակցութիւնը մղած է լոկ ազգային-քաղաքական ինքնապաշտպանութեան կռիւ եւ ո՛չ դասակարգային. ուրեմն անհիմն է Դաշնակցութեան ծրագրին մէջ սոցիալիստական զաղափարները եւ ուղղութիւնը մտցնելու առաջարկը եւ վնասակար՝ Քրիստոս հայ դատին, որ Դաշնակցութեան միակ դատն է։*

բ) *Դաշնակցութիւնը Կովկասի մէջ կռիւը շարունակելու է ազգային ինքնապաշտպանութեան հողի վրայ։*

7. *Բանտարկեալներու համար որոշուած պիտոնէն բաժնել չրջաններու վրայ եւ անոնց իրաւունք տալ, որ իրենց բաժին ինկած գումարները իրե՛նք փոխադրեն օգնութեան վայրերը՝ նախապէս որոշելով զանոնք։*

Ընկեր Զարդարեան առաջարկեց արձանագրել հետեւեալ դիտողութիւնները.

ա) *Պոլսոյ եւ Իզմիրի մէջ Հոկտեմբերէն առաջ շատ մը ընկերներ բանտարկուած են, նոյնիսկ տանջանքի տակ մեռածներ կան, որոնց անունը զարմանալի է որ Արեւմտեան Բիւրոն չի յիշեր իր 1 Հոկտեմբեր 1905ի տեղեկագրին մէջ։*

բ) *Բժիշկ Զաւրեանի առաքելութեան աւարտումէն առաջ՝ արտասահմանի կարգ մը դաշնակցական թերթերու մէջ յօդուածներու եւ տեղեկութիւններու տըպագրութիւնը կազմակերպական տեսակէտէ անթաքթ կը գտնենք։*

Բանտարկեալներու օգնութիւն.— *Ժողովը որոշեց որ Պալքանեան Կեդր. Կոմիտէն, մինչեւ Ընդհանուր Ժողովի գումարուիլը, Վիշապի եւ Ոսկեհանքի բանտարկեալ ընկերներուն մինչեւ 2000 ֆրանք օգնութիւն հասցնելու իրաւունք ունենայ։*

Հաշուեքննիչ մասնախումբի տեղեկագիր.— *Կարդացուեցաւ հաշուեքննիչ մասնախումբի բերած տեղեկագիրը, որուն ամփոփումը հետեւեալն է.—*

1905–1906 *տարեշրջանին Պալքանեան Կ. Կոմիտէն իր մարմիններէն ստացած է ընդհ. գումար 33·615,60, որմէ չրջանի մարմիններու տեղական ծախքն է 1407,80, կեդր. Կոմիտէի դիւանը ծախսած է 159,45, որով չրջանի ընդհ. տեղական ծախքը, չրջուն գործիչի ծախքն ալ միասին հաշուած, եղած է 2681,80 ֆր., որ ընդհ. մուտքին % 8 տոկոսը միայն կը կազմէ։ Սուլթանայի մարմնոյն քով գանձելի կը մնայ 1·320,70 ֆր., զոր անմիջապէս ուղարկել խոստացաւ պատգամաւորը։*

Ընտրութիւն Ընդհանուր Ժողովի պատգամաւորներուն.— *Հ. Յ. Դաշնակցութեան յառաջիկայ Ընդհանուր Ժողովին երթալիք Պալքանեան Շրջանի պատգամաւորի ընտրութեան համար նախապէս ընտրելիներու ցանկ մը կազմուեցաւ եւ ապա քուէարկութիւնը կատարուելով՝ քուէներու առաւելութեամբ ընտրուեցաւ Կ. Պիոնեան։*

Ընտրութիւն Պալքանեան Կեդր. Կոմիտէի.— *Ժողովը խորհրդակցութիւններէ ետք որոշեց Կ. Կոմիտէի վայրը՝ Ֆիլիպէն։ Յառաջիկային, եթէ Կ. Կոմիտէի անդամներէն մին տեղափոխուի ուրիշ քաղաք մը, անդամակցութենէ հրաժարեալ կը նկատուի եւ միւս անդամները իրենց նոր ընկեր մը կ'ընտրեն եւ կ'իմացնեն նոր ընտրուած ընկերին անունը՝ բոլոր մարմիններուն։*

Ժողովը Կ. Կոմիտէի ընտրութեան համար եւս ընտրելիներու ցանկ մը կազմեց Ֆիլիպէի ընկերներէն եւ քուէարկութիւն կատարեց։ Զայներու առաւելութեամբ՝ Կեդր. Կոմիտէի անդամ ընտրուեցան Ե. Ալաճաճեան, Ռ. Զարդարեան, Բ. Զօրեան, Կ. Պիոնեան եւ Յ. Սվաճեան։

Այլեւայլ խնդիրներ.— *Ժողովը իր վերջին նիստին ստացաւ Ֆիլիպէէն, 6 Ապրիլ 1906 թուակիր Ա. Դաւիթեան եւ Ա. Իպոյեան ստորագրութիւններով նամակ մը, որով իրենց դժգոհութիւնը կը յայտնեն վերջերս Ֆիլիպէի մէջ իրենց առաջարկութեամբ կայացած ընկերական դատաստանի տուած որոշումներուն մասին։*

Ժողովը, նկատելով որ սոյն անձնաւորութեանց հաւանութեամբ կազմուած է այդ դատաստանական խորհուրդը, որուն տալիք որոշումներուն նախապէս վստահած են եւ խոստացած՝ որ պիտի ենթարկուին անոնց, աւելորդ համարեց վերաքննել այդ խնդիրները։ Շրջանական Ժողովի քարտուղարը պիտի յայտնէ այս որոշումը բողոքողներուն։

Կարդացուեցաւ ընկեր Բ. Զօրեանի հրաժարականը նորընտիր Կ. Կոմիտէի անդամակցութենէն։ Ժողովը միաձայնութեամբ որոշեց չընդունիլ այդ հրաժարականը։

Ժողովը իր նիստերու տեւողութեան միջոցին ընտացած է հետեւեալ հեռագիրները։—

Ռուսճուք, 30 Մարտ 1906

Շրջ. Ժողովին մեր պատգամաւորը, կազմակերպական տեսակէտով, հակառակ «իրաւունքի» ամբաստանագրին, անպայմանօրէն վստահելի է։

ԸՆՏՐՈՂՆԵՐ

Վառնա, 29 Մարտ 1906

Պիոնեան,

Մեր խումբերուն վաւերացումը կը պահանջենք. ասոնք չեն հաստատեր կոր։

ԱՐԹԱՔԻ, ՄՈՎՍԷՍ, ԼԵՒՈՆ

Վառնա, 31 Մարտ 1906

Կիրակի եթէ ճամբայ ելլեմ, Ժողովին կրնա՞մ հասնիլ։

ԱԴԱՄԵԱՆ

Վառնայի պատգամաւոր Աբրօ կ'առաջարկէ արձանագրել իր հետեւեալ գրութիւնը.—

«*Վառնայի մէջ ծագած վէճերուն առթիւ, Վառնայէն եկած բողոքներու մասին տեղական կոմիտէն անդիտակ էր։ Կ. Կոմիտէի պակասութիւնն է (թերացումն է)՝ կանխաւ չիմացնել Վառնայի կոմիտէին ըստ օրինի։*

Այդ բողոքողները կարգ մը աննշան եւ բացարձակ անկիրթ, անխիղճ, նոյնիսկ տեղական կազմակերպութենէն դուրս մարդիկ ըլլալուն համար, կանխաւ յայտարարած եմ թէ ես այդ մասին ձեռնպահ կը մնամ եւ բացատրութիւններ տալ աւելորդ կը համարեմ։ Հակառակ իմ կանխաւ յայտարարութեան, Ժողովը հիմնելով այն անկիրթ մարդոց ապօրինի բողոքներուն վրայ, ուզեց վճիռ տալ առանց երկու կողմը մտիկ ընելու. ես կը գտնեմ Ժողովին այս վճիռը՝ ապօրինի եւ միակողմանի։

Հակառակ իմ արդարացի պահանջիս, այսինքն տեղւոյն վրայ կատարել քննութիւն, հոն կազմել ընկերական դատաստան, որը կրնար ըլլալ միա՛կ միջոցը՝ պատժելու գլխաւոր յանցաւորները՝ [տեղւոյն] ընկերներուն առջեւ։ Այս ալ չընդունուեցաւ։

Կ. Կոմիտէն, Ժողովին հաւանութիւնը չառած, երբ ընկեր մը կը հրաւիրէ, տեսակ մը Ժողովին իրաւունքը ոտնակոխ ընել է։ Հրաւիրուած ընկեր Թորոմ, ըստ իրենց խոստման՝ միայն իր փորձառութեամբ պիտի օգնէր մեզի, բայց իր պատկանած (?) դերէն դուրս սկսեց վիրաւորել զիս եւ իրեն չպատկանած խնդիրներու մէջ մտաւ։

Անցեալ Շրջանական Ժողովին տուած վճիռը քննել եւ բեկանել, ինչ որ մենք այդ իրաւունք չունինք. ա՛ս ալ բացարձակ ապօրինութիւն է եւ կազմակերպութեան պատիւ չի բերեր։

Ես այս ամբողջ բողոքները ըրած եմ թէ՛ բերանացի եւ թէ երկու անգամ ալ գրաւոր։

Այս ամէն ապօրինութեան առջեւ խիղճս անհանդիստ ըլլալուն եւ պատասխանատու չըլլալու համար, չեմ ստորագրեր այս որոշումները, իսկ միւս ամէն որոշումներուն համար խղճի հանդարտութեամբ կը ստորագրեմ»։

Վառնայի պատգամաւոր՝
ԱԲՐՕ

1906 *Ապրիլ 7ին Ժողովի նիստերը աւարտած ու արձանագրութիւնը կազմուած է, որու տակ ստորագրած են Ժողովին մասնակցող տասներկու ձայն ունեցող անդամներու ամբողջութիւնը։*

(Կնիք Պալքանեան Կ. Կոմիտէի)

5.— ՀԱՐՑԵՐ Հ. Յ. Դ. ՊԱԼՔԱՆԵԱՆ ՇՐՋԱՆԷՆ 4ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Նամակի ներքոյ չափի 6 գոյգ թերթերէ կազմուած տետրակ. գրութիւնը կը գրաւէ 9 թերթ՝ գրուած մէկական երես, մանիշակագոյն մելանով։

Առաջին էջը (կողմ) կը կրէ միայն վերի խորագիրը, եւ կարմիր մատիտով մակագրուած է՝ «Ստ. 11 Յունվ. 906», ապա, կապոյտ մատիտով, «№ 1»։

Գրութեան աւարտին, կը գտնենք թուականը՝ 22 Դեկտ. 1905, եւ ստորագրութիւնը՝ «Հ. Յ. Դ. Պալք. Կեդր. Կոմիտէ»՝ կնքուած Կ. Կ.ի կնիքով։

Ցրուած ըլլալով որ այս բովանդակութեամբ «հարցեր»ու չենք հանդիպիր 1905 Յունուարի Ռուսճուքի Շրջ. Ժողովի ատենագրութեան մէջ, պէտք է ենթադրել որ մտքերը արտայայտուած ու

բանաձեւուած են Պալճանեան շրջանի կոմիտէութեանց ժողովներուն մէջ, կամ Պալճանեան Կ. Կոմիտէին իսկ կողմէ:

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԻՆ ՄԷՋ

1. Պատրաստութիւն.— *Ռուս եւ Թուրք կառավարութիւններու հայաջինջ քաղաքականութեանց հանդէպ Հ. Յ. Դաշնակցութեան ինքնապաշտպան ուժերը բազմապատկել ջանալ:*

2. Յառաջիկայ շրջանին համար նիւթական եւ բարոյական շատ աւելի մեծ ուժ մը յատկացնել բո՛ւն Թրքահայ գատին:

3. Ամէն ջանք Թափել՝ Տաճկահայաստանի մէջ բազմապատկելու խումբերը, լաւ զինավարժ եւ փորձառու խմբապետներ ու գործիչներ հայցնելու: Ունենալ խիտ կայաններ եւ յարմարագոյն վայրերու մէջ մթերել ռազմամթերք:

4. Երկրի կոմիտէներուն պահանջքներուն գոհացում տալ լիուլի եւ զօրացնել զանոնք:

5. Մինչեւ հիմա Տաճկահայաստանի մէջ եղած կազմակերպական գործունէութիւնները անբաւարար եղած ըլլալով, յառաջիկային Թէ՛ զինուորումը եւ Թէ փրոփականտը աւելի ուժեղ եւ միահաղոյն ընել հոն:

6. Ապագայ գործունէութեան վայր ընտրել եւ ձեռնարկներ ծրագրել միայն տեղւոյն ծանօթ եւ ձեռնհաս ընկերներու խորհրդակցութեամբ: (Կեդր. Կոմիտէի կողմէ դրուած):

7. Թաքթիֆ.— Երկրի ամէն կողմերը առհասարակ կոտորածներու ենթակայ ըլլալուն՝ յեղափոխական ամէն ձեռնարկի պատճառով, նայիլ ինքնապաշտպանութեան գործին լրջօրէն եւ ժողովուրդը կանխաւ պատրաստել: Երկրի գործիչները կամ մարմինները յեղափոխական փրոփականտ ընեն ժողովուրդին մէջ՝ ինքնապաշտպանութեան անունով, ո՛չ Թէ ապստամբութեան, եւ հասցնեն ժողովուրդը բաղձացուած դիտակցութեան ու վիճակին:

8. Աշխատիլ գործիչներու հսկողութեամբ գնել տալ ժողովուրդին զէնքեր իր իսկ ձեռքով, յաջողելու պարագային նոյնիսկ վճարելով արժէքը կազմակերպութենէն:

9. Թուրքիոյ լուծին տակ գտնուած միւս յեղափոխական ազգերուն հետ կապ հաստատել եւ աշխատիլ որ Դաշնակցութեան գործունէութիւնն ու շարժումները լրացուցիչ հանգամանք ունենան այդ մարմիններու շարժումներուն հետ:

10. Ջանալ, որ ասկէ ետք մեր յեղափոխական շարժումները զիրար լրացնեն եւ այդ ձեռնարկները խմբական–անհատական գոյն չստանան, այլ ուղղակի տանջուող ժողովուրդի բողոքի արտայայտութիւնը ըլլան եւ հաւաքական բնաւորութիւն ունենան: Գործունէութեան պահուն՝ աշխատուի տեղական ուժերու կարելի եղածին չափ զօրաւոր կազմակերպութիւն մը ստեղծել եւ Պատասխանատու Մարմինները տեղական կազմակերպութեան հետ համախորհուրդ գործելու պարտաւորեցնել:

11. Զինակիր խումբերը ցարդ միշտ յարձակումներու ենթարկուելով՝ անձի եւ զէնքի մեծ կորուստ պատճառած են. փոխադրութեան այդ ձեւէն զատ ուրիշ յարմարագոյն միջոցներ ալ խորհուին: Զէնք փոխադրել տալ փորձել քրտերու կամ քիւրտ ցեղապետներու միջոցաւ եւ կամ անոնց հայթայթել տալ: Այս եւ քրտերու հետ համերաշխութեան կապ մը երաշխաւորելու գործին աշխատող յարմարագոյն ընկերներ յատկացնել: Խորհիլ նաեւ զէնքի զանազան մասերը մտցնելով Երկիր՝ հոն պատրաստել տալ յատուկ զինագործներու:

12. Երկիր ղրկուելիք խումբերու ժամանակի եւ պարագաներու նկատմամբ շրջահայեցութեամբ վարուիլ:

13. Նկատի առնելով Սասունի դիրքը եւ յարմարութիւնները՝ ընդունիլ ըստ առաջնոյն ապստամբական վայր եւ հոգ տանիլ:

14. Կիլիկիոյ վրայ ցարդ եղածէն շատ աւելի լուրջ ուշադրութիւն դարձնել եւ պէտք եղածէն աւելի ուժ տալ, քանի իր դիրքով Մեծ Հայքէն աւելի յարմարութիւններ ունի: Հաստատել հոն կեդրոնատեղիներ, զէնք մթերել նախ եւ յետոյ զինել ժողովուրդը: Զգրաղիլ միմիայն Զէյթունով:

15. Պոլիսը ցուցական վայր պահել եւ ուժ տալ:

16. Ընդունելով ցուցական շարժումներու կարեւորութիւնը, կատարել անոնք այն ժամանակ՝ երբ յեղափոխական–զինուորական ուժերը բազմապատկուած կ'ըլլան եւ պարագաները՝ նպաստաւոր:

17. Ամէն կերպ խոյս տալ ուժերու մասնակի ըսպառումներէ եւ պատրաստել զօրեղ ու միահաղոյն ապրստամբութիւն կամ դիմադրութիւն՝ յարմար ժամանակին:

18. Կովկասի խաղաղութենէն ետք հոն ամբարուած կազմակերպութեան զէնքերը մտցնել Երկիր այն ժամանակ միայն՝ երբ ներսէն ամէն պատրաստութիւն տեսնուած եւ ծայր տալու աստիճանին հասած կ'ըլլայ:

19. Կովկասի մէջ նախայարձակ ըլլալէ զգուշանալ միշտ եւ կառավարութեան ուշադրութիւնը ջանալ միշտ հեռու պահել մեզմէ. պատրաստ մնալ դալիք պատահարներու առջեւ:

20. Թրքահայ գատի եւ Կովկասահայ շարժման յարաբերութիւնները ճշդել եւ ուժերու բաշխումը նախագծել Ընդհանուր Ժողովով, միշտ գլխաւոր առաջնութիւնը տալով Թրքահայ Դատին՝ որ մեր յեղափոխութեան հիմն է: (Կեդր. Կոմիտէին դրուած):

21. Կազմել «Զինուորական Բարձրագոյն Խորհուրդ» մը՝ կարող եւ մասնագէտ ընկերներէ եւ անոր

յանձնել Ընդհանուր Ժողովէն ծրագրուած յեղափոխական ձեռնարկներու իրագործումն ու վերին հսկողութիւնը: (Պալքանեան Կեդր. Կոմիտէին):

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ԵՐԿՐԻ ՄԷՋ

22. Նախագծուած ձեռնարկներու իրագործման համար ընտրուած մարմնի անդամներուն հաւանութիւնը առնելու է կանխաւ, որպէսզի մարմինը Ընդհանուր Ժողովի որոշած ամբողջական կազմով մնայ եւ իր ստանձնած գործը չկաղայ: (Կեդր. Կոմիտէին):

23. Երկրի ամէն մարմին Թէ գործիչ՝ նախ քան գործելը, անհրաժեշտ է որ կապուած շրջանին կամ պատասխանատուին հետ ամէն տեսակէտով համաձայնի գործերու մասին, անկէ ետք գործի ընթացքին եւ գործելու եղանակին մէջ ազատ դրայ ինքզինք:

24. Ամէն վայրի մէջ օտարականները — յեղափոխական կամ ոչ — միշտ կասկածելի ըլլալնուն՝ շատ անդամ իրենց հետ յեղափոխական գործն ալ կը վնասուի. աւելի նպատակայարմար է իւրաքանչիւր գործիչ ընտրել հնարաւոր եղածին չափ այն տեղացիներէն՝ ուր որ պիտի ղրկուի կամ պիտի գործէ:

25. Գործիչ մը որեւէ վայր երթալէ առաջ անհրաժեշտ նկատուի տեղական ընկերներու համաձայնութիւնը առնել:

26. Երկիր ղրկուած գործիչներուն անպայման տալ կանխաւ նիւթական եւ բարոյական ապահովութիւն: Գործիչներն ալ այդ նիւթական ապահովութիւնները տեսած ատենին միայն երթան:

27. Աշխատուի, որ Երկրի Պատասխանատու Մարմինները իրենց գործունէութեան շրջանակի ծանօթ ընկերներէն [կազմուած] ըլլան:

28. Տաճկահայաստանի վերաբերմամբ գծուած ցենզը մեղմացուի, որպէսզի Տաճկահայաստանէն աւելի շատ թիւով պատգամաւորներ կարենան գալ Ընդհանուր Ժողովներուն:

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԷՆ ԴՈՒՐՍ

29. Եւրոպական փրոփականտ.— *Ընդհանուր Ժողովը աշխարհական պատուիրակ մը ղրկէ Լա–Հէյի Ժողովին, Հայկական Հարցին զարկ տալու համար:*

30. Օտար մամուլի միջոցաւ եւ անհատական կամ հաւաքական աշխատութիւններով տեղի ունեցած եւրոպական փրոփականտին աւելի մղում տալ:

31. Գաղութները.— Նկատի ունենալով գաղութներու ներկայ դրութիւնը, անհրաժեշտ է որ կազմակերպութիւնը ամէն գաղութի համար մէյմէկ փրոփականտիստ–գործիչ յատկացնէ եւ զարկ տրուի գաղութներու յեղափոխական վիճակին, ի միջի այլոց նաեւ Պալքանեան Շրջանին:

32. Երկրի համար ուժեր հայցնել.— *Երկրի սահմանակից եւ անոր դուռ եղող վայրերու մարմինները ուժովցնել, որպէսզի կարենան Երկրի պահանջներուն բաւարար գոհացում տալ:*

33. Ջանալ հիմնելու Պարսկաստանի մէջ զէնքի եւ փամփուշտի կանոնաւոր եւ մեր պէտքերուն բաւարարութիւն տուող գործարան մը:

34. Միջոցներ խորհիլ ռմբագործութիւն, քիմիական բաղադրութիւններ, զինագործութիւն եւն. սորվեցնելու իւրաքանչիւր շրջանի մէջ գտնուող Երկիր մտնելու տրամադիր ուժերուն: Ունենալ յարմարագոյն վայրերու մէջ հաստատութիւններ եւ մասնագէտներ՝ այս նպատակին իրագործման համար:

35. Զինավարժութեան մեծ զարկ տալ եւ պարտաւորիչ ընել երիտասարդ ընկերներուն՝ անոնց դիւրութիւններ ընծայելով: Պրոշիւրներ հրատարակել այս նպատակով, եւրոպական ռազմագիտական հեղինակութիւններէ թարգմանաբար: Զինուորական օտար վարժարանի մը հետ պայմանաւորուելու ջանալ, հայ զինուորականներ պատրաստելու համար: Ֆետայական կռիւներու ռազմագիտութիւնը սորվեցնել՝ զանոնք ենթարկելով զինուորական որոշ օրէնքներու եւ ծանօթացընել գրքոյկներով:

36. Բանտարկեալներ եւ վտանգուածներ.— *Աշխատուի «Բանտարկեալներու Պաշտպան» անունով յանձնախումբեր կազմակերպել եւրոպական այլեւայլ կարեւոր քաղաքներու մէջ, բարեպատեհ առիթներէն օգտուելով՝ դիւանագիտութեան միջոցաւ յեղափոխական բանտարկեալ ընկերներու ազատումը կամ պատիժի թեթեւացումը ձեռք բերելու համար:*

37. Յեղափոխական գործի համար բանտարկուած բոլոր ընկերներուն անխտիր՝ իւրաքանչիւր դատի մասնաւոր օգնութիւն մը յատկացնելու միջոցներ ստեղծել եւ գործադրել:

38. Հայդուկ կամ գործիչ ընկերոջ մը մահէն կամ բանտարկուելէն ետքը, որոշ աղակցութիւն ցոյց տալ իր ընտանիքին՝ յարմար դատուած ժամանակամիջոց մը:

39. Համերաշխութիւն միւս կուսակցութիւններու հետ.— *Արտասահմանի մէջ հրատարակուող յեղափոխական թերթերը յաճախ իրարու դէմ անձնական վէճեր յարուցանելով յեղափոխական լուրջ յառաջացման արգելք կ'ըլլան. ստիպել բոլոր խմբագիրները կամ հրապարակագիրները, որպէսզի թողուն կուսակցական–անձնական վէճերը եւ ժողովուրդին մէջ յեղափոխական եռանդն ու հաւատքը արծարծելու միայն աշխատին:* Ջանալ կարելի եղածին չափ կուսակցական ոգիէ խոյս տալ նաեւ ատենախօսութիւններու ատեն եւ նպաստել հակառակութիւններու վերջ դնելու:

41· *Հ. Յ. Դաշնակցութիւնը, իբր գործօն կազմակերպութիւն, կարելի եղած միջոցներով յեղափոխական տարբեր կուսակցութիւնները գործնական համերաշխութեան հրաւիրէ։*

42· Սոցիալիզմ·— *Առայժմ յեղափոխական ուժերէն չորամաղրել այդ գաղափարի տարածման համար, քանի որ Հայաստանի պայմաններուն չի յարմարիր ան։*

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ԵՐԿՐԷՆ ԴՈՒՐՍ

43· Ընդհանուր հարցեր·— *Ընդհանուր Ժողովին կողմէ պատրաստուի լայն «կանոնագիր» մը, ուր մանրամասնօրէն, յստակ եւ որոշ կերպով գծուած ըլլան Կեդր. Կոմիտէներու, կոմիտէներու, Բիւրոներու, գործիչներու եւ խումբերու փոխադարձ յարաբերութիւններն ու անոնց գործելու եղանակը, սահմանը եւ իրաւասութիւնը։*

44· *Որոշ օրէնք մը դնել, որով պատասխանատուութեան տակ մտնան Ընդհանուր Ժողովի պատրաստած կազմական կանոնագրի 17րդ յօդուածը, մանաւանդ գոյութիւն ունեցող քոնթրոլի դրութիւնը կէտ առ կէտ չգործադրող ձեռնհաս մարմիններն ու ներկայացուցիչները։ Բոլոր մարմիններէն խստապահանջ ըլլալ Ընդհանուր Ժողովի որոշումներու համաձայն։*

45· *Ընդհանուր Ժողովի պատգամաւորներու ծախքերը բացառիկ միջոցներով հոգալ։*

46· *Հերոսներու պատկերներ կամ քարթեր հրատարակող մարմիններու կամ անհատներու համար որոշ օրէնք դնել։*

47· *Նուիրատոմսերու տեղ գործածութեան դնել նախորդ Ընդհանուր Ժողովի որոշած դրոշմանիշերը։*

48· *Կազմակերպութեան մարմիններու զանձապահութիւնը յանձնել այնպիսիներու՝ որոնց նիւթականը եւ բարոյականը վստահելի է։*

49· Դաշնակց. Խորհուրդ·— *Ընդհանուր Ժողովը որոշ կերպով ճշդէ Խորհուրդի գումարումներու պարգաներն ու անոր իրաւասութիւնները եւ պահանջէ որ Ընդհանուր Ժողովի որոշումներուն չհակասէ երբե՛ք։* (Կեդր. Կոմիտէէն դրուած)։

50· Բիւրոներ· *Երկրի Պատասխանատու Մարմիններու ընտրութեամբ՝ Բիւրոներու մէջ գտնուի առնոց մնայուն ներկայացուցիչը, որպէսզի պահանջները փութով գոհացուին։*

51· *Ընտրել Բիւրոներու անդամները երկիր ապրած ռուսահայ եւ Թրքահայ խառն եւ կարող ընկերներէ։*

52· Կեդր. Կոմիտէ·— *Արտասահմանի Կ. Կոմիտէները երկրի յարմարագոյն կէտի մարմինի հետ ուղղակի յարաբերութեան մէջ դնել, զանոնք կենդանի գործին կապելու եւ փոխադարձ գործունէութեանց զարկ տալու համար։* (Կեդր. Կոմիտէէն դրուած)։

53· *Կեդր. Կոմիտէները պարտաւոր ըլլան ամէն տարի իրենց շրջանի եւլիւմուտքը պատրաստել եւ ցըրուել իրենց շրջանի կոմիտէներուն։*

54· *Կեդր. Կոմիտէ կամ կոմիտէ՝ իրենց իրաւասութեան տակ գտնուող խումբ* ..... (1)

55· Կարգապահութիւն եւ պատիժ·— *Խիստ վերաբերուիլ դեղծում գործող ընկերներու եւ գործիչներու վերաբերմամբ եւ անդամահատել վարիչ մարմիններու նեխած մասերը։*

56· *Վարչական բոլոր մարմիններու այն ընկերները՝ որոնք վստահութեան տեսակէտէն կասկածելի դարձած են, անոնց մասին եղած ամբաստանութիւնները լուրջ քննութեան ենթարկել, նոր Վարդոներու շահատակութեանց տեղի չտալու համար։*

57· *Շրջանական Ժողով մը (Արտասահմանի մէջ), իրեն դրացի Պատասխանատու Կեդր. Կոմիտէի եւ իր շրջանի Բիւրոյի ներկայացուցիչներուն հետ, իրաւունք ունենայ պատիժ տնօրինելու իր շրջանի ոեւէ ընկերոջ համար։*

58· *Յեղափոխական օրինաւոր կարգապահութիւն յանձնարարել դաշնակցական բոլոր մարմիններուն։*

ՎԱՐԴՈՅԻ ԽՆԴԻՐ

59· *Իբրեւ Պալքանեան Շրջանի խնդիր, կ'առաջարկենք՝ որ Ընդհանուր Ժողովը, Դաշնակցութեան պատուաբեր կերպով, կարելի եղածին չափ շուտ վերջ մը տայ Վարդոյի խնդրոյն, որ Ժողովուրդին եւ ընկերներու վրայ զէշ ազդեցութիւն ըրած է։*

60· *Վարդոն Ընդհանուր Ժողովին ներկայանալ ուզելէ առաջ պարտաւորուի անպայման գրաւոր կերպով ետ առնել «Շարժում»ով ըրած հայհոյանքները՝ ուղղուած դաշնակցական մարմիններու եւ ընկերներու։*

ԾՐԱԳՐԻ ԵՒ ՈՒՂՂՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

61· *Դաշնակցութեան ծրագրէն կամ գործելակերպէն դժգոհ մնացած ընկերներու կարծիքները նըկատողութեան առնել կը խնդրուի Ընդհանուր Ժողովէն, եւ եթէ անոնք հիմնաւոր են՝ ըստ այնմ բարեփոխութիւններ մտցնել։*

Հ. Յ. Դ. ՊԱԼՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԷ

22 Դեկտ· 1905 (Կնիք)

(1) Նախադասութիւնը կը թուի անաւարտ։

6·— ՀԱՐՑԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ՇՐՋԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԿՈՂՄԷ

Գումարուած 1906 Դեկտ· 3ին եւ վերջացած Դեկտ 21ին

Նամակի նորմալ չափի 13 զոյգ թերթերէ կարուած տետրակ։ Գրութիւնը, սեւ մելանով, կը գրաւէ 23 էջ, որուն 18 էջն ու 6 տողը միայն 1906 Դեկտեմբերի արտակարգ Շրջ· Ժողովէն բըխած հարցեր են (առաջին այս բաժինը կու տանք լրիւ, բանի այդ արտակարգ Շրջ· Ժողովի ատենագրութիւնը կը պակսի թղթածրարներուն մէջ)։ Կը հետեւի 2րդ մաս մը՝ ՀԱՐՑԵՐ 1906 ԱՊՐԻԼԻ ՇՐՋԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԷՆ խորագրով, ուր, գրեթէ բառացի կերպով, վերարտադրուած են 1906 Մարտ–Ապրիլի Շրջ· Ժողովի որոշումները· ուստի, կրկնութենէ խուսափելու համար, զանց կ'ընենք այս բաժինը (տեսնել, այդ Շրջ· Ժողովի ատենագրութեան մէջ, Վարդոյի մասին տրուած որոշումները, ինչպէս նաեւ «Խորհրդածութիւն եւ Դիտողութիւններ Արեւմտեան Բիւրոյին» գլուխը, էջ 161–166)։

Գրութեան աւարտին, կը գտնենք հետեւեալ յաւելումը·— *«Ներկայ հարցերով կը ընդլուի 1905 Դեկտեմբեր 22ին Կ. Կոմիտէի կողմէ Արեւմտեան Գիւղոյին ղրկուած հարցերը, որոնք յանձնարարուած էին յանձնել Ընդհ. Ժողովին»* (որոշ կրկնութիւններ նկատելի են արդէն, — Հ· Տ·)։ Կը հետեւի ստորագրութիւնը՝ «Հ· Յ· ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ· ԿՕՄԻՏԷ», հաստատուած Կ· Կ·ի կնիքով։

Հ. Յ. Դաշնակցութեան Պալքանեան Արտակարգ Շրջանական Ժողովը աչքի առջեւ ունենալով կազմակերպութեան արդի վիճակը եւ յեղափոխական գործը շըրջապատող պայմանները՝ կը յայտնէ·

Նկատելով որ Դաշնակցութիւնը գոյութիւն ունեցած է Տաճկահայ Դատին համար միայն,

Նկատելով որ Հայկական Դատը ամբողջ քաղաքակիրթ աշխարհէն եւ Եւրոպական Տէրութիւններէն կը ճանչցուի միայն Տաճկահայ խնդրով եւ այդ դատն է որ երաշխաւորուած է զանազան դաշնագրերով նոյն պետութիւններէն,

Նկատելով Տաճկահայաստանի ներկայ դրութիւնը եւ հայութեան ուժերու արդէն իսկ անբաւականութիւնը՝ կռուելու համար այդ դժոխային պայմաններուն դէմ,

Նկատելով որ Դաշնակցութիւնը չի կրնար իր սակաւաթիւ ուժերը բաժնել զանազան ուղղութիւններու եւ կռիւ մղել թէ՛ Թուրք կառավարութեան եւ թէ ռուս կառավարութեան դէմ միաժամանակ,

Նկատելով որ Դաշնակցութիւնը իր հիմնական նպատակը առաջ տանելու համար անհրաժեշտ պէտք ունի ժողովրդական բոլոր դասակարգերու օժանդակութեան, քանի որ հաւասարապէս ամբողջ հայ ազգի գոյութեան հարցն է խնդրոյ առարկայ,

Նկատելով որ ընդհանուրի շահերուն առջեւ, անհատական–դասակարգային պզտիկ շահերը պէտք է որոշ չափով զոհուին,

Նկատելով որ Հայաստանի մէջ ապրող արիւնաքամ եղած եւ մարդկային ամենատարրական իրաւունքներէ զրկուած ժողովուրդի մը դատին աջակցիլը գերազանցօրէն իրագործումն է սոցիալական(1) գաղափարին, որուն կը ձգտին նոյնիսկ բոլոր ազնիւ սիրտ ունեցող եւրոպացիները,

Բողոքող ենք ու կը պահանջենք որ Դաշնակցութիւնը երբե՛ք չշեղի իր 15 տարուան ուղղութենէն եւ մնայ զուտ Տաճկահայ Ազգային Յեղափոխական գաղափարին վրայ (որուն համար այնքան հաղարաւոր զոհեր ինկած են եւ մենք պէտք է անոնց ուղղութեան հետեւինք), պատրաստ ըլլալով ի հարկին լոկ ինքնապաշտպան[ութեան] հողին վրայ կռուիլ Կովկասի մէջ թաթարական արշաւանքներու դէմ, եւ իր գործաւոր ընկերներու շահերը պաշտպանել, ինչպէս ասկէ առաջ, առանց կազմակերպութիւնը սոցիալական ուղղութեան մէջ դնելու եւ շեղեցնելու իր ուղիէն ու հիմնական նպատակէն։

1·— ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻԿԱՑԻ ՄԷՋ ՏԱՃԿԱՀԱՑ ԽՆԴԻՐ

Ա·— Ժողովրդական ապստամբութիւն եւ թուցիկ խումբեր

1894–1904 *տարիներուն ընթացքին զինակիր խումբերու անցնիլը մասնակի կոտորածներու պատճառ ըլլալէ զատ, գժբախտաբար, Սասունի վերջին ապստամբութեան ժամանակ տեսնուեցաւ, որ այդքան զոհողութիւններով հանդերձ Սասնոյ մէջ քանի մը հարիւր զէնքէն աւելի չէր ներմուծուած, որով իւրաքանչիւր զէնք գրեթէ* 10 (*տասը*) *քաջի արիւնով գնուած կ'ըլլայ։ Փոխադրութեան այդ ձեւէն զատ հարկ է նաեւ ուրիշ յարմարագոյն միջոցներ խորհիլ եւ գործադրութեան պարագային կանխաւ Երկրի ընկերներուն հետ խորհրդակցիլ։ Նոյնպէս մասնաւոր զինագործ ընկերներ Երկիր անցընել, հոն պատրաստելու զէնքի զանազան մասերը։*

Միեւնոյն ժամանակ աչքի առջեւ ունենալով Տաճկահայաստանի ներկայ խիստ պայմանները եւ Թուրք կառավարութեան կողմէ հայերու հանդէպ եղած հալածանքներն ու միշտ կոտորածի ենթակայ ըլլալու հանգամանքը, ժողովուրդի ինքնապաշտպանութեան գործին լրջօրէն հոգ տանիլ։

Գալով գործունէութեան եղանակին՝ տեսնելով որ

հակառակ Դաշնակցութեան 15 տարուայ յեղափոխական կեանքին, չենք ունեցած յեղափոխական գործունէութիւն մը որ ժողովրդական ընդհանուր յեղափոխութեան մը հանդամանքը առած ըլլայ, ինչպէս օրինակ մակեդոնացիներունը, արաբներունը եւն., ու վըստահ ըլլալով որ հիմա որոշ չափով պատրաստ յեղափոխական ժողովուրդ մը ունինք, մեր յառաջիկայ գործունէութեան այնպիսի ուղղութիւն մը տալ որ անհատական–խմբական գոյն չստանայ, այլ ուղղակի տանջուող ժողովուրդի բողոքի արտայայտութիւնը ըլլայ:

Հաւասարապէս ուժ տալ ցուցական, ապստամբական եւ ինքնապաշտպանողական գործերուն: Ներքնապէս ռազմական կերպով ուժեղցնել Երկրի մէջ մէկէջ աւելի յարմարագոյն վայրեր, պատրաստել նաեւ Թուրքիոյ զանազան ծովեզերեայ քաղաքներուն մէջ ցուցական ձեռնարկներ, որոնք մասնաւորապէս նպատակ ունենան եւրոպական շահերը վտանգելու:

Երբ ինքնապաշտպանութեան, ապստամբական եւ ցուցական ձեռնարկները պատրաստ վիճակի մէջ կ'ըլլան, Տաճկահայաստանի սահմանակից եղող վայրերու մէջ պատրաստի ունենալ նաեւ զօրեղ եւ ստուարաթիւ արշաւախումբեր, որոնք յեղափոխական բռնկումի պարագային միայն՝ ամէնքը մէկ ներս խուժեն:

Աւելորդ չենք սեպեր Ընդհանուր Ժողովի լուրջ ուշադրութեանը յանձնել այն պարագան՝ թէ մենք մինչեւ հիմա մեր գործունէութեան միջոցին հետամուտ եղած ենք Երկրի մէջ մեր ունեցած փոքրիկ ուժերը առանձին առանձին սպառելու, հետեւաբար կը պահանջենք որ պատրաստուած բոլոր ձեռնարկները միահաղոյն կերպով տեղի ունենան:

Ապստամբական տեսակէտով, բացի Սասունէն եւ Մեծ Հայքի լեռնական յարմարագոյն վայրերէն, նկատի ունենալ նաեւ Կիլիկիոյ շրջանը:

Բ.— Տեռոր

Ճշդել որոշապէս Արտասահմանի եւ Երկրի մարմիններուն տեռոր ընելու իրաւունքի սահմաններն ու պարագաները:

Սկզբունքով ընդունիլ նաեւ Թուրքիոյ մէջ կառավարական վնասակար պաշտօնեաներու դէմ անհատական տեռորը:

Գ.— Գործիչներ եւ մտաւորականներ

Մտաւորական ուժերու Երկիր առաքումը անհրաժեշտ դատելով հանդերձ, Ընդհանուր Ժողովի ուշադրութիւնը կը հրաւիրենք, որպէսզի իւրաքանչիւր գործիչ հնարաւոր եղածին չափ ընտրուի տեղւոյն եւ պարագաներուն ծանօթ փորձառու ընկերներէ:

2.— ԿՈՎԿԱՍ

Ա. Դաշնակցութեան վերաբերմունքը դէպի հայ–թաթարական կռիւը

Հայ–թաթարական կռիւները ընդունելով իբրեւ անցողական դէպքեր, ցանկալի է որ Հ. Յ. Դաշնակցութիւնը, չարունակելով մղել ժողովուրդը դէպի ինքնապաշտպանութիւն, միեւնոյն ժամանակ ջանադիր ըլլայ ինքնապաշտպանութեան գործը հետզհետէ յանձնելու ժողովուրդին, պահելով միայն իր վերին հսկողութիւնն ու հովանաւորութիւնը:

Բ. Դաշնակցութեան դիրքը ռուսական ընդհանուր շարժման մէջ

Հայ Յեղափոխութիւնը շրջապատող պայմանները եւ յեղափոխական ուժերու արդէն իսկ անբաւական հանդամանքը հրամայողական պարտականութեան մը տակ կը դնեն Դաշնակցութիւնը, որպէսզի իր ունեցած ուժերը կեդրոնացնէ միմիայն իր հիմնական նպատակին՝ Տաճկահայ ազատագրական դատին շուրջ, առանց որեւէ ճիւղաւորման: Այս տեսակէտով Հ. Յ. Դաշնակցութեան մասնակցութիւնը Ռուս Յեղափոխութեան մէջ քանդիչ հարուած մը պիտի ըլլայ Թրքահայկական յեղափոխութեան, որուն եկած է աւելնալ ինքնապաշտպանութեան չնախատեսուած եւ դժուարին պարագան՝ ի Կովկաս: Վերջին տարիներս կռիւները ցոյց տուին թէ Դաշնակցութիւնը, գերազոյն ճիգերով ու ժողովրդային միահամուռ գործակցութեամբ եւ անհուն զոհողութիւններով, հազիւ կրցաւ դիմադրել թաթարական դեռ եւս չկազմակերպուած խուժանային յարձակումներուն, ո՛ւր կը մնայ երբ Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կռիւը մղէ նաեւ ձարիզմին դէմ, որ չի խնայեր բուն իսկ իր հարազատ զաւակներուն: Դաշնակցութեան Ռուս Յեղափոխութեան միանալու պարագային, բացի Թուրքերէն, մեզի դէմ պիտի դնուի կազմակերպուած ռուս կառավարութիւնը՝ իր կոզակներով ու խուլիգաններով: Դեռ չենք ուզեր մանրամասնել որ կովկասեան ինքնավարութիւն մը ստեղծելու գաղափարը՝ առանձին նոր բարդութեան մը դուռ է՝ առանց անոր ալ ռուսական յեղափոխութեան անյաջող ընթացքին եւ աննպաստ պայմաններուն մէջ:

Դաշնակցութեան վերաբերումը ռուսական ընդհանուր շարժման մէջ տանիլ բասսիւ(2) կերպով միայն, պահելով 1904 թ. Ընդհանուր Ժողովի այս մասին տրուած որոշումը:

Գ. Կովկասեան նախագիծ

Կովկասեան նախագծին դէմ արտասահմանի մարմիններուն եւ Կովկասի մէջ յարուցուած բուռն դժգոհութիւնը ինքնին կ'ապացուցանէ, որ անիկա անհամապատասխան է Հ. Յ. Դաշնակցութեան նպատակին եւ յեղափոխական շահերուն և չենք դիտեր ի՛նչ բռնազբօսիկ կերպով եկած սպրդած է մեր ծրագրային ուղղութեան մէջ եւ կազմակերպութիւնը ներկայ ցաւալի ալեկոծութեան ենթարկելու պատճառ դարձած:

Նկատելի պարագայ մըն է նաեւ այն՝ որ Կովկասի մեր գիւղացի, զինուոր եւ գործաւոր ընկերներու ստուարագոյն մասը հակառակ ըլլալով այդ նախագծին՝ Կովկասի բարձր մարմիններէն ոմանք անհասկընալի եւ ցաւալիօրէն յամառ միտում մը ցոյց կու տան զայն ներմուծել Դաշնակցութեան ծրագրային ուղղութեան մէջ, եւ արհեստական միջոցներով զայն ընդունիլ տալ կը հետամտին:

Ուստի մենք անոր գործադրութիւնը բացարձակապէս կը մերժենք՝ առաջարկելով որ Դաշնակցութիւնը, մէկ կողմ թողլով դուտ ընկերվարական բնաւորութիւն ունեցող գործունէութիւն մը, ինչ որ երբեք չի համապատասխաներ Դաշնակցութեան ազգային դրոշին, կրնայ ընկերակցութիւններու (genossenschaft) դրութեամբ գործել, ձգելով որ իր բանուոր ընկերները աշխատակցական եւ շահակցական ընկերութիւններ կազմեն իրենց շահերը պաշտպանելու համար:

Միեւնոյն ատեն մեր բողոքը կը յայտնենք Կովկասի մեր բարձր մարմիններուն դէմ, որոնք չնայած որ սոցիալական խնդիրը — եթէ երբեք հարկ էր — կազմակերպութեան հետ եւ անոր անունին կապելու իրաւունքը կը պատկանէր միայն եւ միմիայն Ընդհանուր Ժողովին, ցաւալի յամառութեամբ մը ոտքի տակ տրուին կազմակերպական այդ տարրական օրինապահութիւնն ու կարգապահութիւնը՝ մինչ Արեւմտեան եւ Արեւելեան Բիւրոները դեռ նոր խնդիրը կազմակերպութեան մարմիններու ուշադրութեանը կը յանձնէին՝ որպէսզի այդ մասին իրենց կարծիքը տան Ընդհանուր Ժողովին, որու իրաւասութեան կ'իյնար (ինչպէս ըսինք) հարկ եղածը տնօրինել ու գործադրութեան դնել:

3.— ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

Հայկական գաղութները Հայ Դատին հետ աւելի սերտօրէն կապելու համար, անոնց իւրաքանչիւրին սահմանել մէկ մէկ ընկեր: Մեր չրջանը այդ մասին իր անմիջական պէտքը կը չեշտէ:

Սկզբունքով համաձայն չենք որ Դաշնակցութեան կիսապաշտօնական օրկաններուն կազմակերպութեան պիտանէէն դրամ յատկացուի: Եթէ արդէն մինչեւ հիմա պատահած է այդպիսի դէպք մը, չրջանս իրաւունք ունենալ կը կարծէ որ «Ռազմիկ»ին ալ 5000 ֆր. յատկացուի:

Զինավարժութեան մեծ զարկ տալ եւ պարտաւորիչ ընել ու տարածել ամէն հայ չրջաններու մէջ՝ հարկ եղած զիւրութիւնները ընծայելով անոնց: Այս նպատակով «Դրօշակ»ի խմբագրութեան որոշ իրաւունքներ տալ եւ պարտականութիւն դնել որ ռազմական դիտութիւնը սորվեցնող ժամանակին պրոշիւրներ հրատարակէ ու ցրուէ:

Պարսկաստան.— Պարսկաստանի մէջ նոր գոյութիւն առած քաղաքական պայմաններէն աչխատիլ որ Դաշնակցութիւնը աւելի օգտուի եւ ուժեղացնէ այնտեղի կազմակերպութիւնը՝ իբրեւ Երկրի ամենամօտիկ վայր:

Եգիպտոս.— Եգիպտոսի պէս կարեւոր գաղութ մը, չկրնալով լրացնել որոշեալ ցենը, Ընդհանուր Ժողովի մէջ ձայն ունենալէ զրկուած ըլլալուն՝ տալ անոր մէկ ձայնի իրաւունք եւ միջոցներ ձեռք առնել այդ հարուստ գաղթականութիւնը օգտակար դարձնելու կազմակերպութեան:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ա. Կազմակերպական կանոններու վերաքննութիւն եւ վաւերացում

Նախորդ Ընդհանուր Ժողովի կողմէ գծուած կանոններուն համաձայն ըլլալով՝ կը պահանջենք որ անոնք աւելի ընդլայնուին, մանրամասնորէն եւ յստակ ու որոշ կերպով գծուած ըլլան հոն՝ կեդր. Կոմիտէներու, կոմիտէներու, Բիւրոներու, գործիչներու եւ խումբերու փոխադարձ յարաբերութիւններն ու անոնց գործելու եղանակը, սահմանը եւ իրաւասութիւնը:

Այդ կանոնագրով գոհացում տալ եւ պարզել որեւէ կերպով հետեւեալները.

1. Երկրի համար ուժեր հասցնել.— Երկրի սահմանակից ու անոր դուռ եղող մարմինները ուժեղցնել, որպէսզի կարենան Երկրի պահանջներուն բաւարար գոհացում տալ:

2. Երկրի կոմիտէներու պահանջներուն գոհացում տալ լիուլի եւ զօրացնել զանոնք:

3. Ցուցական մարմինների եւ ցուցական վայրի տեղական մարմնի միջեւ անհամաձայնութիւններ չծագելու եւ կամ ցուցական գործի մը առիթով ցուցական վայրի մը կազմակերպութեան շահերը չվտանգուելու համար, կը խնդրենք Ընդհանուր Ժողովի լուրջ ուշադրութիւնը:

4. Նախագծուած ձեռնարկներու իրագործման

համար՝ ընտրուած մարմնի անդամներուն հաւանութիւնը առնել կանխաւ, որպէսզի մարմինը Ընդհանուր Ժողովէն որոշուած ամբողջական կազմով մնայ, եւ իր ստանձնած գործը չկաղայ։

5· Պատասխանատու մարմնի մը օժանդակ մարմինները կամ գործիչները, ձեռնարկի մը մասին պատասխանատուին հետ համաձայնելէ վերջ, պատրաստութեան մէջ անկախ ըլլան։

6· Գործիչ մը որեւէ վայր երթալէ առաջ անհրաժեշտ նկատուի տեղական ընկերներու համաձայնութիւնը առնել, համաձայնութեան պարագային երբ գործիչը իր վայրը կը հասնի, մինչեւ որ 6 ամիս տեղը չուսումնասիրէ՝ ձայն չունենայ մարմնին մէջ։

7· Երկիր դրկուած գործիչներուն անպայման տալ կանխաւ նիւթական եւ բարոյական ապահովութիւն։ Միեւնոյն ատեն սահմանափակել, որքան կարելի է, ամուսնացած եւ ընտանիքի տէր գործիչներու մասնակցութիւնը պատասխանատու դործերու մէջ։

8· Զանալ որ Երկրի Պատասխանատու Մարմինները իրենց գործունէութեան շրջանակին ծանօթ մարդիկ ըլլան։

9· Կը պահանջենք որ Ընդհանուր Ժողովը նկատի առնէ արտասահմանի մէջ գտնուող տրամադրելի ընկերուհիներու յեղափոխական կենդանի գործին մասնակցելու փափաքները եւ ըստ այնմ միջոցներ խորհի զանոնք ալ մասնակից ընելու։

10· Հայդուկ կամ գործիչ ընկերոջ մը մահէն կամ բանտարկուելէն ետքը, որոշ աջակցութիւն ցոյց տալ իր ընտանիքին՝ յարմար դատուած ժամանակամիջոց մը։

11· Որոշ օրէնք մը դնել, որով պատասխանատուութեան տակ մնան կազմական ծրագրի 17րդ յօդուածը, մանաւանդ գոյութիւն ունեցող քոնթրոլի դրութիւնը կէտ առ կէտ չգործադրող ձեռնհաս մարմինները։

Բոլոր մարմիններէն խստապահանջ ըլլալ Ընդհանուր Ժողովի որոշումներու մասին։

12· Հերոսներու պատկերներ կամ քարդեր հրատարակող մարմիններուն եւ անհատներուն համար որոշ օրէնք դնել, հրատարակութիւններուն մէջ որոշ կանոնաւորութիւն մը մտցնելու համար։

13· Մարմիններու գանձը պահելու համար՝ մինչեւ հիմա եղածէն աւելի ապահով միջոցներ խորհիլ։

14· Որոշ եւ պատժական խիստ օրէնքներ սահմանել զեղծում գործող ընկերներու եւ գործիչներու վերաբերմամբ։

15· Մէկ Ընդհանուր Ժողովէն յաջորդ Ընդհանուր Ժողովի տեւողութիւնը 4 տարիէն աւելի չանցնի։

16· Դաշնակցական խորհուրդ։— Ընդհանուր Ժողովը որոշ կերպով ճշդէ Խորհուրդի գումարման պարագաները եւ անոր իրաւասութիւններն ու պահանջէ որ Ընդհանուր Ժողովներու որոշումներուն չհակասէ երբեք։

17· Բիւրոներ։— Երկրի Պատասխանատու Մարմիններու ընտրութեամբ, Բիւրոներու մէջ գտնուին անոնց մնայուն ներկայացուցիչները, որպէսզի իրենց պահանջները փութով գոհացնեն։

18· Ընտրել Բիւրոներու անդամները ծանօթ ռուսահայ եւ Թրքահայ խառն եւ կարող ընկերներէ։

19· Կեդրոնական Կոմիտէ։— Արտասահմանի Կ. Կոմիտէները Երկրի յարմարազոյն կէտի մը մարմնոյն հետ ուղղակի յարաբերութեան մէջ դնել, զանոնք կենդանի գործին կապելու եւ փոխադարձ գործունէութեան գարկ տալու նպատակաւ։

20· Կեդրոնական Կոմիտէները պարտաւոր ըլլան ամէն տարի իրենց շրջանի ելեւմուտքը, Շրջանական Ժողովի քննելէն վերջը, ցրուել շրջանի մարմիններուն։

Բ· Հաստատում նոր Կեդրոնական Կոմիտէներու

Նախորդ Ընդհանուր Ժողովի կողմէ գծուած ընտրողական օրէնքներու համաձայն Կեդր. Կոմիտէներ հաստատելով՝ Երկրի ու արտասահմանի ձայներու մէջ անհաւասարակշռութիւն մը յառաջ եկած է, որով տանջուող ժողովուրդի բախտը որոշելու ծանր եւ պատասխանատու խնդիրը կ'ենթարկուի հետզհետէ Երկրի պայմաններուն եւ պահանջներուն հարեւանցի ծանօթութիւն ունեցողներու՝ արտասահմանի ընկերներու տնօրինութեան, եւ այսպէս ցաւալի հակասութիւն մը առաջ կու գայ. կը պահանջենք որ Ընդհանուր Ժողովը սահմանափակէ արտասահմանի վերաբերմամբ գծուած ձայնի իրաւունքները։

Այս նկատումներով Ընդհանուր Ժողովին կ'առաջարկենք որպէսզի ձայներու որոշ չափ մը սահմանէ՝ անարդարութեան առաջքը առնելու համար, ու այս մասին նպաստաւոր դիւրութիւններ ու առաւելութիւններ տրուի Երկրի մարմիններուն, որով իւրաքանչիւր կոմիտէ, ինչպէս նաեւ անհատ գործիչ հոն ձայն ունեցայ եւ այսպէսով կարելի եղածէն աւելի պատգամաւորներ տալու դիւրութիւններ ընծայուելով՝ պատգամաւորներուն քանակը կարենայ գոնէ հաւասարակշռուիլ դրսի պատգամաւորներու քանակին հետ։

Դուրսէն նոր գացող գործիչ ընկեր մը, առնուազն 6 ամիս Երկիր ապրած ըլլալու է՝ Ընդհանուր Ժողովին ձայն ունենալու համար։

Գ· Դրամական–հաշուական սիստեմի վերաքննում եւ հիմնական կանոնաւորում

Կը պահանջենք որ կանոնաւոր եւ մանրամասն հաշուետուութիւն ըլլայ բոլոր մարմիններու կողմէ՝ Ընդհանուր Ժողովին առջեւ։

Դ· Նախորդ Ընդհանուր Ժողովի եւ Խորհուրդի որոշումը բռնի հանգանակութեան մասին

Սկզբունքով կ'ընդունինք բռնի հանգանակութիւնը, բայց պայմանաւ որ անոր մասին որոշուին կանոններ եւ սահմաններ։

Ե· Զինուորական Ընդհանուր Խորհուրդի հիմնումը

Զինուորական բարձրագոյն խորհուրդ մը մինչեւ հիմա գոյութիւն չունենալուն վնասները ակներեւ ըլլալով մեր յեղափոխական կեանքին մէջ, կը պահանջենք որ կարող, մասնագէտ եւ գործնական յեղափոխութեան մէջ փորձառու ընկերներէ կազմուի Զինուորական Խորհուրդ մը, տալով անոր իր էութեան եւ պէտքերուն համաձայն բաւարար իրաւունքներ։

Զ· Դրամական եւ կարգապահական զեղծումներու քննութիւն եւ որոշում

Ընդհանուր Ժողովի կողմէ զեղծումներու մասին ամենախիստ քննութեան եւ պատժի անաչառ տնօրինութեան պէտքը կը տեսնենք։

Այս առթիւ Ընդհանուր Ժողովի ուշադրութեան կը յանձնենք նաեւ 1906 Ապրիլի Պալքանեան Շրջանական Ժողովի որոշումը Վարդոյի զեղծումի մասին, ու կը պահանջենք որ Ընդհանուր Ժողովը իր կտրուկ որոշումը տայ, ինչպէս ասկէ առաջ նմանօրինակ պարագաներու մէջ վարուած է։ Իսկ եթէ Ընդհանուր Ժողովը հարկ տեսնէ Վարդոն իր ներկայութեան կանչել, այն ատեն Ժողովին ուշադրութիւնը կը հրաւիրենք, որ Վարդոն պարտաւորեցնէ կանխաւ կազմակերպութեան դրամները յանձնել ու դաշնակցական մարմիններու եւ անհատ ընկերներու հասցէին ըրած հրապարակային զրպարտութիւններն ու անուանարկութիւնները հրապարակաւ ետ առնել։

Իմանալով որ մեր հին, փստահելի եւ փորձառու կարգ մը ընկերները զանազան առիթներով եւ պատճառներով մեկուսացած են — օրինակ՝ ընկերներ Բժիշկ Լորիս, Յովհաննէս Եուսուֆեան, Սմբատ Խաչատուրեան (Գօրիս) եւն. — ուրկէ յեղափոխական գործն է որ կը տուժէ, կը պահանջենք որ Ընդհանուր Ժողովը ատոնց չարժառիթները քննէ եւ գոհացում տայ։

Նոյնպէս կը խնդրենք քննել, թէ վերջին ամիսներու մէջ խմբապետ Միհրանի խնդրին առթիւ կարգ մը դաշնակցական խմբապետներու հասցէին «Զանգ»ի եւ «Երկրի» կողմէ ուղղուած «Թայֆայական» եւն. մեղադրանքները որքա՛ն իրաւացի էին եւ ի՛նչ արդարացուցիչ հիմ ունէին։

Է· Զինապայթուցական դպրոցի հիմնարկութիւն

Զինուորական վարժարանի մասին Պալքանեան Շրջանին մէջ արդէն իսկ առնուած քայլերուն ուժ տալ, ու անոր յարատեւութեան համար մտածել, ջանալով որ նոյնօրինակ հաստատութիւններ ունենայ նաեւ կազմակերպութիւնը՝ Կովկասի, Պարսկաստանի եւ ուրիշ յարմարազոյն դաղութներու մէջ։

Պարսկաստանի մէջ դէնքի եւ փամփուշտի կանոնաւոր եւ մեր պէտքերուն կատարելապէս բաւարարութիւն տուող զինարանի մը հաստատման ձեռնարկել, որը իրրեւ վաճառականական հաստատութիւն՝ եւրոպացիի մը անունով կարելի ըլլայ ազատօրէն շահագործել նոյնիսկ։

Զինագործ ընկերներ ունենալու եւ ռումբ ձուլելու միջոցներուն ոյժ տալ։

5· ՄԻՈՒԹԵԱՆ–ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

Ա· Համերաշխութիւն Հայ Յեղափոխականներու հետ

Նկատելով որ հայ յեղափոխական կուսակցութեանց միջեւ համերաշխութիւն առաջ բերելու գաղափարը օր օրի կը հասունայ եւ իսկական պահանջ մը կը դառնայ, կ'առաջարկենք Ընդհանուր Ժողովին, որ դայն իրականացնելու համար գործնական միջոցներ խորհի եւ օր առաջ բարեյաջող լուծում մը տայ այդ խնդրին։

Բ· Համերաշխ ձեռնարկներ օտար յեղափոխականներու հետ

Հ. Յ. Դաշնակցութիւնը, իբր յեղափոխական գործօն կազմակերպութիւն, ցանկալի է որ որոշ ձեռնարկներու շուրջը համերաշխի Թուրքիոյ մէջ գոյութիւն ունեցող մակեդոնացի, արաբ, Թուրք եւն. կուսակցութիւններու հետ, Ջանալով որ տեղի ունեցած շարժումները իրար լրացնեն, առանց սակայն հայկական դատին ինքնուրոյնութեան որեւէ վնաս բերելու։

Գալով ռուս եւ վրացի կուսակցութիւններու հետ համերաշխելու եւ գործնական ձեռնարկներ ընելու գաղափարին՝ մեր հայեացքները պարզած ըլլալով աւելորդ կը սեպենք որեւէ գործնական միացում անոնց հետ։

Գ· Միջկուսակցական ատեանի հաստատումը

Միջկուսակցական Ատեանի մը հաստատումը ընդունելով խիստ նպատակայարմար միջոց մը միջկու-

սակցական վէճերու կարգադրման տեսակէտով, անոր իրականացման ջերմապէս բաղձացող ենք։

Այս առթիւ մեր դժգոհութիւնն ու զառն ցաւը կը յայտնենք վերջերս տեղի ունեցած զանազան ընդհարումներուն եւ եղբայրասպանութիւններուն համար։

6. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՊՐՈՊԱԳԱՆԴ

Ա. «Դրօշակ»

Վստահ ըլլալով որ «Դրօշակ»ի հրատարակութիւնը ո՛չ մէկ երկրի մէջ այնքան ազատ կրնայ ըլլալ, որքան Զուիցերիոյ մէջ, աննպատակ կը գտնենք անոր այլուր փոխադրութիւնը։

«Դրօշակ»ի մէջ տաճկահայ եւ ռուսահայ կարող գրողներու պակասը շատ զգալի է. ժամանակէ մը ի վեր այդ պակասին պատճառով թերթը անհրապոյր դարձած է։ Ամէն բանէ առաջ իբրեւ քաղաքական թերթ, քաղաքական անցուդարձերու վրայ լուրջ ուսումնասիրութիւններ ի սպառ կը բացակային։ Կը փափաքէինք առաջիկայ շրջանին այս պակասները դարմանուած տեսնել։

Բ. «Փրօ Արմենիա»

«Փրօ–Արմենիա»յի թէ՛ նիւթական մատակարարութիւնը եւ թէ կատարած բարոյական դերը ուշադրութեամբ ճշդել՝ նկատի առնելով այս մասին «Փրօ–Արմենիա»յի խմբագրութեան կողմէ տրուելիք մանրակրկիտ համարատուութիւնը։ Եթէ «Փրօ–Արմենիա» եւրոպական շրջանակներու մէջ ներգործապէս չի ծառայեր այն նպատակին՝ որուն համար հիմնուած է, դադրեցնել անոր հրատարակութիւնը։

Մենք կ'առաջարկենք եւրոպական փրուփականտի համար հետեւեալ նպատակը (եղանա՞կը)։—

Համաձայնութեան դալ Հայկական Դատին բարեկամ եւրոպացի հեղինակաւոր գրագէտներու եւ հրապարակագիրներու հետ, պայմանաւորուիլ անոնց հետ որպէսզի որոշ վճարումներու դիմաց պարբերաբար յօդուածներ, ուսումնասիրութիւններ եւ համանման նպաստաւոր գրութիւններ հրատարակեն ի նպաստ մեր դատին։ Եւ որպէսզի այդ գրութիւնները աւելի ընդարձակ խաւերու մէջ տարածուին՝ կանխաւ համաձայնութեան գալ նոյնպէս իւրաքանչիւր երկրի մէջ քանի օրաթերթերուն կամ գրական հանդէսներուն հետ, որոնց միջոցով կարելի ըլլայ հրատարակել թէ՛ հայկական լուրեր եւ թէ՛ մեր դատին ի նպաստ որեւէ գրութիւն։

Քանի որ տեղն է, աւելորդ չենք սեպեր մեր դիտողութիւնը ներկայացնել Ընդհանուր Ժողովին՝ ամիսներ առաջ Լոնտոն հրատարակուիլ սկսած անգլիական «Փրօ–Արմենիա»յի նկատմամբ, ղեկավարուելով այն սկզբունքով թէ փոքր մարմինները իրաւասութիւն չունին երբեք իրենցմէ բարձր մարմնին մէկ որոշումը բեկանելու. այս տեսակէտով անհասկնալի էր վերոյիշեալ թերթին հրատարակութիւնը, երբ Երրորդ Ընդհանուր Ժողովը բոլորովին հակառակ որոշում մը կայացուցած է այդ մասին։

Գ. Կիսապաշտօնական օրկանները

Համաձայն չենք որ կիսապաշտօնական թերթերը իրենց իրաւունք տան ակնարկութիւններ ընել եւ խօսիլ Երկրի այն գործունէութիւններու մասին, որոնց հրապարակումը, կամ այս ու այն ձեւին տակ եղած մատնանշումը, կրնայ անպատեհութիւններու տեղի տալ։ Նոյնքան եւ աւելի անհամաձայն ենք որ անոնք, յանուն ընդհանուր Դաշնակցութեան, խօսին այնպիսի սկզբունքներու եւ հարցերու մասին, որոնք եւս կազմակերպութեան Գերագոյն Մարմնին կողմէ որոշ կերպով ձեւուած ու վճռուած չեն։

Այս տեսակէտէն՝ սրտի ցաւով մըն է որ դիտել կու տանք «Ցառաջ»ի յաջորդներուն բռնած դիրքը։

Այս ամէնը պէտքը կը զգացնէ կիսապաշտօնական թերթերու համար Ընդհանուր Ժողովի կողմէ գծուած որոշ օրէնքներու։

Դ. Գրքեր եւ պրոշիւրներ

Դաշնակցութիւնը այս վերջին մէկ երկու տարուան մէջ քիչ բացառութեամբ մի քանի հրատարակութիւններէ դուրս աչքի զարնող կարեւոր հրատարակութիւն մը չունեցաւ։ Կը կարծենք որ այլեւս ժամանակը հասած է լուրջ հրատարակութիւններ տալու երիտասարդութեան ձեռքը եւ սահմանափակելու բանաստեղծական պրոշիւրներու եւ արտատպումներու դրութիւնը։

Ե. Դիմում Լա–Հէյի ժողովին

Ընդհանուր Ժողովը միջոցներ խորհի Հայկական Դատը Լա–Հէյի ժողովին օրակարգին մաս կազմել տալու համար։

Նոյնպէս հայ պանդուխտներու հայրենիք վերադարձը դիւրացնելու համար եւրոպական տէրութիւններու մօտ որոշ դիմումներ ընելով՝ գործնական միջոցներ ձեռք բերելու մասին խորհիլ (փոքրամասնութեան կարծիք)։

7. ՆԱԽԱՀԱՇԻՒ

Յարդ երկրէն դուրս եղած կազմակերպական ծախքերը (փրուփականտ, հրատարակութիւն, գործիչ, ճանապարհածախս եւն.) Դաշնակցութեան պիւտճէին կարեւորագոյն մէկ մասը կազմած ըլլալով՝ Երկրի գործը, որ ամենէն աւելի պէտք ունէր այդ նիւթականին, բաղձացուած չափով չէ օգտուած. ուստի նկատի ունենալով Երկրի մէջ գոյութիւն ունեցող եւ օր աւուր ծանրացող պայմանները՝ կը պահանջենք որոշ սահմանափակում Երկրէն դուրս եղած ծախքերուն, կազմակերպութեան հաշոյն ապրող գործիչներու թիւին, եւ լիակատար ընդհանուր հաշուեկշիռով մը ճշդել թէ նախորդ Ընդհանուր Ժողովէն մինչեւ ներկայ Ընդհանուր Ժողով կազմակերպութեան ամբողջ եկամուտին քանի՛երորդ մասը բուն Երկրէն յատկացուած է եւ քանի՛ն դուրսի գործունէութեան։ Ցառաջիկայ տարիներու համար այդ ընդհանուր եկամուտին 25%ը միայն յատկացնել Երկրէն դուրս կազմակերպութեան ունեցած պէտքերուն, իսկ մնացած 75%ը դնել Զինուորական Խորհուրդի տրամադրութեան տակ՝ ուղղակի Երկրի գործերուն գոհացում տրուելու, ինչպէս նաեւ Ընդհանուր Ժողովի կողմէ գծուած ձեռնարկները իրականացնելու համար։

ԾԱՆՕԹ.— Այս հաշիւը հիմնուած է Դաշնակցութեան տարեկան 500,000 ֆր. հաւանական հասոյթին վրայ. աւելի եղած պարագային մնացեալները Երկրին յատկացնել կրկին։

Ո՛չ մէկ պարագայի տակ համաձայն չենք որ յանուն Տաճկահայ Դատին եւ յանուն Դաշնակցութեան հաւաքուած գումարներէն տրամադրուի Կովկասի մէջ գոյութիւն ունեցող գործաւորական եւ ռուսական շարժման։

8. ԶԱՆԱԶԱՆ ՀԱՐՑԵՐ

Ա. Միջոցներ քաղաքական բանտարկեալներու օգտին

Աշխատիլ Եւրոպայի զանազան կարեւոր քաղաքներուն մէջ «բանտարկեալներու պաշտպան» անունով յանձնախումբեր կազմակերպել՝ բարեպատեհ առիթներէն օգտուելով, դիւանագիտական միջոցաւ բանտարկուած ընկերներու ազատումը կամ պատիժի թեթեւացումը ձեռք բերելու նպատակով։

Կարմիր Խաչի ընկերութիւններու ուժ տալ եւ միջոցներ ձեւի մը վերածել, յանձնելով անոնց բանտարկեալներուն օգնելու պարտականութիւնը։

Բանտարկուած բոլոր ընկերներուն՝ անխտիր իւրաքանչիւր տարի մասնաւոր օգնութիւն մը յատկացնելու միջոցներ ստեղծել եւ գործադրել տալ մարմիններուն։

Կ'առաջարկենք Ընդհանուր Ժողովին որ Սասնոյ եւ Մշոյ վերջին դէպքերէն վնասուողներուն դրամական որոշ նպաստ մը յատկացուի։

Բ. Ցառաջիկայ Ընդհանուր Ժողովի մասին

Ընդհանուր Ժողովի գումարման պայմանաժամը լրանալէն առաջ կամ ետքը, երբ մարմիններուն կողմէ բաղձանք յայտնուի նոր Ժողովի մը գումարման, Բիւրոները պարտաւոր ըլլան գոհացում տալու։

Գ. Բողոք Արեւմտեան Բիւրոյին դէմ

Ամբողջ տարիներէն Արեւմտեան Բիւրոն մէկ–երկու անդամներով միայն վարելու պարագան ընդունելով ապօրինութիւն մը՝ կը բողոքենք այդ մասին։

Դ. Բիւրոյի եւ Կեդր. Կոմիտէի մէջ գոյութիւն ունեցող 1100 ֆր. խնդիրը

Ժողովս, Արեւմտեան Բիւրոյէն Կ. Կոմիտէին եկած Հոկտեմբեր 4 թիւ եւ Նոյեմբեր 1 թիւ նամակներէն տեղեկանալով որ ընկեր Ռոստոմ կազմակերպութեան դրամէն 1100 ֆր. դրկած է ընկեր Պիոնեանին՝ հայ մասնաւոր վարժարանին համար եւ այդ գումարը Բիւրոն կը պահանջէ շրջանիս Կեդր. Կոմիտէէն, Ժողովս այս մասին բացատրութիւն ուզեց ընկեր Պիոնեանէն։

Ընկեր Պիոնեան յայտնեց, որ ինք չէր գիտեր թէ Բիւրոյին պարտք մը ունէր, քանի որ ինք անձնապէս դիմած էր Ռոստոմին եւ Ռոստոմը, ինչպէս սովորաբար կ'օգնէր վարժարանին պէտքերը զգալով, երկու անդամէն դրկած էր այդ գումարը եւ [Պիոնեան] չէր գիտեր թէ իր անունով փոխ առնուած է կազմակերպութենէն եւ իր անունով արձանագրուած. նոյնիսկ Ռոստոմը կամ Բիւրոն դրամը դրկուած օրէն մինչեւ դեկուցումը՝ ոչ մէկ պարագայի տակ իրեն գրած են թէ այդ կարգի պարտք մը ունի կազմակերպութեան՝ ընկեր Պիոնեան։

Այդ դրամական խնդրոյն կարգադրութիւնը կը վերաբերի Բիւրոյին, Ռոստոմին եւ Պիոնեանին, ինչ որ Կեդր. Կոմիտէն ալ նոյն մտքով գրած է արդէն Բիւրոյին։ Ընկեր Պիոնեան յայտնեց դարձեալ, որ Բիւրոյի այդ նամակէն ետքը ինք ալ իր կողմէ պատշաճը գրած է Ռոստոմին, որուն պատասխանը մինչեւ հիմա չէ ստացուած։

Այս առթիւ Շրջանական Ժողովս կը բողոքէ Ընդհանուր Ժողովին՝

ա. Բիւրոյին դէմ՝ որ, կազմակերպութեան օրէնքներուն հակառակ, որոշ գումարներ կու տայ այս կամ այն նպատակին, դիտնալով հանդերձ թէ այդ նպատա-

կը հեռի է ուղղակի կազմակերպական հանգամանք կրելէ։

բ. Ընկեր Ռոստոմի դէմ՝ որ գիտակցաբար Բիւրոյի արկղէն որոշ գումար յատկացուցած է կազմակերպութենէն դուրս գործերու։

գ. Դարձեալ Արեւմտեան Բիւրոյի կողմէ Պալքանեան Կեդր. Կոմիտէին ուղղուած Նոյեմբեր 1 Թուակիր նամակին հետեւեալ տողերուն դէմ.—

«1100 ֆր.-ի մասին ձեր գրածը աւելի՛ քան անգործնական է։ Ընկեր Ռոստոմը այդ գումարը վերցրել է եւ ուղարկել ընկեր Պիոնեանին դպրոցի համար՝ շուտով վերադարձնելու պայմանով։ Արդ՝ երբ անհրաժեշտ է որ հաշիւները փակուեն, այդ գումարը անպայման պէտք է վերադարձուի. եթէ ինքը՝ հիմնարկութիւնը անկարող է անել այդ, ուրիշ ոչինչ չի մընում, բայց թէ այն, որ Կեդր. Կոմիտէն ինքը վճարի, վերապահելով իրան իրաւունք՝ այս եւ այն եղանակով լրացնել այդ գումարը։ Կոմիտէդ կարող է այդպիսի քայլ անել տեղական դպրոցի համար, բայց Բիւրոն՝ ո՛չ մի կերպ», — որոնցմով Բիւրոն ուղղակի զեղծումի առաջնորդել կը ձգտի ուրիշ մարմին մըն ալ։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ
(կնիք)

---

(1) Իմա՛ *սոցիալիստական* (ընկերվարական)։
(2) Կրաւորական, ո՛չ գործօն։

7. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԻՔ ՀԱՐՑԵՐ ՖԻԼԻՊԷԻ ԿՈՄԻՏԷԷՆ

Նամակի երկբերբ թուղթի մը վրայ, 4 երես։ Կը կրէ հետեւեալ մակագրութիւնները, — կարմիր մատիտով՝ «*Մաս.* 11 *Յունվ.* 906», կապոյտ մատիտով՝ «*Յանձնել Արեւմտ. Բիւրոյին*» եւ «№ 18, 9-ի *Յանձ*[նախումբ]»։

Յայտնի կ'ըլլայ որ Պալքանեան շրջանի անունով Կեդր. Կոմիտէին կողմէ Ընդհանուր Ժողովին յղուած «հարցեր»ուն կարեւորագոյն մէկ մասը կու գայ Ֆիլիպէի Կոմիտէէն։

Կը կրէ Կոմիտէի չորս անդամներու ստորագրութիւնը։

1) *Կ'առաջարկենք Ընդհանուր Ժողովին, որ յառաջիկայ շրջանին համար նիւթական եւ բարոյական շատ աւելի մեծ ոյժ մը յատկացուի բուն Թրքահայ Դատին։*

2) *Մինչեւ հիմա Երկրի մէջ եղած կազմակերպական գործունէութիւնները անբաւարար եղած են, ուստի կը խնդրուի, որ յառաջիկային թէ՛ զինուորումը եւ թէ փրոփականտը աւելի ուժեղ եւ միահաղոյն ըլլան հոն։*

3) *Զինակիր խումբերու միջոցաւ մինչեւ հիմա եղած զէնքի փոխադրութիւններէն զատ, ուրիշ միջոցներ եւս խորհուին։*

4) *Աշխատուի Եւրոպայի մէջ «բանտարկեալներու պաշտպան» անունով յանձնախումբեր կազմակերպել, եւրոպական այլեւայլ կարեւոր քաղաքներու մէջ, բարեպատեհ առիթներէն օգտուելով՝ դիւանագիտութեան միջոցաւ յեղափոխական բանտարկեալ ընկերներու ազատումը կամ պատիժի թեթեւացումը ձեռք բերելու համար։*

5) *Աշխատիլ որ Դաշնակցութեան գործունէութիւնը եւ չարժումները լրացուցիչ հանգամանք ունենան, ասկէ ետք, Թուրքիոյ լուծին տակ գտնուող տարբեր յեղափոխական մարմիններու հետ։*

6) *Յեղափոխական գործի համար բանտարկուած բոլոր ընկերներուն անխտիր, իւրաքանչիւր տարի մասնաւոր օգնութիւն մը յատկացնելու միջոցներ ստեղծել եւ գործադրել։*

7) *Երկրի մէջ ո՛ւր որ յեղափոխական գործունէութիւն պիտի ըլլայ, աշխատուի տեղական ուժերու կարելի եղածին չափ զօրաւոր կազմակերպութիւն ստեղծել եւ Պատասխանատու Մարմինները տեղական կազմակերպութեան հետ համախորհուրդ գործեն։*

8) *Աշխատուի որ Երկրի Պատասխանատու Մարմինները իրենց գործունէութեան շրջանակին ծանօթ ընկերներէն ըլլան։*

9) *Երկրի մէջ ամէն յեղափոխական ձեռնարկ խմբական, անհատական գոյն չստանայ, այլ ուղղակի տանջուող Ժողովուրդին բողոքին արտայայտութիւնը ըլլայ։*

10) *Երկրի սահմանակից եւ անոր դուռ կողող վայրերուն մարմինները ուժովցնել, որպէսզի կարենան Երկրի պահանջներուն բաւարար գոհացում տալ։*

11) *Երկրի Պատասխանատու Մարմիններու ընտրութեամբ, Բիւրոներու մօտ գտնուի անոնց մնայուն ներկայացուցիչը, որպէսզի իրենց պահանջները փութով գոհացնեն։*

12) *Պոլիսը նորէն ցուցավայր մնայ եւ ոյժ տրուի։*

13) *Անհրաժեշտ է, որ եւրոպական փրոփականտը առաջուան պէս շարունակուի։*

14) *Նկատի առնելով գաղութներու ներկայ դրութիւնը, կը պահանջենք որ կազմակերպութիւնը ամէն գաղութի համար մէյմէկ փրոփականտիստ գործիչ տրամադրէ։*

15) *Իբրեւ մեր շրջանի գործը, կ'առաջարկենք որ* Վարդոյի *խնդիրը կարելի եղածին չափ շուտ վերջ մը ստանայ։*

16) *Կ'առաջարկենք Ընդհանուր Ժողովին, պատրաստել լայն կանոնագիր մը, ուր մանրամասնօրէն, յստակ եւ որոշ կերպով գծուած ըլլան Կեդր. Կոմիտէներու, Կոմիտէներու, Ներկայացուցիչներու եւ գործիչներու փոխադարձ յարաբերութիւնները, անոնց գործելու եղանակը, սահմանը եւ իրաւասութիւնը։*

17) *Ընտրել Արեւմտեան եւ Արեւելեան Բիւրոներու անդամները Թրքահայ եւ ռուսահայ խառն ու փորձառու գործիչներէ։*

18) *Դնել օրէնք մը, որով պատասխանատուութեան տակ մտնեն Ընդհանուր Ժողովի պատրաստած կազմական 17րդ յօդուածը, մանաւանդ գոյութիւն ունեցող* fonbpnի դրութիւնը (système) *կէտ առ կէտ չգործադրող ձեռնհաս մարմիններն ու ներկայացուցիչները։*

19) *Վարդոն Ընդհանուր Ժողովին ներկայանալ ուզելէ առաջ՝ պարտաւորուի անպայման գրաւոր կերպով ետ տունել «Շարժում»ով լրած հայհոյանքները՝ դաշնակցական մարմիններու եւ ընկերներու հասցէին ուղղած։*

20) *Շրջանական Ժողով մը, իրեն դրացի Պատասխանատու Կեդր. Կոմիտէի եւ իր շրջանի Բիւրոյի ներկայացուցիչներուն հետ, իրաւունք ունենայ պատիժ տնօրինելու իր շրջանի ոեւէ ընկերի համար։*

21) *Բարձրացնել նախորդ Ընդհանուր Ժողովի Կեդրոնական Կոմիտէներու համար դրած զինուորական նուազագոյն պահանջները։*

22) *Ընդհանուր Ժողովը Տաճկաստանի վերաբերմամբ դնած* ցենզը *մեղմացնէ, որպէսզի Տաճկահայաստանէն աւելի շատ թիւով պատգամաւորներ կարենան դալ Ընդհանուր Ժողովին։*

23) *Ընդհանուր Ժողովի պատգամաւորներու ծախքերը բացառիկ միջոցներով հոգացուին։*

Կոմիտէի անդամներ՝ ՎԱՀԱՆ ՄԱԶՄԱՆԵԱՆ
ՆՈՒԱՐԴ ՍՎԱՃԵԱՆ
ՍԱԹԵՆԻԿ ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ
Ս. ՊԵՏԻԿԵԱՆ

8.— ՎԱՌՆԱՅԻ ԽՈՒՄԲԵՐՈՒ ԴԻՄՈՒՄԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Նամակի չորս գոյգ թերթերէ կարուած տետրակ։ Գրութիւնը՝ 16 էջ, սեւ մելանով։ Ունի բոդոֆագրի եւ բացատրագրի բրնոյք։ Կը կրէ 9 խմբապետներու ստորագրութիւնը։

Ընկերնե՛ր,

Հ. Յ. Դաշնակցութեան Արեւմտեան Բիւրոյին
Ժընեւ

13 Յուլիս 906, Վառնա

Յաւով պիտի իմացնենք այս անգամ Ձեզ լուր մը, որը մեր կամքէն ալ անկախ պատճառներով եղաւ։

Այժմս մենք ամբողջ ընկերներով, յարաբերութիւններս խզած ենք Պալքանեան Կեդր. Կոմիտէին հետ։

Վարը տրուած բողոք նամակը, որը մենք ղրկած ենք Կ. Կոմիտէին, որեւէ յուսալի արդիւնք չունեցաւ եւ մենք ստիպուեցանք այսպէս ընել՝ ընկերներու ամբողջին բաղձանքով։ Ի հարկէ դուք ալ տեղեակ էք Պալքանեան վերջին Շրջանական Ժողովէն ու անոր արձանագրութիւններէն։

Խմբապետական Ժողովիս ստացած նամակը Պալքանեան Կ. Կոմիտէէն

(Պատճէն).—

20 Մայիս 1906

«Ընկերնե՛ր,

Ինչպէս կը տեսնուի Շրջանական Ժողովի արձանագրութիւններէն՝ Ժողովը, ի նկատի ունենալով Վառնայի կազմակերպական տխուր վիճակը, պարտք դրաւ Կ. Կոմիտէիս վրայ ընկեր մը ղրկել Վառնա՝ ապաւայ ընտրութիւններուն հսկելու համար։ Կեդր. Կոմիտէս այս նպատակով տեղ ղրկած է, իր կողմէն իրրեւ լիազօր ներկայացուցիչ, ընկեր Անդրանիկը, որ առժամապէս պիտի վարէ տեղական կոմիտէի գործերը առանձին, եւ յարմար դատուած ժամանակ՝ Կեդր. Կոմիտէիս համաձայնութեամբ պիտի ձեռնարկէ նոր մարմնի ընտրութեան՝ օրինական ճամբով։

Ուստի, կը խնդրուի բոլոր խմբապետներէն եւ առհասարակ դիտակից ընկերներէն, յեղափոխականի վայել ընթացքով հետեւիլ ընկեր Անդրանիկի խորհուրդներուն եւ չզլանալ իրեն ամէն բարոյական աջակցութիւն, որպէսզի կարողանայ իրեն յանձնուած պաշտօնը բաղձալի եղանակով գլուխ բերել։

Ընկերական բարեւներով՝
Հ. Յ. Դ. ՊԱԼՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԷ

***

Պալքանեան Կեդր. Կոմիտէին ուղարկած մեր բողոք նամակը, Շրջանական Ժողովի որոշումներու համար, խմբապետական Ժողովին կողմէ

1 Յունիս 1906

(Պատճէն).— Պալքանեան Կեդր. Կոմիտէին

Ընկերնե՛ր,

«Ստացանք Ձեր Մայիս 20 Թուակիր նամակը. պարունակութեանը ամբողջ տեղեկացանք. հիմա կը պա-

տասխանենք։ Ստացանք նաեւ 906 թ. տեղի ունեցած Պալքանեան Շրջանական Ժողովի արձանագրութիւնները։

Շրջանական Ժողովի արձանագրութենէն [կ'իմանանք], ինչպէս մեզի ցոյց կը տրուի, թէ Վառնայի ընկերական տխուր վիճակը պարտք է դրեր Կ. Կոմիտէիդ վրայ, որ ապագայ ընտրութիւններու ժամանակ ընկեր մը ղրկէ, հսկելու պաշտօնով։ Եւ ուղարկած էք ընկեր Անդրանիկը՝ իբր լիազօր ներկայացուցիչ, որ առժամապէս վարէ տեղական կոմիտէի գործերը առանձին եւ, յարմար դատուած ժամանակ, Կ. Կոմիտէիդ համաձայնութեամբ պիտի ձեռնարկէ նոր մարմնոյ ընտրութեան, օրինական ճամբով։

Նոյն ամսոյ 23 թիւով մենք ստացած ենք Վառնայի կոմիտէի մէկ նամակը, որով կ'իմացնէր իր հրաժարականը, ներքին կանոնագրի 38րդ յօդուածի համաձայն եւ կարգ մը դիտողութիւններ, որոնք աւելորդ կը համարինք Ձեզի տեղեկացնել, որովհետեւ ուղղակի խմբապետական Ժողովիս կը պատկանին(1)։

⁂

«Պատասխանենք Ձեր նամակին։

Դուք ուսկի՞ց առիք լուրը Վառնայի ընկերական տխուր վիճակի մասին։ Ինչպէս Շրջանական Ժողովի արձանագրութենէն տեղեկացանք, անոնք դուք ստացեր էք կարգ մը մարդոցմէ, որոնք տարի մը կազմիս հետ որեւէ գործ չեն ունեցած եւ, եթէ ունեցած են, ուղղակի կերպով գործը խանգարելու եւ ընկերները աղտոտելու միտումով։

Շրջանական Ժողովի ներկայացուցած՝ Վառնայէն եկած բողոքներու ճշդութիւնը ո՞վ վաւերացուց եւ որո՞ւ հաղցուցիք, որոնց վրայ տրուեր են բոլոր վճիռները։ Մենք արդէն ձեզի ղրկած էինք մեր խումբերու անդամներու ցանկը եւ անոնցմէ գոյացուած հասոյթը։ Մենք, նկատի չունենալով կազմէն դուրս ըլլալիքը եւ Ձեր կողմէ այսքան ընդունելութիւն գտնելին, որեւէ բան չղրեցինք, եւ իսկապէս ալ չէր արժեր՝ քանի մը հոգիի համար, որոնք բացարձակ իրենց կիրքերուն եւ եսերուն համար մէջտեղ ինկած են, զբաղուիլ երկարօրէն։ Ինչո՞ւ ուղարկեցինք մեր պատգամաւորը Շրջանական Ժողովին, քանի որ դուք ասկէ անկէ հասկըցեր էք արդէն գործը. ի հարկէ՝ մեր պատգամաւորը ձեզի իմացուց պէտք եղածը եւ որը դուք երբեք նկատի չէք ունեցած (արձանագրուած)»։

⁂

«Քանի որ դուք այսքան հետաքրքրուեր էք, քիչ մը մանրամասնենք։ Արթաքի մը ասկէ տարի մը առաջ ուզեց, որ կոմիտէ չկազմուի այստեղ, որպէսզի ինքը տանի Դաշն. գործերը խմբապետական ժողովի անուան տակ (վաստեր ունինք). մէջտեղ եկան իր բոլոր ապօրինութիւնները. ան սկսեց սերմանել ընկերներու մէջ վտանգաւոր ոգի մը, որը այս աստիճանին հասցուց, ընտրուած կոմիտէին հանդէպ՝ իր առաջին քայլերուն մէջ (թէ՝ կոմիտէի մէջ գաւառացիներ կան, չօճուխներ կան, թէ՝ Մուրատը տօճապճի մարդ է, անոնց հետ չ'ըլլար՝ շատ բաներ կ'ընէ, թէ՝ ընթերցարանի հաշիւներուն մէջ զեղծում կայ, թէ՝ «Գողթան» երդեցիկ խմբի մէջ գաղտնիք կայ, թէ՝ ի՞նչ եղաւ Ոսկանապատի վիճակահանութեան տոմսակներուն հաշիւները, թէ՝ ո՞ւր ղնաց հին կոմիտէի հաշիւները, եւայլն)։ Այսպէս խօսելով, անիմաստ եւ անկապ, փողոցը եւ ընթերցարանի մէջ խանգարեց տղոց միտքը եւ պղտորեց։

Շատ երկար պիտի ըլլար գրել եւ ամփոփել եղած անիմաստ եւ պարապ խառնութիւնները, որոնց միակ պատճառ դարձաւ Արթաքին՝ առաջին անգամ։ Բացի ասկէ, քանի մը անգամ Կոմիտէի ժողովներուն մէջ ընկ. Տիգրանեանի, ընկ. Արշակի հետ եւ վերջին անգամ խմբապետական ժողովի մէջ, կոմիտէի ներկայութեամբ, քննուեցան խնդիրները՝ ընկեր Զարդարեանի եւ ընկեր Թորգոմի առջեւ։ Երկու ներկայ եղող ընկերները իրենց կարծիքները պահեցին իրենց, պէտք եղած տեղը յայտնելու համար. մեր համոզումը միակ այն եղաւ, որ Արթաքին ենթադրութիւններով (?) սկսեր է նայիլ գործին վրայ եւ ենթադրութիւններով վերջացուցեր. միայն ուզեր է իր կարծիքները ճանչնալ եւ ուրիշներունը թողուլ։ Անոր միակ մտածողութեան առարկան դարձեր է Մուրատ Երանոսեանը, որուն ամէն քայլափոխին հետեւեր է, եւ ամենացաւալի կէտը՝ ամբողջ Վառնայի դաշնակցական գործը կապեր է Մուրատի անձին հետ։ Այնպէս որ ամէն բանի մէջ Մուրատի մատը տեսեր է եւ վրան յարձակեր է շատ անգամ ու իր սխալը ընդունելով՝ ետ քաշուեր։ Այսօրինակ դէպքեր մենք իմացանք վերջին ժողովի մէջ, որտեղ ներկայ էին ընկեր Զարդարեան եւ ընկ. Թորգոմ։ Թուելը անպատշաճ կը համարենք, բացի ծիծաղ շարժելէն՝ ոչի՛նչ։

Նոյն ժողովին մէջ յայտնուեցաւ թէ ան կանուխէն միտք է ունեցեր կոմիտէն ծաղրելի դարձնել ընկերներու առջեւ (յայտնուեցաւ իրեն հաւատարիմ ընկերոջ մը կողմէ)։

Ուրեմն կը տեսնա՛ք գաղտնիքները,«ո՞ւր մնաց»ները, «ի՞նչ եղաւ»ները, «կը հասկնաք»ները ո՛ւր հասցուցին գործը։ Գլուխ պատեցաւ, ապտակներ խաղցին, ընթերցարանի խաղաղութիւնը խանգարուեցաւ, Վառնայի ժողովուրդին քով խայտառակ եղանք, որուն համակրանքը եւ օժանդակութիւնը տեսեր էինք եւ յառաջիկային շատ յոյսեր ունէինք։ «Գողթան» խումբը քանդուեցաւ, տղոց մէջ վերջին աստիճան ատելութիւն ինկաւ եւ ամենաչատը ո՞վ տուժեց, — Գո՛րծը —։

Այստեղ իսկապէս մենք խօսելու իրաւունքը ունինք, որ զսպեցինք ընկերները բոլոր կռիւներուն մէջ։ Ապտակներուն չպատասխանուեցաւ, բարձրացող ատոները խաղաղեցուցինք եւ հայհոյութիւնները չլսեցինք։

Ասոնց եւ ոչ մէկը մենք ձեզի չգրեցինք. եւ ինչո՞ւ գրէինք. եւ մի՞թէ չէինք կրնար եղածներուն պատասխանել միեւնոյն կերպով, բայց վերջը ո՞ւր կ'երթար եւ որո՞ւ վրայ պիտի խնդային։ Այս մասին այսչափ»։

⁂

Անցնինք Շրջանական Ժողովի մէջ տրուած վճիռներուն։ Անմիջապէս կը բողոքենք ձեզի՝ ձեր բռնած ապօրինի եւ անարդար ընթացքին դէմ, որովհետեւ դուք եղած էք նամակները հրամցնողը Շրջանական Ժողովին, առանց իմաց տալու մեզի՝ նախապէս։

Նկատելով որ անոնք գրուած են ուղղակի կազմէն դուրս մարդոց բողոքներով եւ մանաւանդ ապօրինի եւ սխալ տեղեկագրուած,

Նկատելով որ Եւագրի Կիւմիւշճեանները միայն Մարտ 14ին (1906) ուզած են մտնել կազմին մէջ՝ ուրիշներու դրդմամբ,

Նկատելով որ բողոքողներու անունները եւ երեսները տեսած ենք միայն վերջին պարագային, Շրջանական Ժողովի զումարման մօտիկ,

Նկատելով որ մեր կոմիտէի ընկերներուն դատապարտուիլը բոլորովին անտեղի է եւ խղճի դէմ,

Նկատելով որ կոմիտէի անդամ ընկեր Մուրատի համար տրուած վճիռը արդէն սովորական դարձած «աղջիկ կը սիրէ կոր, անոր համար քանդեց»ի հիման վրայ է,

Նկատելով որ Մուրատը կրնա՛ր աղջիկ սիրել,

Նկատելով որ Մուրատի վերագրուածները Արթաքիի եւ Գողոսի աղտոտ կիրքերուն արդիւնք են՝ մեզի լա՛ւ յայտնի,

Նկատելով Մուրատի սիրած ընկերուհիին լուր չունենալը՝ անոր սիրահարական զգացումներէն,

Նկատելով որ Արթաքի «ո՞ւր մնաց»ները, «ի՞նչ եղաւ»ները փնտռելու ելած էր շա՛տ առաջ, երբ Մուրատ «Գողթան»ի մէջ չկար, միակ իրենց խնդրանքով բերուած, ծագած կռիւները կարգադրելու համար, ինչպէս կոմիտէի եւ կազմակերպութեան մէջ, երբ անիկա բոլորովին զատ կը մնար...(1)

Նկատելով որ «Բողոք», «Սպասար» եւ «Ցառաջիմական» եւայլն խմբերու անդամներու անունները եւ քանակը բոլորովին սխալ եւ աւելցուած են,

Նկատելով որ ընկեր Ալեքսան Ասլանեանի տուած բացատրութիւնները բոլորովին տարբեր են արձանագրուած, որպէս թէ «Արաքս» խմբի ժողովը լրտեսեր է,

Եւ ամենավերջը, նկատելով որ որպէս Վառնայի կազմը չվերաբերուեցաք մեզի հետ, աւելի՛ն՝ Եւագրիներու եւ Արթաքիներու հետ, խմբապետական ժողովս խտիւ ետ կը պահանջէ եւ չ'ընդունիր տրուած վճիռները, որպէս անստոյգ տեղեկութիւններու, սխալ եւ անվստահելի աղբիւրներէ քաղուած բողոքներու արդիւնք։

Ձեզի կը յայտնենք նաեւ, որ խմբապետական ժողովս ստացած է կոմիտէի հաշուոյ տետրակները եւ գոյքերը։ Մինչեւ որ մեր արդարացի պահանջներուն գոհացում չստանանք, չենք կրնար ընդունիլ ձեր ուղարկած լիազօր ներկայացուցիչը մեր խմբերուն եւ խմբապետական ժողովին մէջ։ Անոր բռնած վարմունքներու մասին չենք գրեր բան մը առայժմ (ծեծ, սպառնալիք եւայլն)։

Մեր որոշումը ձեզի կը տեղեկացնենք՝ որ 3 խմբերէն («Վրէժ», «Ցառաջիմական» եւ «Հրայր»), մինչեւ վերջնական կարգադրութիւն, խմբապետ չմասնակցի ժողովիս։

Ցանձնելով մեր փափաքները ձեր ուշադրութեան, կը սպասենք անյապաղ պատասխանին,

Ընկերական բարեւներով
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՎԱՌՆԱՅԻ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎ
(9 խմբապետները՝ ստորագրած)

⁂

Մեր ստացած պատասխանը Կ. Կոմիտէէն (պատճէն)

Խմբապետական ժողովին

9 Յունիս 1906

Ընկերնե՛ր,

Ձեր 1 Յունիս ամսաթիւ նամակը ստացած ենք։

Ցաւալի է որ Վառնայի ընկերական խառնակ դրութիւնը փրկելու համար, տակաւին որեւէ օժանդակութիւն չէք ցոյց տուած Ձեր կողմէն։

Հաւատացէք որ Վառնայի խնդիրները արդէն ամբողջ ժամեր զբաղեցուցած են Շրջանական Ժողովը, եւ այդ ամենքէն ետքն է որ Ձեր նամակը կու գայ նոյն յանկերգը ներկայացնել մեզի։

Շրջանական Ժողովի որոշման համաձայն, ղրկած ենք Ձեզի ընկեր Անդրանիկը՝ տալով անոր ամէն իրաւունք եւ լիազօրութիւն, ձեռնարկելու համար տեղիդ

նոր ընտրութիւններուն՝ Ձեր բարոյական օժանդակութեամբ։

Շրջ. Ժողովի կողմէն չէ որ պիտի խօսինք մենք. բաւական է ըսել միայն, որ անոր որոշումները անպայմանօրէն գործադրելի են, ամբողջ տարի մը, եւ եթէ կան ընկերներ՝ որոնք Ժողովի տուած որոշումները անարդար կը գտնեն, կրնան համբերել մինչեւ յառաջիկայ Շրջանական Ժողով եւ հոն դանդատիլ։ Ան է որ նմանօրինակ խնդիրները նկատի կ'առնէ եւ կը քննէ։

Շրջանական Ժողով մը իր որոշումները կու տայ իրեն ներկայացուած դրութեան վրայ հիմնուելով եւ իր համոզման ձայնին անսալով։

Աւելի ամենատարրական բան մըն է գիտնալու համար։

Գալով ընկեր Անդրանիկը չընդունելնուդ կամ չճանչնալնուդ՝ ատիկա Ձեր մէջ տիսսիբլինի բացակայութիւնը կը ցուցնէ։

Անդրանիկը Ձեր յաւիտենական լիազօրը ըլլալու սահմանուած չէ. ան ունի իր որոշ պատասխանատու գործերը, այնպէս որ Ձեր այդ դրութիւնը շատ մը թանկագին ժամեր կը սպաննէ։

Հաւաքուեցէ՛ք անոր շուրջը անկեղծօրէն, թողուցէք ամէն նկատումներն ու եսերը, լարուեցէ՛ք բոլորդ ալ մէկ ուղղութեամբ՝ դէպի ազնիւ նպատակը, եւ վե՛ր ըլլալ այդ դրութեան ի սէ՛ր այն Գործին՝ որուն անունով կը խօսիք դուք Ձեր նամակով։

Ընկերական սրտագին համակրութեամբ ու բարեւներով՝

ՊԱԼԻՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Ու անմիջապէս վերջը հաւաքեցինք ընկերները ընդհանուր Ժողովի, որուն մէջ պարզուեցան ամբողջ խնդիրները եւ վերջին նամակը ուղարկուեցաւ Կ. Կոմիտէին՝ ընկերներու ամբողջի հաւանութեամբ եւ փափաքով։

Հ. Յ. Դաշնակցութեան
Պալքանեան Կ. Կոմիտէին(2)

Յարգելի՛ ընկերներ,

Ստացանք Ձեր 9 Յունիս թուակիր նամակը։ Մեր գրածներուն որեւէ զոհացում չտալէ անդին՝ Շրջանական Ժողովի մէջ խօսուածներուն պէս յանկերգի մը նմանցուցած էք ան։

Ձեր գրած նամակը շատ օրինաւոր էր. բայց իրականութեան մէջ այլ կերպ եղաւ պրն. լիազօրը, ձեր կողմէն եկած. ան երբեք պէտք չունեցաւ մեր օժանդակութեան. միայն իր առած սխալ տեղեկութիւնները ուզեց առաջ քշել չգիտենք ի՛նչ նպատակաւ, առանց մեզ լսելու։ Մինչեւ անդամ ինկաւ ճամբու մը մէջ՝ ինչ որ Աբթաքիները շատ աշխատելէ յետոյ պակաս ձգած էին։

Ձեր նամակէն առաջ արդէն մեզ, մեր խումբերով, դուրս էր ձգած իր կարգադրութեամբ կազմած ընդհանուր Ժողովէ մը, որտեղ կը գտնուին եղեր 20–30 դաշնակցականներ (յետոյ հաւաքուած)։

Առաջուց մեզ իմացուցած էր նամակով, բայց աւելի առաջ մենք իրեն մեր ըսելիքը ըսած էինք եւ, միեւնոյն ժամանակ, անկէ մէկ կիրակի առաջ գումարուած ընդհանուր Ժողովին ալ ներկայ չէինք եղած։

Ուրեմն երկրորդ ընդհանուր Ժողովը [գումարելը] եւ մեզ հրաւիրելը եւ յետոյ տարաձայնելը թէ, ո՛վ որ ներկայ չէ եղած կամ ետքը չի ստորագրեր՝ Դաշնակցութենէն դուրս կը մնայ, բացարձակ նպատակաւոր կը գտնենք։ Մենք շատ լաւ գիտենք թէ Շրջանական Ժողովի մը վճիռները ի՛նչպէս կը տրուին եւ ի՛նչպէս կը գործադրուին. աւելորդ կը գտնենք ձեր երկրորդելը։ Մենք պաշտաւոր չենք եղած խենթ ու խելառ բաները օրը օրին ձեզի տեղեկացնելու։ Ինչ որ պէտք էր Ձեզի իմացնել՝ արդէն եղաւ, իսկ ասկէ յետոյ երկար բալակ գրելու պէտք չենք զգար։ Միայն ցաւելով պիտի արձանագրենք՝ որ քանի մը ցնորածներ պաշտպանելու համար այս դիրքը բռնուեցաւ մեզի հանդէպ։

Ձեր նամակը ստանալնուս՝ հաւաքեցինք ընդհանուր Ժողով, որուն մէջ բաւական խօսելէ յետոյ տիրող դրութեան մասին եւ աչքի առաջ ունենալով ձեր եւ մասնաւորապէս ձեր կողմէ եկած լիազօրին բռնած անվայել ընթացքը, ամբողջ հաւաքուած ընկերներու ցանկութեամբ եւ միաձայն հաւանութեամբ՝ որոշուեցաւ խզել բոլոր յարաբերութիւնները Կ. Կոմիտէիդ հետ։

Ընկերական բարեւներով՝
Հ. Յ. Դ. ԴԱՇՆ. ԸՆԿԵՐ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ
(Ստորագրուած 89 անդամներէ)

Մենք զգուշացանք որեւէ կարգէն դուրս քայլ առնելէ, սակայն, ինչպէս առաջ գրեցինք, այնպէս եղաւ։ Ճնշումը բացարձակօրէն ապօրինի եւ անխիղճ ըլլալուն՝ մեր կողմէ պարտքերնիս կատարած կը համարինք։ Հիմա ձենէ կը խնդրենք, որ ուշով մեր բողոքները նկատի ունենաք, մեր նուիրատուութիւնները ղրկելու վայր մը որոշէք. մեր բոլոր ընկերներն ալ փափաքող են որ [նուիրատուութիւնները] ուղարկուին Աւորպատականի Կ. Կոմիտէին կամ Բիւրոյիդ։

Մենք ընտրած ենք մեր կոմիտէն. հետեւաբար յարաբերութեան մէջ մտէք իր հետ եւ ցոյց տուէք մեր նուիրատուութիւնները ուղարկելու վայրը։

Ներկայացնելով ամբողջ դրութիւնը ձեզի, յուսով ենք որ վերջնական կարգադրութիւն մը կը տնօրինէք։

Սպասելով Ձեր անյապաղ պատասխանին,

Ընկերական բարեւներով՝
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԽՄԲԱԳԵՏ. ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԷ

«Բողոք»	խումբ	8	անդամ	խմբապետ Բ. ՇԱՀԱԳ
«Հայրիկ»	»	10	»	խմբապ. ԱՍԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ
«Տարօն»	»	12	»	» ՅՈՎՀԱՆՆԷՍ ՂՈՒԿԱՍԵԱՆ
«Միչտունիք»	»	11	»	» ԲԱՐՍԵՂ ԳՐԻԳՈՐԵԱՆ
«Կուկունեան»	»	7	»	» ԽԱՉԻԿ ԱՍՏՈՒՐԵԱՆ
«Առիւծ»	»	9	»	» ԵՐԱՆՈՍ ԱՌԱՔԵԼԵԱՆ
«Քրիստափոր»	»	12	»	» ՕՆՆԻԿ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ
«Մօսէ»	»	10	»	» Մ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ
«Սպատար»	»	10	»	» ՄԵԼԻՔ

Հասցէ՝

MELKON YENOVKIAN
Poste Restante
Varna

---

(1) Լեզուն ջանացած ենք պահել անփոփոխ, հակառակ բացայայտ անհարթութիւններու եւ, երբեմն, դժուար հասկնալի ըլլալուն։

(2) Թուականը արձանագրուած չէ։

9.— ՊԱԼԻՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԷԻ ՆԱՄԱԿԸ 4ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Կ. Կոմիտէի պաշտօնաթուղթի վրայ, 1 թերթ՝ 2 երես, սեւ մելանով։ Հաստատուած է Պալքան. Կ. Կոմիտէի կնիքով։

28 Ապրիլ 1907

Հ. Յ. Դ. Ընդհանուր Ժողովի դիւանին

Վիեննա

Յարգելի ընկերնե՛ր,

Ստացած ենք Ձեր Մայիս 7 թուակիր նամակը(1)։

Համաձայն մեր պատգամաւոր ընկերոջ յանձնարարութեան, կը յայտնենք որ Կեդր. Կոմիտէս Յունուար ամիսէն ասդին Զինուորական վարժարանի հաշուոյն ստացած է՝

Ամերիկայի Կեդր. Կոմիտէէն,	
20 Յունուարին՝	6217,60
26 Մարտին՝	5191,—
Արեւմտեան Բիւրոյէն,	
10 Փետրուարին՝	2000,—
20 Փետրուարին՝	5000,—
26 Մարտին՝	1000,—

Իսկ ինչ կը վերաբերի մեր շրջանի պատրաստի դրամէն ծախսուած գումարի քանակին, յառաջիկայ տարուայ հաշուեկշիռով միայն ցոյց պիտի տրուի։

Մեր պատգամաւոր ընկերը յայտնեց նաեւ որ Կեդրոնական Կոմիտէներու միջոցաւ ըլլալիք տեղական-փրոփականտի-գործիչի եւ այլ յարակից ծախքերու քանակը ձգուած է իւրաքանչիւր Կեդր. Կոմիտէի հաշիւներու, տալով միաժամանակ ամփոփ տեղեկութիւններ այդ մասին։ Բայց որովհետեւ մեր շրջանի ներկայ եւ յառաջիկայ գործունէութեան տեսակէտով կարեւոր կը նկատենք այդ մասին ունենալ որոշ ցուցմունք մը, քանի որ նպատակ ունինք նաեւ ընկեր Շահնազարեանը պահել իբրեւ շրջան-փրոփականտիստ, ուստի համեցէք մեզի որոշ սակով ցոյց տալ թէ՝ ինչ էր Ընդհանուր Ժողովի հայեացքը այդ մասին. արտասահմանի Կեդր. Կոմիտէները իրենց հասոյթի % քանի՞ն կրնան ծախսել եւ այդ գումարին ո՞րքանը գործիչի եւ ո՞րքանը թերթի՝ գրաւոր փրոփականտի։

Կը հաստատենք մեր երէկուան հեռագիրը, «Օթէլ Գերմանիա»յի հասցէով, որով կը խնդրէինք ընկերներ Ռոստոմի, Թուրչեանի եւ Մուրատի չուտափոյթ մեկնումը. նոյնը կը կրկնենք եւ ներկայիս՝ վարժարանի գործը օր առաջ որոշ ձեւի մը մէջ դնելու համար։

Սպասելով ձեր պատասխանին,

Ընկերական բարեւներով՝
Հ. Յ. Դ. ՊԱԼԻՔԱՆ. ԿԵԴՐ ԿՈՄԻՏԷ
(Կնիք)

---

(1) Թուականներու տարբերութիւնը վերագրելի է, կ'ենթադրենք, հին եւ նոր տոմարներու գործածութեան։ Ընդհանուր Ժողովի դիւանէն ստացուած նամակի թուականը 7 Մայիս (նոր տոմար), հին տոմարով պէտք է եղած ըլլայ 24 Ապրիլ։ Իսկ Կ. Կոմիտէի նամակին թուականը, 28 Ապրիլ, հին տոմարով է։

V.— ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէութենէն, 4րդ Ընդհանուր Ժողովի թղթածրարներուն մէջ կը գտնենք հետեւեալ գրութիւնները միայն, զոր կու տանք յաջորդաբար եւ լրիւ:

1.— «Տեղեկագիր Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի շրջանին՝ 1904–1906», սեւ մելանով 18 ձեռագիր էջեր, նամակի նորմալ չափի 10 երկթերթ թուղթերէ կարուած տետրակի մը մէջ:

2.— Ամերիկայի Կ. Կ.ի պաշտօնաթուղթի վրայ, 18 Յունուար 1907 թուակիր, Հ. Յ. Դաշն. Ամերիկայի կոմիտէներու 1906 Նոյեմբերի Շրջանային–Պատգամաւորական Ժողովի որոշումները, 3 էջ, կնիք Ամերիկայի Կ. Կոմիտէի: Առաջին էջին վրայ, վերը, մակագրուած կը գտնենք, կապոյտ մատիտով՝ «№ 5, *Արեւմտեան Բիւրոյին*» եւ կարմիր մատիտով՝ «№ 19, 9–ի *Յանձն.*»:

3.— Հ. Յ. Դ. Ամերիկայի Կեդր. Կոմիտէի ստորագրութեամբ եւ կնիքով՝ 19 Մարտ 1907 թուակիր նամակ մը, ուղղուած 4րդ Ընդհանուր Ժողովին. պաշտօնաթուղթի վրայ՝ սեւ մելանով, 3 թերթ, մէկական երես:

4.— Միեւնոյն ստորագրութեամբ եւ կնիքով՝ անթուակիր նամակ Արեւմտեան Բիւրոյին, — Ամերիկայի Կ. Կ.ի պաշտօնաթուղթի վրայ, թիւ 45, — եւ անոր կցուած՝ Խորհուրդի (Քղի) կոմիտէի 18 Հոկտ. 1905 թուակիր դիմումնագիր–երկտողը Ամերիկայի Կ. Կ.ին, Հ. Յ. Դ. Կարնոյ Կ. Կոմիտէի հաստատումով եւ կնիքով:

1.— ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻՆ 1904 – 1906

Տնտեսական վիճակ.— *Ամերիկայի Միացեալ Նահանգներու հայ գաղութներուն առաջին կազմակերպումը կը սկսի ասկից 25 տարիներ առաջ*, 1880–1882 *թուականներուն:*

Գաղթականութեան կամ աւելի ճիշդը պանդխտութեան առաջին հիմնարկէքը՝ Ամերիկա՝ կը կարծուի ըլլալ Խարբերդէն:

Պանդխտութեան երեւոյթը հայ ժողովուրդին համար — Տաճկահայաստանի մէջ — դարերու կեանք մը ունի: Անոր պատճառները բարդ ու բազմակողմանի են, 1) *Թուրք կառավարութեան հարստահարութիւնները, տուրքերու աւելնալը եւ քաղաքական ճնշումները.* 2) *Թուրք եւ քիւրտ տերեպէյիներու սանձարձակ կամայականութիւններն ու բռնութիւնները, որոնք ցարդ գործ կը դրուին հայու կեանքին, պատիւին եւ ստացուածքին վրայ, արտօնուած բարձրագոյն իշխանութենէն՝ քաղաքական միտումներով:*

Այն օրէն՝ երբ Պոլիսը հայ յեղափոխական ցոյցերու թատերաբեմը դարձաւ, Սուլթան Համիտ ու Թուրք վարչութիւնը Պոլսոյ դռները փակեցին հայ պանդուխտին ու վաճառականին առջեւ, անշուշտ ենթադրելով որ՝ այսպիսով Պոլիսը ազատ պիտի մնայ յեղափոխական «փորձանքներէ»:

Այսպէս թէ այնպէս, որովհետեւ գաւառացի հայուն առջեւ դոցուեցաւ իր մշակութային շտեմարանը ու միւս կողմէն իր առօրեայ պահանջները աւելի կը բազմանային՝ անանուն տուրքերու բազմանալով եւ անյեռաձգելի զանձումովը, այս եւ ուրիշ պատճառներ՝ ճնշուած, հարստահարուած հայուն մտքին մէջ ստիպողականութիւն մը արթնցուցին ինքզինքը նետելու արտասահման, ազատ երկիր, ազատ շնչելու վայրկեան մը եւ հոգալու իր օճախին ծանր հարկերն ու զուլումը:

Ամերիկա պանդխտելու հոգը պատրաստեցին միսիոնարները, իրենց կրօնական առաքելութեան օրերուն: Պանդխտութեան գլխաւոր հոսանքը դէպի Միացեալ Նահանգները, առաջին անգամ, լայն ծաւալ ստացած է Խարբերդի նահանգէն, ու հետզհետէ իր դրացի նահանգները ու գաւառները հետեւած են այդ հոսանքին. երբ Տաճկահայաստանի մէջ սուր ճնշումները իրենց ծայր աստիճանին սկսան հասնիլ, և 1895–1896էն ասդին կը չեշտուի այս մասնաւորապէս, անընդհատ պանդխտութեան կարաւաններ ճամբայ ելան Տիգրանակերտէն, Բալուէն, Քղիէն, Վասպուրականի, Բաղէշի եւ վերջերս ալ Սեբաստիայի նահանգներէն. նոյն բախտին ենթակայ են նաեւ Կիլիկիոյ շրջանը եւ Երզնկան, ու փոքր մասով՝ Կարինը եւ Զարսանճակը:

Հայ պանդուխտները խմբուած են գլխաւորապէս East*ի (արեւելք) կողմերը, մեծ հատուած մըն ալ՝* West*ի (արեւմուտք) նահանգները՝ Շիքակօ եւ Ֆրէզնօ: Միացեալ Նահանգներու հայոց թիւը ճշդուած չէ. ամենէն հաւանական թիւը կը կարծուի մօտ* 35·000:

Զբաղմունքով՝ 95% *գործաւոր են, որոնք կը գործեն երկաթի, կօշիկի, բրդեղէն–բամպակեղէնի եւ ուրիշ զանազան գործարաններու մէջ: Անձնական գործով զբաղողներու թիւը կը կազմէ* 5%:

Անձնական գործով զբաղողներ են՝ վաճառականները (Պոլսէն եւ Իզմիրէն), որոնք գորգի առեւտուր կ'ընեն. կան փոքր առեւտրականներ որոնք, գործաւոր դասակարգէն ելնելով, մտած են ազատ գործի ասպարէզը. ասոնց պարապմունքն է՝ հացագործութիւն, նըպարավաճառ, պղտավաճառ, ճաշարան, ծխավաճառ եւ չաքարավաճառութիւնը: Կան նաեւ քանի մը փոքր գործարանատէրեր:

Գործաւորներու վիճակը այսօր նոյնը չէ, ինչ որ էր տասը տարիներ առաջ. արհեստներուն հետզհետէ քիչ–չատ ծանօթանալով՝ շաբաթական վճարը աւելի զոհացուցիչ դարձած է, — 6էն 30 *տոլար ստացողներ կան, միջին հաշուով՝ շաբաթական* 10 *տոլար:*

Unionներու (գործաւորական միութիւններ) *չեն անդամակցիր ընդհանրապէս: Նախ՝ որ շատ պէտքը չեն զգար, երկրորդ՝ որ, դժբախտութեան պարագային, օտար գործաւորէն աւելի ապահով են՝ իրենց խնայողութիւնով եւ փոխադարձ ցոյց տուած օգնութիւնովը, երրորդ՝ չեն ուզեր վտանգի ենթարկել իրենց կանոնաւոր ապրուստը՝ միանալով գործադուլներուն, քանի որ ամերիկեան օրէնքը հաւասարապէս կը պաշտպանէ երկու կողմն ալ, եւ չորրորդ՝ ամերիկահայուն պիւտճէն չափազանց բեռնաւորուած է, գործադուլի հետեւանքով առաջ եկած անյաջողութիւն մը անոր տնտեսական պէտքերը աւելի կը խաթարեն. յետոյ այդ միութիւնները սահմանափակ ըլլալով՝ օտարներու շահը ապահով չէ եւ խորութիւններ կը դընեն. ուրիշ պատճառ մըն ալ այն՝ որ հայերը պահանջուած չափով լեզուին ծանօթ չեն:*

Հայերը անցեալին մէջ մասնակցած եւ աւրած են գործադուլները, բայց վերջին տարիները հազուադէպ եղած են այդ կարգի դէպքերը, շնորհիւ այն բանին՝ որ տեղի պայմաններուն ու կեանքին ծանօթացան, հին օրերու դժբախտութիւններուն այլեւս ենթակայ չեն եւ գործաւորական պատուախնդրութիւնը աւելի զարգացած է հիմա:

Մտաւորական վիճակը.— *Հայ պանդխտութեան ստուար մաս մը անդրագէտ կու գայ Միացեալ Նահանգները, մանաւանդ գիւղացի տարրը. շատերը Ամերիկայի մէջ կարդալ–գրել կը սորվին, բայց հետաքրքրութիւնը շատ առաջ չ'երթար. կառավարութեան յատկացուցած դիշերային ձրի դպրոցները քիչ կան յաճախողներ, եւս աւելի քիչ կան ինքնաշխատութեամբ անդլերէն լեզուն կամ ուրիշ արհեստ մը սորվելու բուռն հետաքրքրականութիւնը [ունեցողներ]:*

Պատճառները.— 1) *Գործաւորական* 10 *ժամուան կեանքը շարաշար յոգնեցուցիչ է*, 2) *Մտաւոր տեւական ճիգի անվարժութիւն*, 3) *Ցոյս ունին որ այսօր կամ վաղը հայրենիք պիտի վերադառնան, հետեւապէս արդէն գիտցածը կա'մ աւելորդ է կամ բաւարար՝ հայրենիքին մէջ իր ունեցածը չահագործելու համար,* (*հոն մեծ մասը արդէն ցանքի, այգիի, պարտէզի [գործով կը զբաղին] կամ հողային կալուածներ ունին*):

Դպրոցներու մէջ առաջադէմ են. տասնեակներով կը հաշուուին, որոնք իրենց քննութեանց ժամանակ՝ առաջին մրցանակին եւ վկայականին արժանացած են եւ գովուած՝ ամերիկեան մամուլին մէջ:

Հայ գաղութին վրայ մեծ ազդեցութիւն ձգած է ամերիկեան կեանքը. հայերը, ապրելով Միացեալ Նահանգներու մէջ քանի մը տարի, քիչ բացառութեամբ կը դառնան ճարպիկ, մտացի եւ բազմակողմանի լաւ յատկութիւններով կ'օժտուին, ակներեւ առաւելութիւններ ցոյց կու տան իրենց հասակակից տեղացիներուն եւ օտարներուն վրայ՝ իբրեւ մրցակիցներ, նըկատի առած նոյնիսկ իրենց բոլոր թերութիւնները, յատկապէս լեզուական մասը:

Կրօնական–եկեղեցական վիճակ.— *Հաւատքը շատ խախուտ եւ շատ երկրորդական զգացում մը դարձած է, եկեղեցական պարտականութիւնները դրեթէ մոռցուած են: Հայկական* 15 *տարուան շարունակական աղէտները հակազդեցութիւն մը բերած են մտքերու վրայ: Եկեղեցականները (յատկապէս լուսաւորչական) մտահոգ ու դժուար կեանք մը կը քաշքշեն, իրենց հին ազդեցութեան անկումին առջեւ գտնուելով: Հին մարդիկն են՝ որ տակաւին կղերին խաչահամբոյր կու տան ու եկեղեցիի կառուցման կը նպաստեն. եւ այս աւելի կը շեշտուի ընտանիք կազմող շրջանակին մէջ, ուր ծիսական ձեւականութիւններու կատարումը (մկրտութիւն, թաղում, պսակ եւն.) կը զգացուի եւ երեւութապէս կը յարգուի:*

Հայերը սեփական եկեղեցի ունին Ուսթր, Վէսթ–Հոպրքն եւ Ֆրէզնօ:

Բողոքականներու կղերական–բարոյական ազդեցութիւնը բաղդատաբար աւելի բարձր է, չնորհիւ եկեղեցւոյն աւելի պարզութեան ու Ամերիկեան Եկեղեցւոյ հետ ունեցած կապին։

Մշակութային գործեր։— *Ուսումնասիրաց–դպրոցասիրաց եւ որբանոցամ ընկերութիւնները մեծ մղում ստացած են Ամերիկայի հայ երիտասարդութեան մէջ. չկայ պանդուխտ ունեցող գիւղ մը, որոնց թիւը 10ի հասնի եւ անոնք իրենց ուսումնասիրաց ընկերութիւնը չունենան եւ հոգածու չըլլան իրենց գիւղի վարժարանին խնամքին ու մատակարարութեան գործին. այդ ուղղութեամբ թոյլ են միայն մշեցիները այն պատճառով՝ որ անոնք չեն կազմեր որոշ քանակ մը համագիւղացիութեան։*

Ուսումնասիրացներու դրամալուխները կը հաշուուին, նուազագոյն չափով, 200·000 տոլար, որ պահ դրուած է դրամատուններու մէջ, եւ ամէն տարի նոր զոհողութիւններ, դրամալուխի նոր յաւելումներ կը փոխանցեն դպրոցասիրացներու պիւտճէին։

Բացի ատկէ, ամէն քաղաքի մէջ գտնուած հայ գաղութները, երբ անոնց թիւը արդէն 20էն 50ի հասած է, հիմնած են դրադարաններ՝ «ազգային» անունով, ուր առնուազն 100է աւելի գրքեր ունին, եւ կը ստանան զանազան հայերէն պարբերական թերթեր եւ հանդէսներ, բայց ոչ օտար լեզուով, բացի «Pro Armenia»էն եւ «Armenia»էն։

Վերջին 3–4 տարուան ընթացքին, մեր կոմիտէները, զանազան քաղաքներու մէջ, առանձին ակումբներ (ֆլապներ) սկսած են հիմնել։

Ցեղափոխական փրոփականտը *առաջին օրէն պատրաստ հող գտած է ամերիկահայ զաղութին մէջ. կարելի է ըսել որ ամերիկեան բարձր ու ազատ կեանքը, եւ միւս կողմէն՝ վայելած ազատութիւնները ու իր մայր օճախին անլուր ցաւերը, տեսակ մը նախանձի որդ ձգած են երիտասարդութեան մէջ։ Հնչակեան եւ ապա դաշնակցական փրոփականտը, թէեւ բաւական երկար գոյութիւն ունեցած են, բայց անկարող եղած են ժողովրդային հանդամանք մը տալու հայ յեղափոխական գործին։ Այսօր հազիւ 8%ը յեղափոխական են՝ հետեւեալ պատճառներով։— 1) Երկրի գործին հեռաւորութիւնը, 2) Եկեղեցականներու եւ խաւարամիտ հին աղաներու հակառակութիւնը, 3) Հնչակեան զեղծումները, որոնք որեւէ տեղէ աւելի խորունկ ազդեցութիւն ձգած են հոս։ Երկրի գործերուն աւելի բացասակա՛նը նիւթը կազմած ըլլալով արտասահմանեան հակայեղափոխական մամուլին, ան եւս որոշ դեր մը խաղցած է։ Այդ կարդալ–գրել չգիտցող ժողովուրդին մէջ մամուլը սահմանափակ դեր մը սահմանուած էր կատարելու թէեւ, բայց լսարանները եւ հրապարակային ժողովներն ու բանախօսութիւնները, հակառակորդներու կողմէն, կու գային լրացուցիչ հանգամանք մը ստեղծելու եւ գործին ուղիղ ընթացքը խանգարելու, կասեցնելու եւ չփոթած պահելու ժողովուրդին մտքերը։*

Ամերիկահայ մամուլը։— *Տասնեւհինգ տարիներ առաջ, երբ ա՛լ հայ գաղութին թիւը 10 հազարի կը հասնէր, իբրեւ պահանջ՝ անմիջապէս ստեղծուեցաւ ամերիկահայ լրագրութիւնը, —* «Ազատութիւն» (Ն. Էկինեան), «Հայք» (Տոքթ. Գաբրիէլեան), «Եփրատ» (Շաղոյեան), «Տիգրիս» (Ն. Էկինեան)։ *Ասոնց մէջ քանի մը տարուան կեանք միայն ունեցաւ «Հայք»ը, իսկ «Տիգրիս»ը, ծախուելով, դարձաւ Նոր–Հնչակեան օրգան մը, այսօրուան «Ձայն Հայրենեաց»ը։*

Որքան գաղթականութիւնը կը ստուարանար Ամերիկայի մէջ, թերթի մը հիմնադրումը, Դաշնակցութեան համար, աւելի կը շեշտուէր, երբ մանաւանդ հակառակորդ կողմը, ամէն սրբութիւն մոռցած, սեւցընելու, բամբասելու ճամբան ձեռք առած՝ մտքերը մոլորեցնելու, նախապաշարելու դիտակից մտահոգութենէ մը բռնուած էր։ Այս հիման վրայ, դաշնակցական ընկերները՝ անհատապէս, առանց դպչելու կազմակերպութեան սնտուկին, անձնական զոհողութիւններով հիմնեցին «Հայրենիք»ը եւ զայն յատկացուցին Դաշնակցութեան փրոփականտի գործին(*)։

Բայց այդ բաւական չէր իբրեւ փրոփականտի գործ, կար աւելի զօրաւոր սատար մը՝ ալ. հրապարակային բանախօսութիւնները եւ բացատրական ժողովները դլխաւոր պահանջ մը էին անցեալին մէջ ու տակաւին կը մնան այսօր ալ, եւ գուցէ վաղն ալ։ Դժբախտաբար մեր մարմինները չլսեցին մեր խնդրանքները եւ չտուին բաղձացուած թիւով գործիչներ, իսկ հատիկ հատիկ եկողներն ալ, քիչ բացառութեամբ չատ կարճ շրջան մը մնացին Ամերիկա, որով հիմնական գործ մը կարող չեղան կատարել։

Ամերիկահայ հակայ ու թարմ ուժին մէջ, որ Տաճկահայութեան յուսալից ու կենսունակ միակ տարրը կը կազմէ, որուն հայութիւնը ու յեղափոխութիւնը կարծուածէն չա՛տ աւելի պէտք ունին ու փոխադարձաբար, սպասուած ուժը եւ հոգածութիւնը չէ տրուած երիտասարդութեան՝ որ մեծագոյն մասը կը կազմէ Ամերիկայի դաղութին. 18–38 տարիքին մէջ, Հայաստանի այլեւայլ գաւառներէն եկած, ան ինքնին փրոփականտի նպաստաւոր հողը կը կազմէ, պատրաստ՝ ետ երթալու, պատրաստ՝ դրամի ու նիւթական զոհողութիւններու. ան մեծ դաշտ մը կը ներկայացնէ երկրի համար, որ կը կարօտի մշակուելու, զարդանալու, դառնալու համար կարող գործիչներ, եթէ ոչ դլխաւոր, գոնէ ո՛չ ալ երկրորդական. եւ այս բանը ապացուցուած է արդէն գործի դաշտ դնացող մեր ընկերներու ցոյց տուած ընդունակութեամբը։ Այդ շարքին մաս կը կազմեն Երկաթ, Գայլ Վահան, Նահիկեան, Տիգրան Խարբուելեան, Մերկաղօր–Մալխաս, Յարութիւն Միրաքեան, Արարկիրցի Յակոբ, Յ. Տէմիրճեան, Գաբօ (մշեցի), Տոքթ. Ստեփանեան, Վարդ–Մանիշակ, Հաճի Նազարէթ Փոստայեան, Մարթին, Սիրական Պոյաճեան. եւ ասոնց վրայ կու դան աւելնալու ուրիշ եօթեր ալ դինուորական ուսումնարանէն, եւ մէկ ուրիշ ալ այս աշնան՝ Յակոբ Փիլիպոսեան, եւ դեռ շարք մը, որոնք պատրաստ են իրենք զիրենք դնելու կազմակերպութեան տրամադրութեան տակ. ու անոնք աւելի օգտակար ու ձեռնհաս պիտի ըլլան երբ քիչ–չատ պատրաստուին որոշ մասնագիտութեամբ մը(**)։

Ամերիկայի կոմիտէներու թիւը։— *Ամերիկա մինչեւ ցարդ դեկավարուած է բոլորովին տարբեր ուղղութիւնով մը, տեղական պայմաններու բերումով։ Յարդ մեր մէջ խմբական դրութիւնը մուտք գտած չէ։ Ո՛ր քաղաքը որ դաշնակցական կազմ ունեցած ենք, բնաւ խմբական ձեւ չենք տուած, այլ ամբողջը հաւասարաբար մէկ խումբի մէջ մնացած են եւ կոչուած են «կոմիտէ»։ Բայց վերջին տարիները խմբական դրութիւնը դդալի կերպով — իբրեւ լաւ մեթոտ — շեշտուած է, եւ շուտով [բոլորը] կը վերածուին խմբական դրութեան։*

Ամերիկայի 50 քաղաքներու մէջ դաշնակցական խումբ կայ, հետեւաբար ունինք 50 «կոմիտէ», որոնց ընդհանուր թիւը կը հասնի 1200ի կամ քիչ մը աւելի։ Վերջին երկու տարիներուն, մասնաւոր աշխատանք մը թափուած է արեւմտեան նահանդներուն վրայ (Շիքակոյի շրջանը եւ Քանատա), ուր ունեցած ենք յաջողութիւն։ Աւելորդ է ըսել թէ՝ եթէ երկու ազատ գործիչներ ունենայինք Արեւելքի ու Արեւմուտքի շրջաններուն մէջ, մեր ուժը կրկնապատկուած պիտի ըլլար։ Ցրէգոնոյի շրջանը, մասնաւորապէս, ինքնաբեր հունձք մըն է Դաշնակցութեան համար, բայց հակառակ մեր ու անոնց բաղձանքին, դեռ ոչ մէկ դաշնակցական գործիչի երես տեսած չունին։ Ունինք դաշնակցական կիներու քանի մը խումբեր ալ. պէտք է ըսել թէ ի վիճակի չեն եւ որոշ պատրաստականութիւն չեն ներկայացներ. այդ իսկ պատճառով կանանց կոմիտէները պիտի վերածենք «Կարմիր Խաչ»ի։

Դրամական պիւտճէն։— *Միջին հաշուով Ամերիկան Դաշնակցութեան կու տայ* (իբրեւ «զէնքի դրամ») *տարեկան 15·000 տոլար. ասոր մէջ չեն այլեւայլ հանդանակութիւնները, որ կոմիտէները կ՚ընեն «Դրօշակ»ի, «Pro Armenia»ի կամ կարօտեալներու համար (օրինակ, Սասունի, Մուշի, Վասպուրականի, Կովկասի կարօտեալներուն), ի բաց առեալ «Հայրենիք»ի հանդանակութեան ցանկերը, որ նոյնպէս Ամերիկայի Դաշնակցութեան գործ է, որուն դումարը 1000 տոլարի հասած է(***)։*

Որպէսզի դրամական գործը աւելի կանոնաւոր ընթացք մը առնէ, այս տարի որոշուած է իւրաքանչիւր դաշնակցականի տեսրակ մը տալ, որպէսզի հաշուական գործերը աւելի ճշդուին եւ անպատեհութիւններ չծագին։

Հանդանակուած դումարներուն մէջ 10% ոչ–կուսակցականներու մասնակցութիւնը կայ։ Իւրաքանչիւր դաշնակցական Դատին կը վճարէ նուազագոյնը 16 տոլար. ոմանք՝ մինչեւ 50–100 տոլար։

Տրամադրութիւնները։— *Սասունի կռիւներէն ու անոր անկումէն անմիջապէս յետոյ՝ ժողովրդական շարքերուն մէջ բնական հակադդեցութիւն մը առաջ եկաւ, իրենց յեղափոխական անդիտակցութեան պատճառաւ, որուն նպաստեց որոշ չափով հակառակորդներու փրոփականտը, բայց դաշնակցական շարքերը մնացին իրենց հաւատքին վրայ, դիտակից իրենց կոչումին, եւ գործի բոլոր պարագաները համարեցին յեղափոխական կեանքի անհրաժեշտութիւններ։*

Պոլսոյ Սուլթանի մահափորձը — իր հետ նաեւ Իզմիրը — եւ Կովկասի կռիւները՝ անդամ մըն ալ մեծապէս նպաստեցին եւ փարատեցին այն անվստահելիութիւնը, որ սերմանուած էր զանազան օրկաններով ու միջոցներով՝ բոլոր հակառակորդ տարրերէն. եւ Դաշնակցութիւնը շահեցաւ մեծ ժողովրդականութիւն։ Կարելի է ըսել որ Դաշնակցութիւնը բարոյապէս եւ նիւթապէս միակ հզօր կազմակերպութիւնը կը նկատուի, եւ հասարակութիւնը կ՚ակնկալէ Դաշնակցութենէն՝ աւելի եւս իրակա՛ն ու հիմնական գործ եւ միջոցներ, հայկական ազատագրութեան գործը հիմնաւորելու գծով։

Ամերիկայի Դաշնակցութեան կազմաւորման առաջին շրջանին մէջ, մեր յաջողութեան դլխաւոր ազդակներէն մէկն ալ եղած է ան, որ մենք վերապահ դիրք մը բռնած ենք դէպի միւս ընդհ. հիմնարկութիւնները (դէպի եկեղեցին, գրադարանը եւ լսարանները), թողելով իրեն՝ հասարակութեան, իր ուզած ձեւով տանելու (անշուշտ սատարելով հոս հոն, բայց ո՛չ կու–

(*) Այսօր Ամերիկայի մէջ կը հրատարակուին արդէն 8է աւելի հայ թերթեր, «Հայրենիք», «Ձայն», «Երիտասարդ Հայաստան», «Կոչնակ», «Լոյս», «Armenia», «Արաքս», «Արծիւ» («Armenia»ն անգլերէն է)։

(**) Ասոնցմէ, բացի երեքէն՝ որ ճանապարհածախս ստացած են կազմակերպութենէն, մնացածները զացած են իրենց անձնական ճանապարհածախսով։

(***) Ասկից դուրս են կոմիտէներու ծախքերը, որոնք բնաւ չեն մտներ կեդր. կոմիտէի մուտքին ու ելքին մէջ. եթէ այս հաշուենք՝ արդէն 15·000 տոլարը կ՚անցնի։

սակցական երեւոյթ տալով), եւ մեզի վերապահելով յեղափոխական գործը միայն: Բայց երթալով քանի մեր ազդեցութիւնը մեծցած է, նոյն չափով սկսած է հանրային գործերու ձեռք զարնել, երբ հոն երեւան եկած են հանրային շահին վնասակար երեւոյթներ եւ ուղղակի փտութիւնները: Թէ ի՞նչ վիճակուած է մեզի ընել այսուհետեւ հանրային գործերու նկատմամբ, ապագան թող խօսի: Միակ մտահոգիչ գործը որ մեր վրայ կը ծանրանայ հարկեցուցիչ կերպով, այդ՝ զաղութը հայ պահելու միջոցներու մասին լրջօրէն խորհիլն է, եւ այդ խոշոր մասով մը ալ կ'իյնայ ընդհանուր Դաշնակցութեան վրայ, քանի որ ոչ մէկ գործ նոյնքան կարող է հայութիւնը հայ պահել Ամերիկայի մէջ, որքան՝ յեղափոխական փրոփականտը եւ փրոկուիթեան վառ յոյսերը՝ որ կապուած են Դաշնակցութեան:

Դաշնակցութեան յարաբերութիւնները հայ միւս կազմակերպութիւններուն հետ.— Ընդհանրապէս խօսելով՝ բարեկամական ըլլալէ շատ հեռու եղած են, եւ այդ՝ առաջ եկած է կուսակցական նախանձէ: Դաշնակցութեան Ամերիկա մուտքը՝ նախանձի գլխաւոր պատճառը եղած է: Հակառակորդները, մեր յարաճուն զարգանալը ու իրենց քայքայուիլը կամ վարկաբեկուիլը աչքի առաջ ունենալով, միակ պատճառը Դաշնակցութիւնը նկատած են ու այդ իսկ պատճառով մեր վերաբերմունքը իրարու նկատմամբ ոչ-բարեկամական եղած է միշտ, պարագայ մը՝ որուն շարժառիթը պէտք չէ Դաշնակցութեան մէջ փնտռել:

Հնչակեաններու կողմէն ստեղծուած տգեղ արդելքները Սասունի մասին, ժողովուրդին կողմէ սկըսած, զայն համարելով դաշնակցական գործ, գլուխ գործոց մը կրնան համարուիլ դրական աշխատանքի մը քայքայումին՝ որ ամերիկահայուն ամենէն պատուաբեր գործերէն մէկը պիտի մնար:

1904ի Ընդհանուր Ժողովէն ետք, պայքարը հետզհետէ խաղաղեցնելու ջանքեր եղան եւ, յատկապէս 1905ի վերջերը սկսած են, մեր կողմէն, յամառ, սիստեմաթիք ջանքեր, չպատասխանելու անոնց օրկաններու զրգռութիւններուն եւ զրպարտութիւններուն, եւ այդ ընթացքը շատ արդիւնաւոր վախճան մը ունեցաւ, եւ վերին աստիճանի տպաւորիչ եղաւ հասարակութեան, հակառակորդներուն ու մեր ընկերներուն վրայ իսկ:

Ջանքեր ըրինք Կովկասի կռուողներուն օգնելու՝ միասին, բայց յաջողեցանք միայն կարօտեալներու օգնելու գործը գլուխ բերել հաւաքաբար, որուն արդիւնքը հասաւ մօտաւորապէս 12·000 տոլարի (60·000 ֆր.):

Աւելի լուրջ փորձ մը, որ դէպի համերաշխութիւնը կամ միութիւնը պիտի առաջնորդէր եւ փոխադարձ վստահութիւն պիտի ստեղծէր, այդ՝ կռուողներու օգնելու գործն էր, որ առաջարկուեցաւ մեր կողմէ, բայց որ ցարդ ապարդիւն հետեւանք մը միայն ունեցաւ. թէեւ հնչակեանները սկիզբները համաձայնեցան խորհրդակցիլ կարելիութիւններու մասին, բայց յետոյ մերժեցին մասնակի (տեղական՞ն) համերաշխութեան մասին խօսիլ, թողելով այն՝ կեդրոնական մարմիններուն կարգադրութեան:

Հին-հնչակեանները նոյնպէս, իրենց օրկանով ու ժողովներով — ինչպէս յայտնի է — Ամերիկայի մէջ ծայրայեղ հակադաշնակցական դիրք մը բռնած են, եւ այդ կը չեշտուի մասնաւորապէս վերջերս. պատճառները կը բխին միեւնոյն աղբիւրէն, — կուսակցական մտահոգութիւնը եւ «ես»ը, որուն վրայ չենք ուզեր երկար կանգ առնել, քանի որ մանաւանդ այս պահուս ոչ ուժ կը ներկայացնեն եւ ոչ ալ հայ հասարակութեան համակրանքը կը վայելեն:

Մեր արտաքին յարաբերութիւնները եղած են Արեւմտեան Բիւրոյի, Ատրպատականի եւ Պալքանեան Կեդր. Կոմիտէներուն եւ մասամբ ալ Կիլիկիոյ Պատ. Մարմնին հետ:

Բայց պէտք է դիտել տալ, որ այդ յարաբերութիւնները բաղձացուած վիճակին մէջ չեն եղած: Երկրէն շատ հեռու գտնուած դաղութի մը Կեդր. Կոմիտէն ամենէն աւելի պէտք ունի կանոնաւոր տեղեկութիւններու հաղորդումին, քանի որ շատ հազուադէպ է, որ գործին ծանօթ մարդիկ իյնան մեր կողմերը, եւ օրը օրին դիտակ պահեն մեզ գործին պարագաներուն եւ դէպքերուն, որը միակ կապն է գործին ամրակնդման. բան մը՝ որ, կը կարծենք, սովորական երեւոյթ է ոչ միայն Կովկասի ու Ատրպատականի, այլ նոյնիսկ Պալքանի եւ Եգիպտոսի մեր կոմիտէներուն համար, որոնք միշտ առիթը ունին կամ ունեցած են մօտէն ծանօթանալու եւ լսելու գործին հետ կապուած ընկերներուն:

Տեղեկութեան պակասի այդ ցաւոտ խնդիրը — եթէ չենք սխալիր — գրաւած է նաեւ նախորդ Ընդհանուր Ժողովին ուշադրութիւնը. եւ այդ առթիւ՝ որոշուած է որ Արեւմտեան Բիւրոն bulletinներ ցրուէ ամսէ ամիս Կեդր. Կոմիտէներուն, սակայն այդ կէտը մեռած տառ մը մնացած է ցարդ, ու մեր որբութիւնը աւելի եւս շեշտուած է:

Ու պէտք է աւելցնել հոս, որ Արեւմտեան Բիւրոն քիչ անգամ մղուած է ինքնաբերաբար իր այդ դերին մէջ մտնելու, ու երբ, ա՛լ յուսահատ, համբերութեան բոլոր միջոցները սպառած են ու հարցումներ դրուած են, ստացուած պատասխանները զոհացուցիչ ըլլալէ շատ հեռու եղած են:

Գալով Արեւելեան Բիւրոյին, անկէ եւ ո՛չ մէկ նամակ. թէեւ չրջաբերականներ ղրկած ենք եւ խնդրած ենք տեղեկութիւններ Կովկասի գործերու մասին, բայց ստիպուած եղած ենք միայն լրագրական հեռագրա-

լուրերու հաղորդումով բաւականանալու, գործի մը մասին՝ որ ոչ միայն Միացեալ Նահանգներու Դաշնակցութեան ուշադրութիւնը լրած-քաշած էր իրեն, այլ ամբողջ 35,000 դաղութինը հաւասարապէս: Այդպէս էր նաեւ Մուշ-Սասունի կռիւներուն ժամանակ, երբ, չուարուն, խապրիկներու կարօտովը մնացեր էինք:

Մենք կը կարծենք որ այս Ընդհանուր Ժողովը եւս պարտաւոր է միջոցներ ձեռք առնելու, բաւարար լուծում մը գտնելու համար այս՝ մեզի համար չափազա՛նց հրատապ հարցին:

Արտասահմանեան մեր յարաբերութիւնները պէտք էին մեծ տեղ մը դրաւել մեր գործերուն մէջ, նկատի ունենալով հայ դաղութներու բազմանալը, ամիլը եւ ստացած կարեւորութիւնը, վերջին տասնամեակին: Եւ դժբախտաբար ճիշդ հակառակը եղած է: Ամերիկայի, Եւրոպայի եւ Եգիպտոսի դաշնակցական մարմիններու յարաբերութիւնները, որոնց փոխադարձ սերտ կապերը [կոչուած էին] մեծապէս նպաստել իրարու եւ դաշնակցական գործը չակնկալած բարձրութեան մը հասցընել, այս անհաղորդ պարագան կասեցուցած, պատուար եղած է ցարդ:

Այս մասին չենք ծանրանար հոս, որովհետեւ մեր առաջարկներու մէջ մանրամասնօրէն պիտի խօսինք արդէն:

Երջանիկ բացառութիւն մը եղած է, այս տարի, Զինուորական Վարժարանի պարագան, որուն հիմնարկութեան խնդիրը երկու տարիներէ ի վեր մտատանջութեան նիւթ եղած էր, եւ այդ առթիւ կանխաւ իսկ դիմում ըրած էինք մենք Պալքանի Կեդր. Կոմիտէին, անոր միջավայրը մեզի աւելի նպաստաւոր երեւնալուն:

Ուստի երբ ներկայացուեցաւ մեզի Պալքանեան Կ. Կոմիտէի եւ ընկեր Անդրանիկի նախաձեռնութեամբ սկսուած գործը, յօժարութեամբ ու փութկոտութեամբ պատասխանեցինք մեզի եղած հրաւէրին: Ցաւառիթ պարագայ մը՝ որ այդ առթիւ մեզ տխրեցուց, մեր ղրկած երկու ընկերներն էին՝ որ Փարիզէն ետ դարձան Ամերիկա, եւ այդ կարեւոր կեդրոնի դաշնակցական կոչուող ուսանողները ու Արեւմտեան Բիւրոն, ճիշդ անոր քովիկը, չկրցան հարկ եղածը կարգադրել եւ Պուլկարիա ղրկել այդ երկու զինուորները:

Եղիպտոսի մարմիններուն հետ ո՛չ մէկ յարաբերութիւն չենք ունեցած:

Երկրի հետ.— Աւելի բարեյաջող եղած են մեր եւ Երկրի յարաբերութիւնները: Ցորչափ կար Կիլիկիոյ Պատ. Մարմինը, անոր հետ փոխանակած ենք նամակներ, ստացած ենք նոյնիսկ անկէ՝ 20 երիտասարդներ հոն ղրկելու առաջարկ մը, որ մնացած է անգործադրելի, Պատասխանատու Մարմինին կազմալուծումով: Հակառակ ատոր՝ յարաբերութիւն պահած ենք մեզի ծանօթ ընկերներու հետ (Մարթինի եւ Պէյրութի ուսանողներուն), զանոնք քաջալերելու եւ լքումէ զերծ պահելու համար, դրամ ղրկած ենք Մարթինին որ անձուկ վիճակի մէջ էր, եւ գոհացում ջանացեր ենք տալ՝ ուսանողներու փրոփականտի վերաբերեալ պահանջներուն:

Աւելի սերտ յարաբերութիւններ ունեցած ենք Վասպուրականի Կեդր. Կոմիտէին հետ: Անոնց առաջարկով է, որ ի նպաստ Վասպուրականի կարօտեալներուն հանդանակութիւն բացուած է «Հայրենիք»ի միջոցով, գումարը ցարդ հասնելով 1·300 տոլարի: Այդ գումարը առաջ ղրկուած է — անոնց իսկ հրահանգով — տեղւոյն Անպլ. հիւպատոսի օգնականին, իսկ վերջերս՝ ուղղակի Կեդր. Կոմիտէին, վերջինիս պահանջով:

Այդ մարմինին հետ քիչ մը վերապահութեամբ շարժած ենք դրամական պահանջներուն առթիւ, նկատի ունենալով՝ 1) որ կարգ մը կասկածներ կը ծանրանային, Վարդվէսի ձերբակալուելէն ետք, այդ մարմինը կազմող անհատներու վրայ. այդ է եղած պատճառը որ փոքր գումար մը միայն տրամադրելի ըրած ենք, սպասելով որ Կեդր. Կոմիտէն վերակազմուի, դուրսէն գացող վստահելի եւ ծանօթ ընկերներու շնորհիւ, եւ մեզի հաղորդուի. 2) Դաշնակցութեան Խորհուրդի կամ Ընդհանուր Ժողովի կողմէն նախահաշիւ մը, որ ցարդ չենք ստացած:

Կազմակերպութիւններ Երկրի մէջ.— Քանի մը տարիներէ ի վեր մեր մտահոգութեան առարկան եղած է Ամերիկա ապաստանող երիտասարդութեան միջոցով աստիճանաբար կազմակերպել Երկիրը. այդ մասին առաջարկ ունինք արդէն, ղրկուած Ընդհանուր Ժողովին:

Ինքնապաշտպանութեան գործը.— Այս ուղղութեամբ գործունէութիւն մը սկսուած էր արդէն Ամերիկայի մէջ 1897-1898ին եւ ընկեր մը ղրկուած էր Խարբերդի շրջանը, յարաբերութիւն հաստատելու ծանօթ անձնաւորութիւններու հետ, ինչ որ իրեն յանձնարարուած էր մեր կողմէ, եւ ձեռնարկելու, կազմակերպելու գործը, ինչ որ անյաջող չանցաւ, ու կրնար գործունէութեան մեծ վառարան մը ստեղծել այդ շրջանին մէջ ու հեռաւոր շրջականները, եթէ կարգ մը տխուր պարագաներ չլային կասեցնելու այդ յուսալից գործը:

Պէտք է ըսել թէ այդ ուղղութեամբ գործելու համար քաջալերութիւն չստանալով կազմակերպութեան վարիչ մարմիններէն՝ մինչեւ 1904 Երկիրը կազմակերպելու այդ գործը թողուցինք, մեր ուժը ամբողջովին նուիրելով ռազմական վայրերուն:

Սասունի կռիւներէն յետոյ, երկին այդ խնդիրը Ամերիկայի Դաշնակցութեան Պատգ. Ժողովին սեղա-

նին վրայ դրուեցաւ, ու մենք որոշեցինք այս անգամ սիստեմատիկ կերպով ձեռնարկել այդ գործին:

Առաջին փորձը սկսանք «Խորհուրդ»էն. հոն ղբրկեցինք տեղացի ընկեր մը՝ հաստատուելու տեղին վրայ, օրինական կերպով: Երրորդ տարին է արդէն, որ մեր ընկերը կ'ապրի հոն եւ յաջողած է հաստատել բաւական զօրաւոր մարմին մը, շատ վստահելի ուժերէ: Տեղւոյն վրայ, հանգանակութիւններ ըրած են՝ գնելու համար զէնքեր, ու մենք ալ մեր կողմէն, զանոնք քաջալերելու համար, 100 օսմ. ոսկիի նպաստ մը ղբրկեցինք: Մեր ստացած տեղեկութիւններէն կ'երեւի, որ այդ զէնքերը կազմակերպութեան տրամադրութեան տակ են եւ ապահով տեղեր պահուած: Տեղեկութիւնները, որ հաղորդուած են մեզի, ցոյց կու տան որ հոն շատ դիւրութիւններ կան զէնք գնելու, լաւերու միջոցով: Մենք կը կարծենք որ դժուար չպիտի ըլլայ:

Քիչի մեր ընկերները յարաբերութեան մէջ են Տրապիզոնի, Կարինի եւ Երզնկայի հետ, եւ կապեր հաստատելու վրայ են շրջականերու հետ՝ մինչեւ Բալու եւ Զարսանմագ: Այնտեղի մեր գործիչ ընկերը կը պատրաստուի այս ամառ այցելելու մինչեւ Տերսիմ, եթէ միայն մեր կողմէ անհրաժեշտ ծախքերը հոգացուին: Եթէ տարեկան որոշ դումար մը յատկացուի, Խորհուրդի այդ մարմինի միջոցով պիտի կրնանք կազմակերպել հետզհետէ բոլոր շրջակայ գաւառները, բացառութեամբ, Թերեւս, Կարին քաղաքին:

Երկրորդ փորձ մը սկսած ենք Սեբաստիա, բայց տակաւին սկզբնական քայլերուն մէջ ենք. կազմակերպող մը փնտռելու վրայ ենք ներսը գտնուող ուժերուն մէջ: Մտածեցինք այդպիսի մէկու մը փոքրիկ դումար մը տալ, փերեզակի կամ ուրիշ կարգի գործի մը ձեռնարկելու, որպէսզի դիւրութիւն ունենայ շրջելու եւ կապեր հաստատելու Սամսոնի հետ, ինչ որ առաջին պայմանն է՝ ապահովելու համար այնտեղի կազմակերպութեան դոյութիւնը:

Վերջերս յարաբերութիւն հաստատած ենք Սալոնիկ-Զորի մէկ ընկերոջ հետ. եթէ կանոնաւորուին, կը յուսանք որ հնարաւոր կ'ըլլայ նպաստի նոր գործ մը կազմակերպել Բարձրաւանդակի կարօտեալներուն համար:

Բանտարկեալները.— Հակառակ Ամերիկայի հեռաւորութեան, բայց քաղաքական կապերու շնորհիւ, կրցած ենք մեր բաժինը բերել բանտարկեալներու օգնութեան գործին: Օգնած ենք Ոսկեհանքի բանտարկեալներուն մերթ ընդ մերթ. վերջերս Վարդէսի եւ ընկերներուն օգնութիւնը ստանձնեցինք, որովհետեւ դիւրութիւններ ունինք:

Ամերիկեան փրոփականտը.— Տարակոյս չկայ որ Միացեալ Նահանգները կարեւոր տեղ մը գրաւելու է մեր գործունէութեան մէջ, սակայն ակնկալուածին չափ եղած չէ. նախ՝ անգլիագէտ ընկերներու սակաւութիւնը. յետոյ՝ որ գլխաւորն է՝ ազատ գործիչներ չունենալնիս է:

Որեւէ երկրէ աւելի, հոս դիւրութիւններ կան մօտենալու կառավարական բարձր շրջանակներու, նոյնիսկ նախագահին, բայց չենք կրցած օգտուիլ, վերը յայտնուած պատճառներով: Մեր Բիւրոն կամ փրոփականտի մարմինը, փոխանակ մեզ հետաքրքրելու այս տեսակ գործերու եւ ուղղակի իր մէկ անդամով հոս գործի սկսելու, իր մէկ նամակով մեզ կը թելադրէ ընկերվարական սկզբունքներու ետեւէ ըլլալ:

Բայց առանց յուսահատելու ցոյց տրուած պաղ վերաբերմունքէն ու արհամարհանքէն՝ դէպի մեր պաշտօնական մարմինները, ստիպուած եղած ենք ոչ-կուսակցական[ներո՞ւ] հարցեր թելադրել: Այդ անուղղակի թելադրութիւններուն շնորհիւ յաջողուած է երկրորդ յիշատակագիր մը պատրաստել տալ՝ նախագահ Ռուզվելթին ներկայացնելու, ստորագրուած կարեւոր ամերիկացիներէ. խնդրագիր՝ որ երկու ամերիկացի պատուիրակներու ձեռքով յանձնուեցաւ նախագահին:

Միացեալ Նահանգներու հասարակութեան մէջ կան խորունկ համակրանքներ, եւ մենք վստահ ենք որ նոյնիսկ դրամական օժանդակութիւն պիտի գտնենք, եթէ ազատ ու կարող գործիչներ ունենանք: Պէտք չէ մոռչ հանել, որ ամերիկեան հասարակութիւնը շատ աւելի ռամկավար ոգի ունի, քան Ֆրանսականը: Զուտի դասակարգային այն մեծ բաժանումները որ կը նկատուին Անգլիոյ մէջ. հետեւապէս քիչ ժամանակի մէջ կարելի է հզօր կապեր հաստատել հոս, մեր փրոփականտի տեսակէտով:

Ուոքիկընի (Շիքակոյի մօտ քաղաք մը) մէջ ընկերութիւն մը կազմակերպուեցաւ, որ բաւական նշանաւոր անդամներ ունի այսօր, մեր մէկ ընկերոջ աշխատութեամբ (որ, իրրեւ կազմակերպիչ ուժ, ան ալ քաղաքական նշանակութիւն ունեցող հարցի մը համար, շատ երրորդական ուժ մըն էր):

Ամուր հիմք ունեցող միւս փաստն ալ այն է՝ որ շնորհիւ ամերիկեան միսիոնարութեան, Տաճկահայաստանի մէջ, ամերիկեան շահերը, որ նոյնպէս հոն կապուած են ուղղակի հայ ժողովուրդին հետ, մեծ ճիգի չի կարօտիր որ քաշենք, մեզի մօտեցնենք՝ Միացեալ Նահանգներու համակրութիւնը շահելով կամ [մեր ժողովուրդի] պաշտպանութեան գործը ապահովելով:

Ամփոփելով մեր խօսքերը, ժողովին ուշադրութիւնը կը հրաւիրենք հետեւեալ գլխաւոր կէտերուն վրայ.

1) Հայ գաղութը կը ստուարանայ եւ կարեւոր դեր մը կը ստանձնէ հոս՝ տարուէ տարի, հետեւաբար աշխատելու է որ այդ առողջ, կենսունակ գիւղացի տարրը ո՛չ միայն չձուլուի բնիկին հետ, ինչ որ անխուսափելի է երկու սերունդ ետքը, այլեւ չկորսուի հայրենիքին համար:

2) Այդ գաղութը կրնայ օգնել մեզի երեք տեսակէտէ,

ա) Կազմակերպող եւ գինուորական ուժեր հայթայթել Երկրին, բ) զրամական կանոնաւոր նպաստ տալ Երկրի գործին, եւ գ) ամերիկեան հանրապետութեան մէջ հայանպաստ փրոփականտը արդիւնաւոր ընել, աւելի քան որեւէ արտասահմանեան հայ գաղութի մէջ:

Այդ երեք նպատակներուն հասնելու համար, պէտք է անհրաժեշտաբար.

1) Կարող գործիչներ ղրկել Ամերիկա, ո՛չ միայն կազմակերպելու, այլեւ ժողովուրդի մշակութային գործերով զբաղելու:

2) Ամերիկեան եւ Արտասահմանի գաղութները Արեւմտեան Բիւրոյի հետ, միացնել իրարու՝ արեւմտեան շրջանի մը մէջ, որ այդ մարմինները գործունէութեան ընդհանուր ծրագիր մը ունենան, փոխադարձ պարտականութիւններով եւ իրաւունքներով կապուած:

Դաշնակցական փրոփականտին, դաշնակցական մամուլին եւ հայանպաստ փրոփականտին համակարգուած եւ իրար չժխտող ուղղութիւն մը տալու համար, վերը ըսուածին (Արեւմտեան Մարմիններու ընդհանուր գործունէութեան ծրագիր մը) անհրաժեշտութիւնը աւելի եւս ստիպողական է այսուհետեւ:

Եւ ատկէ զատ, այդպիսի լայն շրջանի մը կազմելիը կրնայ — մեր կարծիքով — նպաստել նաեւ Արեւմտեան շրջանի կից երկիրներու, Լեռնավայրի եւ ամբողջ արեւմտեան Փոքր Ասիոյ, կազմակերպական գործերու հիմնաւոր տնօրինութեան:

«Հայրենիք»ի խմբագրի անհրաժեշտ պահանջ ունինք, որը ըլլայ ծանօթ միջավայրին ու հայ ժողովուրդին մասնաւորապէս, եւ կը խնդրենք որ անմիջական տնօրինութիւն մը ընէ Ընդհանուր ժողովը, քանի որ պրն. Ա. Վոսմեան իր հրաժարականը տուած եւ այս պահուս մեկնած է արդէն:

Հ. Յ. Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆ

2.— ԱՄԵՐԻԿԱՅԻ Հ. Յ. Դ. ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄ-ԲԱՆԱՁԵՒԵՐԸ

18 Յունուար 1907, Պոսթըն

Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի կոմիտէներու 1906 Նոյեմբեր 29, 30 եւ Դեկտեմբեր 1 եւ 2ին Պոսթըն գումարուած Պատգամաւորական Ժողովի որոշումները՝ Ընդհանուր Ժողովի օրակարգի նիւթ եղող կարեւոր խնդիրներու մասին:

Թուրքիոյ մէջ

1. Թուրքիկ խումբերու կազմութեան ձեռնարկուի անմիջապէս, եւ պատրաստուի գործելու համար ընդհանուր շարժման ժամանակ միայն: Բացառիկ պարագաներու տակ անոնք նպաստեն զէնքի փոխադրութեան եւ լրատու[ական] գործերու, առանց թշնամին գրգռելու առիթ տալու:

2. Ցուցական գործունէութիւնը կապուած ըլլայ Երկրի հետ, եւ անոր արձագանգը ըլլայ:

Կովկասի մէջ

1. Պատգամաւորական Ժողովը փափաք կը յայտնէ որ հայ թրքական յարաբերութիւնները Կովկասի մէջ ըլլան ինքնապաշտպանութեան հիման վրայ, ինչ [պէս] որ եղած է ցարդ:

2. Նկատելով որ ուղղակի յարաբերութիւն մը Ռուսաստանի ընդհանուր շարժման հանդէպ (հետ) կարելի է (կրնայ) վտանգաւոր դառնալ, զրգռելով ռուս միապետութիւնը Տաճկահայ Դատին նուիրուած կազմակերպութեան մը դէմ, Պատգամաւորական Ժողովը փափաք յայտնեց, որ այդ մասնակցութիւնը ըլլայ սահմանափակ կերպով, տեղական կազմակերպութիւնները մեզի դէմ չգժտեցնելու համար:

3 եւ 4. Այս երկու հարցերու պատասխանները վերի երկու պատասխաններուն նման են:

5. Ամերիկայի 1905ի Պատգամաւորական Ժողովի պատճառաբանուած նամակով արդէն պատասխանուած է:

6. Պատգամաւորական Ժողովը, նկատելով Կովկասի մէջ ինքնաբերաբար առաջ եկած բանուորական եւ ընկերվարական հարցերը, կը թելադրէ Ընդհանուր Ժողովին՝ որ առանձին տեղական ծրագիրներով կառավարուին, իսկ Դաշնակցութեան ընդհանուր ծրագիրը մնայ նոյնութեամբ:

Կազմակերպական խնդիրներ

5. Զինուորական խորհուրդի մը հիմնումը բանաւոր կը նկատուի Ժողովիս կողմէ:

6. Խստօրէն քննել զրամական եւ կարգապահական զեղծումները:

7. Համամիտ ենք Զինապայթուցական դպրոցի մը հիմնարկութեան:

Միութեան եւ համերաշխութեան հարց

1. Ամերիկայի Պատգամաւորական Ժողովը նկատի ունեցաւ որ Դաշնակցութիւնը չի կրնար զբաղուիլ

ընկերվարական հարցով, քանի որ հայ ժողովուրդի զոյութիւնն իսկ վտանգի տակ է այս պահուս։

2· Ամերիկայի Պատգամաւորական Ժողովը կը փափաքի, որ Դաշնակցութիւնը համերաշխ ըլլայ յեղափոխական կազմակերպութեանց հետ ընդհանրապէս, իսկ հայ յեղափոխական կազմակերպութեանց հետ մասնաւորապէս։

3· Ամերիկայի Պատգամաւորական Ժողովը, նը-կատելով վերջերս երեւան եկած անտեղութիւնները տարբեր կուսակցութեանց միջեւ եւ որոնք անպատուաբեր ըլլալէ զատ վնասած են կազմակերպութեան շահերուն, համաձայն է միջ-կուսակցական ատեաններու կազմուելուն։

Հրատարակութիւն եւ փրոփականտ

1· «Դրօշակ»ը իր տեղը մնայ։

2· Նկատելով որ Ամերիկայի մէջ «Արմենիա» մը կը հրատարակուի, Պատգամաւորական Ժողովը աւելի յարմար կը դատէ եղածը համերաշխօրէն զարգացնել, իսկ գալով «Փրօ Արմենիա»ին, անոր պէտքը անհրաժեշտ է։ Գերմանիոյ մէջ, եթէ հնարաւոր է եւ պիտանի կը ներէ, գերմաներէն թերթ մը հրատարակուի անպատճառ, որովհետեւ այնտեղի հասարակաց կարծիքին աւելի պէտք ունինք։

(կնիք Ամերիկայի Կ. Կ.ի)

3· ՆԱՄԱԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

19 Մարտ 1907, Պոսթըն

Հ. Յ. Դ. Զորբորդ Ընդհանուր Ժողովին

Սիրելի՛ ընկերներ,

Ձեր մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք հետեւեալ երկու կարեւոր խնդիրներու շուրջը, որոնք Ամերիկայի շրջանին համար խիստ կենսական եւ անհրաժեշտ են, եւ կը խորհինք որ անուշադիր պիտի չթողուին Ժողովիդ կողմէ։

Առաջինը գործիչի հարցն է։ Այս մասին արդէն անցեալին մէջ ալ շատ եւ շատ անգամներ գրուած է Արեւմտեան Բիւրոյին, բայց պէտք եղած զոհացումը ստացած չենք։ Թէեւ վերջերս մէկ-երկու գործիչներ եկան Ամերիկա, բայց, կը ցաւինք ըսելու, որ առանց երկար ատեն մնալու վերադարձան։ Ժողովդ նկատի առնելու է սա իրողութիւնը որ հայ գաղթականութիւնը՝ Ամերիկայի մէջ՝ օր ըստ օրէ աճելու վրայ է, եւ այսօր զգալի կերպով մեծ յառաջդիմութիւն մը ցոյց կու տայ նիւթապէս, բարոյապէս եւ մտաւորապէս։ Եթէ կ'ուզէք որ Դաշնակցութիւնը աւելի ընդարձակուի եւ լայն ծաւալ ստանայ Ամերիկայի մէջ, ֆիզիքապէս, բարոյապէս, նիւթապէս եւ մտաւորապէս, եթէ կ'ուզէք որ ամերիկահայը զօրանայ, չկորսուի եւ հայլասերի յեղափոխական տեսակէտով, պէտք է որ լուրջ ուշադրութիւն տաք Ամերիկայի Շրջանին, ղրկելով մտաւորապէս կարող գործիչներ, որոնք, շրջելով ամերիկահայ գաղութները, փրոփականտ ընեն յեղափոխական գաղափարը մասնաւորապէս եւ օտարացման չարիքները ընդհանրապէս։

Երկրորդը կամաւորներու հարցն է, որ ամենակարեւորը եւ ամենակենսականն է Ամերիկայի դաշնակցական ընկերներուն համար։ Այս ալ բաւական հին հարց մըն է Ամերիկայի համար։ Վերջին տարիներու ընթացքին մէջ կեդր. Կոմիտէն ստացած է բազմաթիւ նամակներ ընկերներէ, որոնք՝ իբրեւ կամաւորներ՝ տրամադրելի կ'ընեն ինքզինքին Սուրբ Գործին համար Երկրին մէջ։ Արդէն կամաւորներու ցանկ մը ունինք ճիշդ հիմա, որոնք անձկանօք կը սպասեն որ որեւէ կերպով զոհացում տրուի իրենց, եւ երթալով անոնց թիւը կ'ածի։ Ուրախ ենք ըսելու, որ ոչ թէ միայն դաշնակցական ընկերներ կը դիմեն մեզի, այլ վերջերս շատ մը չէզոքներ ալ սկսած են դիմել, փափաք յայտնելով զինուորագրուիլ իբրեւ կամաւորներ Հ. Յ. Դ. դրօշին տակ՝ Սուրբ Գործին համար։ Շատ մը կամաւորներու փափաքին անմիջական զոհացում չտրուիլը յուսախաբութիւն եւ յուսահատութիւն առաջ բերած է։ Ժողովդ, եթէ կ'ուզէ որ դաշնակցական շարքերը աւելի ամրանան եւ սերտանան, եթէ կ'ուզէք որ դաշնակցական ընկերները աւելի եռանդուն կերպով մը եւ ողեւորութեամբ մը փարին Սուրբ Գործին, անհրաժեշտ է որ միջոցներ ստեղծէ կամաւորներու հարցին վերջնական եւ որոշ լուծում մը տալու համար։ Ամերիկայի դաշնակցականները, բաղկացած ըլլալով մեծ մասամբ երիտասարդներէ, բնականաբար աւելի պիտի նախընտրեն Գործին վայրը մեռնիլ, քան թէ Ամերիկայի օտար հողին վրայ փճանալ։ Ցուսով ենք որ մեր այս երկու խնդիրները, մասնաւորապէս վերջինը, յարմարագոյն կերպով մը պիտի կարգադրուին Ձեր կողմէ։

Ամերիկայի դաշնակցականները մասնաւորապէս եւ հայ հասարակութիւնը ընդհանրապէս, իրենց ամբողջ յոյսը եւ հաւատքը Ձեր վրայ դրած են, ակնդէտ սպասելով Ժողովին յայտնի վերջանալուն։

Մենք լիայոյս ենք որ Ընդհանուր Ժողովը ընկերներու եւ հայ հասարակութեան իր վրայ դրած յոյսը եւ հաւատքը ի դերեւ պիտի չհանէ։

Ընկերական բարեւներով՝
Հ. Յ. Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

(կնիք)

4·— ՆԱՄԱԿ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Հ. Յ. Դաշնակցութեան Արեւմտեան Բիւրոյին

Սիրելի՛ ընկերներ,

Շաբաթներ առաջ Քղիէն (Խորաձոր) ստացած ենք նամակ մը, որով 200 ոսկիի գումար մը կը խնդրեն մեզմէ, չհետելով անոր անհրաժեշտ պէտքը։ Նամակը, որ վաւերացուած է Կարնոյ կոմիտէէն, ներփակ կը ղրկենք, խնդրելով որ հաստատէք անոր վաւերական ըլլալը եւ խորհուրդ տաք մեզի թէ ի՛նչ միջոցով կարելի է զոհացում տալ այդ պահանջին։

Ամերիկայի համար գործիչի պէտքը երթալով ըզգալի կ'ըլլայ։ Նկատի ունենալով այս կէտը, կը խնդրենք որ մեզի ղրկէք թեկնածուներու ցանկ մը, որմէ կարենանք ընտրել մէկը։ Այդ ցանկի պատրաստութեան մէջ անշուշտ նկատի կ'ունենաք տեղական պահանջները եւ ցանկին հետ կը ղրկէք ծանօթութիւն մը՝ անոնց պարագաներուն մասին։

Պատգամաւորական Ժողովի առենադրութիւնը անցեալ շաբթու փոստին յանձնեցինք։ Ինչպէս պիտի տեսնէք, առենադրութեան հետեւեալ մասերը պէտք է անցնին Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի օրակարգին մէջ.—

1·— Կովկասեան նախագիծ.

2·— Ինքնապաշտպանութեան նախագիծ.

3·— Երկրի ներկայացուցիչները արտասահմանի մէջ.

4·— «Դրօշակ»։

Այս հարցերուն մէջ հինգերորդ տեղը կը գրաւէ պայթուցիկ նիւթեր պատրաստելու համար ասկէ առաջ եղած զիմումները, որոնք պէտք է յանձնել Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի ուշադրութեան։ Մենք անհրաժեշտ կը նկատենք գործնական հողի վրայ դնել զինուորական երիտասարդութիւն մը պատրաստելու խնդիրը։

Այսօր ստացանք ձեր Դեկտեմբեր 26 թուակիր պաշտօնագիրը եւ 10 օրինակ «Հայկական ազատամարտ»։ Սրտանց ուրախ ենք զուիցերական Ժողովուրդի առնելիք հայանպաստ քայլին համար. իր ժամանակին տալիք ձեր լուրին հետ՝ չէք մոռնար անշուշտ ղրկել նաեւ թելադրութիւններ։

Ընկերական ջերմ բարեւներով՝
Հ. Յ. Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԷ

(կնիք)

Պատուարժան
Վարչութիւն Դաշնակցական կուսակցութեան

18 Հոկտեմբեր 1905, Պոսթըն

Մեր ունեցած պարտքին գումարը կը հասնի երկու հարիւր լիրայի, որուն փոխարէն ամբողջ զոյքերնիս գրաւ դրուած է։

Սոյն գրամը օր առաջ հասցնելու էք Բարձր Բերդի վարչութեան միջոցաւ՝ մեզի։

(կնիք Խորաձորի կոմիտէի)

Խորաձորի կոմիտէին սոյն կնիքը կը հաստատենք, ինչպէս նաեւ նշանակուած պարտքին գումարը։

(ԿՆԻՔ ԿԱՐՆՈՅ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻ)

VI.— ՅՈՒՅՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Հ. Յ. Դաշնակցութեան 4րդ Ընդհանուր ժողովի թղթածրարներուն մէջ, միւս բոլոր մարմիններու, շրջաններու եւ ենթաշրջաններու տեղեկագիրներն ու յարակից վաւերաթուղթերը, հաւասարաբար, հազիւ թէ աւելի մեծ ծաւալ ունենան, քան Յուցական Մարմնին եւ անոր գործունէութեան բնութեան վերաբերեալ գրութիւնները՝ առանձին: Ծանօթ է որ 4րդ Ընդհանուր ժողովը մանրամասնօրէն զբաղեցաւ Յուցական Մարմնի ընթացքին ու գործունէութեան եւ յատկապէս Վիշապի ձեռնարկի («Եըլտրզի ռումբը») ձախողութեան պարագաներու քննութեամբ, ոչ այնքան թէքնիք մանրամասնութեանց տեսակէտէն թերեւս՝ որքան դաշնակցական-բարոյական մօտեցումներու եւ կեցուածքներու գնահատումով, հարցը փաստօրէն վերածելով դատական խնդրի (տեսնել ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, Գ. հատոր, Արձանագրութիւններ Ընդհանուր ժողովի, էջ 81–291, եւ Որոշումներ՝ էջ 296–97 եւ 310–311):

Ուստի, իբրեւ դատական հիմնական հարց, Յուցականի գործն ու անոր գնահատումը Ընդհանուր ժողովին կողմէ, իրենց բոլոր մանրամասնութիւններով եւ կցուած փաստաթուղթերով, պիտի տրուին առանձին՝ շրջաններու եւ մարմիններու տեղեկագիրներու շարքի աւարտէն ետք (թերեւս ՆԻՒԹԵՐու յաջորդ՝ Ե. հատորով):

Տեղեկագիրներու ներկայ շարքին մէջ տրամաբանօրէն իր տեղը կը գտնէ սակայն Յուցական Մարմնի տեղեկագիրը՝ ներկայացուած 4րդ Ընդհանուր ժողովին: Ան գրուած է սեւ մելանով, բաւական սեղմ ու մանրատառ, նամակի 23×29,5 սմ. (նորմալ) չափի 29 թուղթերու վրայ, 2 երես (29րդ թերթը, էջ 57, կը կազմէ տեղեկագրի վերջին կէս էջը): Գրեթէ ապահով կարելի է ըսել, որ տեղեկագիրը կը պատկանի Սափոյի (Մարտիրոս Մարգարեան, Կարմրաքշիկ) գրչին: Ստորագրած են Սափօ, Թորգոմ եւ Քրիս: Հետաքրքրական է նկատել, որ ժողովին ներկայ Յուցականի միւս անդամը, Ռուբինան, ստորագրած չէ (արդեօ՞ք ուշ հասած ըլլալուն պատճառաւ, թէ հիմնական անհամաձայնութիւններու իբրեւ հետեւանք· անհամաձայնութիւններ յատկապէս Սափոյի հետ, որոնք երեւան կու գան, բացայայտ կերպով, 4րդ Ընդհանուր ժողովի արձանագրութիւններուն մէջ):

Կու տանք 23րդ թերթի բ. էջի (էջ 47) տպագրական քլիշէն, նախ՝ իբրեւ նմոյշ Սափոյի ձեռագրէն, ապա նաեւ՝ վերարտադրութեան մը փորձով նոյն էջին վրայ գծուած սխեման աղաւաղելու վտանգին մէջ չիյնալու մտահոգութեամբ:

Տեղեկագրէն ետք կու տանք նաեւ Յուցական Պատասխանատու Մարմնի կառոյցը, իրաւասութիւնները, անդամներու եւ օժանդակ մարմիններու թէ անհատներու փոխ-յարաբերութիւնները եւ գործելու եղանակը նշդող կանոնագրութիւնը («Փորձնական Կանոնագիր»)՝ մշակուած Յուցական Պատ. Մարմնին կողմէ, Աթէնք (Փիրէա), 1904 Յուլիս-Օգոստոսին: Նամակի երեսուկէս նորմալ էջեր գրաւող այդ գրութիւնը Քրիստափորի ձեռագրով է, եւ ստորագրուած իր կողմէ (Էլլէն): Բաժնի աւարտին՝ կու տանք վերջին կէս էջի տպագրական պատճէնը:

Դաշնակցութեան նախընթաց Ընդհ. Ժողովը, Պոլսում մի «փայլուն» ցոյց առաջ բերելու նպատակով, ընտրեց Պատասխանատու Մարմին, կազմուած Էլլէնից, Թորգոմից, Աշոտից, Յ. Դաւթեանից եւ Սափոյից(1)*: Սա էր Մարմնի սկզբնական կազմը, որը իւր գործունէութեան ընթացքում ենթարկուեց մի շարք փոփոխութիւնների: Ընկերներից մէկը, Յոնան Դաւթեան, երբ դեռ 904 թուի Մայիսի թէ Յունիսի վերջերին, Աթէնքում հաւաքուած, նախապատրաստական գործերով էինք զբաղուած, ստիպուած էր հրաժարուելու Մարմնի կազմից: Նա համաձայնութիւն յայտնեց ներս մտնելու իւր կնոջ հետ (որը, ի դէպ է ասել, թոքախտով հիւանդ էր եւ այդ իսկ պատճառով դժուարացնում էր Յոնանի դրութիւնը), այնտեղ ներքը կոնսպիրատիւ*(2) *բնակարան պահելու, բայց քանի որ արդէն Մարմինս նոյն նպատակով հրաւիրած էր երեք կանայք, ուստի ստիպուած էր նա (Յոնանը) հրաժարուել եւ վերադառնալ Ժընեւ: Յետագայ փոփոխութիւնների մասին՝ Մարմնի կազմի մէջ՝ կը խօսուի իրա տեղը:*

Որպէսզի Յուցական Մարմնի գործելակերպը միանգամայն հասկանալի լինի, հարկաւոր է այստեղ յիշել, թէ՝ ա) ի՞նչ ցոյց էր այն, որ Մարմինս որոշեց կատարել, բ) ինչպիսի՞ պատկերացում ունէր նա Պոլսի պայմանների մասին՝ մի այդպիսի գործի ձեռնարկելը որոշելիս, գ) ո՛րչափով նրա այդ նախնական պատկերացումը իրականութեան մէջ արդարացաւ կամ, ընդհակառակը, հերքուեց(3)*: Ահա այդ կէտերի լուսաբանութիւնն է որ պիտի նպաստէ յետագայ դէպքերի ճշգրիտ պատկերը*(4) *հասկանալու:*

Աթէնքում գումարուած ժողովը, որին ներկայ էին՝ Էլլէն, Յ. Դաւթեան, Աշոտ եւ Սափօ (եւ օժանդակ ընկերներից՝ Տ. Միշէլ, Օր. Էմիլ եւ դրսի ընկեր Սարգիսը), տուեց հետեւեալ որոշումը Յուցականի ձեռնարկելիք գործի վերաբերմամբ, որ այստեղ առաջ ենք բերում քաղուածօրէն, Էլլէնի ձեռքով արձանագրուած.—

«Յուցական Մարմինս, ժողովի ցրուելու օրից ընկրսած (Ընդհ. Ժողովի մասին է) ջանալով պարզել այն տարբեր ձեռնարկները, որոնք կարող են ներկայ հանգամանքներում իրագործուել Վիշապում, պարտաւոր էր, համաձայն ժողովի ցանկութեան, ընտրել այդ ձեռնարկներից «ամենամեծը», «ամենափայլունը» որ ասել է՝ ամենաուժե՛ղը իր գործելիք տպաւորութիւններով եւ հաւանական հետեւանքներով: Զինուած այդ տեսակէտով, Մարմինս, բոլոր հնարաւոր ձեռնարկներից, կանգ առաւ Նժոյգի գործի (Սուլթան Համիդը տապալելու) վրայ: Նախ, ամփոփ կերպով, այն շարժառիթները՝ որոնցից բխում է այդ վճիռը:

1) Իբրեւ ձեռնարկ՝ դա ամէնուրեք, բոլորի կողմից համաւուում է անկարելի, եւ Դաշնակցութիւնը, յաղթելով այդ անկարելիութեանը, համոզուած ենք, պիտի զարմացնէ ամբողջ աշխարհ եւ յարգանք ու ակնածութիւն ներշնչելով դէպի Հայ Դատը՝ մեծապէս պիտի նպաստէ տարաբախտ Հայկական Դատի զարգացմանը:

7) Եւրոպական միջամտութեան տեսակէտից, Սուլթանի գործը համեմատաբար նախագասելի է ուրիշ ձեռնարկներից: Եւ իրաւ, բացի այն բոլոր հետեւանքներից, որ կարող է ունենալ այդ գործը՝ ոչ պակաս, քան որեւէ ուրիշ ձեռնարկ՝ իբր Թուրքերի սրբտում, Եւրոպային մօտիկ եւ նրա շահերի հետ կապուած մի վայրում, Սուլթանի գործը, հարուածելով ուղղակի պետութեան գլխին, անհրաժեշտաբար տակն եւ վրայ պիտի անէ Նժոյգի ձեռքով ստեղծուած եւ ներկայումս պահպանուող քաղաքական յարաբերութիւնները, մի կողմից Թիւրքիայի եւ միւս կողմից՝ Եւրոպական իւրաքանչիւր պետութեան միջեւ: Հետեւաբար, այն օրը, երբ չլինի այդ յարաբերութիւնները ղեկավարող ձեռքը, իւրաքանչիւր պետութիւն՝ առանձնապէս շահագրգռուած ապագայ յարաբերութիւններով, անկարող կը լինի այս կամ այն կերպ չխառնուելով՝ անմասնակից մնալ նոր հաստատուելիք կարգերում:

8) Համոզուած ենք, որ ներկայ Նժոյգի օրով ոչ միայն որեւէ փոփոխութիւն չի կարող տեղի ունենալ Երկրի պայմաններում, այլեւ՝ որ այդ պայմանները աւելի եւս պիտի ծանրանան: Այն ինչ՝ Սուլթանից յետոյ, նոր կառավարութիւնը՝ հանդիսանալով ներկայացուցիչ արդի դրութեան հակառակ կուսակցութեան, ինչպէս եղել է միշտ Թիւրքիայում, պիտի ընթանայ փոքրիշատէ ազատամիտ ուղղութեամբ:

Եւ վերջապէս

9) Այդպիսի մի խոշոր գործ, որ համարձակութեան եւ անձնուիրութեան հետ՝ պահանջում է նաեւ տակտ ու ընդունակութիւններ, կարծում ենք, կարող է այնքան ակնածութիւն ներշնչել տիրող տաճկական բիւրոկրատիային եւ ինտելիգենցիային, որ նրանք՝ բացարձակապէս ոյժ տեսնելով հայի մէջ, յարգանքով [պիտի] վերաբերուեն դէպի հայը եւ չշարունակեն ապագայում արհամարհել նրա գոյութիւնը Երկրում, հաշուի չառնել նրա նուազագոյն պահանջները»:

Այսպէս է խօսում Աթէնքի որոշումը, արձանագրուած, ինչպէս ասացինք, Էլլէնի ձեռքով:

Այսքանս, կարծում ենք, բաւական է, ծանօթանալու համար թէ ինչպիսի՛ ձեռնարկ էր Յուցականը որոշել Պոլսում կատարել եւ թէ գլխաւորապէս ինչպիսի՛ հիմունքների վրայ էր յենուած նրա այդ որոշումը:

Այսպէսով, ուրեմն, առաջին անգամն էր, որ Հ.Յ. Դաշնակցութիւնը մի այսպիսի ձեռնարկի առաջ էր կանգնած՝ արքայասպանութեան *առաջ: Առաջին անգամն էր, որ թագաւորասպանութիւնը դրուեց եւ ընդունուեց իբրեւ յեղափոխական կռուի կարուկ ձեւ:*

Նախանցեալ Ընդհ. Ժողովի առաջ անհատների կողմից, ճիշդ է, դրուած է եղել նոյն հարցը, բայց միահամուռ մերժուել, իբրեւ ընդհանուր կոտորած առաջ բերող միջոց:

Բացի կոտորածի վախից, միւս եղել են արդեւք այդ ձեռնարկին՝ անհնարինի չափ դժուարութիւնները, Սուլթանի անմատչելիութիւնը, Պոլսի խիստ պայմանները, որոնք գնալով աւելի եւ աւելի խստացել, դժուարացել, դժոխային են դարձել:

Բանկ Օսմանի փայլուն ցոյցից վերջը, ոչ մի Հայ, լինի դա տաճկահպատակ թէ օտար, չէ կարող ազատ մուտք ունենալ Խալիֆայի քաղաքը: Եթէ օտարահպատակ հայը, յենուելով իւր անցագրի վրայ, կարող է պնդել եւ ներս մտնել, այդպիսին, միեւնոյն է, այլեւս անպէտք է դառնում յեղափոխական գործի համար իբրեւ հայ՝ այն պատճառաւ, որ անմիջապէս ընկնում է նա գաղտնի եւ յայտնի լրտեսների անծայր օղակը: Նրա իւրաքանչիւր քայլը, շարժումը այլեւս անյայտ չէ ոստիկանութեան համար: Եւ այդպիսով ամբողջ հայութիւնը՝ ծայրէ ծայր՝ գտնւում էր եւ այսօր էլ գտնւում է իրա տեսակի մէջ եղակի ոստիկանական հսկողութեան տակ: Իսկ գաղտնի ոստիկանների (խաֆիաների) թիւը ուղղակի առասպելական չափերի են հասցնում զանազան աղբիւրներ՝ 30-40 հազարների:

Իսկ ինքը Սուլթանը «երկաթէ վանդակի մէջ»՝ իւրաքանչիւր ուրբաթ իջնում է պալատից 100 քայլի վերայ գտնուող պալատական համիտիէ մզկիթը, շրջապատուած հազարաւոր սուինների կենդանի շարքերով: Տարին երեք անգամ միայն նա ընդլայնում է սուիններից կազմուած այդ վանդակը՝ մինչեւ «Տոլմա-Բաղչա»յի պալատը, — 2 անգամ այնտեղ Բայրամի առթիւ շնորհաւորութիւններ ընդունելու եւ մի անգամ դէպի Թոփ(?) Կապու իջնելու Խրխայի(?) Շէրիֆի տօնին — ծովով, մարտանաւերի հովանու տակ, կրկնապատկելով, տասնապատկելով սուինների շարքերը: Բացի այդ՝ նաեւ փոխելով գիծը պալատից մինչեւ Տոլմա-Բաղչայ, ինչպէս մեր ժամանակը, երբ նա կանգնեցնելով զօրքը սովորական միակ գծի վրայ, ինքը գաղտնի իր պալատի պարտէզից անցաւ «Արազանի»ի կամուրջով, Պէշիկ Թաշի (?) փողոցի վերայ ձգուած դէպի վերջինը, այն է՝ «Արազանի»ի պալատը, եւ այն տեղից արդէն ծովով — Տոլմա-Բաղչէի պալատը՝ մարտանաւերի հովանու տակ:

Եւ այդպիսի պայմաններում տակայն հարկաւոր էր մեզ նրան հասնել: Ծանր էր մեր առաջ դրուած խնդիրը. այդ կ'ասէ ամէն մի գործին նոյնիսկ անտեղեակ մարդ, իւր լսածի, ընթերցածի վերայ հիմնուած, թէկուզ լոկ Ս. Համիտ բառի տպաւորութիւնից: Եւ այս ծանր խնդիրը լուծելու մեծ պատիւն եւ պարտականութիւնը(5) Ցուցական Մարմինը ընդունել էր իր վերայ, որին նա, ինչպէս յայտնի է արդէն, դժբախտաբար չարժանացաւ:

Այստեղ աւելորդ չէ թերեւս յետադարձ հայեացք ձգել անցեալ Ընդհ. Ժողովի՝ վերին ատիճան բնորոշ ու խրատական տեսարանի վերայ, որ ներկայացրին Պատ. Մարմինների ընտրութիւնները:

Մինչդեռ Բիւրոյի ընտրութիւնը աղմկալի, կրքոտ ընտրութիւն էր, երեք օր տեւող. երեք անգամ քուէարկութեան դրուած, չանցած, նորից դրուած, կրկին եւ կրկին, մինչդեռ այդ ընտրութիւններին նախընթաց էին ճառեր, թեկնածուների առաւելութիւնները կամ պակասութիւնները չեշտող, որ քուէներ էին հաւաքում յօգուտ այս կամ այն թեկնածուի, — անդին, երբ հասաւ Երկրի Պատ. Մարմինների ընտրութեան տխուր հերթը, երբ հարկաւոր էին մարդիկ դէպի Սասուն կամ Վան [գնացող], — ուղղակի խղճալի, արտասուելու չափ խղճալի էր Ժողովի դրութիւնը.— Ո՛չ ճառ, ո՛չ վէճ, որի դլուխն էր ցաւում, որի ատամը, մէկը իրան թոյլ էր զգում, երկրորդը՝ ընտանիքով ծանրաբեռնուած, երրորդը պէտք էր նկատում արեւելքի համար, չորրորդը՝ արեւմուտքի: Երեք մարդու փոխարէն, որ պէտք էր Երկրի Պատ. Մարմնին, մէկ թեկնածու չէր ճարւում. ուր 5 հոգի էր պէտք, 3ն էր պակասում...: Այդպիսի պայմաններում՝ ի հարկէ կանոնաւոր ընտրութիւնների մասին խօսք անգամ լինել չէր կարող: Ընդունւում էր շնորհակալութեամբ՝ համարեա իւրաքանչիւրի առաջարկ, երբ ուեւ մէկը դնում էր իրան՝ Ժողովի տրամադրութեանը տակ: Եթէ խօսք լինում էր թեկնածուի մասին, այդ՝ ըստ մեծի մասամբ, ոչ թէ թեկնածուն քննադատելու, այլ նրան խնայելու մտքով [էր]:

Համեմատաբար յաջող պայմանների մէջ էին [Ցուցական Մարմնի ընտրութիւնները](6): Շուտով դրտնուեցին հինգ կամաւորներ, ատանձնելու Ցուցականի դժուարին գործը: Այդ յաջողութեանը մեծապէս նպաստում էր ի հարկէ Քրիստափորի ներկայութիւնը այդ Մարմնի մէջ, որի ձգողական ոյժը եւ անուան հմայքը յայտնի է ամէնքին:

Ահա այդ կերպ «ընտրուած» Ցուցական Մարմինը 1904ի առաջին կէսից ձեռնամուխ եղաւ ցուցական գործին: Բաւական չէին առանց այն էլ դժուարին պայմանները, որոնք մինչեւ Ցուցականի գործի ձեռնարկելը Պոլսի իրականութիւնն էին կազմում, երեք տարբեր դիպուածներ՝ յ'ընթացս մեր ձեռնարկի, եկան լրացնելու խստութիւնների չափը եւ ոտքի կանգնեցնելու սուլթանական ոստիկանութեան ամբողջ կազմը: Ահա՛ այդ պատահարները.—

Ա) Որքան էլ որ խնամքով կազմակերպած էինք պայթուցիկ նիւթերը Մայրաքաղաք ներմուծելու դժուարին գործը՝ յոյն մաքսանենգների միջոցաւ(7), այնուամենայնիւ մեր ապրանքները երկու անգամ՝ մաս մաս, բռնուեցին Պոլիս դուրս բերելիս: Առաջին անգամը՝ դժոխային մեքենայ, ժամացոյցներ, ելեկտրական գործիքներ, ֆիշեր (?), կապսիւլներ եւն.՝ երկու ահագին կապոց. երկրորդ անգամ, երբ մենք արդէն ներսն էինք, բռնուեցին ձուլուած 15 ռումբեր՝ զամբիւղով: Թուրք մակոյկավարը ձերբակալուեց. խմացուեց դրբանց Վառնայից՝ հայերի կողմից ուղարկուած լինելը:

Բ) Դրսի ընկերները, Պոլսից սատացուող մեր հրահանգներով, Բուլղարիայում ռումբերի փորձեր անելիս, ձերբակալուեցին բուլղար կառավարութիւնից՝ Լեւոնը, Սարգիսը եւ երկու ուրիշ ընկերներ: Նրանց մօտից գտնուեցին մեր Պոլսի հասցէները: Տաճիկ կառավարութեան ագենտը(8) տեղեկացաւ բռնուածների հայ լինելուն: Նրանք մեր բարեկամ մակեդոնացիների ձեռքով ազատուեցին բանտից, բայց աքսորուեցին Բուլղարիայից: Այս երեք դէպքերը Պոլսի վրայ չէին կարող չազդել — բանտարկութիւններ տասնեակներով, խուզարկութիւններ եւ խուզարկութիւններ օտարահպատակ հայերի վերաբերութեամբ իսկ:

Գ) Ընդհանուր Ժողովը Սոֆիայում, նրա 3 ամիս տեւողութիւնը, փորձերը, եւն.: Վանից նամակով յայտնեցին ընկերների ձեռք բերած ալբանական (?) թուղթը Ընդհանուր Ժողովի մասին, եւ դին. փորձերի եւ խմբերի մասին նախազգուշացրեցին:

Ահա այդպիսի պայմաններում հարկաւոր էր գլուխ բերել մեր ծրագրած արքայասպանութեան անդրանիկ փորձը:

Եւ նա ինչպէս գիտէք չյաջողուեց: Այդ իսկ պատճառով թւում է մեզ աւելորդ՝ այստեղ կանգ առնել մանրամասնութիւնների վերայ: Չյաջողուած գործի մանրամասները, որքան էլ որ նրանք թերեւս մեծ պատրաստութեան, մեծ հոգսերի եւ մանրախոյզ վերլուծման հետքերը կրեն, որքան էլ որ իւրաքանչիւր օղակը այդ չյաջողուած ապաբախտ փորձի ինքն ըստ ինքեան լինի ծանր խնդիր, յաջողութեամբ լուծուած, անհնարին դժուարութիւններով գլուխ բերուած ու անթիւ վտանգների շարքերից անցած, այնուամենայնիւ, քանի որ գործը ամբողջութեամբ իր դրած նպատակից վրիպած է, աւելորդ ենք համարում խօսել այստեղ եւ թուել բոլոր ելեւէջները Սուլթանի դէմ կատարուած մահափորձի, իբրեւ այդպիսին:

Մենք չենք խօսում այդ փորձի մասին իբրեւ ցոյցի, թէ ի՛նչ չափով համապատասխանել կարող էր նա Ընդհանուր Ժողովի որոշած «փայլուն» բառով որակուած ցոյցին: Փայլուն էր այդ մահափորձը իբրեւ ցոյց թէ ոչ, ի չարս դաշնակցական այլ գործերի, այդ թողնում ենք Ժողովիդ որոշելն: Անշուշտ մենք էլ ունինք այդ մասին մեր համեստ կարծիքը, բայց այդ մասին վերջը: Առայժմ, խօսելով այդ ցոյցի մասին իբրեւ մահափորձի, ակներեւ է, որ նա չյաջողուեց, քանի որ Սուլթան Համիտը դեռ կենդանի է:

Հայ ցեղի բաղձանքն իրականացնելու մեծ պատիւը՝ դժբախտաբար, մեզ չվիճակուեց: Նա մնում է եւ սպասում իւր երջանիկ կատարողներին, որոնք անշուշտ աւելի ձեռնհաս, աւելի անձնուէր եւ աւելի ըղձալի կը լինեն եւ կ'իրագործեն ցեղի իղձը, եթէ երբեք Ցուցական Մարմնի այդ որոշումը պատահական քմահաճոյքի արդիւնք չէր, այս կամ այն անհատի կամ խմբի, այլ մի ամբողջ կազմակերպութեան, ամբողջ ցեղի հաւաքական կամքի արտայայտութիւնը՝ լուսեաց մեզ ներշնչած: Եթէ այդ այդպէս է, ի՛նչ կասկած ուրեմն, որ ցեղը կանգ չի առնի առաջին անյաջող փորձի վերայ, նա իւր խորքերից կը հանէ անհատներ՝ աւելի՛ ձեռնհաս, աւելի՛ կարող եւ վերջ ի վերջոյ կը յաղթանակէ:

Այժմեան մեր տխուր պարտականութիւնն է այստեղ պարզելու, թէ Ցուցական Մարմինը իւր ատանձնած գործի չրջանում սկզբից մինչեւ վերջը կատարե՞լ է իւր պարտքը բարեխղճօրէն. արդեօք մահափորձի նպատակին չհասնելու պատճառները ինչո՞ւմն են կայացել: Հարկաւոր է այստեղ քննել, թէ Սուլթանի դէմ կատարուած մահափորձի անյաջողութիւնը արդեո՞ք այն տեսակի անյաջողութիւններից է, որոնցից ազատ չէին նոյնիսկ այնպիսի յեղափոխական տիտաններ, ինչպիսիք եղել են Ժելեաբով, Սոֆիա Պերովսկայա, Կիբալչիչ եւ ընկերները, Աղեքսանդրովա կայսրանի մօտ՝ 79ի Հոկտեմբերին, Մոսկուայի երկաթուղային գծի վերայ՝ նոյն տարուայ Նոյեմբերին, Զմեռային պալատի մէջ եւն., երեք-չորս անյաջող մահափորձերի ժամանակ՝ միեւնոյն անձի՝ Ալեքսանդր IIի դէմ կատարուած, երբ վերջինս չնայած այդ 4 անյաջող փորձերին, չարունակեց ապրել դեռ մինչեւ Մարտ 1ը 81 թուի:

Իսկ խպանական Համբոյդ թագաւորի անյաջող մահափորձը, իսկ աւելի նոյնիսկ մանրերինը՝ Լորիս Մելիքովի, Ստոլիպինի, Ալիխանովի, Մարտինովի եւ հարիւրաւոր ուրիշ մանր ու խոշոր անյաջողութիւնների երկար շարքերից դո՞ւրս է արդեօք Սուլթանի պէս մեծ գազանի մահափորձի անյաջողութիւնը, ինչպէս այդ աշխատում են տարածել մի քանի վիրաւորուած եսեր:

Որքան էլ որ մահի չափ վիրաւորական է մեզ համար այստեղ փաստել եւ պատճառաբանել մահափորձը, այնուամենայնիւ այդ ստորնացուցիչ գործը մենք ստիպուած ենք կատարելու՝ ի նկատի ունենալով մի շարք անուանարկութիւններ եւ ստոր, ուղղակի ըստո՛ր ինսինուացիաներ(9) Ցուցականի հասցէին ուղղուած, որոնք, ծայր տուած մէկ երկու վիրաւորուած եսերից, տարածուել են դաշնակցական լայն խաւերում, աղաւաղել եւ խեղաթիւրել փաստերը, թիւերը, անձնական հաշիւներին յագուրդ տալը միայն նպատակ ունենալով:

Կարդում մեզ հարցնում են դաշնակցական ընկերները.— «ձի՞չդ է արդեօք այն, որ Սուլթանի դժոխային մեքենայի մէջ միայն 15 ֆունդ նիւթ է եղել... Այդպէս են խօսում...» (300ը դարձել է 15): Ալեքսանդրապոլում՝ «ձի՞չդ է արդեօք, որ կառքը 300

մետրի վերայ է եղել կանգնած, դէ՛հ ի հարկէ դժուար է այդչափ տարածութեան վերայ — 300 մետր, 450 քայլ կը նշանակէ — մարդ սպանել»... (20–25 քայլը, 450 քայլ է դարձել... «ազնիւ բարեկամների» ջանքերով): «Ինչո՞ւ այսպէս չէք արել, ինչո՞ւ այնպէս չէք արել...», — ամէնքը շտապում են իրանց պատմութեան ապացոյցները երեւան հանել, քննադատի դերի մէջ մտնել, եւ այդպէս ասողների մեծագոյն մասը դժբախտաբար Պոլիսն անգամ տեսած չեն եւ ոչ էլ գիտեն նրա ի՛նչ լինելը: Բայց քննադատո՛ւմ են: Եղն ընկել է... գործը վրիպած է — դանակաւորները շատ կը լինեն, մանաւանդ եթէ անձնականն էլ մէջը մաս ունի:

Որպէսզի յեղափոխական ապագան, ըստ արժանւոյն գնահատէ յետին Թուով կատարուած այդպիսի քննադատների իսկական տեղն ու արժէքը, մեզ մնում է սեղմուած կերպով առաջ բերել այստեղ այն սկզբունական նախագծերը, որոնք իրականութեանը բախելով քայլ առ քայլ բարեփոխուեցին եւ յանգեցին փորձի այն ձեւին, որը եւ կատարուեցաւ Պոլսում՝ Համիտիէ պալատական մզկիթի տակը, Մարգարանի հրապարակում, Սուլթանի գծից 20–25 քայլ հեռաւորութեան վերայ, վերջինի սելամլըքի աղօթքից վերադարձի պահուն, 1905 թ. Յուլիսի 21ին, կէս օրից վերջը ժամը կէսին:

Այդ անյաջող պայթումից փշրուեցին 15ի չափ կառքեր, սպանուեցին 50 ձիեր, վիրաւորուեցին եւ սպանուեցին 78 հոգի՝ Սուլթանի անձնական գւարդիայից եւ զանազան հանդիսատեսներից եւ դրօսաշրջիկներից: Այս Թուերը պաշտօնական Թուերն են, որոնց ճշմարտութեանը իրաւունք ունինք կասկածելու նուազացման մտքով: Հեռագրական տեղեկութիւնները ըստ պանուածների եւ վիրաւորուածների Թիւը 200 էին հասցնում: Եւ այդ զոհերը փուեցին Սուլթան Համիտի աչքերի առաջ, նրա շուրջը, նրա քթի տակ. իսկ ինքը... ինքը կենդանի մնաց... ահա՛ մեր մեծ դժբախտութիւնը:

Այժմ տեսնենք թէ ի՛նչպէս է կատարուել այդ փորձը(10):

Դեռ դրսում, երբ Յուլիսի ընկերները՝ Էլլէն, Թորգոմ, Աշոտ, Յոնան եւ Սաֆօ, օժանդակ ընկերների հետ՝ Լեւոն, Զարեհ, Մարտին և դրսի ընկեր Սարգիս, այլեւ Կարօ, Մանոլ, Լեւոն I, Տիկ. Միչէլ՝ օժանդակ ընկերներ, շրջապատել էինք մեր ապագայ գործունէութեան վայրը՝ Պոլիսը՝ Վառնայի, Սոֆիայի եւ Աթէնքի կողմերը եւ զբաղուած էինք գործի սկզբնական դժուարութիւնները լուծելու հարցով, թէ ի՛նչ կերպ ապրանքները ներս մտցնել եւ, որ գլխաւորն է, ի՛նչ կերպ ինքներս ներս մտնենք առանց հայ լինելուց կասկածուելու. ո՞վ, ի՛նչ կերպ, ո՛ր գծով մտնի, ի՞նչ ձեւի տակ՝ հրեա՞յ թէ ռուս, յո՞ն թէ մի ուրիշ ազգի պատկանող ձեւանայ, ո՛վ ե՞րբ ներս մտնի, ո՞ւր ինչի և ինչո՞վ պարապի, հարցեր որոնց իւրաքանչիւրի համար շաբաթներ, ամիսներ ենք նուիրել, մանրակրկիտ վերլուծման ենթարկել, թեր եւ դէմ այս կամ այն կէտը լուսաբանել եւ եզրակացութեան յանգել,— մենք ունէինք բուն գործի վերաբերութեամբ էլ, ի հարկէ, մի շարք նախագծեր, հեռուից հեռու կազմուած, որոնք հետեւանք էին մեր, մինչեւ բուն գործի հետ ներսում մօտիկից ծանօթանալներս, զանազան աղբիւրներից քաղուած տեղեկութիւնների Պոլսի իրականութեան մասին՝ Սուլթանի վերաբերմամբ: Զորս կողմից լսուող կարծիքներն էին՝ այսպէս անուանուած լաւատեղեակ անձերի՝ Աշոտ, Բորիս(11), Յ. Բալ.(?) եւայլն, թէ այդ գործը անհնարին է ինչպէս եւ արձանագրուած է էլլէնի ձեռքով կազմուած արձանագրութեան մէջ, անհնարին է նրան մօտենալ, նոյնիսկ մէկ կիլոմետրի վերայ մանաւոր տներ չկան, քանդուած են, հրապարակ է չինուած, որ հիւրերի պաւիլիոնն էլ է քանդուած:

Այսպիսի տեղեկութիւնների առաջ բնականաբար մտածում էինք օդապարիկի մասին: Մտածում էինք թէկուզ մի կիլոմետրի վերայ մի մանաւոր տուն վարձել, մի այնպիսի տեղ, որտեղից երեւայ Սելամլըքի արարողութիւնը: Առում էին՝ այդ էլ չի կարելի, — առաջին շաբաթի տները պալատական պաշտօնեաներինն է, ուրիշին չեն տայ: — Լա՛ւ, ուրեմն կը վարձենք, երկրորդ-երրորդ շաբաթում: Եթէ այնտեղի լուսամուտներից չերեւայ Սելամլըքի հրապարակը, կտուրը կը բարձրանանք: Կտուրից էլ չերեւայ, մի փայտեայ վերնատուն կ'աւելացնենք տակերացը մինչեւ որ երեւայ. եւ այնտեղից, հրացանաձիգ մը խումբ՝ համազարկի տակ կ'առնէ ամբողջ Սելամլըքի հանդէսը: Հեռու է, ճիշդ է. մէկ կիլոմետրի վերայ գնդակ խփելը դժուար է. ի՞նչ արած, մէկ երկու ամիս մասնաւորապէս կը վարժուինք հրացանաձգութեան մէջ՝ յատկապէս հեռու տարածութիւնների վերայ: Եւ արդէն իսկ Աթէնքում վարժւում էինք հրացանաձգութեան մէջ:

Մտածում էինք եւ պաւիլիոնի մասին, թէ արդեօք չի՞ կարելի այնտեղ գնալ իբրեւ հիւր, որքան էլ որ պնդում էին թէ չի կարելի:

Մտածում էինք եւ տարեկանի մասին, թէ կարելի՛ է Սուլթանի գծի վերայ, եթէ վարձքով տուն չեն տալիս, ինչպէս ասում էին նոյն լաւատեղեակները, գնել մի տուն եւ ամբողջովին լցնել մեքենիթով եւ պայթեցնել: Ական փորելը անհնարին էինք գտնում եւ աւելորդ, փորձով գիտենալով, որ երբ նիւթը առատ է (պայթուցիկ նիւթը), թէկուզ երկրի մակերեւոյթի վերայ լինի նա դրուած, նոյնիսկ բացօթեայ, կը ներգործէ հաւասարապէս անվրէպ:

Մտածում էինք, եւ լո՛ւրջ մտածում, նաեւ կառքի եւ ոայլի մասին,— թէ կարելի է մեծ քանակութեան նիւթ լեցնել կառքը եւ տարեկանի կամ Սելամլըքի [արքով], եթէ մօտենալ կարելի լինի գոնէ 100–200 քայլի վերայ, պայթեցնել 1000–2000 քիլօ միանգամից:

Այս եւ շատ ուրիշ նախագծեր տեղ են գտնում մեր մէջ եւ քննութեան ու մտածմունքի նիւթ դառնում դեռ դուրսը՝ Գիրէա, Աթէնք, Վառնա: Երկու-երեք ամիս անցկացնում ենք պատրաստութիւնների, փորձերի, վարժութիւնների վերայ: Հրաւիրում ենք օժանդակ ընկերներ զանազան կողմերից: Որքան մարդ է մեզ պէտք, ի՞նչպիսի մարդիկ, դեռեւս չգիտենք: Գիտենք, որովհետեւ ծրագիր չունինք դեռ, նախագիծ էլ նոյնիսկ ոչ: Բայց գիտենք որ մի բան պէտք է անենք, ուստի մեզ նիւթ է պէտք, մարդիկ են պէտք՝ վստահելի, փորձուած: Գիտենք, որ ներս մտնելը խիստ է դժուար եւ ներսում ապրել պէտք է ծպտուած, որ չիմացուի թէ հայեր ենք: Ուստի՝ անհրաժեշտ են կոնսպիրատիւ(12) բնակարաններ, ընտանիքի ձեւով կազմուած: Ուրեմն հարկաւոր է մեզ երկու կին. մանաւանդ ներս մտնելը քօղարկելու համար:

Այստեղ պէտք է ասել, որ ներս մտնելու հարցը այն աստիճան էր ծանրացել, որ, օրինակ, Լեւոն, մէկը մեր օժանդակ ընկերներից, որին մի կապոց մեքենիթ յանձնուած էր տանելու Վառնայից դէպի Աթէնք՝ ծովով, եւ մի օր նրանց նաւը կանգնել էր Պոլսի առաջ, այն աստիճանի ուժեղ տպաւորութիւն էր ստացել տաճկական լրտեսների եւ ոստիկանութեան վերաբերութեամբ, որ անհնարին էր համարում թէկուզ ներս մտնելը: Եւ նա յամառ կերպով առաջարկում էր ցամաքով, Մակեդոնիայի վրայով, խմբով ներս մտնել Պոլիս, հայդուկային խմբի ձեւով, հրացաններով զինուած:

Մարմնի կասկածն էլ մեծ էր ներս մտնելը յաջող կազմակերպելու տեսակէտից: Բանը նրանումն էր, որ քիչ առաջ Մարմնի բոլոր անդամներս, մասնակցելով անցեալ Ընդհանուր Ժողովին, երեք ամբողջ ամիս անցկացրել էինք Սոֆիայում, տաճկական լրտեսների, ագէնտների աչքի առաջ: Այդ ժողովը ծածուկ չմնաց Սուլթանի կառավարութեանը, նոյնիսկ հարցապնդումի նիւթ դարձաւ, մանաւանդ մեր Մակեդոնացիների հետ միասին կատարած ուժանակային փորձերի պատճառաւ, որոնց լուրը տարածուել էր ամէն տեղ: Ահա թէ ինչո՛ւ շատ հեշտութեամբ կարող էինք, Պոլիս մտնելիս, իսկոյն ճանաչուել եւ բռնուել:

Որպէսզի ըստ կարելւոյն լաւ կազմակերպուած լինի ներս մտնելու գործը եւ ներսումն էլ երկար անկասկած ապրել կարելի լինի, հարկաւոր էր շահագործել տաճիկ ոստիկանութեան արեւելեան գաղափարը՝ կանանց վերաբերութեամբ: Նա մինչեւ մեր վերջին փորձը ի հարկէ երեւակայել անգամ չէր կարող թէ մարդիկ, իրենց աղջկայ կամ կնոջ հետ Պոլիս մտնելով, կարող են վտանգաւոր գործերով պարապիլ: Եւ մենք որոշեցինք օժանդակ ընկերների մէջ ունենալ եւ 1–2 կին: Վերջը դարձան նոքա երեք: Այսպիսով օժանդակ ընկերների թիւը հասաւ մօտաւորապէս 18–20 հոգու, Մարմնի հետ միասին, որոնք հետեւեալ տեղերից էինք կանչած,— Պարսկաստանից՝ Սարգիսը, Բազուից՝ Տիկ. Միչէլ եւ Կարոն, Տփխիսից՝ Լեւոն I, Բաթումից՝ Լեւոն II, Սեբաստիայից՝ Մկրտիչը, Ռումանիայից՝ Զահրիլը, Եգիպտոսից՝ Արամը, Ժընեւից՝ Զարեհը, Բերլինից՝ Օրդ. Ռուբինան, դարձեալ Բազուից՝ Օրդ. Էմիլը. իսկ Պոլսում էլ ունէինք Գրիսը եւ Վառամը, որոնք վերջը, Ռուբինայի հետ միասին, ընտրուեցին Մարմնիս անդամներ:

Դրանցից արդէն ներսն էին՝ Թորգոմը, Վառամը եւ Գրիսը: Որոշւում է որ ներս մտնեն ամենքից առաջ՝ Պատ. Մարմնի անդամները, եւ ապա, գործերի հետ գոնէ հարեւանցի ծանօթանալուց վերջը, կանչել ներս եւ միւս օժանդակներին՝ ե՛րբ եւ քանի՛ հոգի որ պահանջուին:

Երկար կը լինի նկարագրել բոլոր դէպքերն ու պատահարները ներսում կամ դուրսը մինչեւ գործի վերջը եւ կարիք էլ չկայ ներկայ պայմաններում: Մենք զանց ենք անում այդ:

Ամենքս ներսն ենք վերջապէս, բացի մի քանի օժանդակ ընկերներից, որոնցից Լեւոն Գիւլումեանը ուղարկուեց Ոսկեհանք, Լեւոն IIը ներս չկանչուեց բոլորովին, քանի որ վերջերը պարզուեց, որ զինուորական ոյժի կարիք չունինք, թէեւ շատ վստահելի էր իբրեւ այդպիսին: Սարգիսի մասին արդէն Աթէնքում որոշուած էր, որ նա բոլորովին չպէտք է ներս մտնի, այլ պիտի մնայ գործի ամբողջ ընթացքում դուրսը՝ Աթէնք կամ Բուլղարիա, Ժընեւի հետ յարաբերութիւն պահելու համար: Վտանգաւոր էր նկատւում Պոլսից անմիջական յարաբերութիւն Ժընեւի հետ, որը ճանաչւում է իբրեւ յեղափոխականների կենտրոնավայր:

Սկսւում են ներսում ուսումնասիրութիւնները դանդաղ, բայց յամառ, ամիսների ընթացքում, սկսած Սեպտեմբերից 1904 թուականի, եւ շարունակւում են նրանք զանազան ընդմիջումներով եւ տարբեր ուղղութեամբ մինչեւ Յուլիս 15, 1905 թուական: Եւ իւրաքանչիւր օր, շաբաթ կամ ամիս քայլ առ քայլ աւելի եւ աւելի պարզւում մեր ձեռնարկին միջոցները եւ ձեւը: Ներկայ ենք լինում Սելամլըքի արարողութեանը. նոյնիսկ մեզանից երկուսին յաջողւում է իբրեւ հիւր, դեսպանատան միջոցով մտնել պաւիլիոն եւ աւելի մօտից դիտել արարողութիւնը: Եւ ահա մեր դրսի օդային նախագծերը սկսւում են մէկը միւսի յետեւից ընկնել: Օդապարիկը ի հարկէ օդն է ցնդում: Մէկ կիլոմետրի վերայ տուն վարձելը նոյնպէս՝ բանից դուրս է գալիս, որ տներ կան նոյնիսկ 200–300 մետրի վերայ: Առաջին հարեւանցի ուսումնասիրութիւնները [կատարւում են] առաջին երկու-երեք ամիսների ընթացքում (ի հարկէ ամէն օր, նոյնիսկ ամէն շաբաթ չի կարելի պալատի կողմերը միեւնոյն անձերին երե-

ւալ, հարկաւոր է զգուշութիւն, ուստի եւ սահմանափակ այցելութիւններ դէպի Նժոյգի պալատի կողմերը)։

Մնում են հրապարակի վերայ երկու նախագծեր, որոնք ամենից աւելի հաւանականութիւն ունին իրագործուելու։ Մէկը՝ տարեկանի ժամանակ, Նժոյգի Տոլմա-Բաղչայի պալատը գնալու հանդէպին՝ ճանապարհի վերայ տուն վարձել եւ այնտեղից ռումբերով կամ ամբողջ տունը պայթեցնելով հարցը լուծել, կամ երկրորդը՝ Ուրբաթի Սելամլըքի ժամանակ, պաւիլիոնից ռումբեր նետել — մէկ, մէկ էլ նոյն պահուն կառքի մէջ մեծաքանակ նիւթ լցրած, ամբողջ կառքը ձիերով միասին պայթեցնել հնարաւոր մօտ տեղից, որ կը նշանակէ մի հակայական մեծ ռումբ։

Որպէսզի պարզուին յետագայ դէպքերը, այստեղ կարելի է համառօտակի նկարագրել Սելամլըքի արարողութիւնը, ինչպէս նա կատարւում է սովորաբար, միշտ միեւնոյն ձեւով, միեւնոյն կարգով։ Սրան կից յատակագծի վերայ նշանակուածը պալատի Թաղն է, պալատի եւ մզկիթի հետ։ Մզկիթը, ուր իջնում է Սուլթանը իւրաքանչիւր ուրբաթ կէսօրին, գտնւում է պալատին կից, հազիւ 100–150 քայլի վերայ՝ յատակագծում նշանակուած ճանապարհով։ Իւրաքանչիւր ուրբաթ, առաւօտեան ժամը 10ից սկսած, ամբողջ այդ Թաղը ինչպէս եւ Գէչիկ Թաչի փողոցը լցւում է ամէն տեսակի զօրքով՝ հետեւակ, հեծելազօրք։ Փողոցների բերանները՝ աւելի խիտ, մի քանի շարքերով։ Հանդիսատեսներ տեղացիներից շատ քչերն են լինում, հայեր՝ բոլորովին։ Ամբողջ տարուայ մէջ մի հայի չենք պատահել մենք այդ հանդէսին։

Պալատից մզկիթ տանող լայն ճանապարհի ամբողջ երկարութեամբ, ինչպէս եւ դէպի այդ լայն ճանապարհը բացուող չորս կողմնակի ճանապարհների երկայնութեամբ, մանաւանդ բերաններին, կանգնում են խիտ երկու շարք հետեւակ զօրք՝ պալատական եւ մայրաքաղաքի զանազան գնդերից։ Մզկիթի դէմ առ դէմ գտնուող լայն հրապարակը, որը Մարգարանի հրապարակ անունն է կրում, լցւում է հեծելազօրքով՝ համարեա մինչեւ կէսը երբեմն 6, երբեմն աւելի շարքերով։ Աղօթքը վերջացնելուց, որը տեւում է ½–¾ ժամ, հանդիսաւոր գնացքով անցնում են լայն ճանապարհով զանազան գնդի զինուորներ՝ իրանց նուագախմբերով, վերեւից ներքեւ։ Հեռանում է նոյնպէս հեծելազօրքի գլխաւոր մասը։ Մնում են միայն շարքով կանգնած գիծը պահպանող հետեւակ եւ հեծելազօրքերը, մինչեւ Սուլթանի վերադարձը։

Պալատական Մզկիթի դէմ ու դէմը, մօտ 60–70 քայլի վերայ, գտնւում է Պաւիլիոն անուանուած բարձրը հողով լեցուած պատշգամբը, վերան բաց, երկաթեայ վանդակով եղերուած եւ լայն ճանապարհի մակերեւոյթից 1½–2 մետր բարձրութեան վերայ կանգնած։ Դա պատուոյ հիւրերի համար է, գեղանութիւնները՝ ներից երաշխաւորուած։ Նախընթաց օրը, հինգշաբթի, մինչեւ ժամը 12ը պէտք է ներկայանալ անձամբ դեսպանատուն եւ այնտեղից Թոյլտուութիւն ստանալ Սելամլըք գնալու։ Դեսպանատան Ա. կամ Բ. քարտուղարը հարցնում է դիմողի անուն-ազգանունը, նայում է անցագիրը, նշանակում է ո՛ր հիւրանոցում իջած լինելը, ինչ գործով եկած լինելը եւ նոյն օրը յայտնում է տաճկական արտաքին գործոց նախարարութեան դիւանատանը՝ հետեւեալ օրուայ Սելամլըքին իւր կողմից գալու Թոյլտուութիւն ստացած հիւրերի մասին, բոլոր մանրամասնութիւններով եւ նրանց հասցէներով։ Այդ ժամից սկսած՝ տաճկական գաղտնի ոստիկանութեան ագէնտները սկսում են իրանց գործը՝ հետեւեալ օրը Սելամլըք գնացող հիւրի նկատմամբ, դիտելով նրան, հարց ու փորձ անելով եւ աչքից չթողնելով մինչեւ նրա հետեւեալ օրը կառք նստելն ու դեսպանատուն գնալը։ Հետեւեալ օրը, ուրբաթ ժամը 11ին, Սելամլըքի այցելութեան Թոյլտուութիւնը ստացած հիւրը վարձում է կառք եւ գնում է ուղղակի իւր դեսպանատան սրահը, ուր համախմբւում են այդ օրուայ բոլոր այցելուները իրանց կառքերով։ Երբ բոլորը խմբուած են, դեսպանատան «կառազ»ի ուղեկցութեամբ շարժւում են բոլորը դէպի պալատ եւ հասնելով Գէչիկ Թաչ՝ բարձրանում են դէպի պալատ, վերեւի ճանապարհով։ Հիւրերը իջնում են կառքից եւ «կառազ»ի առաջնորդութեամբ մօտենում են պաւիլիոնի դրանը։ Այստեղ տաճիկ պաշտօնեան բոլոր հիւրերի անուանացանկը ձեռքին, մէկ մէկ կանչում է հիւրերին եւ ստուգելով անձնաւորութեան խնդիրը՝ անցագրով կամ այցետոմսով՝ առնում է ձեռքից հովանոց, ձեռնափայտ կամ հեռադիտակ եւ թողնում պատշգամբը։ Այնտեղ կարելի է կանգնել եւ մօտենալ վանդակին։ Բայց Սուլթանի երեւալու ազդանշան փողը հնչելուն պէս՝ բոլոր հիւրերին հեռացնում են պատշգամբի առաջից մէկ-երկու քայլ յետ։ Առաջ են անցնում ժանտարմական պաշտօնեաները, շարքով կանգնում հիւրերի առաջ, իսկ հիւրերի յետեւին կանգնում են գաղտնի ոստիկանութեան ագէնտները՝ սիւլ շորերով։

Սուլթանի երեւալուց առաջ, երկու շարքով, 50–60 հոգի պալատից դէպի մզկիթն են ուղեւորւում հետիոտն,— պալատական պաշտօնեաներ, բոլոր նախարարները, հրամանատարները, Շէյխ իւլ Իսլամը, պալատական մոլլան՝ որուն ողջունում են մեծ ակնածանքով նոյնիսկ նախարարները. ապա երեւում է Հարէմը՝ կառքերով, Հարէմի գլխաւոր ներքինապետը եւն.։ Ամբողջ ժամանակ, պալատական նուագախումբը նուագում է մզկիթի առաջ՝ Համիտիէ քայլերգը։ Ճանկարծ նուագը ընդհատւում է, եւ ընդհանուր լռութեան մէջ հնչում է փողը՝ Սուլթանի պալատից դուրս գալու ազդանշանը։ Այս ամենից յետոյ երեւում է Սուլթանը, նստած բաց կառքի մէջ՝ իւր հանդէպ ունենալով զինուորական նախարարը։ Նա իջնում է բաւական դանդաղ, զօրքը բարեւի կանգնած «եաշասըն» է կանչում. հիւրերը գլխարկները հանում են։ Սուլթանը ձեռքի նշանով բարեւում է հիւրերին։ Նա անցնում է 15–17 քայլի վերայ՝ հիւրերից եւ, ծռելով դէպի մզկիթի արտաքին դուռը՝ մտնում մզկիթ։ Այնտեղ վերջացնելով աղօթքը, ժամի չափ մնալով եւ ապակեայ պատշգամբի յետեւից դիտելով զօրքերի հանդիսաւոր մարշը, նստում է մի ուրիշ կառք՝ մինակ ու առանց կառապանի, չրջապատուած նախարարներով, վէզիր-վիզիրներով՝ հետիոտն կառքի յետեւից վազող, բարձրանում է, դանդաղ, պալատ։

Իսկ տարեկան երեք անգամ, ինչպէս ասացինք, Սուլթանը դուրս է գալիս իւր պալատից եւ իջնում՝

1 անգամ, Թոփ-Կափու Սէրայ, Սիրքէճիէն վեր՝ Պոլսի մասում, Ֆրխայի-Շէրիֆի տօնին՝ Ռամազանի 15ին.

2) Կուրբան (Ղուրպան) եւ 3) Ռամազան Բայրամների առաջին օրը կ'իջնէ Տոլմա Բաղչայի պալատը՝ շնորհաւորութիւններ ընդունելու։

Այնքան էինք սկզբից դրսում՝ անհնարիններ երեւակայել, որ մեր երկու ընկերների Սելամլըքի արարողութեան Թոյլտուութիւն ստանալը՝ մեզ անչափ ոգեւորեց, եւ արդէն ամէն ինչ վերջացած էր նկատւում Պոլսի մասում, Ֆրխայի-Շէրիֆի տօնին՝ Ռամազանի անդամները ներս մտած չէին իսկ։ Իսկոյն նամակ գրուեց Էլլէնին Ոսկեհանք, որ շտապի գալ Պոլիս։ Նա Աթէնքից, այնտեղ կայացած որոշման համաձայն, մըտաւ Ռուբինայի հետ Ոսկեհանք՝ այնտեղի ոյժերը կազմակերպելու եւ անելիք ձեռնարկների միասին որոշելու, ապա Ոսկեհանքից Պոլիս մտնելու։ Ոսկեհանքից Պոլիս մտնելը աւելի գործնական էր նկատուած, քան ուղղակի արտաքսմանից։ Այնպէս որ միաժամանակ Ոսկեհանք մտնելը կրկնակի օգտակար նկատուեց։ Այդ նամակով յայտնուեց նրան որ շտապի Ոսկեհանքի գործերը վերջացնել եւ գալ։ Նժոյգը անմատչելի չէ, ինչպէս երեւակայում էինք, նրա գործը լմնցած է։ Նոյն նամակով եւ յայտնում էր, ի հարկէ, թէ ի՛նչ ձեւով Պոլիս մտնել, ո՛ւր իջեւանել եւն.։

Եւ եկաւ Էլլէնը Ռուբինայի հետ։ Քիչ վերջը եւ Աշոտը։ Մարմինը արդէն ներսն էր չորս հոգով։ Ցոնանի փոխարէն ընտրուեց, Թորգոմի եւ Աշոտի յանձնարարութեամբ, պոլսեցի երիտասարդ Վռամշապուհ Քեանդիրեանը եւ այդպիսով նա լրիւ կազմ ստացաւ։ Երբ մանրամասն պատմուեց Էլլէնին պաւիլիոն գնացած ընկերների կողմից, բոլորը հետեւեալ ուրբաթ, Էլլէնն էլ Ռուբինայի հետ, գնացին հանդիսատես լինելու Սելամլըքի արարողութեան։ Բայց Մարգարանի հրապարակից կամ կողքի փողոցից դիտելու, ո՛չ պաւիլիոնից (այդ որոշուեց չանել գործնական նպատակներով,— որպէսզի երբ հարկ լինէր գնալ, աւելի դիւրին լինէր Թոյլտուութիւն ստանալը։ Այնտեղ տուրիստները մի անգամ են առհասարակ գնում։ Երկու անգամ միեւնոյն մարդու գնալը, իրրեւ անսովոր երեւոյթ, կարող էր բարդութիւններ առաջ բերել, թերեւս կասկած զարթնեցնել եւ Թոյլտուութիւն ստանալը դժուարացնել։ Այդպէս մի քանի անգամ հրապարակից Սելամլըքի արարողութիւնը դիտելուց վերջը, Էլլէնը նկատել տուեց, թէ այնքան էլ ոգեւորուելու չէ այդ կարծեցեալ մատչելիութեամբ, քանի որ պաւիլիոնից գործելու համար պէտք է ունենալ յատուկ խնձորներ(12) եւ այդ խնձորները պէտք է լինին շատ փոքր, որ աննկատելի ներս անցկացնել կարելի լինի եւ պիտի աւտոմատ բռնկող լինին։ Թէ փոքր ռումբերի վերայ վստահիլը դժուար է եւ, որ գլխաւորն է, այնտեղ քչերը մեզանից կարող են անցնել, որոշ ցէնզ է պէտք՝ կանոնաւոր անցագիր, օտար լեզու իմանալ, լաւ արտաքին, վայելուչ օձիքներ. այդ պայմաններին՝ մեր ընկերներից շատ քչերն էին համապատասխան։ Ինչպէս ասացինք քիչ առաջ, արդէն երկու նախագիծի վերայ էինք կանգնած՝ Ուրբաթի եւ Տարեկանի։ Ու Էլլէնը այդ երկու տարբեր միջոցներից կողմնակից էր տարեկանին։ Վ.-Շապուհը եւ կանանցից երկուքը, նոյնպէս՝ Ռուբինան եւ Տիկ. Միշէլը։ Միաժամանակ սկսեցինք ուսումնասիրութեան ե'ւ տարեկանի։ Առաջին գործը պէտք է լինէր Սուլթանի անցկենալիք միակ փողոցի վերայ մի տուն վարձելը, նոյնիսկ գնելը՝ եթէ վարձու չտան։ Երկար փնտռելուց վերջը գտնուեց մի տուն՝ շատ յարմար տեղ, Գէչիկ Թաչի փողոցի՝ դէպի պալատ ծռուող անկիւնին մօտ՝ եոյարկանի տուն, որը դատարկ էր եւ վարձով էր տրւում։ Ամբողջ այդ Թաղը առանձին պալատական ոստիկանութեան հսկողութեան տակ լինելով, շատ դժուար են այնտեղ վարձելու պայմանները, մա'նաւանդ քրիստոնեաների համար։ Սակայն մեր բարեկամ Ժօրէսի ու նրա կնոջ միջոցաւ Վռամն ու Տիկ. Միշէլը մի քանի անգամ գնացին վարձել փորձելու այդ տունը, բայց դժուարութիւնների հանդիպեցին. հրաւիրուեցին ոստիկանատուն, հարց ու փորձի ենթարկուեցին եւ վերջապէս ոստիկանութիւնը տեղացի պատուաւոր քաղաքացիներից երաշխաւոր պահանջեց, որը դժուար էր մեզ գտնել։ Մտածւում էր Ժօրէսի միջոցաւ դիմել Բելժիկացոց հիւպատոսին (Ժօրէսը, Վռամի մտերիմ ընկերը, բելժիկացի մի գաղափարական երիտասարդ, այժմ էլ բանտարկուած եւ մահուան դատապարտուած, ամէն տեսակ ծառայութիւններ մեզ արել է՝ սկսած մեր պայթուցիկ նիւթերը իր տանը երկար ժամանակ պահելուց, մինչեւ Էլլէնին եւ Ռուբինային էլ իր տան մէջ պատսպարելը եւ առհասարակ բոլոր տեսակի աջակցութիւն ցոյց տալը)։ Նա յայտնեց, որ այդպիսի բան անելը նրա համար դժուար է, կարող է կասկած զարթեցնել հիւպատոսի իսկ մէջ, երբ նա, մի համեստ ռոճիկ ստացող մարդ, յանկարծ պալատի շրջակայքում եոյարկանի տուն վարձելու ելնէ։ Երաշխաւորի մասին էինք մտածում, եւ

դա չատ երկարացրեց գործը՝ մինչեւ նոյեմբեր ամիսը: Ուրբաթն ու տարեկանը երկար ժամանակ մրցում էին առաջնութիւնը, ընկերներից մի մասը անպայման դէմ էր տարեկանին: Միւս մասը, ինչպէս ասացինք, աւելի ոգեւորւում էր տարեկանով, հետեւեալ պատճառներով՝ որ

Տարեկանը տուն է որը ունի 16 լուսամուտ, որ կը նշանակէ 16 ռումբ եւ այն էլ որքան ուզենաս խոշոր ռումբեր: Կարելի է սուլթանական ամբողջ շքախումբը Նժոյգի հետ միասին ռումբերի տարափի տակ ձգել եւ այդպիսով ձեռնարկի յաջողութիւնը անպայման ապահովել: Յետոյ, տան միջից, իբրեւ ռմբաձիգներ՝ ընկերներ կարող ենք ունենալ որքան ուզենանք, ցէնգի պէտք չկայ: Տունն էլ կարող ենք ներքեւի յարկը լցնել մեր ունեցած ամբողջ նիւթը եւ, վերջին վայրկեանին, երբ շրջապատուենք, օդը հանել: Մենք ունէինք ներս մտցուած 204 քիլօ մելինիթ եւ մի քանի հարիւր կապսիլ, Ֆիշեր, պատրոյգներ, ելեքտրական հաղորդիչներ եւ զանազան անհրաժեշտ պարագաներ: Այն ինչ, ասում էին տարեկանի կողմնակիցները, Ուրբաթի մէջ պէտք է ունենանք 4, ամենաշատը 6 փոքրիկ ռումբեր, գրպանի կամ թեւի մէջ տեղաւորուող, որոնց վերայ յոյս դնելը խիստ թէական է, մանաւանդ որ ինչպէս յաճառ լուրեր էին պատում եւ մինչեւ օրս էլ խօսում է (կարդալ Ֆրանսերէն յօդուածի այդ կտորը), Սուլթանը ներսից զրահ է կրում ինչպէս եւ կառքը, ասում են, զրահակիր է, բլենտէ է: Իսկ կառքը՝ կառքը փորձուած բան չէ, դա նորութիւն է, ի՞նչ գիտենք թէ 50-60 քայլ տարածութեան վերայ ո՛րքան նիւթ կարող է ազդեցութիւն անել եւ առհասարակ այդ դեռ հարց է, — թէ մելինիթը, եթէ անմիջական հաղորդակցութիւն չունենայ առարկայի հետ, կարո՞ղ է տարածութեան վերայ ներգործել: Ա՛յ, օրինակ, Աթէնքի մեր փորձը, երբ 15 քիլօ դինամիտը 3 քայլի վերայ ոչխարը չսպանեց:

Իսկ Ուրբաթի [Սելամլըքի] պաշտպանները, համաձայնուելով այդ պատճառների հետ եւ գտնելով բոլորն էլ բանաւոր, այնուամենայնիւ գտնում էին Ուրբաթը աւելի նպատակայարմար հետեւեալ պատճառաբանութիւններով,—

— Տարեկանը ամէն կողմից նախընտրելի է, այո՛, բայց մի էական բան այնտեղ մեզ պիտի պակասի. այն է, որ նա ուսումնասիրուած չէ. մեզանից ոչ ոք չէ տեսել, թէ ի՛նչ կերպ է նա կատարւում, ի՛նչ շարքով է ընթանում այդ հանդէսը, ի՞նչ արագութեամբ է անցնում Սուլթանական կառքը, փա՞կ թէ բաց կառքով: Եթէ փակ՝ կարող ենք չտեսնել նրան, թէ նա ո՛րի մէջ է: Թէ արդեօք լուսամուտները այդ օրը չե՞ն փակել տալիս եւն.: Վերջապէս չէ ուսումնասիրուած, իսկ առանց այդ վարձել տուն եւ գործի ձեռնարկել չի կարելի: Առնուազն գոնէ երկու անգամ պիտի տեսնենք, գործի ձեռնարկելուց առաջ: Բաւականին երկար ժամանակ, ինչպէս ասացինք, այդ երկու նախագծերը իրար հետ մրցում էին, երկուսն էլ ունէին իրենց առաւելութիւններն ու թերութիւնները:

Այսպէս թէ այնպէս երկու ծրագրերի մէջ էլ ռումբեր պէտք էին, իսկ մինչ այդ մենք դեռեւս ռումբեր չունէինք: Դեռեւս կանգ չառած այդ ծրագրերից մէկի կամ միւսի վերայ, պատրաստւում էինք երկուսի համար էլ: Մանրամասն քննելով պաւիլիոն մտնելու համար անհրաժեշտ ռումբերի չափերը, որից մեծը անկարելի էր անցկացնել, կանգ առանք 250-300 գրամ պարունակող մեծութեան վերայ, որի ծաւալը, աւելացրած պատերի հաստութիւնը, մաքսիմումը նկատուեց այն մեծութեան, որը հնարաւոր կը լինէր գրպանում կամ թեւի մէջ կամ կանանց ուսնոցի տակ տեղաւորել: Իսկ տարեկանի համար — պատուիրուեց ամենամեծ ռումբերը: Այդ պատուէրները մանրամասն հրահանգներով ուղարկուեցին Վառնայի մեր դրսի ընկեր Սարգիսին, Կարոյին եւ Լեւոնին հալել տալու եւ փորձեր կատարելու, հասնելու համար հետեւեալ անհրաժեշտ պայմաններին. որ՝

1. Ռումբերը պայթին անպայման, առանց վրիպումի — (20 պատրաստուածից 10ը նետուած, տասն էլ պայթի)

2. Որ նրանք վաղաժամ պայթումի վտանգից զերծ լինին եւ

3. Բեկորներ տան ոչ չատ մանր, որ անոյժ պիտի լինին, եւ ոչ էլ չատ խոշոր՝ որ քիչ լինին թուով:

Երկար սպասուեց փորձերի հետեւանքներին: Ընկերները դրսում, ժրաջան եռանդով, փորձերը շարունակում էին, բայց միշտ անյաջող էին նոքա: Շարունակ ստանում էինք անյաջողութեան լուրերը: Ժամանակը անցնում էր: Հարկաւոր էր չտապել մի քանի լուրջ պատճառներով, վերջացնել գործը նոյն 1904 թուականին:

Ահա այդ պատճառներից գլխաւորները.—

1) Դաւադրական մի այդպիսի գործ միշտ վտանգի մէջ է պատահաբար բացուելու եւ վիժուելու մի ծուռ պատահարից, մի նամակ բռնուելուց, որեւէ կասկածելի քայլից՝ առհասարակ:

2) Ոսկեհանքը, որի մասին վերջը, նոյն պատճառներով չտապեցնում էր մեզ եւ դժգոհ էր մեր դանդաղ ընթացքից(13):

Մի քանի անգամ դրուեց հարց՝ վերջնականապէս կանգ առնելու Ուրբաթի վերայ եւ ըստ այնմ միայն նրա հոգսերով զբաղուելու, բայց քանի որ դեռ ռումբեր չունէինք պատրաստի, ստիպուած էինք սպասելու: Ուրբաթի կողմնակիցները համաձայնուեցին վերջապէս տարեկանի կողմնակիցների պահանջներին՝ գոնէ մի անգամ տեսնել եւ ուսումնասիրել տարեկանը, մանաւանդ որ նրա օրերը մօտենում էին, մինչդեռ, ինչպէս ասացինք, մենք ռումբեր չունէինք դեռ: Գործը չտապեցնելու համար, ոլքան էլ որ Պոլսի պայմանները ոմբային փորձեր կատարելու համար չատ աննպաստ էին, բայց և այնպէս, այնքան հրամայող պահանջ էր գործի չտապեցնելը, որ որոշեցինք ներսումը մենք եւս փորձեր անել՝ դրսի փորձերի հետ զուգընթաց: Ընտրեցինք Պոլսի արուարձաններից Բէյկոզի (Պէյքոզ) մօտ գտնուող Պոլոնէզ գիւղը, 5–6 ընկերներով գնացինք փորձեր կատարելու: Պէտք է այստեղ յիշել, որ առաջուց ներսում ունէինք 15ի չափ ռումբեր ծծաւորներից, որոնք բոլորովին անյարմար էին գործի համար. մեծ էին իրանք, եւ աւելի՛ եւս մեծանում էին երկրորդ ամանի մէջ դրուած լինելու անհրաժեշտութիւնից, որպէսզի պայթում առաջ գայ: Ահա այդ ռումբերով գնացինք մեծ զգուշութիւններ ձեռք առած յիշեալ գիւղը: Այդ փորձերն էլ յաջողութիւն չունեցան, ինչպէս մեր դրսի ընկերների փորձերը: Նետուած ռումբը չպայթեց: Եթէ պայթէր, բոլորս միասին տեղն եւ տեղը բռնուած պիտի լինէինք տաճիկ անտառապահից, որը առաջներս դուրս եկաւ ծառի յետեւից հենց այն րոպէին, երբ ռումբը արդէն նետուած, մենք տափ կացած անհամբեր սպասում էինք նրա պայթումին: Կանանց ներկայութիւնը փարատեց տաճիկ պահապանի կասկածը: Ստիպուած էինք վերադառնալ:

Մօտենում էին Տարեկանի օրերը: Նախապէս համաձայնուելով եւ իւրաքանչիւրի տեղը եւ դերը որոշելով, նոյեմբերի մէջ, Ռամազանի 15ին՝ Խրխայի-Շէրիֆի տօնին, մեր վարձուելիք տնից սկսած, Պէշիկ Թաշի փողոցով կանգնեցինք զոյգ զոյգ՝ շախմատի կարգով, վեց կէտերում, 12 ընկերներ: Ամբողջ փողոցի երկարութեամբ կանգնած էին զօրքերը, մանաւանդ աւելի խիտ՝ մի քանի շարքերով՝ փողոցների բերաններին: Եկան եւ դպրոցների աշակերտները շարք շարք, իրանց ուսուցիչների առաջնորդութեամբ: Սպասում ենք: Անցաւ սրարշաւ 50ի չափ հեծելաշարքը, ուղղակի ամբողջ Թափով սրարշաւ: Անցան նախարարները՝ կառքերով, ապա հարէմը... Սպասում ենք Նժոյգին: Երկար սպասեցինք... Ճանկարծ զօրքերը քանդուեցին եւ անցան նուագով, ապա՝ աշակերտները... Սպասում ենք զարմացած: Ոստիկանները մօտենում են եւ յայտնում են մեզ որ կարող ենք գնալ,— հանդէսը վերջացած է...: Փատիշահը արդէն հասած է իւր տեղը ուրիշ գծով — ծովով: Ասում են, որ 30 տարուայ ընթացքում առաջին անգամ է որ նա մի այդպիսի գծով է անցել. այն է՝ իւր պալատի պարտէզով, որը Պէշիկտաշի փողոցի վերայ ձգուած կամուրջով միանում է Արազանի (?) պալատի հետ, ուր Սուլթան Մուրատն էր բանտարկուած տարիների ընթացքում: Եւ այնտեղից՝ նաւով շարունակել է ճանապարհը դէպի Թոփ-Կափուի Սարայը: Ահա թէ ինչո՛ւ հեծեալ պահակախումբը այնքան սրարշաւ շտապում էր հասնելու՝ ցամաքի գծով դէպի Տոլմաբաղչէ:

Այդպիսով ընկնում է եւ մէկը մնացած երկու նախագծերից: Մնում է հրապարակի վերայ միայն Ուրբաթի Սելամլըքը:

Ճիշդ է, լոյս են ընկնում նոյն միջոցներին մէկ-երկու նոր նախագծեր եւս, բայց իբրեւ չմշակուած եւ իրական հող չներկայացնող առաջարկներ, չուտով տեղի են տալիս գլխաւոր նախագծին: Այդ առաջարկներից կարելի է յիշել այստեղ՝

1) 8-10 ընկերներ ծպտուին՝ տաճիկ կանանց չորեր հագած՝ խառնուին վերջիններին (երեսները ծածկած)՝ որոնք կանգնում են երբեմն մզկիթի քովի փողոցում: Երբ բոպէն մօտենայ, ռումբերով առաջ վազեն, զօրքերի շարքը ցրեն. միւս մասը յարձակուի Նժոյգի վերայ:

2) Վարձել կամ գնել մի տուն մզկիթի դիմացը՝ ոչ հեռու, ուղիղ գծով՝ 200–300 մետրի վերայ ամփիթեատրով բարձրացող փողոցներից մէկում, որտեղից — լուսամուտներից — կ'երեւայ Սելամլըքի հանդէսը: Սա մեր նախկին նախագծի բարեփոխուած ձեւն էր: Առաջ կարծում էինք թէ մի կիլոմետրի վերայ նոյնիսկ դժուարութեամբ պիտի գտնուի տուն. բայց երբ այդքան մօտ տներ գտնուեցին եւ վարձքով էլ տրուող կար, առաջ բերեց այդ առաջարկը:

Այդ նախագծերը սակայն, ինչպէս ասացինք, երկար չդիմացան. տեղի տալով Սելամլըքին եւ վերջապէս արձանագրուեց իբրեւ միակ նախագիծ՝ ուրբաթի Սելամլըքը:

Կանգ ենք առնում Ուրբաթի վերայ այնտեղից գործելու ա) ռումբերով պաւիլիոնից եւ բ) կառքով դէմի «Y» փողոցից: Առաջ նետում են ռումբերը, ապա պայթեցնում է կառքը: Բացի այդ գլխաւոր գործողները՝ որոնք ուղղուած պիտի լինին Սուլթան Համիտի դէմ, խուճապը շատացնելու համար նպատակայարմար նրկատուեց եւս երկու-երեք մասնաւոր կառքերից զանազան փողոցներից ռումբեր պայթեցնել: Սակայն թէ այս վերջինը եւ թէ առաջինների մանրամասնութիւնները թողնուեցին ապագային որոշելու, դեռ եւս լաւ ծեծուած եւ մշակուած չլինելու պատճառով: Նոյն այդ նիստում որոշուեց եւ խնձորաւորների ով լինելը, ի հարկէ իրանց համաձայնութեամբ: Որոշուեցին պաւիլիոն գնացողներ՝ Էլլէն, Աշոտ, Վռամ, Կարօ, Ջահիլ եւ Սաֆօ: Աշոտն ու Վռամը իսկապէս ցէնգաւորներ չէին. առաջինը, թէեւ ունէր ռուսական անցագիր, բայց ռուսերէն չէր կարող խօսիլ (չա՛տ քիչ). երկրորդը, իբրեւ տեղացի, ամենքից ճանաչուած, դժուար էր ծպտել այնպէս, որ ֆրանսիացի ձեւանար, թէեւ ֆրանսերէն գիտէր, բայց անցագիր չունէր: Սակայն նա համաձայնուեց, առանց տատանելու, յայտնելով, թէ եթէ յարմար անցագիր գտնուեց, ինք էլ կը գայ: Նոյն նիստում որոշուեց, որ պաւիլիոն գնացողների թիւը պէտք է 6 լինի, եւ ան ճուազմի չորս: Այդ չորս թիւը նկատուեց անհրաժեշտ պայման, որից պակաս թուով չէր կարելի գնալ, հետեւեալ պատճառներով.—

Ի նկատի ունենալով պաւիլիոն գնալու բոլոր դժ-

ւարութիւնները եւ 100ին 100 մահը, տեսակտնապէս ենթադրւում էր, որ 4կց մէկը կարող է, իբրեւ մարդ, վճռական բոլշէին չփոթուել, իրան կորցնել եւ չնեռել: Զորսից մէկը կարող է չպայթել՝ որքան էլ որ պիտի աշխատէինք անվրէպ ինձորներ ձեռք բերել: Զորսից մէկը կարող է պայթել, բայց հեռուն. գոնէ մէկը կանոնաւոր պայթէ այդ փոքր ռումբերից, որպէսզի այդ երկուսը միասին յուսատու լինին:

Ինձորների յատկութիւնները անհրաժեշտաբար պէտք է լինէին՝

1) փոքր, բայց ուժեղ (ոչ աւելի քան 300-400 կրամ նիւթ պարունակող),

2) աւտոմատ բռնկող, առանց դրսից կրակ տալու (ինքնաբռնկող),

3) չվրիպող, այսինքն՝ «փաստ» չձգող,

4) ապահով՝ վաղաժամ բռնկումից, ցնցումներից եւն., ինչպէս եւ ընկնելուն պէս բռնկող, չուշացող, որպէսզի Նժոյգը չկարողանայ հեռանալ:

Իսկ թէ ի՞նչ կերպ պէտք է դա կազմակերպուի, կառքը ի՞նչ տեսակ բռնկող պիտի լինի՝ ելեքտրակա՞ն, թէ պատրոյգով, Վռամը, Աշոտը ի՞նչ կերպ պէտք է յարմարուին ցէնզերին, պէտք է հիւրանո՞ց տեղափոխուին, թէ արտասահման դուրս գան եւ Նորից ներս մտնեն իբրեւ տուրիստներ, երկրորդական կառքերի ոռոշ դերը եւ ձեւը եւն., այդ բոլորը եւ այլ մանրամասնութիւններ, թողնուեցին ապագային որոշելու՝ երբ ռումբեր կ'ունենանք եւ աւելի մօտից կը ծանօթանանք բոլոր պայմաններին:

Բայց ապագան շատ բան փոխեց: Ապագայում կառքը դարձաւ առաջին եւ միակը, իսկ պաւիլիոնը ի սպառ ընկնուեց:

Ահա թէ ինչպէս կատարուեց այդ փոփոխութիւնը: Երկրորդական կառքերի մասին արդէն խօսք էլ չէր կարող լինել, քանի որ «խուճապ» չատացնելը եւ այդպիսով կոտորածի ոյժը աւելի եւս սաստկանալուն նըպաստելը, դա լաւ չմտածուած թուղթի առաջարկ էր՝ առաջին երեկոյին ոգեւորուած Շապուհի կողմից առաջարկուած եւ լուրջ քննութեան դեռ չենթարկուած, որ մոցրեց նա իր ձեռքով գրուած արձանագրութեան մէջ(14): Ոչ ոք մեզանից չէր էլ մտածած այդ կէտի մասին — խուճապ չատացնելու մասին: Բոլորիս ուշն ու միտքը Նժոյգն ի՛նք էր:

Պէտք է ասել, թէ ի՞նչ փոքրեր էին, որ արդէն 4-5 ամիս շարունակւում էին, դրամ վատնւում, Ֆիլիպէում, յետոյ Աթէնքում եւ դեռ չէին յաջողուած: Ի՞նչպիսի ռումբեր էին պէտք մեզ, որ այդքան դժուար էր ձեռք բերելը: Եթէ ուշադրութիւն դարձրիք վերեւում յիշուած յատկութիւններին եւ մտաք նրանց իսկական նշանակութեան մէջ, ապա պարզ է, որ գլխաւորը, նրանք պէտք է լինէին աւտոմատ բռնկող, այն է՝ առանց լուցկիի, առանց վառուող գլանիկի կամ այլ տեսակ դրսից եկող կրակի. Այդպիսի ռումբեր նորութիւն չէին մեզ համար: Թէեւ մեր մէջ մասնագէտ չունէինք, բայց գիտէինք սխեմատիկ կերպով Ռուսաց յեղափոխականների Ալ. IIի վերայ գործադրուած ռումբերի ե'ւ ձեւը ե'ւ կերպը չլինելու: Եւ նրանք, կարելի է ասել, որ անվրիպութեան կողմից վստահելի են կատարելապէս, քանի որ դրսից կապուած կամ ներսը լեցուած արճիճին ծանրութիւնը ի՛նչ ուղղութեամբ էլ վայր ընկնի, նա իսկոյն կը կոտրէ ապակեայ սրուակը եւ ածխաթթուն, դիպչելով բերթոլ. ազի եւ ամմոնիոմի խառնուրդին, վայրկենապէս կը պայթեցնէ ռումբը: Բայց այդ կամ այդ ձեւի ռումբերը գործածելի են Պետերբուրգում բայց ո՛չ Պոլսի պայմաններում: Դրանք համապատասխանում են մեր վերեւում յիշած պայմանների 3րդ կէտին, բայց 4րդին — ո՛չ. այն է՝ ապահով չեն վաղաժամ բռնկելուց:

Բաւական է մի քիչ թէ շատ ուժեղ ցնցում այդպիսի ռումբի, մանաւանդ կառքի մէջ, մանաւանդ Պոլսի խորդուբորդ փողոցներում, որ այդ ցնցումից ապակին կոտրի եւ վաղաժամ պայթում առաջ գայ: Ռուս յեղափոխականները իւրեանց ռումբերը՝ Կիբալչիչի ձեւի՝ միշտ ուռով (?) են տանում, ձեռներին՝ թաշկինակի մէջ կապուած եւ զգոյշ են գնում, չայրթաքելու, չդիպչելու մէկին: Այդ ձեւի ռումբերը մենք փորձել ենք Բազուում, մասնագէտ ինժին. Ֆ.ի մօտ, եւ ձեռքի միջակ ցնցումից իսկ կոտորուել է եւ վաղաժամ պայթում տուել:

Հին ձեւի ծծաւոր ինձորները, ամէն մի ծծի վերայ մի մի փոքրիկ «պիստոն» անցկացրած, անպէտք էին մեզ համար, քանի որ ճանապարհը ուր պիտի նետուէին նոքա, ամէն ուրբաթ, Նժոյգի իջնելուց մի քանի րոպէ առաջ, թարմ աւազի շերտով է ծածկւում: Այդպիսի փափուկ տեղի վերայ նոքա չեն պայթի:

Երկրորդ տեսակի ծծաւոր ռումբերը, առանց ծակերի ծծերի մէջ, դրուած մի երկրորդ ամանի մէջ — դարձեալ անպէտք էին, քանի որ դրսի ամանը եւ ծծերը այնքան տեղ էին բռնելու ի հեճուկս ներսի բո՛ւն ռումբի, որ վերջինս, այսինքն ռումբը, լինելու էր շատ աւելի փոքր, հազիւ 100 գրամ պարունակող: Եւ այդ ռումբերն էլ պիստոններով լինելով, ահագին տոկոս վրիպումներ են տալիս:

Մակեդոնացոց ռումբերը, խորանարդաձեւ կամ կլոր պատրոյգով բռնկուող, ինչպէս ասացինք՝ չէին կարող գործածուել, քանի որ պաւիլիոնի մէջ, Սուլթանի անցնելու ժամանակ, կրակ վառել, գլանիկ ծխելն արգելուած է:

Ահա թէ ինչո՛ւ հարկաւոր էր մեզ մի նոր ձեւի, մեր գործի բացառիկ պայմաններին յարմարուող խընձորներ գտնել եւ այդ ուղղութեամբ ահա թէ ինչո՛ւ այդքան երկար փորձեր էին կատարւում առանց արդիւնքի հասած լինելու:

Ով ուշի ուշով հետեւել է թէ՛ Ռուսաստանում եւ թէ արտասահմանում վերջին տարիներին ռումբերով կատարուած մահափորձերին, նա անշուշտ նկատած կը լինի ահագին մեծ տոկոս անյաջողութիւնների:

Ռումբը ձեռքի եւ կատարելագործուած զէնք է: Ռուսաստանում նետուած 100 ռումբից հազիւ 20ն է պայթած եւ այդ 20 պայթածից էլ հազիւ 5ը՝ նպատակին հասած: 100ից ուրեմն 5ը միայն յաջող՝ դա անվստահելի զէնք է այսպիսի ձեռնարկների համար, որոնց կրկնելը եթէ անհնարին չէ, առ նուազն շատ է դժուար: Ահա թէ ինչո՛ւ էլենի իսկ խօսքերով ասուած,— «Մեզ հարկաւոր են ռումբեր, բայց այնպիսիք, որ եթէ 20 հատից վերցնենք 10ը եւ նետենք, տասն էլ պայթեն»: Այն ինչ Վառնայից եկած լուրերը՝ մեր ընկերներից ասում էին, իրանց փորձերի մասին, թէ հասը հատ ձգեցինք, 5ը չպայթեց, 1ը կոտրուեց, միւսը միայն վառուեց, երրորդն էլ չգիտենք ի՞նչ եղաւ. 2ը միայն պայթեցին»:

Տասի չափ օժանդակ ընկերներ՝ ներսի ճնշող պայմանների տակ նեղւում էին, ամիսներով փակուած դըրութեան մէջ: Բուխարեստի ուսանող բժիշկ Ջահիլը, որի համար հովանոցի փոքրիկ խանութ էինք բացել «Եուքսէկ կալտրըմի» վերայ, իբրեւ Ռումանացի, 7-8 ամիս այնտեղ փակուած էր համարեա. միւսը՝ սրճարաններում, երրորդը՝ կորուած մեզանից, իբրեւ յոյն, յոյների շրջանից դուրս գալ չէր կարող եւ հազիւ մի անգամ պատահել էր մեզանից մէկին՝ մէկ-երկու խօսք խօսելու: Ոչինչ որոշ բան չէինք կարող ասել նրա հարցին՝ ե՞րբ, ե՞րբ է լինելու: Նրանք սկսեցին տրտնջալ դանդաղութեան մասին: Ոսկեհանքը միւս կողմից նեղում էր մեզ իւր պահանջներով՝ թոյլ տալ նրանց շուտով կատարելու,— «հակառակ դէպքում, մենք չենք կարող երաշխաւորել, — գրում էին նոքա, — չենք կարող երաշխաւորել գործի յաջողութիւնը. կարող է վիժել»: Նա, եւ մի շարք ուրիշ պատճառներ, հրամայող պահանջ դրին մեր վերայ, դուրս ելնելու մեզանից մէկին՝ ղեկավարելու եւ շտապեցնելու դրսի փորձերը: Մանաւանդ երբ նոյն օրերին լուր առինք, որ դրսի ընկերները՝ Սարգիս, Լեւոն, Կարօ, Վառնայում, ռումբերը ձեռներին, փորձերից վերադառնալիս, ձերբակալուել են եւ նրանցից մէկի մօտից գտնուել են Պոլսի մեր հասցէները: Ստիպուած եղանք անմիջապէս տեղափոխել ապրանքները Ժօրէսի տանից՝ առանձին վարձուած տուն, Աշոտի եւ Տիկ. Միշէլի բնակարանը, փոխել հասցէները, նոր տուփեր վերցնել եւ աւելի եւս շտապել դէպի Բուլղարիա՝ փորձերը շարունակելու եւ արագացնելու: Ռումբի փորձերից բացի, անհրաժեշտ էր նկատուած ռեւէ մասնագէտի հետ խորհրդակցիլը թէ՛ ռումբի եւ թէ, գլխաւորապէս, կառքի մասին: Ռումբերից էլի, թէեւ քիչ, հասկանում էինք, բայց կառքը, իբրեւ մի բոլորովին նոր ձեռնարկ, ոչինչ դրական չէինք կարող ասել նրա դետալների(15) մասին: Իբրեւ Ֆրանսագէտի, որ Պարիզ կամ Ժընեւ հանդիպի կառքը պատրաստել տալու եւ մասնագէտների հետ խորհրդակցելու, որոշուեց ուղարկել էլլէնին: Եւ նա ճանապարհ ընկաւ օրդ. Ռուբինայի հետ դէպի Ֆիլիպէ, ուր եւ սկսեց փորձերի նոր շարք: Փորձերի պատրաստութիւնները երկարեցին սպասուածից աւելի, քանի որ էլլէնը, քաջ տեղեակ մեր գործի համար պահանջուած ռումբերի յատկութիւններին, մի վերին աստիճանի տաղանդաւոր գիւտ էր արել՝ նոր աւտոմատ գըլխարկներ հնարելով ռումբերի գլխին եւ այդ իւր գիւտի մշակումով եւ աստիճանական կատարելագործումով էր զբաղուած Ֆիլիպէի ընկերների՝ Անտոն Գոչի, Գիոնի եւ Երուանդի բոլորանուէր գործակցութեամբ (յաջոյ եւ, ի հարկէ, Սարգիսի եւ Ռուբինայի):

Երկու ամսի չափ այնտեղ անցկացնելով, էլլէնը կատարել էր արդէն փորձերի առաջին շարքը՝ թաթար Բազարճիկի կայարանի մօտ: Եւ այդ մասին հաղորդելով մեզ, Գոչը, գրում էր, որ փորձերը վատ չեն, բայց դեռ պակասներ ունին եւ իմ՛ էլ յոյս ունի այդ շուտով լրացնել վերջին փորձերով, որի համար նա պատրաստւում էր:

Վերջին փորձերը տեղի ունեցան Սոֆիայում, Կընեաժնոյ (?) ամբարանոցի մօտ, Վիտոշի բլուրների վերայ, եւ ինչպէս յայտնի է արդէն, վերջացան մեծ ազդեցութեամբ: Այդտեղ Ցուց. Մարմինս կորցրեց իւր երկու ամենահեղինակաւոր եւ գործող ընկերներին, որոնք զոհ գնացին նետուելիք ռումբի վայրկենական պայթումին: Էլլէնը, ցանկանալով իւր փորձերով հասնիլ աւելի եւ աւելի կրճատման՝ ռումբի ընկնելու եւ պայթումի մոմենտի [միջեւ], այդպիսով մօտեցնելու պատրոյգաւոր ռումբի պայթումը՝ հեղուկաւորի կամ կապսիլաւորի, վերցրել է շատ կարճ՝ 2½ սանտիմետրի պատրոյգ: Եւ պատրոյգի այդչափ կարճութիւնից, տեղի անյարմարութիւնից, կապսիլի լայնութիւնից, այլեւ նետողի՝ Վռամչապուհի անփորձ լինելուց, ռումբը պայթել է վերջինի ձեռի մէջ, որից եւ տե՛ղն ու տեղը զոհուել են երկուսն էլ: Նոյն այդ փորձին նետուել է նախապէս եւս մի ռումբ, որը չէ պայթել: Աղէտի պատճառներից մէկն էլ եղել է պատուէրը՝ նախ քան «խշշոց» լսելը չնետել ռումբը: Խշշոցը առաջ է գալիս բերթոլեան ազի եւ ամմոնիոմի (սպիտակ փոշի) բռնկումից, ծծմբաթթուի հետ միանալու պատճառն:

Սոֆիայի աղէտի լուրը չանթահար է անում Պոլսի ընկերներին, որոնք, անհամբեր, սպասում էին յաջող լուրերի: Վռամը դուրս էր եկել Պոլսից Արեւմտեան Բիւրոյի պահանջով, Ցուցականի կողմից Խորհրդին մասնակցելու՝ իբրեւ վերջինի ներկայացուցիչը: Երկու ամենաուժեղ եւ եռանդուն ընկերների կորուստը, այդքան ողբերգական, չափազանց զգալի էր մեր փոքրիկ խմբակի համար, կանգնած ծանր խնդրի առաջ: Բայց եւ այնպէս, աւելի ճիշդ է՝ ա՛յդ իսկ պատճառով, որոշուեց շարունակել գործը մինչեւ վերջը, թէկուզ մի մարդ մնար: Տրտնջացող օժանդակ ընկերների ձայնե-

ը լուեցին։ Այսպիսի աղէտի առաջ՝ նոքա խոստացան անտրտունջ ապասել որքան հարկաւոր լինի։ Որոշուեց Սաֆոյին չտալել Սոֆիա՝ աղէտի վայրը եւ միեւնոյն ժամանակ փոխարինել ընկած ընկերներին թէ՛ փոքրերի եւ թէ Խորհրդի համար։ Մասնաւորապէս՝ մասնագէտներ գտնելու եւ նրանց հետ խորհրդակցելու ուժերի եւ կառքի մասին, ինչպէս եւ պատուիրելու կառքը Եւրոպայում։ Սոֆիայում Սաֆոն գտաւ արդէն Բժ. Հ. Ցով.-ին, Սարգիսին եւ Արամին (?), Բիւրոյի անդամ Ռոստոմին եւ Մ.-ին, որոնք եկել էին Ժընեւից, լսելով աղէտի շուրջ, վերջին հրաժեշտը տալու ամբողջ Դաշնակցութեան երախտաւոր եւ տաղանդաւոր գործողի, հիմնադիրներից մէկի՝ Քրիստափորի՝ այդքան վաղաժամ իրանցից բաժանուած ամիւնին(16)։

Սաֆոն, անկախ Խորհրդից, պարտաւոր էր արդէն գնալ Ժընեւ եւ Պարիզ՝ Ցուցականի գործով, մասնագէտների հետ խորհրդակցելու։ Ժընեւում տեղի ունեցած Խորհրդի այսպէս ասած կրկնութեանը, Սաֆոն հարց է դնում Արեւմտեան Բիւրոյի առաջ, թէ հարկաւոր է լրացնել Ցուցականի ընկած ընկերների տեղը՝ էլէնին եւ Վռամին փոխարինող ընկերներ տալով, քանի որ Սարգիսը, որը համաձայնութիւն տուել էր Սոֆիայում գալ մեզ հետ, ցանկութիւն չունի այլեւս գալու։ Նրան քաշում է աւելի Երկիրը ու նա Երկիր պիտի գնայ. հետեւապէս, համաձայն կանոնադրութեան, Պատասխանատու Մարմնի կազմի պակասը լրացնելու պարտականութիւնը Բիւրոյի կամ Խորհրդի վերայ է։ Լռութիւնն եղաւ այդ պահանջի պատասխանը։ *Նոյն հարցը դրել էր եւ ընկեր Անտոնը (Սիմ. Զաւարեան) Լեռնավայրից ուղարկած մի նամակով, թէ հարկաւոր է լրացնել Ցուցականի կազմը, բայց ցանկութիւն յայտնող չեղաւ, եւ մենք շարունակեցինք մեր գործը եղած ուժերով։*

Ամենագլխաւոր մեր հոգսն էր՝ տեսնել մի լուրջ մասնագէտի եւ խորհրդակցել հետը։ Արեւմտ. Բիւրոն այդ բանը յաջողեցրեց, հրաւիրելով խմբագրատուն Ս. Ռուերի՝ յայտնի մասնագէտ, թէորետիկ եւ պրակտիկ(17)*, Պլեւէի եւ Սերգէյի յաջող գործերին մասնակից, յայտնի Գիբալշիչի գործելակերպի շարունակող, — ինչպէս ներկայացրեց մեզ Բիւրոյի անդամ Ռոստոմը։*

Եւ մենք, Ռ.-ի եւ բժ. Հ. Ցով.-ի ներկայութեանը, Ժընեւում, խմբագրութեանը մէջ, հարցրինք նրա կարծիքը ռումբերի մասին, թէ ինչպիսի՛ կեղեւը նա գըտնում է ամենալաւը, ինչպիսի՛ մեծութիւն, նիւթի քանակ եւն.։ Եւ նա մեզ յայտնեց, թէ ասիատի վերայ գնալիս չի կարելի վստահիլ ռումբի բեկորների վերայ, որոնց դիպչելը խիստ թէական է, որ գլխաւոր մահացու գործօնը օդի ցնցումն է եւ նրա վերայ պէտք է լինի յոյսը, քանի նա վրիպում չունի։ Այդ նպատակով բոլորովին միեւնոյնն է, թէ ի՛նչ պատեր ունի ռումբը՝ հա՞ստ, թէ բարակ, ա՞յս թէ այն մետաղից. հարկաւոր է միայն, որ մէջի նիւթը որքան կարելի է առատ լինի։ Այսպէս խօսեց մասնագէտը։

«Մենք գործածում ենք, — շարունակեց նա, — ռումբեր հասարակ թիթեղեայ ամանի մէջ, 5 ֆունտ քանակութեան դինամիտով... Այդպիսի ռումբեր էին Պլեւէի եւ Սերգէյի ռումբերը»։

Ահա՛ առաջին, խոշոր հարուած մեր ռումբերի հասցէին, որոնց վերայ այնքան չարչարուել էինք, այնքան ժամանակ կորցրել եւ երկու թանկագին ընկերներ զոհ տուել։ 5 ֆունտ նիւթ,— բայց դա 2000 գրամ կ'անի, իսկ մենք 300-400 գրամից անդին անցնել չէինք կարող...։

Դուրս եկանք մասնագէտի հետ պարտէզը, աւելի ազատ խօսելու, եւ մեր ներկայացուցիչը տուեց նրան լուծելու հետեւեալ խնդիրը.—

«Երեւակայեցէ՛ք, — խօսեց Սաֆոն դիմելով մասնագէտին, — թէ այստեղ (ցոյց տալով խմբագրութեան պարտէզի մի կէտը) դրուած է մի ինտուկ թիթեղեայ՝ մէջը 100 կիլօ (մօտ 250 ֆունտ) մելինիթ եւ նա պայթում է, իսկ ես կանգնած եմ այստեղ (ցոյց տալով խմբագրութեան դէպի պարտէզ բացուող դուռը), մօտ 30 մետր հեռաւորութեան վերայ։ Խնդրում եմ յայտնել ձեր հեղինակաւոր կարծիքը, կարո՞ղ է պատահել, որ ես կենդանի մնամ այստեղ, այդ ինտուկի պայթումից վերջը։

— Ոչ միայն դուք չէք կարող կենդանի մնալ ոչ մի դէպքում, — *շտապեց պատասխանել մասնագէտը,* — այլ այս ձեր ամբողջ խմբագրատունը (*եռայարկանի չէնք*) օդը կ'ելնէ մի այդպիսի քանակութիւնից։

Մի քանի ուրիշ մանր հարցեր նոյնպէս տալով եւ պատասխան ստանալով, բաժանուեցինք։

Եւ այդ կերպ կտրուկ պատասխան տուողը մի հեղինակաւոր մասնագէտ է, ինչպէս ասացինք՝ Արեւմտեան Բիւրոյի յանձնարարածը, Պլեւէի եւ Սերգէյի յաջող գործերի տեխնիկական մասի հեղինակը։ Եւ նա Ռ.-ի եւ բժ. Հ.-ի ներկայութեանը, մեր դրած հարցերին պատասխանեց յստակ եւ կտրուկ.

1) *Ռումբի պատերի բեկորների յոյսով չի կարելի անհատի վերայ գնալ։*

2) *Որ իրանց գործերի յաջողութիւնը պարտական են 2 կիլօ նիւթի քանակութեանը, նրա պայթման ոյժից առաջացած օդի սաստիկ ցնցմանը։ Ի դէպ է ասել, որ Ալ. II-ին գլորող ռումբերն էլ եղել են 5 ֆունտ նիւթով (տես «Գրյլոս Մարդ» ?, երես 20-30)։ Այդ 2000 գրամի փոխարէն մենք կարող էինք ներս մտցնել՝ այն էլ ա՛յնքան դժուարութիւններով եւ դեռ տեղ չը-հասած բռնուելու վտանգով՝ միայն 300-400 գրամնոց ռումբիկներ, որոնք առաջինների հետ համեմատած ուղղակի խաղալիքներ կարող են համարուել։ Իսկ երկու կիլոնոց ռումբ երբեք, երազել անգամ չի կարելի պաւիլիոն մտցնել։ Ուրիշ բան է Ս. Ռ.-ներինը՝ որոնք գործում են ազատ փողոցով, կարող են ձեռներին ուենալ եւ 2 եւ 5 կիլոնոց ահագին կապոցներ,— ուրիշ բան է Սելամլըքի պաւիլիոն մտնելը՝ ուր հովանոցդ էլ են ձեռքիցդ առնում, դիտակդ էլ. եւ շրջապատում՝ քեզ խորը թափանցող հայեացքով [դիտող] տասնեակ սրական խաֆիաներ...։*

Գալով կառքի խնդրին, մասնագէտի խօսքերը աւելի կտրուկ եւ որոշ էին, ո՛չ մի կասկած չթողնող — թէ 100 կիլոն մի քանակութիւն է, որը 30 մետր շառաւիղով ոչ միայն մարդը, այլեւ եռայարկանի տունը օդը կը հանէ։

Այս բոլորը, ինքն ըստ ինքեան հասկանալի է, պիտի տակն եւ վերայ անէին մեր նախագիծը՝ տեղափոխելով ծանրութեան կեդրոնը պաւիլիոնից դէպի կառքը. այսինքն մանր ռումբերից դէպի խոշոր, հակայական ռումբը։

Մենք ԱՔԷՆՔի փորձի անյաջողութեան տակ, կառքը իբրեւ չփորձուած մի գործ, վախենում էինք վըստահիլ նրա վերայ։

Արդ, մասնագէտի այսպիսի դնահատումից վերջը, մեր երկու զէնքերի մասին, իրաւունք չունէինք չարունակել դարձեալ ռումբերը ճանաչել իբրեւ առաջնակարգ զէնք՝ կառքի դիմաց(18)։ *Ոչ բարոյական եւ ոչ գիտական հիմունք չունէինք՝ չընդունելու եւ չդեկավարուելու յայտնի մասնագէտի խորհուրդներով։*

Բայց այդ բոլորը չէ։

Գործի պատասխանատուութեան ծանրութիւնը այնքան էր իշխող, որ չնայած այդ մասնագէտի վըճռական խօսքերին, մենք հարկաւոր համարեցինք մի այլ աղբիւրից եւս ստուգել, նոյն հարցերով՝ մի այլ մասնագէտի եւս դիմել։ Այդ իսկ նպատակով Սաֆոն բժ. Լորիսի հետ գնում է Պարիզ՝ մասնագէտ գտնելու եւ խորհրդակցելու, ստուգելու առաջինի ասածները։ Նաեւ կառքի մասին հոգալու։ Այնտեղ, բժ. Լորիսի յանձնարարական նամակով նա ներկայանում է Պարիզի բարձրագոյն դպրոցի պայթուցիկ նիւթերի քիմիկոս պրոֆեսոր Բոգանովիչին, ազգով լեհացի, որը լինելով նոյնպէս խառնուած յեղափոխական գործերի մէջ, սիրով ընդունում է Սաֆոյին եւ պատրաստակամութիւն յայտնում բաւարարութիւն տալու մեր հարցերին։

Սաֆոն այս անգամ հարցը դնում է նրան ուրիշ ձեւով. խնդրում է հաշուել եւ որոշել նիւթի այն քանակութիւնը, որը անպայման բաւարար պիտի համարուի 30 մետր շառաւիղով շրջանում ամէն ինչ ոչնչացընելու...(19)։

2) *Ինչպիսի՞ յարաբերութեան մէջ է գտնուում նիւթի քանակը ամանի պատերի ամրութեան հետ։*

3) *Հարց ռումբի մասին,— ի՞նչ տեսակ ռումբ եւ ի՞նչ մեծութեամբ նա ամենավստահելին է համարում, եւ ինչպիսի՞ կեղեւով։*

4) *Պայթուցիկ անդիկի յարաբերութիւնը դէպի պայթող նիւթի քանակը։*

5) *Մելինիթի կամ պայթուցիկ անդիկի խոնաւութեան հարց։ Ի՞նչպէս իմանալ նրանց խոնաւացած լինելը, եւ մի քանի ուրիշ մանր տեխնիկական հարցեր։* Պրոֆեսորը, *լսելով բոլորը, խնդրում է երեք օր ժամանակ այդ բոլոր հարցերին ճշգրիտ պատասխան տալու համար, եւ նկատելով Ս.-ի անհամբեր «երե՛ք օր» բացականչութիւնը — աւելացնում է, թէ իրան թւում է, թէ ես լուրջ ձեռնարկի համար է եւ նա չէր ցանկանայ մի այսպիսի հարցի պատասխանել յիշողութեան վերայ միայն հիմնուած. «Իսկ եթէ կամենաք, ես աւելի շուտ կ'ասեմ ձեզ, նոյնիսկ այսօր»,* — վերջացնում է *խօսքը Բորանովիչը։ Սաֆոն ներողութիւն խնդրելով իւր ակամայ անհամբերութեանը համար, հեռանում է, երեք օր վերջը գալու պայմանով։*

Երեք օրից, ճիշդ նշանակուած ժամին, Ս.-ն լսում է պրոֆեսորի հետեւեալ պատասխանները.

1) 30 մետրի շառաւիղով, որպէսզի ոչինչ չմնայ կենդանի, ամէն ինչ ոչնչանայ, բաւական է 12-15 կիլօ մելինիթ, եթէ լաւ տեսակից է։ Զգուշութեան համար լաւ է վերցնել 20 կիլօ։

— Հարց.— *Ի՞նչ է նշանակում «լա՛ւ»։ Մեր ունեցածը փոշիանման նիւթ է։*

— Պատ.— *Որքան օտար խառնուրդը քիչ լինի, այնքան աւելի լաւ է մելինիթը։ Կարող է խառնուրդը լինել շատ, բայց ցածր ոյժի մելինիթ լինել։ Մաքուր փոշիանման մելինիթը եթէ հալուած վիճակի մէջ լինի, ժըլէնանման*(20)*, նա աւելի ուժեղ է՝ մօտ 25-30% փոշիանմանից։*

Գալով պայթուցիկ անդիկի քանակին. կարելի է հաշուել այսպէս,— 2-ից 3 գրամ իւրաքանչիւր կիլոյին(21)։

«Ինչ վերաբերում է անտուկի պատերին, — *շարունակում է պրոֆեսորը, — պէտք է ասել, որ ես մասնագէտ չեմ այդ հարցում, դրա համար էլ անկարող եմ ձեզ պատասխանել, թէ ի՞նչ հաստութեան կամ նիւթից պէտք է լինի նա։ Այսքանս միայն կարող եմ ասել, որ նշանակութիւն ունի դիմադրութեան աստիճանը։ Որքան մեծ լինի նա, ի հարկէ որոշ սահմաններում, այնքան աւելի կարելի է վստահել, թէ նիւթը ժամանակ կ'ունենայ ամբողջը գազանալու. հակառակ դէպքում, կարող է լինել մասնակի պայթում, ա՛յլ, ինչպէս այդ եղել է ամենայն հաւանականութեամբ, ձեր պատմածներին նայած, ԱՔԷՆՔի փորձում։*

«Իսկ ռումբերի մասին ես այն կարծիքին եմ, որ բեկորների վերայ չէ որ պէտք է յոյս դնել, այլ նիւթի քանակի»։ Եւ նա պատմեց համարեա նոյնը, ինչ որ Ժընեւում Ս. Ռուերի մասնագէտն էր ասել, որին, նա յայտնեց, որ ինքն էլ ճանաչում է, իբրեւ լաւ մասնագէտի։

Բաւարարութիւն տուեց եւ միւս հարցերին, թէ ի՛նչպէս խոնաւութիւնը չափել մաթեմատիքական կըշ-

ռով, ո՛րտեղ կարելի է դնել այդ կշիռը, ի՛նչ ճշդութեան կշիռ է պէտք, ի՛նչպէս որոշել խնայուութիւնը եւն.: Պատմեց նաեւ թէ ի՛նչ կերպ հալել եւ ժըլէ դարձընել փոշիանման միլինիթը: Մի ժամից աւելի խօսելուց վերջը Սաֆոն դիմում է պրոֆեսորին՝ յուզուած.

«Պրն. Բոբանովիչ, դուք յայտնեցիք թէ 15–20 կիլոն բաւական է 30 մետր շառաւիղով տարածութեան համար ամէն ինչ ոչնչացնելու:

Դուք տալի՞ս էք գիտնականի խօսք, որ եթէ 20ի փոխարէն 100 կիլո լինի — ոչինչ կենդանի մնալ այդ տարածութեանը վերայ չի կարող»:

Բոբանովիչը զարմացական շարժումով պատասխանում է. «Այդ խօսքը ձեզ դիտութիւնն է տալիս: Եթէ կամենաք՝ ես ձեզ այս բոպէիս կը բերեմ այն ֆորմուլները եւ հաշիւները...»: Եւ նա շարժւում է դէպի գրադարանը, բայց Ս.ն ներողութիւն եւ շնորհակալութիւն յայտնելով, թողնում է պրոֆեսորին ու վազում բժիշկ Լորիսի մօտ, պատմում է նրան իւր ստացած ուրախալի լուրը: Նոյնը գրում է նա նոյն օրը եւ ժըռնէ՝ խմբագրութեան, աւելացնելով, որ ուղեւորւում է դէպի Վիեննա, այնտեղ կառքի գործը կարգադրելու, քանի որ Պարիզից, ինչպէս երեւում է, դէպի Պոլիս կառք չէ ուղարկւում. Վիեննայից են ստացւում այդ տեսակի ապրանքները:

Այդպիսով ռումբերի հարցը ստացաւ երկրորդ հարուածը, իսկ կառքը, ընդհակառակը, երկրորդ անգամ եւ շատ կատեգորիք, նկատուեց անպայման մահացու, ճոյնիսկ 20 կիլո նիւթով. իսկ մենք 20ի տեղ 124 կիլո լցրինք, խարիւր քսանչորս...

Ինչպէս նկատեցիք, առաջին մասնագէտին ժընեւում տրուած էր քանութիւնն եւ շառաւիղը եւ հարցնում էր՝ որոշել ազդեցութիւնը:

Պարիզում, ընդհակառակը, պրոֆեսոր Բոբանովիչին տրուեց միայն շառաւիղը եւ հարցուեց որոշել նիւթի քանակը՝ այդ շառաւիղի շրջանում ամէն ինչ ոչնչացնելու: Եւ երկու մասնագէտներ՝ տարբեր քաղաքներում, մէկը Ժընեւ, միւսը Պարիզ, տուին համաձայն եւ միակերպ դրական պատասխան կառքի վերաբերութեամբ՝ խիստ որոշ, խիստ բացարձակ, որպէսզի որեւէ կասկածի տեղիք լինէր այլեւս: Երկու յայտնի մասնագէտներ միաձայն յայտնում են՝ փոքրիկ ռումբերի վերայ մի՛ յուսամ:

Երկու հեղինակաւոր մասնագէտներ միաձայն ասում են՝ 120 կիլոն անպայման, անպայմա՛ն մահացու է, եւ այն՝ առանց բեկորների, առանց երկաթի, այլ միայն օդի փոթորկային ցնցումով, որը՝ օդը՝ ամէն տեղ է եւ ուրեմն վրիպում չունի 30 մետր շառաւիղով մի շրջանում,— այն է՝ 45 քայլ ամէն կողմ, իսկ մեզ 20–25 քայլ է միայն բաժանում կարմիր Սուլթանից:

Բայց նա այնուամենայնիւ մնաց կենդանի:

Սխալուա՞ծ էին մասնագէտները, խաբեցի՞ն արդեօք մեզ: — Ո՛չ մէկը եւ ո՛չ միւսը: Ազէտին իսկական պատճառը, սոսկալի պատճառը, խելքից ու մտքից դուրս, իրա տեղում կը յայտնուի:

Դառնանք մենք մեր պատմուածքին:

Այդ երկու ստուգումներից վերջը այլեւս ոչ մի կասկած չէր կարող մնալ գործի անպայման յաջողութեանը:

Սակայն... դարձեալ եւ դարձեալ գործի պատմական նշանակութիւնը ստիպեց մեզ մի անգամ եւս, երրորդ անգամը, նորից ստուգել երկու մասնագէտների միաձայն որոշումը, այս անգամ արդէն անձնական փորձով: Սեփական ձեռքով, սեփական աչքերով ստուգել, թէ արդեօք ճի՞շդ է որ մելինիթը առանց բեկորների, միայն օդի ցնցումով, կարող է խորտակել մարդուն, կենդանուն, որեւէ տարածութեան վերայ՝ մէկ մետր, 3, 5 մետր, 10 մետրի վերայ, օրինակ:

Եւ այդ բոլոր տարածութիւնների վերայ մեր ձեռքով կատարուած փորձերը վերջնականապէս հաստատեցին օդի մահացու ցնցման իրականութիւնը: Եւ ինչո՞ւ զարմանալ, երբ փոթորիկը հաստատուած կաղնիները արմատախիլ է անում, ջարդում, տապալում: Մենք այդ գիտէի՛նք, բայց եւ այնպէս հարկաւոր էր աչքով տեսնել արհեստական փոթորիկի առաջացրած ոյժի բազում անգամ աւելի ուժգին լինելը բնական փոթորկից:

Վիեննայում կառքը պատրաստել տալուց եւ Պոլիս ճանապարհելուց վերջը, Սաֆոն գալիս է Սոֆիա եւ ձեռնարկում մի շարք փորձերի՝ պայթուցիկ նիւթերի վաճառող ոմն Տիֆալչեւի եւ մեր Մակեդոնացի ընկեր Լիապոյի հետ միասին: Տարածուած կարծիք է շատերի մէջ, թէ պայթուցիկ նիւթերը ներգործում են ինչ որ մի առանձին, ուրոյն օրէնքով, որ նրանք իրանց ուժը ուղղում են դէպի դիմադրութիւնը եւ ո՛չ հաւասար ամէն կողմ: Ուրեմն եթէ մէկ կողմից նիւթը կոթնած է պատի, իսկ միւս կողմը ազատ տարածութիւն է, իրը ուժանակի ամբողջ ազդեցութիւնը ուղղւում է դէպի այդ պատը, դէպի արգելքը: Դա անպայման սխալ է եւ ապացուցուած բազմատեսակ փորձերով: Պայթուցիկ նիւթերի ոյժը, ընդհանուր օրէնքների համաձայն, ուղղուած է նուազագոյն դիմադրութեան կողմը, ուրեմն օդի կողմը աւելի լայն՝ քան պատի կողմը: Բայց պատը փուլ գալով ակներեւ է դարձընում մեզ համար նիւթի ազդեցութեան ենթարկուած լինելը, իսկ օդը, որը աւելի եւս մեծ հարուած է ստացել իրրեւ գազ, վայրկենական կերպով ընդունում է իւր նախկին դրութիւնը եւ մեզ համար թողնում անյայտ՝ իւր կրած մեծ փոփոխութիւնները:

Սոֆիայում, Սաֆոն յիշեալ անձերի հետ բազմատեսակ փորձեր է անում քաղաքից դուրս: Պայթեցնում է 60–65 կիլո, մօտ 4 փութ միլինիթ. սպանում են 1 գառ եւ 3 ձի՝ միայն եւ միայն օդի ցնցումով:

1)	2 կիլո մելինիթը, լցուած հասարակ թիթեղից չինուած արկղի մէջ, մահացու վէրքեր տուեց ձիուն՝	1½ մետրի	վերայ
2)	4 կիլոն	2 »	»
3)	4 կիլոն	3 »	»
4)	5 կիլոն	4,3 »	»
5)	14 կիլոն	10 »	»

Բացի այդ, հաստատուեց պրոֆեսորի խօսքերը՝ խոնաւացած մելինիթի ոյժի պակասելու կամ ի սպառ չպայթելու մասին: Այսպէս, 30 կիլօ մելինիթը, պատահաբար անձրեւի տակ բռնուելով, լաւ թրջուեց եւ երբ պայթեցրինք, աւելի պակաս ոյժ արտայայտեց, քան 14 կիլոն՝ թրջուած լինելու պատճառաւ, պայթեց միայն ներսի չոր մնացած մասը, դրսի շերտերը չպայթեցին:

Այսպիսով, երբ անձամբ կատարած այս փորձերը այլեւս ոչ մի կասկած չթողին, որ պայթուցիկ նիւթը, առանց բեկորների էլ, լոկ միայն օդի ցնցման շնորհիւ, մահացու հարուածներ է հասցնում ձիուն իսկ, ո՛ւր մնաց մարդուն, այլեւս նախկին նախագիծ որոշումը չէր կարող մնալ անփոփոխ: Բայց երբ Սաֆոն, չնայած այդ բոլորին, ինքն էլ փորձեց էլլէնի գտած աւտոմատ գլխարկները՝ թեթեւ փոփոխութեան ենթարկելով՝ ամբողջ երկու շաբաթ, եւ սենեակում, սենեկային պիստոններով փորձերը շարունակեց եւ դա՛րձեալ 10ից 4ը կամ 5ը վրիպեցին, երբ կատարելագործելով այդ գլխարկները՝ գնաց եւ բուլղարական սպայակոյտի ռումբերի փորձերի միջոցին ի՛նքն էլ փորձեց նրանց հետ իսկական կապսիլով եւ դա՛րձեալ վրիպում,— այլեւս այդ բոլորից յետոյ կառքը իրաւացի կերպով դրաւեց առաջնակարգ եւ միակ տեղը, դառնալով մեր ամէնքի ուշադրութեան գլխաւոր կեդրոնը:

Եւ այդ օրերին էլ ստացուեց Պոլսի ընկերներից նամակ, որով յայտնում էին, թէ Սոֆիայի ազէտի ազդեցութեան տակ խստութիւններ են սկսուել, թէ զօրքերի դասաւորութիւնը փոխուած է: Կառքի տեղը «Y» փողոցում յետ է տարուած զօրքերի փոփոխութեան պատճառով, իսկ թէ միւս կողմից կառքը կարելի է մօտեցնել աւելի մզկիթի տակի կողմից, Մարգարանի հրապարակի կողմից, *եւ թէ հարկաւոր է շտապել ներս գալ եւն.:*

Որպէսզի հասկանալի լինի թէ այն օրերում ինչպիսի՛ պայմաններ էին տիրում Պոլսում (ոստիկանական խստութիւններն ու բանտարկութիւնները, խուզարկութիւնները՝ նոյնիսկ օտարահպատակների տները եւ դուրս աքսորելը նրանց եւն.), պէտք է այստեղ յիշել, որ որքա՛ն էլ զգուշաւոր կերպով կազմակերպուած էր մեր ապրանքների ներմուծելը, այնուամենայնիւ, երկու անգամ նրանք բռնուեցին ներս մտցուելիս:

Առաջին անգամը մեր գործիքները, ելեքտրական մեքենայի պարագաները, կապսիլներ, դժոխային մեքենայի ժամացոյցներ, պատրոյգներ, հաղորդիչներ — ամբո՛ղջը: Եւ մենք ստիպուած եղանք նորից մեծ դժուարութիւններով ներմուծելու:

Երկրորդ անգամը բռնուեց մեր ռումբերի մի զամբիւղը՝ 15 հատ խնձորներով: *Ամբողջ ոստիկանութիւնը ոտքի կանգնեց: Բանտարկութիւնները սաստկացան: Հասկացուեց, որ հայեր են ուղարկողները եւ ուղարկուած է Վառնայից:*

Երրորդ դէպքը՝ մեր դրսի ընկերների՝ Սարգիսի, Կարոյի եւ Լեւոնի ձերբակալուին էր Վառնայում, ռումբերը ձեռներին,— որի մասին տեղեկութիւն ստացաւ տաճիկ կառավարութիւնը(22):

Սոֆիայի ազէտը, մեր երկու ընկերների հայ լինելը, նրանց անուն ազգանունը լրագրութեան նիւթ դառնալը, Քրիստափորի լուսանկարի այդ օրերին «Դրօշակ»ի մէջ լոյս տեսնելը (Քրիստափորի՝ որը Պուրսում ապրել էր հիւրանոցում եւ ապա, ամբողջ ամիսներ, Ժօրէսի տանը) միւս պատճառների հետ միացած՝ եկան լրացրին տաճիկ կառավրութեան անհանգստութեան չափը եւ գաղտնի ու յայտնի ոստիկանութեան ոտքի ելնելը: Սելամլըքի զօրքերի դասաւորութեան մէջ առաջ եկան փոփոխութիւններ՝ մեր ձեռնարկի համար ահագին նշանակութիւն ունեցող: Սկզբից՝ «Y» փողոցի առաջին ծառի մօտ էր կանգնում հեծելազօրքը. նա յետ բերուեց երրորդ ծառի ետեւը, եւ այդպիսով կառքը հեռացուեց Նժոյգից ամբողջ 30 քայլ: Մարգարանի հրապարակի վերայ հեծելազօրքի շարքերը աւելացան: Դեսպանատների առաջ մի քանի օր, ինչպէս Աշոտն էր գրում, զինուոր-պահապաններ կանգնեցին:

Այդ միեւնոյն ժամանակ մեր ապրանքները, ապահով թագստոցից տեղափոխուում են, Աշոտի նախաձեռնութեամբ, Ժօրէսի բնակարանը. Ժօրէսի՝ որի անցագրով Վառնն էր դուրս եկած եւ այդ նոյն անունով Սոֆիայում ընկած: Եւ այդ անունը լրագրերի նիւթ դարձած եւ տաճիկ կառավարութեան յայտնի [էր]: Հարկաւոր էր իսկոյն եւեթ, առանց ժամանակ կորցընելու, շտապեցնել գործը:

Գալով այն հարցին թէ ինչո՞ւ կառքը միակը դարձաւ, ինչո՞ւ պաւիլիոնից ի սպառ ձեռք քաշեցինք,— եթէ մինչեւ այժմ ասուածներից դեռեւս այդպիսի հարց կարող է առաջ գալ, ապա սա մի հարց է, որը յիշեցնում է մեզ մի առած, թէ փաստ, ինչ որ կայսրի հետ պատահած:

Կայսրին մէկը, բարկացած բերդապետի վերայ, որ նա իւր ժամանելը չէ շնորհաւորել սովորական թնդանօթաձգութեամբ, զայրացած՝ կանչում է իւր մօտ բերդապետին եւ հարցնում դրա պատճառը: Բերդապետը յանցապարտութեամբ պատասխանում է կայսրին, թէ այդ երեւոյթը ունի իւր 15 պատճառները, որոնցից առաջինն է՝

1) *որ անձրեւ է եղել,*
2) *որ կինը հիւանդ է եղել,*

3) *որ թնդանօթը սրբուած չէ եղել,*
...եւ 15) *որ վառօդ չեն ունեցել:*

«Լա՛ւ, — պատասխանում է կայսրը, — հարկաւոր էր միայն պատճառները միւս ծայրից սկսել»:

Այժմ Ընդհանուր ժողովը, ինչպէս կայսրը, թերեւս հարցնէ, թէ ինչո՞ւ պաւիլիոնը թողնենք:

Որովհետեւ՝ 1) ռո՛ւմբ չունէիմք: *Պաւիլիոնի ռումբը, դա Նակաչիմէի ռումբը չէ, ոչ էլ Պլեւէինը, ոչ էլ Ալեքսանդր IIինը: Սուլթանի ռումբը սուլթանական պիտի լինէր եւ այդպիսին մենք, ինչպէս գիտէք արդէն,* 5 *ամսուայ ոսանկակ փորձերով չկարողացանք ձեռք բերել այն անհրաժեշտ յատկութիւններով՝ որոնց մասին արդէն ասուած է իրա տեղում:*

Ամենավերջին փորձերին, Սոֆիայում, երկու նեռատ ռումբերից մէկը չպայթեց. երկրորդը ձեռքում պայթեց. ուրեմն՝ 100% *վրիպում:*

Այդ նշանակում է ռումբ չունէիմք *ուրեմն:*

— *Բայց սա մէկն է* 15 *պատճառներից:*

Մնացած 14*ը սրանից պակաս պատճառներ չեն:*

*Բ) Ռումբ չունենալուց բացի մարդ էլ չունէիմք: Ահա թէ ի՞նչ է ասում Էլլէնի օրով եւ նրա արտագրած արձանագրութեան հետեւեալ կէտը՝ մարդկանց քանակի մասին. «*6 *հոգի պէտք է լինին դեռապանատան սրահում, իսկ պաւիլիոնում՝ ոչ պակաս* 4 *հոգուց. դա ընդարձակ թիւն է, առանց հաշուելու կամանց. կամայք այդ թիւի մէջ չեն մտնում»: 6 հոգուց՝ 2ը ընկել էին Սոֆիայում,* 1*ը՝ Աշոտը՝ անպէտքացել էր, ոտիկանութեան կողմից արդէն նկատուած լինելով: Դրսից մարդիկ խնդրեցին*ք. չտրուեց:

Բայց սա մենք յիշում ենք, առանց ծանրանալու սրա վերայ, ինչպէս բերդապետի պատճառներից՝ «կօշիկի ծակ լինելը»: Եթէ անհրաժեշտութիւն եւ հնարաւորութիւն տեսնէինք, մի հոգի էլ լինէր, այնուամենայնիւ կը գնար: Բայց՝ եթէ ռումբ ունենար եւ եթէ հնարաւոր լինէր ներդաշնակել կառքի եւ պաւիլիոնի հարուածները:

3) *Կառքի տեղը ստիպուած էինք փոխել «Y» փողոցից, ուր նա յետ տարուեց* 20–30 *քայլ: 30 քայլ՝ կը նշանակէ* 113·000 *խրանարդ* (?) *քայլ տարածութիւն կորցնել: Այն ինչ՝ հնարաւորութիւն ստացուեց կառքը կանգնեցնել Մարզարանի պարտէզի առաջի դրան կըշտին, պատի մօտ եւ այդպիսով վաստակել* 113·000 *խրանարդ–տարածութիւն.* 30–40 *քայլ մօտենալ Նժոյգին:*

4) *Եթէ մարդիկ էլ լինէին, այլեւս պաւիլիոն չէինք ուղարկի, քանի որ կառքի ոյժը,* 30 *մետրի վերայ ամէն ինչ ոչնչացնելուն, ոչ մի կենդանի արարած չթողնելուն վստահ էինք եւ հաւատացած եւ իրաւունք չունէինք չհաւատալու: Տեղափոխելով կառքի տեղը, ստիպուած էինք փոխելու եւ պայթումի ժամանակը, յարմարեցնելով այն՝ նուազագոյն շառաւիղին. փոխանակ աղօթքի իջնելու պահուն, կառքը պարտաւոր էր պայթել մզկիթից վերադարձին: Այլ կերպ լինել չէր կարող,— միայն վերադարձին հնարաւոր էր կառքը* 30 *քայլի չափ մօտեցնել, քանի որ հեծելազօրքի մեծագոյն մասը հեռանում էր:*

Եւ այդպիսով պէտք է անհրաժեշտաբար առաջ կառքը պայթէր, քանի դեռ Նժոյգը նրա շրջանումն էր, դեռ չէր հեռացել կառքից՝ մեր ոյժի գլխաւոր հարուածից: Իսկ երբ կառքը պայթէր, այլեւս պաւիլիոնում մարդ չէր մնալու կենդանի, որպէսզի կարողանար ռումբ նետել:

5) *Եւ ռումբ եթէ ունենայինք էլ, մարդ ունենայինք էլ եւ այդ մարդիկ, հակառակ մեր հաւատին՝ կենդանի մնային էլ, պաւիլիոնից այլեւս ռումբեր նետելու հնարաւորութիւնից զրկուած պիտի լինէինք, քանի որ ռումբերը ինքնին պիտի պայթէին ձեռքերի մէջ, առանց նկատուելու,* դէտոնացիայի(24) օրէնքով:

6) *Իսկ մաթեմատիքական միաժամանակութեան մասին խօսք լինել չի կարող, այդ մենք գիտենք եւ տեսել ենք լայն փորձերով (Էմիլ եւ Ա. Ժօրէս, Մկրտիչ եւ Զարեհ): Մանաւանդ որ պաւիլիոնից մինչեւ Նժոյգը, մզկիթի սրահում,* 60 *քայլ կը լինի. ռումբ նետել չի կարելի* 60 *քայլի վերայ:*

Որը հրամանատարներից կամ զինուորներից իւր ընկերոջ կ'ուղարկէ կանգնելու կամ ինքը կը կանգնի իւր սեփական ընկերների գնդակի տակ: Այդ միեւնոյնը կը լինէր, եթէ մէկը, որ իւր թշնամու փայտեայ

չինութիւնը չորս կողմից քարիւղ ածած պատրաստուել է կրակ տալու, ուղարկէր իւր ընկերոջ ներս, այդ բընակարանը, դաշոյնով կամ ատրճանակով, որ, եթէ տունը վառուի, բայց թշնամին չայրուի տան մէջ, նա, այդ իւր ընկերը, նրան դաշոյնով սպանէ այնտեղ:

Ահա՛ այն պայմանները, որոնք եկան քայլ առ քայլ մինչեւ զորձի վերջնական եւ մանրակրկիտ ուսումնասիրութիւնը, կանգնեցրին մեզ մի հսկայական ռումբի առաջ՝ 8 *փութ նիւթ պարունակող,* 1500–2000*ի չափ երկաթի խոշոր կտորներն էլ վերան աւելացուած:*

Եւ ո՛չ մի նման դաւադրական գործ չէ ունեցել մի այդպիսի քանակութիւն նիւթի, նոյնիսկ ականների մէջ:

Ալ. IIի գլուխ գործոց ականը, որի վերայ է եղել կիբալչիչների, ժելեաբովների գլխաւոր յոյսը, 1 *պ.* 29*ի նիւթ է ունեցել միայն, որը* 25 *կիլօ կը նշանակէ:*

Պետերբուրգի Նեւսկայա կամուրջի ականը, Ալ. IIի համար պատրաստուած, 3 *փուտ*=48 *կիլօ:*

Մոսկուայի երկաթուղու տակի ականը, նոյն Ալ. IIի համար պատրաստուած՝ դարձեալ անյաջող, նոյնպէս 3 *փուտ:*

Իսկ մերը ոչ թէ ական, այլ ռումբ, հսկայակա՛ն ռումբ, երկաթէ անտուկի մէջ, կառքի մէջը տարքուած՝ ուրը փութ=124 *կիլօ նիւթով*(25):

Այդ բոլորից յետոյ մի՞թէ իրաւունք չունէին գործի զեկավարները մի այդպիսի ոյժ բաւական համարել՝ սրբելու 20–25 *քայլի, նոյնիսկ* 50 *քայլի վերայ, ամէ՛ն ինչ, ե՛ւ մարդ, ե՛ւ պաւիլիոն, ե՛ւ աշտարակ ու մզկիթ, գոնէ նրա առաջին մասը՝ Սուլթանի նստած մասը:*

Ո՛չ միայն իրաւունք, այլեւ պարտականութիւն ունէին այդպէս համարել, այն բոլոր վկայութիւններից, մասնագէտների յայտնած կարծիքներից և իրանց սեփական փորձերից վերջը: Նրա համար, որ այդպէս վկայեց Ժընեւի մասնագէտը. նրա համար, որ նոյնը հաստատեց Պարիզի պրոֆեսորը. նրա համար, որ մեր փորձերն էլ եկան հաստատելու նոյնը: Այլեւ նրա համար, որ նրանք այնտեղ զուր կը կատարուէին (?) *եթէ ոչ միայն կառքից, այլեւ դէտոնացիայից: Այլեւ նրա համար, որ ռումբեր չունէինք, իսկ չտապելը հրամայող պահանջ էր:*

Արժէ այստեղ կրկնել նորից մի վերին աստիճանի խրատական երեւոյթ, որ ամբողջ Ռուսաստանի մէջ այս վերջին երկու–երեք տարուայ ընթացքում նետուած ռումբերի թիւը հազարներով կարելի է հաշուել, — 2000, 1000*՝ առնուազն. իսկ յաջող արդիւնք ունեցածների թիւը՝ տասնեակներով. այդ մի այնպիսի չնչին* % *է կազմում, մօտ* 5 % *յաջողութիւն, որ կատարելապէս արդարացի էր Ս. Ռ.ների* N. N. *մասնագէտը երբ յայտնում էր թէ բեկորների վերայ յոյս դնելու չէ*(26):

Կատարեալապէս իրաւունք ունէին ե՛ւ պրոֆեսոր Բոբանովիչը, ե՛ւ Ս. Ռ.ների մասնագէտը՝ նոյնը կըրկնելով: Աւելի եւս իրաւունք ունէին ժելեաբովներն ու Կիբալչիչը, այդ ամէն կասկածից դուրս տեսորիստները, երբ Ալ. IIի վերջին յաջող գործի պատրաստութիւնների մէջ իրանց է՛ն մեծ յոյսը Մալայեա Սատովայ Կարազուի խանութի տակ պատրաստուած ականի վերայ էին դրած, իսկ ռումբերը, եւ ռումբերով գործ տեսնելը՝ «ցնորք» էին անուանած:

Եւ այդ՝ 4 *անյաջող փորձերից վերջը, նկատեցէ՛ք,— չորս անյաջող փորձեր այդպիսի տաղանդաւոր յեղափոխականների ձեռքով կատարուած,— եւ դա՛րձեալ նրանք քանակի վրայ էին յոյսերը դրել եւ ո՛չ բեկորների:*

Իսկ եթէ ունեցել են միաժամանակ եւ երկու ռումբաձիգներ՝ վերջին 5*րդ փորձի ժամանակ, այդ անշուշտ պէտք է ունենային, քանի որ Կայսրը մի քանի զծեր ունէր անց ու դարձի: Իսկ ամէն մի զծի վերայ ական փորելը ճիշդ բան չէր: Ահա թէ ինչո՛ւ այդպիսի պայմաններում՝ բացի ականից, ռմբաձիգները անհրաժեշտ էր ունենալ:*

Եթէ մենք ունենայինք նոյն պայմանները, եթէ Սուլթան Համիտը իւրաքանչիւր կիրակի կամ ուրբաթ Գոլոսի փողոցներում ազատ չրջէր 5–10 *կողակներ միայն իր հետ ունենալով, ինչպէս Ռուսաստանի Ալեքսանդր IIը, Դաշնակցութիւնը կարող է իրաւամբ պարծենալ, որ նա այդքան երկար չէր թող տալ Սուլթան Համիտին՝ ապրելու: Նա, Դաշնակցութիւնը, երկու ռմբաձիգների փոխարէն* 12 *Բիսակոմներ եւ Կրէնեւիցկիներ կը հանէր*(27):

Այս բոլորն այդպէս լինելուց վերջը, ասացէ՛ք, ի՞նչ իրաւունք ունէինք 124 *կիլօ նիւթին չհաւատալու, նիւթի՝ որը համարւում էր դինամիտից* 1½ *անգամ ուժեղ, որ նշանակում է տասն եւ մէկ փուտ դինամիտ, այսինքն* 186 *կիլօ դինամիտ..., երբ համոզուած էինք, որ Կայսրը ուրիշ գիծ չունի անցնելու քան Մալայեա Սատովայեան եւ այնտեղ էլ Կոբաչեւի պանրի խանութի առաջին ոչ թէ* 1½ *փուտ, այլ* 11 *փուտ դինամիտ է նրան սպասում, համարեա* 10 *անգամ աւելի,* 1500*ի չափ էլ երկաթի բեկորներով, որոնց ամէն մէկը մի մի ցուլ կարող էր տապալել:*

11 *փուտ դինամիտ պարունակող հսկայական Թընդանօթի հարուածը ոչ մի խելքը գլխին մարդ չէր կարող վտանգի ենթարկել՝* ½ *Ֆունտանոց խնձորների թէական օգտին համար. այն խնձորների՝ որոնք չունէիմք էլ:*

Երեւակայեցէ՛ք մի րոպէ, որ մենք հակառակ այդ բոլորի՝ ուրիշ կերպ վարուած լինէինք: Խնձորներ ունենայինք եւ եղած երկու մարդը, նոյնիսկ դրսի երկու ընկերներն էլ միասին՝ չորսով՝ պաւիլիոն գնացած եւ նախկին նախագծին համաձայն նետած լինէինք խնձորները եւ Սուլթանը մազապուրծ լինէր այդ չորսից, ինչպէս Ալիխանովը, ինչպէս Ստոլիպինը ազատուեց 8*ից*(28): *Ի՞նչ կ'ասէին այն ժամանակ մեր քննադատ-*

ները։ Մի՞թէ 100 անգամ աւելի իրաւունք չէին ունե-նայ ասելու, թէ «այս ի՞նչ տեսակ գործ է։— հակա-ռակ երկու ականաւոր մասնագէտների յայտնած կըտ-րուկ կարծիքներին, նրանք դարձեալ իրանց խելքին են զոռ տուել, վերցրել են երկու քոսոտ խնձորներ եւ այդ «խաղալիքներով» Նժոյգի դէմ դուրս եկել, ան-դին՝ կառքը վտանգի ենթարկելով, այն կառքը, որը 300 ֆունտ միլիոնի էր պարունակում, երեք հարիւր ֆունտ։ Պարզ է, որ եթէ կառքը պայթէր, Սուլթանը իր բոլոր մերձաւորներով կոտորուելուց բացի, աշտա-րակն ու մզկիթն էլ գլխին կը փլէր...։ «Ի՞նչ էք ա-սում, — պիտի բացականչէին յետին խելքով սրամիտ քննադատները, — հանո՞ք բան է 124 կիլո, 8 փութ մելինիթը»։

«Պարզ է, որ մէջերը մէկը չէ եղել անձնուէր, որ յանձն առնէր մի այդպիսի հսկայական ռումբ պայթե-ցընել։ Նիւթի մեծութիւնը ուղղակի ազդել է որոշման վերայ, բանի որ անպայման մահը ակներեւ էր. իսկ անդին, դէ՛հ, փոքրիկ ռումբ է, իրանք՝ բարձրում, վտանգ չկար, դեռ յոյս կար մի քանի ժամ էլ ապրել։ ո՞վ գիտէ, կարելի էր դեռ յուսալ՝ օգտուելով շը-փոթութիւնից, դուրս էլ գալ շղթայից եւ ազատել եւն. եւն.»։ Այսպէս կամ մօտաւորապէս այսպէս պիտի վեր-ջացնէին սենեակի քննադատները։

Իրերի այսպիսի դրութեան մէջ, ստիպուած էինք Սաֆոյին շտապեցնել, որ շուտով վերջացնէ եւ շտապէ Պոլիս։ Նա եկաւ օրդ. Էմիլի հետ եւ մենք, ի նկատի առնելով մասնագէտների ցուցմունքները, փորձերի հե-տեւանքները այլեւ ի նկատի առնելով այն բոլորը, ինչ որ այն օրերի իրականութիւնն էր կազմում, որոնց մա-սին արդէն յիշած ենք՝

ա) *զօրքերի դասաւորութեան փոփոխութիւնը,*

բ) *կառքի մէկ ուրիշ տեղ գտնուիլը,*

գ) *վստահելի ռումբեր չունենալը եւն. եւն., ձեռք քաշեցինք պաւիլիոնից եւ ամբողջովին կեդրոնացանք կառամեքենան կազմելու լուրջ հարցի վերայ եւ որ-քան կարելի է շտապեցնելու գործը, քանի դեռ չէ բաց-ուել նա։ Արդէն յիշած ենք շտապելու պատճառները։*

Արձակուրդ ստացած ընկերների, ինչպէս եւ օրդ. Ռուբինային ներս կանչելու հարցը որոշուեց բացասա-կան մտքով, քանի որ այլեւս կարիք չէր ներկայանում աւելորդ ոյժերի(29)։ *Ուստի գրուեց դրսի ընկերնե-րին, թէ նրանք ազատ են Մարմնի կազմից, կարող են մնալ իրանց տեղում։ Օրդ. Ռուբինան դեռ ժընեւ էր Էլլէնի մահից վերջը եւ խիստ նեարդային հիւանդոտ դրութեան [մէջ]։ Մենք բոլորովին հակառակ էինք նրան ներս կանչել. պէտք չէինք զգալ, եթէ պէտք էլ ունենայինք, նրա հիւանդոտ դրութիւնը մեզ համար վտանգաւոր էր նկատւում գործի տեսակէտից։ Այնքան հիւանդոտ էր, որ օրը մի քանի անգամ ուշաթափ էր լինում ամենաթեթեւ պատճառներից։ Բաւական էր նրա ներկայութեանը արտասանուէր «Քրիստափոր» բառը, որ նա ճչալով ուշաթափ լինէր։ Ահա թէ ինչո՛ւ որո-շեցինք նրան էլ չկանչել։ Բայց ինքը՝ Ռուբինան եւ ժընեւի ընկերները առանձին, պրն. Ռոստոմը առան-ձին, նամակներով այնքան թախանձեցին, այնքան խնդրեցին՝ նրա արդէն լաւացած լինելուն վստահացը-նելով, յայտնելով, թէ այլեւս առողջ է զգում իրան, թէ նա կը մեռնի՝ եթէ ներս չկանչուի, որ ստիպուած էինք փոխել մեր որոշումը եւ կանչել Ռուբինային։ Գրեց աղերսելով եւ օրդ. Ռուբինան, խնդրելով թոյլ տալ իրան էլ մասնակցելու։ Ռուբինան, ժընեւում, արդէն Ս.ի նամակներից ծանօթ էր նրա վերջին փոր-ձերին, մասնագէտների տուած կարծիքներին, այնպէս որ երբ Սաֆոն, որ նրան նեւից հանած կառքով իւր մօտ էր տանում, հենց կառքի մէջ եւ տանը նրան ծա-նօթացրեց իրերի ներկայ դրութեանը, յայտնելով թէ դուք հակառակ կը լինիք անշուշտ մեր նախագծի փո-փոխութեանը, ռումբերից ձեռք քաշելու որոշմանը, Ռուբինան բառացի կերպով ասաց, թէ ինչո՞ւ էք այդ-պէս կարծում, ընդհակառա՛կը, ես էլ նոյն բանն էի մտածում, ես էլ ռումբերից յուսահատուած եմ։ Մո-ռացանք յիշելու, թէ կորցնելով մեր հեղինակաւոր ըն-կերներին՝ Քրիստափորին եւ Վռամին, նրանց մահից յետոյ ներսում մնացել էինք միայն երեք անդամ, ո-րոնցից մէկն էլ, Աշոտը, վտանգուած էր նկատւում։ Ուստի, օրինական կազմը պահպանելու նպատակով, քանի որ դրսից նոր ոյժեր գտնել չկարողացանք, 905 Յունիսի մէջ, երբ զիջեցանք վերջապէս Ռուբինային կանչելու, որոշեցինք Քրիսին եւ Ռուբինային, օժան-դակ ընկերներից ամենէն եռանդուններին, ընտրել Մարմնի անդամ. եւ այդ կերպ էլ լրացնել նրա կազմը։ Եւ այդ մասին գրուած էր արդէն Ռուբինային՝ Վիեն-նա, ուր նա սպասում էր մեր համաձայնութեանը՝ ներս գալու։ Այդպիսով վերջնական որոշումը ընդունւում է բոլոր հինգ ընկերների կողմից եւ մինչեւ վերջն էլ, ոչ մէկի բերանից եւ ոչ մի բառ չէ դուրս եկել պաւիլիո-նի մասին, այնինչ կառքը այս կամ այն կերպ բռնկե-ցընելու նկատմամբ շարունակ վէճեր են եղել եւ այն ժամանակ, երբ արդէն որոշուած էր վայրկենական չա-նել։ Գործի նախընթաց գիշերը նոյնիսկ երկու օրիորդ-ները, Էմիլ եւ Ռուբինա, վիճում էին այդ մասին, ի-բարուց նեղանալու չափ տաք։

Կառքը արդէն ստացուած էր, ախոռը վարձուած, ձիերը առնուած։ Զարեհը կառապան Մկրտչի հետ ա-մէն օր շրջում էին Վիեննայից բերուած մեր չքեղ կառ-քով՝ թէ՛ ձիերու հետ ծանօթանալու եւ թէ վարժուե-լու կառապանութեանը։ Միւս կողմից դեռեւս շարու-նակում էինք Սուլթանի իշնելու եւ բարձրանալու մո-մենտների ստուգումը՝ երեք վայրկենաչափերով, եր-բեմն երկուսով։ Գտնուած էր արդէն մի մնայուն վայր-կեան. այդ՝ մզկիթից (?) իջնելու եւ մզկիթից դուրս գալու առանձին ազդանշանն էր, փողով հնչուող, որից

սկսում էինք մեր չափերը՝ մինչեւ նրա նուազագոյն չառաւիղին (?)։

Կանգ առնելով դժոխային մեքենայի վերայ իբրեւ աւելի քան բաւական խորտակիչ ոյժի, զրաղուեցինք նրա կազմով։ Ամենից առաջ հարկաւոր էր պատուիրել երկաթէ սնտուկը, որը պիտի տեղաւորուէր Վիեննա-յում առանձնապէս պատուիրուած կառքի փայտեայ սնտուկի մէջ, կառապանի նստարանի տակը։ Սնտուկի ձեւը, հատուած բուրգի ձեւով, ներս թեքուած կողե-րով ու տակով, դժուարացնում էր նրա ճիշդ չափը վերցնելը։ Մի կերպ այդ կատարուեց նոյն չափերի կարտոններ կտրելով ու նրանց հարկաւոր կորութիւնը տալով։ Գտանք մի յոյն երկաթագործ, որին եւ Աշոտի միջոցով յանձնուեց «դրամարկղի» (այդ անունն էինք տալիս դժոխային մեքենային) շինելը։ Երեք ամ-բողջ շաբաթ տեւեց այդ սնտուկի շինելը, պատճառ, որ նորանոր փոփոխութիւններ էինք մտցնում սնտուկի կոնտրուկցիայի(30) մէջ, նրան աւելի հաստատուն, ամուր դարձնելու մտքով։ Երեք անգամ արդէն պատ-րաստուած սնտուկը բերուած եւ յետ է տարուած յոյ-նի մօտ՝ այս կամ այն բարելաւումը մտցնելու, երկա-թի պատերը աւելի հաստացնելու, երկաթի սիւներ ա-ւելացնելու կողքերին եւայլն։ Բանը նրանումն էր, որ յոյնին ի հարկէ կառքը ցոյց տալ չէինք կարող. նրան հաւատացրել էինք, թէ նրա շինած սնտուկը ինչ որ քմահաճ անգլիացու իբր դրամարկղ է ծառայելու, որի տարօրինակ ձեւը բացատրուած է այն բանով, թէ տե-ղաւորուելու է այդ անգլիացու տանը ճիշդ այդ ձեւը ունեցող անկիւնում։ Եւ որովհետեւ կառքի իսկական չափերը վարպետը անձամբ ստուգած չէր, իսկ մեր ա-ռած չափերն էլ անհրաժեշտ նրբութիւնները չէին տա-լիս սնտուկի կորութիւնների, ուստի երբեմն մեծ էր դուրս գալիս, երբեմն փոքր, երբեմն շատ կոր, երբե-մըն քիչ։ Սնտուկը կազմուած էր 6 առանձին կտորնե-րից, որոնք պտուտակներով միացւում էին միմեանց՝ երկաթէ անկիւնների միջոցաւ։ Հարկաւոր էր այդ այն պատճառով, որ արհեստանոցում միացած ամբողջ սը-նտուկը չէր կարող մտնել կառքի մէջ։ Հարկաւոր էր, որ մասերից կազմուած լինէր այն։ Սնտուկը վերջապէս պատրաստուեց եւ տեղափոխուեց մաս առ մաս կառա-տանը։ Այժմ հարկաւոր էր կառքի մէջ դնել եւ ամբող-ջացնել նրան։ Այդ գործը պահանջեց 3-4 օր։ Զորս օր շարունակ մեր կառքով դուրս էինք գնում քաղաքից՝ արուարձանների կողմը, դէպի Շիշլի (?), Ստամբուլի կողմը, եւ կանգնելով այս կամ այն տեղ, գործիքներով ամրացնում էինք պտուտակները։ Մի օրում չէր կարե-լի։ Սնտուկը դարձեալ մեծ էր եւ ստիպուած էինք տա-շել կառապանի նստարանի բացուածքը։ 100ից աւելի կէտերից հարկաւոր էր նախապէս ծակել փայտը, ա-պա գաղղիական բանալիով ամրացնել նրանց։ Երկար չէր կարելի մի տեղ կանգնեցնել։ Պոլսի շրջակայքը, որ կողմն էլ որ գնաս, որքան էլ հեռու գնաս, ճանապարհ-ները լիքն են անցորդներով։ Եթէ շատ հեռանաս քա-ղաքից, գիւղերի կը պատահես եւ այդպիսով, իւրա-քանչիւր 5–10 րոպէ, ստիպուած էինք հեռուից երեւա-ցող անցորդի պատճառով, փակել խկոյն բացուածքը, ծածկել սնտուկը, գործիքները հաւաքել եւ կառքը նստել՝ քշել մի քիչ հեռու, առաջ կամ յետ։ Նորից կանգնելու, սնտուկը բանալու, գործիքները, երկաթ-ները հանելու ու տենդագին արագութեամբ գործի ըս-կըսելու. 5 րոպէից, զինուորի կամ պահակախմբի երե-ւալուց, նորից ամէն ինչ հաւաքելու եւ որեւէ մի բան ձեւացնելու, թէ ձիաներին հանգիստ ենք տալիս կամ ջուր ենք խմում եւայլն։ Այդպէս ընդհատ-ընդհատ աշ-խատելով, չորս օրում սնտուկն արդէն տեղաւորուած էր իւր տեղում։ Կանանց մէկը կամ միւսը մեզ հետ էր լինում, զրօսաշրջիկի արտաքին տեսքը ապահովելու համար։

Երբ դեռ սնտուկը վարպետի մօտ էր, մենք զբաղ-ուած էինք մի այլ շատ կարեւոր հարցով, որը դժո-խային մեքենայի էն էական մասն էր կազմում, այն է՝ ելեքտրական կրակատուի հարցը։ Բանը նրանումն է, որ պատրոյդով անել կրակի հաղորդիչը՝ ունէր մեր պայմաններում մեծ անյարմարութիւններ։ Պատրոյդը այրուելիս ձայն է հանում, ծուխ ունի։ Նրա վառուե-լու արագութիւնը այնքան էլ միակերպ չէ։ Եթէ արա-գավառը դնես, նա էլ շատ դժուար է կրակ առնում, հարկաւոր է արագավառի ծայրին նորից դանդաղավառ կապել։ Այդ բոլորից սակայն ազատ էր ելեքտրական կրակը։ Բայց ի՞նչ կերպ այդ անել, որ 25, 30 վայր-կեանում(31) ներգործէ եւ ոչ վայրկենական։ Վայրկե-նական անել հնարաւոր չէ, որովհետեւ չէր կարելի մի այդպիսի գործի յաջողութիւնը վստահել մարդկային նեարդներին։ Որքան էլ որ ամէնքը ընկերներից յայտ-նում էին պատրաստ[ակամ]ութիւն այդ անելու, բայց յայտնել, յայտնել շատ անկեղծ՝ դեռեւս չի՛ նշանա-կում կատարել անպայման։ Շատ անվեհեր կուռողներ, երբ տանում են կախելու, հակառակ իրանց ցանկու-թեան՝ տկարանում են, թուլանում...։ Կարելի է հա-ւատալ նրան, եթէ նա եղած է կռիւների մէջ, եղած է ասէ, թէ ես կ'անե՛մ այդ։ Եթէ մէկը ասի, թէ գնդակ-ների տարափը ինձ վերայ չի ազդում, կարելի է հա-ւատալ նրան, թէ նա եղած է կռիւների մէջ, եղած է գնդակների տարափի տակ, իսկ եթէ նոյնը ասելու լի-նի մի դպրոցական, դեռ ձեռքը ատրճանակ իսկ չա-ռած, եւ անկե՛ղծ ասի, այդպիսին կարող է պատահել, որ իսկ որ սառնասիրտ լինի, բայց կարող է, աւելի հաւանականօրէն, լինել եւ հակառակը, մանաւանդ ե-թէ նա մինակ է լինելու այդ գործում։ Իսկ մի այդ-պիսի գործի համար, կարելի է վստահել միայն փոր-ձուա՛ծ մարդու այդին։ Բայց մարդիկ, որոնք փորձ-ուած լինէին կախաղան բարձրանալու կամ դժոխային մեքենայի վերայ նստած՝ օդը ցնցելու մէջ, այդպիսի փորձ մեզ պակասում էր դժբախտաբար, ուստի եւ

հարկաւոր էր գնացողին տալ գոնէ մի քանի վայրկեան՝ այդ մեքենայից հեռանալու, առանց վնասելու գործի յաջողութեանը ի հարկէ:

Պէտք է չփոթել կախազան բարձրանալու պատրաստակամութիւնը, առհասարակ, կախազանի առաջ թուլանալու հետ: Առաջինին ընդունակ կարող են լինել համեմատաբար շատերը. վերջինը որիշ կատեգորիայի երեւոյթ է, որին քչերն են ընդունակ, չա՛տ քչերը: Յետոյ, մի յանդուգն գործ կատարելուց վերջը, երբ դատապարտուածին տանում են կախազան, այլեւս առանձին նշանակութիւն չունի նրա կատարած գործի համար, թէ նա կը թուլանա՞յ զողզոթայի առաջ, թէ ոչ: Թուլացա՞ւ,— ո՛չ մի վնաս. դահիճը նրան կ'օգնէ անշուշտ իւր պարտքը կատարելու, թոկը վիզը կ'անցկացնէ: Իսկ այս դէպքում, մեր գործի մէջ, օգնող չէ լինելու. նա ինքն է որ պիտի թոկը անցկացնէ իւր վիզը եւ կախածը նրա մէջ չէ թէ նա կ'անցկացնէ: Ա՛յդ էլ կ'անէ, բայց... վա՛յ թէ դանդաղեց կամ թուլացաւ մի բոպէ, միա՛յն մի բոպէ,— Նժոյգը կ'անցնի, ամբողջ գործը կը փճանայ: Ահա թէ ինչո՛ւ անկախ ընկերների յայտնած պատրաստակամութիւնից, գործի շահը պահանջում էր վստահել աւելի պողպատի վերայ, վայրկենաչափի անվրդով անիւների վերայ, քան մարդկային նեարդների, որոնք՝ ենթակայ տիրոջից անկախ ոյժերի, կամքից ուժեղ ազդակների, կարող են տատանուիլ, թուլանալ եւ վայրկենական ճշգրտութիւնը կորցնել: Նոյն ուղղութեամբ կատարուած մեր երկու փորձերը, մէկը Տիկ. Ժօրէսի եւ օրդ. Էմիլի հետ, միւսը՝ Զարեհի եւ Մկրտիչի, եկան ապացուցին մեր այդ կարծիքը: Երկու ուրբաթ զոյգ-զոյգ ուղարկուեցին նոքա՝ երկուսի մօտ էլ ստուգուած վայրկենաչափեր, միաժամանակ չափելու Սուլթանի վերադարձը՝ ազդանշան փողի առաջին հնչիւններից սկսած մինչեւ նրա կառքի ձիերի գլուխները մզկիթի պարիսպի դռնից երեւալը: Երկու զոյգն էլ այնպիսի տարբերութիւններ ցոյց տուին (առաջինը 6 վայրկեան, երկրորդը՝ ամբողջ 12 վայրկեան), որ անհամեմատ բարձր էին (այդ տարբերութիւնները) Նժոյգի նոյն տարածութիւնը անցնելու արդէն բազմիցս ստուգուած ժամանակամիջոցների տարբերութիւններից, որոնք տատանում էին ոչ աւելի քան 2, 3, ամենաշատը՝ 4 վայրկեանի(31) մէջ, եւ որոնց միջին թիւը 1 բոպէ 53 վայրկ. է կազմում մօտաւորապէս: Եւ այդ, նկատել պէտք է, դեռ վայրկենաչափով միայն գործելիս: Տիկ. Ժօրէսի բացատրութիւնով, նրան շատ սուր կերպով նայել է ոստիկանը՝ ուղղակի ձեռներին եւ նա, չփոթուած, քիչ դանդաղել է երբ արդէն Նժոյգը դուրս է եկել դարպասից: Նման դէպք էր ե՛ւ Մկրտիչինն ու Զարեհինը:

Հարցի դժուարութիւնը մեր ունեցած եւ առհասարակ գոյութիւն ունեցող դժոխային մեքենաների համար պատրաստուած ժամացոյցների անկարողութիւնն էր՝ վայրկեանների(31) ճշգրտութեամբ գործ տեսնելու: Ժամացոյցներ շատ կան ժամերի, օրերի, նոյնիսկ շաբաթների համար. կարելի է այդ ժամացոյցները ½ ժամի, 1/4ի կամ 10 բոպէի համար գործածել: Բայց վայրկեանների (երկվայրկեանների) ճշգրտութիւնը պահելու համար՝ հարկաւոր էր նոր մի ճար գտնել:

Այդ մեզ յաջողուեց Գոլոում կատարել: Մեր ունեցած վայրկենաչափերը մտցնել ելեքտրական հաղորդիչ սիստեմի մէջ իբրեւ անջատող (իզոլատոր), քանի դեռ վայրկենաչափը կանգնած դրութեան մէջ է: Բայց երբ սկսելով բանիլ, սլաքը հասնի կողքից ներս ցցուած պղնձեայ ասեղին, որը զատապերչի (?) խողովակով անջատուած է վայրկենաչափից, շղթան կը միանայ եւ հոսանքը անմիջապէս կը հաղորդուի ելեկտրական կապսիլին, դժոխային մեքենայի մէջ դրուած: Բայց այդ կերպ կարելի էր ամենաշատը 55 վայրկեանի համար միայն յարմարեցնել, բայց մեզ հարկաւոր էր 1 բոպէ 48 վայրկեան: Դրան մենք հասանք նրանով, որ կարճացնել տալով վայրկենաչափի զսպանակը, դանդաղացրինք նրա ընթացքը՝ ատրճանաբար փորձերով, մինչեւ մի շրջանը 2 բոպէում կատարելը: Եւ այդ դէպքում տեղաւորեցինք անջատուած պղնձեայ ասեղը 54ի վրայ: 2×54=108—60=48:

Երկու այդպիսի վայրկենաչափեր տեղաւորեցինք, մէկը կառապանի ոտքերի յետեւի կողմը, միւսը կառքնստողի թիկունքի կողմը: Ելեքտրական երկու զոյգ տարբեր (փիլեր) — չորս տարբեր — կառապանի նստարանի տակը առանձին շինուած պահարանում, դժոխային մեքենայի վերայ:

Երկաթեայ արկղի պատերի հաստութիւնը՝ 3" 5 կողմից, իսկ յետեւի կողմից՝ 5", որպէսզի հարուածին ուղղութիւն տրուի դէպի առաջ: Երկաթէ անտուկի եւ կառքի փայտեայ անտուկի մէջ բացուածքներում լցրինք գայաներ, վինտեր (պտուտակներ)՝ 8 հոխա եւս 4 հոխա=12 հոխա: Դրամարկղի մէջ՝ չորս կողմը երկաթեայ բարակ թերթեր (ժէստ): Պատերի երկարութեամբ, ներսից, երկաթեայ ձողեր խիտ շարուած՝ մէկը միւսի կչտին, երկու սանտիմետր լայնութեամբ, 1 սանտ. հաստութեամբ եւ դրամարկղի բարձրութեամբ: Այդ ձողերը 2 սանտ. իրարից հեռու՝ ունէին խարտուածքներ, որպէսզի պայթումից նոքա կոտորուին այդ խարտուածքներից եւ տան 4 խորանարդ սանտ. երկաթի բեկորներ: Այդպէս պատրաստուած մեքենան պէտք է տար 1500 երկաթի բեկորներ: Երեքշաբթի օրը Թորդոմը, Զարեհը, Մկրտիչն ու Երուանդը, նախապէս մաղելով մելինիթը բարակ պղնձաթել մաղերով, պինդ, շատ պինդ լցրին դրամարկղը 121 կիլօ նիւթով: Մէջտեղը փայտեայ կաղապար դրած՝ բռնկեցնող կապսիլների արկղի համար: Իսկ միեւնոյն ժամանակ, Ռուբինան եւ Սաֆոն տանը պատրաստում էին վերջինը, բռնկեցնող մեքենայի արկղը, շարք շարք շարելով



Գ. 48 Վ.

380 կապսիւլներ, իսկ մէջտեղը երկու զոյգ ելեքտրական կապսիւլ բռնկեցնողները, նրանց հաղորդիչ ծայրերը դուրս հանելով թիթեղեայ արկղի կափարիչի երկու ծակերից (ամբողջ արկղը ծակ-ծակ էր քամիչի նման, բացի կափարիչից):

Մնում էր բռնկեցնողը զետեղել կառքի դժոխային մեքենային մէջ: Այդ գործի, եթէ կարելի է ասել, ամենայուրջ ման է: Մի թեթեւ սխալ, մի հպում թեւերի եւ կառքը մի ակնթարթում կը պայթէր: Բոլոր նախազգուշական միջոցները ձեռք առած՝ այդ եւս վերջապէս կատարուեց Սաֆոյի եւ Աշոտի ձեռքերով, շրեքշաբթի օրը: Նոյն օրը դուրս եկաւ Աշոտը դէպի Բուլղարիա. հետեւեալ օրը Թորգոմն ու Քրիսը՝ դէպի Ցունաստան, Մկրտիչը՝ Ամերիկա: Երուանդը, որը պիտի մնար մինչեւ ուրբաթ առաւօտեան՝ Զարեհին օգնելու՝ կառքը լծել եւ դուրս հանելու, յանձնարարուեց մի յոյնի, որը խոստացաւ դուրս հանել նրան: Ներքը մնացինք չորս հոգի, հինգ՝ Ժօրէսի հետ: Նրա կինը արդէն դուրս էր եկել, ոչ այնքան բանտարկուելու կամ կոտորածի ահից, որքան պայթումի բոպէին այնտեղ չլինելու: Սպասւում էր մի այնպիսի պայթում, որից, նոյնիսկ Գերայի տները կարող էին տատանուել (դա նրա երեւակայութիւնն էր, ի հարկէ, բայց ոչ մեր ամենքի, քանի որ Գերայից պալատ ամբողջ 4–5 վերստ կամ կիլոմետր տարածութիւն է):

Որոշած էինք նոյն օրերը, դեռ երբ ներսն էին ընկերները, անպայման մի գործին անտեղեակ մարդ ներսեցնել կառքին, մինչեւ վերջը, ձիերը պահելու համար եւ, որ գլխաւորն էր, եթէ չպայթէր (որ կարող էր պատահել, ինչպէս փորձերի ժամանակ, որոնք շաբաթներ են տեւել, երբեմն երբեմն պատահում էր զանազան պատճառներից՝ վայրկենաչափի ասեղին քրքրված (?) ձեռքով դիպչելուց, հաղորդիչները անմաքուր միացնելուց եւն.): Այդ դէպքում 3 րոպէ սպասելուց վերջը, անմիջապէս վերադառնալու էին Զ[արեհը] եւ Ռ[ուբինան]՝ դէպի կառքը եւ, առաջին վայրկեանին բանալով անջատող ծայրերը, վերադառնալու էին կառքով յետ, հետեւեալ ուրբաթ նորից գնալու համար: Նախքան ելեքտրական սիստեմի կառքի մէջ տեղաւորելը, պէտք է ասել, որ ամբողջ մի ամիս հարիւրաւոր փորձեր են արուած՝ մինչեւ անվրիպութեան հասնելը, վայրկենաչափերով՝ սենեկային կապսիւլների (ամորների ?), ելեքտրական զանգակների վերայ, ապա և իսկական կապսիւլներով, թէ՛ տանը, ջրհորի մէջ, եւ թէ քաղաքից դուրս: Ապա համարուել է սիստեմը՝ ապահովուած:

Ուրբաթ առաւօտեան, ժամը 10ին, պայմանի համաձայն, Զարեհը կառքի վերայ արդէն սպասում է Ցունաց գերեզմանոցի կշտին, Շիշլի: Սաֆոն Ռուբինայի հետ նստում են մանաւոր կառք՝ շտապելու ժամադրավայրը: Էմիլը միանում է նրանց, չցանկանալով տանը մնալ: Ճանապարհին առնում են մի փունջ ծաղիկ Ռուբինայի համար: Երեքն էլ երգելով հասնում են Շիշլի: Բուլանին հեռու թողնելով մանաւոր կառքը եւ նրա մէջ էմիլին, երկուսով՝ Սաֆոն եւ Ռուբինան ոտով գնում են դէպի իրանց կառքը: Նախապէս նորից նայելով եւ տեղաւորելով վայրկենաչափերը յարմար դրութեամբ, հրաժեշտը, վերջին հրաժեշտն են տալիս: Սաֆոն յայտնում է Զարեհին, որ նա, այդ վայրկեանից լինելու է օրիորդի անպայման հրամանի տակ:

1) Տորմազը (?) չմոռանա՛լ:

2) Տղան նոյնպէս:

3) Ցոյց տրուած տեղը՝ անպայմա՛ն:

Տեսնուելու յոյս այլեւս ոչ մէկի մէջ չկայ: Վերջին հրաժեշտն է: Ռուբինան այդ վայրկեանին յայտնում է թէ նա վերցրել է իւր հետ մկրատը: Այդ կը նշանակէ, թէ մկրատով, եթէ հարկ համարէ, պիտի կտրէ հաղորդիչները եւ պայթումը վայրկենական դարձնէ: Սաֆոն, որ բազմիցս ղէմ է եղել դրան, նորից աւելացնում է, թէ այդ անօգուտ է եւ աւելորդ, ինչպէս միշտ ասել է: Եւ նոյն կարծիքին է եւ այժմ, անյաջողութիւնից վերջը:

Կառքը շարժւում է: Մինչեւ ժամի 12ը, դեսպանութիւններին ուղարկուելիք ծրարները ձեռներին, ըսպասում են պայթումին սրտատրոփ: Նախապէս պատուիրուած է, որ եթէ կենդանի մնան եւ չհալածուին, վերադառնան ընդհանուր բնակարանը. իսկ եթէ հալածուին, դիմեն երկրորդ թագստոցը, անգլիական դեսպանատան կշտին, որտեղից, լուսամուտից անցնելով անգլ. դեսպանատուն, յանձնուին նրանց, ներկայացնելով նախապէս անգլերէն գրուած թուղթը, որի մէջ գրուած է գործի համառօտութիւնը՝ թէ իրանք դաշնակցականներ են, համաձայն Պոլսի Մարմնի որոշման կատարել են մահուան դատավճիռը՝ Սուլթանի վերայ, իբրեւ պատասխան այն տասնեակ հազարաւոր զոհերի եւն.:

Ժամը ուղիղ 12 եւ $^3/_4$: Յանկարծ լսում է մի դղրդիւն՝ կարծես հեռաւոր ամպի գոռոց, կրկնուող, երկարող — զրոռո՛–ռո՛ռ...:

$^1/_4$ ժամ վերջը արդէն դեսպանական թղթերը նետուած են իւրաքանչիւր պետութեան պոստը(32):

Սաֆոն եւ էմիլը վերադառնում են տուն, սպասելով թէ ո՛ւր է, ո՛ւր չէ՝ պիտի սկսուի անարխիան, կոտորածը: Կէս ժամ անցած, սենեակի լուսամուտից երեւում են Զարեհը եւ Ռուբինան, երկուսն էլ կաս կարմիր, կարծես բաղնիսից նոր դուրս եկած, դանդաղ բարձրանում են դէպի տուն: Մի ակնթարթում ներքեւում ենք՝ անհունս ուրախացած: Դուռը բացւում է եւ չորս ընկերներ փոխն ի փոխ գրկախառնւում են: Ամենից առաջ փոխելով Զարեհ իր շորերը (նոր շորեր էին հասած Զարեհի համար), սկսում է կցկտուր հարցապատասխան:

— Ի՞ւր տեղո՞ւմն էիք:

— Այո, համարեա դրան մէջ:

— Ձիշդ ժամանակի՞ն սեղմեցիք:

— Լաւ էր, մի քիչ շուտ, չա՛տ քիչ:

— Շուտ, ինչո՞ւ, — հարցնում է Սաֆոն վախեցած...

— Օ՛, մի վախենաք, հազիւ 5–10 քայլ էին արած, որ փողը հնչեց...

— Բայց ձայնը, ձայնը, — խօսում է Ռուբինան, — ինձ թուաց խեղդուած եւ թոյլ:

— Այդ ոչինչ, ինձ էլ թոյլ թուաց, ես էլ շատ աւելին էի սպասում: Այդ երեւի մեր երեւակայութեան շատ վառ լինելուց է. երբ մարդ սպասում է աւելին, եղածը իրան թոյլ է թւում... մխիթարում են իրար:

Այլեւս ոչինչ չի կապում մեզ Պոլսի հետ: Սպասում ենք թէ ո՛ւր է, ո՛ւր չէ հիմա կը սկսուի իրարանցումը, կոտորածը: Բայց անցնում են ժամեր — առանձին ոչինչ: Ժօրէսը ճաշին պիտի հանդիպէր մեզ լուր բերելու դրսի աշխարհից: Նա մեզ դրացի էր: Էմիլը յանկարծ լուսամուտից տեսնում է Ժօրէսին, որ նա գնում է... Եկել է տուն, ճաշել եւ գնում է: Ուրեմն չի ուզում մնալ մեզ մօտ:

Կազմում ենք զինուորական խորհուրդ: Մնալ, ըսպասելով մինչեւ ամէն ինչ խաղաղի՞, թէ՞ փորձել այսօր եւեթ դուրս գնալ: Ձայները բաժանւում են:

Կարծիք է յայտնւում թէ այսօր դուրս գալը դժուար կը լինի. նաւերը բոլորը խիստ պահպանուած՝ կ'ընկնինք թակարդը:

Եթէ այսօր դուրս չգանք, — ասում են միւսները, — դժուար է յուսալ անցնել, վաղը աւելի դժուար կը լինի, երրորդ օրը աւելի՛ դժուար: Հեռքեր շատ ունինք. կը բացուինք: Կամ փորձել այսօր եւ կամ մնալ 10–15 օր, մինչեւ ամէն ինչ խաղաղի: Իսկ այդքանում մեզ անպատճառ կը գտնեն: Վերջապէս դառնում է երեք ձայն եւ որոշւում է փորձել այսօր եւեթ դուրս գալ: Սկսում են կանայք շտապ հաւաքուիլ: Ժամը 4ն է: Մի նաւ կայ դէպի Գիրէա, մի նաւ էլ դէպի Ռուսաստան: Այդ երկու նաւերի էլ ժամանակը բաց են թողել: Նաւ չկա՛յ ուրեմն: Միակ ճանապարհը մնում է ուրեմն երկաթուղին, որը ժամը 8ին է դուրս գալիս Պոլսից՝ դէպի Բուլղարիա (Սոֆիա) եւ Վիեննա:

Շատ յոյս ունինք, թէ գոնէ ժամը 6ին Ժօրէսը մեզ լուրեր բերէ, քանի որ կոտորածի նշաններ չեն երեւում, փողոցները հանդարտ են: Միայն ձիաւոր ոստիկաններ երեւում են սրարշաւ անցնելիս, դէպի մօտակայ պահականոցը: Ժամը 6ին էլ Ժօրէսը չի հանդիպում մեզ մօտ: Նա 6ին սովորաբար գալիս էր գրասենեակից տուն: Սպասում ենք եւս մի ժամ, եւս կէս ժամ: Ժօրէս չկայ: Երկաթուղու ժամանակը մօտենում է, եւ եթէ կորցրինք, ուրեմն պիտի մնանք այլեւս: Հազիւ կարելի է լինում կառք ճարել եւ շտապել կայարան: Ճանապարհին, կամուրջով անցնելիս Ոսկեղջիւրի վերայով, երեւում են նաւերի առաջը ժանտարմական սպաներ կանգնած՝ սովորական պահակների փոխարէն: Ուրեմն երկաթուղու [կայարանումն] էլ նոյնը կը լինի,— մտածում ենք: Հասնում ենք կայարան երբ երկրորդ զանգը տալիս են: Կանանց ներկայութիւնը ոստիկանների, ժանտարմաների ուշադրութիւնը թուլացնում է. նոքա իրա՛նք են օգնում հասնել գնացքին: Հազիւ մտնում ենք վագոն՝ գնացքը շարժւում է...: Վագոնում, յոգնած, իրար ձեռք ենք սեղմում: Բոլորս հաւատացած ենք, որ տաճկական գահը այլեւս թափուր է: Սուլթան Համիտը չկայ: Սոֆիայում միայն, հետեւեալ օրը, հեռագրերից տեղեկանում ենք մեր մեծ դժբախտութեան մասին...: Չենք հաւատում: Եւ մինչեւ ժրնեւ դեռ եւս չենք հաւատում...: Բայց վերջապէս պէտք էր հաւատալ կատարուած դժբախտութեանը:

Նժոյգը կենդանի էր եւ անվնաս:

Եւ սկսեցին, ժրնեւում, այդպիսի մեծ ձախորդութիւնների ժամանակ միշտ տեղի ունեցող փոխադարձ մեղադրանքներ, դժգոհութիւն իրար դէմ՝ Ցուցականի ընկերների մէջ: «Այդպէս ինչո՞ւ չարինք, պէտք էր այն կերպ անել. ես այդպէս ասացի, դու այդպէս չասացիր...»: Գրգռուած հոգեկան դրութեան սովորական ձեւ՝ սրտին եւ ուղեղին տիրող դժբախտութեան ծանրութիւնը թեթեւացնել յանցաւորներ պտրելով. եւ յանցաւորը, բնականաբար, միշտ դիմացինն է լինում, ոչ ինքը: Այդ կերպ թեթեւանում են մարդիկ իրանց վըշտից, մխիթարւում են, փնտռելով պատճառը՝ ուրիշի մէջ: Կ'անցնին տարիներ, եթէ վիշտը մեծ է՝ աւելի՛ երկար տարիներ, մինչեւ որ քննադատը կը հանդարտի, լուրջ եւ սառը՝ կը կարողանայ կշռել երեւոյթները: Այն ժամանակ միայն կը մօտենայ իսկական պատճառներին՝ աւելի ուղիղ ճանապարհով:

Մոռացանք իրա տեղում յիշել, թէ որոշուած էր, որ բացի գործի համար անհրաժեշտ մարդկանցից, մընացած ընկերները դուրս գան այնտեղից, աւելորդ զոհեր չտալու համար: Անհրաժեշտ էին մեզ՝ Զարեհը՝ իբրեւ կառապան, Սաֆոն՝ գործին հետեւելու մինչեւ վերջը, դեսպանութիւններին թղթերը բաժանելու եւ, առհասարակ, գործին ընթացք տալու: Բացի այդ երկուսից, հարկաւոր էր մէկը նաւ՝ կառքի մէջ նստելով Զարեհին ընկերակցելու: Այդ վերջինը, քանի որ ընկերների մէջ համաձայնութիւն չկայացաւ նշանակուի անել (ամէնքը 4 հոգուց՝ իրան էր յարմարագոյնը համարում), որոշուեց վիճակի դիմել: Վիճակին մասնակցեցին 5 հոգի. Ռուբինա, Սաֆո, Թորգոմ, Քրիս եւ Արամ: Վիճակն ընկաւ Արամին: Ռուբինան, որ սաստիկ ցանկանում էր ինքը գնալ, ճչաց, ուշաթնաց եղաւ: Վերջինի խնդրանքը՝ Արամը համաձայնուեց կրկնաքուէարկութեան՝ Ռուբինայի հետ: Դարձեալ Արամին ընկաւ: Երեք օր Ռուբինան թախանձելով համաձայնեցրեց Արամին, որ իրան զիջանէ. եւ նա վեր-

ջապէս զիջից։ Վիճակ հանել Թոյլ չտրուեց Աշոտին, քանի որ նա, ինչպէս նախապէս ասել էր ինքը, նկատուած էր ոստիկանութեան կողմից։ Թոյլ չտրուեց նաեւ օրդ. Էմիլին, իբրեւ զերմանուհու, որպէսզի անչխանական բնոյթ չստանայ գործը։

Ի՞նչն էր ուրեմն իսկական պատճառը անյաջողութեան։ Ահա՛ գլխաւոր հարցը։

Մենք մինչեւ վերջին ժամանակները, որանից մի ամիս առաջ էլ, համոզուած էինք, թէ անյաջողութիւնը մենք պարտական ենք դժոխային մեքենան կազմող երկաթէ սնուցիչի համեմատական թուլութեան, թէ դա՛ է եղել մեր դժբախտութեան գլխաւոր պատճառը, որի շնորհիւ տեղի է ունեցել մասնակի պայթում, այսինքն պայթել է նիւթի մի մասը միայն, հազիւ 1/8 մասը. մնացածը, ժամանակ չունենալով զաղանալու, ցրուել է փոշու ձեւով առանց պայթելու։ Մեզ մի քանի տեղից ասում էին, թէ նիւթը որը մեզ վաճառուած է, խարդախուած է, վատ տեսակի է եղել. թէ քիմիկոս Նիկողայոս Տէր Սարգսեան (Շուշեցի) վերլուծել է եւ գտել, որ դա 80% խառնուրդ է ներկայացնում բերթոլետեան աղի եւն.։ Մենք ընդունում էինք այդպիսի խօսքերը՝ իբրեւ բարի սրտերի թելադրութիւններ, մեզ մխիթարելու համար ասուած։

Մեր ուշադրութիւնը հենց առաջին օրերին գրաւեց մի զարմանալի փաստ, որը շատ խորհրդաւոր էր եւ նշանակալի՝ մեզ համար։ Այդ այն է, որ առաջին հեռագրերի մէջ, մահափորձի մասին խօսելիս, ասւում էր «նեռուած ռումբի» մասին...։ Նեռուած ռո՛ւմբ համարել 15 փութ ծանրութեան դժոխային մեքենան, 8 փութ նիւթ միայն իւր մէջ պարունակող կաւը նեռուած ռո՛ւմբ անուանել...։ Դա մեզ, Ցուցականի անդամներիս համար, չարագուշակ մի խորհրդաւորութիւն էր։ Ի՞նչպէս կարող էին թղթակիցները, այն էլ Եւրոպացի ամենագէտ թղթակիցները չփոթել եւ համարել նեռուած...։ Զէ՞ որ այնտեղ հարիւրաւոր մարդիկ կային։ Այդ միեւնոյնը կը լինէր, եթէ 12 դիրմանոց (?) հակայական Թնդանօթի ձայնը, արձակուած ասենք Գոլի վերայ՝ որեւէ մի մարտանաւի վերայից, թղթակիցները հեռագրէին, թէ ատրճանակ բացին քաղաքի վերայ։ Ճի՛շդ միեւնոյնը։

Միեւնոյն բանը եկաւ հաստատելու մի ուրիշ, աւելի հեղինակաւոր աղբիւր,— այդ՝ Սուլթանի անձնական հրամանով մասնագէտներից կազմուած յանձնախումբն էր, որ լրագրութեան մէջ յայտնեց իւր տուած զեկուցումը, թէ քննելով մահափորձի տեղը նրա թողած ձագարը(33), մասնագէտները գտել են, որ այնտեղ պայթել է դինամիտ՝ 15 թէ 25 կիլօ քանակութեամբ։

Ցայտնի է, որ պայթուցիկ նիւթերը իրանց քանակի եւ ոյժի համեմատ խրամատ, ձագար են թողնում երկրի մակերեւոյթի վերայ, պայթումից վերջը։ Հազարաւոր փորձերով գտնուած եւ ապրուակ է կազմուած, թէ ի՛նչ նիւթ (վառօդ, դինամիտ, մելինիթ եւն.) ի՛նչ տեսակ գետնի վերայ (աւազուտ, քարոտ, հող, կիր եւն.) ի՛նչ տրամագծով եւ ի՛նչ խորութեան ձագար է բաց անում։ Այդ աղիւսակով իւրաքանչիւր մասնագէտ, գուցէ եւ ոչ մասնագէտը, կարող է ճշդիւ որոշել, թէ այսքան նիւթը ի՛նչ մեծութեան ձագար կարող է բանալ այսինչ տեղում եւ կամ ընդհակառակը, այս մեծութեան ձագարը ի՛նչ քանակութեամբ նիւթի պայթումից կարող է զոյացած լինել։ Նրանք, մասնագէտները, որոշել են մահափորձի նիւթի քանակը, տեսնելով նրա թողած փոսը, գիտենալով կառքի մէջ եղած լինելը, բարձրութիւնը եւն.,— որ եղել է այնտեղ միայն 25 կիլօ նիւթ...։ Մենք չենք կարծում, որ այս դէպքում կարելի լինի կասկածելու տաճիկ մասնագէտների յայտնած կարծիքի մասին։ Ոչ մի չահ չունէին [թիւերը փոքրացնելու]։ Ինչպէս եւ, օրինակ, պատճառ չունինք կասկածելու տաճիկ կառավարութեան յայտնած զոհերի թուի վերաբերութեամբ(34)։

Այսպէս ուրեմն, «նեռուած ռումբ», եւ 25 կիլօ նիւթ, մասնագէտների որոշմամբ. իսկ նրանք այդպիսի խոշոր սխալ, պարզ է, չէի՞ն կարող անել, 124 կիլոն 25 կիլօ դարձնելու։ Հետեւապէս, այստեղ այս երկու տարբեր երեւոյթները, մէկը միւսին մատամբ լրացընելով, գալիս են ապացուցանելու, թէ մեր նիւթի գլխին ինչ որ մի չարագուշակ աղէտ պատահել է, որ թնդանօթի ձայնը ատրճանակի է փոխուել, 124 կիլոյի թողնելիք փոսը՝ 25 կիլոյի վերածուել։ Թէ՛ Սաֆոյի եւ թէ Ռուբինայի լրագրական տպաւորութիւններն էլ գոլսում, պայթման վայրկեանին, եղել են ապատուածից նուազ։ Ներքը այդ բանը մենք բացատրեցինք տեղն ու տեղը նրանով, թէ մեր երեւակայութիւնը եղել է շատ վառ, փողոցի ժխորն էլ միւս կողմից, ահա թէ ինչո՛ւ Թոյլ է Թուացել պայթումի ոլորը,— այնքա՛ն մենք հաւատացած էինք գործի վախճանին։ Այդ երկու հանգամանքները, երբ վերջը պարզուեց թէ Սուլթանը կենդանի է, թէ աշտարակն էլ չէ փլել, թէ միայն 70-100 մարդ է վնասուել, ինչպէս ասացինք, բերին այն միակ եզրակացութեան, որ տեղի է ունեցել մասնակի պայթում եւ պայթել է մեր դրած նիւթի հազիւ 1/4ը, մէկ հինգերորդը, եւ այդ երկաթէ սնուցիչի համեմատական թուլութիւնից միայն առաջացած կարող է լինել։ Այդպէս էինք մենք հաւատացած՝ մինչեւ վերջին օրերը։

Բայց այժմ... այժմ մեզ համար պարզուած է, որ մեր դժբախտութիւնը բոլորովին ուրիշ պատճառներից է եկել, որ չարչի վաճառականը, մի քանի 1000 ֆր. մեզանից աւելի վաստակելու համար, տուել է մեզ ամենացածր տեսակի մելինիթ, եթէ միայն դրան մելինիթ անունը կարելի է տալ։ Փորձերի ժամանակ (միշտ միասին ենք արել դժբախտաբար) գործածելով մաքուրը, նա վաճառել է մեզ խարդախուած մելինիթ, ամենացածր տեսակի։ Այդ այլեւս փաստ է, եւ անհերքելի՛։

Ահա մեզ մօտ է այն սպիտակ փոշին, որը ուրիշ

ոչինչ է, ապա եթէ ոչ բերթոլետեան եւ սելիտրեան աղեր։ Սա 8 գրամ է, ստացուած 10 գրամ մելինիթից, անձամբ վերլուծուած Ֆիլիպկում՝ ընկերների հետ, քիմիկոս Տէր Սարգսեանի ցոյց տուած ձեւով կատարուած։ Դա այնքան պարզ ձեւ է, որ այստեղ, այս ժողովում էլ կարելի է կատարել նոյնը։

Բացի այդ, մենք ունինք աւելի ճշգրիտ վերլուծման արդիւնքները, կատարուած Բուլղար. Գեն. Շտաբի լաբորատորիայում։ Ահա թէ ի՛նչ բաղադրութիւն է ունեցել մեզ տրուած մելինիթը.

$KCLO^3$	կալիումի քլորատ	55%
KNO^3	կալիումի նիտրատ	24,9%
$C^{10}H^7NO^2$	նիտրոնաֆտալին	18,67%
H^2O	ջուր	0,53%

Երկու աղերի գումարը, ինչպէս տեսնում էք, 55+24,9 անում է համարեա 80% եւ միայն 18,67% նիտրոնաֆտալին։ Իսկ պիկրիկ թթուի եւ ոչ հետքն իսկ։ Այն ինչ իսկական լաւ մելինիթի գործօն բաղադրութիւնը պիկրիկ թթուն է կազմում, որքան մենք լսել ենք, եւ այն էլ 55% եւ ոչ 18%(35)։

Այսպիսով ահա սխալուած չեն եղել իրանց որոշման մէջ Սուլթանի մասնագէտները, երբ ընդունելով նիւթը դինամիտ՝ նիւթի 124 կիլոն իջեցնելու են ստիպուած եղել մինչեւ 25 կիլօ։

Իսկ Գարիգի եւ Ժրնեւի մասնագէտները, տրուած խնդիրները լուծելիս, անշուշտ բերթոլետեան աղի 80%ով կազմուած մելինիթ չէին հաշուում։

Մենք բերած ենք՝ մեր Գոլսում գործածած մելինիթից (Վառնայում ունենք պահեստում) բաւականաչափ եւ խնդրում ենք Ընդհանուր Ժողովից ընտրել յանձնախումբ երկու պատգամաւորներից՝ վերլուծել տալու այստեղ իսկ, Վիեննայում, այս մելինիթը եւ արձանագրութեան մէջ մտցնելու արդիւնքը։

Մենք խնդրում են նոյնպէս նոյն յանձնախումբին յանձնարարել, գտնելու հեղինակաւոր մի մասնագէտ եւ նրանից գրաւոր կերպով առնելու հետեւեալ երկու հարցերի պատասխանները.

1) Ինչպիսի՞ բաղադրութիւն ունի իսկական լաւ մելինիթը (փոշիանման)։

2) 30 մետր շառաւիղով ամէն ինչ ոչնչացնելու համար քանի՞ կիլօ նիւթ է պէտք։

3) Այդպիսի մելինիթի 124 կիլոն, երկաթէ սնուցիչի մէջ պինդ լեցուած 1200 գրամ պայթուցիկ սնդիկի «զապալում»(36), սնուցիչի պատերի հաստութիւնը՝ 3 միլիմետր, կարո՞ղ է, պայթելիս, կենդանի թողնել մարդկանց՝ 20–25–30 քայլի վերայ։

Այս հարցերի ստացուելիք պատասխանները խնդրում ենք կցել Ցուցականի այս տեղեկագրին։ Վերջացնում ենք տեղեկագիրը, դնելով ժողովիդ առաջ հետեւեալ առաջարկը, որը վստահ ենք, շատ մօտ պիտի լինի պատգամաւորներիդ իւրաքանչիւրի սրտին։ Այն, իբրեւ որոշում կայացած Գոլսում, մեր անյաջող գործի նախօրեակին, մտա է կազմում այս տեղեկագրին.—

«Իբրեւ ամենաթոյլ նշան յարգանքի դէպի ամբողջ Հ. Յ. Դաշնակցութեան վերայ մեծ երախտիք ունեցող մեր աւագ ընկեր Քրիստափոր Միքայէլեանը,

Դաշնակցութեան սան անուանել նրա որդուն՝ Ռուբէնին, կազմակերպութեան վերայ առնելով նրա ապրուստի եւ ուսման բոլոր ծախսերը, ինչպէս եւ այրիին, մինչեւ առաջինի բարձր. դպրոց աւարտելը եւ գործի լինելը։

Ինչ վերաբերում է Քրիստափորի հետ միասին ընկած Վռամին, նրա ծերունի ծնողներին, որոնց միակ յոյսն էր Վռամը, յատկացնել միանուագ՝ կարմիր Խաչից՝ 1000 ֆր., իբրեւ մի գումար, որով կարողանան նրանք որեւէ գործի ձեռնարկել եւ իրանց օրական պարէնը հայթայթել»։

Սրանով էլ վերջացնում ենք մեր տեղեկագիրը, վերապահելով մեզ իրաւունքը խօսելու առանձին Ոսկեհանքի և Արեւմտեան Բիւրոյի՝ Ցուցական Մարմնի հետ կապուած հարցերի մասին, երբ առիթը ներկայանայ։

Մոռացանք յիշելու Ցուցականի նախկին ընկեր Աշոտի Մարմնիս կողմից հեռացուած լինելու մասին։

Մենք սրանով ընդունում ենք, որ այն ձեւը, որով հեռացուած նկատուեց նա Ցուցականից, միանգամայն անկանոն էր եւ ապօրինի։ Մենք այդ գիտէինք եւ այն ժամանակ. աւելի եւս այժմ։ Մի բան եթէ կարող է թեթեւացնել ձեւի ապօրինութիւնը, այն է, որ այնպիսի օրերում է նա տեղի ունեցել, երբ կանգնած էինք պատմական բոպէների առաջ. բոպէներ՝ երբ էութիւնը ծածկում է իրենով ամբողջովին ձեւը, եւ ո՛չ ժամանակ, ոչ էլ հնարաւորութիւն էր ներկայանում դատաստան կազմելու, բացատրութիւններ պահանջելու պաշտօնապէս. իսկ մասնաւոր բացատրութիւնները նրա՝ մենք լսած էինք եւ անբաւարար գտնելով՝ խիստ յանդիմանութեան ենթարկած։ Ըստ էութեան, մենք դարձեալ նոյն կարծիքին ենք, ինչ ասուած է մեր պաշտօնական գրութեան մէջ ուղղուած Արեւմտեան Բիւրոյին. նոյնպէս եւ երկու ընկերների կողմից՝ իրա՛ն, Աշոտին։ Բայց չենք ցանկանում այժմ ծանրանալ այդ խնդրի վերայ առանձնապէս։

Վերջացնում ենք տեղեկագիրը թուելով այն զոհերը։ որ ունեցաւ Ցուցական Մարմինը իւր գործունէութեան ընթացքում.—

Սպանուածներ՝ զոհեր փորձերի՝

Էլլէն եւ Վռամ.

Մահուան դատապարտուած՝ 4 ընկերներ՝

1) Էդ. Ժօրէս (Գրին)
2) Մանուկ Իւմատեան(37)
3) Նշան Յովհաննիսեան(38)
4) Առաքել Նահապետեան(39)

Դատապարտուած ցկեանս՝

5) *Յովհաննէս Ղարիպեան*(40)
6) *Յովսէփ Թոփալեան*(41)
7) *Բրօ*(?) *Պաղտոյեան*(42)

15 տարուայ բանտարկութեան՝ 3 հոգի՝

8) *Մանուկ Օրոյեան, բիթլիսցի*
9) *Պօղոս Կէչեան, մշեցի*
10) *Մանուկ Կէչեան, մշեցի*(43)

Այս տասը ընկերները ձերբակալուած *եւ դատապարտուածներն են: Դատապարտուած են մահուան՝* 10 *այլ ընկերներ, եւ ցկեանս՝* 10, *ընդամէնը* 20 *հոգի՝ որոնք ազատ են:*

Չի կարելի այստեղ չյիշել այն անմեղ զոհը՝ Ահմեդը, 14 *տարեկան այդ տղան, որ ձիերը մի րոպէ պահելու համար հարկաւոր նկատուեց կառքի վերայ պահել, իբրեւ պահապան, մինչեւ Զարեհի եւ Ռուբինայի «Ջուր խմելը»: Ամբողջ այդ օրը օրդ. Ռուբինան եւ Զարեհը պատմում էին նրա մէկ-երկու խօսք ռուսերէն բառերը եւ ուրախութիւնը՝ որ այդպիսի կառքի վերայ նրան առին:*

Որքան էլ որ ծանր էր այդ, բայց ցեղի ձայնը հարցը լուծեց ի մեծս Թուրքի: Հայը շատ է կոտորուել, շատ է տանջուել՝ տասնեակ հազարներով, որպէսզի մէկին եւս դնէինք իբրեւ քաւութեան նոխազ, կառքի վերայ: Թէ՛ մէկը եւ Թէ միւսը, գործի ապահովութեան համար, հարկաւոր էր որ անգիտակ լինէին Թէ ի՛նչ է ներկայացնում իրանից այդ կառքը: Հակառակ դէպքում — դա՛ր ձեալ կասկած յայտնութեան: Եւ միւս կողմից էլ աւելի մարդասիրական է Թուում, իբրեւ անհրաժեշտ չարիք, որը կատարելու ստիպուած լինէին իսկ, միայն միտքն իսկ, մարդու զայրոյթն է բարձրացնում, բայց որը անհրաժեշտ զոհ է, որ պահանջում է Մեծ Դատը, ցեղի, ամբողջ ազգի դատը: Մի այդպիսի անհրաժեշտ զոհ, Թուում է մեզ աւելի ներելի, եթէ նա չէ տանջուելու՝ ապատելով մօտաւուտ մահուան, այլ փոխւում է դէպի տարածութիւնը՝ վայրկենաբար, նոյնիսկ Թէեւ ցաւ իսկ զգալու համար ժամանակ չունենալով:

Թող բարի խօսքով յիշուի այդ անմեղ զոհը՝ 14 *տարեկան Ահմեդը՝ Դաշնակցութեան տարեգրութեան մէջ:*

ՍԱՖՕ ԳՐԻՍ ԹՈՐԳՈՄ

---

(1) Էլէնը Գրիստափորն է: Յրդ Ընդհ. ժողովի տեղեկագրութեան մէջ կը կարդանք «ժողովը, խորհրդակցելով, միաձայնութեամբ ընտրեց Էլէնը Ցուցական Մարմնի անդամ: Նոյն (Ցուցական) Մարմնի անդամ ընտրուեցան նաեւ հետեւեալները, — Մարտիրոս (Կարմրաթշիկ), Թորգոմ, Յովհան, Աշոտ Բագրատունի»: (Տեսնել ՆԻՒԹԵՐ Հ. Յ. Դ. ՊԱՏՄ. ՀԱՄԱՐ, Բ. հատոր, էջ 134): Մարտիրոսը կամ կարմրաթշիկը Սաֆոն է (Մարտիրոս Մարգարեան), Թորգոմը՝ Պոլսոյ գործիչներէն, իսկ Աշոտ Բագրատունին՝ ամենայն հաւանականութեամբ Աշոտ Եղիկեանը (Սեւ Աշոտ), ոչ այնպէս Պալճանցիներու եւ Պոլսոյ գործիչներէն: Յովհան կամ Յոհան Դաւթեանը ծանօթ է:

(2) Ֆրանսերէն բառ, որ կը նշանակէ «գաւազրակաս»: Կը նախատեսուէր, ըստ երեւոյթին, որ Ցուցականի անդամներէն կամ գործակիցներէն մէկ քանին կանուխէն անցնէին Պոլիս եւ հաստատուին այնտեղ:

(3) Նշուած՝ «եւ վերջապէս ի՞նչն էր անյաջողութեան խոկական պատճառը»:

(4) Նշուած՝ «ժեռնարկի ձախող վախճանի խոկական պատկերը»:

(5) Նշուած՝ «առել էինք մեր վերայ՝ կամովին»:

(6) Վրան գծեր քաշելով ցնցուած են շուրջ 17 տողեր, լուսանցքի մէջ փոխարինուելով «Համեմատաբար յաջող ..... յայտնի է ամէնքին» պարբերութեամբ: Նշուած մասը հետեւեալն է.— «Ահա այդ կերպ կատարուեցին եւ Ցուցականի ընտրութիւնները: Հինգ մարդ էր պէտք, հապա՞ 3ը լրացաւ կամաւորներից, չորրորդը 2-3 օր վերջը միայն համաձայնուեց մտնել այդ կազմի մէջ. 5րդը արդէն բացակայ էր ժողովից. նա ասած յիշեցինք այստեղ, որ ներկայ Ընդհ. ժողովն էլ բացառութիւն չէ կազմելու նախընթացից, — վահան ու նիգակ շատ է փչրուելու դրսի աթոռների համար, բայց երբ հերթը դժբախտ Երկրին գայ, նրա փչալի աթոռներին՝ թափուր կանգնած աւերուած Երկրում, բացի վատպուրակներից, ջչերը, չատ ջչերն են հրապուրուելու այդ աթոռներով... Ցաւալի է, բայց դժբախտաբար այդ փատա է, տխուր փատա: Փակագծելով եւ ներողութիւն խնդրելով այս ակամայ շեղումի համար, շարունակենք մեր ընդհատուած խօսքը»:

(7) Նշուած՝ «եւ մի քանի կապոց արդէն յաջողութեամբ ներս էինք մտցրել»:

(8) Գործակալը, լրտեսը:

(9) Զարամիտ ակնարկութիւններ:

(10) Նշուած՝ «եւ ինչո՞ւ այդ եւ ո՛չ այլ կերպ»:

(11) Սմբատ Խաչատրեան:

(12) Ռումբեր, յատկապէս ձեռնառումբեր:

(13) Նշուած՝ «3) Շտապել պէտք էր՝ Սասունի կռիւների հետ կապելու մեր տալիք հարուածը Թէ՛ Ոսկեհանքում եւ Թէ Գըլասում»:

(14) Լուսանցքին մէջ աւելցուած՝ «Անմեղ անցորդների կամ զինուորների աւելի կոտորելը մեզ չէր հրապուրում»: Աւելի վաբը՝ «խուճապի մասին քիչ էինք հոգում»:

(15) Մանրամասնութիւններու:

(16) Լուսանցքին մէջ կը կարդանք հետեւեալ յաւելումը, աւելի մանրատառ, բայց տեղեկագրի ձեռագրին շատ նման գրով մը.—

*ՍՈՖԻԱՅԻ ԱՂԷՏԸ.— Թաղման հանդէսը, հպարտագէպ հանդիսութեամբ կատարուած Սոֆիայում, բազմահազար ժողովրդի մասնակցութեամբ, նոր էր աւարտուած, երբ Սաֆոն հասնում է այնտեղ՝ Օրդ. Խելի հետ: Արեւմտեան Բիւրոյի անդամներից մէկը, երբ բոլորը զումարուած են, աշխատում է ապացուցանել Ցուցականի ձեռնարկի աննպատակայարմար լինելը, քաղաքական աշխարհի վերայ Թողնելիք ապատրութեան տեսակէտից, եւ հարց է դնում չշարունակել: Բայց տեսնելով որ զուր է, որ Ցուցական Մարմնի մնացած ընկերները որոշել են շարունակել մինչեւ վերջը եւ այդ իսկ նպատակով Սաֆոն պատրաստում է դէպի Ծրնեւ գնալու՝ Թէ՛ Խորհուրդին մասնակցելու եւ Թէ Ցուցականի գործերով զբաղուելու, նոյն Գ. Մ.-ն յայտնում է, Թէ Թերեւս աւելորդ է Ծրնեւ գնալ, քանի որ Խորհուրդը կարելի է մատամբ կայացած համարել արդէն, մանաւանդ որ Խորհրդին մասնակցած ընկերներից մէկն էլ, ժամհարեանը, արդէն վերադարձել է հովկաս: Բայց եւ այնպէս...»:

(17) Տեսական եւ գործնական:

(18) Նշուած մաս՝ «եւ ի՞նչ իրաւունք ունէինք, չլինելով ինքներս մասնակից, ապէս լինելով այդպիսի հարցերում, ի՞նչը պէտք մեզ իրաւունք տար հակառակը անելու մասնակիցի այդքան պարզ յայտնած մտքերի. մասնակիցի՝ որի բացակայութիւնը մեր մէջ մենք զգում էինք, որին մենք պարում էինք, եւ էլէնին ու Սաֆոյին պարտաւորացրել էինք գոնել, անպատճա՛ռ գոնել եւ խորհրդակցել ու ըստ այնմ գործել»:

(19) 1–2 տող ռուսերէն, հետեւեալ իմաստով (լուսանցքին մէջ նշուած). — «որ ոչինչ կենդանի չմնայ, որ ամէն ինչ ոչնչացուի»:

(20) Gelée, դոնդող կազմած:

(21) Նշուած պարբերութիւն.— «Անցեալ օրը դուք իրաւունք ունէիք, երբ ասացիք մեծ քանակութեան նիթի համար համապատասխան քանակութեամբ պայթուցիկ ունդիկ է պէտք վերցնել, այդ ճիշդ է: Նախընթաց օրուան հարցերին մէջ կար եւ այդ հարցը, որի մասին խօսելիս, Ս.ն յայտնել է իւր կարծիքը՝ ..... (ռուսերէն անընթեռնելի)..... դրսից վերցրած, թէ մեծաքանակ գինամիտի համար մի կապսիւլը չի բաւէ. այդ հարցն է որ հասատատում է այդպիսով մասնակցիս եւ որոշում չտալիս»:

(22) «Որպէսզի հասկանալի լինի .... ասացաւ ատեանի կանոնագրութիւնը», — այս չորս պարբերութիւնները գծուած են վերէն վար՝ «Կրկնութիւն է» մակագրութեամբ:

(23) Գրիստափորի հետ նահատակուած Վասիլ Պեն Գինտիրեանի մասին է:

(24) Ձայրիւն, թնդիւն, շառաչ:

(25) Նշուած՝ «Բայց եւ այնպէս այս սոսկալի մեքենան, իսկական դժոխային մեքենան չհասաւ իր նպատակին, գլխաւոր նպատակին»: Իսկ լուսանցքին մէջ աւելցուած են թեթիֆ մանրամասնութիւններ Ալեքսանդր II ցարին դէմ կատարուած մահափորձերուն մասին, զորս զանց կ'ընենք:

(26) Այս պարբերութիւնը եւս («Արժէ այստեղ կրկնել .... յայտ դնելու չէ») մակագրուած է՝ «Կրկնութիւն է»:

(27) Լուսանցքի մէջ յաւելում.— «Որպէսզի կարելի լինի դադարեցնել նիթի արտայայտած (արտարերած ?) այժմ մասին, մի պատկեր մեր փորձերից... 5 կիլօ նիթը հսկայական ծառը օդն է բարձրացնում եւ ձորը գլորում: ½, ¼ կիլոն՝ ծառը եւ մեզ 5-6 հոգու գլորում գեղին»:

(28) Նշուած՝ «Իսկ կառքը՝ ռումբերի ձայնից ձիերը ապալէին կամ կառապանը վիրաւորուէր կամ ձիերը խրչելով փոխցնէին կառքը հեռու, եւ կառքը հեռուն պայթէր կամ ուշ պայթէր, երբ նժոյգը արդէն... (բանի մը բառ՝ անհասկնալի)»:

(29) Նշուած՝ «Եղածներն էլ դեռ շատ էին»:

(30) Շինութեան, կերտման ձեւին:

(31) Արեւելահայերէն իմաստով է ըսուած, — այսինքն՝ 25–30 երկվայրկեանէն:

(32) Լուսանցքին մէջ աւելցուած.— «Այդ կատարուց ժօրէսի բերած տեղեկութեան համեմատ, այն է՝ որ պոռթից ժ. 12ին են հանում Թղթակցութիւնները, եւ եթէ նոյն օրը 1ին ձգենք, հեռեւեալ օրը միայն նրանք կը ստանան, ո՛չ շուտ: Արդ նա գնաց նորից ատուգեց.— Եթէ, ասում էր նա, նոյն օրը չձգենք, մի քանի օր անհնարին է այդ անել, անարխեայի պատճառով՝ որ տերելու է անչուշտ, ինչպէս Բանկ Օտտոմանի օրերին, — եւ Թղթելու ենք գործը անակէր»:

(33) Գեղեցիկ կոնձաեւ բացուածքը՝ ռումբի պայթումին հետեւանքով:

(34) Լուսանցքին մէջ աւելցուած, — «Մեր պայթուցիկ նիթը խարդախուած էր: Այո՛, խարդախուած. ահա՛ այն սարսափելի ճակատագրական սխալը, որ մենք արինք, հաւատալով, մտքերիցս անդամ չանցկացնելով մի այդպիսի խարդախանք, որը դժբախտաբար իրականութիւն է այսօր: Մի մեծ գործ զոհ գնաց այդպիսով խարդախանքի»:

(35) Սաֆո ենշդ է «լսած», — mélinite՝ պիկրիկ բբուի (acide picrique կամ trinitrophénol) ռեւտրական անունն է: Անոր պայթման ուժգնութիւնը աւելի է քան դինամիթինը (dynamite, trinitrogycérine՝ ռեւտրական խառնուրդը՝ գայլատոզի, աւազի կամ փայտափոշի հետ): Ներկայիս՝ մելինիթէն կը նախընտրուի առհասարակ trinitrotoluène՝ (T. N. T. կամ tolite), պայթման ուժգնութեան տեսակէտէ մօտաւորապէս համարժէք՝ բայց ո՛չ բբու: Սաֆոյի բերած նմուշին մէջ գտնուող կալիումի բբուտան ու նիտրատը (chlorate de potassium եւ nitrate de potassium), որոնք կը մտնեն կարգ մը վառօդներու բաղադրութեան մէջ, շատ ընթացիկ եւ համեմատաբար տկար պայթուցիկներ են: Իսկ nitronaphtalineի պայթուցիկ յատկութեան համեմատական ատիճանը մեզի անծանօթ է (չի յիշատակուիր պայթուցիկ ծանօթ նիւթերու շարքին):

Բիրթիլեան ազը կալիումի բբուտի սովորական անունն է մէկն է, իսկ *սիլիտրա* կամ *սիլիտրեան* ազը կը կոչուին կալիումի, նատրիումի եւ ամմոնիումի պայթուցիկ նիտրատները:

(36) Ռուսերէն բառ, — բռնկիչով (détonateur):

(37) Արդեօ՞ք խամատեան (դժուար ընթեռնելի). կոգիին աւելցուած է հետեւեալ ծանօթագրութիւնը, — «Թագաւոր նիթի եւ ընկերների, 60 տարեկան, ծերունի յեղափոխական դեռ 90 թուից. դանապան Պերայում...»:

(38) Ծանօթագրութիւն՝ «50 տարեկան, նոյնպէս, սերտաստի խոհարար, նախկին ընկեր»:

(39) Ծանօթագրութիւն՝ «Աւստրիական հիւսնդանոցի դռնապանը, որի մօտ ռումբեր (?) էր պահուած»:

(40) Ծանօթագրութիւն՝ «Մկրտիչ, մեր կառապանի եղբայրը, նոյնպէս սերտաստի, նիթեր, դարձակից (?)»:

(41) Ծանօթագրութիւն՝ «Միասին (?), սերտաստի երիտ., Մկրտիչի քրոջ որդին, միասին էր ապրում»:

(42) Ծանօթագրութիւն՝ «Բիթլիսցի, Գրոքէր հիւրանոցի նախկին ծառայ... 906 թ. ռումբեր դատ հիւրանոցում, Բիթլիսէն բերուց՝ ձերբակալուած»:

(43) Վերջին երեք անուններուն դիմաց հաւանական ծանօթագրութիւն՝ «Գրոքէրի եւ Աբրահամ փաշայի տան մէջ կլիւբի գրոնապանները. ռումբեր դանուցին (?) թաղուած (?)»:

2.— ՓՈՐՁՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ ՑՈՒՑԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻ

Երրորդ Ընդհանուր ժողովի կողմից ընտրուած Ցուցական Պատ. Մարմինը՝ գումարուելով Պերէայում Յուլիսի 17ից մինչեւ Օգոստ. 10ը, մի չարք նիստերում (բացակայ էր ընկեր Թորգոմը, որ արդէն մտել էր Վիշապ), ի միջի այլոց՝ մշակեց հետեւեալ ներքին կանոնագիրը, իբրեւ մի փոքրիկ ընդհանուր հրահանգ՝ ընկերների փոխադարձ յարաբերութեան եւ գործի մի քանի պահանջների վերաբերմամբ: Ի նկատի ունենալով սակայն, որ Երկրի արդի պայմանները Պատ. Մարմնիս ծանօթ են շատ Թերի կերպով, իսկ այս կանոնագրութիւնը, որը վերաբերւում է ներսի գործունէութեանը, կազմուած է դրսում եւ հետեւաբար կարող է շատ կէտերում բոլորովին անհամապատասխան պտնուել իրերի իսկական դրութեանը, ուստի այս կանոնագրութեան առաջ քան պարտաւորեցուցիչ համարուելը՝ անհրաժեշտ է որ վերստուգուի Մարմնի կողմից, երբ նա գտնուելիս կը լինի արդէն գործի վայ-

բում եւ մօտից ծանօթացած կը լինի տեղական պայմաններին։

Ցուցական Պատասխանատու Մարմին

Յօդ. 1.— *Ցուցական Պատ. Մարմինը բաղկացած լինելով Ընդհանուր Ժողովում ընտրուած հինգ անդամներից, ինքը հրաւիրում է նաեւ օժանդակ ընկերներ կամ որոշ ձեռնարկների համար կազմակերպում է առանձին գործադիր կոմիտէներ։*

Յօդ. 2.— *Ցուցական բոլոր ձեռնարկները եւ դրանց գործադրութեան ծրագիրները մշակում է Պատասխանատու Մարմինը՝ համաձայն Ընդհանուր Ժողովի կողմից նրան տրուած լիազօրութեան։ Իսկ Վիշապում, բացի դրանից, Պատասխ. Մարմինն է, որ իր անմիջական մասնակցութեամբ ղեկավարում է ձեռնարկները։*

Յօդ. 3.— *Ցուցական Պատ. Մարմինը պարտաւոր է, համաձայն Ընդհանուր Ժողովի որոշման, ամէն ճիգ թափել իր ստանձնած գործը կատարելու ներկայ 1904 թուականի ընթացքում եւ չյետաձգել՝ առանց ամենայարգելի պատճառների կամ ակներեւ անհնարութեան առաջ կանգնած լինելու, 1905 թուականին։*

Յօդ. 5.— *Պատասխանատու Մարմինը իր անդամներից կամ օժանդակ ընկերներից մէկին թողնում է ահմանակից որեւէ ազատ վայրում՝ ընկերների եւ իրերի փոխադրութեան, Մարմնի յարաբերութիւնները դրսի աշխարհի հետ դիւրացնելու եւ ի հարկին՝ գործի վայրում ընկերների պակասը լրացնելու համար։*

Յօդ. 5.— *Եթէ Պատասխ. Մարմնի անդամներից ներսը գտնուող ընկերների թիւը այս կամ այն պատճառով միայն երկուսը մնայ՝ դրանք լրացնում են իրենց կազմը համաձայն Ընդհանուր Ժողովի կողմէ ընդունուած կազմակերպական կանոններին։*

Գործադիր Կոմիտէ

Յօդ. 6.— *Պատ. Մարմինը հարկաւոր դէպքերում (օրինակ՝ Ոսկեհանք, Մակեդոնացիների հետ միացած գործունէութիւն, Փոթորիկ եւայլն) կարող է այս կամ այն ձեռնարկի ամբողջ գործադրութիւնը յանձնարարել օժանդակ ընկերներից բացառապէս կամ օժանդակ ընկերներից եւ իր անդամներից խառն կազմուած գործադիր կոմիտէների։*

Յօդ. 7.— *Գործադիր կոմիտէները անկախ են իրենց գործին վերաբերեալ բոլոր յետագայ խնդիրներում, բացի նրանց անելիքներին եւ վերջիններիս ժամանակին վերաբերեալ հարցերը, որոնք վճռում են համաձայնութեամբ Պատ. Մարմնի։*

Յօդ. 8.— *Գործադիր Կոմիտէն դրամական միջոցներ ստանում է միայն Պատ. Մարմնուց եւ իր շրջանից դուրս անյայտ է մնում կազմակերպութեան բոլոր միւս մարմիններին։*

Օժանդակ Ընկերներ

Յօդ. 9.— *Օժանդակ ընկերները աջակցելով գործին՝ կարող են նոյնիսկ մինչեւ վերջին րոպէն չիմանալ Պատ. Մարմնու կողմից ծրագրուած ձեռնարկների բնոյթը եւ առհասարակ ենթարկւում են Պատասխ. Մարմնու բոլոր որոշումներին, ինչպէս դրանց ենթարկւում է Պատասխանատու Մարմնի իւրաքանչիւր անդամը։*

Յօդ. 10.— *Օժանդակ ընկերները ի հարկին կարող են հրաւիրուել Պատ. Մարմնի կողմից իւր նիստերին՝ խորհրդակցական ձայնով։*

Յօդ. 11.— *Իւրաքանչիւր օժանդակ ընկեր պահպանում է իր կապը Ցուցական Մարմնի հետ այն ընկերոջ միջնորդութեամբ, որի միջոցով հրաւիրուել է գործի եւ անծանօթ է մնում միւս ընկերների հետ։*

Յօդ. 12.— *Ուեւէ ընկերոջ մէջ նկատուած ցանկութիւն՝ կողմնակի միջոցներով անպատճառ թափանցելու իրենից թաղնուած մի գաղտնիք կամ իրեն վստահուած մի գաղտնիք ուրիշին յայտնելու անհոգութիւնը կը համարուի դատապարտելի վարմունք։*

Ընդհանուր

Յօդ. 13.— *Թէ՛ Պատասխանատու Մարմնի եւ թէ գործադիր կոմիտէների մէջ մեծամասնութեան ձայնը որոշում է բոլոր խնդիրները։ Բացառութիւն է կազմում միայն գլխաւոր ձեռնարկի գործնական ձեւը, որը պէտք է վճռուի տեղումը գտնուող պատասխանատու ընկերների միաձայն հաւանութեամբ։*

Յօդ. 14.— *Ոչ մի ընկեր (պատասխանատու կամ օժանդակ) իրաւունք չունի գործի վայրից հեռանալու՝ ինքն իրեն կասկածուած կամ վտանգուած նկատելով՝ մինչեւ այդ մասին առանձին որոշում չընդունուի պատկանեալ մարմնի կողմից։ Պատ. Մարմնի եւ գործադիր կոմիտէի անդամները, երբ հեռանում են իրենց մարմինների որոշմամբ, շարունակում են համարուել այդ մարմինների անդամ։*

Յօդ. 15.— *Թէ՛ Պատասխանատու Մարմնի անդամները եւ թէ օժանդակ ընկերները գործի վայրը գտնուած օրից, իբրեւ անհատներ, կորում են դրսի աշխարհի հետ ամէն տեսակ յարաբերութիւններ՝ թէ՛ անձնական եւ թէ գործի վերաբերմամբ։ Վերջին կարգի յարաբերութիւնները վերապահւում են միայն Պատասխանատու եւ գործադիր մարմիններին։*

Յօդ. 16.— *Պատասխ. Մարմնի իւրաքանչիւր անդամը գործի եւ իր հետ կապուած օժանդակ ընկերների պէտքերի համար՝ իր ձեռքի տակ ունի մշտական 1000 Ֆր.։ Բացի դրանից՝ թէ՛ Պատասխանատու եւ թէ*

օժանդակ ընկերները, իրենց անձնական ապահովութեան համար, ունին մօտները անձեռնմխելի՝ 200 Ֆր.։ Գործադիր կոմիտէների անդամների վերաբերմամբ՝ ի՛նքը գործադիր կոմիտէն է վճռում, բացի յիշեալ 200 Ֆր.-ից, որքա՛ն գումար թողնել իր անդամներից իւրաքանչիւրի տրամադրութեան տակ։ Հարկաւոր գումարները պահւում են Պատասխ. Մարմնի կամ գործադիր կոմիտէի գանձապետներին մօտ։

Յօդ. 17.— *Հեռագրով դրամ կարող է պահանջել պատշաճ մարմիններից միայն Պատասխանատու Մարմինը, իսկ վերջինից՝ գործադիր կոմիտէն։ Անհատ անդամներ թէ՛ մէկում եւ թէ միւսում այդ իրաւունքը չունին։ Բացառիկ դէպքերում միայն, երբ ընկերները ցրուած լինեն, Պատ. Մարմնի անհատ-անդամը իր ըստորագրութեամբ կարող է հեռագրով դրամ պահանջել դրսից 1000 Ֆր.-ի չափ։ Այդ գումարից անցնող իւրաքանչիւր պահանջ՝ Պատ. Մարմնի անհատ անդամը պարտաւոր է հիմնաւորել նամակով գրած պատշաճ բացատրութիւններով։*

Յօդ. 18.— *Գործի վայրում բոլոր ընկերները իրենց ժողովներից եւ պայմանաւորուած տեսակցութիւններից դուրս՝ իրար անծանօթ են։ Կարեւոր դէպքերի համար ունին տակոյն պայմանական նշաններ, որոնք մշակւում են տարբեր ձեւերով ընկերների ջոկջոկ խմբերում, որպէսզի մի խմբի նշանները անյայտ մնան միւս խմբերին։*

Յօդ. 19.— *Եթէ Պատ. Մարմնի եւ գործադիր կոմիտէի ուեւէ ընկեր չի համակերպում իր մարմնի որոշումներին եւ իր բռնած դիրքով ակներեւ խանգարում է գործի կանոնաւոր ընթացքը, նա — համաձայն կազմակերպական ընդհ. կանոնների — պարտաւոր է իր գործունէութեան համար ուրիշ վայր ընտրել։ Այդպիսի առաջարկ մի ընկերոջ տակոյն՝ կարելի է անել միայն պատկանեալ մարմնի միւս ընկերների միաձայն որոշմամբ։*

Յօդ. 20.— *Պատասխանատու Մարմինը եւ գործադիր կոմիտէները կարող են ի հարկին ուժեղացնել իրենց կազմը տեղական կամ դրսից հրաւիրուած նոր ընկերներով։*

ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Մասր.՝ Է.ԼԼԷՆ

10 Օգոստ. 1904
Աթէնք

Յօդ. 19. Եթէ Պատ. Մարմնի եւ գործադիր կոմիտէի ուեւէ ընկեր չի համակերպում իր մարմնի որոշումներին եւ իր բռնած դիրքով ակներեւ խանգարում է գործի կանոնաւոր ընթացքը, նա — համաձայն կազմակերպական ընդհ. կանոնների — պարտաւոր է իր գործունէութեան համար ուրիշ վայր ընտրել։ Այդպիսի առաջարկ մի ընկերոջ տակոյն՝ կարելի է անել միայն պատկանեալ մարմնի միւս ընկերների միաձայն որոշմամբ։

Յօդ. 20. Պատասխանատու Մարմինը եւ գործադիր կոմիտէները կարող են ի հարկին ուժեղացնել իրենց կազմը տեղական կամ դրսից հրաւիրուած նոր ընկերներով։

10 Օգոստ. 904.
Աթէնք.

VII.— ՇԱՄԻ ՇՐՋԱՆ (ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ)

Դժբախտաբար, ինչպէս ըսած ենք արդէն քաջեի ընդհանուր ներածականին մէջ (տե՛ս էջ 44, — ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ ԵՒ ՄԱՐՄԻՆՆԵՐ), 4րդ Ընդհանուր Ժողովէն մնացած արխիւներուն մէջ ոչ մէկ տեղեկագիր կամ այլ վաւերաթուղթ կը գտնենք՝ Վասպուրականի այնքա՛ն կարեւոր Կեդրոնական Կոմիտէութեան վերաբերեալ:

Դիւանական թուղթերուն մէջ գտած ենք միայն կովկասեան շարժման մասին բանաձեւերու եւ առաջարկ-մտածումներու շարք մը (շուրջ 3 միջակ էջ), որ շատ հաւանօրէն կու գայ Վասպուրականէն, քանի գրուած է Շամի պատգամաւոր Արամի ձեռագրով եւ կը կրէ անոր ստորագրութիւնը: Վերջին էջի տպագրական պատճէնը (*քլիշէ*) կու տանք ստորեւ, իբրեւ նմոյշ մեծ յեղափոխականի ձեռագրին:



Բանաձեւ 1.— Կովկասեան յեղափոխական շարժումը, որոշ քաղաքական սոցիալ-տնտեսական պատճառներ ունեցող մի երեւոյթ լինելով, ոչ մի ժողովուրդ չի կարող դուրս մնալ նրանից, մանաւանդ որ դա որեւէ կուսակցութեան ստեղծած շարժում չէ. ամէնքը, ինչպէս և հայ ժողովուրդը, ուժեղ կերպով պիտի դիմաւորեն նրան, իբրեւ իրենց կեանքի մէջ բարեփոխութիւն մտցնող մի շարժում: (Մեծամասնութեան բանաձեւ)

Բանաձեւ 2.— Կովկասահայ յեղափոխութիւնը ունի իւր տնտեսական-քաղաքական պատճառները. այդ շարժումը անհրաժեշտօրէն յառաջ պիտի գար եւ եկաւ, առաջադրելով իրեն համար քաղաքական ու տնտեսական որոշ իդէալներ. ուստի եւ այսուհետեւ էլ ուժեղ կերպով առաջ պէտք է տանել այդ շարժումը, մինչեւ իր քաղաքական ու տնտեսական իդէալների իրագործումը:

(Սա փոքրամասնութեան բանաձեւն է, ուրիշ խմբագրութեամբ):

Իսկ այդ շարժման եւ ընդհանուր ռուսական յեղափոխական շարժման մէջ եղող կապի համար, բոլորի կողմից ընդունուեցաւ հետեւեալ բանաձեւը.— Ի նկատի ունենալով, որ ռուսական յեղափոխական շարժումների բուն պատճառները թագնուած են բիւրոկրատիկ կառավարութեան ռէժիմի մէջ եւ որ միայն այդ ռէժիմի տապալումով է, որ համեմատօրէն ազատ չունչ պիտի քաշեն բոլոր ճնշուած տարրերը, ուստի անհրաժեշտօրէն պէտք է միանալ ռուս բոլոր յեղափոխական տարրերի հետ, ընդհանուր ուժով տապալելու բոլոր չարիքների արմատ՝ միապետական բիւրոկրատիկ կառավարութիւնը, մանաւանդ եթէ այդ բռնակալական ռէժիմի անկումով մահացու հարուած կը տրուի ասիական բռնապետութիւններին:

... Նկատուեցաւ, որ մենք ընդունել ենք սոցիալիստական այն աշխարհահայեացքը, որի համաձայն՝ յեղափոխական տարր է ընդունւում ե՛ւ պրոլետարը, ե՛ւ գիւղացիութիւնը, ե՛ւ քաղաքի մանր արհեստաւորութիւնը. եւ հետեւարար մենք կարող ենք դաշնակցել յեղափոխական այն կազմակերպութեան հետ՝ որ իւր քաղաքական ու տնտեսական դաւանանքով ամենից աւելի մօտիկ է մեզ:

... Ամէն յեղափոխական կուսակցութիւն ունենալով իւր քաղաքական-սոցիալական դաւանանքը և ձգտելով այդ դաւանանքի իրագործման, բնականաբար պիտի աշխատի հասարակական ամէն յառաջադէմ երեւոյթի արձագանգ տալ, իւր աշխարհահայեացքի կնիքը դնելով նրա վրայ՝ իւր դաւանանքների իրագործման համար:

... Նկատուում է ընդհանրապէս, որ Դաշնակցութիւնը, ինչպէս Կովկասում, նոյնպէս եւ Տաճկաստանում, յենուել է միայն ու միայն աշխատաւոր ու ճնշուած դասակարգերի վրայ, կռիւ յայտարարելով շահագործող դասակարգերին եւ նրանց պաշտպան կառավարութեան դէմ: Իբրեւ աշխատաւոր դասակարգի կազմակերպութիւն, նա երկու վայրերում եւս ունի նոյն քաղաքական-տնտեսական իդէալները. ուրեմն եւ ներքին զօրեղ կապ գոյութիւն ունի երկու վայրերի գործունէութեանց միջեւ. տարբերութիւն կարող է լինել միայն տաքտիկի մէջ, որ ձեւակերպւում է ըստ միջավայրի պայմանների, սակայն լոկ այդ տարբերութիւնը չի կարող արգելք դառնալ այդ ներքին զօրեղ կապակցութեան:

ԱՐԱՄ

VIII ՎՐԷԺԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութեան առաջին տասնամեակին Պարսկական Ատրպատականի սահմանափակ մէկ շրջանը միայն ընդգրկող այս կազմակերպութիւնը (յատկապէս Թաւրիզ — Վրէժ, Վրէժստան —, Սալմաստ — Մինարէք —, Ուրմիա — Փարոս —, Թադէոս Առաքելի վանք — Մեսաւոր, այլ անունով՝ Գաղթաշէն — եւ Խոյ — Աւարայր —), 1904–906 տարիներուն տարածուած էր արդէն մինչեւ Գիլան (Կասպից Ծովու հարաւ-արեւմտեան ափեր), Թեհրան (Շահ, Շահստան), Խորասան եւ Նոր Զուղա (Գետափ): Շրջանին այդ աստիճանի ընդարձակումը Թաւրիզի Կեդրոնական Կոմիտէն (Վրէժի Կ. Կ.) դրած էր ու հետզհետէ աւելի կը դնէր կազմակերպչական եւ ազգային-հասարակական հարցերու եւ անհրաժեշտութիւններու դիմաց, որմէ կրնար տուժել Ատրպատականի մարմիններու եւ գործիչներու սկզբնական առաքելութիւնը, որ Կովկասէն Երկիր անցման գծերը ապահովելու եւ Շամի (Վասպուրականի) վրայով Երկրի մարմիններուն հետ մնայուն կապ պահելու մէջ կը կայանար: Վրէժի կազմակերպութիւնը իր այդ էական դերէն չցրուելու մտահոգութեամբ, յաջորդական քանի մը Շրջանային ժողովներ կը շեշտեն Պարսկաստանի մէջ Վրէժէն անկախ Կեդրոնական Կոմիտէութիւն մը ունենալու անհրաժեշտութիւնը, մերթ Թեհրանը նպատակայարմար գտնելով իբրեւ կեդրոն, մերթ՝ Գիլանը: Կը խօսուի նոյնիսկ Պարսկաստան-Վասպուրական աշխարհագրական տարածքը երրորդ Բիւրոյով մը օժտելու մասին, ինչպէս փորձուած էր ընել՝ դեռ 1892–94 սկզբնական տարիներուն, կամ կ'առաջարկուի անցման եւ ռազմամթերքի փոխադրութեան գործը զուտ կազմակերպական միաւորներէն անկախ՝ Պատասխանատու Մարմնի մը ղեկավարութեան յանձնել: Այս բոլորը սակայն անմիջական կարգադրութեան մը պիտի չյանգէին, եւ Վրէժի Կեդրոնական Կոմիտէութիւնը պիտի շարունակէր ընդգրկել ամբողջ Պարսկաստանը՝ անցումի, փոխադրութեան, կապի, կազմակերպչական ու, 1908էն սկսեալ, յեղափոխական-մարտական գործունէութեան իր բազմատեսակ երեսներով, մինչեւ 1911 թուականը՝ երբ, Հ. Յ. Դ. 6րդ Ընդհանուր ժողովի որոշումով, պիտի ըստեղծուէր Պարսկաստանի երկրորդ Կեդրոնական Կոմիտէութիւնը՝ Շահստանը (Թեհրան):

Ճոխ է 4րդ Ընդհանուր ժողովի թղթածրարներուն մէջ մնացած Վրէժի արխիւը: Հրատարակութեան պիտի տանիք բոլոր վաւերաթուղթերը, հետեւեալ կարգով.—

1.— Վրէժի Կեդր. Կոմիտէութեան 1904–1906 տարիներու տեղեկագիրը՝ Հ. Յ. Դ. 4րդ Ընդհանուր ժողովին:

2.— Ատրպատականի (Վրէժի) Կ. Կոմիտէի 1905 տարեշրջանի տեղեկագիրը, ուղղուած հաւանօրէն Շրջանային ժողովի մը կամ պատրաստուած, թերեւս, 4րդ Ընդհանուր ժողովին համար՝ որ, ինչպէս ծանօթ է, պէտք է գումարուէր 1905ի վերջը կամ 1906ի սկիզբը:

3.— Ատրպատականի 1906 Փետրուարի «Շրջանական ժողով»ի արձանագրութիւնը (ներկայ առումով, պէտք է ըսել Շրջանային ժողով. ըսուած է հաւանօրէն, թէեւ սխալ, Ռայոնական ժողովի իմաստով, քանի Ատրպատականի ներքին մէկ միաւորին՝ Մինարէքի — Սալմաստ — ներկայացուցչական ժողովը կոչուած է, իր կարգին, «Շրջանային ժողով»: Այս շփոթները, որոնք կու գան հաւանօրէն զանազան շրջաններու ներքին կանոնագրութեանց մէջ գործածուած եզրաբանութենէն, զարմանալի չեն, քանի, ըլլա՛յ

3րդ Ընդհանուր ժողովի մշակած «Կազմակերպական Կանոններ»ուն, ըլլա՛յ 4րդ Ընդհանուր ժողովի հրատարակած «Կանոնագիր»ին մէջ, երկրէն դուրս գտնուող *շրջաններու պատգամաւորական ժողովներուն* կը տրուի իրենց Կեդրոնական Կոմիտէն ընտրելու իրաւունքը, առանց գործածելու «շրջանային» կամ «շրջանական» ածականները):

4.— Ատրպատականի Մինարէքի (Սալմաստ) շրջանի Ա. «Շրջանային ժողով»ի (1906 Նոյեմբեր) արձանագրութիւնը (կոմիտէական մէկ շրջանի վերաբերելով, ներկայ առումով՝ Ներկայացուցչական ժողով մըն է):

5.— Մինարէքի դաշնակցական զինուորներու ժողովին ատենագրութիւնը (Սեպտեմբեր 1906):

6.— Վրէժի (Թաւրիզ քաղաք) 1906 Նոյեմբերի ընկերական Ընդհանուր ժողովի ատենագրութիւնը:

7.— Գիլանի շրջանի Պորտ-Արտուրի (Էնզելի) «Սէր» խումբի ժողովը (Նոյեմբեր 1905):

8.— «Արախի խմբերի կարծիքները» (21 Դեկտ. 1905):

9.— Մինարէքի շրջանի 1904–905 տարիներու տեղեկագիրը:

10.— 1 Փետր. 1906 թուակիր՝ «Տեղեկագրութիւն Աւարայրի շրջանի» (Խոյ), ամենայն հաւանականութեամբ՝ ներկայացուած Վրէժի 1906 Փետրուարի «Շրջանական» ժողովին:

11.— 6 Փետր. 1906 թուակիր՝ «Տեղեկագիր Մակու — Արտազ — գաւառի», որ հիմնականին մէջ կը վերաբերի Թադէոս Առաքելի վանքի (Մեսաւորի) գործունէութեան — Նոյն:

12.— 3 տեղեկագիրներ Վրէժի (Թաւրիզ քաղաքի) կոմիտէէն.—

Ա) 4 Փետր. 1906 թուակիր, հաւանօրէն Շրջանական ժողովին ներկայացուած.

Բ) 25 Նոյեմբեր 1906 թուակիր՝ ուրամխեայ տեղեկագիր նոր կոմիտէի.

Գ) «Վրէժի տեղական ինքնապաշտպանութեան մէկ տարուան գործունէութեան տեղեկագիրը, 1905 թ»:

13.— «Հ. Յ. Դաշնակցութեան Վրէժի խարիսխ արհեստանոց»ի պատմականը ընող գրութիւն մը, ըստ բովանդակութեան՝ 1906ին պատրաստուած:

14.— 3 գրութիւններ Գիլանի կոմիտէէն.—

Ա) «Տեղեկագիր Հ. Յ. Դաշնակցութեան Գիլանի կոմիտէի», 15 Դեկտ. 1905, Ռաշտ.

Բ) «Հ. Յ. Դ. Գիլանի կոմիտէի շրջանում եղած խմբակների թիւն ու անդամների քանակութիւնը», ստորագրուած Շրջանական ժողովի Գիլանի պատգամաւոր *Թափառակա*նի կողմէ.

Գ) «Վիճակագրութիւն Էնզելիի հայ հասարակութեան», ստորագրուած Պորտ-Արտուրի ենթակոմիտէի քարտուղար *Կայծ*ի կողմէ:

15.— Տեղեկագիր Շահի (Թեհրան):

16.— Տեղեկագիր Մարաղայի, 31 (?) 1905 թուակիր:

17.— Տեղեկագիր Շահսէվանի (Արտաբիլ) եւ Անտառի (Աստարա), 1 Փետր. 1906 թ., եւ ուրեմն 1906 Փետրուարի Շրջանական ժողովին սահմանուած:

18.— Տեղեկագիր Ափի (Նախավկայի վանք եւ Դարաշամ գիւղ):

19.— «Քրդերի եւ այլ տարրերի հետ յարաբերութեան մասին», անթուակիր եւ անստորագիր տեղեկագրութիւն:

20.— «Կարծիքներ Ատրպատականի այլեւայլ շրջաններից» մակագրուած՝ տեսակէտներու, բանաձեւերու եւ առաջարկներու շարք (Վրէժէն, Շահսէվանէն, Փարոսէն, Շահստանէն, Անտառէն, Մարաղայէն, Նոր Զուղայէն եւն.), ուղղուած Վրէժի 1906 Փետրուարի Շրջանական ժողովին կամ

Հ· Յ· Դ· 4րդ Ընդհանուր ժողովին:

21·— Արեւելեան Բիւրոյին ուղղուած 7 նամակներ, որոնցմէ մէկը՝ Վրէժի Կ· Կոմիտէին:

22·— Արեւմտեան Բիւրոյին ուղղուած նամակ մը՝ Վրէժի Կ· Կ.էն:

23·— Կոմսին ուղղուած 5 նամակներ:

24·— Սամսոնին ուղղուած գրութիւն մը:

25·— Պարսկաստանի հնչակեաններուն հետ համերաշխութեան բանակցութեանց 3 նիստերու արձանագրութիւններն ու յարակից 5 փաստաթուղթեր:

⁂

Ասոնցմէ զատ, ինչ որ տակաւին կը մնայ 4րդ· Ընդհանուր ժողովին վերաբերեալ Վրէժի արխիւին մէջ, բաղկացած է բացառապէս Կեդրոնական Կոմիտէի, կոմիտէներու եւ ենթակոմիտէներու հաշուական թուղթերէն, երկիր փոխադրուած կամ փոխադրելի զէնքերու եւ զոյքերու ցուցակներէ, խումբերու անուանացանկերէ եւ այլ թուղթերէ եւ թղթիկներէ՝ որոնց հրատարակութիւնը ոչ միայն չափէն աւելի պիտի խնդրէր այս հատորը, այլեւ ընդհանրապէս կրկնութիւնը պիտի կազմէր Կ· Կոմիտէի թէ կոմիտէներու տեղեկագիրներուն եւ ժողովական արձանագրութիւններուն:

1·— ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ· Յ· ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՎՐԷԺՍՏԱՆՈՒՄ 1904 – 1906

Նամակի ձոփալ չափի 7 երկրերք թուղթերէ կազմուած տետրակ: Տեղեկագիրը, գրուած սեւ մելանով, կը գրաւէ 24 էջ եւ ֆռնի մը տող: Ստորագրուած է Հ· Յ· Դ· ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ· ԿՕՄԻՏԷ եւ կը կրէ այդ կեդր· կոմիտէի կնիքը:

Առաջին էջը, պարապ, մակագրուած է, կարմիր մատիտով՝ «Հ· Յ· Դաշ· Ամբ· Կ· Կոմիտէի տեղեկագիրը 1904-906թ, կարդացուած Ընդ· ժողովում 1907 թ· 12/III նոր տոմարով»: Նոյն վերը, սեւ մելանով՝ «Ներկայացած Ընդհանուր ժողովի 1907 Մարտի 12ի նիստում·— ԴԻՒՄՆ»:

ժողովրդի տնտեսական դրութիւնը·— 1901 թուի առեւտրական մեծ կրիզիսը(1), ինչպէս արդիւնաբերական մեծ կենտրոններում, այնպէս էլ Պարսկաստանում ունեցաւ իր աննպաստ ազդեցութիւնը ժողովրդի, մասնաւորապէս հայ տարրի տնտեսական կացութեան վրայ: Մէկը միւսի յետեւից սկսեցին սնանկանալ եւ չքանալ հայ առեւտրական տները, թողնելով իրենց կործանարար ազդեցութիւնը աշխատաւոր դասի կացութեան վրայ, որովհետեւ այս դասին պատկանող անհատները այս կամ այն կերպ նիւթական յարաբերութեան մէջ էին այդ սնանկացած խոշոր հիմնարկութիւնների հետ: Ժողովուրդը աղքատացաւ· փողը պակասեց, աւելացաւ բազմաթիւ պարապ մարդկանց թիւը, դրա հետ պակասեց հասարակութեան՝ դէպի իր ազգային հիմնարկութիւնները ունեցած գործելու էներգիան(2): Պիտի ասէինք, որ Դաշնակցութեան գործունէութիւնը կաղար հանդիպելով այնպիսի մի խոշոր հակազդեցութեան, ինչպիսին էր աղքատացած հայ տարրի իր օրուայ պարէնը հայթայթելու հոգը: Սակայն այդպէս չեղաւ: Մի կողմից հայ յեղափոխութեան վրայ կոչմարի(3) պէս ծանրացած ըէակցիան(4) շարունակում էր տանել նրան դէպի քայքայում, միւս կողմից դաշնակցական տեղական մարմինները իրենց գործունէութեանը աւելի հմայք էին տալիս: Իսկ վերջին երկու տարիների ընթացքում Դաշնակցութեան յեղափոխական գործը աւելի լաւ եւ եռանդուն կազմակերպուեցաւ: Այս, ըստ երեւոյթին զարմանալի իրողութիւնը կարելի է բացատրել նրանով, որ Դաշնակցութիւնը առաջուանից աւելի պարզ ընդգծեց իր գործունէութեան օբիէկտը(5), որով նրա պրոպագանդան դարձաւ աւելի այժմէական եւ աւելի կենսական: Շնորհիւ այս հանգամանքի տեղական ինտելիգէնտ տարրը եւ առհասարակ դեմոկրատական(6) հիմունքներով ղեկավարուող խաւերը լայնացրին Դաշնակցութեան շարքերը եւ մինչեւ այսօր էլ նոյն էներգիայով շարունակում են գործել եւ կազմակերպուել:

Զտումն·— Գաղափարական այն պայքարը եւ գրական այն պոլեմիկան(7) որ վերջերս տեղի ունեցան Կովկասում Դաշնակցութեան եւ բլոկի(8), մէջ, կըրկնուեց աւելի պակաս չափով՝ Պարսկաստանի հայկական կեանքում: Ցառաջ եկան դժգոհներ: Սակայն դաշնակցական մարմինները որոշ գոհունակութեամբ աւելի պարզ եւ որոշ տեսան, թէ ովքե՛ր են իսկապէս կուսակցութիւնից դժգոհողները,— նոյն խաւերը եւ յեղափոխական ոգուց զուրկ անհատները, որոնք ամէն տեղ մինչեւ այդ ժամանակ «համակրող» մոխրագոյն քաղաքականութիւն ունէին: Եւ եթէ այսօր նոյն տարրն է մեզ մօտ միայն դժգոհ կուսակցութիւնից, այդ մեր կարծիքով պատիւ է բերում Դաշնակցութեան սկզբունքներին, որովհետեւ այդ սկզբունքները իրենց էութեամբ վանել միայն կարող են ամէն՝ այդ տեսակ հասկացողութիւններով խմորուած եւ յեղափոխական դեմպերամէնտից(9) զուրկ անհատներին:

Կազմակերպութիւն եւ գործունէութիւն·— Մինչեւ 1904 թուականը գործը վարել են տեղական եւ դրսից եկող միմեանց յաջորդող ընկերները, չնորհիւ այն հանգամանքի, որ մինչ այդ կանոնաւոր կերպով կազմակերպուած չենք եղել: 1904ից մենք սկսեցինք կազմակերպութիւնը դնել լուրջ հիմունքների վրայ, որի հետեւանքն եղաւ այն, որ օր–օրի վրայ աւելանում էր մեր խմբերի թիւը: Կազմակերպուեցին կոմիտէներ շրջանի զանազան կողմերում եւ հենց այդ թուին, առաջին անգամ, կենտրոնական կոմիտէի գործերը վարող ընկերների հրաւիրանօք գումարուեցաւ Ռայոնական ժողով(10) եւ Կ· Կոմիտէի ընտրութիւնը վերածուեց ընտրողական սիստեմի:

Մեր շարքերում մտցրել էինք գիւղացիներին, արհեստաւորներին, գործակատարներին եւ որոշ թիւ վաճառականների· այս վերջիններս մեծ չափով մասնակցել են մեր հանգանակութիւններին: Սակայն Դաշնակցութեան զտումից եւ այստեղ մեր ձեռքով կատարած պրոֆիլաքսիայ(11) շարժումից յետոյ, ինքնաբերաբար վերջինները հեռացան, մի բան՝ որի կատարուելը ցանկալի էր:

Կոմիտէական կազմերի մէջ մտել են գլխաւորապէս տեղի ազդեցիկ անհատները: Այդ հանգամանքը բացատրւում է մեր խմբերի անպատրաստ լինելով, որոնք հարուստ եւ ազդեցիկ մարդկանց միշտ գործի գլուխ տեսնելու սովորութիւնն են ունեցել: Բայց ցաւօք սրտի նկատուած է եղել, որ դրանք անձեռնհաս եւ անօգտակար են եղել իրենց կոչումին, շուտով կամ քայքայուել են, կամ դատապարտուել անգործունէութեան: Մինչեւ 1905 թիւը եւ նոյնիսկ մի քանի տեղում մինչեւ վերջերս էլ նկատուող յեղափոխական գիտակցութեան թերութիւնը բացատրում ենք այն հանգամանքով, որ մենք միշտ խոշոր պակասութիւն ենք ունեցել պրոպագանդիստների, պրոպագանդայի գործը համարեա թէ միշտ վարել են մեր դաշնակցական համակիր եւ ընկեր ուսուցիչները, որոնք յաճախ կապուած չեն եղել որոշ տեղի հետ: Դրանց հեռանալուց յետոյ գործը մնացել է երեսի վրայ: Տեղական ինտելիգէնտ ոյժերի բացակայութիւնը միշտ զգացուել է եւ, հենց այդ նկատումներով, մենք ամէն կողմերում աշխատել ենք թէ՛ անցեալում եւ թէ ներկայում եւս դպրոցական գործի կանոնաւորմանը աջակցութիւն ցոյց տալ: Մեր բոլոր կոմիտէական շրջաններում ամէն ճիգ ու ջանք գործ են դրել դպրոցական գործը հաստատ հիմքերի վրայ դնելու եւ իրենց միջոցները չեն խնայել այդ՝ պարսկահայերի համար մասնաւորապէս էական նշանակութիւն ունեցող խնդրում: Նոյնիսկ կազմակերպութեան ջանքերով հիմնուել են մեր շրջանի մի քանի տեղերում դպրոցներ, համոզել ու խրախուսել ենք ընկերներին եւ մասնաւոր անհատներին՝ նիւթական օժանդակութիւն ցոյց տալ դէպի մեր այդ հիմնարկութիւնները: Այդ անխոնջ ջանքերի պտուղն է «Հայկազեան–Թամարեան» դպրոցը, որ տուել է մի կարգ շրջանաւարտներ, որոնցից կան Վրէժի տեղական կոմիտէական կազմի մէջ եւ իբրեւ ուսուցիչներ գործում են զանազան կողմերում: Այսպէս շարունակելով, կը տայ մեզ պատրաստուած ինտելիգէնտ դաշնակցականներ, որոնք օգտակար կը լինեն մեր լայնածաւալ շրջանի հեռաւոր անկիւններում: Ուրախալի է տեսնել, որ ժողովուրդը գնահատում է մեր այդ գործունէութիւնը եւ վերաբերւում է մեծ վստահութեամբ, ինչպէս այդ ապացուցեց վերջերս մեր ընկերների ձեռներէցութեամբ (նախաձեռնութեա՞մբ) պարտադիր ուսման վերաբերեալ խնդրում:

Հասարակական–կուլտուրական գործերում մենք ջերմ մասնակցութիւն ենք ցոյց տուել՝ համաձայն մեր Ռայոնական ժողովի որոշման եւ աշխատել ենք անցնել գործի գլուխ՝ պայքար մղելով տեղական աղայական կարգերի եւ սովորութիւնների դէմ· սրանով աշխատել ենք ամէն տեղ մտցնել դեմոկրատական սկզբունքներ: Այս ուղղութեամբ տարած մեր մաքուր պրոպագանդան աւելի պատկառանք է ներշնչել դէպի մեզ, որը մեծ չափով նպաստել է մեր շարքերը խտացընելուն:

1906 թուի Բ· Ռայոնական(10) ժողովում Կ· Կոմիտէի կազմը ընտրուել է 7 հոգուց· բայց ժամանակի ընթացքում մնացին 4 հոգի: Ընկեր Հայրիկը գնաց Փարոսի շրջանը կազմակերպելու եւ մնաց այնտեղ՝ ղեկավարելու գործերը, ուսուցչի պաշտօնով: Արհեստաւորը թողեց մեր շրջանը յայտնի վիրաւորանքից յետոյ, իսկ երրորդ՝ Զաւէնը ընդմիշտ հեռացաւ մեր շրջանից իր պաշտօնի պահանջմամբ:

Կ· Կոմիտէի անդամները, բոլորը իրենց մասնաւոր պարապմունքներով զբաղած լինելով, շատ անգամ ի վնաս իրենց մասնաւոր գործի՝ շրջել են այս ու այն կողմը կազմակերպական գործերով: Ազատ, միմիայն կուսակցական գործերով զբաղուող ընկեր՝ մենք չենք ունեցել, աւեւ ճիշդ 3րդ Ընդհանուր ժողովի որոշման համաձայն մեր կազմը ուժեղացնելու համար ուղարկուելիք երկու ընկերները չեկան մինչեւ օրս էլ:

Վրէժի տեղական կոմիտէն կազմուած է տեղական պայմաններին ծանօթ ինտելիգէնտ անձնաւորութիւններից: Տեղի խմբերի պրոպագանդայի գործը դրել է լուրջ հիմունքների վրայ, կազմել է «պրոպագանդիստ Վահան մասնախումբ»՝ գլխաւորապէս ընկեր ուսուցիչներից, որը հայթայթել է պրոպագանդիստներ խմ-

բերին։ Տեղական կոմիտէի շրջանին են վերաբերում Ա՛ն Մարաղան ու Ղարադաղը (վերջինս մի տարի է ինչ կազմակերպուել է)։ Կոմիտէական կազմից երկ-երկու ընկեր ամառս ճանապարհորդուել են կազմակերպելու եւ պրոպագանդա մղելու։

1905–1906 թ. պրոպագանդայի գործը դարձեալ կաղն ի կաղն է յառաջ գնացել մեր շրջանի ամէն կողմերում, դարձեալ նոյն հասկանալի պատճառով։ Մինարէթում, Շահում, Գիլանում եւ Փարոսում պրոպագանդայի գործը վարել են ընկ. ուսուցիչները, որոնց հեռանալովը գործը մնացել է երեսի վրայ։ Այդ կողմից մի երջանիկ բացառութիւն է կազմել Վրէժը, որտեղ ամէն խումբ ունեցել է իր պրոպագանդիստ դասախօսը, խմբերի համար դասախօսութիւններ տեղի են ունեցել շաբաթը մի անգամ, իսկ երկու շաբաթը մի անգամ՝ հրապարակային դասախօսութիւններ «Վահան» մասնախումբի ձեռնարկութեամբ։

Խօսել են հետեւեալ նիւթերի մասին.

1) Դաշնակցութեան ծրագիրը. 2) Տաճկահայ դատը. 3) Դաշնակցութիւնը եւ սոցիալիզմը. 4) Ազգայնութեան գաղափարը եւ սոցիալիզմը. 5) Դեմոկրատական կարգեր. 6) Ֆեդերացիա եւ կենտրոնացում. 7) Կովկասեան խնդիրը եւ նախագիծը. 8) Արեւելեան խնդիրը. 9) Երկրի դրութիւնը եւայլն եւ ուրիշ մի շարք յեղափոխական եւ գիտական բնոյթ ունեցող նիւթերի մասին։

Մեր շրջիկ ընկերները Գիլանի, Մազանդարանի եւ ուրիշ նման հեռու շրջաններում շատ կարճ ժամանակ մնալով հազիւ հնարաւորութիւն են ունեցել խօսելու մի քանի անհրաժեշտ եւ այրող խնդիրների մասին, որպիսիք են Դաշնակցութեան Ծրագիրը, Տաճկահայ Դատը, Կովկասեան գործունէութիւնը եւն.։

Երկրորդ Ռայոնական Ժողովում որոշուեցաւ պրոպագանդայի գործը աւելի ուժեղ կերպով տանելու եւ ընկ. դասախօսներին նիւթեր մատակարարելու համար, հիմնել յեղափոխական գրադարան, որը ներկայումս ունի 350 կտոր գիրք՝ զուտ յեղափոխական բովանդակութեամբ։

Ժամանակի հրամայողական պահանջին ենթարկուելով՝ մենք Վրէժում կազմակերպել ենք երկու պրոֆեսիոնալ(11) միութիւններ (կօշկակար եւ դերձակ բանուորներից), որոնք դեռեւս լուրջ կազմակերպութիւններ լինելուց շատ հեռու են։ Աշխատում ենք ձեռնարկել եւ միւս արհեստաւորների մէջ, ինչպէս ձեռնարկել ենք գործակատարների։ Մեր նպատակն է աշխատել նրանց մէջ զարգացնել իրենց դասակարգային գիտակցութիւնը. սակայն քաղաքական հանգամանքները աննպաստ համարելով հայերիս համար, զօրեղ արտայայտութիւններ տալուց զգուշանում ենք եւ անժամանակ ենք համարում։

Մեր շրջանի կազմը ներկայումս հետեւեալն է.

Վրէժում՝ 4. կոմիտէ չորս անդամով, որը զեկավարում է ամբողջ Պարսկաստանի յեղափոխական գործը.

Տեղ	Կոմիտէ	Ենթակոմ.	Խումբ	Անդամներ
Վրէժ	1	3	17(*)	200
Մինարէթ	1	6	44(**)	536
Գիլան	1	4	21	243
Շահ	1	2	12	128
Փարոս	1	4	20	200
Սարդահան (Մարաղա)	1		6	75
Ադիահան (Ղարադաղ)	6		74(***)	560
Աւարայր	1		10	120
Մենաւոր	1		6	70
Անտառ			1	14
Ափ (քայքայուած)	–		2	25
Շահսուվան	–		–	35
Գետափ (Նոր-Ջուղա)	1		7	80
Մազանդարան, Ղուչան, Սարդուար, Բենդէրգէզ եւն. միասին		–	20	150
	–	—	—	—
	5	29	242	2536

Արհեստանոց «Խարիսխ».— Յեղափոխական գործունէութեան տեսակէտից մեծ դեր է խաղացել «Խարիսխ» արհեստանոցը, որը այնչափ փառաւոր անցեալ է ունեցել, որքան ներկայում մատնուել է անուշադրութեան՝ հմուտ արհեստաւորների բացակայութեան պատճառով։ Մեր արհեստաւոր ընկ. Պետրոսը, որը քիչ էր մնացել զոհուէր Հնչակեանների դաւադրութեամբ, ընդմիշտ հեռացաւ մեր շրջանից։ Մեր անվերջ դիմումները ապարդիւն են անցել։ Վերջերս միայն, Աբեւելեան Բիւրոն ուղարկել է մի երիտասարդ արհեստաւոր, որը վարպետ լինելուց շատ հեռու է եւ որը մի անմեղ թիւրիմացութեամբ է ընկել մեր կողմերը։ Եթէ այսպէս շարունակուի, միանգամայն ազատուելու համար աւելորդ ծախքերից, նպատակայարմար կը լինէր կողպել կամ տալ մի ուրէ փականագործի՝ շահագործելու որոշ պայմաններով։ Ներկայումս արհեստանոցում աշխատում են նոր եկած երկաթագործ երիտասարդը, երկու աշակերտների հետ։

1904 թուին Ռսկանապատի կ. կոմիտէն առանց նախօրօք մեզ հետ խորհրդակցելու, ուղարկեց մի երիտասարդ խնձոր թափող, կարեւոր մթերքներով. սակայն այդ գործը Վրէժում հաստատելը աննպատակայարմար համարուեց շատ նկատումներով. այդ պատճառով մթերքները մինչեւ օրս էլ թափուած են մեր պահեստումը։ Նոյն թուին ստացել ենք 1200 ռուբլու տաւեր, որ երբեմն գործ ենք ածում թռուցիկներ տպելու համար՝ կոպիայի եւ սովորական պրէսի տակ(12)։

Կազմակերպական տներ.— Մեր շրջանի չորս վայրերում պահում ենք մեր ծախքերով տներ իրենց պարագաներով։

Վրէժում՝ արհեստաւորների եւ եկող գնացող զինուորների ու գործիչների համար, նստում է մեզ վրայ 12000 դրան։ Մինարէթում՝ նստում է 28247 դրան, Աւարայրում՝ 17318 դրան եւ Մենաւորում՝ 11064 դրան։

Այս բոլոր տները պահում ենք մենք միայն երկրի տեղափոխութեան համար եւ բոլոր մեր շրջանի նիւթական միջոցները ապառում են դրանց վրայ։

Մենաւորը եւ իր դերը.— Մենաւորը մեզ եւ երկիրը իրար հետ կապող նշանաւոր կամուրջն է՝ երեք պետութեանց սահմաններում ընկած, շրջապատուած պարսիկներով եւ քրդերով։

Մենք՝ Երկրի գործիչների հետ ունեցած ընկերական խորհրդակցութիւնների ժամանակ, այնպէս էլ Շրջանային Ժողովում, այն եզրակացութեան եկանք, որ այդ Մենարանը վերցնենք մեր տրամադրութեան տակ իր բոլոր պարագաներով։ Մինչեւ 99 թուականը այդ Մենարանը քայքայուած էր։ Կարեւոր էր ահագին զոհողութիւններով վերանորոգել նրա մնտեսական դրութիւնը, ի նկատի ունենալով որ դրանից օգտուելու է մեր գործը։ Մենք այդ ուղղութեամբ մեծ ջանքեր ենք գործ դրել. դժբախտաբար մինչեւ այսօր էլ մեր յարաբերութիւնները չեն ճշդուել, չնորհիւ այն հանգամանքի, որ այդտեղ երկու հակադիր շահեր են ընդհարւում — մի կողմից վանքի մնտեսութիւնը եւ իրաւունքները իր վանահօր հետ, միւս կողմից՝ մեր կազմակերպական շահերը, որ յայտնի զոհողութիւն եւ սիստեմատիկութիւն է պահանջում։

Սակայն պէտք է ասենք, որ ներկայ վանահօրը մեր ընկերները ընդունել են իբրեւ անհրաժեշտութիւն, ուստի եւ տարել ենք նրա բոլոր կապրիզները(13)։ Այս է պատճառը, որ շարունակ եւ անվերջ թիւրիմացութիւններ են տեղի ունեցել։ Մի քանի անգամ մենք դիմումներ են արել, որ վանահօր անունով մեր ընկերներից մէկը գնայ եւ հաստատուի այդ Մենաւորում՝ հոգեւոր սքեմի տակ, բայց մեր պահանջները անհետեւանք են մնացել։ Սրանով գալիս ենք մի անգամ էլ շեշտելու, որ առանձին ուշադրութիւն դարձուի այդ շա՛տ կարեւոր կէտի վրայ։

Փոխադրութիւն գծեր.— Մարուստանից(14) գէնք եւ ռազմամթերք ստացել ենք Ափից-Մենաւոր, Կու

դաշտից՝ Բլուրի վրայով՝ Մենաւոր։ Այս վերջին գիծը միայն երեք ամսով է բացուում, երբ քրդերը քոչում են Մասսի հարաւային ստորոտները, Տաճկաց հողերը։ Այս տարի մեծ մասամբ փոխադրութիւնները այդ գծով են կատարուել սէկցիայի (?) եւ Մենաւորի ընկերների ղեկավարութեամբ։ Վերջերս երբ քրդերը վերադարձել են սարերից, մի խումբ Տաճկահայեր՝ երբ Կովկաս անցնելիս են եղել՝ Արաքսի շամբերում սպանուել են, եւ դրանով գիծը վտանգուել է։ Ջալալցի քրդերը արդէն սպասում են այդ կողմը. դրանով եւ փակուել է գիծը։

Մենք ջանքեր ենք գործ դրել Փարոսից Կառկառ գիծ բաց անելու. մի մաս էլ փոխադրել ենք, սակայն վերջը պարզուեց, որ լօլօ վայրերը անցել են ուղղակի գծով դէպի Շամ։

Սովորական մեր փոխադրութեան գիծը, Մինարէթից Բաչկալէի վրայով դէպի Շամ, մինչեւ օրս էլ անվտանգ է մնացել։

Մի ուրիշ գիծ, որ բացուած էր Կոթուրի վրայով Շամ՝ ներկայումս փակուած է, չնորհիւ խաբեբայ եւ վարձկան քրդերի, որոնց չենք վստահանում ապրանք տալ, որովհետեւ տարածների մեծ մասը իւրացրել են։

Մեր սովորական ներքին երթեւեկութիւնը, Աւարայրից Մենաւոր, կատարուած էր Պարսից գիւղերով, եւ որովհետեւ մեր երթեւեկութիւնը աչքի էր ընկել, մեր ընկերները ենթակայ էին յաճախակի յարձակումների եւ կողոպուտների. այդ պատճառով փոխեցինք լեռնական կուրալի ճանապարհը, խուսափած լինելու համար համաբ ընդհարումներից, ինչպիսի տակտիկա որոշել է մեր Ռայոնական Ժողովը՝ Պարսկաստանի համար։

Փոխադրութիւն.— 1904ին Մենաւորից Երկիր են ոխադրուել՝ մօսին 21, բերդան 3, ատրճանակ 5 հատ, մօսինի ծայր՝ 26134, բերդանի ծայր՝ 10464։

1905ին Մենաւորից փոխադրուած է՝ մօսին 11, բերդան 9, խնձորներ 14, ատրճանակ 17, մոսինի ծայր՝ 24763, բերդանի ծայր՝ 15220։

1904ին Աւարայրից փոխադրուած է, Ղօթուրի գծով, Կոմսի յանձնարարութեամբ, Դէրվիշ սուրհանդակի միջոցաւ՝ զատուրներ եւ երկու տասհարուածեան 120 փամփուշտով։ 1905ին նոյն գծով, Երկրից ուղարկուած ընկերների սուրհանդակով, բերդանի ծայր՝ 7000, որի կէսը քրդերը իւրացրել են (Մալխասի օրով)։ Իսկ նոյն թուին, Պատուելու օրով, փոխադրուած է մօսինի ծայր՝ 8400, բերդանի՝ 726 եւ 2 հատ բերդան հրացան։

Բացի վերոյիշեալներից, թէ՛ Մինարէթից ուրիշ գծով եւ թէ Մենաւորի վրայով փոխադրուած են թերթեր, հրացանի մասեր, դրամ եւ ուրիշ մանր-մունր իրեր։ Նոյնպէս եւ Ափից, Գիլանից եւ Անտառի վրայով թերթեր եւ այլ հրատարակութիւններ՝ դէպի Կովկաս։

ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ.—

(*) Վրէժում, բացի 17 խմբերից, կան եւ մի մարտական-մարզական խումբ եւ մի «Վահան պրոպագանդիստ» մասնախումբ։

(**) Մինարէթում ունինք եւ 5 խումբ՝ ատրիճներից կազմուած։

(***) Այժմ մեծ մասամբ քայքայուած՝ գործիչների բացակայութեան պատճառով։

Կորուստներ։— 1904–1905ի մեր կորուստներն են 7 մօսին 800 ծայրով եւ 200 բերդանի ծայր, կոմսի յանձնարարութեամբ Դէրվիշ սուրհանդակի միջոցով փոխադրուած՝ որը կորցրել է։

Քիւրտ Ֆարհատի կորցրածը՝ 1500 մօսինի ծայր (որի փոխարէն բռնել ենք մի քուռակը եւ երկու եզը)։ ինքը մեռաւ։

1905ին Մալխասը յանձնել էր Լօլօներին, որոնք իւրացրին, 3000 բերդանի ծայր։ Վաղար Պօղոսի ճանապարհին կորցրածը՝ 300 բերդանի ծայր։ Աւարայր–Մենաւոր ճանապարհին կողոպտուել է՝ 10 բերդան 60 ծայրով, մէկ մաուզէր 150 ծայրով, 15 օսմանեան ոսկի եւ հագուստներ ու զանազան իրեր։

Շաւրոյի սպանման ժամանակ՝ 1 մօսին, 160 ծայր։

Դումանի խմբի կորուստը՝ 6 մօսին, 5000 ծայր, 9 ձի եւ շատ իրեր։

Փոխիկի խմբի կորուստ՝ 15 մօսին, 13969 ծայր, 15 ձի։

Ընդհ. գումար,—	մօսին	29 կոթ,	21429 ծայր
	բերդան	1 կոթ,	3560 ծայր
	մաուզեր	1 կոթ,	150 ծայր
	ձի		24 հատ

Մարտական խմբեր։— 1904 Ապրիլի վերջին, պատրաստուեց 6 հոգինոց մի խումբ՝ Լեւոնի եւ Ջոլ–աղայի (15) մասնակցութեամբ, Մստոյի առաջնորդութեամբ. տարան 19 մօսին՝ 2000 ծայրով։ Սահմանը անցնելով, ուր ժամուայ ճանապարհ Շամին մնացած, կռուի են բռնւում, ուր սպանւում է Ջոլ–աղան եւ թշնամու ձեռքն է ընկնում ապրանքի մի մասը։

Նոյն թուի Մայիսին սկսուեց Դումանի խմբի պատրաստութիւնը։ 17 հոգի ձիով անցան սահմանը Ղոթուրի վրայով։ Տանում էին 17 մօսին՝ 9000 ծայրով, ռումբեր եւ խմորներ։ Սահմանից այն կողմ Սարապի մօտ կռուի են բռնւում, ընկնում են երկու ընկերներ, մնացեալները դառնում են Մինարէթ։

Նոյն թուի աշնանը, Վասպուրականի Կ. Կոմիտէի պահանջմամբ, ճանապարհ հանեցինք Փոխանի խումբը, բոլորը ձիաւոր, 15 հոգուց։ Տանում էին 15 մօսին՝ 13969 ծայրով։ Կռուի են բռնւում սահմանի այն կողմը Սաթմանիսի մօտ եւ ամբողջապէս էլ ջնջւում են։

Երկիր անցնող գործիչներ։— 1904, 1905, 1906ին Երկիր են անցել, մեր շրջանով, Մենաւորի վրայով՝ Շահբազը 5 ընկերներով, Աբամը, Աւետիսը, Ռուբէնը, Մշեցի Յարութիւնը, Մաշտոցը, Տիգրանը, Մստոն եւ Արտաշէսը (այս վերջինը, ճանապարհին վիրաւորուելով, թիւրիմացութեամբ վերադարձաւ)։ Վերջերս անցան Երկիր՝ Սարգիսը, Մալխասը, Ալէքը, Արմենակը, Թորգոմը, զինագործ Գրիգորը, Աբամը։ 1904–1906 թ. Երկրից դուրս եկել եւ մեր շրջանով գնացել են զանազան վայրեր՝ 650 հոգի։ Դրանց մէջ պիտի հաշուել եւ Անդրանիկի խումբը։

Նահատակներ։— Մեր շրջանում նահատակուել են Մնատն, Աւետիսը՝ Դումանի խմբից, Փոխանի խումբը՝ 15 հոգի՝ դրանց մէջ եւ զինագործ Արշակը և քուրդ Վալադ Մստոն եւ Շաւրոն,— ընդամէնը 18 հոգի։

Իրենց մահով մեռել են Մենաւորում՝ Մշեցի Գրիգոր Պօղոսեանը, որ Երկրից գալիս ճանապարհին Թոքերի բորբոքում էր ստացել եւ ոչ մի ժառանգութիւն չի թողել։ Վերջերս նոյն տեղում մեռաւ մեր Աւարայրի գործիչ ընկեր Պատուելին, որի մահից յետոյ նրա իրերի մէջ դուրս եկաւ 470 ռուբլի ռուսական դրամ, մի քանի ոսկէ դրամներ եւ մէկ բուլգարական երկաթուղու բաժնեթուղթ։ Այս առթիւ տեղն ու տեղը կազմուեց արձանագրութիւն, եւ որովհետեւ ոչ մի կտակ չէր թողել իր ժառանգութեան վերաբերմամբ, մենք յատկացրինք Կազմակերպութեան։

Գործիչներ մեր շրջանում։— Մինարէթում գործել են Սմսոնը, Լեւոնը, Սարգիսը, Մկրտիչը, Կորիւնը եւ ուրիշ ժամանակաւոր ուսուցիչներ։

Մենաւորում՝ Ընծայրը, Եփրեմը, Տեղացին, Յակովբը, Փայլակը եւ Մարզպետունին։ Վերջին երեքը երբեմն եւ՝ Աւարայրում։ Իսկ ներկայումս Աւարայրում՝ Տերսիմցի Աշոտը եւ Մարզպետունին։ Աւարայրում գործել են Պատուելին, Մալխասը եւ Մկրտիչը։ Վրէժում ազատ գործիչ չենք ունեցել, ինչպէս եւ Շահի, Գիլանի եւ Մազանդարանի կողմերում։

Կ. Կոմիտէի կազմը, որ բաղկացած է եղել առանց բացառութեան իրենց գործով զբաղուող անհատներից, իր վրայ է տարել ամբողջ շրջանի գործը։ Ընկ. Արմենակը 1904 եւ 1905ին շրջել է Ռաշտ, Թեհրան, մինչեւ Սպահան եւ 1906ին Մինարէթ, Աւարայր, Փարոս։ Ընկեր Ստեփանը Փարոս–Մինարէթ՝ կազմակերպական գործերով։ Ներկայումս Փարոսի շրջանը ղեկավարում է ընկ. Հայրապետը։

Կ. Կոմիտէի հրաւիրանօք ընկ. Միքայէլը շրջագայել է Թեհրանի եւ Մազանդարանի կողմերը։ Մեր շրջանի ճանապարհորդութիւնները կապուած են եղել մեծամեծ ծախքերի եւ դժուարութիւնների հետ, ուստի եւ հնարաւորութիւն չի եղել յաճախակի շրջագայելու։ եւ այսպէս, մեր շրջանի այս ու այն կողմը կատարուել են մի շարք տխուր երեւոյթներ, որոնք խուսափել են մեր անմիջական հսկողութիւնից։

Զեղծումներ։— Դրամական լուրջ զեղծումներ մեր շրջանում չեն կատարուել, բայց անկանոն գործառնութիւններ պատահել են։

Յ. Պ. Մինարէթի խմբերի անդամավճարները (730 դրան) գանձելով ծախսել է իր կարիքներին, առանց նախօրօք տեղական կոմիտէին իմաց տալու։ Երբ պահանջուել է հաշիւ, նա խոյս է տուել եւ սպառնալով՝ ընկերոջ դէմ անարժան դաւեր է սարքել, ստոր բամբասանքներով աշխատել է ընկերներին միմեանց դէմ հանել՝ իր կեղտերը մոռացնել տալու համար. այս պատճառով ընկերական վճռով հեռացուեց մեր շրջանից, որի մասին գրաւոր փաստաթղթերը ուղարկել ենք Արեւելեան Բիւրոյին։

Անուշեան անունով մի ուրիշը, որ թիւրիմացութեամբ մեր շարքերն էր մտել, Արեւելեան Բիւրոյից ստացած իրերը եւ ընկ. Արմենակի 200 ռուբլին տեղ չէր հասցրել։ Կոմիտէի եւ Կ. Կոմիտէի կազմի առաջ յայտարարեց, որ կորցրել է։ Այս առթիւ մենք Բիւրոյի հետ բանակցութեանց մէջ էինք, երբ ինքնասպանութեան փորձ արեց։ Սակայն չուտով առողջացաւ եւ հեռացաւ ինքնիրեն մեր շրջանից։ Դրամները գանձելու մասին գրել ենք Ոսկանապատի Կ. Կոմիտէին եւ այժմ պիտի գանձած լինեն։

Մազանդարանի ընկերների առաջարկութեամբ հեռացրել ենք Մելիք Փաշայեան անունով մէկին՝ իր ցոփ ու անվայել վարքի համար, որը մասնակցել է տեղական խմբերում։ Տես «Դրօշակ» №...(?)։

Տեռոր։— Տեռորական գործողութիւններ մեր շրջանում կատարուել են, առաջին՝ Սառայի լաճ Յակովբի վրայ, որ յայտնի էր մեզ իր այնքան ագէնտաբեր անցեալով. նախկին Շահբանդարի օգնական, յայտնի լրբտես՝ արշաւանքի ժամանակներից։ Փոխանի խմբի մեկնած առաւօտը, ծածկագիր հեռագիր էր տուել Վան եւ խմբի կորստեան մեծ պատճառը համարում ենք նրան։ Սրա անցեալի մասին գրուած է Արեւելեան Բիւրոյին եւ դեռ նախկին Կ. Կոմիտէի կողմից դատապարտուած էր տեռորի, սակայն գործադրուած անյաջող։

Երկրորդ՝ Փայլակցի Սմբատը, մի կատաբեալ պատուհաս ժողովրդի գլխին. գիւղի աղայի ձեռքին գործիքը եւ նրա հրամանների հլու կամակատարը. իբեն կողմն էր աշխատում գրաւել անգիտակից գիւղացիներին՝ մի օր Դաշնակցութեան, միւս օրը Հնչակեանների, եւ շարունակ լարում իրար դէմ։ Սա էր գլխաւոր պատճառը վերջերս մեր եւ Հնչակեան զինուորների մէջ տեղի ունեցած կռիւների, որը միշտ վերջացել է մէկի կամ միւսի մահուամբ։

Ժամանակին մանրամասն փաստաթղթերը ուղարկուած են Բիւրոներին։

Վերջերս տեղի ունեցաւ եւ Մհերի տեռորը։

Սպանուած են երկու քուրդ, որոնք մասնակցել են Փոխանի խմբի Ջնջմանը, ինչպէս իրենք էին խոստովանել։

Անհատական սպանութեան դէպք եղել է մեր շրջանում միայն մէկը։ 1906ի ամառը, Մահլամում, մեր զինուորների ձեռքով սպանւում է Անանիան, որը 1898թուի 9 նահատակների գազանաբար սպանութեան մէջ ջերմ մասնակցութիւն է ունեցել, եւ այն ժամանակից արդէն Կ. Կոմիտէի կազմը դատապարտել էր տեռորի։

Ինքնապաշտպանութեան գործը մեզանում։— Կովկասեան հայ–թուրքական կռիւները, մեզանում, որպէս սահմանակից երկրում, մեծ հաւանականութիւն կար, որ կարող էին արձագանգ տալ, ուստի եւ հարկաւոր էր ժողովուրդը պատրաստել անակնկալ յարձակումներից։ Շրջանի մեր բոլոր մարմինները ամէն կերպ աշխատեցին պատրաստել ժողովուրդը դիմադրելու թուրք խուժանին, եթէ երբեւէ այդ բանը պատահէր. բացի այդ, կազմակերպուեց Վրէժի շրջանում ինքնապաշտպանութեան կոմիտէ, կազմակերպութիւնից անկախ, իր կնիքով՝ «Վրէժի Ինքնապաշտպանութեան Կոմիտէ» անուան տակ։ Այդպիսի մի գործ, ինչպիսին է ինքնապաշտպանութիւնը, ցանկալի էր տեսնել ամբողջ շրջանի հայութեան կողմից կազմակերպուած եւ նրա ջանքերով հիմնաւորուած։ Բայց որովհետեւ չէզոք ժողովուրդը անկարող է այդպիսի մի գործի հիմքը դնել եւ առաջ տանել, իսկ միւս կուսակցութիւնները իրենց անտարբերութիւնն էին միայն ցոյց տալիս, ուստի եւ այդ գործը մնաց դարձեալ տեղական մարմինների վրայ (թէեւ այլ անուան տակ)։ Սկսուեց արդէն մի եռանդուն գործունէութիւն բոլոր շրջաններում՝ զինելու ժողովուրդը։ Վրէժի շրջանում հանգանակուեց 35·415 դրան, որից գնուեց 39 հատ զանազան տեսակի զէնքեր (18 մօսին, 21 բերդան), իւրաքանչիւր հրացանը 180 փամփուշտով։

Հայ–թուրքական ընդհարումները արձագանգ չտուին Պարսկաստանում, թէեւ անմիաս խլրտումներ տեղի ունեցան։ Այդ պատճառով, երբ վտանգը անցած էր համարում, մի քանի աղաներ ձայն բարձրացրին, որ ինքնապաշտպանութեան զէնքերը ծախուեն եւ այդ դրամով ապահովուեն քաղաքի դպրոցները։ Բ. Ռայոնական ժողովը, ի նկատի ունենալով, որ յիրաւի զէնքերը կարող են վտանգուել, որոշեց յանձնել Կ. Կոմիտէի իրաւասութեան, նրան յանձնեց եւ ղեկավարելու՝ շրջանի ինքնապաշտպանութեան գործը։ Այդպէս էլ արուեց։ Այժմ այդ զէնքերը մեր տրամադրութեան տակ են, որոնց մանրամասն հաշիւը ժամանակին, ըստ ժողովրդի պահանջման, ներկայացուեցաւ Թեմական Խորհրդին։

Մեր ջանքերով ժողովրդի ինքնապաշտպանութեան համար ձեռք բերուած զէնքերի հաշիւը հետեւեալն է.—

Վրէժում՝ ինքնապաշտպանութեան զէնքերը՝ 39 հրացան, 10725 փամփուշտ։

Վրէժում՝ ժողովրդի մօտ, անհատական սեփականութիւն, մեր ջանքերով առնուած 167 հրացան՝ 180ական փամփուշտով, 30 ատրճանակ՝ 50ական փամփուշտով, 1 փութ վառօդ, 47 լիտր կապար։

Մինարէթ,— ժողովրդի անհատական սեփականու-

թիւն՝ 187 հրացան 17·296 փամփուշտ, 57 որորդական հրացան՝ 27ական փամփուշտով, 149 ատրճանակ 3499 փամփուշտ, 16 փ. 26 ֆ. կապար, 1 փ. 35 ֆ. վառօդ, 14·151 պիստոն:

Գիլանի շրջան,— Ժող. հաշ. 29 հրացան՝ 125ական փամփուշտով, 73 ատրճանակ՝ 50ական փամփուշտով:

Ալաբայր,— Ժող. անհատ. զէնք՝ 10 պիստոնի հրացան, 15 ատրճանակ՝ 5–6ական (?) փամփուշտով:

Անտառ,— Ժող. անհատ. զէնք՝ 7 հրացան՝ 50ական փամփուշտով, 7 ատրճանակ՝ 50ական փամփուշտ.:

Շահսէվան,— Ժող. անհատ. զէնք՝ 12 հրացան՝ 200ական փամփուշտով, 15 ատրճանակ՝ 50ական փամփուշտով:

Մարաղա,— Ժող. անհատ. զէնք՝ 8 եւրոպական հրացան՝ 315 փամփուշտ, 14 ատրճանակ՝ 310 փամփուշտ, 19 վարանդիլ՝ 890 փամփուշտ:

Արտազ,— Ժող. անհատ. զէնք՝ 80 հրացան, 8500 փամփուշտ:

Շահի, Մազանդարանի, Փարոսի եւ Ղարադաղի, մեր ջանքերով Ժողովրդի ինքնապաշտպանութեան գործի համար գնուած զէնքերի հաշիւը ձեռքի տակ չունենք, ինչպէս եւ առանձին հաշիւներ չենք պահել Ջանգեզուրցիների համար գնուած զէնքերի, որոնց ներկայացուցիչը եկել մեր միջոցով գնել ու տարել է:

Վտանգալից օրերում, մեր օժանդակող խմբերից կազմել ենք մեր շրջանի զանազան կէտերում՝ մարտական խմբեր, որոնց ղեկավարել են տեղական մարմինները:

Մեր յարաբերութիւնները միւս կուսակցութիւնների հետ.— Արմենականներ, այժմ, գրեթէ ոչ մի տեղ չկան. Մինարէթում եղածները լուծուեցին եւ մասն մեր շարքերը: Եղած անհատներն էլ առանձին կազմակերպութիւն չեն ներկայացնում: Շատ պարզ է՝ նրանց հետ պաշտօնական ոչ մի յարաբերութիւն չէինք կարող ունենալ: Նոյնը կարելի է ասել սոց.-դեմոկրատ մի քանի անհատների մասին, որոնք հնչակեան վերջին Ընդհ. Ժողովից յետոյ են բաժանուել:

Հնչակեան կուսակցութիւնը Վրէժում ունի «Հընչակեան Ս. Դ. կուսակցութեան Պարսկաստանի մասնաճիւղերի գործադիր յանձնախումբ» մեծ տիտղոսի տակ Վարչութիւն, ինչպէս Ռաշտում, Թեհրանում եւ Սալմաստում մասնաճիւղային վարչութիւններ: Սակայն յաջողութիւն չեն գտնում եւ հետեւողներ քիչ ունին:

Յեղափոխական ձեռնարկներ երբեք չեն ունեցել, եթէ չհաշուենք 1904ի Ժողոված խումբը՝ 25 հոգուց բաղկացած, որ Երկիր պիտի անցնէր: Ահագին աղմուկով պատրաստուեցին, վճռական բոպէին վերադարձան: Դրանցից բարեխիղճները գնացին իրենց համար գործ որոնելու, իսկ գործից փախչողները մնացին Սալմաստում եւ Ժողովրդի գլխին կատարեալ պատուհաս դարձան, ապրելով նրա հաշուով եւ ինքնագլուխ թոյլ տալով ամէն տեսակ կամայականութիւններ:

1897ի արշաւանքից [յետոյ]՝ երբ ամբողջ Կովկասեան մասուլը զբաղուած էր հայ յեղափոխականների «ենիչերիական» գործերի մերկացումներով, մենք սարսափելով ականատես էինք յեղափոխականին անվայել այդ արարքներին եւ ամէն ջանք գործ էինք դնում վերականգնելու յեղափոխութեան վարկը: Միւս կողմից հնչակեան գործիչները Թաւրիզից ոչ միայն ոչ մի ջանք գործ չէին դնում զսպելու, նոյնիսկ խրախուսում էին, համարելով այդ կարգի վերաբերմունքը՝ մի հակադրութիւն Դաշնակցութեան, որովհետեւ դրանով մնասում էինք մենք: Խուսափելու համար եղբայրասպան կռիւներից, մենք աշխատում էինք բանակցելով հեռացնել այդ չարիքները: Համոզուած լինելով նրանց արարքների տգեղութեանը, դիմումներ էինք անում նրանց ղեկավարներին, որոշումներ էինք կայացնում, ոսկայն նրանք էին, որ չէին յարգում. իրենց որոշումները առաջին խախտողները ու արհամարհողները նրանք էին: Մեր համբերութիւնը նրանք այլ կերպ էին բացատրում: Նրանց ցանկալի էր խառնակ եւ անպատուաբեր դրութիւն եւ ա՛յդ է պատճառը, որ ոչ մի դրական հետեւանքի չհասանք: Միւս կողմից՝ նկատելով, որ մենք ճանաչելով նրանց իրրեւ մի կուսակցութիւն անպատիժ էինք թողնում նրանց այդ ուղղութեամբ արած քայլերը, աւելի լրբացան: Նրանց ղեկավարները աշխատեցին գրգռել իրենց տգէտ զինուորներին մեր գործիչ ընկերների դէմ, հաւատացնելով նրանց թէ «որա՛նք են պատճառը, որ մենք յաջողութիւն չենք գտնում Սալմաստում, որա՛նք են պատճառը, որ ժողովուրդը ատում է մեզ», եւ համարում էին մեզ խոչընդոտ՝ իրենց ենիչերիական գործողութիւնների: Երբ հնչակեան Ընդհ. Ժողովից յետոյ նրանց բանիմաց ընկերները բաժանուեցին այդ կուսակցութիւնից, գործը մնաց մի քանի երիտասարդների ձեռքը, որոնք սկսեցին ձեռքի տակից գրգռել մեր այս ու այն գործչի դէմ: Այդպիսի գործիքներ չեն պակասում նրանց. եւ այդ պատճառով էր, որ մեր ընկերը ենթարկուեց անյաջող տեռորի, որի մեղքը եղել է հէնց նրա մէջ, որ մի հնչակեան գործիչ չէ կարողացել տանել նրա քաղաքում ունեցած յաջողութիւնները: Յարձակուողը կրեց իր պատիժը. այդ մասին մեր պատգամաւորը կը տայ մանրամասն բացատրութիւններ: Մեր այս խիստ պատասխանը նրանց առիթ տուեց այդ անունը չահագործելու, բայց եւ այնպէս մի շատ լաւ դաս էր նրանց համար եւ հէնց այդ հանգամանքը առիթ եղաւ բացելու իրենց ներսի կեղտերը, եւ հրաւիրելու իրենց կենտրոնի ուշադրութիւնը: Հնչակեան կենտրոնը դիմել էր Արեւմտեան եւ Արեւելեան Բիւրոների միջոցով մեզ՝ միջնորդ դատարանի առաջ պարզելու վերջին դէպքի պատճառները: Մենք սիրով ընդունեցինք եւ առաջարկեցինք քննել ժամանակագրական կարգով 98ից

յետոյ մեր եւ նրանց մէջ տեղի ունեցած տխուր դէպքերը, որոնց անմիջական հետեւանքն էր վերջին դէպքը: Սակայն նրանց լիազօրը եւ կենտրոնի ներկայացուցիչը, նրա հետ եւ միւսները հրաժարուեցին եւ խնդրեցին անցեալի վրայ դիմ քաշել եւ նոր համերաշխական ծրագիր մշակել: Այդ բանակցութիւնների արդիւնքը ներկայացնում ենք ձեզ գրաւոր կերպով:

Մեր յարաբերութիւնները պարսիկների հետ.— Պարսիկ կառավարութիւնը՝ մեր մէջ կատարուող բոլոր գործողութիւնները շատ լաւ գիտէ, չնորհիւ իր լաւատեղեակ լրտեսների. սակայն երբեք չի պատահել, որ անհանգստացնի մեզ այս երկու տարուայ ընթացքում: Զգալով մեր ուժը Սալմաստում, տեղական դատաւորը մի քանի անգամ մեզ հետ բանակցութիւնների մէջ է մտել Աւդոյների ցեղապետ Ջաֆար աղայի դէմ կատարուելիք արշաւանքին մասնակցելու համար. խօսուել է Թագաժառանգի անունից: Նրանք համարելով մեզ տաճիկ կառավարութեան թշնամիներ, մինչեւ այսօր տածում են այն յոյսը, որ թերեւս վերջերս երկու տէրութեանց մէջ տեղի ունեցած կոնֆլիկտին(16), իբրեւ մի հակադիր ոյժ ընդդէմ քրդերի, գործ ածեն Դաշնակցութիւնը եւ ընդհանրապէս՝ Հայ Յեղափոխութիւնը:

Եղել են դէպքեր, որ մեր մթերքները բռնուել են, սակայն կարողացել ենք կաշառքով յետ ստանալ: Մեզ համար ցաւալի էր այս տարուայ «Դրօշակ»ի այրուելը, որը սակայն անպատեհի չէր. հայ-Թուրքական ընդհարումների ժամանակ արդէն խօսւում էր այդ մասին եւ Ռուսաց կողմից ինտրիգներ(17) էին լարւում դեռ կալուածական խնդիրների յուզման ժամանակ. ինչպէս եւ ցէնզուրայի(18) խնդիր էր յարուցուած գործակալական հեռագրերի վերաբերմամբ ուսումնական կռուի ժամանակ:

Թեհրանից լուր ենք ստացել, որ «Դրօշակ»ի մուտքը նորից թոյլատրելու համար ամէն ջանք գործադրում են եւ Սադրազամը խոստացել է տալ ֆերմանը այդ բանի համար այն ժամանակ՝ երբ վերջնականապէս կը վճռուի փոխառութեան խնդիրը Ռուսաց հետ:

Պարսկական Սահմանադրութեան առթիւ տեղի ունեցած շարժումը մենք չէինք կարող մասնակցել շատ հասկանալի պատճառներով: Հաստատ աղբիւրներից լսում էինք, որ Թագաժառանգը եւ նրա մերձաւորները ուզում էին Օրդուբադցիների միջոցաւ ստեղծել հայ-Թուրքական կոտորած, դրանով ստիպելու անգլիական կոնսուլին՝ հեռացնելու շարժման պարագլուխներին եւ համոզելու նրան, որ այդ շարժումը քաղաքական բրնոյթ չունի, այլ լոկ կովկասեան հայ-Թուրքական ընդհարման արձագանգն է: Մի թեթեւ առիթ բաւական կը լինէր այդ արիւնահեղութեան համար եւ մենք զոհ կարող էինք գնալ պրովոկացիայի(19): Իրրեւ առանձին կուսակցութիւն, մենք չէինք կարող ասպարէզ գալ, որովհետեւ Դաշնակցութիւնը, պարսիկ մասսայի հասկացողութեամբ, հասկացւում է իսլամի թշնամի: Այդ ուղղութեամբ Հաբլ-իլ-մաթինը եւ Աղայեւի օրգանը կատարել են իրենց դերը:

Որովհետեւ այդ շարժումը ունէր միայն ազգայնական-կրօնական բնոյթ, մեր մասնակցութիւնը այդպիսի մի շարժման յետադիմական քայլ կը լինէր:

Մեր յարաբերութիւնները քրդերի հետ.— Մեր յարաբերութիւնները քրդերի հետ վերջին երկու տարիներում եղել են շատ բարեկամական: Ջաֆար աղայի՝ պարսիկների հետ ունեցած կռիւներում, մենք մնացինք ձեռնպահ, չնայելով, որ կառավարութիւնը մեզ դրդում էր դէպի կռիւ: Մեր այս չէզոք դիրքը շատ լաւ նկատեցին Աւդոյները եւ հայ գիւղերին երբեք ձեռք չտուին, մինչդեռ Թուրք գիւղերը ասպատակութեան ենթակայ էին հէնց նոյն ցեղի կողմից:

Սոմայի Ահմադ խանը դիմել էր մեզ եւ մի տեսակցութիւն խնդրել: Մեր ընկերները չորս հոգի գնացին դաշտում նրան այցելութեան եւ բարեկամական խօսքեր փոխանակեցին: Դա ի հարկէ մի առանձին կարեւորութիւն չի ներկայացնում: Առ հասարակ մեր հարեւան քրդերի պահանջը մեզնից այն է, որ իրենց ասպատակութիւններին խոչընդոտ չհանդիսանանք, իսկ փոխարէնը նրանք խոստանում են մեզ ձեռք չտալ եւ պէտք է ասել, որ խօսքերն էլ պահում են:

Դեռ 1904ին, ընկ. Մալխասը գնաց բանակցելու Շամգիսդնի Շէյխ Սադրզի հետ, յայտնի Շէյխ Իբադուլլահի որդին: Նախօրօք մի քանի արմենականներ և հնչակեաններ եղել են այդ Շէյխի մօտ եւ ի չարն են գործ դրել նրա վստահութիւնը, կորզել են մի քանի ռակիներ՝ Հայոց ընկերութեան անունից: Սկզբում անվստահութեամբ է վերաբերուել եւ դէպի մեր ընկերը, եւ խորամանկութեամբ հարցրել է «Փողի պէտք չունի՞ս արդեօք»: Բայց երբ նկատել է, որ դիմացինը պաշտօնապէս ներկայացող եւ դրամի պէտք չունեցող մի անձ է, երկար խորհրդակցութիւն է ունեցել. յոյս է յայտնել, որ Հայերը անպատճառ կը յաղթեն, քանի որ քրիստոնեաները օգնում են: Ինքը իր կողմից կ'անի ամէն բան եւ կը համաձայնի դաշնակցելու հայ յեղափոխականների հետ՝ երեք պայմանով.— 1) Ընկերութիւնը (այդպէս են հասկանում մեզ քրդերը) պայմանաթուղթ պիտի տայ, որ երբ Հայերը ազատուեն, Թողնեն իրեն իշխելու մինչեւ Մուսուլի կողմերը՝ բոլոր քրդական ցեղերի վրայ: 2) իր հաշուով (ծախսով) 200 մօսինի հրացան մատակարարեն իրեն. 3) Որոշեն գաղտնիք պահել այս տեսակցութիւնը եւ ոչ մի տեղ չյայտնել եւ 4) Երբ ապստամբութիւնը կը բռնկի, ինքն էլ դուրս կը գայ կառավարութեան դէմ իր բոլոր ձիաւորներով: Այս չէլիբ շատ խորամանկ է եւ նրանից մի տեսակցութեամբ որոշ համոզման գալ չէ կարելի: Ա-

ւելի չատ խարդի տպաւորութիւն է թողել եւ որովհետեւ ինքը կառավարութեան հետ զանազան հաշիւներ ունի, ցանկալի է իրեն, որ կառավարութեան գլուխը միշտ խառը տեսնէ: Վաղուց է, որ տաճիկ կառավարութիւնը ցանկանում է նրա թուքունի արդիւնաբերութիւնները մաքսի ենթարկել, բայց չէ յաջողում:

Անցեալ տարի կառավարութիւնը նրան հրաւիրեց Կ. Պոլիս եւ մեծ պատիւներով վերադարձրեց, որովհետեւ Պարսից կառավարութեան հետ հաշիւներ ունէր մաքրելու եւ այսօր, Լահիջանում, տաճիկ զօրքերի առաջապահ ձիաւորները դրա ցեղիցն են:

Շէյխի՝ մեր հետ ունեցած բանակցութեանց մասին գրել ենք Արեւմտեան Բիւրոյին, որից որեւէ ցուցմունք, ապագայում մեր բռնելիք դիրքի մասին, չենք ստացել: Վերջերս Մերախորեան անունով մի վանեցի Շէյխի մօտն է, նրա երեխաների դաստիարակն է: Նա մտել է մեր Ուրմիայի ընկերոջ հետ թղթակցութեան մէջ, յայտնելով, որ Շէյխը ուզում է բանակցել հայ յեղափոխականների հետ եւայլն. իսկ ինքը — Մերախորեանը — աւելացնում է, որ պատրաստ է խոհեմ միջոցներով օգտակար լինել գործին: Մերախորեանը մի առանձին վստահութիւն ներշնչող մարդ չի երեւում եւ մենք խորհուրդ տուինք մեր ընկերոջը՝ սպասողական դիրք բռնել:

1901ից մենք ձեռնարկել ենք լուրջ պրոպագանդի քրդերի մէջ: Մեր սահմանագլխում քիւրդ Մուստաֆա բէկի մօտ ուղարկեցինք մեր ընկ. Արմենակին(20) բժշկի անուան տակ. եւ օգտուելով նրա բարեկամութիւնից, նրա մարդկանց միջոցով փոխադրութիւններ էինք անում, տարածում էինք Բեղբրխան բէկի տղայի հրատարակութիւնները: Մեր առաջարկութեամբ, Վեհափառի կողմից մի արծաթէ պապիրոսի տուփ նուէր բերինք եւ դրանից յետոյ արդէն մեր բարեկամութիւնը հաստատուած էր: Սարդարի հետ կռուելով, Մուստաֆա բէկը փախաւ Տաճկաստան: Նրան փոխարինեց Խաչէն գիւղի Հէյդարանցիների ցեղապետ՝ համիտիէի գայմագամ քիւրդ Մահմէդ բէկը: Սրա հետն էլ նոյն յարաբերութիւնները մշակեցինք եւ մինչեւ օրս էլ օգտուում ենք նրա մարդկանց ծառայութիւններից: Այդ քիւրդը Տաճկաց սահմանումն է. դրա մարդկանց հետ փոխադրելիս, Խաչէնի եւ Պզտիկ գիւղի մէջ 500 ծայր բռնում է: Տանջանքի տակ յայտնում է, ո՛րտեղից եւ ումից ստացած լինելը: Քիւրդ բէկը վաղօրօք մարդ է ուղարկում գիւղը, ամէն բան պահել է տալիս եւ դրանով խուզարկութիւնը ապարդիւն է անցնում. ի նշան շնորհակալութեան՝ նրան մի գրամաֆոն(21) ընծայ տրուեց: Ի դէպ ասենք, որ նոյնպիսի բանակցութիւնների եւ պրոպագանդի ձեռնարկեցինք սահմանագլխի պարսիկ խաների հետ: Սարդարը հեռացրեց Զառղամ-Փաշա խանին՝ յեղափոխականներին հովանաւորելու համար:

Վերջերս Մակուայ Սարդարը, որ միշտ անողոք է եղել դէպի հայ յեղափոխականները, թուլացրել է իր հալածանքը շնորհիւ Դաշնակցութեան ինքնապաշտպանութեան գործում ցոյց տուած կորովին: Իր եղբօր որդին անցեալ տարի ենթարկուել էր թալանի մերոնց կողմից: Այս դէպքը զայրացրել էր նրան, միեւնոյն ժամանակ համոզել էր նրան, որ հայերն էլ ակն ընդ ականի օրէնքը գործադրել կարող են: Սակայն առանց մեր խորհրդի՝ «էկցիան (?) միջնորդել էր Արեւելեան Բիւրոյին, որը վճռել էր 1500 ռուբլի ուղարկել մի ռակէ ժամացոյցի հետ միասին, իր կորստի փոխարէն՝ որ ցոյց էր տուած 2600 ռուբլի:

Մեր յարաբերութիւնները Ասորիների հետ.— Մեր շրջանում ասորիները ապրում են Սալմաստի եւ Ուրմիայի գաւառներում: Մեր յարաբերութիւնները նրանց հետ եղել են չատ բարեկամական եւ նոյնիսկ նրանցից ունենք 5 խումբ: Պէտք է ասել, որ դրանք մտել են մեր մէջ պաշտպանութիւն գտնելու ենիչերիների հալածանքներից, մանաւանդ վերջերս՝ երբ հնչակեան փչացած զինուորները հարստահարեցին նրանց: Բայց միեւնոյն ժամանակ նրանց մեր մէջ մտնելը թիւրիմացութիւն չպէտք է համարել, որովհետեւ մեր 16 տարուայ գործունէութիւնը Սալմաստում նրանց աչքի առաջ փռուած է եղել: Նրանք նկատել են մեր գործիչներին իբրեւ ժողովրդի պաշտպանների եւ աշխատել են աջակցութիւն ցոյց տալ նրանց ամէն դէպքում: Ասորի ինտելիգէնտ երիտասարդները երբեմն մեզ անգնահատելի ծառայութիւններ են մատուցել: Սակայն դրանով [հանդերձ] չատ հեռու են մեզ հետ իբրեւ յեղափոխականներ դաշնակցելու: Այդ գաւառներում նրանք ներկայանում են իբրեւ մի այլասերուած ժողովուրդ,— գլխաւորաբար խաչագողներ ու խաբեբաներ են: Հայրենասիրութիւն, ազգասիրութիւն՝ դրանց մէջ կապուած են միմիայն անձնական շահերի հետ: Բողոքելու տարբերական զգացմունքը բացակայում է դրանց մէջ:

Մեզ հետաքրքրել է երկար տարիներից ի վեր Մար-Շիմոնի հետ Զուլամերկում յարաբերութիւններ ստեղծելը, սակայն մինչեւ այժմ այդ ուղղութեամբ արած բոլոր քայլերը ապարդիւն են անցել: Մենք մտածեցինք այդ յաջողցնել Պարսկաստանի ասորիների միջոցով եւ մի քանի անգամներ էլ փորձեր արեցինք, բայց միշտ էլ խաբուել ենք զանազան աֆերիստներից(22). Ներկայումս եւս առաւել դժուար է այդ խնդիրը, որովհետեւ Մար-Շիմոնի մահից յետոյ նրա ժառանգը Ռուսաց Ուրմիայի միսսիայի հետ բանակցութեանց մէջ է եւ իբրեւ թէ իր հետեւորդներով միանալու է Օրթոդոքս Եկեղեցու հետ: Նա 20 տարեկան պատանի է եւ մի առանձին յարգանք չի վայելում այս կողմի իր ազգակիցների մէջ, իսկ սահմանից այն կողմը դժուար կարելի է ասել:

Մի քանի խօսք էլ հրեաների մասին: Դրանք խեղճ ու կրակ ժողովուրդ են, ճնշուած ու հարստահարուած պարսիկ մոլեռանդութեան բերումով: Մեծ մասը վաճառական-չարչիներ են: Դրանցից մի քանի բարեկամներ ունենք, որոնցից երբեմն օգտուում ենք Բաշկալայի վրայով Երկիր դրամ փոխադրելիս:

Գործիչ տրամադրելի ընկերներ.— Մեր շրջանում տրամադրելի ընկերներ են՝

1. Հայրապետ Վանեցի, Կ. Կոմիտէի անդամ, այժմ Փարոսում գործում է ուսուցիչ անուան տակ, տրամադիր ոյժ է Երկիր անցնելու:

2. Տեղական երիտասարդներից՝ Վահանը(23), Կ. Կոմիտէի հրաւիրանօք այժմ կազմի մէջ եւ գործում է իբրեւ տպատ գործիչ: Տրամադրելի է անում իրեն Ընդհանուր Ժողովին՝ նախ Ցուցական Մարմնի ձեռքի տակ Երկրում, հակառակ պարագային անցնել Վասպուրականի Կ. Կոմիտէի շրջանում գործելու:

3. Մինարէթում Վրոյրը եւ Զաւէնը, որ եկած են Երկիր անցնելու, բայց առայժմ մնում են Մինարէթում իբրեւ ուսուցիչ: Նոյնպէս եւ Տերսիմցի Աշոտը:

4. Ընկեր Մարդպետունին, որ ներկայումս վարում է Աւարայրի փոխադրական գործը:

5. Յրդ Ընդհանուր Ժողովում որոշուած էր, որ Մինարէթի գործիչ ընկ. Սամսոնը(24) Երկիր անցնի, նոյնը պահանջել էին եւ Երկրի ընկերները: Մեր պընդումներով եւ առաջարկութեամբ եւ Բիւրոյի հաւանութեամբ, նա մնաց Մինարէթում: Հայ-Թուրքական ըսպասուելիք ընդհարման ժամանակ մեր գործերը կարող էին չափազանց վնասուել եւ նրան փոխարինող ոյժ չունէինք:

Առաջարկներ.— 1) Կ. Կոմիտէն կատարեալ համոյթ է 1906 Թուի Փետրուարին Վրէժում գումարուած Շրջանային Ժողովի որոշման՝ ունենալ Պարսկաստանում երկու Կենտրոնական Կոմիտէ: Այդ անհրաժեշտ է յեղափոխական ոգին ժողովրդի մէջ վառ պահելու եւ աւելի լայն շրջանում տարածելու համար: Շնորհիւ շրջանի չատ մեծութեան եւ ճանապարհների կանոնաւորութեան կատարեալ բացակայութեան, մենք անկարող ենք եղել կանոնաւոր կերպով կառավարել մեր այնքան ընդարձակ շրջանը: Եւ մենք ամենայարմար վայրը նկատում ենք Ռաշտը. չնայելով, որ Կ. Կոմիտէ կազմելու համար չէ լրացնում ամէն տեսակի պահանջները, բայց եւ այնպէս մեզ թւում է, որ կարելի է, ի նկատի ունենալով վերոյիշեալ պատճառաբանութիւնները, եւ որ ժամանակի ընթացքում կը կանոնաւորուի:

2) Ունենալ երեք Բիւրո: Շատ ցանկալի կը լինէր, որ այդ [երրորդը] հէնց բուն Երկրում լինէր. բայց որովհետեւ այդ անկարելի է արդէն հանրածանօթ պատճառներով, աւելի յարմար է տեղաւորել Տաճկահայաստանին չատ մօտ ու նրա դատով աւելի շահագրգռուած, նրա պայմաններին աւելի մօտ, ծանօթ մի վայրում: Մենք ամենայարմար վայրը նկատում ենք Պարսկաստանը, եւ հէնց Վրէժում:

Յրդ Բիւրոյի շրջանի մէջ կը մտնեն Պարսկաստանի եւ Տաճկահայաստանի Կ. Կոմիտէները: Յրդ Բիւրոն կազմուած կը լինի Երկրի եւ Վրէժի ընկերներից:

Հ.Յ.Դ. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ
(Կնիք)

---

(1) Տագնապը:
(2) Ուժը, թափը, մղումը:
(3) Մղձաւանջ:
(4) Հակազդեցութիւն՝ ոչ-դրական իմաստով. տեղատուութիւն:
(5) Առարկան, նպատակը:
(6) Ժողովրդավարական, ռամկավարական:
(7) Բանավէճ, հակառառութիւն:
(8) Որոշ չէ թէ ի՛նչ պէտքի մասին է խօսքը, ըստուած անշուշտ՝ որոշ ուժերու կամ անհատներու միացման մը իմաստով:
(9) Խառնուածք:
(10) Հոս եւս՝ հինէն եկող շփոթ մը, — «Ռայոնական ժողով» գործածուած է «Շրջանային ժողով»ի իմաստով: Վրէժի շրջանը (Ատրպատական) մէկ կեդրոնական կոմիտէութիւն էր, եւ կրնար Շրջանային ժողով միայն գումարել: Ռայոնականը բազմաթիւ Կ. Կոմիտէներու ներկայացուցիչներու հաւաքով կազմուած ժողովն է:
(11) Արհեստակցական:
(12) Ըստ երեւոյթին՝ պատճէնահանման նախնական ձեւեր:
(13) Փայտիները:
(14) Կովկասէն (Ռուսաստանէն):
(15) Ցովհաննէս Ֆլէեան (Զոյ-Աղա), մասնակցած Հ. Յ. Դ. Յրդ Ընդհ. Ժողովին եւ նահատակուած դէպի Վան վերադարձի ճամբուն վրայ:
(16) Բախում, հակադրութիւն:
(17) Դաւեր, խառնակչութիւններ:
(18) Գրաքննութեան:
(19) Կանխամտածուած եւ կազմակերպուած գրգռութիւն:
(20) Ատրպատականի 1897–1904 տարիներու գործունէութեան գծով բազմիցս յիշատակուող Արմենակը, ամենայն հաւանականութեամբ, գործիչ Արմենակ Օխիկեանն է, ծանօթ նաեւ Սլաֆ ծածկանունով:
(21) Հին ձեւի ձայնագիր մեքենայ, phonographe:
(22) Պատեհապաշտներ, շահամոլներ:
(23) Հաւանօրէն՝ Վահան Զաքարեան:
(24) Սամսոն խան Թադէոսեան:

2.— ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԻ 1905 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Նամակի մեծ եւ երկար չափի 3 երկերես բուլթերէ կազմուած տետրակ: Տեղեկագիրը, գրուած սեւ մելանով, կը գրաւէ 8 էջ: Ստորագրուած է՝ «Հ. Յ. Դ. Վրէժստանի Կ. Կոմիտէ. 1905»: Կնիք չի կրեր:

1904 *Թուի Դեկտեմբերի վերջերին, տեղի ունեցաւ Վրէժի շրջանի առաջին Պատգամաւորական Ժողովը:*

Այդ ժողովը աւելի ճիշդ՝ Կ. Կոմիտէի, սահմանադրական մի քանի գործիչների եւ տեղական մի քանի ընկերների խառը ժողով էր:

Այդ ժողովում Կ. Կոմիտէի ներկայացուցիչների եւ շրջանից եկած գործիչների ձայներով, միաձայն ընտրութեամբ, ընտրուել է ներկայ Կ. Կոմիտէս՝ հինգ անդամներով:

Մայիսի վերջերին անդամներից մէկը Թողնում է Վրէժը եւ անցնում Սարուստան, միեւնոյն ժամանակ Երկիր է անցնում ընկեր Մինասը, որ վարում էր Կ. Կոմիտէիս քարտուղարութեան պաշտօնը: Կ. Կոմիտէս կարեւոր է գտնում հրաւիրել Վրէժի Կոմիտէի անդամ Հ. Գ.-ին, քարտուղարութիւնը վարելու համար, միեւնոյն ժամանակ որպէս Կ. Կոմիտէի օժանդակ ընկեր:

Կ. Կոմիտէս իր գործունէութիւնը սկսել է Ճունուար 4ից: Տարուայ ընթացքում գումարել է 38 նիստ (բացի արտաքոյ կարգի նիստերից), նաեւ զբաղուել է իր շրջանի կազմակերպական գործով եւ խնդիրների կարգադրութեամբ:

Տարուայ սկզբում մեր շրջանը ունեցել է երկու Կոմիտէ՝ «Վրէժ» եւ «Գիլան», որոնցից օրինական կարգով (ընտրութեամբ) կազմուած է եղել միայն «Վրէժ»ը: Իսկ երկրորդը տարուայ կէսին միայն առաջին անգամ վերակազմուել է ըստ կանոնագրութեան: Քվեարկողների ընդհանուր թիւը մօտաւորապէս եղել է 48–50: Տարուայ ընթացքում կազմուել է երեք նոր Կոմիտէ՝ 1. Շահ, որ կազմուել է մեր ուղարկած շրջիկ պատուիրակ եւ Կ. Կոմիտէի անդամ Արմենակի միջոցաւ, 2. Փարոս եւ 3. Մինարէթ, որոնք կազմուել են Մինարէթի ներկայացուցիչ Գարեգինի ջանքերով(1), այնպէս որ տարուայ վերջում ունինք 5 Կոմիտէ եւ 140 խումբ, որով Կ. Կոմիտէս կազմակերպական տեսակէտից այս տարի կարողանում է համապատասխանել իր ցեղին:

Այս տարի առանձնապէս ուշադրութիւն է դարձրուած Փայտակարանի վրայ: Օգոստոսին ուղարկել ենք ընկեր Սուրէնին, որը պէտք է փոխադրութեան համար գիծ բաց անէր դէպի Ապառաժ(2) եւ միեւնոյն ժամանակ զբաղուէր կազմակերպութեամբ. Սուրէնը փոխադրութեան գործով անցնում է Ապառաժ. այդ ժամանակներում Շուշում սկսում է հայ-Թրքական ընդհարումը եւ է՛լ չի կարողանում դառնալ: Ցետոյ ուսուցչի պաշտօնով ուղարկում ենք Զօրանեանին, յանձնարարելով կազմակերպութեամբ զբաղուելու: Առայժմ այդ տեղի կազմակերպութեան համար ոչինչ չենք կարող ասել, միայն ունենք 2 խումբ:

Երբ որ սկսուեցին Կովկասեան հայ-Թրքական ընդհարումները, Կ. Կոմիտէս կարիք զգաց Վրէժում կազմել մի «ինքնապաշտպանութեան Կոմիտէ», որը հոգացել է ըստ կարելւոյն տեղական ինքնապաշտպանութեան գործը: (Այդ մասին առանձին կը խօսէ Գեարտաը):

Գործիչներ.— Մինարէթում եղել են՝ ներկայացուցիչ Գարեգին, Սարգիս եւ Լեւոն: Լեւոնը տարուայ կէսին անցաւ Սարուստան, Սարգիսը մեր յանձնարարութեամբ, փոխադրութեան համար, անցնում է Մենաւոր, ուր մնում է մինչեւ Դեկտեմբեր: Ապրիլին ուղարկեցինք 20–22 զինուոր, որը կրճատելով պահել ենք 9ը: Աւարայր,— ներկայացուցիչ՝ Մալխաս, Պատուէլի, զինուոր Մոսս եւ Ցակովբ. Մալխասը հիւանդութեան պատճառով անցաւ Սարուստան, նրա գործը յանձնուեց Պատուէլուն, իսկ Մոսսն անցաւ Երկիր, Երկրի ընկերների պահանջմամբ: Մենաւոր,— Ընծայր, Փայլակ, Եփրեմ(3), եւ վերջերս՝ Տեղացին: Տարուայ կէսին, մեր հրաւիրանօք Վրէժ են գալիս Փայլակը եւ Եփրեմը, Փայլակը իր մասնաւոր գործով անցնում է Թեհրան, իսկ Եփրեմը մնում է արհեստանոցում: Այս տարի մեր շրջանում եղել է Սեպուհը, որը Սարուստանի ընկերների պահանջմամբ անցել է Սարուստան:

Տարուայ սկզբներում, Արեւել. Բիւրոյի յանձնարարականով, Մինասի ուղեկցութեամբ, եկան մեր շրջանը Սեւ Ծովի ափերում եղած գաղթականների ներկայացուցիչները, որոնք պէտք է մեր շրջանում հողեր գնէին հաստատուելու համար. յանձնարարեցինք Մինարէթի գործիչին, վերադարձան հողերը հաւանելով, Ռուսաստանի խառը դրութեան պատճառով է՛լ չվերադարձան:

Շամի ներկայացուցիչ Կոմսը եկաւ մեր շրջանից անցաւ Սարուստան. տեղս եղած ժամանակ եղան ընկերական խորհրդակցութիւններ, Մենաւորի գիծը կանոնաւորելու եւ նոր գծեր բաց անելու մասին, որպէսզի փոխադրութիւնը արագացուի: Այդ առթիւ խոստացաւ ընկերներ ուղարկել Սարուստանից, բայց հայ-Թրքական ընդհարումները պատճառ դառան, որ ո՛չ ընկերներ եկան եւ ոչ տեղեկութիւն տուեցին:

Տարուայ ընթացքում կարողացել ենք մեր շրջանի կարեւոր վայրերը ուղարկել, որպէս շրջիկ պատուիրակ, ընկեր Արմենակին, որը Սարուստանի վրայով անցաւ Գիլան, Շահ եւ Սպահան. նրա Սպահանում եղած ժամանակ, նպատակայարմար գտանք, որ անցնէ Հնդկաստան, այդ կարեւոր գաղթավայրում կազմակերպութիւն անելու եւ դրամական հանգանակութիւն ձեռնարկելու: Այս առթիւ սկսուեց եւ բանակցութիւն Արեւմտ. Բիւրոյի հետ, նրա միջոցի համար հարկաւոր յանձնարարականներ ստանալու համար: Բայց գործիչի պակասը մեր շրջանում, միեւնոյն ժամանակ Արեւմտ. Բիւրոյից յանձնարարականների չստացուելը, ստիպեց մեզ ժամանակաւորապէս Թողնել այդ միտքը եւ կարգադրուեց, որ Արմենակը անմիջապէս յետ ճանապարհի, որ անցնելով Շահ եւ Գիլան, Շահսուանի վրայով Օգոստոսին դարձաւ Վրէժ, 4 ամսուայ ճանապարհորդութիւնից յետոյ: Մեր շրջիկի ճանապարհորդութիւնը եւ գործունէութիւնը եղել է շատ լաւ, բայց այստեղ չպիտի մոռանալ եւ այն հանգամանքը, որ

այսպիսի ընդարձակ շրջանում, որպիսին մեր շրջանն է, շրջիկներ ուղարկելը կախուած է եղել ահագին դժուարութիւններից, եւ գլխաւորապէս՝ երթեւեկութեան անկանոնութիւն, ճանապարհների դժուարութիւն, որը կապուած է եղել ահագին նիւթական եւ այլ զոհաբերութիւնների հետ:

Կ. Կոմիտէս տարուայ մէջ տուել է մի քանի տեսորի որոշումներ, որոնցից մի քանիսը գործադրուել է, մի քանիսն էլ յանձնուելու է նոր Կ. Կոմիտէին՝ գործադրելու համար: Զանազան հիմնաւոր նկատումներով ներուել է մի տեսոր: Մեր շրջանից արտաքսուել է Մելիքը, Բէնդիր խմբի անդամներից, որը իր ժամանակին յայտնուել է մեր շրջանի ընկերներին. № 2 շրջաբերականով Ցովհ. Պետրոսեանին նախ՝ Մինարէթի շրջանից, այնտեղի ընկերների որոշմամբ, եւ ապա մեր որոշմամբ՝ Կ. Կոմիտէի շրջանից, հիմնուած Մինարէթի ընկերների այդ առթիւ կազմած արձանագրութեան եւ այլ կողմնակի տեղեկութիւնների վրայ: Սրանց արտաքսման մեղադրական ակտը, ուղարկուել է դաշնակցական մի քանի մարմիններին, շրջաբերականով:

Եղել են մի քանի պաշտօնական սպառնալիքներ զանազան վնասակար անձնաւորութիւնների,— սպիտակ տեսոր:

Ամառուայ ընթացքում ունեցել ենք Կ. Կոմիտէիս եւ սահմանադրական գործիչների խառը ժողով, որ տեւել է 1–2 շաբաթ, Մինարէթի, Աւարայրի եւ Մենաւորի վերաբերող մի շարք խնդիրների եւ գործերի կարգադրութեան համար:

Ունինք կազմակերպական տներ՝ Վրէժում, Աւարայրում, Մինարէթում, որոնց կահ-կարասիքը եւ եղած ծախսերը կարելի է տեսնել հաշիւներում:

Տարուայ ընթացքում մեր շրջանը ստացել է ամսական 4835 օրինակ «Դրօշակ», որոնց մեծ մասը, զանազան գծերով փոխադրուել է Սարուստան եւ Երկիր: «Դրօշակ»ից բացի ստացուել են եւ այլ յեղափոխական Թերթեր,— «Հայրենիք», «Շարժում», «Ռազմիկ», «Ռեւ. Ռասիա» (Ցեղ. Ռուսաստան) եւայլն, եւ այլ բրոշիւրներ եւ գրքեր:

Երկրի հետ յարաբերութիւն է պահուել 2–3 գծով, նոյն չափով էլ Սարուստանի հետ: Նոր գծեր բաց անելու փորձեր արել ենք, բայց զանազան ձախորդ հանգամանքների շնորհիւ այնքան էլ յաջող արդիւնքների չենք հասել:

Մեր յարաբերութիւնները միւս յեղափոխական մարմինների հետ, աւելի ճիշդ՝ հնչակեանների հետ, պարզուեց մեր պատգամաւորների տեղեկագրների մէջ: Այդ յարաբերութիւնը եղել է շատ սառը, գուցէ եւ թշնամական, այն հակադաշնակցական պրոպագանդին պատճառաւ, որին մղելը, ամէն առթիւ, իրենց բան ու գործ են չինել. այդ կազմալուծուող կուսակցութեան մնացորդները, եւ այն դատապարտելի ոգու բերմամբ, որ արմատացել է այդ կուսակցութեան մէջ, թէ՛ յեղափոխական ընդհանուր տեսակէտով եւ թէ մասնաւորապէս Հ.Յ.Դ. վերաբերմամբ. Նրանց հետ որեւիցէ խնդրի առթիւ սկսուած բանակցութեան փորձը ոչ միայն միշտ անցել է անյաջող, ոչ միայն նրանք տմարդիօրէն դաւաճանել են իրանց կազմած պայմաններին, որոշումներին, այլեւ տեղի են տուել մի քանի անախորժ միջադէպերի, տարուայ ընթացքում: Որպիսին է Փայտակի դէպքը եւայլն:

Յարաբերութիւնները կառավարչական մարմինների հետ, ինչպէս հարեւան քրդերի, եղել են առհասարակ անտարբեր, աւելի ճիշդ՝ չէզոք, ընդհարուելու ոչ մի առիթ չենք ունեցել, որից եւ միշտ էլ խոյս ենք տուել:

Մեր մարմինները, մեր շրջանում, համաձայն անցեալ տարուայ Շրջանական Ժողովի որոշման՝ միջամտելու բոլոր հասարակական գործերին, մղել են ընտրական պայքար, եւ կարելի է համարձակ ասել, որ գրեթէ ամէն տեղ էլ մերոնց յաջողուել է ձեռք ձգել ազգային հասարակական հաստատութիւնների վարչական դեկը: Մի բան, որ ահագին նշանակութիւն ունի մեր գործի յաջողութեան տեսակէտից:

Թղթակցութիւնները, թէ՛ մեր շրջանի եւ թէ դրսի դաշնակցականների հետ, աշխատել ենք, ինչքան հնարաւոր է, անել կանոնաւոր, տարուայ ընթացքում գրուել է 301 նամակ:

Ցեղափոխական տրամադրութիւնը մեր շրջանում, տարուայ ընթացքում եղել է շատ լաւ, ինչպէս ցոյց է տալիս մեր խմբերի եւ դաշնակցական անդամների թուի եռակի բազմանալը:

Այժմ ունենք Վրէժում 23 կոթ (18ը նոր եւ 5ը հին), 2·600 նոր ծայր եւ 500 հին, եւ 3 ատրճանակ:

Սրանով Կ. Կոմիտէս ներկայացնելով իր միամեայ գործունէութեան տեղեկագիրը, տալիս է իր հրաժարականը եւ ցանկանում է ապագայ Կ. Կոմիտէին՝ աւելի բարեյաջող գործունէութիւն:

Հ.Յ.Դ. ՎՐԷԺՍՏԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905

---

(1) Արմենակը ամենայն հաւանականութեամբ Սլաքն է (Արմ. Օխիկեան), իսկ Գարեգինը՝ Սամսոնը:

(2) Ղարաբաղ:

(3) Ընծայրը Թադէոս Առաքել վանքի վանահայր Գէորգ Ս. Վրդ. Նալպանտեանն է, Փայլակը՝ Ռուբէն Գերմանիանը, Եփրեմը՝ հաւանօրէն Գարսկական Ցեղափոխութեան յեռագոյ հերոսը:

3.— ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

(Վրէժ, 1906 Փետրուար 1)

Նիստ I

Միջակ չափ (17×22 սմ.) 19 երկթերթ թուղթերէ կազմուած տետրակ: Ատենագրութիւնը, գրուած առ նուազն երեք տարբեր ձեռագիրներով եւ զանազան գոյնի մելանիներով, կը գրաւէ 66 ու կէս էջ: Աւարտին, ստորագրութիւններուն տակ, կնիք Ատրպատականի Կ. Կոմիտէի:

Ատրպատականի Կենտր. Կոմիտէի հրաւէրով հաւաքուած պատգամաւորները 1906 Փետր. 1ին բացին Շրջանական Ժողովի նիստերը:

Ներկայ էին՝

1) *Տ. Յովհաննէսեան, ներկայացուցիչ Կ. Կ.ի, 1 ձայն*
2) *Պ. Խաչատրեան, ներկայացուցիչ. արհեստանոցի 1 »*
3) *Սամսոն, պատգմ. Փարոսի եւ Մինարէթի 2 »*
4) *Եփրեմ, պատգամաւոր Գիլանի 1 »*
5) *Արմենակ » Շահի եւ Ափի 2 »*
6) *Պահակ » Շահսէվանի եւ Անտառի 1 »*
7) *Մկրտիչ » Աւարայրի 1 »*
8) *Ընծայր, գործիչ Մենաւորի 1 »*
9) *Տիգրան » Աւարայրի 1 »*
10) *Վազգէն, պատգամաւոր Վրէժի 1 »*

10 հոգի՝ 12 ձայն:

Ժողովը կարեւոր համարեց խորհրդակցական ձայնի իրաւունքով նիստերուն հրաւիրել.

1) *Ատրպատականի Կենտր. Կոմիտէի կազմը*
2) *Վրէժի կոմիտէի կազմը*
3) *Նիկոլ Սարգսեան (տեսուչ)*
4) *Մարզպետունի (հիւր ընկեր Վրէժում)*
5) *Մկրտում (տեղացի ընկեր)*

Աւարայր, Ափ, Անտառ–Շահսէվան թէեւ չեն ներկայացներ կազմ. կանոնագրութեան պահանջած ցենզը պատգամաւոր ուղարկելու համար, բայց ի նկատի ունենալով սահմանագծային այդ վայրերու կարեւորութիւնը եւ անմիջական գործունէութիւնը, ժողովը ընդունեց այդ վայրերի ներկայացուցիչները մէյ մէկ ձայնով:

Վիճաբանութենէ յետոյ 3ի դէմ 9 ձայնով ժողովը որոշեց բաւականաչափ վերոյիշեալ 17 թուով: Սրա դէմ փոքրամասնութիւնը առարկեց, թէ պէտք է տեղացի ուժեր հրաւիրել խորհրդակցական ձայնով, հիմնուելով այն երեւոյթի վրայ, որ 15 տարիէ ի վեր ապարէզ չեն կանչուած տեղացիները եւ ժողովին մէջ բացակայում են տեղացի ուժեր իբրեւ ձայնատուներ:

Ուրիշներ բողոքեցին, առարկելով թէ տեղացիներ ներկայ են բաւարար չափով:

Որոշուեցաւ.— 1) Ժողովները բանալ երեկոյեան ժամը 8ին.

2) Ի նկատի ունենալով, որ Մենաւորի, Աւարայրի, Գիլանի պատգամաւորները ստիպողական գործերով չեն կարող երկար մնալ, նրանց տեղեկագրերը դընել օրակարգի սկիզբը:

Նիստ II

(2 Փետրուար 1906)

1. Նստի սկզբում ժողովին առաջարկուեցաւ կազմական կանոնների 106րդ եւ 107րդ յօդուածների հիման վրայ քուէի իրաւունք տալ նաեւ խորհրդակցական ձայնով հրաւիրուած հիւրերին եւ փոխել նախորդ ժողովի որոշումը:

Ուրիշներ մերժեցին դրուած առաջարկը, ի նկատի ունենալով որ. 1) վերոյիշեալ յօդուածները պարտաւորիչ են միայն Ընդհ. Ժողովին համար. 2) որ ընդունելով այդ առաջարկը՝ պատգամաւորի հաւասար իրաւունք է տրւում խորհրդակիցներին, որոնք ոեւէ մարմնի կողմէ ընտրուած չեն եւ կարող են իրենց ձայնով կշիռ ունեցող դեր խաղալ կայանալիք որոշումներուն մէջ: — Յետոյ առաջարկուեցաւ խորհրդակիցներուն ձայն տալ միայն որոշ գործողութիւնների մէջ: Դրա դէմ փաստաբանուեցաւ, որ այդ սահմանները շատ առաձգական կարող են լինել եւ գործնականին մէջ կը յառաջացնեն դժուարութիւններ: — Վիճաբանութիւնը լսելէ յետոյ, ժողովը ձայներու մեծամասնութեամբ որոշեց իր ուժին մէջ պահել նախկին արձանագրութիւնը:

2. Գիլան.— Ժողովը ծափահարութեամբ ընդունեց Գիլանի պատգամաւորի տեղեկագրի ընթերցումը:

Գիլանի շրջանը ունի 17 արական խումբ՝ 180 անդամով, 4 իգական խումբ՝ 63 անդամով: Գումար 21 խումբ՝ 243 անդամով:

Գիլանի շրջանը կազմում են Ռաշտ, Էնզելի, Ղազուին:

1. Ռաշտ

8 արական խումբ	95 անդամով	131 անդամ
2 իգական »	36 »	10 խումբ,

2. Էնզելի

5 արական խումբ	48 անդամով	6 խումբ,
1 իգական »	15 »	63 անդամ

3. Ղազուին

4 արական խումբ	37 անդամով	5 խումբ,
1 իգական »	12 »	49 անդամ,

Ռաշտ ունի նաեւ մէկ մարտական եւ մէկ ինքնապաշտպանութեան խումբ:

Զէնք.—

Ռաշտ.—	20 հրցն.	[100ական փամփ.]	=2000 փամփ.
Էնզելի.—	95 »	[150ական փամ.]	=14250 »
Ղազուին.—	18 »	[200ական փամփ.]	=3600 »

133 հրացան, 19850 փամփուշտ:

Ատրճանակ զանազան ձեւի

Ռաշտ.—	19 ատրճ.	[25ական փամփ.]	= 475 փամփ.
Էնզելի.—	31 »	[50ական փամփ.]	=1550 »
Ղազուին.—	23 »	[50ական փամփ.]	=1150 »

Ընդհ. գումար՝ 73 ատրճանակ, 3175 *փամփուշտ:*

[*Մանօր.— Զէնքերը կազմակերպական չեն, այլ՝ անհատներու*] :

Վիճակագրութիւն հայ ազգաբնակութեան

Ռաշտ.—	106 *տուն՝*	577 հոգի
Էնզելի.—	44 *տուն՝*	178 »
Ղազուին.—		226 »
		981 հոգի

Հայերը բնակւում են բազմաթիւ պարթիկների մէջ եւ ունին իրենց համար գրաւած դիրք: Բոլորը լուսաւորչական, ունին ազգային հաստատութիւններ՝ դպրոց, գրադարան, ընթերցարան, բարեգործական ընկերութիւններ, եկեղեցի, որոնք պահւում են սակաւաթիւ հաստատուն եկամուտներով եւ ժողովրդական տուրքերով: Հայերը զբաղւում են առեւտրով, խանութպանութեամբ, արհեստներով, պաշտօններով: Հայ ազգաբնակութեան մէջ տիրապետող կազմակերպութիւնը Հ. Յ. Դ.ն է. կան նաեւ հնչակեաններ, համեմատաբար փոքր թուով եւ զբաղուած աւելի՝ հակադաշնակցական գործունէութեամբ:

Հ.Յ.Դ. Գիլանի շրջանի հաստատ եկամուտները

Ռաշտ.—	500 *ղրան ամսական*
Էնզելի.—	300 » »
Ղազուին.—	200 » »
	1000 *ղրան ամսական*

Գիլանի տարեկան հաստատ եկամուտ՝ Թուման	1200
Վիճակախաղից, երեկոյթներից, ներկայացումներից, հանգանակութիւնից մօտ.՝ Թուման	800
Տարեկան բիւդջէ՝ Թուման	2000

Ժողովականների ոմանց պահանջի համեմատ, Պր. Եփրեմ տուաւ բերանացի լրացուցիչ տեղեկութիւններ, որմէ յայտնի եղաւ, որ Գիլանը ունեցեր է «Դրօշակ»ի եւ պրոշիւրներու փոխադրութիւններ, որոնցմէ միայն մի անդամ բռնուած է: Շրջանը ունեցած է բացառիկ խմբական եւ կազմակերպական յաջող գործունէութիւն, ունեցած է շրջիկներ, կազմակերպած է դասախօսութիւններ, ներկայացումներ, վիճակախաղ, երեկոյթներ: Ասոնցմէ գոյացած հասոյթին կէսը յատկացուած է Հ. Յ. Դաշնակցութեան, կէսը տեղական ազգային հաստատութիւններու՝ ազգաբնակչութիւնը տուրքերով չծանրաբեռնելու համար: Հ.Յ.Դ. Գիլանի շրջանը նպաստեր է կրթական գործին, հրաւիրեր է ուսուցիչներ, որոնք սակայն նեղ սահմանի մէջ օգտակար հանդիսացեր են:

Գիլանի տեղեկագիրը լսելէ յետոյ ժողովը որոշեց այդ շրջանի առաջադրութիւնները անցընել օրակարգի մէջ, միւս տեղերու հարցերուն հետ միասին քննելու համար:

Պատգամաւորը առաջարկեց Գիլանը վերածել կենտ. Կոմիտէի, կապելով նրա հետ իր շրջակայքի մարմինները: Այս առթիւ ժողովը, ի նկատի ունենալով որ 1) Ատրպատականի Կ. Կ.ին համար գործնական դժուարութիւններ կան Պարսկաստանի բոլոր շրջանները կառավարելու, 2) որ տեղերու հեռաւորութեան պատճառով դժուար է յարաբերութիւններ պահպանել, 3) կազմ. կանոնագրութեան ոգուն հակառակ չէ ցենզ ունեցող վայրերում համապատասխան մարմիններ մըտցընել,— սկզբունքով ընդունեց միաձայնութեամբ՝ որ Պարսկաստանի մէջ կազմուի մի նոր կենտր. Կոմիտէ:

Ի վերջոյ ժողովը ընտրեց մի մանախումբ ներքին կանոնագրութիւնը փոփոխման ենթարկելու եւ օրակարգը կարգաւորելու համար: Անդամներ՝ Սամսոն, Եփրեմ, Թումաս, Մկրտում, Նիկոլ:

Ժողովներուն քարտուղար ընտրուեցան Մարզպետունի եւ Յովսէփ: Որոշուեցաւ նաեւ, որ ժողովներու նախագահը լինի ընտրովի:

Նիստ III

(3 Փետրուար 1906)

Աւարայր.— *Ժողովը ծափահարութեամբ ընդունեց Աւարայրի պատգամաւորի տեղեկագրի ընթերցումը: Աւարայրի շրջանն ունի 10 խումբ 120 անդամով, — 9 արական՝ 104 անդամով եւ 1 իգական՝ 16 անդամով:*

Աւարայրի շրջանը կազմում են՝ Աւարայր, Քաջամարտիկ, Սրբավայր եւ Նորաշէն:

Աւարայր՝	3 *արական*	*խումբ,*	37 *անդամ*
	1 *իգական*	»	16 »
Քաջամարտիկ՝	1 *արական*	»	12 »
Նորաշէն՝	1 *արական*	»	15 »
Սրբավայր	4 *արական*	»	40 »

Զէնք.— *Ամբողջ շրջանում կայ մօտաւորապէս զէնքի հետեւեալ քանակութիւնը (Ժողովրդի մէջ).— 10–14 որսորդական հին հրացան, 10–15 ատրճանակ, 5–6 փամփշտաւոր հրացան: Ժողովրդի նիւթական անճոռնի վիճակը չի թոյլատրում աւելին ունենալ: Ցեղ. կազմակերպութիւններն ունին 2 մօտին հրացան 250 փամփուշտով եւ 10 բերդան փամփուշտներով:*

Վիճակագրութիւն հայ ազգաբնակութեան

Քաղաքում (Ինոյ)	115–120 *տուն*
Դիզա	18
Շօրաւ	25
Մէյդավար	85
Մահլազան	25
Ղարաջալի	3
Վառ	6
Փեռա	
	278–283 *տուն*

Հայերն ապրում են Թուրքերի հետ խառն: Բացի մի քանի (4) տուն բողոքականներից, բոլորը հայադաւան են. ունին եկեղեցիներ, առանց կալուածների, եւ մի սրբավայր: Տնտեսական անձկութեան պատճառով կրթական վիճակը շատ աննախանձելի է. ամբողջ գաւառում միայն 3 դպրոց, բոլորը՝ միադասեան: Դպրոցների եկամուտներն մեծ մասամբ անհաստատ են եւ պահւում են ժողովրդի ուղղակի եւ անուղղակի տուրքերով եւ դրսի նուէրներով: Օտար հաստատութիւն՝ քաղաքում Գերման–Հայկական որբանոց 120 երկեռ որբերով:

Հայերը զբաղւում են, քաղաքում, մեծ մասամբ առաջնագործութեամբ. կան պայտար, ջրաղացպան, երկաթագործ, զինագործ եւ օղեվաճառ: Գիւղերում՝ մեծ մասամբ հողագործութեամբ. հայերի մէջ հողատէրեր չկան:

Հայ ազգաբնակչութեան մէջ տիրապետողն է Հ.Յ. Դաշնակցութիւնը: Հնչակեաններն առաջ շատ ուժեղ էին, բայց այժմ թոյլ եւ անգործութեան դատապարտուած լինելով հանդերձ՝ շարունակում են ինտրիգներ եւ խոչընդոտներ յարուցանել Դաշնակցութեան դէմ:

Տեղական դաշն. մարմինը զբաղուել է ռազմամբերքի եւ թերթերի փոխադրութեամբ դէպի Երկիր, եւ թերթերի՝ դէպի Կովկաս: 5 ամսուայ ընթացքում, Օգոստ.–Դեկտ. (ներկայ ներկայացուցչի օրով), փոխադրուել է 11126 փամփուշտ (հին, նոր) 7 հրացան. մեծ մասամբ անվտանգ տեղ են հասել: «Դրօշակ» 5400 օր., 800 օր. «Հայրենիք», բրոշիւրներ, ծրարներ:

Ընդունել է Երկրից եկած 30–40 զինուոր, որից մի մասը անցել է Կովկաս եւ միւս մասը Մինարէթ. Երկիր է փոխադրել մի զինուոր:

Ժողովը կազմեց հաշուեքննիչ մասնախումբ մը հետեւեալ անձերէն,— Վարդան, Թովմաս, Եփրեմ:

Մենաւոր (Վանք)

Սրբ. Թադէի վանքը գտնւում է Տաճկաց սահմանէն 6 ժամ (ոտով) հեռու, դիրքը՝ լեռնային: Վանքի գիւղը ունի 25–30 տուն զուտ հայ բնակչութիւն: Շրջակայքը Թուրք. միայն մէկ ժամ հեռու՝ Գըրգրուլախ՝ 6 տուն հայեր: Հայերը, աղքատ երկրագործներ, ճնշւում են գիւղատէր պարսիկներից (Իզ խան, Սէրտար): Հայերը միեւնոյն ժամանակ աղային զինուորներն են, ունին 20 հրացան 100ական փամփուշտով: Վանահայրի ջանքերով վանքը ունի նոր հաստատուած միդասեայ դպրոց, որուն մէջ դասաւանդութիւնները դեռ չեն սկսուած:

Կարեւոր կէտ է վանքը փոխադրութեան տեսակէտով: 1904ին կատարուած է հետեւեալ փոխադրութիւնը.

Մուտք.— *Մոսին*	25	*Հին ծայր*	19·100
Բերդան	11	[Ծանօթ.— *Վանքը այս ապրանքները ստացած է Վարդանի օրով*]:	
Ատրճանակ	5		
Նոր ծայր	25·622		

Փոխադրուած Երկիր 1904ին (Վարդանի օրով)

Մոսին	21
Բերդան	3
Ատրճանակ	5
Նոր ծայր	26·134
Հին »	10·464

1905 թուականն

Մուտք (*Ընծայրի օրով*)		Փոխադրուած Երկիր	
Մոսին	11	*Մոսին*	11
Բերդան	10	*Բերդան*	9(*)
Ինձոր	24	*Ինձոր*	44
Ատրճանակ	14	*Ատրճանակ*	17
Նոր ծայր	24·755	*Նոր ծայր*	24·763
Հին »	9·448	*Հին* »	15·220

1905ին փոխադրուած ուրիշ նիւթեր

«Դրօշակ».— *մօտ* 7000 (*Երկիր եւ Կովկաս*)		
«Հայրենիք».— *մօտ* 50 (*Երկիր եւ Կովկաս*)		
«Մշակ», «Արշալոյս», «Շարժում».— *մօտ* 70		
Ցեղ. գրքեր՝ մօտ	25	*հատ*
Քայլաչափ	2	»
Կողմնացոյց	2	»
Էլեկտրական թելեր	30	*ծրար*
Ինձորի գլխարկ	3	*հատ*
Ինձոր	25	»
Ատրճանակ զանազան տեսակի	16	»
Զանազ. ատրճ.ի ծայրեր	480	»
Դաշոյն	2	»
Գայթուցիկների վերաբերեալ իրեր (խմոր, կապսիլ եւն.)	45	*ծրար*
Մաուզեր ատրճանակի ծայր	573	*հատ*
Էլէմէնտ (բարդեր)	9	»
Հեռաչափ	1	»
Թաղիքէ սապոգներ	1	»
Հրացանի քշոցներ	20	»
Դժոխային մեքենայ	3	»
Իւղման	2	»
Դիտակ	4	»
Բրօժին (?)	47	»
Ռատրնիկ (?)	6	»
Հրացանի մասեր	37	*ծրար*
Փամփշտանոց	6	*հատ*
Խուրջին	7	»
Փող եւ սուլիչ (1+1) =	2	»
Էլեկտրական լամպ	1	»
Էլեկտր. իրեր, բազադրթ.	1	*տուփ*
Զի	2	*հատ*
Գիլզի	28	»
Գայթուցիկ փուչի	2	*չիշ*
Բարձրաչափ	1	*հատ*
Եափնջի	2	»

(*) *Անլրջիները ստացուած են ուրիշ վայրերէ:*

Նիստ IV

(4 Փետրուար 1906)

Մենաւոր (*Շար.*)

Վանքի մէջ կան՝ Դաշնակցութեան պատկանող 1 ձի, 1 բերդան (100 փամփուշտ), 2 սնտուկ եւ այլ մանր իրեղէններ:

Ելեւմուտք 1905 Յունվ. մինչեւ Դեկտ.ի վերջ

Ընդհ. մուտք	11752,12	*ղուռն*
Ընդհ. ելք	12879,09	*ղուռն*
Պարտք՝	1126,97	*ղուռն:*

Կորուստ.— *Փոխադրութեան միջոցին զանազան առթիւ կորսուած են 1960 մօտինի փամփուշտ:*

Գիծեր.— *Մենաւորէն դէպի Երկիր կան երեք գիծեր.* 1) *Նէդէրավայից Պզտիկ գեղ (հին գիծ).* 2) *Խաչան, բացուած 1904ին.* 3) *Արշակի գիծ, Մենաւորից ուղիղ Շամ, բացուած 1905ին, ամենէն կարեւոր գիծը.* 4) *Մենաւորից Սարուստան, բացուած 1905 Սեպտեմբերին Թերթերու փոխադրութեան համար.* 5) *Աբապներ–Շահթախթ, այժմ փակուած:*

Մենաւորէն դէպի հիւսիս, 6 ժամ հեռաւորութեան վրայ, կը գտնուի Մակուն (Արտազ), ուրեքեղ կան 60 տուն հայեր, որոնցմէ 1904ին կազմուած է 5 խումբ: 1905ին կազմուած է ենթակոմիտէ: Տարեկան մուտք խմբերէն՝ մօտ 20 թուման:

Մենաւորէն դէպի հիւսիս, 8 ժամ հեռու, կը գտնուի Քիշմիշքեփէ (Բլուր), 80 տուն հայերով: Այստեղ 1904ին կազմուած է 1 խումբ, որ այժմ կազմալուծուած է:

Այս տեղերու ինքնապաշտպանութեան մասին խօսիլն անգամ աւելորդ է. Մակու ունի 15, Բլուր՝ 12 հրացան, որ գնուած են աղաներու ստիպումով: Մակու տուած է մի գործիչ (Մաշտոց) եւ մի զինուոր:

Երթեւեկութիւն

1904ի եւ 1905ի ընթացքին կատարուած է անգադար երթեւեկութիւն զինուորներու, գործիչներու, խմբապետներու (Շահէն եւն.): Մօտաւորապէս 600 մարդ Երկրէն եկած եւ անցած են Մենաւորի վրայով:

Քիւրտերու հետ յարաբերութիւններ

Մենաւոր յարաբերութիւն մշակած է իրեն դրացի քիւրդ ցեղապետներու հետ եւ անոնց մէջ մղած պրոպագանդ՝ տարածելով թերթեր եւ բրոշիւրներ։

Կարէի (Կամուրջ) մէջ ապրող հէյդէրանցի ցեղապետ Մըսթաֆա բէկի հետ մեր գործիչները ունեցած են սերտ կապեր, որի շնորհիւ փոխադրուած են ռազմամթերք եւ զինուոր։ Դաշնակցական ընկերներ, ի նկատի ունենալով Մըսթաֆա բէկի օգտակար ծառայութիւնները, միջնորդած են կաթողիկոսի մօտ եւ Վեհափառը ցեղապետին նուիրած է մի արծաթ տուփ։ Սարդարի հետ վատ յարաբերութիւն ստեղծուած լինելով, Մըսթաֆա բէկ կը թողու Կամուրջը եւ կը հեռանայ։

Ասոր տեղ կու գայ նոյն ցեղի պետերէն Մէհմէտ բէկ (համիտիէ զօրքի գայմագամ) (կեղծանուն՝ Սաֆօ), որու հետ կարելի կը լինի նոյն յարաբերութիւնը պահպանել, ինչպէս իր նախորդի օրով։ Սա եւս պարսիկ կառավարութեան պաշտօնեաների հետ թշնամանալով՝ կ'անցնի Թրքաց հողը, ուր կը շարունակէ իր յարաբերութիւնը մեր գործիչներուն հետ, օգտակար հանդիսանալով կազմակերպական ձեռնարկներուն։ 1905ի գարնան Պզտիկ գիւղի մէջ (Թուրքիա) կը բռնուի մեր փոխադրողը՝ 500 փամփուշտով, եւ պատիժներու ենթարկուելով խոստովանութիւններ կ'ընէ։ Մէհմէտ բէկ միջամտելով վտանգի եւ ձերբակալութիւններու առջեւը կ'առնէ։ Այս ծառայութեան վրայ մեր ընկերները իրեն ֆոնոգրաֆի մը կը զրկեն իբրեւ նուէր, բայց բէկը չ'ընդունիր զայն, գուցէ ցոյց տալու համար, որ ինք վարձատրութեան համար չէ որ կ'աջակցի մեր գործերուն։

Յարաբերութիւն պահպանուած է նաեւ Մակուի Սարդարին հետ, որը չնորհիւ այս կապերուն չէ ուզած վնասել մեր գործերը։ Ասոր նուիրած են մեր ընկերները 2 արծաթ բաժակներ։

Խուզարկութիւններ։—

Հայր Ընծայրի (վանահայր) 5 տարի պաշտօնավարութեան միջոցին թուրք եւ ռուս հիւպատոսներու պահանջմամբ վանքը ենթարկուած է 7–8 անգամ խուզարկութեան, բայց բարեբախտաբար բոլորն ալ անցած են առանց վատ հետեւանքի։

Վրէժ կոմիտէ։— Իր գործունէութիւնը սկսելով 1905 Յունուար 19ից, տարուայ ընթացքում ունեցել է 26 նիստ։ Նախկին կոմիտէից իր հսկողութեան է յանձնուել 11 խումբ, որից մէկը զինուորական, մէկը՝ խմբերի դասախօսութիւններ կազմակերպող։ դրանցից 2ը (մէկը զինուորական) անդամների քաղաքից հեռանալու պատճառով լուծուում են։ Տարուայ ընթացքում աւելացել են 7 խումբ, որով այժմ ունի 15 խումբ եւ մի դասախօս–պրոպագանդիստ յանձնախումբ (միջոց ունեցած ժամանակ ե՛ւ շրջիկ)։ Խմբերից 2ը կանանց՝ 42 անդամով եւ 13 տղամարդկանց՝ 159 անդամով։ գումար՝ 201 անդամ։ Խմբերի բիւրջէն է տարեկան 500 թուման անդամավճար, եւ 700 թուման ներկայացում, վիճակախաղ եւն։ Տարուայ ընթացքում տուել է 7 հրապարակային դասախօսութիւններ, Քրիստափորի յիշատակին մի նգահանդէս, խմբերի աշակցութեամբ 6–7 երեկոյթ եւ ներկայացում։ Խորհրդակցելով Կ. Կոմիտէի հետ, որոշել է դաշնակց. տուրք նշանակել այն անհատների վրայ, որոնք ոչ նիւթապէս եւ ոչ բարոյապէս չեն օգնում Դաշնակցութեան։ Բայց ինքնապաշտպանութեան կրկնակի հանգանակութիւններն արգելք են հանդիսացել գործադրելու իր որոշումը։ Նոյն ինքնապաշտպանութեան հարցը վնասել է կոմիտէի նիւթական եկամուտին։ Կոմիտէն կազմել է մի յեղափոխական գրադարան, առ այժմ 150 կտոր գրքերով։ Մասնակցել է տեղական հասարակական գործերին եւ, ընտրողական պայքարով, մի քանի հաստատութիւններ դաշնակց. անձնաւորութեանց խնամքին է յանձնել։ Կոմիտէն իւրաքանչիւր ամիս ստացել է 1515 օր. «Դրօշակ», որից 150 օրինակ ցրուել է քաղաքում եւ գաւառներում՝ բաժանորդներին, իսկ մնացած 1365 օրինակը եւ շաբաթական 50ական կամ 25ական օրինակ «Հայրենիք», ինչպէս եւ զանազան գրքեր, բրոշիւրներ եւ հրատարակութիւններ փոխադրել է Ախ՝ Կովկաս փոխադրելու համար։

Քաղաքի հայ ազգաբնակութիւնը կազմուած է 4000 հոգուց, 750 տնով, Ղալա եւ Լիլաւա թաղերի մէջ (առաջնում 250, իսկ միւսում՝ 500 տուն)։ Ունին 2 երկսեռ դպրոց, առաջնում 250 աշակերտ–աշակերտուհիներով, իսկ Լիլաւայում՝ 330։ Կայ 2 եկեղեցի, 2 գրադարան–ընթերցարաններ, առաջնորդարան, արգատիպ։ կան 5–6 ընկերութիւններ։ Հնչակեաններն ունին մի մանաճիւղ՝ 2 խմբակներով, 40–45 անդամներով, որոնց մէջ վերջին Պարիզի ընդհ. Ժողովից յետոյ պառակտում է ընկել, մեծ մասն ուզում է գործել սոցիալ դեմոկրատական հողի վրայ, իսկ փոքրամասնութիւնն հին՝ երկդիմի ուղղութեամբ։

Տարուայ ընթացքում ընկ. Մեսրոբ հաստատել էր «Ազգարար» շաբաթաթերթը, որ նիւթական պակասութեան պատճառով դադարեց։ Մեր կազմակերպութիւնը գտնելով անհրաժեշտ թերթի գոյութիւնը Պարսկաստանի համար, հրաժարուեց նրան հովանաւորելուց, ի նկատի առնելով որ նրա ղեկավարութիւնը երկար ժամանակ իր ձեռքում չի կարող մնալ (առաջնորդարանի պաշտօնաթերթ լինելով), եւ միւս կողմից՝ կառավարութեան մի քմահաճոյքը կարող էր դադարեցնել։

Դիտողութիւն եղաւ թէ 11 խմբերով ինչպէ՞ս է կոմիտէ ընտրուել։ Պատասխանուեց որ թուի տեսակէտից — 11 խումբ՝ 180 անդամով — ըստ կանոնագրի իրաւունք ունի կոմիտէ ընտրելու։

Նիստ V

(6 Փետրուար 1906)

Ժողովը զբաղեցաւ Մենաւորի եւ Աւարայրի առաջադրութեանց քննութեամբ։

Մենաւորի հարցերու մասին անցան հետեւեալ որոշումները.

1. Տեղ. Ժողովրդի պաշտպանութեան հարքը քննել ընդհանրապէս ինքնապաշտպանութեան հետ կապ ունեցող հարցերու մէջ.

2. Բլուրի գաղթականութեան առաջը առնելու համար, կարեւոր համարուեցաւ անցընել հետեւեալ որոշումները։ Ի նկատի ունենալով, որ Բլուրը յեղափոխ. տեսակէտով կարեւոր վայր է.

ա) Դիմել Մրզաստանի մեր Կազմակերպութեան, որ հնարաւոր միջոցները գործ դնէ գաղթականներին վերադարձնելու համար.

բ) Բարոյապէս ազդել, որ տեղացիները չգաղթեն.

գ) Հայր Ընծայրը բողոք բարձրացնէ Բարձր. Կառավարութեան մօտ՝ ընդդէմ գիւղատէր Էքպէր խանի ճնշումներուն եւ հարստահարութիւններուն.

դ) Ժողովը կարեւոր կը գտնէ բարձրացնել ժողովրդի տնտեսական վիճակը, բայց առ այժմ չունի տրամադրելի միջոցներ։

3. Ժողովը որոշեց դիմել Սարգսին եւ պարտականութիւն դնել վրան, որ Մենաւոր երթայ։

4. Հայր Ընծայրի առաջարկին վրայ, թէ մասնաւոր թոյլտուութիւններ տրուին Մենաւորի գործիչին, ժողովը որոշեց Կանոնագրութեան մէջ որոշել ներկայացուցչութեան պաշտօնի սահմանները եւ ըստ այնմ ի նկատի առնել այս հարցը։

5. Ժողովը ընդունելով Մենաւորի կարեւորութիւնը յեղափոխական տեսակէտից, որոշեց տալ անոր անհրաժեշտ եղած դրամական օգնութիւնը (ջաղացքի, աւազանի, դպրոցի չինութեանց համար) նախահաշիւ ընդունելով 500 թուման(*)։

Ծանօթ.— Կ. Կոմիտէն պէտք է ի նկատի ունենայ, որ Հայրիկը կոչ է ըրած օգնելու Ս. Թադէի վանքին։ Եթէ փող հանգանակուած է, Կ. Կ.ը պէտք է ջանայ ստանալ զայն եւ վերոյիշեալ ծախքերը հոգալ այդ փողով։

6. Ժողովը որոշեց տալ ա) Մենաւորի 122 թուման 6 դրան պարտքը, բ) Իզօ խանի իբրեւ նուէր խոստացուած բրաունինկ ատրճանակը։

7. Զոհուած ընկերների կանանց Մենաւորէն հեռացման մասին դրուած հարցը ընդունուում է։

8.) Հ. Ընծայրի դէմ դանակ քաշողին ինքը հայր ուրբը ներում է։

9. Ընդունուեցաւ տալ Մենաւորին 2 հրացան՝ ընդմիշտ այնտեղ պահելու համար։

10. Գործիչներու ընտանեաց փող չտալ ըստ Կանոնագրութեան տրամադրած յօդուածի։

11. Յանձնարարել Աւարայրի գործիչին, որ ետ ստանայ Փայլակի միջոցաւ Հ. Ընծայրէն առնուած արկելիչ թուղթը եւ վերադարձուի Ընծայրին։

Աւարայրի հարցեր

1) Այս կէտը ի նկատի ունենալ ինքնապաշտպանութեան հարցին մէջ։

2) Նոյն։

3) Աւարայրի տան համար տալ 1 բերդան, 2 ատրճանակ։

4) Այս հարցը՝ կրթական գործի նպաստ յատկացընելու համար կը մնայ անհետեւանք։

5) Տեղական մարմինը, ըստ իր պահանջին, կ'արտօնուի մասնակցիլ տեղւոյն կրթական եւ հասարակական գործերուն։

6) Հայերուն կառավարական դատարան դիմելը արգիլելու հարցը կը յետաձգուի օրակարգի մէջ քննել, ուր արդէն դրուած է դատարանական խնդիր։

7) Ֆիզիքական եւ դրամական պատիժ գործադրելու հարցը կը յետաձգուի քննել օրակարգի մէջ։

8.) Ընդունուեցաւ վճարել տեղական կազմակերպական պարտքերը։

Նիստ VI

(7 Փետրուար 1906)

Ա.— Շահսէվան։— Կովկասի հարաւ–արեւելեան կողմը մեծ քաղաք է՝ լեռնային դիրքով։ ունի հայկական հին յիշատակարաններ։ Այժմ այնտեղ կը բնակին 21 տուն հայեր (128 անդամներով), որոնց տնտեսական դրութիւնը աննախանձելի վիճակի մէջ է։ Հայերը ունին դպրոց, եկեղեցի, գրադարան եւն., որոնց համար տեղացին տալիս է 7500 դրանի մի բիւրջէ։

Շահսէվան ունի 2 դաշնակցական խումբ՝ 15 անդամներով, մէկ կանանց խումբ՝ «Ինքնակրթական Ընկ.» անուան տակ՝ 20 անդամուհիներով, մէկ ինքնապաշտպանութեան խումբ կազմուած՝ դաշնակցականներէ եւ համակրող չէզոքներէ։ [Կայ նաեւ մէկ հընչակեան խումբ՝ 4 անդամներով]։

Այստեղ Դաշնակցութիւնը տարեկան հաստատ մուտք ունի 350–360 դրան։

(*) Այս առաջարկը եղած է նաեւ իր ժամանակին Շամի գործիչ կոմսի կողմանէ։

Դաշնակց. խումբերը կը զբաղին պրոպագանդով, դասախօսութիւններ տալով, ինքնազարգացման նպաստելով, ղեկավարելով տեղւոյն ազգային հիմնարկութիւնները եւն.: Խումբերը կը զբաղին նաեւ զինավարժութեամբ, որուն կը մասնակցին եւ կանայք, օրիորդք, երկսեռ աշակերտներ:

Զէնք.— 10 հրացան, 15 ատրճանակ, 2000 փամփուշտներով, 18 ռումբ: Ռումբերը կը պատկանին Դաշնակցութեան, միւսները՝ անհատներու:

Փոխադրութիւն.— Շահսէվանը Կովկաս փոխադրած է, այս շրջանին, մօտ 15·000 օրինակ «Դրօշակ», «Հայրենիք»՝ 500 օրինակ, նաեւ ռուսերէն յեղ. թերթեր ու բրոշիւրներ: Մատակարարած է անցագրեր, փոխադրած է ընկերներ դէպի Կովկաս: Կովկասէն Վրէժ տեղափոխած է 8 անտուկ խնձոր, 1 հրացան, 6 ատրճանակ, 1000 փամփուշտներ:

Շահսէվան եկած եւ անցած են գործիչներ. մի պատուիրակ մերժուած է վաւերական վկայագիր չունենալուն համար:

Հանգանակութիւն.— Այս տարուայ հանգանակութիւնը ի նպաստ Հ. Յ. Դաշնակցութեան՝ տուած է 482 ղուռնի արդիւնք:

Ցարաբերութիւն.— Շահսէվան հետամուտ եղած է լաւ յարաբերութիւն պահպանել տեղական ազգաբնակչութիւնների հետ եւ կապեր հաստատած է տեղւոյն կարեւոր ու ազդեցիկ մարդկանց հետ:

Բ.— Շահսէվանի առաջադրութիւնները.

1) Առաջին հարցը կը յետաձգուի օրակարգին:
2) Նոյն:
3) Անհեռեւանք:
4) Այս առաջադրութիւնը — ունենալ Վրէժատանում մի լրագիր — ժողովը սկզբունքով ընդունեց:

Գ.— Վրէժի հարցեր

1) Յետաձգել օրակարգին:
2) Նոյն:
3) Այս առաջարկը, տեղ. գործիչ ունենալու մասին, կը ձգուի անհեռեւանք, ի նկատի ունենալով որ տեղական ուժերը բաւարար են:

Դ.— Ինքնապաշտպանութիւն

Երկար վիճաբանութենէ յետոյ Պարսկաստանի ինքնապաշտպանութեան մասին ժողովը ընդունեց հետեւեալ բանաձեւը, առաջարկուած Մինարէթի ներկայացուցիչին կողմանէ.

«Դաշնակցութիւնը պէտք է ստանձնէ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործը»:

Նիստ VII

(8 Փետրուար 1906)

1.— Ընդունուեցաւ ծրագիր կազմել ինքնապաշտպանութեան համար: Արդէն կազմուած մասնախումբին կը միանայ եւ Պ.:

2.— Ձայներու մեծամասնութեամբ ընդունուեցաւ հետեւեալ բանաձեւը.

ա) «Դաշնակցական կոմիտէները կը վարեն ինքնապաշտպանութեան գործը, առանց կազմելու ինքնապաշտպանութեան համար յատուկ մարմիններ»:

Այս բանաձեւին ջերմ պաշտպան էին մասնաւորապէս գաւառական պատգամաւորները: Միւս բանաձեւը, որու համար ձայն տուին 3 պատգամաւորներ եւ 4 խորհրդականներ, որոշուեցաւ արձանագրել իբրեւ փոքրամասնութեան կարծիք եւ յանձնել երկուքը միասին Ընդհ. Ժողովի նկատառութեան.

բ) «Ըստ տեղական պայմաններին, Դաշնակց. կոմիտէն անհրաժեշտութեան դէպքում կարող է եւ կարմել առանձին ինքնապաշտպանութեան կոմիտէ»:

3.— Բանաձեւ աը ընդունելէ յետոյ որոշուեցաւ, որ Վրէժի ինքնապաշտպանութեան կոմիտէն շարունակէ իր գործունէութիւնը, մինչեւ ծրագրի կազմուելը եւ հաստատուելը:

4.— Ափի տեղեկագրի ընթերցումէն յետոյ, որոշուեցաւ յանձնարարել Կ. Կոմիտէին՝ բանալ Նախավրկայի գիծը դէպ Կովկաս:

5. Տեղեկագիր Անտառի

Անտառ սահմանագծային վայր է Կասպից ծովուն եզերքը, բաժնուած երկու մասերու,— ռուսական եւ պարսկական: Պարսից մասին մէջ, 5000 թուրք ազգաբնակչութեան մէջ կ'ապրեն 4 տուն հայեր, 14 անդամով. ռուսաց կողմը՝ 9 տուն հայեր, 49 անդամով: Անոնք ունին նիւթապէս ապահովուած դրութիւն եւ կը նպաստեն թէ՛ ազգային եւ թէ յեղափոխական գործերու:

901ին մուտք գտած է այստեղ Դաշնակցութիւնը և այժմ ունի երկու խումբ՝ 14 անդամներով, որոնք կը զբաղին ինքնազարգացմամբ, կ'ընեն թերթերու եւն. փոխադրութիւն, մինչեւ այժմ առանց տեղի տալու որեւէ կասկածանքի կառավարութեան կողմանէ: Դաշնակց. խումբերու հաստատ եկամուտն է 80–90 ռուբլի:

Զէնք.— Պարսից կողմը կան 2 հրացան, 7 ատրճանակ. ռուսաց կողմը՝ 9 հրացան, 18 ատրճանակ. հրացաններէն 4ը՝ որսորդական:

Մեր ընկերը յարաբերութիւն մշակած է մաքսատան պաշտօնեաներու հետ եւ փոխադրութեան մէջ օգտուած այդ տեսակ կապերէն:

Անտառում կայ մէկ հնչակեան, որ կը մնայ փոխադրութեան համար:

Ափ.— Կարեւոր վայր է փոխադրական (թերթ, զէնք) տեսակէտից: Կան 3 հայ խանութպաններ, երկու մաքսատան պաշտօնեայ, մի բանակային ներկայացուցիչ, 25–30 բանուորներ: 2 խումբ՝ 25 անդամով, 40–50 թուման անդամավճարով տարեկան: Ուրիշ կուսակցութիւններից անհատներ կան միայն: Տարուայ ընթացքում, բացի 10–15 յեղ. զինուորներից, փոխադրուել է Կովկաս՝ թերթեր, բրոշիւրներ եւայլն:

141 կապոց «Դրօշակ», 50ական եւ աւելի համարներով.
15 կապոց «Հայրենիք», 50ական:
89 բրոշիւրներ (Դէպի Կռիւ, Հայաստան եւ Մակեդոնիա, Մարկ Բոցարիս, Ազատութեան ճանապարհին, կոչեր եւն.)
6 «Ռեւոլուցիոննայա Ռոսսիա»
1 «Պրօ Արմենիա»
5 հեկտոգրաֆ («Դրօշակ»ի):

Երկու անգամ դժբախտութիւն է պատահել և «Դրօշակ»ի ծրարներ են բռնուել. առաջին անգամ 60, իսկ երկրորդ անգամ՝ 15 թուման տուգանքով ձեռք է բերուել եւ ուղարկուել:

Այս տարի զանգեզուրցի հայեր, մօտ 50 հոգի (ճանապարհի մշակներ), իրենց հայրենիք վերադառնալիս մի-մի հրացան առնելով տեղի ընկերների աջակցութեամբ անվտանգ անցել են:

Ափի մօտ գտնուում է (Ս. Ստեփանոս Նախավկայ) Վանքը եւ Դարաշամ գիւղը՝ վանքապատկան: Գիւղացիք հողագործութեամբ եւ մաքսանենգութեամբ են պարապում. մինչեւ մօտ ժամանակներս մեծ դեր էին խաղում յեղափոխականների կազմակերպական տեղափոխութեան մէջ, բայց վերջերս, Սարդարի հալածանքներից, ստիպուած բոլորովին թողել են եւ ոչ մի զոհողութիւն յանձն չեն առել: Վանքը ունի մի վարդապետ, մի տիրացու եւ մի ժամկոչ:

Նիստ VIII

(9 Փետրուար 1906)

1. Փարոս.— Պատգամաւորին բերանացի տեղեկութիւններէն յայտնի եղաւ, որ Փարոս կազմակերպուած է 2 ամիսէ ի վեր եւ ունի 3 ենթակոմիտէ: Փարոսի կ.ի մէջ ծագած են վէճեր, որոնց մասին կարգադրութիւն ընել կը ձգուի Կ. Կ.ին:

2. Մինարէթի տեղեկագրի ամփոփումը՝ հետաձգային:

3. Կ. Կ.ին վրայ պարտականութիւն կը դրուի իր մարմիններու եւ սահմանագլխային գործիչներու միջոցաւ աշխատել պատրաստել վէլէղներ (վալադ) եւ հոգալ կանոնաւոր քարտէներու մասին:

4. Շրջ. Ժողովը կարեւոր համարեց, որ խումբ ճամբայ ելլելէ առաջ խուզարկուներ ուղարկուեն՝ զիծը լրտեսելու եւ ճամբան ուսումնասիրելու համար: Այս կէտին վրայ հրաւիրել Ընդհ. Ժողովի ուշադրութիւնը:

Նիստ IX

(10 Փետրուար 1906)

1. (Շար. Մինարէթի տեղեկագրի քննութեան):

2. Ընկեր Սամսոն կը դնէ առաջադրութիւն Մինարէթէն հեռանալու համար եւ կը խնդրէ ընկերներու համաձայնութիւնը, պատճառաբանելով, որ ա) 10ամեայ գործունէութենէ յետոյ աշխատանքը իրեն համար դարձեր է միօրինակ, մեքենայական, բ) մտադրութիւն ունի Երկիր անցնելու: Ժողովականները այդ պատճառները բաւարար չգտնելով ընդդիմախօսեցին, որ Մինարէթ կարեւոր վայր է Երկրի գործունէութեան տեսակէտով, թէ Սամսոնի, իբրեւ մասնագէտ գործիչի, այդ վայրէն հեռանալովը յեղափոխական գործը կը տուժէ սահմանագլխային կէտերու վրայ,— ընդունեցին հետեւեալ բանաձեւը.

«Մինչեւ որ Կազմակերպութիւնը աչքի առաջ չունենայ Սամսոնի մի յաջորդ, ընկերաբար մերժուում է նրա առաջարկը՝ հեռանալու մասին»: Բանաձեւը ընդունուեցաւ ոգեւորութեամբ:

3. Արիեստանոցը հաստատուած է 1891ին Խատիսեանի ծրագրով եւ Քաթանեանցի միջոցաւ: 92ին Ռուսաստանէն դալիս է Կարոն, իր հետ բերելով գործիքներ ու նորոգուելիք զէնքեր: Նոյն թուին գալիս են նաեւ Միհրան, Երուանդ, Միքայէլ: 93ին ընկերները հեռանում են. Կարոն, կասկածի տակ իյնալով, աշխատում է տանը: 95ին գալիս է Լեւոն՝ 2 աշակերտներով: Արշաւանքի պատրաստութեան համար գալիս են Թորոս, Պետրոս, Մարգար, Նոյնիսկ մերժուում են այդ ժամանակ մասնաւոր գործեր: 96ին գալիս է Սամսոնը, աշխատաւորներու թիւը հասնում է 13ի, որոնցմէ 4ը աշխատում են տանը: Արշաւանքից յետոյ սկսում է հալածանք, Մինարէթում. ձերբակալում է Իշխանը, բռնում՝ 10 հազար փամփուշտ, յառաջանում է մի պայթում, որմէ սպանում է մէկ ընկեր, վիրաւորում երկուսը: Մինչեւ այս, այսինքն 95–97, արհեստանոցից դուրս են գալիս մօտ 340 հրացան: Կասկածը այնքան շատանում է, որ մի օրով փակւում է արհեստանոցը: Այս հալածանքը շարունակւում է մինչեւ 98: Այս պայմանների տակ հեռանում են ընկերներ, բայց շուտով գալիս են Սամսոն եւ Թորոս: Մինչեւ 1901 արհեստանոցում աշխատում են Պետրոս եւ Սմբատ: Շահբազ

մնում է միայն մի տարի։ Աշխատաւորների պակասը զգալի դառնալով՝ Պետրոս Կովկաս է գնում եւ բերում մի քանի արհեստաւորներ։

902ին սկսում է նոր շրջան. արհեստանոցում աշխատում են Սարգիս, Հաջի Լեւոն, Համբիկ, Երուանդ, Արշակ, այնպէս որ մինչեւ 1903 շինում են 110 հրացան։ 1905ին աշխատելիս են լինում Եփրեմ եւ Պօղոս։ Պետրոս զբաղուած լինելով եւ կասկածանքի տակ՝ չի յաճախում արհեստանոց. այժմ կան Եփրեմ եւ Ղուկաս։ Երթեւեկող արհեստաւորներէն շատեր անցած են երկիր, մասնակցած կռիւներու, նահատակուած են 5 ընկերներ։

96ից մինչեւ այժմ պատրաստուած են 600 զէնք, գնուած՝ 170 հազար փամփուշտ եւ 200 հրացան։

[Արհեստանոցի մէջ եղող իրերու ցանկը տեսնել տեղեկագրի մէջ, իսկ հաշիւը՝ Կ. Կ.ին տոմարներուն մէջ]։

Նիստ X

(11 Փետրուար 1906)

Արհեստանոցի առաջարկութիւններ.— Տեղեկագրի մի նախադասութիւնը, թէ ներկայ պայմաններում արհեստանոցի կարեւորութիւնը վիճելի է, բացատրուեց, որ վիճելի է քաղաքական տեսակէտից. թեր և դէմ վիճաբանութիւններից յետոյ, որոշուեց շարունակել ներկայ դրութիւնը, առանց մասնաւոր ընկերոջ յանձնելու։

Երկրորդ առաջարկի համար կայացաւ հետեւեալ որոշումը։ Ի նկատի ունենալով, որ մինչեւ այժմ գործիչները, արհեստաւորներն ու հայդուկները մի տեղ են ապրել, որը որոշ չափով արգիլում է իւրաքանչիւրին յատկապէս իր գործով զբաղուելու, ուստի անհրաժեշտ է արհեստաւորներին տալ յարմարութիւններ՝ իբրեւ անհատներ — արհեստաւորներ ապրելու (առանձին տներում, միասին կամ ջոկ-ջոկ) եւ բացի արհեստանոցի գործից՝ ազատել նրանց կազմակերպական եւ այլ գործերով զբաղուելուց։ Հայդուկների համար էլ նոյն որոշումը ընդունուեց, պարտաւորեցնելով Կ. Կոմիտէին՝ խիստ հսկողութիւն վերոյիշեալ որոշումների գործադրութեան վրայ։

Քանի որ Պետրոսը վտանգուած լինելով արհեստանոց յաճախել անկարող է, եւ որովհետեւ պէտք է արհեստանոցում մի պատասխանատու անձ լինի, ուստի երկար վիճաբանութիւններից յետոյ որոշուեց որ արհեստանոցը առ այժմ էլ նոյն դրութեամբ շարունակուի (Պետրոսը հեռուից հսկող եւ պատասխանատու) մինչեւ նոր արհեստաւորապետի գալը։

Ի վերջոյ Ռայոնական Ժողովը սկզբունքով ընդունեց գործիչների, արհեստաւորների եւ հայդուկների ապրուստի ծախքը իւրաքանչիւրին իրեն յանձնելը եւ յանձնարարեց Կ. Կոմիտէին՝ որոշել ամէն մէկի ծախքի քանակը։

Նիստ XI

(12 Փետրուար 1906)

1.— Տակտիկայի մասին անցան հետեւեալ որոշումները.—

ա) Հիմք ունենալ 15ամեայ փորձառութիւնը։

բ) Ի նկատի ունենալով, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը որեւէ նպատակ չունի պարսից կառավարութեան դէմ, խուսափիլ կառավարութեան հետ որեւէ ընդհարում ունենալէ։

գ) Շեշտել զաղտնի գործունէութեան սկզբունքը։

2.— Յարաբերութիւն Քիւրդերու, Ասորիներու եւն. հետ

ա) Այս մասին ղեկավարուել Ընդհ. Ժողովի արձանագրութեամբ։

բ) Փարոսի վրայ պարտականութիւն դնել՝ յարաբերութիւն մշակելու իրենց շրջանի ասորիներուն հետ։

3.— Յարաբերութիւն ուրիշ կուսակցութիւններու հետ

Այս մասին եւս ղեկավարուել Ընդհ. Ժողովի արձանագրութեան համաձայն։

Նիստ XII

(14 Փետրուար 1906)

1.— Մեր դերը Տաճկահայաստանի եւ Կովկասի վերաբերմամբ

Տաճկահայաստանի վերաբերմամբ մեր դերը որոշ է, իսկ Կովկասի յեղափոխ. ու մարտական ձեռնարկներուն մենք կ'օգնենք ըստ կարելւոյն։

2.— Պարսկահայերի համախմբումը

Գրոպազանդ ընել, որ Պարսկաստանի զանազան անկիւնները ապրող հայերը կեդրոնական հայաշատ վայրեր, առանց տկարացնելու սակայն քաղաքական տեսակէտով կարեւորութիւն ունեցող կէտերը։

3.— Ուսումնասիրութիւն

Պարտականութիւն դնել մեր ընկերներուն եւ մարմիններուն վրայ, որ իրենց շրջաններու մէջ կատարեն բազմակողմանի ուսումնասիրութիւններ։

4.— Շրջիկներ

Ժողովը կարեւոր գտաւ շրջիկներ ունենալու հարցը։ Այս նպատակով իրենց տրամադրելի ներկայացուցին Docteurը եւ Մ.ը։

5.— Դրամական աղբիւրներ

ա) Մեր մարմիններուն վրայ պարտականութիւն դնել, որ ընդարձակեն իրենց դրամական միջոցները։

բ) Դնել դրամական կամաւոր տուրք։

6.— Գիլանի կոմիտէին յանձնարարել, որ Ալ. Տէր Աբրահամեանէ ետ ստանայ 11 մոսկնի խողովակները կամ անոնց արժէքը՝ 100 թուման։ Խողովակները յիշեալ պարոնը ծախած է եւ արժէքը իւրացուցած (1898 թ.ին)։

7.— Վասպուրականի զաղթականները

Դնել Ընդհ. Ժողովի առաջ, որ միջոցներ խորհի Վասպուրականի զաղթը դադրեցնելու համար, որովհետեւ այդ շարունակական զաղթով թէ՛ Երկիրը դատարկուում է եւ թէ մեր գիծերը փճանում են։

8.— Զէնքի վաճառման համար (հայերի կողմից) Ժողովը կարեւոր համարեց կանոններ մտցնել Ներքին կանոնադրութեան մէջ։

9.— Պատասխանատու Մարմին Պարսկաստանի համար

Ժողովը որոշեց առաջարկել Ընդհ. Ժողովին, որ Պարսկաստանը ունենայ իր Պատասխանատու Մարմինը, որովհետեւ Կովկասը այժմ զբաղած է եւ թէ՛ Երկիրը եւ թէ Պարսկաստանը ունին այժմ անհրաժեշտ պէտքեր, փոխուած լինելով քաղաքական պայմանները, ընդարձակ լինելով կազմակերպութիւնը Պարսկաստանի մէջ, եւ Վասպուրականը դարձած լինելով գործունէութեան գլխաւոր վայր։

Նիստ XIII

(15 Փետրուար 1906)

1.— Դատավարութիւն

Առ այժմ կազմակերպութիւնը ստանձնում է հաշտարարի դեր՝ չունենալով ընդարձակ դատավարութիւն վարելու միջոցներ։

2.— Կոթուրի քիւրդերի տեռորը

Կոթուրի քիւրդերը պատճառ են եղած Դումանի եւ Փոխիկի խմբերուն վնասուելուն. Ժողովը որոշեց պատժել դրանց գլխաւորները տեռորով, այս մասին հիմնուելով նաեւ Դումանի ու թիւրքի Զ.ի Կ. Կ.ին առջեւ դրած առաջարկին վրայ։

3.— Շրջանների բաժանում

I Շահի շրջան.—
Շահ, Համադան, Շիրազ, Բենդերապաս, Սենէ, Քիրմանշահ, Սուլթանապատ։
[Մանօթ.— Իսրահանի տալ ներկայացուցչութիւն]։

II Գիլանի շրջան.—
Ռաշտ, Էնզելի, Ղազուին, Մէշէդսար, Բալֆրուշտ, Սարի, Բենդերգեազ, Ասդարապատ, Հասան-Ղալա, Զէկիւղլար, Շահրուտ, Աթթարա, Արտեպիլ։

III Խորասանի շրջան.—
Մէշէդ, Ղրչան, Նիշապուր, Զէպզէվար, Շիրուան։
[Մանօթ.— Խորասանը կապել Կ. Կ.ի հետ]։

IV Վրէժի շրջան.—
Վրէժ, Մարաղա, Մուժումպար, Ղարադաղ, Միանտապ, Ջուլֆա։

V Մինարէթի շրջան.—
Սալմաստ։

VI Ուրմիի շրջան.—
Սօիւզրուլղ, Սուլդուզ, Բարանդուզ։

VII Աւարայրի շրջան.—
Աւարայր, Մակու, Մենաւոր։
[Մանօթ.— Մենաւոր եւ Աւարայր ունին ներկայացուցիչներ]։

4.— Պարսկաստանի II Կենտր. Կոմ.—

Շրջանային Ժողովը (1ի դէմ 7 ձայնով) յարմար դատեց, որ Պարսկաստանի II Կենտր. Կոմիտէն հաստատուի Գիլանի մէջ առ այժմ, ի նկատի ունենալով, որ այդ վայրը աւելի կազմակերպուած է։

Զեռնպահ մնացին 3 պատգամաւորներ, նկատի ունենալով, որ II Կենտր. Կոմիտէ կազմելու համար բաւարար պատրաստի հող չկայ եւ առաջարկեցին այդ բաժանումը յետաձգել մի տարով։

Նիստ XIV

(17 Փետրուար 1906)

1.— Կովկասեան Նախագիծ

ա) Ժողովը առաջնակարգ տեղ տալով տաճկահայկական դատին, չէ ժխտում նաեւ Հ. Յ. Դաշնակցութեան մասնակցութեան կարեւորութիւնը Կովկասի ընդհանուր յեղափոխական շարժման մէջ:

բ) Ցեղերատիւ կազմը Անդրկովկասի համար ընդունում է Ժողովը, իբրեւ նպատակէտ ապագայ ձգտումներու:

2.— Ձայներու համաչափութիւն

Շրջանական Ժողովին կը մասնակցեն.

ա) Կոմիտէները, իւրաքանչիւրը մէկ ձայնի իրաւունքով:

Դանօք.— Երկու ձայն ունենալու համար կոմիտէական շրջանը պէտք է ունենայ անդամներու 400 թիւը:

բ) Ցեղափոխ. տեսակէտով կարեւորութիւն ներկայացնող վայրում գտնուող գործիչը Կ. Կ.ի կողմանէ կը հրաւիրուի մէկ ձայնի իրաւունքով:

գ) Կ. Կոմիտէն Շրջ. Ժողովին կը մասնակցի մէկ ձայնի իրաւունքով:

դ) Վրէժի արհեստանոցը՝ 1 ձայնի իրաւունքով:

Դանօք.— ա) Կ. Կոմ.ի անդամին ձայն չի տրուում մարմինների կողմից.

բ) Մէկ պատգամաւոր չի կարող ունենալ երկուքէն աւելի ձայնի իրաւունք: Երկրորդ ձայնը կը տրուի նրա ծանօթ վայրից: Գործիչ մը, երբ շրջանի մը ձայնը կը ստանայ, կը համարուի պատգամաւոր և կը կորսընտէ իր գործիչի ձայնը:

գ) Որոշ խնդիրների լուսաբանութեան համար, Ժողովը խորհրդակցական ձայնով կարող է հրաւիրել, կարեւոր դատուած պարագային, Կ. Կոմ.ի եւ կոմ.ի կազմը:

Նիստ XV

(18 Փետրուար 1906)

1.— Տեղեկագիր Վրէժի Ինքնապաշտպանութեան Կոմիտէին.—

ա) Աւարպատկանի կենտ. Կոմիտէի նախաձեռնութեամբ կազմուած է Վրէժի Ինքնապաշտպանութեան Կոմիտէն եւ դրուած՝ չէզոք հողի վրայ զանազան նկատումներով: Կոմիտէն ունեցած է երկու անգամ հանգանակութիւններ. առաջին հանգանակութեան արդիւնքը եղած է դրան 12·430, երկրորդին արդիւնքը՝ դրան 25·000: Վերջին հանգանակութիւնը դեռ կը շարունակուի:

Զէնիֆ.— Ինքնապաշտպանութեան Կոմիտէն գնած է 25 հրացան, 10·600 փամփուշտով, 1 մաուզեր տորբճանակ՝ 100 փամփուշտով, նաեւ զանազան գործիքներ:

Ինքն. Կոմիտէն հայ ազգաբնակութեան համար գնած է 91 հրացան՝ 18·025 փամփուշտով եւ 30 տորբճանակ, ի հարկէ փոդերը ստանալով զէնքը գնող անհատներէն:

Վրէժում այժմ կան 187 հրացան՝ միջին հաշուով 100ական ծայրով:

Դանօք.— Հանգանակութեան միջոցին խոչընդոտներ յարուցած են հնչակեանները:

բ) Ինքն. Կոմիտէն կազմակերպած է դինուորական խմբեր եւ վարժեցուցած նրանց ըստ կարելւոյն, որոշած է դիրքեր եւայլն:

2.— Ինքնապաշտպանութեան գործին մէջ կենտրոնական Կոմիտէն դիմած է խիստ միջոցների, որոշած է ապիտակ տեռոր: Ի նկատի ունենալով հանգամանքները Ժողովը գտաւ այդ ձեռնարկը արդարացի, բայց յանձնարարեց այսուհետեւ բացառիկ պարագաներում միայն դիմել ապիտակ տեռորի:

Նիստ XVI

(19 Փետրուար 1906)

1.— Ներքին կանոնագրութեան փոփոխումն

Ա.— Մասնախումբը ներկայացուց փոփոխուած կանոնագրութեան նախագիծը: Ժողովը վիճաբանութեան նիւթ դարձնելով զանազան յօդուածներ, ընդունեց զայն եւ կարեւոր համարեց մտցնել հետեւեալ կէտերը.—

ա) Իւրաքանչիւր ենթակոմիտէ 35 անդամներու մէկ ձայնի իրաւունք տալով մասնակցում է կոմիտէի ընտրութեան:

Դանօք.— Կոմիտէին է թողնուում ձայնի իրաւունքով հրաւիրել կարեւոր գործիչներ:

բ) Ժողովը ընդունեց ներքին կանոնագրութեան մէջ մտցնել Շրջանական Ժողովի համար գծուած ձայներու համաչափութիւնը:

2.— Ընտրուեցաւ 3 հոգիէ բաղկացեալ մասնախումբ մը, կազմելու համար միաձեւ հաշուեցուցակներ եւ արձանագրութեան տետրներ՝ խմբերի համար:

Նիստ XVII

(20 Փետրուար 1906)

1.— Շահ-ի տեղեկագիր

Ա.— Շահ (Թեհրան), Պարսկաստանի մայրաքաղաքը, ունի 250·000 բնակիչ, որոնցմէ 400 տուն հայեր՝ ցրուած քաղաքի զանազան մասերում: Հայերը ունին երկու եկեղեցի յարակից ուսումնարաններով: Հայոց տնտեսական վիճակը շատ աննախանձելի է. բացի մի քանի վաճառականներէ եւ 50–60 արհեստաւորներէ եւ ծառայողներէ, միւսները կը զբաղին օղեվաճառութեան ստորնացուցիչ գործով եւ կը գտնուին կէս թրքացած վիճակի մէջ: Ցեղափոխութիւնը իր մուտք գործելէն ի վեր ունեցած է ի հարկէ իր բարերար ազդեցութիւնը բարքերու վրայ:

Կազմակերպութիւն.— Քաղաքին մէջ կան կազմակերպուած 12 դաշնակց. խումբ՝ 128 անդամներով եւ անդամուհիներով: Խմբերու տարեկան անդամավճարները 6048 դրան. նոյնքան ալ կը գոյանայ վիճակախաղերէ, թատրոնէ եւն. (տարեկան մուտք՝ 1500 թուման):

Բ.— Նոր-Ջուղայի նոր կազմակերպուած խմբերը կապուած են Շահի կոմիտէին հետ: Այդտեղ կան 7 խումբ (օժանդակ) 80 անդամ-անդամուհիներով, անդամավճար՝ 1600 դրան, նոյնքան ալ թատրոնէ եւն. (տարեկան մուտք՝ 300 թուման):

Գ.— Հարցեր՝ Շահի

ա.— Գաղտնագիր թղթակցութիւն. թոյլատրում է Կ. Կ.ին՝ մշակել նամակագրութեան եւ հեռագրի համար գաղտնի ձեւեր:

բ.— Հայատեաց թերթեր.— (Հաբիւլ Մաթին՝ Հնդկաստան, Ջէհրէօնամա՝ Թեհրան): Այս եւ այսօրինակ թերթեր տպում են շարունակ հայոց դէմ յօդուածներ եւ մահմեդականներին գրգռում՝ հայերի դէմ: Ժողովը կարեւոր համարեց ա) դիմել Արեւմտեան Բիւրոյին, որ միջոցներ խորհի ընդդէմ այդ պրոպագանդին, տպելով յօդուածներ եւրոպական (մանաւանդ անգլ.) մամուլին մէջ, բ) պատասխանել հայոց դէմ գրուած յօդուածներուն, գ) նպաստել հայասէր թերթերուն՝ տարածելով զանոնք եւ ուղարկելով յօդուածներ:

դ.— Նուիրատուութիւններու հրատարակումը.— Շահի եւ ուրիշ տեղերու պատգամաւորներ գանգատ ներկայացուցին, որ նուիրատուութիւնները «Դրօշակ»ի մէջ ուշ են տպւում: Ժողովը պարտականութիւն է դնում թէ՛ Բիւրոյին եւ թէ Կ. Կ.ին վրայ, որ հոգ տանեն նուիրատուութիւնները իրենց ժամանակին հրատարակելու մասին:

2.— Հնդկաստան.— Ժողովը կարեւոր համարեց յանձնարարել ապագայ Կ. Կ.ին, որ ուշադրութիւն դարձնէ Հնդկաստանի հայերու վրայ, ուժեղացնէ Իսբահանի կազմակերպութիւնը եւ կապ հաստատէ Հնդկաստանի եւ Իսբահանի մէջ բնակուող հայերու միջեւ:

3.— Տեղեկագիր Կենտ. Կոմիտէի

[Դիւանին յանձնուած չլինելուն համար՝ ամփոփումը հետագային]:

Նիստ XVIII

(23 Փետրուար 1906)

1.— Առաջադրութիւններ Գիլանի –

Ժողովը կը յանձնարարէ Ռասկանապատի Կ. Կ.ին, որ դադրեցնէ Շահրիկեանի Կ. Կ.ի անունով պահած յարաբերութիւնը Գիլանի հետ:

2.— Առաջադրութիւններ Ընդհանուր Ժողովի համար

Ա) Գիլանի առաջարկը՝ հրատարակել Ռուսատանի մէջ «Pro-Armenia»՝ մերժուեցաւ, ի նկատի ունենալով որ 1) ռուս Ժողովուրդը տհաս է, 2) հասարակական կարծիքը ազդեցութիւն չունի կառավարութեան վրայ, 3) ռուս հայասէրներ չկան, 4) աւելորդ ծախքերու դուռ կը բացուի:

Բ) Վարդոյի խնդիր.—

Գիլանի դրած առաջարկը Վարդոյի մասին՝ Ժողովը ընդունեց. ահա՛ բանաձեւը.—

«Վարդոն չարժանացնել Ընդհ. Ժողովին ներկայանալու պատուին եւ տնօրինել խիստ պատիժ»:

Գ) Տես Նիստ VIII, կէտ 4.

Դ) Տես Նիստ VII, կէտ 2, ա.

Ե) Տես Նիստ XII, կէտ 7 եւ 9.

Զ) Տես Նիստ XIII, կէտ 4.

Է) Վերակազմ[ակերպ]ել աւելի ուժեղ դինամիտային գործողութիւններ, նախորոշուած վայրերում եւ Հայաստանի գլխաւոր քաղաքներում:

Ը) Տաճկահայաստանի գիւղացիներին զինել, Կովկասի նման, որոնք եւ ապստամբութեան միջոցին պատրաստ կը լինեն յարձակողականի սկսելու:

Թ) Վրէժի արհեստանոցը առաջարկում է հնարաւոր եղած չափով գնել պատրաստի զէնքեր: Կիսատ զէնքերը աւելի թանգ են նայում կազմակերպութեան վրայ եւ աւելի վատ են:

Ժ) Արհեստանոցը առաջարկում է նաեւ եղած զէնքերի վրայ աւելացնել աւելի կատարելագործուած նոր ձեւի զէնքեր եւ դրանց համար գտնել մասնագէտներ, հիմնել նոր զէնքերին փամփուշտ պատրաստելու համար արհեստանոց:

ԺԱ) Մամուլ·— Ռուսական մամուլին մէջ արծարծել Հայկական Հարցը, ունենալով ռուսերէն լեզուով սեփական օրգան:

ԺԲ) Փոխադրութիւններ ընել առանց զինատար խմբերի, փոխադրել սուրհանդակներով, վալդներով եւայլն:

Նիստ XIX

(24 Փետրուար 1906)

1·— Յովհաննէս Պետրոսեանի հեռացումը

ա) Շրջ. Ժողովը քննութեան ենթարկելով Կ. Կ.ի հրատարակած № 3 շրջաբերականը ուսուցիչ Յովհաննէս Պետրոսեանի մասին եւ ձեռքի տակ ունենալով այդ խնդրի առթիւ եղած գրաւոր բոլոր դոկիւմանները, իրաւացի գտաւ Կ. Կ.ի որոշումը եւ հաստատելով զայն՝ յանձնարարեց ապագայ Կ. Կ.ին դոկիւմանները ուղարկել Արեւելեան Բիւրոյին:

բ) Շրջանական Ժողովը աւելորդ համարեց Ց. Պետրոսեանին ատեան հրաւիրել ի նկատի ունենալով, որ 1) դիւանին մէջ կան Պետրոսեանի իսկ ձեռքով գրուած դոկիւմաններ (905 Ապրիլ 22, 23 Թ. նամակներ՝ ուղղուած Սալմաստի մեր գործիչին), 2) կան գրաւոր դոկիւմաններ Պետրոսեանի իբրեւ վկայ ցոյց տուած Երուանդի կողմանէ, 3) ամբաստանեալը շրջանից դուրս է գտնւում:

գ) Ժողովը յանձնարարում է Կ. Կ.ին գանցել Պետրոսեանից 73 Թուման կազմակերպական փողը:

2·— Արսէն Մելիք-Փաշայեանի հեռացումը

Ա) Ժողովը լսելով ծանօթ ընկերներու վկայութիւնը Ա. Մ.-Փ.ի մասին, հաստատեց Կ. Կ.ի № 2 թուղթիկը, բայց թողուած այդ պարոնի հեռացման համար:

Բ) Հարցնել «Դիրշակ»ի խմբագրութեան թէ ինչո՞ւ տպած է № 2 շրջաբերականի մի մասը:

Նիստ XX

(25 Փետրուար 1906)

1·— Դիմում Ռուզվէլթին·— *Ժողովը որոշեց, որ Ռուզվէլթին Ժողովրդական դիմում լինի, ի նպաստ Հայկ. Հարցին միջամտելու համար՝ Լահէյի Ժողովում:*

2·— Ներքին Կանոնագրութիւն·— *Երկրորդ անգամ կարդացուեցաւ ներքին կանոնագրութիւնը եւ հաստատուելով յանձնարարուեցաւ տալ ի հրատարակութիւն:*

Նիստ XXI

(26 Փետրուար 1906)

1·— Հաշուեքննութիւն

Հաշուեքննիչ մասնախումբը ներկայացուց իր եզրակացութիւնը, որ հաշիւները ճիշդ են: Ժողովը ընդունեց շնորհակալութեամբ:

2·— Եկեւմտական տեղեկագիր

Շրջ. Ժողովը Կ. Կ.ին հաշուետուութիւնը բաւարար համարելով՝ յանձնարարեց նորընտիր Կ. Կ.ին փութով կազմել եկեւմտական (ֆինանսական) մանրամասն եւ ընդհ. տեղեկագիր եւ տպուած ուղարկել մարմիններուն:

3·— Կ. Կ.ի հրաժարական

Կ. Կոմիտէն ներկայացուց իր հրաժարականը: Ժողովը յայտնեց նրա գործունէութեան համար իր շնորհակալութիւնը:

4·— Ընտրութիւն Կ. Կոմիտէի

Ընտրութիւնը կատարուեցաւ գաղտնի քուէով, 11 ձայնով: Բացակայ էր Շահսէվան-Անտառի պատգամաւորը:

Նորընտիր Կ. Կ.ի մէջ ընտրուեցան·—

1· Վ. Հայրապետեան (Հուր)	11	*ձայն*
2· Մ. Ստեփանովիչ (Ասպետ)	11	»
3· Թ. Նիկոլայեւիչ (Կայծակ)	11	»
4· Ց. Վարդանովիչ (Փայլակ)	10	»
5· Մ. Տիգրանեան (Բորակ)	10	»
6· Ց. Պէտկայան (Սուր)	10	»
7· Ն. Արմենակեան (Թուր)	9	»

5·— Ընտրութիւն Ընդհ. Ժողովի պատգամաւորին

Ընդհ. Ժողովին երթալու համար շրջանի պատգամաւոր ընտրուեցաւ Ստեփան՝ 9 ձայնով:

Արձանագրութեան ճշդութիւնը կը վաւերացնեն

Ներկ. Ատրպատ. Կ. Կոմիտէի՝	*ՉԱՒԷՆ*
Պատգ. Շահի եւ Ափի՝	*ԱՐՄԵՆԱԿ*
Պատգամաւոր Մենաւորի եւ Փարոսի	*ՍԱՄՍՈՆ*
» *Վրէժի*	*ՎԱՉԳԷՆ*
» *Արհեստանոցի*	*Պ. ԽԱՐԻՍԽԵԱՆ*
» *Աւարայրի*	*ԱՇՈՏ*
Գործիչ Աւարայրի	*ՄԵԼՈ (?)*
» *Մենաւորի*	*ԸՆԴԱՑՐ*
Պատգամաւոր Գիլանի	*ԹԱՓԱՌԱԿԱՆ*

4·— ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ Հ.Յ.Դ. ՄԻՆԱՐԷԹԻ Ա. ՇՐՋ. ԺՈՂՈՎԻ (1906 Թ.)

Նամակի ներքեւ չափի 4 երկարերդ թուղթերէ կազմուած անբաղկ: Ամենագրութիւնը գրուած է սեւ մելանով, անփոփոխ ձեռագրով, եւ կը գրաւէ լրիւ 16 էջ (ամբողջ տետրակը): Կնիք չի կրեր:

Նիստ Ա.

Հոկտեմբեր 5

Բացակայ են Գուրգէն եւ Մատաստանի ու Ճառագայթի պատգամաւորները:

Օրակարգ

I Նախագահի եւ քարտուղարների ընտրութիւնը.
II Մատաստանի ենթակոմիտէի նամակը.
III Տեղեկագրի ընթերցումը.

Ճառագայթում կայացաւ Հ.Յ.Դ. Մինարէթի շրջանի Ա. Շրջանային Ժողովի ա. նիստը:

Հրաւիրուած էին մի մի պատգամաւոր հետեւեալ ենթակոմիտէների կողմից·—

1· *Ճառագայթի.*
2· *Մատաստանի.*
3· *Քարի.*
4· *Զոլայի.*
5· *Մինարէթի.*
6· *Ժայռի.*

Նաեւ երկու ներկայացուցիչ Կոմիտէի կողմից՝ Աչոտ եւ Գուրգէն, Մինարէթի շրջանի ընդհանուր ներկայացուցիչ-գործիչ՝ Սամսոն, Զինուորական խմբապետ (Մինարէթի շրջանի)՝ Մկրտիչ, Զինուորական կազմի ներկայացուցիչ՝ Թուչնակ,

Եւ գործիչներ՝ Զաւէն, Վազգէն, Քրիստափոր: Ընդամէնը տասնչորս անձ, 14 ձայնով:

Նիստը բացեց Սամսոն հետեւեալ կարճ նախաբանով.—

«Որեւէ հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող եւ ընդհանրութեան օգտի տեսակէտից նշանակութեան արժանի մարմինները այն ժամանակ կարող են լիակատար կերպով օգտակար լինել, երբ նրանք լաւ կազմակերպուած են. երբ նրանք ունեն մի սուրբ նպատակ՝ հասարակութեան բարօրութիւնը. երբ նրանք ունեն գործնական տակտիկա՝ միանգամայն խորապէս թափանցած լինելով հասարակութեան ներկայ կարիքներին եւ օրէ օր փոփոխուող պայմաններին:

«Մի այդպիսի նպատակի համար եւ այդպիսի ուղղութեամբ, իւր գոյութիւն ունենալուց ի վեր հայկական իրականութեան մէջ գործելիս է եղել Հ. Յ. Դաշնակցութիւնը: Այս կազմակերպութիւնը տարիներից ի վեր աւելի եւ աւելի լայն ծաւալ ստանալով, ընդգրկել է հայ ժողովուրդի աւելի մեծ բազմութիւնը, գործողների մի բանակ է կազմուել Դաշնակցութեան դրօշին տակ, որի պահանջների եւ համոզմունքների վրայ է հիմնել կազմակերպութիւնը իւր գործունէութիւնը. եւ այսպիսով մեր կեանքին մէջ քաղաքացիական նշանակութիւն ունեցող ամենակարեւոր կազմակերպութիւնն է դարձել: Իւր տարիների ոգու համաձայն, առաջիկայ IV Ընդհանուր Ժողովի համար, նա ուզում է իւր առջեւ ունենալ դաշնակցական հասարակութեան ամէն շրջանի կարծիքները, որոնց վրայ հիմնուելով, ապագայում պիտի շարունակի իւր գործունէութիւնը:

«Մինարէթի շրջանում, սրանից առաջ, երբ ժողովուրդից միայն աննշան փոքրամասնութիւնը գաղափար ունէր հայկական յեղափոխութեան մասին, գերակայող են հանդիսացել գլխաւորապէս անհատների կարծիքները. բայց այժմ երբ ժողովրդի մեծագոյն մասը յեղափոխական ոգով կրթուած, կազմակերպուած է Դաշնակցութեան դրօշին տակ, նա իրաւունք ունի իւր սեպհական կարծիքները դնել կազմակերպութեան առջեւ, եւ այստեղ հաւաքուած գործիչները եւ պատգամաւորները, որ Մինարէթի դաշնակցական հասարակութեան ներկայացուցիչներն են, պէտք է որ ազատ կերպով պարզեն հասարակութեան եւ իրանց համոզմունքները՝ դրուած հարցերի մասին»:

Այս նախաբանից վերջ յարգանքի ցոյց կատարուեցաւ մօտիկ ժամանակներում Մինարէթից դէպի Երկիր մեկնող բայց ճանապարհին կռիւների մէջ նահատակուող ընկերների յիշատակին: Ցիշուեցան Դումանի խմբից նահատակուող Աւոյի եւ Սերոբի, ինչպէս նաեւ Փոխիկի եւ նրան ընկերակցող 15 զինուորների անունները: Ժողովականները յոտնկայս ունկնդրեցին եւ ապա անցան օրակարգին:

Որոշումներ

I *Ձայների բացարձակ մեծամասնութեամբ նիստերի մշտական նախագահ ընտրուեցաւ Սամսոն. իսկ քարտուղարները՝ Զաւէն եւ Քրիստափոր։*

II *Կարդացուեցաւ Մինարէթի Կոմիտէին ուղղուած Ծառաստանի ենթակոմիտէին նամակը։ Այդ զբաղեալ յիշեալ ենթակոմիտէն մերժել էր իւր կողմից պատգամաւոր ուղարկել Ժողովի նիստին, առարկելով, որ պատգամաւորական Ժողովը պէտք է լայն կազմ ունենայ, որ առնուազն Ժողովին պէտք է մասնակցին ենթակոմիտէները՝ իրանց ամբողջ կազմով։ Այդ զբաղեալ յիշեալ ենթակոմիտէն անհիմն էր ընդունել նաեւ այն հանգամանքը, որ մեծ բազմութեամբ հաւաքուելիք Ժողովը կարող է կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրել իւր վրայ։*

Եղան թեր ու դէմ վիճաբանութիւններ։ Զաւէն առարկեց, որ եթէ ենթակոմիտէները իրանց ամբողջ կազմով ներկայ չլինեն Ժողովին, փոքրամասնութեան ձայնը պիտի կորսուի։

Ժողովականների բացարձակ մեծամասնութիւնը, հիմնուելով կազմակերպական կանոնների եւ Վրէժի ներքին կանոնագրութեան մի կարգ յօդուածների վրայ, պատասխանեց այդ առարկութեան, 1) որ փոքրամասնութեան ձայնը չի կորսուում, որովհետեւ արդէն նախապէս յայտարարուած է ենթակոմիտէներին, որ Ժողովին ներկայացնեն, գրաւոր կերպով, իրանց շրջանի թէ՛ մեծամասնութեան եւ թէ փոքրամասնութեան կարծիքները։ 2) որ Շրջ. Ժողով ասելով հասկացուում է միշտ՝ շրջանի պատգամաւորական Ժողով, 3) որ բազմութեամբ հաւաքուելիք Ժողովը կարող է կառավարութեան ուշադրութիւնը դրաւել։ 4) որ դաբձեալ կարելի է բազմութեամբ Ժողով գումարել, եթէ Ծառաստանի ենթակոմիտէն դիւրութիւններ կը տայ, քանի որ Ժողովականները մի այդպիսի Ժողովի համար որեւէ դիւրութիւն չեն նկատում։

Որոշուեցաւ Ծառաստանի ենթակոմիտէի նամակին պատասխանել, այսպէս.

1) Սկզբունքով Ժողովը ընդունում է որ գեղեցիկ բան է ոչ միայն ենթակոմիտէների մասնակցութիւնը, որով դարձեալ սահմանափակ պիտի լինի Ժողովը, այլ նոյնիսկ ցանկալի է որ լինի նաեւ բոլոր խմբակների եւ անհատ դաշնակցականների մասնակցութիւնը։ բայց դժբախտաբար մեր տեղական–կառավարական պայմանները մեզ չեն թոյլ տալիս այդ բանը։ Առաջարկում ենք որ դուք մեզ տաք դիւրութիւն՝ այդպիսի բազմութեամբ Ժողով գումարելու, քանի որ ներկայ Ժողովականները որեւէ դրական ելքի չեն կարող յանգել այդ մասին։ Միեւնոյն ատեն ձեր ուշադրութիւնն ենք հրաւիրում ներք. կանոնագրութեան § 19ի վրայ։

2) Ներքին կանոնագրութեան համաձայն դուք պիտի գիտնայիք, որ ներկայ Ժողովը պատգամաւորական Ժողով է եւ Ժամանակին ուղարկէիք ձեր տեղեկագիրը եւ պատգամաւորը։

Ուստի Ժողովս առաջարկում է, որ ընտրէք ձեր կողմից մի պատգամաւոր, որ ձեր շրջանի մանրամասն տեղեկագրի հետ ներկայանայ Ժողովին, վաղը Ժամը 10ից առաջ։ Միեւնոյն Ժամանակ ձեր պատգամաւորը անձամբ կը բացատրուի ձեր առաջարկութեան առթիւ։

Սոյն բանաձեւը ընդունուեց 8 ձայնով. 1 ձայն չընդունուեց, 2ը ձեռնպահ մնացին։

III *Կարդացուեցան. 1) Մինարէթի ենթակոմիտէի տեղեկագիրը։ Ժողովը ենթակոմիտէի գործունէութեան որոշ մասերը թոյլ գտաւ։ Բացատրութիւններ տրուեցան մի կարգ հարցերի համար։ 2) Զօլա ենթակոմիտէի տեղեկագիրը։ Անբաւական գտնուեց ենթակոմիտէի բիւրջէն. տեղեկագրի ուրիշ մասերը բաւարար էին։ 3) Քարի ենթակոմիտէի տեղեկագրի առթիւ. Ժողովը յայտնեց իւր գոհունակութիւնը, որովհետեւ կազմակերպական մասին եւ ինքնապաշտպանութեան համար լաւ արդիւնք էր ստացուած։ 4) Ժայռի ենթակոմիտէի տեղեկագիրը, որ բաւարար էր։*

Տեղեկագրերի ընթերցման շարունակութիւնը մընաց հետեւեալ նստին։

Նիստ Բ.

Հոկտեմբեր 6

Բացակայ են Ծառաստանի եւ Ճառագայթի պատգամաւորներն ու Աշոտ։

Օրակարգ

I *Ծառաստանի ենթակոմիտէի պատասխանը.*
II *Տեղեկագրերի ընթերցումը.*
III *Դատական խնդիր.*
IV *Ինքնապաշտպանութեան խնդիր.*
V *Դրամական խնդիր.*
VI *Զինուորական մարմնի յարաբերութիւն տեղական մարմինների հետ։*

Որոշումներ

I *Կարդացուեցաւ Ծառաստանի ենթակոմիտէի պատասխանը՝ Ժողովիս երէկուայ նամակին։ Ցիշեալ ենթակոմիտէն յանձն առած լինելով լայն ծաւալով գումարուելիք Ժողովին համար յարմարութիւններ տալու իր շրջանում, Ժողովիս կողմից ընտրուեցան երկու ներկայացուցիչ՝ Սամսոն եւ Մկրտիչ, որոնց հետ Ծառաստանի ենթակոմիտէն ամբողջ կազմով կամ լիազօր ներկայացուցչի միջոցով պիտի խորհրդակցի պէտք եղած յարմարութիւնների համար։*

II *Կարդացուեցան. 1) Ճառագայթ ենթակոմիտէի տեղեկագիրը. բայց նոյն ենթակոմիտէի պատգամաւորը ներկայ չլինելով, որոշուեցաւ տեղեկագրի առթիւ բացատրութիւնները թողնել մի ուրիշ նիստի։ 2) Ծառաստանի տեղեկագիրը։ Որոշ մասերը բաւարար էին, բայց Ժողովուրդը կազմակերպելու եւ զինելու գործը անբաւարար էր։ Տեղեկագրի մէջ յիշուած չէր նաեւ գիւղական կազմակերպութեան մասին, թէ ի՞նչ հիմունքի վրայ դրուած է եղել նա, ի՞նչ նիւթական հաստատ է ունեցել եւ ա՛յժմ ի՞նչ վիճակի մէջ է։ Որոշուեցաւ որ ենթակոմիտէն այս մասին բացատրութիւն տայ։*

Նկատուեցաւ որ տեղեկագրերի մէջ առհասարակ յիշուած չէր, թէ ի՛նչ գիւղում, ի՛նչ տարբեր կազմակերպութիւններ են գտնուում։ Այս մասին պատասխանուեցաւ, որ բացի Փայաջուկից, ուր բոյն են դրել հընչակեաններ, բոլոր գիւղերում ոչ մի տարբեր կազմակերպութիւն մուտք չունի։

III *Դատական խնդրի մասին կարդացուեցան ենթակոմիտէների ուղարկած կարծիքները. բոլորը միասին ընդունում են, որ դատական խնդիրները վճռէ ինքն իսկ՝ Կազմակերպութիւնը (Դաշնակցութիւնը), կամ յանձնէ տեղական հոգաբարձուներին՝ բայց իւր հսկողութեան տակ։ Ծառաստանի ենթակոմիտէի մէջ միայն մի ձայն հակառակ է եղել այս կարծիքին։ Այս մասին եղան վիճաբանութիւններ, Ժողովականներից առարկողներ եղան, որ Կազմակերպութիւնը դատական խնդիրներով զբաղուելով ժամանակի մեծ կորուստ է ունենում եւ յետոյ դատերը հեշտութեամբ եւ առանց բարդութիւնների վերջացնելու համար, հարկաւոր են իրաւաբաններ, որոնք պակասում են։*

Միաձայն ընդունուեցաւ միջնորդ դատարանի ըսկզբունքով ղեկավարուել. բայց որովհետեւ հասարակութիւնը ընդհանրապէս այն գիտակցութեան չէ եկել, որ ինք իրան կարողանայ գործադրել միջնորդ դատարանի սկզբունքը, առաջարկուեցաւ եւ ընդունուեցաւ նաեւ, որ առայժմ կազմակերպութեան հսկողութիւնը լինի եւ նա ուղղութիւն տայ միջնորդ դատարաններին։

Ժողովականներից ընտրուեցան երեք հոգի միջնորդ դատարանի համար մի Դրագիր կազմելու։

IV *Բոլոր ենթակոմիտէները համաձայն են, որ ինքնապաշտպանութեան միջոցներին ներկայիս պէտք է աւելի ուժ տալ, տեղական կարողութեան համեմատութեամբ։ Որոշուեցաւ որ այսուհետեւ ենթակոմիտէները ոչ միայն առանձին ուշադրութիւն պէտք է դարձնեն ունեւորները իրանց միջոցներով զինել տալու, այլ նաեւ պէտք է որոշ գումարներ ճարեն եւ մատչելի տոկոսով անկարողներին տան, որպէսզի այդ միջոցով նրանք եւս կարողանան զինուել։ Պէտք է հրաւիրել որ միշտ լաւ տեսակի զէնքեր գնուեն։*

V *Առաջարկուեցաւ՝ շրջանի եկամուտը մեծացնելու համար տուրք նշանակել բոլոր դաշնակցական եւ չէզոք անհատների վրայ, վերացնելով ամսական անդամավճարի սիստեմը, բայց չընդունուեց։ Միաձայն որոշուեցաւ. 1) տուրքի փոխարէն տարեկան մի անգամ հանգանակութիւն անել, որին պէտք է մասնակցեն թէ՛ դաշնակցական եւ թէ չէզոք անհատներ, լայն չափով. 2) անդամավճարների քանակը կրկնապատկել. 3) դաշնակցական անհատների թիւը մեծացընել, Ժողովուրդի աւելի մեծ մասը կազմակերպել. խումբեր կազմել նաեւ պատանիներից, կանանցից եւ նոյնիսկ ծերերից. 4) իւրաքանչիւր ենթակոմիտէի շրջանում տարեկան մի ներկայացում ունենալ եւ աւետիքման գնալ յօգուտ Դաշնակցութեան։ Առաջարկուեցաւ նաեւ դիմել Կոմիտէին, որ մի մեծ վիճակախաղ սարքի։*

VI *Մինչեւ այժմ Մինարէթի շրջանում գտնուող դրսեցի զինուորները եղել են առանձնացած, կապ չեն ունեցել տեղական զինուորների հետ եւ ենթարկուելիս են եղել Մինարէթի ընդհ. ներկայացուցիչ–գործիչին։ Նկատի ունենալով որ դրսեցի զինուորները իրանց փորձառութեամբ կարող են շատ օգտակար լինել տեղական զինուորներին, որոշուեցաւ դրանք միացնել միմեանց հետ, կազմել կանոնաւոր մարտական խմբեր եւ ղեկավարուել ներքին կանոնադրութեան §.§./3–51ի համաձայն։*

Նիստ Գ.

Հոկտեմբեր 10

Բացակայ է Քարի պատգամաւորը. ներկայ է նաեւ Կ. Կոմիտէի ներկայացուցիչը։

Օրակարգ

I *Գրպագանդ եւ Դաշնակցութեան Ծրագրի ընդարձակ բացատրում.*
II *Մեր բռնելիք դիրքը հնչակեանների հանդէպ.*
III *Շրջանային Ժողովին նոր անդամներ հրաւիրել։*

Ժողովը շարունակւում է նախկին ծաւալով։ Ծառաստանի ենթակոմիտէն համոզւում է իւր առաջարկի անգործադրելի լինելուն։

Նախքան օրակարգի հարցերին անցնելը, կարդացուեցան նախորդ երկու նիստերի արձանագրութիւնները։ Ծառաստանի պատգամաւորը նախորդ նիստից բացակայած լինելով, դրամական խնդրի մասին առաջարկեց իւր կարծիքը յայտնել։ Թէեւ նախորդ նիստում պէտք եղած չափով ծեծուած էր այդ խնդիրը եւ որոշում տրուած, բայց 8 ձայն ընդդէմ 6ի ընդունեց Ծառաստանի պատգամաւորի առաջարկութիւնը եւ նորից վիճաբանութեան նիւթ դարձրեց դրամական հարցը։ Ցիշեալը առաջարկեց որ տուրքի սիստեմ ընդունուի, միանգամայն պահանջելով օժանդակ խմբերի կազմը, այսինքն մի կերպ գիւղական կազմակերպութիւն լինի։

(Ծառաստանի ենթակոմիտէն անցեալ տարի ձեռնարկել էր մի այդպիսի կազմակերպութեան, չէզոք անհատները համախմբելով ունեցել էր մօտ 90 անդամ եւ 90 թումանի չափ եկամուտ, բայց այդ կազմակերպութիւնը աւելի քիչ արդիւնք ունեցաւ նիւթապէս քան եթէ հանգանակութիւն լինէր Ծառաստանի շրջանում. իսկ այժմ կազմալուծուած է արդէն այդ կազմը)։ Ընդունուեցաւ դարձեալ նախկին որոշումը (Տ. Նիստ Բ. §. V)։

Ճառագայթի պատգամաւորից առանձին բացատրութիւն չպահանջուեց իրանց գործունէութեան մասին, առանձին կարիք չզգացուելով։

Որոշումներ

I *Նախագահը նկատել տուեց, որ ինչպէս երեւում է տեղեկագրերից, ենթակոմիտէների շրջանում մասնաւոր ուշադրութեան առարկայ չեն եղել ո՛չ Դաշնակցութեան հիմնական Ծրագիրը, ո՛չ կազմակերպական Կանոնները եւ ոչ ներքին կանոնագրութիւնը. մինչդեռ հարկաւոր էր որ առանձին ժողովներում ենթակոմիտէները եւ խմբերը յատկապէս պարապմունքի նիւթ դարձնէին կազմակերպութեան գրաւոր սկզբունքները եւ օրէնքները։ Միաձայն որոշուեցաւ որ ենթակոմիտէները այսուհետեւ յատկապէս աշխատին ոչ միայն աւելի կանոնաւոր ընթացք տալ դասախօսութիւններին, այլեւ պարապմունքի առարկայ դարձնել հիմնական Ծրագիրը, Կազմակերպական Կանոնները եւ ներքին կանոնագրութիւնը։*

II *Կարդացուեցան ենթակոմիտէների եւ զինուորական մարմնի կարծիքները, թէ ինչ դիրք պէտք է բռնել դէպի հնչակեանները. բոլորը ցանկանում են համերաշխ լինել եւ բարեկամական յարաբերութիւն պահպանել նրանց հետ։ Իսկ զինուորական մարմինը աւելացնում է որ. «Եթէ հնչակեանները չարունակեն իրանց անվայել եւ հակայեղափոխական ընթացքը, մենք պարտաւոր կը լինենք արգիլել զինուորական ուժով»։*

Նախագահը իբրեւ փորձառու եւ տեղական հնչակեանների հոգեբանութեան լաւ ծանօթ գործիչ, նկատել տուեց որ Մինարէթում երկար ժամանակուայ ընթացքում, նայած հանգամանքներին, գործ դրուած է եղել հնչակեանների դէմ ամէն հնարաւոր միջոց, որպէսզի նրանք ձեռք վերցնեն դաշնակցականների գործունէութեան խոչընդոտ լինելուց։ Եղել են հանգամանքներ, երբ դաշնակցական տեղական մարմինը, հնչակեաններին իրանց անվայել արարմունքների մէջ չէզոքացնելու համար, աշխատել է բարեկամական ընթացք բռնել նրանց հանդէպ, բայց նրանք իրանց տգէտ ու գռեհիկ հասկացողութեամբ վախկոտութեան են վերագրել տեղական մարմնի վարմունքը։ Եղել են դէպքեր, երբ նրանք միայն արհամարհանքի են արժանացել մեր կողմից, բայց այդ միջոցն եւս նրանց համար ոչ մի նշանակութիւն չի ունեցել։ Եղել են նաեւ դէպքեր, երբ նրանք մեր համբերութիւնը չարաչար գործածելով, բանը կռուի են հասցրել եւ մենք պարտաւորուած ենք եղել կռուել նոցա դէմ, բայց եւ ո՛չ այդ միջոցն է կարուկ կերպով օգտակար եղել ու նրանք չարունակել են երդուեալ թշնամիների նման մեր գործունէութեան արգելք լինել, եւ ժողովուրդի խաղաղութիւնը վրդովել։ Ուստի իբրեւ վերջին միջոց մնում է միայն, որ մենք ամէն կերպ աշխատենք սուր յարաբերութիւններ չստեղծել մեր եւ նրանց միջեւ ու բարոյապէս միշտ բարձր կանգնել նրանցից, որով միայն հնարաւոր պիտի լինի ընկճել նրանց ստոր հակումները։

Ժողովականների կողմից նկատուեցաւ որ Մինարէթում հնչակեանները իրանց անվայել վարմունքների մէջ չեն կարող առաջ գնալ, եթէ քաջալերութիւն չըգտնեն հնչակեան աւելի բարձր մարմիններից. ուստի հարկաւոր է որ ժողովիս կողմից դիմում լինի IV Ընդ. հանուր Պատգ. Ժողովին, թէ հնչակեաններին պէ՞տք է ճանչնալ յեղափոխական կուսակցութիւն։ Եթէ ո՛չ, մեզ լիազօրութիւն տան վարուել մեր տեղական հնչակեանների հետ մեր յարմար դատածին պէս. իսկ եթէ այո՛, Ընդհանուր Ժողովը յատկապէս նկատի ունենայ մեր տեղեկագիրը տեղական հնչակեանների մասին եւ, բանակցութեան մէջ մտնելով Հնչ. Կեդրոնի հետ, երկու կուսակցութիւնների համար մշակէ մի ծրագիր, որով մենք եւս կարողանանք ընթանալ։ Կայացան որոշումներ հետեւեալ կերպով.

1) *Միաձայն ընդունուեցաւ որ Մինարէթի հնչակեաններին չպէտք է յեղափոխական ճանաչել, որովհետեւ իրանց ծրագրի համաձայն չեն գործում։ Իւրաքանչիւր ենթակոմիտէն մինչեւ Ժողովի վերջ պէտք է գրաւոր կերպով ներկայացնէ այն փաստերը, որոնք ցոյց են տալիս հնչակեանների միայն յեղափոխութեան անունը շահագործողներ լինելը։ Երբ յիշեալներ [ձեռք կը քաշեն] իրանց ներկայ ընթացքից, ի հարկէ այն ատեն էլ մենք կը ճանաչենք նրանց ինչպէս յեղափոխականներ։*

2) *Միաձայն ընդունուեցաւ, մինչեւ IV Ընդհ. Պատգ. Ժողովի պատասխանը, համերաշխ լինել տեղական հնչակեանների հետ եւ խոյս տալ վատ յարաբերութիւնից։*

3) *Թէ Հնչակեանութիւնը ընդհանրապէս պէ՞տք է յեղափոխական կուսակցութիւն ճանաչել թէ ո՛չ,— այս մասին Ժողովը սպասում է IV Ընդհ. Պատգ. Ժողովի կարգադրութեան, որ նա պիտի անի ի հարկէ հիմնուելով նաեւ ուրիշ շրջանների տեղեկութիւնների վրայ՝ հնչակեանների մասին։ Այս կէտը ընդունուեցաւ 10 ձայնով. 3 ձայն որոշեց ինչպէս էլ լինի հնչակեաններին չճանաչել յեղափոխական մարմին, մէկ ձայն՝ ճանաչում է։*

4) *Նախագահը յայտնեց որ տեղական հնչակեանների ղեկավարներից մէկը, առաջարկել է իրան դաշնակցական մարմնի եւ իրանց միջեւ մի նոր պայմանագրութիւն կազմել յարաբերութիւնները ուղղելու համար։ Ժողովը 3 ձայնի ձեռնպահութեամբ որոշեց դրական կերպով պատասխանել այդ առաջարկին։*

III *Միաձայն որոշուեցաւ յաջորդ նիստին հրաւիրել նաեւ երկու դաշնակցական անհատներ՝ Գարեգին եւ Գուրգէն-Կարօ, մասնակցելու համար խորհրդակցութիւններին՝ ձայնի իրաւունքով։*

Նիստ Դ.

Հոկտեմբեր 18 *Բացակայ է Գուրգէն։*

Օրակարգ

I *Մեր յարաբերութիւնը պարսիկ կառավարութեան եւ Ժողովրդի հետ.*

II *Մեր յարաբերութիւն քրդերի եւ ասորիների հետ.*

III *Ներքին կանոնագրութիւնը.*

IV *Տեղական շտեմարան.*

V *Կարծիքներ IV Ընդհ. Ժողովի պարապմանց մասին։*

Որոշումներ

I *Կարդացուեցան ենթակոմիտէների կարծիքները. բոլորը ցանկանում են բարեկամական յարաբերութիւն պահպանել պարսիկ կառավարութեան եւ Ժողովրդի հետ։ Մի կարգ բացատրութիւններից վերջ, Ժողովը դարձեալ նոյն եզրակացութեան եկաւ, միայն ընդունուեցաւ որ կառավարութեան պաշտօնեաների հետ պէտք է վարուել պոլիտիկայով (դիւանագիտօրէն)։*

II *Ենթակոմիտէները ընդունում են որ օգտակար է միանգամայն յարաբերութիւն պահպանել թէ՛ քրդերի եւ թէ ասորիների հետ։ Միաձայն որոշուեցաւ պրոպագանդ առաջ տանել քրդերի մէջ եւ բարեկամական կապ հաստատել նրանց հետ, որպէսզի նրանք սխալ հասկացողութիւն չունենան Հայ Յեղափոխութեան մասին, եւ հետզհետէ գիտակցեն որ հայերին միանալով կարող են այժմեանից լաւագոյն ապագայի ձգտել։ Որովհետեւ քրդերի համար տպագրուած խօսքը մեծ նշանակութիւն ունի, որոշուեցաւ առաջարկել Ընդհ. Ժողովին, որ կարգադրի երբեմն քրդերէն լեզուով թռուցիկներ բաց թողնել նրանց մէջ։*

Որոշուեցաւ նաեւ յարաբերութիւն ունենալ ասորիների հետ, նրանց մէջ եւս սկսել պրոպագանդ, ինքնագիտակցութիւն տարածելու համար, մանաւանդ որ իբրեւ խաղաղ եւ յառաջդիմելու ընդունակ ժողովուրդ՝ որոշ տրամադրութիւն ցոյց են տալիս հայերի հետ կապեր ունենալու համար։ Առաջարկուեցաւ յարաբերութիւն պահպանել Ուրմիում հրատարակուող ասորերէն «Աստղ» թերթի հետ, առ այս որոշուեցաւ Ուրմիի դաշնակցական մարմնից տեղեկութիւններ ուղել այդ թերթի վարիչների մասին, թէ արդեօք նրանք յարմարութիւններ կարո՞ղ են ունենալ այստեղից թղթակցութիւններ տպագրելու։ Որոշուեցաւ նոյնպէս դիմել Կ. Կոմիտէին, որ մասնաւոր ուշադրութիւն դարձնի ասորիների հետ յարաբերութիւն պահպանելու համար, եւ մասնաւորապէս Մավանայի շրջանում։

III *Նկատողութեան առնուեցաւ ներքին կանոնագրութեան §. 25ը եւ որոշուեցաւ, քանի որ յարմարութիւններ կան մեր շրջանում, պէտք է ենթակոմիտէների կազմը ընտրուի ուղղակի եւ ո՛չ երկաստիճան քուէարկութեամբ, իսկ կոմիտէի կազմը պէտք է ընտրուի ենթակոմիտէների ամբողջ կազմի քուէարկութեամբ։ Որոշուեցաւ առաջարկել Կ. Կոմիտէին որ այսուհետեւ, եթէ միայն յարմարութիւն կայ, Կ. Կոմիտէն եւս ընտրուի կոմիտէների ամբողջ կազմի կողմից։*

IV *Նախագահը առաջարկեց իւրաքանչիւր ենթակոմիտէի շրջանում կազմել ցորենի շտեմարան, հաւարակութեան ունեւոր անհատներից որոշ տոկոս (1%) ցորեն հաւաքելով։ Այս շտեմարանների նպատակը պիտի լինի 1) մատչելի պայմաններով անկարողներին — աղքատներին ցորեն տալ ցանելու կամ ապրուստի համար եւ 2) որոշ օգնութիւն հասցնել Մինարէթի շրջանում բնակուող սպանուած հայդուկների ընտանիքներին, որպէսզի սրանք չքաւորութիւնից ստիպուած անկման չդիմեն։ Միաձայն ընդունուեցաւ այս առաջարկութիւնը։*

V *Տեղական հարցերը վերջացած լինելով Ժողովը խորհրդակցութեան առարկայ դարձրեց Ընդհ. Ժողովի պարապմանց ցուցակի միայն մի քանի կէտերը, իւր կարողութիւնից վեր համարելով կանգ առնել ամէն մի հարցի վրայ։*

1) *Տաճկահայ խնդրին մէջ աւելի նպատակայարմար ընդունուեց ուժերի ապակեդրոնացման սիստեմը։ Երկրի մէջ չպէտք է ռազմական ուժերը կեդրոնացնել մի վայրում. այդ պարագային մեր շարժումները շուտով պիտի նկատի տաճիկ կառավարութիւնը եւ չպիտի թոյլ տայ որոշուած վայրում բաւականաչափ ուժ կեդրոնացնել ապստամբութեան համար. եւ յետոյ, կառավարութիւնը միանգամ պատրաստութեան վայրը պաշարման վիճակի մէջ դնելուց յետոյ, շատ դժուար կը լինի մեր կռուող ուժերի կացութիւնը, որոնց պիտի ջախջախի առաջին հարուածով։ Մինչդեռ եթէ ուժերը ապակեդրոնացած լինեն, նախ կառավարութեան ուշադրութիւնը քիչ չափով եւ կամ երբեք պիտի չհրաւիրուի, ու ապստամբութեան պարագային եւս կարելի կը լինի միաժամանակ տարբեր կէտերի վրայ, պարտիզանական կռուի ձեւով կռիւներ սկսել, կառավա-*

բութեան ուժերը ջլատել եւ համեմատաբար աւելի երկար պայքար մղել։

2) *Ժողովը միանգամայն համաձայն է Դաշնակցութեան Կովկասեան գործունէութեան, որ Ռուսաստանի ներկայ պայմանների մէջ պէտք է Դաշնակցութիւնը ղեկավարող հանդիսանայ Կովկասահայ դատին։ Տաճկահայ եւ Կովկասահայ դատերը այժմ ամենասերտ կապով կապուած են միմեանց հետ, ու միայն միմեանցով կարող են ուժեղանալ ու յաղթանակել։ Ուրեմն Դաշնակցութիւնը պէտք է պայքար մղէ երկու ճակատի վրայ՝ Տաճկահայաստանում եւ Կովկասում. առ այս հարկաւոր է, որ նա ունենայ Տաճկահայ եւ Կովկասահայ դատերը ղեկավարող առանձին մարմիններ, սերտ կապով կապուած միմեանց հետ։*

3) *Ինքնապաշտպանութեան գործին պէտք է աւելի մղում տալ, ինչպէս Տաճկահայաստանում նոյնպէս եւ Կովկասում։*

4) *ա) Եւրոպայում հայկական պրոպագանդին հարկաւոր է աւելի մղում տալ. եթէ կարելի է Գերմանիայում եւս հրատարակուի մի նոր «Պրո–Արմենիա»։ բ) «Դրօշակ»ը պէտք է մնայ Ժընեւում կամ առառաւելն փոխադրուի Պարիզ։*

Նախագահ՝ *ՍԱՄՍՈՆ*

Ճառագայթի պատգամաւոր՝		*ԽԱՆ*
Մառաստանի	»	*ՅՈԼԱԿ*
Քարի	»	*ԱԳՈՒԼԻՍ*
Զօլայի	»	*ՀԱՅԿ*
Մինարէթի	»	*ՄՈՒՇԵՂ*
Ժայռի	»	*ԱՌԻՒԹ*
Կոմիտէի ներկայացուցիչներ՝		*ԳՈՒՐԳԷՆ*
		ԱՇՈՏ

ԳՈՒՐԳԷՆ–ԿԱՐՕ
ԳԱՐԵԳԻՆ
ՄԿՐՏԻՉ (*Զինուոր. խմբ.*)
ԼՕՐԻԿ (?)
ԹՌՉՆԱԿ (*Զինուոր. ներկայաց.*)
ՋԱՒԷՆ
Քարտուղար՝ ՔՐԻՍՏ.

5.— ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻՆԱՐԷԹԻ (ՍԱԼՄԱՍՏ) ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԻՆ

Սեպտեմբեր 1906

Նամակի մոտաւոր չափ 2 երկրորդ թուղթ։ Գրութիւնը՝ 5 էջ, մանրանկարչի մեղանով։

Մենք, Մինարէթի Հ. Յ. Դաշնակցութեան զինուորները, ներկայ ամսու 21ին հինգշաբթի օրը, մեր ընդհ. խմբապետի հրաւիրանաց համաձայն, Քարում հաւաքուելով Ժողով գումարեցինք եւ ներկայ ամսու 16ին 247 նոմեր պաշտօնական գրութեամբ ուղարկուած Հ. Յ. Դաշնակցութեան Արեւելեան Բիւրոյի եւ կենտր. Կոմիտէի չրջաբերական գրութիւնները կարդալով՝ նախ ներկայացնում ենք մեր ամփոփ կարծիքներն ու առաջարկները Հ. Յ. Դաշնակցութեան IV Ընդհ. Ժողովի պարապմունքների առթիւ, եւ երկրորդ՝ ուղարկում ենք, մեր ընդհ. խմբապետ պարոն Մկրտչի հետ, մեր կողմից նշանակուած ներկայացուցիչ՝ պարոն Թռչնակին (ընկեր), ներկայ լինելու Մինարէթում տեղի ունենալիք Ժողովին, բերելով իրա հետ մեր հետագայ կարծիքները.

Ա. Կարծիք՝ ընդհանրութեան մասին

1) *Որչափ կարելի է, աշխատել համերաշխ միութիւն ձեռք բերել այլազգի յեղափոխական կազմակերպութիւնների հետ. իսկ հակառակ դէպքում՝ անհրաժեշտ պիտի համարել միանալ հայ ազգային զանազան կուսակցութիւնների հետ։*

2) *Բիւրոներում եւ կենտր. Կոմիտէներում, Ժողովականների [մէկ] երկրորդ մասը Երկրում երկար պաշտօնավարած, կամ աւելի փորձառու ու գործի տեսակէտից ընդունակ անձնաւորութիւններից կազմուելու է։*

3) *Ժողովրդից միմիայն մարտական խմբեր կազմել եւ թողուլ իրանց տեղերում՝ մինչեւ պահանջուած րոպէն. նրանց համար ուղարկել հմուտ եւ փորձառու խմբապետներ եւ տասնապետներ՝ վարժութեանց համար։ Օժանդակ խմբակները լուծել, բայց չրջիկ պրոպականտիստներ անպակաս անել Ժողովրդից. իսկ նիւթականի մասին, սահմանել ազգային մի տուրք՝ անխտիր բոլոր հայ անհատների համար։*

4) *Որքան կարելի է, պարտադիր անել իւրաքանչիւր հայ անհատի՝ իրա սեփական միջոցներով զինուելու։*

5) *Կազմակերպական ելեւմտից — լինի նիւթական կամ ռազմական — հաշիւները չհրատարակել, այլ սրանք մնան Բիւրոներում եւ կենտր. Կոմիտէներում։*

6) *Արժէ մի միջազգային Բիւրո ունենալ։*

7) *Քաղաքական բանտարկեալների մասին մտածել եւ նրանց օգնելու միջոցներ ձեռք առնել։*

8) *IV Ընդհ. Ժողովի որոշումները չհարատարակել, այլ նրանք վերապահուած մնան պատգամաւորների չրջանում կամ ուր որ անկ է։*

9) *Կազմակերպական ընդհանուր պաշտօնեաները մի քանի տարի Երկրում պաշտօնավարած եւ փորձառու լինելու են։*

10) *Յեղափոխական հրատարակութիւններ (լրագիր, բրոշիւր՝ հայ եւ օտար լեզուներով) Ժողովրդի մէջ աւելի շատ տարածուելուն ոչ մի միջոց չինայել։*

Կարծիք՝ Տաճկաստանի մասին

1) *Ամէն կերպ աշխատել Երկրում եւ ապստամբավայրերում ռազմական ուժ գոյացնել։*

2) *Երկրից կառավարութեան աչքին ընկած կազմակերպական ներկայացուցիչները, խմբապետները եւ պրոպագանտիստները հեռացնել մինչեւ ընդհ. ապըստամբութեան ժամանակ, եւ նրանց տեղ անմիջապէս ուղարկել փորձառու, վստահելի եւ Ժողովրդական անձնաւորութիւններ։*

3) *Կազմակերպական որեւէ ձեռնարկ կամ Երկիր ուղարկուելիք մարմինների անունները չհրատարակել ոչ մի լրագրում կամ բրոշիւրում։*

4) *Երկրում ապստամբութիւն յարուցանել այն ժամանակ՝ երբ բարեկամ կառավարութիւններ նպաստում են եւ կամ յարմար առիթը ինքը ստեղծում է ապստամբութիւնը։*

5) *Սասնոյ Ժողովրդին բարոյական եւ նիւթական մխիթարութիւնների մասին մտածել եւ նրանց պահանջներին բաւականութիւն տալով՝ դուրս բերել յուսահատ դրութիւնից։*

Գ. Կարծիք՝ Ռուսաստանի մասին

1) *Որչափ հնարաւոր է, դադրեցնել կովկասեան հայ–թրքական անընդատակ կռիւները, հակառակ դէպքում՝ ամէն կերպ աջակցութիւն ցոյց տալ կռուողներին։*

2) *Որովհետեւ Հայկական Դատը ընդհ. հայութեան կը պատկանի, հետեւաբար՝ կովկասահայը օգնելու է տաճկահային նիւթապէս եւ բարոյապէս, եւ փոխադարձաբար՝ տաճկահայը նրան։*

Դ. Կարծիք՝ Պարսկաստանի մասին

1) *Նկատի ունենալով, որ Պարսկաստան մի կարեւոր գիծ է Երկրի սահմաններում, հետեւաբար աշխատելու է ամէն կերպով պահպանել մեր բարեկամական յարաբերութիւնները՝ թէ՛ պարսիկ Ժողովրդի եւ թէ կառավարութեան հետ։*

2) *Ներկայ կովկասեան հայ–թրքական ընդհարումները նկատի ունենալով, կարելի եղածին չափ աշխատել հաշտ եւ համերաշխ տալրել հարեւան քիւրդ եւ ասորի ցեղերի հետ։*

3) *Նկատելով, որ կազմակերպական տեսակէտով Ժողովրդական դատեր վճռելը, կառավարական չրջաններում բարդութիւններ է առաջ բերում, աւելի նպատակայարմար է իւրաքանչիւր գիւղում ընտրել հոգաբարձուներ եւ գործը նրանց յանձնել, իսկ կազմակերպութեան կողմից չդադրեցնել պրոպագանդը, հրաւիրելու Ժողովրդին՝ հնազանդելու հոգաբարձական որոշումներին։*

4) *Զինուորական մարմինը պարտաւոր է խառնուել խմբակների խնդիրներին մինչ այն ժամանակ, երբ վերջինները կը հասնեն մի որոշ աստիճանի ինքնագիտակցութեան։*

5) *Մինարէթի չրջանում, ներկայ տարուայ բիւջէն [ճշդել] եւ զինուորների կարիքների մասին մտածելը ձգում ենք տեղական զիտակից մարմինների խրճին, քանի որ մի կարգ զինուորները սոսկ Մինարէթի ինքնապաշտպանութեան համար են պահւում։*

6) *Հնչակեանների հանդէպ, Մինարէթի չրջանում, մեր յարաբերութիւնների մասին յայտնում ենք, քանի որ մեր կողմից չատ անգամ զգուշացրած եւ յայտարարուած է նրանց՝ թողուլ իրենց անվայել եւ հակայեղափոխական ընթացքը, իսկ նրանք անուշադիր են գտնուել, հետեւաբար եթէ կրկնեն (պատահեն) նոյն տեսակ դէպքեր՝ մենք պարտաւորուած կը լինենք արգելել զինուորական ուժով։*

7) *Խնդրում ենք Կազմակերպութիւնից մեզ յայտնել պաշտօնապէս, թէ Հնչակեան կուսակցութիւնը ճանաչե՞լ ազգային մի կազմակերպուած կուսակցութիւն, թէ ոչ։*

8) *Նկատի ունենալով Մինարէթի չրջանի նահատակ զինուորների ընտանիքների թշուառ դրութիւնը՝ խնդրում ենք ըստ կարելւոյն հոգ տանել։*

Ի դիմաց Հ. Յ. Դաշնակցութեան Մինարէթի 22 զինուորների՝

ՄԿՐՏԻՉ

1906 թ., 21 Սեպտ., Քար

Ծանօթութիւն.— *Իսկ ինչ վերաբերում է հնչակեանների վարմունքին՝ դէպի տեղային ընկերների եւ Ժողովուրդին, այդ կը ձգենք նրանց հայեցողութեան ու թաւիպին։*

ՆՈՅՆԲ

6.— ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ 1906 ԹՈՒԻ ԹԱՒՐԻԶՈՒՄ ԿԱՅԱՅԱՆ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐ–ԸՆԿԵՐՈՒՀԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Նամակի մեծ (երկար) չափի 5 երկրորդ թուղթէ կազմուած տետրակ։ Գրութիւնը, սեւ մեղանով, կը գրաւէ 11 էջ։ Դիւանի անդամներու ստորագրութիւնէն հոտ, կը գտնուի կարմիր բացատրութիւն մը Թաւրիզի կոմիտէին կողմէ, ապա յաւելում մը վրէժուռնի կողմէ (Ստ. Ստեփանեան)։

1906*ի Հոկտեմբեր 19ին տեղի ունեցաւ Ղալայում, Գ. Xի տանը, Թաւրիզի դաշնակցական ընկեր–ընկերուհիների ընդհանուր Ժողովի Ա. նիստը։ Ժողովը բացեց ընկեր Ստեփանը. մի քանի խօսքով ընդգծեց նապայս եւ յետագայ նստաշրջաններում քննուելիք ծանրա-*

կչիռ հարցերի նշանակութիւնը, եւ հրաւիրեց ժողովականներին՝ լուրջ վերաբերմունքով քննել մեր կովկասեան ընկերների յառաջադրած հարցերը, նրանց իւրաքանչիւրի մասին մեր կարծիքները արտայայտելով: Ապա յոտնկայս պատուելով դաշնակցական հերոս-նահատակների յիշատակը, առաջարկուեց ընտրել ատենապետ՝ ժողովը կառավարելու համար: Միաձայն ընտրուեցին ատենապետ՝ Նիկոլ Սարգսեան, քարտուղարներ՝ Լիւդվիգ Տարեան եւ Սիմէոն Մկրտչեան:

Անցնելով իւր պաշտօնին, ընդհ. ժողովի ատենապետը նախ առաջարկեց ներկայ եղողներին արտայայտել իրենց կարծիքները այն կէտի վերաբերմամբ, թէ Կովկասում անհրաժե՞շտ է Կովկասահայ գործունէութիւն, *թէ* ոչ: *Այս ուղղութեամբ տեղի ունեցան ներկայ դաշնակցական ընկերների մէջ մի շարք խօսակցութիւններ, որոնք պատուում էին հետեւեալ նկատումի շուրջը.— աչքի առաջ ունենալով ներկայ Ռուսաստանի յեղափոխական շարժումը եւ այն քաղաքական-տնտեսական կռիւը, որ բոլոր քաղաքական կուսակցութիւնները եւ դիմադրական տարրերը մղում են ռուս բիւրոկրատիայի դէմ, ռուսահայ դաշնակցականները անխուսափելիօրէն պիտի մասնակցեն այդ շարժման, այլապէս նոքա դաւաճանած պիտի լինէին իրենց սոցիալիստական սկզբունքներին: — Քուէարկուեց հարցը եւ միաձայն ընդունուեց Կովկասահայ գործունէութեան անհրաժեշտութիւնը: Այնուհետեւ առաջարկուեց ատենապետի կողմից՝ անցնել երկրորդ կէտին, այն է՝ թէ* Ռուսահայ մարմինները ի՞նչ վերաբերում պիտի ունենան դէպի Տաճկահայ դատը: *Այս մասին եղան թեր եւ դէմ կարծիքներ եւ մի շարք մեկնաբանութիւններ. վերջը ատենապետը փակեց վիճաբանութիւնը եւ առաջարկեց ներկայացնել գրաւոր կերպով այս խնդրի առթիւ բանաձեւեր: Բոլոր բանաձեւը հրապարակաւ կարդալուց յետոյ, ատենապետը նրանցից ընտրեց երկուսը, որպէս արտայայտիչ վիճաբանութիւնների ընթացքում շեշտուող երկու տարբեր եւ հակառակ կարծիքների: Նախ կարդաց Ս. Մ.ի բանաձեւը, որը հետեւեալն է.*

«Ռուսաստանի դաշնակցականները, իբրեւ սոցիալիստներ, ներկայ մոմենտում իրենց ամբողջ գործունէութեամբ պիտի նուիրուեն համառուսական հեղափոխութիւնին, որովհետեւ այդ է պահանջում նրանց կոչումը. եւ առժամանակ մի կողմ պիտի թողնեն Տաճկահայ դատը, երբեմ չշեղուելով սակայն Դաշնակցութեան հիմնական սկզբունքից»:

Ժողովը միաձայն արտայայտեց իւր հակակրութիւնը եւ մերժեց ընդունել այդ բանաձեւը: Ապա կարդացուեց ընկեր Վահանի հետեւեալ բանաձեւը.

«Ի նկատի ունենալով, որ ա) Հ. Յ. Դաշնակցութիւնը զուտ հայկական մի կուսակցութիւն է, բ) որ Կովկասահայ եւ Տաճկահայ խնդիրները հաւասարապէս մօտ են իր սրտին, հետեւապէս եւ բաժանման հարց երբեմ երեւան գալ չէ կարող, գ) որ այդ երկու դատերն էլ իր վրայ առնելով՝ Դաշնակցութիւնը ծրագրային էական հակասութեանց մէջ չէ ընկնում, ուրեմն եւ շատ պարզ է, որ տանկահայ եւ ռուսահայ մարմինների միմեանց նկատմամբ ունենալիք վերաբերմունքը լինելու է օժանդակող եւ փոխադարձ շահերով կապուած»:

Միաձայն ընդունուեց այս բանաձեւը՝ ընդդէմ մէկի: Ապա, օրակարգից դուրս, կարդացուեց մի նամակ ուղղուած կովկասեան մեր ընկերների հասցէին այն բազմաթիւ ստոր ինտրիգների եւ մատնութիւնների, ու հազար ու մի պառաւական բամբասանքների մասին, որոնց ենթակայ են նոքա՝ իրենց յեղափոխական ազնիւ պայքարի ամէն մի քայլափոխում: Ժողովականները իրենց ստորագրութեամբ պահանջեցին ուղարկել այդ նամակը կովկասեան մեր ընկերներին:

Ժողովի շարունակութիւնը Հոկտեմբեր 21ին մնաց:

Նիստ II

Հոկտեմբեր 21.— Ժողովը բաց արեց նախկին ժողովի ատենապետ Նիկոլ Սարգսեանը, եւ դնելով իւր հրաժարականը՝ առաջարկեց ժողովականներին ընտրել նոր նախագահ: Միաձայն ընտրուեց Դոկտոր Ստեփանեան:

Նախքան օրակարգի հարցերին անցնելը, նորընտիր ատենապետի առաջարկութեամբ կարդացուեց նախկին նիստի արձանագրութիւնը:

Ապա ատենապետը դրեց օրակարգի առաջին կէտը. — Տաճկահայ եւ արտասահմանեան մարմինների վերաբերմունքը՝ դէպի Կովկասահայ խնդիրը:

Հարցի առաջին մասը նախկին ժողովում ընկեր Վահանի առաջարկած եւ ժողովից ընդունուած յիշեալ բանաձեւի մէջ պարդուած համարելով, որոշուեց քննութեան առնել հարցի միայն երկրորդ մասը, այսինքն՝ արտասահմանեան մարմինների վերաբերմունքը դէպի Կովկասահայ խնդիրը: Ընկերներից մի երկուսը այս կէտը լուծելու համար առաջարկեցին, որ արտասահմանեան կամ գաղութային մարմինները ճանաչեն Կազմակերպութեան մի ընդհանուր կասսա, ուր եւ ուղարկեն իրենց նիւթական նպաստները. իսկ Կազմակերպութեան գործադիր մարմինը կ'որոշէ այդ կերպ հաւաքուած գումարների՝ այլ կարգի գումարների հետ միասին գտնելիք գործադրութիւնը: Կենտրոնացման այդ սիստեմին հակառակ էր ժողովականներից մէկը այն պատճառաբանութեամբ, թէ Գործադիր մարմինը յենուելով իր իրաւասութեան վրայ՝ կարող է երբեմն միակողմանի կամ անարդար կերպով կատարել գումարների բաշխումը, որով շատ մարմիններ ի սպառ կը զրկուեն իրենց տեղական կարիքներին բաւարարութիւն տալու հնարաւորութիւնից. աւելի լաւ կը լինէր, որ ամէն մի գաղութ ինքը որոշէր իր միջից զանձած գումարների գործադրութիւնը: Այս կարծիքին առարկողներ եղան, թէ կասսան միշտ որոշ տոկոս յատկացրել է եւ յատկացնում է տեղական յեղափոխական բնոյթ ունեցող կարիքներին. իսկ որ ապագայում էլ Գործադիր մարմինը ծախսերի բաշխումը կը կարգադրէ ըստ տեղի եւ հանգամանքների պահանջման,— այդ էլ ոչ մի կասկածի չի կարող ենթարկուել: Այս խնդրի առթիւ եղան բանաձեւեր. կազմեցին ու կարդացին Արմենակ Մկրտչեան, Կորիւն, Սիմէոն, Նիկոլ եւ Ստեփան: Մերժուեց Սիմէոնինը, եւ ընդունուեց միաձայն (ընդդէմ մէկի) Արմենակինը, որը հետեւեալն է.—

«Ի նկատի ունենալով, որ մենք անցեալ ժողովում ընդունեցինք մի կազմակերպութիւն (Դաշնակցութիւն), որը կը վարէ Կովկասահայ եւ Տաճկահայ դատերը միաժամանակ՝ ուժերի բաժանումը կատարելով ըստ ժամանակի եւ պայմանների պահանջման, ուստի ամէն մի գաղութային մարմին իր բոլոր նիւթական, փիզիկական եւ բարոյական ուժերը պէտք է տրամադրելի դարձնէ կենտրոն. կազմակերպութեան, որը կը գործադրէ դրանք ըստ գործի պահանջման եւ ըստ տեղական պայմանների յարմարութեան»:

Ժողովը անցաւ օրակարգի երկրորդ կէտին.— Տաճկահայ եւ արտասահմանեան մարմինների վերաբերումը դէպի ընդհանուր Ռուսական յեղափոխութիւնը: *Մի շարք թեթեւ բացատրութիւններից յետոյ, ընկեր Վահանի առաջարկութեամբ փակուած եւ վճռուած համարուեց ժողովի մեծամասնութեան կողմից այս խնդիրը, որովհետեւ արդէն ընդունուեց Հ. Յ. Դաշնակցութեան կողմից Կովկասահայ գործունէութիւն, իսկ այս կապ ունի անմիջապէս ընդհանուր Ռուսական յեղափոխական շարժման հետ:*

Այնուհետեւ ատենապետը անցաւ Տաճկահայ խնդրին, առաջարկելով քննել տակտիկի հարցը՝ նոր պահանջների եւ պայմանների համաձայն: Տակտիկի խնդիրը ստորաբաժանուում է մի քանի առանձին կէտերի, որոնցից 1) ցուցական առանձին ձեռնարկներ, *որի մասին վճռուեց ներկայ աննպաստ պայմաններում վերջ տալ.* 2) ինքնապաշտպանութիւն, *որը ընդունուեց ըստ կրզրունքով ժողովի կողմից, սակայն առանց յեղափոխական շարժման բնոյթ տալու.* 3) զինումը *ընդունուում է թէ՛ ներսի միջոցներով եւ թէ դրսից, միայն վերջինս ոչ մինչեւ այժմ կատարուած ձեւով, այլ նոր եւ ապահով ճանապարհներով կատարելու պայմանով.* 4) թռուցիկ խմբերը *առաջուայ ձեւով, խաղաղ ժամանակ աննպատակայարմար են, ուստի պէտք է վերջացրնել. օգնութիւնը պէտք է ունենայ աւելի շուտ «հաւարի» ձեւ.* 5) պրոպագանդան *պէտք է առաջ տարուի գլխաւորաբար երկրի տեղական ուժերով. իսկ եթէ դրսի ուժերի պէտք զգացուի, — եւ այդ մասին երկրից պահանջ դրուի, — անպայման դրսից էլ մտցնել պրոպագանդիստ-ինտելիգենտ ուժեր: Ըստ հարկին կարելի է մտցնել կազմակերպող-զինուորական ուժեր:* 6) ցուցական ձեռնարկներ *թուրք եւ այլ տարրերի հետ, այս էլ էն ընդունուում է, եւ մինչեւ իսկ ցանկալի համարուում, որ, եթէ միւս տարրերի մէջ հող կայ, մեր մարմինները առաջին ձեռնարկողները լինին:* 7) Մարտական խմբերի *երկիր անցկացնելը ընդունուեց միայն այն դէպքում, երբ երկրում համատարած կերպով կը բռնկուի յեղափոխութիւնը:*

Օրակարգի խնդիրները վերջացած համարելով, ատենապետը հրաժարուեց իւր պաշտօնից, սակայն նորից վերընտրուեց:

Նիստ III

Հոկտեմբեր 24ին տեղի ունեցաւ Ս. Ա. Մ.ի տանը երրորդ նստաշրջանը, ատենապետութեամբ Ն. Սարգսեանի:

Նախքան բուն օրակարգին անցնելը, ատենապետը առաջարկեց ժողովականներին զբաղուել այն հարցով, թէ ի՛նչպէս պիտի վճռել ուժերի կենտրոնացման խնդիրը, որը, թէեւ անցեալ ժողովում ծեծուել էր, բայց վերջնական բանաձեւը չէր արձանագրուել: Ընկեր Վահանի տեսակէտը յարմարագոյնը նկատուեց միւսների կողմից. եւ ժողովը միաձայն իւր ցանկութիւնը յայտնեց, որ պիտի աշխատել Երկրում թէ՛ նիւթական եւ թէ ռազմական ուժերը կենտրոնացնել միաժամանակ մի քանի տեղերում եւ ոչ թէ մի վայրում, ինչպէս մինչեւ հիմա գործադրում էր:

Այնուհետեւ ատենապետը անցաւ օրակարգին, եւ հարց դրեց, թէ Դաշնակցութիւնը ի՞նչ դիրք պիտի բռնի դէպի համայն Ռուսաստանի յեղափոխութիւնը: *Առանց երկար վիճաբանութեան, մանաւանդ որ այդ մասին նախկին նիստերից մէկում մանրամասն պարզաբանուել էր, որոշուեց որ պէտք է միանալ այդ յեղափոխական շարժման: Իսկ երբ հարց առաջ եկաւ թէ Ռուսաստանի դաշնակցականները իրենց աջակցութիւնը պիտի ցոյց տան միմիայն համայն Ռուսաստանի ընդհանուր եւ մեծ քաղաքական յեղափոխութեան բռնկմա՞ն ժամանակ, թէ, իբրեւ սոցիալիստներ, ամէն դէպքում, թէկուզ մասնակի բնաւորութիւն կրող քաղաքական ակտերի ժամանակ,— ընկերներից մի քանիսը պնդում էին թէ առհասարակ պիտի խուսափել մասնակի բնաւորութիւն կրող ցոյցերին մասնակցելուց. բայց երկար, թեր եւ դէմ նկատումներից յետոյ, երկրորդ եզրակացութիւնը իրեն կողմնակից գտաւ ձայների մեծամասնութիւնը:*

Ապա ժողովը անցաւ օրակարգի երկրորդ կէտին, թէ Դաշնակցութիւնը ներկայումս Ռուսաստանում գործող կուսակցութիւններից որի՞ հետ անմիջական կապեր պիտի հաստատէ: *Ատենապետը համառօտ կերպով ուրուագծեց Ռուսաստանում պայքարող երկու մեծ կուսակցութիւնների, այն է՝ սոցիալ-դեմոկրատների եւ սոցիալիստ-յեղափոխականների ըմբռնումների*

եւ տակտիկայի մէջ եղած տարբերութիւնը. եւ յանգելով այն կէտին, թէ որովհետեւ Դաշնակցութեան Ծրագիրը եւ նրա իղձերը իրենց հիմնաւորումը գտել են պատմական որոշ հասկացողութեան հիմքի վրայ, նա պարզեց, որ հենց այդ տեսակէտից, մենք մեր բոլոր անմիջական կապերը պիտի հաստատենք այդ կուսակցութիւններից երկրորդի հետ: Ժողովը որոշեց, որ Դաշնակցական կուսակցութիւնը անմիջական կապեր պիտի հաստատէ եւ համերաշխ գործունէութիւն պիտի ունենայ առհասարակ այն բոլոր կուսակցութիւնների հետ, որոնց Ծրագիրները մօտ են կուսակցութեանս Ծրագրին, ինչպէս օրինակ Ռուսաստանի սոցիալիստ-յեղափոխականների, Վրաստանի Սաքորթանիտների(?) եւ լեհական P. P. S.-ի հետ, եւայլն:

Երբ դրուեց օրակարգի երրորդ կէտը, թէ Դաշնակցականները ի՞նչ դիրք պիտի բռնեն թէ՛ Ռուսաստանում եւ թէ ուրիշ տեղերում գործող հայկական կուսակցութիւնների վերաբերմամբ, ընդունելով հանդերձ՝ որ Դաշնակցութիւնը իր որոշումների համաձայն եւ իր յեղափոխական ապագայ գործունէութեան գծով համերաշխ պիտի լինի բոլոր՝ թէ՛ օտար եւ թէ հայկական կուսակցութիւնների հետ, մի մասը, որը մեծամասնութիւն էր կազմում, մասնաւորելով իւր խօսքը Հնչակեան կուսակցութեան վրայ, միանգամայն անտեղի էր համարում համերաշխ գործունէութիւն ունենալ այդ կազմակերպութեան հետ, ի նկատի ունենալով նախ՝ Դաշնակցութեան արած նախկին ապարդիւն փորձերը, եւ երկրորդ՝ որ այդ կազմակերպութիւնը ներկայումս բոլորովին զուրկ է «յեղափոխական կուսակցութիւն» կոչումից: Այս մասին եղաւ աղմկալի վիճաբանութիւն: Առաջարկուեցին բանաձեւեր: Ձայների մեծամասնութեամբ, ընդդէմ 31ի, որոշուեց առհասարակ խուսափիլ Հնչակեան կուսակցութեան հետ համերաշխութեան փորձը անելուց:

Ժողովը փակեց ատենապետը, շարունակութիւնը թողնելով շաբաթ օրուան:

Նիստ IV

Շաբաթ, Հոկտեմբեր 28.— Ժողովը բացուեց Պ. Նիկոլ Սարգսեանի ատենապետութեամբ: Նախկին նիստի արձանագրութիւնը կարդացուելուց յետոյ, Ժողովականներից մէկը յայտնեց այն միտքը, որ անցեալ Ժողովում հնչակեանների մասին արտայայտուած բոլոր թեր եւ դէմ կարծիքներից յետոյ, իրեն եւ մի քանիսի համար պարզ չէ այնուամենայնիւ, թէ ի՞նչ դիրք պիտի բռնել այդ խնդրի վերաբերմամբ, եւ, գուցէ, մի քանիսի կողմից սխալ ըմբռնումների տեղիք է տուել. վերոյիշեալը առաջարկեց ատենապետին, որ նորից քննուի այդ խնդիրը: Սակայն երբ վճիռը թողնուեց Ժողովականների կամքին, մեծամասնութիւնը աւելորդ համարեց այդ մասին ժամավաճառ լինել:

Ատենապետը անցաւ օրակարգի Դ. կէտին.

Դաշնակցական մարմինների գաղութներում ունեցած դերը՝ տեղական քաղաքական-տնտեսական հարցերի նկատմամբ.— *Ժողովականներից մի քանիսը պնդում էին եւ պաշտպանում այն հայեցակէտը, որ գաղութներում դաշնակցական մարմինները առհասարակ հեռու պիտի լինեն քաղաքական շարժումներին մասնակցելուց. իսկ տնտեսական խնդիրներում այն չափով, որ չափով որ այդ մասնակցութիւնը չի մնասի ընդհանուր յեղափոխական գործին: Բերուեցին մի քանի օրինակներ հայկական գաղութային կեանքից: Բայց երբ, կարծիքների մի շարք փոխանակութիւնից յետոյ, ատենապետը դրեց այն հարցասղնդումը, թէ դաշնակցական մարմինները, իրը սոցիալիստ յեղափոխականներ, սկզբունքի տեսակէտից ի՞նչ դիրք պիտի բռնեն դէպի տեղական-տնտեսական-քաղաքական հրատապ խնդիրները, Ժողովը որոշեց ձայների մեծամասնութեամբ, որ ամէն կերպ պիտի աշխատել մասնակցութիւն ցոյց տալ այդ շարժումներին, որքան որ թոյլ են տալիս տեղական պայմանները եւ յեղափոխականի հեռատեսութիւնը:*

Ապա խնդիրը մասնաւորուեց պարսկահայերի վերաբերմամբ. մի շարք բացատրութիւններից յետոյ, Ժողովը միաձայն որոշեց, որ Պարսկաստանում, ի նկատի ունենալով շրջապատող հանգամանքները, առայժմ պիտի խուսափել սաղմնային դրութեան մէջ գտնուող ներկայ տնտեսական-քաղաքական շարժումներին մասնակցելուց:

10 *րոպէ դադարից յետոյ Ժողովը անցաւ օրակարգի այն կէտին, թէ Դաշնակցութիւնը ի՞նչ դիրք պիտի բռնէ տեղական հասարակական-կուլտուրական խնդիրների նկատմամբ: Բոլորն էլ, առանց բացառութեան, ընդունեցին, որ դաշնակցականները ամէն տեղ պիտի աշխատին ակտիւ գործունէութիւն ցոյց տալ հասարակական-կուլտուրական բոլոր ասպարէզներում: Երբ խօսք եղաւ առանձին կուսակցական-դատաստանական մարմիններ ունենալու մասին, Ժողովը, ձայների զգալի մեծամասնութեամբ, որոշեց վերջ տալ ամէն տեղ նմանօրինակ դատաստանական առանձին մարմինների գոյութեանը, եթէ երբեւիցէ կան որեւէ տեղ այդպիսի հիմնարկութիւններ: Մասնաւորելով խօսքը Պարսկաստանի մասին, պարզուեց, որ այստեղ թէպէտեւ առանձին դատաստանական մարմիններ չեն եղել, բայց Կազմակերպութիւնը զբաղուել է այդ խնդրով. Ժողովը յայտնեց իր տրամադրութիւնը, որ այսուհետեւ Կազմակերպութիւնը, ինչ կերպ ուզում է լինի, դատաստանական խնդիրներով չզբաղուի:*

Ժողովականների ցանկութեամբ Ժողովի շարունակութիւնը թողնուեց վաղուան:

Նիստ V

Հոկտեմբեր 29.— Ժողովը տեղի ունեցաւ նախկին տեղում. ատենապետը դրեց օրակարգի առաջին կէտը.

Տաճկահայ եւ Կովկասահայ խնդիրների ներքին կապը՝ ա) գործունէութեան եւ բ) կազմակերպական տեսակէտից: *Ժողովականներից նրանք, որոնք աւելի ձեռնհաս կարող էին համարուել այս խնդրում, իրենց տեսակէտները բացատրեցին: Բայց որովհետեւ այս խնդիրը անմիջական կապ ունի եւ բխում է այն բանից, թէ Դաշնակցութիւնը Ժողովրդի ո՞ր խաւերի վրայ է յենւում, ուստի Ժողովը անցաւ օրակարգի Բ. կէտի լուսաբանութեանը, որի այս կամ այլ կերպ ընդունելը ընթացք կը տայ օրակարգի Ա. կէտի վերջնական բանաձեւումին: Ամբողջ վիճաբանութեան ընթացքում իրար էին բախում մեծ մասամբ երկու հակառակ կարծիքներ: Վերջում ընկեր Ցակովը առաջարկեց իւր բանաձեւը, որով ընդունում է թէ, ինչպէս մինչեւ հիմա Հ. Յ. Դաշնակցութիւնը յենուել է Տաճկաստանում հայ Ժողովրդի բոլոր խաւերի վրայ, լինեն դրանք կեղեքողներ թէ կեղեքուողներ, հարուստներ թէ աղքատներ, բուրժուաներ թէ աշխատաւորներ, այնպէս էլ այսուհետեւ, իր Ծրագրից չշեղուելու համար, նոյն կերպ պիտի աշխատի շարունակել իր գործունէութիւնը: Ապա ատենապետը ամփոփեց միւս բանաձեւը, որով ընդունում է թէ, Դաշնակցութեան համար, որպէս գործունէութեան յենակէտ, թէ՛ Տաճկաստանում եւ թէ Ռուսաստանում, եղել է եւ լինելու է միշտ էլ աշխատաւոր մասսան: Քուէարկուեցին երկու բանաձեւերն էլ. երկրորդը ընդունուեց բոլորի կողմից, ընդդէմ մէկի:*

Օրակարգի այս կէտը բոլորի համար պարզուած համարուելով, Ժողովը կրկին անցաւ Ա. կէտին, որի վրայ քիչ կանգ առնելուց յետոյ, առաջարկուեցին Ժողովականների կողմից մի քանի բանաձեւեր. ընդունուեց մեծամասնութեան կողմից ընկեր Վահանի հետեւեալ բանաձեւը.—

Երկու վայրերումն էլ Դաշնակցութիւնը ունի նոյն կազմը՝ յարմարեցրած տեղական պայմաններին. այդ մարմինները փոխադարձ օժանդակութեամբ կապուած են իրար հետ. կարեւոր դէպքերում կազմում են առանձին սեկցիաներ, որոնք ունենում են միմեանց մօտ ներկայացուցիչներ:

Նախքան Ժողովի փակուելը, ընկեր Ստեփանի առաջարկութեամբ, բացարձակ կերպով ընդունուեց արտասահմանեան պրոպագանդան մղել հնարաւոր եղածին չափ ընդարձակ չափերով, որովհետեւ բոլորն էլ համոզուած էին, որ այդ պրոպագանդան միշտ էլ մօտեցնում է Դաշնակցութիւնը իր փայփայած իդէալներին:

Ժողովը փակուեց «Մօտ է գարունը» երգով:

Ատենապետներ՝ Ն. ՍԱՐԳՍԵԱՆ
Ցակովբ ՍՏԵՓԱՆԵԱՆ
Քարտուղարներ՝ Լ. ՏԱՐԵԱՆ
Ս. ՄԿՐՏՉԵԱՆ

Ծանօթ.— Բ. նիստի օրակարգի երկրորդ մասում ասուած «գործադիր մարմին»ը, նոյն նիստի բանաձեւում կրկնուած «կենտրոնական կազմակերպութիւն» խօսքերը պէտք է հասկանալ Դաշնակցութեան Ընդհ. Պատգամաւորական Ժողով:

Հ.Յ.Դ. ՎՐԷԺ ԿՈՄԻՏԷ

Ժողովին հրաւիրուած էին Դաւրէժի 250 ընկերները եւ ներկայ էին լինում երբեմն 150, երբեմն 170 հոգի: Սեւագրութիւնը կարդացուեցաւ հրապարակով 157 հոգու ներկայութեան, իսկ արտագրուելուց յետոյ հրաւիրուեցաւ նոր ներկայութեան, որովհետեւ, իմ դուրս գալուս նախորդ օրը, երեկոյթ ունէինք, ընկերները զբաղուած էին: Բաւականացանք նախագահների եւ քարտուղարների ստորագրութեամբ:

Կ. Կոմիտէի մտքովն էլ անգամ չանցկացաւ թէ կնքելու որեւէ անհրաժեշտութիւն կայ:

Ս. ՎՐԷԺՈՒՆԻ

7.— ՊՈՐՏ-ԱՐԹՈՒՐԻ (ԷՆԶԵԼԻ) «ՍԷՐ» ԽՈՒՄԲԻ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նամակի մեծ չափի երկերեք թուղթ: Գրութիւնը՝ մօտ 4 էջ, սեւ մելանով:

1905 *Նոյեմբեր 16, չորեքշաբթի երեկոյեան ժամը 7ից, Հ. Յ. Դաշնակցութեան Պորտ-Արտուրի «Սէր» խումբը Ժողով կազմելով, վիճաբանութեան նիւթ դարձրեց քննել, պարզաբանել եւ որոշ եզրակացութեան գալ Հ. Յ. Դաշնակցութեան «Նախագիծ Կովկասեան գործունէութեան» անուն երկի մասին, եւ Ժողովի արդիւնքը ներկայացնել տեղւոյն ենթակոմիտէին, ուղարկելու համար այն՝ Դեկտ. ամսուայ մէջ կայանալիք Ընդհ. Պատգամաւորական Ժողովին, Արեւմտեան Բիւրոյում:*

Վերոյիշեալ «Կովկասեան գործունէութեան նախագիծ»ը, պարունակում է իւր մէջ գլխաւորապէս եւ համաչափաբար երկու մաս՝ այն է քաղաքական եւ տընտեսական, որոնց առաջինը՝ տրամադրում է հետեւեալը.— Հ. Յ. Դաշնակցութիւնը պէ՞տք է որ արդեօք Կովկասում աշակցի միւս սոցիալ-յեղափոխական կուսակցութեանց հետ՝ միաբան գործունէութեամբ ստեղծելու համար Կովկասեան մի առանձին պարլամենտ, ինչպէս Զուիցերիա, թէ ոչ.— *եւ երկրորդը՝* Հ. Յ. Դաշնակցութիւնը Կովկասում միաժամանակ սոցիալա-

կան հողի վրայ պէ՞տք է գործի, թէ ոչ:

Այդ երկու հարցերը մի քանի ժողովներով, բացի «Սէր» խմբի անդամներից՝ Պորտ-Արտուրի միւս Հ.Յ. Դաշնակցութեան խմբերի անդամների եւ անդամուհիների ներկայութեամբ, երկար վիճաբանութեանց նիւթ դառնալուց յետոյ, առաջին հարցի վերաբերեալ հետեւեալ եզրակացութեան եկանք: «Ի նկատի ունենալով որ Կովկ. գործ. նախագիծը յօրինուելուց յետոյ ներկայ ռուսական կառավարութեան բացարձակ միապետութեան ռեժիմը փոփոխութեան ենթարկուելու վրայ է եւ Սահմանադրութիւն է տրւում համայն Ռուսաստանին եւ Կովկասին՝ որով եթէ այդ Սահմանադրութեան գործադրութիւնը Ռուսաց կառավարութիւնն ուղիղ եւ աննենգ կերպով իրականացնի, լինելով այլեւս ընդհանուր կեանքի, գործի եւ պատուի ապահովութիւն, կրօնքի, մամուլի եւ ազգային կուլտուրայի ազատութիւն, արդէն Հ.Յ. Դաշնակցութիւնը իր ծրագրած քաղաքական մասին որոշ չափով հասած կը լինի, այնպէս որ, եւ ամբողջապէս այդ ծրագիրն իրականացնելու համար, չ'արժէր առայժմ Ռուսաց կառավարութեան մօտ ցոյց տալ հայերիս որպէս մշտական անհանգիստ եւ խռովարար տարր, որը պատճառ կը լինէր անթիւ զոհերի եւ որի արդիւնքը կարող է եւ դառնալ մեզ համար աւելի նուազ շահաւէտ քան մեր թափելիք արիւնը,— ուստի մենք գալիս ենք այդ կէտում այն համոզման, որ Հ.Յ. Դաշնակցութիւնը, որպէս ներկայացուցիչ տարր ամբողջ հայութեան մեծամասնութեան, առայժմ պէտք է իրան զոհ ցոյց տայ ներկայ սահմանադրական կարգերից եւ պիտի աշխատի ցոյց տալ որ ինքը ձգտում է միաժամանակ Տաճկահայաստանը եւս միացնելու գործին Կովկասի հետ, որին Ռուսաստանը եւս հաւանականաբար կ'աջակցի: Իսկ եթէ ներկայ սահմանադրական կարգերը այնքան անբաւարար եւ անգործադրելի կը մնան որ ամբողջ Ռուսաստանը կը դիմի միապետութիւնը տապալելով հասարակապետութիւն ստեղծելու գործին, այդ դէպքում բնականաբար Հ.Յ. Դաշնակցութիւնն եւս պէտք է որ միանայ Կովկասի միւս սոցիալ-յեղափոխական կուսակցութեանց հետ՝ ստեղծելու համար եւ Կովկասեան մի առանձին պարլամենտ»:

Երկրորդ հարցը առաջինին նման ընդհանուր համաձայնութեան չյանգեց: 14 ժողովականներից միայն երեք հոգի եկան հետեւեալ եզրակացութեան, թէ «Հ.Յ. Դաշնակցութիւնը պէտք է որ Կովկասում միաժամանակ գործի սոցիալական հողի վրայ եւ այդ՝ հետեւեալ հիմունքներով,— Ա) որ գործունէութիւնն ներկայումս Կովկասում արդէն սոցիալական հողի վրայ է, եւ այդ ուղղութեամբ շահագրգռուած են Կովկասում թէ՛ գիւղացիք եւ թէ բանուորներ, որոնք կազմում են Հ.Յ. Դաշնակցութեան մէջ իսկական ոյժ, եւ նրանց շահերին եթէ Հ.Յ. Դաշնակցութիւնը արձագանգ չտայ՝ նոյնն էր թէ զրկուիլ մի շատ կարեւոր ոյժից: Բ) Որ արդէն Հ.Յ. Դաշնակցութեան ծրագիրն է դաստիարակել եւ պատրաստել հայ ժողովրդին՝ համայնական կեանքի համար եւ եթէ Կովկասում դրա համար արդէն պատրաստի հող կայ, շաշխատել այդ ուղղութեամբ գործել՝ նշանակում է դաւաճանել Հ.Յ. Դաշնակցութեան սկզբունքներին: Գ) Հենց նոյնիսկ Տաճկահայոց հարցի տեսակէտից յիշեալ հողի վրայ Կովկասում գործելը անհրաժեշտ է, նախ որ Հ.Յ. Դաշնակցութիւնը աւելի ուժեղանալով միջոցներ կ'ունենայ աւելի՛ խնդով պայքար մղելու Տաճկաստանում եւ երկրորդ՝ որ սոցիալական պարլամենտական կառավարութիւնը, որպիսին պէտք է լինի Տաճկաստանի ապագայ հարեւան Ռուսաստանը, այնպէս ոխերիմ հակառակորդ չի լինի Տաճկահայ դատին եւ աւելի մարդասիրական սկզբունքներից մղուած՝ կը պաշտպանէ Հայկական Դատը Տաճկաստանում, եւ մանաւանդ որ Ռուսաստանի այդ պետական ռեժիմը չի կարողանայ ազդեցութեան անցնել Տաճկաստանի վրայ (?). իսկ թէ որքան յաջողութիւն խոստանում է այդ ուղղութեամբ գործունէութիւնը, դրա ապացոյցը՝ սոցիալիստների վերջին յաղթանակը եւ ապագայ ամենակատարեալ յաղթանակի յոյսը»(1):

Իսկ ժողովականներից տասնեւմէկ անձինք այդ երկրորդ հարցի մասին հետեւեալ համոզման եկան, թէ «ի նկատի ունենալով որ տաճկահայի, հայութեան ամենաստուար մասի, յեղափոխական մթնոլորտը, տընտեսական տաղնապալից վիճակը եւ ազգայնականութեան պաշտպանութիւնը անհամեմատ շատ աւելի վըտանգաւոր եւ խղճալի դրութեան մէջ է գտնուում ներկայումս քան Կովկասահայինը եւ որ Տաճկահայ դատի պաշտպանութիւնը գլխաւորապէս վիճակուած է ամենից աւելի Կովկասահային, եւ քանի որ Կովկասում եւ Տաճկաստանում այս բոպէիս էլ մեզ դէմ մղում է ազգային բնաջնջման պայքար, եթէ նոյնիսկ սոցիալական հողի վրայ գործելու որոշ մասնաւոր պահանջ էլ լինի՝ այնուամենայնիւ ներկայ ընդհանուր ազգայնական տաղնապի եւ սպառնալիքների հանդէպ, աւելի անհրաժեշտ եւ աւելի բնական է որ կեանքի վտանգի առաջ պէտք է որ զոհենք տնտեսական շահերը, ուստի այդ հարցի տեսակէտով մենք, «Սէր» խմբի ժողովականների մեծամասնութիւնս, գալիս ենք այն եզրակացութեան՝ որ ամենից առաջ Հ.Յ. Դաշնակցութիւնը պէտք է որ իւր ծրագրի քաղաքական մասին — այն է՝ ազգայնականին(2) — բաւարարութիւն եւ լուծում տայ եւ ապա, որպէս ապահովուած մի ազգ, անցնի իւր ծրագրի հեռաւոր նպատակին, այն է՝ տնտեսականին, սոցիալական հողի վրայ գործունէութեամբ: Որովհետեւ մեր համոզմունքն այն է, որ ազգային եւ սոցիալական հողի վրայ միաժամանակ գործունէութիւնն Կովկասում՝ կովկասահայի ուժերի բաժանման պատճառ կը դառնար, եւ այդ՝ հետեւեալ պատճառներով. նախ, որ Հ.Յ. Դաշնակցութիւնը, ընդունելով ներկայումս պաշտօնապէս միաժամանակ սոցիալական գործունէութիւն Կովկասում, կը պարտաւորուէր բնականաբար բոլոր միւս սոցիալական կուսակցութեանց գործունէութեանց անպայման մասնակցել եւ դրանով Հ.Յ. Դաշնակցութիւնը միշտ պիտի զրաղուէր աւելի սոցիալական հարցով քան ազգայնականով, որով եւ այս վերջնոյն գործունէութիւնը բոլորովին կը կաղար, ինչ որ Հ.Յ. Դաշնակցութիւնը չեղած կը լինէր իւր ծրագրի անմիջական նպատակից(1):

Երկրորդ՝ որ Կովկասահայը, երբ պաշտօնապէս եւ սկզբունքով առաջնորդուի մի անգամ իւր անհատական շահերի հարցերով, այն է՝ սոցիալական հողի վրայ գործունէութիւնը, նա այն ժամանակ աւելի կը հետաքրքրուի իւր սեփական շահերի հարցապնդումներով (?) քան ընդհանրական գործի անձնազոհութեամբ, եւ այդպիսով Տաճկահայ դատի ապագայ գլխաւոր ազատարար Կովկասահայը մոռացութեան կը տայ, կամ թէ աւելի մի երկրորդական հարցի նման կը նայի, այդ Ս. գործին, եւ այդպէսով ընդմիշտ կը տուժէ զուցէ Տաճկահայ դատը. դորա ապացոյց ունենք այն հայերին, որոնք ազատ երկրներում հանգիստ եւ խաղաղ կեանքի կուլտուրայի առաջ՝ մոռացել են բոլորովին իրենց ազգայնականը(3) եւ, ձուլուելով այն տեղերի ազգութեանց հետ, բոլորովին ոչնչացել են հայութեան համար:

Երրորդ՝ որ Հ.Յ. Դաշնակցութիւնը Կովկասում միաժամանակ սոցիալական հողի վրայ գործելով պարտաւորուած պիտի լինի այդ գործունէութեան վերաբերեալ բոլոր պահանջքների համար դրամական ահագին ծախսեր անել, որով տնտեսապէս եւս պիտի տուժէր զարձեալ Տաճկահայ դատը եւ ազգային ներկայ ինքնապաշտպանութեան գործը:

Չորրորդ՝ որ ընդունելով Հ.Յ. Դաշնակցութեան այն կէտը, որ երբ կեանքի, գոյքի եւ պատուի կատարեալ ապահովութիւն ձեռք կը բերի հայութիւնը, այն ժամանակ պէտք է որ զարձեալ Հ.Յ. Դաշնակցութիւնը զէնքը ցած չդնի, այլ յետ այնու զարձեալ պէտք է որ գործի՝ սոցիալական հողի վրայ. եւ քանի որ ներկայումս ամէն կողմից, Կովկասում, Տաճկաստանում եւ այլուր համիսլամութեան(4) ծրագրի գոյութեամբ՝ հայութեան բնաջնջման սպառնալիքների առաջն ենք գտնուում, որի ակնյայտ ապացոյցները դեռ եւս շարունակւում են Կովկասում, ուստի ներկայ հանգամանքներում, ազգայնական եւ սոցիալական հողի վրայ միաժամանակ գործունէութիւնն համաձայն չէ երբեք Հ.Յ. Դաշնակցութեան ծրագրին, որով եւ զգաստարների ահագին չփոթութիւն եւ կուսակցական հերձուածներ կարող են յառաջ գալ հենց նոյնիսկ Հ.Յ. Դաշնակցութեան մէջ, եւ ահա՛ զարձեալ ուժերի բաժանում:

Վերջապէս, մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ քանի դեռ Տաճկահայ դատին լուծում չի տրուած, Կովկասում կամ այլուր մեր՝ հայերիս մէջ պաշտօնապէս ձեւնարկել սոցիալական հողի վրայ գործունէութիւն, դա միանգամայն կը մնասէր մեզ՝ հայութեան մեծամասնութեանը ամենից աւելի հետաքրքրող գործին, այն է՝ անձի ինքնապաշտպանութեան գործը եւ ազգային դատը:

Իսկ թէ առայժմ Կովկասում այդ ուղղութեամբ ընդհանուր գործունէութեան չսկսուելով, Հ.Յ. Դաշնակցութեան մէջ գործող բանուոր եւ երկրագործ դասակարգերում ոյժերի ոչ մի անջատումն յառաջ չի գալու, համոզուած ենք որ այս վերջին երկու տարուայ ընթացքում, Կովկասում, ոչ պաշտօնապէս եւ մասնակի, եթէ Հ.Յ. Դաշնակցութիւնը սոցիալական հողի վրայ գործունէութիւն է ցոյց տուել, նախ որ դա միաժամանակ Կովկասի ինքնապաշտպանութեան գործն էր. եւ այդ՝ մինչեւ իսկ անգործունէութեան դատապարտեց վերջին երկու տարիներն Տաճկահայ դատը եւ նրան այնքան օգտակար չկարողացաւ հանդիսանալ որքան ինքը մտածում էր. եւ երկրորդը՝ թէպէտեւ մինչեւ այժմ Կովկասահայ բանուոր եւ երկրագործ դասակարգերի շահերին համապատասխան ընդհանուր սոցիալական գործունէութիւն չէր ընդգրկել պաշտօնապէս Կովկասում Հ.Յ. Դաշնակցութիւնը, այնուամենայնիւ Տաճկահայաստան մտնող Հ.Յ. Դաշնակցութեան մարտական խմբերի մեծ ոյժը դարձեալ կազմում էր բանուոր եւ երկրագործ դասակարգը(1): Դրանով ապացուցւում է որ հայ աշխատաւորը գիտէ միշտ զոհել իւր անձնական տնտեսական շահերը՝ իւր ազգին սպառնացող վտանգի հանդէպ:

Նախագահ եւ խմբապետ ժողովի՝
ԿՈՍՏԱՆԴԻՆ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ
Քարտուղար ժողովին՝ **ԴԱՎՐԻԺԵՆԻ**

---

(1) Նախադասութիւնները երկար են, խճճուած, եւ ընդհանրապէս բիրականական տեսակէտէ՝ ամենիշդ: Ջանացած ենք պահել հարազատութիւնը:

(2) Ըսել կ'ուզէ աշնուշտ՝ ազգային-ազատագրական հարցին:

(3) Ըսել կ'ուզէ՝ ազգային դիմագիծը:

(4) Աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել, այս պարագային, *համաթուրանականութեան*:

8.— ԱՐԱԽԻ ԽՄԲԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

Մեծածաւալ թուղթի մը մէկ երեսին վրայ, սեւ մելանով: Միւս էջը լեցուած է Արախի խումբերուն եւ ընկերներուն մասին վիճակագրական տեղեկութիւններով, զոյս զանց կ'ընեմ: Թիւերը (Բ, է, եւն.) կը համապատասխանեն ամենակած տրուած հարցումներու կամ օրակարգի կէտերու:

Բ) Տեղական ինքնապաշտպանութեան խնդիրը ներկայ հանգամանքներում անհրաժեշտ համարելով՝ խմբերը այն կարծիքին են, որ կազմակերպուի այդպիսի

մի մարմին, որի մէջ մտնելու պատրաստակամութիւն են ցոյց տուել 18 հոգի, այդ առթիւ կանոնագրութիւն էլ պահանջել ենք Գիլանի Կոմիտէից:

է) Արախի դիրքը լեռնաղաչտ է, որի արեւելահիւսիսային կողմը երկար լեռնաշղթայով շրջապատուած է, որը միանում է Վրէժի էյնալ–Զէյնալ լեռնաշղթայի հետ. միւս կողմերը բաց ընդարձակ դաշտ է եւ ընկած է Թաւրիզի, Համադանի, Թեհրանի եւ Ռաշտի ճանապարհների միացման կէտի վրայ. օդը առողջարար, հողը պարարտ, իսկ ջուրը սակաւ, այնուամենայնիւ քաղաքը այգեստաններով շրջապատուած, որոնք մեծ մասամբ շահանի (?) խաղող են արտադրում: Քաղաքի բնակիչների թիւը 20–25 հազար է, որոնք ապրում են 17 թաղի մէջ, որից երեք թաղի մէջ՝ այն է Խիաւան, Ղոյ–Մէյդան եւ Ռակօշ անուանեալ թաղերի մէջ, հաւասարապէս զետեղուած են հայերը, իսկ միւս թաղերից մի քանիսի մէջ կան ցիր ու ցան մի քանի տներ: Հայերի թիւը հասնում է մօտաւորապէս, մեծ ու փոքր, 226ի, որից 124ը այր են, իսկ 102ը՝ կին, որոնցից հաստատ բնակիչների մեծագոյն մասը գինեվաճառ եւ օղեվաճառ են եւ նիւթական աննախանձելի վիճակ ունին. իրենց պարապմունքի եւ նիւթականի տեսակէտով մեծ դժուարութիւն կայ միասնական կեանք ստեղծելու, որը շատ ցանկալի էր, իսկ հաստատ բնակչութիւն չունեցողներից մեծ մասը վաճառականութեամբ են պարապում: Հայերի մեծ մասը Հ. Յ. Դաշնակցութեան կազմի մէջ են, չէզոքները փոքրամասնութիւն են կազմում եւ ուրիշ կուսակցութիւն էլ գոյութիւն չունի: Տեղացի պարսիկ ժողովուրդը ընդհանրապէս աղքատ վիճակ ունի եւ բնաւորութեամբ էլ մեղմ է, որոնցից 1/9ը Բաբի (?) աղանդին է պատկանում, իսկ 1/10ը Ալիալլահի քիւրտ ցեղն է. կրթական մակարդակը շատ ստոր աստիճանի վրայ է, բայց եւ այնպէս հայերի հետ լաւ յարաբերութեան մէջ են առայժմ եւ բարեհայեաց հակումն են ցոյց տալիս: Կառավարութիւնը ժողովրդի վրայ աւելի մեծ ազդեցութիւն է ձեռք բերած, քան պարսիկ հոգեւորականութիւնը, ինչ որ իսկական պատճառն է նոցա հանդարտարարոյութեան:

ժ) Քանի որ յեղափոխական կազմակերպութիւն մտել է Պարսկաստանի մէջ եւ օրըստօրէ մեծ ծաւալ է ստանում, հետեւաբար յեղափոխական գործը անսայթաք յառաջ տանելու եւ յեղափոխական գաղափարը իւր բարձրութեան վրայ պահելու համար իսկական նեցուկը տեւորն է. առանց այդ՝ կազմակերպութեան գործը կաղ կ'ընթանայ:

ԺԱ) Ցեղափոխական խմբերի գործունէութեան եւ նոցա եռանդին զարկ տալու համար, շրջիկների պէտքն զգացում է եւ անհրաժեշտ է:

ԺԲ) Ներքին կանոնագրութեան 10րդ յօդուածի առթիւ մեր կարծիքն է՝ ենթակոմիտէի անդամ ընտրելիս իւրաքանչիւր խումբ գաղտնի քուէարկութեամբ եռանուն ցանկ պատրաստելով ներկայացնէ խմբապետական ժողովին, ուր այդ ընտրելեաց ցանկի վրայ գաղտնի քուէարկութեամբ ընտրութիւն կայանայ ի ներկայութեան ենթակոմիտէի կամ կոմիտէի ներկայացուցչի, եթէ գոյութիւն ունի:

17րդ յօդուածի առթիւ մեր կարծիքն է, որ իւրաքանչիւր խումբ ձրի «Դրօշակ» ստանայ, իսկ անդամներից ցանկացողները պէտք է վճարեն առնուազն 10 դրան տարեվար:

Ներքին կանոնագրութեան մէջ հարկաւոր է մի յօդուած, որ որոշէ թէ խմբի կազմի մէջ մտած մի անդամ երբ ինքնակամ կամ ըստ քմահաճոյից շատ անդամ բացակայում է խմբի ժողովներից կամ ընդմիշտ, խումբը այդպիսի դէպքում ի՞նչպէս պիտի վարուի հեռացող անդամի հետ. այդ մասին հարկաւոր է մի պարզ որոշում:

Արդեօք չի՞ կարելի ինքնապաշտպանութեան համար խմբերի տուած նպաստից եւ հանգանակութիւններից տարեկան մի որոշ տոկոս պահել՝ զէնք գնելու նպատակաւ, որ թ. դէպս կարելի լինի զինել ոեւէ ընդունակ զինավարժի (?):

ԺԵ) Մենք սկզբունքով ընդունում ենք, որ Պարսկաստանի Հ. Յ. Դաշնակցութեան մարմինները փոխադարձաբար հաշուետուութիւն ունենան միմեանց հետ, որպէսզի բոլոր մարմինները գիտակից լինին Պարսկաստանի շրջանի գործունէութեան եւ դրամական ելեւմուտքին:

ՇԱՆԹ, ՂԱՓԱՆ, ՄԱՍԻՍ

1905 թիւ, Դեկտ. 21
Արախ

9.— ՏԵՂԵԿԱԳԻՐ
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ «ՄԻՆԱՐԷԹ»Ի ՇՐՋԱՆԻ
1904 եւ 1905 թուականի

Նամակի նորմալ չափի 6 երկթերթ թուղթերէ կազմուած տետրակ: Տեղեկագիրը, ներկայացուած հաւանօրէն 1906 Հոկտեմբերին զումարուած Մինարէթի «Շրջանային ժողովին» (տե՛ս նախորդ վաւերաթուղթը), գրուած է սեւ մելանով եւ կը գրաւէ 11 էջ: 12րդ էջը կը կրէ Հ. Յ. Դաշնակցութեան Մինարէթի ներկայացուցիչ Սամսոնի ստորագրութիւնը:

ՍԱԼՄԱՍՏ (ՄԻՆԱՐԷԹ)

Սալմաստ գաւառը գտնւում է Պարսկահայք նահանգում, Ուրմիոյ լճի հիւսիս–արեւմտեան մասում, պարսկա–թրքական սահմանագլխից մի քանի ժամուայ հեռաւորութեան վերայ:

Սահմանները կազմում են հիւսիսից Խոյ գաւառը, հարաւից Սօմայ (?) գաւառը, արեւելքից Ուրմիոյ լիճը, արեւմուտքից՝ Արաուլ լեռները: (Այս լերան արեւմտեան ստորոտում տարածւում է, Տաճկաց սահմանից ներս, 1897 թուականի Հ. Յ. Դաշնակցութեան արշաւանքի վայրը՝ Խանասորի լեռնադաշտը):

Սալմաստ գաւառը դաշտային է, շրջապատուած լեռներով. ողողւում է ընդհանրապէս Զօլա գետով. կան մի քանի փոքրիկ գետակներ եւս, որոնք նոյնպէս նպաստում են ողողման,— Դերիկի գետ, Նարզաֆ չայ, Ղարա սու, Եւայլն:

Սալմաստ գաւառը, լինելով ընդհանրապէս դաշտային, շատ նպաստաւոր է երկրագործութեան համար, որով եւ զբաղւում են բնակիչները: Երկրագործութիւնը ամենատարածուած զբաղմունքն է Սալմաստում, բայց առաջ է գնում համապետական ձեւով,— ցանում են՝ ցորեն, գարի, կորեկ, սիսեռ, կտաւահատ (?), ծխախոտ, գանազան բանջարեղէններ, եւայլն: Սալմաստի դաշտում ընդարձակ տարածութեամբ ձգւում են անտառներ. աչքի են ընկնում այգիները:

Հողը մեծ մասամբ պատկանում է կալուածատէր աղաների (Թուրք), որոնք գիւղացիների արդիւնաբերութեան 1/3 մասը վերցնում են: Կան նաեւ գիւղեր, որոնք, որոշ հիմնական իրաւունքներ վայելելով, վճարում են գիւղատէր աղային՝ բերքի (հացաբոյսերի) 1/8, 2/10րդ մասը: Կան գիւղեր, որոնց կալուածները (հողը) գիւղացու սեփականութիւնն է, սակայն կառավարութեան վճարում են հողային տուրք, տարեկան մի բեռան (10 փութի) տեղի համար 12 դրան 50 կոպէկ. բացի հողային տուրքից կայ նաեւ գլխահարկ՝ նոյնպէս 12 դրան 50 կոպէկ. հարկ առնւում է նաեւ կաթնտու անասունների համար:

Սալմաստի հնութիւններից նշանաւոր են Ղառնիեարաղի բերդը եւ Փիր–Զաւուշ լերան հարաւային երեսում ապառաժի վերայ քանդակուած պատկերները. երկու ձիաւոր եւ երկու հետեւորդ՝ նրանց ձիու սանձը բռնած, հնադարեան զէնքերով: Այդ նկարների մասին աւանդութիւնը ոչինչ չէ ասում. Բաֆֆին միայն, իւր «Կայծեր»ի Ա. հատորում յիշում է, որպէս թէ Արշակունի Արշակ Բ. Թագաւորի գերի տարուելն է ներկայացնում: Սալմաստի հիւսիս–արեւմտեան մասում, Սիպտակ լերան լանջին, տեղաւորուած է պատմական Դերիկի Սբ. Աստուածածնի Վանքը, որ իւր ժամանակին դեր է խաղացել յեղափոխական կեանքում: Այժմ այդ վանքը աւերակ է:

Սալմաստի բնակիչները կազմուած են Թուրք, հայ, ասորի, քիւրդ եւ հրեայ տարրերից. մեծամասնութեան տեսակէտից առաջին տեղը բռնում են Թուրքերը, բ՝ հայերը, գ՝ քրդերը, դ՝ ասորիները, ե՝ հրեաները: Բնակիչների գլխաւոր զբաղմունքը, ինչպէս ասացինք, երկրագործութիւնն է. կան նաեւ վաճառականներ, որոնք արտահանում են չոր մրգեղէններ: Կան նաեւ արհեստաւորներ: Նոր կառուցուած է ապակի պատրաստելու գործարանը. պատրաստողը հայ է:

Սալմաստի հայաբնակ գիւղերը, բնակիչների թիւը, դպրոց, եկեղեցի, գրադարան

Գիւղերի անունները	Տուն (հայ)	Արական	Իգական	Ընդամէնը	Պանդուխտ	Եկեղեցի	Դպրոց	Գրադարան	Ծանօթութիւն
Հաւթուան. զուտ հայաբնակ	429	1270	1044	2314	559	1	1 երկսեռ	1	
Փայաջուկ. զուտ հայաբնակ	294	821	657	1478	359	1	1 »	1	
Ղալասար. զուտ հայաբնակ	121	353	331	684	100	1	1 »	1	
Մահլամ. զուտ հայաբնակ	185	556	492	1048	174	1	1 »	1	մի կին՝ ռուսով ամուսնացած է
Սառնա. զուտ հայաբնակ	104	295	248	543	187	2	1	–	
Սարա. Թրքախառն	168	446	369	815	300	1	1 երկսեռ	–	3 ընտ. կաթոլիկացած
Սարամերիկ. Թրքախառն	100	351	283	634	134	1	1	–	
Ախտախանա. Թրքախառն	60	177	128	305	86	1	1	–	
Ղըզըլջա. Թրքախառն	47	140	122	262	22	1	1	–	
Վարդան. Թրքախառն	27	111	83	194	33	1	–	–	
Դրիչկ. Թրքախառն	24	70	55	125	14	1	–	–	Դրիչկ եւ Շէյթանաւան ունին մի դպրոց
Շէյթանաւա. Թրքախառն	19	46	41	87	8	1	1	–	
Քալաչահ. Թրքախառն	28	77	53	130	16	1	1	–	
Քօչամիշ. Թրքախառն	23	60	49	109	17	1	–	–	
Այան. Թրքախառն	21	60	55	115	28	1	–	–	
Ռկաւա. Թրքախառն	14	74	58	132	30	–	–	–	
Աղա–Իսմայիլ. Թրքախառն	4	9	10	19	1	1	–	–	
Քօհնա–չէհիր. (նաեւ՝ Թուրք, հրեայ)	127	385	303	688	192	2	1	1	
Խորոմա. ասորախառն	36	80	68	148	15	1	–	–	3 ընտ. կաթոլիկացած
Ուլա. ասորա–Թրքախառն	9	20	18	38	11	1	–	–	2 ընտ. ասորախառն
Դիւլիգան. ասորա–Թրքախառն	3	9	15	24	2	1	–	–	1 ընտ. ասորախառն
Քաթաւուր. ասորա–Թրքախառն	3	9	8	17	3	–	–	–	
Զըզալուկ. Թուրք–քիւրտախառն	6	16	17	33	1	1	–	–	
Ընդհ. գումար	1846	5435	4507	9942	2330	23	12	5	

Կրթական գործը Սալմաստում.— *Կրթական գործը Սալմաստում գտնուում է միջակ դրութեան մէջ, եւ դժուար կարող է յառաջադիմել որովհետեւ դպրոցները շատ աղքատ վիճակում են: Դաշնակցութիւնը առանձին ուշադրութիւն է դարձրել կրթական գործի վերայ. նորա ջանքերով կառուցուել են երկու դպրոց Փայջուկում եւ Շէյթանաւայում, կառուցած է թատրոնական դահլիճ Փայջուկ եւ Ղալասար, զարկ է տրուել գրադարաններին, հսկել է դպրոցների կանոնաւոր ընթացքի վերայ, եւայլն:*

Կառավարութիւն.— *Պարսկաստանը ընդհանրապէս դուրկ լինելով օրէնքներից, ժողովուրդը շարունակ ենթակայ է պաշտօնեաների կամայականութիւններին: Հայ գիւղացիները Սալմաստում շարունակ ենթարկուում են պաշտօնեաների, մանաւանդ Սարփարաստի (քրիստոնեաների դատաւոր) կողմից հարստահարութիւնների. ամենագլխաւոր օրէնքը կաշառակերութիւնը եւ տուգանքն է, որից օգտուում են պաշտօնեաները:*

ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Սալմաստը, որպէս սահմանագլուխ Տաճկաստանի, հանդիսանում է յեղափոխական ակտիւ գործունէութեան մի վայր. դեռ շատ հին ժամանակներից սկսած՝ նա այդ դերի մէջ է եղել: Հ. Յ. Դաշնակցութիւնը ըսկըսել է իրա գործունէութիւնը 1890–96 թուականներից. այնտեղ է կենտրոնացել Երկիր փոխադրուելիք ամբողջ ռազմամթերքը, այնտեղ են պատրաստուել եւ անցել Երկիր՝ բոլոր զինակիր խմբերը (Պարսկաստանի), այնտեղ են գտել իրանց հանգստութիւնը՝ Երկրից վերադարձող խումբերը. այդտեղից է շարունակաբար կապ պահպանուել Երկրի հետ, Շամի հետ եւայլն:

1904 թուականի գործունէութիւնը.— Այդ թուականին, Յունուարից սկսած մինչեւ Ապրիլի վերջերը, Շամից եկած (կոմսի յանձնարարութեամբ) Տէրվիշ (?) սուրհանդակի միջոցով փոխադրուել է զատուորներ (?) եւ երկու հատ տասնոց ատրճանակ՝ մօտ 120 փամփուշտով, որ ապահով տեղ է հասել: Նոյն սուրհանդակի հետ, երկրորդ անգամ, փոխադրուում է 800 մոսինի եւ 200 բերդանի ծայր եւ 7 մոսինի հրացան, սակայն այս անգամ, սուրհանդակը տեղ չէ հասցնում ռազմամթերքը, իւրացնում է եւ փախչում:

Ապրիլի վերջերին պատրաստուեց 6 հոգուց բաղկացած մի փոքրիկ խումբ դէպի Շամ, որը տարաւ 19 մոսինի հրացան եւ 2000 ծայր. այդ խմբին հետ էին Ընդհ. Ժողովին մասնակցած՝ Վասպուրականի ներկայացուցիչ Յովհաննէսը(1) եւ զինագործ Լեւոնը. խմբին առաջնորդում էր յայտնի Վալատ Մստոն. բացի վերոյիշեալ ռազմամթերքից, խումբը տանում էր թերթեր եւ հրացանի մասեր: Խումբը կոթուրի վրայով ապահով անցնելով սահմանը, Շամի կողմերում նկատուում է քրդերից եւ սկսուում է կռիւ: Կուում նահատակուում է Յովհաննէսը: Մթերքների մի մասը անցնում է քրդերի ձեռքը, մեծ մասը հասցնում են Շամ: Այդ խումբը ճանապարհելուց յետոյ սկսեցին Դումանի խմբի պատրաստութիւնները, որը պիտի Շամի վրայով անցնէր Սասուն՝ օգնութեան: Խումբը Յունիսի 7ին ճանապարհուեց, դարձեալ կոթուրի վրայով՝ Մստոյի առաջնորդութեամբ: Խումբը բաղկացած էր 17 հոգուց՝ ձիաւոր. խմբին մասնակցում էր բժիշկ Զաւրեանը: Տանում էին 17 հրացան, 2000 փամփուշտ՝ բոլորը մոսինի, ռումբեր եւ խմորներ: Խումբը անցնելով սահմանը դէպի ներս, կռուի է բռնուում քրդերի հետ. կռիւը տեւում է երկար: Մեզանից լինում է 2 զոհ,— Աստոն եւ Սերոբը: Խումբը ցրուում է. մեծ մասը Մստոյի հետ վերադառնում է Սալմաստ: Մի քանի օր յետոյ Դումանը երկու ընկերով վերադառնում է Խոյ, որից յետոյ վերադառնում են յետ մնացած դարձեալ 3 հոգի, որոնք ձերբակալուած էին Խոյում եւ որոնց զէնքերը գրաւել էր կառավարութիւնը: Այսպէս խումբը, անյաջողութեան մատնուելով, ցրուում է:

Սեպտեմբերի սկիզբներին Երկրից եկաւ Անդրանիկը՝ իր փոքր խմբով, որը ընդունուեց շքեղ կերպով:

Վասպուրականի Կ. Կոմիտէի պահանջմամբ պատրաստուեց մի խումբ ձիաւոր՝ 15 հոգուց, վալատ Մստոյի հետ, Փոխիկի խմբապետութեամբ, որը ճանապարհուեց դարձեալ կոթուրի վրայով: Խումբը տանում էր 15 մոսին հրացան եւ 13·969 փամփուշտ մոսինի: Խումբը անցնելով սահմանը կռուի է բռնուում. կռիւը սկսուում է առաւօտեան եւ տեւում է մինչեւ երեկոյ. խումբը ամբողջովին նահատակուում է: Կոթուրի գծով եթէ Փոխիկի խումբն էլ ուղարկուեց, նախ որ այդ գծով ունէինք Մստոյի նման վստահելի վալատ, երկրորդ՝ խումբը գնում էր աշնանը, որ աւելի ապահով է լինում, ինչպէս փորձուել է շատ անգամ: Խմբի ջարդուելու գլխաւոր պատճառ այն է, ինչպէս ստուգուեց, որ կռուի սկզբում վիրաւորուում է վալատը, ինչ որ մեծ յուսահատութիւն է պատճառում խմբին, եւ խումբը չի կարողանում մի որեւէ տեղ դուրս գալ: Նոյն խմբում նահատակուեց Արշակը, որ որպէս զինագործ անցնում էր Երկիր:

Տեռոր.— *Տեռորի է ենթարկուած մի քիւրդ, որ մասնակցել էր Փոխիկի խմբի ջարդուելուն:*

Սալմաստից, թէ՛ ուղիղ գծով եւ թէ դէպի Մենաւոր, փոխադրուած են, սուրհանդակների միջոցով, թերթեր, հրացանի մասեր, դրամ եւ այլ մանր մունր իրեր:

Սալմաստում ունեցել ենք մի շրջիկ, որը զբաղուել է խմբերին դասախօսելով եւ նոր խմբեր կազմելով: Ունեցել ենք 10 օժանդակող խումբ տղամարդկանց: Խմբերին դասախօսուել է հետեւեալ նիւթերի մասին.—

1) *Ինչո՞ւ է առաջանում յեղափոխութիւնը.*
2) *Դաշնակցութեան ծրագիրը եւ գործունէութիւնը.*
3) *Հակառակ[որդ] կուսակցութեանց գործունէութեան մասին.*
4) *Հայերի ինքնաճանաչութիւնը.*
5) *Ընդհանուր կրթութիւն.*
6) *Ալկոհոլի վնասները.*
7) *Միջոցներ խոլերայի դէմ.*
8) *Ֆրանսական Յեղափոխութիւնը.*
9) *Բուլգարական եւ Մակեդոնական շարժումները:*

1905 ԹՈՒԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

1905 թուականի գործունէութիւնը եղել է զուտ կազմակերպական: Կազմակերպուել է 38 խումբ, 4 ենթակոմիտէ եւ մի կոմիտէ՝ կազմուած վերջերս: Խմբերի թուում է նաեւ երկու կանանց խումբ՝ «Քրիստափոր» եւ «Սօսէ» խմբերը:

Ենթակոմիտէներն են՝ Ծառաստանի, Քարի, Ճառագայթի եւ Մինարէթի [ենթակոմիտէները], իսկ կոմիտէն՝ «Մինարէթի» կոմիտէն: Խմբակների հետ պարապել են դասախօսութիւններով, խօսուել է հետեւեալ նիւթերի վրայ.—

1) *Ազգերի ծագումը.*
2) *Ընդհանուր տեսութիւն հայ ժողովուրդի անցեալ կեանքի (պատմութիւնից).*
3) *Իսրայէլ Օրին եւ նորա գործունէութիւնը.*
4) *Դաւիթ Բէգ եւ նորա գործունէութիւնը.*
5) *Յեղափոխութեան ծագումը հայերի մէջ.*
6) *Կուսակցութիւնների առաջանալը և նոցա գործունէութիւնը.*
7) *Յունական Յեղափոխութիւնը:*

Այս դասախօսութիւնները եղել են իւրաքանչիւր ենթակոմիտէի չրջանում. խօսել են ընդհանրապէս ուսուցիչները:

Փոխադրութիւն.— *Ղրկուած է Մենաւոր, Շամ փոխադրելու համար, 1 բերդան հրացան՝ 50 ծայրով, 3 մոսին՝ մագազինով, 4 մոսին՝ առանց մագազինի, մոսինի ծայր՝ 2000 հատ, էլեկտրոնական հաղորդիչներ, 2 արկղ, եւ հրացանի մասեր:*

Փոխադրուած է Աւարայր, մոսինի ծայր՝ 500 հատ, 2 մոսինի հրացան, մէկը մագազինով, միւսը՝ առանց մագազինի:

Վրէժի Արհեստանոցը, նորոգութեան համար, 2 մոսին՝ առանց մագազինի: Փոխադրուած է Վրէժ, գործածութեան համար, 3 ատրճանակ (1 տասնոց, 1 ամիտ, 1 ջոնսըն), մոսինի փամփուշտ՝ 2000 հատ, բերդանի փամփուշտ՝ 576 հատ, տասնոց ատրճանակի եւ միւսներից՝ 102 հատ: Փոխադրուած է նաեւ խմոր:

Այս ռազմամթերքը փոխադրուած է Վրէժ ինքնապաշտպանութեան համար, Կ. Կոմիտէի կարգադրութեամբ: Փարոս փոխադրուած է 100 հատ բերդանի ծայր, տրրուած է մի ընկերոջ: Բացի ռազմամթերքից, փոխադրուած է Երկիր, թէ՛ ուղիղ գծով եւ թէ Մենաւորի վրայով, թերթեր, բրոշիւրներ եւ այլ մանր իրեր:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԱՐՍԻԿ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Դաշնակցութիւնը Սալմաստի չրջանում ունի բարոյական մեծ ազդեցութիւն ոչ միայն հայ ժողովրդի, այլեւ պարսիկ եւ այլ ազգերի վերայ: Նորհիւ այդ ազդեցութեան կազմակերպութիւնը աւելի ընդարձակուում է եւ [վայելած] համակրութիւնը աւելի մեծանում: Կազմակերպութեան հեղինակութիւնը ժողովուրդի մէջ մեծանալով, աւելի ուշադրութեան է արժանանում կառավարութեան կողմից եւ միշտ աշխատում է լաւ յարաբերութեանց մէջ լինել. նոյնիսկ շատ խնդիրներում պաշտօնական յարաբերութեան մէջ է մտնում, ինչպէս այդ արեց 904 եւ 905 թուականներին, սահմանագլխի քրդերին զսպելու համար, մանաւանդ քիւրդ ցեղապետ Զաֆար Աղային:

904 թուականին, կառավարութիւնը մօտ 3000 ձիաւոր եւ հետեւակ զօրքով ու թնդանօթով արշաւում էր Զաֆար Աղայի վերայ. բայց վստահ չլինելով իր ուժերի վերայ, դիմում է Դաշնակցութեան տեղական մարմնին, խնդրելով 40–50 ֆիտայի՝ պատճառաբանելով որ ֆիտայիները կարո՛ղ են կռուել քրդերի դէմ. եւ այդ դիմումը եղաւ պաշտօնապէս. ի հարկէ մենք խուսափողական դիրք բռնեցինք, պատճառաբանելով որ այդքան մարդ եւ ռազմամթերք չունինք:

Հնչակեաններ.— *Հնչակեանները շարունակ եղել են Սալմաստում եւ եօլա գնալու սիստեմով քարշ են տուել իրենց գոյութիւնը. նոքա ոչ մի կանոնաւոր գործունէութիւն չունին: Ապրում են գիւղացիների հաշուին: Նոցա գործունէութիւնը կայանում է միայն Դաշնակցութեան դէմ, որի առթիւ եւ յաճախ առաջանում են ընդհարումներ: Միայն 904 թուականին պատրաստեցին մի խումբ՝ Երկիր ուղարկելու, որը ճանապարհուեց. բայց նոյն գիշերը դարձեալ վերադարձաւ եւ ցրուեց:*

Տեռոր.— *Տեռոր կատարուած է 4 հոգու վերայ. մէկը կենտր. Կոմիտէի որոշմամբ, որ անցաւ անյաջող (վիրաւորուեց). երկրորդը՝ տեղական ընկերների որոշմամբ եւ Կ. Կոմիտէի վաւերացմամբ՝ անցաւ յաջող: Իսկ երկուսը կատարել են զինուորները, մէկը ջելօ (?) է, միւսը՝ քիւրդ:*

Մեր չրջանից արտաքսուած է, ընկերների որոշմամբ, ուսուցիչ Յովհաննէս Պետրոսեանը, որպէս

խառնակիչ անձնաւորութիւն, որի վերաբերմամբ եղած փաստաթղթերը ուղարկուած են Կ. Կոմիտէին:

Կանխիկ զէնքեր.— *Կանխիկ(2) զէնքեր ունինք, 3 Մանիխեր (?) հրացան՝ 370 ծայրով, 19 մոսին, 5 բերդան, 1 այնալու, մոսինի փամփուշտ՝ 8000 հատ, բերդանի՝ 878 հատ. այնալուի չունենք. ունենք նաեւ մանր իրեր: Մանրամասնութիւնը հաշուեմատեանում կարելի է գտնել:*

Դրամական.— *Տեղական դրամական մուտք ունեցել ենք՝ 11070 ղրան 55 կոպէկ. միայն ամսավճարներից ստացել ենք՝ 6263 ղրան 55 կոպէկ. իսկ մնացածը եղել է հանգանակութիւնից, նուիրատուութիւնից, ներկայացումներից եւ թերթի բաժանորդագրութիւնից:*

Ինքնապաշտպանութիւն.— *Կովկասեան հայ-թրքական ընդհարումների սկսուելուց յետոյ, Սալմաստի շրջանում խիստ ուշադրութիւն դարձուեց ինքնապաշտպանութեան վերայ: Ժողովուրդը գնեց զէնքեր Դաշնակցութեան մարմինների միջոցով. արգիլուեց հային զէնք ծախելը եւ խիստ ուշադրութիւն դարձուեց կանոնաւոր զէնքեր գնելու վերայ: Կազմակերպուեցին մարտական խմբեր, ուսումնասիրուեցին եւ որոշուեցին իւրաքանչիւր գիւղի դիրքերը: Դաշնակցութեան զինուորներից կազմակերպուած էր թուցիկ խումբ: Ինքնապաշտպանութեան ուժի վերայ գաղափար կազմելու համար, առաջ ենք բերում գիւղերի զէնքերի հաշիւը.—*

Քարի ենթակոմիտէի շրջան.—

Ա. գիւղ, 185 տուն.— 4 մոսին՝ 649 ծայր, 32 բերդան՝ 5320 ծայր, 11 այնալու՝ 1730 ծայր, 8 վերենդ՝ 1343 ծայր, 31 ատրճանակ զանազան տեսակի՝ 856 ծայր, 20 չախմախլի հրացան զապասի (?) համար, 14151 պիստոն, 364 տըրամ կապար (13 փութ, 26 գրգ.), 50 տրամ վառօղ (1 փութ, 35 գրգ.):

Բ. գիւղ, 104 տուն.— 9 բերդան՝ 289 ծայր, 3 այնալու՝ 240 ծայր, 3 վերենդ՝ 248 ծայր, 15 ատրճանակ զանազան տեսակի՝ 518 ծայր, զապաս չունի. մի քանի չախմախլի:

Գ. գիւղ, 28 տուն.— 3 բերդան՝ 90 ծայր, մի քանի չախմախլի:

Ճառագայթ ենթակոմիտէի շրջան.—

Ա. գիւղ, 121 տուն.— 15 բերդան՝ 1474 ծայր, 9 այնալու՝ 322 ծայր, 1 վերենդ՝ 320 ծայր, 2 մանիխեր՝ 180 ծայր, 1 գերմ. մաուզեր՝ 160 ծայր, 18 չախմախլի, 24 ատրճանակ զանազան տեսակի՝ 542 ծայր, զապասի կապար՝ 3 փութ:

Բ. գիւղ, 294 տուն.— 12 բերդան՝ 850 ծայր, 8 այնալու՝ 540 ծայր, 1 գերմ. մաուզեր՝ 100 ծայր, 40 ատրճանակ՝ 800 ծայր:

Գ. գիւղ, 24 տուն.— 6 բերդան՝ 433 ծայր, 1 մանիխեր՝ 100 ծայր, 6 ատրճանակ՝ 156 ծայր:

Դ. գիւղ, 60 տուն.— ?

Մինարէթ ենթակոմիտէի շրջան.—

Ա. գիւղ, 168 տուն.— 28 բերդան՝ 1131 ծայր, 2 մոսին՝ 175 ծայր, 6 այնալու՝ 385 ծայր, 1 վիրենդիլ՝ 50 ծայր, 2 վինչեսդր՝ 27 ծայր, 1 մանիխեր՝ 46 ծայր, 9 չախմախլի, 21 ատրրճանակ՝ 418 ծայր:

Բ. գիւղ, 127 տուն.— 8 բերդան՝ 650 ծայր, 3 ատրրճանակ՝ 70 ծայր, մի քանի չախմախլի:

Զանազան գիւղեր.—

Ա. գիւղ, 100 տուն.— 5 բերդան՝ 81 ծայր, 5 չախմախլի, 7 ատրճանակ՝ 140 ծայր:

Բ. գիւղ, 27 տուն.— 7 բերդան՝ 330 ծայր, 3 չախմախլի, 2 ատրճանակ՝ 20 ծայր:

---

(1) Ֆիէեան Ցովհաննէս (Ջոջ ազա), Շամի պատգամաւոր 3րդ Ընդհանուր ժողովին:

(2) Ըստաած է, ըստ երեւոյթին, «պատրաստ» իմաստով:

10.— ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԱԻԱՐԱՑՐԻ ՇՐՋԱՆԻ
1906 Փետրուար 1

Նամակի ճորմալ չափի գծուած 3 զոյգ թերթեր եւ 1 անզոյգ թերթ: Տեղեկագիրը կը գրաւէ ամբողջութիւնը՝ 14 էջ: Վայելուչ եւ գիւրաւ ընթեռնելի ծրագիր: Սեւ մելան:

Աւարայր գաւառը (Խոյ) գտնւում է Պարսկահայք նահանգի հիւսիսային սահմանում, պատմական Արտազ դաշտի մէջ. նրա արեւմտեան կողմերից, Կոթուր գաւառակից սահելով՝ առաջ է գալիս Տղմուտ գետը եւ, ոռոգելով ամբողջ Աւարայր դաշտը, դէպի հիւսիս արեւելք անցնելով՝ թափւում է Արաքսի մէջ: Աւարայրի դիրքը դաշտային է եւ առհասարակ մշակուած. նա գրեթէ շրջապատուած է բարձր լեռներով, որոնցից արեւմտեանն է Տաճկաց սահմանին կից եղող Աւրուն գագաթը: Սրա սահմանակից գաւառներն են՝ Սալմաստ, Կոթուր, Արտազ (Մակու) եւ Մարաւէ (?), որը իրրեւ երկուսեան սահմանագլխավայր, անմիջապէս յարաբերութեան է մտնում՝ Մենաւորի միջոցաւ՝ Շամի հետ, իսկ Արաբլուի միջոցաւ՝ Կովկասի հետ:

Բերքեր.— *Աւարայրը որովհետեւ ընդհանրապէս դաշտային է, հետեւապէս հողագործութեան արհեստը այստեղ բաւական լայն ծաւալ է գտած նահապետական սիստեմով. արտադրում է հացաբոյսեր, ընդեղէններ, բամպակ, բրինձ, ծխախոտ, մրգեղէն եւ ատաղձ:*

Բնակչութիւն.— *Բուն գաւառի բնակչութիւնը բաղկանում է 30·000 անձից, որոնք բաղկանում են թուրք եւ հայ տարրերից: Հայերը ամփոփուած են քաղաքի արեւմտեան ծայրում երեք արուարձանների մէջ (Աղայի թաղ, Փոս թաղ, Էյվազի թաղ), 115–120 տուն բնակչով, իրենց շուրջն ունենալով Քաջամարտիկ (Դիզա)՝ 18 տուն բնակչով, Նորաշէն (Շօրաւ)՝ 25 տուն բնակչով, Սրբավայր (Սէյտավար)՝ 85 տուն բնակչով, Մահլազաւ՝ 25 տուն բնակչով, Ղարաջալի՝ 3 (?) տուն բնակչով, Վառ՝ 6 տուն բնակչով եւ Փեսա՝ 1 տուն բնակչով: Վերոյիշեալ եօթը գիւղերը, բոլորն էլ խառն են հայ ու թուրք բնակչով, եւ գտնւում են քաղաքի շուրջը մէկից մինչեւ չորս ժամ հեռաւորութեամբ, ենթարկուելով գիւղատիրոջ կամայականութեանը:*

Տնտեսական վիճակ.— *Բուն Աւարայրի հայ արհեստաւորութիւնը բաղկացած լինելով վեց պայտարից, երեք ջրաղացպանից, մէկ երկաթագործից, չորս զինագործից, մնացածն էլ (100) ատաղձագործից եւ մի քանի օղեվաճառներից, տնտեսապէս վերին աստիճանի արգահատելի դրութեան է մատնուած, այնպէս որ 100 թումանի կարողութիւն ունեցողը մատանիչ կը լինի. որով մեծ դժուարութեամբ կը կարողանան իրանց օրապահիկ ապրուստը հայթայթել. նոյնպէս էլ վերեւ յիշուած եօթը թրքա-հայաբնակ գիւղերը, որոնք պարապում են զուտ երկրագործութեամբ, հայոց ունեցած հողի սակաւութեամբ եւ երկրագործական վաստակից կէս առ կէս հողատիրոջը տալով, դժուարանում են իրենց ապրուստը հայթայթելու, որով ստիպուած են լինում պանդխտել դէպի Կովկաս: Առհասարակ, ոչ քաղաքում եւ ոչ գիւղերում, չկան հողատէր հայեր:*

Նուիրական հաստատութիւններ.— *Բուն քաղաքի արուարձաններում կան երկու եկեղեցիներ (Ս. Աստուածածին եւ Ս. Սարգիս): Առաջինը շինուած է հողից եւ խարխուլ վիճակի մէջ է, գործածւում է իրրեւ ժամասացութեան վայր. իսկ վերջինը, որը ծառայում է միայն իրրեւ ուխտավայր, կառուցուած է քար ու կիրից եւ բաւական ընդարձակ չէնք է. բայց դա էլ խարխուլ վիճակի մէջ է: Երկու եկեղեցիների գաւիթներումն էլ գտնւում են հայոց գերեզմանատներ: Ցիշեալ եկեղեցիների պաշտամունքը կատարում է մի քահանայ: Ս. Սարգիս եկեղեցին ունի սեփական մի քանի օրավար արտ, որոնց եկամուտն է տարեկան 2 բեռ ցորեն, միջին հաշուով 20–25 թուման հաշուուած:*

Քաջամարտիկում (Դիզա) կայ մի հողաշէն փոքրիկ մատուռ: Դորա հանդէպ, կէս ժամ հեռաւորութեամբ, մի բարձր բլուրի գագաթին գտնւում է Աւարայրի պատմական հերոս քաջ Վարդանայ մատուռը, քարուկիր, որը այժմ կիսաւեր դրութեան մէջ է. յիշեալ երկու մատուռների հովիւն է Սրբավայրի քահանան: Տարին մի անգամ, Նոր Կիւրակէին, գաւառի հայ ազգաբնակութիւնը մեծ բազմութեամբ գնում է Ս. Վարդանի մատուռը ուխտի: Այդ երկուսն էլ շարժական ու անշարժ կալուածներից զուրկ են:

Նորաշէնը (Շօրաւ) հիմնուած է 1898 թուականին, Վառ գիւղի կոտորածից ազատուող ընտանիքներից. ունի մի հողաշէն եկեղեցի՝ մի քահանայով, իրեն ծուխ ունենալով նաեւ Մայլազաւը, Փեսան եւ Վառը. եկեղեցին կալուածներ չունի:

Ղարաջալուն ունի միայն մի հին եկեղեցու աւերակներ. կը հովուէ Սրբավայրի քահանան:

Սրբավայրը ունի մի հողաշէն եկեղեցի եւ մի սեփական քահանայ. եկեղեցին կալուածներ չունի, իրեն եկամուտի աղբիւր ծառայում է 20 բոպէ հեռաւորութեամբ գտնուած Գոհրուանի Ս. Աստուածածնայ եկեղեցին, ուր տարին երկու անգամ ուխտագնացութիւն է լինում:

Մահլազանը, որ գտնւում է քաղաքից երկու մղոն հեռաւորութեան վրայ, (Խոյից Ջուլֆա տանող ճանապարհի վրայ), ունի մի հին եւ մեծ քարաշէն եկեղեցի, զուրկ որեւէ հողային կալուածից. դրա հոգեւոր հովիւն է Նորաշէնի քահանան. կարծւում է, որ այդ գիւղը ի հնումն միացուած էր Զարեւանդ գաւառին, որը այժմ գիւղի է վերածուել: Սրանից մի քանի տարի առաջ, Լուսաւորչական հովուի չգոյութեան եւ տեղական հայերի նիւթական անձկութեան պատճառով, գիւղացիք խմբովին կաթոլիկութեան էին դիմել. սակայն ձեռք առնուած զօրաւոր միջոցների շնորհիւ, նորից իրենց մայրենի եկեղեցու ծոցը վերադարձան:

Վառ գիւղը ունի մի քարաշէն եկեղեցի:

Փեսան մի հին հողաշէն եկեղեցի ունի: Երկուսն էլ կալուածներից զուրկ են:

Կրթական հաստատութիւններ.— *Կրթական տեսակէտից ամբողջ Աւարայրը, իր գիւղերով, շատ աննախանձելի դրութեան է մատնուած, տնտեսական վիճակի անձկութեան պատճառով, այնպէս որ ամբողջ գաւառում միայն երեք ուսումնարան կայ,— Խոյում, Նորաշէնում եւ Սրբավայրում: Առաջինը, թէեւ երկար ժամանակից ի վեր գոյութիւն ունէր անդրջրհեղեղեան մեթոդով, մի խարխուլ շէնքի մէջ, վերջին 3–4 տարիների ընթացքում կիսով չափ կրթական մակարդակի վրայ դրուեցաւ՝ շնորհիւ դաշնակցական մի քանի ընկերների ջանքերին, այնպէս որ այժմ ունի մի փառաւոր դահլիճ, կառուցուած 1903 թուականին, տեղացիների հաւաքական աշխատութեամբ եւ Պ. Պ. Տ. Աֆրիկեանի նուիրատուութեամբ: Պէտք է խոստովանել նաեւ, որ այդ դպրոցի շինութեան եւ նպաստ ստանա-*

լու գործում մեծ դեր է կատարել զաւառական առաջնորդ՝ Ս. Թաղէի վանահայր Տ. Գէորգ Ծ. Վ. Նալբանդեանը: Այժմ այս «Ս. Վարդանեան» դպրոցը ունի մօտաւորապէս 40–45 երկսեռ աշակերտներ, մի դասեան է եւ ղեկավարւում է մի ուսուցչով եւ մի ուսուցչուհիով. դասաւանդութեան առարկաներն են միայն հայերէն՝ իւր ճիւղերով: Դպրոցի բիւրջէն փակւում է տեղացիներից ուղղակի եւ անուղղակի հաւաքուած եկամուտներով եւ պատահական նուիրատուութիւններով:

Սրբավայրը նոյնպէս Դաշնակցութեան նիւթական(*) ու բարոյական օգնութեան շնորհիւ, ունի մի նորակառոյց դպրոց, որը շարունակւում է չորս–հինգ տարիներից ի վեր, տարուայ մէջ միայն վեց ամիս տեւողութեամբ: Այստեղ պէտք է յիշել, որ անցեալ տարի, հնչակեան տեղացիների ոտնձգութիւնների պատճառով, դպրոցը փակ մնաց, իսկ այս տարի մեծամեծ ջանքերի շնորհիւ, Դաշնակցութեան տեղական ներկայացուցչութեան միջոցաւ յաջողուեցաւ Դեկտեմբերի սկիզբներում դպրոցը նորից վերաբացել, որը այժմ ունի 20–25 երկսեռ աշակերտներ եւ կառավարւում է մի տեղացի դաշնակցական ուսուցչով (որի ոճիկը պիտի վճարուի տեղացի համակիր ընկերներից):

Նորաշէնը ունի մի դպրոց. երկու տարիէ ի վեր 10–15 աշակերտներով, ուսուցչի ոճիկը հոգացում է քաղաքիս Գերմ.–Հայկական որբանոցի տնօրէնուհի Օր. Ս. Հանակի անձնական նուիրատուութեամբ եւ մի քիթեւ կերպով տեղացի հայերի օգնութեամբ:

Մնացեալ հինգ գիւղերում մինչեւ հիմա որեւէ կրթական հաստատութիւն մուտք չէ գտել, որով՝ նոր սերունդը բոլորովին զուրկ է ուսումնական կրթութիւնից: Առհասարակ գաւառիս հայ ազգաբնակութիւնը խճճուած լինելով տեղական տիրող տարրին, վարքով, բարքով եւ սովորութիւններով, նոյնիսկ անունով, բոլորովին օտարացած են համարւում. ուստի մեծ կարիք կայ այստեղ կրթական գործին շատ զարկ տալու, որպէսզի այդ օտարական սովորութիւնները ջնջուեն:

Օտար հաստատութիւններ.— Քաղաքիս արուարձաններում կայ չորս հայ բողոքական ընտանիք, որոնց պատճառով ամերիկեան միսիոնարութիւնը հաստատել է երկու ժողովարաններ եւ մի դպրոց, որը մի քանի տարի գործունէութիւն ունենալուց յետոյ, այս տարի փակուեց. նոյնպէս եւ մի հայ բողոքական քարոզիչ, որը աւելի գործ ունի Թուրք տարրի հետ:

Գերմ.–Հայկական որբանոցը, որը հիմնուած է հայասէր դոկտ. Լէպսիուսի նախաձեռնութեամբ, ուրը տարու չափ գոյութիւն ունի եւ առաջներում պատրաստում էր իր մէջ 120ի չափ երկսեռ որբեր: Սոյն հաստատութիւնը երկու ճիւղի է բաժնուած, ուսումնական ճիւղ եւ արհեստագիտական ճիւղ: Ուսումնարանը յաճախում են 70ի չափ երկսեռ որբ աշակերտներ եւ դասաւանդւում են երկու հայ լուսաւորչական դաշնակցական ուսուցչով եւ մի բողոքական դաշնակցական ուսուցչուհիով. դասընթացքի շրջանը տեւում է հինգ տարի. դասաւանդութեան առարկաներն են՝ հայերէն, իւր ճիւղերով, եւ ընդհանուր ազգաց պատմութիւն: Արհեստանոցում միայն ատաղձագործութիւն են սովորում գերմանական սիստեմով, երկու գերմանացի վարպետների հսկողութեան տակ 15ի չափ որբեր, որոնց արհեստագիտական շրջանը երեք տարի է: Վերջին կիսամեակում, նիւթական անձկութեան պատճառով, որբանոցի վարչութիւնը ստիպուած եղաւ 35ի չափ որբեր եւ որբուհիներ դուրս արտաքսել իւր շրջանակից. մնացած 50 որբերի վիճակն էլ շատ խախուտ հիմքերի վրայ է դրուած առայժմ. ինչպէս երեւում է տնօրէնուհու խօսակցութիւնից, գարնանը ուսուցիչները եւս պիտի արձակուեն պաշտօնից: Արտաքսուած որբերի ներկայ դրութիւնը եւս շատ անտանելի է. նոքա կարօտ են անմիջական օգնութեան: Արհեստանոցի ճիւղը, մի տարի է որ բաժանուելով որբանոցի ընկերութեան տրամադրութիւնից, կառավարւում է ինքնուրոյն մի ուրիշ ընկերութեան ղեկավարութեամբ եւ կամաց կամաց, գերմանական ապրանքների Պարսկաստանում ներմուծելու գործով եւս զբաղուելով, հետզհետէ յառաջանալու վրայ է:

Տեղական ինքնապաշտպանութիւնը.— Առհասարակ Աւարայրի այդ մի բուռ հայ ազգաբնակութիւնը, որ ցրուած է իրարուց անջատ մի քանի գիւղերի մէջ, զուրկ է պաշտպանողական ամենատարրական միջոցներից: Նոքա ոչ միայն զինավարժութեան կանոններին են անծանօթ, այլեւ զէնք ունենալու միջոցներից եւս զրկուած են. դոցա մէջ հազիւ կարելի է գտնել 10–14 որսորդական հին հրացան, 10–15 ատրճանակ եւ 5–6 փամփուշտաւոր հրացան. աւելին ունենալու կարողութիւն էլ չունեն, որովհետեւ իրենց տնտեսական նեղ միջոցները հազիւ թէ թոյլ տան: Հ. Ց. Դաշնակցութիւնն ունի այստեղ երկու մոսին հրացան եւ մէկ բերդան հրացան, 250 մոսինի փամփուշտով եւ 715 բերդանի փամփուշտով. իսկ Հնչակեան կուսակցութիւնը ունի մօտաւորապէս 10 բերդան հրացան, ի հարկէ փամփուշտ էլ:

Ցեղափոխական կուսակցութիւններ.— Հ. Ց. Դաշնակցութիւնը այստեղ մուտք է գտել մօտաւորապէս 8–10 տարի առաջ, իբրեւ յարաբերական անմիջական վայր՝ Երկրի եւ Կովկասի, սակայն չէ ունեցել որեւէ խմբակներ, բացի համակրողներից: Միայն 1905 թուի սկզբներում մի քանի անձերից բաղկացած «Հրայր» անունով մի խմբակ է ունեցել, որի առաջին ձեռնարկն

(*) ՆԱՆՕԹ.— Այդ փոքր եղած է ոչ կազմակերպական, այլ Սամսոնի տրամադրութեան տակ դրուած փոքր՝ կրթական նպատակների համար:

է եղել մի վիճակախաղ յօգուտ Դաշնակցութեան, որի զուտ հասոյթը եղել է մօտաւորապէս 25 թուման: Վերջերս կազմակերպութեան ջանքերի շնորհիւ հետզհետէ կազմուեցան ինը խումբեր եւս, որոնք են՝ Աւարայրում «Խան» խումբ 12 հոգիէ բաղկացած, «Սերոբ Փաշա» խումբ 12 հոգիէ բաղկացած, «Սօսէ» կանանց խումբ 16 հոգիէ բաղկացած, Քաջամարտիկում՝ «Վարդանեան» խումբ 12 հոգիէ բաղկացած, Նորաշէնում՝ «Արամեան» խումբ 15 հոգուց բաղկացած, Սրբավայրում՝ «Ասքանազեան» խումբ 10 հոգիէ բաղկացած, «Աւարայր» խումբ 10 հոգիէ բաղկացեալ, «Տիտանեան» խումբ 11 հոգիէ բաղկացեալ, «Վահանեան» խումբ 10 հոգիէ բաղկացեալ: Ամբողջ Աւարայրում խմբերի թիւն է 10, մօտաւորապէս 120 անդամներով: Վերջերս, Քաջամարտիկը միացնելով Աւարայրին, կազմեցինք մի ենթակոմիտէ՝ Աւարայրի անուան տակ, իսկ Նորաշէնը միացնելով Սրբավայրի չորս խմբերի հետ, կազմեցինք երկրորդ՝ Սրբավայրի ենթակոմիտէն. նրանք բոլորը, վերեւ յիշուած տնտեսական անձկութիւնների պատճառով, 9–10 թուման ամսավճարներ հազիւ են կարողանում տալ: Դոցա կազմակերպուելուց յետոյ պարբերաբար դասախօսութիւն է տրուել իրենց 17 անդամ, որոնցից հինգը դասախօսել է մեր ընկերներից՝ Աշոտ Զարեւանդեանը, երկուսը՝ ընկեր Ծովակը, իսկ տասը՝ տեղական ներկայացուցիչ Սիլայի կողմից է տրուած: Դասախօսութեան նիւթեր են եղած՝ Ա) Թէ ի՞նչ է Ցեղափոխութիւնը եւ ի՞նչ պայմանների տակ հայերը ստիպուած են Ցեղափոխութեան դրօշի տակ մտնել. Բ) Ի՞նչ է Հ. Ց. Դաշնակցութիւնը եւ ինչո՞վ զերազանցում է միւս հայ յեղափոխ. կուսակցութիւններին. Գ) Հ. Ց. Դաշնակցութիւնը, գոյութիւն ունենալու ժամանակից, ի՞նչ ծառայութիւններ է մատուցել բուն Երկրում, Կովկասում, Պարսկաստանում եւ այլ գաղթավայրերում. Դ) Հին եւ նոր ակնարկներ կեանքի գոյութեան կռիւների մէջ. Ե) Հ. Ց. Դաշնակցութիւնը ի՞նչ դեր է կատարել ինքնապաշտպանութեան եւ կրթական գործերի հանդէպ. Զ) Ի՞նչ վերաբերմունք պիտի ցոյց տայ ժողովուրդը դէպի Հ. Ց. Դաշնակցութիւնը ներկայ տագնապալի բոպէներում, եւն.:

Հնչակեան կուսակցութիւնը, որ մուտք գտել է այստեղ գրեթէ 15 տարի առաջ, վերջերս բոլորովին անգործութեան էր դատապարտուել վերջին հանրածանօթ ներքին պայքարների պատճառով. սակայն, երկու տարի առաջ, կրկին մեծ թափով մուտք գտաւ շնորհիւ տեղական Դաշնակցութեան անզօր ներկայացուցիչների եւ ընկերների անտարբերութեան: Հնչակեան կուսակցութիւնը, իրեն միմիայն նպատակ ունենալով ամէն կերպով արգելք հանդիսանալ Հ. Ց. Դաշնակցութեան գործունէութեան, մեծ խոչընդոտներ յարուցած է մեր ամէն մի գործի մէջ. այդ կուսակցութիւնը ըստ օրինի կազմակերպուած խմբակներ եւ ժողովներ չունի, միայն Հնչակեանութիւնը իրենց դիմակ ունենալով՝ իրենց եպերելի արարքները շարունակում են: Նրանց թիւը մի քանի ամիս առաջ կրկնապատիկ, զուցէ աւելի էր քան դաշնակցականներինը, բայց Դաշնակցութեան ձեռք առած զօրաւոր միջոցների շնորհիւ այդ թիւը հետզհետէ նուազեցաւ, այնպէս որ այսօր հազիւ դաշնակցականների թուի կէսին է համապատասխանում, այն էլ խնամիական հողի վրայ դրուած:

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ա) Զէնքի եւ ռազմամթերքի փոխադրութիւն

1905 թուականի սկզբներում կազմակերպութեան Աւարայրի ներկայացուցիչն էր մեր ընկեր Պ. Մալխասը, որի օրով ռազմական մթերքներ բաւական մուտք գործեցին Կովկասից Աւարայր. սակայն մենք չունենալով ձեռքի տակ նրա հաշուական տետրները, որ կարողանայինք լիակատար տեղեկութիւններ տալ մեր Ռայոնական ներկայ ժողովին, միայն բաւականանում ենք վեր ի վարոյ հաշուետուական ակնարկ ձգել մեր նախորդ պաշտօնակցին: Եկած ռազմական ապրանքներից մի մասը փոխադրուած է Երկիր Մենաւորի գծով, ընկեր Ընծայրի եւ վարձուած մենաւորցի շորս սուրհանդակների միջոցաւ. իսկ Երկրէն ուղարկուած ուղղակի սուրհանդակների միջոցաւ՝ 7000 հին փամփուշտներ փոխադրուած են Երկիր, որի գրեթէ կէսը կորսըուած է. նմանապէս ընկեր Պ. Մալխասի առժամանակեայ փոխանորդ կարգած Մօրուքի միջոցաւ, ուղղակի Երկիր փոխադրելու նպատակով ուղարկուած է 3000 հին փամփուշտ, որոնք դժբախտաբար ամբողջապէս գրաւուած են (գողցուած) սուրհանդակի կողմից, Ցունիս ամսուայ մէջ:

Բ) Թերթի փոխադրութիւն

1905 թուականի սկզբից ամսական ստացւում էր 18 կապոց «Դրօշակ» (900 թերթ), որոնց մէկ մասը Մենաւորի գծով ղրկուած են Երկիր ապահովապէս. իսկ երկու անգամ, շորս ամսուայ դիզուած թերթերը Ակրարլուի գծով Կովկաս ուղարկուեցան, բայց դժբախտաբար Կովկասում հայ–թրքական ընդհարումների պատճառով, ամբողջապէս կրակի ճարակ եղան:

Գ) Երկրից եկող զինուորներ

1905 Ցունուարից սկսած մինչեւ Մայիսի վերջը Մենաւորի գծով Աւարայր եկած են մօտաւորապէս 30–40 զինուորներ՝ Շամի կոմիտէի յանձնարարութեամբ,

որոնց մեծ մասը ճանապարհուել են Կովկաս, իսկ փոքր մասը՝ Մինարէթ:

1905 Թ. Յունվարի վերջերին, Վրէժի կենտր. Կոմիտէի որոշման համաձայն, հիւանդութիւնս քիչ անցնելուց յետոյ, անցայ Աւարայր, ուր Վրէժից ուղարկուած էր նաեւ ընկեր Պ. Փայլակը, լիազօր արտօնութիւն ստանալով Կ. Կոմիտէից՝ տան աւելորդ իրերը եւ փոխադրական գրաստները ծախելու. սակայն նա փոխանակ ըստ իւր կոչման աւելորդները ծախելու, ծախեց նոյնիսկ ամենակարեւոր առարկան, մինչեւ իսկ գրասեղանը, չգիտենք ի՞նչ նպատակով, եւ ծախածներից գոյացած դրամն էլ փոխանակ տեղւոյն կազմակերպութեան պարտքերին տալու, հետն առնելով Վրէժ մեկնեց, ինչպէս նաեւ մի քանի արժէքաւոր մանր իրեղէններ էլ իւր հետ առաւ, մեզ թողնելով միայն 15 Թուման փող: Օգոստոսի վերջերին Վրէժի Կ. Կոմիտէից ստացանք մեր պաշտօնագիրը Աւարայրի շրջանի ներկայացուցչութեան առթիւ, ինչպէս նաեւ հրահանգ ստացանք՝ պատրաստ գտնուած ծայրերը Երկիր փոխադրելու: Այդ հրահանգների հիման վրայ, գրեթէ Հոկտեմբերից սկսած մինչեւ Նոյեմբերի վերջը, Երկիր փոխադրեցինք 8400 նոր փամփուշտ, 726 հին փամփուշտ, 2 բերդան: Իսկ 2000 նոր փամփուշտ էլ Մինարէթից Աւարայր, Աւարայրից Մենաւոր, ինչպէս նաեւ Մինարէթից 7 նոր հրացան, 2 բերդան, որոնցից առաջինների երկուսը Աւարայրում թողնելով, իսկ մնացածները՝ 2000 փամփուշտների հետ միասին՝ Մենաւորի գծով, մեր մասնաւոր սուրհանդակներով, ապահովապէս Երկիր փոխադրուեցան: Ինչպէս նաեւ փոխադրած ենք Մրգաստանից ստացուած մի կարգ ռազմական մթերքներ եւ Մինարէթից էլ ստացուած, որոնք ամբողջապէս նոյն գծով Երկիր են փոխադրուել ապահովապէս:

1905 Մայիսից սկսեալ «Դրօշակ» թերթերը, իւրաքանչիւր ամսուան 18ական կապոց, ինչպէս նաեւ 30ական օրինակ «Հայրենիք» թերթից, որոնք եկած, դիզուած էին Աւարայրում, դրանք էլ փոխադրեցինք Երկիր եւ Կովկաս՝ Մենաւորի գծով, ապահովապէս. միայն Նոյեմբերի եւ Դեկտեմբերի թուերը, ձմեռուայ ցրտերի պատճառով, մասամբ էլ Կովկասեան գծի խանգարման առթիւ, չկարողացանք փոխադրել: Ուրեմն չորս ամսուայ մէջ մեր փոխադրած «Դրօշակ» թերթերի թիւն է 5400 օրինակ մօտաւորապէս, 800 օրինակ էլ «Հայրենիք» թերթ: Փոխադրուած են նաեւ խմբագրատից եւ Մինարէթից ստացուած մի քանի ծրար բրոշիւրներ:

Մեր հնգամեայ պաշտօնավարութեան միջոցին, Շամի Կ. Կոմիտէի յանձնարարութեամբ, մօտաւորապէս 30 ընկերներ փոխադրած ենք Կովկաս, Մենաւոր, Մինարէթ եւ Վրէժ. իսկ Երկիր փոխադրած ենք մի գինուոր:

Մեր պաշտօնավարած հնգամեայ եղեւմտական հաշուեցուցակը

1905 Օգոստոսից մինչեւ Դեկտեմբերի վերջը, մուտք ունեցել ենք 1101 զրան. իսկ ելք ունեցել ենք 2286 զրան, որի 1185 զրանը պարտք է մնում մեզ վրայ: Այս պարտքի վրայ աւելացնել պէտք է մենաւորաբանակ չորս վարձուած սուրհանդակների 1400 զրան ռոճկի մնացորդը, ինչպէս նաեւ մեր բնակարանի մնացորդ 200 զրան վարձքը: Համազումար պարտք՝ 2785 զրան, որը ստանալու անմիջական կարիք ունենալներս ներկայ Ռայոնական Ժողովի ուշադրութեանն ենք յանձնում:

Քանի որ վերեւում պարզեցինք մեր շրջանի հայոց նիւթական անձկութիւնը, որով սոյն գումարը փոխանակ մէկի, մի քանի անձնաւորութիւններից են վեր առնուած, եւ որոնց ժամանակին չվճարելը անպատեհութիւն ծագելու պատճառ կարող է դառնալ. ուստի կրկնապէս պարտ ու պատշաճ տնօրինութիւն ենք խնդրում:

Դատական պաշտպանութիւն տեղացի հայերի

Գրեթէ երկու տարիից ի վեր՝ Առաջն. գործակալութիւն (?) ստանձնած լինելով, մեր ձեռքից եկած պաշտպանութիւնը խնայուած չէ տեղական ազգայիններին՝ հանդէպ կառավարական շրջանակների. սակայն երբ հիւանդութեան պատճառով երկու ամսու չափ Սալմաստ ուղեւորուեցանք, ցաւ է ասել որ, մեր յաջորդը ուղիից շեղած լինելով, տեղացիները ըստ բաւականին նիւթապէս տուժած էին: Իսկ մեր դառնալուց յետոյ կրկին պաշտօն շարունակելով կառավարական բախումների հանդիպեցինք, մեր կորցրած ուղին ձեռք բերելու համար: Ի մէջ այլոց՝ գաղթականական հոսանքներին բարոյապէս աջակցութիւն խնայուած չէ մեր կողմից:

Անհրաժեշտ պահանջներ Աւարայրի հայ ժողովրդի համար

Հ. Յ. Դաշնակցութեան Աւարայրի ներկայացուցչութիւնը, միացած տեղական դաշնակցական խմբակների ու ենթակոմիտէի ներկայացուցչի հետ, յարմար համարեց հետեւեալ տեղական անհրաժեշտ կարիքները ներկայ Ռայոնական Ժողովին ներկայացնել, դրանց գործադրութիւնը խնդրելով.—

1. Նկատելով կովկասեան հայ-թրքական ընդհարումների պատճառով տեղական տիրող տարբի յուզումները եւ հայոց ինքնապաշտպանութեան գոնէ տարրական միջոցներից զուրկ լինելը, հարկ եւ անհրաժեշտ գտնուեցաւ գոնէ տասը բերդան հրացան, երկու հազար փամփուշտով, տեղւոյն ներկայացուցչութեան տրամադրութեան տակ դնել, գոնէ մինչեւ թրքական յուզումների մեղմանալը:

2. Երեքից մինչեւ չորս զեկավարող դինուորներ դնել տեղական ներկայացուցչութեան տրամադրութեան տակ, պահանջուած վայրերում յատկացնելու:

3. Աւարայրի տան համար գոնէ մի հրացան եւ երկու ատրճանակներ յանձնել:

4. Կրթական գործին զարկ տալու համար անհրաժեշտ է գոնէ տարեկան 130–150 Թուման յատկացնել Սրբավայրի, Նորաշէնի եւ Քաջմարտիկի դպրոցական նոր շրջանին համար, իբրեւ կայազան կազմակերպական ռազմական մթերքների եւ թագստատեղի համար:

5. Արտօնութիւն տալ տեղական ներկայացուցչութեանը՝ իրաւասութիւն ունենալ այդ շրջանի կրթական գործերին:

6. Լիազորութիւն տալ տեղական ներկայացուցչութեանը արգիլելու հայերին՝ կառավարական դատարան դիմելը:

7. Օրինազանցների եւ յանցաւորների դրամական կամ ֆիզիկական պատժումը արտօնել տեղական ներկայացուցչութեանը:

8. Կազմակերպութեան հաշուեհատական մասի մէջ նշանակուած պարտքի բարձումը:

9. Տեղական ներկայացուցչութեան պահանջներին բաւարարութիւն տալու համար անմիջական կերպով պարտք դնել Կ. Կոմիտէի վրայ:

Ներկայացուցիչ Աւարայրի շրջանի՝
ՍԻԼԱ

Գաղամաւոր Աւարայրի՝
ԱՇՈՏ ՁԱՐԵԻԱՆԴԵԱՆ

Մեկնաբութիւն համարատուութեան.— 1905 Թ. Յունուարին, մի գաղթական երկիր անցած ժամանակ, ճանապարհին Զիւաւոր սուլթանի (?) կողմից Մենաւորի գծի վրայ նրա եօթհարուածեան ատրճանակը, 130 փամփուշտով, գրաւուած էր: Մեր բողոքի հիման վրայ ատրճանակը բերուեցաւ յետ, եւ նուիրուեցաւ Սարփարատին: Երկրից եկող Զուլումաթը, Մոկացին եւ իրենց ընկերները, Մենաւորից Աւարայր բերող ճանապարհում կողոպտուած լինելով, ինչպէս եւ Շամի ամբողջ արիւը, մեր բողոքների հիման վրայ, ամբողջապէս յետ առուեցան: Նոյնպէս Երկրից եկած Շամի ընկերների նամակները, միանալով Շամի Հընչակեան կուսակցութեան նամակների հետ, ամբողջապէս բռնուել էին անցեալ Փետրուար ամսում. քան Թուման Դաշնակցութեան կողմից եւ քան Թուման հնչակեանների կողմից կաշառք տալով ազատուեց:

ՆՈՑՆՔ

11.— ՏԵՂԵԿԱԳԻՐ ՄԱԿՈՒ-ԱՐՏԱՋ ԳԱՒԱՌԻ

Նամակի նորմալ չափի գծաւոր 4 երկերեր թուղթերէ կարուած տետրակ: Տեղեկագիրը կը վերաբերի առաւելաբար Թադէոս Աւաքեանի վաճի (Մենաւոր) գործունէութեան. ան կը գրուէր մօտ 11 ու կէս էջ. գրուած է սեւ մելանով եւ ստորագրուած Հ. Յ. Դաշնակցութեան Մենաւորի ներկայացուցիչին՝ Ընծայրի կողմէ (Գէորգ Ս. Վրդ. Նալպանտեան):

Մակու գաւառի արեւմտեան մասը լեռնային է, իսկ արեւելեան մասը՝ դաշտային: Սահմաններն են, Արեւմուտքից՝ Տաճկաստանը — Աղբակ, Բերկրի եւ Գայազիտ: Արեւելքից՝ Ջուլֆա եւ Մարսոտ: Հիւսիսից՝ Արաքս գետը: Հարաւից՝ Գորուլի լեռները: Բնակիչները բաղկանում են պարսիկներից, հայերից եւ մի քանի քրդական ցեղերից,— հայտէրանցի, մլանցի, ջալալցի, Ջնրկցի, մորգանցի, պրուքցի եւ խալքցի եւն.: Թուի առաւելութեամբ գլխաւոր տեղը բռնում են պարսիկները. քրդերը թէեւ խոշոր տեղ են բռնում, բայց իրարից անջատ բնակւում են, եւ վրաններում, անառանապահութեամբ պարապելով. պարսիկների զբաղմունքն է անառանապահութիւնը, նոյնպէս եւ երկրագործութիւնը:

Հայերը այստեղ շատ աննշան թիւ են կազմում: Մակու քաղաքի մէջ՝ 60–70 տուն, Քիշմիշքէփէ գիւղը՝ 85 տուն, Ս. Թադէի վանքի գիւղը՝ 25 տուն, Գըրգուլաղ՝ 6 տուն=180 տան չափ: Նոցա պարապմունքն է երկրագործութիւն. իսկ Մակուի մէջ մանրավաճառութիւնը եւ արհեստները — պայտար, ոսկերիչ, դարբին եւ հիւսն:

Դոցա մէջ աչքի են ընկնում կաբեւորութեան կողմից աւելի Ս. Թադէի վանքը — Մենաւոր — Տաճկական սահմանէն 6 ժամ հեռաւորութեամբ, եւ Քիշմիշքէփէ – Բլուր՝ Գայազիտ – Մարսոտ ծոց սահմանից՝ 3 ժամ: Իսկ Աւաճուխի գծով Աղբակի սահմանից՝ 4–6 ժամ, ռուսական սահմանից՝ 7–8 ժամ: Իսկ Դաւալու եւ Ալղրզալ հայաբնակ գիւղերից՝ 14–15 ժամ հեռաւորութեամբ:

Մենաւորից Մակու՝ 6 ժամ: Մենաւորից Քիշմիշքէփէ՝ 8 ժամ: Մենաւորից Արաբլու՝ 12 ժամ: Մենաւորից Աւարայր, կարճ ճանապարհով, Գորուլով՝ 14–15 ժամ, եւ երկար ճանապարհով՝ Զօրավայի գծով՝ 18 ժամ: Իսկ Մակուից Արաբլու՝ 10 ժամ:

Հայոց կրթական գործը Մակուի շրջանում աննախանձելի դրութեան մէջ է, տեղական մի բուռ հայերի նիւթական անձկութեան պատճառով. գրել-կարդալ գիտցողների թիւը մի քանիսի է հասնում: Մենաւորի վանքում, թէեւ ներկայ վանահօր աշխատութեամբ, հանգանակութիւնով եւ սեփական արդիւնքով (1904–1905 Թ.) մի պարզ դպրոց կառուցուել է, բայց առանց ուսուցչի է մնացել, ի հարկէ նիւթականի պատճառով: Քիշմիշքէփէն ա՛չ դպրոց ունի, եւ ա՛չ ուսուցիչ: Մա-

կու քաղաքի հայոց դրութիւնը, համեմատելով միւսների հետ, քիչ–շատ լաւ է. նոքա թէեւ մի հին դպրոց ունէին, բայց 1904ին, դարձեալ նոյն վանահօր ջանքերով, մի նոր շէնքի հիմնարկութիւնը սկսուեց: 1905–1906 ուսումնական տարեշրջանի համար, Ատրպատականի Հայուհեաց Միացեալ Բարեգործ. Ընկերութիւնը մի ուսուցիչ եւ մի ուսուցչուհի էր ուղարկել, իւր հաշուին, այնտեղ: Դպրոցը երկսեռ է, 35–40 աշակերտներով:

Տեղական հայերի ինքնապաշտպանութեան գործը, թուի նուազութեան պատճառաւ, բոլորովին թոյլ է: Թէեւ, տեղական պարսիկ աղաների ստիպողութեամբ, կարողացել են 1901 թուականից սկսեալ հրացաններ ունենալ, իրենց փամփուշտներովը (85ի չափ հրացան ընդամէնը, 8500 փամփուշտով): Դրանով՝ ի հարկէ նոքա չեն կարող պաշտպանուել: Վերջին կովկասեան հայ–թիւրքական ընդհարումների միջոցին Քիշմիշքէ–փէի հայերը իրենց մօտաւորապէս 30–35 հրացանները Դավալուի կողմերը անցկացնելով՝ ծախեցին հայերին: Մնում են՝ վանքի գիւղում քսան (20), Մակուում 15, իսկ Քիշմիշքէփէ գիւղում 10–12 հրացաններ: Կան նաեւ մի քանի ատրճանակներ:

Աղաների հայերին ստիպումն զէնք գնելու մասին այն է, որ պէտք եղած ատեն գործածել տան իրենց թշնամիների դէմ՝ իբրեւ զինուորների — ապրշաղների: Այստեղ իւրաքանչիւր հրացանաւոր հայ իւր աղային զինուորն է համարւում:

Յեղափոխական կուսակցութիւններից միայն Հ.Յ. Դաշնակցութիւնն է գործում այստեղ, որը սկսել է Ախպօրը այդ շրջանում 1897 թուին երեւալուց: Մակուն տուել է Դաշնակցութեան մի գործիչ՝ Մեսրոպ Մաշթոցը, եւ մի զինուոր՝ Մաշթոցի եղբայրը: 1904 թ. վերջերին Մակուում կազմուել են Հ. Յ. Դաշնակցութեան անուամբ հինգ խմբեր, իւրաքանչիւրը 8–10 անձերից բաղկացած ,որոնց բոլորի անդամավճարն տարեկան հազիւ 17–20 թուման հանի: 1905 թ. Դեկտեմբերից կազմուել է մի ենթակոմիտէ, որի կառավարելու գործը յանձնուեց տեղի ուսուցչին:

Քիշմիշքէփէում միեւնոյն ժամանակ կազմուեց եւս մի խմբակ՝ 10 հոգուց. բայց մի տարի գոյութիւն ունենալուց յետոյ՝ անդամների բացակայութեանը պատճառով լուծուած է այժմ. դրա խմբապետ Յովսէփ Միրզոյեանի մօտ գտնւում է մի տարուայ խմբի ամսավճարը՝ 10 թուման, որ դեռ չէ վճարուել Հ. Յեղ. Դաշնակցութեան:

Վանքումն էլ Հայ Յեղ. Դաշնակցութեան գործունէութիւնը սկսել է Ախպօր ժամանակից, որը վանքում ապրելով փախադրութիւնով էր պարապում մինչեւ 1901ը. միեւնոյն ժամանակը Գարէյնի էր մնում, թէ՛ փոխադրութեան եւ թէ քրդական փրոփկանդի համար: Գարէյնին Տաճկաց սահմանին շատ մօտիկ լինելուն, օգտակար ծառայութիւններ կարող էր մատուցանել: Գարէյնիում նստում էր հայտէրանցիների ցեղապետ քիւրտ Մսթաֆա պէկը, որի տանն ապրելով՝ Արմենակը շատ մօտիկ յարաբերութիւն ունեցաւ տեղական քրդերի հետ, եւ Մսթաֆա պէկի միջոցաւ քրդերի մէջ տարածեց Հ. Յ. Դաշնակցութեան ձեռք բերած թիւրքերէն յեղափոխական թերթերն եւ բրոշիւրները (Բատրխան պէկի տղուն՝ Ազատլուհման պէկի կողմից Եգիպտոսում հրատարակուած). եւ միեւնոյն ժամանակ նոյն Մսթաֆա պէկի մարդոց միջոցաւ ռազմամթերք եւ զինուորներ երկիր էր փոխադրել: Դաշնակցութեան առաջարկութեամբ, Վեհ. Կաթողիկոսից ղրկուեց մի արծաթ պապիրոսի տուփ նուէր, որը Արմենակին հետը անձամբ տարանք Մսթաֆա պէկին յանձնեցինք, խօսելով Մսթաֆա պէկին հետ հայ–քրդական համերաշխութեան մասին, որի հետեւանք եղաւ մի բարեկամական կապ հաստատել հայի եւ քրդի միջեւ:

1902 թ. աշնան Մակուի սարտարը հողային խընդիրների առթիւ թշնամացաւ Մսթաֆա պէկի դէմ, որին Թաւրիզ կանչել տուաւ. բայց, Թաւրիզի ընկերների միջամտութեամբ, Մսթաֆա պէկին յաջողուեց վեց ամիս յետոյ կրկին իւր տեղը վերադառնալ. բայց դժբախտաբար սարտարի կրկնակի հալածանքներին չդիմանալով, ստիպուած եղաւ գիշերով փախչիլ տաճկաց սահմանը, բոլորովին մոռանալով հայոց հետ ունեցած յարաբերութիւնները: Մսթաֆա պէկի բոլոր կալուածները այժմ գրաւուած են սարտարի կողմից: Իսկ Արմենակը(1) այնուհետեւ անցաւ զանազան կողմեր:

Մսթաֆա պէկի հեռանալուց յետոյ, սարտարը Գարէյնին յանձնեց Տաճկական սահմանի Արաղայի Խաչան գիւղի — Աւետարանի — մէջ ապրող հայտէրանցիների ցեղապետ եւ համիտիէ զօրքի գայմազամ քիւրտ Մահմէտ պէկին՝ Սաֆոյին, որը իր տունը Գարէյնի փոխադրելով՝ սկսեց այդ տեղի քիւրտ եւ Թուրք ժողովուրդը կառավարել:

1904 թ. գարնանը Մենաւոր եկաւ Շաւրոն, երկիր անցնելու, որին անձամբ տանելով Գարէյնի, ներկայացրի Մահմէտ պէկին, իբր բժիշկ, եւ առանձնապէս յայտնեցի մեր նպատակը՝ [շարունակել] յարաբերութիւնները քրդերի հետ: Նա շատ գոհ մնաց մեր առաջարկութիւններից եւ խոստացաւ ամէն կերպ օգնել մեր փոխադրութեան գործին. նա իր մօտ կանչեց խաչանցի մի հայի, եւ պատուիրեց, որ մեր խորհուրդներին հետեւէ. այնուհետեւ, խաչանցիների միջոցաւ սկսուեց ռազմամթերքի փոխադրութեան գործը: Այս Մահմէտ պէկը եւս, սարտարի կարգադրութիւններից դժգոհ լինելով, մտադրեց Գարէյնիից հեռանալ, որի համար Շաւրոյի վրէժ ըրած դիմումներն — նորից յաջողեցնելու Մահմէտ պէկին Գարէյնիում հաստատուելը — ի զուր անցան: Վերջինը Գարէյնիից հեռացաւ Աւաճուխ, որին ուղեկցեցին Շաւրոն եւ Փայլակը, որտեղից Մահմէտ պէկն անցաւ Խաչան, իսկ Շաւրոն և Փայլակը թէ՛ պրոպագանդ էին անում պարսիկ խաների մէջ եւ թէ՛ Մահմէտ պէկի մարդոց միջոցաւ շարունակում էին փոխադրութեան գործը: Այդ միջոցին Շահպազը(2) վանքումն էր. ամիս մը յետոյ Շաւրոն, զինուած, նրա ծառայի հետը Խաչան անցաւ, երկիր գնալու, բայց Խաչանի եւ պղտիկ գիւղի միջեւ սպանուեց ուղեկիցներից. երկու ոճրագործները, Մահմէտ պէկի երկիւղից, թագուրցի ցեղի մէջ փախած, որոնցից մէկը սպանուեց:

Փայլակը(3) մնաց այնուհետեւ Աւաճուխում — Շաւարշան —, պարսիկ փաշա խանի մօտ, շարունակելով պրոպագանդը եւ փոխադրութիւնը, յարաբերութիւն պահպանելով թէ՛ տեղական խաների եւ թէ Մահմէտ պէկի հետ: 1904 թ. աշնանը սարտարը թշնամացաւ փաշա խանի դէմ, որպէս յեղափոխականներ պահողի, եւ նկատողութիւն արաւ. այդ առթիւ Փայլակը զգուշութեան համար հեռացաւ Աւաճխից. այնուհետեւ այդ գիծը մնաց գաղթականներին:

1905 թ. գարնանը, Մահմէտ պէկի մարդկանց միջոցով Երկիր փոխադրելիք 500 ծայրերը Խաչանից Պըզտիկ գիւղ — Կայան — մտնելու ժամանակ բռնւում են, եւ փոխադրողը տանջանքի տակ յայտնում է, ո՞րտեղից եւ ումի՞ց ստանալը: Մահմէտ պէկն, լսելով, խիստ մարդ է ուղարկում Խաչան, եւ կասկածելի իրեղէններն պահել տալով առաջքն առնում է: Այժմ այդ ապրանքի ո՛ւր գտնուելն մեզ անյայտ է: Հ. Յ. Դաշնակցութիւնը, ի նշան շնորհակալութեան, Մահմէտ պէկին նուէր ուղարկեց մի ֆոնոկրաֆ, որը սակայն լսել ենք՝ որ չէ ընդունած:

Ի միջի այլոց, Դաշնակցութիւնը Նախիջեւանի դէպքերից յետոյ, յարմար դատելով, նուիրել է Մակուի սարտարին՝ 2 արծաթ բաժակներ, որոնք անձամբ իրեն յանձնելով, եւ տեղական հայ–թրքական յարաբերութեանց մասին բաւական խօսելով, գոհ սրտով հեռացել եմ իրենից:

1904 թ. Շահպազի, Փայլակի եւ Շաւրոյի օրով, Երկիր փոխադրուած ապրանքների հաշիւը, իրենց տարարի համաձայն, Մենաւորի գծով.—

	Մուտք		Երկիր փոխադրուած	
Նոր կոթ,— հրացան	25	հատ	21	հատ
Հին » »	11	»	3	»
Ատրճանակ	5	»	5	»
Նոր ծայր	25622	»	26134	»
Հին »	19100	»	10464	»

1904 թ. ամառը երկու թիւրքերէն լեզուի անծանօթ ձիաւոր մեր զինուորներիցը Աւարայրից Մենաւոր եկած պահուն կողոպտւում են ճանապարհին չորս զինուած թիւրքերէ վիրաւորուելով մերոնցից մէկը: Մերոնց կորուստն է 300 հին ծայր, բերդան հրացան մը՝ 60 ծայրերով, 1 ոսկի ժամացոյց, 1 մոսին, ատրճանակ իւր ծայրերով, 2 զոյգ սարքներ, 15 ոսկի օսմ. եւ 1 դաշոյն. վիրաւորը Մենաւոր է հասնում, Շահպազի եւ իմ կողմից է դարմանուել, իսկ միւսը յետ է դառնում:

Նոյն թուին Երկիր են անցել Շահպազը եւ 5 ընկերներ զինուած: Այս միջոցին Երկրից Մենաւոր է գալիս լրտես կեղծ վարդապետ մը, եւ անցնում է Աւարայր, եւ որի մասին ժամանակին յայտնել եմ Աւարայրի եւ Մինարէթի ընկերներին:

Նոյն թուի աշունը Սանոյ հերոս Շահէնը(4) 18 զինուած ընկերներով Երկրից անցնում է Մենաւոր եւ Աւարայր,— միեւնոյն օրը Էլխանի Նիյմէթուլլահ խանը 30 ձիաւորներով ուխտի էր եկել Մենաւոր: Միեւնոյն օրերում Սարտարը, 500 ձիաւորով, գալիս է վանքը ուխտի, եւ ուրախութեամբ տեսնւում է Փայլակի եւ Գրիգ. Անուշեանի հետ: Միեւնոյն աշնան Նորաբոյսի խումբը, 18 անձինք, անցէն եկան Մենաւոր և անցան Կովկաս: Ջնտոյի խումբը, 5 հոգի, և ուրիշ խումբ մը՝ 7 հոգի, Սեղրակի խումբը՝ 10 հոգի, եւ ուրիշներ, անցան Մենաւորից Կովկաս: Նոյն 1904ի աշնան, Մենաւորում Փայլակի և Անուշեանի լարուած յարաբերութիւնները ուղղելու համար, Մալխասը Աւարայրից գալիս է Մենաւոր, եւ վերադարձին չրջապատւում է պարսիկներից, ինչպէս եւ հետի զինուորը. թէեւ բաւական նեղութիւն կրում են, բայց երկուսն էլ ազատւում են. ճանապարհին թափուած իրերն էլ, ինչպէս նաեւ ձին, մեծ մասամբ Սարտարի միջոցաւ յետ են ստացւում:

Նոյն ձմեռը Մենաւորի վրայով Երկիր են անցնում Արամը, Ռուբէնը, Աւետիսը, Նիկոլը եւ մշեցի Յարութիւնը: Զնայելով այդքան երթեւեկութեան, փոխադրութեան գործը յաջող շարունակուել է:

1905ի գարնան Երկրէն գալիս են Հաճի Յակոբը, Հաճի Գէորգը, Քեռին, Տ. Մովսէս քահանան եւ Հաճի Լեւոնը: Յետոյ գալիս են Թռչնակը, Մոկացին, Զուլումաթը, Անտրիկը, Հաճի Կարապետը, եւն., յետոյ ուրիշ 9 հոգի, որոնցից Գրիգոր Պօղոսեանը, մշեցի, ճանապարհում թոքերի բորբոքում ստանալով վախճանւում է Մենաւորում: Յետոյ Կոմսը գալիս է: Աւարայրից գալիս են Մենաւոր՝ Մինասը եւ Արտաշը, Երկիր անցնելու, որոնք նուիրում են վանքին 2 էգ էշեր: Արտաշը ճանապարհին անգիտակցաբար վալատներէն մէկից վիրաւորուելով, Խաչանում կը մնայ. անյաջողութեան հանդիպելով՝ վերադառնում է Մենաւոր, եւ ուրկէ՝ Աւարայր: Նոյն ամառը գալիս են հետզհետէ Վանէն՝ Տէրոյանը (?), Թէոսը, Ալէքսը, Քանքան Նշանը՝ իւր ընտանիքով, զաւակներով միասին եւ 13 անձերից մի խումբ, Խուրշուտը եւ 11 անձեր եւս, որոնք ուղարկուած են Կովկաս: Եւ վերջին օրերում Մուսոն Աւարայրէն եկաւ, եւ զինուած անցաւ սուրհանդակների հետ միասին՝ Երկիր: 1904–1905 թ.ին մօտաւորապէս 600 զինուորներ Երկրից՝ Մենաւորէն անցել են Կովկաս եւ Աւարայր:

1905ին ռազմամթերքի փոխադրութիւն եղած է Երկիր։ Յաջորդաբար ինձ ընկերացել են՝ Փայլակը, Եփրեմը, Յակոբը եւ Սարգիսը։

Մուտք՝ Աւարայրից, Արաքելներից (?) եւ Միմարէթից

Նոր կոթ	11	հատ
Հին »	10	»
Խնձոր	24	»
Ատրճանակ	14	»
Նոր ծայր (փամփուշտ)	24·755	»
Հին ծայր	9448	»
Ատրճանակի ծայրեր	843	»
«Դրօշակ» թերթեր	7000	»
«Հայրենիք»	20	ծրար
«Մշակ» եւն. թերթեր	70	հատ
Յեղափոխ. գրքեր եւ բրոշիւրներ	25	»
Քայլաչափ	2	»
Կողմնացոյց	2	»
Ելեքտրական թելեր	30	ծրար
Դաշոյն	2	հատ
Էլիմէնթ (բա՞ղդ)	9	»
Հեռաչափ	1	»
Հրացանի զատուրներ	20	»
Դժոխային մեքենայ	3	»
Դիտակ	4	»
Փամփուշտանոց	6	»
Խուրջին	7	»

Երկիր ուղարկուածներ

Նոր կոթ	11	հատ
Հին »	9	»
Խնձորներ	44	»
Ատրճանակ	17	»
Նոր ծայրեր	24·763	»
Հին »	15·220	»
Ատրճանակի ծայրեր	843	»

Մուտք

Փող եւ սուլիչ	2	հատ
Ելեքտրական լամբ	1	»
» բաղադրութիւն (?)	1	տուփ
Զի, սարօքը	2	հատ
Պայթուցիկ փոշի	2	չփչ
Բարձրաչափ	1	հատ
Եափունջի	2	»

Այս բոլորը, վերեւ յիշուած ելքի հետ միասին, ապահովապէս Երկիր են ուղարկուած։

Զանազան առիթներով մեր կորուստներն են.—

Շաւրոյի սպանութեան ժամանակ (1904 թ.) յափշտակուած՝ 160 նոր ծայր.

Քիւրտ Ֆարհատին իւրացուցածը (Եփրեմի յանձնածը)՝ 1500 նոր ծայր.

Վալատ Պօղոսի ճամբան կորուածը՝ 300 հին ծայր։

1902ի աշնան, Արմենակի օրով, լարուած ծուղակի մէջ ինկնելով՝ մեր երեք զինուորներն ձերբակալուած էին Գրգուլաղում։ Զինուորներն թողուցան, եւ կողոպտուած իրերից միայն մէկ բերդան հրացան ազատուեց Սարտարի միջոցաւ. իսկ 1 բերդան հրացան եւ 95 փամփուշտներ կորուցեցան։

Մի հնչակեան, Մենաւորից Աւարայր անցնելիս, Զօրավայի գծով, բռնւում է, եւ մեր ու միւս ընկերների ջանքերով ազատւում է, 40 թուման տուգանքով։

Աւարայրից Մենաւոր մի հնչակեան, Զօրավայի գծով, գալիս է. ատրճանակը բռնւում է, եւ մեր ու ընկերների ջանքերովն ազատւում է։

Միւնոյն ճանապարհի վրայ, Մենաւորի զինուորի միջոցաւ փոխադրուած Մենաւորի արխիւը բռնւում է, եւ դարձեալ մեր պահանջներովն ազատւում է։ Այդ պատճառներով այդ գիծը կասկածելի է դառնում. այնուհետեւ գիծը փոխեցինք Գորուլի ճանապարհով։

Վերոյիշեալ Ֆարհատի իւրացուցած 1500 նոր ծայրերու փոխարէն գրաւեցինք նրա ձիու քուռակն ու 2 եզները։ Ինքն ալ մեռաւ։

Ախպօր Մենաւորում ունեցած գործունէութեան ժամանակ, վանքում գիւղացի 2 զինուորներ կային. յաջողեցինք դոցա թիւը 7ի հասցնել։ Բայց նկատելով, որ ծախքերն շատ են, վերջերս, Աւարայրի ընկերների հետ խորհրդակցելով, որոշեցինք դոցա թիւը իջեցնել 4ի, նշանակելով իւրաքանչիւրին տարեկան 40 թուման թոշակ. պայմանագրութիւնը կնքել է ընկեր Մալխասը։ Տեղական շրջանների փոխադրութեան գործին երբեմնապէս ինքս մասնակցել եմ սուրհանդակներուն հետ անձամբ, վտանգաւոր դէպքերում կասկած չյարուցանելու համար։

Նկատելով, որ Շամ տանող երկու գծերը այլեւս իրենց նպատակին չէին ծառայում, 1905ի գարնան ընկերներում մի ուրիշ գիծ պատրաստեցինք՝ Արճակի վրայով ուղիղ Շամ, եւ այս տարուայ փոխադրութիւնները ընդհանրապէս այս գծով են եղել ապահովապէս։ Աշնան սկզբներում մի նոր գիծ եւս պատրաստել ենք Կովկաս թերթեր եւ զինուորներ փոխադրելու համար, որից մի քանի անգամ յաջող փոխադրութիւն անելուց յետոյ, վերջերս 45 գաղթականների Կովկաս անցնելու եւ ճանապարհին սպանուելու պատճառով՝ խանգարուած է. որով Մենաւորի կայարանը ունի վեց գիծ, որոնցից մէկը՝ Աւարայրից Մենաւոր, մէկը՝ Մենաւորից Կովկաս, մէկը՝ Մենաւորից Արարլու, իսկ երեքը՝ Մենաւորից Շամ։

Փոխադրութեան ժամանակ 2–10 սուրհանդակներ

երթեւեկում էին վանքը, չհաշուած երկրից եկած զինուորներն ու գաղթականները, որոնք առիթին սպասելու համար, 4ից 10 օր մնում էինք վանքը։ Այդպիսով Մենաւորը ո՛չ թէ միայն իբրեւ կարեւոր կայարան է ծառայում Հ. Յ. Դաշնակցութեան, այլեւ պատսպարան՝ գաղթականութեան։ Որով միշտ նոյն աղքատիկ Մենաւորի վրայ ահագին նիւթական ծանրութիւն գալով՝ այժմ մասամբ պարտքի տակ է ընկել։

Տեսութիւն

Մեր հնգամեայ պաշտօնավարութեան [ընթացքին] գրեթէ 7–8 անգամ կառավարութեան կողմից մանրակրկիտ խուզարկութիւններ եղել են, մանաւանդ ներկայ տարուայ Յունիսի սկզբներին, որը ամենախիստն էր։ Ուրախ եմ յայտարարելու, որ ո՛չ մի դէպքում կազմակերպութեան ընկերները, զինուորները եւ մթերքները չեն բռնուած, ի բաց առեալ վանքի իրեղէնների եւ ուտեստի պաշարից։ Սակայն վանքը իր անբասիր վարքը անաղարտ պահեց պարսիկների առաջ։ Եւ որովհետեւ ներկայ կովկասեան հայ–թրքական ընդհարումների պատճառով տեղացի պարսիկների մէջ լարուած դրութիւն է, եւ այդ առթիւ Մենաւորն էլ վտանգից կարող է զերծ չմնալ, ուստի անմիջական օգնութեան մեծ կարիք կայ։

Պահանջք

1. Տեղական հայութիւնը ներկայ տագնապում ապահովել։

2. Համամարակող գաղթականութեան առաջն առնելու համար, Քիշմիշքէփէից Դավալու գաղթած 5 տնուորները եւ 42 մարդիկը վերադարձնել։

3. Սարգիս Սարուխանեանը անպայման ինձ ընկեր նշանակել։

4. Մենաւորի գործիչներին (մեզ) լիազօրութիւն տալ՝ ի հարկին անհրաժեշտ համարուածը կարգադրելու եւ յետոյ տեղեկագրելու կեդր. Կոմիտէին։

5. Փոխադրութեան համար եղած 1126 ղուռն 11 շահի պարտքը վճարել։ Նաեւ Ատրպատականի Կեդր. Կոմիտէի 1905 Ապրիլ 30, եւ 27 համարաւ խոստացած 500 թուման վճարել, փոխադարձ Կազմակերպութեան ընկերների երթեւեկութեան եւ ձիերու եւն. ծախքերի փոխարէն. որով վանքը բարւոքելով եկամտի աղբիւրներ կ՚ապահովի։

6. Ներկայ տարուայ սկզբին Աւարայրում ընկերների որոշած՝ Եղօ խանին նուիրուելիք բրաունինկ ատրճանակը անհրաժեշտ է տալ։

7. Վանքի հաշուով գնուած 9 թուման արժողութեամբ սեղանը Փայլակից պահանջել, որ իր կողմից նուիրել է Խոյի դպրոցին՝ ինքնագլուխ։

8. Մենաւոր բնակող երկու կիները հեռացնել, որոնք չարժաւորիթ են եղել մի կարգ խառնակութեանց։

9. Երկիր անցնող տեղացի զինուորի ընտանիքին օգնել հա՞րկ է կազմակերպական դրամով։

10. Տեղացի վարձուած չորս սուրհանդակներուն (Աւարայրում պայմանագրուած) տարեկան 40 թուման թոշակին գոհացում տալ։

11. Վանքի տրամադրութեան տակ դնել 2 բերդան հրացաններ եւս։

12. Գոնէ տարին 2 անգամ շրջիկ քննիչ ուղարկեն, մեր գործունէութեան մօտից ծանօթանալու համար։

1905 Յունվ. 1ից մինչեւ Դեկտ. Մենաւորի ելեւմուտքի հաշիւը.

Մուտք	Ելք
11752 ղուռն 12 շահի	12879 ղուռն 3 շահի
1126 » 11 »	պահանջք մնում է
12879 » 3 »	

Մենաւորի ներկայացուցիչ՝
ԸՆԹԱՑՔ

1906 Փետր. 6, Վրէժ

(Կը հետեւի ցուցակ մը՝ «Մենաւորում գտնուած Հ. Յ. Դաշն. իրերը»)։

12.— ԵՐԵՔ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԹԱՒՐԻԶԻ ԿՈՄԻՏԷԷՆ

Ա) ՏԵՂԵԿԱԳԻՐ ՎՐԷԺԻ ԿՈՄԻՏԷԻ 1905–1906

Նամակի երկարութիւն մեծ թուղթի մը վրայ, 3 էջ, սեւ մելանով։

1906 Փետր. 4, Վրէժ

Կոմիտէն իր գործունէութիւնը սկսել է 1905 թ. Յունուար 19ից, երբ ունեցել է նա իր առաջին նիստը եւ ամբողջ տարուայ ընթացքում, գումարելով 26 նիստ, զբաղմունքի առարկայ է դարձրել իր շրջանի յեղափոխական գործունէութիւնը եւ խմբակների արդիւնաւոր աշխատանքի վերաբերող խնդիրները։

Տարուայ սկզբին նախկին կոմիտէից իր հսկողութեան է յանձնուել 11 խումբ — 1) Ախպէր, 2) Կայծակ, 3) Արիս, 4) Միածան, 5) Անդրանիկ, 6) Յոյս, 7) Վահան, 8) Բարգէն–Սիւնի, 9) Աւետիսեան, 10) Գէորգ Զաւուշ եւ 11) մի զինուորական խումբ՝ Զարմհալ։ Եղել է եւ աշակերտական միութիւն՝ բաղկացած երկու թաղի երկսեռ աշակերտ–աշակերտուհիներից, որոնք ուզել են գործել Դաշնակցութեան դրօշի տակ, բայց որովհետեւ կոմիտէն սկզբունքով մերժել է աշակերտական խմբակներ ճանաչել, խորհուրդ է տուել նրանց՝

զբաղուել միայն ինքնազարգացմամբ, որի ընթացքում խոստացել է տալ նրանց դասախօսներ՝ յեղափոխական դասախօսութիւններով ծանօթացնելու նրանց հայ քաղաքական կուսակցութիւնների եւ նրանց ծրագիրների հետ:

Վերեւ յիշատակուած խմբերից «Վահան»ը լինելով զուտ ուսուցչական խումբ, միւս խմբերի վերաբերմամբ կատարել է առհասարակ ղեկավարող դեր, իւրաքանչիւրը մի-մի խումբ է վերցրել եւ տուել նրանց, տարուայ ընթացքում, խմբական դասախօսութիւններ: Տարուայ ընթացքում «Զարմհալ» զինուորական խումբը, [անդամների] քաղաքից հեռանալու պատճառով լուծուած է, իսկ «Գէորգ Զաուշ»ը անդամների թուի նուազելու (քաղաքից հեռանալու) պատճառով միանում է «Կայծակ»ի հետ: Դրանց փոխարէն այս տարի աւելացել են, 1) Խան, 2) Փոխիկ, 3) Շաչօ, 4) Վազգէն, 5) Սերոբ Փաշա, 6) Մուրատ եւ 7) Քեռի խմբակներ, որով տարուայ վերջում մեր խմբերի ցանկը իր բիւրղէով, տարեկան մօտ 5000 դրան անդամավճարներով եւ անդամների թուով հետեւեալ պատկերն է տալիս.—

1. Անդրանիկ	13	անդամ	9. Ճոյս (կնոջ.)	26	»
2. Աւետիսեան	9	»	10. Սերոբ Փաշա	11	»
3. Ախպէր	17	»	11. Խան	6	»
4. Արիս	18	»	12. Փոխիկ	14	»
5. Բարգէն-Սիւնի	9	»	13. Վազգէն	18	»
6. Կայծակ	10	»	14. Շաչօ	12	»
7. Մուրատ	16	»	15. Քեռի	6	»
8. Միածան (կանանց)	16	անդամ			

Սրանց խմբապետները, Վրէժի խմբապետական ժողով անուան տակ, ունեցել են իրենց պարբերական ժողովները:

«Վահան» ուսուցչական խումբը տարուայ կէսերին վերակազմուելով ստացաւ այլ կերպարանք, այն է՝ ազատ լինելով խմբական պարտաւորութիւններից, ինչպէս եւ նիւթական դրամական հաշիւներից՝ նուիրուեց միայն Հ.Յ.Դ. յեղափոխական պրոպագանդի գործին, կոչուելով «Հ.Յ.Դ. պրոպագանդիստ յանձնախումբ»: Յանձնախումբը իր նպատակների շարքում դրել է, ի միջի այլոց. 1) բաժանուելով մեր խմբակներում, լինել այդ խմբակների դասախօս անդամներ, 2) տալ պրոպագանդին օգնող մի շարք հրապարակային դասախօսութիւններ, 3) զարկ տալ յեղափոխական գրականութեան եւ տարածել ու ժողովրդականացնել յեղափոխական բրոշիւրներ եւ գրուածքներ եւ 4) տալ Վրէժի կենտ. կոմիտէի շրջանի համար շրջիկ պրոպագանդիստներ՝ դպրոցական պարտաւորութիւններից ազատ ժամանակ: Իր առաջադրած նպատակներից «Վահան» յանձնախումբը գործադրել է առայժմ առաջին երկուսը: Կոմիտէս կազմել է եւ մի յեղափոխական գրադարան, առայժմ 150 կտորի չափ ընտիր գրքերից եւ դրել նրան՝ «Վահան» յանձնախմբի տրամադրութեան տակ: Կոմիտէս կազմակերպել է նաեւ մի շարք հրապարակային դասախօսութիւններ, օգտուելով զանազան գործիչների եւ ձեռնհաս անձանց քաղաքումս ներկայութիւնից. դրանց մէջն են եւ «Վահան» յանձնախմբի տուած դասախօսութիւնները: Այդպիսի դասախօսութիւնների թիւը անցեալ տարուայ ընթացքում եղել է եօթն. 1) Ազգայնական շարժումները Եւրոպայում, 2) Սոցիալիզմ (4 դասախօսութիւն), 3) Տաճկահայաստանի ներկայ դրութիւնը եւ Հ. Յ. Դ.ը Տաճկահայաստանում, 4) Մարդկութիւնը իր նախնական շրջանում, 5) Դաշնակցութիւն եւ Սոցիալիզմ, 6) Հայ ազգի ծագումը, 7) Ազգայնութեան գործօնները: Բացի այդ, Մարտ ամսում Քրիստափորի յիշատակին կազմել է մի ազահանդէս-հոգեհանդիստ, Փետր. 10ին՝ մի ներկայացում «Ախպէր» խմբի միջոցով, Փետր. 19ին մի հայկական մեծ երեկոյթ՝ Ղալայի կանանց «Ճոյս» խմբի միջոցով, Ապրիլին մի ներկայացում «Կայծակ» խմբի միջոցով, Մայիս 7ին երեկոյթ՝ Լիլաւայի «Միածան» կանանց խմբի միջոցով, «Մուրատ» խմբի միջոցով մի ներկայացում եւ Անդրանիկի երկիր մտնելու տասնամեայ գործունէութեան տօնակատարում, եւ մի ներկայացում էլ Նոյ. 12ին՝ կոմիտէիս հովանաւորութեամբ:

Տարուայ ընթացքում կոմիտէս, կ. Կոմիտէի հետ խորհրդակցելով, որոշել էր դաշնակցական տուրք նշանակել բոլոր այն անձանց վրայ, որոնք ոչ մի դէպքում թէ՛ նիւթապէս եւ թէ բարոյապէս մասնակցութիւն չեն ունենում յեղափոխական գործին, բայց տեղական Ինքնապաշտ. Կոմիտէի ձեռնարկած կրկնակի հանգանակութիւնը խանգարեց իրագործելու մեր այդ որոշումը: Այստեղ հարկ ենք համարում նկատել, որ առհասարակ այս տարուայ ընթացքում Կովկասում տեղի ունեցող հայ-Թրքական ընդհարումներն ու ինքնապաշտպանութեան գործը մեր շրջանում (որի Ինքնապաշտ. Կոմիտէն ընտրուել է Հ.Յ.Դ. նախաձեռնութեամբ) վնասել է կազմակերպութեան նիւթականին եւ կոմիտէիս այս տարուայ եկամտի նուազելու գլխաւոր պատճառն է կազմում:

(Տեղական զինման եւ ինքնապաշտպանութեան գործի համար տեղեկագիր կը տայ Ինքնապաշտպանութեան Կոմիտէն):

Կոմիտէս, համաձայն անցեալ տարուայ Պատգամաւորական Ժողովի որոշման, միջամտել է տեղական հասարակական գործերին. ընտրական պայքար է մղել ընտրութիւնների ժամանակ եւ, շնորհիւ դրան, Լիլաւայի ուսումնարանը գտնւում է դաշնակցական հոգաբարձութեան եւ ուսուցչական կազմի ձեռքում, որ տանում է դպրոցական գործը դաշնակցական ոգիով: Նոյնպէս եւ Լիլաւայի գրադարանը: Կոմիտէս ստացել է իւրաքանչիւր ամիս 1515 օրինակ «Դրօշակ», շաբաթական 50 օրինակ «Հայրենիք» եւ հրատարակութիւններ ու բրոշիւրներ, եւ ուղարկել է Ախ եւ Փայտակարան, կովկաս փոխադրելու համար: Դրանց մի մասն էլ բաժանել է տեղական խմբերին, բաժանորդներին եւ ուղարկել ուրիշ քաղաքների մեր շրջանի մարմիններին: Հայ-Թրքական ընդհարումների պատճառով փոխադրական գործը կազմել է:

Հնչակեանները Թաւրիզում ունին մի մասնաճիւղ՝ երկու խմբակներով, մէկ արական եւ միւսը կանանց. Թիւը մօտ 40–45: Հնչակեան վերջին համաժողովից յետոյ (Պարիզ), նոքա ինչպէս երեւում է բաժանուել են 2 Ֆրակցիաների, որոնց գլխաւորները՝ մեծամասնութիւնը՝ իրենց յայտարարել են սոցիալ-դեմոկրատ, իսկ մնացած մասը գործել են ուզում հին՝ երկդիմի ուղղութեամբ:

Հայ ազգաբնակութեան Թիւը Թաւրիզում հասնում է 4000ի, բաժանուած 750 տան վրայ, որից 500ը Լիլաւայում, իսկ 250ը՝ Ղալայում: Հայերն ունին 2 եկեղեցի, իւրաքանչիւր Թաղում մի-մի հատ, իրենց երկսեռ ուսումնարաններով. Ղալայի ուսումնարանի աշակերտ-աշակերտուհիների Թիւը 250 է, իսկ Լիլաւայինը՝ 330: Ազգային միւս հաստատութիւններն են Ղալայի եւ Լիլաւայի գրադարան-ընթերցարանները, որոնց վարչութիւնները դաշնակցականների ձեռքում է: Առաջնորդարան՝ առանց առաջնորդի, եւ մի արգատիպ տպարան առաջնորդարանին կից: Տարուայ սկզբներին դադարեց Հայր Մաշտոցի ձեռքով հիմնուած «Ազդարար» շաբաթաթերթը, նիւթական միջոցների սղութեան պատճառով, եւ մեր կազմակերպութիւնը հրաժարուեց նրան հովանաւորելուց եւ վերականգնեցնելուց, որովհետեւ նախ վստահ չէր, թէ նրա ղեկավարութիւնը կարող է միշտ կամ գոնէ երկար ժամանակ իր ձեռքում մնալ եւ որ գլխաւորն է, դա կարող էր կառավարութեան մի փոքրիկ կամայականութեան զոհ դառնալ, դարձնելով եւ մեր ջանքն ու աշխատութիւնը ապարդիւն: Թաւրիզում գոյութիւն ունին եւ մի քանի ընկերութիւններ.—

Ա) Լսարանական (որ այս տարի գոյութիւն չունի), Բ) Հայուհեաց Բարեգործական Միացեալ Ընկ., Գ) Հակալիկոսական Ընկ., Դ) Աղքատախնամ, Ե) Դպրոցական Բարեսիրական Ընկ. եւն.:

Կոմիտէի բիւդջէն այս տարի.—

Խմբերի անդամավճարներ՝	4716	դրան	10 չահի
Ներկայացում, վիճակախաղ, Աւետիս եւն.	7313	»	15 »
Գումար՝	12030	դրան	5 չահի

ԱՆԱՆ, ՈՍՏԱՆԻԿ, ՌՇՏՈՒՆԻ, ՎԱՉԳԷՆ

Բ) ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ. Յ. Դ. ՎՐԷԺ ԿՈՄԻՏԷԻ

Նամակի երկար չափի երկթերթ թուղթի մը վրայ, 3 էջ, սեւ մելանով: Ստորագրուած չէ:

Վրէժ, 25 Նոյեմբեր 1906

Եօթը անդամից բաղկացած կոմիտէս ընտրուել եւ պաշտօնի գլուխ է անցել 1906 Մարտ 9ից: Կոմիտէի իրաւասութիւնը այս տարի աւելի ընդարձակուած էին եւ, բացի Վրէժից, նրան էր յանձնուել Ածխահանի, Սարգահան եւ Ախի շրջանները (որոնց պատգամաւորները մասնակցել էին կոմիտէիս ընտրութեան). Վերջնում եղած մի խումբն էլ այժմ լուծուել է. կան միայն անհատներ:

Նախկին կոմիտէից ստացել է 16 խումբ եւ մի «Վահան»՝ պրոպագանդիստ մասնախումբ: Տարուայ ընթացքում դրանցից մի քանիսը լուծուել են անդամների քաղաքից բացակայելու պատճառով, մի քանիսը բաժանուել եւ մի քանիսը մնացել, այնպէս որ այժմ Վրէժում կան 17 խումբ՝ որոնցից 2ը կանանց (25ական անդամ), 1 զինուորական (9 հոգի) եւ մի «Վահան» պրոպագանդիստ մասնախումբ: Անդամների ընդհ. Թիւն է 200. անդամավճար՝ 500 Թուման, ներկայացում եւն.՝ 600 Թուման:

Կոմիտէս ընտրուելուց անմիջապէս յետոյ ձեռնարկել է ենթակոմիտէների ընտրութեան, սակայն մի քանի ամսից յետոյ, նկատելով որ գործերը ձգձգւում են անդամների քաղաքից հեռացած լինելու պատճառով, որով խմբային գործերը անկարգ դրութեան մէջ էին գտնւում, կ. Կոմիտէի հետ խորհրդակցելուց յետոյ որոշեց միայն անուանապէս Թողնել ենթակոմիտէներ, իսկ խմբերին վերահսկելու եւ նրանց զբաղմունքներին ուղղութիւն տալու համար հրաւիրել խմբապետական ժողով՝ պարբերաբար 2 կամ շաբաթը մի անգամ, ինչ որ այժմ շարունակւում է:

Ենթակոմիտէների գոյութիւնը շարունակւում է Սարգահանում եւ Ածխահանում: Առաջինում կայ մի ենթակոմիտէ: Սկզբում ունեցել են 3 խումբ, այժմ՝ 6, որոնցից 1ը կանանց: Անդամների ընդհ. Թիւը՝ 70: Տարեկան բիւդջէն՝ 100 Թուման:

Ածխահանում կան 6 ենթակոմիտէներ. խմբերի ընդհ. Թիւը՝ 74, անդամների Թիւը՝ 560: Տարեկան բիւդջէն՝ 120 Թուման: Ներկայումս մտածւում է զբաղուել, վերակազմել եւ գործը կանոնաւոր հիմքերի վրայ դնել այդ շրջանում:

Վրէժում եղած պահանջին բաւարարութիւն տալու համար, կոմիտէն ձեռնարկել է կազմակերպել պրոֆէսիոնալ միութիւններ՝ դերձակների եւ կօշկակարների: Քաղաքում գտնուած այդ 2 կարգի հայ աշխատաւորները համարեա Թէ բոլորն էլ մասնակցում են միութիւններին. առաջինը բաղկացած է 34 հոգուց, երկրորդը՝ 20ից: Մի քանի ամսուայ ընթացքում երկուսն էլ լաւ

կազմակերպուելուց յետոյ, թէ՛ անհատական — մասնաւոր ջանքերով եւ թէ գործադուլներով որոշ չափով իրաւունքներ են ձեռք բերել եւ պահանջներին բաւարարութիւն ստացել, օգտուելով միշտ կոմիտէիս հովանաւորութիւնից: Այսպէս կօշկակարների 2 խանութներում գործադուլները բաւական յաջող արդիւնք են տուել, իսկ դերձակների ընդհանուր գործադուլը — յայտարարուած վարպետների դրած անտեղի եւ սահմանափակիչ պահանջներին ի պատասխան — ամբողջ 2 ամիս տեւելուց յետոյ՝ վերջացաւ բանուորների յաղթանակով,— գոյութիւն ունեցող սակագնի 30% աւելացումով:

Կոմիտէս խմբակներում գտնուող անգրագէտների համար հիմնել է մի գիշերօթիկ (?) դպրոց: Սովորողների թիւը հասնում է մօտ 30 հոգու: Մուտքը յայտարարուած է ազատ. կան եւ ոչ դաշնակցական սովորողներ: Մտածւում է նման դպրոց հիմնել անգրագէտ կանանց համար: Հոգացել է Դաշնակցութեան գրադարանի ճոխացման մասին եւ գրքերի թիւը հասցրել է մինչեւ 350ի: Օգնել է Սարգսեանի ենթակոմիտէին՝ կազմելու նոյն ձեւի գրադարան:

Մինչեւ «Դրօշակ»ի մուտքը Պարսկաստան արդիլուելը, կոմիտէս իւրաքանչիւր ամիս ստացել է 1500–1700 օրինակ եւ անց է կացրել Կովկաս. նոյնպէս եւ զանազան հրատարակութիւններ եւ բրոշիւրներ:

Անցեալ կոմիտէից եղած պրոպագանդիստ «Վահան» մասնախումբը, վերակազմուելով, ամէն մի խմբին տուել է առանձին դասախօսներ(*). Ցունուարից–Մարտ տրուել են 6 հրապարակային դասախօսութիւններ,— 1) Արեւելեան խնդրի շուրջը, 2) Դաշնակցութեան տակտիկան, 3–4) Ազգայնութեան ֆակտորները, 5) Ընդհանուր ակնարկ մեր անցեալի վրայ եւ 6) Գաղթականութիւններ: Զանազան արգելութիւններ թոյլ չը-տուին Մարտից յետոյ չարունակել հրապարակային դասախօսութիւնները, մինչեւ Հոկտ. 15, երբ կրկին վերսկսուեց: Տրուել են 2 դասախօսութիւններ,— 1) Դաշնակցութեան դէմ եղած բողոքները, 2) Տաճկահայ եւ Կովկասահայ գործունէութիւն եւ նրանց առընչութիւնը: Շարունակաբար տրուելու են հետեւեալները,— 1) Ազգային հարց եւ սոցիալիզմ. 2) Ֆէդերացիա եւ կենտրոնացում. 3) Պրոֆէսիոնալ միութիւններ. 4) Ի՞նչ են դեմոկրատական կարգերը. 5) Ագրարային հարցը. 6) Գիւղացին եւ բանուորը. 7) Ցեղ. կուսակցականների մասնակցութիւնը տեղական–տնտեսական–կուլտուրական գործերում. 8) «Էս–Էր»ներ եւ Ս. Դեմոկրատներ. 9) Քաղաքական կուսակցութիւններ. 10) Հայկական յեղափոխական կուսակցութիւններ. 11) Կանանց հարցը եւ 12) Պետական ձեւեր:

(*) Կոմիտէիս տրուած զինավարժներով, թէ՛ խմբերում եւ թէ կոմիտէիս միջոցով կազմուած ինքնապաշտ. խմբերում՝ զինավարժութեամբ են պարապել:

Ի յիշատակ Խանասորի եւ Բանկ Օտոմանի, կազմակերպել է մի ձրի երեկոյթ: Օգուստ կազմակերպութեան առայժմ տրուել է մի ներկայացում:

Կոմիտէս ի նկատի ունենալով Թղթախաղի լայն ծաւալ ստանալը եւ դաշնակցական շրջանակները վարակելը՝ մի թռուցիկով յորդորել է հեռու կենալ այդ ախտից:

Իր իրաւասութեան տակ գտնուած շրջաններից Ածխահան եւ Սարգսահան ուղարկել է երկ–երկու շրջիկ:

Մասնակցել է տեղական հասարակական գործերում եւ ընտրողական պայքար է մղել: Աջակցել է դաշնակցական ընկերների եւ ուսուցիչների նախաձեռնութեամբ արծարծուող պարտադիր ուսման հարցի իրականանալուն՝ Լիլաւայում:

Կոմիտէիս տարեկան բիւջէն,—

Ընդամենը՝	720 թուման
Ներկայացում, վիճակախաղ, աւետիս եւն.	600 »
Գումար՝	1320 թուման

Տեղի ունեցած պարսկական շարժումներում չէզոք դիրք է բռնել, ի նկատի ունենալով Դաշնակցութեան չէզոք դիրքը Պարսկաստանում:

Հայերն իրրեւ քաղաքացիներ էլ չեն մասնակցել այդ շարժումներին, հետեւեալ նկատումներով.— 1) Կազմակերպութեան անգոյութիւնը պարսիկների մէջ. շարժումը առաջացրել են մի քանի աղաներ եւ հոգեւորականներ, որոնք այժմ ինքնակոչ ներկայացուցիչներ լինելով բռնութիւն էլ սեփականացրել են եւ իրապէս տիրապետում են խաւար ամբոխի վրայ: 2) Եղած շարժումների կրօնական եւ զուտ ազգային ձգտումները: 3) Դրուած պահանջների չափազանց անբաւարար լինելը՝ հայերի համար:

Գ) ՎԻԼԷԺԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԷԿ ՏԱՐՈՒԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

1905 թիւ

Նամակի մեծ չափի երկերեք թուղթ, մօտ 4 էջ, սեւ մելան:

17 Փետրուար 1906, Վրէժ

1905 թ., Հ. Յ. Դաշնակցութեան Ատրպատականի կեդրոնական կոմիտէի կարգադրութեամբ, Վրէժում կազմուեց Ինքնապաշտպանութեան կոմիտէ. նա յայտարարուեց «Վրէժի Ինքնապաշտպանութեան կոմիտէ» եւ ունեցաւ այդ անուամբ կնիք:

Նկատի ունենալով հակառակորդ կուսակցութիւնները, որ կարող էին խանգարել, նկատի ունենալով չէզոքների մասնակցութեան անհրաժեշտութիւնը, հանգանակութեան թէ այլ խնդիրներում՝ կոմիտէն դրուեցաւ չէզոք հողի վրայ:

Ժողովը պարտականութիւն դրեց կոմիտէի վերայ՝ բանակցութեան մտնել ուրիշ կուսակցութեանց եւ տեղիս վարչական այլ մարմինների հետ:

Կոմիտէս դիմեց հնչակեաններին իւր մի անդամի միջոցաւ. ստացուեց բացասական պատասխան հետեւեալ բառերով.— «Մեզ չի հետաքրքրում ինքնապաշտպանութիւնը»: Եւ այդպիսով կոմիտէն կտրեց իր բոլոր յարաբերութիւնները: Թէեւ քանիցս անգամ նրանք դիմել են, թողուել է անուշադրութեան:

Կոմիտէն դիմեց պաշտօնական գրութեամբ Թեմական Խորհրդին, ձեռնարկուեց հանգանակութեան, ըսկզբներին՝ անցաւ սպասուածից աւելի [յաջող], բայց հակառակ կուսակցութիւնը դիմեց մի շարք ստոր միջոցների, որոնց մանրամասնութիւնը աւելորդ ենք համարում յիշել: Շարունակուեց հանգանակութիւնը, բայց Թեմական խորհրդի անդամները մի քանի օրից արդէն մաս–մաս յետ քաշուեցին, վախենալով իրենց կաշուից: Առաջին ձեռնարկութեան հաւաքուեց 12430 զուան: Ստորագրուեցին: Այդ գումարը գործադրելուց յետոյ ձեռնարկեց երկրորդ հանգանակութեանը, որ մինչեւ օրս չարունակւում է եւ եղել է մօտաւորապէս 26000 զուան: Արդէն ստորագրուած է Ինքնապաշտպանութեան Կոմիտէի հաշիւը: Մանրամասնութիւնները տեսնել մատեանում:

Առաջին անգամ եղել է 12430 զուան.

Գնուած է՝	2 մոսին,	ծայր՝	2300
	13 բերդան,	»	3150
Գօտիներ՝	31 հատ		
Մաուզերի ատրճանակ	1 »	»	100

Երկրորդ անգամ 25000 զուան (մի մասը դեռ չէ գանձուած).

Գնուած է՝	2 մոսին,	1125 ծայր
	4 բերդան,	3100 »
	գէլգի՝	9000
4 մանիխեր		475 ծայր
տաճկական մաուզերի ծայր՝		350
պիստոն՝		4000
վառօդ՝		28 ֆունտ
գործիքներ լցնելու՝ 2 հատ.		

եւ մի շարք մանր գործիքներ եւ մթերքներ,— կապար, քանդելու բարձաներ (?), իւղամաններ, եւայլն:

Ուրեմն, ներկայում կայ,—

Հրացան՝ մոսին	4,	ծայր	3425
» բերդան	17,	»	6250
» մանիխեր	4,	»	475
Տաճ. մաուզերի ծայր՝			350
Ատրճանակի ծայր՝			100

Տեղացիների հաշուին գնուած է, Ինքնապաշտպանութեան Կոմիտէի միջոցաւ, Վրէժում—

Բերդան՝	32 հատ,	2500	ծայր
Մարթին՝	3 »	2500	»
Մոսին՝	8 »	800	»
Մանիխեր եւ Մաուզեր՝	4 »	450	»
Ատրճանակ՝	30 »		

Գաւառներից եղել է դիմում: Գնուած են՝

Մուժամբար,	4 բերդան,	800	ծայր
Ղարադաղ,	11 » ,	2000	»
Զանգեզուրցիների համար՝	3 » ,	300	»
» »	2 մարթին,	200	»
Աքուլիս,	1 բերդան,	100	»
Մարաղա,	3 » ,	300	»

Վրէժ քաղաքում եղած հրացանների թիւը.—

Ղալա —	Մարթին	20 հատ	
	Մոսին	4 »	64 հատ
	Բերդան	40 »	
Լեղաւան —	Մարթին	30 հատ	
	Մոսին	8 »	123 հատ
	Բերդան	75 »	
	Մաուզեր	10 »	
		Գումար՝	187 հատ

Ատրճանակներով զինուած է քաղաքիս հայերի 45%ը, գուցէ մի փոքր աւելի:

Բացի վերոյիշեալներից, Ինքնապաշտպանութեան Կոմիտէն պահել է, իւր հաշուին, զինուորներ, չինել է դիրքեր, մի քանի տեղեր՝ իւր հաշուին՝ կատարել է մանր, աչքի չզարնող գործողութիւններ, որոնց մանրամասնութեան հաշիւը չի պահուած, տուել է մի քանի դասախօսութիւններ կանանց՝ վիրակապութեան մասին, ցոյց է տրուած անհրաժեշտ գիտելիքներ խընձորների մասին, արել է փորձեր զինավարժութեան, եւայլն:

Տրամադրել է զինուորներ տեղացիներից՝ առանց զէնքի 60 հոգի, իրենց զէնքով՝ 218: Դրանց մէջ չեն հաշուուած Հ. Յ. Դաշնակցութեան զինուորները եւ գործիչները:

Կազմեց՝ ՊԵՏԿԱ

(1) Այս տեղեկագրին մէջ ուս թազմիցս յիշատակուած Արմենակը, ամենայն հաւանականութեամբ, Օխիկեանն է (Սլաֆ):
(2) Վարդան Շահպազ:
(3) Ռուբէն Դերձակեան:
(4) Կոկնարկուի հաւանօրէն Անդրանիկին:

13·— Հ· Յ· ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՎՐԷԺԻ «ԽԱՐԻՍԽ» ԱՐՀԵՍՏԱՆՈՑԸ

Մի փոքրիկ պատմական տեսութիւն Արհեստանոցի մասին

Հ· Յ· Դաշնակցութեան Թաւրիզի գինագործարանին մասին պատմական այս ակնարկը, որ մաս կը կազմէ Վրէժի կ· կ·ի թուղթերուն, պատրաստուած կը թուի ըլլալ Հ· Յ· Դ· 4րդ Ընդհանուր ժողովին ներկայացուելու համար:

Գրուած է սեւ մելանով, ճամակի ոճրմալ չափի յաջորդական (ոչ կարուած) երեք երկթերթ թուղթերու վրայ, մօտ 11 էջ: Ստորագրութիւն կամ կնիք չի կրեր:

Ի նկատի ունենալով Պարսկաստանի քաղաքական ազատ պայմանները եւ միեւնոյն ժամանակ Տաճկահայաստանի սահմանակից լինելը, Հ· Յ· Դաշնակցութիւնը՝ իր հիմնուելու օրից ձեռնարկել է Վրէժում բանալ զինուորական արհեստանոց, նպատակ ունենալով պատրաստել զէնք՝ Երկիր տեղափոխելու համար:

Զինագործութեան առաջարկը արել է Դաշնակցութեան հիմնադիրներից՝ ընկեր Խատիսեանը(1)· մանրամասնութիւնը պակասում են:

Արհեստանոցը բացւում է 1891ի վերջերին, զինագործ Քաթանեանցի միջոցաւ: Սկզբնական ամիսներում վերցւում են պատուէրներ՝ մասնաւոր գործերից, կառավարչական շրջաններից, եւն·· այդպէս էլ շարունակւում է մինչեւ 1892ի Յունուարը, երբ գալիս է Արիստակէսը (Կարոն)(2), որ իւր հետ բերում է քիչ քանակութեամբ Ռուսաստանից դեռ չվերջացրած զէնքեր (ճիշդ թիւը յայտնի չէ)· սկսում են փորձեր անել, անցնում է յաջող· ո՛չ մի ուշադրութիւն կառավարութեան կողմից: Խրախուսուած այդ յաջողութիւնից, Կարոն անցնում է Ռուսաստան, ձեռք բերելու աւելի մեծ քանակութեամբ [ապրանք]: Ճիշդ նոյն թուականին (1892ին) գալիս են Միհրանը, Երուանդը, Միքայէլը· ծաւալում է աշխատանքը, միշտ նոյն զգուշաւորութեամբ:

Կարոյին յաջողւում է ձեռք բերել թուով 500 հատ [հրացանի մասեր], որ ինքը անձամբ տեղափոխում է Վրէժ· բերում է իւր հետ նաեւ Արհեստանոցի համար մի քանի անհրաժեշտ գործիքներ (ծակելու մեքենայ, եւն)· 1899ին, հեռանում են Քաթանեանցը եւ Երուանդը՝ իրենց անձնական գործերի ստիպումով:

Գալիս է Լեւոնը(3)· դառնում են այդ թուին՝ 4: 1894ին Կովկասի ընկերների պահանջմամբ, հեռանում է Միհրանը:

Կարոն ապրանքների գնման ժամանակ Մոսկուայում նկատւում է· սկսում են նրան լրտեսել մինչեւ Վրէժ: Նկատելով որ այլեւս չի կարող շարունակել արհեստանոց յաճախելը, նա ստիպուած սկսում է աշխատել տանը:

Կասկածւում է նաեւ Միքայէլը, որին բռնելով աքսորում են հիւսիսային Ռուսաստան: 1895ին մնում է արհեստանոցում միմիայն Լեւոնը, եւ երկու աշակերտ՝ Յովհաննէս եւ Ռուբէն:

1895ին (?) որոշւում է կատարել արշաւանք դէպի Խանասոր: 1896ին, եղած արհեստաւորները շատ անբաւարար էին: Վրէժի ընկերների պահանջմամբ գալիս են Թորոս(3), Պետրոս, Մարգար արհեստաւորները՝ 1896 Յունուար 20ին:

Ի նկատի ունենալով արշաւանքի որոշումը եւ ժամանակի սղութիւնը, որոշ նախազգուշութիւններ թողնուեցին եւ գործը աւելի լայն ծաւալ ստացաւ, մինչեւ իսկ մասնաւոր գործեր մերժւում էին:

Այդ եռանդուն գործունէութիւնը շարունակուեց· ամէն օր 10ական հրացաններ արհեստաւորները հերթական կերպով տանում բերում էին տուն, արհեստանոց:

1896 Մարտին գալիս է արհեստաւոր Սամսոնը, եւ մինչեւ տարուայ վերջը աւելանում են՝ Կարօ՝ փոքր, Թորոս՝ փոքր, Մենակը, Փարսադանը, աշկերտներ՝ Գէորգը եւ Բալասանը· դառնում են թուով 13, որոնցից 4ը աշխատում էին տանը: Այդ ոգեւորութեան ժամանակ արհեստաւորները կատարում են եւ ուրիշ յանձնարարութիւններ,— ծայրեր պատրաստել, տեղափոխութիւն հասցնել:

Քաղաքական աննպաստ պայմաններից թելադրուած՝ արշաւանքը յետաձգւում է 1897ին: Ինչպէս ասացի, արհեստաւորները զբաղւում են նաեւ տեղափոխութեամբ: Մի տեղափոխութեան ժամանակ, 1896ին, Վրէժից–Մինարէթ ճանապարհին ձերբակալւում է արհեստաւորներից մէկը(4)· կառավարութեան ձեռքն է անցնում 14 հատ հրացան՝ 1000 ծայրով· մեծ կաշառքով ազատւում է(*): Ճիշդ այդ դէպքից 8 օր յետոյ պատահում է մի այլ դէպք,— այն է՝ Վրէժում մի տան մէջ պայթում է վառօդը, որից այրւում է մի զինուոր՝ Ջալալը (որը թաղուած է Վրէժի Թամարեան–Հայկազեան դպրոցի պատի տակ)· վիրաւորւում են երկուսը:

Ժամանակը շատ կարճ էր· պէտք էր աւելի ոյժ տալ· ստիպուած արհեստանոցի մի մասը տեղափոխեցին Մինարէթ· նաեւ գնացին մի քանի արհեստաւորներ· Մինարէթի արհեստաւորներին աւելացաւ նաեւ Աշոտ, որը Կովկասից ուղիղ այնտեղ էր գնացել:

Մինչեւ արշաւանք չինած հրացանների ճիշդ թիւը չունեմ ձեռքիս տակ, բայց նորէն 320–340 հաշւում եմ 95–96–97 թուին չինածները:

Արհեստաւորներից մի մասը մինչեւ արշաւանքին մէկ ամիս մնացած անցան Կովկաս· Փարսադանը Վազգէնի հետ անցաւ Երկիր(**):

1897ի Յուլիս 25ին կատարուեց արշաւանքը, որի

(*) Այս հրացանները ժամանակին շատ ամամ գնով ոնրից գնուեցին:

(**) Նահատակուել է Գաւրգէնի հետ՝ Մուշի Ցրսմի գիւղում:

մանրամասնութեան մէջ մեծ դեր ունէին արհեստաւորները· բայց թողնում եմ:

Արշաւանքին մասնակցեցին արհեստաւորներից իբրեւ զինակոչ՝ Կարոն(*), Աշոտը, Մարգարը, փոքր Թորոսը:

Արշաւանքից յետոյ դրութիւնը դառնում է դժուխային· սկսում է հալածանք նաեւ պարտից կառավարութեան կողմից: Այդ ժամանակ ձերբակալուեց մեր կազմակերպական կարեւոր ընկերներից Իշխանը՝ Մինարէթում· այդ ճնշման տակ թէ՛ արհեստաւորներ եւ թէ ուրիշ ընկերներ ցրուեցին· հալածանքը այն աստիճանի հասաւ, որ նոյնիսկ քիւրտերը վտանգ էին սպառնում Մինարէթին· դրանից մտահոգ՝ Վրէժում ձեռնարկում են ռազմամթերք հասցնել [Մինարէթ], որը անցնում է անյաջող, բռնւում է 10·000 ծայր· բայց բարեբախտաբար դրամները դեռ վճարած չեն լինում: Այդ հալածանքը տեւեց մինչեւ 1898 թ· Մայիս: 1898ին սկսում են խուզարկութիւն նաեւ Վրէժում, ձերբակալում են Արմենակը· ի միջի այլոց՝ փակում են Արհեստանոցը· բայց փակումը տեւում է մէկ օր· շնորհիւ ձեռք առած միջոցների, միւս օրը բացւում է:

Այդ դրութեան մէջ Մինարէթի զէնքերը պահում են թաքստոցներում: Սկսում է ըէակցիան: Ընկերների հեռանալը, դրամական կրիզիսը(5), Մինարէթի աննպաստ դրութիւնը յաջորդաբար ծանրացնում են եղած ընկերներին (արհեստաւորներին)· դրանց աւելացնենք Մինարէթի ենիչերութիւնները (?), որը հետեւանք էր ըէակցիայի: Այդ ճնշման տակ իսկ շարունակում են արհեստանոցի արհեստաւորները,— Թորոս եւ Սամսոն: 1898ի վերջերին, ընկերների պահանջմամբ, գալիս է Պետրոսը· արհեստաւորները դառնում են 3· Թորոսը իւր մասնաւոր գործերով անցնում է Կովկաս, Սամսոնը՝ Մինարէթ, Պետրոսը՝ արհեստանոց: Հենց այդ թուից Սամսոնը բոլորովին հեռանում է արհեստանոցից· հեռանում է նաեւ Թորոսը(3):

Վերոյիշեալ դրութիւնը նկատի ունենալով, արհեստանոցը սկսեց զբաղուել զուտ մասնաւոր գործերով:

Անցան սեւ օրերը աստիճանաբար· գործերը սկսում էին կանոնաւորուել, եւ մինչեւ 1901 թ·, արհեստանոց մնում էին Պետրոս եւ Սմբատ: 1901ին եկաւ Շահպազը(6), մի ամբողջ տարի մնալով, անցնում է Երկիր: Դրութիւնը լաւանում է կամաց կամաց: Արշաւանքի մնացորդ զէնքերը պէտք էր վերանորոգել, մի զէնք՝ որը (տարի ամբողջ մնացել է հողի տակ··· : Մարդկանց թիւը անբաւարար էր· ստիպուած՝ Պետրոսը անցնում է Կովկաս, արհեստանոցը կողպելով· ապա նա վերադառնում է, բերելով իւր հետ մի քանի արհեստաւորներ,— Սարգիս, Հաջի Լեւոն, Համբիկ, Երուանդ: 1902ի վերջերին սկսում է արհեստանոցի երկրորդ շրջանը· ձեռնարկում են 110 զէնք, չհաշուած մանր–մունր գործեր, որ շարունակ եղել են· արհեստաւորների թիւը դառնում է 6· աւելանում է Արշակը: Այդպէս շարունակւում է մինչեւ 1903 թ·: Սարգիսը(*) եւ Համբիկը(**) անցնում են Կովկաս, Հաջի Լեւոնը անցնում է Երկիր՝ 1904ին: Նոյն թուին գալիս է մի ընկեր, Գեղամը, խնձորներ չինելու (ձուլելու) յանձնարարութեամբ· ստացւում է այդ ձեռնարկութեան համար իրեր, բայց անարմար գտնուելով՝ մնում է անհետեւանք: Գալիս է նաեւ Նիկոլը: 1905ին վերջանում են հրացանները, որոնք ժամանակին մաս մաս տեղափոխւում են Մինարէթ: Վրէժում մնում է 18 հատ, որի ցուցակը կը ներկայացուի:

Ի նկատի ունենալով գործերի վերջանալը, արհեստանոցի ընկերներից Նիկոլ եւ Գեղամ անցնում են Կովկաս:

Նորէն աւելանում են, 1905ին, Պօղոս եւ Եփրեմ· սկսում են պարապել մասեր չինելով եւ մասնաւոր գործերով:

Թիւրք–հայկական ընդհարումները ի նկատի ունենալով, Պետրոս զբաղւում է ինքնապաշտպանութեան պատրաստութեամբ, ենթարկւում է կասկածանքների, եւ բոլորովին յաճախելը կտրւում է արհեստանոցից՝ 1905ին: Կատարւում է նոյն թուին մի խուզարկութիւն, բայց շատ քաղաքավարի· լինում է փոքր սպանութեան՝ արհեստանոցում (ենթադրում եմ Պետրոսի դէմ լինի): Ներկայ 1906ին, աշխատում են արհեստանոցում՝ Եփրեմ եւ Ղուկաս աշկերտը:

Այս պատմական տեսութիւնը կազմել եմ զանազան թերթիկներից եւ իմ անձնական յիշողութիւնից:

Արհեստանոցը յեղափոխական տեսակէտից թէ կատարել է իւր պարտականութիւնը՝ դա անպայման անուրանալի է: Բայց այսուհետեւ, ի նկատի ունենալով ներկայ քաղաքական պայմանները, թէ որքա՞ն կարեւոր է եւ անհրաժեշտ, վիճելի է:

⁂

Արհեստանոցի միջոցաւ կատարուել են հետեւեալ գործողութիւնները, հաշուելով 96 թուականից·—

Պատրաստուել է զէնք 600 հատ մօտաւորապէս գուցէ եւ աւելի·

Գնուել է ռազմամթերք,— ծայրեր՝ 170·000 հատ· Հրացաններ՝ 200 հատ:

(*) Կարոն սպանուում է արշաւանքի ընթացքին:

(*) Սարգիսը Զրաբերդում խնձորի պայթումից սպանուում է:

(**) Համբիկ մնում է իւր մահով, Փարսում:

Արհեստանոցում աշխատել են զինագործներ

Քաթանեան,
Երուանդ,
Արիստակէս (Կարս),
Թորոս,
Նիկոլ։

Պատրաստել է զինագործներ

Միհրան,	*Սամսոն,*
Միքայէլ,	*Հաջի Լեւոն,*
Լեւոն,	*Արշակ,*
Պետրոս,	*Գեղամ։*

Կէս զինագործներ

Մարգար,	*Փոքր Կարս,*
Փարսադան,	*Համբիկ,*
Միսաք,	*Երուանդ,*
Սարգիս,	*Շահբազ,*
Եփրեմ,	*Գէորգ,*
Պօղոս,	*Սմբատ,*
Փոքր Թորոս,	*Աւետիս։*

Նահատակուած զինագործներ

Կարս, արշաւանքին՝	*97 թ.*
Փարսադան, Մուշի Ցրօնք գիւղում, Գուրգէնի հետ,	*99 թ.*
Սարգիս, Զբաբերդում՝ խնձորից,	*1903 թ.*
Արշակ, Փոխիկի խմբի հետ,	*1904 թ.*
Համբիկ, Քարում (Թոքախից),	*903 թ.։*

Երկար ժամանակ երկրում մնացած

Շահպազ,	*901–905 թ.*
Հաջի Լեւոն,	*904–905 թ. (հիւանդութեան պատճառաւ վերադարձած)։*

Իսկական աշկերտներ եղել են.

Յովհաննէս, Ռուբէն, Աւետիս, Գէորգ, Սմբատ, Հայկ, Ղուկաս, Բալասան։

Ամբողջ արհեստանոցի կազմը եղել է, 15 տարուան ընթացքում, 36 մարդ։

Արհեստաւորները աշխատել են արհեստանոցում հետեւեալ տարիներին.

Անուն	Տարի
Քաթանեանց	91–92–93
Կարս	92–93–94–95
Միհրան	92–93–94
Երուանդ	92–93
Միքայէլ	93–94–95
Լեւոն	94–95–96
Թորոս	96–97–98
Մարգար	96–97
Պետրոս	96–97–98–99–900–01–902–903–904
Սամսոն	96–96–98
Փոքր Կարս	96–97
Փարսադան	96–97
Փոքր Թորոս	96–97
Միսաք	96–97
Բալասան	96–97
Աշոտ	96–97 (*Մեն. աշխատել*)
Արշակ	903–904
Երուանդ	902–903
Նիկոլ	904–905
Գեղամ	904–905
Պօղոս	905
Եփրեմ	904–905–906

Աշկերտներ

Անուն	Տարի
Յովհաննէս	95–96
Ռուբէն	95–96
Գէորգ	96–97–98
Սմբատ	98–99–900
Աւետիս	99–900–901
Հայկ	99–900
Ղուկաս	905–906

***

Զանազան ժամանակներում Երկիր տեղափոխուել են հրացանի մասեր,— շարոշկաներ եւայլն։

Արհեստանոցի հաշիւների մասին՝ տեսնել Կենտ. Կոմիտէի հաշուի մէջ։

Արհեստանոցի առաջադրութիւնները

1) *Վերացնել արհեստաւորների եղած տուները։*

2) *Տալ արհեստանոցը մասնաւոր մարդկանց՝ որոշ պայմաններով... (ծախքերի տեսակէտից)։*

3) *Կամ եղած արհեստաւորներին տալ որոշ դիւրութիւններ՝ պահանջների տեսակէտից, ինչպէս շարունակ անում են Երկրի ընկերները։*

4) *Արհեստաւորներին ազատել կազմակերպական եւ այլ գործերից. զբաղեցնել միայն արհեստանոցով։*

---

(1) Կ'ակնարկուի անկասկած Կոստանդին խատիսեանին։
(2) Արիստակէս Զօրեան, Ռոստոմի եղբայրը, նահատակուած Խանասորի կռուին։
(3) Արդեօ՞ք Դալուստ Աւոյեանը (որու կողմէ գործածուած ծածկանուններ են Լեւոն եւ Թորոս)։
(4) Ջնջուած անուն՝ Պետրոսը։
(5) Տագնապը։
(6) Վարդան Շահպազ։

Երեխայք		Ղարիբներ	Ընդամէնը
Տղայ	*Աղջիկ*	*Այր*	
97	97	40	577

Պարսիկ ազգաբնակչութիւն՝	50000 *հոգի*
Բագուեցի Թուրքեր՝ մօտաւորապէս	300 *հոգի*
Յոյն, ռուս եւ եւրոպացի՝ »	200 *հոգի*

Կան երեք հիւպատոսարաններ՝ անգլիական, ռուսական եւ տաճկական, իբրեւ բանգեր՝ անգլիական եւ ռուսական։

Ծանօթութիւն.— *Բագուեցի Թուրքերը քանի գնում՝ չատանում են. այստեղ կան մի քանի բագուեցի վաճառականներ, մնացեալները պարապւում են գլխաւորապէս կառապանութեամբ, չատերը փախստականներ են։ Կովկասի հայ-Թրքական ընդհարման ժամանակ նկատելի էր բաւականին գրգռութիւն. ինչ վերաբերում է տեղիս ազգաբնակչութեան, սպասածից քիչ էր վրդովմունքը. մի դէպք պատահեց. Բագուից եկած մի սէիտ փորձեց հակահայկական քարոզ անել, բայց ձերբակալուեց մեր միջոցով։*

Բ) Հայ ազգաբնակչութեան տնտեսական եւ քարոյական վիճակը.— *Ժողովուրդի գլխաւոր զբաղմունքը օղեվաճառութիւնը եւ խանութպանութիւնն է. կան որոշ թուով վաճառականներ եւ գործակատարներ։ Ազգաբնակչութիւնը քանի գնում՝ չատանում է։ Ռաշտի հայ հասարակութիւնը աչքի է ընկնում իր անօրինակ նուիրատուութիւններով. 106 տուն հայը տարեկան 4–5 հազար Թուման փող է տալիս իր ազգային կարիքների համար. միջին Թուով տան վրայ ընկնում է 40–50 Թուման։ Ժողովուրդը գտնւում է խաւար դրութեան մէջ. հինգ բաժանմունքով մի դպրոց կայ, որ այնքան դրական օգուտ չէ տալիս. աւարտողները, որ 14–15 տարեկան երեխաներ են, մտնում են կեանքի մէջ ծառայելով այս կամ այն խանութում. չատ քիչ է պատահում, որ մէկը իւր որդուն ուղարկի Ռուսաստան կամ արտասահման ուսանելու. ձեռնհաս մարդիկ էլ քիչ են որ կարողանային գոնէ կողմնակի միջոցներով (օրինակ՝ դասախօսութեամբ) օգտակար լինել ժողովուրդին։*

II Ռաշտի ազգաբնակչութիւն

Ա) Նախ քան խօսելը շրջանիս ժողովուրդի եւ դաշնակցական գործունէութեան մասին, մի քանի խօսք Ռաշտի ամբողջ հասարակութեան մասին։ Ռաշտում 106 տուն հայ է. վերածելով Թուերի՝ ստանում ենք

Ամուսնացած		Այրի		Զատիկաս	
Այր	*Կին*	*Այր*	*Կին*	*Այր*	*Կին*
90	87	7	34	89	36

III Տեղափոխական տրամադրութիւնը ժողովուրդի մէջ

Հայ յեղափոխութեան, Դաշնակցութեան ոյժը բարոյապէս բարձրացնում է ժողովուրդը, յեղափոխական գաղափարը քանի գնում՝ խորն է թափանցում ժողովուրդի խաւերի մէջ. երկու տարուայ Դաշնակցութեան գործունէութիւնը, որը առաջ եկաւ Կովկասեան ճընշումներից անմիջապէս յետոյ, ժողովուրդը արթնացրեց քնից եւ հասցրեց բաւականին ինքնագիտակցութեան։ Կովկասեան սարսափները, պարսկահայի փա-

փուկ դրութիւնը, ժողովուրդին տանում են դէպի ինքնապաշտպանութեան խնդիրը. միւս կողմից Ռուսաստանի շարժումը ունի իւր որոշ ազդեցութիւնը, եւ այդ բոլորը նպաստում են Դաշնակցութեան,— կազմակերպել ժողովուրդը, որի համար բնական պահանջ է դարձել յարիլ յեղափոխութեանը, մտնել այս կամ այն խումբը, մտնել պաշտպան արծուի թեւերի տակ եւ լինել դաշնակցական:

IV Դաշնակցութեան տեղիս դէմը

Ռաշիտ՝ 8 արական եւ 2 իգական (օժանդակ) խմբեր, Գորտ Արտուր՝ 5 արական եւ 1 իգական (օժանդակ) խմբեր, Գազազան՝ 4 արական եւ 1 իգական (օժանդակ) խմբեր. եւ Ռաշիտում՝ 1 մարտական եւ 1 ինքնապաշտպանութեան նորակազմ խմբեր:

Իւրաքանչիւր խմբում մասնակցում են 10–15 հոգի. տղամարդկանց ընդհանուր թիւը Ռաշիտի խմբերում՝ 95 հոգի է, որ կազմում է ազգաբնակչութեան 46%ը, կանանց ընդհանուր թիւը 37 է, որ կազմում է 22%ը կին ազգաբնակչութեան:

Ծանօթ.— Մի բան նկատելի է, որ տղամարդկանց մեծամասնութիւնը օտարական տղերք են:

Զէնք.— Խմբերի անդամներից (Ռաշիտում) միայն 60 հոգի ունի, ընդհանրապէս հասարակ ատրճանակներ՝ խղճալի թիւ փամփուշտներով:

Աչքի ընկնող զէնքը հետեւեալն է.— 10 հատ բրաունինգ, 8 հատ սմիթ–վեթսոն, 1 հատ պարաբելլում ատրճանակներ, 10 որսորդական, 5 հատ բերդան եւ 5 հատ մաուզեր հրացաններ. եթէ հաշուելու լինենք, միջին թուով իւրաքանչիւր ատրճանակին կ'ընկնի 25 հատ փամփուշտ, իսկ հրացանի՝ 100 հատ:

Բիւդջէ.— Շրջանիս ընդհանուր բիւդջէն կազմում է երկու հազար թուման. խմբերի ամսավճար Ռաշիտում՝ տարեկան 6000 ղուռն, Էնզելի՝ 3400 ղուռն, Ղազուին՝ 2600 ղուռն, ընդամէնը՝ 12000 ղուռն. երեկոյթներ, ներկայացումներ եւ կամաւոր նուէրներ բոլոր երեք քաղաքներից՝ 8000 ղուռն:

Ծանօթ.— Վեց ամսուայ մէջ Ռաշիտում տրուել է միմիայն երկու ներկայացում, որովհետեւ կովկասեան դէպքերը խանգարել են:

Բ. Տեղիս աչքի ընկնող հարուստներից Գ. Աւետիս Յորդանանեանը խոստացել է կենտրոնական կոմիտէի լիազօրին՝ տալ Դաշնակցութեան իւր որդու իրականը (?)՝ 2000 ֆրանք, որը մինչեւ օրս էլ դեռ եւս չենք ստացել:

Գ. Խմբական զարգացման գործը.— Որպէսզի յեղափոխական գաղափարի մասին հիմնաւոր հասկացողութիւն տրուի մեր խմբերին, կազմակերպութիւնս ծրագրել է մի շարք յաջորդական դասախօսութիւններ, բաժանելով նիւթը եւ խմբերը՝ ըստ իրենց մտաւոր կարողութեան:

V Կոմիտէի վեցամսեայ գործունէութիւն

Ա. Մեր վեցամսեայ գործունէութեան գլխաւոր կէտը եղել է ինքնապաշտպանութեան հարցը. դա մի հրատապ խնդիր է, որ այսուհետեւ միշտ պիտի զբաղեցնի մեզ:

Տեղիս ազգաբնակչութիւնը ցրուած է քաղաքիս տարբեր ծայրերում. միայն քաղաքի կենտրոնում, եկեղեցու մօտ, կան որոշ թիւ տներ, վերջերս սկսել են այդտեղ տներ վարձել բնակարաններ. մեր ջանքը պիտի լինի կարելիին չափ ժողովուրդը կենտրոնացնել մի թաղում: Կազմուել են մարտական եւ ինքնապաշտպանութեան խմբեր. զէնքի պահանջը շատ է, զէնք չկայ եւ եթէ կայ՝ շատ թանգ. փորձեցինք Կովկասից բերել, բայց այնտեղի էլ զէնքի սովը մի կողմից եւ անյարմարութիւնները միւս կողմից անհնար են դարձնում փոխադրելը. փորձեցինք Թեհրանից բերել, նոյնպէս ոչ մի շահ: Մեր նպատակն է կարելիին չափ օժանդակ խմբերը դարձնել ինքնապաշտպանութեան (որից դուրս կը դնենք զինուորներ՝ մարտական խմբերի համար): Պէտք է ժողովուրդը զինել, յարմարութիւն ստեղծել զէնք ձեռք բերելու: Ռայոնական ժողովիդ ուշադրութիւնն ենք հրաւիրում հետեւեալ հարցի վրայ.— արդեօք չե՞նք կարող մեր հաւաքած դրամների կէսը (հակառակ դէպքում քառորդ մասը) պահել տեղիս ինքնապաշտպանութեան կարիքների համար յատկացնելու. մի ժողովուրդ, որը առատ կերպով տալիս է եւ պատրաստ է միշտ տալ ու տալ, այսօր կրիտիկական վիճակի մէջ է. ասացէք, արդեօք իրաւունք չունի՞ իր տրուած զումարների մի մասը յատկացնել իր պաշտպանութեան:

Բ. Դատավարութիւն.— Հայ ազգի մէջ Դաշնակցութիւնը այնքան ժողովրդականացել է, որ նա մի տեսակ կառավարութիւն է դառել. դիմում են չէզոք, կուսակցական, դիմում է վիրաւորուածը, զրկուածը,— ամէն տեսակի վէճեր. չափազանց բեռնուել այդ հարցերով՝ ոչ ժամանակ կայ եւ ոչ նպատակայարմար է. բայց եւ այնպէս, որովհետեւ ժողովուրդի մեծ մասը դաշնակցական կամ համակրող է, նրանց վէճերի քննութիւնները միշտ լինում են:

Դատի են ենթարկւում եւ պատժւում են կուսակցութեանս այն անձինք, որոնք նկատւում են բարոյական կամ նիւթական զեղծում կատարողներ, դատավճիռները բացատրութեամբ յայտարարւում են ի գիտութիւն հասարակութեան:

Գ. Անպատիժ մնացած յանցաւորներ.— 1) Ռուսաց բանկի կառավարիչ Էկզեմպլեարովը, իւր վրայ է վերցրել գաղտնի ոստիկանպետի եւ հայատեաց խուլիգանի դերը. նա միշտ աշխատում է հայերի գլխին մի խաղ խաղալ. նկատուել է, որ տեղիս բազուեցի թուրքերի պարագլուխներից (վաճառականներ) շատ ազատ մուտք ունեն նրա մօտ:

2) Սալոմոն Լազրիչ, ռուսաց հիւպատոսարանից նշանակուած թարգմանչի: Աղուէս չինովնիկ, քսու, կեղծաւոր, կաշառակեր լրտես: Հրաւիրում ենք ժողովի մասնաւոր ուշադրութիւնը այս երկուսի վրայ:

Դ. Պատժական խնդիրներ.— Պատժական խիստ միջոցները մեր իրաւունքից դուրս լինելու պատճառաւ, շատ անգամ Դաշնակցութեան վարկի հետ յանդգնել են խաղալ այս կամ այն անհատները: Մեր գործունէութեան մէջ դէպքեր են եղել (կարող են լինել եւ այսուհետ), երբ պահանջ է զգացուել որեւէ հրահանգ բաց թողնել կամ ուրեւէ անհատի պատժի ենթարկել: Պատժուող անհատը ոչ միայն չէ հնազանդուել, այլ նոյնիսկ յանդգնել է մեր դատավճռին հակառակ Գիլանի կոմիտէի պատիւը վարկաբեկել: Մեզ պարզ չեն պատժի միջոցները, ուստի կարեւոր է ունենալ մի շարք պատժի ձեւեր ըստ յանցանքի. որպէսզի Դաշնակցութեան պրէստիժը չընկնի, հարկաւոր է որ կոմիտէս իրաւունք ունենայ պատժական խիստ միջոցներ գործադրելու:

VI Կուսակցութիւնից դուրս գործեր

Բացի զուտ կուսակցական խնդիրներով զբաղուելը, տեղիս կազմակերպութիւնը, ի նկատի ունենալով Դաշնակցութեան պրոպագանդի յաջողութիւնը, միջամտել է դպրոցական, թատերական, գրադարանական եւայլն գործերի մէջ եւ դեկը իւր ձեռքն առել:

VII Կուսակցութիւններ Ռաշդում

Գոյութիւն ունեն այստեղ միայն հնչակեանները, որոնք բոլորը «հինից» են,— երկու արական եւ մի իգական խումբ, մասնաճիւղով հանդերձ՝ ընդհանուր թիւը 35 հոգի է, որոնցից 8–10 կին, մնացորդը տղամարդիկ: Սրանց մասին խօսել կը նշանակէ կրկնել նոյնը՝ ինչ որ գիտենք եւ գիտէք,— անվստահելի մարդկանց մի հաւաքածոյ, վիրաւորուածների համախմբում, աշխատում են բազարի խօսակցութեամբ փիղ և քոթոթը յիշեցնել,— այն էլ անյաջող:

Քարտուղար Գիլանի Կոմիտէի՝
ԽԵՆԹ

Բ) Հ. Յ. Դ. ԳԻԼԱՆԻ ԿՈՄԻՏԷԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԵՂԱԾ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԹԻՒՆ ՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Նամակի երկար չափի 2 երկրորդ թուղթ կցուած տեղը: Գրութիւնը՝ 7 էջ, սեւ մելանով:

1.	Ռաշտում	8	արական	խումբ	95 անդամով
	»	2	իգական	»	36 »
2.	Էնզելի	5	արական	»	48 »
	»	1	իգական	»	15 »
3.	Ղազուին	4	արական	»	37 »
	»	1	իգական	»	12 »

Այսպիսով Գիլան կոմիտէի շրջանը ունի 17 արական խումբ՝ 180 անդամով եւ 4 իգական խումբ՝ 63 անդամով. ընդամէնը՝ 21 խումբ, 243 անդամով:

Ռաշտում կազմակերպուած է նաեւ 1 մարտական խումբ, 12 հոգուց, համաձայն Կազմակերպական Կանոնների յօդ. 32ի:

Կազմակերպուած է ինքնապաշտպանութեան համար մի խումբ, որ զտնուում է Գիլանի կոմիտէի տրամադրութեան տակ:

Զէնքի ընդհանուր թիւը Ռաշտում

Ատրճանակ.—	Բրաունինգ՝	10	հատ
»	Սմիթ՝	8	»
»	Պարաբելլում՝	1	8

ընդամէնը 19 հատ՝ 25ական փամփուշտով:

Հրացաններ.—	Մաուզեր՝	4	հատ
	Բերդան՝	5	»
	Որսորդական՝	10	»

ընդամէնը 20 հրացան՝ 100ական փամփուշտով:

Էնզելիում զէնքերի թիւը

Ատրճանակ.—	Սմիթ՝	21	հատ
	Բրաունինգ՝	4	»
	Պարաբելլում՝	1	»
	Նագան՝	1	»
	Մաուզեր՝	1	»
	Բուլդոգ՝	3	»

ընդամէնը 31 հատ՝ 50ական փամփուշտով:

Հրացաններ.—	Մաուզեր՝	հատ	
	Մոսին՝	1	»
	Բերդան՝	1	»
	Որսորդական՝	3	»

ընդամէնը 9 հատ՝ 150ական փամփուշտով:

Ղազուին

Ատրճանակներ զանազան ձեւերի՝ 23 հատ, 50ական փամփուշտով:

Հրացաններ՝ 18 հատ, 200ական փամփուշտով:

Վիճակագրութիւն Ռաշտի

106 տուն, 577 հոգի, հետեւեալ մանրամասնութեամբ.—

(Նոյնութեամբ կրկնուած են ճախորդ տեղեկագրի տախտակով տրուած թիւերը — Հ. Տ.):

Բոլորը պատկանում են Լուսաւորչական կրօնքին, ունին 1 եկեղեցի եւ մէկ երկրորդական դպրոց՝ 65 երկսեռ աշակերտներով:

Պահում են երկու վարժուհի եւ երեք վարժապետ:

Դպրոցը ունի ժամանակաւոր (հայագործարանից) եկամուտ՝ 480 թուման, իսկ հաստատ եկամուտ (խանութներից)՝ 216 թուման, ընդամէնը 696 թուման:

Այս տարուայ (905/906) բիւդջէն 2760 թուման է, որի վրայ աւելանում է քահանայի եւ զանազան ոռճիկներ՝ 900 թուման, Դաշնակցութեան (միմիայն անդամավճարները) 600 թուման. ընդհանուր գումարը՝ 4260 թուման տարեկան: Իւրաքանչիւր տուն վճարում է 40 թուման իր ազգային հիմնարկութիւնը պահպանելու համար:

Ունին թատերասիրաց ընկերութիւն՝ 400 թուման դրամագլխով:

Գրադարան–ընթերցարան՝ 400 թուման դրամագլխով:

Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւն՝ 2500 թուման դրամագլխով:

Հոգաբարձութիւնը եւ Հայ Բարեգործական Ընկերութիւնը գործում են միացած:

Տեղային ազգաբնակութիւնը գիլակ է, պատկանում են պարսկական ցեղին եւ չիա կրօնին. կան եւ բարիներ, որոնց թիւը աննշան է. ազգաբնակութեան թիւը մօտաւորապէս 50·000 է:

Դեռ 98 թուականից Ռաշտում գոյութիւն ունէր Հնչակեան կուսակցութիւնը, բայց քայքայուած դրութեան մէջ էր: Վերակազմուեց 902 թուականի վերջերը՝ գրեթէ Դաշնակցութեան հետ միասին. ունին երկու ազգաբնակ եւ մէկ իգական խումբ՝ 35 անդամով: Անվրատահելի մարդկանց մի ժողովածու է եւ չի առաջադիմում:

Ռաշտի հայ ազգաբնակութեան մեծամասնութիւնը զբաղւում է օղեվաճառութեամբ: Կան եւ բոժոժի ու ծխախոտի գործով զբաղուողներ, որ վերջին տարիները միշտ վնասում են: Հայերի սահմանափակ կրթութեան պատճառաւ, յոյները կամաց կամաց գրաւում են հայերի տեղերը բոժոժի գործում եւ հայերը գրեթէ միշտ տեղի են տալիս՝ չդիմանալով մրցումի:

Արտահանութեան մէջ գլխաւոր տեղը բռնում է բրինձը, ապա բոժոժը եւ ծխախոտը: Տարեկան 5 միլիոնի մօտաք է ունենում Ռաշտը, որ տարեցտարի էլ աւելանում է եւ լաւ ապագայ է խոստանում: Գիլակ ազգաբնակութիւնը զբաղւում է այդ երեք գործերով և բարեկեցիկ կեանք ունի. սակայն կապիտալը կենտրոնանում է անհատների մօտ:

Վինակագրութիւն Էնզելիի

(Տեսնել յաջորդ տեղեկագիրը· — Հ· Ս·)

Ղազուին

Հայ ազգաբնակութեան թիւն է 226, որից 124ը արական եւ 102ը իգական: Բնակիչների մեծամասնութիւնը պարապում է օղեվաճառութեամբ եւ շատ աննախանձելի վիճակում. կան եւ վաճառականներ դրսից եկածների մէջ: Բացի Դաշնակցութիւնից չկայ եւ ոչ մի յեղափոխական կուսակցութիւն: Ունին մէկ եկեղեցի եւ մէկ մի դասեան երկսեռ դպրոց, պահում են ուսուցիչ եւ վարժուհի:

Պարսիկ ազգաբնակութեան թիւն է 20–25 հազար. քաղաքը բաժանուած է 17 թաղերի. հայերը բնակւում են երեք թաղերի մէջ՝ հաւասար կերպով, այն է՝ Խեւան, Ղոյուն Մէյտան եւ Ռաքոչ թաղերում: Պարսիկ ազգաբնակութիւնը շատ ազդեցիկ վիճակ ունի եւ գրաւում է բոլորովին խաւար դրութեան մէջ: Հայերի հետ ապրում են հաշտ եւ շատ մեղմ բնաւորութիւն ունեն:

Պարսիկ ազգաբնակութեան 1/9ը բաբի է, 1/10ը Ալիալլահի քիւրդ, իսկ մնացածը պատկանում են շիա կրօնքին:

Գիլանի շրջանի Հ. Ց. Դաշնակցութեան հաստատ եկամուտները

Ռաշտը տալիս է ամսական	500	դրան	
Էնզելին » »	300	»	
Ղազուին » »	200	»	
ընդամէնը	1000	»	ամսական

Ամբողջ տարուայ համար Գիլանը ունի հաստատ եկամուտ՝ 1200 թուման, իսկ վիճակախաղից, երեկոյթներից, ներկայացումներից ու հանգանակութիւնից մօտաւորապէս 800 թուման եւ այդպիսով Գիլանի կոմիտէի բիւդջէն լինում է 2000 թուման:

Առաջադրութիւններ Շրջանական Ժողովին

Շնորհիւ Գիլանի հսկայական արդիւնաբերութեան՝ թէ՛ Պարսկաստանի զանազան քաղաքներից եւ թէ Կովկասի զանազան անկիւններից գաղթականական մի հոսանք է սկսել դէպի Ռաշտ՝ որ քանի գնում աւելանում է, մեծ չափեր է ընդունում, ինչպէս այդ ցոյց է տալիս դեռ երկու տարի սրանից առաջ կազմուած վիճակագրական տեղեկութիւնները: Օր. 2 տարի սրանից առաջ Ռաշտը ունէր 47 տուն հայ 240 բնակիչով, իսկ այժմ աւելի քան դրա կրկինը:

Հ. Ց. Դ. Գիլանի կոմիտէն դեռ մի տարի առաջ սկսեց ուշադրութիւն դարձնել նորեկների վրայ եւ աշխատում է կազմակերպել այնպիսի մի գաղութ՝ որ համապատասխան լինի իր նախագծած սկզբունքներին. եւ ինչպէս որ խմբակների վիճակագրական պատկերը ցոյց է տալիս, բաւականաչափ այդ յաջողուել է իրեն:

Գիլանը, աւելի ճիշդ Ռաշտը, որպէս նոր կազմակերպուող մի գաղութ, այդտեղի մարմինը երբեմն առիթ է ունենում միջամտելու իր իրաւասութիւններից

բարձր խնդիրների մէջ (օր.՝ հողային, կալուածական եւայլն) եւ շատ անգամ պարզերես է դուրս գալիս, որովհետեւ առայժմ քննադատող չկայ (հակառակ կուսակցութեան մասին է խօսքը որ կամ ուժ չունի, կամ կոմիտէի իրաւասութեան մասին տեղեկութիւն չունի): Ցաջողութեան գլխաւոր պատճառը Դաշնակցութեան վայելած մեծ ժողովրդականութիւնն է: Որպէսզի Գիլանի կոմիտէն հակասութիւնների մէջ չընկնի եւ կարողանայ ապագայ բարդութիւններին յաջող կերպով դիմադրել, անհրաժեշտ են հետեւեալ միջոցները, որ կը նպաստեն այդ կազմի թէ՛ ուժեղանալուն եւ թէ նրան կը դնեն հաստատ հողի վրայ՝ իրաւասութեան տեսակէտից.

1. Միացնել Գիլանին բոլոր ծովափնեայ շրջանները, օր.՝ Մազանդարան, Բարֆրուշ, Բանտարգեազ, Աստարա, Արդաբիլ եւայլն:

2. Առաջարկել ուր պէտք է՝ Գիլան կոմիտէն կենտրոնական փոխելու, որովհետեւ այդ շրջանների միանալուց յետոյ՝ Գիլանի կոմիտէն կը համապատասխանի Կազմակերպական Կանոնների յօդ. 120ի Ա. պարբերութեան ու ծանօթութեան (նոյնպէս եւ յօդ. 43ի):

3. Տարեկան առնուազն մէկ շրջիկ ուղարկել գաւառները, որի տուած օգուտը ակնյայտ է գոնէ Գիլանի շրջանում:

4. Տեսորը ընդունել Պարսկաստանի համար որպէս միակ պայմանը յեղափոխութեան զարգացման, և որպէս սանձահարող թէ՛ ներքին եւ թէ արտաքին թշնամիների:

5. Ոսկանապատին յիշեցնել փոխադարձ յարգութեան անհրաժեշտութիւնը եւ պարտականութեան կատարման փոխադարձութիւնը: Շահրիկեանի չէզոքացումը, որովհետեւ նա իր անձնական տեսակէտով է նայում ամէն բանի:

6. Իրաւունք տալ Գիլանի կոմիտէին՝ իր տրամադրութեան տակ պահելու կազմակերպութեան հաշուին 10–15 հրացան գաղութի պաշտպանութեան համար մինչեւ հայ–թրքական ընդհարումների վերջը:

7. Ներքին կանոնագիրը աւելի ընդարձակել եւ բարեփոխել:

8. Կազմակերպել Ղարադաղը:

Ընդհանուր Ժողովի քննութեանը ենթարկել

Ի նկատի ունենալով ռուս կառավարութեան բռնած տարբեր քաղաքականութիւնը, որ աւելի կոպիտ կերպով արտայայտուեց հայ–թրքական ընդհարումների ժամանակ, որի հեղինակն էլ հենց ինքն է, եւ որի պարզ նպատակն է հայերի բնաջնջումը, ուստի ցանկալի է.

1.) Որ Հ. Ց. Դաշնակցութիւնը, որպէս ժողովրդական մի կազմակերպութիւն, ձգտի հայերի միասնականութիւնը իրականացնելու եւ իր ուժերը գործադրի հայութեան ամբողջութիւնը պաշտպանելու:

2.) Զանցնել ինքնապաշտպանութեան շրջանից (խօսքը կառավարութեան մասին է), որովհետեւ մենք նուաճողական ձգտում չունենք եւ մեր հակառակ վարմունքը անջատողական կարող է թուել թէկուզ հենց ապագայ սահմանադրական կառավարութեան աչքում եւ այդպիսով կ'ենթարկուենք անհաւասար կռուի, որի ժամանակ տուժողը կը լինի տաճկահայ դատը, ինչ որ ցանկալի չէ:

3.) Հոկտ. 17ի մանիֆեստի հիման վրայ, Դաշնակցութիւնը գրեթէ կիսով չափ հասել է Կովկասեան Նախագծում գծուած քաղաքական բաժնի իրականացմանը. ուստի պէտք չէ որ աւելի հեռուն գնալու համար իր բոլոր ուժերը լարի, որովհետեւ հազիւ թէ արդիւնքը համապատասխան լինի զոհողութեան, մանաւանդ որ այդպիսով տաճկահայ դատը կը կորցնի իր ամենամեծ խթանը, այն է՝ Կովկասահայերից սպասուելիք օժանդակութիւնը:

4.) Որովհետեւ հայերիս մէջ էլ արդէն աչքի զարնող թիւ կազմում է պրոլետար դասակարգը (թէեւ ոչ եւրոպական իմաստով), Կովկասեան Նախագծում գծուած տնտեսական բաժնի վերաբերմամբ՝ ցանկալի էր Դաշնակցութեան համերաշխութիւնը միւս սոցիալիստ կուսակցութիւնների հետ: (Փոքրամասնութեան կարծիքն է):

5.) Հրատարակել Ռուսաստանում ռուսերէն մի թերթ «Про Армѣнія»յի նման, ռուս ժողովրդին ծանօթացնելու Դաշնակցութեան դաւանանքի եւ տաճկահայ դատի հետ:

6.) Վարդոյին ենթարկել պատերազմական դատարանի, որովհետեւ նրա բարձրացրած աղմուկի ժամանակ Դաշնակցութիւնը ամէն տեղ պատերազմական դրութեան մէջ էր գտնւում:

7.) Վերակազմ[ակերպ] եւ աւելի՛ ուժեղ կերպով դինամիտային գործողութիւնները, բացի նախկին որոշուած տեղերից, նաեւ Հայաստանի գլխաւոր քաղաքներում:

8.) [Տաճկահայ] գիւղացիներին զինել ինքնապաշտպանութեան համար, Կովկասի նման, որոնք եւ պատրաստ կը լինեն յարձակողականի սկսել:

9.) Զինուորական խմբեր Երկիր անցնելու դէպքում, սահմանազլխում եղած Հ.Ց.Դ. գործչի յանձնարարուած գծով անցնել (որը լաւ պէտք է ուսումնասիրած լինի այդ գործիչը, ի նկատի ունենալով ապագայի մեծ պատասխանատուութիւնը). հակառակ դէպքում խմբի անյաջողութեան համար պատասխանատուութեան ենթարկել յամառող խմբապետներին:

10.) Խմբական ապպենտիցիտը Դաշնակցութեան ծաւալման միակ դրաւականը ընդունելով, նորից չեշտել այդ սկզբունքը:

11.) Կովկասում կազմել զինուորական մի մարմին եւ պահել մշտական բանակ՝ պատեհ առթիւ Եր-

կիր մոցնելու համար. այս նպատակին հասնելու համար զինուորական տուրք նշանակել բոլոր դաշնակցականների եւ համակրողների վրայ, նաեւ հարուստ վանքերի ու հաստատութիւնների վրայ:

12.) *Պարսկաստանում հաստատել Պատասխանատու Մարմին:*

Հ. Յ. Դ. Գիլանի շրջանի պատգամաւոր՝
ԹԱՓԱՌԱԿԱՆ

Գ) ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԷՆԶԵԼԻԻ ՀԱՅ ՀԱՅԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Նամակի մեծ չափի գծուռը երկերեր բուրթի մը վրայ: Գրութիւնը՝ 1 էջ եւ 7 տող միայն:

Էնզելիում կայ 44 տուն հայ, 178 բնակիչ, որոնցից 95ը արական, 83ը իգական: Բացի ընտանիքներից, Էնզելիում ապրում են եւ ամուրիներ՝ թուով 87, որով Էնզելիի հայ ազգաբնակութեան թիւը լինում է 265: 182 արական և 83 իգական. ազգաբնակութեան մի ըստուար մասը պատկանում է Հնչակեան կուսակցութեան (14 տուն, 72 հոգի՝ 40 արական եւ 32 իգական, 13 ամուրի մարդիկ. գումար 53 արական եւ 32 իգական): Դաշնակցական կուսակցութեան պատկանում են 20 ընտանիք, թուով 73 հոգի, որոնցից 36 արական, 37 իգական եւ 35 ամուրի. գումարը՝ 108 հոգի, 71ը արական եւ 37ը իգական:

Պարապմունքը.— *Ազգաբնակութեան մի ստուար մասը արհեստաւորներ են նաւթի գործարաններում եւ նաւամատոյցում. մի մասը գրասենեակների եւ մաքսատան գործակատարներ ու գրագիրներ են. կան եւ յանձնակատարներ (կոմիսիոնէր) ու խանութպաններ:*

Կրօն.— *Ամբողջ հայ ազգաբնակութիւնը պատկանում է Հայոց Եկեղեցու դաւանանքին. ունեն մի եկեղեցի. տեղացի քահանայ չկայ, հոգեւոր պէտքերը հոգում է Ռաշտի քահանան: Ունի եւ մի ուսումնարան, խառն՝ երկսեռ (մի դասեան), քսան աշակերտ եւ աշակերտուհիներով, եւ մի ուսուցչով: Ուսումնարանը նիւթական հաստատուն աղբիւրից զուրկ է եւ պահւում է ժողովրդի կամաւոր նուէրներով:*

Հնչակեան կուսակցութիւն.— *Էնզելիում ծագում է առել երկու տարուց ի վեր, չհաշուած 3–4 հին հնչակեաններին: Այստեղ այդ կուսակցութիւնը զուտ թայֆայականութիւն է, որի պարագլուխը լարուած լինելով Դաշնակցութեան դէմ՝ իր շուրջը հաւաքեց իր արբանեակներին եւ կազմեց մի թայֆա՝ հիմնուած սոսկ խաթրի եւ շահի վրայ: Պէտք է ասել որ մինչեւ հակադաշնակցական պրոպագանդը կայ այդ կուսակցութեան կողմից եւ բաւական լուրջ հակառակորդ է տեղիս դաշնակցական գործունէութեան. բայց եւ այնպէս դրանց թիւը այլեւս չի աճում:*

Պարսկի ազգաբնակութիւն.— *Թիւը հասնում է մօտ 8000ի, որոնք կոչւում են Գիլակ, խօսում են մի ազաւաղուած պարսկերէն բարբառով որ կոչւում է գիլակերէն. պատկանում են պարսիկ ցեղին եւ չիա աղանդին. կան եւ աննշան թուով բարբականներ:*

Նրանց մեծամասնութիւնը խանութպաններ են եւ մակոյկավարներ. կան եւ արհեստաւորներ. ազգաբնակութեան մեծամասնութիւնը տգէտ է: Թուլակազմ եւ խաղաղ ժողովուրդ: Պէտք է ասել որ Բագուայ վերջին դէպքերից յետոյ, սկսել է Բագուաբնակ թուրքերի մեծ հոսանք դէպի Էնզելի. դրանք ո՛չ մի առիթ ձեռքից բաց չեն թողնում գրգռելու տեղիս խաղաղ ժողովրդին՝ հայերի դէմ:

Պորտ-Արտուրի ենթակոմիտէ
Քարտուղար՝ ԿԱՑԾ

15.— ՏԵՂԵԿԱԳԻՐ «ՇԱՀ»Ի (ԹԵՀՐԱՆ)

Նամակի երկար չափի երկերեր բուրթ (անգիծ): Գրութիւնը կը գրաւէ երկուքուկէս էջ, սեւ բայց գունատած մելանով, եւ կը թուի անաւարտ:

Թեհրան քաղաքը, որ Շահնշահի աթոռանիստն է, գտնւում է «Իպսաղ-Ամէմէ» (?) կոչուած նահանգին մէջ, 70 մղոն դէպ հարաւ կասպից Ծովէն, Էլպրուզ լեռան ստորոտը, ծովէն 3447 ոտք բարձրութեան վրայ: Բնակչութեան թիւն է մօտաւորապէս 250.000: Եւրոպական բոլոր ազգերը ունեն դիւանագիտական ներկայացուցիչներ, զինուորական կցորդներ եւն.:

Բնիկներն են բուն իրանցի (պարսիկներ և ոչ թուրքեր). կան նաեւ բաւական թուով թուրքեր, հրեաներ եւ եւրոպացիներ: Հայերը կազմում են մօտաւորապէս 400 տուն, ցրուած քաղաքին ամէն կողմը, թէեւ երբեմըն ջանքեր եղած են ամփոփուիլ «Տարուազը Կաչոմէն» (?) կոչուած թաղը, բայց միայն մասամբ յաջողած է այդ ծրագիրը: Հայերը ունին երկու եկեղեցի, յարակից ուսումնարաններով, որոնց մէկը միայն կանոնաւոր ուսումնարան է, իսկ միւսը իբր ծաղկոց կը ծառայէ: Եկեղեցիները եւ ուսումնարանները մասամբ ապահովուած են կտակներով: Թեհրան երբեմն առաջնորդանիստ է, երբեմն՝ փոխ:

Հայերի կացութիւնը.— *Բացառութիւն համարելով մի քանի վաճառականներ եւ խանութպաններ, մնացեալները մօտ 50–60 արհեստաւորներ եւ ծառայողներ են. մեծամասնութիւնը ըմպելիք ծախողներ*

են եւ գրեթէ կէս թրքացած դրութեան մէջ են: Մտայնի յեղափոխութիւնն է որ վերջերս զարկ տուած է աւելի վսեմ եւ գաղափարական հարցերով զբաղուելու:

Դաշնակցական 12 օժանդակ խմբեր կան 128 անդամ անդամուհիներով եւ 604,8 դրան անդամավճարով (տարեկան). մօտաւորապէս նոյնքան ալ վիճակախաղերէ, թատրոններէ եւն., որով տարեկան պիւտճէն յառաջիկայ տարուայ համար 1500 թուման նկատի ունինք:

Նոր-Զուղա վերջին անդամ պատգամաւորի գալէն յետոյ, մեր հետ կապուած է կազմակերպական կապերով եւ նրանցից ստացած չլինելով հաշուետուութիւն, կը յետաձգենք ապագային, միայն յայտնելով որ 1915 դրան կանխիկ փող կայ նրանց քով տրամադրելի, որը խնդրած ենք մեզ փոխադրել շուտով: Զուղան ունի 7 խումբ, մօտ 80 անդամ եւ անդամուհիներով, մի ենթակոմիտէ (նորակազմ). անդամավճարներէ մուտքն է տարեկան մօտ 160 թուման, այլ եւ այլ մուտքերէ՝ մօտ նոյնքան գումար, 3000 դրան:

Առաջարկներ.

1) *Աւելի լուրջ ուշադրութիւն դարձնել այս շրջանի վրայ շրջիկներ եւն. ղրկելով:*

2) *Տեղերի նկատմամբ կոմիտէի կողմանէ խընդրւում է, պատգամաւորի միջոցաւ, գոնէ առայժմ պահպանողական լինել՝ նկատի ունենալով փափուկ դրութիւնը:*

3) *Ներքին կանոնագիրը Շրջանական Ժողովի կողմանէ լուրջ փոփոխութեանց ենթարկել:*

4) *Գաղտնի գրագրութեան ձեւ մշակել, թէ՛ նամակներու եւ թէ հեռագրերու համար (եթէ ցանկալի է ընդունել այն գաղտնագրութիւնը՝ որ կոմիտէս առաջարկել էր Կ. Կ.ին, ժամանակին):*

5) *Օգտուել պարսկական կառավարութեան բարեհաճ տրամադրութիւնից եւ ցոյց տալ զմեզ իբրեւ հաւատարիմ հպատակներ:*

6) *Միջոցներ ձեռք առնել պարսկական եւ եգիպտական լրագիրների գրգռիչ յօդուածները չէզոքացնելու եւ, եթէ հարկն է, դիմել Բիւրոյին կամ Ընդհ. Ժողովին՝ իր ձեռքում եղած ամէն միջոցներ գործածել այս մասին:*

7.) *Թիստ հսկողութիւն եւ կոնտրոլ բոլոր կուսակցութեան անուամբ հաւաքուած փողերու վրայ եւ կարելի եղածին չափ շուտ հրատարակել տալ «Դրօշակ»ի մէջ, թիւրիմացութեանց տեղի չտալու համար՝ ինչպէս անցեալում:*

8.) *Ինքնապաշտպանութիւն...:*

16.— ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՐԱՂԱՅԻ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

Նամակի ոճրմալ չափի գծուռը 4 երկերեր բուրթ: Տեղեկագիրը կը գրաւէ 8 էջ. գրուած է մուր-մանիշակագոյն (գրեթէ սեւ) մելանով:

1905 թիւ... 31ին, Մարաղայ

Որպէս պարտաւորութիւն ամէն մի գիտակից հայի, քիչ ու շատ զարգացած անհատը պարտ է նպաստել Հայ Յեղափոխութեան Ս. Գործին:

Մենք, Մարաղայի ընկերներս, որ պատկանում ենք Հ. Յ. Դաշնակցութեան «Արշալոյս» և «Գործակատար» խմբակներին, ղեկավարուել ենք Հ.Յ.Դ. Ծրագրով, առաջնորդուելով Ատրպատականի Ներքին Կանոնագրի զօրութեամբ, միշտ նկատի ունենալով տեղական պայմաններն:

1.— *Տեսնելով Մարաղայի անցեալի անհիմն ու անկանոն գործունէութիւնը, որ ընկերների մէջ հիասթափումն էր առաջացրել, յարմար դատեցինք գործել ըստ տեղական պայմանների թելադրած տակտիկայի (ըստ Հ.Յ.Դ. Ծրագրի, կազմակերպական կանոնների № 1 յօդուածին):*

Ուստի ի մի հաւաքելով, 1905 Փետր. 4ին, Մարաղայի մեր համակրողներին ու ընկերներին, որոշեցինք կազմել երկու խմբակ՝ «Արշալոյս» (նախկին խմբակ) եւ «Գործակատար»:

Նկատի ունենալով տեղացիների կրթութեան ու հասկացողութեան չափն, որովհետեւ դրսեցիների հետ եթէ լինեն՝ տեղացիներն կարող են օգտուել, ուստի յարմար դատուեց ընկերական Ժողովում՝ կազմել խմբակ տեղացիների հետ խառն:

Նկատի ունենալով անցեալի սխալ հասկացողութիւններ՝ մտցուած տեղացի ընկերների մէջ (որ ամէն անհատ որ անդամակցէ Հ. Յ. Դաշնակցութեան՝ ազատ է ամէն վտանգից եւ ապահովում է, եւ այլ անտեղի խոսուքներ) երեւի մեր ընկերներն օգտուել են ուզել այդ պայմաններից,— հարկ համարուեց [յստակացնել] որ այդ ձեւով ընկեր եղածն պատիւ չի բերի կուսակցութեան եւ որ անդամն իր գործունէութեամբ, վարքու բարքով, հայրենասիրութեա՛մբ արժան է դաշնակցական կոչուելուն:

Նկատի ունենալով հնչակեանների հետ յառաջ եկած անտեղի վէճերն ու ծայրայեղութեան չափերը, որոշուեցաւ գործել զգիջողաբար, միշտ նկատի ունենալ Ժողովրդին:

Որոշուեցաւ Ժողովներն տանել նոյն ձեւով (նիւթ ընտրելով). Մարաղայի հասարակութեան քարոզել, հասկացնել բարոյականութիւն, կռուել, եւ պրոպագանդայի միջոցաւ վերջ տալ հին պարսկական որոշ սովորութիւնների, նամանաւանդ աշխատել համոզելու

ժողովրդին՝ որ անչափահաս ամուսնութիւնն վնասակար ու մինչեւ անգամ ոճրագործութիւն է: Կիսահայ համարուած Մարաղայի հասարակութեան համար պարտադիր անել մայրենի լեզուն (տներում պարսկերէն են խօսում), եւ այժ տալ հայկական վարք ու բարքին, նիստ ու կացին ու սովորութեան:

Որոշուեցաւ, որ մի առ ժամանակ, աւելի ժողովներն հասկանալի դարձնելու համար տեղացիներին, յարմար է (որ լսածն մարսել կարենայ իր խօսքերով) պարսից լեզուով խօսել ընտրած նիւթն, եւ այդ ձեւով էլ տարուեց մինչ օրս:

Որոշուեցաւ միջոցներ խորհել նոր տարուան համար ձեռք ձգելու դպրոցի դեկն (եթէ Թաւրիզու ընկերներն բարի գտնուին նպաստելու գործի դիւրութեան՝ նպաստելու ուսուցիչ–ուսուցչուհու ընտրման), որ մնալով հակառակորդ կուսակցութեան ձեռքում՝ միմիայն ծառայում է տեղացի ուսուցչի օրական պարէնը դուրս բերելուն եւ ոչ նպատակին. եւ ամենազըլխաւորը՝ աշխատել վերաբացել օրիորդաց դպրոցն, որ ամենեւին գոյութիւն չունի եւ կանացի սեռն զուրկ է այդ բարիքից:

Նիւթական խնդիրը

1) Նկատի ունենալով անցեալի դրուած որոշ տուրքն, որ դժուարում են վճարել (2 ղրան ամսական), մնաց անփոփոխ(1):

2) Դրսեցի ընկերներն Թաւրիզում անդամ են եւ միշտ մասնակցում են այստեղ եւս:

Ժողովներ.— Նախ քան Բագուի կոտորածն ժողովներում խօսուել է հետեւեալ նիւթերի մասին.

1) Ցեղափոխութեան ծագումը. Դաշնակցութեան առաջ գալը:

2) Հ.Յ.Դ. գործունէութիւնը 92–97 թիւ, յետ այնու հիասթափութիւն, ապա փառաւոր գործունէութիւն մինչ 1904 թիւն: Մէջ ընդ մէջ «Գործ» խմբի մէջ խօսուել է:

3) Մարդկութեան ծագումն եւ Հայ ազգի մասին. Հայ պատմութիւնից՝ մինչ քաղաք. անկումն. Ներսէս Վարժապետեան, Իսրայէլ Օրի. 61 — 16 յօդ. (հարեւանցի ակնարկ)(2):

4) Դաշնակցութեան ծրագրի մասին. Մկրտիչ Փորթուգալեան, «Արմենիա» եւ մինչ Հնչակ. կուսակց. (մասնաւորապէս ծրագրի կենտրոնացում եւ ապակենտրոնացում. տարբերութիւն ու որն է յարմարը): Նրանց [հնչակեանների՞] անցեալի փառաւոր գործունէութիւնը ու ներկայի վնասակար եղբայրասպանութիւնները:

5) Ազգի ռազմական ոգին. Ցեղափոխութիւնը չի եղել կոտորածին պատճառ. Դաշնակցութեան դերն Սասունում. Համիդլամութիւն, Սուլթանի հայաջինջ քաղաքականութիւնը. Սասունի կոտորածի նախապատճառներն եւ Դաշնակցութեան սպառնալիքը (?). խմբերն, իրանց կարգով, համարով ու ամէն մի մանրամասնութեամբ, յիշատակուած անուանց կարգով,— Թուման, Վահան, Գայլ Վահան, Հրայր, Վաղարշակ. մասնաւոր ակնարկ մէջ ընդ մէջ կենսագրական: (Նիւթն առնուած է գրաւոր «Հայրենիք» եւ «Դրօշակ» թերթերից):

Մէջ ընդ մէջ ժողովներում խօսուել են դպրոցական եւ տեղական հարցեր, օրուայ պահանջքի համեմատ:

Ընկերական յարգանք

Հանգուցեալ Քրիստափոր Միքայէլեանի հոգեհանդիսան որ փառաւոր կերպով է մտածուած. նախ քան հոգեհանգստի օրն գիշերը ժողով որոշուեցաւ եւ ծանօթացուց ս'վ է եւ ի՞նչ լինելն եւ որպիսի՛ դեր ունէր Հ. Յ. Դաշնակցութեան կազմի մէջ եւ որի մահուամբ Դաշնակցութիւնը որքա՛ն մեծ կորուստ ունէր, որ եւ տօնուեց փառաւոր սգահանդէսով:

Նկատի ունենալով Բագուայ ու վերջերս Նախիջեւանի կոտորածներն, ազատ ապրելու համար հարկ է միմիայն ունենալ զէնք, եւ չարութիւնը վերադարձնել չարութեամբ. պարտադրուեց, գնել ու ձեռք բերել որքան հնար է զէնք ու հրանիւթ: Եւ զգալի կերպով աչքի է ընկնում կարճ միջոցում ընկերների մէջ որ աւելացաւ զէնքի քանակութիւնը: Միեւնոյն ժամանակ տարուում է, զիմադրական պրոպագանդի հետ զուգընթացաբար, խոհեմաբար վարուելու մասին. որ տեղիք չտալ զրգռելու մահմետական ժողովուրդը, այլ ձեռք առնել միջոցներ՝ հաշտ լինելու համար մեր դրացի պարսիկների հետ, հարկ եղածին չափ բացատրել անցած պատահած անպատուաբեր սխալը եւ հասկացնել «Շէյխան» կառավարութեան լիրբ ընթացքն...: Աշխատել խոյս տալ շփոթութիւն եղած միջոցին նախայարձակ լիներից, պատուի խնդրի առթիւ եղած մի կէտ չխնայել, ոչ մի միջոց պատասխանելու ըստ պատշաճին աւելի թանգ գնով տալ կեանքին(2):

Ընկերներն ու եղած զէնքերը

28 հոգի.....	զէնքեր «Արշալոյս» խմբից	
14 հոգի.....	» «Գործ» խմբից	

Իսկական պատճէն վերցրած անուանց ցուցակից, մի առ մի, եւ զէնքերի քանակութիւնը...(3).

7 բերդան հրացան,	265	փամփուշտ
1 16 հարուածանի հրացան	30	»
12 մարթին եւ վարանդիլ (տեղական)	620	»
11 ատրճանակ	250	»

«Գործ» խմբի մէջ, տներում՝

1 խսկական բերդան	50	փամփուշտ
7 (տեղական) մարթին եւ վարանդիլ	270	»
3 ատրճանակ	60	»

Զհաշուած հասարակ հրացան ու սրերն որ արդէն (?) շատերն ունեն. միեւնոյն չափով զինուած են գրեթէ ոչ կուսակցականներն ու հնչակեան կուսակցականներն:

Բարոյական պարտաւորութիւն խմբակների

(Դատ եւ Բագուի զոհուածների օգտին հանգանակութիւն):

Նկատի ունենալով Հ. Յ. Դաշնակցութեան դրած բարոյական պարտաւորութիւնը առ ընկերներ ու հայ ժողովուրդն, ընկերական դատաստան անուան տակ, աստ մեծ նշանակութիւն է տրուած ընկերների կողմից, նկատի ունենալով տեղական պայմանները ու ժողովուրդի բնութիւնը, եւ ունեցել ենք յաջողութիւն. մի քանի գործեր (Միրզոյ Նարմանի եւ Ս. Բ.ի) որի արդիւնքից յօգուտ Դաշնակցութեան ստացուել է Ապրիլ 11ին 20 Թուման, իսկ մի ուրիշ փոքր գործի արդիւնք՝ 4 ղրան: Բացի դրամական օգտից՝ մեծ բարոյական օգուտ ու օրինակ ընկերների:

Քանի որ, ժամանակի ընթացքում, զանազան անձնական անհիմն կռիւների առթիւ յառաջացած՝ երկու կուսակցութեանց մէջ անհամաձայնութիւն կար, եւ որը վերջացաւ Քրիստափոր Միքայէլեանի հոգեհանդիստով, աւելի ժողովրդին զգալի դարձնելու համար որ երկու կողմից էլ հաշտ են, այդ առթիւ Բագուի ազգային համար արուեց հանգանակութիւն որ եւ ուղարկուեց Թիֆլիս՝ Պ. Ա. Մ....ին(4). գումար՝ 190 ռուբլի:

Դրամական հաշիւը առանձին՝ № 9 թերթով:

Ի դիմաց Մարաղայի ընկերների՝
Գ. ՈՒԹՍՈԿ...(5)

(1) Շատ անխնամ է եւ անճիշդ՝ յատկապէս ա'յս տեղեկագրի լեզուն: Զանազան եռմ պահել ըստ կարելւոյն անփոփոխ, ջանչելով փաստօրէն անհապկնալի աւելորդաբանութիւնները միայն, թէպէտ «Աստ սովորական նկատի ունենալով վերը յիշուած է գէպս հասարակութեան...» եւայլն:

(2) Տուած եմ անփոփոխ:

(3) Քանի մը բառ՝ անընթեռնելի:

(4) Ըստ երեւոյթին՝ անուն մը, անընթեռնելի:

(5) Ստորագրութիւնը՝ գծուած անընթեռնելի. կրնայ ելլալ նաեւ ՈՒԹԱՆՋԵԱՆ:

17.— ՏԵՂԵԿԱԳԻՐ «ՇԱՀՍԷՎԱՆ»Ի ԵՒ «ԱՆՏԱՌ»Ի

Նամակի ճորմալ չափի 3 երկրերք (գծուած) թուղթերէ կարուած տետրակ: Տեղեկագիրը, մանիշակագոյն մելանով, կը գրաւէ 11 էջ եւ 4 տող: Ստորագրութիւնը կը թուի ծածկանուն մը ելլալ:

Վրէժստան, 1 Փետրուար 1906

I. ՇԱՀՍԷՎԱՆ

Շահսէվանը (Արդաբիլը) գտնուում է Կովկասի սահմանից 20 վերստ դէպի արեւմտահարաւ. գաւառական (Ատրպատականի) մեծ քաղաք է, որտեղ են գտնուում «Նարին զալէ» բերդը (օսմանեան չէնք)՝ Պարսկաստանի աքսորավայրը եւ «Շէյխ» կոչուած սրբավայրն ու ուխտատեղին՝ անցեալներում պարսից Սաֆավի Թագաւորների պալատը, որոնց (Թագաւորների՝ Շէյխ Սաֆի, Շամ–Իսմայիլի եւ իր գերդաստանի) դամբարանները մինչեւ այժմ էլ կանգուն են պալատի հարուստ Թանգարանի սենեակներից մէկում:

Ծանօթ.— Քրիստոնեաները, նամանաւանդ հայերը՝ իրը բացառութիւն, ազատ մուտք ունեն այդ սրբավայրը եւ միշտ էլ հետաքրքրութեան համար յաճախում են:

Այդ առանձնաշնորհումից կարծուում է որ հեռաւոր անցեալում այդ չէնքը հայկական մի վանք է եղած եւ յետոյ 1230–40ին, Թաթարաց արշաւանքի ժամանակ, գրաւուել է եւ յետոյ էլ սաֆավիների ձեռքը անցել:

Ըստ աւանդութեան, այդ Թուականներին Արդաբիլում բնակել են եղել մօտ 10–12 հազար հայ ընտանիքներ: Բազմաթիւ հայկական գերեզմանաքարեր, որոնք գտնուում են «Շէյխ»ի կողքի արդի Թրքական գերեզմանատանը, որ «Շահիդ–Գահ» (այսինքն նահատակատեղի) է կոչուում, վկայում են դրան:

Վկայում են նաեւ մի քանի հայկական աւերակ գիւղեր (էրմանի քանդի եւն) եւ ուրիշ մի քանի երեւոյթներ, որոնք յայտնուեցին վերջին ժամանակներս (պեղումներ, հայկական իրեր եւայլն):

Այդ չէնքը (Շէյխը) ներկայացնում է նաեւ մի ապաստանարան, որտեղ ապաստանող ամէն տեսակի քրէական ու քաղաքական յանցաւոր ազատուում է պատժից:

Շահսէվանը (Արդաբիլը) երեք կողմից շրջապատուած է լեռներով (Սաւալան, Բազրով, Վիլքիջ), իսկ մի կողմից տարածուում են Մուղանի տափաստանները:

Շրջակայքում, բացի բազմաթիւ Թուրք գիւղերից, ապրում են նաեւ լեռնական–Թափառական անհանգիստ ցեղեր Շահսէվան(*) անուամբ. Թուով 32 ցեղ, 6000

(*) Այս բառը երկու նշանակութիւն ունի՝ ա) Շահին սիրող եւ բ) Շահին հայհոյող:

ընտանիքով, չիա դաւանութեան պատկանող, բայց ոչ ֆանատիկոսներ:

Պարապում են խաչնարածութեամբ, մեծաւ մասամբ կողոպուտներով, աւազակութեամբ, ասպատակութեամբ, ընդհանրապէս սահմանից դուրս՝ ռուսական հողում եւ մասնաւորապէս էլ պարսից հողում. եւ այդ պատճառով էլ թէ՛ իրենք իրենց մէջ եւ թէ, հետեւարար, կառավարութեան հետ, շարունակ ընդհարման մէջ են:

Ունին 4–5000 քաջ, կորիճ ձիաւորներ, բոլորն էլ զինուած նոր սիստեմի զէնքերով եւ փամփուշտի առատ պաշարով, որոնք ի հարկէ խլուած են, մեծաւ մասամբ, սահմանապահ ռուս զինուորներից:

Բնակչութիւն.— Շահէվանը (Արդաբիլը) ունի 15000 տուն, 75–80 հազար բնակչով, չիա դաւանութեամբ, բացի մօտ 50 տուն սուննիներից: Կայ նոյնպէս 30 հրեայ, 20 քուրդ, 50 բարի (Թուրքեր) եւ մի տուն էլ ասորի (բողոքական), որը գրեթէ կապուած է հայերի հետ, թէ՛ բարոյապէս եւ թէ տնտեսապէս:

Հայերը նորից հաստատուել են 1828 թուականից սկսեալ, Թուրքմէնչայի ռուս-պարսկական դաշնագրից յետոյ, որի ժամանակ միայն մի կամ երկու գաղթական ընտանիքներ են ապրելիս եղել, ընդամէնը 7–8 հոգի (որոնք եւ մեծ ծառայութիւն են մատուցանել ռուսաց գնդապետ Պասկեւիչին). իսկ յետոյ հետզհետէ Թաւրիզից գաղթելով եւ բազմանալով կազմել են 25–28 ընտանիք, որոնցից, 1905ին (այնտեղ տարածած անախորժ դէպքերից յետոյ, իբր Կովկասեան հայ-Թրքական ընդհարումների արձագանգ), գաղթեցին 4 ընտանիք (3ը Թաւրիզ եւ 1ը Ռաշտ): Այժմ՝ այնտեղ կայ 21 ընտանիք, 128 բնակչով, լուսաւորչականներ (64 արական եւ 64 իգական), եւ 12 օտարականներ, ընդամէնը 140 հայ բնակիչ, որոնք պարապում են (բացառութեամբ 3 ընտանիքի) օղեվաճառութեամբ եւ միաժամանակ այլ պարապմունքներով (ծառայութիւն, զորձակատարութիւն, կոմիսիոներութիւն, արհեստներ, եւայլն):

Գրեթէ բոլորը աղքատ եւ հազիւ օրապահիկները հայթայթող են ներկայումս:

Ազգային հաստատութիւններ.— Հայերը ունին մի եկեղեցի, մի դպրոց երկսեռ (35–40 աշակերտով, 1 ուսուցիչ եւ 1 ուսուցչուհիով), մի գրադարան (500–550 գրքերով), մի բեմ, մի տուն (եկեղեցուն կից, քահանայի համար) եւ մի բաղնիք:

Այս բոլոր հաստատութիւնները հիմնուած են 1865–75 թուականների ընթացքում, գտնուելով անցեալում փառաւոր, իսկ ներկայումս, առաւելապէս ներկայ բռպէիս, աննախանձելի դրութեան մէջ՝ նիւթական տեսակէտից:

Այս բոլոր հաստատութիւնների բիւրջէն է (քահանայ, ուսուցիչ, ուսուցչուհի եւայլն) 7500 ղուռն, որից 6500 ղուռնը մատակարարում են տեղացիները ուղղակի եւ կողմնակի միջոցներով (ներկայացումներ, գրքարաղարան, եկեղեցի, վիճակախաղեր եւն.): Իսկ մնացած 1000 ղուռնը հոգացւում է նուէրներով եւ այլ միջոցներով՝ ոչ-տեղացիներից (ճանապարհորդներից, Թրքերից, դատաւորից եւայլն):

Արդ մօտաւորապէս ամէն մի տուն տալիս է ազգային հաստատութիւններին՝ 300–310 ղուռն, իսկ յեղափոխութեանը (Դաշնակցութեան) 40–50 ղուռն, ընդամէնը 350–360 ղուռն:

Ցեղ. Խմբեր.— Շահէվանում (Արդաբիլում) կայ 2 խումբ, 15 հոգով. մէկը կազմուած 1903ին Շահու անուամբ, միւսը 1904ին «Անդրանիկ» անուամբ. մի կանանց խումբ Ինքնակրթակ. Ընկ. անուան տակ՝ 20 անդամուհիներով, կազմուած 1905ին. մի ինքնապաշտպանութեան խումբ՝ 18 անդամներով (զինուորագրուած դաշնակցական եւ չէզոք՝ բայց Դաշնակցութեան համակրող անդամներով). կայ եւ մի Հնչակեան խումբ վերակազմուած 1905ին՝ 4 անդամով:

Զէնք.— Շահէվանում կայ 10 հրացան, 15 ատրճանակ, 2000 փամփուշտ (հրացանի եւ ատրճանակի), 18 դատարկ ռումբ, 2 որսորդական հրացան:

Ծանօթ.— Այս բոլոր զէնքերը, բացի 18 ռումբից որ Դաշնակցութեան սեփականութիւնն է, պատկանում են ընդհանրապէս դաշնակցական եւ մասնաւորապէս Դաշնակցութեան համակրող անհատների. եւ հետեւարար գտնւում են ինքնապաշտպանութեան խմբի տրամադրութեան տակ: Ինքնապաշտպ. խմբի տրամադրութեան տակ են նաեւ 2 Թուրք հաւատարիմ ծառաներ, իրենց զէնքերով:

Հնչակեաններն ունին 2 ատրճանակ, բայց ինչպէս ինքնապաշտպանութեան, նոյնպէս եւ այլ հասարակական գործերից ոչ մէկում մասնակցութիւն չունին, եւ չնորհիւ մեր բարոյական ու ֆիզիքական ուժի՝ նրանք ամէն կողմանէ մեկուսացած եւ սահմանափակուած են իրենց 4 հոգու մէջ (մինչեւ անգամ նրանց կանայքն էլ Ինքնակրթական Ընկ. անդամուհիներն են):

Պարպմունք.— Ա) Շահէվանի դաշնակցական խմբերը պարապում են ինքնազարգացմամբ, պրոպագանդայով, բոլոր ազգային հիմնարկութիւնների ղեկավարութեամբ եւ, հետեւարար, տալիս են ներկայացումներ, երեկոյթներ, հանդէսներ, դասախօսութիւններ եւայլն. բաց են անում հանդանակութիւններ եւ վիճակախաղ. պարապում են զինավարժութեամբ եւ ձիավարութեամբ. զինում են ժողովրդին եւ զէնքի վարժեցնում նրանց. զէնքի, աւելի ճիշդ ատրճանակի են վարժեցնում նաեւ դպրոցի մեծ աշակերտ եւ աշակերտուհիներին, ինչպէս նաեւ այլ օրիորդաց եւ տիկնանց:

Բ) Փոխադրում են Կովկաս (Անտառի միջոցաւ) թերթեր եւ այլ մթերքներ (բրոշիւրներ եւն.), 1903ից սկսեալ:

Գ) Կատարում են Ռսկանապատի իրենց վերաբերեալ Անտառի միջոցաւ տրուած յանձնարարութիւնները (օրինակ, անցագրեր մատակարարել, մարդիկ անցկացընել եւայլն), որ եւ ի դէպ է յիշել, որ բացի թերթերի պարբերական փոխադրութիւնից,

Դ) 1904ին Անտառի հետ ընկերակցութեամբ մատակարարել, փոխադրել են 50 անցագիր (վիզէ անել տալով նրանց): Անց են կացրել եւ հասցրել «Վրէժ»ին՝ 8 ատուկ ռումբեր, դատարկ, 1 հրացան, 6 ատրճանակ, 8000 փամփուշտ (հրացանի եւ ատրճանակի): Անց են կացրել եւ Ռսկանապատից յանձնարարուած 2 զինուորներ (հայր Պետ. եւ Սերովբէ) իրենց զէնքերով եւ 2 ընկերներ (Նիկոլ եւ Անուշաան): Անց են կացրել եւ չյանձնարարուած սակայն յայտնի եւ վստահելի ընկերներ (Թուրքեան – (?) –, Սարաֆեան եւ մի քանի պաշտօնից փախած հայ զինուորներ):

Ե) 1905 թուին Շահէվանը փոխադրել է թերթ, «Դրօշակ»՝ մօտաւորապէս 12–15 հազար օրինակ, «Հայրենիք»՝ մօտ 500 օրինակ եւ քիչ քանակութեամբ «Ռեվոլուցիոն. Ռոսսիա» (սոցիալ-յեղափոխականների օրգան), ինչպէս նաեւ քիչ քանակութեամբ հայերէն եւ ռուսերէն բրոշիւրներ եւայլն:

Փոխադրել են նաեւ քիչ քանակութեամբ Սոցիալ Դեմոկրատների օրգաններից՝ «Վբերիոտ» (?), «Իսկրա», «Պրոլետարիի» եւ Ռուսաց ազատամիտների օրգան «Աովոպոժենիէ» (?):

Զ) Տուել են 7 ներկայացում, 3 երեկոյթ, 2 հանդէս (մէկը Քրիստափորի, միւսը եկեղեց. կալուածների յետ ստացման համար). բաց են արել 2 վիճակախաղ, 2 անգամ հաւաքել են նուիրատուութիւններ եւ այդ բոլոր ձեռնարկների զուտ արդիւնքը, 3000–3500 ղուռն, յատկացրել են տեղական դպրոցի օգտին եւ 150 ղուռն էլ «Ազգապարհ» թերթին մաս հանել:

Իսկ Դաշնակցութեան համար պաշտօնապէս հանգանակութիւն է բաց արուել մի անգամ, որի արդիւնքը, 482 ղուռն, խմբերի անդամավճարների հետ փոխադրուել է «Վրէժ»ին:

Տուել է դասախօսութիւններ խմբական, եւ մի քանի անգամ հրապարակային, զանազան նիւթերի մասին, իսկ կանանց համար տուել է դաստիարակչական, մանկավարժական, առողջապահական եւ շատ քիչ յեղափոխական նիւթեր չօշափող պարբերական հրապարակային դասախօսութիւններ:

Ծանօթ.— Տուել է եւ մի հրապարակային դասախօսութիւն՝ Ատրպ. Կ. Կ.ի շրջիկ գործիչ բժիշկը, որ եւ ի դէպ է յիշել՝ որ մի անգամ էլ, ինչպէս Շահէվան, նոյնպէս եւ Անտառ, 1903ին է միայն շրջիկ (Տ. Զ.) այցելել, Ատրպատականի Կ. Կ.ի կողմից. իսկ 1904ին այցելել է մի պատուիրակ (Մ. Ե.), Ռսկանապատից ուղարկուած, մեր գործունէութիւնը կոնտրոլի եւ փոփոխման ենթարկելու իրաւունքով, սակայն վերոյիշեալը լինելով ապիկար եւ նամանաւանդ գործից, գոնէ մեր շրջանի, անտեղակ մէկը եւ չունենալով իր արտօնագրի վրայ պաշտօնական կնիք, չէ ընդունուել եւ մեր եւ Անտառի ընկերների բողոքի հիման վրայ, ուղղուած Ռսկանապատ, անմիջապէս յետ է պահանջուել:

Շահէվանում (Արդաբիլ), ի շարս այլ քաղաքական հաստատութիւնների, կայ եւ մի Ռուսական հիւպատոսական գործակալութիւն, որի ղեկավարութիւնը վաղուց ի վեր մի տեղացի հռչակաւոր հայ գերդաստանի ձեռքն է եւ որ ներկայացնում է նաեւ իբրեւ Առաջնորդական գործակալ Արդաբիլի հայ հասարակութեան:

Ցարաբերութիւն.— Շահէվանի խմբերը, ինչպէս նաեւ ամբողջ տեղացի հայ հասարակութիւնը, յանձին իրենց Առաջնորդակ. գործակալի (որը միաժամանակ եւ ինքնապաշտպանութեան խմբի խմբապետն է), շատ մօտ եւ բարեկամական յարաբերութեան մէջ են թէ՛ կառավարական հաստատութիւնների պաշտօնեաների, թէ՛ բարիների, թէ՛ հրեաների, թէ՛ Թուրք ազգաբնակութեան փոքրամասնութեան, թէ՛ «Շահէվան» ցեղապետների մեծամասնութեան եւ թէ, որն ամենագլխաւորն է, տեղական 2 մուշտէիդների հետ, որոնցից մէկը (Միրզա Ալաքբար Աղան) Պարսկաստանի հռչակաւոր եւ ազդեցիկ մուշտէիդներից մէկն է:

II ԱՆՏԱՌ

Անտառը (Աստարա) ծովեզերեայ մի քաղաք է, կէս մասը Պարսից, կէս մասը Ռուսաց հողի վրայ. բաժանուած է մի գետով, որը եւ կազմում է սահմանը. շրջապատուած է մի կողմից Կասպից ծովով, միւս կողմից՝ Մազանդարանի հոկայ անտառով:

Հեռու է Արդաբիլից՝ 65 վերստով:

Բնակչութիւն.— «Անտառ»ի (Աստարա) պարսից մասում կան 1000 տուն Թրքեր՝ 5000–5500 բնակչով, չիա դաւանութեան [պատկանող], քիչ Թուով սուններ:

— 4 տուն հայեր՝ 14 բնակչով (7 ար., 7 իգ.) եւ 6 օտարականներ, ընդամէնը 20 հայ բնակիչ, որոնք ապրում են խառը Թրքերի հետ ծովեզերքում: Կան եւ 7–8 հոգի՝ ռուսներ, յոյներ եւայլն:

— Անտառի Ռուսաց մասում կան 500 տուն Թրքեր՝ 2500–2800 բնակչով, չիա դաւանութեան, զետեղուած ծովեզերեայ 80 ամրէն (?) հեռաւորութեան վրայ, իսկ

— Ծովեզերքում կայ 44 տուն, որից 30 տուն ռուսներ եւ վրացիներ (քաղաքական եւ զինուորական պաշ-

տօնեաներ, բժիշկներ եւայլն), 5 *տուն Թրքեր* (*կոմիսիոներներ եւ առեւտրականներ*),

— *եւ* 9 *տուն հայեր* 49 *բնակչով* (23 *արական եւ* 26 *իգական*)· 10 *հոգի էլ օտարականներ, ընդամէնը՝* 59 *հայ բնակիչ*:

— *Թէ՛ Պարսից եւ Ռուսաց կողմի հայերի* (76 *բն*.) *մեծամասնութիւնը պարապում է կոմիսիոներութեամբ, գործակատարութեամբ եւ ծառայութեամբ, փոքրամասնութիւնը՝ առեւտրով*: *Ընդհանրապէս բոլորն էլ նիւթականապէս ապահովուած են եւ պահանջուած դէպքին Թէ՛ ազգային հաստատութիւնների եւ Թէ յեղափոխութեան օգտին իրենց նիւթական աջակցութիւնը չեն խնայում*:

Ազգային հաստատութիւններ·— *Հայերն ունին Պարսից կողմում մի հանգստարան, իսկ Ռուսաց կողմում մի աղօթարան, մի հանգստարան եւ մի փոքր տուն* (*քահանայի համար*), *որոնցից եւ հնուց անտի օգտւում են ռուսները*:

Զէնք·— *Պարսից կողմում կայ հայերի մօտ* 2 *հրացան*, 7 *ատրճանակ*· *իսկ Ռուսաց կողմում՝* 9 *հրացան* (4*ը որսորդական*) *եւ* 18 *ատրճանակ*:

Յեղափոխական խմբեր·— *Կայ մի դաշնակցական խումբ՝* 14 *հոգուց բաղկացած* (*Ռուսաց եւ Պարսից կողմում*):

Պարապում են ինքնազարգացմամբ, պրոպագանդայով· *բաց են անում հանգանակութիւններ*: *Փոխադրում են Թերթեր եւ այլ մթերքներ*, 1901*ի վերջերից մինչ* 1903 *մենակ, իսկ* 1903*ից մինչ այժմ Շահսէվանի ընկերակցութեամբ*: *Կատարում են Ոսկանապատի զանազան յանձնարարութիւնները եւայլն, եւ Թէ՛ փոխադրութեան եւ Թէ յանձնարարութեանց տեսակէտից ունեցել են նոյն գործունէութիւնը, ինչ որ Շահսէվանն է ունեցել*· (*տես Շահսէվանի տեղեկագրի, «Պարապմունք»ի Բ., Գ., Դ., Ե. պարբերութիւնները*)· *մէկը կազմել է միւսի շարունակութիւնը*:

— 1905*ին «Անտառ»ը բաց է արել մի հանգանակութիւն Բագուի աղէտեալների օգտին* (100 *ռուբլի ռուսաց դրամ արդիւնք ստանալով*): *Ի նկատի ունենալով իր ընկեր գործակատարների մոտեւապէս չահագործուելը իրենց այսպէս կոչուած* Խազէյինների *կողմից, կազմակերպել է գործադուլ* (*ի հարկէ կառավարութիւնից զաղտնի*) *եւ* 11 *յօդուածներից բաղկացած մի պահանջ է առաջադրել եւ գրեթէ իսկոյն եւ եթ մեծաւ մասամբ բաւարարութիւն ստացել*:

— 1901*ից մինչ այժմ ոչ մի մթերք չէ բռնուած եւ ոչ ոք մեր ընկերներից կասկածանքի չէ ենթարկուած*:

— «*Անտառ*»*ի տարեկան հաստատուն եկամուտն է* 80–90 *ռուբլի ռուսական*:

— *Կայ այնտեղ եւ մի* հնչակեան *անհատ, որը իրենց Թերթերն է փոխադրում Կովկաս, ստանալով ոռճիկ Թաւրիզու իրենց մասնաճիւղից*:

Սկզբներում նա զտնւում էր Ռուսաց կողմում գործակատարի պաշտօնով, բայց 2 *անգամ իրենց Թերթերի բռնուելու պատճառով* (*մի անգամ Բագւում եւ մի անգամ էլ չոգենաւում՝ Աստարայի դիմաց*), *ձերբակալման վտանգի է ենթարկուած*: *Այժմ ապրում է Պարսից կողմում, առանց Ռուսաց կողմը անցնել կարողանալու*:

— *Խօսելով ուրիշ կուսակցութիւնների մասին, ի դէպ է յիշել, որ Պարսից Աստարայից* 1 *վերստ հեռաւորութեան վրայ ծովի երկարութեամբ մինչ Ֆնգելի եւ աւելի հեռու մինչեւ Մէշէդսէր ձգուած են յայտնի հայ կապիտալիստ Լիանազովների ձկնորսարանները* (*կառավարութեամբ Թիֆլիսարնակ Ալ*· *Մելիք Ազարեանի*), *որտեղ կան ինչպէս հազարաւոր Թուրք* (*համշարի*) *բանուորներ, նոյնպէս եւ հազարաւոր ռուս բանուորներ եւ քիչ քանակութեամբ էլ հայեր*:

Ռուս բանուորների մի մասը արդէն հաստատուած են այդ կողմերում, իսկ մի մասը պանդուխտներ են, որոնք երբեմն-երբեմն վերադառնալով հայրենիք, ենթարկւում են այնտեղի սոցիալ-դեմոկրատների եւ սոցիալեղափոխականների պրոպագանդին եւ, վերադառնալով ձկնորսարանները, սկսում են այդ պրոպագանդը արծարծել եւ իրենց մէջ· *բայց մինչ այժմ, գոնէ Աստարայի կից ձկնորսարաններում, ոչ մի կազմակերպուած մարմին գոյութիւն չունի*· *կան միայն մի քանի սոցիալիստ անհատներ*:

— *Աւելորդ չէ յիշել եւ այն, որ Դաշնակցութեան պրոպագանդը մուտք է գործել «Անտառ»* 1901*ի վերջերից սկսեալ եւ ունեցել է մի քանի համակրողներ, որոնք հետզհետէ Թուով աւելի ստուարանալով՝ կազմել են մի քանի խմբեր եւ* 1903*ին էլ վերակազմել են «Շահսէվան»ը*· 1904*ին ունեցել են ենթակոմիտէ* ԻրանԹուրան *անուամբ, որը յետոյ չնորհիւ ընկերների պակասելուն՝ կազմալուծուել է*:

— *Անտառի խմբերը, ինչպէս միշտ, նոյնպէս եւ այժմ, յանձին իրենց խմբապետի եւ իր մի քանի ազդեցիկ ընկերների, չարունակ բարեկամական յարաբերութեան մէջ են եղել* (*ի հարկէ ոչ պաշտօնապէս*) *Թէ՛ Ռուսաց եւ Թէ Պարսից մաքսատնային պաշտօնեաների հետ, որոնք մասնաւորապէս եւ բարեկամաբար, նոյնիսկ երբեմն-երբեմն անգիտակցաբար, աջակցել են եւ բոպէիս էլ աջակցում են խմբին իր գործունէութեան մի քանի կէտերի մէջ* (*անցագրեր վիզէ անել տալու մէջ եւայլն*):

Պատգամաւոր «Շահսէվան»ի եւ «Անտառ»ի՝
ՊԱՀԱԿ ՍԱՀՄԱՆԵԱՆ

18·— ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱՓԻ

Նամակի երկար չափի երկերեք թուղթ, անգիծ: Գրուած է 2 էջ, բաց-կանաչ (քերեւս ժամանակի ընթացքին գունաթափ եղած) մելանով: Թուական եւ ստորագրութիւն չկայ:

Ափը ոչ քաղաք է եւ ոչ՝ այսպէս ասած՝ գիւղ, այլ սահմանագլխային մի կայարան, որը կամաց-կամաց կարեւոր մի կեդրոն դարձած է, Թէ՛ փոստային եւ Թէ մաքսատան ամբողջական ընդունարանը (?) *լինելուն համար՝ Թէ՛ արտասահմանի եւ Թէ Ռուսաստանի*:

Կազմակերպական տեսակէտով կարեւոր վայր է, իբր փոխադրութեան յարմարութիւններ ներկայացնող Թէ՛ զէնքի եւ Թէ Թերթերու տեսակէտով:

Ափին անմիջապէս մօտ զտնւում են նոյնքան կարեւոր Վանքը (*Ս*· *Ստեփանոս*) *եւ Դարաշամ գիւղը, որ վանքին վերաբերութիւնն է* [*սեփականութիւնը*]:

Ափը առ հասարակ ճամբորդ եւ անցորդ հայ բնակչութիւն մը ունի· *բացի այդ՝ կան* 3 *խանութպաններ,* 2 *մաքսատան պաշտօնեաներ, մի պանքի ներկայացուցիչ եւ* 25–30 *բանուորներ* (*ճամբու*) — *ծառայողներ*: *Դաշնակցական երկու խումբեր կան, մօտաւորապէս* 25 *անդամներով եւ* 40–50 *Թուման անդամավճարով*· *ուրիշ կուսակցութիւններ միայն անհատներ ունին, իսկ կազմակերպութիւն՝ ոչ*:

Ափի ընկերների ջանքով այս տարուայ ընթացքում փոխադրուած են, բացի յեղափոխական 10–15 *զինուորներէ, Թերթեր, բրոշիւրներ եւն*·:

Դժբախտութիւններ բացառիկ եղած են· *միայն մի անգամ որոշ Թուով ծրարներ բռնուած են, եւ դրանց համար տուգանք վճարելով* 60 *Թուման, ազատուած են*: *Երկրորդ անգամ դարձեալ «Դրօշակ»ի ծրարներ բռնուած եւ* 15 *Թուման վճարելով վերստին ձեռք բերուած են*:

Այս տարի դարձեալ զանգեզուրցի հայեր, Թուով մօտ 50 *հոգի, այս ճանապարհներուն իբր մշակներ՝ անցած էին պարսկական հողը*· *իրենց հայրենիք վերադարձած ատեն մէկ-մէկ բերդան զէնք անցընելու ցանկութիւնը ունեցած են եւ մեր Ափի ընկերներու օժանդակութեամբ յաջողած են ապահով անցնել,— որը ոչ նուազ պատուաբեր է մեր ընկերներուն*:

Վանքը ունի 3 *վանական* (1 *վրդ*·, 1 *տիրացու*, 1 *ժամկոչ*) *եւ* 7 *որբեր՝ Կաթողիկոսի կարգադրութեամբ*:

Դարաշամ գիւղը, որ վանքի եկամուտի միակ աղբիւրն է, ունի 40 *տնուոր՝ մեծաւ մասամբ հողամշակութեամբ զբաղուած, մասնաւորներ* (*բաւական Թուով մաքսանենգներ*) *եւ մի քանի անհատներ*:

Մինչեւ մօտ ժամանակներս անոնք մեծ դեր կը խաղային կազմակերպական փոխադրութեան մէջ, բայց վերջերս, այդ վախկոտ եւ շահասէր գիւղացիները զրեթէ բոլորովին անմասն մնացած են յեղափոխական գործունէութեան մէջ եւ ամենափոքր զոհողութիւններ իսկ յանձն չեն առած:

Առաջարկութիւններ·— 1) *Եթէ փոխադրութիւններ լինելու են յառաջիկայում այս գծով, աւելի ճի՛շդ հասկացողութեան գալ Նախիջեւանի ընկերներուն հետ*:

2) *Անցուդարձ ընող ընկերներու վրայ պարտականութիւն դնել՝ առիթէն օգտուելով գրաղուելու պրոպագանդայով*:

19·— ՓՐԴԵՐԻ ԵՒ ԱՅԼ ՏԱՐԲԵՐԻ ՀԵՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Նամակի նորմալ չափի երկու յաջորդական երկերեք թուղթերու վրայ, 8 երես, սեւ մելանով: Ստորագրութիւն չկայ· բայորովին որոշ ալ չէ թէ ատարտա՞ծ տեղեկագիր մը է, կամ կա՞ն արդեօք կորսուած մասեր:

Բացի այն գրաւոր յարաբերութիւններից, որ ունեցել է «Դրօշակ»ի խմբագրութիւնը երիտասարդ Թուրքերի, քրդերի եւ այլ տարրերի հետ, սահմանագլուխի մարմինները յաճախ գործնական յարաբերութիւնների մէջ են եղել քիւրդ էլաղասիների, բէկերի և պարսիկ խաների եւ զանազան տարրերի հետ: *Այդ յարաբերութիւնները գործնական որոշ նշանակութիւն ունեցել են, բայց ափսոս որ անհատային գոյն են կրել եւ հեռու են եղել տեւողական ու կազմակերպական նշանակութիւնից*:

Այժմ գրի առնելով բոլոր այն յարաբերութիւնները, որոնք տեղի են ունեցել պարսկա-Թրքական սահմանագլխում, այդ տեղեկութիւնը հաղորդելու գործնական նպատակն է [*մղել*] *արտասահմանի ընկերներին, որ այդ տեղեկութիւնների հիման վրայ որոշ յարաբերութեան ձեւ մշակեն ու փոր յատկացնեն* (*յետոյ ցոյց կը տրուի Թէ որքա՛ն մեծ նշանակութիւն ունի այդ յարաբերութեան խնդրում դրամը*), *եւ յանձնարարեն կարեւոր տեղերին՝ գործողութիւնները աւելի կանոնաւորելու եւ լայն կազմակերպական գոյն տալու համար*: *Վերջին տեղեկութիւնը որ ձեռքի տակ կայ, դա սկրսւում է Արմենակ Օխիկեանի ժամանակից*· *նա յարաբերութեան մէջ էր Թաար խանի հետ, որը Կուրանի խանն էր*· *սրա միջոցով եղել է փոխադրութիւն եւ ամենաառաջին գործն է եղել՝ դոցա հասկացնել, որ կազմակերպութիւնը կառավարութեան հետ գործ չունի եւ ոչ ալ այս կամ այն ժողովրդի հետ*· *այդ ձեռնարկը յաջողւում է, եւ վերոյիշեալ խանը եւ նրա մարդիկը զինանում են ու մասնակի օգնութիւններ անում*...

Վերջինիս սպանութիւնից յետոյ դրա իշխանութիւնը ընկնում է Մուստաֆա բէկի ձեռքը, որի հետ էլ չարունակուեց յարաբերութիւնը:

Սրա հետ որոշ պայմաններ են որոշւում· *մերոնք պահանջում են*, Ա) *որ նա չէզոք մնայ*· Բ) *դէպքերի*

ժամանակ Թուրք զօրքերին օգնութեան չգան եւ Գ) փոխադրութեան գործին նպաստեն: Իսկ ինքը՝ Մուստաֆա բէկը՝ առաջարկել էր, որ [իր] ժողովրդի ինքնապաշտպանութեան համար 50 հատ մոսինի հրացան գնեն, ի հարկէ իւր փողով. այդպէս էլ լինում է. մերոնք յարմարութիւն են ստեղծում եւ այդ զէնքերը ձեռք բերում ու տալիս բէկին: Այդ ժամանակ, որքան պայմանները ներել են՝ նա օգնել է, բայց մի անգամ երբ 4000 ծայրեր է տրւում դրանց Շամ փոխադրելու համար, դրանք իւրացնում են եւ մինչեւ վերջերս էլ դեռ վերջնական պատասխան չէ տրուած. այս դէպքը կատարուել է այն ժամանակ երբ Մուստաֆա բէկը, կռուի բռնուելով Պարսկաստանում, անցնում է Տաճկաստան. ծայրերի կորստեան պատճառն մասամբ էլ մերոնց թուլութիւնն է, նրանք որոշ դիմումներ չեն արել. վերջերս կոմսը դիմել է, բայց տակաւին պատասխան չէ ստացուել...

Արմենակից յետոյ այս բէկի հետ յարաբերութիւնը դադարեցրուած է. բայց հետեւեալ փաստերը ցոյց են տալիս, որ եթէ կանոնաւոր բանակցութեան մէջ մտնենք, էլի կարելի է օգտուել. օր. վերջերս նա Շամում ապրում էր ոստիկանական հսկողութեան տակ. նա այդպիսի դրութեան մէջ՝ հարցնում է թէ Արմենակը ո՞ւր է բռնուած եւ ասում՝ թէ ինչ որ կարող է անել Արմենակի համար, պատրաստ է անելու. մի քանի ժամանակ առաջ երբ մեր տղաները Երկրից այս կողմը պիտի անցնէին, նա իւր մարդուն դրել է դրանց հետ եւ պատուիրել որ ապահով տեղ հասցնեն. այդպէս էլ եղել է. ինչ ասել կ'ուզէ որ վերջինին լաւ վարձատրել ենք. վարձատրութիւնը նրանց աստուածն է... Այս բոլոր լաւ գործողութիւնների հետ վերջերս նա արել է մի քայլ, որը որոշ չափով մեզ համար (թէև ոչ անմիջականօրէն) վնասակար է. նա Շամում եղած ժամանակը կառավարութեան գանգատուել է մեր մի ուրիշ բարեկամի մասին, որ էլաղասի է, որ՝ իբր ֆիդայիներին օգնութիւն է անում, թէեւ դա արել է նրան վարկաբեկելու համար: Բայց յամենայն դէպս մեզ է վնասել: Եթէ նրա հետ կանոնաւոր յարաբերութեան մէջ լինենք, կարելի է այդ բոլորը չտեսել...

Մուստաֆա բէկի Պարսկաստանից հեռանալուց յետոյ, յարաբերութիւն սկսւում է մի ուրիշ բէկի հետ, որը հայտարանցոց ցեղապետն է եւ Ապաղայի շրջանի գլխաւոր: Մակուի Սարդարը Մուստաֆա բէկից ազատելու համար Մահմէդ բէկին կանչում է Պարսկաստան եւ Մուստաֆա բէկի իշխանութիւնը խոստանում է յանձնել իրեն: Այդ ժամանակ հանդուցեալ Շաւրոն Մենաւորում պատահաբար տեսակցում է Մահմէդ բէկի հետ եւ բացարձակ կերպով դնում է, որ ինքը յեղափոխական է, որ յեղափոխական քրդերի և այլ տարրի հետ գործ չունի, իրա գործը կառավարութեան հետ է. բէկը ուրախութեամբ ընդունում է աջակցել եւ առաջարկում է իւր պայմանները:

Պայմանները երկուս են,— Ա) Սարդարը իւր խոստումները չէ կատարում եւ բէկին իւր իշխանութեան մէջ չի հաստատում. բէկը առաջարկում է Շաւրոյին, որ կազմակերպութիւնը մեծ հեղինակութիւն ունենալով պարսիկ կառավարութեան եւ պաշտօնեաների վերայ, Թող մինչորդէ եւ իմ իշխանութիւնը (իսկապէս նա ժառանգական իրաւունք ունէր) հաստատէ. Շաւրոն տեղեկագրում է Վրէժ, բայց ինչ եւ ինչ պատճառներով անկարող են լինում աջակցել. Շաւրոն հեռագրով դիմում է Թեհրան Շահին, բայց առանց կաշառքի եւ միջնորդի անկարելի էր Պարսկաստանում գործ կատարել. այդպէս էլ վիժում է: Բէկը ստիպուած է լինում վերադառնալ Թիւրքիա՝ իւր նախկին պաշտօնով:

Բ) Պայմանը վերաբերում էր մի ուրիշ խնդրի. բէկը փնտռում էր երկու պատրաստի խնձոր իւր երկու թշնամիներին ոչնչացնելու համար. խնձորի գործողները պէտք է լինին իւր մարդիկը. նա խնդրում էր միայն պատրաստել տալ եւ միայն գործադրելու ձեւը սովորեցնել...

Շաւրոն երկու պայմանն էլ ընդունում է, մանաւանդ որ Բ. պայմանը բաւականի ձեռնտու էր մեզ համար, որովհետեւ այդ մարդիկ անպայման վնասակար էին եւ մե'զ համար. դրանց մէկը կանչուած է գարնան Սասունի ջարդին մասնակցելու, բայց առաջարկել էր, որ մինչեւ Սասուն ինչքան հայ կայ՝ պիտի կոտորէ...

Բէկը նախ քան Տաճկաստան անցնելը առաջարկում է, որ փոխադրութեան գործը կանոնաւորելու համար ինքը կը ծանօթացնէ իւր մի բարեկամ պարսիկ խանին. նա կ'աջակցէ փոխադրութեան գործին: Այդպէս լինում է. Շաւրոն ու բժիշկը բէկի հետ գնում են այդ խանի մօտ, ուր բէկը տղաներին յանձնարարում է խանին եւ ինքը անցնում է Տաճկաստան:

Խանը հաւատարմութեամբ բարեկամանում է եւ իւր աջակցութիւնը ցոյց է տալիս ամենայիմար պայմաններում: Սրա օգնելու դրդիչ պայմանները. ա) բէկի յանձնարարականն էր եւ բ) որ ամենագլխաւորն է՝ խանը աղքատ էր եւ նիւթական օգնութեան կարօտ. մասնակի ձեռնարկի համար խանին համար գործադրուում է միայն 3 ամսուայ մէջ մօտաւորապէս 40 ռուբլի. փոխադրուել է մօտաւորապէս 7000 ծայր. յետոյ պայմանաւորում են, որ խանը ինքը երկու անգամ փոխադրութիւն անէ 20 հազար ծայր. բժիշկը խոստանում է այդ փոխադրութեանը համար խանին տալ մի լաւ ձի եւ մօտ 200 ռուբլի փող. առաջարկութիւնը անում է Մինարէթի եւ Աւարայրի ընկերներին. վերջինները պահանջներին գոհացում չեն տալիս եւ այդ գործն էլ այդտեղ երեսի վրայ է մնում՝ փող չլինելու պատճառով:

Ռայոնական ժողովներում գանգատւում ենք թէ փոխադրութիւնը անկարելի է: Զրաբերդի գծերի վրայ մի քանի տասնեակ հազարներ ենք դրել, բայց սկզբից իմանալով որ յաջողութիւն չենք ունենալու: Իսկ այստեղ այսպիսի պայմաններից ոչինչով չենք կարողանում օգտուել մարդ եւ փող չլինելու պատճառով. մանաւանդ որ մենք մեր զանազան վայրերից տեղեկութիւն չենք կարողանում կենտրոնացնել եւ կարեւոր պարագաներում չահագործել...

Շաւրոն այդ օրերում այդ գծով անցնում է Երկիր, հակառակ ընկերների ու բէկի ցանկութեան. բէկը գրել է, որ առանց իւր կնքած նամակին իւր ոչ մի քրդին չվստահանալ: Շաւրոն, այդ բոլորը արհամարհելով, աւազակ քրդերի հետ բարեկամանում է եւ նրանց հետ մենակ իբրեւ յեղափոխական ներս է մտնում. առաջին օր հանում է մի հայ գիւղ, ուր հայեր իրան առաջարկում են քրդերին թողնէ, իրենք կ'առաջնորդեն Շամ: Շաւրոն մերժում է: Քրդերը ճանապարհին զարկում են միայն մոսինի հրացանը եւ մատանին տանելու համար: Այս եւ նման երեւոյթների մեծ նշանակութիւն չէ տալու, որովհետեւ, քրդական եւ թրքական սովորութեամբ, երբ մեծերը, աղաները, բէկերը եւ էլաղասիները աջակցութիւն են առաջարկում, նրանց ժողովուրդը ու ծառաները անպայման կ'ենթարկուին աղաներին: Մասնակի տմարդութիւն եւ գողութիւն ամէն տեղ կը լինի:

Շաւրոյի սպանութեան առթիւ Կոմսը Շամից եւ բժիշկը Մենաւորից նամակով դիմում են (սպառնալով) բէկին եւ բացատրութիւն պահանջում, թէ ինչո՞ւ քո մարդիկը քո հողում այդպէս տմարդի գործողութիւն են կատարում, եւ մեղքը ձգում են բէկի վրայ: Բէկը նամակներով պատասխանում է ու բացատրութիւն տալիս, որ ինքը մեղաւոր չէ, որ ինքը այդ օրերին Շամ է եղել, որ վաղուց ինքը յայտնել է առանց իւր նամակին ոչ ոքի չվստահանալ... Ընկերները բէկին պատճառած վիրաւորանքները թեթեւացնելու ու իւր օգնութեան համար վճռում են մի նուէրով բէկի սիրտը շահել (բէկը հարուստ է եւ նիւթական աջակցութեան կարիք չունի). Կոմսը եւ բժիշկը յարմար են գտնում իրբեւ նուէր ուղարկել մի ֆոնոգրաֆ. Վրէժի ընկերները մինչեւ հիմա այդ հարցը ձգձգել են եւ միայն վերջերս վճռել են ուղարկել. բանը այնտեղ է հասել, որ բէկը ինքը լսել է որ ֆոնոգրաֆ պիտի ուղարկեն իրեն ու առաջարկել է, թէ ինձ համար նուէր պիտի բերէք, ո՞ւր մնաց: Կոմսը, երեւի ճարահատեալ, ուղարկել է մի արծաթ չիբուխ իւր ծխատուփով:

Շաւրոյի սպանութիւնից յետոյ բէկի թշնամիները լուր հասցնում են շրջանի վալի փաշային. վալին բէկից եւ մի պատուաւոր հայից բացատրութիւն է պահանջում, եւ երկուսն էլ մեղադրում են ֆիդայիներին օգնելու մէջ. բէկը թէ՛ հային եւ թէ իրեն կարողանում է արդարացնել ու Շաւրոյի սպանողներին հալածում է եւ մէկին մի ուրիշ պատրուակով սպանել տալիս. ընկերները հաւատացած են որ միւսն էլ կը սոսանայ իւր արժանաւոր պատիժը հենց բէկի ձեռքով...: Այդ խառնակ դրութեան մէջ փոխադրութիւնը շարունակւում է մինչեւ բէկի շրջանը, իսկ այնտեղից անկարելի է լինում: Ընկերները պաշտօնապէս դիմում են բէկին. նա եղներով ուլամ է հանում եւ իւր մարդկանցով, ու իւր ուղեկցութեամբ, տեղափոխութիւն է անում: Մի ուրիշ անգամ տղաները տեղափոխութեան ժամանակ պատահում են քրդերի, որոնք կասկածում են եւ հարցնում, թէ այդ ի՞նչ էք տանում եւ ո՞ւր էք գնում: Տղաները պատասխանում են, թէ բէկի համար աղ ենք տանում եւ ուղղակի քշում են բէկի տանը. բէկը տանը չէ լինում. կինը ապրանքներին եւ տղաներին տեղաւորում է եւ միւս օրը ապահով ճանապարհ է ձգում... Տասնեակ այսպիսի փաստեր կան, որոնք ապացուցանում են բէկի հաւատարմութիւնը եւ նրան անկեղծութիւնը: Բացի վերոյիշեալ պատճառներից, բէկի օգնութիւնը ունի եւ քաղաքական–մտաւորական պատճառներ. նա մի անգամ ընկերներից մէկին ասել է.— «Ես գիտակցում եմ, որ մի օր հայերը յաղթանակ պիտի տանին, եւ մենք պիտի նրանց դրացին լինինք կամ նրանց հողերից օգտուողը. եթէ այժմուանից նրանց հետ բարեկամ չլինինք, յետոյ մեր եւ ցեղակիցների դրութիւնը գէշ կը լինի»:

Բէկը մեզ համար միշտ օգտակար կարող է լինել, եթէ միայն մենք մեր յարաբերութիւնների մէջ զգոյշ լինենք, մեր խօսքի տէր, մանաւանդ մեր հեղինակութեա'ն տէր: Բէկը իւր գործողութիւնների համար իւր ազգականներից առում է. նոյնիսկ շրջանի բոլոր բէկերը ժողով են գումարել ու հրաւիրել բէկին եւ առաջարկել որ ֆիդայիների հետ յարաբերութիւնը թողնէ... բէկը չէ փոխուել. վերջերը տարածել են որ բէկը ծերացել է եւ խելքը կորցրել...: Վերոյիշեալ խաները՝ որը բէկը յանձնարարել էր մեզ, մէկ ուրիշ պարսիկ խանի իշխանութեան տակ ապրող է. փաշա–խանը իւր ձեռքի տակ ունի 35 գիւղ, իսկ մեզ հետ գործ ունեցող խանը սրա որդին է: Նա առաջարկութիւն է արել հայերին օգնելու հետեւեալ դիտաւորութեամբ: Սա քաղաքական նպատակներ ունի, սա էլ ընդունում է որ հայ յեղափոխութիւնը պիտի յաղթանակ տանէ, որովհետեւ նա հաւատացած է որ եւրոպացիք հայերին օգնում են. այս համոզումը նրան ներշնչել է Թեհրանի անգլիական դեսպանը: Անգլիական կառավարութիւնը վերոյիշեալ խանի հետ ունեցել է յարաբերութիւն. Պարսկա–հնդկական փոստը գնացել է փաշա–խանի երկրով եւ սա եղել է հսկող. այդ ծառայութեան համար անգլիական կառավարութիւնը նրան տարեկան 12 ռուբլի է տալիս. բայց վերջերս հաղորդակցութեան կանոնաւորումից յետոյ դադարեցրել են այդ վարձատրութիւնը: Երբ անգլիական դեսպանը պաշտօնական պրոտոյտի է գալիս խանի շրջանը, խանը պատմում է իրենց ծառայութեան մասին եւ գանգատւում է որ դադարեցրել են դրամի առաքումը. դեսպանը խոստանում է գրել անգլիական կառավարութեան եւ, այդ խօսակցութեան ընթացքում, առաջարկում է խանին որ հաշտ լինին հայերի հետ, պաշտպանեն, նոյնիսկ Տաճկաս-

տանի բռնութիւնների մասին տեղեկագրեր ուղարկել Թեհրան՝ իրեն։ Այս խօսակցութիւնից խանը եզրակացրել է, որ անգլիացիք հայերին պաշտպանում են եւ հայերն էլ՝ անգլիական կառավարութեան առաջ հեղինակութիւն ունին։ Ուստի առաջարկում է որ ինքը ծառայութիւն կ'անէ հայերին, միայն անգլիական կառավարութեանը լսեցնել տան որ խանը հայերին օգնում է եւ ցանկանում է անգլիացիների հետ բարեկամ լինել. այն համոզումով՝ որ եթէ երբեւիցէ Սարդարը ցանկանայ իւր հողեր խլել, հայերը կը միջնորդեն եւ անգլիական կառավարութիւնը կը պաշտպանէ խանի իրաւունքները։ Դեսպանի պաշտօնական զեկուցման հիման վրայ, անգլիական կառավարութիւնը իբրեւ նուէր այս խանին ուղարկել է ոսկի գրիչ՝ իւր պարագաներով։

Բացի վերոյիշեալ յայտնի խաներից ու բէկերից, կան ուրիշ փոքրիկ խաներ ու բէկեր, որոնք ծառայութիւն են առաջարկում նոյն դիտաւորութիւններով։ Սրանց վրայ աւելացնելու է եւ մասնաւոր անհատներ (քրդեր եւ Թուրքեր), որոնք նիւթական վարձատրութեան համար տանում են։ Քիւրդ ու Թուրք տարբերի օգնութեան պատճառները ընդհանուր կերպով կարելի է չորս կէտերի բաժանել։— 1) Նիւթական նկատումներով օգնութիւն (մեծ մասամբ աղքատ դասակարգերից)։ 2) հեղինակութեան համար օգնութիւն (մանաւանդ Պարսկաստանում՝ սա որոշ ապահովութիւն է. մեծ բան է Ֆիդայի բարեկամ ունենալ)։ 3) երկիւղից թելադրուած օգնութիւն (հակառակ պարագայում վրէժխնդրութիւնից վախենում են)։ 4) քաղաքական նպատակներով օգնութիւն (սա նոր ու Թոյլ երեւոյթ է, բայց ոչ միայն սահմանում, այլ ներսն էլ, Սասունո՛ւմ էլ այդ երեւոյթը նկատուել է...)։

20.— ԿԱՐԾԻՔՆԵՐ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԱՑԼԵՒԱՅԼ ՇՐՋԱՆՆԵՐԻՑ

Այս բնդհանուր խորագրին տակ միացուած՝ վրէժի թղթածրարներում մէջ կը գտնեմ բազմաթիւ առաջարկներ եւ բանաձեւուած մտածումներ, որոնք բոլորն ալ ուղղուած են Հ. Յ. Դ. 4րդ Ընդհանուր ժողովին, ուղղակի կերպով կամ վրէժի «Շերջանական» ժողովին թէ կեդր. կոմիտէին խորհրդակով։

Դու տանք յաջորդաբար՝

Ա.— «Աշխարհաբարեան ընկերների կարծիքը», ձեռագրուած Ընդհանուր ժողովին՝ վրէժուն ստորագրութեամբ (վրէժի պատգամաւոր Ստ. Ստեփանեանն է, այլ անունով՝ Բալաջան կամ Ծերունի)։

Բ.— «Կարծիքներ Վրէժի № 8 շրջաբերականի» խորագրեալ գրութիւն, մօտ 4 եւ կէս էջ, մամուր գրով եւ սեւ մելանով։ Անթուակիր։

Գ.— Շանի կոմիտէի (Թեհրան) գրութիւնը՝ «Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհանուր ժողովին», կուսակցական պաշտօնաթուղթի վրայ, սեւ մելանով, մօտ 10 ու կէս միջակ էջ, Շաւարշ ստորագրութեամբ։

Մանօթ.— Թղթածրարին մէջ կը գտնուի միեւնոյն գրութեան հարազատ երկրորդ մէկ օրինակը եւս, կապոյտ մատիտով մակագրուած՝ «Արեւել. Բիւրոյին» եւ «Ցի Ճանձ»։

Դ.— «Փարս կոմիտէի կարծիքները Պարսկաստանի Բայանական ժողովի օրակարգի խնդիրների մասին», № 8», — նամակի երկերեք թուղթի վրայ 4 էջ գրութիւն՝ 11 Դեկտ. 1905 թուակիր։

Ե.— Նոր Ջուղայի Գետափ ենթակոմիտէի 5 Նոյ. 1905 թուակիր նամակը Վրէժի կ. Կոմիտէին, 2 նորմալ էջ, սեւ մելան։

Զ.— Խումբ մը ընկերներու ստորագրութեամբ՝ 17 Հոկտ. 1905 թուակիր նամակ Վրէժի կ. Կոմիտէին, Բենդէր Գեազէն, — նամակի նորմալ չափի երկերեք թուղթի վրայ՝ 3 էջ, սեւ մելանով գրուած։

Է.— «Առաջարկութիւններ» Ընդհանուր ժողովին, Գորտ-Արտուրի ենթակոմիտէին կոդմէ, կայծ ստորագրութեամբ. մէկուէս մեծ էջ՝ սեւ մելանով։

Ը.— Ընդհանուր ժողովին ուղղուած՝ 10 Հոկտ. 1905 թուակիր գրութիւն Մարաղայէն, մտ 2 նորմալ էջ, մանիշակագոյն մելանով. առաջին էջի ձախ անկիւնին վրայ մակագրուած է՝ «Հ. Յ. Դաշնակ. Ընդ. ժողովին, որոշուած Խմբ. ժողովում»։

Թ.— Շահսէվանի եւ Անտառի պատգամաւոր «Պահակ Սահմանեանի» ստորագրութեամբ, 2 Փետր. 1906 թուակիր կարճ գրութիւն «Հայոնական» ժողովին, մանիշակագոյն մելանով։

Ժ.— Բոդոմագիր Ղազվինի ընկերներէն՝ Վրէժի կ. կոմիտէին, գրուած 1906 Յուլիսին, 28 ստորագրութիւններով։ Վարդան Ցէր Յովհաննէսեան ստորագրած երկտողով մը գրութիւնը 25 Յուլիս 1906ին գրկուած է Արեւմտեան Բիւրոյին եւ, ըստ երեւոյթին, բերուած Ընդհանուր ժողովին։ 4րդ (վերջին) էջին վրայ, Վրէժի պատգամաւոր Ստեփանեանը ունի 12 Փետր. 907 թուակիր (Վիեննա) կարճ բացատրագիր մը՝ գրութեան խորագիրուած բլլալուն մասին։

Ա.— ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԸՆԿԵՐՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԸ

1. Ինքնապաշտպանութիւնը ընդունում են սկզբունքով, առանց յեղափոխական բնոյթ տալու. պիտի կազմակերպուի տեղական ուժերից, մեր կուսակցութեան ղեկավարութեամբ. պիտի կրի «հաւարի» ձեւ։

2. Պրոպագանդան պիտի մղուի ներսի ընկերներից եւ տեղացիներին պիտի տալ առաւելութիւն. իսկ դրսեցիներից՝ ըստ կարելւոյն նպաստել ինտելիգէնտ և զինուորական ոյժերի երկիր մտնելուն, ընդհանուր գործը ղեկավարելու [համար]։

3. Հայ ժողովրդի տնտեսական ներկայ դրութիւնը նկատի ունենալով, — խոյս տալ որեւէ ցայտուն ձեռնարկից. իսկ ձեռնարկներ՝ Թուրք եւ այլ տարբերի հետ [համագործակցարար?], ժողովը ընդունում է, նոյնիսկ ցանկալի է համարում։

4. Մարտական խմբեր երկիր անցնելու խնդիրը մեր ընկերները ընդունում են միայն այն դէպքում, եթէ երկրի ներսը բռնկուել է յեղափոխական շարժումը։

5. Ոյժերի կենտրոնացման խնդիր.— Ատրպատականի ընկերները առաջարկում են թողնել մինչեւ այսօր գործադրուող մասնաւոր տեղերում յեղափոխական ձեռնարկների կենտրոնացման սիստեմը, եւ աշխատել միաժամանակ կենտրոնացնել ոյժեր, ռազմական եւ մտաւորական, մի քանի հայաշատ վայրերում։

21/III/907 ՎՐԷԺՈՒՆԻ

Բ.— ԿԱՐԾԻՔՆԵՐ ՎՐԷԺԻ № 3 ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԻ

Ա. հարց.— Սոյն հարցը ամենակարեւորն է, որի լաւ ընտրութիւնից կախուած կը լինի մեր գործունէութեան յաջողութեան չափը։ Մեր բոլոր գործողութիւնները, առանց մազաչափ շեղուելու, պէտք է ուղղուած լինեն դէպի մէկ նպատակէտ, մէկ իդէալ, որը Դաշնակցութեան հիմնաքարն է կազմում. այն է՝ մեր ամբողջ գործունէութիւնը պէտք է ամենասերտ կապ ունենայ Տաճկահայաստանի հարցի հետ եւ միայն ու միայն պէտք է ծառայի նրա շուտափոյթ լուծմանը։ Որովհետեւ երբ միակ գլխաւոր խնդրի հետ կապ չունեցող գործերը մեր իրաւասութեան սահմանի մէջ ենք մտցնում, մեր ժամանակը, զգացմունքներն ու մտքերը ամբողջովին ջլատւում են դոցանով, եւ փոխանակ մեր իսկական ասպարիզում յառաջադիմելու, յետադիմում ենք, շեղւում ենք մեր սկզբնական նպատակից. փոխում ենք մեր գոյնը՝ առանց այդ զգալու, մեր դերը՝ առանց այդ նախատեսելու, եւ դառնում մի բոլորովին այլ կոչման եւ նպատակի ծառայող անհատներ։ Աւելի պարզելու համար՝ կը բերեմ մի քանի օրինակներ, որոնցով կարելի է ասել ամբողջովին կլանուած են մեր շրջանի դաշնակցական մարմինները,— առաջինը՝ ընկերական վէճերը, երկրորդ՝ կուսակցական վէճերը։ Եթէ կենտր. կոմիտէն պահանջելու լինէր իւր շրջանի դաշնակցական մարմինների տարեգրութիւնները, որոնք մեծ մասով ամփոփուած են նրանց արձանագրութիւնների եւ օրագրութիւնների մէջ եւ թղթակցութիւնների հետ միասին յանձնէր մէկ ձեռնհաս անձի ուսումնասիրելու, անշուշտ գրքանից այն եզրակացութեան կարելի էր յանգել, որ իւրաքանչիւր դաշնակցական մարմին կամ անհատ ե՞րբ իսկապէս ցանկացել է զբաղուել յեղափոխութեան գործով։ Եւ եթէ այս չափով յառաջ գնայ մեր գործունէութիւնը մենք շատ քիչ յառաջադիմած կը լինենք, եւ իրօք այն հարցը որ մեզանից շուտափոյթ լուծում է պահանջում եւ մեր մտքում առաջին կարգը պէտք է բռնի, վերջին կարգն է անցնում եւ մեր ուշադրութիւնից այդ կարեւոր կէտը վրիպում է։ Յեղափոխութեան մէջ չի կարելի դարեր, նոյնիսկ տասնեակ տարիներ սպասել. հետեւապէս ոսկի ժամանակը ոսկի ազատութեան համար պէտք է գործադրել միայն. պէտք է պատրաստել, պէտք է լինել ծայրայեղ դաշնակցական յեղափոխականներ. պէտք է ունենալ մէկ իդէալ եւ մէկ անշեղ ճանապարհ, որով պէտք է առաջնորդուել։ Առհասարակ կուսակցական բարձրագոյն մարմինների վերայ պարտք է ընկնում իրանց ենթակայ մարմիններին զբաղեցնել կուսակցութեան վերաբերեալ հարցերով. եւ նայած թէ ի՛նչ չափերով կենտրոնական մարմինները ուշ են դարձնում այդ բանի վերայ, ըստ այնմ էլ արդիւնք է ստացւում. հետեւապէս շատ ցանկալի է, որ իւրաքանչիւր ենթակայ մարմին իւր բարձրագոյն մարմնից պարբերաբար հարցեր եւ հրահանգներ ստանայ, եւ արդիւնքի մասին պարբերաբար հաշիւ տայ կ. կոմիտէին։ Դրա համար պէտք է կանոնաւորել նամակագրութիւնը եւ հաղորդակցութիւնը։

Բ. հարց.— Տեղական ինքնապաշտպանութեան գործը պէտք է ամենահաստատ հիմքերի վերայ դնել. նախ՝ որովհետեւ տիրող խաղաղութիւնը վայրենի խաղաղութիւն է եւ երկիւղից առաջացած. մի որ կարող է այդ երկիւղը ամբոխի վրայից վերանալ եւ մենք անզէն կը յայտնուենք գազանի ճանկում. եւ երկրորդ՝ պէտք է սորվել, սիրել զէնքը եւ ապրել նրա հետ միասին. ազդել շրջապատի հայ ազգաբնակութեան վրայ, որքան հնարաւոր է՝ զինուել. եւ անհրաժեշտ պարագայում՝ ամէն մի տեղի կեդր. մարմիններն օգնեն ժողովրդին՝ այդ նպատակին հասնելու։

Գ. հարց.— Կառավարութեան հետ մեր շրջանում լաւ յարաբերութեան մէջ լինելը մեր գործի յաջողութեան ամենալաւ գրաւականն է։

Դ. հարց.— Ինչպէս առաջին հարցում եւս տրուած է, կարելի է ասել՝ որ մեր ամբողջ գործունէութիւնը պէտք է վերաբերի Տաճկահայաստանի խնդրին. եւ եթէ մենք այժմ ստիպուած ենք կովկասին եւս մասնակցել, դա կը լինի ժամանակաւոր։ Ա՛յդ ժամանակը մօտաւորապէս չի կարելի որոշել թէ որքա՛ն կը տեւի, որովհետեւ դա սերտ կերպով կապ ունի Ռուսաստանի վերածնութեան հետ. եւ Կովկասի հայութիւնը՝ որ ներկայացնում է Դաշնակցութեան մէջ մի պատկառելի ոյժ, այժմ բոլորովին գրաւուած է իրեն յուզող խնդիրներով. եւ ցանկալի էլ չէ որ այս կրիտիկական րոպէին նա իւր ոյժերը բաժանի եւ այլ հարցերով զբաղուի (չեմ ասում բոլորովին բարձի թողի անել երկիրը)։ Հետեւապէս մեզ այս րոպէիս վիճակուած է նեցուկ եւ օգնական լինել առայժմ Կովկասին, եւ երբ այդ հարցը յաջող լուծում կը ստանայ՝ այն ժամանակ դարձեալ մեր միացեալ գործունէութիւնը ուղղել դէպի մեր իսկական նպատակը։

Ե. հարց.— Համախմբումը, եթէ տգէտ ամբոխի երկիւղից է, նպատակի չի հասնել առանց ինքնապաշտպանութեան լաւ միջոցների. ընդհանրապէս կովկասեան անցքերն իւրեանց արդիւնքով մեզ ապացուցեցին՝ որ այնտեղ ուր Հայութիւնն խմբուած էր, աւելի քիչ զոհ տուեց եւ շատ տեղեր փայլեց իւր յաղթանակներով: Ուստի, քանի որ հարցն Պարսկաստանի հայերի համար է, անհրաժեշտ է բոլոր քաղաքներում եւ գիւղերում, որքան հնարաւոր է, աշխատել հայ ազգաբնակութիւնն համախմբելու. հակառակ դէպքում կոմիտէների վրայ մեծ պարտաւորութիւն է դրւում՝ աշխատել այդ մասին եւ ինչ միջոցներով որ հնարաւոր է՝ առաջ տանել այդ համախմբումն: Դա ոչ միայն ինքնապաշտպանութեան դէպքումն է անհրաժեշտ, այլեւ այդպիսի համախմբումն կարող է նպաստել եւ սուրբ գործի աւելի ընդարձակ տարածման, ամէն շրջաններումն. իսկ դրա արդիւնքն շատ է, որն պարզ է իւրաքանչիւր յեղափոխականի համար:

Զ. հարց.— Զաշխատել միանալ ծրագիրները փոխադարձ զիջումներով միացնելով. բայց աշխատել ձուլել նոցա լաւագոյն ոյժերը, իսկ կուսակցութիւնները, մնալով, միմեանց գործելու աւելի մեծ եռանդ են ներշնչում: Եւ որովհետեւ ներկայ հանգամանքներում Ռուսաստանում սոցիալ-դեմոկրատներն մեծ գործեր են կատարում, ապագայում Ռուսիան ազատագրելու գործում, եւ Ռուսիոյ ազատ լինելն մեծ երաշխաւոր է մեր երկրի դառն վիճակը փոփոխութեան ենթարկելու, եւ գուցէ մեր նպատակին հասնելու, ուստի անհրաժեշտ է՝ որքան հնարաւոր է լաւ յարաբերութիւն պահպանել Ս. Դ. կուսակցութեան հետ. անհրաժեշտ դէպքում դիմել նաեւ նոցա օգնութեան: Եւ որքան հնարաւոր է՝ աշխատել Հնչակեան կուսակցութեան լաւ ոյժերն միացնել Դաշնակցութեան հետ:

Է. հարց.— .....

Ը. հարց.— Ցանկալի է որ շրջանի մարմիններին Կ. Կոմիտէն համառօտ տեղեկագիր տար ամբողջ շրջանների միամեայ գործունէութեան մասին:

Թ. հարց.— Բարւոք է այդ հարցի լուծումն յանձնել մի մասնագէտ անհատի, շրջելու եւ ուսումնասիրելու տեղական եւ աշխարհագրական պայմանները, եւ ըստ այնմ բաժանել կոմիտէական շրջանների:

Ժ. հարց.— Տեսոր գործ դնել հայութեան եւ Դաշնակցութեան դաւանանողի դէմ. ուրիշ ո՛չ մի դէպքում, ի միջի այլոց եւ ո՛չ դրամական խնդիրներում: Տեսորից առաջ աշխատել, որքան հնարաւոր է, ուղղելու. եւ ծայրայեղ դէպքում միայն գործադրել վճիռն:

ԺԱ. հարց.— Անհրաժեշտ է որ իւրաքանչիւր տարին գոնէ մի անգամ, շրջիկները այցելեն Դաշնակցութեան մարմին եղած տեղերում, նոցա գործունէութեանը ուղղութիւն տալու. իսկ չեղած տեղերում մարմիններ կազմելու: Իսկ եթէ երկու անգամ լինէ շատ լաւ է, որովհետեւ նկատելի է որ շրջիկի ներկայութիւնն մեծ ազդեցութիւն է գործում իւրաքանչիւր շրջանում:

ԺԲ. հարց.— Ներքին կանոնագրութիւնը ըստ կարելւոյն ընդարձակել:

ԺԳ. հարց.— .....

ԺԴ. հարց.— Դրամական խնդիրը մեր շրջանում լուրջ ուսումնասիրութեան կարօտ է, որովհետեւ մինչեւ այժմ դա հիմնուած է եղել պատահական եկամուտների, եւ մի աննշան մասը՝ անդամավճարների վերայ. մինչդեռ դա կարելի է դարձնել կամ վերածել հաստատ աղբիւրների կամ պարտադիր տուրքերի, ինչպէս այդ արուած է «Բենտէր» խմբի շրջանումն. (ձեր Թոյլտուութեամբ Բենտէր Գիպաը իւր շրջակայքով որոշեց կազմել ենթակոմիտէ՝ «Սիփան» անունով): Պարտադիր տուրքերը մտցնելու համար՝ աւելի լաւ է ընտրել առանձին յանձնաժողով եւ հարցը բազմակողմանի ուսումնասիրութիւնից յետոյ գործադրել: Գործունէութեան այս ձեւը մեր կարծիքով դժուարութեան չի հանդիպելու. անհամեմատ աւելի արդիւնք կը տայ, քան մինչեւ այժմ եղել է:

ԺԵ. հարց.— Ցանկալի է որ Կ. Կոմիտէն հաշուի ծանօթութիւն տար շրջանի մարմիններին, այսինքն՝ համառօտ հաշուեկշիռ:

Գ.— Հ. Ց. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

№ 41 Շահ կոմիտէ, 24 Հոկտ. 1906

Համաձայն Արեւմտեան Բիւրոյի սոյն տարուայ Յուլիս 31ին գրուած շրջաբերական նամակին, ներկայ գրութեամբ Շահի կոմիտէն ուղղում է Ընդհանուր Ժողովին հետեւեալ զեկուցումները.

Առաջին հարցի առթիւ.

I. Ցանկալի էր, որ «Կոչ-դէվէթ» թերթը, բացի հայ Թուրքերէն լեզուին, նաեւ Թարգմանուէր պարսկերէն(1):

II. Ցանկալի էր, որ «Մշակ» եւ «Մուրճ» լրագրին և ամսագրին տրուէր կտրուկ նկատողութիւն, որպէսզի չպղտորէին միամիտ հասարակութեան միտքը:

III. Կովկասի Թուրք-հայկական ընդհարումներից յետոյ, Պարսկաստանը ներկայացնում է հայերի համար ո՛չ այն, քան ապահով վայր, որի փաստը կարող է լինել պարսիկ կառավարութեան ներկայ բռնած դիրքը դէպի հայերը: Շատ հաւանական է համարւում Պարսկաստանում, որ վերջ ի վերջոյ Կովկասից Պարսկաստան պէտք է գաղթեն կովկասաբնակ Թուրքերը, իսկ այս ենթադրութիւնը իրականանալուց յետոյ, Պարսկաստանի հայ գաղութներին, մանաւանդ Լոռըստանի եւ խուլ անկիւնների գիւղերին սպառնում է անպայման կորուստ: Ի նկատի առնելով այս երկու հանգամանքները, Շահի կոմիտէն նպատակայարմար է գտնում, այժմուանից եւ եթ պատրաստուել ապագայում մի գաղթ առաջացնելու (հայկական գաղթ)՝ Պարսկաստանից դէպի Կովկաս: Ի հարկէ այս ձեռնարկութեան համար անհրաժեշտ է ժամանակ, որովհետեւ գործը պէտք է սկսուի խուլ անկիւններից. անկիւններ, որոնք հայութեան վերայ ոչ մի գաղափար չունենալով հանդերձ, իրենք էլ դարերի ընթացքում կիսաճուլուած են գրեթէ չրջապատող տարրին:

Գուցէ առարկութիւն լինի, թէ Կովկասը ազատ հող չունի: Ո՛չ, Կովկասը ազատ հող ունի, նոյնիսկ բաւականաչափ,— Մուղանի դաշտը, Արարատեան դաշտը, այն մասերը, որոնք ջրի պակասութեան պատճառով այժմ անմարդաբնակ անապատներ են ներկայացնում: Ապագայի այս հայկական գաղթը իրականացնելով, ձեռնամուխ կարելի է լինել Կուրի ջուրը Մուղանի դաշտը բարձրացնելու, իսկ Սեւանայ լճի ջուրով՝ Երեւանի անջրդի հողերը ջրելու. մի ծրագիր՝ որ կարելի է իրագործել մի-երկու առեւտրական — ակցիոներական հիմնարկութիւնների միջոցով: Եթէ ի նկատի ունենանք այն հանգամանքը, որ սպասւում է (ինչպէս որ արդէն սկսուել է) Կովկասից դէպի Պարսկաստան Թուրքերի գաղթը, այն ժամանակ պարզ կը լինի՝ որ Թուրքերի Թողած վայրերն էլ կարող կը լինէ սեփականացնել ապագայ Պարսկաստանի հայ գաղթականութիւնը: Այո՛, ապագայ գաղթականութեան հարցը եթէ Ընդհանուր Ժողովի կողմից հաւանութիւն գտնէ, Շահի կոմիտէն պատրաստ է ներկայացնել մանրամասն նախագիծ եւ ծրագիր:

IV. Գրեթէ ամբողջ մի տարի է, որ ձայն է հասել մեզ «Երեւանի զէնքի գողութեան» մասին: Գողութեան հեղինակին անուանում են Երեւանի «Նադեժդա» ընկերութեան կառավարիչ Աւետիս Մկրտիչեան Աղամիրզեանին: Ամբողջ մի տարի այդ ձայնը յամառ կերպով տարածուելուց յետոյ, մինչեւ այժմ էլ Արեւելեան Բիւրոն լուռ հանդիսատես եղաւ այդ յամառ լուրին, իսկ իւր կողմից ոչ մի ներգործական միջամտութիւն ցոյց չտուեց՝ այդ լեգենդան պարզելու, քննելու եւ գողին գտնելու համար: Ամէն մի ազնիւ մարդ, ամէն մի գաղափարական դաշնակցական, երբ լսում է մի քստմնելի գործողութիւն, բարոյական ձայն է հնչեցնում իւր մէջ՝ տեսնել այդ քստմնելի գործի հերոսին. մենք Շահի շրջանի դաշնակցականներս լսեցինք «Երեւանի զէնքի գողութեան» քստմնելի պատմութիւնը, բայց մինչեւ այժմ էլ մութ մնաց մեզ համար՝ նախ ո՞վ է հեղինակը եւ ապա իսկապէս գոյութիւն ունեցե՞լ է այդ տեսակ գողութիւն: Վերցնել եւ ասել գողը Աւետիս Աղամիրզեանն է կամ Պետրոս Կիրակոսեանը, դրանով հանելուկը չի պարզւում, որովհետեւ մի Աղամիրզեանի կամ մի Կիրակոսեանի գող անուանելու համար, անհրաժեշտ են գողութիւնը ապացուցանող փաստեր: Իսկ կա՞ն այդ տեսակ փաստեր: Մեր հաւաքած տեղեկութիւններից երեւում է, որ մի ամբողջ տարի դատապարտուած Աւետիս Աղամիրզեան բղաւելիս-աղաչելիս է եղել արդար դատաստան. այդ ողորմելու դատաստանը այն է եղել, որ Երեւանում մի քանի մասնաւոր ժողովներ են եղել եւ այդ ժողովներում լսեցնելով Աղամիրզեաններին բացատրուելու հնարաւորութիւնից, կարծէք թէ դիտմամբ, մի աներեւոյթ ոյժի զօրութեամբ, արձանագրութիւններ են կազմուել, որից եզրակացուել է յակամայից՝ «Աղամիրզեան զէնքի գող»: Դատապարտուած Աղամիրզեանը դիմում է արել Արեւելեան Բիւրոյին՝ քննելու իւր գործը, որը բեկանել է Երեւանի կազմի անփաստ արձանագրութիւնը եւ խոստացել իւր կողմից նոր քննութիւն: Մինչ այս, մինչ այն, Աւետիս Աղամիրզեանի դատապարտութեան ձայնը հասնում է «Նադեժդա» ընկերութեան կեդրոնական վարչութեան՝ Պետերբուրգ. վարչութիւնը իսկոյն հեռագրական կարգադրութիւն է անում ժամանակաւորապէս հեռացնել Աղամիրզեանին Երեւանի գործակալի պաշտօնից եւ վերաքննիչ է ուղարկում՝ Երեւանի գործը քննելու: Այդ վերաքննիչը ամբողջ 4½ ամիս քննում է Երեւանի գործը եւ Աղամիրզեանի «Զէնքի գողութեան» ոչ մի հետք չի գտնում:

«Նադեժդա» ընկերութեան կեդրոնական Վարչութիւնը, տեսնելով, որ հիմնուած ոչ ճշգրիտ լուրերի վերայ, անարդար կերպով վիրաւորել են իւր ներկայացուցչին, հեռագրով կանչում է նորան (Աղամիրզեանին) Պետերբուրգ՝ ներողութիւն խնդրելու: Աղամիրզեան գնում է Պետերբուրգ, մնում է մի քանի ամիս, եւ մինչդեռ վերադառնալիս է լինում Կովկաս, իւր պաշտօնատեղին՝ Երեւան գալու, յանկարծ Նիժնիայում ստանում է Դաշնակցութեան դրոշմով մի ծրար, վրձիռ, որով, նրանից պահանջւում է 10·000 ռուբլի տուգանք, եւ յաւիտենական աքսոր Կովկասից: Այն ո՞ր երկրում, ո՞ր աշխարհում է, որ վճիռ է կայացւում դատապարտեալի բացակայութեան ժամանակ, այն ո՞ր դատաստանն է, որ դատապարտեալին կախաղան է հանել տալիս, առանց նորանից, դատապարտեալից, մի խօսք անգամ հարցնելու:

Մենք, Շահի շրջանի դաշնակցականներս, չենք ուզում Աղամիրզեանի պաշտպանի դերը մեզ վերայ առնել, այլ մեր բարոյական պարտքն ենք համարում խնդրելու Ընդհանուր Ժողովից՝ առաջարկել Արեւելեան Բիւրոյին, վերաքննելու Աղամիրզեանի գործը, որովհետեւ հասած տեղեկութիւններից նկատւում է, որ կարող է պատահել որ Աղամիրզեանը ոչ այլ ինչ չէ, եթէ ոչ մի հայ-Դրէյֆուս: Աղամիրզեանների տոհմի

պատմութիւնը ցոյց է տալիս, որ այդ տոհմը մինչեւ այսօր տուել է մի շարք յեղափոխական գործիչներ եւ հասարակութեան օգտաւէտ անդամներ, իսկ Աւետիս Աղամիրզեանը, որի ճակատին դրոշմուել է, երեւի մի օր սրբուելու պայմանով, «Զինակոչ» մականունը, մինչեւ այժմ յայտնի է եղել իւր հեզ վարքով եւ Դաշնակցութեան ու հասարակութեան օգտակար անդամ լինելուց այն կողմ չէ անցել: Մենք, Շահի շրջանի դաշնակցականներս, յանուն արդարութեան, յանուն մարդկային սուրբ քրիստոնէութեան, յանուն Դաշնակցութեան վեհ գաղափարին, խնդրում ենք Ընդհանուր Ժողովից, Արեւմտեան Բիւրոյից եւ Ատրպատականի Կենտրոնական Կոմիտէից՝ միջնորդել Արեւելեան Բիւրոյի առաջ, Աղամիրզեան Աւետիսի գործը վերաքննելու համար:

Մենք ասպարէզ նետուելով Աղամիրզեանի հարցով, մեզ համար հետաքրքիր չէ բոլորովին «Աղամիրզեան» անհատը, այլ հետաքրքիր է այն գործողութիւնը, որը վերագրւում է նորան եւ որի ձայնը տարուբերւում է հասարակութեան բոլոր խաւերի մէջ, նոյնիսկ Պարսկաստանի խուլ անկիւններում. ամէն տեղ՝ միեւնոյն ձայնը: Արդարադատ վերաքննութիւն, — Դաշնակցութիւնը իւր վեհութեան գագաթնակէտում կանգնած պէտք է լինի արդարադատ բառի բուն նշանակութեամբ: Կազմակերպութեան վարկը բարձր պահելու եւ մեր հակառակորդներին ձեռքը զէնք չտալու համար, մեր՝ Շահի շրջանի դաշնակցականներս, բարոյական պարտքն ենք համարում Ընդհանուր Ժողովի ուշադրութիւնը դարձնել՝ հրահանգելու բոլոր մարմիններին, այս եւ սոյնանման խնդիրներում վերին աստիճանի լուրջ եւ արդարադատ վերաբերմունք:

Երկրորդ հարցի առթիւ

Դրամական մանրամասն հաշիւը, մեզանից անկախ պատճառներով, առ այժմ չպիտի կարողանանք ուղարկել: Մօտաւորապէս 1000 թուման եկամուտ կարելի է համարել տարեկան, որից մօտ 600 թումանը անդամավճարներ, իսկ մնացորդը՝ երեկոյթներից, ներկայացումներից, վիճակախաղից եւայլն:

Երրորդ հարցի առթիւ

Շահի շրջանը ունի 14 խումբ, 2 ենթակոմիտէ եւ 1 կոմիտէ. գործունէութիւնը սկսւում է Սեպտեմբերի 20ից մինչեւ Մայիսի սկզբները: Իսկ Մայիսից մինչեւ Օգոստոսի վերջերը, անդամների քաղաքից բացակայ լինելուն պատճառով, գործը գրեթէ մնում է երեսի վրայ: Իսկ ինչ վերաբերում է շրջանի գործունէութեան, դժբախտաբար, անցեալ տարի, Ատրպատականի Շրջանային Ժողովում վճռւում է Շահի կոմիտէին տալ այն տեսակ կէտեր, որոնք եղած թէ չեղած՝ մէկ հաշիւ են, օրինակ Սինայի եւ Քիրմանշահի քիւրդերը եւ Բէնդէրաբասի արաբները, որոնց մէջ ոչ մի միտք ու հող չկայ եւ չէ էլ կարող լինել գործելու: Այն կէտերը որոնք աւելի շուտ կապուած են Շահի կոմիտէին, Շրջանային Ժողովը յատկացրեց Գիլան կոմիտէին. օրինակ Ղազուինը, որ Թեհրանից հեռու է 22 մղոն, իսկ Ռաշտից՝ 40, յանձնուել է Գիլանին: Մազանդարանը, որի փոստային հաղորդակցութիւնը պէտք է լինի Ռաշտի հետ Կրասնավոտսկի, Բաքուի եւ Էնզելու վերայով կամ Թեհրանի եւ Ղազուինի վերայով, մինչդեռ Թեհրանի հետ ունի անմիջական Թեհրան–Մազանդարան փոստային հաղորդակցութիւն, Ատրպատականի Շրջանային Ժողովը յատկացրեց Գիլանի կոմիտէին: Եւ այս սխալ յատկացումները լոկ այն պատճառով, որ Շահի կոմիտէն դժբախտութիւնը ունեցաւ Շրջանային Ժողովում իւր ներկայացուցիչը չունենալու: Բացի սրանից, Շրջանային Ժողովում հարց է յարուցւում Գիլան կոմիտէն դարձնել Կենտրոնական Կոմիտէ. մի հարց, որ եթէ իսկապէս իրագործուելի լինի, պէտք է վերաբերէ աւելի շուտ Շահի կոմիտէին քան թէ Գիլանին, որովհետեւ Շահի կոմիտէն թէ՛ քաղաքական տեսակէտից եւ թէ իւր բազմամարդութեամբ աւելի շուտ կարող է Կենտրոնական Կոմիտէի նպատակին ծառայել քան թէ Գիլանը: Իսկ թէ Գիլանի ո՛ր առաւելութիւնն է Շրջանային Ժողովին համոզել նորան Կենտրոնական Կոմիտէի իրաւավիճակ յատկացնելու, դա անյայտ է:

Չորրորդ հարցի առթիւ

Առ այժմ այն տեսակ ընկերներ, որոնք իրենց դընէին Ընդհանուր Ժողովի տրամադրութեան տակ, չունենք:

Ա) Ցանկալի էր, որ Դաշնակցութեան Կովկասում բռնած ներկայ գործունէութիւնը յարատեւէր եւ նա պահէր մի որոշ կապ՝ ընդհ. Ռուսական Յեղափոխութեան հետ:

Բ) Ցանկալի էր, որ շարունակուէր թէ՛ Տաճկահայաստանի եւ թէ Կովկասի ներկայ գործունէութիւնը, այն ուղղութեամբ միայն, որ Կովկասահայը եւ Կովկասի մարմինները, ի դէպս հարկին տան Տաճկահայաստանին թէ՛ նիւթական եւ թէ կռուող օժանդակութիւն:

Գ) Հայկական գաղութների դերը Թուրքահայ եւ Կովկասահայ խնդիրների վերաբերմամբ պէտք է լինի նիւթական եւ կռուող ոյժի օժանդակութեամբ:

Դ) Դաշնակցութիւնը գաղութներում ցանկալի էր, որ ունենար, տեղական–քաղաքական եւ այլ հարցերում, ներգործական դեր, երկրի եւ ժամանակի հանգամանքները ի նկատի առնելով:

Մանօր. Դաշնակցութեան վարկը բարձրացնելու համար, ցանկալի էր որ հասարակական գործունէութեան ասպարէզ դուրս գային այն տեսակ անհատներ, որոնք զերծ լինէին նեղ կուսակցական ոգուց եւ զեղծումներից:

Ե) Ի նկատի ունենալով կովկասահայ թերթերում երեւացող այն զզուելի ընթացքը, որով ուզում են վարկաբեկել Դաշնակցութիւնը, մենք միաձայն մեր ջերմ վստահութիւնն ենք յայտնում Դաշնակցութեան անցեալ եւ ներկայ գործունէութեան, միաժամանակ մեր զըզուանքը յայտնելով այդ օրօրուող թերթերին:

Ընկերական բարեւներով,

Ի դիմաց Շահ կոմիտէի՝
ՇԱՒԱՐՇ

---

(1) Լեզուական անհարթութիւնները, այս եւ միւս բոլոր գրութիւններում մէջ, ինչ մը ընդհանուր քնոյթ ունին: Ուղղումներ կը կատարենք այն պարագային միայն, երբ իմաստը բացայայտ է: Այլապէս՝ կը պահենք անփոփոխ: Ի՞նչ թերթ է հայ թուրքերէնի թարգմանուած թերթը, եւ ի՞նչ լեզու է այդ հայ թուրքերէնը, չկրցանք ճշդել:

Դ.— «ՓԱՐՈՍ» ԿՈՄԻՏԷԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՌԱՁՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

№ 8 11 Դեկտ. 1905

1. Գործունէութեան եղանակը մեր շրջանում

Ուժեղ պրոպագանդա ամէն հնարաւոր եղած միջոցներով. Դաշնակցութեան գաղափարի ու ծրագրի տարածումն կարելի եղածին չափ լայն շրջաններում, իւրաքանչիւր դաշնակցականի գիտակցական յեղափոխական դարձնելու ջանքեր, կազմակերպուելը, ինքնապաշտպանութեան պատրաստութիւններ (բազմակողմանի), դաշնակցական անհատների մէջ պատահած ամէն կարգի վէճերի դաշնակցական շրջանում եւ նրա ոյժերով պարզաբանութիւն եւայլն:

2. Տեղական ինքնապաշտպանութեան գործը

Իւրաքանչիւր կոմիտէ պարտաւոր է զինել տալ, առանց կուսակցական խտրութեան, իր շրջանում գըտնուած բոլոր հայերին, իրենց՝ զինուողների միջոցներով, եւ ուշադրութիւն դարձնել նրանց զինավարժութեան վրայ, որի համար յատուկ մասնագէտներ պիտի ունենան:

Միջոցներից զուրկ մարդկանց դիւրութիւններ տալու համար, իւրաքանչիւր կոմիտէ պիտի կազմի փոխատու կամ փող հայթայթող յանձնաժողով, որի գործունէութիւնը պիտի կայանայ տեղական պայմանների թելադրած միջոցներով դրամ հայթայթել եւ դաշնակցական չքաւոր ընկերների փոխ տալ (թեթեւ տոկոսով)՝ զէնքեր գնելու համար:

Իսկ աչքի չընկնելու եւ գաղտնի գործելու համար, իւրաքանչիւր կոմիտէ պիտի ունենայ մասնագէտ անհատներից բաղկացած զէնք գնող յանձնաժողով, որ պիտի զբաղուի միմիայն զէնքեր գնելով եւ տեղական հայերին զինելով:

Բացի այդ, իւրաքանչիւր կոմիտէ պիտի աշխատի ունենալ սեպհական զէնքեր, ռումբեր եւ զինուորներ:

3.— Կառավարական յարաբերութիւններ

Կառավարութեան հետ բարեկամական յարաբերութիւններ պահպանել: Հարկ եղած դէպքերում նրա հետ պաշտօնական բանակցութիւնների մէջ մտնել: Առհասարակ աշխատել կուսակցութեան վարկը բարձր պահել կառավարութեան աչքում:

4.— Մեր դերը Տաճկաստանի եւ Կովկասի վերաբերմամբ

Ի նկատի ունենալով այդ երկու երկրների ակտիւ գործունէութիւնը՝ անհրաժեշտ է բաւարարութիւն տալ կազմակերպութեան այնտեղի ճիւղերի բոլոր պահանջներին, այն չափով՝ որ տեղական գործը չվնասուի:

5.— Պարսկահայերի համախմբումն

Այն բոլոր հայ գիւղացիներին, որոնք կտրուած են ազգակից գիւղերից եւ ապրում են իրենցից անհամեմատ աւելի թուով այլազգիների հետ, փոխադրել մօտակայ հայաբնակ գիւղերը:

Իսկ այն գաւառամասերը (օրինակ՝ Սուլդուզը) կամ այն գիւղերը (օրինակ՝ Միանդաւաբը), որոնց հայ բնակիչներն օտարախօս են, փոխադրել հայաբնակ ու հայախօս գաւառները:

Մանօր.— Ուրմիի գաւառն ամենայարմար գաղթավայրն է սուլդուզցի հայերի համար:

6.— Մեր յարաբերութիւններն ուրիշ կառավարութիւնների հետ

Աշխատել խոյս տալ ընդհարումներից այն չափով, որ Դաշնակցութեան շահերը չտուժեն:

7.— Բազմակողմանի ուսումնասիրութիւն

Իւրաքանչիւր կոմիտէի պարտաւորեցնել ձեռնհաս անձնաւորութիւնների միջոցաւ կազմել իր շրջանի մանրամասն եւ բազմակողմանի ուսումնասիրութիւնը՝ տալով նրան այդ նպատակով կազմուած ծրագիր ու ցուցմունքներ:

8.— . . . . . .

9.— Կոմիտէական շրջանների բաժանումն «վրէժ»ի շրջանում

Սուլդուզի գաւառը ենթարկել Ուրմիի կոմիտէին:

10·— Տեռորը Պարսկաստանի նկատմամբ

Կառավարութեան պաշտօնեաներին տեռորի չենթարկել եւ ոչ մի դէպքում:

Իսկ ոչ-պաշտօնեաների համար ծայրայեղ դէպքերում միայն թոյլատրել:

11· Շրջիկների խնդիր

Իւրաքանչիւր կոմիտէի [համար] անհրաժեշտ է *ունենալ մի շրջիկ-պրոպագանդիստ, որի ծախքերը պիտի հոգան կոմիտէն եւ իւր շրջանը եւ որը* ՄԻՄԻԱՑՆ դրանով պիտի զբաղուի:

12 եւ 13·— . . . . . .

14·— Դրամական խնդիր

Այն, ինչ որ յիշուած է Ատրպատականի Կ. Կոմիտէի ներքին կանոնագրութեան մէջ:

15·— . . . . . .

16·— Պատգամաւոր *ընտրեցինք ընկեր Գարեգինին*(1):

«ՓԱՐՈՍ» ԿՈՄԻՏԷ

(1) Սամսոն Թադէոսեան:

Ե.— ՆԱՄԱԿ ՆՈՐ ՋՈՒՂԱՑԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷԻՆ

Նոր-Ջուղա, 5 Նոյ. 1905

Դավրէժի Կեդր. Կոմիտէին!

Իր ժամանակին ստացել ենք Ձեր 5 Սեպտ. թուակիր նամակը եւ պարունակութեանը ծանօթացած լինելով, շնորհակալութիւն ենք յայտնում Ձեր հաղորդած տեղեկութիւնների համար:

Կարդալով Բիւրոների կոչը ուղղուած Հ. Յ. Դաշնակցութեան մարմիններին, որով հրաւիրում են սոցա յայտնելու իրանց հարցեր, կարծիքներ եւ խնդիրներ առաջիկայում գումարուելիք Ընդհ. Ժողովին ներկայացնելու համար, թէպէտ տեղիս խմբերի կազմակերպութիւնը նոր լինելով, չունինք պէտք եղած մանրամասն ու ճշգրիտ տեղեկութիւնները յեղափոխական ընդհանուր գործերի այժմեան դրութեան եւ կեդրոնական մարմինների գործունէութեան եղանակի ու տակտիկայի մասին, այսուհանդերձ կարեւոր ենք համարում հետեւեալ թելադրութիւնները անել Ընդհ. Ժողովի առթիւ.—

Ա.) Ի նկատի ունենալով վերջին դէպքերը, խիստ լուրջ ուշադրութիւն դարձնել բուն երկրի կազմակերպութեան զօրեղացման վերայ, ապագայ հաւանական պատահականութեանց դէմ պատրաստ գտնուելու համար:

Բ.) Նկատելով որ Վարդոյի վերջերս բռնած դիրքը կարող է որոշ չափով գցել Դաշնակցութեան վարկը սեփական դատողութիւնից զուրկ հայ ժողովրդի մեծամասնութեան առաջ եւ հետեւաբար վնասել յեղափոխական ընդհ. գործին, առաջարկում ենք խիստ, անաչառ քննութեան ենթարկել նրա խնդիրը եւ ժողովի վճիռը պաշտօնապէս յայտարարել, հերքելով միեւնոյն ժամանակ նրա՝ Դաշնակցութեան դէմ արած ամբաստանութիւնները:

Գ.) Նկատելով որ այժմեան խաղաղ Պարսկաստանում պարսկահայի կատարելիք ամենամեծ դերը պէտք է լինի ազգային դպրոցների զարկ տալը եւ նոր սերնդի ազգային հոգւով կրթութիւնը, միանգամայն նպատակայարմար եւ ցանկալի կը լինէր որ Ընդհ. Ժողովը, ուշադրութեան առնելով այս յոյժ կարեւոր կէտը, վճռէր բարոյական-ստիպողական պարտք դնել Դաշնակցութեան մարմինների վերայ՝ թէ՛ Կովկասում եւ թէ արտասահմանում, ամէն կերպով աշխատել գաղափարական եւ գործին նուիրուած ուսուցիչներ դուրս ուղարկել Պարսկաստանի դպրոցների համար, քանի որ մինչեւ այժմ շատ քիչերն են այդ զոհողութիւնը յանձն առել եւ շատ անգամ դպրոցների հոգաբարձութեան հրաւէրները մնացել են «ձայն բարբառոյ յանապատի»: Եւ որ աւելի ցաւալին է, յաճախ երկար ամիսներով դպրոցները փակ են մնացել ուսուցիչներ չունենալուն պատճառով: Ինչքան էլ որ այս առաջարկը Դաշնակցութեան մարմինների գործունէութեան շրջանից դուրս նկատուելու լինի, մեր խոնարհ կարծիքով այդ ամենազօրեղ եւ ամենագործնական միջոցն է Յեղափոխութեան գաղափարի տարածման:

Ներփակ ուղարկում ենք Ձեզ տեղիս խմբերի ելեւմտից համառօտ հաշիւը սկսեալ 1905 թ. Յունուար 1ից առ 1 Սեպտեմբերի 1905 թ., որը խնդրում ենք բարեհաճիք ուղարկել Կեդրոնին, «Դրօշակ»ում տպուելու համար:

Ներփակ վերադարձնում ենք նաեւ Բիւրոների տրված Կոչը ըստ Ձեր ցանկութեան եւ խնդրում ենք Ձեր այժմեան ուղիղ հասցէն (թէ՛ նամակի եւ թէ հեռագրի):

Ընկերական սիրալիր բարեւներով՝

Անդամք Գետափի ենթակոմիտէի

ՀԱՅՐԵՆԱՅԻՐ, ՁՈԿ, ՈՒԼԲԱԲԵԱՆ,
ԱՎԼԱՆ, ՎԱՀԷ

Զ.— ՆԱՄԱԿ ԲԵՆԴԷՐ ԳԵԱԶԻ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

№ 6 Բենդէր Գեազ, 19 Հոկտ. 905

«Վրէժ»ի Կ. Կոմիտէին

Ցարգելի ընկերներ!

Բիւրոների յայտարարութեան համաձայն, որով պահանջւում է իւրաքանչիւր դաշնակցական մարմնից իրենց ցանկացած հարցերը առաջարկել առաջիկայ Ընդհանուր Ժողովին, տեղիս «Գարիբալդի» խումբը կարեւոր համարեց հետեւեալ հարցերը Ժողովի քննութեան ենթարկել.

I. Որոշել իւրաքանչիւր դաշնակցականի՝ թէ՛ դէպի ընկերները եւ թէ դէպի Դաշնակցութիւնը ունեցած պարտականութիւնը եւ հակառակ պարագայում, երբ դաշնակցականը իր պարտականութեան սահմանից անցնում է, եղծում է գործում Դաշնակցութեան կամ ընկերների դէմ, որոշ յանցանքների համար սահմանել որոշ պատիժներ: Ի հարկէ յանցանքների բոլոր տեսակները նախատեսել եւ իւրաքանչիւրի համար առանձին պատիժ որոշելը շատ հեռու կը տանի եւ հատորներ կը կազմուի կանոններից. բայց կարելի է յանցանքները մի քանի գլխաւոր խմբերի բաժանել եւ դոցա համեմատ պատիժ որոշել: Դա կը լինի մի տեսակ առաջնորդ եւ դա կարեւոր է, որովհետեւ համարեա ամէն տեղ եւ ամէն ժամանակ դաշնակցական մարմինները դատաստաններ կատարում են, բայց չունեն ոչ մի ուղեցոյց, որով առաջնորդուեն:

II. Տեռորական սիստեմը որոշ սահմանների մէջ դնել. որովհետեւ մեր ծրագրում ասուած է՝ թէ «Ընդհանուր Ժողովը յանձնարարեց կոմիտէներուն՝ ամէն ջանք գործ դնել խոյս տալու սպանութեան դիմելէ դերամ հանգանակելու գործի մէջ»(*). հետեւապէս բացարձակ արգելելով տեռորը հանգանակութեան ժամանակ՝ մեր կարծիքով աւելի դրական հետեւանքի կը հասցնի. նոյնիսկ այդ նպատակի համար տեռոր վճռող դաշնակցական մարմնին պատասխանատուութեան ենթարկել: Առ հասարակ այսպիսի դէպքերում, մենք երբ բռնութեամբ ենք փող ստանում, աւելի կորուստ ենք ունենում, քան թէ շահ, որովհետեւ՝ ա.) մենք ինքներս խանգարում ենք մեր հիմնական սկզբունքներից ամենագլխաւորը (մեր սկզբունքն է «կռուել բռնութեան դէմ եւ ստեղծել մի այնպիսի դրութիւն, որ մեր հայրենակիցները կարողանան իրենց սեփական աշխատանքը ազատ վայելել»), բ.) մենք մեզ չհակասելու համար պարտական ենք ամենախիստ միջոցների դիմել այդ սիստեմը վերջացնելու համար:

III. Շատ ցանկալի է, որ Դաշնակցութեան օրգան «Դրօշակ»ը, ամսաթերթից վերածուի շաբաթաթերթի: Դորա կարիքը շատ մեծ է, որովհետեւ «Դրօշակ»ը մեզ համար կարելի է ասել ամէն բան է, «Դրօշակ»ի միջոցով մենք պէտք է ծանօթանանք Դաշնակցութեան գործերի ընթացքի եւ կատարած յառաջադիմութեան հետ, «Դրօշակ»ը մեզ պէտք է ծանօթացնի անցեալ յեղափոխութիւնների պատմութեան եւ ներկայ յեղափոխութիւնների ծրագիրների ու կատարուող դէպքերի հետ, «Դրօշակ»ը պէտք է զարթնեցնէ հայ ժողովրդին և ցանկութիւն ներշնչի դիմել դէպի ազատութիւն: Այս բոլորը մինչեւ այժմ սահմանափակ կերպով է կատարուել մեր կարծիքով, որովհետեւ «Դրօշակ»ը ամսաթերթ է եւ ոչ շաբաթաթերթ եւ ծաւալը՝ փոքր: Վերջապէս «Դրօշակ»ի խմբագրութիւնը շատ անգամ է խոստովանուել՝ թէ այսինչ յօդուածը կամ այսինչ նուիրատուութեան ցուցակը ուշացաւ տպուել թերթի ծաւալի փոքրութեան պատճառով:

IV. Որովհետեւ Ընդհանուր Ժողովը միջոց և յարմարութիւն չի ունենալ հին եւ նոր յեղափոխութիւնների ծրագիրները եւ կանոնագրութիւնները քննել, մշակել եւ, ի նկատի ունենալով մեր տեղային հանգամանքները, դոցա հիման վերայ կազմել մեզ համար լրիւ կանոնագրութիւն, ուստի ցանկալի է, որ այդ գործը, այսինքն Հ. Յ. Դաշնակցութեան համար լրիւ կանոնագրութիւն, հիմնուած օտար ազգերի յեղափոխութիւնների կանոնագրութիւնների հիման վերայ, մշակելու եւ կազմելու գործը յանձնուի Ընդհանուր Ժողովով որոշուած մէկ յանձնաժողովի, որը կազմէ կանոնագրութիւնը եւ ներկայացնէ հետեւեալ Ընդհանուր Ժողովին՝ ի հաստատութիւն:

V. Ծրագրել հիմնաւոր միջոցներ, որով կարելի լինի ռուս ժողովրդի եւ ռուսաց կառավարութեան համակրութիւնը գրաւել: Մեր կարծիքով, բոլոր եւրոպական կառավարութիւնների կարծիքը եւ բռնած ընթացքը դէպի հայկական հարցը՝ հաւասարազօր է Ռուսաստանի կարծիքին եւ բռնած ընթացքին: Դաշնակցութեան պրեստիժը (վարկը) պահպանելու եւ բարձրացնելու համար մեզ անպայման հարկաւոր է Ռուսաստանի համակրութիւնը, որովհետեւ մեր պայմաններում մեզ միակ խանգարողը ռուսն է, եւ երբ մենք չնորհիւ այդ հանգամանքի քիչ ենք յառաջադիմում, հետեւապէս ժողովրդի հաւատը դէպի մեր գործունէութիւնը պակասում է: Մեր կարծիքով, այս հարցը պէտք է լուրջ ուշադրութեան առնել, որովհետեւ ո՞ւմ յայտնի չէ, որ եթէ Ռուսաստանը մեզ չխանգարէր մեր գործում, մենք տասն անգամ աւելի յառաջադիմութիւն արած կը լինէինք, քան այժմ ենք:

Ընկերական բարեւներով՝ ՄԱԼԽԱՍ, ԲԱԶԻ,
ՇԻԳՈՑ, ՍԱԿ, ԽԵՆԹ, ՀՐԱՑԱՆ,
ԵՐԿԱԹ, ԴԱՇՈՑՆ

(*) Դրամ. խնդիր, յօդ. 5:

Է.— ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովին

Հայ ազգաբնակութիւնը Պարսկաստանում անապահով դրութեան մէջ է եւ կը լինի: Շահի կառավարութիւնը միանգամայն անզօր է սանձահարելու պարսիկ հոգեւորականութեան, որ իսկական տէրն է ներկայանում Պարսկաստանի, եւ մոլեռանդ պարսիկ ժողովրդին՝ որի համար բաւական է մի կրօնապետի հրաման՝ ջնջելու «անհաւատ» քրիստոնեաներին իրենց երկրից: Բացի այդ, Պարսկաստանը պետական յեղաշրջումների աշխարհ է, ոչնչով երաշխաւորուած չէ, որ այսօրուայ հայասէր ու խաղաղասէր Շահին չեն զրկել իր կեանքից եւ նրա գահի վրայ բազմեցնել մի այլ անհեռատես, հոգեւորականութեան ենթարկուող եւ օտարատեաց միապետ և կամ ներկայ դինաստիայի տեղը... բռնէ մի այլ հարստութիւն, որ մանաւանդ Պարսկաստանում չի կարող տեղի ունենալ առանց սարսափելի արիւնահեղութիւնների, ու այդպիսի դէպքում հայ ազգաբնակութիւնն է որ առաջին զոհը կը լինի: Ահա, աչքի առաջ ունենալով Պարսկաստանի հայ հասարակութեան անպաշտպան վիճակը, առաջարկում ենք յարգելի Ժողովիդ՝ միջոցներ մտածել — պարսկահայերի ինքնապաշտպանութեան մասին, իսկ մենք՝ մեր կողմից կ'առաջարկէինք բոլոր Կոմիտէական ու Ենթակոմիտէական շրջաններուն՝ կազմել մարտական խմբեր, որոնք դինուած լինեն կազմակերպութեան զէնքերով: Այդ խմբերը կը պաշտպանէին շրջանիս հայ ազգաբնակութիւնը պարսկական յարձակումների դէմ եւ միեւնոյն ժամանակ կազմ ու պատրաստ կը լինէին, Դաշնակցութեան տրամադրութեան տակ, կանչուելու դէպքում Երկիր անցնելու:

Պիտի ի նկատի ունենալ, որ կովկասեան վերջին դէպքերից յետոյ ստեղծուել է Կովկասից գաղթող պարսիկների մի ահագին հոսանք դէպի Պարսկաստան, որոնց յայողում է ահագին քանակութեամբ զէնք ներմուծել ու ցրուել ամէն կողմ (մաքսատունները իրենց ձեռք առած միջոցներով ոչնչով չեն կարողանում արգելք հանդիսանալ այդ գործին), աչքաթող չանելով միեւնոյն ժամանակ հակահայկական պրոպագանդը եւ գրգռում իրենց կրօնակից եղբայրներին՝ հայերի դէմ:

Ենթակոմիտէս առանձնապէս հետաքրքրուեց Կովկասեան Գործունէութեան Նախագծով, որը շրջանիս բանիմաց դաշնակցականների մի ժողովում քննադատութեան ենթարկուեց, որի վրայ պէտք է հիմնէր ենթակոմիտէս իր կարծիքը: Բայց ենթակոմիտէական ժողովում ձայները բաժանուեցին, այնպէս որ հնարաւոր չեղաւ ենթակոմիտէիս կարծիքը առանձնապէս յայտնել այդ մասին. բայց յիշեալ ժողովի արձանագրութիւնը կարելի է համարել շրջանիս Դաշնակցութեան կարծիքը՝ Կովկասեան Գործունէութեան Նախագծի մասին: Հետեւաբար ուղարկում ենք ձեզ այն:

Պորտ-Արտուրի Ենթակոմիտէ
Քարտուղար՝ ԿԱՑԾ

Ը.— ՆԱՄԱԿ ՄԱՐԱՂԱՅԻ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Մարաղա, 10 Հոկտ. 1905

Խնդրւում է Հ.Յ.Դ. յառաջիկայ Ընդհ. Ժողովից՝ ի նկատի առնել, իւր հարցերի թուում, ներկայ գրուածներն.

1. Մարաղան գտնուելով Ատրպատականի ամենախուլ մի անկիւնում, հայ ժողովուրդի մի որոշ մաս անուշադիր եւ իր բախտին թողուած խարխափում է տգիտութեան խաւարի մէջ, զուրկ մինչեւ անգամ իւր մայրենի լեզուից:

Ըստ որոշման Ատրպ. Ներքին Կանոնագրի III յօդուածի, որ Հ.Յ.Դ. Ատրպատականի Կ. Կոմիտէն կ'ունենայ շրջիկ պրոպագանդիստ ընկեր (որ անուն է միայն), աշխատել պարտադիր անելու յառաջիկայում, որ մեծ զարկ կարող է տալ աւելի լայն կերպով տարածելու Հ.Յ.Դ. գաղափարն. նկատի առնել դաշնակ. ընկերներից, որն աւելի ծանօթ լինի յեղափոխական գործին, [եւ նա] յաճախէ եւ շրջէ գաւառներում:

2. Լուսաւորութեան եւ ընդհ. զարգացման գործն պարտաւորիչ դարձնել Ատրպ. Կ. Կոմիտէի համար, որ աշխատէ ուշադրութիւն դարձնել շրջակայ գաւառների հայ ազգաբնակութեան կրթութեան մակարդակի բարձրացման, նպաստել դպրոցական գործի առաջադիմութեան (միմիայն ուսուցիչ անձնուէր ընկեր գտնելով, մասամբ զիջողաբար), մանաւանդ բարձրացնել կանացի սեռն որ գտնւում է պարսկական հարեմական դրութեան մէջ՝ անգիտակից իւր բարձր կոչման:

3. Պարտաւորիչ անել Ատրպ. Կ. Կոմիտէին՝ ուշադրութիւն դարձնել գաւառներում գտնուող հայ պաշտօնական անձնաւորութիւնների հակա-յեղափոխական եւ հակա-ժողովրդական ընթացքին — ի թիւս որոնց՝ հայ վաճառական դասից անհատներ. եւ ամենագլխաւորն՝ մշակել եւ ընդհ. կանոնադրութեան յօդուածով ընկերական դատաստանի առթիւ, եւ անել ամէն պարագայում պարտաւորեցուցիչ(1)*:*

4. Նկատի առնել հայութեան ներկայ վտանգուած դրութիւնը երեք պետութեան մէջ էլ (Ռուս, Տաճկ., Պարս.), կազմակերպել եւ պարտաւորիչ անել՝ կազմել խմբեր, ո'ր տեսակի էլ որ պատկանեն, սեպհական (ի հարկէ խմբովի) ինքնապաշտպանութեամբ, եւ լուրջ ուշադրութիւնը հրաւիրել Ատրպ. Կենտ. Կոմիտէի՝ որ հիմնաւոր հողի վերայ դնէ գաւառների ինքնապաշտպանութեան գործը(1)*:*

5. Որոշել ի՞նչ ընթացք բռնել դէպի պարսից բարեխնամ կառավարութիւնը. նաեւ հակառակ պարագայում վայրենի ժողովուրդի հետ ի՞նչ կերպ վարուել:

6. Դրամական տուրքն բաւարար անել. եւ գլխաւորապէս ուշք դարձնել գործադրելու տեղական ինքնապաշտպանութեան կարեւոր ծախքերին պատասխանատու մարմինների երաշխաւորութեամբ(1)*:*

Ի դիմաց «Մարաղայի»
Հ. Յ. Դաշնակ. ընկերների՝
Գ. ԱԲՌՕ

(1) Նախադասութիւնը պահած եմ անփոփոխ:

Թ.— ՀԱՐՑԵՐ ՇԱՀՍԷՎԱՆԻՆ ԵՒ ԱՆՏԱՌԻՆ

Վրէժստան, 2 Փետր. 1906

Շահսէվանի եւ Անտառի շրջանի ներկայ 1906 Վրէժրստանի Բայտնական Ժողովին առաջադրած հարցերը.

1) *Շահսէվանի եւ Անտառի շրջանը մօտ լինելով Գիլանի եւ ունենալով նոյնանման գործունէութիւն, յեղափոխական տեսակէտից ցանկալի էր որ ենթարկուէր «Գիլան» կոմիտէին, Շրջանական Ժողովում մի ձայն ունենալու պայմանաւ:*

2) *Ունենալ Վրէժստանում Պատասխանատու կենտր. Կոմիտէ:*

3) *Ընտրութիւնները դարձնել հերթական, բոլոր մարմինների նկատմամբ, սկսած խմբակներից մինչեւ կենտր. Կոմիտէն եւայլն:*

4) *Աշխատել հետզհետէ ձեռք առնել ամբողջ Վրէժստանի կրթական գործի ղեկավարութիւնը եւ մի ընդհանուր ծրագրով կառավարել:*

5) *Ունենալ Վրէժստանում մի լրագիր:*

Շահս. եւ Անտառի պատգամաւոր
ՊԱՀԱԿ ՍԱՀՄԱՆԵԱՆ

Ժ.— ՂԱԶՈՒԻՆԻ ԲՈՂՈՔԱԳԻՐԸ

Ղազուին, 25 Յուլիս 1906

Ա) Մեծապատիւ Պրն. խմբագիր «Դրօշակ»ի
Ժընեւ

Խոնարհաբար խնդրում ենք ներփակ խնդրագիրս յանձնէք տեղոյդ Դաշնակցութեան Բիւրոյին. նրա մի օրինակը յանձնած ենք տեղոյս ենթակոմիտէին՝ ուղարկելու «Վրէժ»ի Կ. Կոմիտէին, իսկ մի օրինակը՝ ուղղակի Վրէժ:

Ձեզ խոնարհաբար խնդրում ենք չուտափոյթ պատասխանէք որովհետեւ տեղւոյս բոլոր ազգային խնդիրները կախ են մնացել:

Ցարգանօք՝ ՎԱՐԴԱՆ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Բ) Ղազուին, 1906 թ. Յուլիս ...ին,

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան
«Վրէժ»ի Կենտրոնական Կոմիտէին

Մենք, ի ներքոյ ստորագրողներս, անցեալ 1905 թ. մտնելով Հ. Յ. Դաշնակցութեան դրօշակի տակ և կազմակերպելով օժանդակ խմբեր, գործադրելով «Վրէժի» ներքին կանոնագրութիւնը, հպատակելով Հ.Յ.Դ. եւ նայելով տեղւոյս յարմարութեան, յանցաւորը իւր պատիժը կրում էր նիթապէս եւ բարոյապէս(1)*:*

Բայց ներկայումս մի քանի անհատների անձնական խնդիրները տեղիք տուին ժողովրդի մէջ խռովութիւն զցելու: Այդ թիւրիմացութիւնների առաջն առնելու համար, «Գիլանի» կոմիտէի կողմից ուղարկւում է մեզ մօտ պր. պր. Կոստանդին Վարժապետեանը եւ Ներսէս Ներսէսեանը:

Ցիշեալ պարոնները գալով տեղս, փոխանակ ժողովրդին հանդարտեցնելու եւ մեղմութեամբ գործին վերջ տալու, եղած թիւրիմացութիւնը աւելի վատ ելքի են հասցնում, դատապարտելով 16 հոգու՝ առանց մի ընդհանուր ժողով գումարելու եւ գտնելու իսկական յանցաւորներին, խաբում են, ասելով իբր թէ գործ ունինք՝ տանում են մէկ մէկ գցում մի սենեակ, մէկին բանտարկում 30 ժամ, տալով չոր հաց, ջուր, եւ պահելով առանց անկողին: Իսկ երեք հոգու մերկացրնելով, սոսկալի կերպով ծեծում են, իւրաքանչիւրին խփելով 2–300 ճիպոտներ մի օրուան մէջ: Իսկ միւսները լսելով այդ բանը խոյս են տալիս ծեծից:

Ժողովուրդը լսելով այդ սոսկալի պատիժները եւ տեսնելով որ 905–906 թուականի կանոնագրութեան մէջ այդպիսի պատիժներ չկան, գրգռում են եւ յարմար համարում՝ բացատրութիւն պահանջելու տեղւոյս Գաղղանի(2) *ենթակոմիտէից եւ այդ երկու վերոյիշեալ պարոններից: Վերջինները պատասխանում են թէ ո'վ որ կը մօտենայ մեզ կը խփենք, հանելով ատրճանակները, սպառնում են մօտեցողներին: Այնտեղ գտնւում են եւ ենթակոմիտէի երկու անդամները, որոնք շրջապատուած պարսից դատաստանական ոստիկաններով, հրամայում են բռնել սրան, նրան: Ոստիկանները չեն համարձակւում մօտենալ, իսկ նրանք հրամայում էին «բռնեցէ'ք»:*

Ժողովուրդը տեսնելով իրանց մեծերի յանդուգն քայլը, գոռալով վրայ են թափւում եւ սկսում է սոսկալի կռիւ, վիրաւորուելով երկու կողմերից էլ: Կռի-

ը տեղի է ունենում Թեհրանի Խեաւան կոչուող փողոցում, փայտերով: Նրանց կողմից ատրճանակներ են հանւում, բայց ծեծւում են եւ ատրճանակ չեն կարողանում արձակել:

Մենք, համակրելով Հ. Յ. Դաշնակցութեան սուրբ գործին, երբ պարսից դատաստանատունը կանչում է այդ դէպքերի պատճառը գիտնալու, եւ պահանջում է կոռուողներին, մենք պատասխանում ենք որ հարբած ենք եղել եւ այժմ էլ հարբել ենք, որպէսզի կուսակցութեան շահերը չվնասուեն: Իսկ ինչ վերաբերում է այս պատիժներին, Ղազուինում դեռ շատ շատ է: Ուստի խնդրում ենք սրանով, որ շուտով այս անախորժութիւնների առաջն կ'առնէ՛ք կարգադրելով մի քընինչ, որպէսզի մեղմութեամբ այս գործը քննէ եւ վերջ տայ ժողովրդի միմեանց դէմ լարուած դրութեանը. որովհետեւ ուրիշ կուսակցութիւններ արդէն մուտք են գործել Ղազուինում, որոնք պակասեցնում են Դաշնակցութեան ուժերը որ մեզ համար շատ վիրաւորական եւ ցաւալի է: Մենք այլեւս չենք կարող հպատակուել տեղւոյս ենթակոմիտէին եւ եկող երկու պարոններին, մինչեւ Ձեր կարգադրութիւնները, որովհետեւ մեզ վրայ բռնութիւն են գործադրում:

(28 ստորագրութիւններ, ոմանք յստակ, ուրիշներ՝ անընթեռնելի):

---

(1) Նախադասութիւնը պահուած անփոփոխ:
(2) Ղազուինի:

Գ) 12 Փետր. 907, Վիեննա

Վրէժի ընկերներին !

Այս նամակը հարազատ պատճէնը չէ Վրէժի Կ. Կոմիտէին ուղարկածի. խեղաթիւրուած է կատարելապէս: Համեմատեցէ՛ք ձերի հետ:

Ռաշտի Շրջանական Ժողովին առաջ եկաւ այս խընդիրը իր դոկումէնտներով, որից երեւում էր այս հանրագրութեան բոլորովին հակառակը: Գրել այս մասին Գիլան, ուղարկելով պատճէնը:

ՍՏԵՓԱՆ

21.— ՆԱՄԱԿՆԵՐ՝ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՑԻՆ

Ա.— Ատրպատականի կեդր. Կոմիտէին, 18 Յունուար 1905 թուականիր, № 9, կուսակցական պաշտօնաթուղթի վրայ (ՎՐԷԺԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԷ վերտառութեամբ), 4 էջ, սեւ մելանով:

Բ.— Վրէժի (Ատրպատականի) Կ. Կոմիտէին, 8 Մայիս 1906 թուականիր, № 100 (Ճախորդէն տարբեր ձեռագրով), պաշտօնաթուղթի վրայ, 4 էջ՝ մանրատառ, սեւ մելանով: Կնիք՝ Ա. Էջին վրայ:

Գ.— Շաւարշ ստորագրութեամբ նամակ Շահի (Թեհրանի) կոմիտէին կողմէ, 10 Մայիս 1906 թուականիր, № 19, պաշտօնաթուղթի վրայ, 3 էջ, սեւ մելանով:

Դ.— Միեւնոյն ստորագրութեամբ նամակ, Շահի կոմիտէին կողմէ, 7 Յունիս 1906 թուականիր, № 29, պաշտօնաթուղթի վրայ, հասցէագրուած «Հ. Յ. Դ. Թիֆլիսի Խորհրդին». մօտ 3 էջ, սեւ մելանով (բաւական գունատած):

Ե.— Ծերունիէն (Ստեփան Ստեփանեան, Բալաջան, Վրէժունի)՝ ի դիմաց Ատրպատականի Կ. Կոմիտէի, № 153, 4 Յուլիս 1906 թուականիր, փոքր չափի երկթերթ թուղթի վրայ, մանրատառ 4 էջ:

Զ.— Մարզպետունիէն (որ ուրիշ մէկը չէ՝ եթէ ոչ 1905ին Պուլկարիայէն Ատրպատական եկած Ղ. Ղազարոսեանը, որ կոչուած էր դառնալու Հ. Յ. Դաշնակցութեան ծանօթ գործիչներէն՝ Մարզպետը), գրուած Մեսնաւորէն (Թադէոս Առաքելի վանք), 24 Օգոստոս 1906ին, նամակի սովորական չափի 3 էջ, մանիշակագոյն մելանով: Կու տանք վերջին էջի տպագրական պատճէնը:

Է.— Ատրպատականի կեդր. Կոմիտէէն, 4 Նոյեմբեր 1906 թուականիր, № 288/5, Կ. Կ-ի պաշտօնաթուղթի վրայ, մանրատառ 2 էջ, սեւ մելանով:

Ա.

18 Յունուար 1905

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՑԻՆ

Յարգելի ընկերներ!

Մօտ օրերս մեզանում տեղի ունեցաւ Շրջանական Ժողով. Ա. անգամ լինելով Ատրպատականում՝ մասնակցեցին Գաւառների ներկայացուցիչները եւ տեղական կոմիտէն իր բոլոր կազմով. եղրակացութիւնները ուղարկուեցան Արեւմ. Բիւրոյին՝ Դաշնակ. Խորհրդին ներկայացնելու: Ընտրուեցաւ նոր Կ. Կոմիտէ, որ արդէն գործի գլուխ է անցել. այդ ընտրուած կազմի մէջ է մտնում եւ Պետրոսը, ուստի խնդրում ենք այդ մասին յայտնել իրեն՝ շտապել–վերադառնալ տեղս, մանաւանդ կան այնպիսի խնդիրներ, որ իրեն ներկայութիւնը անհրաժեշտ է՝ գործը յաջողութեամբ տանելու համար:

Յաւելով պիտի ասենք, որ նախորդ կոմիտէի հետ դուք այնքան էլ տաք յարաբերութիւններ չէք պահել. ինչպէս պատճառաբանուեցաւ, այս արդիւնք է եղել ինչ որ հասցէների սխալ լինելու, իբր թէ բոլոր նամակները միանգամից էք ստացել, եւայլն: Յուսով ենք որ այսուհետեւ այդպիսի թիւրիմացութիւններ չեն պատահելու:

Խնդրում ենք այսուհետեւ թղթակցութիւնները ուղղէք Դոկ. Յ. Տէր Ստեփանեանի կամ Օրդ. Մեծբայեանի հասցէին:

Դուք հարցրել էիք թէ մեր հասցէին պիտի եկած լինեն կնիքներ եւայլն. մենք չենք ստացած եւ տեղեկութիւն ունենք որ այդպիսի բան մեր հասցէին չէ եկած. գուցէ Մալխասի հասցէին լինի, որ կ'ուղարկուի Ձեզ առանձին մարդով՝ երբ ստացուի:

Մեր հասցէներով գալիս է 240 օր. «Դրօշակ», որ Արդաբիլի գծով ճանապարհենք Սարուստան, բայց աւելի յարմարութեան համար ուղարկում ենք մեզ մօտիկ Ափը. կարգադրեցէք Մրգաստանի կոմիտէին, որ առանձին մարդ ունենայ թերթերի եւ այլ հրատարակութիւնների համար յատկապէս: Գալով Ափը, այնտեղի մեր ընկերներից կը տեղեկանան մեր ագենտի մասին, եւ այսպիսով կը կանոնաւորուի հրատարակութիւնների փոխադրութեան խնդիրը:

Աւարայրի հասցէով նոյնպէս ստացւում է 450 օրինակ դարձեալ Սարուստանի համար. այնտեղի ընկեր Մալխասը իրեն յայտնի միջոցներով փոխադրում է Մրգաստանից ծայրեր բերողների հետ:

Արդաբիլի հասցէով ստացւում է 600 օր, որ Բ. կոմիտէն կարգադրել է ստանալու եւ կարծեմ իրենց առանձին մարդը ունին դրա համար: Նոյնպէս գալիս են եւ Գիլանի հասցէներով, որը կարծեմ դարձեալ Ձեզ համար է. այժմ կը մնայ Ձեզ կարգադրել որ սահմանների կոմիտէները մտնեն յարաբերութեան մէջ եւ ամէն տեղ էլ լինեն յատուկ մարդեր՝ փոխադրութեան համար, եւ սրանով ընդմիշտ կը վերջանայ Ձեր դժգոհութիւնը թերթերի մասին:

Աւարայրի մեր ընկեր Մալխասը ամառս եկած էր Ձեզ մօտ, 4000 բուբ. առնելով վերադարձել էր. այդ գումարը իր ժամանակ գործադրուեց Ա. (Աւարայր) եկող ընկերների վրայ. մի 1000 էլ փոխադրուեցաւ Կոմսին, գնուեցան նաեւ նոր ծայրեր: Գործը ստիպողական լինելով Մալխասը չէր կարողացել յանձնարարականի սպասել, բայց դա արգելք մը չէ եղած որ Դուք նրան վստահէիք: Սակայն այդպէս չէ կարելի ասել մի ուրիշի վերաբերեալ. վերջերս Ձեզ մօտ է եկել ժամանակաւորապէս Գաղթաչէնում եղող մեր ընկերներից Արտուրը (Գրի. Անուշեա՞նը). դա եկած է եղել իրեն մասնաւոր գործով եւ դրան յանձնարարական է տուել մեր ընկեր Մալխասը, որ Դուք նրան ոչ թէ գործ յանձնէիք եւ վերադարձնէիք, այլ եթէ պէտք ունենայիք տեղեկութիւններ հարցնելու Գաղթաչէնում եւ Աւարայրում անցած դարձածի մասին նա կարող էր այդ տեղեկութիւնները տալ, իբրեւ ժամանակաւոր այնտեղ գտնուող մի ընկեր, որը իբրեւ երկիր անցնող զինուոր ուղարկած էինք, սակայն պէտք են ունեցել ընկերները փոխադրութեան նպաստելու համար եւ թողնել Գաղթաչէնում: Այս պարոնը նկատելի էր որ տրամադրութիւն չունի խուլ անկիւնում լուռ ու մունջ գործ կատարելու: Ուստի մի օր անց նոյնիսկ տեղեկութիւն տալու գալիս է Աւարայր եւ պատճառաբանում է թէ ռէւմատիզմ ունեմ, գնում եմ բժշկուելու եւ իմ մասնաւոր գործերս կարգադրելու: Վերցնում է ճանապարհածախս 200 ղրան, նոյնպէս եւ 4 ոսկի առանձին գումար, թողնում է եւ ուրիշ 200 ղրանի պարտք եւ վերադիչեալ ընկերոջ յանձնարարականով վերադառնում Սարուստան: Մենք հաւատացած էինք որ այլեւս չի վերադառնայ, այն էլ ասենք որ իր գնալուց յետոյ պարզուեց իրեն թողած պարտքը. եւ ինչո՞ւ այսպիսի մի անվստահելի մարդու Դուք տալիս էք 88 բուբ. ճանապարհածախս, 100 բուբ. մի ուրիշ գումար մի ընկեր հասցնելու, եւայլն իրեր: Նրան յանձնած ատրճանակներից միայն մի հատ է այստեղ դուրս եկել, իսկ Ձեր բրաունինկը իբր թէ թողնել է Ափում. Այս մասին մենք հարցրել ենք Ափի ընկերներին, թէ ո՞րքան ճիշդ է: Բայց Ձեր նամակում յիշատակուած է եւ մաուզերեան ատրճանակ. իր ասելով դա թողնուած է Մրգաստանում. խնդրում ենք այդ մասին ստուգել եւ մեզ տեղեկացնել: 188 բուբլուց նա մեզ եւ ոչ մի կոպէկ տեղ չէ հասցրել, մինչդեռ այդ 100 բուբ. պատկանում է Երկիր մտնող մի ընկերոջ եւ որը դրան մեծ կարիք ունի. իրեն ասելով 100 բուբ. յանձնած է եղել իրեն որպէսզի այդ գումարով հագուստ եւայլն առնուի, եւ իբր թէ ինքը գնել է, բայց ճանապարհին երկաթուղում իրեն ջամադանը գողացուել է, ուր գտնուել են այդ իրերը եւ իրեն ունեցած գումարը: Սակայն այս մասին Մրգաստանի ընկերներին ոչինչ չէ յայտնած: Մենք ունեցանք մի ժողով, իրեն էլ հրաւիրեցինք բացատրութեան, հրապարակապէս լսեցինք եւ գտանք չափազանց խարդախ եւ սուտ: Ուստի մենք խնդրում ենք մեր շրջանից եկող ընկերներին եւ առ հասարակ ամէն պատահողի վերաբերեալ առատաձեռն չլինէք եւ ոչինչ չհաւատաք, եթէ մեզնից յանձնարարական չունենան. սրանով Դուք կը յարգէք եւ մեր իրաւունքը: Հակառակ դէպքում մենք մեզ ազատ կը համարենք պատասխանատուութիւնից, ինչպէս ներկայ դէպքում. ի հարկէ մեր խօսքը զանազան ընկերների վերաբերեալ չէ, օր. ինչպէս Մալխասը, եւ թէ առ հասարակ այն ընկերները, որոնք վաղուցյետէ վստահութիւն են վայելում, սակայն այդ դէպքում էլ, օրինական հիմքերի վրայ դնելու համար, Դուք պարտաւոր էիք մեզ գրել եւ իմացնել, որովհետեւ այդ գումարները մեր շրջանումն են ծախսուելու կամ մեր շրջանումն են անցնելու, հետեւապէս պիտի մտնեն մեր հաշիւների մէջ: Ի նկատի ունենալով վերոյիշեալ վերաբերմունքից ստեղծուած մեզ համար անախորժ հանգամանքը, խնդրում ենք այսուհետեւ կանոնաւոր յարաբերութիւն պահպանել ուղղակի մեզ հետ՝ նշանակուած հասցէներով:

Կ. Կոմիտէս մի քանի անգամ դիմել է Ձեզ եւ Արեւմտ. Բիւրոյին եւ խնդրել է ուղարկել մի կարող անձնաւորութիւն իբրեւ պրոպականդիստ, որովհետեւ մեր ընկերները բոլորը զբաղած են մասնաւոր գործերով եւ ծանրաբեռնած շատ ուրիշ հոգսերով. չկայ մի ընկեր գոնէ ամիսը 1–2 անգամ հրապարակային դասախօսութիւններ տայ. այդ հանգամանքից օգտւում են

հակառակ կուսակցութիւնից եւ չնորհիւ հրապարակային դասախօսութիւններին՝ ընդունում են իրենց շրջանները, գրաւելով նոյնիսկ մեր կուսակցութիւնից շատ անդամներ. դրա հակառակ մենք օրէ օր թուլանում ենք: Մենք դարձեալ չեչտում ենք այս կէտի վրայ եւ խնդրում ենք առանձին լուրջ վերաբերմունք: Գիտենք որ Ձեր ուշադրութիւնը գրաւուած է տեղական խնդիրներով, բայց եւ մեզ չպիտի մոռանաք:

Շատախ գնացող մեր սուրհանդակը սահմանի վրայ բռնուել է, այպիսով թերթերը եւ նամակները (Շամ գնացող) ձեռք են ընկած ինչպէս իմացանք, սակայն դեռ վերջնական լուր չունենք. իսկ մի այլ գծով 100 ոսկի փոխադրել էինք Մինարէթի վրայով Շամ, տեղ է հասել. նոր լուր առանք որ դրամի մեծ կարիք ունին, խնդրել են 200 ոսկի: Խնդրում ենք հնար եղածին չափ չուտ օգնութեան հասնէք, փոխադրեցէք ուղղակի Մինարէթ՝ Երկիր ուղարկելու համար. յուսով ենք որ ուշադրութիւն կը դարձնէք: Մեզ մօտ գտնւում են Կոմսի ուղարկած երկու փակ մեծ ծրարները, «Մեծ Քաղաք» մակագրութեամբ: Եկողի հետ կ'ուղարկենք, սպասում ենք պատեհ առիթի: Կ'ուղարկենք Ափը, Մըրգաստանից եկող սուրհանդակին պատուիրեցէք վերցնելու:

Ընկերական ջերմ բարեւներով՝

ԱՏՐ. Կ. ԿՈՄԻՏԷ

Բ.

№ 100 8 Մայիս 1906

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՑԻՆ

Ընկերներ!

Ամբողջ մի տարի լրանում է, որ նամակներ ենք գրում Ձեզ, բայց Ձեր կողմից եւ ոչ մի արձագանգ: Ներկայ տարուայ Փետրուարին կայացաւ Վրէժում մեր շրջանի Բ. Պատգամաւորական Ժողովը, որտեղ բուռն դժգոհութիւն արտայայտուեց այդ անբացատրելի անտարբերութեան դէմ. դրանից յետոյ գրեցինք դարձեալ № 45 գրութիւնը, սակայն մինչեւ այսօր էլ նոյն անուշադիր վերաբերմունքն է: Զանազան ընկերներից (Սարուստանից) ստացած նամակներից կողմնակի կերպով տեղեկանում ենք, որ գումարուելու է — գուցէ եւ գումարուել էլ է — Խորհուրդը, որ հաւանօրէն իր զբաղմունքի առարկաներից մէկը կը դարձնէր եւ Երկրի խնդիրը. եւ մենք, որ գտնւում ենք Երկրի անմիջական սահմանագլխի վրայ եւ կազմում առաջին, ամենակարեւոր կայանը Երկրի գործունէութեան, ոչ մի տեղեկութիւն չենք ունենում այդ մասին, մեր պահանջները եւ մեր ասելիքները այդ առթիւ դնելու համար: Ռայոնական Ժողով է գումարւում եւ Վրէժը, որպէս Արեւել. Բիւրոյի մարմիններից մէկը՝ հրաւէր չի ստանում մասնակցելու նրան. գոնէ Ժողովի արձանագրութիւն էլ չենք ստացել իմանալու համար թէ ի՞նչ արդիւնք է ունեցել Ժողովը:

Երկրի պահանջները մեր վրայ են թափւում ամէն անգամ, երբ սուրհանդակ է գալիս Շամից. մեզ են մեղադրում, մեզ են անտարբեր անուանում. մինչդեռ մենք ամէն հնարաւորը արել ենք, ամէն տրամադրելի միջոցները գործ ենք դրել նրանց գոհացնելու համար. եւ այժմ, երբ Երկրի վիճակը ուղղակի կրիտիկական է, ինչպէս աղաղակում են այդ Երկրի վերջին նամակները, երբ նոքա միջոցներ են ուզում, պատրօն, վառօդ, պիստօն, մի քանի հատ երկարներ — նոցա ծով կարիքների մինիմումը միայն — որոնք միայն մի քանի հազար ռուբլու են նայում՝ մենք մնում ենք կանգնած, անմիջապէս բաւարարութիւն տալ չենք կարող, ձեռքի տակ միջոցներ չունենք: Մեր շրջանի եկամուտը — անցեալ տարուայ մեր մուտքը մեր շրջանի մարմիններից՝ — եղել է մօտ 4000 թուման միայն — մեր շրջանի ներքին ծախսերը չի ծածկում, ուր մնաց արտաքին՝ փոխադրութեան եւ պէտքերին բաւականացնի: Այժմ այլեւս սպասել չէր կարելի. Քարաբերդից ստացուած ապրանքները արագ՝ Աւարայր, Մենաւոր եւ Շամ փոխադրելու եւ փոխադրութեան գործը արագացնելու համար, յատկապէս Գարեգինը Մինարէթից ուղարկեցինք Աւարայր–Մենաւոր՝ փոխադրութեան գործին անմիջական վերահսկողութիւն անելու համար, ինչպէս եւ Երկրից պատուիրուած ռազմամթերքի գնումը կատարելու համար ստիպուեցանք վերցնել առայժմ 3000 ռուբլու մի գումար, որի համար տուինք նոյն գումարի մի փոխանակագիր՝ Ձեզնից գանձելու համար: Ուրիշ կերպ մենք այստեղ ոչինչ անել չենք կարող:

Երկրի եւ նրա դրութեան մանրամասնութիւնների հետ կը տեղեկանաք Մինարէթից մեզ գրուած մի նամակից, որ ուղարկում ենք Ձեզ ներփակ: Այս տարուայ մեր շրջանի Պատգամաւորակ. Ժողովի որոշմամբ, Մարզպետունին երկու ամսից ի վեր Մինարէթ է ուղարկուած, որպէս օգնական մեր սահմանագծային — Մինարէթ, Աւարայր, Մենաւոր, Փարոս — գործիչ՝ Գարեգինի(1), որի հսկողութեան ենթարկւում են այդ վայրերի գործունէութիւնը իրենց գործիչներով:

Մեր շրջանի նորութիւններից մէկն էլ սահմանագծային խնդրով ծագած թրքо–պարսիկ կոնֆլիկտն է, որ մինչեւ այս րոպէիս էլ դեռ լուծուած չի կարելի համարել. եթէ օտար միջամտութիւններ չլինեն՝ գործը կարող է ընդհարման հասնել երկու հարեւան տէրութիւնների միջեւ. այդ միջոցին մենք կարծում ենք

մեր կողմից անտարբեր մնալը առնուազն քնած լինել կը նշանակէր, եւ այդպիսի մի հրաշալի պատեհութիւն ձեռքից բաց թողնել. չէ՞ր կարող արդեօք այդ պատեհ մոմենտին մի խոշոր արշաւախումբ պատրաստել, որ առաջին ազդանշանին խուժէր դէպի Շամ, որ անմիջապէս կը միանար նրան եւ մի հսկայ խլրտում կը բարձրացնէր չչմած հակառակորդի սրտում, որին արձագանգել կարող է Լեռնավայրը: Շնորհիւ այն հանգամանքի, որ այս ձեռնարկութիւնը անուղղակի կերպով կ'օգնէ եւ պարսիկ կառավարութեան եւ կ'օժանդակէ նրան ընդհարման ժամանակ՝ մենք վստահ ենք, որ սա դիւրութիւններ կը տայ մեզ՝ Սարուստանից(2) մարդկանց այս կողմը անցկենալուն եւ տեղաւորուելուն, եթէ մենք նախապէս բանակցինք նրա հետ եւ պատրաստենք նրա միտքը այդ ուղղութեամբ, յօգուտ մեր առաջարկած ծրագրի, որի համար մեր այստեղի ընկերներից նրան (գահաժառանգին) մօտիկ մի մարդ ունինք: Հարկաւոր է միայն, որ դուք լուրջ կերպով խորհէք այս խնդրի վերայ, տայիք Ձեր համաձայնութիւնը, արտօնէիք մեզ անմիջապէս գործի սկսել, ուղարկէիք մեզ Խորհրդի կնքով կնքուած մի յանձնարարական բանակցութիւնների համար եւ Ձեր համաձայնութեան դէպքում յայտնէիք թէ ինչքա՞ն մարդ եւ ինչպիսի՞ պատրաստութեամբ կը կարողանայիք դուք յատկացնել այդ նպատակին, եւ որ կարեւորն է, լաւ կը լինէր որ մի ձեռնհաս անձնաւորութիւն, կամ եթէ կարիք կը տեսնուէր՝ մի մարմին զար եւ յանձն առնէր գործի ղեկը: Կը խնդրենք այս անյետաձգելի հարցին պատասխանէիք մեզ շատ չուտ:

Պետկայի(3) հետ պատահած դէպքը լսած կը լինէք. սրանք, այս հնչակեան կոչուածները, որոնց մենք դադարել ենք մեր շրջանում յեղ. կուսակցութիւն ճանաչելուց եւ կտրել նրանց հետ բոլոր պաշտօնական յարաբերութիւնները, իրենց հակայեղափոխական եւ բաշիբոզուկ գործերի չափը անց են կացրել վերջերս: Մինարէթում այս մի տարուայ ընթացքում մի քանի անգամ անմիտ ընդհարումների, որոնք մինչեւ իսկ սպանութիւնների յանգեցան, պատճառ լինելուց բացի, վերջերս սկսել են իրենց դաւադրութիւնների ցանցը այստեղ էլ տարածել, որի արդիւնքը Պետկայի գլխին խփելու դէպքն եղաւ: Ցանցաւորը վերջերս այստեղ տուժեց իր կեանքով, որի առթիւ այդ ենիչարիների խմբակցութիւնը իր մի քանի թռուցիկներով, որոնք կառավարութեան ձեռքն էլ են հասնում, հայհոյանքներ չթողեց, որ չթափէր մեր կազմակերպութեան գլխին: Այդպիսի անդուն բերանով հայհոյանքները կարելի էր մի կերպ արհամարհել, որոնցով իրենց ինչ լինելը ցոյց տուին հասարակութեան, այդ թողնենք մի կողմ. բայց դոքա կանգ չառան եւ մատնութիւնների առաջ, որի համար այլեւս չի կարելի ամենախիստ եւ կտրուկ միջոցներ ձեռք չառնել դրանց դէմ. ցաւալին միայն այն է, որ գործի ամենատենդոտ ժամանակումն ենք եւ ափսոսում ենք ամենափոքր ժամանակ անգամ նուիրել այդօրինակ ենիչարիների հետ զբաղուելու, որոնք ինքն ըստ ինքեան ոչինչ չեն ներկայացնում մեր շրջանում:

Պետկան արդէն ճանապարհուել է Սարուստան եւ շուտով այդտեղ կը լինի. յանձնարարել ենք նրան դնել Ձեր եւ Խորհրդի առաջ մեր պահանջները, եթէ մինչեւ Խորհրդի նստերի չվերջանալը կարողանայ հասնել. փողի մեծ կարիք ունենք, փողի, այս փոխադրութեան սէզօնին ամենաքիչը մի 4–5000. սէզօնը անցնելուց՝ այլեւս պրծա՞ւ: Կարիք ունենք եւ մի լաւ արհեստաւորի (աղցագիր ունեցող) եւ մի աղուոր գործիչ ընկերոջ. այդպիսի ընկերոջ պահանջը մենք միշտ դրել ենք, դա հին ցաւ է. բայց միշտ էլ պատասխանուել է մեզ «եօլա տանել եղած ընկերներով». եօլա տանել, մենք կարծում ենք վերջ պէտք է դնել միանգամ ընդմիշտ այդ ուղղութեան: Կ. Կոմիտէին անդամները բոլորը իրենց մասնաւոր, սեփական գործերով, շատերը եւ ընտանիքներով ծանրաբեռնուած մարդիկ են. մի աղուոր մարդ ունէինք մեր շրջանում — Պետկան, որ հեռացաւ մեր շրջանից, գուցէ եւ ընդմիշտ. Գարեգինը Շամ կ'անցնի շուտով. հաստատուն է նրա այդ վճիռը. էլ ով է մընում, այդպիսով մենք գործ տեսնել չենք կարող. իսկ այս վիճակում տեսած գործն էլ գործ համարել չի կարելի. գործ էք ուզում, որ կատարուի՝ մարդ ուղարկեցէք: Այս շրջանը միշտ այդպէս աչքաթող է արուած, մի շրջան որ հետզհետէ ընդարձակւում է յեղ. գործի տեսակէտից — 5 կոմիտէ եւ 150 խումբ ունենք ներկայումս — Երկրի գործունէութեան յաջողութիւնը կախուած է մեծաւ մասամբ մեր շրջանի, մանաւանդ սահմանագծային կէտերի կանոնաւոր եւ զօրեղ գործունէութիւնից. պէտք է զօրեղացնել այդ կէտերը թէ՛ նիւթական եւ թէ բարոյական կրկնակի տեսակէտներից:

Ընկերակ. ջերմ բարեւներով՝

ՎՐԷԺԻ ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԷ

Ց. Գ.— Խնդրում ենք կանոնաւորեցէք Ձեր յարաբերութիւնները Կ. Կոմիտէին հետ եւ տուէք Ձեր հաստատուն հասցէն, նամակ գրելիս չգիտենք ի՛նչ հասցէով գրենք: Մեր նամակի եւ հեռագրի հասցէն է — Դօկտ. Արթին Տէր–Ստեփանեան. մեր խփելիք հեռագրերի հասցէն լինելու է — «Արշամեան», այս մասին գրել ենք Ձեզ Մարտ 2, № 65 նամակով, եւ հաղորդել տեղեկութիւններ մեր շրջանի Պատգ. Ժողովի մասին: Զգիտենք ստացե՞լ էք:

Այս տարուայ Մարտի սկզբին մի փոխանակագրով փոխադրել էինք Ձեզ 4332 դրան, որ ստացել էինք Քէներգեազից (?), այնտեղի մեր Բէնդեր խմբի անդամ-

ներից՝ Օրդ. Քնարիկի եւ Շահէնի ձեռքով, Մննդեան երեկոյեան, աւետիս ման գալով, հաւաքուած յոգուտ Կովկասում Հայ-Թրքական ընդհարումներից վնասուած հայերի. չիմացանք, ստացուե՞ց արդեօք այդ փողը Աֆրիկեանների կանտորի միջոցաւ եւ յատկացուե՞ց նը-պատակին. փոխանակագիրը ուղարկուած էր Երուանդին: «Ցառաջ»ում այդ մասին ոչինչ լոյս չտեսաւ. ըստ-պասում էինք. խնդրում ենք ետեւից ընկէք եւ հրատ-արակեցէք այդ մասին «Ալիք»ի մերձակայ համարներից մէկում:

(1) Սամսոն Թադէոսեան:
(2) Կովկասէն:
(3) Պէտկայեան՝ Վրէժի Կ. Կոմիտէի գործօն անդամներէն մէկը:

Գ.

№ 19 10 Մայիս 1906

Հ. Յ. Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Յարգելի՛ ընկերներ,

Հ.Յ.Դ. Շահաքաղաքիս կոմիտէն սրանով իր բարոյական պարտականութիւնն է համարում Արեւելեան Բիւրոյիդ ուշադրութիւնը դարձնելու մի խնդրի վրայ, որը մեր կարծիքով շատ կարեւոր է, եթէ ի նկատի ենք ունենում տեղիս պայմանները:

Ձնայելով որ կոմիտէս համոզուած է, որ Արեւելեան Բիւրոյիդ ուշադրութիւնը ներկայումս ամբողջապէս կլանուած է Կովկասի հայութեան ինքնապաշտպանութեան սուրբ, մեծ եւ պատասխանատու գործով եւ երկրորդական բնաւորութիւն ունեցող գործերին ընթացք տալու համար այնքան էլ ժամանակ չի ունենալ, սակայն համոզուած լինելով որ մեր փոքրիկ խնդիրն էլ կը կատարէք, կոմիտէս թոյլ է տալիս այդ խնդիրը ձեզ ուղղելու, որի էութիւնը հետեւեալն է:

Թեհրանի հայ վաճառականներից մէկը, Սիմէօն Տէր Զաքարեան, որի եղբայրները նոյնպէս վաճառականներ են Թիֆլիզում, վերջերս իրան թոյլ է տուել այստեղ կատարելու առեւտրական մի կեղտոտ գործ, որը նիւթական եւ բարոյական մեծ վնասներ է պատճառել մի խումբ աղքատ ոչ միայն հայերի, այլեւ պարսիկների:

Սիմէօն Տէր Զաքարեանը բոլորովին կեղծ կերպով դրաւ է վերցրել տեղիս հայ վաճառականներից մի ուրիշի՝ Ղուկաս Յովսէփեանի մօտ 30·000 թուման արժէք ունեցող տները, որի շնորհիւ միայն, այդ Յովսէփեանը կարողացել է զանազան ժամանակներում մի խումբ հայերից եւ պարսիկներից փողեր ստանալ եւ առեւտրական շրջանառութեան մէջ մտցնել: Այդ մարդկանց մէջ կան եւ այնպիսիները, որոնք իրանց խնայած վերջին կոպէկները իբրեւ աւանդ յանձնել են Յովսէփեանին, ապագայում իբրեւ երաշխաւորութիւն, աչքի առաջ ունենալով նրա տեղումս գտնուող երկու տները, որոնք Տէր Զաքարեանը կեղծ կերպով 20·000 թուման-նով իբր թէ նրանից գրաւ է վերցրել եւ փողերը յանձնել Ղուկաս Յովսէփեանին:

Դա մի ակնյայտնի եւ խոշոր կեղծիք է, որ յայտնի է տեղիս հայ եւ պարսիկ վաճառականների մեծամասնութեանը: Մի կեղծիք, որից գլխաւորապէս տուժում են իրանց վերջին կոպէկները Ղ. Յովսէփեանին յանձնած մի խումբ աղքատ մարդիկ:

Արդ, որովհետեւ Հ. Յ. Դաշնակցութեան Ծրագիրը տրամադրում է հնարաւորութեան սահմաններում խառնուել հայ ազգի նաեւ հասարակական բնաւորութիւն ունեցող գործերում՝ տեղական դաշնակցական մարմինների միջոցով, դրա համար կոմիտէս խնդրում է Թիֆլիզի Տէր Զաքարեան եղբայրների վրայ բարոյական ճնշումն գործադրել, որպէսզի դրանք ստիպեն այստեղի Սիմէօն Տէր Զաքարեանին յետ քաշուելու իր կեղտոտ գերից յօգուտ Ղ. Յովսէփեանի, եւ բացի դրանից տեղիս Ս. Տէր Զաքարեանը պաշտօնապէս յայտարարի, որ Ղ. Յ.ի տունը կեղծ կերպով է իր մօտ գրաւ դրուած:

Ներկայ կրիտիկական պայմաններում, երբ մայրաքաղաքիս հայութիւնը այնքան էլ նախանձելի յարաբերութիւն չունի պարսիկների հետ եւ վերջիններս աւելի շուտ տրամադիր են լարուելու նրանց հետ եւ գրանով տեղիս հայութեան դրութիւնը ապագայի համար վտանգելու, Տէր Զաքարեանի կատարած կեղտոտ գործը պարսիկների շրջանում շատ վատ տպաւորութիւն է թողնում, պարսիկների թշնամութեան համար աւելի նպաստաւոր հող պատրաստում եւ նրանց աւելի եւս գրգռում հայերի դէմ: Տէր Զաքարեանի կատարած կեղծիքը իր մանրամասնութիւններով յայտնի է նաեւ պարսիկների շրջանում, որոնք այդպիսի զէնքերի են սպասում հայերին զրպարտելու եւ վնասելու: Ահա այս, մեզ համար բոլորովին աննպաստ հանգամանքն է, որի վրայ, մեր բարոյական պարտականութիւնն ենք համարում, Արեւել. Բիւրոյիդ կարեւոր ուշադրութիւնը դարձնելու:

Ձեր կարգադրութիւնից յետոյ կոմիտէս վերոյիշեալ գործին նպատակայարմար ընթացք կը տայ եւ բաւարարութիւն կը պատճառուի Ղ. Յովսէփեանի նիւթականապէս աննախանձելի պարտատէրներին, իրանց իրաւունքները գործադրելու:

Եթէ հարկը պահանջի, կոմիտէս կարող է Բիւրոյիդ մի շարք չոչափելի փաստեր ներկայացնել վերոյիշեալ գործի կեղտոտ բնաւորութեան մասին:

Ցուսալով, որ Արեւել. Բիւրոյիդ իր ժամանակին մեր խնդրին բաւարար լուծումն կը տայ, մնում ենք

Ընկերական բարեւներով՝ ՇԱՒԱՐՇ

Մեր հասցէն՝ Թեհրան, Ալիք Զալալեան:

Դ.

№ 29 7 Յունիս 1906

Հ.Յ.Դ. ԹԻՖԼԻՍԻ ԽՈՐՀՐԴԻՆ

Սիրելի՛ ընկերներ,

Ներկայ տարուայ սկզբում Վրէժստանի շրջանում կայացած Պատգամաւորական Ժողովը կատարել է երկու սխալ որոշումներ, որոնց դէմ ներկայ նամակով բողոքում ենք: Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Խորհուրդդ կարող է վերոյիշեալ որոշումը փոխել տալ յօգուտ Շահաքաղաքիս կոմիտէին, որովհետեւ իւր իրաւասութեան սահմաններումն է գտնուում այդօրինակ նոր կարգադրութիւնները:

Ամէնից առաջ յիշենք, որ Շահաքաղաքը իւր գործունէութեամբ մինչեւ այսօր Վրէժստանի միւս շրջանների (բացի Վրէժից) համեմատութեամբ աչքի ընկնող տեղ է գրաւել, եւ զգալի կերպով զարկ է տուել յեղափոխական գաղափարի արծարծման եւ ծաւալման: Երկրորդ, Շահաքաղաքը, իբրեւ Վրէժստանի քաղաքական կենտրոն, կարող է չոչափելի ծառայութիւններ մատուցանել քաղաքական հարցերում հարկը պահանջած դէպքում, եւ երրորդ՝ մտաւոր ոյժերի եւ ազդեցիկ հայերի տեսակէտից Շահաքաղաքը անհամեմատ աւելի բարձր է կանգնած, քան Վրէժստանի միւս երկրորդական վայրերը:

Սակայն այս տարի Շահաքաղաքս Պատգամաւորական Ժողովին չկարողանալով իւր յատուկ ներկայացուցիչը ուղարկել՝ տեղիք է տուել մի այնպիսի անյարմար որոշման, որ վերաբերում է շրջանների նոր բաժանման եւ նոր կենտրոնական Կոմիտէ կազմուելուն:

Նոր բաժանումով Ղազուինը, Մազանտարանը, Բանտար Գեազը եւ այլք ենթարկւում են Գիլանին, իբր թէ միայն վայրերի մերձակայութիւնը եւ փոստային յարաբերութիւններն են ի նկատի առնուել. ինչ վերաբերում է այս երկու պայմաններին, իրականութիւնը այն է, որ Ղազուինը աւելի մօտ է Շահաքաղաքիս քան Գիլանին, իսկ վերջինիս հետ Մազանտարանը յարաբերութիւն ունենալու համար իւր նամակները պէտք է ուղղէ Կրասնավոտսկի, Բագու, Ենզելի եւ յետոյ Գիլան, կամ Թեհրանի վրայով Գիլան, այն ինչ Մազանտարանը չարաթական մի քանի անգամ անմիջական (թէ՛ փոստային եւ թէ կարաւանի) յարաբերութիւն ունի Շահաքաղաքիս հետ:

Շահաքաղաքիս Կոմիտէին Պատգամաւորական Ժողովը ենթարկել է Բանտար Աբասը, Սինան եւ Քիրման Շահը, ուր բացի Արաբներից եւ Քիւրտերից ոչ ոք չը-կայ:

Բացի դորանից միտք է յղացուել մի երկրորդ Կենտրոնական Կոմիտէ կազմել, եւ այդ եւս յարմար են դատել Գիլանը Կենտրոնական Կոմիտէ դարձնել:

Մենք իրաւունք ենք համարում ասելու, որ Շահաքաղաքը թէ՛ քաղաքական եւ թէ ուրիշ բոլոր բոլոր տեսակէտներով աւելի բարձր է կանգնած քան Գիլանը:

Արդ, յարգելի Խորհուրդ, Շահաքաղաքիս Կոմիտէն բողոքելով Պատգամաւորական Ժողովի անյարմար որոշումների դէմ, առաջարկում է նոր քննութեան ենթարկել այդ որոշումների նպատակայարմարութիւնը, եւ փոխել այն, եթէ անյարմար գտնէ:

Իբրեւ Շահաքաղաքիս Կոմիտէի տրամադրութեան եւ կարծիքների թարգման, մեր կողմից նշանակում ենք ընկեր Պետրոս Խաչատրեանին եւ Լեւոն Բաբայեանին, որոնք անձամբ ձեզ մօտ կարող են պարզաբանել Շահաքաղաքիս առաւելութիւնները Վրէժստանի միւս վայրերի վերաբերմամբ:

Ընկերական բարեւներով՝

ՇԱՒԱՐՇ

Ե.

№ 153 4 Յուլիս 1906, Դաւրէժ

ԱՐԵՒԵԼ. ԲԻՒՐՈՅԻՆ

Սիրելի՛ք,

Այսօր ձեզ հեռագրեցի «Դրօշակ»ների այրուելու մասին. այս մենք վաղուց նախատեսել էինք. գրել էինք Շահ՝ մարմնի մեր ընկերներին, որ միջոցներ ձեռք առնեն եւ կարողանան տիրող կառավարութեան հասկացընել՝ որ «Դրօշակ»ը Պարսկաստանի դէմ ոչինչ չի գրում, հետեւապէս եւ կառավարութեան վնաս չէ. սակայն Շահի մեր կարող ընկերներից Լ. Բաբայեանը (?), որ այժմ այդտեղ է, ոչ թէ մեզ չի պատասխանել, այլ այսպէս մի կարեւոր ժամանակ թողել, մեկնել է առանց մի տող գրելու այդ խնդրոյ առթիւ. դա անբարեխղճութիւն է, այդպէս էլ նկատեցէք այդ պարոն կատէրին (?)...

Այսօր ստացուեց Եւրոպայի փոստը՝ 3000 օրինակ № 6 «Դրօշակ»ներով. մաքսատան կառավարիչ Մ. Լա-

ւերոը պահանջում է բոլոր պարբերական թերթերը, «Մշակ»ը եւ միւս թերթերը թողնում է («Ալիֆ» չէր ստացուած), «Դրօշակ»ը հրամայում է այրել. խկոյն կատարում է հրամանը:

Ասում են թէ Թեհրանից հրաման է եղել հեռագրով՝ արգիլել բոլոր յեղափոխական թերթերը, մանաւանդ «Դրօշակ»ը. զարմանալին այն է, որ «Հնչակ»ը եւ «Երիտ. Հայաստան»ը մի փոստ առաջ ստացուեցին եւ բաժանուեցին. այս հանգամանքը մեզ առիթ է տալիս կասկածելու, որ մեր հակառակորդները, լրտեսները, մատնիչները եւ հակայեղափոխականները, միացած Հնչակեան անուան տակ, կառավարական շրջանակներումն էլ սկսել են մեր դէմ գործել եւ յաջողացրել են. փաստեր էք ուզում, անթիւ կը տամ, բայց յարմար չեմ տեսնում ներկայումս. երկիւղ կայ նոյնիսկ նամակներ խուզարկելու, ամէն բան հաւատալի է եւ սպասելի...:

Նախորդով Մհերեանին(1) գրել էի Ռաշտի թերթերի մասին եւ դեռ յոյս ունէինք ծածկելով՝ այստեղ տեղի չունենար այսպիսի մի հարուած: Դոկտոր Ստեփանեանը, որի հացէին գալիս էր թերթը, այսօր մի գրութիւնով դիմել է մաքսատան կառավարիչին եւ պահանջել է իրեն բացատրութիւն տրուի՝ թէ ինչո՞ւ այրել են իր հացէին եկած թերթերը, առանց իրեն վաղօրօք իմաց տալու եւ իր բացակայութեան, քանի որ ինք այդ թերթի գործակալն էր եւ նա ճանչցուած է Պարսկաստանում մի լեգալ թերթ, որ ինքը շարունակ ստանում էր, որովհետեւ չգիտէր որ դրա մուտքը արգիլուած է Պարսկաստան եւայլն: Տեսնենք ի՞նչ պատասխան կը տան. մտադիր է դիմել տեղւոյս անգլ. կոնսիւլին. եթէ կոնսիւլը խօսք տայ որ կը պաշտպանի, գործին ընթացք կը տայ եւ կը դիմէ Թեհրան Անգլ. Մինիսթրին, իբրեւ Ամերիկայի հպատակ:

Առայժմ հեռագրեցի Խմբագրութեանը, որ այլեւս թէ՛ «Դրօշակ» եւ թէ [այլ] հրատարակութիւններ չուղարկեն:

Ասում են շատերը՝ իբրեւ թէ սա հետեւանք է Թեհրանի յեղափոխական շարժումների. կառավարութեան մօտիկ անձնաւորութիւններ տեսնում են Կարմիր Սուլթանի ներկայացուցիչի մատը այս գործում. որովհետեւ Լայիջանը (?) տիրել են, պարսիկները անկարող են ուժով հեռացնել, ստիպուած զիջողութիւններ են անում. իբր թէ տաճիկները առաջարկել են պարսիկներին՝ ճնշել հայ յեղափոխականներին. բայց ամէնից հաւանականը «Աղաեւ եւ ընկ.» ինտրիկների հետեւանք պիտի համարել, որին քիչ չեն նպաստում եւ մեր լիրբ «Կայծ»երը, հնչակները ու միւսները՝ իրենց այստեղի հետեւող արբանեակները: Հնչակեան պրոպականտիստ է եկել Թեհրան. դժբախտաբար նրա քայլերի մասին մեր այնտեղի ընկերները ոչինչ չեն գրում, նկատելու ընդունակութիւն չունին: Թերեւս նրա գործը լինի, ինչպէս գրում է մեր ընկ. Պետրոսը. նրանք կառավարութեան մօտիկ համակրողներ ունին այնտեղ:

Մի ուրիշ աւելի ծանրակշիռ խնդիր կայ եւ խոչընդոտ, որի մասին կը գրենք ձեզի եկողի հետ. խնդրում ենք աչալուրջ լինել: Դիմեցէք այդտեղ պարսից կոնսիւլին, որ նոր եկած է Հնդկաստանից. դա կարող մարդ է եւ կարող է գրել իր կառավարութեան, հասկացնել ամէն բան: Մի ժամանակ «Հաբլ-Ուլ-Մատին» Հնդկաստան հրատարակուող թերթի մուտքն էլ արգիլուած էր Պարսկաստան, բայց այդ արգելքը շուտով վերացուցին, ինչպէս եւ Եգիպտոսում հրատարակուող մի պարսկերէն յեղափոխական թերթի վերաբերմամբ:

Մենք կարծում ենք կառավարութիւնը պիտի վաղօրօք յայտարարէր, առանձին տէկլարացիայով, թերթի խմբագրութեան, բայց այդ չէ արել. Բէլջիկացի ծառայողները մարդի տեղ չեն դնում հայերին, չափազանց արհամարհական կերպով են վերաբերւում: Նոյնիսկ Լաւերսը տեղւոյս ռուսաց բանկի դիրեկտորի հետ ունեցած խօսակցութեան մէջ, հայ պաշտօնեաներին արձակելու խնդրի մասին խօսելու ժամանակ, ասել է՝ «անձնապէս ես հայերին ատում եմ»: Այսպիսի մի կառավարչից ի՞նչ պէտք է սպասենք. պարսիկ կառավարիչները մեզ համար վտանգաւոր չեն, որքան էլ զօրաւոր լինի Աղաեւների պրովոկացիան, սակայն Բէլջիկացիները թոյն են, նրանց հետ հեշտ չէ կարելի մաքառել, մանաւանդ մի քանի տարով կոնտրակտները չինած՝ գրպանները դրած՝ ամէն յանդուգն (?) քայլեր անում են եւ մարսում...(2):

Մենք մի ճանապարհ մտածել ենք 24 օրինակ ստանալու, բայց դա մի բան չէ. խնդիրը նրա մէջ չէ թէ մենք կը զրկուենք թերթից. երբ մուտքը արգիլուած է Ռուսիա եւ Տաճկաստան, թող արգիլուի եւ Պարսկաստան,— մենք ձեռք կը բերենք ինչպէս էլ լինի: Սակայն խնդիրը պարսկահայերիս աստիճանաբար (?) ընջելու մէջն է. մենք վախենում ենք՝ մի փորձանք բերեն եւ «Ալիֆ»ի գլխին. գրել եմ արդէն ցենզուրայի մասին. վաղը-միւս օր կը հաստատուի:

Մինչեւ օրս մենք հետեւել ենք այստեղ մեր երանելի պապերի քաղաքականութեանը,— չոյել տիրող կառավարութիւնը եւ այսպէս եօլա տանիլ մեր ողորմելի գոյութիւնը. այսպէս չէի՞նք վարւում եւ Տաճկաստանում եւ Ռուսիայում, այսօր էլ շարունակում ենք նոյնը Պարսկաստանում. բայց ի՞նչ նշանակութիւն ունեցան այդքան իշնելը — չոյելը եւ ստրկական բոլոր հաճոյակատարութիւնները: Դուք սկսել էք մի նոր գործունէութեան, աչքի թողի էք արել պարսկահայը. վաղը-միւս օրը վայելելու ենք այդ անհոգութեան պտուղները. սրանք միտքեր են, որ պիտի զբաղեցնեն մեզ եւ կը խնդրենք Ընդհ. Պատգամաւորական Ժողովում օրակարգերի մէջ դնել եւ պարսկահայերի խնդիրը:

Խնդրում ենք մեզ հետ շատ շուտ թղթակցէք եւ յայտնէք ձեր կոնսիւլի հետ ունեցած տեսակցութեան հետեւանքը:

Ջերմագին բարեւներով՝
Ի դիմաց Հ. Յ. Դաշն. Ատր. Կ. Կոմիտէի

Ս. ԾԵՐՈՒՆԻ

Յ. Գ.— Ներեցէք խառնիխուռն գրելուս համար. այսօրուայ դէպքը այնքան ազդել է մեր վրայ, որ սկի չգիտենք ի՞նչ ենք անում:

— Երկրից եկած նամակներ ուղարկել եմ Կոմսին, Երեւան, ստացե՞լ է թէ ոչ. Պետրոսը նոր Ռաշտից գըրում է որ այնտեղ է եղել մինչեւ ամսոյս սկիզբը:

— Մռաւեանի ցանցառութիւնը այստեղի ընկերների մէջ շատ խլրտումներ ձգեց. հանգամանքից ուզեցին օգտուել մեր հակառակորդները եւ տարածեցին իբր թէ Դաշնակցութիւնը բաժանուել է երկուսի, հնի եւ նորի, մատի փաթթոց արեցին եւ... անցան (?):

— «Երիտասարդ Հայաստանը» ստութիւնների տոպրակ է դարձել եւ ամբողջ համարը նուիրել է Դաշնակցութեան «անուանարկման»: Մենք չենք պատասխանում, գրում ենք միայն փաստերը «Հայրենիք»ին, որպէսզի տեղւոյն ընկերները տեղեակ լինեն գործին. եթէ չէք ստանում այդ աղբանոցը, գրեցէք, մի օրինակ ուղարկենք ձեզ:

— Վահրամին(3) ուղարկէք շուտով. մարդի կարիք ունինք:

— Ցուսանք նախորդ նամակներս ստացած կը լինէք:

— Գրեցէք մի քանի վստահելի հասցէներ. ուզում ենք փոփոխել:

ՆՈՑՆ

(1) Մհերեանը Արեւելեան Բիւրոյի անդամ Տոքթ. Համօ Օհանջանեանի կուսակցական ծածկանունն էր:
(2) Դժուար ընթեռնելի բառի մը բառեր:
(3) Արդեօ՞ք Մազմանեանը:

Զ.

Մենաւոր, 24 Օգ. 906

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ԵՐԿՐԻ ՍԵԿՑԻԱՑԻՆ

Ընկերնե՛ր,

Կը հաստատեմ նախորդ նամակս եւ կը հաղորդեմ տեղիս նորութիւնները: Խուզարկութեան երկիւղը հաստատ անցաւ: Ցարաբերութիւնը Շամի հետ կանոնաւոր է: Շամէն եկան 3 լօլօ ձիով եւ բերին նամակ: Մինարէթէն ուղարկուած 2000 հին ծայրը բռնուած է Շէրիֆ բէկի էլին մէջ: Երկրէն կ'ուզեն մեր թերթերէն շատ եւ կանոնաւոր: Հակառակորդները հակադաշնակցական թերթերով ողողած են Շամը (Մշակ, Կեանք, Կայծ եւն.). Լաւ կը լինի Աւարայր գոնէ մի ժամանակ փոխանակ Շի ուղարկէք 6-7 օրինակ «Ալիֆ»: Թէ՛ ասկէ եւ թէ անկէ դիւրին է զրկել, քանի որ երկու գծով ալ կայ արագ յարաբերութիւն:

Թարխան, Լօրիս եւ Աւետարանցիք, ինչպէս նախորդիւս գրած էի, սահմանի վրայ նկատուած են հովիւներէ եւ բռնուած: Դեռ չեմ հասկցեր, ի՞նչպէս պատահեր է, որ ապրանքները իրենցմէ հեռու չեն թագցուցեր: Լօրիս եւ Աւետարանցիք 3-4 օր ետք ազատուած են: Սարդարի պահանջին վրայ քիւրդերը Թարխանին տարին իրեն մօտ, որ ընդունած է քաղաքավարի եւ նոյն օրը ազատ արձակելով զրկած է Մակու՝ հայերու մօտ: Այժմ կը խորհինք միջոցներ ձեռք առնել ապրանքները ետ ստանալու համար: Լուրերուն նայելով Սարդարը հաւաքել տուած է, քիւրդերուն խիստ յանդիմանած՝ որ ինչո՞ւ անմեղ մարդկանց կը բռնեն, իրենց ո՞վ ըսաւ եւն.: Սարդարը իբր թէ անոնցմէ կը պահանջէ շատ փողեր (Թարխանէն կողոպտուած): Ցետոյ քիւրդերը աւարը բաժնելու համար կռուած են. ունին մէկ վիրաւոր: Արդէն իմնում են Արազի ափ եւ կը վախնան, որ Ֆետայիները իրենցմէ վրէժխնդիր կը լինին Արազէն իրենց վրայ արշաւելով: Շատ զղջացած են:

Բռնուածներն են՝

ա) 5000 հինի գիլէի.
բ) 4 մաուզերեան տասնոց (մէկը Թարխանին).
գ) 1 բրաունինկ, 1 պարաբելլօ.
դ) 2 ատրճանակ (Աւետարանցոց):

Տասնոցները առանց բրաժինի են եւ անգործածելի դարձուած: Ցոյս ունինք քիւրդերէն աժան գնով գնել:

Բռնուած 16 նամակներ՝ ամբողջ ետ ստացայ, ուրախ լինիր շաբար քիւրդերու գլխաւորին կաշառք տալով: Ուրախալի է, որ տեղացիք ամբողջութեամբ կազմակերպուած՝ մեզ լաւ ծառայութիւն մատուցին, շարունակ քրդերու մէջ երթալ գալով:

Քրդերու վրանները արդէն լեռներէն իջան եւ կը դիմեն դէպի Արազ: Այս պարագան լաւ գիտցէք եւ գրեցէք Կ. Դաշտ, որ ըստ այնմ վարուին: Կ. Դաշտի ընկերները կարծում են, որ մենակ իրենք են քաջ: Երեւի չեն գիտեր տեղւոյս պայմանները, կը կարծեն թէ այստեղ եւս, Մրգաստանի պէս, կայ երկաթուղի, ցրօկ (?) գլուխը կորսնցուցած ոստիկանութիւն: Փորձանքը մի անգամ կը պատահի եւ կը քանդէ շատ գործ, երկու անգամ չի պատահիր: Լաւ գիտցէք, մենք ասում

ենք, որ Կ. Դաշտ-Բլուր ճամբան բռնուած է քրդերով։ Մնացածը դուք գիտէք։

Սարդարը լուր տարածած է, որ Օսմանի հողին վրայ բռնուած են մերոնք։ Ժողովուրդ եւ խաներ քիչ մը գրգռուած են, բայց բան չեն յաջողցներ չնորհիւ Սարդարի խոհեմութեան եւ հեռատեսութեան, եթէ կարելի է ըսել՝ նաեւ հայասիրութեան։ Եթէ հայասէր չէ, ի՞նչպէս բացատրել վերջի մեղմ եւ ազնիւ վարմունքը։

Ընծայը դեռ կ'ուշանայ այդտեղ։ Հոգ չէ, թող ուշանայ։ Առանց իրեն ալ գործերը արդէն կ'ընթանան կանոնաւոր։

Ջերմ բարեւներով, ձերդ՝

ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ



Մարզպետունիի նամակին վերջին էջի լուսապատճէնը։

Է.

№ 288/5 4 Նոյեմբեր 1906

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՑԻՆ

Ընկերնե՛ր,

Հոկտ. 25ին Ձեր գրածը ստացանք։

Ժամանակին ստացել ենք Ձեր հեռագիրը վարժուհու համար, որին պատասխանեցինք, ուղարկել 300 բուրլով։ Սալմաստի համար է. յոյս ունենք որ արդէն ճամբայ ելած կը լինի, առանց այն էլ ժամանակը ուշ է, մինչեւ այստեղ հասնելը Նոյեմբերի կէսը կը լինի։

Զարմանում ենք որ արհեստաւորի մասին գրկած մեր հեռագիրը չէք ստացել։ Ձեր հեռագրին մենք պատասխանեցինք որ ուղարկեցէք։ Եթէ դա եւս չի համաձայնել, չտապեցրէք։

Ընդհանուր Ժողովի համար արդէն Փետրուարին կայացած մեր Շրջանային Ժողովում պատգամաւոր ընտրուած է։ Շրջանների նոր տեղեկագրերը եւ հաշիները ուշանում են. այդ է միակ պատճառը որ մինչ այժմ մենք հնարաւորութիւն չենք ունեցել ուղարկել Ձեզ. հաւանականաբար հենց պատգամաւորը հետը կը բերի։ Բայց ո՞րտեղ պիտի գումարուի. երեւի ոչ Կովկասում, մանաւանդ ներկայ պայմաններում նպատակայարմար չի լինել այդ։

Մեր խոստման համաձայն տեղեկացնում ենք պարբերաբար մեր եւ Հնչակեանների մէջ տեղի ունեցած բանակցութեանց մասին։

Ձեզ գրած № № 245/1 եւ 249/2 նամակների մէջ յայտնած խօսակցութիւններից յետոյ (մեր եւ Հնչակեանների մէջ) այլեւս ոչ մի ձայն նրանց կողմից մինչեւ Հոկտ. 30, երբ մեզ գրեցին № 902 նամակը, գրուած բաւականին անվայել ոճով։ Օրինակ՝ «Նշաւակելի եղեռն» Մհերի սպանութեանը համար ակնարկուած։ Դեռ հարց է, արդեօք դա նշաւակելի՞ եղեռն է, թէ՞ ոչ. ի հարկէ պաշտօնական մարմնի կողմից գրուած այդ տողերը այնքան էլ վայելուչ չեն։ Ինչ եւ է, անցնե՛նք։ Մեր № 279/1 նամակով մենք պատասխանեցինք որ սկզբունքով միջկուսակց. դատարանին հակառակ չենք, բայց պէտք է որ դատարանի առաջ դրուեն 98ից այս կողմը եղած բոլոր դէպքերը։ Մենք այդ առաջարկը արինք, հիմնուելով այն բանի վրայ, որ դա (Մհերի դէպքը) հետեւանք էր մի շարք անցեալ տխուր դէպքերի, որոնք տեղի են ունեցել մեր եւ նրանց միջեւ եւ որոնց համար մենք մեղադրում ենք, դրական փաստերի հիման վրայ, նրանց տեղւոյն մարմիններին։ Այդ մասին արդէն ձեզ գրուած է մեր № 245/1 նամակում շատ մանրամասն կերպով։ Մենք մեր պատասխանը ուղղեցինք Հնչ. կենտրոնի ներկայացուցչին, որ այստեղ է գտնւում եւ ոչ թէ Գործ. յանձնախմբին, որովհետեւ նրանց տեղւոյն մարմինները ոչ մի վստահութիւն *չեն ներշնչում. մինչ այժմ եղած բոլոր տխուր դէպքերի համար մենք նրանց ենք մեղադրում, իբր դրդապատճառի, եւ երկրորդ՝ մինչ այժմ եղած բոլոր բանակցութիւնները եւ խնդիրները նրանց կողմից թողնուած են միշտ անհետեւանք եւ առկախ։ Այդ պատճառով մենք հրաժարւում ենք այստեղի մարմինների հետ բանակցութեանց եւ յարաբերութեանց մէջ մտնել. ու այդ էր պատճառը որ մենք պատասխանը ուղղեցինք կենտրոնի ներկայացուցչին։ Հնչ. տեղւոյս մարմինների հետ յարաբերութեանց մէջ չմտնելու պատճառաբանութեանց մանրամասնութիւնները կը գտնէք հենց մի եւնոյն № 245/1 նամակում։ Դրանից յետոյ ստացուեց Գործ. յանձնախմբի № 504 նամակը, որը դարձեալ անպատասխան թողնենք, բայց փոխարէնը պատասխանեցինք դարձեալ կենտրոնի ներկայացուցչին։ Միջանկեալ ասենք, որ նրանց կողմից եկող չեղաւ. մեր առաջին (Նոյեմբ. 2, ժամը 10ին) նշանակուած տեսակցութեան։ Անմիջապէս մեր № 186/2 նամակի հիման վրայ ուղարկեցինք ժամը 3ին մեր ներկայացուցչին որոշեալ տեղը, ուր գտնւում էր եւ Հնչ. կենտրոնը։ Այդ տեսակցութիւնը աւելի շատ մանաւոր խօսակցութեան բնոյթ է կրել քան թէ պաշտօնական։ Մեր դրած առարկութիւնները նրա կողմից ընդունուել են օրինաւոր, մօտաւորապէս անուղղակի կերպով տրամադրութիւն է ցոյց տուել՝ այդ խնդիրները փակէ, ու վրայով անցնել, բայց մենք մտադիր ենք պնդել որ անպայման երեւան գայ։*

Մի ուրիշ տեսակցութիւն նշանակուած է եւ այսօր երեկոյեան։ Արդիւնքի մասին շարունակ կը գրենք։

Ներփակ ուղարկում ենք եւ մեր եւ նրանց մէջ մինչ այժմ տեղի ունեցած այդ խնդրոյ վերաբերմամբ, նամակագրութեանց պատճէնները։

Ընկերական բարեւներով՝

Հ. Յ. Դ.
ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

Յ. Գ.— Հեռագրեցինք Ձեզ որ չտապեցնէք փոխադրութիւնը, որովհետեւ շարունակ գրում են թէ ապրանք հասցրէք։ Այս տարի չափազանց յաջող է փոխադրութեան տեսակէտից. Մարզպետը գրում է որ ստիպուած է եղել 10 ձի դատարկ յետ դարձնել եւ չուտով էլ սպասում է 13 եղների, որոնց ապրանք չունի տալու։ Պէտք է օգտուել առիթից եւ տարուայ յարմարութիւնից, որքան կարելի է շատ ապրանք ներս մտցնելու. չտապեցրէք որ արագացնեն։ Գրեցէք Կոմսին, Սամսոնի գրած նամակի վրայ ուշադրութիւնը հրաւիրեցէք։

ՆՈՅՆ

Յ. Գ.— Մենք մեր անցեալ նամակներից մէկով ու-

ղել էինք ձեզնից Ռոստոմի բռնած նամակների լուսանկարը (հնչակեանների այստեղի մարմնի գրածները). ինչո՞ւ էք ուշացնում. կամ լուսանկարները եւ կամ թէ նամակները ուղարկեցէք:

ՆՈՅՆ

22.— ՎԸԷԺԻ Կ. Կ.ԷՆ ՆԱՄԱԿ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Կ. կոմիտէի պաշտօնաթուղթի մէկ թերթի վրայ, 2 երես, գրուած սեւ մելանով:

№ 287/4 4 Նոյեմբեր 1906

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Ընկերնե՛ր,

Ձեր Նոյեմբ. 1ի (Նոր տոմար) գրածը ստացանք:

Ժամանակին Ձեզ յայտնել ենք բլակների ստացումը: Ստացանք եւ վերջին անգամ ուղարկուածը. Կ. Կոմիտէական բլակներ ունենք, աւելորդ էր վերջինը. պէտք ունենք կոմիտէների համար. շրջաններից ուղում են. եթէ կարելի էր՝ 200 հատ էլ ուղարկեցէք:

Թեհրանի կոմիտէին նկատողութիւն արուեց: Մեր նամակներն էլ վերջերս անպատասխան էին մնում. յետոյ պարզուեց որ փոստում բաց էին անում: Այժմ հարթուած է:

Ընդհ. Ժողովի առաջ դրուելիք հարցեր, տեղեկագիր, հաշիւներ եւայլն կը բերէ իրեն հետ մեր պատգամաւորը. դեռ եւս պատրաստ չեն, որովհետեւ շրջաններից դեռ եւս չեն ստացուել:

«Դրօշակ»ի բաժանորդագրութեան եւ այլ հրատարակութիւնների հաշիւները կ'ուղարկենք յառաջիկային:

Հակառակ Ձեր գրութեան, մինչեւ այժմ Ընդհ. Ժողովի օրակարգը չենք ստացել:

Համաձայն մեր խոստման, գալիս ենք տեղեկացնելու մեր եւ հնչակեանների միջեւ տեղի ունեցած բանակցութեանց մասին:

Մեր № 247/1 նամակում յայտնած բանակցութիւններից յետոյ, նրանք լռեցին մինչեւ Հոկտ. 30 (հ. տ.), երբ ստացուեց Պարսկաստանի Գործադիր Յանձնախմբի № 502 նամակը, որը գրուած էր ոչ այնքան վայելուչ ոճով: Օրինակ՝ «Նշաւակելի եղեռն»... ի հարկէ դեռ եւս հարց է. արդեօք Մհերի դէպքը նշաւակելի եղե՞ռն է, թէ ոչ. մի պաշտօնական մարմնի կողմից դա աւելի քան անվայելուչ է: Ինչ եւ է, անցնենք: Դրա պատասխանը գրեցինք, որ մենք սկզբունքով դէմ չենք միջկուսակցական դատարանին, բայց պէտք է որ դատարանի առաջ դրուեն հարցերը՝ ժամանակագրական կարգով՝ 98ից սկսեալ: Մենք այդ առաջարկը արինք այն պարզ պատճառով, որ Մհերի դէպքը արդիւնք էր անցեալի մի շարք տխուր դէպքերի եւ անախորժութեանց, որոնք տեղի են ունեցել մեր եւ նրանց մէջ. մենք ուզում ենք խնդիրը աւելի խորը քննել, որպէսզի աւելի հիմնական լինի: Մենք մեր նամակները ուղղում էինք Մամիկոնեանին՝ Հնչ. Կենտրոնի ներկայացուցչին, որը այժմ այստեղ է, եւ ոչ թէ մեզ գրող Գործադիր Յանձնախմբին, որովհետեւ մենք հրաժարւում ենք յարաբերութեանց մէջ մտնել տեղւոյս մարմինների հետ մինչեւ այն [ատեն], երբ կը լուծուեն մեր եւ նրանց մէջ առկախ մնացած բոլոր խնդիրները, որոնց մէջ մենք մեղադրում ենք նրանց: Այդ խնդիրների պատճառաբանութեանց մանրամասնութիւնները կը գտնէք մեր Ձեզ գրած № 247/1 նամակում:

Մեր նշանակած տեսակցութեան մասին (Նոյեմբեր 2, առաւօտեան ժամը 10), նրանց կողմից ոչ ոք չեկաւ. իսկ երկրորդին, Նոյեմբ. 3ի երեկոյեան ժամը 3ից սկսեալ, եկաւ Մամիկոնեանը, որի հետ յարաբերութիւն ունենալու ցանկութիւնը թէ՛ մեր եւ թէ իր կողմից է եղել: Մօտ երկու ժամուայ խօսակցութիւնը եղել է աւելի բարեկամական քան պաշտօնական. աւելի շատ դա եղել է մտքերի փոխանակութիւն: Մեր ներկայացուցիչը բացատրել է թէ ինչո՛ւ այստեղի մարմնի հետ յարաբերութեանց մէջ չենք ուզում մտնել, որը ընդունուել է նրա կողմից օրինաւոր. շատ կէտերում նա համաձայնել է մեր առաջարկներին: Այդ տեսակցութիւնից դեռ եւս ոչ մի դրական բան դուրս չեկաւ. այսօր նշանակուած է եւ մի ուրիշը: Կը շարունակենք գրել:

Ուղարկում ենք ներփակ, մեր եւ նրանց մէջ տեղի ունեցած — այդ խնդրոյ վերաբերմամբ — նամակագրութեանց պատճէնները:

Ընկերական բարեւներով՝

Հ.Յ.Դ. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

23.— ՆԱՄԱԿՆԵՐ՝ ԿՈՄՍԻՆ

Նամակներու բովանդակութենէն կը հետեւցուի, որ Կոմս (Վահան Փափազեան) այդ շրջանին կը գտնուէր Կովկաս, հատնօրէն՝ ընդհանրապէս Թիֆլիս, եւ զեկավար դեր ունէր Երկրի հետ յարաբերութեան եւ ռազմամթերքի ու զինուորներու փոխադրութեան գործին մէջ: Վրէժի արխիւին մէջ գտնուած այդ 5 նամակները կու տանք թուականի կարգով.—

Ա.— Վրէժէն (Դաւրէժ, Թաւրիզ), 15 Յուլիս 1906 թուակիր, ՍՏԵՓ... ստորագրութեամբ. ամենայն հատանականութեամբ, Ատրպատականի Կ. Կոմիտէի անդամ, թերեւս քարտուղար, Ստեփանեանն է (տե՛ս *«Արձանագրութիւն Ատրպատականի Շրջ. Ժողովին»*, 1906 *Փետր.*, կազմ նորընտիր Կ. Կոմիտէի), թերեւս Յոյնի՛ն՝ Ստեփան Ստեփանեանը (Բալաչան): Գրուած է նամակի սովորական չափի պարզ թուղթի մը վրայ, 2 երես, մանիշակագոյն մելանով:

Բ.— Միեւնոյն ստորագրութեամբ 22 Յուլիս 1906 թուակիր նամակ, Վրէժի Կ. Կ.ի պաշտօնաթուղթի վրայ, 1 թերթ, 2 երես, սեւ մելանով:

Գ.— Միեւնոյն ստորագրութեամբ 26 Օգոստոս 1906 թուակիր նամակ, պաշտօնաթուղթի վրայ, 2 էջ, սեւ մելանով:

Դ.— ԴԺԲԱԽՏ ստորագրութեամբ 6 Սեպտ. 1906 թուակիր նամակ, նամակի փոքր չափի երկթերթ թուղթի վրայ, 2 էջ, սեւ մելանով:

Ե.— Միեւնոյն նամակին մնացեալ երկու էջերը գրաւող վաճայ գործիչ Թէոսի նամակը, մասամբ սեւ եւ վերջին մասը՝ կարմիր մելանով գրուած, հատանօրէն Թիֆլիսէն, 8 Սեպտ. 1906 թուակիր:

Ա.

№ 162 15 Յուլիս 1906, Դաւրէժ

Սիրելի՛ Կոմս,

6/VII նամակդ այս րոպէիս ստացայ եւ ուզում եմ առիթից օգտուել՝ իսկոյն պատասխանել.

1.— Մեծ չնորհակալութիւն Ներսունու կողմից. ընկեր Ար. (?) խնդրում է չտապեցնել. երկուայ թուով էլի մի նամակ եմ գրել, յիշեցրել եմ եւ այս մասին:

2.— Ուրմիա–Շամի գիծը բացուած է արդէն, Շամից եկել են կեսարներ (?) ապրանքներ տանելու. Հայրիկը ուղարկել է Մինարէթ եւ բաւական ապրանք են վերցրել, որոնք Փարոսի վրայով կը հասցուին Շամիր: Աւարայրի եղած ապրանքները այդ գծով էլ կ'անցնին. հետեւապէս դուք մի՛ բաւականանաք Դաւալու(?)–Մենաւոր գծով, թող փոխադրեն միւս կողմից եւ Աւարայր. Ուրմի–Շամիր գիծը մեծ ծառայութիւն կարող է անել: Դանիէլին ուղարկում ենք Ուրմի, որ այնտեղից երկրորդ անգամ եկողների հետ ճանապարհուի:

3.— Երկրի պէտքերի համար դրամ պէտք լինելիս՝ գրում ես, որ դիմենք Երկրի ընկերներին. այդ մասին մենք կը գրենք իրենց, բայց երեւում է՝ փոխադրութեան համար քիչ գումար էք յատկացրել. յամենայն դէպս եթէ դուք ունէք տրամադրելի գումար, փոխադրեցէք մեզ գոնէ 200 ռուբլի, մինչեւ մենք կը գրենք ընկերներին եւ նրանց համաձայնութիւնը կ'առնենք: Այս երկրորդ գիծը ապահով է, բայց առանձին ծախքերի պէտք կ'ունենայ. մինչեւ օրս ջանքեր էինք գործ դնում բացելու, այժմ արդէն բացուած է, գործը կ'արագանայ բայց ծախքի էլ պէտք կը լինի, որ առաջուց չէինք նախատեսած:

4.— Փայլակին նամակ էի գրել խմբագ. հասցէով. Պետրոսին ուղղուած մի նամակ ներփակած էի. ինչպէս գրում է Պետրոսը՝ այդ նամակը չէ ստացած, խնդրում ենք գտնել եւ հասցնել իրեն. դա կարեւոր է, վերաբերում է մի քանի հաշիւների, որ թողել է Պետրոսը:

5.— Գրում ես որ Պետրոսեանի դատը շուտով կը տեսնուի. այդ ի՞նչպէս կարող է լինել երբ Նիկոլը այդտեղ չէ, իսկ Պետրոսը հրաժարուել է մասնակցելու. մինչեւ անյարմար չէ՞ առանց մերոնցից մէկի ներկայութեան այդ դատը տեսնել:

6.— Երկրից գրել են արագացնել փոխադրութիւնը. մեր կողմից ոչ մի արգելք չկայ եւ ամէն տեղ ունենք կարեւոր ուժեր գործի համար. թերեւս պէտք լինի ձիերի, ինչպէս գրել էին Մենաւորից: Ուստի այդ թողնում ենք ձեզ կարգադրելու. մի անգամ էլ այս մասին գրել ենք Մրգաստանի ընկերներին, որ ձիանքը իրենք գնեն եւ յանձնեն փոխադրողներին: Սամսոնը Մինարէթում կը մնայ եւ այդ գործի ընդհանուր ղեկավարութիւնը յանձնուած է իրեն. նրա սահմաններում լինելը անհրաժեշտ չէ. Ընծայրը Գաղթաշէնում է, դու գրիր.....(1) որ Ընծայրի հետ լաւ եօլա գնան փոխադրողները:

7.— Դոկտորին գրել են Երկրից, բայց չգիտեմ դեռ եւս Դոկտորը ինչ կ'անի. նա դեռ մեզ ոչինչ չէ ասել իր այդ ցանկութեան մասին:

8.— «Դրօշակ»ի № 3 եւ 4ը վաղուց յետէ գտնուում է Ախում. մրգաստանցիք չեն փոխադրած, շտապեցնել տուր:

9.— Մրգաստանցոց բազմաթիւ նամակներ ենք գրած եւ ոչ մէկին դեռ չեն պատասխանած. գրեցէք նրանց հասցէն:

Նորութիւնը այն է որ այստեղ պարսիկների մէջ խլրտումներ կան. Թեհրանի կրօնաւորներին արձագանգ են տալիս.....(2). խանը (?) սոսկալի միջոցներ է ձեռք առել ճնշելու, եւ կը ճնշուին: Այսօր խանութները չէին ուզում բացել, ֆառաշներով բացին եւ այնպէս էլ կը լսեն...:

Ընկերական բարեւներով՝

ՍՏԵՓ.

Ց. Գ.— Բուլգարիայից իմ հասցէին գալիս են նամակներ՝ յանձնելու Կայծաքար գիւղի քարէ (?) շրջանի Գրիգորին: Ո՞վ է այս Գրիգորը՝ չգիտեմ. նոյնիսկ չգիտեմ ո՛րտեղ լինելը. այդպէս մէկը մեր կողմերը չէ եկած. եթէ գիտես, խնդրում եմ շուտ գրես ինձ այդ մասին:

— Այս րոպէիս Փարոսից (Ուրմիա) լուր ստացանք որ ուղարկած ապրանքը (Նոր գծով) ապահով հասեր է Շամիր. շնորհաւորում ենք այս յաջողութիւնը:

— Քոթոթին(3) կ'ուղարկենք շուտով. մեր արհեստանոցը կառավարելու մի լուրջ տղայ պէտք է. խոստացել ես ուղարկել, չտապիր, պէտքը շատ ենք զգում:

ՆՈՅՆ

(1) Անընթեռնելի. տեղանուն:
(2) Անընթեռնելի. անձնանուն:
(3) Ռոստոմի ծածկանուններէն մէկը:

Բ.

22 Յուլիս 1906

Սիրելի Կոմս!

Գրածիդ համաձայն ուղարկում ենք Քոթոթին: Խոստացածդ արհեստաւորը չտալիր ուղարկել չուտով. Եփրեմն էլ ցանկութիւն ունի հետեւելու Քոթոթին. այսպէսով մեզ մարդ չի մնալ: Երկրից դուք մեզնից աւելի շատ լուրեր էք ստանում. այդ մասին ոչինչ չեմ գրելու:

Մհերեանին կարեւոր յանձնարարութիւնով մարդ էինք ուղարկել, չգիտենք ի՞նչ հետեւանք ունեցաւ. դա մեզ համար կենսական նշանակութիւն ունի: Այժմ պարզւում է Թերթերի այրուելու խնդիրը. դա բացարձակապէս ռուս եւ տաճիկ կառավարութեանց դրդմամբ է, որին նպաստելուն քիչ դեր չեն կատարել եւ հնչակեանները:

Պարսիկ կառավարութիւնը յայտարարութիւն է ուղարկել «Փիրոշկա»ի խմբագրութեանը, բայց № 6ը արդէն ճանապարհած են եղել, ինչպէս գրում են մեզ խմբագրութիւնից: Մեր ասած մարդը այդ գործում անմիջական մատ ունեցող անձնաւորութիւնն է. ժամանակին Պետրոսն ու Արմենակն էլ խօսել են Արեւելեան Բիւրոյին, սակայն անհետեւանք:

Ստացանք Արեւելեան Բիւրոյի շրջաբերականը Զանգեզուրի դէպքի մասին. այդ մասին խնդրում եմ մեզ տեղեակ պահէք — դա ինչի՞ հետեւանք է: Ճի՞շդ որ մեր եւ հնչակեանների միջեւ տեղի են ունեցել այդպիսի լուրջ ընդհարումներ: «Երիտ. Հայաստան»ում կարդում ենք, իբր թէ Խնձորեսկ գիւղում հնչակեանները մերոնցից գերել են 40–50 հոգի, 77 կին եւ այլն. մենք չենք ուզում հաւատալ այդ օրիգինալ ստախօս Թերթին, բայց երբ Ամերիկայում հաւատացողներ կան, ինչո՞ւ չէք գրում իսկութիւնը «Հայրենիք»ին:

Մեր հակառակորդները եռանդով տարածում են, իբր թէ Դաշնակցութիւնը երկուսի է բաժանուել. խնդրում ենք այդ մասին մեզ գրել, մանաւանդ տաճկահայ ընկերների բռնած դիրքը այս խնդրում: Դոկտորի գնալու մասին առայժմ այս կարող եմ գրել (Գրիգորը Երկրից գրել էր իրեն),— նա կը մնայ մինչեւ Ընդհանուր Ժողովի վերջը եւ երբ ամէն բան պարզ կը լինի իրեն համար, այն ժամանակ միայն կ'անցնի: Ես կը կամենայի քեզ ուղարկել մեր Շրջանական Ժողովի արձանագրութիւնը, բայց ժամանակները վատ են. մենք վճռել ենք մեր բոլոր ոյժը տալ Տաճկահայ դատին, ուստի մեր պատգամաւորը տաճկահայ ընկերների հետ կը լինի:

Փոխադրութեան Փարոս–Շամիրի գծի համար գրել եմ քեզ. Երկիր մտնող ընկեր այժմ չուղարկէք, մինչեւ աշունք. իսկ մեր շրջանում ուսուցչացու եթէ պիտի անէք՝ ուղարկէք: Ներիր որ այս մասնաւոր գործերով քո գլուխը ցաւեցնում ենք: Պատճառը այն է, որ այդտեղից ոչ ոք չի ուզում պատասխանել մեր նամակներին. յիրաւի՞ այդքան գլուխները խառն են:

Գալով մեր դիրքին Ատրպատականում, պէտք է ասել այնքան էլ մխիթարական չէ, մասնաւորապէս այստեղ, գլխաւոր պատճառը ինտելիկէնտ ոյժերի պակասութիւնն է: Ամէն կողմից շրջիկներ են պահանջում. Իսպահանից նոյնիսկ խնդիր են դրել եւ պահանջել, որ մի կարող անձնաւորութիւն ուղարկենք Հնդկաստան. այս միտքը նոր չէ, մենք վաղուց մտածել ենք, դրել ենք և Արեւմտ. Բիւրոյին, որ իր հաւանութիւնն էր տուել, սակայն ճանապարհածախքի եւ այլ պատճառներ նկատի ունենալով, թողեցինք: Այս խնդրոյ մասին խօսիր այդտեղի ընկերների հետ. սա լուրջ բան է, մանաւանդ պիտի օգտուել այն նպաստաւոր առիթից, որ Սահակ Եպիսկ. Այվատեան այժմ այնտեղ է եւ մեր ամենաջերմ համակրողներէն մէկն է. ամէն բան կ'անի յաջող հանգանակութեան համար, եւ պարբերական նպաստների մի դուռը բաց կ'անի. աչքից թողելու չէ: Այսպիսի մի անձնաւորութիւն մեր դոկտորն է եւ մենք կարծում ենք այս ուղղութեամբ նա աւելի օգտակար կը լինի քան Երկիր մտնելով. այն էլ ասեմ նրա Երկիր գնալուն մենք դէմ չենք, բայց մեր խորհուրդն այն է որ սա Հընդկաստան գնայ յատուկ կազմակերպական գործով. միակ յարմարագոյն թեկնածուն է, որին մենք ճանաչում ենք. թերեւս դուք աւելի յարմար թեկնածու ունենաք:

Հնչակեանները եւ դեմոկրատները, հա՛, արմենականներն էլ, միացած հակայեղափոխականների հետ, մեր դէմ կռիւ են յայտարարել, որ ազգային բոլոր ասպարէզներից հեռացնեն դաշնակցականներին. օրերս հանրաքուէական (?) ընտրութիւն տեղի ունեցաւ. նրանք ամէն կեղծիք եւ ստորնութիւն գործ դրին միայն նրա մասին, որ դաշնակցական չընտրուի, թէեւ դաշնակց. թեկնածուներ չունէինք եւ այդ ուղղութեամբ էլ պրոպագանդ չէինք արել. «Ալիֆ»ին կը գրուի այս մասին մանրամասն. աշխատիր տպել տալ եւ թող զօրեղ բողոք բարձրացնեն. ծայրայեղութիւնների մէջ շատ են ընկնում մեր հակառակորդները եւ երբ առիթ է ներկայում, որեւէ դէպքում չեն դադարում ամէն կարգի ստորնութիւններ մեր դէմ անելու:

Ջերմ բարեւներով, քոյդ՝

ՍՏԵՓ.

Յ. Գ.— Նախորդ նամակներս հարկաւ ստացած կը լինես եւ մէկիկ մէկիկ կը պատասխանես. Վահանը տակաւին չեկաւ եւ լուր էլ չունենք նրանից, շտապեցրէք ինդրեմ: Գրէք նորութիւններ: Այսօր քաղաքումս լուր տարածուեց, իբր թէ Շուշում հայերը, միացած դաշնակների հետ, կոտորում են թուրքերին. ո՞րքան ճըշմարիտ է: Միթէ հայե՞րն էլ են ենթարկւում պրովոկացիայի: Պարսիկների մէջ տեղումս կարծես յուզումները դադարում են, իբր թէ Թեհրանում կառավարութեան մեծ փոփոխութիւն է տեղի ունեցել. թերեւս հընարաւոր լինի թերթերի մուտքը նորից ստանալ, դա կախուած կը լինի խմբագրութիւնից եւ թեհրանի ընկերներից: Պիտի ասել, պնդել՝ կարող ընկեր չունինք:

— *Չի՞ կարելի արդեօք Արեւելեան Բիւրոն մի ընկեր էլ ուղարկէր մեր շրջանը եւ քննէր վերջերս տեղի ունեցած դէպքերը մեր եւ հնչակեանների մէջ մասնաւորապէս, եւ ընդհանրապէս այսքան տարուայ նրանց գործունէութեան մասին մի գաղափար կազմէր, աչքովն էլ տեսնէր՝ թէ նրանք ովքե՞ր են եւ ի՞նչ պատուհաս են մեր գլխին: Նրանց բոլոր գործը հենց այն է՝ որ մեզ խանգարեն, ուրիշ որեւէ յեղափոխական գործ այդ մարդիկը չունեն. Նրանց օրինակին են հետեւում ներկայումս իրենց արժանաւոր ընկերները — դեմոկրատները — որոնց բանն ու գործը մեզ հայհոյելն է, սուտ լուրեր տարածելը, մատնել այն բոլոր ձեռնարկները, որոնց դաշնակցականներն են ձեռնարկում:*

Իզ խանին այդ պարգեւը չռայլութիւն է, մենք կարծում էինք թէ իրեն կորուստն է վերադարձուում իրեն. չա՛տ ափսոս, թուրք խաները անուղղայ են — ի զո՛ւր էք կարծել թէ կարելի է դրանով առանձնաշնորհումներ ձեռք բերել. կ'ուտեն այդ փողը, երբ կը մարսեն՝ նորի՛ց կը սկսեն ոտնձգութիւնները. այսպէս են բոլոր պարսիկ խաները, դրանց վրայ վստահել չի կարելի եւ ոչ յարատեւ (?) կը լինեն նրանց խոստումները. ինչ եւ է, եղածը եղած է: Ընծայրի 500 թումանի խնդիրը արդէն դու գիտես. Գարեգինը նկատել էր որ 500ը չատ է. մեր դրամականը այս տարի կաղում է. նա առեւտուր էր արել Ընծայրի հետ եւ գործը — ըստ պարսկական սովորութեան — կէսի էր կապել, ինքը՝ Ընծայրն էլ համակերպուել էր, ինչպէս երեւում է իր նամակից: Բայց եկել ու ձեզ մօտ լացել է... Այնուամենայնիւ այդպիսիները պէտք են գալիս, ստիպուած ենք տանելու նրանց կապրիզները... որովհետեւ աւելի լաւը չկայ: Մենք գրել ենք Երկիր՝ սահմանագլխների համար մտածելու. մինչեւ օրս պատասխան չունենք:

Սուրէնին չտապեցրու, անպատճառ արտասահմանեան անցագիր թող հանի, եւ դուրս գալիս՝ գրի ինձ:

Ջերմ բարեւներով, քոյդ՝

ՍՏԵՓ.

(1) Թուականը կրնայ ըլլալ նաեւ 28 Օգոստոս. անորոշ է:

Գ.

26 Օգոստոս 1906(1)

Սիրելի Կոմս!

22/VIII նամակդ ստացանք:

Շնորհակալ ենք տուածդ տեղեկութեանցդ համար. դրանք մեզ չափազանց են հետաքրքրում, շարունակիր այդպէս:

Երէկուայ թուով եկողի հետ գրել եմ քեզ, նոր բան չեմ աւելցնելու: Ընծայրին շտապեցրու, Գաղթաշէնում լաւ բաներ չեն կատարւում: Այսօր հեռագիր ունենք Մինարէթից որ Դոկտորը մեկնում է այնտեղ:

Դրամի մասին լաւ չես հասկացել. մենք ստացել ենք 3500 ռուբլի, բայց Թորգոմը գրել էր, որ յատկացրած է 5000 ռուբլի. հետեւապէս 1500 էլի պիտի ըստանանք, մանաւանդ որ մեր ստացած 3500 ռուբլուց գնել ենք Երկրի համար 2000 ռուբ. աւել ապրանք, ինչպէս կը տեսնէք հաշիւներից:

Քո նամակիդ ժամանակին պատասխանել եմ թերթի հասցէով. զարմանում եմ ինչո՞ւ մինչեւ օրս չես ստացել: Պայմանական խօսքերս էլ ուղարկած է քեզ եկողի հետ, որ նոր պիտի ստանաս:

Վստահելի հասցէ ես ուզել, էլի վստահելին քո իմացած հասցէներն են: Ես գրել եմ արդէն, որ Պարիզից ճանապարհած նամակներն են բացւում եւ ոչ Ձեր կողմերից եկողները:

Դ.

6 Սեպտ. 1906, Կենտրոն

Սարգելի՛ Գ. Կոմս,

Մեր սուրհանդակը՝ Տալլօն Շամից երէկ տեղս եկաւ: Ինձ գրած են թէ մինչեւ 15–20 օրէն գարնան սուրհանդակները գալու են: Գրքերը, թերթերը եւ մասերը ուղած են. եւ գրած են թէ չուտով նորից վերադարձրէք. ձեզ վերաբերեալ նամակները գրաբերիս հետ ուղարկում եմ ձեզ. ձեր գնալուն ինձ ասացիք թէ 7–8 օրէն կը վերադառնամ Երեւան. սակայն մեր ընկերներից եկող եղաւ, տեղեկացայ, որ դեռ չէք վերադարձած. այժմ ձեզ եմ սպասում: Եթէ ունիք բաներ՝ ղրկելու, շատ չուտով ղրկեցէք որ վերադարձնեմ, իսկ եթէ ոչ ինձ հեռագրեցէք: Իմ քովս եղած Ջրաբերդից(1) եկած մասերը եւ թերթերը տամ թող չուտով գնայ. Տալլօն իրեն մի ուրիշ ընկերը եւս բերած է, ուզում են Երկիր մարդիկ եւս տանել. այժմ տեղս մօտ քսան հոգի կան գնացող: Սուրհանդակի Շամ գնալ ու դալու վարձատրութիւնը ո՞րքան պէտք է տալ, գրեցէք. ես Տալլոյին ասացի որ այս անգամին շալակը պէտք է վերցնես. նա պահանջում է մի ձի իւր հետ տանել՝ ե-

թէ բեռ կայ տանելու. նաեւ խնդրում է մի լաւ ատրճանակ: Եթէ համաձայն էք, տեղս յարմար մի ձի ունենք որ կարող ենք տալ, միայն կը սպասեմ ձեր կարգադրութեան եւ ուղարկելիք իրերի: Կը խնդրեմ չտապեցէք. ի զուր թող չուշանան եւ ծախք չպատճառեն: Նամակաբերս մեր զինուորներից է, ինք կրթուած՝ չա՛տ համեստ տղայ է, ինք ցանկանում է խմբագրատուն ծառայել. կը խնդրէի որ դրան հոգ տանէք եւ մի յարմար գործի դնէք: Վան ներկայիս խաղաղ է, Գիսակը(2) եօթ ընկերներով աքսորած են, չդիտենք թէ ո՛ւր. ուրիշ ոչինչ: Սպասում եմ ձեր պատասխանին: Ընդունեցէք բարեւներս:

Ցարգանքներով՝ ԴԺԲԱԽՏ

(1) Կարսէն:
(2) Վարդգէսը (Սէրէնգիլեան):

Ե.

Մ. Ք. 8/IX(1)

Սիրելի Վահան!

Քարից(2) գրածդ նամակներ ստացել ենք. արածդ բոլոր յանձնարարութիւնները կը կատարենք: Շամիկ նոր սուրհանդակ է եկել Իգդիր, որի բերած նամակն ներփակ քեզ ենք ղրկում. չտապիր այնտեղ ու նրանց ճանապարհ դիր: Գարտիզաւանից ես քեզ մանրուքներ եմ ղրկել Մարտիրոսի մօտ, նրանք ու քիչ էլ Մրգաստանից(3) վերցրու ղրկիր. Գարտիզաւանում մեզ 355 հատ № 1 պրօժին ու քիչ ուրիշ մասեր է մնացել. եթէ կարողանար Իգդիրից մի ձիաւոր ղրկել եւ Գարտիզաւանից ապրանքն էլ բերել տալ, աւելի՛ լաւ:

Իսկ դու ամէն կերպ զգոյշ կաց, քեզ մատաղ. այս նեղ օրերին առանց այն էլ սրտներս աւելի չխոցոտուի:

Վաղը Երկիր կը ղրկենք 6500 բուբլի. 5–6000 էլ 8–10 օրից կը ղրկենք: 1–2 օրէն ես կը շտապեմ Ջրբերդ(4), ապա Քար(2): Դաշնակցական Խեչոյի մասին այս երեկոյ ընկերների հետ կը խօսենք. եթէ յաջողուեց, իսկոյն կը ղրկենք Մրգաստան, Նիկոլին կը հեռագրենք որ գայ:

Ես կը ճանապարհուեմ փողով. կ'աշխատեմ ապրանք շատ ձեռք բերել:

Ստացուելիք նամակներ ու նորութիւններ կը ղրկի ու կը գրի քեզ Ռուբինան՝ Մրգաստան: 3 օր [առաջ] տիկին Մուշեղեան Խաչակի ձեռամբ Մրգաստանէն քեզ մի նամակ է ղրկել. այն ստացուել է Երկրից: Մարտիրոսին 60 բուբլի եմ տուել՝ ծայրեր գնելու. հաշիւն պահանջիր:

Դու յոյս մի դներ Խեչոյի գալուն վրայ. թէ՛ Դուման եւ թէ Բիւրոն չեն թողնում: Օգոստոսի սկզբից մինչեւ այժմ Անտառապատից Մրգաստան որքա՞ն է ապրանք ստացուել. խնդրում եմ մանրամասն ամսաթուերով գրիր ինձ, որ կազմածս հաշուի հետ համեմատեմ:

Դէ՛հ, հոգիս. զգոյշ, զգո՛յշ:

Բարեւներով՝
ԹԷՈՍ

(1) Կրնայ նշանակել՝ Մեծ Քաղաք, որ Թիֆլիսի կուսակցական տեղանունն էր:
(2) Ալեքսանդրապոլեն:
(3) Երեւանէն:
(4) Կարս:

24.— ՆԱՄԱԿ ՍԱՄՍՈՆԻՆ

11 Յունուար 1907

Հ. Յ. Դաշնակցութեան պարսկա-տանկական սահմանագլուխի ընդհանուր ներկայացուցիչ Սամսոն Թադէոսեանին ուղղուած այս նամակը կը թուի գրուած ըլլալ էիւրտ կամ պարսիկ ազդեցիկ անձնաւորութեան մը կողմէ: Մեր ունեցածը արտագրութիւն մըն է՝ «պատճէն» մակագրուած (հաւանօրէն՝ թարգմանութեան); կարգ մը տեղանուններ եւ ստորագրութիւնը՝ արտագրողին կողմէ վերածուած են ծածկագրի: Շարաֆ պէյ Օմար Աղա(յեան !) Կարասանը (կամ Կարաղան) արդեօ՞ք Խանասորի Շարաֆ բէկն է. հիմնութիւնը մեզի անծանօթ է:

Յարգելի Պ. Սամսոն,

Նախապէս կը բարեւեմ Ձեզի եւ Ձեր պատուական որպիսութիւնը կը հարցունեմ:

Արդէն յայտնի է Ձեզ եւ ամենուն՝ ես հայոց ամենէ առաջին թշնամին էի. շատ վնասներ տուի հայուն եւ բաւականին չափ հայոց անմեղ արիւններ թափեցի: Եւ հայերն ալ ինծի շատ վնասներ տուին: Բայց իմ ըրածը ի զուր եղաւ, եւ զղջացած եմ ըրածիս վրայ, որ հայուն այնքան վնասներ տուի: Ես պէտք եղած մեր մեծ երդումներով՝ Տէր Ներսէսի համար երդուած եմ, այսուհետեւ իմ կողմանէ հայուն վնաս չպիտի լինի, եւ պէտք եղած օգնութիւններ ձեզանից չպիտի խնայեմ իմ կարեաց չափ: Հաստատ հաւատացէք ես երդուած եմ եւ կրկին Ձեզ համար կ'երդնում, Ձեր վնասի համար այսուհետեւ չպիտի խորհեմ եւ իմ կարեաց չափ օգնութիւններ Ձեզանից չպիտի խնայեմ: Արդէն Տ. Ներսէս իմ կողմանէ, Ձեզ երաշխաւոր եղած է, որ իմ կողմանէ Ձեզ վնաս չկայ, արդէն Ձեր երաշխաւորութեան մասին անոր ալ առաջարկած եմ, որ Ձեզ ալ երաշխաւոր լինի, եւ ալ Ձեզանից վնաս չկրեմ: Դուք ալ վստահեցուցէք իրեն, որ Ձեզ ալ երաշխաւոր էլնի: Թէեւ այն մարդը, Ձեզ վրայ վստահ է, բայց մինչեւ հիմա Ձեզանից խօսք չունի: Միանգամ խոստացած եմ մինչեւ մահ հաւատարիմ մնալ Ձեզ հետ: Բայց ես ալ մի բան Ձեզանից կը խնդրեմ, դուք ալ երբեմն աշխատէք իմ շահուն: Ինչպէս, Շէյխ-Համիտ, այսօր կ'ուզի որ հայու

Պ ա շ ք ա լ ա ց ո ց (1)

սերունդը բնաջինջ անի, 26,2,19,5,2,12,2,18,10,18

քանի մը վաճառականներ իր խանութներ նստած են եւ

Պ ա շ ք ա լ ա –

իրանց շահը նրան կու տան: Հիմա 26,2,19,5,2,12,2,

ց ո ց

18,10,18 *հայեր իմ խանութներ թողած եւ Շէյխ-Համիտի խանութներու մէջ նստած են, որ իմ չինած խանութներ քառապատիկ անոր խանութներից լաւ է: Ասոր համար կրկին կը խնդրեմ, որ բարեհաճէք մի նա-*

Վ ա ն ի(1)

մակ Ձեր 11,2,14,7 *ներկայացուցչին գրէք, որ Անդրանեան Սահակ աղան կանչի պատուիրի, որ իմ խանութներ դան. խանութպաններ անոր ապրանքներ կը ծախեն եւ մինն ալ անոր եղբայրն է: Որեւէ կերպով այդ մարդեր իմ խանութներ բերէք եւ բոլորովին ինծի Ձեզի երախտապարտ կ'ընէք, եւ այդ իմ մասին ալ կը*

Վ ա ն ի(1)

բարեհաճէք նամակ գրել Ձեր 11,2,14,7 *ներկայացուցչին, պէտք եղած տեղեր պատուիրէք, որ Ձեր չնորհիւ մեր խանութներ դան եւ այդ նամակն ալ գրաբերովս*

Վ ա ն(1)

ուղարկէք. ես 11,2,14 *կ'ուղարկեմ եւ հաստատուն յոյս ունեմ, որ բոլորովին ինձ վրայ պիտի վստահ լինէք:*

Մնամ յարգանօք Ձերդ

Շ ա ր ա ֆ Պ է յ Օ մ ա ր
19,2,4,2,39,26,22,31,38,1,2,4
2,33,2,9,2,14,21,2,4,2,6,2,14
Ա ղ ա ե ա ն Կ ա ր ա ս ա ն(1)
(Կնիք)

Ծանօթ.— *Թուականները մենք ենք դրել:*

ԱՐՏԱԳՐՈՂ

(1) Գրուած ընթացիկ ծածկագրով մը («Մայր Արաքսի ափերով...»):

25.— ՀՆՉԱԿԵԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

Պարսկաստանի մէջ հիմա ի վեր գործած էին նաեւ հնչակեան խումբեր եւ անհատներ, որոնցմէ մաս մը կը շարունակէր պահել իր գոյութիւնը 1900–1906 տարիներուն՝ Հնչակեան կուսակցութեան 1896ի պառակտումէն բաւական ետք: Ատրպատականի մարմիններու տեղեկագիրներուն մէջ, հնչակեաններու եւ առոնց գործելակերպին նկատմամբ, ինչպէս ընթերցողը նկատեց, գործածուած են բաւական ծանր եւ երբեմն վարկաբեկիչ որակումներ, զորս տուած են ամբողջութեամբ՝ հաւատարիմ պատմական վաւերաթղթերը իրենց լրիւ հարազատութեամբ հրատարակելու մեր սկզբունքին: Այդ ածականներն ու որակումները հարկ է առնել իբրեւ յեղափոխական կենդանի կռուի շրջանը յատկանշող բիրտ անկեղծութեան արտայայտութիւն, հոգ չէ թէ երբեմն պատշաճութեան սահմանները անցնող, ճիշդ այնպէս՝ ինչպէս պէտք է առնել — այս եւս ընթերցողը նկատեց անշուշտ — դաշնակցական անհատներու եւ մարմիններու (նոյնիսկ գերադաս) նկատմամբ գրութեանց մէջ տեղ գտած բուռն բնութագրումներն ու երբեմն ծանրակշիռ հաստատումները:

Բայց անհանոյ պայքարներու եւ յարակից երեւոյթներու կողքին, եղած են նաեւ փոխադարձ հասկացողութեան ու համերաշխութեան անկեղծ փորձեր եւ գէթ մասնակի իրականացումներ, ինչպէս Պարսկաստանի 1906 Նոյեմբերի միջ-կուսակցական հանդիպումներն ու որոշումները՝ Հ. Յ. Դ. Վրէժի Կեդրոնական Կոմիտէին եւ Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան «Պարսկաստանի մասնաճիւղերու Գործադիր Յանձնախումբ»ին միջեւ, մասնակցութեամբ Հնչակեան Կեդրոնի կողմէ լիազօրուած Վահան Մամիկոնեանի: Կու տանք ստորեւ համապատասխան վաւերաթղթերը, որ կը գտնուին Հ. Յ. Դ. 4րդ Ընդհանուր Ժողովին ղրկուած Վրէժի թղթածրարներուն մէջ, հետեւեալ յաջորդականութեամբ.—

Ա.— Փոխանակուած հինգ նամակներ, ժամանակագրական կարգով.

1) Հնչակեան Ս. Դ. Կ. Պարսկաստանի Գործ. Յանձնախումբէն, 30 Հոկտ. 1906 թուակիր (թիւ 502), ուղղուած Հ. Յ. Դաշնակցութեան Թաւրիզի կոմիտէին (պէտք է ըլլայ՝ «Կեդրոնական Կոմիտէին»):

2) Հ. Յ. Դ. Ատրպատականի Կ. Կոմիտէին, 1 Նոյ. 1906 թուակիր (թիւ 279/1), ուղղուած Հնչակեան Ս. Դ. Կ. Կեդրոնի ներկայացուցիչ Պրն. Մամիկոնեանին:

3) Հնչակեան Ս. Դ. Կ. Պարսկաստանի Գործ. Յանձնախումբէն, 2 Նոյ. 1906 թուակիր (թիւ 504), ուղղուած Հ. Յ. Դ. Ատրպատականի Կ. Կոմիտէին:

4) Հնչակեան Կեդրոնի ներկայացուցիչ Պրն. Վահան Մամիկոնեանի անձնական նամակը Հ. Յ. Դ. Ատրպատականի Կ. Կ.ին՝ նոյն թուականին գրուած (2 Նոյ.):

5) Հ. Յ. Դ. Ատրպատականի Կ. Կոմիտէէն, 3 Նոյ. 1906 թուակիր (թիւ 286/2), ուղղուած Պրն. Մամիկոնեանին:

Բ.— Միջ-կուսակցական ժողովի յաջորդական 3 նիստերու (14, 15 եւ 16 Նոյեմբեր, Թաւրիզ) արձանագրութիւնն ու որոշումները, բազուած կապոյտ մատիտով պատճէն (նամակի նորմալ չափի 4 կրկնակ թուղթերու վրայ, 14 էջ), որ մակագրուած է (ամենայն հաւանականութեամբ՝ Արեւմտեան Բիւրոյի կողմէ) «Ստ. 24 Դեկտ. 1906» եւ «Համերաշխ գործունէութեան ժողով Հնչ. եւ դաշն. Կ. Կ. միջեւ, Վրէժ»:

Ա.— ՓՈԽԱՆԱԿՈՒԱԾ 5 ՆԱՄԱԿՆԵՐ

1) Հ. Յ. Դաշնակցութեան Թաւրիզի կոմիտէին

№ 502 Թաւրիզ, 30 Հոկտ. 1906 թ.

Ռուսաստանի եւ Կովկասի Հնչակեան մասնաճիւղերի Գործադիր Յանձնախումբը եւ Ձեր Արեւելեան Բիւրոն, համաձայն Փարիզից եւ Ժընեւից ստացած հրա-

հանգների, բացատրութիւն ուզենալով Մհերի սպանութեան առթիւ՝ որոշել են այդ գործի քննութիւնը սկսել Թաւրիզում, երկու կուսակցութեանց լիազօրների եւ չէզոք մարմնի միջոցով։

Ռուսաստանի եւ Կովկասի Գործ. Ցանձ. յայտնում է մեզ, որ իրաւօրէն լիազօրուած ենք բանակցութեան մէջ մտնելու ձեզ հետ, որովհետեւ Հ.Յ.Դ. Արեւելեան Բիւրոն արդէն հրահանգել է կոմիտէիդ՝ սկսելու բանակցութեանց։

Արդ՝ սրանով հրաւիրում ենք կոմիտէիդ գալ բանակցութեան, նախապէս որոշելով ժամն եւ ձեր լիազօրները, որոնք արդէն մեր կողմից նշանակուած լիազօրների հետ բանակցելով՝ պիտի երեւան բերեն նշուակելի եղեռնի պատճառները եւ հեղինակները։

Խնդրւում է շուտով գրաւորապէս տալ Ձեր պատասխանը, որովհետեւ Կովկ. եւ Ռուս. Ցանձնախումբը անհամբեր սպասում է բանակցութեանց հետեւանքին։

Ի դիմաց Հնչ. Կուս. Պարսկաստանի Մասնաճիւղերի Գործադիր Ցանձնախումբի՝

Ատենադպիր *Ատենապետ*
ԱՏՐՈՄԻԶԴ *ԳՈՒՐԳԷՆ*

(Կնիք)

2) Մեծապատիւ Պարոն Մամիկոնեան
Ներկայացուցիչ Հնչ. Ս.Դ.Կ. Կենտրոնի Թաւրիզում

№ 279/1 1906 Նոյեմբ. 1

Յարգելի՛ Պարոն,

Ստացանք Հնչ. Ս.Դ.Կ. Պարսկաստանի Գործ. Ցանձնախմբի 1906ի Հոկտ. 30 թուակիր նամակը, որի պատասխանը ուղղում ենք Ձեզ, ի նկատի ունենալով այն, որ կուսակցութեանդ տեղւոյս մարմինները մեր եւ իրենց մէջ եղած մի չարք բանակցութիւնները թողել են անհետեւանք եւ առկախ։

Հ.Յ.Դ. Ատրպատականի Կ. Կոմիտէս, սկզբունքով ընդունելով միջկուսակցական դատարանի համակրելի կաղափարը, միանգամայն սրտանց ողջունում է Մհերի դէպքից յետոյ կուսակցութեանդ կենտրոնի հրաւէրը՝ կազմել միջկուսակցական դատարան։ Սակայն հենց միջկուսակցական դատարանի էական գաղափարը յարգելու եւ գործին տրամաբանական ընթացք տալու համար, Կ. Կոմիտէս առաջարկում է նախ մեր եւ տեղւոյս Հնչ. մասնաճիւղի հետ ունեցած առկախ մնացած նոյնանման եւ այլ խնդիրները քննութեան նիւթ դարձնել եւ ապա անցնել, ժամանակագրական կարգով, ե՛ւ Մհերի խնդրին։

Նախնական բանակցութիւնները այդ խնդրի առթիւ կը վարէ մեր ընկեր Վաղոն, որ Ձեզ կը սպասէ վաղը առաւօտեան ժամը 10ին՝ Դր. Տէր-Ստեփանեանի տանը։

Յարգանօք՝ Հ.Յ.Դ. ԱՏՐ. Կ. ԿՈՄԻՏԷ
(Կնիք)

3) Հ.Յ.Դ. Ատրպատականի Կ. Կոմիտէին, Թաւրիզում

№ 504 Թաւրիզ, 2 Նոյեմբ. 1906 թ.

Կ. Կոմիտէիդ կողմից Հ.Ս.Դ.Կ. Կենտրոնական Վարչութեան անդամ Պ. Մամիկոնեանին ուղղած Նոյեմբ. 1ին № 279/1 պաշտօնագիրը նա յանձնեց Գործադրիս եւ առաջարկեց տալ պարտ ու պատշաճ պատասխան, որը շտապում ենք տալ։

Մեր կենտրոնի, Կովկասի Գործադրի եւ Ձեր երկու Բիւրոների բանակցութեանց խնդիրը մի այնոյ Մհերի տեռորի մասին է։ Ուրեմն պարզ է, որ մեր անելիքը երկու կուսակցութեանց բարձրագոյն մարմինների հրահանգի կատարումն է — այսինքն Մհերի սպանութեան, որը պաշտօնապէս դրուած է քննական սեղանի վրայ եւ փութանակի պարզաբանութեան է կարօտ։

Իսկ Մհերի խնդիրը վերջանալուց յետոյ՝ մենք ամենայն պատրաստակամութեամբ կը դառնանք միջկուսակցական «այն անկախ [առկա՞խ] մնացած խնդիրներին, որոնք շատ եւ շատ անգամներ Ձեր կողմից մնացել են անպատասխան, հակառակ մեր յաճախակի պաշտօնական դիմումների, որոնք եթէ ժամանակին յարգուէին՝ մեր ոայոնում վաղուց վերացած կը լինէին շատ անպատեհութիւններ եւ չարիքներ»։

Ինչպէս առաջին՝ նոյնպէս եւ մեր այս երկրորդ պաշտօնական նամակով կրկին առաջարկում ենք կոմիտէիդ, առանց բուն խնդրից չեղուելու, փութով նշանակել Ձեր լիազօրները՝ Մհերի եղեռնի քննութեան համար, որ մեր բանակցութեանց ելակէտն է կազմում եւ այդ խնդրի լուծման անհամբեր սպասում են մեր կենտրոնն ու Կովկասի Գործադիրը, անշուշտ եւ ձեր Բիւրոներն էլ։

Ատենադպիր՝ *Ատենապետ՝*
ԱՏՐՈՄԻԶԴ *ԳՈՒՐԳԷՆ*

(Կնիք)

4) Հ.Յ.Դ. Ատրպատականի Կ. Կոմիտէին
Թաւրիզ

Թաւրիզ, 2 Նոյեմբ. 1906

Ձեր Նոյեմբեր 1ի № 279/1 նամակը ստացի։ Քանի որ բանակցութեանց բուն ելակէտը կազմում էր Մհերի սպանութեան խնդիրը եւ այդ առթիւ կողմերի կենտրոնական մարմինները յանձնել են տեղական վարչութիւնների քննութեան, հասկանալի է որ Ձեր վերոյիշեալ պատասխան-ընթացքը պիտի յանձնէի մեր տեղւոյս գործադիր մարմնին։

Իսկ ինչ վերաբերում է «Հայկական կեանքում գոյութիւն ունեցող երկու յեղափոխական կուսակցութիւնների յարաբերութեանց բարելաւման», այդ առթիւ միանգամայն սրտանց համակիր՝ պատրաստ եմ Ձեր լիազօրի հետ բանակցութեանց մտնելու։ Լիայոյս եմ որ մեզ կը յաջողուի Պարսկաստանի մեր եւ Ձեր կազմակերպութիւնների յարաբերութիւնները միանգամայն լաւագոյն եւ նպատակայարմար դարձնելու։

Այդ առթիւ խնդրում եմ որ Ձեր լիազօրը վաղը ժամը 3ից սկսեալ կամենար գալու պր. Օննիկ Սարամեանի բնակարանը (չէզոք հող)։

Աւելորդ է ասել, որ անկեղծ եւ անաչառ ցանկութիւններից բխած բացատրութիւնները կ'ունենան ցանկալի վախճան եւ վերջնական եզրակացութեան կը յանգին։

Մնամ յարգանօք՝
ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

5) Մեծապատիւ Պր. Մամիկոնեան
Ներկայացուցիչ Հ.Ս.Դ.Կ. Կենտրոնի, Թաւրիզում

№ 286/2 1906 Նոյեմբեր 3

Յարգելի՛ Պարոն,

Ստացանք Ձեր Նոյեմբեր 2 թուակիր նամակը։ Ուրախութեամբ ընդունում ենք եւ սրտանց ողջունում Ձեր առաջարկը՝ բանակցելու «Պարսկաստանի մեր եւ Ձեր կազմակերպութիւնների յարաբերութիւնները միանգամայն լաւագոյն եւ նպատակայարմար դարձնելու համար»։

Անկեղծութիւնը միշտ դրական արդիւնքի է հասցնում եւ մենք հաւատացած ենք, որ առաջնորդուելով այդ սկզբունքով յաջող ելքի կը յանգենք։

Ձեր որոշած ժամին եւ վայրում կը լինի մեր ներկայացուցիչը այդ առթիւ Ձեզ հետ տեսակցելու։

Ստացանք եւ Հ.Ս.Դ.Կ. Պարսկաստանի Գործ. Ցանձ. № 504 նամակը, որին չենք պատասխանում, որովհետեւ մեր № 279/1 նամակը մնում է իր զօրութեան մէջ։

Յարգանօք՝
Հ.Յ.Դ. ԱՏՐ. Կ. ԿՈՄԻՏԷ
(Կնիք)

Բ.— ՄԻՋ-ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՆԻՍՏ I

Ժողովը տեղի ունեցաւ Թաւրիզում, 1906 թ. Նոյեմբեր 14ին, Պարոն Օ. Ս.ի տանը։ Ներկայ էին Հնչ. Ս.Դ.Կ. եւ Հ.Յ.Դ. Պարսկաստանի բարձր մարմինների կողմից չորս-չորս ներկայացուցիչներ։ Ժողովի ատենապետ ընտրուեց Վ. Մամիկոնեան, իսկ քարտուղարներ՝ Վահան եւ Հրահատ։

Երկու կողմերն էլ ներկայացրին իրենց վկայութիւնները եւ օրակարգի խնդիրները, որոնք եւ կարդացուեցին։

№ 516 Վկայագիր

Հնչակեան կուսակցութեան Պարսկաստանի մասնաճիւղերի Գործադիր Ցանձնախմբի կողմից սոյն յանձնարարականով լիազօրութիւն է տրւում ընկերներ Վ. Մամիկոնեանին, Բարկէնեանին, Վահրամին եւ Հրահատին բանակցելու Հ.Յ.Դ. Ատրպատականի Կ. Կոմիտէի հետ, վերականգնելու փոխադարձ համաձայնութեամբ երկու կուսակցութեանց մէջ լաւագոյն յարաբերութիւններ, որպէսզի անհնարին դառնան ընդհարումներ եւ յեղափոխական գործը արատաւորող միջադէպերը։

Ատենապետ *Ատենադպիր*
ԱՏՐՈՄԻԶԴ *ԳՈՒՐԳԷՆ*

(Կնիք)

Դաշնակցական լիազօրները ներկայացրին հետեւեալ գրութիւնը.

№ 300
Ընկերներ Վաչօ, Ատրներսեհ,
Արմենակ եւ Վահան

Սիրելիք,

Համաձայն մեր եւ Հնչ. Ս.Դ.Կ. Կենտրոնի ներկայացուցիչ Պարոն Մամիկոնեանի միջեւ տեղի ունեցած գրաւոր եւ բանաւոր բանակցութիւնների, յանձնարարում ենք ձեզ՝ իբր Հ.Յ.Դ. Ատրպատականի Կ. Կոմիտէի լիազօրներ՝ բանակցելու Հնչ. Կենտրոնի ներկայացուցչի եւ իր ընկերների հետ, Պարսկաստանում երկու կուսակցութիւնների յարաբերութեանց բարելաւման համար, որպիսի (?) բանակցութեանց որոշումները պարտաւորական կը լինեն երկու կողմերի համար էլ։

Ընկերական բարեւներով՝
Հ.Յ.Դ. ԱՏՐ. Կ. ԿՈՄԻՏԷ
(Կնիք)

Երկու կողմերի ներկայացրած թղթերը վաւերական համարուեցին։

Ատենապետը ժողովը բաց արեց մի փոքրիկ ճառով, նուիրուած Հնչակեան կուսակցութեան եւ Հ. Յ. Դաշնակցութեան համերաշխութեան անհրաժեշտութեանը. ցաւ յայտնելով Պարսկաստանում երկու կուսակցութեանց միջեւ տեղի ունեցած դէպքերի մասին, կոչ արեց ձեռք ձեռքի տալ ընդհանուր թշնամու առաջ դուրս գալու։

Խօսք առնելով, Ատրներսեհ (դաշնակցական) մի փոքրիկ ճառի մէջ նոյնպէս շեշտեց երկու կուսակցութեանց համերաշխութեան անհրաժեշտութիւնը, ցաւ յայտնեց տխուր դէպքերի մասին, շեշտեց որ մասնաւոր դէպքերը չեն երբեք որ թշնամութիւն կամ ցրտութիւն են յառաջ բերում կողմերի մէջ, այլ այդ դէպքերը արդիւնք են տիրող ընդհանուր անհամերաշխութեան եւ խորթութեան։ Նկատեց որ դրական արդիւնքի հասնելու համար անհրաժեշտ է անկեղծ լինել։ «Խօսենք այստեղ ոչ թէ իբր կուսակցութեանց ներկայացուցիչներ, այլ իբր հայ անկեղծ յեղափոխականներ»։

Արմենակը (դաշն.) առաջարկում է անցնել գործնականին։

Երկրորդ անգամ կարդացւում են երկու կողմերի օրակարգի հարցերն էլ։ Ընթերցումից վիճաբանութիւններ ծագեցին։ Հնչակեան լիազօրների ներկայացրած օրակարգի առաջին երկու հարցերը անցեալ մասնաւոր դէպքերի մասին էին։ Առարկուեց որ մասնաւոր դէպքերը միշտ արդիւնք են ընդհանուր մի ցաւի. պէտք է ընդհանուր ցաւը վերացնելու մասին մտածել, նրա բուժման համար աշխատել եւ ոչ թէ մասնաւորների, որոնք ինքնըստինքեան ոչինչ չեն ներկայացնում ընդհանուրի առաջ։ Միշտ ի նկատի պէտք է ունենալ ընդհանուր հարցեր չօշափող խնդիրներ, որովհետեւ ընդհանուր ցաւը վերացուելուց յետոյ, մասնաւորները ինքնըստինքեան լուծւում են։

Վիճաբանութեան նիւթ եղաւ եւ այն՝ թէ նախքան օրակարգի հարցերին անցնելը ժողովը ցաւ յայտնէ մինչ այժմ կողմերի մէջ տեղի ունեցած դէպքերի մասին ընդհանրապէս, թէ՛ մասնաւորապէս Պարսկաստանի։

Թեր ու դէմ կարծիքներից յետոյ, միաձայն ընդունուեց հետեւեալ բանաձեւը. որոշուեց, մի կողմ թողնելով անցեալը, մտածել ապագայի համերաշխութեան մասին։

«Մենք, Հ.Յ.Դ. Ատր. Կ. Կոմիտէի եւ Հ.Ս.Դ. կուս. Պարս. Մարմինների Գործադիր Յանձնախմբի ներկայացուցիչներս, ցաւ յայտնելով երկու կուսակցութեանց մէջ անցեալում պատահած եւ նոյնիսկ եղբայրասպանութեան աստիճանի հասցրած տխուր եւ ցաւալի դէպքերի առթիւ՝ անցնում ենք օրակարգի հարցերին, ապագայում այդ տեսակ դէպքերի կրկնութեանց առաջն առնելու եւ համերաշխ գործունէութեան համար»։

Երկու օրակարգերի հարցերից միասին կազմուեց նոր օրակարգ, հարցերի հետեւեալ դասաւորութեամբ.

1.— *Զինուորների խնդիր.*
2.— *Կազմակերպական անհատների վերաբերմամբ խնդիր.*
3.— *Անհատի մի կուսակցութիւնից միւսը անցնելը.*
4.— *Փոխադրութեանց եւ սահմանագծային խնդիր.*
5.— *Ժողովրդից օգտուելու եղանակ.*
6.— *Կուսակցութեանց դերը հասարակական խնդիրներում.*
7.— *Թղթակցութիւններ.*
8.— *Ժողովի որոշման իրաւասութեանց տարածման չրջան.*
9.— *Միջ-կուսակցական դատարան.*
10.— *Համերաշխութեան ապացոյց ժողովրդի առաջ.*
11.— *Որոշմանց փոփոխութեան ենթարկելը։*

Դրուեց օրակարգի առաջին խնդիրը։

Խօսեցին հերթով Ատրներսեհ, Ստեփան (դաշն.), Մամիկոնեան (հնչ.) եւ ուրիշներ։ Բոլորն էլ պաշտպանում էին այն սկզբունքը, որ պէտք է դէմ լինել զինուորական ոյժին։ Մասնաւորապէս զինուորականութիւնը եւ զինուորական ոյժը չարիք է եւ մնասակար է հանդիսանում այն վայրերում — ինչպէս Պարսկաստանում — ուր զինուորների պէտքը չկայ եւ չի զգացւում տեղական կարիքների համար։ Վիճաբանութիւններից յետոյ միաձայնութեամբ ընդունւում են հետեւեալ որոշումները.—

Ա.— Սկզբունքով զինուորականութիւնը ընդունելով իբրեւ չարիք եւ վնասակար երկու կուսակցութեանց համար՝ այն վայրերում ուր զինուորական ոյժի կարիքը չկայ, որոշուեց զինուորներ չպահել Պարսկաստանում։

Բ.— Նոյն որոշման չեն ենթարկւում այն յեղափոխականները, որոնք զբաղում են փոխադրութեամբ եւ նրանք, որոնք անցնելու են Երկիր կամ վերադառնում են այնտեղից ուրիշ կողմ ա՞ցնելու, եւ մնում են գործունէութեան վայրում՝ իբր մի կայարանում։

Գ.— Ոչ մի մարմին իրաւունք չունի տեղական հասարակական գործերում զինուորներին գործածելու եւ նրանց ոյժից օգտուելու։

Դ.— Սոյն որոշումների վերջնական վաւերացումից առառաւելն երկու ամիս յետոյ, իւրաքանչիւր կողմ տեղական զինուորների զինաթափ է անում եւ հեռացնում, պահելով միայն անհրաժեշտ նուազագոյն չափը — minimum-ը — փոխադրութեանց եւ յեղ. գործերի համար, առանց իրաւունքը ունենալու նրանց գործ ածելու տեղական հասարակական գործերում։

Զինուորների խնդիրը լուծուած համարելով, ժողովը անցնում է օրակարգի երկրորդ հարցին՝ «Կազմակերպական անհատների վերաբերմամբ խնդիրներ»։

Որոշում՝

Կազմակերպական ո՛չ մի անհատ իրաւունք չունի ապրելու ժողովրդի հաշուոյն, որեւէ անուան տակ։

Երրորդ՝ «Անհատների մի կուսակցութիւնից միւսը անցնելը»։

Որոշում՝

Մի կուսակցութիւնից միւսը անցնելու ազատ է ամէն մի անհատ, նախօրօք իրեն պատկանած կուսակցութեան հետ մարելով ամէն տեսակի հաշիւ՝ թէ՛ բարոյական եւ թէ նիւթական։

Տասը րոպէ ընդմիջումից յետոյ, ժողովը օրակարգի երրորդ հարցը սպառած համարելով անցաւ չորրորդին եւ ընդունեց հետեւեալ որոշումը.

Երբ կողմերից որեւէ մէկը ուզում է կատարել փոխադրութիւն միւս կուսակցութեան արդէն պատրաստած գծերով, պէտք է նախօրօք խորհրդակցի վերջինին հետ եւ իր անելիքը անպայման յարմարեցնէ գծի տեղական պայմաններին։

Ժողովը որ բացուել էր ժամը 8·15ին երեկոյեան, փակուեց 11·20ին, նշանակելով յաջորդ նիստը՝ հետեւեալ օրը, Նոյեմբեր 15ին, երեկոյեան ժամը 8ին, նոյն տեղում։

Քարտուղարներ՝ ՎԱՀԱՆ ՀՐԱՀԱՏ — *Ատենապետ՝* Վ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ՆԻՍՏ II

Նիստը տեղի ունեցաւ նոյն տեղում, Նոյեմբ. 15ին։ Ժողովը բացուեց երեկոյեան ժամը 8·10ին։

Կարդացուելով առաջին նիստի արձանագրութիւնը՝ վաւերացուեց. ապա ժողովը անցաւ օրակարգի հինգերորդ հարցին.— «Ժողովրդից օգտուելու եղանակ»։

Ա.— Որոշւում է դրամական միջոցներ ձեռք բերելու համար ոչ մի ոյժի եւ բռնի միջոցների չդիմել։

Բ.— Իւրաքանչիւր կուսակցութիւն պարտաւոր է ոչ միայն չխանգարել միւսի դրամական այս կամ այն ձեռնարկին, այլ ի նկատի ունենալով յեղափոխական գործի ընդհանուր շահը՝ բարոյական պարտք պիտի համարէ աջակցութիւն ցոյց տալ։

Վեցերորդ.— «Կուսակցութեանց դերը հասարակական խնդիրներում»։

Որոշում՝

Ա.— Աչքի առաջ ունենալով որ կազմակերպութիւնները են ժողովրդի համար եւ ոչ ժողովուրդը կազմակերպութեանց, իւրաքանչիւր միջամտութեան ժամանակ պէտք է հասարակական գործի շահը գերադասել կուսակցական շահերից եւ, իբրեւ կազմակերպութիւններ, չնշել եւ չրռնանալ մարդկանց մտքի եւ համոզմունքի վրայ։

Բ.— Կազմակերպութեանց իւրաքանչիւր անդամ պարտաւոր է, իբրեւ գիտակից քաղաքացի, համերաշխ եւ ջերմ կերպով մասնակցիլ որ հասարակական գործերը հակայեղափոխական եւ յետադիմական մարդկանց ձեռքը չընկնին, որոնք կարող են կեանքի յառաջդիմութեա՞ն ճանապարհը կանգնեցնել եւ կամ յետ շրջել, այլ յանձնել յառաջադիմական եւ ժամանակակից գաղափարների տէր մարդկանց՝ առանց ուշադրութիւն դարձնելու նրանց այս կամ այն կուսակցութեան պատկանելիութեա՞ն։

Եօթներորդ.— «Թղթակցութիւններ»։

Թէ՛ պաշտօնական եւ թէ կիսապաշտօնական թերթերում գրուած երկու կուսակցութեանց յարաբերութեանց վերաբերող թղթակցութիւնները պիտի լինեն մի միայն պաշտօնական մարմնի գիտութեամբ եւ պատասխանատուութեամբ. իսկ մասնաւոր թերթերում գրուածները՝ եթէ նրանք չեն համապատասխանի ճշմարտութեան, մէկ կուսակցութեան վրայ գրուածը կը հերքէ միւսը։

Ութերորդ.— «Ժողովի որոշմանց իրաւասութեան տարածման չրջան»։

Այս որոշումները տարածւում են ամբողջ Պարսկաստանում եւ պարտաւորեցուցիչ են երկու կողմերի (Պարսկաստանի) բոլոր մարմինների վրայ։

Ժամանակի ուշ լինելու պատճառով, ժողովականների ցանկութեան համաձայն, ատենապետը փակեց ժողովը գիշերուայ ժամը 12·30ին, նշանակելով յաջորդ նիստը՝ հետեւեալ օրը, նոյն տեղում եւ որոշեալ ժամին։

Քարտուղարներ՝ ՎԱՀԱՆ ՀՐԱՀԱՏ — *Ատենապետ՝* Վ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ՆԻՍՏ III

Նիստը տեղի ունեցաւ նոյն տեղում, Նոյեմբեր 16ին։ Ժողովը բացուեց 8·15ին. կարդացուեց երկրորդ նիստի արձանագրութիւնը, որը վաւերացուելուց յետոյ, ժողովը անցաւ օրակարգի իններորդ հարցին.— «Միջ-կուսակցական դատարան»։

Երկար թեր եւ դէմ վիճաբանութիւններից յետոյ, միաձայնութեամբ ընդունուեցին հետեւեալ որոշումները.

Ա.— Միջ-կուսակցական դատարանը կազմւում է երկու կողմերի երկ-երկու ներկայացուցիչներից, որոնք

փոխադարձ համաձայնութեամբ ընտրում են հինգերորդին՝ ոչ-հակայեղափոխական անձնաւորութեան, որը ընտրւում է ամէն մի դէպքի համար նոր եւ կարող է վերընտրելի լինել: Հինգերորդի ընտրութիւնը, չորսի մէջ անհամաձայնութեան դէպքում, դրւում է աւելի լայն շրջանում առառաւելն հինգ եւ առնուազն երեք՝ իւրաքանչիւր կողմից:

Բ.— Միջ-կուսակցական դատարանի որոշումները անպայման պարտադիր են — երկու կողմերի համար էլ:

Գ.— Միջ. դատարանի որոշումները գործադրւում են այն կուսակցութեան կողմից, որին պատկանում է յանցաւոր կողմը:

Դ.— Երբ կողմերից մէկը, յանձնարարուած Միջ. դատ. որոշումները գործադրելու, թերանում է իր պարտականութեանց մէջ եւ առանց յարգելի պատճառի որոշեալ ժամանակամիջոցում ի կատար չի ածում դրբա՞ք, դատարանը իրեն է վերապահում իրաւունքը՝ գործադրութիւնը յանձնելու միւս կողմին:

Ե.— Չէզոքների վերաբերմամբ կողմերից իւրաքանչիւրը ազատ է իր գործունէութեան մէջ, նախօրօք պաշտօնապէս ստուգելով միւս կուսակցութիւնից՝ նրա չէզոքութիւնը:

Զ.— Միջ. դատարանին յանձնւում են այն բոլոր խնդիրները, որոնք երկու կուսակցութեանց վարչութիւնների մէջ բաւարար լուծում չեն ստացել, եւ վերադիշեալ բոլոր կէտերի ապագայ գործադրութեանց ժամանակ պատահած բոլոր թիւրիմացութիւնները, ինչպէս նաեւ այդ յօդուածներում չնախատեսուած դէպքեր, կուսակցութեանց յարաբերութիւններին վերաբերող:

Է.— Միջ. դատ. չորս մշտական անդամները ընշանակւում են մի տարի ժամանակամիջոցով:

ԾԱՆՕԹ.— *Երբ դատարանի անդամներից ոեւէ մէկը չահագրգռուած է քննուելիք խնդրով, նա փոխարինւում է ուրիշով:*

Ը.— Կուսակցութիւններից իւրաքանչիւրը տեղի բարձրագոյն մարմինների մօտ (ենթակոմիտէ, մարտ. խումբ, կոմիտէ, մասնաճիւղային վարչութիւն, Կ. Կոմիտէ, Գործ. Յանձնախումբ) կազմում են համանուն միջ. դատարան:

Թ.— Իւրաքանչիւր միջ. դատարանի իրաւասութիւնը տարածւում է համա՞ռն մարմնի իրաւասութեան սահմաններում եւ չափով:

Ժ.— Կենտրոնական եւ Գործ. Յանձնախմբի իրաւասութիւնից դուրս գտնուած խնդիրների համար, միջ. դատարանը դիմելու է կողմերի բարձրագոյն մարմիններին:

ԺԱ.— Իւրաքանչիւր տեղի միջ-կուսակցական դատարանի վճռի դէմ կարող է բողոքել դատապարտուողը՝ իր համապատասխան մարմնի միջոցով՝ Կենտր. Միջ-կուսակցական Դատարանին, որի վճիռները կը լինեն վերջնական: Իսկ Կենտր. Միջ. Դատարանի վճռի դէմ կարելի է բողոքել, որ իր դատը քննուի Կենտր. Միջ. Դատարանի Ընդ կազմով:

Վերջացնելով Միջ-կուսակցական Դատարանի խնդիրը, դրուեց օրակարգի տասներորդ հարցը՝ «Համերաշխութեան ապացոյց՝ ժողովրդի առաջ»:

Որոշում.— Սոյն որոշումներին մասին կողմերից իւրաքանչիւրը պարտաւոր է յայտնել — որոշումները ստորագրելուց մի շաբաթ յետոյ — իր իրաւասութեան տակ գտնուած մարմիններին, ի տեղեկութիւն և ի գործադրութիւն:

11*րդ.*— *«Որոշումների փոփոխութեանց ենթարկելը»:*

Որոշում.— Անհրաժեշտութեան դէպքում, կողմերից մէկի դիմումով, փոխադարձ համաձայնութեամբ կարող են այս որոշումները փոփոխութեանց ենթարկուել կամ նոր կէտեր աւելացնել:

Վերջացնելով դրած օրակարգի հարցերի որոշումները, ժողովը պարտք է համարում յանձնարարել երկու կուսակցութեանց Պարսկաստանի մարմիններին եւ ընկերներին՝ արձանագրել տալ համերաշխութեան կոչին, որ անյիշաչարութեամբ մոռացութեան տալով մինչեւ այժմ երկու կուսակցութեանց միջեւ պատահած բոլոր դէպքերը եւ անախորժութիւնները՝ ձեռք ձեռքի տալ եւ համերաշխ կերպով առաջ տանել յեղափոխական գործը, ոգեւորուելով միմիայն հարստահարուած ժողովրդի արդար դատի եւ նրա վերջնական յաղթանակի գաղափարով:

Սոյն որոշումները գրւում են երկու օրինակ, որոնք, վաւերացուելով լիազօրների ստորագրութեամբ եւ կողմերի Պարսկաստանի բարձր մարմինների կնիքով, մնում են ամէն մէկի մօտ՝ մի օրինակ:

Ժողովը փակուեց գիշերուայ ժամը 1·10ին:

Քարտուղարներ՝	*Ատենապետ՝*
ՎԱՀԱՆ	*Վ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ*
ՀՐԱՀԱՏ	

Սոյն արձանագրութիւնը բաղկացած է տասնչորս երեսներից. 1906 Նոյեմբեր 20ին:

Վերոգրեալ երեք նիստերի արձանագրութեանց մէջ յիշուած բոլոր որոշումներին համաձայն ենք:

Հ.Յ.Դ. Ատր. Կ. Կոմիտէի Լիազօրներ՝	Հնչ. Ս.Դ.Կ. Պրս. մսն. Գործ. Յնձն. լիազօրներ՝
ԱՏՐՆԵՐՍԵՀ	*ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ*
ՎԱՀԱՆ	*ԲԱՐԿԷՆԵԱՆ*
Ս. ՎԱՉՕ	*ՀՐԱՀԱՏ*
ԱՐՄԵՆԱԿ	*ՎԱՀԷՐԱՄ*
(Կնիք)	(Կնիք)

IX.— Հ. Յ. Դ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ. Յ. Դ. 4րդ Ընդհանուր ժողովի ատենագրութեանց համաձայն, տեղեկագիրներու ընթերցման կամ զեկուցումներու շարքին մէջ, վրէժի կեդրոնական Կոմիտէին կը յաջորդէ Մեծ Քաղաքը, այսինքն՝ Թիֆլիսի կամ Վրաստանի Կեդրոնական Կոմիտէութիւնը (տե՛ս ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, Գ. հատոր, էջ 77, 31րդ նիստ): Դրժբախտաբար, ինչպէս ըսած ենք ներկայ բաժնի ընդհանուր ներածականին մէջ (էջ 44), Թիֆլիսի տեղեկագիրը (կամ որեւէ փաստաթուղթ՝ Մեծ Քաղաքի Կեդրոնական Կոմիտէութեան վերաբերեալ) կը պակսի 4րդ Ընդհանուր ժողովի թղթածրարներուն մէջ:

Միեւնոյն շարքին մէջ, Թիֆլիսէն եւոք կու գան Հ. Յ. Դաշնակցութեան Ռուսաստանի եւ Եւրոպայի Ուսանողական Միութիւնները, որոնց տեղեկագիրներն ու անոնց ընկերացող վաւերաթուղթերը կու տանք այս գլուխին տակ, հետեւեալ յաջորդականութեամբ.

1.— Ռուսաստանի Հ. Յ. Դ. Ուսանողական կազմակերպութիւններու տեղեկագիրը, գրուած նամակի մեծ չափի գծաւոր թուղթի վրայ (2 կրկնակ եւ 1 պարզ թերթ), 9 էջ եւ 5 տող, սեւ մելանով: Կը կրէ շրջանի պատգամաւորին ստորագրութիւնը՝ *Արտուր* (Շահխթունեան Աւետիք):

2.— Ռուսաստանի դաշնակցական ուսանողներու բանաձեւը՝ Հ. Յ. Դ. տանկահայ եւ կովկասահայ կազմակերպութիւններու յարաբերութեան հարցին մասին. փոքր չափի թուղթի վրայ, սեւ մելանով եւ Շահխթունեանի ստորագրութեամբ:

3.— Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան դաշնակցական խումբերու տեղեկագիրը, գրուած նամակի մեծ չափի գծաւոր թուղթի վրայ (3 զոյգ թուղթ), 12 էջ, բայց իւրաքանչիւր էջի երկայնական կէսը միայն գրաւող: Կը կրէ Եւրոպայի դաշնակցական ուսանողութեան պատգամաւոր *Արշակ Իսահակեանի* (Զամալեան) ստորագրութիւնը:

4.— Եւրոպայի դաշնակցական ուսանողական խումբերէ եկած զանազան բանաձեւ-առաջարկներ, նամակի փոքր չափի թուղթերու վրայ, համագումար՝ 7 էջ: Բանաձեւեր գրկած են հետեւեալ խաղաքաղաքներու խումբերը.— Ա) Միւնխէն. Բ) Լօզան. Գ) Պերլին: Բոլորն ալ ստորագրուած են՝ *Արշակ*: Կը հետեւին՝ Պերլինի դաշնակցական ուսանողներէն գրկուած 13 հարցեր, անրստորագիր, առանձին թղթիկի մը վրայ:

1.— Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Տեղեկագիր IV Ընդհանուր ժողովին)

Դաշնակցութեան անցեալ III Ընդհանուր ժողովից յետոյ, Ռուսաստանի դաշնակցական ուսանողութիւնը սկսում է իր գործունէութիւնը երկու ուսանողական համագումարներով,— մէկը՝ ընդհանուր ուսանողական, երկրորդը՝ զուտ դաշնակցական: Դա 1904 թուի ամառն էր: Երկու համագումարներն էլ ցոյց տուին որ ուսանողութեան այն մասը որ հետաքրքրւում է հասարակական հարցերով ճնշող մեծամասնութեամբ կա՛մ դաշնակցական է, կամ Դաշնակցութեան համակրող: Այդ արտայայտութեամբ էլ կազմուած են համագումարների որոշումները:

Այդ դա նակցական համագումարի շնորհիւ վերականգնուել են կուսակցութեան մարմինները ուսանողութեան մէջ, ինչպիսիներն են՝ Մոսկուա (Եկեղեցի), Ս. Պետերբուրգ (Հիւսիսակերտ), Խարկով (Խարթուփ), Օդեսա: Եղել են փորձեր կազմակերպել եւ այլ քաղաքներում,— Ռիգա, Վարշաւա, Տոմսկ, բայց եղել են կամ անյաջող ու կարճատեւ, կամ սահմանափակուել են անհատ ընկերներ ձեռք բերելով: Պէտք է ա-

սել, որ վերեւ յիշածս քաղաքներում դաշնակցական կազմակերպութիւններ եւ ուսանողական մարմիններ եղել են դեռ այդ թուերից շատ առաջ: Օրինակ, Մոսկուայում, կազմակերպուել է դաշն. մարմին դեռ 1894 թուին, Պետերբուրգում 1896ին, Խարկովում 1897ին. նոյնիսկ Կիեւի պէս համեմատաբար փոքրիկ հայկական ուսանողական վայրում 1900 թուերից եղել են դաշնակցական խմբեր, որոնք բաւականացել են գլխաւորապէս ինքնակրթութեամբ եւ տարեկան մէկ անգամ «Դրօշակ»ին որոշ գումար ուղարկելով: Բայց այս կազմակերպութիւնները միմեանց հետ կապուած չեն եղել, եւ գործել են համարեա բոլորովին անկախ:

1904 թուի դաշնակցական ուսանողական համագումարից յետոյ կապ հաստատուեց համալսարանական քաղաքների հայ ուսանողութեան մէջ, գլխաւորապէս երեքում (Մոսկուա, Պետերբուրգ, Խարկով): Մոսկուան թէ՛ իր աշխարհագրական դրութեան շնորհիւ (կենտրոնում լինելով), թէ՛ իր ուսանողների թուով եւ դաղութի մեծութեամբ ճանաչուեց ուսանողական դաշնակցական կազմակերպութիւնների կենտրոն: Պետերբուրգի եւ Խարկովի մարմինները ճանաչուեցին կոմիտէներ, իսկ Մոսկուան՝ Կ. Կոմիտէ, ի հարկէ առանց դրան ճիշդ ցեղին, իբրեւ կենտրոնական վայր եւ Արեւելեան Բիւրոյի հետ Ռուսաստանի դաշն. կազմակերպութիւնների կապը պահպանող: Բացի Պետերբուրգից եւ Խարկովից, Մոսկուայի հետ կապուեց եւ Օդեսան, բայց չուտով բաժանուեց եւ կազմակերպչական յարմարութեան շնորհիւ մտաւ Նաւահանգստի(1) շրջանին մէջ:

1904–5 թիւր, ինչպէս բոլոր վայրերում, այնպէս էլ Ռուսաստանի զանազան հայաբնակ քաղաքներում, դաշնակցական կազմակերպութիւնների զարգացման եւ բարգաւաճման շրջանն էր: Եկեղեցական կալուածների դրաւումը, Թիւրքիայում Սասունի վերջին հերոսական կռիւները, եւ վերջապէս Թիւրք-հայկական ընդհարումները Կովկասում՝ քաջեցին Դաշնակցութիւնը ինտենսիւ(2) գործունէութեան եւ դրա հետ ստուարացրին նրա անդամների եւ համակրողների շարքերը: Նոյնը տեղի ունեցաւ եւ հայ ուսանողութեան մէջ: Ուսանողական կազմակերպութիւնների՝ հայրենակցութիւնների(3) մէջ, սեկցիաների եւ նրա ստորաբաժանմունքների մէջ՝ դաշնակցականները ստուար մեծամասնութիւն էին կազմում, ինչպէս ասացի: Օրինակ, Մոսկուայում, դաշնակցականները այնքան շատ էին, որ ամբողջ հայ ուսանողութեան տրուող հռչակաւոր հայկական երեկոյթների հասոյթի մի խոշոր տոկոսը անցնում էր դաշնակցական մարմնի գանձարանը: Նոյն թուական յարաբերութիւնը կար եւ այլ երկու քաղաքներում:

Ինչ վերաբերում է համալսարանական քաղաքների հայ գաղութներին, դրանց մէջ յաջողութիւն ունեցել են միայն Խարկովի դաշնակցական ուսանողները: Խարկովում կան բաւական թուով թիւրքահայեր (կարծեմ գլխաւորապէս Պոլսից), որոնց մէջ ընկերները հեշտութեամբ թափանցել են եւ կազմակերպել: Գործը լաւ հետեւանքներ է ունենում եւ տեղի երիտասարդները միանում են ուսանողների հետ եւ աջակցում գործին: Այդ հանգամանքը ազդում է ի հարկէ եւ գանձարանի մուտքի վրայ: Մոսկուան եւ Պետերբուրգը նոյն յաջողութիւնը չեն ունեցել գաղութներում: Պատճառը դժուար չէ գտնել: Մոսկուայի եւ Պետերբուրգի հայ գաղութը գլխաւորապէս՝ բաղկացած է բաւական հարուստ հայ վաճառականներից, եւ հենց այդ պատճառը բաւական է, որ նրանք խորշեն մի յեղափոխական, կոնսպիրատիւ(4) գործից: Եթէ սորա վրայ աւելացնենք եւ այն հանգամանքը, որ սրանց մեծամասնութիւնը հին գաղթականներ են եւ ոչ մի կապ չունեն հայկական կեանքի եւ կովկասեան իրականութեան հետ, պարզ կը լինի մեր պրոպագանդայի անյաջողութիւնը՝ գաղութի մէջ:

Մեզ Մոսկուայում յաջողուեց միայն մի երիտասարդների խմբակ կազմել գործակատարներից եւ գրասենեակային ծառայողներից, որոնց հետ յաճախ ժողովներ ենք ունեցել, այդ էլ 1905 թուի վերջերին: Մեզ չի յաջողուել տարածել դաշն. կազմակերպութիւնը այդ բուրժուական գաղութներում, բայց այնուամենայնիւ նա չի սահմանափակուել զուտ ուսանողական շրջաններով: Գաղութում ունենք մի քանի համակրողներ: Ուսանողութեան ջանքերով հիմք է դրուել [Նոր] Նախիջեւանի եւ Ռոստովի դաշնակցական կազմակերպութիւններին. այս վայրը 1904–5ին կապուած է եղել Մոսկուայի հետ եւ յետոյ, աճելով, կարողացել է անկախ շրջան դառնալ՝ իւր Կ. Կոմիտէով:

Մոսկուայի ուսանողութիւնը, բացի [Նոր] Նախիջեւանից, մուտք է գործել եւ մի ըստ երեւոյթին հնչին վայր՝ Վորոնէժ (Ագռաւ), որտեղ արդէն կան բաւական թուով հայեր: Յաջողուել է կազմել մի ենթակոմիտէ, որը մինչեւ վերջին ժամանակներս բաւական եռանդով գործել է եւ բաւական մուտք է տուել Մոսկուայի գանձարանին: Ուսանողները մի քանի անգամ գնացել են այնտեղ, յաճախ թիւրիմացութիւններ պարզելու: Անցեալ ձմեռ ինքս մի քանի օրով եղայ այնտեղ եւ ժողովներ ունեցայ: Շատ հետաքրքրւում էին Դաշնակցութեան ծրագրով եւ մանաւանդ զինման գործով: Հայախօս են:

Սրանք աշխատել են գտնել ընկերներ եւ այն հայերի մէջ, որ ցրուած են Ռոստովի եւ Վորոնէժի մէջ գտնուած կայարաններում եւ մեստեչկաներում(5) (ինչպիսին են՝ Լիսկի եւ ուրիշները):

Մոսկուայի մարմինը բաղկացած էր 5 հոգուց: Սովորաբար նոր կոմիտէ ընտրուելուց՝ հին մարմնի անդամ ընկերները սկզբում հրաւիրւում են ժողովների եւ մի որոշ ժամանակ մասնակցում են գործերին, մինչեւ

որ նորերը ծանօթանում են ամբողջ գործերի եւ նրանց ընթացքի հետ:

Յունուարը նոր ընտրութիւնների ժամանակն է: Աշնանից արդէն մնացել էինք 3 հոգի: Կոմիտէի անդամներից մէկը, որ մեր լաւագոյն ընկերներից էր, վերջին օրերս վախճանուեց, իսկ միւսը աւարտել է եւ Կովկաս վերադարձել:

Որպէսզի վերջացնենք շրջանի կազմակերպչական մասը, պէտք է յիշենք եւ Մոսկուայի ընկերների աշխատանքով առաջ բերած Կարմիր Խաչի խումբը, որը սակայն շնորհիւ իր բազմատեսակ կազմին՝ միշտ ալեկոծման դրութեան մէջ է եղել: Գործերը աւելի բաւարար տանելու համար, կոմիտէն մտցրել էր իր անդամների մէջ աշխատանքի բաժանում:

Անցնելով ուսանողական կազմակերպութիւնների ֆունկցիաներին, ամենից առաջ պէտք է յիշատակել ուսանողների մասնակցութիւնը զէնքի գնման եւ տեղափոխման գործերին, մանաւանդ Զիֆոնի(6) օրով: Կազմակերպութիւնը ծառայել է այդ գործին թէ՛ իր անդամների անմիջական մասնակցութեամբ եւ թէ իր դրամարկղով: Այդ առթիւ երեւի Զիֆոնի ներկայացուցիչը աւելի մանրամասն տեղեկութիւններ կը տայ. ինձ մօտ թուանշաններ չկան: Խարկովի ընկերների կատարած դերը այդ գործում ինձ յայտնի չէ, բայց Մոսկուան եւ մանաւանդ Պետերբուրգը (ուր մեր ընկերներին յաջողուել է զէնքի կարեւոր եւ հարուստ աղբիւրներ գտնել) միշտ օգնել են Զիֆոնի ներկայացուցիչներին: Տեղափոխութեան մասին չեմ խօսում, դա սովորական է մեզանում:

Շնորհիւ ուսանողական կազմակերպութիւնների անգիջող դրութեան, նրանք բաժանուած են եղել խմբակների կամ սեկցիաների, որոնցից մեծամասնութիւնը զուտ դաշնակցական են եղել: Պրոպագանդան բոլոր ընկերներում, շնորհիւ Դաշնակցութեան ծրագրի և գործունէութեան մթութեան եւ գրականութեան աղքատութեան, թոյլ է եղել եւ բնորոշ կուսակցական գոյն չի կրել:

1905 թուի աշնան ազատութիւնների ժամանակ, կազմակերպութիւնը կարող էր արդէն ազատ եւ հրապարակային ժողովներ անել, որոնք լինում էին գլխաւորապէս դպրոցների սրահներում, խառն կամ կուսակցական: Խառն ժողովները, որ գրաւում էին հայ ուսանողական մի ստուար մասսա, վիճաբանութիւնների միջոցով նպաստում էին ծրագրերի լուսաբանութեան եւ շարքերի զտման: Պատահել են եւ խառն ու կուսակցական ժողովներ՝ համալսարանից դուրս, ուր գալիս էին եւ քաղաքից, հայ գաղութից:

Բայց անհամեմատ աւելի մեծ է այն կուսակցական պրոպագանդան, որ մղել է ուսանողութիւնը Կովկասում, արձակուրդների ժամանակ. արձակուրդներ, որ վերջին ժամանակ տարիներ տեւեցին, եւ յարմարութիւն տուին ուսանողներին՝ նոյնիսկ մտնել Կովկասի դաշնակցական մարմինների կազմի մէջ, ինչպէս Տֆիխսում, Երեւանում: Այստեղ գործունէութիւնը ի հարկէ զաղարում է լինել զուտ ուսանողական, նա խառնւում է շրջանների գործերի հետ, հետեւաբար անմիջապէս չի վերաբերում Ռուսաստանի ուսանողական շրջաններին, այդ պատճառով էլ ես նրանց վերայ երկար կանգ չեմ առնի: Այդ գործունէութիւնը չափազանց նպաստել է ուսանողական շրջաններին՝ մօտիկից ծանօթանալու հայ իրականութեան՝ Կովկասում, դաշնակցական կազմակերպութիւններին եւ օտար կուսակցութիւնների հետ: Այդ բանը սկզբներում պակասում էր մեզ, որի շնորհիւ՝ դաշնակցական ուսանողութիւնը տարբեր մտածող տարբերից էր բաղկացած:

Դեռ շատ տարիներ առաջ դաշնակցական ուսանողութիւնը մեծ կարիք է զգացել ծանօթանալու հայ իրականութեան հետ ընդհանրապէս եւ թրքահայկական իրականութեան հետ մասնաւորապէս: Ինչպէս երեւում է դեռ 1899 թուի ուսանողական համագումարից — ուսանողների համար միշտ մութն է եղել թիւրքահայ իրականութիւնը. նա միշտ կասկածով է վերաբերուել այն խառնիխուռն նիւթերին երկրի վերաբերմամբ, որ տուել է դաշնակցական գրականութիւնը: Վերջին ժամանակներս միայն Դաշնակցութեան ամբողջ պատկերը պարզուել է մեզ համար, գոնէ Կովկասի վերաբերմամբ:

Ռուսաստանում եղած ժամանակ դաշնակցական ուսանողների մասնակցութիւնը ընդհանուր յեղափոխական շարժման մէջ եղել է անհատական. իբրեւ կազմակերպութիւն, շատ քիչ, մի քանի անգամ ենք երեւան եկել: Զինական գործերի մէջ մի քանի անգամ յարաբերութիւն ենք ունեցել էս. էրների եւ սոցիալ-դեմոկրատների հետ: Անցեալ տարի Մոսկուայում անհրաժեշտ եղաւ կազմակերպել դաշնակցական զինուած խմբակ, Դրուժինա, բայց չյաջողուեց՝ մեզանից մի քանիսի Կովկաս վերադառնալու եւ այլ գործերով զբաղուած լինելու եւ միջոցների պակասութեան պատճառաւ: Ուսանողներիցս շատերը անհատապէս զինուած էինք:

Անցնենք Կազմակերպութեան եկամուտներին: Ամենասովորական աղբիւրը հանգանակութիւնն է եղել գաղութների մէջ, միանուագ կամ պարբերաբար՝ տարեկան մի քանի անգամ: Կազմակերպութեան գործերին ոսոնասիրտ մեր գաղութները ի հարկէ առանձին տրամադրութիւն չեն ցոյց տուել դրամ տալու, բայց եւ այնպէս մեզ յաճախ յաջողուել է բաւական միջոցներ ձեռք բերել: Երկրորդ տեղը դաշնակցական գանձարանի մէջ մեզանում բռնել է ընդհանուր ուսանողութեան տուած երեկոյթից մեզ յատկացրած տոկոսը: Սա այնքան մեծ չէ եղել, բայց ապահով աղբիւր է եղել: Պատահել է նաեւ, որ ինքը դաշնակցական ուսանողու-

թիւնը տուել է երեկոյթ, համերգ, ներկայացում, կամ օրինակ Վարդանանց տօնի առիթով՝ երեկոյթ։ Մինչեւ վերջին տարիները գոյութիւն ունէր նաեւ մի սովորութիւն (որ բարեբախտաբար այժմ վերացել է),— աւետիսի ման գալ Ծննդեան տօնին։ Վերջապէս կազմակերպութեան գանձարանն է մտել նաեւ կամաւոր անդամակցական վճարները։

Այս աղբիւրներից առաջ եկած գումարը, տեղական չնչին կարիքներին բաւարարութիւն տալուց յետոյ, կա՛մ տեղափոխուել է Կովկաս՝ Բիւրոյին, կամ վերջին տարիները գործադրուել է տեղում՝ Զիֆօնի համար։ Վերջին ժամանակներս, համալսարանների փակուած լինելու պատճառով, եւ չնորհիւ խառն յեղափոխական դրութեան, մուտքը շատ չնչին է եղել եւ ծախսուել են բոլոր մնացորդները. այնպէս որ մինչեւ անգամ կազմակերպութիւնը անկարող էր իր ներկայացուցչի ծախսերը հոգալ Ընդհանուր Ժողով ուղարկելիս։ Մեր շրջանի դրամական դրութեան մէջ մի գիծ էլ կայ. մուտքը կանոնաւոր պարբերութեամբ չի հաւաքւում, որովհետեւ աղբիւրները բացառիկ են. այդ պատճառով էլ դրամարկղը տարուայ տարբեր ժամանակներում շատ տարբեր դրութեան մէջ է լինում։ Այդ բանը դժուարեցրնում է պարբերական հաշուետուութիւնը՝ բարձր տեսանողներին։

Անհրաժեշտ է այժմ ծանօթանալ շրջանի ներկայ դրութեան եւ ուսանողների տրամադրութեան հետ։

Ռուսաստանի մեծ յեղափոխութիւնը առաջ բերեց հասարակութեան բոլոր խաւերում, ինչպէս եւ ուսանողութեան շարքերում, նոր պերտուրբացիա(7), ազդեց կուսակցութիւնների գոյի (?) եւ շարքերի վերայ։ Երկար տարիներ, Ռուսաստանում ընդհանրապէս եւ Կովկասում մասնաւորապէս, քաղաքական կեանքը բացակայել է, գոնէ իր կոնկրետ(8) արտայայտութիւններով։ Չէ եղել մշակուած, պարզուած կուսակցական տեսակէտ։ Այս բոլորը կրկնակի, եռակի ճշմարտութեամբ վերաբերում են Դաշնակցութեան եւ հետեւաբար նրա շարքերի մէջ եղած երիտասարդութեանը՝ ուսանողութեան։ Յեղափոխական իրականութիւնը դրել է բոլոր կուսակցութիւններին անհրաժեշտ, անխուսափելի պահանջ,— վերջնականապէս պարզել իր քաղաքական բիւրեղացած պլատֆորման(9) եւ յեղափոխական անմիջական տակտիկայի սկզբունքային կողմը։ Եւ որովհետեւ Դաշնակցութիւնը, մեր դժբախտ իրականութեան պատճառաւ, չկարողացաւ եւ չէ կարողանում անմիջապէս առաջ մղել մի որոշ մշակուած քաղաքական–կուսակցական ուղղութիւն եւ հետեւողականութեամբ չի կարողանում պարզել իր եւ հակառակ բանակների եւ կուսակցութիւնների տարբերութիւնը, այս բոլորը, իրենց բացասական հետեւանքներով անդրադառնալով այլ հասարակական շրջանների վերայ, եւս առաւել ազդել է մեր երիտասարդ ինտելիգենցիայի՝ ուսանողութեան վերայ։ Ի հարկէ, երիտասարդներից նրանք, որոնք անմիջապէս(10) կապուած են կազմակերպութեան հետ, իրազեկ են կուսակցութեան եւ միւսների դրութեան. նրանք այլ վերաբերմունք ունին, այլ ակնկալութիւններ ունին, կը ցանկանային ազդել կուսակցութեան վերայ եւայլն։ Բայց ինչպէս ամէն կուսակցութեան մէջ, այնպէս էլ մեզանում, բացի ակտիւ ընկերներից, գործիչներից, կան եւ անդամներ, ընկերներ, որոնք չեն կարող այդպիսի մտերիմ կապերով կապուած լինել կուսակցութեան հետ։ Այդ շրջանները, որ ամէն տեղ ստուար մեծամասնութիւն են կազմում, պէտք է ընկնէին եւ ընկած են վարանման մէջ, տեսնելով Դաշնակցութեան մէջ առաջ եկած գործնական եւ ծրագրային հակասութիւնները։ Մի մասը չէզոքացել է, միւսը անցել է այլ կուսակցութիւնների կողմը, երրորդները պահանջում են դրութեան վերջնական յայտարարութիւնը(11) եւ սպասում են մանաւանդ այս պատմական Ընդհանուր Ժողովի որոշումներին։ Քաղաքական եւ սոցիալական հարցերը, երեւոյթները, չնորհիւ յեղափոխութեան, եւ լայն կերպով մատակարարուող գրականութեան, առաջուայ նման մութ ու անորոշ չեն երիտասարդութեան համար եւ նրա զբաղմունքների եւ հետաքրքրութեան առարկան են արդէն։ Եւ որովհետեւ Դաշնակցութիւնը այդ տեսակէտից էլ դեռ չի պարզել իւր հայեացքը, իդէոլոգիան(12), հասկանալի է երիտասարդութեան ներկայ աննախանձելի դրութիւնը։ Աւելի մակերեսայինների վերայ՝ ազդել են նաեւ հակառակորդ կուսակցութիւնների քննադատութիւնները եւ յարձակումները։ Բայց մեծամասնութիւնը ուղղուել է աւելի ինքնաքննադատութեամբ։

Այսպիսի դրութիւնը անտարակոյս յղի է շատ վատ հետեւանքներով. նա խրտնեցնում է միջակ ինտելիգենցիայի լայն խաւերը՝ որ անհրաժեշտ են ամէն մի կուսակցութեան։

Ուսանողութիւնը այս բոլորի առթիւ ունեցել է այդ երեք քաղաքներում մի շարք ժողովներ, որ քննել են հերթական հրատապ հարցերը մեր կուսակցութեան իրականութեան վերաբերմամբ։

Խօսուել է Դաշնակցութեան «զտման» հարցի վերաբերմամբ։ Ուսանողութիւնը եկել է այն եզրակացութեան, որ Դաշնակցութեան յարաբերութիւնները (կովկասեան Ռայոնական ժողովներում) այդ հարցի վերաբերմամբ բաւարար չեն. Նա գտնում է որ քիչ է յայտարարել զտման անհրաժեշտութիւնը, պէտք է ցոյց տուուեն այն կոնկրետ միջոցները, որ պէտք է գործադրէ կուսակցութիւնը՝ իւր շարքերը մաքրելու համար։ Ուսանողութիւնը համոզուած է, որ զտումը տեխնիքական արհեստական միջոցներով չի կարելի իրականացնել, այլ հարկաւոր է սկզբունքային միջոցներ ձեռք առնել։

Ինչ որ վերաբերում է հոսանքներին դաշնակցական

ուսանողութեան մէջ, պէտք է յայտնեմ, որ պատկերը նման չէ նրան, ինչ որ նկատեցին, օրինակ, Տփխիսի շրջանից։ Ուսանողական շրջաններում հնչող մեծամասնութիւն է կազմում այն հոսանքը, որ կոչւում է «զատողականների»(13) հոսանք, եւ որը փոքրամասնութիւն ունի միւս շրջաններում։ Օրինակ, Պետերբուրգում եւ Մոսկուայում, հնչող մեծամասնութեամբ (ընդդէմ 1 ձայնի) անցել է հետեւեալ ռեզոլիցիան(14) Թրքահայ եւ կովկասեան դաշնակցական կազմակերպութիւնների յարաբերութեան վերաբերմամբ.—

Աչքի առաջ ունենալով՝ որ Ռուսաստանի եւ Թիւրքիայի միջազգային, ֆեոդալական, տնտեսական եւ սոցիալական պայմանները տարբեր են, որ Թիւրքիայում՝ յեղափոխական կռիւը մինչեւ այժմ եղել է եւ առայժմս է ֆեոդալական եւ ազգային, որը կարող է եւ պէտք է գրաւի ժողովրդի ամենախոշոր մեծամասնութիւնը, այնինչ այստեղ Կովկասում մեր կռիւը դասակարգային է, սոցիալիստական եւ միջազգային, որ Թրքահայ դատին օժանդակելու գործը չի վերաբերում այստեղի միայն սոցիալիստական բանակին, այլ աւելի լայն ժողովրդական մասսաներին եւ այդ պատճառով՝ չի կայելի այդ օժանդակութեան կազմակերպութիւնը եւ ղեկավարութիւնը յանձնել մի որեւէ կուսակցութեան, այլ պէտք է տարուի անկուսակցական հողի վերայ,

Մենք, Մոսկուայի եւ Պետերբուրգի դաշնակցական ուսանողներս, անհրաժեշտ ենք գտնում, որ, 1) Թրքահայ յեղափոխական դատը եւ Կովկասեան աշխատաւոր մասսաների դասակարգային դատի ղեկավարութիւնը յանձնուեն միմեանցից բոլորովին անկախ կուսակցութիւնների։

2) Թրքահայ դատին օժանդակելու համար այնտեղ գործող յեղափոխական կուսակցութիւնը ունենալու է Կովկասում իւր ներկայացուցիչ մարմինը (ագենտուրա), որին կը տան իրենց նպաստը՝ հասարակութեան այն բոլոր խաւերը, որոնք կանգնած կը լինին այդ թրքահայ յեղափոխական կուսակցութեան տեսակէտի վերայ՝ Թրքահայ դատի վերաբերմամբ։

Ուսանողութիւնը սպասում է կուսակցութեան Ընդհանուր Ժողովի որոշման այս եւ մի շարք կարեւոր ծրագրային հարցերի վերաբերմամբ, որպէսզի կարողանայ ըստ այնմ որոշել իւր վերջնական դիրքը դէպի Դաշնակցութիւնը։

Ահա ընդհանրապէս մեր ուսանողութեան դրութիւնը։ Ի հարկէ մենք, դաշնակցականներս, չէինք ցաւի, եթէ նրա շարքերի նուազումը ուսանողական շրջաններում առաջ եկած լինէր զտման իբրեւ հետեւանք. այդ տեսակէտից մենք շատ ուրախ կը լինէինք։ Բայց այդ երեւոյթը, ինչպէս տեսանք, բոլորովին այլ պատճառներ ունի եւ կարող է որոշ չափով վնասակար լինել կուսակցութեան համար։

Ցամենայն դէպս դրութեան լրջութեան գնահատութիւնը թողնում ենք Ընդհ. Ժողովի ակնածելի ոյժերին։

(ԱՐՏՈՒՐ)
ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆ

---

(1) Պաքուի։
(2) Թաւալուն, աշխոյժ, թափով։
(3) Արդեօ՞ք հայրենակցականների։
(4) Ընդյատակեայ կամ դաւադրական բնոյթի։
(5) Աւան, գիւղաքաղաք։
(6) Կովկասի մէջ ստեղծուած՝ զենքի մատակարարման յատուկ մարմին։
(7) Շփոթ, խռովութիւն, այլայլում։
(8) Շօշափելի։
(9) Ցայտագիրը։
(10) Իմա՛ անմիջօրէն, անմիջական կերպով, սերտօրէն։
(11) Ցստակացումը։
(12) Գաղափարաբանութիւնը։
(13) Իմա՛ անջատողականների։
(14) Բանաձեւ, որոշում։

2.— ԱՌԱՋԱՐԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Ռուսաստանի ուսանողութեան առաջարկը Դաշ. Ընդհանուր Ժողովին

Մոսկուայի եւ Պետերբուրգի դաշնակցական ուսանողութիւնը, քննութեան առնելով Հ. Յ. Դաշնակցութեան Թիւրքահայկական եւ կովկասեան կազմակերպութիւնների յարաբերութեան հարցը, եկաւ հետեւեալ եզրակացութեան.

(Այդ եզրակացութիւնը բառացի կերպով տրուած է Հ. Յ. Դ. Ռուսաստանի ուսանողական կազմակերպութեանց տեղեկագրին մէջ, տեսնել արամեանով շարուած մասը՝ «Աչքի առաջ ունենալով որ . . . . . թրքահայ դատի վերաբերմամբ»։ Հ. Տ.)

ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆ

3.— ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՒՐՈՊԱՅԻ ԴԱՇՆԱԿ. ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Եւրոպայի հայ ուսանողութեան մէջ մինչեւ վերջին ժամանակներս չեն եղել յատկապէս դաշնակցական կազմակերպութիւններ, կամ համարեա չեն եղել։ Կազմակերպուած ուսանողութեան խոշոր մեծամասնութիւնը խմբուած է եղել «Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան» շուրջը, որ թէեւ իրաւականօրէն անկուսակցական մի հիմնարկութիւն է, բայց չնորհիւ այն

հանգամանքի, որ նրա անդամների ստուար մեծամասնութիւնը դաշնակցականներից է կազմուած, այդ հաստատութիւնը մի տեսակ դաշնակցական գոյն է կրել եւ այդ գոյնը այնքան աչքի ընկնող է եղել, որ սոցիալ-դեմոկրատ հայ ուսանողները հնարաւոր չհամարելով մնալ այդ միութեան մէջ՝ նախանցեալ տարի բաժանուեցին նրանից:

Վերջին ժամանակներս, «Եւրոպայի Հայ Ուսանող. Միութիւնը» մի առանձին կենդանութեան նշաններ չի ցոյց տալիս. իսկ միւս կողմից ուսանողութեան մէջ զօրեղ տրամադրութիւն է նկատւում կուսակցօրէն կազմակերպուելու: Այս բանը շատ սպասելի է: Ռուսաստանի շարժումները եւ յեղափոխական կուսակցութեանց զօրեղ մրցումները այդ շարժումները ղեկավարելու գործում՝ ուժեղ կերպով ցնցեցին ուսանողութիւնը, որ յանկարծ զօրեղ պահանջի առաջ դրուեց,— իւր դիրքը որոշել թէ՛ դէպի յեղափոխական շարժումները եւ թէ՛ դէպի այդ շարժումները ղեկավարող քաղաքական կուսակցութիւնները: Այս պահանջներն էլ կամաց-կամաց չերտաւորեցին ուսանողութիւնը և նախկին «Միութիւնը» վերածուեց եւ վեր է ածւում զանազան կուսակցական կազմակերպութիւնների, որոնց թըւում եւ դաշնակցական կազմակերպութիւնների:

Ներկայումս դաշնակցական ուսանողներ կան Եւրոպայի հետեւեալ քաղաքներում,— Բեռլին, Լայպցիգ, Իենա, Հալլէ, Դարմշտադ, Միւնխէն, Բրիւսսէլ, Փարիզ, Մոնպէլիէ, Նանսի, Բեռն, Ցիւրիխ, Ժընեւ, Լօզան: Կան անշուշտ եւ այլ քաղաքներում ցրուած դաշնակցական ուսանողներ, բայց նրանց մասին առայժմ ոչ մի տեղեկութիւն չունենք:

Վերեւ թուած քաղաքներից ոմանք չեն մասնակցել պատգամաւորի ընտրութեանը: Այդ քաղաքների թիւմն են՝ Փարիզ, Նանսի, Ցիւրիխ, Հալլէ, Լայպցիգ, Բրիւսսէլ եւ Իենա:

Փարիզում կան բաւական թուով դաշնակցական ուսանողներ — գլխաւորապէս տաճկահայեր — որոնք, որքան մեզ յայտնի է, դեռ անցեալ տարի կազմակերպուած են եղել, իսկ այժմ քայքայուած վիճակի մէջ են. այդ հաստատում է նախ՝ «Ջանք» կոմիտէի կողմից Փարիզ անցած մի ընկեր, որ իւր բոլոր ջանքերով հանդերձ չի կարողանում ի մի խմբել Փարիզի դաշնակցական ուսանողներին... Այդ ապացուցւում է եւ այն լըռութեամբ, որ Փարիզը պատասխանել է ընտրողական կոմիտէի դիմումներին՝ ընտրութեան առթիւ:

Նանսիում մեր ընկերներից մէկի ջանքով կազմուել էր 12 հոգուց բաղկացած «դաշնակցական» մի խումբ, որ այժմ իջել հասել է 5 հոգու: Յետագայում պարզուեց, որ այդ 5 հոգուց բաղկացած «դաշնակցական» խմբի կուսակցական պատկերը շատ խայտաբղէտ է. ոմանցում կան յեղափոխական տեսակէտին չէզոք տարրեր, հակայեղափոխականներ եւ մի սոցիալ-դեմոկրատ: Այս հանգամանքը աչքի առաջ ունենալով՝ Նանսիի մեր ընկերը չի վստահացել խորհրդակցել այդ խմբի հետ՝ Ընդհ. Ժողովի շուրջը ծագող հարցերի վերաբերմամբ:

Ցիւրիխում, վերջին ժամանակներս, մեր ընկերներից մէկի նախաձեռնութեամբ, կազմուել է դաշնակցական մի խումբ՝ 10 հոգուց բաղկացած: Այդ խումբը կազմուել է պայմանօրէն. խմբի անդամների մեծամասնութիւնը իրան համարում է ոչ թէ դաշնակցական, այլ Դաշնակցութեանը որոշ չափով համակրող. նրանք ըսպասում են Ընդհ. Ժողովի վախճանին, որպէսզի կարողանան վերջնականապէս իրենց դիրքը որոշել դէպի Դաշնակցութիւնը:

Հալլէում կան միայն մի քանի անհատ-դաշնակցականներ. կազմակերպութիւն դեռ եւս չկայ: Մեզ յայտնի չէ այդ անհատների կուսակցական ֆիզիոնոմիան(1):

Լայպցիգում կայ 7–8 հոգուց բաղկացած մի խումբ: Ընտրութիւնների համար, «Ջանք» կոմիտէին չի յաջողւում համաձայնութեան գալ Լայպցիգի ընկերների հետ. ուստի եւ նրանք չեն մասնակցում ընտրութեանը:

Բրիւսսէլում երբեմն եղել է դաշնակցական մի խումբ, որ քայքայուել է չնորհիւ այն հանգամանքի, որ անդամների մեծամասնութիւնը ցրուել է Բելգիայի այլ քաղաքները: Բելգիայում բաւական թուով դաշնակցական ուսանողներ կան, որոնք փորձեր են անում Բելգիայի ընդհանուր դաշնակցական մի կազմակերպութիւն առաջացնելու: Բելգիայի այդ ուսանողները ոչ մի մասնակցութիւն չունեցան ընտրութեանը, կազմակերպութեան բացակայութեան պատճառով:

Իենայում կան 4–5 դաշնակցական ընկերներ, որոնք դեռ եւս կազմակերպուած չեն: Սրանք եւս չեն կարողացել մասնակցել պատգամաւորի ընտրութեանը. պատճառաբանութիւնը նոյն է, ինչ որ Լայպցիգի ընկերներինը:

Այս վեց քաղաքների մասին միայն կարճ տեղեկութիւնները տալով՝ պիտի աւելացնենք թէ միանգամայն մութ է մեզ համար հարցերից ամենակարեւո՛րը գուցէ.— թէ ի՞նչ է մտածում այդ ցրուած ուսանողութիւնը, որքա՞ն է նրա հետաքրքրութեան չափը դէպի մեր իրականութիւնը, ի՞նչ հոսանքների կամ դաւանանքների է հակւում նա եւն. եւն.: Մեր տեղեկութիւնները աւելի որոշ եւ ամբողջական են այն քաղաքների մասին, որոնք կազմակերպուած են եղել, ունեցել են իրենց դաշնակցական խմբերը՝ ընտրութիւնների մասին խօսք լինելուց առաջ:

Այդ քաղաքներն են՝ Բերլին, Դարմշտադ, Միւնխէն, Մոնպելիէ, Բեռն, Ժընեւ եւ Լօզան: Պատգամաւորի ընտրութեան մասնակցած ընկերների ընդհանուր թիւր հաւասար է 70–72ի:

Բերլինի դաշնակցական ուս. խումբը բաղկացած է մօտ 20 հոգուց: Սրանց գործունէութիւնը արտայայտուել է թէ՛ մի շարք ժողովներով՝ նուիրուած մեր ծրագրային կամ կուսակցական հարցերի քննութեանը, թէ՛ երեկոյթներով եւ թէ՛ դրամական օժանդակութեամբ:

Դարմշտադի խմբի անդամների թիւը 13 է. նոյնպէս ունենում են խմբական ժողովներ, երեկոյթներ եւայլն:

Միւնխէնում դաշնակցական խմբի անդամների թիւը 7 է: Սրանք ընտրութեան ժամանակ դրել էին իրենց առանձին թեկնածուն:

Մոնպելիէում կայ միայն մի դաշնակցական եւ սա մասնակցել է ընտրութեանը իբրեւ «Ջանք»ի նախկին անդամ:

Բեռնի դաշնակցականները 6 հոգի են:

Լօզանում դաշնակցական խումբ չկայ. կան անհատներ, թուով 8 հոգի, որոնք նոյնպէս ընտրութեան ժամանակ իրենց թեկնածուն էին դրել:

Ժընեւի դաշնակցական «Ջանք» խումբը բաղկացած է մօտ 20 հոգուց. մեծամասնութիւնը իրեն համակրող է համարում: Այս խմբին էր յանձնուած պատգամաւորի ընտրութեան գործը առաջ տանելու հարցը: «Ջանք»ի գործունէութիւնը վերջին ժամանակներս սահմանափակուել է խմբական ժողովներով:

Վերոյիշեալ քաղաքների դաշնակցական ուսանողութիւնը, ծրագրային կամ օրակարգի այս կամ այն կէտի մասին, իւր կարծիքներն է բերել Ընդհ. Ժողով, որ եւ կցւում են սոյն տեղեկագրին եւ ի նկատի կ'առնուեն երբ համապատասխան հարցերի քննութեանը կը գանք: Առայժմ աւելորդ չեմ համարում հետեւեալ տեղեկութիւնը տալ: Մեր բոլոր ուսանողները գրեթէ առանց բացառութեան սոցիալիստներ են: Օրուայ խնդիրը նրանց համար Տաճկահայոց դատի եւ Կովկասեան գործունէութեան փոխադարձ յարաբերութեան խնդիրն է, որի նկատմամբ գլխաւոր տեսակէտները հետեւեալներն են. 1. Փոքրամասնութիւնը գտնում է, որ այդ երկու գործերը անմիջապէս եւ ամբողջապէս պէտք է իրարից բաժանել եւ յանձնել իրարից անկախ կուսակցութիւնների: 2. Մեծամասնութիւնը այն կարծիքին է, որ այդ երկու դատերը պէտք է մնան միեւնոյն կուսակցութեան մէջ, միայն գործը պէտք է բաժանել կազմակերպօրէն, այսինքն գործունէութեան երկու վայրումն էլ պէտք է լինեն առանձին կազմակերպութիւններ, որոնցից իւրաքանչիւրը անկախ է իւր տեղական գործերում, իսկ ընդհանուր գործերի համար այդ մարմինները ունին մի ընդհանուր ֆեդերատիւ (2) մարմին: Այս կարծիքի ներկայացուցիչները կոչւում են ֆեդերալիստներ: Վերջիններիս մէջ եւս նկատւում է երկու հոսանք. փոքրամասնութիւնը կազմակերպական ֆեդերացիան համարում է իբրեւ մի ժամանակաւոր պալիատիւ(3), որ պէտք է մնայ մինչեւ դաշնակցական մասսաների համար ակներեւ կը դառնայ, որ այդ երկու գործերը միասին վարել անհնարին է. իսկ մեծամասնութիւնը այդ ֆեդերացիայի վրայ նայում է իբրեւ կուսակցական սկզբունքի մարմնացման վրայ եւ գրաւում է, որ դա երկու դատերի յարաբերութեան համար մշտական ձեւ պէտք է նկատել:

Այժմ մի քանի տեղեկութիւններ տանք Եւրոպայի դաշնակցական ուսանողութեան կուսակցական տրամադրութեան մասին:

Ոչ մի կուսակցութեան պատկանող ուսանող այնքան անգիտակ չէ դէպի իւր կուսակցութեան ծրագիրն ու տակտիկը, որքան դաշնակցական ուսանողը: 16 տարուց աւելի է որ Դաշնակցութիւնը գոյութիւն ունի եւ, այսքան ժամանակամիջոցում, նրա անդամների մէջ դեռ մի պարզ հասկացողութիւն չկայ այդ կուսակցութեան ֆիզիոնոմիայի մասին: Թողնենք մի կողմ սոցիալիզմի գաղափարը, որ ինչպէս մեր սկզբնական ծրագրում սաղմնային վիճակով հանդէս է եկել՝ այնպէս էլ մնացել է. վերցնենք այնպիսի խնդիրներ, որոնք մեր կուսակցութեան բնորոշ կողմերն են կազմում ըստ էութեան. վերցնենք մեր քաղաքական ֆեդերացիայի գաղափարը, վերցնենք կազմակերպական ապակենտրոնացման սիստեմը, վերցնենք տեռորական խնդիրը, ցուցական գործունէութիւնը եւն. եւն.: Սրանցից ոչ մէկը կուսակցական գրականութեան մէջ տեսականօրէն պարզուած չէ: Իսկ ուսանողութիւնը իւր դրութեամբ արդէն գլխաւորապէս այս հարցերի տեսական կողմով է հետաքրքրւում: Պարզ չէ՞ որ նա՝ ուսանողութիւնը՝ կամաց-կամաց պէտք է իրեն կտրուած զգար կուսակցական կեանքից եւ չէզոքանար ընդհանուր գործունէութիւնից, քանի որ այդ ընդհանուր գործունէութիւնը կայանում էր մի շարք գործնական ձեռնարկների մէջ, որոնք կենտրոնացած են եղել միշտ որոշ թուով մարդկանց ձեռքում: Միակ գործը, որի մէջ Եւրոպայի դաշնակցական ուսանողները ակտիւ մասնակցութիւն ունենալ կարող էին՝ դա եւրոպական պրոպագանդան է. բայց այդ հարցը եւս կուսակցութեան գրականութեան մէջ ուսումնասիրուած չէ. մինչ այժմ մենք չգիտենք թէ եւրոպական շահերի կոնստելացիան(4) մեր դատի նկատմամբ ինչպիսի՛ է. մենք չգիտենք թէ մեր պրոպագանդը ուղղուած է Եւրոպայի գո՞ւթը շարժելուն, թէ նրան ի՛ւր իսկ շահերին իրազեկ անելուն... Եւ երբ անցեալ տարի Բերլինի ուսանողների մէջ հարց էր ծագել մի կոնֆերանս կազմել եւ մեր դատի մասին խօսելու հրաւիրել յայտնի գերմանացիների՝ այս հարցը այնպիսի փոթորիկ հանեց ուսանողների մէջ, որ որեւէ գործնական քայլի մասին խօսք լինել չէր կարող: Ոմանք ծիծաղում էին բացարձակապէս դիպլոմատիայի(5) միջոցով մեր դատը յաջողեցնելու մտքի վրայ. ոմանք, ընդհակառակը, նրան լուրջ նշանակութիւն էին տալիս. ուրիշները միջամտութեան խնդիրը կապում էին ընդհանուր Տաճկահայաստանի շարժումների հետ, ոմանք զուտ հայկական դատի հետ եւն. եւն....: Պարզ է, որ այսպիսի խայտաբղէտ կարծիք ունենալով միեւնոյն գործի մասին՝ ուսանողները ոչինչ անել չէին կարող եւ չկարողացան անել: Ճիշդ է, անցեալներում ուսանողները այս ուղղութեամբ որոշ գործնական քայլեր արել են. սակայն այդ այն ժամանակն էր, երբ ուսանողութիւնը քաղաքականապէս այնքան հասունացած չէր, որ ամէն բանի քննադատօրէն վերաբերուէ: Այժմ ժամանակները փոխուել են եւ ու-

սանողութիւնը, իբրեւ գիտակից տարր, ուզում է իմանալ թէ ինչո՞ւ է կատարւում այս պրոպագանդը, ի՞նչ արժէք ունի նա եւն. եւն.:

Դաշնակցական մտքի անշարժութիւնը վատ է անդրադարձել մեր ուսանողութեան վրայ նաեւ մի այլ տեսակէտից: Առհասարակ աչքի ընկած երեւոյթ է, որ ամէն տեղ դաշնակցական ուսանողները աւելի քիչ են զարգացած քան ուրիշ կուսակցութեան պատկանող ուսանողները: Սրա պատճառը գլխաւորապէս այն է, որ մինչդեռ ուրիշ կուսակցութիւնները իրենց անդամներին մտաւոր սնունդ եւ մտածելու նիւթ են տալիս, մեր կուսակցութիւնը այդ մասին ոչ մի հոգատարութիւն չի տարել. դաշնակցական ուսանողները, իբրեւ կուսակցականներ, սովորել են մի տեսակ մտաւոր ծուլութեան: Եւ երբ Ռուսաստանի շարժումների հետեւանքով ամէն տեղ կուսակցական կեանքը փոթորկուեց եւ տարբեր կուսակցութիւնները իրար դէմ ծառացան՝ այն ժամանակ ուրիշ կերպով նկատուեցաւ թէ որքա՛ն յետ է մնացել մեր ուսանողութիւնը հասարակական խնդիրներում...:

Ներկայումս ուսանողութեան կուսակցական տրամադրութիւնը այսպիսի է: Նա ամէն տեղ կենդանի հետաքրքրութիւն ունի այն մասին թէ ի՛նչ է դառնալու Դաշնակցութիւնը առաջիկայում, ինչպէ՞ս է նա դուրս գալու իւր առաջ դրած ծանր հարցերի տակից. սակայն կազմակերպուելու ոչ մի տրամադրութիւն չկայ. երբ խօսք է լինում կազմակերպելու՝ անմիջապէս այս հարցն են տալիս.— «Ծանուն ինչի՞ կազմակերպուենք. ո՞րն է այն ծրագիրը, որի շուրջը պէտք է խմբուենք»: Այնպէս որ ներկայումս ամենահրատապ խնդիրը ուսանողութեան համար՝ դա ծրագրի խնդիրն է: Եթէ Ընդհանուր Ժողովին յաջողուեցաւ մի այնպիսի ծրագիր կազմել, որ բաւարարութիւն տայ դաշնակցական ուսանողութեանը, դա մի նոր դարագլուխ կը լինի ուսանողութեան համար. իսկ եթէ այդ բանը չյաջողուեցաւ՝ հետեւանքը պարզ է. ուսանողութիւնը կամաց-կամաց կ'անջատուի Դաշնակցութիւնից եւ կը խմբուի այն կուսակցութիւնների շուրջը, որոնք իրենց ծրագրով աւելի՛ են համապատասխանում նրա հայեացքներին եւ տրամադրութեանը:

Պատգ. Եւրոպայի դաշնակցական ուսանողութեան՝

ԱՐՇԱԿ ԻՍԱՀԱԿԵԱՆ

(1) Դիմագծութիւնը:
(2) Դաշնակցային:
(3) Ժամանակաւոր դարման, հնարք:
(4) Համաստեղութիւնը՝ համակարգի իմաստով:
(5) Դիւանագիտութեան:

4.— ԵՒՐՈՊԱՑԻ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ԲԵՐԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

Ա.— ՄԻՒՆԽԷՆ

Միւնխէնի ուսանողները գտնում են, որ

I Տեսորը մեր գործունէութեան մէջ անհրաժեշտ է:

II ա) Հայ-Թուրքական կռուի մէջ, Դաշնակցութիւնը պէտք է առաջնորդուի որքան հնարաւոր է համերաշխութեան եւ ինքնապաշտպանութեան սկզբունքով:

բ) Ռուսական ազատագրական շարժման մէջ, Դաշնակցութիւնը համերաշխ մարտակից լինելով միւս յեղափոխական կուսակցութիւնների հետ՝ առանձին դէպքերի համար պէտք է իրեն վերապահէ միանալ կամ չմիանալ:

գ) Դաշնակցութիւնը Ռուսաստանում ակտիւ յեղափոխական գործունէութիւն պէտք է ունենայ, ո՛չ «ինքնապաշտպանութեան հողի վրայ», ինչպէս որոշել է նախորդ Ընդհ. Ժողովը:

III ա) Բռնի հանգանակութիւնը ճարահատեալ պէտք է ընդունել հաղուագիւտ դէպքերում:

բ) Դրամական եւ կարգապահական քննութիւնը անհրաժեշտ է:

գ) Զինապայթուցական դպրոցը հիմնելը ցանկալի է:

IV Օտար յեղափոխական կուսակցութիւնների հետ անհրաժեշտ է բարեկամական կապեր հաստատել:

V ա) «Դրօշակ»ի հրատարակութիւնը այժմեան պայմաններում ազատ երկրներում կարող է միայն լինել, ի հարկէ որքան կարելի է [մօ՞տ] բուն Երկրին:

բ) Բացի Պարիզի «Pro Armenia»ից, այլ օրգաններից միայն մեծ ծախքեր եւ քիչ օգուտներ կարելի է սպասել:

Բ.— ԼՕԶԱՆ

Լօզանի ուսանողները գտնում են, որ պէտք է պահպանել Դաշնակցութեան կուսակցական ամբողջութիւնը զուտ կազմակերպութիւններով՝ Տաճկահայաստանի եւ Կովկասի գործերը վարելու համար:

Գ.— ԺԸՆԵՒ

I Ընդհ. ծրագրի հիմն. սկզբունքը

Դաշնակցութեան «Ջանք» ուսանողական խումբը Դաշն. ընդհ. ծրագրի մշակման խնդրի վերաբերմամբ, մտքերի փոխանակութիւնից յետոյ, միաձայն ընդունեց, որ այն գլխաւոր սկզբունքը, որ եղել է եւ լինելու է մեր ծրագրի հիմքը՝ սոցիալիզմն է, եւ այդ հիմնական սկզբունքին է, որ կուսակցութիւնը երկու վայրերում (Տաճկահայաստան եւ Կովկաս) պէտք է համաձայնեցնի իւր գործունէութիւնը՝ համաձայն պատմական էւոլիւցիայի այն տարբեր էտապներին(1), որոնց մէջ գտնւում են այդ երկու հայաբնակ վայրերը:

II Գործունէութիւն Տաճկաստանում եւ Կովկասում

1. Դաշնակցութեան գործունէութիւնը Կովկասում պէտք է տարուի գիւղացիական եւ բանուորական շահերի պաշտպանութեան հողի վրայ՝ առաջնորդուելով Հ. Յ. Դաշն. Խորհրդի առաջարկած Կովկասեան Նախագծի հիմնական կէտերով:

Տաճկահայկական դատը պէտք է տարուի իւր նախկին ծրագրով:

2. Կովկասեան յեղափոխական շարժումը իբրեւ մի մաս համառուսական յեղափոխութեանց՝ իւր յաղթանակով զարկ է տալու բոլոր երկրների ազատագրական շարժումներին՝ մասնաւորապէս Տաճկական եւ Տաճկա-Հայոց յեղափոխական շարժման:

3. Յեղափոխական գործունէութիւնը, նուիրուած Կովկասահայի քաղաքական եւ տնտեսական շահերի պաշտպանութեանը՝ նպաստաւոր է միաժամանակ եւ տաճկահայ ազատագրական շարժման տեսակէտից. նա յեղափոխականացնելու է Կովկասի ժողովուրդը, որով կը ստեղծուի աւելի գիտակից վերաբերմունք դէպի Տաճկահայ դատը:

Երկու մասի յարաբերութեան խնդիրը

1. Իւրաքանչիւր վայր պէտք է բաւականանայ իւր տեղական գործիչներով. բացառութիւն անել Տաճկահայկական վայրը, որի տնտեսականը չի համապատասխանում նախագծուած ծրագրային չափերին: Ուստի ընտրել մի Պատասխանատու Մարմին, որի պարտականութիւնը լինի զէնք, դրամ եւ մասնագէտ ուժեր հայթայթել Տաճկահայաստանի համար:

2. Գործունէութեան վայրերին հարեւան մարմինները պարտական են ցոյց տալ բարոյական եւ նիւթական աջակցութիւն:

3. Կովկասում իւրաքանչիւր Կ. Կոմիտէ պարտաւոր է իւր եկամտի 60%ը յատկացնելու տաճկահայ դատին, բացառութեամբ բանուորական եւ գիւղացիական միութիւնների մասսաների: Գաղութները իրենց ամբողջ եկամտի 80%ը յանձնում են, նախկին ձեւով, տաճկահայոց դատին:

4. Դրամական հաշիւների սիստեմը կանոնաւորութեան սահմանի մէջ պահելու համար, ընտրել մի մարմին, լիազօրութիւն տալով նրան բոլոր մարմինների հաշիւների քննութիւնը կատարել եւ ապա այդ հրատարակել «Դրօշակ»ում:

Ծանօթ.— Մի երկու մարմինների կողմից առաջարկներ դեռ չեն ստացուած:

Դ.— ՊԵՐԼԻՆ

Բերլինի դաշնակցական ուսանողութեան կարծիքը՝ Տաճկահայ դատի եւ Կովկասեան գործունէութեան յարաբերութեան մասին:

I Մեծամասնութեան կարծիքը

Նկատելով որ, Թիւրքիայի եւ Ռուսաստանի տարբեր քաղաքական, տնտեսական եւ սոցիալական պայմանների շնորհիւ, մի կուսակցութիւն չի կարող վարել երկու դատերն եւս եւ դրա համար հարկաւոր են զանազան(2), իրարից անկախ կուսակցութիւններ,

Նկատելով որ ներկայի վիճակի եւ հայ աշխատաւոր մասսաների դասակարգային անգիտակցութեան պատճառով շատ վնասակար հետեւանքներ առաջ կը գան, եթէ անմիջապէս եւ ամբողջապէս այդ երկու դատերը իրարից բաժանուեն,

Բերլինի դաշնակցական ուսանողութիւնը կարեւոր է համարում, որ երկու դատերի համար ստեղծուեն դատ-դատ կազմակերպութիւններ՝ իւրաքանչիւրը իւր սահմաններում կատարելապէս ինքնուրոյն, բայց իրար հետ կապուած դաշնակցական (ֆեդերատիւ)(3) կապերով:

II Փոքրամասնութեան կարծիքը

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Թիւրքահայ իրականութիւնը թէ՛ քաղաքական, թէ՛ սոցիալական եւ թէ՛ տնտեսական տեսակէտով տարբեր է Կովկասեան իրականութիւնից,

Ի նկատի ունենալով, որ Թիւրքահայ դատը եւ Կովկասի աշխատաւորական գործը տեղի ունին երկու տարբեր պետութիւնների մէջ,

Ի նկատի ունենալով, որ Թիւրքահայ յեղափոխական դատը ազգային դատ է եւ կարող է գրաւել տարբեր կովկասահայ ժողովրդի բոլոր խաւերից, մինչդեռ մեր կովկասեան գործը աշխատաւորական է, սոցիալիստական եւ միջազգային,

Ի նկատի ունենալով, որ օժանդակութիւնը տաճկահայ ժողովրդի ազատագրութեան գործին պարտադիր չէ կարող լինել կովկասահայ աշխատաւոր ժողովրդի եւ սրա կուսակցութեան համար, այլ կը լինի միայն կամաւոր,

Մենք, Բերլինի սոցիալ-բիւրոկրատներ դաշնակցականներս(4) այն կարծիքին ենք, որ տաճկահայ եւ կովկասահայ աշխատաւոր ժողովրդի շահերը պահանջում են զատել միանգամայն այդ դատերը եւ յանձնել նրանց երկու անկախ կուսակցութիւնների:

***

Սոյն երկու բանաձեւերը ուղարկուած են Ժընեւի «Ջանք» կոմիտէին, որպէսզի պատգամաւորի ընտրութեան ժամանակ պարզ լինի Բերլինի ուսանողութեան թեկնածուների հայեացքը այս խնդրում։

Եւրոպայի հայ ուսանողութեան պատգամաւոր՝
ԱՐՇԱԿ

(1) Պատմական հոլովոյթի այն տարբեր հանգրուաններին։
(2) Ընուած է *տարբեր* իմաստով։
(3) Գէտք է ըլլայ՝ *դաշնակցային*։
(4) Որակումը առնուազն ինքնուրոյն է եւ տաբօրինակ...

Ե.— ԲԵՐԼԻՆԻ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐԸ՝ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՐ

1· *Հասարակութեան զարգացման ո՞ր հայեցողութեան պիտի յարի Դաշնակցութիւնը։*

2· *Ազգայի՞ն կուսակցութիւն է նա. եթէ այո, ի՞նչ բովանդակութիւն պէտք է դնել այդ հասկացողութեան մէջ։*

3· *Դաշնակցութիւնը եւ Տաճկահայ խնդիրը։*

4· *Դաշնակցութիւնը՝ որպէս սոցիալիստական կուսակցութիւն (որպիսի՞ սոցիալիզմ)։*

5· *Ժողովրդի ո՞ր տարրերն են Դաշնակցութեան բալիստ(5) (աշխատաւոր տերմինի(6) մեկնութիւնը)։*

6· *Դաշնակցութեան քաղաքական ծրագրի* minimum*ը (ապակենտրոն դեմոկրատիայի ո՞ր ձեւը)։*

7· *Հողային խնդիրը (ագրարային ծրագիրներից ո՞րն է ամենանպատակայարմարը հայ աշխատաւոր գիւղացիութեան համար)։*

8· *Դաշնակցութիւնը եւ բանուորութեան շարժումը (արհեստակցական, սպառողական, արդիւնաբերական եւ այլ հարցեր)։*

9· *Դաշնակցութեան կազմակերպութիւնը եւ վերակազմումը։*

10· *Դաշնակցութեան վերաբերումը* ա) *դէպի Ռուս. յեղափոխութիւնը,* բ) *դէպի հայ ինքնապաշտպանութիւնը (տակտիկա)։*

11· *Դաշնակցութեան վերաբերումը դէպի քաղաքական կուսակցութիւնները. Դաշնակցութեան եւ սոց* [*խալիստական*] *պրոպագանդը Կովկասեան այլ ազգի ժողովրդների մէջ։*

12· *Դաշնակցութեան վերաբերումը դէպի ազգային, պետական եւ հասարակական հիմնարկութիւնները։*

13· *Դաշնակցութեան պրոպագանդի, մամուլի եւ գրականութեան խնդիրը։*

(5) Հիմքը, խարիսխը։
(6) Եզր, եզրաքանութիւն։

Զ.— ԱՊԱՌԱԺԻ ՇՐՋԱՆ

Ապառաժը (Շուշի, Ղարաբաղ) Սարուստանի (Կովկաս եւ Ռուսաստան) կուսակցական տասը շրջաններէն մէկն էր, երբեմն կեդրոնական Կոմիտէութեան, երբեմն սոսկ կոմիտէութեան մը ցենզով, բայց միշտ ուղղակի կերպով կապուած Արեւելեան Բիւրոյին։

4րդ Ընդհանուր ժողովի թուղթերուն մէջ մնացած է այդ շրջանին վերաբերեալ մէկ գրութիւն միայն, — *Ապառաժի Կ. Կ.ի Դեկտեմբեր* 1906 *թ. Շրջանային ժողովում ընդունուած բանաձեւերը*, — զոր կու տանք ստորեւ։ Կ. Կ.ի տեղեկագիր կամ Շրջանային ժողովի ատենագրութիւն չենք գտներ։ Բանաձեւերու գրութիւնը (մօտ 3 մեծ էջ, սեւ մելանով) ստորագրուած է շրջանի պատգամաւոր Բարսեղեանի կողմէ։

Իբրեւ մօտաւորապէս աշխարհագրական միեւնոյն շրջանին վերաբերեալ գրութիւն, հրատարակութեան կու տանք նաեւ այլ փաստաթուղթ մը — *Տեղեկագիր «Սիւնիք»ի շրջանի* — «Սիւնիքի (Զանգեզուր) Ընկ. Խորհուրդ»ի անդամներու ստորագրութեամբ։ Այս գրութիւնը 23 Դեկտ. 1907 թուակիր է, եւ ուրեմն ներկայացուած չէ 4րդ Ընդհանուր ժողովին՝ ներկայիս գտնուելով հանդերձ անոր թղթածրարներուն մէջ։ Գրուած է սեւ մելանով եւ կը գրաւէ երեք ուղիղ մեծ էջ։

1.— ԱՊԱՌԱԺԻ Կ. Կ.Ի ԴԵԿՏԵՄԲԵՐ 1906 Թ. ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԸՆԴՈՒՆՈՒԱԾ ԲԱՆԱՁԵՒԵՐԸ

Կռիւ Ռուսաստանում

Ակտիւ մասնակցութիւն ունենալ Ռուսաստանի յեղափոխական շարժման մէջ՝ ամէն տեսակ միջոցներով եւ ձեւերով, որոնք դէմ չեն մեր ծրագրին։ + 26 *ձայն։*

Ինքնապաշտպանութիւն Կովկասում

1· *Ինքնապաշտպանութեան գործը յանձնել ժողովրդին անմիջապէս այն վայրերում, ուր տեղական դաշնակցական մարմինները կը գտնեն տեղական ժողովուրդը բաւականաչափ պատրաստ՝ ինքնապաշտպանութիւնը պատուաւոր կերպով տանելու համար եւ ուր դաշնակցական մարմինների եւ անհատների ագիտացիայի եւ պրոպագանդի շնորհիւ արդէն ժողովրդից ստեղծուած են ինքնապաշտպանութեան մարմիններ. իսկ ուր չկան, առաջ բերել այդպիսիները։ Դաշնակցութիւնը այդ մարմինների վրայ կոնտրոլի դեր է ստանձնում, ձգտելով անհնարին դարձնել այդպիսի մարմինների մէջ վնասակար տարրերի մուտքը թէ՛ ընդհանուր ժողովրդական եւ թէ զուտ ինքնապաշտպանական տեսակէտից։* +13 *ձայն,* —5 *դէմ,* 3 *ձեռնպահ։*

Իսկ ի նկատի ունենալով Շուշու ինքնապաշտպանութեան հարցի բացառիկ դրութիւնը, անմիջապէս յանձնել ժողովրդին՝ հաշիւներ ներկայացնելուց յետոյ։

2· *Դաշնակցութիւնը յանձնում է ժողովրդին ինքնապաշտպանութեան գործը անմիջապէս, կազմակերպելով ամէնուրեք ինքնապաշտպանութեան մարմիններ՝ ընտրուած ժողովրդից, որոնք տանելու են ինքնապաշտպանութեան բոլոր գործերը. Դաշնակցութիւնը աշխատում է, որ այդ մարմինների մէջ ընտրուեն աշխատաւոր մասսայի ներկայացուցիչներ։* +9, —10, 2 *ձեռնպահ։*

Տաճկահայ եւ Կովկասահայ խնդիրները

Փոխադարձութեան բանաձեւերը՝

ա) *Անջատել Կովկասահայ եւ տաճկահայ դատերը միմեանցից։* +3, —23։

բ) *Ես կողմնակից եմ այդ երկու դատերի բաժանման. բաժան ծրագրով, բաժան մարմիններով, տակտիկայով, ֆինանսներով եւայլն։*

Տաճկահայ շարժումը ղեկավարող մարմինների հետ մենք կարող ենք կապուած լինել այն չափով, ինչ չափով կարող են կապուել մի այլ յեղափոխական կուսակցութեան հետ, օր.՝ ռուս սոցիալ-յեղափոխական կուսակցութեան հետ, վրաց ֆեդերալիստների եւ այլ ֆեդերատիւ սկզբունքներով գործող կուսակցութիւն-

ների հետ։ Կապը կը լինի զուտ բարոյական հողի վրայ. ոչ մի պատասխանատու պարտականութիւն այդ խնդրի վերաբերմամբ մեզ վրայ վերցնել չենք կարող։ Թէ՛ տաճկահայերը եւ թէ ռուսահայերը (յեղափոխական մարմինները) գործավարութեան եղանակը եւ տակտիկան որոշում են իւրաքանչիւրը իր տեղական պայմանների համաձայն։ Այն տակտիկային, որով մինչեւ այժմ գործել են Տաճկահայաստանում, բոլորովին վերջ տալ, յենակէտ ընտրելով ոչ միայն հայ մասսան, այլ ամբողջ Թիւրքիայի բոլոր տառապող, ճնշուած ժողովուրդները։ Յեղափոխական կազմակերպչական պրոպագանդա սկսել այդ բոլոր ժողովրդների մէջ, յեղափոխական տրամադրութիւն առաջ բերել զատ-զատ ազգութիւնների աշխատաւոր տարրերի մէջ եւ ընդհանուր կռիւ սկսել միապետութեան եւ բռնութեան դէմ։ Գոյութիւն ունեցող յեղափոխական կազմակերպութիւնների հետ միանալ այն կէտերում, որտեղ խոշոր սկզբունքային տարբերութիւններ չկան եւ դրանց համաբաշխ գործունէութեամբ տապալել միապետութիւնը։

ԱՐՍԷՆ ՎԱՐԱՆԴԱՑԻ

գ) Դաշնակցութիւնը ձգտելու է հայ աշխատաւոր մասսաների կազմակերպմանը եւ բարեփոխելու է քաղաքական եւ տնտեսական պայմանները Թէ՛ Տաճկահայաստանում եւ Թէ Ռուսաստանում, մի ընդհանուր ծրագրով։ Ի նկատի ունենալով այդ երկու երկրների տարբեր պայմանները, գործել տարբեր եղանակով ըստ տեղի յարմարութեանց։ Տաճկահայկական դատ կամ ազատագրական մի շարժում առանց տաճիկ, քիւրտ եւ միւս հպատակ ժողովուրդների մասնակցութեան՝ անպատակ է եւ կորստաբեր, մինչեւ Տաճկաստանում ապրող բոլոր դժգոհ տարրերը չգիտակցեն իրենց ընդհանուր շահերը եւ կռիւ չյայտարարեն սուլթանիզմի դէմ, ճիշդ այնպէս, ինչպէս Ռուսաստանում ռուսահայ խնդիրը առանց միւս ճնշուած ազգերի ընդհանուր յեղափոխութեան աննպատակ կը լինի։ Հիմնուելով այդ բոլորի վրայ Թողնել մինչ այժմ մղած պարտիզանական կռիւների տակտիկան, պատրաստուել ընդհանուր յեղափոխութեան, յենակէտ ընդունելով ոչ միայն հայ աշխատաւոր մասսան, այլ Երկրում ապրող բոլոր ճնշուած ժողովուրդները։

ՀԱՅՐՈՒՄ

Մեծամասնութեան բացատրութիւն

Ընդունելով ակտիւ կռիւ Ռուսաստանում ներկայ ռեժիմի դէմ, ընդունելով աշխատաւոր մասսաների դասակարգային շահերի պաշտպանութիւնը Թէ՛ Կովկասում եւ Թէ Տաճկահայաստանում, կանգնել ազգային շահերի լայն տեսակէտի վրայ եւ ոչ մի դէպքում չբաժանել Տաճկաստանի եւ Կովկասի հայկական երկու խոշոր հատուածները եւ նրանց դատը, Տաճկահայ դատի անջատումը Կովկասահայ դատից գտնելով միանգամայն աննպատակայարմար եւ կորստաբեր առաջինի համար։ (Իսկ տաճկահայ դատի նկատմամբ մինչեւ այժմ մեր ունեցած տակտիկան փոխել համաձայն ներկայ պայմանների, սակայն այդ Թողնել աւելի ծանօթ եւ նամանաւանդ Երկրում գործող ընկերներին)։ +13, —10։ 2 ձեռնպահ։

Բանաձեւի առաջին մասին համաձայն են եւս 8 հոգի, երկրորդ մասին (փակագծի մէջ) բացասական վերաբերուելով հանդերձ։ Ուրեմն՝ +13+8=21. —3։ 2 ձեռնպահ։

Ապառաժի պատգամաւոր՝

ԲԱՐՍԵՂԵԱՆ

2.— ՏԵՂԵԿԱԳԻՐ «ՍԻՒՆԻՔԻ» ՇՐՋԱՆԻ

Ի.— Ծագեմոր (Սիւնիք) եւ Լեռնաստան։— Թիւրքահայկական ընդհարումներից յետոյ, չնորհիւ տիրող ընդհանուր քաոսային դրութեան, համարեա ոչ մի վայրում կազմակերպութիւն, ըստ նոր ծրագրի, գոյութիւն չէ ունեցել եւ չունի։ Դրա պատճառն եղել է ոչ Թէ ժողովրդի յեղափոխական տրամադրութեան պակասիլը կամ նրա յեղափոխութիւնից սառչիլը, այլ՝ գործիչների շրջանից հեռանալը. իսկ հատ ու կէնտ եղածներն էլ բոլորը ծանրաբեռնուած հազար ու մի կազմակերպական գործերով, հազիւ-հազ կարողացել են ընկերների հետ միմիայն յարաբերութիւն պահպանել։ Ճիշդ է, որ մենք մեր ծրագիրն ըմբռնող ու գիտակից ոչ միայն մասսա կամ խմբեր չենք ունեցել ու չունենք, այլև անհատներ, բայց պէտք է ասել, որ մեր շրջանի շատ Թէ քիչ գիտակից համարուող անհատներն ու խմբերը շատ լաւ են տրամադրուած ընդհանրապէս դէպի Դաշնակցութիւնը, որի պրեստիժը տակաւին բարձր է ամբողջ շրջանում։ Յոյս ունենք, որ այս քաղաքական բացառիկ օրերում, ուր աւելի քան ժամանակ ունենք, երբ պարզենք մեր ծրագիրը, նրա սկզբունքներն ու աշխարհահայեացքը, կ'ունենանք լաւ կազմակերպուած ու կանոնաւոր քաղաքական խմբակներ, գիւղացիական միութիւններ եւ հետզհետէ ընդարձակուելով կը կազմեն կոոպերատիւ ընկերակցութիւններ։

Թէ՛ Սիւնիքի եւ Թէ Լեռնաստանի շրջաններում կան ընկերական կազմեր, առաջինում՝ ժամանակաւոր նշանակովի ընկերական մի խորհուրդ, բաղկացած տեղական ընկերներից, որը նոր-նոր գործի է սկսել ուղարկուած նոր ընկերոջ հետ, իսկ երկրորդում՝ ընտրովի շրջանային ներկայացուցչական մի մարմին։

Հին-Բերդ։— . . . . . .

II.— Ներկայ քաղաքական մոմենտի պահանջները եւ Դաշնակցութեան տակտիկան։—

1) Ընդհանուր ռուսական շարժման մէջ։— *Դաշնակցութիւնը հայ իրականութեան մէջ որպէս մի ինքնուրոյն կուսակցութիւն, պէտք է չափազանց շրջահայեաց եւ վերապահ լինի ընդհանուր Ռուսաստանի յեղափոխական շարժման վերաբերմամբ։ Եթէ իսկապէս այդ շարժումը դրուած կը լինի իսկական ու լուրջ հողի վրայ, Ռուսաստանի անխտիր բոլոր յեղափոխական-սոցիալիստական-աշխատաւորական կուսակցութիւնները եւ այլ ընդդիմադիր կազմակերպութիւնները կը կազմեն դաշնակցային մի զօրեղ բանակ՝ ընդդէմ բռնակալութեան, որոշ մի ընդհանուր ծրագրով, այն ժամանակ անպայման Հ. Յ. Դաշնակցութեան սեպուհ պարտականութիւնը կը լինի ուժգին արձագանգ տալ այդ շարժման, ծայրագաւառից մինչեւ կենտրոնները, քաղաքական-տնտեսական հողի վրայ, եւ միեւնոյն ժամանակ ուղարկել մերոնցից Ռուսաստանի ներսերը տեռորական խմբեր ու երկիրը վերածել անարխիական դրութեան։ Իսկ քաղաքներում, ուր այժմ կատարեալ թմրութիւն է տիրում, մեռած է ժողովրդի յեղափոխական ոգին եւ հիասթափութիւն է տիրում բոլոր շրջաններում, անպայման եւ անմիջական կերպով ձեռնարկել մեծ տեռորների, որոնք աւելի քաղաքական բնոյթ են կրում, սկսելով պետական ամենաբարձր պաշտօնեաներից մինչեւ հասարակ մատնիչներն ու դաւաճանները, որոնք [տեռորները] բարձրացնում եւ վառ են պահում ժողովրդի յեղափոխական ոգին ու տրամադրութիւնը։*

2) Համերաշխ գործակցութեան մէջ այլ կուսակցութիւնների հետ։— *Դաշնակցութիւնը, որպէս մի աշխատաւորական սոցիալիստ-յեղափոխական կուսակցութիւն, պէտք է աշխատի որքան կարելի է համերաշխ գործակցութեան եւ սերտ յարաբերութեան մէջ մտնել միւս բոլոր հարեւան ազգերի Թէ՛ Թիւրքիայում, Թէ՛ Ռուսաստանում եւ Թէ Պարսկաստանում գոյութիւն ունեցող այն կուսակցութիւնների հետ, որոնց եւ մեր ծրագրի, սկզբունքների եւ աշխարհահայեացքի մէջ մեծ տարբերութիւն չկայ։ Յատկապէս ամենալուրջ ուշադրութիւն դարձնել Թիւրք Դէֆայի կուսակցութեան վրայ եւ անմիջական ու սերտ կապերով կապուել, որոնց գործակցութիւնը մեր հետ Թէ՛ Կովկասում եւ Թէ՛ Թիւրքիայում, ձեռք բերելու համար քաղաքական-տընտեսական ազատութիւն, անհրաժեշտ պահանջ է եւ մեր այդ նպատակին հասնելու համար ամենամեծ գործօնն ու գրաւականն է։*

3) Մեր աշխատաւորական քաղաքականութիւնը արիւստակցական, գիւղացիական և կոոպերատիւ միութիւնների միջոցաւ։— *Յարաբերութեան մէջ մտնել Ռուսաստանի ընդհանուր Թէ՛ արհեստակցական, Թէ՛ գիւղացիական եւ Թէ կոոպերատիւ միութիւնների Բիւրոների հետ, ու միշտ կապ պահպանել, որոշ հրահանգներ ստանալ եւ տալ, իսկ երբ կը հնչէ վճռական ժամը, միաժամանակ պայթեցնել ընդհ. յեղափոխութիւնը։*

Միութիւնները զեկավարելիս եւ նրանց գործնական քայլերին ուղղութիւն տալու ժամանակ, զեկավար սկզբունք ունենալ՝ բարձր պահելու յեղափոխական ոգին ու տրամադրութիւնը եւ չտարուել միայն հարցի տնտեսական կողմով, որով մասսային կը տանենք միայն [դէպի] պասսիւիզմ (կրաւորական կեցուածք)։ Այդ ուղղութեամբ էլ պրապագանդ անել միշտ։

III.— Դաշնակցութեան տակտիկան Թիւրքիայում։— *Ցանկալի է գործել այնտեղ եւս աշխատաւորական սոցիալիստական-յեղափոխական հողի վրայ. միևնոյն ժամանակ ուժեղ քաղաքական կռիւ մղել բռնակալ բեժիմի դէմ, գործակցելով Թիւրք յեղափոխականների հետ, եւ ուժեղ պրոպագանդ մղել երկու մասսաների մէջ, Թէ՛ բանաւոր եւ Թէ գրաւոր։*

IV.— Դաշնակցութեան տակտիկան Պարսկաստանում։— *Քանի որ Պարսկաստանի սահմանադրական շարժումն արդէն մեծ ծաւալ ստանալուց յետոյ ստեղծել է յեղափոխական շարժում, ցանկալի է, որ մեր այնտեղի մարմինները մասնակցեն այդ շարժման եւ ուժեղ գիտակցական պրոպագանդ մղեն երկու ժողովուրդների մէջ, մտցնելով ազատագրական, ռամկավարական եւ աշխատաւորական ոգին։ Իսկ Թիւրք-պարսկական կոնֆլիկտին (անհամաձայնութեան նկատմամբ) վերաբերուել շատ վերապահ կերպով, իսկ երբ օսմանեան զօրքերը կ'արշաւեն Սալմաստի վրայ — որը ցարդ եղել է Երկրի գործունէութեան ու յեղափոխութեան համար օրրան ու հանգրուան — միայն ա՛յն ժամանակ անհրաժեշտ է եւ պարտաւորուած՝ Դաշնակցութիւնը ուժեղ կերպով դուրս գալու, երբ ռուսական արջը չի մեկնի իր Թաթը այդ համեղ պատառի վրայ, երբ Թրքո-պուլկարական ընդհարումն անխուսափելի կը լինի եւ որ գլխաւորն է, երբ որ Երկրի (Շամի) մեր ընկերները նպատակայարմար կը սեպեն այդ արշաւանքը։ Իսկ հակառակ դէպքում՝ Թողնել այդ տեղական ժողովրդի կամքին։*

VI.— Դաշնակցութեան վերաբերմունքը դէպի ազգ. հիմնարկութիւնները։—

1) Պրոցեսներ։— *Այսպիսի քաղաքական պայմաններում անհրաժեշտ է ամէն տեղ ձեռքից չթողնել, անուշադրութեան մատնելով, ոչ մի կուլտուրական-*

կրթական–դպրոցական հիմնարկութիւն։ Գիւղերում պրոպագանդայի միջոցով գիւղական հասարակութիւնները տրամադրել եւ ամէն կերպ աջակցել, որ աշխատեն ամէն կերպ դպրոցական խիտ ցանցերով պատել բոլոր գիւղերը, դնելով նրանք համայնական հողի վրայ, բոլորովին անկախ հոգեւոր եւ պետական խնամակալութիւններից։

2) Կաթողիկոսական ընտրութիւններ։— *Նկատելով որ Դաշնակցութիւնը, իբրեւ սոցիալ–յեղափոխական կուսակցութիւն, սկզբունքային տեսակէտով մեր բարոյականը հակառակ է քրիստոնէական բարոյականին, որ մեր ընտրութեան մասնակցելը, կիսակիրթ ու կիսագիտակից գիւղացիութեան ու բանուորութեան կողմից սխալ ըմբռնման պատճառով, պիտի ծառայի ակամայից կղերականութեան պրեստիժի (վարկի) զարգացման եւ ամրապնդման, նկատելով կուսակցական ներկայ լուծում պահանջող հրատապ հարցերի առանց այն էլ երեսի վրայ ձգուած [ընելը], մինչդեռ մեր մասնակցելը կը խլէ մեր սակաւաթիւ գործող ընկերներից ոյժ եւ սուղ ժամանակ, վերջապէս նկատելով որ գոյութիւն ունեցող տնտեսական–քաղաքական անարդարութիւնները կարող են վերնալ միայն եւ միայն գիտակից աշխատաւորների կռուով ներքեւից եւ երբե՛ք կղերականութեան գերագոյն պաշտօնի ներկայացուցչից, մենք դէմ ենք որեւէ կերպ մասնակցութեան կաթողիկոսական ընտրութեան։*

VII։— Դաշնակցութեան վերաբերմունքը դէպի հասարակական անարխիան։— *Պրոֆեսիոնալ գողութեան եւ չանտաժի դէմ կռուել ուժեղ կերպով, միանգամայն աւելի տեղ տալով գիւղացիների խմբական գործակցութեան եւ ընդդիմադրութեան։*

VIII։— Ներքին կազմակերպչական հարցեր։—

Արհեստակցական, գիւղացիական, կոռպերատիւ միութիւններ եւ ազգութիւնների հարցը նրանց մէջ։— *Դաշնակցութեան դրօշի տակ կազմակերպել օտար ազգերին եւս, միայն մինչեւ այն ժամանակ, երբ նրանց միջից դուրս կը գան այնպիսի ուժեր, որոնք առանց մեզ կը կարողանան ղեկավարել իրենց խմբերը ու ուղղութիւն տալ նրանց։ Այնուհետեւ իրաւունք տալ առանձին խմբակներ կազմել եւ ֆեդերատիւ կերպով կապուել մեզ հետ։*

IX։— 1) Պրոպագանդիստներ պատրաստելու հարցը։— *Ցանկալի եւ անհրաժեշտ է գիւղական եւ գաւառական շրջանների համար պրոպագանդիստներ պատրաստել յատկապէս՝ որոնց պահանջը չափազանց ըդգալի է։*

2) Բանաւոր պրոպագանդի նիւթը։— *Առաջարկում ենք Ռայոնական ժողովում պատրաստել գաւառական քաղաքներում ու գիւղերում տարուելիք պրոպագանդայի համար որոշ նիւթերի ցուցակ։*

«Միւնիք»ի Ընկ. Խորհուրդ՝

Տ. ԱՇՈՏ
ՐՈԲԵՐՏ
ԿՈՍՄՈՊՈԼԻՏ
ԿԱՑԵՑԱԿ
ՍՈՒՐԷՆ

23 Դեկտ. 1907
Սիւնիք

XI.— ԱՅԳԵՍՏԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՈՒԹԻՒՆ

Այգեստանը — Գանձակ եւ շրջակայք — Սարուստանի (1) տասը շրջաններէն մէկն էր, Ղարաբաղին նման՝ մերթ կոմիտէական ցեղով, մերթ կեդրոնական Կոմիտէի չափանիշով։

Ժողովի ընթացքին Այգեստանի պատգամաւոր Ալեքսանդր Մաշուրեանի առած կարգ մը հակիրճ նոթերը եւ քուէարկուած բանաձեւերու արտագրութիւնները չհաշուած, Հ. Յ. Դաշնակցութեան 4րդ Ընդհանուր ժողովի թղթածրարներուն մէջ Այգեստանէն մնացած են երեք գրութիւններ, զորս հրատարակութեան կու տանք յաջորդաբար։

Առաջինը շրջանի եռամեայ տեղեկագիրն է, ըստ երեւոյթին իր վերջնական ձեւին մէջ խմբագրուած կամ ամբողջացուած Մաշուրեանի իսկ կողմէ (որ ներկայ եղած չէր զինք Ընդհանուր ժողովի պատգամաւոր ընտրած Շրջանային ժողովին), Ընդհանուր ժողովի օրերուն։ Տեղեկագիրը, իր յաբակից նոթերով ու յաւելումներով, կը գրաւէ միջակ չափի տետրակի մը 50–51 էջերը։ Գրուած է սեւ մելանով։

Յաջորդ վաւերաթուղթը Ընդհանուր ժողովի օրերուն (24 Փետրուար 1907) Ալ. Մաշուրեանի կողմէ Այգեստանի Կեդր. Կոմիտէին գրուած նամակ մըն է, շահեկան մանաւանդ՝ 4րդ Ընդհանուր ժողովի պատգամաւորներու մէկ մասին (համառուսական յեղափոխութեան տենդով բռնուած եւ անջատման կողմնակից) կրած յուսախաբութեանց եւ յոռետեսութեան իբրեւ արտայայտութիւն։

Երրորդը Այգեստանի Շրջանային ժողովին կողմէ քուէարկուած բանաձեւ–առաջարկներու շարք մըն է, սեւ մելանով գրուած երկար չափի հաստ թուղթի վրայ, որուն փակցուած է նամակի փոքր չափի երկթերթ թուղթ մը։ Բանաձեւերը, ինչպէս տեղեկագիրն ու նամակը, բնորոշիչ են այդ թուականներու կովկասահայ երիտասարդութեան կամ մտաւորականութեան կարեւոր մէկ մասի տրամադրութիւններուն եւ միջազգային–ընկերվարական ձգտումներուն տեսակէտէն։

Բարեբախտաբար, 4րդ Ընդհանուր ժողովը շուտով պիտի ըսէր բոլորին՝ Հ. Յ. Դաշնակցութեան իմաստուն, պատկառելի ու վճռական խօսքը, վերածուելով «աջ»ն ու «ձախ»ը, կազմակերպութենէն դուրս շպրտելով ամենղղայ ծայրայեղները եւ հայութեան ազգային–ազատագրական ու ընկերային–յեղափոխական պայքարները միաւորելով Դաշնակցութեան միակ ու հարազատ դրօշին տակ։

1.— ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱՅԳԵՍՏԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ Հ.Յ.Դ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ (1907 Թ. ՓԵՏՐ.) ՀԱՄԱՐ

Կարդացուած 16/IIIի Ընդհանուր ժողովի նիստում Մ.ի կողմից

Ա) ՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀ. ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Աշխարհագրական դիրքը։— *Գանձակի գաւառում 37 հայաբնակ գիւղ կայ (անուններ), որոնք ընկած են Մոսու լեռնաշղթայի մօտաւոր ու հեռաւոր փէշերի վրայ։ Միայն 6–7 գիւղ դուրս են գտնուում հայկական սեղմուած շրջանից եւ ընկնում հեռու թրքական ռայոններում (անուններ)։ Մնացած կողք կողքի կպած 30 հայկական գիւղերից բաղկացած գաւառակը, ընկած Թառթառ ու Շամխոր գետերի վերին լեռնային մասերի արանքում, կրում է Ղարաբաղի բոլոր հայ գաւառակների աշխարհագրական դիրքի ընդհանուր բնաւորութիւնը։— ամէն տեղ՝ դարերով հալածական հայերը դիմել են բնական լեռնային ամրութիւնների, ընտրել են լեռնային փէշերը որտեղ, ճիշդ է, նրանք խղճուկ կացութիւն են ունեցել, բայց գոնէ պաշտպանուել են*

բնական դիրքերի մէջ, մի կերպ եօլա գնալով։ Մինչդեռ Թուրքերը, ազատ հալածուելու վտանգից, տիրապետել են բոլոր արգաւանդ տափարակներին՝ ամէն կողմից շրջապատելով հայերին։

Ապրուստի աղբիւրները։— Այսպիսի լեռնալանջերում թառած մի ժողովրդի պարապմունքը, պարզ է, թէ ի՛նչ պէտք է լինի։ Պարզ է, որ տնտեսական բարեկարգ վիճակ դժուար է տեսնել նահապետական ձեւով հողն ու այդին մշակող մի անուս ժողովրդի մօտ։ Կան մի քանի գիւղեր միայն, որ արտահանում են պտուղներ — տանձ, խնձոր —. 2–3 գիւղ մշակում են խաղողի որթ, բայց միայն այնքան՝ որ գինին բաւականացնի իրենց։ Ազգաբնակութեան մօտ 60% տոկոսը կառավարում է (բաւարարո՞ւմ է) ինքն իր հողով, մի կերպ. իսկ մօտ 40%ը պէտք է զգում դրսի ապրուստի աղբիւրներին դիմելու։ Այդ աղբիւրները Թրքական բէկական արգաւանդ տափարակներն են եւ գերմանական գաղութի ու փոքրաթիւ քաղաքացի հայերի այգիներն ու գործարանները։ Այս վերջին ապրուստի աղբիւրներից որեւէ մէկի սպառուելու դէպքում քաղցած գիւղացիութիւնը պիտի դիմի պանդխտութեան։

Գանձակի գաւառի ազգաբնակութեան թիւը։—

1)	Գաւառ։— *Թուրքերի թիւը՝*	86·778
	Հայերի թիւը՝	31·168
	ռուս, գերմանացի եւայլն՝	10·000
	Ընդամէնը՝	127·946 *բնակիչ։*

Ինչպէս տեսնում է, հայերի թիւը ազգաբնակութեան 1/3 մասից էլ պակաս է։ Գաւառում հողի տարածութիւնը 882·462 տեսխատին է, որից հայերին բաժին ընկել են լեռնավայրի սակաւաթիւ մասերը. բայց եւ այնպէս հետաքրքիր է յիշել, որ Գանձակի գաւառի հայութիւնը տնտեսապէս անհամեմատ աւելի բարձր է. կլիման ու հողը այստեղ աւելի արդիւնաբեր է՝ քան հեռաւոր խեղճուկրակ Զանգեզուրի կամ Ղարաբաղի միւս մասերում։

2) Քաղաքը։— *Գանձակ քաղաքը ընկած է անդրկովկասեան երկաթուղուց հարաւ՝ 5 վերստ հեռաւորութեան վրայ, գաւառի հայ միակտուր ազգաբնակութիւնից կտրուած, տափարակի վրայ, հիւսիսային Թրքական ոայոնում։ Հայկական մասը գտնուում է գետի աջ ափին, Թրքականից բաժանուած. այս այն միակ հայկական կէտն է, որ Ղարաբաղի, Սիւնիքի եւ Գանձակի 294·000 հայ ազգաբնակութիւնը կապում է երկաթուղու գծի հետ,— եւ այն էլ ինչպէս! Կայարանին հասնելու համար պիտի մտնել Թրքական Թաղը եւ այնտեղից էլ 4–5 վերստ Թրքական այգիներ ու տափարակ անցնել...։ Երկաթուղուց կտրուելու եւ սովի մատնուելու սարսափը (դեռ չեմ ասում զէնքի միակ ճանապարհից կտրուելու սոսկալի վտանգը) մշտական մի ըսպառնալիք է եղել հայութեան այս մեծ հատուածի համար. եւ այժմ էլ այդ սպառնալիքը կախուած է մեր գլխու վերեւը, քանի երկու ազգերի միջեւ կը շարունակուի լարուած դրութիւնը։*

Գանձակ քաղաքի ազգաբնակութեան թիւը (1905)։—

Թուրք՝	16·211
Հայ՝	15·261
ռուս՝	4·261
Գումար՝	35·733 *բնակիչ։*

Հայերը զբաղւում են քաղաքում՝ վաճառականութեամբ եւ արհեստներով. սովորական գաւառական կենտրոնի բոլոր նշանները դուք այստեղ կը գտնէք,— մանր ու միջակ առեւտրականների դասակարգ, ապա արհեստաւորութեան երկար գոյնզգոյն շղթան, 3ից 400 գինեգործարանների եւ այգիների բանուորութիւնը եւ, վերջապէս, ամէն գաւառական քաղաքի սիրտը կազմող փոքրաթիւ ինտելիգենտներն ու շարժուն աշակերտութիւնը։

(Կը հետեւին տեղեկութիւններ Գանձակի եւ շրջակայքի գերմանական փոքրաթիւ բայց աշխոյժ գաղութներում մասին, զորս զանց կ'ընենք, — Հ. Տ.)։

Բ) Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ԱՑԳԵՍՏԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ (1904–1906)

Այս ընդհանուր տեղեկութիւններից յետոյ անցնենք Այգեստանի դաշնակցական գործի տեղեկագրին։

Աւելի ամփոփ զաղափար տալու համար Հ. Դ. Դաշնակցութեան գործունէութեան մասին այս վերջին 3–4 տարուայ ընթացքում, ինձ թւում է, որ շատ յարմար է, ըստ նրա գործունէութեան եղանակի ու բնոյթի փոփոխութեան՝ բաժանել երեք գլխաւոր շրջանների,— հին, միջին–անցողական եւ նորագոյն շրջան։ Ամէն մէկը նրանցից՝ ունի իւր առանձնայատուկ դիրքն ու գոյնը՝ համապատասխան ներքին բովանդակութեամբ։ Հին շրջանը այս տեղեկագրի շրջանակից դուրս է գտնում. մենք կ'աշխատենք ներկայացնել յաջորդ երկու շրջանները։

Գաւառի կազմակերպութիւնը։— *1904 թուի ամառը փոխ–նահանգապետ Անդրէեւի սպանութիւնը, կատարուած Ոսկանապատի մարմնի որոշումով, դառնում*

է Դաշնակցութեան ընդարձակման շարժառիթներից մէկը։ Ժողովրդի արիւնը փողոցներում հոսեցնող Անդրէեւի տեռորը, Դաշնակցութեան ձեռքով, դարձնում է վերջինիս՝ ժողովրդական իղձերի իսկական արտայայտիչ։ Եւ ի՛նչ զարմանք, որ ամէն տեղ [այնուհետեւ] պիտի գրկաբաց ընդունէին դաշնակցական շրջիկներին։ Բաւական էր՝ երեւնար շրջիկը ու հաւաքէր գիւղացոց, խօսէր կալուածական խնդիրներից, ցարի կառավարութեան չահատակութիւններից, եւ այլ ժողովրդական թշնամիներից, մի ժողով բաւական էր՝ որ խմբերը կազմուէին։ Բաւական էր՝ անունները գրուէին անդամավճարական ցուցակում եւ ամէն ինչ վերջացած կը համարուէր։ Բաւական էր մանաւանդ մի գաւառում ոպանուէր մի մատնիչ, կամ նահանգի, գաւառի մի հզօր պաշտօնեայ, որ ամբողջ գաւառակը դաշնակցական դառնար։ Տրամադրութիւնը այնքան բարձր էր, որ շատ անգամ շրջիկը օրական երկու գիւղ էր դաշնակցական դարձնում. կազմակերպուած 13–15 գիւղերից ամէն մէկում, նայած նրա մեծութեան, մի կամ մի քանի խմբեր կային, իրենց խմբապետով ու օգնականներով։ Բացի այդ՝ իւրաքանչիւր գիւղ ունէր իւր դատական մարմինը, ընտրուած ամբողջ գիւղից ընդհանուր ձայնատուութեամբ։ Մի քանի գիւղերի ներկայացուցիչներից ընտրւում էր ենթակոմիտէ։ Խմբերի պարտականութիւնը եւ գործունէութիւնը կայանում էր նրանում, որ պարբերաբար հաւաքէին անդամավճարներ, ամսական կամ երկու ամիսը մի անգամ շրջիկ գալուց՝ խկոյն հաւաքուէին ժողովի. եթէ կը գտնուէր գիւղում գրագէտ, երբեմն կը հաւաքուէր խումբը նրա չուրջը՝ որեւէ թերթ կարդալու։

Շրջիկ կոչուած պրոպագանդիստների մէջ շատ քիչերը կային միջին կրթութեան տէր. ոգեւորուած երիտասարդներ էին դրանք՝ շատ հեռու որեւէ լուրջ կրթութիւնից։ Այստեղ ի հարկէ ոչ մի խօսք չի կարող լինել նրանց սոցիալիստական կրթութեան մասին. առանց բացառութեան նրանք բոլորն էլ բոպիկ էին այդ տեսակէտից։ Նրանք ամէն տեղ խօսում էին գալիցիանեան ծրագիրներից, բռնակալութեան վնասակարութիւնից, պաշտօնեաների չահագործումներից եւ, որ գլխաւորն է, Դաշնակցութեան արած ու ապագայում անելիք գործերից։ Եւ Դաշնակցութիւնը հզօրանում էր, մանաւանդ որ տեռորները, ուղղուած պաշտօնեաների դէմ, իրենց ետեւից չէին բերում ընդհանուր բնաւորութիւն կրող արհաւիրքներ կառավարութեան կողմից։

Հանգանակութիւններ յաճախակի կատարւում էին այդ շրջաններում. դժգոհութիւններ չէին յայտնւում. ամէն ամիս դաշնակցական անդամավճարները մտնում էին կենտր. Կոմիտէի կասսան։

Պրոպագանդի այլ նիւթերից մէկն էր զինման խընդրի արծարծումը,— մինչեւ Բագւոյ ընդհարումները չատ թոյլ կերպով, իսկ դրանից յետոյ ուժեղ կերպով (թէեւ կարծում էին, որ իրենց մօտ Թուրք–հայկական ընդհարում չի լինելու)։ Նախիջեւանի ընդհարումներից յետոյ արդէն այդ զինումը գնաց ամենածայրայեղ տենդագին արագութեամբ, որովհետեւ է՛լ կասկած չը-մնաց, որ ընդհարումները անցնելու են ե՛ւ մեզ մօտ։

Մի խօսքով՝ այդ անխոնջ երիտասարդները կատարում էին ամէն ինչ, ինչ կարելի է անել գաղափարական [օրէն] կիսակերթ գործիչների ձեռքով՝ մի ժողովուրդ բարեկարգ դրութեան մէջ դնելու համար։

Քաղաքում կազմակերպւում էին նոյնպէս խմբական եղանակով՝ բոլոր խաւերը, վաճառականներից ու նրանց տիկիններից սկսած մինչեւ նրանց «ծառաներն» ու արհեստաւորները։ Մինչդեռ գիւղական խմբերը ամիսներով շրջիկի երես չէին տեսնում, այստեղ — խմբերում սիստեմաբար լինում էին դասախօսութիւններ՝ օրուայ խնդիրների շուրջը։ Տաճկական խնդրի մասին չատ քիչ էին հետաքրքրւում։

Միշտ առանձին ուշադրութիւն էր տրւում անդամավճարների խոշորութեան վրայ. օրինակով խօսենք.— Կայարանում ստիպում էին բանուորին՝ մի օրավարձ յատկացնել Դաշնակցութեան. այս հանգամանքը ես այստեղ չեշտում եմ նրա համար՝ որ աւելի պարզ երեւայ այն, որ մենք ուշք չէինք դարձրել բանուորների, խեղճուկրակ արհեստաւորների կամ ծայրայեղ կարիքի մէջ խրուած գիւղացու կազմակերպութեան վրայ. մեր ձգտումը աւելի ուղղուած էր դէպի ունեւորներին կազմակերպելու գործը, բայց ցաւով տեսնում էինք, որ նրանք չէին ենթարկւում մեզ, կամ դժուարութեամբ էին ենթարկւում։ Բայց երբ Բագւոյ ընդհարման ժամանակ Դաշնակցութիւնը իւր զօրութիւնը ցոյց տուեց, բուրժուազիան, տեսնելով իւր չահերը վտանգուած, թեքուեց դէպի Դաշնակցութիւնը եւ, 1905ի սկզբներում, քաղաքը լցուած էր խմբերով՝ ամէն գոյնի եւ բնաւորութեամբ։ Վաճառականական խմբերի տուրքերը տրւում էին հետեւեալ կերպով,— բոլոր անդամներից ընտրուած մի մարմին որոշում էր ամսավճարի քանակը՝ ամէն մէկի համար մէկ ռուբլուց մինչեւ 10 ռուբլի։

1904 թուի եւ 1905 թուի գործունէութեան արաղ համեմատութիւնից Դաշնակցութեան ընդարձակումը աւելի լաւ կը պարզուի։

1904 թուին քաղաքում կային 35 խումբ 350 անդամներով, մօտ 160 ռուբլի ամսավճարով, խմբական սիստեմով կազմակերպուած։ Գիւղերի քանակը հետեւեալն է,— 13 գիւղում կային 35–40 խումբ, 270 անդամներով, 100 ռուբլի ամսավճարով։

Քաղաքում ամսավճարը 50 կոպէկից պակաս չէր. իսկ գիւղերում, միջին թուով, ամէն մի գիւղացի դաշնակցական՝ վրայ գալիս է ամսական 37 կոպէկ։

Մուտք եւ ելք 1904 թ. Յունիս 1–31 Դեկտ.

Մուտք Ոսկանապատից՝	2000	ռ	
մի ձեռնարկից՝	1979	ռ	41
հին կազմից՝	207	ռ	
Խմբերի անդամավճարից՝	1375	ռ	35
	5561	ռ	79 կ
Ելք. բանտարկեալների՝	2681	ռ	20
պրոպ. եւ ապր. գործ՝	1038	ռ	14
ռազմամթերք՝	524	ռ	63
այլեւայլ (ահար. 601)	1225	ռ	37
մնացորդ առ 1 Յունուար՝	82	ռ	45
	5561	ռ	79 կ

1905 թուին, կազմակերպւում են բոլոր գիւղերը, առանց բացառութեան. քաղաքի խմբերի թիւը հասնում է ամենաբարձր չափին: Այդ տարուայ սկզբում, կոմիտէին կից, նրա միջոցով, կազմուեց Զինաբաշխական մի մարմին՝ ընտրուած քաղաքացիներից եւ ղեկավարութեամբ կոմիտէի մի անդամի: Զինաբաշխական մարմնի հաւաքած նուիրատուութիւններով՝ գնւում էր զէնք եւ ռազմամթերք կազմակերպութեան համար: Նրա կատարած գործի պատկերը լաւ երեւում է նրա հինգ ամսուայ հաշուից.—

Մուտք

Հանգանակութիւնից՝	5173	ռ	
հին զէնքերի վաճառքից՝	63	ռ	
տոկոս դրամի՝	9	ռ	91
վերցր. պարտք՝	1809	ռ	58
Գումար՝	7055	ռ	49 կ

Ելք

Գնուած զէնք՝	5010	ռ	60
» ռազմամթերք՝	919	ռ	68
տեղափոխութեան՝	290	ռ	83
այլեւայլ՝	734	ռ	38
	7055	ռ	49 կ

Զինաբաշխական մարմնի գործունէութիւնը տեւում է 23 Փետրուարից մինչեւ նոյն Թուի (1905) Օգոստոսի 1ը, երբ Ղարաբաղում եւ այլ տեղեր սկսւում են ընտրութիւնները եւ այնուհետեւ Դաշնակցութիւնը ամէն ինչ կենտրոնացնում է իր ձեռքը, որպէս մի զինուորական պետութիւն՝ պատերազմական դրութեան ժամանակ:

Բացի այդ, 1905 թուի ամբողջ տարուայ կոմիտէական հաշիւների պատկերը հետեւեալն է.

Մուտք

Գանձ. տուգ.՝	3000	ռ	
Արեւելք Բիւրոյից՝	1300	ռ	
անդամ. եւ այլ՝	5541	ռ	43
Գումար՝	9841	ռ	43 կ

Ելք

Ինքնապաշտպան. ծախս՝	3670	ռ	
պարտք ուրիշ մար. (?)	2380	ռ	87
ընթացիկ՝	3148	ռ	86
Գումար՝	9778	ռ	21 կ
մնում է 1 Յունուար 1906ին՝	63	ռ	22
Գումար՝	9841	ռ	43 կ

Դաշնակցական գործունէութեան այս երկրորդ՝ միջին–անցողական շրջանի առաջին մասը վերջացրած համարենք, ու նախքան ընդհարումների ժամանակաշրջանին անցնելը, փակենք մեր տեղեկագիրը այդ շրջանի մասին՝ այդ ժամանակուայ զինուորական լիազօրի խօսքերով, որպէսզի ամենալաւ կերպով պարզուի այդ օրերի եւ հետագայ շրջանի ոգին:

1905 թ. տարեվերջին, Գանձակի ընդհարումից անմիջապէս յետոյ, շրջանի զինուորական լիազօր–հրամանատար Ռաշիդը կանչեց Շրջիկին եւ յանձնարարեց, թէ «մեզ շրջիկներ պէտք չեն, մեր զինուորները ինքնըստինքեան ամէն մէկը մի մի պրոպագանդիստ են, գնացէք ձեր գործին»:

Եւ այնուհետեւ էլ գիւղերը եւ քաղաքը պրոպագանդիստի երես չտեսան:

*
**

Հայ–թրքական ընդհարումները ամէն ինչ մոռացնել տուին: 1905 թուի Նոյեմբերից մինչեւ այժմ Դաշնակցութեան կասսան մի կոպէկ անդամավճար չմտաւ, բոլոր նախկին խմբերը վերջնականապէս անհետացան, ամբողջ ժողովուրդը սկսեց նմանուել մի զինուած հրակայական բանակի՝ Դաշնակցութեան ընդհանուր հովանաւորութեան տակ ու նորա ղեկավարութեամբ:

Սակայն միջին շրջանի այս մասի վրայ պէտք է կանգ առնել աւելի հանգամանօրէն. ցոյց պէտք է տալ ընդհարումներից առաջացած հսկայական աւերմունքն ու քայքայիչ ազդեցութիւնը թէ՛ ժողովրդի տնտեսական կեանքի վրայ, թէ՛ Դաշնակցութեան, որպէս մի կազմակերպութեան, վրայ ունեցած քայքայիչ ու տարրալուծող ազդեցութիւնը:

Ժողովրդի տնտեսական կացութիւնը Այգեստանում եւ նրա շրջանի հայ գիւղերում (թուով 37) ըստ ամենայնի անբաւարար է, ինչպէս սկիզբն էլ յիշեցինք, իսկ աւելի ենթարկուած գիւղերում գտնւում է ծայրաստիճան վատթար դրութեան մէջ:

Ընդհարումները (հայ–թուրք) որոնք Այգեստանի շրջանում սկսուեցին 1905 թ. Նոյեմբերին եւ տեւեցին մինչեւ 1906 թ. գարնան սկիզբը, հետեւեալ հետեւանքները ունեցան,— ի սպառ աւերուեցին քաղաքի հայկական բազարը, քաղաքի թիւրքաց մասում գտնուող Նորաշէն եւ Երեւանեան հայոց թաղերը, ապա նաեւ՝ Բաղա, Ղազախ, Գործարան (Գետաբէկ), Սարով, Ղարադաղլու եւ Խոյլու հայ գիւղերը: Մնացած գիւղերը մնասուեցին մասնակի կերպով, տալով ընդհարումներին մարդկային զոհեր (մեծ մասամբ կռուող, առոյգ ու աշխատաւոր ուժերից) ու ենթարկուելով կառավարութեան անվերջ կեղեքումներին ու տուգանքներին: Գիւղ չկայ, որ տուգանք չլինի տուած (200ից մինչեւ 2000 ռ–3000 ռ), իբրեւ ուղղակի կամ կողմնակի մասնակցութիւն հայ–թուրք ընդհարումներին:

Գանձակ քաղաքի նիւթական կորուստը ընդհարումներից՝ հասնում է մօտ 3 ու կէս միլիոնի, Բաղա գիւղինը՝ 2 ու կէս միլիոնի, Ղազախին՝ 200·000ի, Գետաբէկ՝ 300·000ի, Ղարադաղլու, Խոյլու ու Սարով՝ 400 հազարի. նիւթական ընդհանուր վնաս՝ նուազագոյնը 7·000·000 ռուբլի:

Պարզ է թէ ի՛նչ տնտեսական կացութիւն կը լինի ստեղծուած այդպիսի կորուստներից յետոյ: Աւերուած գիւղերի աղքատացած ժողովուրդը համարեա ամբողջովին ծանրացաւ քաղաքի եւ մանաւանդ գաւառի հայ գիւղերի վրայ, որոնք մինչեւ 1906ի գարունը ստիպուած էին իրենց ունեցածից բաժին հանել զրկուածներին: Այսպէս ասած նպաստամատոյց ընկերութիւնների օժանդակութիւնը, առանց քաղաքի եւ գիւղերի ժողովրդի օգնութեան, չէր կարող բաւարարութիւն տալ այնքան զրկուածներին: 1906 թուի գարնանից այդ խեղճ տնաքանդ զրկուածները կարողացան քիչ քիչ ապրուստի միջոցներ հայթայթել սեփական աշխատանքով: Բաղա գիւղի բնակիչները վերադարձան իրենց աւերակուած գիւղը, սկսեցին վերաշինել ու ձեռնամուխ եղան դաշտային աշխատանքի: Միւս աւերուած գիւղերի բնակիչները մնացին մեծ մասամբ քաղաքում, իսկ վոքրամասնութիւնը ցրուեց Բաղու եւ այլ վայրեր՝ աշխատանքի: Ղազախի եւ Գործարանի բանուորները, թողնելով իրենց ընտանիքները հայ գիւղերում, վերադարձան իրենց աշխատանքին: Զրկուած գիւղացիներին խնամելու գործը իր հերթին զգալի չափով նպաստեց ժողովրդի տնտեսական կացութեան վատթարացման, որը այսօր էլ շարունակում է առաջ գնալ անընդհատ, չնայած հայ–թրքական ընդհարումների վերացման: Ժողովրդի տնտեսական կացութիւնը շարունակում է վատթարանալ շնորհիւ թուրքեւհայ ժողովրդների կապերի խզման, նրանց փոխադարձ անվստահութեան, շնորհիւ այն բանի՝ որ լեռնալանջերում ապրող հայերը հնարաւորութիւն չունեն գնալու աշխատանքի գաւառի տափարակը, որտեղ ազգաբնակութիւնը բացառապէս թրքերից է բաղկացած, որտեղ գտնւում են գաւառի ամենաբարեբեր հացառատ վայրերը: Մինչեւ թուրք–հայ ընդհարումները, թէ՛ քաղաքի ու թէ գաւառի հայ ազգաբնակութեան ապրուստի առնուազն 40%ը գալիս էր գաւառի տափարակից, թուրքական Ռայոնից. վար էին անում այնտեղ հայերը, իրենց մեծ հօտերը ձմեռը տանում էին այնտեղ պահելու, իբրեւ բանուորներ՝ հարիւրներով, նոյնիսկ հազարներով գնում էին բանելու թուրք եւ գերմանացի, ռուս եւ հայ կալուածատէրերի հողերում ու այգիներում: Այժմ ապրուստի այդ կարեւոր աղբիւրը ի սպառ ցամաքած է հայ ազգաբնակութեան համար: Նրա վերակենդանանալը դեռ ոչ այնքան մօտիկ ապագայի գործ է:

Պետական, տեղական, համայնական հարկերը քիչ չեն նպաստել ու նպաստում ժողովրդի տնտեսական կացութեան անկման. այդ հարկերը տարեցտարի մեծանում են. նրանց բաշխումը եղել է եւ է՛ դրուած անարդար հիմքերի վրայ.— գիւղական ծուխը, 5–6 հոգուց բաղկացած, տարեկան ուղղակի հարկ է վճարում (պետ. եւ համայն) 18ից մինչեւ 25 ռուբլի, իսկ նրա եկամուտը, միջին թուով հաշուելով, նաեւ գիւղատնտեսութիւնից ստացած գումարները (հում բերքեր), հազիւ է հասնում 100–150 ռ. տարեկան. այսպիսով նրան ընդհանուր եկամուտի 15ից 20%ը գնում է հարկերի:

Վերջին երկու տարուայ արդիւնաբերութիւնը տնտեսական այդ վատթար կացութեան զգալի չափով զարկ է տուել, մանաւանդ 1906 թուին, երբեմն՝ գարնան սկզբում, կարկուտը՝ երկրորդ կիսում, իսկ յորդառատ անձրեւները ամառուայ ընթացքում, փչացրին ցանքերի մեծ մասը՝ հայկական ռայոնի լեռնային մասերում:

Ինքնապաշտպանութեան անհրաժեշտ ծախքերը եկան ամենաուժեղ հարուածը տալու ժողովրդի տնտեսական կացութեան,— մթերքների արժէքների անօրինակ բարձրացումը մի կողմից, ժողովրդի ինքնապաշտպանութեան գործում՝ ոչ միայն ռազմական, այլեւ դրամական մասնակցութիւնը միւս կողմից:

Միջին թուով գիւղական ծուխը ինքնապաշտպանութեան ծագման օրից ծախսած կը լինի 40 ռ. կանխիկ փող. 400 ծխից բաղկացած գիւղը այդպիսի հաշ-

ուով ծախսած կը լինի առնուազն 16·000 ռ. կանխիկ դրամ. դա մի գիւղի համար հսկայական գումար է, քանի որ այդ գումարը ամբողջովին դուրս է եկել գիւղից՝ ինքնապաշտպանութեան համար (գործիքներ եւ մթերք)։

Եզրակացնելով, տեսնում ենք որ ընդհարումների ծագման սկզբից հայերի տնտեսական կացութիւնը անընդհատ վատթարանում է. բարւոքման նշաններ բնաւ չեն նկատւում. եւ եթէ այսուհետեւ էլ լարուած դրութիւնը շարունակուի, մեր ժողովուրդը քայքայման վերջին ծայրին կը հասնի։

Բնականաբար տնտեսական այդ կացութիւնը պէտք է անդրադառնար եւ ժողովրդի յեղափոխական ոգու վրայ, ոչ ցանկալի կերպով։

Զուտ յեղափոխական շարժում մեր շրջանում ոչ միայն գոյութիւն չի ստանում, այլեւ ամենաթոյլ նշոյլներ անգամ չի նկատւում ժողովրդի այն լայն խաւերում, որոնք դաշնակցական անունն են կրում։ Տեղի ունեցած արհաւիրքներից քայքայուած ժողովուրդը մտածում է միայն մի կերպ իւր գլուխը պահելու մասին, մտածում է իւր խաւար եւ կոյր հարեւանից պաշտպանուելու մասին, մտածում է դիմադրելու մասին, որոնք շատ հաւանական են թուում նրան։ Իսկ կառավարութեան դէմ ըմբոստանալու մասին ժողովուրդը այն համոզմանն է, որ մենակ, առանց թուրքին, խելացնորութիւն է դուրս գալ կառավարութեան դէմ։

— «Մենք չենք կարող միաժամանակ թուրքերի եւ կառավարութեան դէմ կռուել. մենք կը կորչենք. ուրիշ բան է եթէ թուրքերը միացած լինեն մեզ հետ, այն ժամանակ ռուսը կը խեղճանար մեր առաջ»,— ահա ի՛նչ է լսւում սովորաբար հայ ժողովրդի խաւերում, մանաւանդ գիւղական ազգաբնակութեան մէջ։ Յեղափոխական ոգու բացակայութիւնը նկատւում է մանաւանդ այն ժամանակ, երբ ժողովուրդը լուր է առնում որեւէ նախագծուող յեղափոխական ձեռնարկի մասին (տեսոր եւայլն). նա սարսափում է ուղղակի, դիմում մեր մարմիններին, աղերսում է որ ոչինչ չանեն, պատճառաբանելով թուրքերի պատրաստականութիւնը կրկին գործիք դառնալու հայերի դէմ՝ կառավարութեան ձեռքում։

Ժողովուրդը վերաբերւում է մեր մարմիններին իբրեւ ինքնապաշտպանութեան գործը կազմակերպող ու ղեկավարող օրգանների եւ այդ տեսակէտից գնահատում է նրանց՝ իբրեւ իր տէր ու տնօրէնի. կազմակերպութեան վարկը շատ բարձր էր այն ժամանակ երբ նա ժողովրդից տուրք չէր պահանջում ինքնապաշտպանութեան համար, որը եղել է մեր բոլոր մարմինների գլխաւոր հոգատարութեան առարկան վերջին մէկուկէս տարուայ ընթացքում, երբ նա, այդ գործի պատասխանատու ծանրութիւնը իր ուսերի վրայ տանելով, ամբողջովին դրսից էր նիւթական միջոցներ հայթայթում գործի համար, այլ ոչ տեղացիներից։

Հենց որ վերջիններիս ստիպել սկսեցին նիւթական-դրամական մասնակցութիւն ունենալ ինքնապաշտպանութեան համար կազմակերպած խմբերի պահպանութեան գործում, մեր մարմիններից այս ու այն տեղ դանգատուել սկսեցին։ Սկսեցին տրտունջների, բողոքների շարքերը, սկսեցին ծուռ աչքով նայել թէ՛ մարմիններին եւ թէ մանաւանդ զինուորական խմբերին, որոնց ընդհարումների ժամանակ անչափ սիրում ու յարգում էին։ Այստեղ պէտք է շեշտել այն հանգամանքը, որ զինուորների շարքերը երկարատեւ կռիւների շնորհիւ լցուեցին տգէտ, ճարպիկ, բայց ամէն տեսակ վարքի ու բարքի մարդիկ, որոնք, որեւէ գաղափարականութիւնից զուրկ եւ յղփացած յաջողակ կռիւներից, աշխատում էին իրենց համար մի տեսակ արտօնեալ վիճակ ստեղծել եւ յաճախակի ճնշումներ գործել առանց էն էլ քայքայուած գիւղական եւ քաղաքային ազգաբնակութեան վրայ։ Լարուած երկարատեւ դրութեան եւ նրա համապատասխան ոռճիկաւոր զինուորների հետ կապուած մեծաքանակ անընդհատ ծախքերի շնորհիւ, ժողովրդի տրամադրութիւնը դէպի Դաշնակցութիւնը և նրա մարմինները ընդհանրապէս փոխուեցին դէպի վատը, սակայն գլխաւորապէս տրտունջ լսւում է տիրող դասի ունեւորների կողմից. խեղճուկրակ աշխատաւոր գիւղացին, թէեւ տրտնջում է, բայց սովոր անդադար տանջուելու եւ սովոր աշխատանքը գնահատելու, կարծում է, որ Դաշնակցութիւնը աշխարհ է եկել որպէսզի ամէն տեսակ բարիք անի հայ ժողովրդին։ Բայց ի՞նչ միջոցներով. այդ դէպքերում նա մատնացոյց է անում հայ կրեսոսների վրայ, պահանջում է, որ Դաշնակցութիւնը նրանցից մեծ գումարներ վերցնի ու ծախսի իր ծրագրած գործերի եւ առհասարակ հայ ժողովրդի բարօրութեան համար։ Սակայն այս գոր՛ծ իրականութեան մէջ՝ շարժման նշաններ վերջին ժամանակներս նկատւում է. հայ-թրքական կռիւների վերացմամբ, այդ շարժումը յեղափոխական իսկական բնոյթ կը ստանայ։

Շնորհիւ հայ-թրքական ընդհարումներին, երբ Դաշնակցութեան հոգատարութեան գլխաւոր առարկան եղել է հայութեան պաշտպանութիւնը առանց դասակարգերի խտրութեան, մեր մարմինների մէջ մտել են ամէն դասակարգի ու տարբեր մարդիկ. նկատելի է այդ մանաւանդ գիւղական շրջաններում։ Գիւղական շրջանային կոմիտէները կամ ենթակոմիտէները մինչեւ թուրք-հայկական ընդհարումների ծագումը Կովկասում, այն է մինչեւ 1905 թ. շարաբաստիկ փետրուարը եւ Մարտը, պարապում էին պրոպագանդով, ծանօթացընելով նոր կազմակերպուող խմբերը տաճկահայ դատի եւ կովկասահայ դատի հետ, նրանք աշխատում էին գիւղական խաւերը ծանօթացնել Դաշնակցութեան հետ, նրա անցեալի, նրա կատարած գործերի եւայլն։ Ընդ-

հարումները սկսելու պէս այդ բոլոր մարմինները, ինչպէս եւ նորակազմ զին. խորհուրդները, ամբողջովին նուիրուեցին ինքնապաշտպանութեան գործին։

Կազմակերպութիւնից դուրս գտնուած խաւերը ընդհարումների ընթացքում ապաւինած էին Դաշնակցութեան, բոլորն էլ իրենց դաշնակցական էին անուանում։ Երբ Դաշնակցութիւնը կանգնեց զտման պրոցէսի մէջ, նրանք յետ կանգնեցին նրանից ու սկսեցին թըշնամաբար վերաբերուել, յայտարարելով Դաշնակցութեան նոր ուղղութիւնը՝ կորստաբեր հայութեան համար։ Հակադաշնակցական տարրերից մի քանիսը պահանջում են Դաշնակցութիւնից զբաղուել միմիայն հայ ժողովրդի (առանց դասակարգի խտրութեան) ինքնապաշտպանութեան գործով. միւսները դրան աւելացնում են նաեւ Տաճկահայ դատը. կան եւ այնպիսիները, որոնք պահանջում են Դաշնակցութիւնից անպայման լեգալ գործունէութիւն [տեսնել] թէ՛ Կովկասում եւ թէ Տաճկահայաստանում, միայն եւրոպական դիպլոմացիայի միջոցներով։ Այդ պայմանով միայն յանձն են առնում դրական աջակցութիւն...։ Այլապէս՝ Դաշնակցութեան գործունէութիւնը կորստաբեր են համարում հայութեան համար...։

Ինքնապաշտպանութեան գործը
(յայտնի է)

Ժողովրդի զինումը
(յայտնի է)(1)

Համերաշխութիւն այլ յեղափոխական եւ ոչ-յեղափոխական մարմինների հետ.— Ինքնապաշտպանութեան հողի վրայ բոլոր ոչ-յեղափոխական տարրերը միացել են։

Իսկ սոցիալ-դեմոկրատները (կենտրոնացած գլխ. կայարանում) շարունակ վերաբերուել են ակնյայտնի թշնամութեամբ (յիշում եմ այստեղ որպէս փաստ նրանց գործունէութեան ոգու՝ այն սպառնալիքը, որ մի ժամանակ նրանք ուղղեցին Դաշնակցութեան.— «Կամ բաւարարութիւն տուէք մեր վիրաւորուած ընկերոջ, կամ թէ սովի կ'ենթարկենք Գանձակի եւ Ղարաբաղի ազգաբնակչութիւնը»)։

Նրանց մշտական կռիւը եւ ձգտումն է՝ անուանարկել Դաշնակցութիւնը։

Տաճկահայ դատի մասին երկու կարծիք կայ. ա) փոքրամասնութիւնը կարծում է, որ պէտք է նախկին ճանապարհով ընթանալ, իսկ բ) մեծագոյն մասը՝ թէ պէտք է ընթանալ այլ ուղիով, այն է՝ պէտք է ձգտել Տաճկաստանի ընդհանուր ազատութեան, հետեւապէս ձեռք ձեռքի տալ այնտեղ ապրող բոլոր յեղափոխական տարրերի հետ, ձգտելով Տաճկաստանը դարձնել ազատ երկիր՝ ֆեդերատիւ(2) կազմակերպութեամբ։ Կովկասեան եւ Տաճկահայ գործունէութիւնը հարումները սկսելու պէս այդ բոլոր մարմինները, ինչպէս եւ նորակազմ զին. խորհուրդները, ամբողջովին նուիրուեցին ինքնապաշտպանութեան գործին։

Կազմակերպութիւնից դուրս գտնուած խաւերը ընդհարումների ընթացքում ապաւինած էին Դաշնակցութեան, բոլորն էլ իրենց դաշնակցական էին անուանում։ Երբ Դաշնակցութիւնը կանգնեց զտման պրոցէսի մէջ, նրանք յետ կանգնեցին նրանից ու սկսեցին թըշնամաբար վերաբերուել, յայտարարելով Դաշնակցութեան նոր ուղղութիւնը՝ կորստաբեր հայութեան համար։ Հակադաշնակցական տարրերից մի քանիսը պահանջում են Դաշնակցութիւնից զբաղուել միմիայն հայ ժողովրդի (առանց դասակարգի խտրութեան) ինքնապաշտպանութեան գործով. միւսները դրան աւելացնում են նաեւ Տաճկահայ դատը. կան եւ այնպիսիները, որոնք պահանջում են Դաշնակցութիւնից անպայման լեգալ գործունէութիւն [տեսնել] թէ՛ Կովկասում եւ թէ Տաճկահայաստանում, միայն եւրոպական դիպլոմացիայի միջոցներով։ Այդ պայմանով միայն յանձն են առնում դրական աջակցութիւն...։ Այլապէս՝ Դաշնակցութեան գործունէութիւնը կորստաբեր են համարում հայութեան համար...։

Ինքնապաշտպանութեան գործը
(յայտնի է)

Ժողովրդի զինումը
(յայտնի է)(1)

Համերաշխութիւն այլ յեղափոխական եւ ոչ-յեղափոխական մարմինների հետ.— Ինքնապաշտպանութեան հողի վրայ բոլոր ոչ-յեղափոխական տարրերը միացել են։

Իսկ սոցիալ-դեմոկրատները (կենտրոնացած գլխ. կայարանում) շարունակ վերաբերուել են ակնյայտնի թշնամութեամբ (յիշում եմ այստեղ որպէս փաստ նրանց գործունէութեան ոգու՝ այն սպառնալիքը, որ մի ժամանակ նրանք ուղղեցին Դաշնակցութեան.— «Կամ բաւարարութիւն տուէք մեր վիրաւորուած ընկերոջ, կամ թէ սովի կ'ենթարկենք Գանձակի եւ Ղարաբաղի ազգաբնակչութիւնը»)։

Նրանց մշտական կռիւը եւ ձգտումն է՝ անուանարկել Դաշնակցութիւնը։

Տաճկահայ դատի մասին երկու կարծիք կայ. ա) փոքրամասնութիւնը կարծում է, որ պէտք է նախկին ճանապարհով ընթանալ, իսկ բ) մեծագոյն մասը՝ թէ պէտք է ընթանալ այլ ուղիով, այն է՝ պէտք է ձգտել Տաճկաստանի ընդհանուր ազատութեան, հետեւապէս ձեռք ձեռքի տալ այնտեղ ապրող բոլոր յեղափոխական տարրերի հետ, ձգտելով Տաճկաստանը դարձնել ազատ երկիր՝ ֆեդերատիւ(2) կազմակերպութեամբ։ Կովկասեան եւ Տաճկահայ գործունէութիւնը

ֆեդերատիւ կազմակերպութեանց կապի վրայ հիմնել։

1906 թուի հաշուեկշիռը

Մուտք

Հանգանակութիւնից՝	27·471	ռ	28
Նուէր՝	355	ռ	
տուգանք՝	147	ռ	2
պահելու համար՝	149	ռ	62
Պատանեկ.՝	10·962	ռ	28
դրսի մարմնից՝	58·800	ռ	10
ծախսուած իրերից՝	5754	ռ	
պարտք վերց.՝	13·333	ռ	12
յետ ստացած գումար՝	3650	ռ	33
Ընդհ. գումար՝	120·777	ռ	88 կ

Ծանօթ.— Հասոյթ ուրեմն տեղական եկամուտներից՝ 39·240 ռ 33 կ

Ելք

Ռազմ. վճար.	18·292	ռ	24 կ
Ինքնապաշտ.	68·828	ռ	10
Կաշառք՝	868	ռ	20
Պրոպագանդի՝	292	ռ	
Այլեւայլ տեղ. եկ. ընդ.	89·518	ռ	53 կ
փոխ. մարմիններին՝	6129	ռ	
վճարած պարտք՝	11·823	ռ	92
դրսի մարմիններին՝	11·957	ռ	53
մնացորդ առ 1 Նոյեմբեր՝	1348	ռ	90
	120·777	ռ	88 կ

(3)

4) ՆՈՐ ՇՐՋԱՆ
(Սոցիալիստական-յեղափոխական)

1906 թուի երկրորդ կիսից սկսուեց մի նոր եւ ուժեղ շարժում։ Ինքնապաշտպանութեան մեզ համար մի կոչմար(4) դարձած խնդիրը կամաց-կամաց իւր տիրող նշանակութիւնը կորցնում է. նրա պատճառած հսկայական աւերածը Դաշնակցութեան ֆիզիքական եւ բարոյական օրգանիզմի վրայ քանի գնում՝ աւելի ակներեւ է դառնում. ինքնապաշտպանութիւնը մտածում ենք ժողովրդի սեփականութիւն եւ գործ դարձնել, եւ ո՛չ թէ մի կազմակերպութեան կամ կուսակցութեան։ Այժմ արւում են առաջին քայլերը այդ ուղղութեամբ. Դաշնակցութիւնը սկսում է թեթեւանալ եւ չունչ քաշել ու յեղափոխական գործի ետեւից ընկնել...։ Ամէնուրեք յեղեղուող սոցիալիստական գրականութեան շընորհիւ, շնորհիւ մանաւանդ մեր հակառակորդ սոցիալդեմոկրատների անդադրում յարձակումներին մեզ վը-

բայ եւ նրանց ջանքերին՝ քարշ տալ իրանց ետեւից մեր եւ առհասարակ աշխատաւոր բանուորութիւնը, շնորհիւ բուրժուական խաւերի եւ լրագիրների («Մշակ» եւն.) համախմբման ու միահամուռ գրոհին, որ Դաշնակցութեան ոյժը իրենց համար մի ահաւոր երեւոյթ լինելով եւ սոցիալիստականանալով՝ պիտի թշնամի հանդիսանայ իրենց եւ ուրեմն հարկաւոր է այդ ապագայ հզօր թշնամուն! հենց սկզբից քայքայել, պառակտել նրան եւ թոյլ չտալ զուտ յեղափոխական հողի վրայ նրան կանգնելու,— ասում եմ շնորհիւ այդ եւ այլ պատճառների, որոնք աւելի գլխաւոր տեղ են գրաւում այստեղ եւ աւելի շուտ են հանդէս եկել քան առաջինները (մեր շարքերում շարունակ լսուող պահանջները՝ պտել Դաշնակցութիւնը եւայլն եւայլն), — երիտասարդական սոցիալիստական խմբակը 1906 թուի առաջին կիսամեակի վերջին եկաւ իրականապէս իրագործելու այդ պահանջները: Քաղաքում կազմուեցին մի շարք պրոֆեսիոնալ(5) միութիւններ՝ արհեստաւորների եւ բանուորների: Կատարուել են մի քանի գործադուլներ՝ աւելի կամ պակաս յաջողութեամբ: Բանուորների տընտեսական դրութիւնը բարւոքելու համար, այսուհետեւ էլ անընդհատ եւ հաստատ քայլերով ձեռնարկուեն համապատասխան դրութեան նպատակայարմար միջոցներ: Քաղաքի բոլոր աշխատաւորները համախմբուում են Դաշնակցութեան դրօշակի տակ, դասակարգային գիտակցութիւնը նոր է արմատ ձգում: Գիւղական շրջաններում աշխատաւորների կազմակերպութիւն չկայ դեռ. մօտ ապագայում կը ձեռնարկուեն այդ ուղղութեամբ ծրագիրների արծարծումը եւ իրականացումը:

Միայն Գետաբէկի գործարանում բանուորութիւնը կազմակերպել ենք, խմբական եղանակով, բացառապէս հայերից բաղկացած. փորձեր են արուել նաեւ կազմակերպելու գործարանի այլազգի բանուորներին՝ Թուրքերին, պարսիկներին եւ յոյներին, բայց այդ յաջողութիւն չի ունեցել, ոչ այնքան բանուորութեան թշնամութեան կամ անտարբերութեան շնորհիւ, ինչքան այն խոչընդոտների, որոնք յարուցել են այդ բանի դէմ՝ գործարանում գտնուող պետական Թուրք պաշտօնեաները (Գրիստաւ Ալիեւ եւայլն): Այդ ուղղութեամբ փորձերը վճռուած է ամենայսմառ կերպով շարունակել. դուցէ հեռու չէ այն ժամանակը, երբ կը յաջողուի Գետաբէկի բանուորութեան ամբողջ քանակը — Թուով մօտ 3500 հոգի (հայ՝ 4–500) — կազմակերպել ու շաղկապել հայ բանուորութեան հետ:

Կազմակերպւում են գերմանական գաղութներում գտնուած հարիւրաւոր ծայրայեղ աստիճանի կեղեքուող բանուորները:

Կուսակցական–բանուորական խմբերից կազմւում են ռազմական–յեղափոխական կամ այլ անակնկալ գործի համար՝ մարտական խմբեր. զոհաբերութեան ընդունակ եւ զինուորական գործին վարժուած գիտակից ընկերներ, որոնց շնորհիւ միայն մենք կարող կը լինենք մաքրել ասպարէզը բախտախնդիր «զինուորականութեան» եւ նրա մէջտեղ գտնուող հազար ու մի տեսակի եւ գոյնի ճարպիկ «իգիթ»ներից...:

Վերջերս ընտրուած կոմիտէն (երիտասարդ սոցիալիստներ) սկսել է շատ եռանդուն կերպով այս նոր ուղղութեամբ գործունէութիւնը: Բռնի դրամի հանգանակութիւնը դադարեցրել ու ներմուծել է կուսակցական անդամավճարի սիստեմը, որ այսուհետեւ մեր գլխաւոր դրամական աղբիւրը պիտի լինի:

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔՍ

Հ. Յ. Դաշնակցութիւնը հին շրջանում է՛ր մի զուտ ազգային–յեղափոխական կուսակցութիւն՝ զրահաւորուած կորովի եւ գաղափարական առաջամարտիկներով, այս ու այն քաղաքներում նոյնպէս՝ գաղափարականութեամբ եւ վառ յոյսերով տոգորուած խմբակներով: Նա ունէր պարզ եւ որոշ նպատակներ, հաւատում էր նրանց իրականանալուն եւ անյողդողդ քայլերով դիմում էր դէպի նրանց, այնպէս՝ ինչպէս վայել է մի մահուր յեղափոխական կուսակցութեան:

Դաշնակցութիւնը երկրորդ՝ միջին անցողական շրջանում, փոթորկալի այս օրերին, Կովկասում հասնում է մի տարօրինակ հսկայական զարգացման. նա իր մէջ ամփոփում է ամբողջ հայ կեանքը իւր բոլոր ելեւէջներով, նա տէր եւ տնօրէն է հանդիսանում հայութեան բոլոր գործերում՝ կրթական, դատական, ոստիկանական եւայլն: Փաստացի կառավարիչը հայութեան նա՛ է, ոչ թէ ռուս կառավարութիւնը, որ իւր գլուխը կորցրել էր արտաքին ու ներքին անակնկալ խայտառակ պարտութիւններից...

Գալիս են ընդհարումները եւ Դաշնակցութիւնը դառնում է մի ընդարձակ զինուորական պետութիւն, նրան յատուկ բոլոր պակասութիւններով՝ անխուսափելիօրէն կորցնելով իւր նախկին յեղափոխական բնոյթը եւ նպատակների պարզ գիտակցութիւնը: Ինքնապաշտպանութեան ծանր լուծը, թէեւ նա պատուով տարաւ, ցրելով միանգամից հայ ժողովրդի վրայից կախուած տգէտ եւ խաւար [ամիտ] Թուրք հորդաների վտանգը, բայց նրա շարքերը այնքա՜ն խտացան այլատարբ անզաղափարակիցներով ու բախտախնդիրներով, որ, նա՛, Դաշնակցութիւնը, քայքայման ցաւով բռնուեց:

Այսօր, նոր շրջանում, այդ քայքայումից բոլոր ներխուած մասերը շպրտւում, կորչում–հեռանում են: Դաշնակցութիւնը երկունքի մէջ է եւ նրա երկունքից ծնւում են միայն աշխատաւորական խմբերը եւ յեղափոխական–սոցիալիստական գործի մնայուն շէնքերը հիմնում:

Այդ խմբերի ներկայացուցիչներն են, որ վերջերս Այգեստանի Կենտրոնական Դաշնակցական Մարմինը իրենց ձեռքն առան:

«Մայր» Դաշնակցութեան քայքայուած օրգանիզմը պիտի անհետ կորչի եւ մենք պիտի այդ անհետանալուն զարկ տանք, որպէսզի նրանից ծնունդ առած յեղափոխական Դաշնակցութիւնը մեծ թափով զարգանայ:

Մեզանից առաջ, մեր յեղափոխական զարգացման կեանքը եկաւ իւր հրամայողական պահանջը ի կատար ածելու:

Մեզ՝ Ընդհանուր Ժողովիս՝ մնում է միայն գնալ ընդառաջ այդ հզօր կովկասեան սոցիալիստական յեղափոխական Դաշնակցութեան. գնալ նրա հետ, կամ կովկասեան յեղափոխութեան գործից հեռու քաշուել–անհետանալ:

Հ. Յ. Դաշնակցութեան Այգեստանի շրջանի կողմից IV Ընդհ. Ժողովի պատգամաւոր՝

ԱԼ. ՄԱՇՈՒՐԵԱՆ

1907 թիւ, Յունուար

ԾԱՆՕԹ.— Կենտր. Կ. դիմաց Շահէնի գրած նամակը — ուղղուած Ընդհ. Ժողովին — կցուեց տեղեկագրին՝ ընկերներին կարդալուց յետոյ:

(1) Տեղեկագրէն յապաւում կատարած չենք. գրուածքը կուտանք նոյնութեամբ:

(2) Դաշնակցային:

(3) Հաշիւներու բաժինը գրուած է մանրատառ ու բաւական խառն ձեւով: Կու տանք կարելի **հարազատութեամբ:**

(4) Մղձաւանջ:

(5) Արհեստակցական:

2.— ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՇՈՒՐԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱՅԳԵՍՏԱՆԻ Կ. Կ.ԻՆ

Նամակի փոքր չափի երկերեք թուղթ, սեւ մելան, 4 էջ:

24 Փետր. 1907

Սիրելի՛ Այգեստան,

Ինձ վրայ դրել էք ծանր պարտականութիւն,— լինել ձեր պատգամաւորը Ընդհանուր Ժողովում: Առաջին իսկ րոպէից ես ինձ ճնշուած եմ զգում այդ ծանր դերը ստանձնելու համար, որովհետեւ այդ Ընդհանուր Ժողովը բացառիկ պայմաններում է գալիս կանգնում մեր իրականութիւնը խորապէս յուզող ծանր հարցերի դիմաց: Մի խոշոր կազմակերպութեան քայքայուած, մահամերձ օրգանիզմը բժշկելու համար, այսպիսի տագնապալից պատմական մոմենտում, Ընդհ. Ժողովի կատարելիք դերը պատմական կը դառնայ, եթէ նա կարողանայ ըմբռնել ժամանակի ոգին, իւր բարձրութեան վրայ կանգնի ու վճռի իւր առաջ դրուած հարցերը, եւ ոչ թէ թոզնի նրանց տարերքի կամքին, ինչպէս մինչեւ այժմ է եղել:

Սիրելիք! Սկզբից հէնց ես բարոյական պարտք եմ զգում պարզապէս արտայայտելու իմ աննախանձելի տպաւորութիւնները, որ ես ստացայ Ընդհ. Ժողովի առաջին նիստերից յետոյ. հէնց սկզբից ես ստիպուած եմ ձեզ յայտնելու այդ իմ թերատ (?) տպաւորութիւնները եւ ասելու՝ որ Ընդհանուր Ժողովը հազիւ թէ կարողանայ մեզ այնքան տանջող հարցերին գոնէ թեթեւակի պատասխանը տալու, սոցիալիզմի ոգո՛վ տոգորուած պատասխան ի հարկէ, ապա թէ ոչ ամէն տեսակ հարցի պատասխան կարելի է որեւէ կերպ տալ:

Ես պէտք է ձեզ հէնց սկզբից նախազգուշացնեմ, որ մի Ժողով, որտեղ տհագին քանակութեամբ ոչ–սոցիալիստ անդամներ կան, որտեղ ծայրայեղ շովինիստի դիմաց ծայրայեղ ձախակողմեանն է նստած, այնտեղ անհնարին է լինելու հարցերի խաղաղ քննադատութիւն եւ ըմբռնում: Այդպիսի Ժողովում անհնարին է չնախատեսել հաւանական պայթոցներ...:

Ապա ես ձեր շրջանային Ժողովներին ներկայ չըգտնուելով շատ քիչ եմ ծանօթ մի քանի կարեւոր խնդիրների լուծման, նրանց վերջնական վճռման հետ. ձեր տեղեկագիրը եւ արձանագրութիւնը շատ քիչ նիւթ են տալիս այդ ուղղութեամբ, նրանք շատ անորոշ, շատ տեղ իբար հակասող բեզոլիւցիաներ(1) են պարունակում իրենց մէջ. այստեղ մենք այնպիսի մեծաքանակ անդամների հետ գործ ունենք, որոնք կատարում են ամէն անդամ երբ կովկասեան գործունէութեան մասին են լսում, որոնք սոցիալիզմի անունն անդամ լսել չեն ուզում, որոնք Դաշնակցութեան իմաստը Տաճկահայկական դատ են միայն հասկանում, որոնք չափազանց անհամբերութեամբ տարին նոյնիսկ այն միտքը՝ երբ խօսք է լինում կապ ունենալ որեւէ Ռուս. Յեղափոխական մարմինների հետ, որ երբեմն ինձ թըւում է թէ ես ապրում եմ 5–10 տարի այսօրուանից առաջ...: Ծանր դրութիւն է: Սակայն դեռ չեն եկել 7–8 աւելի հեղինակաւոր ընկերներ, որոնց ազդեցութիւնը գոնէ մի քիչ լաւ լինի...:

Ի՞նչ տրամադրութիւն է տիրում ձեր մէջ, ի՞նչ տեղեկութիւններ ունէք մեր միւս քաղաքների դրութեան մասին: Գրեցէք մանրամասն հասցէ եւ իրազեկ արէք ինձ: Օգտուեցէք «անգոյն»ով:

Ձեր ընկեր՝
ԱԼ. ՄԱՇՈՒՐԵԱՆ

(1) Որոշում, բանաձեւ:

3.— ԲԱՆԱՁԵՒԵՐ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԱՅԳԵՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԷՆ

Առաջարկ ա.—

Երկրի իրական դրութեան հետ ծանօթացնելու համար դաշնակցական մասսային եւ դաշնակցական ըն–

կերներին, առաջարկում է ամենալուրջ ուշադրութեան առնել խնդիրը: Ամենաստոյգ աղբիւրների վրայ հիմնուած ուսումնասիրութիւններ հրատարակել:

Առաջարկ բ.—

Օգտուել Կովկասեան կռիւների բոլոր խրատական կողմերից, եւ նրա ժամանակ եկած զինուորական ուժերից: Ունենալ հմուտ ռազմագէտներից կազմուած մարմին Երկրում, չնախատեսուած անակնկալներին պիտաւորելու համար:

Բանաձեւեր Կովկասահայ Դատի եւ նրա եւ Տաճկահայ Դատի կապի մասին

1) Բանաձեւ Աբրահամի, ընդունուած է Շրջանային Ժողովի կողմից

Հ. Յ. Դաշնակցութիւնը, լինելով սոցիալիստական կուսակցութիւն, պէտք է հիմնուէ միմիայն հայ աշխատաւոր մասսայի վերայ, որին պէտք է պատրաստել մի կողմից յեղափոխական կռիւ մղելու ներկայ միապետական կարգերի դէմ, միւս կողմից՝ բարձրացնելու նրա գիտակցութիւնը ապագայ սոցիալիստական կարգերի համար: Յեղափոխական կռուում նա պէտք է գործէ համաձայն Ռուսաստանում գործող բոլոր յեղափոխական մարմինների հետ: Ի նկատի առնելով, որ Կովկասը ներկայացնում է խայտաբղէտ ազգութիւնների մի ժողովածու, մեծ զգուշութեամբ պէտք է մօտենալ ազգայնական(1) խնդրին, որպէսզի առիթ չտալ դժբախտ ազգայնական վէճերին(2): Հայ-Թուրքական ընդհարումները վերացնելու համար, պէտք է լայն պրոպագանդ մղել եւ անկեղծութեամբ մօտենալ Թուրք մասսային եւ ոչ նրա բէգերին եւ նրա ինտելիգէնցիային: Պէտք է սկսել ագրարային շարժումները Թուրքերի հետ միասին, պէտք է բաց Թողնել Թուցիկներ Թուրքերէն լեզուով. մի խօսքով պէտք է աշխատել բարձրացնել նրա գիտակցութիւնը մտնելով գործով (?) ցածրից եւ ո՛չ բարձրից, ինչպէս մինչեւ այժմս արուած է: Հասարակական բոլոր գործերում Դաշնակցութիւնը պէտք է մասնակցէ իր անհատներով այն դէպքում, երբ խնդիրը վերաբերում է միայն հայ ժողովուրդի շահերին եւ ոչ մի դասակարգի:

2) Բանաձեւ Աւօս··· (?) (ընդունուած Շրջ. Ժողովի կողմից)

Ներքին կապ Տաճկահայ եւ Կովկասահայ դատերի. — *Դաշնակցութիւնը իր տնտեսական եւ այլ խնդիրներով Թէ՛ Տաճկահայաստանում եւ Թէ Կովկասում պիտի լինի միեւնոյնը եւ պէտք է աշխատել նոյնը մտցնել եւ մեր հարեւան ազգերի մէջ, դարձնելով նրան մի միջազգային սոցիալիստական կուսակցութիւն:*

Կովկասի եւ Տաճկաստանի դատերը պիտի բաժանել իրարից եւ դարձնել ժողովրդի միանգամայն սեփական գործ:

Դաշնակցութիւնը, լինելով մի միջազգային սոցիալիստական կուսակցութիւն, կարող է ունենալ իր կոնֆերենցիան(3), ուր կը դրուեն քննութեան տեսական եւ այլ ընդհանուր հարցեր:

Այդ կենֆերենցիան օրէնսդիր մարմին չի կարող հանդիսանալ Թէ՛ Կովկասի եւ Թէ Տաճկաստանի դատերի համար:

Պէտք եղած ժամանակ Տաճկաստանի ընկերները կարող են դիմել Կովկասի ընկերների օգնութեան, որը հնարաւոր եղած ժամանակ պիտի հասցնել անպատճառ, եւ ընդհակառակը:

Առաջարկ գ.— *Մարդիկ ուղարկել Պարսկաստան ուսումնասիրելու Թուրքերէն լեզուն, Թուրքերի հետ պրոպագանդը ուժգին կերպով մղելու համար: Առանց Թուրքերի մէջ պրոպագանդի՝ Կովկասեան մեր դատը շարունակ պիտի տուժի:*

Դրամական խնդրին վերաբերուող

դ.— Առաջարկներ.— 1) *Կոնտրոլ չկայ. պարբերական կոնտրոլի մասին մտածել, ծրագրել եւ մանաւանդ ճշդութեամբ գործադրել:*

2) *Պարտադիր կուսակցակ. անդամավճար՝ 2%:*

3) *Յեղափոխութեան բոպէին, լինել չլինելու խնդրի ժամանակ, դիմել էկսպրոպրիացիայի(4):*

4) *Կառավարական էկսպրոպրացիայի դիմել ամէն յարմար դէպքում՝ նրան սնանկացնելու համար:*

5) *Երկարատեւ քայքայիչ գործադուլների պահանջին բաւարարութիւն տալու համար՝ դիմել էկսպրոպրիացիայի:*

6) *Սակայն էկսպրոպրիացիայի անբարոյականացնող բնոյթը չմոռանալ երբեք:*

7) *Ոչ դաշնակցական համակրողներից տուրք ըստանալու դէմ են մեծ մասը:*

8) *Մի Ընդհանուր Ժողովից մինչեւ միւսը ներկայացնել նախահաշիւ:*

9) *Ջեղծումները ամենածանր պատասխանատուութեան ենթարկել:*

10) *Ընդհանուր Ժողովը պէտք է մինչեւ իւր ժամանակուայ բոլոր դաշնակցական խոշոր գործերը եւ որոշումները (լինի դա նախկին Ընդհ. Ժողովների Թէ սրեւէ մարմնի) վերաքննահատման ենթարկէ ամենախիստ եւ անաչառ քննութեամբ:*

---

(1) Պէտք է հասկնալ՝ *ազգային խնդրին:*

(2) Բանաձեւերու լեզուն պահած եմ անփոփոխ:

(3) Կոնֆերանս, խորհրդաժողով:

(4) Բառացիօրէն՝ *կալուածառում* կամ *կալուածազրկում*: Յեղափոխական եզր է, որ կը նշանակէ պետական կամ ռահատական ստացուածքներու եւ ինչքերու բռնի իւրացում:

XII ԺԼԱՏԻ ՇՐՋԱՆ (ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ)

Ժլատի Կեդրոնական Կոմիտէութիւնը — այլ անունով՝ Սարուստանի «քիւ Հ Կ. Կ.» — կ'ընդգրկէր Հիւսիսային Կովկասը՝ առանց Նոր Նախիջեւանի շրջանին, որ, Նալբանդ անունով, կը կազմէր առանձին Կեդրոնական Կոմիտէութիւն: Ժլատի Շրջանային Ժողովի դիմումին վրայ, եւ 4դ Ընդհանուր Ժողովի որոշումով, Ժլատը պիտի դադրէր առանձին Կեդրոնական Կոմիտէութիւն մը ըլլալէ եւ պիտի միացուէր Նալբանդին (տեսնել ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, Գ. հատոր, էջ 97 եւ 255):

Թղթածրարներուն մէջ տեղ գտած հետեւեալ վաւերաթուղթերը կու տանք յաջորդաբար.

1.— «Տեղեկագիր Հ. Յ. Դ. Հ Կ. Կոմիտէի (Ժլատի շրջան)», 16 Մարտ 1907 թուակիր գրութիւն՝ ստորագրուած շրջանի պատգամաւոր Տիկ. Ցուշիկի կողմէ:

2.— «Առաջարկներ Հ Կ. Կոմիտէի (Ժլատի շրջան)», միեւնոյն ձեռագրով եւ նոյն ստորագրութեամբ:

3.— «Համառօտ տեղեկագիր Ժլատի շրջանի», որուն առաջին բաժինը զանց կ'ընենք, Տիկ. Ցուշիկի տեղեկագրին մէջ տեղ գտած թուական տեղեկութիւնները (շրջանի հայ բնակչութեան մասին) կրկնելէ խուսափելու համար: Այս գրութիւնը, Դեկտեմբեր 1906 թուակիր, տարբեր ձեռագրով է, եւ ստորագրուած՝ «ի դիմաց Ժլատի Կ. Կոմիտէի՝ ՎԱՆՓՈՒՇ»: Կու տանք վերջին մասը միայն՝ «կազմակերպական գործի դրութիւնը»:

4.— «Արձանագրութիւն Հ. Յ. Դ. Ժլատի Շրջանային Ժողովի, — 1906 թ. Հոկտ. 24–25»:

5.— «Ժլատի Կեդրոնական Կոմիտէի Շրջանային Ժողով, — 1905 թ., 27 (?) Մարտի»:

6.— «Արձանագրութիւն Ժլատի Շրջանային Պատգամաւորական առաջին ժողովի», 6 Դեկտեմբեր 1904 թուակիր:

Այս գրութիւններէն զատ, թղթածրարներուն մէջ կը գտնենք նաեւ 1906 տարուան 1 Յունուար–1 Յուլիս ժամանակաշրջանի վեցամսեայ մուտքերու տպագրեալ մանրամասն ցուցակները, մեծ չափի 4 թուղթերու վրայ: Վերադարձակումը զանց կ'ընենք, մանրամասնութեանց անշահեկանութեան պատճառաւ: Ժլատի Կ. Կոմիտէի վեցամսեայ ընդհանուր մուտքը եղած է 11628 ռուբլի եւ 45 կոպէկ:

1.— ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. Հ Կ. ԿՈՄԻՏԷԻ (ԺԼԱՏԻ ՇՐՋԱՆ)

Նամակի մեծ չափի 2 երկթերթ թուղթ, Ցուկէս երես, սեւ մելան:

1.— Հայ ազգաբնակութեան պատկերը մեր շրջանում

Ժլատի շրջանը Թէ՛ իր աշխարհագրական դիրքով եւ Թէ կուսակցական գործունէութեան որակով ու քանակով ունի մի քանի առանձնայատկութիւններ, որոնց մասին գաղափար կազմելու համար անհրաժեշտ է նախ ամփոփ տեղեկութիւն ունենալ նրա ազգաբնակութեան մասին: Մեր շրջանը գաղութ է, բառի բուն նշանակութեամբ եւ ունի գաղութի բոլոր բացասական կողմերը: Դրանք այնքան խոշոր են եղել, որ դեռ տարիներ առաջ իրանց վրայ են գրաւել դաշնակցական մարմինների ուշադրութիւնը: Առաջին Շրջանային Ժողովը, 1903 թուի Դեկտեմբերին, այդ մասին արձանագրել է հետեւեալը.— «Հաղորդած տեղեկութիւնները պարզեցին այն տխուր կացութիւնը եւ վտանգաւոր պայմանները, որոնց մէջ ապրում է հայ տարրը Ժլատի շրջանում:

Ընայելով հայերի տնտեսապէս համեմատ[աբար] ապահով վիճակին, նրանք այլասերուելու, անհետանալու վրայ են: Դաշնակցական մարմինների հաւաքած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ հայ ազգաբնակութիւնը իւր թուով կազմելով չնչին փոքրամասնութիւն չրջապատող օտարազգիների համեմատութեամբ, ենթարկուել է նրանց ազդեցութեան եւ այժմ նրա մեծագոյն մասը մայրենի լեզուն բոլորովին մոռացել է: Ազգային ինքնաճանաչութեան զգացումը շատ տեղերում բոլորովին մեռած է, իսկ մեծամասնութեան մէջ նա խիստ բթացել է: Զուտեն հայ կրթական հիմնարկութիւններ, յեղափոխական գաղափարը ժողովրդի մէջ միանգամայն բացակայում է: Անհրաժեշտ շուտափոյթ միջոցներ՝ ծլատի չրջանի հայ ազգաբնակութեան կորստի վտանգից ազատելու համար»: Ի պատասխան չրջանի պահանջներին, որոշւում են մի չարք միջոցներ, զուտ կուլտուրական (բանալ ուսումնարաններ, գրադարաններ, աջակցել հայ ընտանիքներում հայ վարժուհի տեղաւորելու): Այդ իրագործելու համար առաջարկւում է նիւթական միջոցներ ձեռք բերել կողմնակի աղբիւրներից: Սակայն այդ որոշումը գրեթէ մեռած տառ մնաց, որովհետեւ նախ գործի ղեկավար ոյժեր չկային եւ երկրորդ՝ հայկական դպրոցների վերաբացումը մասամբ բաւարարութիւն էր տալիս կրթական գլխաւոր պահանջին: Մեր չրջանի հայ ազգաբնակութեան մեծամասնութիւնը վաճառականներ են կովկասեան այլ եւ այլ գաւառներից գաղթած, իսկ չնչին փոքրամասնութիւնը՝ իսկական աշխատաւորներ, բանուորներ, արհեստաւորներ: Իբրեւ ապացոյց առաջ ենք բերում մի քանի վիճակագրական տեղեկութիւններ, որ հետեւեալ պատկերն են բաց անում մեր առաջ:

Հայերի թիւը

1) Վլատիկաւկազում՝ 2500 հոգի
հետեւեալ պարապմունքների տէրեր
45–50 գործակատար
20 մանր արհեստաւորներ, բոստանչիններ [պարտիզպաններ՞ը]
մնացածը՝ առեւտրականներ:

2) Պետրովսկ՝ 300 հոգի. ընդհանուր առմամբ առեւտրականներ են, միայն շատ աննշան քանակութեամբ մշակներ կան Պորդում:

3) Գրոզնա՝ 500 բնակիչ. կան՝
40–50 բանուորներ
30 գործակատարներ
5–8 մանր արհեստաւորներ
մնացածը՝ առեւտրականներ:

4) Ղզլար՝ 4000 բնակիչ. կան՝
բանուորներ 150
գործակատարներ 70
առեւտրականներ
այգետէրեր:

5) Պրախլադնի՝ 150 հոգի, բոլորը՝ առեւտրականներ:

6) Մոզդոկ՝ 2200. կան՝
120 սայլապաններ
50–55 գործակատարներ
150 բանուոր–մշակներ
25–30 մանր արհեստաւորներ
մնացածը՝ առեւտրականներ–վաճառականներ:

7) Գէորգեւսկ՝ 115–120 հոգի. կան՝
15–20 մշակներ
մնացածը՝ առեւտրականներ:

8) Պետրոգրադսկ՝ 1000–1100 հոգի. կան՝
քարտաշներ 220
գործակատարներ 50
չիվեալնիկներ 30
մանր արհեստաւորներ 5–7
մնացածը՝ առեւտրականներ:

9) Արմաւիր՝ 8000ից աւելի. կան՝
600 բանուոր
150 գործակատար
80 արհեստաւորներ
մնացածը՝ առեւտրականներ:

10) Կուկազսկիյ՝ 150–160 հոգի, առեւտրականներ:

11) Ստաւրոպոլ՝ 1150 հոգի. կան՝
70 հոգի ծառայող գործակատարներ
25 մանր արհեստաւորներ
մնացածը՝ առեւտրականներ:

12) Սուրբ Խաչ՝ 4000ից աւել հողագործներ, այգետէրեր:

Առաջ բերած թուերից երեւում է որ մեր չրջանում հայերի քանակը հասնում է 23·675 հոգու, որից 21·615 վաճառականներ են, իսկ մնացած 2065 հոգին՝ աշխատաւորներ:

2.— Դաշնակցական մարմինների կազմը եւ վիճակը

Հ. Յ. Դաշնակցութիւնը մեր չրջանում դեռ 90ական թուականներից ունեցել է խմբեր ու համակրողներ: Կալուածական հարցը աւելի եւս բարձրացրել է նրա ազդեցութիւնը ինչպէս ամէն տեղ, նաեւ մեզանում: Հենց այդ պատճառով 1904 թուի սկզբում է դաշնակցականների թիւը աճել:

Դրանից յետոյ հայ–թուրքական ընդհարումները աւելի եւս հրամայողական պահանջ են դնում դաշնակցական դրօշակի տակ համախմբուելու. որովհետեւ նա արդէն ճանչցուած էր իբրեւ մի կուսակցութիւն, որ ժողովրդի ամենածանր օրերին պատրաստ է օգնութեան հասնել՝ կեանքը, գոյքը եւ իրաւունքները պաշտպանել: Թուրքական արշաւանքների սպառնալիքը մեր չրջանի հայութեանն էլ երկիւղի մէջ էր պահել եւ նա Դաշնակցութիւնից էր սպասում իր փրկութիւնը: Այդպիսով օրեցօր դաշնակցական նորանոր խմբեր էին կազմակերպւում:

Մեզանում խմբերը կազմուել են կուսակցական կազմակերպական կանոնների համաձայն, այսինքն՝ խաուն, առանց պարապմունքի խտրութեան՝ խմբեր, ենթակոմիտէներ, կոմիտէներ:

Դրանց թիւը եղել է 1906 թուի Յուլիսին՝ երկու կոմիտէ, ութ ենթակոմիտէ, 140 խումբ: Բացի դրանից ունենք նաեւ արհեստակցական միութիւններ, 2ը Պետրոգրադում՝ քարտաշներինը 150 անդամ եւ չուվեալնիկներինը (?) 25 անդամ: Նաեւ պետական զինուորների խումբ Վլատիկաւկազում՝ մօտ 180 անդամներով:

Ուրեմն ամբողջ չրջանում մօտ 1755 զանազան ձեւով կազմակերպուած դաշնակցականներ:

3.— Դրամական.— Դրամական մուտք ստացում է անդամավճարներից, վիճակախաղից, երեկոյթներից, նուէրներից եւ հանգանակութիւնից: Կենտրոնական կոմիտէն ունեցել է հետեւեալ ելք ու մուտքը.

	Մուտք	Ելք
1904,–	8204 ռ 05 կ	6069 ռ 31 կ
1905,–	30·472 ռ 42 կ	27·420 ռ 61 կ
1906 մինչեւ Նոյ. 1		(6464 ռ 22 կ՝ անդամվճ.)
	33·131 ռ 85 կ	19·853 ռ 37 կ

4.— Պրոպագանդ.— Պրոպագանդի գործը մեզանում նախանձելի վիճակի մէջ չէ, թէեւ կարիքը չափազանց մեծ է թէ՛ կուսակցական ընկերների եւ թէ նոյնիսկ ամբողջ գաղութի կողմից: Այդ հանգամանքից դրդուած, կենտրոնական կոմիտէն ստիպուած էր յատուկ պրոպագանդիստներ պահել, որոնց թիւը հասնում էր 1905ին՝ 3ի, իսկ 1906ին՝ 2–3: Դրանք, ազատ լինելով այլ զբաղմունքներից, առաջ էին տանում պրոպագանդի գործը՝ թէ՛ բանաւոր կերպով, չրջելով, եւ թէ կենդանի կապ պահպանելով նամակագրութեամբ: Պրոպագանդայի նիւթ են ծառայել Հ.Յ.Դ. Ծրագրի ու գործունէութեան մասին տեղեկութիւններ եւ զանազան ընթացիկ հարցեր: Ընայելով այդ բոլորին, մանաւանդ վերջերս, նկատւում է դաշնակցական խմբերի թուլանալն ու մեծ մասամբ կազմալուծուելը:

5.— Զինական.— Մեր չրջանը իր աշխարհագրական դիրքով ու չրջապատող պայմանների չնորհիւ բաւական դեր է խաղացել զէնքերի գնման եւ տեղափոխութեան խնդրում եւ հէնց այդ դերն է եղել գլխաւոր պատճառը, որ անցեալ Ընդհանուր Ժողովը նրան կենտրոնական կոմիտէի իրաւունք է տուել:

Գտնուելով ռազմագիտական ճանապարհի եւ դէպի կովկաս տանող երկաթուղու գծի վրայ, մեր կենտրոնական կոմիտէն էլ ստիպուած է եղել զինուորական գործ ունենալ Դաշնակցութիւնից ստացուած զէնքերի հետ: Այդ գործը մեզանում նախանձելի վիճակի մէջ չէ, թէեւ կարիքը չափազանց մեծ է թէ՛ կուսակցական ընկերների եւ թէ նոյնիսկ ամբողջ գաղութի կողմից: Այդ հանգամանքից դրդուած, կենտրոնական կոմիտէն ստիպուած էր յատուկ պրոպագանդիստներ պահել, որոնց թիւը հասնում էր 1905ին՝ 3ի, իսկ 1906ին՝ 2–3: Դրանք, ազատ լինելով այլ զբաղմունքներից, առաջ էին տանում պրոպագանդի գործը՝ թէ՛ բանաւոր կերպով, չրջելով, եւ թէ կենդանի կապ պահպանելով նամակագրութեամբ: Պրոպագանդայի նիւթ են ծառայել Հ.Յ.Դ. Ծրագրի ու գործունէութեան մասին տեղեկութիւններ եւ զանազան ընթացիկ հարցեր: Ընայելով այդ բոլորին, մանաւանդ վերջերս, նկատւում է դաշնակցական խմբերի թուլանալն ու մեծ մասամբ կազմալուծուելը:

5.— Զինական.— Մեր չրջանը իր աշխարհագրական դիրքով ու չրջապատող պայմանների չնորհիւ բաւական դեր է խաղացել զէնքերի գնման եւ տեղափոխութեան խնդրում եւ հէնց այդ դերն է եղել գլխաւոր պատճառը, որ անցեալ Ընդհանուր Ժողովը նրան կենտրոնական կոմիտէի իրաւունք է տուել:

Գտնուելով ռազմագիտական ճանապարհի եւ դէպի կովկաս տանող երկաթուղու գծի վրայ, մեր կենտրոնական կոմիտէն էլ դիւրութիւններ եւ աջակցութիւն է ցոյց տուել «Զիֆոնի» յանձնարարութեամբ գործող բոլոր ընկերներին, չհաչուելով անմիջական գնումներն ու տեղափոխութիւնները:

Մարմինը իր ժամանակին հնար եղած չափով հոգացել է նաեւ ինքնապաշտպանութեան մասին, յարմարաւոր կենտրոններում քիչ քանակութեամբ զէնք ու ռազմամթերք պահելով, իսկ Վլատիկաւկազում նոյնիսկ յատուկ զինուորական խումբ՝ 20 հոգուց բաղկացած, որը վերջերս պակասել է թուով: Մնացել են միայն 3 հոգի, որոնք ներկայումս «Զիֆոնի» գործերով են զբաղւում:

6.— Ցարաքերութիւններ ուրիշ կուսակցութիւնների հետ.— Հ.Յ.Դ. միակ հայ կուսակցութիւնն է, որ ունի կողմնակիցներ եւ գործում է այդ չրջանում: Կան ուրիշ միջազգային կուսակցութիւններ, այն է՝ սոցիալդեմոկրատներ, էս. էռներ, «Վսեռոսսքիյ, Վայեննրյ, Սայուզ» եւ Օսերի նորակազմ կուսակցութիւնը: Այս վերջինս մի տարի է ինչ սկսել է իրա գործունէութիւնը, նման մեր Ծրագրին՝ որը խնդրեցին մեզանից ընդօրինակելու համար: Իրրեւ բարեկամ կուսակցութիւն ենք համարել վերջին երեքները, որոնց հետ ունեցել ենք յարաբերութիւններ, իսկ «Վս. Վայ. Սզ.» մարմնի մէջ ունեցել ենք նաեւ ներկայացուցիչ: Այդ կազմակերպութեանը չրջանը մեծ կարեւորութիւն է տուել եւ աշխատել է աջակցել ամէն կերպ, թէ՛ զէնքով (տեղորներ կատարելիս), թէ՛ փողով (զանազան ժամանակ տրուած է դրանց մինչեւ 350 ռ.): Դրանց հետ միացած են մեր կուսակցական ընկերներից մօտ 180 հոգի, այսինքն պետական ծառայութեան մէջ գտնուող հայ զինուորները:

7.— Առաջարկներ.— Առաջ բերած տեղեկութիւնները ու թուերը ցոյց են տալիս, որ մեր չրջանը բաւական համեստ գործունէութիւն է ցոյց տուել, որ կենտրոնացած է եղել գլխաւորապէս դրամական օժանդակութիւն հասցնելու չուրջը: Ճիշդ է որ ունեցել ենք նաեւ արհեստակցական միութիւններ, որ աշխատել են հէնց տեղումը՝ իրենց անդամների նիւթական ու իրաւական վիճակը բարւոքել, բայց դրանք չափազանց սակաւաթիւ են եւ արտայայտած գործունէութիւնն էլ աննշան: Ընդհանրապէս մեր չրջանի հայ ազգաբնակութիւնը չատ քիչ հող է ներկայացնում աշխատաւորական գործելակերպ առաջ տանելու համար: Մնում է ուրեմն միայն հանգանակութիւնն ու դրամական օժանդակութիւնը: Ահա այդ հանգամանքներն աչքի առաջ ունենալով մեր Չրջանային վերջին Ժողովը միաձայն որոշեց առաջարկել Ընդհանուր Ժողովին, որպէսզի ապագայում վերացուի մեր կենտրոնական կոմիտէութիւնը, չրջանը միացուի Նալբանդի հետ, որը եւ կը

լինի ընդհանուր կենտրոն ու իրաւասու՝ այդ երկու շրջանների։

Բացի դրանից, Շրջանային Ժողովը ձայների մեծամասնութեամբ ընդդէմ մէկի ընդունեց հետեւեալ բանաձեւերը Հ. Յ. Դաշնակցութեան ապագայի ու Ծրագրի վերաբերմամբ։—

ա) Հ. Յ. Դաշնակցութիւնը, նպատակ դնելով իրականացնել սոցիալիստական կարգեր, կոչուած է կազմակերպել աշխատաւոր մասսաների (թէ՛ արդիւնագործական բանուորութեան, թէ՛ աշխատաւոր գիւղացիութեան եւ թէ մանր արհեստաւորութեան) տնտեսական կռիւը, զուգընթացաբար ձգտելով ձեռք բերել նրա յաջող զարգացման համար ամենաանհրաժեշտ պայմանները,— քաղաքացիական ազատութիւն թէ՛ Ռուսաստանում եւ թէ Տաճկաստանում։

բ) Ի նկատի ունենալով որ Տաճկաստանում, բացի դասակարգային կռուից, տեղի ունի նաեւ ազգային գոյութեան կռիւ, ուստի՝ Տաճկահայկական դատի յաջող լուծման տեսակէտից, ամենալայն սոցիալիստական պրոպագանդ անելով միաժամանակ նաեւ Տաճկաստանը բռնող բոլոր ազգերի մէջ, մինչեւ այժմ գոյութիւն ունեցող յարձակողական կռիւները փոխել ինքնապաշտպանութեան։

գ) Կովկասեան գործունէութիւնը եւ Տաճկահայ խնդիրը վարում են ֆեդերատիւ սկզբունքներով իրար հետ կապած Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոները, գերագոյն մարմին ունենալով խառն Ընդհանուր Ժողովը։

դ) Ունենալ արտասահմանեան ամենալայն պրոպագանդա, կուսակցական մի նոր օրգան՝ նուիրուած Տաճկահայկական դատին եւ Պրոպագանդիստների դպրոց։

Պատգամաւոր Հ. Կ. Կոմիտէի (Ժլատի շրջան)

ՑՈՒՇԻԿ

1907 թիւ Մարտի 16

2.— ԱՌԱՋԱՐԿՆԵՐ Հ. Կ. ԿՈՄԻՏԷԻ (ԺԼԱՏԻ ՇՐՋԱՆ)

Նամակի մեծ չափի 1 երկթերթ թուղթ, 1 էջ եւ 3 տող, սեւ մելան։ Մեծ մասամբ կրկնութիւնը կը կազմէ տեղեկագրին մէջ բանաձեւուած առաջարկներուն։

1. Ի նկատի ունենալով որ բազայի կողմից Ժլատը անպատրաստ հող է ներկայացնում, որ ձեռնհաս մարդկանց պակասութիւն է զգացւում, Շրջանային Ժողովը որոշեց առաջարկել Ռայոնական եւ Ընդհանուր Ժողով[ներ]ին՝ միացնել Ժլատի շրջանը Նալբանդի հետ, կեդրոնատեղ ընտրելով Նալբանդը։

Բացի դրանից, Շրջանային Ժողովը, ձայների մեծամասնութեամբ ընդդէմ մէկի, ընդունեց հետեւեալ բանաձեւերը Հ. Յ. Դաշնակցութեան ապագայի եւ Ծրագրի վերաբերմամբ։

(Թիւ 2, 3 եւ 4 առաջարկները բառացիօրէն կը կրկնեն տեղեկագրի թիւ 7 բաժնի — առաջարկներ — ա., բ. եւ գ. կէտերը։— Հ. Տ.)։

5. Որովհետեւ արտասահմանեան գաղութները կազմել են գլխաւորապէս Տաճկաստանից եւ որոշ շահերով կապուած են Տաճկահայ դատի հետ, Դաշնակցութիւնը պէտք է աշխատի նրանց մէջ եւս առաջ տանել պրոպագանդա յօգուտ Տաճկահայ դատին, իւր սոցիալիստական սկզբունքներն ի նկատի ունենալով։

6. Բոնի միջոցով փող հանգանակել ե՛ւ մասնաւոր անհատներից ե՛ւ պետական գանձարանից։

Պատգամաւոր Հ. Կ. Կոմիտէի

ՑՈՒՇԻԿ

3.— ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԺԼԱՏԻ ՇՐՋԱՆԻ

Ժլատի Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչ վաճառչի կողմէ ստորագրուած այս գրութիւնը սեւ մելանով, կը գրաւէ նամակի նորմալ չափի երկթերթ թուղթի մը մօտ 3ուկէս էջերը։ Առաջին երկու էջերը կը պարունակեն թուական տեղեկութիւններ, գոնէ նոյնութեամբ կը գտնենք Տիկ. Ցուշիկի տեղեկագրին մէջ (թիւ 1 գրութիւն)։ Ստորեւ կու տամք վերջին մէկուկէս էջը միայն։

Կազմակերպական գործի դրութիւնը հետեւեալն է.—

Մինչեւ 1906 թուի կէսերին վերոյիշեալ բոլոր տեղերում(1) *եղել են դաշնակցական խմբեր՝ կոնգլոմերատ*(2) *կազմով, որոնց ցուցակը առանձին է դրուած։ Այդ խմբերում պրոպագանդան բնականօրէն ոչ մի արդիւնք չէր կարող ունենալ. միայն մի քանի կէտերը կարեւոր նշանակութիւն են ունեցել տեղափոխութեան գործում։ 1906 թուի երկրորդ կէսից սկսած՝ ծրագրային եւ տակտիկային հարցերը քննադատելու անուան տակ Դաշնակցութեան դէմ սկսած արշաւանքը իւր բարերար ներգործութիւնն է անում, եւ այդ անուանական խմբերը գրեթէ բոլոր վայրերում սկսում են կազմալուծուել։ Ներկայիս, կարելի է ասել, յեղափոխական գործը կանգ է առել եւ մինչեւ օրս գոյութիւն ունեցած մշուշային ու անգոյն դրութիւնը դադարում է անանպատակ տեղը ուժեր խլելուց։ Պէտք է անցնել գործի նոր շրջանը, պարզ ու որոշակի դարձնելով թէ ո՛ր խաւերի վրայ պէտք է հիմնել գործունէութիւնը։ Այդ տեսակէտից, Ժլատի շրջանը՝ վերոյիշեալ համառօտ տեղեկագրի համաձայն, ներկայացնում է մի թոյլ շրջան, ուր միայն մի քանի աշխատաւորների խմբեր կարելի է կազմակերպել։ Այդ իսկ պատճառով Շրջանային ժողովում որոշուեց վերացնել Կ. Կոմիտէութիւնը մեր շրջանից։*

Ի դիմաց Ժլատի Կ. Կոմիտէի

ՎԱՆՓՈՒՇ

(1) Այդ «տեղերում» համար տե՛ս Տիկ. Ցուշիկի տեղեկագրի «Հայերի թիւը» բաժինը։

(2) Շեղջակուտակ, — բսել կ'ուզէ՝ խառն, բոլոր խաւերու մէկտեղումով կազմուած։

— Աւելի մանրամասն տեղեկագիր կազմելու եւ Ընդհ. Ժողովին ներկայացնելու հնարաւորութիւն չեղաւ։ Այդ պատճառով էլ մեր ներկայացուցչի այդ կէտի բացակայութեան պատասխանատուութիւնը ընկնում է Կ. Կոմիտէի վրայ։

Ի դիմաց Ժլատի Կ. Կոմիտէի

ՎԱՆՓՈՒՇ

1906 թ. Դեկտ.
Ժլատ

4.— ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ Հ.Յ.Դ. ԺԼԱՏԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

1906 թ. Հոկտ. 24–25

Նամակի մեծ չափի 2 երկթերթ թուղթ, 5 էջ, սեւ մելան։ Շրջանային ժողովի բանաձեւերէն շատերը տեղ գտած են Տիկ. Ցուշիկի տեղեկագրին մէջ։

Հ.Յ.Դ. Ժլատի Շրջանային Ժողովին մասնակցում են 6 ներկայացուցիչներ՝ 1. Կ. Կոմիտէի, 2. Ժլատի խմբերի, 3. Նոր-Աւանի, 4. Բերդի, 5. Բուժարանի եւ 6. Նորածնի, նախագահութեամբ ընկ. Ցուշիկի և մասնակցութեամբ այլ ընկերների (առանց ձայնի իրաւունքի)։

Շրջանային Ժողովը ընդունեց զբաղմունքի հետեւեալ օրակարգը.

1. *Դաշնակցութեան նպատակը*
2. *Դաշնակցութեան միջոցները*
3. *Կովկասահայ խնդիրը*
4. *Տաճկահայ խնդիրը*
5. *Այդ երկու հարցերի ներքին կապը*
6. *Դաշնակցութեան յարաբերութիւնները միւս յեղափոխական կուսակցութիւնների հետ*
7. *Դաշնակցութեան դերը գաղութներում*
8. *Պրոպագանդա*
9. *Դիպլոմատիա — Լահէի ժողով*
10. *Դաշնակցութեան դերը քաղաքական-հասարակական ասպարէզներում*
11. *Մարտական-զինուորական հարց*
12. *Զինուորական ընդհ. խորհրդի հիմնումն*
13. *Տեղեկագիր — դրամական հաշուետուութիւն*
14. *Նախահաշիւ*
15. *Առաջարկներ*
16. *Ընտրութիւններ։*

1) Դաշնակցութեան նպատակը

Հ. Յ. Դաշնակցութիւնը, նպատակ դնելով իրականացնել սոցիալիստական կարգեր, կոչուած է կազմակերպել աշխատաւոր մասսաների — (թէ՛ արդիւնագործական բանուորութեան, թէ՛ աշխատաւոր գիւղացիութեան եւ արհեստաւորներին) — տնտեսական կռիւը, զուգընթացաբար ձգտելով ձեռք բերել նրա յաջող զարգացման համար ամենաանհրաժեշտ պայմանը, — քաղաքացիական ազատութիւն թէ՛ Ռուսաստանում եւ թէ Տաճկաստանում, դնելով ներկայիս հետեւեալ պահանջները.

ա) Քաղաքական՝ համաձայն նախագծի(1)

բ) տնտեսական՝ համաձայն նախագծի, աւելացընելով յղի կանանց արձակուրդ՝ ծննդաբերութիւնից առաջ 2 ամիս եւ յետոյ 1 ամիս, վճարելով այդ ժամանակի վարձը։

Ծանօթ.— Փոքրամասնութեան կարծիքով յօդ. 2ին աւելացնել «բացառեալ շուայլութեան առարկաներից», (Անուղղակի հարկ)։ Անցաւ միաձայն։

2) Միջոցներ

I. Հ. Յ. Դաշնակցութիւնը, իւր նպատակին հասնելու համար, յենւում է պրոլետարիատի, աշխատաւոր գիւղացիութեան եւ չչահագործող արհեստաւորութեան վրայ (4 ձայն)։

II. Փոքրամասն. յենուել պրոլետարիատի եւ աշխատաւոր գիւղացիութեան վրայ (2 ձայն)։

Տակտիկա.— *Հ. Յ. Դաշնակցութիւնը իւր բազայի զինուելուն պէտք է ուղղութիւն տայ պրոպագանդայի միջոցով*

միլիցիա
մարտական մարմին աւտոնոմ(2) *սկզբունքներով*
քաղաքական ահաբեկումներ
պրոֆեսիոնալ միութիւններ
սպառողական ընկերութիւններ
գործադուլ (զգուշութեամբ վերաբերուելով մասնակի գործադուլներին)
մունիցիպալիզացիա(3) միաձայն

3) Կովկասահայ խնդիր

Տես «Նախագիծ» միաձայն

4) Տաճկահայ խնդիր

Ի նկատի ունենալով, որ Տաճկաստանում՝ բացի դասակարգային կռուից, տեղի ունի նաեւ ազգային գոյութեան կռիւ, ուստի՝ Տաճկահայկական դատի յաջող լուծման տեսակէտից, ամենալայն սոցիալիստական պրոպագանդ անելով միաժամանակ նաեւ Տաճկաստանը բռնող բոլոր ազգերի մէջ, մինչեւ այժմ գոյութիւն ունեցող յարձակողական կռիւները փոխել ինքնապաշտպանութեան: 5 ձայն ընդդէմ 1ի:

II. Փոքրամասն. *Տաճկահայկական դատը դարձնել Տաճկաստանի դատ, նրա վարումը թողնելով իրանց՝ Տաճկահայերի վրայ:* 1 ձայն ընդդէմ 5ի:

5) Ներքին կապը

Կովկասեան գործունէութիւնը եւ Տաճկահայ խնդիրը վարում են ֆեդերատիւ սկզբունքներով իրար հետ կապուած Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոները, գերագոյն մարմին ունենալով խառն Ընդհ. ժողովը: 5 ընդդէմ 1ի:

Փոքրամասն. Երկու հարցերի ներքին կապը կը լինի միեւնոյն սոց. կուսակցութեան դաւանանքը ընդունող սկզբունքը: 1 ընդդէմ 5ի:

6) Յարաբերութիւն միւս յեղափոխական կուսակցութիւնների հետ

Ունենալ համերաշխ գործունէութիւն սոցիալիստ. կուսակցութիւնների հետ: Միաձայն:

7) Դերը գաղութներում

I. *Որովհետեւ արտասահմանեան գաղութները գաղթել են գլխաւորապէս Տաճկաստանից եւ որոշ շահերով կապուած են Տաճկահայ դատի հետ, Դաշնակցութիւնը պէտք է աշխատի նրանց մէջ եւս առաջ տանել պրոպագանդա՝ յօգուտ Տաճկահայ դատի, իւր սոցիալիստական սկզբունքներն ի նկատի ունենալով:* 3 ձայն, 1 ձեռնպահ ընդդէմ 1ի:

II. Փոքրամասն. *Արտասահմանեան գաղութներում (բացի Պարսկաստանից) Դաշնակցութիւնը պէտք է վերացնի իւր գործունէութիւնը:* 1 ձայն:

8) Պրոպագանդա

Ունենալ արտասահմանեան ամենալայն պրոպագանդա, կուսակցական մի նոր օրգան նուիրուած Տաճկահայկական դատին, պրապոգանդիստների դպրոց:

9) *Դաշնակցութիւնը երբեք չպէտք է յոյս դնի դիպլոմատիայի(4) վրայ եւ ընդմիշտ պէտք է հրաժարուի նրանից:*

10) Դաշնակցութեան դերը քաղաքական եւ հասարակական մարմինների մէջ

I. *Դաշնակցութիւնը պէտք է ձգտի քաղաքական-հասարակական հիմնարկութիւնների մէջ ներչընչել իւր ոգին:* 4 ձայն:

II. Փոքրամասն. *Որովհետեւ քաղաք.-հասարակ. գործերում խառնուելը առաջացնում է տարաձայնութիւններ եւ բանակռիւներ հակառակ տարրերի մէջ եւ գրաւում է կազմակերպութեան ուշադրութիւնը, հեռացնելով նրան իրա բուն նպատակից, առաջարկւում է չխառնուել քաղաք.-հասարակ. հարցերում:* 2 ձայն:

11) Մարտական-Զինուորական հարց. *Ի նկատի ունենալով միլիտարիզմի բացասական հետեւանքները, ընդունել միլիցիա(5), միջոցները թողնելով մարտական մարմնին:*

12) Զինուորական ընդհ. խորհրդի հիմքում. *Այս հարցի անորոշութեան պատճառով՝ ժողովը թողնում է իւր ներկայացուցչի իրաւասութեան՝ Ռայոն. ժողովում ծանօթանալուց յետոյ իւր ձայնը տալու, դէմ լինելով միանգամայն միլիտարիզմի(6) ոգուն:*

13) *Հաշուետուութեան համար ընտրուեց կոմիսիա(7)՝ Աւս, Արշակ եւ Զաւէն:*

14) *Նախահաշիւ.— Կ. Կոմիտէին թողնել մանրամասն նախահաշիւ կազմելը:*

I. *Մասնաւոր անհատներից բռնի միջոցով փող հաւաքելը վերացնել, իսկ պետական դանձարանից տանելը պահել (?) որոշ մոմէնտներում:* 2 ձայն:

II. *Որոշ յեղափոխական մոմէնտներում(8) ընդունւում է բռնի միջոցով փող կորզելը եւ մասնաւոր անհատներից:* 4 ձայն:

15) Առաջարկներ չկան:

16) Ընտրութիւն ա) պատգամաւորի

5 ձայնով ընդդէմ 1ի ընտրուեց ընկեր Ցուշիկը (Ժ.) *մասնակցելու թէ՛ Ռայոնական եւ թէ Ընդհանուր ժողովներում Ժլատի կողմից:*

բ) Կ. Կոմիտէի

Ի նկատի ունենալով որ բազայի կողմից Ժլատը անպատրաստ հող է ներկայացնում, որ ձեռնհասմարդկանց պակասութիւն է զգացւում, Շրջանային ժողովը որոշեց առաջարկել Ռայոնական եւ Ընդհանուր ժողովին՝ միացնել Ժլատի շրջանը Նալբանդի հետ, կենտրոնատեղ ընտրելով Նալբանդը: Միաձայն:

Նախագահ Շրջանային ժողովի
ՑՈՒՇԻԿ

Նոր-Աւանի ներկայացուցիչ Լեւոնի փոխարէն ստորագր.
ՎԱՆՓՈՒՇ

Բերդի ներկայացուցիչ ԱՒՕ, ԱՒՕ (?)
Ժլատի Կ. Կոմիտէի ներկայացուցիչ ԴԱԼԻ-ԳԻՈՉ
Ժլատի տեղական խմբերի ներկայացուցիչ ՊԵՏՐՈՍ
Բուժարանի տեղ. մարմնի ներկայացուցիչ ՍՄԲԱՏ
Քարտուղար ՎԱՆՓՈՒՇ

(1) Կ'ակնարկուի ամկասկած «Կովկասեան նախագիծ»ին:
(2) Ինքնիշխան, ինքնավար:
(3) Քաղաքապետականացմա՞ն:
(4) Դիւանագիտութեան:
(5) Աշխարհազօր:
(6) Բազմապաշտութիւն:
(7) Ցանձնախումբ, յանձնաժողով:
(8) Պահ, առիթ:

5.— ԺԼԱՏԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ՇՐՋԱՆԱՑԻՆ ԺՈՂՈՎ

1905, 27 (?) Մարտի

Նամակի մեծ չափի մէկ երկթերթ թուղթ, 2ուկէս էջ, մանիշակագոյն մելան: Մեր ունեցած օրինակը ստորագրուած չէ:

Ա. նիստ

Ներկայ Շրջանային ժողովին ներկայացել էին շրջաններից հետեւեալ պատգամաւորները.— Բուժարանից՝ Պ. Բանգայ, Լուսաստղից՝ Պ. Ասլանը, Կրերայից՝ Պ. Երկաթը, Նոր Աւանից՝ Պ. Կոռն, Նորածնից՝ Պ. Խորխոռունի, Ժլատի տեղական կոմիտէից՝ Պ. Էմմանուէլը: Ներկայ էր եւ Կ. Կոմիտէի ամբողջ կազմը:

Բացակայ էին անյայտ պատճառներով՝ Բերդի, Առատի, Քարափի եւ Մժեղի պատգամաւորները. իսկ Արծիւը իր ձայնը նամակով տուել էր Կենտ. Կոմիտէի անդամ՝ Պ. Արտաւազդին:

Պ. Արտաւազդը միաձայն ընտրուելով նախագահ՝ ժողովը բացեց յուսկայս՝ յարգել տալով Բագուի անմեղ զոհերի եւ Քրիստափոր Միքայէլեանի անմահ յիշատակը:

Պ. Նախագահը՝ կարդալով Ա.(1) Բիւրոյի առաջարկած հարցերը, որոնք եւ կազմում են ներկայ ժողովի նիւթը, անցաւ իւրաքանչիւրի առանձին քննութեանը, պահպանելով սակայն այն կարգը, որով առաջարկուած էր:

I. Զինումն.— *Ա.(1) Բիւրոն ի նկատի ունենալով Բագուի դէպքերը եւ Սարուստանի(2) կրիտիկական բոպէները, առաջարկում է իւր բոլոր մարմիններին՝ զինել ժողովուրդը ամէն տեսակ պիտանի զէնքերով:*

Պ. Նախագահը, նախքան ծրագիրը կարդալը (Բիւրոյից առաջարկուած)՝ կարեւոր համարեց զինման նշանակութիւնը [բացատրել] աւելի լայն մտքով: Ինքնապաշտպանութեան տեսակէտից՝ զինումն մի պահանջ է այնպիսի ազգի համար, որ շրջապատուած է կուրտուրապէս աւելի ստոր ազգերով, որոնք չատ ժամանակ կարող են հեշտութեամբ խաղալիք դառնալ բրոնակալութեան ձեռքում, եւ կամ նոյնիսկ յարձակում գործել՝ կողոպուտի, թալանի նպատակով: Մանրամասն բացատրելուց յետոյ, նախագահը կարդաց Բիւրոյի առաջարկած զինման ծրագիրը եւ խնդրեց քննել:

Պատգամաւորները միաձայն այն կարծիքին էին՝ թէ զինումը մեր գոյութեան ամենակարեւոր հարցերից մին է, եւ անհրաժեշտ է զինել ժողովուրդը, մանաւանդ որ նա Բագուի աղէտալի դէպքերից յետոյ զգացել է նրա խիստ կարեւորութիւնը: Զինումն սկզբունքով ընդունելուց յետոյ, Պ. Նախագահը առաջարկեց, թէ արդեօք որքա՞ն պահանջ կայ եւ թէ ժողովուրդը քիչ թէ չատ զինուած չէ՞. տեղեկացուեց, որ պահանջը ամէն մի շրջանում չատ մեծ է եւ ժողովրդի մեծամասնութիւնը անզէն է: Այդ տեղեկութիւնները հաւաքելուց յետոյ, Պ. Նախագահը անցաւ միջոցներին:

ա) Պատգամաւորներից մինը յայտնեց իւր կարծիքը այդ մասին եւ նպատակայարմար համարեց, որ ամէն մի մարմին իւր շրջանում հաւաքէ միանուագ նուէրներ կազմելու մի ֆոնդ եւ ապա այդ գումարով գընել զէնք եւ ծախել ցանկացողներին: Մեծամասնութիւնը դէմ էր այդ կարծիքին, ի նկատի ունենալով, որ Դաշնակցութիւնը հիւսիսային Կովկասում դեռ նոր է եւ կանոնաւոր հիմքերի վրայ չէ դրուած, իսկ այդ միանուագ նուէրները [տալը] պիտի Դաշնակցութեան անդամներին առաջարկուի, որով կարող է գործը թուլանալ. բացի դրանից, զինումը կարօտ է չուտափոյթ իրականանալուն. աւելի նպատակայարմար համարուեց Դաշնակցութեան դրամարկղից վերցնել փոխարինաբար մի գումար (մանաւանդ որ Բիւրոն էլ ընդունում է) եւ յատկացնել զէնքի հայթայթմանը. միայն թէ ամէն մի մարմին, վնասուելու դէպքում, կողմնակի դանազան միջոցներով ապահովէ ամէն մի կորուստ:

բ) Գալով փոխառութեան քանակութեանը, որոշուեց բարձրացնել մինչեւ 1100 ռուբլի (հազար հարիւր ռուբլի):

գ) Գումարը որոշուելուց յետոյ, հարցը անցաւ

գործադրութեանը, թէ արդեօք ի՛նչ միջոցներով եւ կամ ո՛վ կարող է յանձն առնել զէնքի հայթայթումը. որոշուեց հրաւիրել գործը հասկացող ձեռնհաս մարդիկ եւ դրամագլուխը դնել նրանց տրամադրութեան տակ, իսկ այդ մարդիկ կ'ունենան իրենց գործակատարները ամէն մի շրջանում, որոնք կը հոգան զէնքի հայթայթման մասին եւ, նախօրօք հաւանութիւն ստանալով իրենցից աւելի բարձր, վերեւ յիշուած ձեռնհաս մարդկանցից, գնել ու հասցնել ուր որ հարկն է:

դ) Որպէսզի մշտապէս ապահովուի զէնքի հայթայթման գործը, որոշուեց սկզբունքով ընդունել Արեւելեան Բիւրոյի առաջարկութիւնը՝ կազմելու մի մշտական ֆոնդ, յատկացնելով այդ նպատակի համար զէնքի վաճառումից [գոյացած գումարը եւ] պարտաւորութիւն դնել ամէն մի մարմնի վրայ՝ զօրացնելու ֆոնդը կողմնակի զանազան միջոցներով:

ե) Ֆոնդի կառավարութիւնը թողնել առայժմ Կ. Կոմիտէի տրամադրութեան տակ(3):

II. Ի՞նչ դիրք բռնել ռուսական ներկայ շարժումների վերաբերութեամբ.— Որոշուեց մասնակցութիւն ունենալ խաղաղ ցոյցերին (բանուորական), բարոյական մասնակցութիւն զինեալ ցոյցերին եւ անպայմա՛ն մասնակցութիւն ընդհանուր յեղափոխութեանը՝ միապետութիւնը տապալելու համար:

Բ. Նիստ
28 Մարտի

Բացի միւս պատգամաւորներից, որ ներկայ էին անցեալ նիստում, այս նիստում ներկայացաւ եւ Քարափի պատգամաւորը:

I. Կովկասի հարցը.— Ինչպէս յայտնի է, Նիկոլայ Բ. կայսրը մի կոչ է ուղղել ժողովրդին, որով հրաւիրում է ներկայացուցիչների ընդհանուր ժողով՝ զանազան կողմերի կարիքներն իմանալու եւ ըստ այնմ բարենորոգութեան ենթարկելու պետութիւնը: Կովկասն էլ իբրեւ մասն այդ պետութեան, պիտի մասնակցէ ընդհանուր ժողովում, ուստի Արեւելեան Բիւրոն, Կովկասի եւ առհասարակ միւս օտար ազգութիւնների նման, մշակում է մի ծրագիր՝ ներկայացնելու ընդհանուր ժողովում: Այդ ծրագիրն աւելի ճիշդ եւ պարզ կազմած ներկայացնելու համար Բիւրոն ուղարկում է իւր բոլոր շրջաններին՝ նրանց կարծիքներն իմանալու: Ծրագիրը բաղկացած էր 17 յօդուածներից. բոլոր յօդուածները միաձայն քննութեան ենթարկելով՝ ընդունեց ժողովը, բացի առաջինից, ուր առաջարկուած էր «խղճի ազատութիւն, գերիշխող կրօնի եւ եկեղեցւոյ բացակայութիւն(4) եւ կաթողիկոսի ընտրութիւնը՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ կանոններով», եւ ձեւակերպեց այսպէս՝ «խղճի ազատութիւն, գերիշխող կրօնի բացակայութիւն եւ եկեղեցիների անկախութիւն»:

II. Հնչակեանների հարցը.— Ի նկատի ունենալով [տարբեր] կուսակցութիւնների վնասակարութիւնը հայ ազգի նման ճնշուած եւ ազատութեան ձգտող մի ազգի [համար], որոշուեց միանդամայն համաձայնել Զրաբերդի Կ. Կոմիտէի ներկայացրած պրոյեկտին(5), ընդունելով պարլամենտական բարձրագոյն ատեան, որի անուան տակ եւ միացումն Հնչակեան կուսակցութեան հետ:

III. Ապագայ Ռայոնական Ժողովին մասնակցելու համար՝ միաձայն ներկայացուցիչ ընտրուեց Գ. Զողակը:

IV. Ժողովը ի նկատի ունենալով հիւսիսային Կովկասի հայ հասարակութեան կրթութեան գործը, որոշեց պարտադիր դարձնել շրջանի բոլոր մարմիններին՝ հոգալու տեղական հայ հասարակութեան բարոյական եւ կուլտուրական կրթութեան մասին, եւ իբրեւ պարտադիր միջոց՝ մարմինները ունենան դրադարաններ, իսկ խմբերը՝ լրագիրներ:

(Ստորագրութիւններ)

(1) Արդեօ՞ք «Արեւելեան»:
(2) Կովկասի, կամ ընդհանրապէս՝ Ռուսաստանի:
(3) Ըստ կ'ուզէ ամկասկած՝ «Ֆոնդը դնել Կ. Կոմիտէի տրամադրութեան տակ եւ գործածութիւնը վստահել անոր»:
(4) Աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ վերացում, ջնջում:
(5) Ծրագրին, նախագծին:

6.— ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԺԼԱՏԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎԻ

Նամակի մեծ չափի 3 երկերեր բուզբ, 9 էջ, սեւ մատիտ (առաջին 4 էջերը՝ հաւանօրէն քարբոն բուզբով հանուած):

Ա. Նիստ

Ժլատի Շրջանային Պատգամաւորական առաջին Ժողովը կայացաւ Դեկտեմբերի 2ին, Ժլատ քաղաքում: Ներկայ էին Արծուի, Բուժարանի, Նոր-Աւանի, Բերդի, Լուսաստղի եւ Առատի պատգամաւորները, կենտրոնական Կոմիտէի չորս անդամները եւ Արեւելեան Բիւրոյի մէկ պատուիրակը: Բացակայ էին Նորածնի, Հովի եւ Մոռացուածի պատգամաւորները եւ կենտրոնական Կոմիտէի մէկ անդամը՝ անյայտ պատճառներով:

Ժողովականների միաձայն հաւանութեամբ նախագահ ընտրուեցաւ Բիւրոյի պատուիրակ Գ. Զորուռեանը, իսկ քարտուղար՝ Գ. Հայկունին:

Ժողովը բացուած յայտարարուելուց յետոյ՝ Գ. Նախագահի առաջարկութեամբ ժողովականները յոտնկայս յարգեցին մեր նահատակ ընկերների յիշատակը եւ ապա անցան հերթական հարցերին:

Կ. Կոմիտէի անդամներից մէկը բացատրեց ներկայ ժողովի նպատակը՝ խորհրդակցելու այն միջոցների մասին, որոնք հնարաւորութիւն կը տան յեղափոխական գործը ամուր հիմքերի վրայ դնելու Ժլատի շրջանում, նաեւ մտքերի փոխանակութիւն առաջ բերելու այն խնդիրների մասին, որոնք մօտիկ ապագայում կայանալիք Ռայոնական Ժողովի քննութեան նիւթ են դառնալու:

Ներկայ Ժողովի պարապմանց բուն խնդիրներին անցնելուց առաջ՝ ժողովականների ցանկութեամբ նախագահը ծանօթացրեց պատգամաւորներին Հ.Ց.Դ. Յրդ Ընդհանուր Ժողովի որոշումների կազմակերպական մասի հետ: Ապա կարդացուեցաւ քննուելիք հարցերի ցանկը, որ եւ ընդունուեց հետեւեալ դասաւորութեամբ.— 1) պատգամաւորների բերած տեղեկագիրների ընթերցումը, 2) պատգամաւորների զեկուցումները իրենց շրջանների մասին, 3) կոմիտէների դրած պահանջները իրենց շրջանների վերաբերեալ, 4) Ռայոնական Ժողովում քննուելիք հարցերի մասին խորհրդակցութիւն, 5) Քննադատութիւն(1) Ռայոնական Ժողովին առաջարկուելիք խնդիրների մասին, 6) Ռայոնական Ժողովին մասնակցելու գնացող ներկայացուցչի ընտրութիւնը, 7) Կենտ. Կոմիտէի վերընտրութիւնը եւ 8) Արծուի քահանայ Տէր Կ.ի հարցը:

1.— Պատգամաւորների բերած տեղեկագրերի ընթերցումը.— Իւրաքանչիւր պատգամաւոր կարդաց իւր շրջանի տեղեկագիրը ի պատասխան այն հարցերի, որ կենտ. Կոմիտէն նախօրօք ուղարկել էր շրջանի մարմիններին: Ընթերցումից պարզուեց, որ ժամանակի սղութեան պատճառով մարմինները հնարաւորութիւն չէին ունեցել վիճակագրական տեղեկութիւնները լրիւ ներկայացնելու. այդ պատճառով Ժլատի շրջանի մասին մի ընդհանուր տեղեկագիր ունենալու պահանջը յետաձգուեց մինչեւ պակաս տեղեկութիւնների ստացուելը:

Բ. Նիստ

2.— Պատգամաւորների զեկուցումների իրենց շրջանների մասին.— Այս նիստում ժողովն զբաղուեց այն զեկուցումներով, որ բերանացի ներկայացրին պատգամաւորները, իւրաքանչիւրը իւր շրջանի մասին: Հաղորդած տեղեկութիւնները պարզեցին այն տխուր կացութիւնը եւ վտանգաւոր պայմանները, որոնց մէջ ապրում է հայ տարրը՝ Ժլատի շրջանում: Զնայելով հայերի տնտեսապէս համեմատաբար ապահով վիճակին, նրանք այլասերուելու, անհետանալու վրայ են: Ժլատի դաշնակցական մարմինների հաւաքած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ հայ ազգաբնակութիւնը իւր թուով կազմելով չնչին փոքրամասնութիւն շրջապատող օտարազգիների համեմատութեամբ, ենթարկուել է նրանց ազդեցութեան եւ այժմ նրա մեծագոյն մասը մայրենի լեզուն բոլորովին մոռացել է: Տեղի են ունենում ամուսնութիւններ յունադաւանների հետ, որը բարերախտաբար չնչին տոկոս է կազմում: Ազգային ինքնաճանաչութեան զգացումը չատ տեղերում բոլորովին մեռած է, իսկ մեծամասնութեան մէջ նա խիստ բթացել է: Զուտին հայ կրթական հիմնարկութիւններ, յեղափոխական գաղափարը ժողովուրդի մէջ միանգամայն բացակայում է, բացառութեամբ դաշնակցական մարմինների եւ նրանց խմբերի: Իբրեւ հետեւանք բրոնակալական ծանր ռեժիմի, Ժլատի շրջանում ստեղծուել է ճնշումների առաջ խոնարհուող մի սերունդ, որ երկիւղի ազդեցութեան տակ խորշում է եւ խուսափում է ամէն մի երեւոյթից, որ յեղափոխական բնաւորութիւն է կրում: Վերջին տարիների ընթացքում հայութեան կեանքում իրար յաջորդող բազմաթիւ երեւոյթները առաջ են բերել մի փոքրամասնութիւն, որ սկսել է հետաքրքրուել հայ ժողովուրդի դատով: Դաշնակցական տեղական մարմիններին՝ միայն այդ փոքրամասնութեան մէջ է յաջողուել տարածել յեղափոխական գաղափարը: Բացի այս, նրանք կորուած լինելով Դաշնակցութեան կենտր. մարմիններից, կանոնաւորապէս չեն ստացել թերթ, թուղթիկներ եւ գրքոյկներ: Յեղափոխական գործին վերաբերեալ թարմ տեղեկութիւններ ստացուել են բոլորովին պատահական կերպով: Դաշնակցական պատուիրակները կամ շրջիկները խիստ սակաւ են այցելել Ժլատի հայաբնակ վայրերը՝ պրոպագանդի կամ կազմակերպելու նպատակով: Անհրաժեշտ է ձեռք առնել չուտափոյթ միջոցներ, Ժլատի շրջանի հայ ազգաբնակութեան կորուստի վտանգից ազատելու համար:

Գ. Նիստ

3.— Կոմիտէների դրած պահանջները իրենց շրջանների վերաբերեալ.— Կոմիտէների դրած պահանջները ի նկատի առնելով եւ միատեսակ քննելով, ժողովը կայացրեց հետեւեալ որոշումները.

ա) Իւրաքանչիւր դաշնակցական մարմին պարտաւոր է ամենայուրջ ուշադրութիւն դարձնել պրոպագանդայի գործի վերայ, իւր տեղում աշխատելով բանալ հայ ուսումնարաններ եւ դրանց կից հայ գրադարաններ, աջակցել հայ ընտանիքների մէջ տեղաւորելու դաշնակցական վարժուհիներ, եկեղեցական երգեցիկ խմբերի ղեկավարներ ընտրել տալ համոզուած դաշնակցականներից եւ ընդհանրապէս ոյժ տալ եւ աջակցել ա-

մէն մի կուլտուրական ձեռնարկի, որ կարող է օգտաւէտ լինել մայրենի լեզուի տարածմանը եւ ազգային ինքնահանաչութեան եւ ինքնապաշտպանութեան զգացումների զարգացման։ Այդ նպատակները իրագործելու համար, աշխատել նիւթական միջոցներ ձեռք բերել կողմնակի աղբիւրներից, իսկ յեղափոխական գումարներից գործածել որոշ տոկոս միայն՝ այն դէպքում, երբ պաշտօնապէս թոյլտուութիւն կը ստացուի Դաշնակցութեան Խորհրդից։

բ) Պարտաւորութիւն դնել Կենտ. Կոմիտէի վերայ, որ նա հրատարակի տեղական պահանջներին յարմարեցրած բովանդակութեամբ թռուցիկներ՝ հայերէն, ռուսերէն լեզուներով, կարեւոր համարուած դէպքերում նաեւ վրացերէն։ Հրատարակել կամ ձեռք բերել հայ յեղափոխութեան վերաբերեալ գրքոյկներ եւ այդ ամէնը տարածել որքան կարելի է՝ մեծ քանակութեամբ։ Ժլատի շրջանից դուրս հրատարակուած թռուցիկներից այն ամէնը, որ տեղական պահանջների տեսակէտից կարեւոր կը նկատուեն, տպագրել եւ տարածել մեծ քանակութեամբ։

գ) Ունենալ պրոպագանդիստներ յեղափոխական գաղափարը Ժողովուրդի մէջ տարածելու եւ դաշնակցական, օժանդակ եւ մարտիկ խմբեր կազմակերպելու համար։

դ) Հաստատել Դաշնակցութեան «Կարմիր Խաչ» ամէն տեղ ուր գոյութիւն ունի դաշնակցական մարմին, համաձայն այն ծրագրի, որ կը հաստատուի Դաշնակցութեան Խորհրդից։

ե) Առանձին ուշադրութիւն դարձնել կազմակերպուած եւ կազմուելիք դաշնակցական խմբերի հետ պարապելու գործի վրայ, նշանակելով ձեռնհաս դաշնակցականներից դասախօսներ, որոնք պարտաւոր լինեն պարապել սիստեմատիկ ծրագրի համաձայն, որ կը տրուի նրանց Կենտրոնական Կոմիտէից։

զ) Աշխատել խառն ամուսնութիւնների (յունադաւանների հետ) առաջն առնել խօսքի ոյժով, համոզելով, հասկացնելով դրա վատ հետեւանքները, առանց դիմելու որեւէ սպառնական միջոցների։

է) Կազմակերպել յեղափոխական գրադարան Կենտ. Կոմիտէի հսկողութեան ներքոյ, հայերէն եւ ռուսերէն գրքերից։ Դրամական միջոցներ հայթայթել կողմնակի աղբիւրներից, իսկ յեղափոխական գումարներից գործածել այդ նպատակի համար Դաշնակցութեան Խորհրդից նախօրօք թոյլտուութիւն ստանալուց յետոյ միայն։

ը) Ռուս կառավարութեան եւ ռուս Ժողովուրդի թշնամական արտայայտութիւնների դէմ ձեռք առնել ինքնապաշտպանութեան այն միջոցները, որ ընդունուել են դաշնակցական 3րդ Ընդհանուր Ժողովում։

թ) Ժլատի շրջանի դաշնակցական մարմիններին յեղափոխական գործի վերաբերմամբ միշտ իրազեկ դրութեան մէջ պահելու նպատակով, Կ. Կոմիտէն պէտք է գոնէ ամիսը մի անգամ նամակներով հաղորդէ գործին վերաբերեալ բոլոր թոյլատրուած տեղեկութիւնները։

ժ) «Դրօշակ» թերթի, թռուցիկների եւ գրքոյկների տարածումը հնար եղածին չափ կանոնաւորել։

ժա) Կենտրոնական Կոմիտէն պէտք է յայտարարէ Արեւելեան Բիւրոյին եւ միւս Կենտրոնական մարմիններին, որ Ժլատի շրջանում ձրի տարածելու կամ ծախելու համար, նշանակուած իրերը (գրքեր, պատկերներ եւայլն) չպէտք է երբեք ուղարկեն մասնաւոր անձանց։

ժբ) Դաշնակցական մարմինները գաղտնապահութեան հարցում չպէտք է ընկնեն այն չափազանցութիւնների մէջ, որոնք յաճախ նոյնիսկ մարմնի գոյութիւնը անյայտ են դարձնում այս կամ այն տեղի հայ ժողովուրդի համար, եւ ընդհակառակն՝ պահանջում է խիստ գաղտնապահութիւն բոլոր այն հարցերի շրջանում, որոնց գաղտնի մնալը կարեւոր է յեղափոխական գործի յաջողութեան տեսակէտից։

4.— Ժլատի Կենտրոնական Կոմիտէի վերընտրութիւնը.— Ի նկատի առնելով Արեւելեան Բիւրոյի առաջարկութիւնը՝ աշխատել դաշնակցական մարմինների ընտրութիւնը կատարել Յունուարին, Ժողովը յարմար գտաւ այդ անել հէնց հիմա, քանի որ պատգամաւորները յարմարութիւն չունեն այսքան կարճ ժամանակում մի անգամ եւս Յունուարին հաւաքուելու։ Ընտրութիւնը կայացաւ եւ միաձայն ընտրուեց Կենտ. Կոմիտէի նախկին կազմը։ Իրաւունք տրուեց Կենտ. Կոմիտէին՝ իւր սեպհական պատասխանատուութեամբ ընտրել նոր անդամներ այն դէպքում, եթէ ներկայ անդամներից մէկը կամ երկուսը (ոչ աւելի) մինչեւ տարուայ վերջը հնարաւորութիւն չեն ունենալ շարունակելու իրենց ստանձնած պաշտօնը։

Դ. Նիստ եւ Ե. Նիստ

Բացի նախկին 11 հոգին, այս Ժողովներում ներկայ էր նաեւ Կենտրոնական Կոմիտէի հինգերորդ անդամը։

5.— Խորհրդակցութիւն Ռայոնական Ժողովում բընուելիք հարցերի մասին.—

Ժլատի Կենտ. Կոմիտէն օրերումս ստացած լինելով, Արեւելեան Բիւրոյից, Ռայոնական Ժողովի քննութեան ենթարկուելիք հարցերի մի շարք, կարեւոր համարեց այդ հարցերից մի քանիսը ընկերական խորհրդակցութեան նիւթ դարձնել ներկայ Ժողովում։ Ժողովը հետեւեալ կարծիքները յայտնեց այդ հարցերի առթիւ.

Ա) Պարտաւորութիւն դնել Կենտ. Կոմիտէների վրայ՝ Սարուստանում տարին երկու անգամ մաքրել իրանց կիսամեայ մուտքի հաշիւները՝ կովկասեան թերթում, եւ եթէ Ռայոնական Ժողովը հնարաւոր կամ յարմար կը գտնի, տպագրել նաեւ ծախսերի հաշիւը։

Բ) Պարտաւորութիւն դնել Արեւելեան Բիւրոյի վրայ տարին մի անգամ կոնտրոլի ենթարկել Կենտ. Կոմիտէի ելեւմուտքի հաշիւները։

Գ) Ժողովականների մեծամասնութիւնը առաջարկում է հնչակեանների վերաբերութեամբ հետեւել այն սկզբունքներին, որ ընդունել է Դաշնակցութեան 3րդ Ընդհանուր Ժողովը, պնդելով որ հարկաւոր է միանգամայն արհամարհել նրանց գոյութիւնը եւ ոյժ տալ պրոպագանդին Ժողովրդի մէջ, այն մտքով, որ Ժողովուրդը ինքը ճանաչելով հնչակեանների ի՛նչ լինելը, երես դարձնի նրանցից։ Փոքրամասնութիւնը ընդհակառակը պնդում է, յաճախ տեղի ունեցող ընդհարումների առաջն առնելու նպատակով, ամենակարեւոր դէպքերում մտնել նրանց հետ բանակցութիւնների մէջ եւ համերաշխ գործակցութեամբ բարձրացնել յեղափոխականի վարկը Ժողովրդի աչքում։

Դ) Ժողովը անհրաժեշտ է համարում ունենալ «Կարմիր Խաչի» համար մի ընդհանուր ծրագիր, միատեսակ կնիք եւ մի ձեւի ստացագրերի գրքոյկներ։ Առաջարկում է լիազօրութիւն տալ Կենտ. Կոմիտէի ներկայացուցչին՝ պաշտպանելու Ռայոնական Ժողովում Կարմիր Խաչի համար այն սկզբունքները, որ դրուած են Ոսկանապատի Կենտ. Կոմիտէի այդ առթիւ կազմած նոր ծրագրով։

Ե) Դաշնակցական կուսակցութիւնը վերջին տարիներում խիստ զարգացել եւ ուժեղացել է. նա դառել է բուն Ժողովրդական կուսակցութիւն. Ժողովրդի աչքում նա արդէն ահագին հեղինակութիւն ունի եւ նրա գիտակցող մասից մեծ համակրութիւն է վայելում։ Նա ահագին գործ, ահագին դեր ունի կատարելու հայի կեանքում։ Նրան հարկաւոր են նաեւ նիւթական ահագին միջոցներ։ Ժողովուրդը օգնում է նրան թէ՛ գործով եւ թէ դրամով. բայց նրա նիւթական միջոցները սուղ են եւ տնտեսապէս նա ոչ միայն չի առաջադիմում, այլ օր օրի վրայ աւելի է քայքայւում։ Հարուստ դասակարգը ինքնակամ ոչ մի օգնութիւն չէ ցոյց տալիս, իսկ բոլոր դրամական միջոցները նրա ձեռին են գտնուում։ Ժողովը ահագին մեծամասնութեամբ ընդդէմ մէկի, պնդեց Կենտ. Կոմիտէի ներկայացուցչի միջոցով Ռայոնական Ժողովում պաշտպանել բռնի միջոցներով դրամ հաւաքելու սկզբունքը, առաջարկելով նրա գործադրութիւնը ամենածայրայեղ դէպքերում միայն։

Զ) Երկրում ապագայ գործունէութեան եղանակի եւ ուղղութեան տակտիկայի խնդրի վերաբերմամբ, Ժողովը հրաժարուեց որեւէ կարծիք յայտնելուց, առարկելով թէ դրա համար իրեն պակասում են վերջին տարուայ գործունէութեան վերաբերեալ մանրամասն տեղեկութիւններ եւ ծանօթութիւն Ժողովուրդի ներկայ պահանջների եւ կարիքների մասին։

Է) Օտար կուսակցութիւնների եւ ազգութիւնների հետ կապ ստեղծելու եւ պահպանելու խնդրում, Ժողովը ընդունում է այն որոշումները, որ այդ առթիւ կայացրել են Ռայոնական Ժողովները ներկայ տարուայ ընթացքում, չեչտելով միանգամայն, որ աւելի լուրջ ուշադրութիւն դարձուի եւ աւելի էական միջոցներ ձեռք առնուեն այդ գաղափարը իրականացնելու համար, քան եղել են մինչեւ օրս։

6.— Քննադատութիւն(1) Ժլատի Կենտ. Կոմիտէի կողմից Ռայոնական Ժողովին առաջարկուելիք խնդիրների մասին.—

Ժողովը միաձայն հաւանութեամբ որոշեց Կենտրոնական Կոմիտէի ներկայացուցչի միջոցով Ռայոնական Ժողովի քննութեան առաջարկել հետեւեալ խնդիրներն ու հարցերը.

Ա) Ի նկատի առնելով Ժլատի շրջանի այն առանձնակի պայմանները, որոնց շնորհիւ կուլտուրական գործունէութեանը անհրաժեշտ է տալ առաջնակարգ նշանակութիւն հէնց յեղափոխական գործի տեսակէտից, խնդրել Ինքնապաշտպանութեան Կենտրոնական Կոմիտէին յատկացրած գումարներից մի որոշ տոկոս՝ այս նպատակով գործադրելու համար, կամ տեղական ոլէտքերի համար ծրագրով թոյլատրած 10%ը դարձնել 15%է, Ժլատի շրջանի համար իբրեւ բացառութիւն։

Բ) Թոյլտուութիւն յեղափոխական գրադարան հիմնելու Ժլատում՝ յեղափոխական գումարներից։

Գ) Պաշտպանել խղճի դատաստանի սկզբունքը. առաջարկել եւ պնդել, որ դատական գործեր ընդունելը եւ վարելը մտնի դաշնակցական մարմինների պարտականութեանց մէջ, ի նկատի առնելով այն ահագին օգնութիւնը, որ դրանով կուսակցութիւնը կարող է ցոյց տալ Ժողովրդին։

Դ) Ցանկալի է, որ Դաշնակցական կուսակցութիւնը ընդունի միջնորդ դատարանների սկզբունքը՝ կապիտալիստների ու բանուորների մէջ առաջացած վէճերը քննելու եւ վճռելու համար։

Ե) Կազմակերպել դաշնակցական բանուորական խմբերի համար բանուորական կասսաներ՝ նախօրէն մշակուած ծրագրի համաձայն։

Զ) Հոգալ Հ.Ց.Դաշնակցութեան Ծրագրի տեսական մասը կազմելու, որչափ այդ հնարաւոր է՝ գիտական հիմքերի համաձայն, եւ պատրաստ ունենալ այն Դաշնակցութեան ապագայ 4րդ Ընդհանուր Ժողովի հաստատութեան ներկայացնելու։

Է) Ցայտնել ի գիտութիւն Ռայոնական Ժողովին այն հանգամանքը, թէ կան շատ գումարներ, որոնք կտակուած են եղել եկեղեցիներին միայն որոշ նպա-

տակների համար, եւ թէեւ գործադրութեան իրաւունքն է եղել թողնուած Եկեղեցուն, բայց եւ այնպէս կալուածների գրաւման ժամանակ յԱրքունիս են գրաւուել նաեւ այդ տեսակի գումարները, որոնք ամենեւին Եկեղեցու սեպհականութիւն չեն կազմում:

7.— Ռայոնական ժողովին մասնակցելու գնացող ներկայացուցչի ընտրութիւնը.— Գաղտնի քուէարկութեամբ եւ ձայների առաւելութեամբ ներկայացուցիչ ընտրուեց Կենտր. Կոմիտէի անդամներից Պ. Ռաչիդը:

8.— Արծուի քահանայ Տէր Կ.ի հարցը Կենտրոնական Կոմիտէի համաձայնութեամբ ենթարկուեց ժողովականների քննադատութեան: Այդ առթիւ կայացաւ հետեւեալ որոշումը.— առաջարկել տէր-հօրը ժամանակաւորապէս թողնել Արծիւ քաղաքի Դաշնակցութեան ենթակոմիտէի անդամութեան պաշտօնը մինչեւ նրա գործի քննութիւնը, որ Կենտ. Կոմիտէն շուտափոյթ կը կատարէ իւր պատուիրակի միջոցով: Երբ գործի քննութիւնը կը հաստատէ տէր-հօր անմեղութիւնը, Կենտրոնական Կոմիտէն կրկին նրան կը հաստատէ իւր պաշտօնում:

Ժողովը փակուած յայտարարուեց Դեկտեմբերի 6ին:

Ծանօթ.— Որոշուեց ներկայ արձանագրութեան պատճէնը ուղարկել, ի գիտութիւն եւ ի գործադրութիւն, Ժլատի շրջանի բոլոր կոմիտէներին եւ ենթակոմիտէներին:

Նախագահ՝ Բիւրոյի պատուիրակ Ն. ԶՈՓՈՒՌԵԱՆՑ

Ժլատի Կենտրոնական Կոմիտէի անդամներ՝ ԱՐՏԱՒԱԶԴ, ԶՈՂԱԿԵԱՆՑ, ՌԱՇԻԴ, ՏԱՇՐԱՑԻ

Ժլատի շրջանի պատգամաւորներ՝ Նոր-Աւանից՝ ԵՆԻ ԿԱԼԷ; Լուսաստղից՝ Խ. ԲԱՆՏԵՑԻ; Արծիւ ք.ից՝ ՀԱՍԱՆ; Բերդից՝ ԱԻՕ; Բուժարանից՝ ՍՄԲՈՒԼ; Առատից՝ ՁԷՑՆԱԼ

Քարտուղար՝ Ժլատի Կ. Կ. անդամ Ա. ՀԱՑԿՈՒՆԻ

1904 Դեկտեմբեր 6, Ժլատ քաղաք

XIII.— ՆԱԼԲԱՆԴԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՈՒԹԻՒՆ (ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՇՐՋԱՆ)

Հ. Յ. Դաշնակցութեան 4րդ Ընդհանուր ժողովի ատենագրութիւններէն (տեսնել ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, Գ. հատոր) յստակ կերպով երեւան չի գար, թէ Նալբանդի շրջանի պատգամաւոր Սիգ (Սիմոն Գոռոզիենեան, Վրացեան) ո՛ր նիստին ընթացքին կարդացած է իր կեդրոնական Կոմիտէութեան տեղեկագիրը: Բայց որովհետեւ Նալբանդը աշխարհագրականօրէն շատ մօտ է Ժլատին (փաստօրէն 4րդ Ընդհանուր ժողովի որոշումով բովանդակ Հիւսիսային Կովկասը պիտի կազմէր մէկ Կեդրոնական Կոմիտէութիւն՝ Նոր Նախիջեւանը ունենալով իբրեւ կեդրոն), ապա ուրեմն Նալբանդի վերաբերեալ գրութիւնները հրատարակութեան կու տանք այստեղ՝ Ժլատի թուղթերէն անմիջապէս ետք:

1.— «Տեղեկագիր Նալբանդ (VII) Կ. Կոմիտէի», նամակի փոքր չափի 2 երկթերթ թուղթերու վրայ, 7 էջ, սեւ մելանով: Կը կրէ Արտաշեան (Արտաշէ՞ս), Արամայիս եւ Արարատեան ստորագրութիւնները եւ կնքուած է VIIրդ Կ. Կոմիտէի կնիքով:

2.— Նալբանդի Կ. Կոմիտէին կողմէ Ընդհանուր ժողովին ուղղուած 30 Յունուար 1907 թուակիր նամակ մը, 1 էջ՝ սեւ մելանով, կապոյտ մատիտով մակագրուած՝ «№ 13, 9-ի Ցանձն[ախումբ]», եւ սեւ մելանով՝ «Ցանձնել Արեւելեան Բիւրոյին, անմիջապէս զանձելու համար»:

3.— «Տեղեկագիր Հ. Յ. Դ. Նալբանդ (VII) Կենտր. Կոմիտէի, 1907 թ. Դեկտ.», նամակի մեծ չափի 2 երկթերթ թուղթ, 6 էջ՝ սեւ մելանով: Ստորագրուած է «Նալբանդի Շրջանային ժողովի ներկայացուցիչ՝ HOMO» եւ «Կենտրոնական Կոմիտէի ներկայացուցիչ՝ «ՍԻԳ» (Ս. Վրացեան): Այս գրութիւնը գրկուած է, ամենայն հաւանականութեամբ, Արեւելեան Բիւրոյին (կամ Սարուստանի Ռայոնական ժողովին)՝ 1907 տարուան աւարտին: Ձեռագիրը Սիմոն Վրացեանինն է:

1.— ՏԵՂԵԿԱԳԻՐ «ՆԱԼԲԱՆԴ» (VII) Կ. ԿՈՄԻՏԷԻ

«Նալբանդն» իբրեւ Կենտրոնական Կոմիտէ, գոյութիւն ունի երկրորդ տարին եւ կազմուած է Միքախրիստ եւ Միլ կոմիտէներից, այլեւ մի քանի ենթակոմիտէներից: Խմբերը դրուած են ոչ թէ դասակարգային հողի վրայ, այլ բաղկանում են պատահական անձերից՝ անկախ նոցա այս կամ այն դասակարգին պատկանելուն: Սկզբի ժամանակներում խմբերի թիւն աւելի շատ էր, բայց վերջերս սկսեց պակասել ու կազմալուծուել, նախ՝ որովհետեւ գործունէութեան դոյնը փոխուեց եւ սկսուեց պրոպագանդա դասակարգային կռուի, ապա՝ ոյժերի պակասութեան եւ փոթորիկի անտակտ եւ անհեռատես գործունէութեան պատճառով, երրորդ՝ շընորհիւ քաղաքական աննպաստ պայմանների: Ներկայումս գոյութիւն ունին կիսաքայքայուած խմբեր, որոնք յեղափոխական տեսակէտից ոչինչ չեն ներկայացնում:

Նալբանդն ապագայում կարող է ունենալ հարուստ գործ, եթէ միայն գործունէութիւնը տարուի զուտ դասակարգային հողի վրայ, քանի որ նա ունի մեծ թուով (մօտաւորապէս միայն Միքախրիստի մօտ 20·000 գիւղացիութիւն, Միլի շրջանում եւս մի քանի գիւղեր, եւ այլն) աշխատաւոր գիւղացիութիւն եւ որոշ չափով բանուորութիւն: Նալբանդի գործունէութիւնը մինչեւ այսօր եղել է նիւթական խոշոր օժանդակութիւն Երկրին, իսկ տեղական ո՛չ մի յեղափոխական քայլ չէ արուել: Եւ տեղական՝ յեղափոխութեան մատչելի խաւերը մնացել են անտես եւ անգիտակից եւ եթէ որեւէ բան արուել է, այն էլ ոչ դասակարգային ոգով: Ապագայում այդպէս չպիտի լինի. բայց դրա համար հարկաւոր են ոյժեր, որ տեղումս չկան, իսկ Բիւրոն՝ չնայած մեր բազմաթիւ դիմումների՝ միշտ էլ անուշադիր է թողել այդ:

Շրջանի կիսաքայքայուած վիճակի եւ քաղաքական աննպաստ պայմանների պատճառաւ, չնայած Բիւրոյի մի քանի հրաւէրների, անհնար եղաւ Շրջանային Ժողով գումարել եւ Ընդհանուր Ժողովին նախապատրաստուել եւ պատգամաւոր ուղարկել(1)։ Այդ պատճառով բաւականանում ենք մի քանի խմբերի եւ ընդհանրապէս շրջանի տրամադրութիւնը առաջ բերելով՝ օրուայ ամենահրատապ հարցի — Տաճկահայ եւ Ռուսահայ դատերի յարաբերութեան վերաբերմամբ, քաղելով այդ խմբերում կազմուած բանաձեւերից։ Տրամադրութիւնը կարելի է բաժանել երեք ձեւի.

Ա) Որովհետեւ Տաճկահայկական դատն իր էութեամբ չի կարող տարուել զուտ դասակարգային հողի վրայ (քանի որ այդ դատը գերազանցօրէն քաղաքական դատ է եւ տաճկական տնտեսական պայմաններում չի կարող լինել սոցիալիստական՝ եւրոպական մտքով) եւ որովհետեւ իր յաջողութեան համար այսուհետեւ էլ նա կարիք կ'ունենայ դրսի ամենալայն օժանդակութեան՝ բոլոր դասակարգերի կողմից էլ, ուստի նա միանգամայն վնասուած կը լինի, եթէ կապուած լինի Կովկասում մի զուտ սոցիալիստական կուսակցութեան հետ։ Միւս կողմից կովկասահայ աշխատաւոր ժողովրդի դասակարգային կռուի համար Տաճկահայ դատը, որպէս ազգային եւ քաղաքական, խոչընդոտ կը հանդիսանայ նրա դասակարգային գիտակցութիւնը պարզելու վերաբերմամբ։ Այստեղի դատը պահանջում է ստեղծել զուտ դասակարգային իդէոլոգիա(2), այնտեղինը՝ ապադասակարգային, ազգային։

Հ. Յ. Դաշնակցութիւնը երբեք չի կարող ունենալ մի յստակ, մի անաղարտ իդէոլոգիա, եթէ չարունակուի իրերի այժմեան դրութիւնը։ Զտումը ներսից՝ գործին չի կարող օգնել, այլ պէտք է ստեղծել այնպիսի գործնական պայմաններ, որոնք իրօք հնարաւորութիւն տային մեզ սոցիալիստական կուսակցութիւն ունենալու։ Իրերի ներկայ դրութիւնը՝ այսինքն Հ. Յ. Դաշնակցութեան այստեղ եւ այնտեղ գործելը մի այնպիսի պայման է, որ այդ կուսակցութիւնը միշտ դատապարտուած պէտք է լինի մնալու կիսազգային, կիսադասակարգային, նստելու միշտ երկու աթոռի մէջտեղը,— մի հանգամանք, որ պիտի վնասի թէ՛ Տաճկահայ ազատագրութեան եւ թէ Կովկասի դասակարգային կռուին։ Ահա այս բոլորն աչքի առաջ ունենալով՝ որոշուեց, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը(3) մնայ միմիայն Տաճկաստանի կուսակցութիւն, իսկ Կովկասում տեղի տայ մի նոր, զուտ դասակարգային հողի վրայ դրուած, սոցիալիստ-յեղափոխականների սկզբունքներով առաջնորդուող կուսակցութեան։

Բ) Ի նկատի ունենալով, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը պաշտպան է եղել ճնշուածներին եւ քանի որ թէ՛ Տաճկահայաստանում եւ թէ Կովկասում հայ ժողովուրդը հանդիսանում է իրաւազուրկ եւ բռնաբարուած տարր, անհրաժեշտ է, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը առաջ տանի, ինչպէս մինչեւ այժմ տարել է, այդ երկու վայրերում ապրող ճնշուած հայ ժողովրդի ազատագրական դատը, տեղի եւ ժամանակի պահանջների համաձայն՝ տալով նախապատուութիւն Տաճկահայ խնդրին։ Երկու տեղերում գործող Հ. Յ. Դաշնակցութեան մարմինները կ'առաջնորդուեն լայն աւտոնոմ սկզբունքներով։

Գ) Տաճկաստանում արդէն հնարաւոր է դասակարգային կռիւ մղել, ուստի պէտք է ընդունել երկու մասերի համար էլ մէկ զուտ սոցիալիստական ծրագիր եւ գործն առաջ տանել ֆեդերատիւ սկզբունքներով։

Մի քանի ժամանակ առաջ, Ժլատի ընկերները մեզ դիմել էին, իրենց Շրջանային Ժողովի որոշումով՝ առաջարկելով «Ժլատ»ը միացնել «Նալբանդ»ի հետ։ Քննութեան առնելով այդ առաջարկը՝ հնարաւոր համարուեց այդ միացումն անել միայն այն դէպքում, երբ ունենանք ազատ ընկերներ։

ԱՐՏԱՇԵՍ ԱՐԱՄԱՅԻՍ
(կնիք VII Կ. Կոմիտէի)

Ունիմ մասնաւոր կարծիք — Փոթորիկին վերաբերեալ կէտի մասին. անտեղի եմ գտնում «անտակտ եւ անհեռատես» արտայայտութիւնը։

ԱՐԱՐԱՏԵԱՆ

---

(1) Ըստ երեւոյթին, տեղեկագիրը պատրաստուած է նախ քան Սիմոն Վրացեանի պատգամաւոր ընտրուիլը՝ Նալբանդի շրջանէն։ Մանաւանդ է որ ան բաւական ուշ հասաւ Վիեննայի Ընդհանուր Ժողովին։

(2) Գաղափարաբանութիւն։

(3) Ջնջուած՝ «առաջուան նման»։

2.— ՆԱԼԲԱՆԴԻ Կ. Կ.Ի ՆԱՄԱԿԸ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ

1907 թ. 30 Յունուար, Նալբանդ

Ընկերնե՛ր,

Դեռ Ռոստովում տեղի ունեցած պոգրոմներից եւ ապստամբութիւնից առաջ՝ 1905 թ. «Նալբանդ» Կենտ. Կոմիտէն մոցրել էր Պ. Մինաս Բերբերեանի բանկը 5000 ռուբլի։ Սակայն վերոյիշեալ դէպքերից յետոյ այդ բանկը սնանկացաւ, եւ շատերի հետ մեր 5000 ռուբլին էլ մէջը մնաց։ Քաղաքական պայմաններով Պ. Մ. Բերբերեանը անցել էր արտասահման, ուր եւ դիմեցինք նրան, որ վերադարձնի այդ գումարը։ Նա յանձնարարեց ստանալ իւր եղբօրից Նախիջեւանում։ Մենք դիմեցինք. նա էլ մի քանի հարիւր ռուբլի վճարելուց յետոյ դադարեց։ Այնուհետեւ անցան ամիսներ, եւ մեր բոլոր դիմումները մնացին ապարդիւն։ Այժմ նրա վրայ հաշոււում է 4300 ռուբլի։

Ի նկատի ունենալով, որ այս հարցն ունի շատ լուրջ բնաւորութիւն եւ նրա այսպէս կամ այնպէս լուծելը

կապուած է շատ բարդութիւնների հետ, «Նալբանդ» Կենտրոնական Կոմիտէն անհրաժեշտ է համարում թողնել Ձեզ՝ Ընդհանուր Ժողովի տնօրինութեան։

«ՆԱԼԲԱՆԴ» VII ԿԵՆՏՐՈՆ. ԿՈՄԻՏԷ

3.— ՏԵՂԵԿԱԳԻՐ
Հ.Յ.Դ. ՆԱԼԲԱՆԴ (VII) ԿԵՆՏ. ԿՈՄԻՏԷԻ

1907 թ. Դեկտեմբեր

Հ. Յ. Դաշնակցութեան IV Ընդհանուր Ժողովի որոշման համաձայն, Նալբանդն իւր մէջ ընդունեց եւ՛ քայքայուած Ժլատը, եւ այդպիսով դարձաւ մի ընդարձակածաւալ շրջան, որ պարփակում է իւր մէջ ամբողջ հիւսիսային Կովկասը, Դոնի շրջանը եւ Եկատերինոսլաւի ու Խարկովի նահանգների մի մասը։ Այդ ամբողջ տարածութեան վրայ ապրում է մօտաւորապէս 60.000 հայ՝ ցրուած զանազան վայրերում, որոնք պարապում են երկրագործութեամբ, առեւտրով, բանուորութեամբ եւ արհեստներով։ Բանուորական վայրեր են Նորաւանը, Միլը. գիւղացիները ապրում են գլխաւորապէս Նախիջեւանի մօտ, Ս. Խաչ աւանում, Խզլարում եւ մասամբ Մայկոպի շուրջը. առեւտրականներն ու արհեստաւորները ցրուած են ամէն տեղ։ Բանուորներն, ընդհանուր առմամբ, տաճկահայեր են եւ կովկասցիք, եւ ներկայացնում են անգիտակից տարր, որոնցից սակայն աւելի մութ են եւ անգիտակից՝ գիւղացիները, որոնք հեծում են կղերականութեան ճիրաններում։ Ամբողջ շրջանի հայերը համեմատաբար բարեկեցիկ վիճակ ունին, սակայն չափազանց խոշոր են յեղափոխութիւնից։

Չնայած շրջանի հայութեան հակայեղափոխական տրամադրութեան, Կովկասի ըմբոստացումների եւ մի շարք այլ շարժումների տակ՝ Դաշնակցութիւնը մուտք է գործում եւ այստեղ եւ որոշ ժամանակ մեծ չափով ծաւալւում է՝ ծծելով իւր մէջ տեղիս ինտելլիգենցիան, որ մեծ չափով բուրժուա-կղերական իդէոլոգիայի(1) ներքոյն էր հանդիսանում, եւ Դաշնակցութեան մէջ տեսնում էր նեղ-ազգային մի կուսակցութիւն։ Սակայն Դաշնակցութեան մէջ վերջերս առաջ եկած ուժեղ սոցիալիստական հոսանքը, մանաւանդ Էջմիածնի կենտրոնական ժողովի հետ կապուած պարագաները ի սպառ խրատեցրին նրան եւ սկսուեց կուսակցութեան շարքերի դիֆերենցիացիան(2), որի անմիջական հետեւանք եղաւ թուլացումն, ընդհանուր լքումը։ Ամբողջ կղերաբուրժուական բանակը անջատուեց եւ ժամանակաւոր տատանումներից յետոյ խմբուեց եւ այսօր, վերջնականապէս, արդէն որոշել է իւր դիմագիծը եւ հանդիսանում է «նորդարական» տենչերի արտայայտիչը՝ իրեն բերան ունենալով «Մեր-Ձայնը» երկօրեայ թերթը։

IV Ընդհ. Ժողովն իւր հեղինակաւոր ձայնով զարկ տուեց եւ մեր շրջանի կազմակերպական գործին։ Ժողովից յետոյ՝ մի շարք վայրերի քայքայուած կազմակերպութիւնները վերածնուեցին. սկիզբն դրուեց աշխատաւորական պրոպագանդին ու կազմակերպման եւ կարճ ժամանակի միջոցում յաջողուեց շրջանը որոշ չափով վերաստեղծել։ Սակայն կառավարչական բեպրեսիաներն(3) այնքան սոսկալի են, որ մի քանի տեղերում, ինչպէս [Նոր] Նախիջեւանում, Ռոստովում եւայլն, մինչեւ օրս դրութիւնը մնում է շատ անմխիթար։ Ընդհանուր առմամբ Նալբանդն այսօր այսպիսի պատկեր է ներկայացնում.—

Ռոստով-Նախիջեւանում քաղաքական խմբերը քայքայուած են, հաւաքումների ոչ մի հնարաւորութիւն չկայ. նորերս կազմակերպուեց գործակատարների արհեստակցական միութիւն, որի հիմնադիր անդամների թիւը հասնում է 50ի եւ յոյս կայ, որ ժամանակի ընթացքում նրանց թիւը կը հասնի մի քանի հարիւրի եւ պատկառելի ոյժ կ'ունենայ։ Անդամների թուում կան եւ մի քանի ռուսներ, որոնք մտել են Դաշնակցութեան շարքերը, որովհետեւ տեղական ռուսական կուսակցութիւնները, կառավարական ճնշումների պատճառով, ի սպառ անհետացած են։ Խմբական անդամների թիւը հասնում է 120ի։

Նորաւանում, որտեղ կան մի շարք ձիթագործարաններ բազմաթիւ բանուորներով, Դաշնակցութիւնն ունի մի ձիթահանքերի բանուորական միութիւն 150 անդամով, որոնց մէջ կան և մի քանի թուրքեր և ռուսներ, մէկ կօշկակարների միութիւն՝ 25 հայ եւ վրացի անդամով, մէկ հացթուխների միութիւն՝ 30 անդամով, 5 քաղաքական խումբ՝ 40 անդամով։

Արծիւում՝ 2 խումբ, 35 հոգի։

Ժլատում՝ 25 բանուոր, մէկ խումբ աշակերտներ՝ 10 հոգի եւ մի շարք խմբերի մէջ չմտած անդամներ։

Մայկոպում՝ 50 հոգի։

Եկատերինոդարում՝ մէկ գործակատարների միութիւն 25 հոգուց, բանուորներ՝ 30 հոգի, 8 խումբ՝ 120 հոգի. Կարմիր Խաչ, որի անդամներն են տիկիններն եւ օրիորդները։

Դուբինկա գիւղում՝ 1 խումբ, 15 հոգի. Իզոլում կան 30ի չափ աշխատաւոր անդամներ եւ մօտ 30 օժանդակողներ։

Մարիուպոլում կար 35 հոգուց բաղկացած խումբ, որը սակայն վերջերս տեղի ունեցած մասնութիւնների պատճառով՝ քայքայուեց։

Ղզլարում կան խմբեր, սակայն Կենտ. Կոմիտէն պաշտօնապէս տեղեկութիւն չունի։ Այստեղ, ինչպէս և ուրիշ շատ տեղեր, ազատ եւ կարող ընկերների բացակայութեան պատճառով՝ անհնար է եղել մարդ ուղարկել։ Շրջանի ընկերների ընդհանուր թիւն է մօտաւորապէս 800 հոգի։

Վերջին ժամանակների կուսակցական տարտամ վիճակը մեծապէս ազդեց եւ կուսակցութեան ֆինան-

սական կողմի վրայ։ Մինչդեռ սկզբի տարիներում շրջանը մտցնում էր կուսակցութեան դրամարկղը խոշոր գումարներ, այժմ, կարելի է ասել, մուտք չէր լինում, եթէ հաշուելու չլինէինք պատահական նուէրները։ Կազմակերպելու վերջին ջանքերը բարելաւ ազդեցին ե՛ւ դրամականի վրայ. սկսեց կանոնաւորուել ե՛ւ անդամական ե՛ւ խմբական վճարը։ Փոքրիկ տոկոս տալիս են կուսակցութեան ե՛ւ արհեստակցական միութիւնները։ Սոյն ամսի 25ին նշանակուած էր Նալբանդի Շրջանային Ժողովը, որը պիտի պարզէր կուսակցութեան նիւթական վիճակը, սակայն Ռայոնական Ժողովի պատճառով Շրջանայինը յետաձգուեց։ Բայց եւ այնպէս, մօտաւորապէս կարելի է ասել, որ դրամական կողմը կանոնաւորուում է եւ յոյս կայ, որ Նալբանդը դարձեալ ընդունակ կը լինի կուսակցութեան կասսան հաստատացնելու։ Ներկայումս Կենտրոնական Կոմիտէի կասսայում կայ 705 ռ. 67 կոպ., այլեւ 3000 ռուբլի, որ տրուած է Օգոստոսի 25ին գումարուած Շրջ. Ժողովի կողմից փոխարինաբար շրջանի թերթին եւ որ վերադրաձուելու է կուսակցութեան կասսային։

Շրջանի մի քանի կէտերում կան ինքնապաշտպանութեան զէնքեր, որոնց վերջնական ցուցակը ներկայ կենտ. Կոմիտէն չէ կարողացել կազմել եւ այդ մտքով կարգադրութիւններ է արել։ Տեղեկագրին կցուում է Նալբանդի տեղական կոմիտէի ունեցած առաձեռն զէնքի ցուցակը(4). բայց կան մի շարք զէնքեր, որոնք առաջադրուած են եղել զանազան անձանց եւ որ այժմ հաւաքւում են։

Ներկայ տարուայ Օգոստոս ամսում գումարուած Շրջանային Ժողովի որոշման համաձայն, Նալբանդի Կենտրոնական Կոմիտէն սկսել է հրատարակել մի շաբաթաթերթ, որի համար Շրջանային Ժողովը յատկացրել է կասսայում եղած գումարից՝ փոխարինաբար 3000 ռ., որ եւ տրուած է։ Թերթը 15 համարից յետոյ փակուեց կառավարութեան կողմից եւ նորից պատրաստւում է լոյս տեսնելու նոր անունով։ Տեղական թերթի կարեւորութիւնը, կազմակերպութեան հմայքը բարձրացնելու եւ տարածելու համար՝ շատ մեծ է, մանաւանդ որ կղերա-բուրժուական զօրեղ բանակը կազմակերպուած ոյժով հրապարակ է իջել եւ ամէն կերպ աշխատում է վարկաբեկ անել կուսակցութիւնը։

Շրջանը միշտ պակասութիւն է ունեցել գործող ընկերների եւ այդ պատճառով էլ կազմակերպական գործը տուժել է։ Այդ առթիւ յաճախ դիմումներ են արուել Բիւրոյին, որոնք սակայն միշտ էլ մնացել են անպատասխան։ Ընդհանրապէս Բիւրոն միշտ խորթ մայր է եղել Նալբանդի համար եւ ճանաչել է նրան միայն այն ժամանակ, երբ փողի պէտք է ունեցել։ Այդ բանի համար Նալբանդը միշտ բողոքել էր բայց, ի հարկէ, ապարդիւն։ Եւ այդ էր պատճառը, որ Նալբանդի Շրջանային Ժողովը, իբրեւ դեմոնստրացիա(5), հրաժարուեց Բիւրոյին փող վճարելուց, մինչեւ նա փոխի իւր վերաբերմունքը։

Ռայոնական Ժողովի օրակարգի մասին Նալբանդի շրջանը չկարողացաւ իւր պաշտօնական կարծիքը յայտնել, սակայն իրրեւ ընդհանուր տրամադրութիւն յիշւում են հետեւեալ կէտերը.

1) Ներկայ քաղաքական մոմենտում կուսակցութիւնը պէտք է զարկ տայ իւր յեղափոխական գործունէութեանը՝ յատկապէս ուշադրութիւն դարձնելով քաղաքական ահաբեկումների վրայ։

2) Կաթողիկոսական ընտրութիւնների բոյկոտ յայտարարել։

3) Կուլտուրական հիմնարկութիւնների մէջ պաշտօնական մասնակցութիւն չունենալ։

4) Աշխատաւորական միութիւնների համար կազմել ծրագիր եւ տալ կնիքի ձեւ։

5) Տալ ծրագիր՝ Կարմիր Խաչի համար։

6) Ցանկալի է, որ դաշնակցական աշխատաւորական միութիւնները կարելի լինի կազմակերպել առանց ազգային տաքբերութիւնների։

7) Հիմնել պրոպագանդայի կենտրոնական մարմին եւ դպրոց։

8) Վերջ դնել հոգեհանգիստներին, իբրեւ սոցիալիստական կուսակցութիւնը վարկաբեկ անող արարմունքի։

9) Ունենալ ռուսերէն իսկական կուսակցական թերթ եւ հրատարակել ռուսերէն գրքոյկներ, որոնք ծանօթացնէին Դաշնակցութեան գործնական եւ տեսական կողմերը։

10) Արգիլել Կովկասի մարմիններին՝ Նալբանդը իրանց համար աքսորավայր անելու։

11) Պարզել «Ահաբեկիչ Մարմնի» եւ միւս մարմինների յարաբերութիւնը եւ արգիլել «Ահաբեկիչ Մարմնին» որեւէ շրջանում գործ կատարելը՝ առանց այդ [շրջանի] մարմնի գիտակցութեան։

12) Բիւրոյի ուշադրութիւնը դարձնել Նալբանդի Զիֆոնի վրայ, այլեւ այնտեղ եղած մթերքի հաշիւները պարզել։

13) Դարձեալ առաջարկել Բիւրոյին, որ նա Նալբանդին ազատ մարդիկ տայ եւ ժամանակ առ ժամանակ հեղինակաւոր ընկերներ ուղարկէ՝ դասախօսութիւնների համար։

Նալբանդի Շրջանային Ժողովի ներկայացուցիչ՝
HOMO

Կենտրոնական Կոմիտէի ներկայացուցիչ՝
ՍԻԳ

---

(1) Գաղափարաբանութիւն։

(2) Տարբերացումը, տարբաղադրումը՝ զտման, բաժանման իմաստով։

(3) Զգացմունքը, թիրտ հակազդեցութիւնը։

(4) Այդպիսի ցուցակ չկայ թղթածրարի մէջ։

(5) Ցոյց, բացասական կեցուածք։

ՑՈՒՑԱԿ Դ. ՀԱՏՈՐԻ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐՈՒ

Աբրահամեան Գէորգ.— 144ա, 144բ, 148ա.
Ագուլիս.— 258ա.
Ադամեան Մուրատ (Հեթում-Գազիկ) 144ա.
Ադամեան Ցնոր (Վահէ).— 144ա, 148բ, 149ա, 149բ, 150ա, 156բ, 160ա, 161ա, 161բ, 162ա, 162բ, 164ա, 165ա, 165բ, 167ա.
Ադամեան Օնիկ.— 157բ.
Ազարեան Մելիք 298բ.
Այանեանեան Երուանդ.— 151բ, 152ա, 161բ, 162բ, 165բ, 166բ.
Ախպեր.— 47ա, 276ա.
Ակնունի (Խաչատուր Մալումեան, «Դրօշակ»ի խմբ. ներկ.).— 14ա, 16ա, 19ա, 19բ, 20ա, 20բ, 21ա, 21բ, 22բ, 23ա, 23բ, 24բ, 39ա, 40ա, 40բ, 90բ, 92ա, 104բ, 105ա, 106ա, 106բ, 107ա, 111ա, 114ա.
Ակրատ.— 47ա.
Ահարոնեան Աւետիս (Զրաբերդի (Կարսի) II Կ. Կ.ի ներկ.).— 15բ, 16ա, 26ա, 26բ, 29բ, 39ա, 47բ, 92ա, 101բ, 102ա, 106բ, 107բ, 108ա, 110ա, 110բ, 111ա, 111բ, 112ա.
Ահմէտ խան (Սոմայի).— 235բ.
Այվատեան Սահակ եպս.— 324բ.
Անան.— 281ա.
Անդրանիկ (Պալճանի).— 152ա, 156բ, 158բ, 179բ, 180ա, 181բ, 182բ, 189ա.
Անդրանիկ զօրավար (Պարոյր).— 7ա, 9բ, 13ա, 24բ, 26ա, 29բ, 39բ, 79բ, 80ա, 81ա, 132ա, 132բ, 133ա, 155ա, 232բ, 280բ,
Անուշեան.— 233բ, 277բ.
Անտոն Գոշ.— 205բ.
Աշոտ (արհեստաւոր).— 284բ, 285ա.
Աշոտ (Ցուց. Մարմին).— 195ա, 198ա, 198բ, 203բ, 204ա, 205ա, 209բ, 210ա, 210բ, 212բ, 213ա, 216ա, 218ա, 219բ, 220ա,
Ապտէլ Ռահիմեան.— 276բ.
Ապրօ.— 47բ.
Առաքելեան Երանոս.— 183ա.
Առաքել Կայծակ.— 9ա, 9բ.
Առիւծ.— 258ա.
Ասլան.— 308բ, 263ա (Ռ. Զարդարեա՞ն).
Ալանեան Ալեքսան.— 156բ, 157ա, 157բ, 158ա, 181բ.
Ասպօ.— 47բ.
Ասատուրեան Խաչիկ.— 183ա.
Ատրներսեհ.— 329բ, 330ա, 330բ, 332բ.
Ատրոմիզդ.— 328ա, 328բ, 329բ.
Արամ (Ցուց. Մարմին).— 206ա, 199բ, 217բ.
Արամեան Ա.— 16ա.
Արամայիս.— 16բ.
Արարատեան.— 369, 370բ.
Արծուիկ.— 48ա.
Արեեստաւոր.— 229բ.
Արմենակ.— 329բ, 330ա, 332բ (Օխիկեա՞ն).
Արշակ (կէս զինագործ).— 232բ, 268բ, 285բ, 286ա, 286բ.
Արսէն (Ծովափի ներկ.).— 18ա.
Արտազեան.— 16բ.
Արտաշեան Արամայիս.— 369, 370բ.
Արտաւազդ.— 363ա, 368բ.
Արտոյտ.— 48ա.
Ատուր (Գրի. Անուշեա՞ն).— 313ա.
Աւետիս (կէս-զինագործ).— 286ա, 286բ.
Աֆրիկեան Տ.— 271բ.

Բաբայեան Լեւոն.— 317բ.
Բազէ.— 309բ.
Բալասան.— 284բ, 286ա, 286բ.
Բանզա.— 363ա.
Բանտեցի Խ.— 368բ.
Բարկէնեան.— 329բ, 332բ.
Բարսեղեան (Ապառաժի ներկ.).— 16ա, 26բ, 27ա, 29բ, 39բ, 343–, 344բ.
Բերբերեան Մինաս.— 370բ.
Բէտէրխան բէկ.— 236ա, 276բ.

Գալոփաբ.— 165ա.
Գեղամ (կէս զինագործ).— 285բ, 286ա, 286բ.
Գէորգ (աշկերտ).— 286ա, 286բ.
Գէորգեան Սողոմոն.— 20բ.
Գիսակ (Վարդգէս Սէրէնկիւլեան).— 326ա.
Գրիգորեան Բարսեղ.— 183ա.

Դալի-Գիոզ.— 363ա.
Դաշոյն.— 309բ.
Դավրիժեցի.— 265բ.
Դաւթեան Ց.— 148ա, 195ա, 198ա, 220ա, 220բ.
Դաւթեան Ցարութիւն.— 22բ.
Դաւիթեան Ա.— 166ա.
Դեմիրջանեան Դերենիկ.— 17բ.
Դերձակեան Է.— 20ա.
Դերձակեան Ռուբէն.— 283բ (տե՛ս Փայլակ).
Դէրվիշ.— 231բ, 232ա, 268բ.
Դժբախտ.— 323ա, 326ա.

Եսի կալէ.— 368բ.
Եսկոյեան Մարտիրոս (Մարտօ).— 152ա.
Եսովբեան Մելքոն.— 183ա.
Եուսուֆեան Ցովհաննէս.— 175ա.
Երանոսեան Մուրատ.— 156ա, 156բ, 157ա, 157բ, 180բ.
Երկաթ.— 187բ, 309բ, 363ա.
Երուանդ (զինագործ).— 247բ, 248ա, 284բ, 285ա, 286ա, 286բ.
Երուանդ (կէս զինագործ).— 286ա, 286բ.
Եփրեմ (կէս զինագործ).— 248ա, 285բ, 286ա, 286բ.
Եփրեմ խան.— 232բ, 238բ, 239բ, 240ա, 241բ, 242բ, 278ա.

Զաքարիա փաշա.— 236ա.

ՇԱՆՕԹ.— Էջաթիւերուն կէց ա եւ բ տառերը ցոյց կու տան առաջին եւ երկրորդ սիւնակները։

Զարդարեան Ռուբէն (Ալան)։– 15ա, 17բ, 26ա, 39բ, 130բ, 135բ, 152ա, 152բ, 153բ, 154ա, 156բ, 160ա, 160բ, 166ա, 166բ, 180բ։
Զարեհ (Ցուց։ Մարմին)։– 198ա, 199բ, 210բ, 212բ, 214ա, 214բ, 216ա, 216բ, 217բ, 220ա։
Զարեւանդեան Աշոտ։– 273ա, 275ա։
Զաւարեան Սիմէօն (Անտոն, Սմբատ Օհանեան)։– 21բ, 26ա, 29ա, 39ա, 42բ, 80բ, 96ա, 206ա։
Զաւէն։– 229բ, 237ա, 253ա, 254ա, 258ա։
Զաւրեան Ց։ (Մրգաստանի ներկ։)։– 15ա, 15բ, 26բ, 27ա, 29բ, 39ա, 39բ, 80ա, 81բ, 166ա։
Զամարեան Վահան։– 237ա, 237բ։
Զորեան Բարթող (Ժիրայր)։– 144ա, 145ա, 151բ, 152ա, 162բ, 165բ, 166բ, 167ա։
Զուլումաթ։– 275ա, 277բ։
Զօկ։– 308բ։
Զօրեան Ռոստոմ (Գոթոր, Արեւելեան Բիւրոյի ներկ։)։– 13բ, 19ա, 20բ, 26ա, 26բ, 39բ, 42բ, 90բ, 92ա, 104ա, 106ա, 106բ, 131ա, 132ա, 139ա, 162բ, 177բ, 178ա, 183բ, 206ա, 212բ, 322ա, 323բ, 324ա։

Էմիլ (Ցուց։ մարմին)։– 195ա, 199բ, 210բ, 212ա, 214ա, 216ա, 216բ, 217ա, 218ա։
Էֆպէր Խան։– 245ա։

Ընծայր (Գէորգ Ծ։ վ։ Նալպանտեան)։– 232բ, 238բ, 239բ, 240ա, 243ա, 244ա, 245ա, 245բ, 253ա, 272ա, 273բ, 275բ, 279բ, 319բ, 323բ, 325ա, 325բ։

Թադէոսեան Սամսոն Խան (Գարեգին)։– 228–, 232բ, 237ա, 237բ, 238ա, 238բ, 239բ, 240ա, 241բ, 247բ, 253ա, 253բ, 254ա, 254բ, 258ա, 314բ, 315բ, 321բ, 323բ, 326բ։
Թափառական։– 253ա, 292ա։
Թէոս։– 277բ, 323ա, 326բ։
Թէրզեան Լեւոն։– 156բ։
Թորգոմ (Վիշապի գործիչ)։– 152ա, 158բ, 162բ, 167բ, 180բ։
Թորգոմ (Ցուց։ մարմին)։– 17բ, 18ա, 21ա, 26բ, 106բ, 107ա, 194–, 195ա, 198ա, 199բ, 210ա, 214բ, 216ա, 217բ, 220բ, 221բ։
Թորգոմ (զինագործ)։– 247բ, 284բ, 285ա, 286ա, 286բ։
Թորոս (փոքր)։– 284բ, 285ա, 286ա։
Թռիչեան Ե։– 26ա, 26բ, 27ա, 28բ, 39ա, 39բ, 183 բ։
Թռչնակ։– 253ա, 258ա, 258բ։
Թռչուն։– 47բ։
Թօփճեան Խաչիկ։– 147ա, 157բ։

Ժամհարեան։– 220բ։
Ժռռէս։– 201բ, 205ա, 209բ, 210ա, 210բ, 217ա, 219բ։

Իշխան (Լեռնապարի ներկ։)։– 6ա, 6բ, 26ա, 29բ, 39բ, 46բ։
Իշխան (Արեւելեան)։– 247բ, 285ա։
Ինոյեան Խաչիկ (Սուրէն)։– 152ա։
Իոգոյեան Ա։– 166ա։
Իւզբաշի։– 15բ։

Լաբօ։– 47բ։
Լեւոն։– 197ա, 198ա, 199ա, 199բ, 202բ, 205ա, 210ա։
Լեւոն (զինագործ)։– 247բ, 268ա, 284ա, 284բ, 286ա, 286բ։
Լեւոն I (Ցուց։ մարմին)։– 198ա, 199բ։
Լեւոն II (Ցուց։ Մարմին)։– 199բ։
Լօրիս–Մելիքեան Յովհաննէս (Թահինեան)։– 88ա, 88բ, 89ա, 89բ, 90ա, 90բ, 109ա, 109բ, 110ա, 111ա, 112ա, 112բ, 114ա, 114բ, 115ա, 115բ, 116բ, 117ա, 117բ, 120բ, 127բ։

Խաչատուրեան Գրիգոր։– 131բ, 158ա, 158բ։
Խաչիկեան Արքաֆի (Բոգոֆ)։– 144ա, 156ա, 156բ, 157ա, 167ա, 180ա, 180բ, 181բ։
Խատիսեան Կոստանդին։– 247բ, 284ա։
Խենթ։– 309բ։
Խզմալեան։– 148ա։
Խիզախ։– 18ա։
Խորխորունի։– 363ա։
Խուրշուտ։– 377բ։

Մաղիկեան Արքահամ (Զաւէն – Արբօ)։– 152ա, 157ա, 157բ, 158ա, 160բ, 165բ, 167ա, 167բ։

Կալիոստրօ (Ը։ Ց։)։– 17բ։
Կամսար Սուրէն։– 152բ, 160ա, 165բ։
Կայծ։– 292բ, 310բ։
Կայծակ։– 346բ։
Կարին։– 80ա։
Կարօ (Ցուց։ Մարմին)։– 198ա, 199բ, 202բ, 203բ, 205ա, 210ա։
Կարօ (փոքր)։– 284բ, 286ա, 286բ։
Կարօ (Արիստակէս Զօրեան)։– 247բ, 284ա, 285ա, 286ա, 286բ։
Կէշեան Մանուկ։– 220ա։
Կէշեան Գօդոս։– 220ա։
Կիրակոսեան Պետրոս։– 305բ։
Կիւմիւշեան Արմենուհի։– 157բ։
Կիւմիւշեան Եւարդի։– 156բ, 181ա։
Կոմս (Վահան Փափազեան)։– 9ա, 9բ, 64բ, 68ա, 73բ, 75ա, 228–, 231բ, 238բ, 268ա, 301ա, 313ա, 321բ, 322բ, 323ա, 324ա, 325ա, 326ա։
Կոզ։– 16բ։
Կոմոպոլիտ։– 346բ։
Կոս։– 363ա։

Համազասպ։– 81բ։
Համբարձումեան Արշակ։– 156ա։
Համբիկ (կէս զինագործ)։– 248ա, 285ա, 285բ, 286ա։
Համիտ Սուլթան։– 184բ, 187բ, 195ա, 195բ, 196ա, 197ա, 197բ, 198ա, 198բ, 200ա, 200բ, 201ա, 202ա, 203բ, 204բ, 208ա, 210ա, 211բ, 212բ, 214ա, 216բ, 217բ, 218ա, 218բ, 219ա, 294ա։
Հայկ։– 258ա։
Հայկ (աշկերտ)։– 286ա, 286բ։
Հայրապետ։– 232բ, 237ա։
Հայրենասէր։– 308բ։

Հայրիկ։– 229բ, 245ա։
Հայրում։– 344ա։
Հրանտ։– 15բ։
Հրահատ։– 329բ, 331ա, 331բ, 332բ։
Հրացան։– 309։–
HOMO։– 369, 372բ։

Զոդակ։– 364բ։

Ղազարեան։– 22ա, 22բ։
Ղազարեան Ղազար (Մարզպետունի)։– 144ա, 148բ, 149ա, 161բ, 162ա, 164ա, 165ա, 165բ, 232բ, 237ա, 241բ, 312բ, 314բ, 320բ, 321բ։
Ղարիպեան Յովհաննէս։– 220ա։
Ղափան։– 226բ։
Ղուկաս (աշկերտ)։– 248ա, 285բ, 286ա, 286բ։

Ճելալեան Թովմաս (Ամերիկայի ներկայացուցիչ)։– 14ա, 14բ, 23ա, 39բ, 133ա։

Մազմանեան Վահան։– 160ա, 161ա, 161բ, 162ա, 162բ, 165բ, 179ա։
Մալխաս։– 231բ, 232ա, 232բ, 235բ, 238բ, 273բ, 313ա, 313բ։
Մամիկոնեան Վահան։– 322բ, 327բ, 328ա, 328բ, 329ա, 329բ, 330բ, 331ա, 331բ, 332բ։
Մանուկեան Արամ (Շամի պատգամաւոր)։– 6ա, 26ա, 26բ, 28բ, 29բ, 39ա, 39բ, 224–, 277բ։
Մաշուրեան Ալեքսանդր (Այգեստանի ներկ։)։– 15բ, 26ա, 26բ, 27ա, 28բ, 29բ, 347–, 355ա, 355բ։
Մար (Միքայէլ Տէր Մարտիրոսեան)։– 5ա, 5բ, 19ա, 19բ, 20բ, 21ա, 21բ, 22ա, 22բ, 23ա։
Մարգար (զինագործ)։– 247բ, 284բ, 285ա, 286ա, 286բ։
Մարդպետ։– 39ա։
Մարթին։– 187ա, 189բ։
Մարտիկ (զինուորական)։– 135բ, 136ա։
Մելիք Մուրատ։– 16ա։
Մելքոնեան Տաճատ Վրդ։– 39ա։
Մելքոն Խան։– 96բ։
Մելօ։– 47բ։
Մեծբայեան։– 324բ։
Մեսակ։– 284ա։
Միհրան (զինագործ)։– 247բ, 284ա, 286ա, 286բ։
Միհրան (խմբապետ)։– 175ա։
Մինասեան Սարգիս (Պալֆանի ներկ։)։– 15ա, 26ա, 29ա, 29բ, 39բ, 40ա։
Միշել (Ցուց։ Մարմին)։– 195ա, 198ա, 199բ, 201բ, 205ա։
Միսաք (կէս զինագործ)։– 286ա, 286բ։
Միրաբեան Յարութիւն։– 187ա։
Միրզապէկեան Գրիգոր։– 9բ։
Միրզայեան Յովսէփ։– 276ա։
Միքայէլ (զինագործ)։– 247բ, 284ա, 286ա, 286բ։
Միքայէլեան Ռուբէն (Գրիգորի որդին)։– 219բ։

Միքայէլեան Քրիստափոր (Էլլեն)։– 79բ, 89բ, 95բ, 96ա, 98ա, 100ա, 100բ, 104ա, 105բ, 106բ, 107ա, 194, 195ա, 195բ, 196բ, 198ա, 198բ, 201ա, 201բ, 203բ, 205բ, 206ա, 209ա, 209բ, 210ա, 212ա, 212բ, 219բ, 221ա, 223բ, 244բ, 280բ, 294բ, 363ա։
Մէհմէտ բէկ։– 236ա, 244ա, 276բ, 300ա։
Մխօ։– 47բ։
Մկրտիչ։– 232բ, 253ա, 254բ, 258ա, 258բ, 259բ։
Մկրտիչ (Ցուց։ Մարմին)։– 199բ, 210բ, 212բ, 214ա, 214բ։
Մկրտում։– 241բ։
Մկրտիչեան Սիմէօն։– 260ա, 261ա, 263բ։
Մկրտիչեան Ազամիրզեան Աւետիս։– 305ա, 305բ, 306ա։
Մկրտչեան Արմենակ։– 261ա։
Մհեր։– 321ա, 322ա, 328ա, 328բ։
Մոկացի։– 275ա, 277բ։
Մովսէս քհնյ։– 277բ։
Մուրատ (Պալֆանի)։– 136բ, 280բ, 181ա, 183բ։
Մռաւեան։– 319ա։
Մստոյ։– 232ա, 232բ, 268ա, 269բ։
Մօրուք։– 273բ։

Յակոբեան Մանուկ։– 158ա։
Յակոբեան Սիմէօն։– 148ա։
Յակովբ (Սառայի լան)։– 233ա, 263ա։
Յարութիւնեան։– 39ա։
Յովհաննէսեան Եսայի (Զարմայր)։– 152ա, 155բ, 195ա։
Յովհաննէսեան Օնանիկ։– 183ա։
Յովսէփեան Ղուկաս։– 316ա, 316բ։
Յուշիկ (Տիկ։ Ժենիա Մելիք–Փալանքարեան, Ժլատի ներկ։)։– 16ա, 16բ, 19բ, 26ա, 29բ, 357–, 360ա, 360բ, 361ա, 362բ, 363ա։
Յովհաննէս (աշկերտ)։– 284բ, 286ա, 286բ։
Յովհաննէսեան Նշան։– 219բ։
Ց։ Պ։– 232բ, 239ա, 252ա, 269բ։

Նահապետեան Առաքել։– 219բ։
Նահապետեան Սեդրակ (Զաւէն)։– 152ա, 155բ։
Նատիրեան Հայր Մինաս։– 86բ։
Ներսէսեան Ներսէս։– 311բ։
Նէյիմբուլահ Խան։– 277բ։
Նիկոլ (արհեստաւոր)։– 285բ, 286ա, 286բ։
Նիկոլ–Դուման։– 49ա, 81ա, 81բ, 232ա, 249ա, 249բ, 253բ, 268բ, 326բ։
Նշան Քանֆան։– 277բ։
Նրսեհեան Արշակ։– 157բ։
Նրսեհեան Զարեհ։– 157բ։

Շահապ Բ։– 183ա։
Շահխաթունեան Աւետիք (Արտուր, Մոսկուայի կ։ի ներկ)։–17բ, 26ա, 26բ, 27ա, 29բ, 39ա, 333–, 337բ։
Շահրազ։– 232ա, 247բ, 277ա, 277բ, 283բ, 285ա, 286ա, 287ա։
Շահպազեան Ա։–164բ։
Շահրիկեան Ց։ (Ղնիբրա)։– 24ա, 24բ։
Շապոյեան։– 186բ։
Շաւարշ (Շահ կ։ի կոդմէ)։– 302բ, 307ա, 312բ, 317ա, 317բ։

Շաւրօ.– 323ա, 232բ, 236ա, 244ա, 276բ, 277ա, 278բ, 299բ, 300ա, 300բ, 301ա.

Ուլբարեան.– 308բ.
Ուխտաւոր.– 16ա.
Ուստանիկ.– 281ա.

Զալալ (գիներ).– 284բ.
Զալալեան Ալէք.– 317ա.
Զահիլ.– 199բ, 203բ, 205ա.
Զարբֆի Աբամ.– 149ա, 149բ.
Զերազ.– 96բ.
Զէրչեան Յակոբ.– 142բ.
Զորաքեան.– 100ա, 238ա.
Զոփուրեան (Ոսկանապատի պատգ.).– 26ա, 26բ, 27ա, 29բ, 39բ.

Պաղտոյեան Բրօ.– 220ա.
Պատուելի.– 232բ, 238բ.
Պարտիզեան Սարգիսիկ (Սաբ).– 152ա, 179ա.
Պետկա.– 283բ, 315ա, 315բ.
Պետրոս.– 230բ, 238ա, 247բ, 268ա, 284ա, 284բ, 286ա, 286բ.
Պիոնեան Կարապետ.– 131ա, 144ա, 144բ, 145ա, 148բ, 151բ, 152ա, 152բ, 158ա, 160ա, 161բ, 162ա, 162բ, 163ա, 163բ, 164ա, 164բ, 165ա, 165բ, 166բ, 177բ.
Պօղոս (կէս գինագործ).– 248ա, 285բ, 286ա, 286բ.
Պօղոսեան Գրիգոր.– 232բ.
Պոտիկեան Կարապետ (Զայն).– 144ա, 145ա,

Ջամալեան Արշակ (Խահակեան, Ջանֆ Ուս. Միութեան ներկ.).– 17բ, 20բ, 26բ, 27ա, 29բ, 39բ, 333–, 340ա, 342ա.
Ջաֆար ցեղապետ.– 235ա, 235բ, 269բ.
Ջոշ Ադա (Յովհաննէս Ֆլէնան).– 232ա, 237բ, 268ա, 268բ, 270բ.

Ռաշիդ.– 350բ, 368ա, 368բ.
Ռշտունի.– 281ա.
Ռուբէն (աշկերտ).– 284բ, 286ա, 286բ.
Ռուբինա.– 26բ. 194, 199բ, 201ա, 201բ, 205բ, 212ա, 214բ, 216ա, 216բ, 217ա, 217բ, 218բ, 220ա, 326ա.

Սալման (Համազասպ Բաղէշցեան, Շամի պատգ.).– 6ա, 6բ, 20ա, 20բ.
Սակ.– 309բ.
Սահակեան Մանուկ.– 156բ.
Սահմանեան Պահակ.– 240ա, 298բ, 302բ, 311ա.
Սամսոն (արհեստաւոր).– 284բ, 285ա, 286ա, 286բ.
Սայեան Գրիգոր.– 144բ, 149բ, 152ա.
Սարամեան Օնանիկ.– 329ա, 329բ.
Սարգիսեան Նիկոլ.– 260ա, 260բ, 261ա, 261բ, 262ա, 268բ.
Սարուխանեան Սարգիս.– 279ա.
Սարգիս (Յուց. Մարմին).– 195ա, 197ա, 198ա, 199բ, 202բ, 205ա, 205բ, 206ա, 210ա.
Սարգիս (կէս գինագործ).– 285ա, 285բ, 286ա.
Սարհատ (Լեռնավայրի պտգմ., մերժուած Ընդհ. Ժողովի կողմէ).– 18բ, 19ա, 28բ.
Սարհատ (Գէորգ Զաւուշ, Դուրան-Բարձրաւանդակի ներկ.).– 7ա, 9ա, 9բ, 11բ, 13ա, 13բ, 60բ, 63բ, 64ա, 64բ, 67բ, 80ա.
Սամօ.– 26ա, 26բ, 29բ, 39բ.
Սաֆօ (Մարտիրոս Մարգարեան, կարմրաբշիկ, ներկ. Յուցական Մարմնի).– 14ա, 21բ, 90բ, 95բ, 103ա, 106բ, 194, 195ա, 198ա, 203բ, 206ա, 206բ, 207ա, 207բ, 208ա, 208բ, 209ա, 212ա, 212բ, 214բ, 216ա, 216բ, 217ա, 217բ, 218բ, 220ա, 221ա, 221բ.
Սեբաստացի Մուրատ.– 9ա, 9բ, 13ա, 26ա, 29բ, 39բ.
Սեպուհ.– 9ա, 9բ, 26ա, 27բ, 29բ, 39բ, 136բ, 137բ, 139բ, 140ա, 238բ.
Սիամանթօ.– 22ա.
Սիլա.– 275ա.
Սմբատ (աշկերտ).– 247բ, 285ա, 286ա, 286բ.
Սմբուլ.– 368բ.
Սնտրիկ.– 277բ.
Սվաճեան Յակոբ.– 151բ, 152ա, 166բ.
Սվաճեան Նուարդ.– 179ա.
Ստեփանեան (Տոքթէօր).– 187ա, 260բ, 261ա, 263բ, 318ա.
Ստեփանեան Ստեփան (Ս. Վրէժունի, Բալաջան, Ատրպատականի ներկ.).– 16ա, 17ա, 19բ, 20ա, 23բ, 26ա, 27բ, 29բ, 39բ, 259բ, 263ա, 263բ, 302ա, 302բ, 303ա, 312ա, 312բ, 319ա, 322բ, 323ա, 324բ, 325բ.

Վալադեան.– 39ա.
Վալատ Պօղոս.– 287բ.
Վահաբ (Արշակ Վասմեան).– 19բ, 20ա, 23բ, 26բ, 28բ, 38ա, 39բ, 40ա, 105ա.
Վահրամ (Յարութիւն Գալֆայեան).– 5ա, 5բ, 19ա, 19բ, 20բ, 21ա, 22բ, 23ա.
Վանֆուշ.– 361ա, 363ա.
Վաչօ.– 328բ, 329բ, 332բ.
Վարանդացի Արսէն.– 344ա.
Վարանդեան Միքայէլ.– 19ա, 29բ, 100ա, 100բ, 101ա, 103ա, 114ա, 114բ, 115ա, 232բ.
Վարդան (խանասորի).– 29բ, 39ա, 39բ, 80բ, 81բ.
Վարդանեան Ասատուր, 183ա.
Վարդ-Մանիշակ.– 187ա.
Վարժապետեան Կոստանդին.– 265բ, 311բ.
Վարոյ (Իսակ Արվախի, Վարդ Պատրիկեան).– 23բ, 44բ, 83բ, 110բ, 117բ, 130ա, 131բ, 132ա, 144ա, 144բ, 148բ, 149ա, 149բ, 150ա, 151բ, 152բ, 153բ, 155բ, 159ա, 160ա, 161ա, 161բ, 162ա, 162բ, 163ա, 163բ, 164ա, 164բ, 165ա, 170բ, 175ա, 178բ, 179ա, 215բ, 291բ, 308բ.
Վկայ (Վարդան Վրդ.).– 201բ, 204ա, 205բ.
Վռամ, Վռամշապուհ (Յուց. Մարմին).– 199բ, 201բ, 203բ, 204ա, 205 բ, 206ա, 209բ, 210ա, 212բ, 219բ, 221ա.
Վրացեան Սիմէօն (Գաուզինեան, Սիզ, Նալբանդի ներկ.).– 16բ, 26ա, 26բ, 27ա, 29բ, 369–, 370բ, 372բ.

Տաբեւեան Վահագն (Ամերիկայի ներկ.).– 14ա, 14բ, 23ա, 26բ, 39ա, 39բ.
Տալլօ.– 325բ.
Տաշրացի.– 368բ.
Տաշրեան.– 15բ.

Տատրակ (Գեղամ Տէր Կարապետեան).– 7բ, 9ա, 9բ, 64բ, 67բ, 69ա, 73ա, 73բ.
Տարեան Լիւդֆիկ.– 260ա, 263բ.
Տարօնեան Սրապիոն.– 158ա.
Տաֆէսեան Վարդազար (Մուրճ).– 144ա.
Տեղացի.– 232բ, 238բ.
Տէմիրճեան Յ.– 187ա.
Տէր Աբրահամեան Ալեքսանտր.– 249ա.
Տէր Զաքարեան Սիմէօն.– 316ա, 316բ.
Տէր Ղեւոնդեան Ռ.– 17բ.
Տէր Մինասեան Ռուբէն.– 7բ, 9ա, 9բ, 47ա, 60բ, 64ա, 67բ, 69ա, 72ա, 75բ, 277բ.
Տէր Յակոբեան Գէորգ (Պարտիզակցի).– 144ա, 145ա, 159ա.
Տէր Յովհաննէսեան Վարդան.– 302բ, 311բ.
Տէր Սարգիսեան Նիկողայոս.– 218ա, 219ա.
Տէր Ստեփանեան Աբրահամ.– 315բ.
Տիգրանեան.– 152բ, 155ա, 162ա.
Տորգեղ.– 16ա.
Տումանեան Տիգրան.– 151բ.

Բոքերտ.– 346բ.

Յուլակ.– 258ա.

Փայլակ.– 232բ, 238բ, 239բ, 245բ, 274ա, 277ա, 277բ, 278ա, 279ա, 323բ.
Փաշայեան Մելիք.– 233ա, 252ա.
Փարսադան.– 284բ, 286ա, 286բ.
Փափազեան Թազուր.– 142բ.
Փափազեան Յարութիւն (Վահան).– 152ա, 155բ.
Փիլիպոսեան Յակոբ.– 187ա.
Փորքուզալեան Մկրտիչ.– 294ա.
Փոստայեան Նազարէթ.– 187ա.
Փրէսանսէ (Ֆրանսիս Տը).– 89բ, 90ա, 90բ, 94ա, 95ա, 102ա, 102բ, 103բ, 107ա, 108ա, 109ա, 111ա, 112ա, 112բ, 113բ, 114բ, 115բ, 116ա. 117ա, 123բ, 125ա.

Քաբանեանց.– 247բ, 284ա, 286ա, 286բ.
Քաղաքագործ Մարտօ.– 64բ.
Քաղբերունի.– 18բ.
Քեռի.– 277բ.
Քիյար Փիէռ.– 19ա, 19բ, 21ա, 21բ, 82ա, 89բ, 90բ, 93ա, 94ա, 99բ, 100ա, 100բ, 101ա, 101բ, 103բ, 104ա, 107ա, 107բ, 108ա, 108բ, 110բ, 111ա, 111բ, 112ա, 113բ, 114ա, 115ա, 115բ, 116ա, 116բ, 117ա, 117բ, 128ա, 123բ.
Քիւրտ Ֆարհատ.– 232ա, 278բ.
Քրիս.– 14ա, 194, 199բ, 212բ, 216ա, 217բ, 220ա.
Քրմապետ.– 18բ.

Օթիկեան Արմենակ (Սլամբ).– 233ա, 236ա, 237բ, 268ա, 253ա, 276բ, 278բ, 283բ, 285ա, 299բ, 300ա.
Օհանջանեան Համօ (Մենք).– 26ա, 27ա, 29բ, 39ա, 40ա, 318ա, 319ա, 324ա.
Օհանեէս խան.– 96բ.
Օրայեան Մանուկ.– 220ա.

ՅՈՒՑԱԿ Դ. ՀԱՏՈՐԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒ

Աբէնֆ.– 20ա, 20բ, 23ա, 194–, 195ա, 195բ, 198ա, 198բ, 199բ, 202ա, 204ա, 207ա, 207բ, 216ա, 217ա, 221բ.
Ալաշկերտ.– 61բ.
Ալեքսանտրիա.– 84ա.
Ախլաթ.– 7բ.
Ադրակ.– 275բ.
Այգեստան (Գանձակ).– 15բ, 347–, 347ա, 348ա, 348բ, 350բ, 351ա, 353ա, 354բ, 355ա, 355բ.
Այնթապ.– 44բ.
Անտառ (Աստարա).– 227–, 231բ, 234ա, 246բ, 247ա, 249բ, 252բ, 291ա, 295բ, 297ա, 297բ, 298ա, 298բ, 311ա.
Անտառապատ.– 326բ.
Ապահունիք.– 57ա, 61ա, 61բ, 63բ, 68ա, 73ա.
Ապաղա.– 300ա.
Ապառաժ (Ղարաբաղ).– 16ա, 81ա, 81բ, 238ա, 343–, 344բ, 347–, 348ա, 350ա, 353ա.
Առախ.– 55բ.
Առատ.– 363ա, 364բ, 368բ.
Առինջվանք 55բ.
Առվարինջ.– 55բ.
Ասդարապատ 249բ.
Արարլու.– 273բ, 278բ.
Արազ.– 47ա, 319բ.
Արախ.– 265բ, 266ա, 266բ.
Արապենբ.– 243բ.
Արծիւ.– 363ա, 364բ, 368ա, 368բ, 371բ.
Արճակ.– 278բ.
Արմաւիր.– 358ա,
Արչակ.– 242բ.
Աւանուխ.– 275բ, 276բ, 277ա.
Աւարայր.– 226, 227, 230բ, 231բ, 232ա, 232բ, 234ա, 237ա, 238բ, 239ա, 240ա, 240բ, 242ա, 245ա, 245բ, 249բ, 253ա, 269ա, 270բ, 271ա, 271բ, 272բ, 273ա, 274ա, 274բ, 275ա, 277ա, 277բ, 278բ, 279ա, 300բ, 313ա, 314բ, 319բ.
Ափ.– 227–, 230բ, 231ա, 231բ, 240ա, 244բ, 247ա, 253ա, 281ա, 281բ, 299ա, 313ա, 313բ, 314ա, 323բ.

Բազու.– 81ա, 81բ, 101բ, 199բ, 204բ, 287ա, 294ա, 294բ, 295ա, 317ա, 351ա, 363ա, 363բ.
Բադա.– 351ա.
Բալու.– 185ա, 190ա.
Բաղէշ.– 24բ, 185ա.
Բաշկալէ.– 231բ, 237ա.
Բասէճ.– 61ա, 61բ, 73ա.
Բարանդուզ.– 249բ.
Բարփրուշ.– 249բ, 291ա.
Բեռն.– 338ա, 338բ.
Բերդ.– 361ա, 363ա, 368բ.
Բերդակ.– 48բ.
Բերկրի.– 275բ.
Բէյկոզ (Գեյֆոզ).– 206ա.
Բէնտէր Աբաս.– 306բ, 317բ,
Բէնդէր Գեազ.– 249բ, 302բ, 304բ, 291ա, 306ա, 317ա.

Բէնդէրզէզ·– 230բ·
Բիւրակն·– 9ա, 9բ, 13ա, 57ա, 61ա, 61բ, 67բ, 68ա, 73ա·
Բլուր (Քիշմիշքէփէ)·– 231բ, 243բ, 245ա, 275բ, 276ա, 279ա·
Բոդան·– 49բ·
Բուժարան·– 361ա, 363ա, 364բ, 368բ·
Բրիւսսէլ·– 338ա, 338բ·

Գահիրէ·– 84ա·
Գայանքբ·– 154ա·
Գարաբունար·– 154բ·
Գարէյնի·– 276ա, 276բ·
Գարնաբատ·– 154բ·
Գեալէ Գազան·– 55բ·
Գեղանի·– 288ա·
Գէորգեւսկ·– 358ա·
Գերգ Բուլախ·– 242բ, 275բ, 278բ·
Գիլան·– 226–, 227–, 230ա, 230բ, 232բ, 234ա, 238ա, 238բ, 240ա, 240բ, 241բ, 249ա, 249բ, 251ա, 253ա, 266ա, 286բ, 287ա, 289ա, 289բ, 290բ, 291ա, 292ա, 306բ, 311բ, 313ա, 317ա, 317բ·
Գոբծարան (Գետաբէկ)·– 351ա, 354ա·
Գրոզնա·– 358ա·

Դաշտ·– 47բ, 73բ·
Դաւալու·– 276ա, 279ա·
Գեղանի·– 288ա·
Դարմշտատ·– 338ա, 338բ·
Դարաղամ·– 247ա, 299ա·
Դոն·– 371ա·
Դուրինկա·– 371բ,
Դուրան (Տարօն)·– 6բ, 11ա, 13ա, 56բ, 59բ, 60բ, 61ա, 62ա, 63բ, 64ա, 67բ, 68ա, 68բ, 69ա, 71ա, 72ա, 75բ, 80բ·
Դուրան–Բարձրաւանդակ (Տարօն–Սասուն)·– 6բ, 7ա, 7բ, 44բ, 54ա, 54բ, 61ա, 61բ, 62բ, 63ա, 67բ, 69ա, 71բ, 73ա, 73բ·

Եմամլու·– 154բ·
Եկատերինոդար·– 371բ·
Եկատերինոսլաւ·– 371ա·
Երեւան (Մրգաստան)·– 15ա, 15բ, 44բ, 81ա, 245ա, 274ա, 305ա, 305բ, 313բ, 314ա, 319բ, 323բ, 326ա, 326բ·
Երուսաղէմ·– 84ա, 86բ, 87ա, 87բ·

Զանգեզուր·– 81ա, 348ա·
Զէյթուն·– 84բ, 168բ·
Զէպզէվար·– 249բ·
Զոլա·– 253ա, 254բ·
Էլխան·– 277բ·
Էնզելի (Գորտ Արտուր)·– 21ա, 227–, 240բ, 241ա, 249բ, 263բ, 264բ, 287ա, 288ա, 289ա, 289բ, 290ա, 290բ, 292ա, 292բ, 310բ, 317ա·

Էրզրում·– 44բ, 80ա·

Թաբար (Բազարճբ)·– 154ա, 205բ·
Թաւրիզ (Դաւրէժ)·– 109ա, 119ա, 226–, 227–, 234բ, 259բ, 263բ, 266ա, 281ա, 284ա, 294ա, 296ա, 308ա, 317բ, 322բ, 323ա, 327բ, 328բ, 329բ·
Թեհրան (Շահ Շահստան)·– 226–, 227–, 230ա, 230բ, 232բ, 234ա, 235ա, 238ա, 238բ, 240ա, 243բ, 249բ, 251ա, 253ա, 266ա, 288բ, 292բ, 300բ, 301բ, 302ա, 304բ, 305ա, 305բ, 306ա, 306բ, 307ա, 312ա, 316ա, 317ա, 317բ, 318ա, 322ա, 323բ, 325ա·
Թիֆլիս·– 44ա, 99բ, 100ա, 140բ, 295ա, 316ա, 316բ, 317ա, 322բ, 323ա, 333–·
Թուլչա·– 144բ, 145բ, 146ա·
Թոփ Կափու·– 196ա, 201ա, 203ա·

Ժայռ·– 253ա, 254բ, 258ա·
Ծրնեւ·– 5ա, 6բ, 14ա, 17բ, 19ա, 19բ, 20ա, 20բ, 21ա, 21բ, 22ա, 22բ, 23ա, 23բ, 24ա, 84ա, 99ա, 100ա, 100բ, 101ա, 101բ, 105ա, 105բ, 106ա, 106բ, 107ա, 107բ, 109ա, 109բ, 110ա, 110բ, 112ա, 112բ, 113ա, 114ա, 114բ, 115ա, 115բ, 116ա, 116բ, 117ա, 117բ, 140բ, 161բ, 164բ, 179ա, 195ա, 199բ, 205ա, 206ա, 207բ, 208ա, 210ա, 212ա, 212բ, 217բ, 219ա, 220բ, 258ա, 311ա, 327բ, 338ա, 338բ, 339ա, 340բ, 342ա·
Ծլատ·– 16ա, 16բ, 357–, 357ա, 360ա, 360բ, 361ա, 362բ, 363ա, 364բ, 365ա, 365բ, 366ա, 366բ, 367բ, 368բ, 369–, 370բ, 371ա, 371բ·

Իբրայիլ·– 145ա,
Իենա·– 338ա, 338բ·
Իզմիր·– 17բ, 18ա, 21ա, 166ա, 185ա·
Իշխանաձոր·– 55բ·
Իւզով·– 371բ·

Լա Հէյ·– 82ա, 125բ, 169ա, 176բ, 252բ·
Լայբցիգ·– 338ա·
Լեռնավայր·– 44ա, 80ա, 80բ, 82բ, 191ա, 206ա, 315ա·
Լեստան·– 344բ·
Լիլավա·– 280բ, 281ա, 281բ, 282բ·
Լիսկ·– 334բ·
Լոնտոն·– 82ա, 87բ, 89ա, 89բ, 92բ, 93ա, 94ա, 95ա, 95բ, 97բ, 98ա, 99ա, 99բ, 102բ, 103ա, 103բ, 104բ, 105ա, 105բ, 108բ, 109բ, 110ա, 110բ, 122բ, 124ա, 176ա·
Լոբնստան·– 305ա·
Լուսաստղ·– 363ա, 364բ, 368բ·
Լօզան·– 333, 338ա, 338բ, 339ա, 340բ·

Խան·– 47ա·
Խաչէն·– 236ա, 276բ·
Խասգեղ·– 55բ·
Խարբերդ·– 18ա, 184ա, 189բ·
Խարկով (Խարփուր)·– 333բ, 334ա, 335ա, 371ա, 371բ·
Խեւան·– 290բ·
Խիզան·– 49բ·
Խնձորեակ·– 324ա·
Խնուս·– 7բ, 61բ·
Խոյ·– 226–, 242ա, 266բ, 268բ, 270բ, 271բ, 279ա·

Խոյլու·– 351ա·
Խոր·– 80բ·
Խորաձոր·– 190ա, 193բ·
Խորասան·– 226–, 249բ·
Խոր վիրապ·– 80բ·
Խրխոյ·– 196ա·

Ծագեձոր (Սիւնիք)·– 343, 344բ, 346բ, 348ա·
Ծառաստան·– 253ա, 254ա, 255ա, 255բ, 256ա, 258ա·
Ծիլ·– 369ա, 369բ, 371ա·
Ծովափ·– 18ա·
Ծոց·– 80բ·

Կալաց·– 134ա, 139բ, 140ա, 143բ, 144բ, 145բ, 146ա, 152ա, 155ա, 158ա·
Կայարան·– 348ա, 349բ·
Կայծքար·– 156ա·
Կառկառ·– 47ա, 47բ, 231բ·
Կառնեն·– 55բ·
Կարէ (Կամուրջ)·– 244ա·
Կարին (Բարձրաբերդ)·– 9բ, 13ա, 73ա, 185ա, 190ա, 193ա·
Կարնկան·– 47բ·
Կարմիր·– 48ա·
Կարս (Ջրաբերդ)·– 9բ, 44բ, 61ա, 73ա, 197բ, 286ա, 300բ, 325բ, 326ա, 326բ·
Կաւաշ·– 47բ·
Կոթուրի·– 231բ, 249ա, 268ա, 270բ·
Կոլէ Գորազան·– 11ա, 13ա·
Կովկաս·– 21ա, 22բ, 28ա, 29ա, 39բ, 40ա, 40բ, 41ա, 44ա, 45բ, 69ա, 79ա, 80բ, 82ա, 83ա, 83բ, 87բ, 101բ, 102բ, 107բ, 131բ, 133ա, 133բ, 134ա, 134բ, 143բ, 154բ, 156ա, 160ա, 163ա, 163բ, 164բ, 165բ, 166ա, 168բ, 171բ, 172բ, 173ա, 175բ, 177ա, 187բ, 188ա, 188բ, 191բ, 225բ, 228բ, 231բ, 244բ, 245բ, 246ա, 248ա, 248բ, 249ա, 250ա, 258ա, 264ա, 264բ, 265ա, 265բ, 270բ, 271ա, 272բ, 273ա, 274ա, 277բ, 281ա, 284ա, 285ա, 285բ, 287բ, 288բ, 291բ, 295բ, 297ա, 298բ, 303բ, 304բ, 305ա, 306բ, 307բ, 309ա, 316ա, 321ա, 327բ, 334ա, 335ա, 335բ, 336ա, 341ա, 344բ, 353ա, 354բ, 356ա, 359ա, 363բ, 364ա, 369–, 370ա, 371բ·
Կուրան·– 299բ·
Կուրաւ·– 55բ·
Կռուադաշտ·– 231բ·
Կրեբա·– 263ա·

Հալէ·– 338ա, 338բ·
Համադան·– 249բ, 266ա·
Հասան–Ղալա·– 249բ·
Հին բերդ·– 345ա·
Հով·– 364բ·
Հռոմ·– 86բ, 89ա, 96բ, 106ա, 122բ·

Ղազախ·– 351ա·
Ղազուին (Գազգան)·– 240բ, 241ա, 249բ, 287ա, 288ա, 289ա, 289բ, 290ա, 290բ, 302բ, 306բ, 311ա, 311բ, 312ա, 317ա·
Ղալա·– 280բ, 281ա·
Ղալասար·– 268ա·
Ղզլար·– 358ա, 371ա, 372ա·
Ղարադաղ (Ածխահան)·– 230ա, 230բ, 234ա, 249բ, 281բ, 282բ, 291ա·
Ղարաջալու·– 242ա, 271բ·
Ղարսայ·– 75·
Ղոյուն·– 290բ·
Ղոչան·– 230բ, 249բ·

Ճառազայթ·– 253ա, 254բ, 258ա, 270ա·

Մազանդարան·– 230ա, 230բ, 232բ, 233ա, 234ա, 291ա, 306բ, 317ա·
Մակու·– 236ա, 244ա, 276ա, 300ա·
Մակու–Արտազ·–227–, 234ա, 243բ, 249բ, 270բ, 275բ, 276բ·
Մահլազան·– 242ա·
Մահլամ·– 233ա, 271ա, 271բ·
Մայկոպ·– 371ա, 371բ·
Մավանա·– 257բ·
Մարաղա·– 227–, 230ա, 230բ, 234ա, 249բ, 293բ, 294ա, 295ա, 302բ, 310բ, 311ա·
Մարիուպոլ·– 371ա, 371բ·
Մարսէյ·– 84ա, 116ա·
Մարսոտ·– 275բ·
Մենակ·– 47ա·
Մենարան·– 23ա·
Մենաւոր (Գաղթաշէն)·– 47ա, 226–, 230բ, 231ա, 231բ, 232ա, 232բ, 238բ, 240ա, 240բ, 242ա, 243բ, 244ա, 245ա, 245բ, 249բ, 253ա, 268բ, 269ա, 273բ, 275ա, 275բ, 277ա, 277բ, 278բ, 279ա, 279բ, 301ա, 313ա, 314ա, 314բ, 319բ, 323ա, 323բ, 325ա·
Մէշէդ·– 249բ·
Մէշէդսար·– 249բ·
Մժեղ·– 263ա·
Միանդարան·– 307բ·
Միանտաղ·– 249բ·
Միւնիխ·– 333, 338ա, 338բ, 339ա, 340·
Միքախրիստ·– 369ա, 369բ·
Մոգդոկ·– 358ա·
Մոկ·– 47ա, 47բ·
Մոնպելիէ·– 338ա, 338բ, 339ա·
Մոսկուա (Եկեղեցի)·– 17բ, 197բ, 284ա, 333բ, 334ա, 334բ, 335ա, 335բ, 337ա, 337բ·
Մոտկան·– 75ա·
Մուժամպար·– 249բ·
Մուշ (Կորոտ)·– 41բ, 55բ, 56ա, 57բ, 59ա, 80ա, 177բ, 187բ, 189ա, 286ա·
Մուշաղէն·– 55բ·

Ցոնան·– 118ա·

Նազկանց·– 47բ·
Նալբանդ·– 16բ, 357–, 360ա, 369–, 369ա, 369բ, 370բ, 371ա, 372բ·
Նախիջեւան·– 81ա, 299բ, 334բ, 369–, 371ա, 371բ·
Նամսի 338ա·
Նիշապուր·– 249բ·

Նիւ Եորք·– 98բ·
Նորածին·– 361ա, 363ա, 364բ·
Նորաշէն (Շօրան)·– 242ա, 271ա, 271բ, 272ա·
Նոր–Ալան·– 361ա, 363ա, 364բ, 368բ·
Նորնեն·– 55բ·
Նոր–Զուղա (Գետափ)·– 226–, 227–, 231բ, 251ա, 293ա, 302բ, 308ա·

Շահբաղարան·– 233բ·
Շահբախտ·– 243բ·
Շահիլան·– 236ա·
Շահսէվան (Արտաբիլ)·– 227–, 230բ, 234ա, 238բ, 240ա, 245բ, 246ա, 249բ, 252բ, 291ա, 295բ, 296ա, 296բ, 297ա, 298ա, 298բ, 302բ, 311ա, 313ա·
Շահրուտ·– 249բ·
Շամգիտան·– 235բ·
Շամ, Շամիր, Շամիրամ (Վասպուրական)·– 6ա, 11ա, 21բ, 39բ, 44ա, 47ա, 62ա, 68ա, 72բ, 73բ, 75ա, 75բ, 80ա, 82բ, 187բ, 189բ, 224–, 226–, 231բ, 232ա, 237ա, 243բ, 249ա, 268ա, 268բ, 269ա, 273բ, 275ա, 278բ, 300ա, 301ա, 314ա, 314բ, 315ա, 319ա, 323ա, 324ա, 325բ, 345բ·
Շատախ·– 47բ, 314ա·
Շէյթանաւայ·– 268ա·
Շէնգրկ Սեմալ·– 55բ·
Շիշլի (?)·– 213ա, 216ա, 216բ·
Շիրազ·– 249բ·
Շիրուան·– 249բ·
Շիքակօ·– 185ա, 187ա, 190բ·
Շուշ·– 80բ, 81ա, 218ա, 238ա, 324բ, 343–, 343բ·
Շուսէն·– 144բ, 148ա, 155բ·
Շուսլա·– 138բ, 161բ·

Ոզմ·– 47ա, 47բ·
Ոսկանապատ (Բազու)·– 24ա, 156ա, 180բ, 230բ, 233բ, 251բ, 291ա, 297ա, 297բ, 298ա, 348բ·
Ոսկեհանք (Իզմիր)·– 79ա, 79բ, 134ա, 152ա, 153ա, 166բ, 190ա, 199բ, 201ա, 202բ, 205ա, 210ա, 219բ, 222ա·
Ուաշինկթըն·– 98բ, 125ա·
Ուռֆիկըն·– 190բ·
Ուսթըր·– 185բ·
Ուրմի·– 257բ, 307բ, 323ա·
Ուրմիա·– 226, 236ա, 236բ, 323ա·

Զաբսանենաց·– 185ա, 190ա·
Զէկիւզլար·– 249բ·
Զուլամերկ·– 236բ·
Զուլֆա·– 249բ, 275բ·
Զրիկ·– 55բ·

Գաբուտ (Նաւահանգիստ)·– 334ա, 337բ·
Գալչբէ·– 148ա·
Գայազիտ·– 257բ·
Գարտիզաան·– 326ա·
Գետիզոբսկ·– 358ա·
Գետերբուրգ (Հիւսիսակերտ)·– 27բ, 80ա, 204բ, 305բ, 333բ, 334բ, 335ա, 337ա, 337բ·
Գետրովսկ·– 258ա·
Գերլին·– 17բ, 81բ, 84ա, 96բ, 97ա, 119բ, 120ա, 121բ, 126ա, 199բ, 333–, 338ա, 338բ, 339բ, 341բ, 342ա·
Գզտիկ·– 236ա, 243բ, 244ա, 277ա·
Գէյրուբ·– 18բ, 189բ·
Գիբլիս·– 49բ, 80ա·
Գոլիս (Վիշապ)·– 44ա, 46ա, 47ա, 52բ, 79ա, 79բ, 84ա, 86ա, 88ա, 125բ, 134ա, 134բ, 152բ, 153ա, 166ա, 166բ, 178բ, 184բ, 185ա, 187բ, 194–, 195ա, 195բ, 196ա, 196բ, 197ա, 198ա, 198բ, 199ա, 199բ, 203ա, 204բ, 205ա, 205բ, 208ա, 208բ, 209ա, 209բ, 212ա, 213ա, 214բ, 216բ, 217ա, 218ա, 218բ, 219բ, 220բ, 221բ, 236ա, 334բ·
Գոսբըն·– 14բ, 98բ, 125ա, 191ա, 192ա, 193բ·
Գորիսովկրատ·– 154ա·
Գուլանըզ·– 7բ·
Գուրակ·– 47բ, 75ա·
Գուրկազ·– 134ա, 138բ, 143բ, 144ա, 147ա, 147բ, 152ա, 153բ, 161բ·
Գուրբէշ (Բուխարեստ)·– 138բ, 139ա, 144ա, 146ա, 149բ, 150ա, 151բ, 152ա, 155ա, 205ա·
Գրախլադնի·– 358ա·
Գրայլա·– 139բ, 143բ, 144ա, 146ա, 152ա, 155ա, 158ա·

Դաշտ (Դաշիդ)·– 232բ, 234ա, 237ա, 240բ, 241ա, 249բ, 266ա, 287ա, 287բ, 288ա, 289ա, 289բ, 290ա, 290բ, 292ա, 296ա, 312ա, 318ա, 319ա·
Դատնէ Մահալէի·– 147ա·
Դաֆօշ·– 290բ·
Դիզա·– 333բ·
Դոստով·– 334բ, 370բ, 371բ·
Դուսնուբ·– 134ա, 138ա, 143բ, 144ա, 144բ, 146բ, 147ա, 150ա, 152ա, 153բ, 157ա, 164ա, 165ա, 165բ, 167ա, 167բ·

Սարգահան·– 281բ, 282ա, 282բ·
Սարգուար·– 230բ·
Սալմաստ (Մինարէր)·– 119ա, 226–, 227–, 230բ, 231ա, 231բ, 232ա, 232բ, 233բ, 234ա, 234բ, 235ա, 236բ, 237ա, 238ա, 238բ, 239բ, 240ա, 242բ, 246ա, 247ա, 247բ, 249բ, 252ա, 253ա, 253բ, 254ա, 254բ, 255բ, 256ա, 256բ, 257բ, 258ա, 258բ, 259բ, 266բ, 267ա, 268ա, 268բ, 269բ, 270ա, 273բ, 274ա, 274բ, 277բ, 284բ, 285ա, 285բ, 300բ, 314ա, 314բ, 319բ, 321ա, 323ա, 323բ, 325ա, 345բ·
Սալնոյ Զոր·– 61բ, 68ա, 190ա·
Սազ·– 55բ·
Սամսոն·– 134ա, 190ա·
Սասուն (Բարձրաւանդակ)·– 9բ, 11ա, 39բ, 41բ, 47բ, 56բ, 59բ, 60բ, 62ա, 63ա, 73բ, 75ա, 79բ, 84բ, 85բ, 86բ, 89ա, 89բ, 92բ, 95ա, 95բ, 96ա, 108ա, 118ա, 129ա, 154բ, 168բ, 171բ, 172ա, 177բ, 187բ, 188ա, 189բ, 190ա, 196բ, 259ա, 268բ, 294ա, 300բ, 302ա, 334ա·
Սարապ·– 232ա·
Սարով·– 351ա·
Սարուստան·– 47ա, 61ա, 69ա, 231ա, 238ա, 238բ, 239ա, 243բ, 313ա, 313բ, 314ա, 315ա, 315բ, 343–, 347–, 357–, 363բ, 367բ, 369·–
Սափարատ·– 268ա, 275ա·
Սեբաստիա·– 82բ, 83ա, 166ա, 185ա, 190ա, 199բ·
Սեւէ·– 249բ·

Սէյդավար·– 242ա·
Սէն·– 94բ·
Սթարա–Զախրայ·– 147ա·
Սթրալնա·– 154ա·
Սիլիստրէ·– 144բ, 148ա, 153ա, 155ա, 159ա·
Սինա·– 306բ, 317բ·
Սիս·– 86ա·
Սլիվէն·– 138բ, 143բ, 144ա, 147ա, 150ա, 152ա, 154բ·
Սոմովիդ·– 147ա, 153բ·
Սուլդուզ·– 249բ, 307բ·
Սուլթանապատ·– 249բ·
Սուլինա·– 139բ, 140ա, 143բ, 145ա, 145բ, 149բ, 151բ, 153ա, 155բ, 158ա, 161բ, 162ա, 164ա, 166բ·
Սուլուխ·– 55բ·
Սուրբ Խաչ·– 358ա, 371ա·
Սպահան·– 86ա, 238բ·
Սպազան·– 55ա·
Սպարկերտ·– 47բ·
Սվիշտով·– 147ա, 153բ·
Ստաւրապոլ·– 358ա·
Սրբավայր·– 242ա, 271ա, 271բ, 272ա, 273ա·
Սօիւզրուլազ·– 249բ·
Սօմա·– 249բ·
Սոֆիա·– 92բ, 96ա, 104ա, 106բ, 108բ, 117ա, 134ա, 138ա, 143բ, 144ա, 147ա, 149բ, 150ա, 152ա, 154բ, 159ա, 197ա, 198ա, 199ա, 205բ, 206ա, 208բ, 209ա, 209բ, 210ա, 210բ, 217ա, 217բ, 220բ·

Վան·– 22ա, 93ա, 119ա, 196բ, 197ա, 197բ, 233ա, 326ա, 327ա·
Վառ·– 242ա, 271ա, 271բ·
Վառնա·– 29բ, 129ա, 134ա, 138բ, 144ա, 147ա, 148ա, 149ա, 151բ, 152ա, 153ա, 154բ, 156ա, 156բ, 157ա, 157բ, 160բ, 161ա, 161բ, 162ա, 162բ, 163ա, 164ա, 164բ, 165ա, 167ա, 167բ, 179ա, 179բ, 180ա, 180բ, 181բ, 197ա, 198ա, 199ա, 202բ, 205ա, 209բ, 219ա·
Վարշաւա·– 333բ·
Վենետիկ·– 86բ, 88ա·
Վէսբ Հոպրբըն·– 185բ·
Վիեննա·– 20բ, 135ա, 183ա, 208ա, 208բ, 212բ, 213ա, 219ա, 302բ, 312ա, 370բ·
Վիտոշ·– 205բ·
Վլատիկաւկազ·– 258ա, 359բ·
Վորոնէժ (Ագռաւ)·– 334բ·
Վրէժ (Վրէժստան, Ատրպ·)·– 10բ, 17ա, 23ա, 28ա, 39բ, 44ա, 188բ, 226–, 227–, 229բ, 230ա, 230բ, 231ա, 232բ, 233բ, 234ա, 237ա, 237բ, 238ա, 238բ, 239ա, 239բ, 240ա, 241բ, 246ա, 249բ, 250ա, 251բ, 253ա, 254ա, 263բ, 269ա, 274ա, 279բ, 281բ, 282բ, 284ա, 284բ, 285ա, 285բ, 293բ, 295բ, 297բ, 300բ, 301ա, 302ա, 302բ, 303ա, 306ա, 306բ, 307բ, 308ա, 309ա, 310բ, 311ա, 312բ, 314ա, 314բ, 317բ, 322ա, 322բ, 324բ, 327բ·

Տալտրիկ·– 55բ·
Տափքկում·– 55բ·
Տերսիմ·– 23բ, 44բ, 190ա·
Տիգրանակերտ·– 185ա·
Տոլմա–Բաղչա·– 196ա, 200ա, 201ա, 203ա·
Տոմսկ·– 333բ·
Տրապիզոն·– 20ա, 190ա·
Տփխիս·– 199բ, 335բ·

Բատնէ–Մահալէ·– 154բ·

Ցիւրիխ·– 338ա, 338բ·
Ցրօնբ·– 286ա·

Փայտզուկ·– 233ա, 239բ, 255ա, 268ա·
Փայտակարան·– 238ա, 281ա·
Փարիզ·– 19բ, 81բ, 82ա, 84ա, 86ա, 87ա, 87բ, 88ա, 89բ, 90ա, 90բ, 91բ, 92բ, 93բ, 94բ, 95բ, 97ա, 98ա, 99ա, 99բ, 100ա, 101բ, 102բ, 104ա, 104բ, 105ա, 106բ, 107ա, 108ա, 108բ, 109ա, 111ա, 111բ, 114բ, 115ա, 116ա, 123ա, 123բ, 124ա, 125ա, 126ա, 152բ, 189ա, 205ա, 206ա, 207ա, 208ա, 211ա, 219ա, 244բ, 258ա, 281ա, 325ա, 327բ, 338ա, 340բ·
Փարոս·– 226–, 227–, 229բ, 230ա, 230բ, 231բ, 232բ, 234ա, 237ա, 238ա, 240ա, 247ա, 248բ, 253ա, 269բ, 302բ, 307ա, 308ա, 314բ, 323ա, 323բ, 324ա·
Փեսա·– 242ա, 271ա, 271բ·
Փրավիտրենս·– 98բ, 125ա·

Քաջամարտիկ·– 242ա, 271ա, 273ա·
Քար (Ալեքսանդրապոլ)·– 47ա, 197բ, 253ա, 254բ, 255բ, 258ա, 270ա, 326ա, 326բ·
Քարաբերդ·– 314ա·
Քարափ·– 363ա, 364ա·
Քիեւ·– 334ա·
Քիրմանշահ·– 249բ, 306բ, 317բ·
Քեբմէնլի·– 154բ·
Քզի·– 185ա, 189ա, 193ա·
Քոնբանցա·– 139բ, 144բ, 146բ, 152ա, 153ա, 155ա, 158ա·
Քորապիա·– 153բ·

Օտեսա·– 134ա, 333բ, 334ա·

Ֆիլատելֆիա·– 98բ·
Ֆիլիպէ·– 131ա, 133բ, 135բ, 137բ, 142բ, 143բ, 144ա, 145ա, 147բ, 148ա, 148բ, 149ա, 149բ, 151բ, 152ա, 154ա, 157ա, 158բ, 160ա, 161բ, 162ա, 162բ, 164ա, 164բ, 165ա, 165բ, 166բ, 178ա, 204ա, 205բ, 219ա·
Ֆրէզնօ·– 185ա, 185բ, 187բ·
Ֆոֆշան·– 158ա·

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էջ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԶՈՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԹՂԹԱԾՐԱՐԷՆ, Ա. (Ներածական) 3

Ա.— ԼԻԱԶՕՐԱԳԻՐԵՐ, ՅԱՐԱԿԻՑ ՆԱՄԱԿՆԵՐ ԵՒ ԴԻՒԱՆԱԿԱՆ ԹՈՒՂԹԵՐ 5

1.— Լիազօրագիր Արամի 6
2.— Վանի պատգամաւոր Սալմանի նամակը՝ Արամին »
3.— Դուրան-Բարձրաւանդակի Կ. Կոմիտէի լիազօրագիր-նամակը . . . . . »
4.— Գեղամ Տէր Կարապետեանի նամակը Կոմսին . . 7
— Ձեռագիր Տատրակի (Գեղամ Տէր Կարապետեան) 8
5.— Գեղամ Տէր Կարապետեանի նամակը Մուրատին 9
6.— Գէորգ Զաւուշի նամակը Անդրանիկին եւ Մուրատին 9
— Ձեռագիր Սարհատի (Գէորգ Զաւուշ) . . 10 եւ 12
7.— Գէորգ Զաւուշի նամակը Արեւելեան Բիւրոյին . . 13
8.— Լիազօրագիր Ռոստոմի . . . . . »
9.— Լիազօրագիր Ակնունիի 14
10.— Լիազօրագիր Սափոյի (Մարտիրոս Մարգարեան) »
11.— Ա. լիազօրագիր Թովմաս Ճելալեանի եւ Վահագն Տաքիւեանի . . . . . »
12.— Բ. լիազօրագիր Ամերիկայի պատգամաւորներու »
13.— Լիազօրագիր Ռուբէն Զարդարեանի եւ Սարգիս Միճասեանի 15
14.— Լիազօրագիր Բժ. Զաւրեանի . . . . . »
15.— Այգեստանի Կ. Կոմիտէի նամակը . . . . . »
16.— Լիազօրագիր Աւետիս Ահարոնեանի . . . . . »
17.— Լիազօրագիր Բարսեղեանի 16
18.— Լիազօրագիր Ցուշիկի . . . . . »
19.— Լիազօրագիր Սիմոն Վրացեանի . . . . . »
20.— Լիազօրագիր Ստ. Ստեփանեանի . . . . . »
21.— Ատրպատականի Կ. Կոմիտէի հաստատագիր-նամակը 17
22.— Լիազօրագիր Արշակ Զամալեանի . . . . . »
23.— Լիազօրագիր Աւետիք Շահխաթունեանի . . . . . »
24.— Իզմիրի Կոմիտէի լիազօրագիր-նամակը . . . . . »
25.— Լիազօրագիր Արսէնի 18
26.— Քաջբերունիի նամակը . . . . . »
27.— Սարհատի նամակը . . . . . »
28.— Միքայէլ Վարանդեանի նամակը 19
29.— Մարի երկտողը . . . . . »
30.— Վահրամի նամակը . . . . . »
31.— Նամակ «Դրօշակ»ի խմբագրութենէն 19
32.— Նամակ Մարէն 20
33.— Երկտող Վահրամէն . . . . . »
34.— Նամակ Մարէն 21
35.— Նամակ Վահրամէն . . . . . »
36.— Նամակ Վահրամէն . . . . . »
37.— Նամակ Մարէն . . . . . »
38.— Նամակ Մարէն 22
39.— Նամակ Վահրամէն . . . . . »
40.— Նամակ Վահրամէն 23
41.— Նամակ Վահրամէն . . . . . »
42.— Նամակ «Դրօշակ»ի խմբագրութենէն . . . . . »
43.— Նամակ «Դրօշակ»ի խմբագրութենէն 23
44.— Նամակ «Դրօշակ»ի խմբագրութենէն եւ Յ. Շահրիկեանի նամակը 24
45.— Առաջարկ Անդրանիկէն . . . . . »
— Ձեռագիր Անդրանիկի 25
46.— Դիւանի թուղթերուն մէջ գտնուող գրաւոր առաջարկներ եւ բանաձեւեր (թիւով 23) . . . 26
47.— Ընդհանուր ժողովի ներքին կանոնագրութիւն 30
48.— Զինուորական կանոնագի՞ր . . . . . »
49.— Մարտական դաստիարակութիւն 33
50.— Ցուցակ դիւանի եւ յանձնախումբի անդամներու 39
51.— Ծրագրային պահանջներու ներածական 40
52.— Ծրագրի յատակագիծ . . . . . »
53.— Ռուսական յեղափոխական մարմիններին . . . »
54.— Խօսք թուրք յեղափոխականներո՞ւն 41
— Ձեռագիր Ռոստոմի 42
— Ձեռագիր Սիմոն Զաւարեանի 43

Բ.— ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ ԵՒ ՄԱՐՄԻՆՆԵՐ

I.— ԼԵՌՆԱՊԱՐԻ ՇՐՋԱՆ 45

1.— Լեռնապարի կեդրոնական կոմիտէի շրջանակը »
2.— Վասպուրականի շրջանի — Լեռնապարի Կ. Կոմիտէի տեղեկացոյց 53
Բ. (պէտք է ըլլայ՝ II).— ԴՈՒՐԱՆ-ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿ (ՏԱՐՕՆ-ՍԱՍՈՒՆ) 54
1.— Տեղեկագիր Բարձրաւանդակ-Դուրանի Կ. Կոմիտէի՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Դ. Ընդհանուր Ժողովին . . . . . »
— Տեղեկագրի 20րդ էջի տպագրական պատճէնը 58
2.— Դուրանի Շրջանային Ժողովի որոշումները . . . 69
3.— Վիճակագրական տեղեկութիւններ Բարձրաւանդակի Կ. Կոմիտէի շրջանի 72
4.— Ռուբէնի նամակը Արեւելեան Բիւրոյին . . . . »
— Ձեռագիր Ռուբէնի 74

III.— ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ 76

— Ձեռագիր Ակնունիի 77
1.— Ընդհանուր հաշուեկշիռ (տպագր. պատճէն) 78
2.— Արեւմտեան Բիւրոյի շրջանի մարմիններին համառօտ տեղեկագիր (1905) 79
3.— Նամակներ 84
4.— Բժիշկ Յ. Լորիս Մելիքեանի տեղեկագիրը . . . 88
Ա) Զեկուցում Լորիսի տեղեկագրին . . . . . »
Բ) Բժ. Լորիս Մելիքեանի նամակը 4րդ Ընդհ. Ժողովին 90
Գ) Տեղեկագիր եւրոպական պրոպագանդի . . . 91
Դ) Տեղեկագիր մեր յարաբերութեան՝ Բիւրոյին հետ 103
Ե) Վկայականներ 108

Էջ

Գաղտնապահական նոթա անգլիական քաղաքականութեան մասին դէպի Հայկական Հարցը 118
Լոթիսի նամակը՝ Խրիմեան Հայրիկին 120

IV.— ՊԱԼՔԱՆԵԱՆ ՇՐՋԱՆ 128

1.— Տեղեկագիր Հ. Յ. Դ. Պալքանեան շրջանի կազմակերպութեան 129
2.— Կիսամեայ համառօտ տեղեկագիր Հ. Յ. Դ. Պալքանի Կ. Կոմիտէի 135
3.— Ատենագրութիւն Հ. Յ. Դ. Պալքանեան շրջանի Պատգամաւորական Ժողովին 143
4.— Ատենագրութիւն Հ. Յ. Դ. Պալքանեան Շրջանական Ժողովին 152
5.— Հարցեր Հ. Յ. Դ. Պալքանեան շրջանէն՝ 4րդ Ընդհ. Ժողովին 167
6.— Հարցեր Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովին՝ Պալքանեան արտակարգ Շրջանական Ժողովին կողմէ 171
7.— Ընդհանուր Ժողովին ներկայացնելիք հարցեր Ֆիլիպէի կոմիտէէն 178
8.— Վառնայի խումբերու դիմումը Արեւմտեան Բիւրոյին 179
9.— Պալքանեան Կ. Կոմիտէի նամակը 4րդ Ընդհանուր Ժողովին 183

V.— ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԱՄԵՐԻԿԱ 184

1.— Տեղեկագիր Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի շրջանին . . . . . »
2.— Ամերիկայի Հ. Յ. Դ. Պատգամաւորական Ժողովի որոշում-բանաձեւերը 191
3.— Նամակ Ընդհանուր Ժողովին (Ամերիկայի Կ. Կ.էն) 192
4.— Նամակ Արեւմտեան Բիւրոյին (նոյն) 193

VI.— ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ 194

1.— Ցուցական մարմնի տեղեկագիրը 195
— Ցուցականի տեղեկագրի մէկ էջ (ձեռագիր Սափոյի) 215
2.— Փորձնական կանոնագիր Ցուցական Պատասխանատու Մարմնի 221
— Ձեռագիր Էլլէնի (Քրիստափոր) 223

VII.— ՇԱՄԻ ՇՐՋԱՆ (ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ) 224

— Ձեռագիր Արամի . . . . . »
Բանաձեւեր Վասպուրականի շրջանի (Արամ) . . 225

VIII.— ՎՐԷԺԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՈՒԹԻՒՆ 226

1.— Տեղեկագիր Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութեան Վրէժառաքում 228
2.— Տեղեկագիր Ատրպատականի Կ. Կոմիտէի 1905 տարեշրջանի 237
3.— Արձանագրութիւն Ատրպատականի Շրջանական Ժողովին 240
4.— Արձանագրութիւն Հ. Յ. Դ. Մինարէթի Ա. Շրջ. Ժողովի (1906) 253
5.— Արձանագրութիւն Մինարէթի (Սալմաստ) դաշնակցական զինուորներու Ժողովին (Սեպտեմբեր 1906) 258
6.— Արձանագրութիւն 1906 թուի Թաւրիզում կայացած դաշնակցական ընկեր-ընկերուհիներու Ընդհ. Ժողովի 259
7.— Պորտ-Արտուրի (Էնզելի) «Սէր» խումբի ժողովի արձանագրութիւնը 263
8.— Արախի խմբերի կարծիքները 265
9.— Տեղեկագիր Հ. Յ. Դ. «Մինարէթ»ի շրջանի (1904 եւ 1905 թ.) 266
10.— Տեղեկագրութիւն Աւարայրի շրջանի (1906 Փետրուար 1) 270
11.— Տեղեկագիր Մակու-Արտազ գաւառի 275
12.— Երեք տեղեկագիր Թաւրիզի կոմիտէէն
Ա) Տեղեկագիր Վրէժի կոմիտէի 1905-1906 . . . 279
Բ) Տեղեկագիր Հ. Յ. Դ. Վրէժի կոմիտէի . . . 281
Գ) Վրէժի տեղական հիմնապաշտպանութեան մէկ տարուան գործունէութեան տեղեկագիրը (1905 թ.) 282
13.— Հ. Յ. Դաշնակցութեան Վրէժի «Խարիսխ» արհեստանոցը 284
14.— Երեք տեղեկագիր Գիլանի կոմիտէէն
Ա) Տեղեկագիր Հ. Յ. Դ. Գիլանի կոմիտէի . . . 287
Բ) Հ. Յ. Դ. Գիլանի կոմիտէի շրջանում եղած խմբակների թիւն ու անդամների քանակութիւնը 289
Գ) Վիճակագրութիւն Էնզելիի հայ հասարակութեան 292
15.— Տեղեկագիր Շահի (Թեհրան) . . . . . »
16.— Տեղեկագիր Հ. Յ. Դաշնակցութեան Մարազայի խմբակների գործունէութեան 293
17.— Տեղեկագիր Շահսէվանի եւ Անտառի 295
18.— Տեղեկագիր Ափի 299
19.— Քրդերի եւ այլ տարրերի հետ յարաբերութեան մասին . . . . . »
20.— Կարծիքներ Ատրպատականի այլեւայլ շրջաններից
Ա) Ատրպատականի ընկերների կարծիքը 302
Բ) Կարծիքներ Վրէժի № 3 շրջաբերականի . . . 303
Գ) Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհ. Ժողովին . . . 304
Դ) «Փարոս» կոմիտէի կարծիքները 307
Ե) Նամակ Նոր Զուղայի ենթակոմիտէէն . . . 308
Զ) Նամակ Բենտէր Գեազի ընկերներէն 309
Է) Առաջարկութիւններ 310
Ը) Նամակ Մարազայի ընկերներէն . . . . . »
Թ) Հարցեր Շահսէվանէն եւ Անտառէն 311
Ժ) Ղազուինի բողոքագիրը . . . . . »
21.— Նամակներ Արեւելեան Բիւրոյին
Ա) Ատրպատականի Կ. Կ.էն, 18-1-905 թ. . . . 312
Բ) Վրէժի (Ատրպ.) Կ. Կ.էն, 8-5-906 թ. . . . 314
Գ) Շաւարշ ստոր., 10-5-906 թ. 316
Դ) Նոյնէն՝ «Թիֆլիսի Խորհրդին», 7-6-906 թ. 317

	էջ
Ե) Ծեքունիէն (Ստ. Ստեփանեան), 4-7-906 թ.	317
Զ) Մարզպետունիէն՝ «Արեւելեան Բիւրոյի երկրի սեկցիային», 24-8-906 թ.	319
— Զեռագիր Մարզպետի	320
Է) Ատրպատականի կ. կ.էն, 4-11-906 թ.	321
22.– Վրէժի կ. կ.էն նամակ Արեւմտեան Բիւրոյին, 4-11-906 թ.	322
23.– Նամակներ՝ կոմսին	
Ա) Ստեփ. (Ստեփանեա՞ն) ստոր., 15-7-906 թ.	323
Բ) Նոյնէն, 22-7-906 թ.	324
Գ) Նոյնէն, 26-8-906 թ.	325
Դ) Դժբախտ ստոր., 6-9-906 թ.	325
Ե) Թէոս ստոր., 8-9-906 (?) թ.	326
24.– Նամակ Սամսոնին, 11-1-907 թ.	»
25.– Հնչակեաններու հետ համերաշխութեան հարցը	
Ա) Փոխանակուած 5 նամակներ	327
Բ) Միջ-կուսակցական ժողովի արձանագրութիւններն ու որոշումները	329
IX.– Հ. Յ. Դ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ	333
1.– Հ. Յ. Դ. Ռուսաստանի ուսանողական կազմակերպութիւնները	»
2.– Առաջարկ Ընդհանուր ժողովին	337
3.– Տեղեկագիր Եւրոպայի Դաշնակ. Ուսանողութեան մասին	337
4.– Եւրոպայի Ուսանողութեան բերած առաջարկները	340
X.– ԱՊԱՌԱԺԻ ՇՐՋԱՆ	343
1.– Ապառաժի կ. կ.ի Դեկտ. 1906 թ. Շրջանային ժողովում ընդունուած բանաձեւերը	»
2.– Տեղեկագիր «Սիւնիք»ի շրջանի	344
XI.– ԱՑԳԵՍՏԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՈՒԹԻՒՆ	347
1.– Տեղեկագիր Այգեստանի կեդրոնական կոմիտէի Հ. Յ. Դ. Ընդհ. ժողովի (1907 թ. Փետր.) համար	»
2.– Ալեքսանդր Մաշուրեանի նամակը Այգեստանի կ. կ.ին	355
3.– Բանաձեւեր եւ առաջարկներ Այգեստանի Շրջանային ժողովէն	»
XII.– ԺԼԱՏԻ ՇՐՋԱՆ (ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԿՈՎԿԱՍ)	357
1.– Տեղեկագիր Հ. Յ. Դ. X կ. կոմիտէի (Ժլատի շրջան)	»
2.– Առաջարկներ X կ. կոմիտէի (Ժլատի շրջան)	360
3.– Համառօտ տեղեկագիր Ժլատի շրջանի	»
4.– Արձանագրութիւն Հ. Յ. Դ. Ժլատի Շրջանային ժողովի (1906 Հոկտ.)	361
5.– Ժլատի կեդրոնական կոմիտէի Շրջանային ժողով (1905 Մարտ)	363
6.– Արձանագրութիւն Ժլատի Շրջանային Պատգամաւորական առաջին ժողովի (1904 Դեկտ.)	364
XIII.– ՆԱԼԱՆԴԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՈՒԹԻՒՆ (ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՇՐՋԱՆ)	369
1.– Տեղեկագիր «Նալբանդ» (VII) կ. կոմիտէի	»
2.– Նալբանդի կ. կ.ի նամակը Ընդհ. ժողովին	370
3.– Տեղեկագիր Հ. Յ. Դ. Նալբանդ (VII) կենտ. կոմիտէի (1907 Դեկտ.)	371
ՑՈՒՑԱԿ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐՈՒ	373
ՑՈՒՑԱԿ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒ	377

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Ճ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՆԻՒԹԵՐ Հ. Ց. Դ. ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Դ. ՀԱՏՈՐ

Հրատարակութեան պատրաստեց եւ խմբագրեց ՀՊԱՀ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

Հնիւքեր Հ. Ճ. Դ. պատմութիւն համար» շարքի ծախսդ հատորները հրատարակուած են 1972 (Ա. հատոր), 1973 (Բ. հատոր) եւ 1976 (Գ. հատոր) տարիներում եւ տրամադրելի են կեդրոնատեղիին մօտ:

Կեդրոնատեղի

LIBRAIRIE HAMASKAÏNE
10, Rue Hussein Beyhoum
Beyrouth — Liban

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ
ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Պատուէր 570
Գրակ 24
Ամսաթուիր 28-1-1982

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Imprimé au Liban Imprimerie HAMASKAÏNE